Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՏՈՐ
III

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

Г. АЧАРЯН

ПОЛНАЯ ГРАММАТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

В СРАВНЕНИИ
С 562
ЯЗЫКАМИ

ТОМ
III

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН — 1957

4(47.925)
А-50
13117

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
562
ԼԵԶՈՒՆԵՐԻ

ՀԱՏՈՐ
III





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1957

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Պատասխան տպագրության և խմբագրեց պրոֆ. Էդ. Ա. ԱՂԱՅԱՆ
Подготовил к печати и редактировал проф. Э. Б. АГАЯН

11260

«ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Սույն հատորն ընդգրկում է գոյականի ուսումնասիրությունը: Հեղինակը նախնական ծանոթություն է տալիս ձևաբանության, քերականական կարգերի, խոսքի մասերի ու քերականական միջոցների մասին՝ ընդհանրապես, ապա՝ քննում նույն երևույթները հայերենում և հետո միայն անցնում գոյականի քերականական կարգերի (սեռ, թիվ, հոլով, հոլովում) ուսումնասիրությանը, սկսելով աշխարհի լեզուների բազմազան ոլորտներից, առանձնապես քննության առնելով այդ երևույթները հնդեվրոպական նախալեզվում և ապա՝ հայերենում՝ հնագույն շրջանից մինչև աշխարհաբարը: Նկատի առնելով այն հանգամանքը, որ ձևաբանությանը նվիրված երկու հատորներն արդեն լույս են տեսել, կարող է տարօրինակ թվալ ձևաբանության ներածական գլուխների ընդգրկումն այս հատորում: Սակայն դա բացատրվում է ոչ թե հեղինակի ինչ-որ քմահաճ վերաբերմունքով, այլ հատորների հերթականության խախտումով, որ կատարվել է հրատարակության ընթացքում՝ անկախ հեղինակի և իմ կամքից: Ըստ նախնական դասավորության, առաջին հատորը պետք է ամփոփեր ներածությունը, երկրորդ հատորը՝ հնչյունաբանությունը, իսկ երրորդ հատորը՝ գոյականը, որով և սկսվում է ձևաբանությունը: Այժմ, թեև գոյականը լույս է տեսնում գարձյալ իրրև երրորդ հատոր, բայց նրանից առաջ արդեն լույս են տեսել ձևաբանության երկու հատորները, որով և խախտվել է նյութերի դասավորության կարգը:

Այս հատորի մեջ հայերենի ուսումնասիրության տեսակետից առանձնապես արժեքավոր են բառակազմությանը, գոյականների սեռի ու թվի կարգերին և հոլովմանը նվիրված բաժինները: Մանրամասն ու բազմակողմանի քննությամբ հեղինակը շատ հարցերի իր ճիշտ լուսաբանությունն է տալիս և դրանով իսկ նոր, մեծարժեք ավանդ մտցնում հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության գանձարանը:

Հատորի ամբողջացման ու հրատարակության պատրաստելու գործին ձեռնարկել էր հեղինակը, որին օգնում էր իր ասպիրանտ Գրիգոր Գարեգինյանը, որ մեծ աշխատանք է կատարել զանազան բառացանկեր կազմելու և բարբառների նյութերը ամբողջացնելու համար։ Հատորի ամբողջ նյութերը պատրաստված էր, շարադրանքը գրեթե ավարտված. մնում էր վերջնական գրասավորումը, շարադրանքի վերանայումը և մասնակի լրացումներ կատարել։ Ձեռնարկելով հատորը տպագրության պատրաստելու և խմբագրելու գործին՝ հեղինակի մահվանից հետո, մենք ամբողջ նյութը գրասավորել ենք առաջին ու երկրորդ հատորների օրինակով։ Բարբառներին նվիրված բաժիններում ավելացրել ենք Կարնո և Մեղրու բարբառներին վերաբերող նյութը՝ ամբողջությամբ, ինչպես այդ արել էր հեղինակը մյուս բարբառների համար։ Մասնակի լրացումներ կատարել ենք զանազան բաժիններում՝ ամբողջացնելու համար այն ծրագիրը, որ ուներ հեղինակը. այդ լրացումների համար էլ, ասկայն, օգտվել ենք հեղինակի նյութերից, որոնք, իր նշումների համաձայն, պետք է մտնեին այս հատորի մեջ, որով և դրանք էլ, ըստ էության, հեղինակի հավելումներն են դառնում։ Շարադրանքի մեջ գրեթե ոչ մի փոփոխություն չենք կատարել, չհաշվելով խմբագրական մասնակի շտկումները և այն առանձին հավելումները, որոնք անհրաժեշտ էին զանազան հատվածների միջև կապ առեղծելու համար։ Քանի որ այդպիսի հավելումները որևէ չափով չեն փոխել շարադրանքի ոգին, ըստ որում դրանք անխուսափելի կերպով կարվեին նաև հեղինակի կողմից, ուստի և դրանք որևէ նշանով չենք առանձնացրել հեղինակային շարադրանքից, մանավանգ որ, ընդհանրապես, դրանք մեկական կամ երկուական նախադասություններ են կազմում յուրաքանչյուր հատվածի մեջ։

Հայտնի է, որ իր այս աշխատության վրա հեղինակն աշխատել է մի քանի տասնամյակների ընթացքում։ Այդպիսի երկար ժամանակամիջոցում, միանգամայն բնական ճանապարհով, հեղինակը առանձին հարցերի մասին կարող էր փոխել իր կարծիքը։ Եվ որովհետև նա սովորություն ուներ ամեն մի միտք, որ ծագում էր իր մեջ այս կամ այն հարցի վերաբերյալ, գրի առնել և դնել համապատասխան հատորի նյութերի մեջ, ապա՝ երբեմն միևնույն հարցի մասին նյութերի մեջ հավաքվում էին տարբեր ժամանակների տարբեր կարծիքներ։ Միանգամայն

պարզ է, որ նյութի վերջնական մշակման ժամանակ հեղինակը մանրամասն քննության բովով անցկացնելով այդ տարբեր կարծիքները՝ կընդուներ դրանցից մեկը և կմերժեր մյուսները։ Բայց այս հատորի վերջնական մշակմանը և խմբագրությանը հնկելու բախտը չունեցավ նա։ Այդ է պատճառը, որ առանձին հարցերի մասին այս հատորում տեղ են գտել տարբեր կարծիքներ, առանց դրանք իրար հետ համաձայնեցնելու, ընդհանուր հայտարարի բերելու և, կամ, մեկը մերժելով՝ մյուսն ընդունելու։ Այսպես օրինակ՝ -վա հոլովման առաջացման հարցում հեղինակը էջ 540-ում ընդունում է Կարսի այն կարծիքը, թե դրան իբրև նախօրինակ են ծառայել երեկուն, առաւսուն, վաղուն մակբայները, որոնք միջին հայերենում գործածվել են որպես գոյական և հոլովվել ասուն բառի օրինակով՝ առաւսուվան, վաղվան ձևով։ Քանի որ դրանց կողքին գործածվում էին նաև առաւօտ, վաղ են գոյականները, ապա՝ կարծվեց, թե առաւսուվան, վաղվան ձևերը դրանց սեռականն են, և այդպիսով էլ առաջացավ -վան հոլովումը։ Իսկ էջ 693-ում ասում է, թե -վան հոլովումը առաջացել է հին հայերենի ու հոլովումից։ Անշուշտ կարելի էր այս երկու կարծիքները միացնել և գտնել միջին լուծումը կամ պարզապես մերժել դրանցից մեկը։ Բայց մենք այդ չենք արել երկու պատճառով. ա) այն կապակցում, որով հեղինակը հանձնարարել է տպագրության պատրաստել և հրատարակել իր ձեռագիր աշխատությունները, արգելել է մեզ իր գրածներից որևէ բան հանել կամ փոխել. բ) այդ տարբեր կարծիքները վերաբերում են տարբեր ժամանակների, ցույց են տալիս հեղինակի տարբեր մոտեցումը քննվող հարցին տարբեր ժամանակներում և հենց իրեն այդպիսին էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում։

Այսպես չենք վարվել, իհարկե, նախորդ հատորները տպագրության պատրաստելիս, որովհետև հեղինակը այն ժամանակ դեռ կենդանի էր, և յուրաքանչյուր այդպիսի դեպքում որևէ ձևով վերացրել ենք հակասությունները՝ հեղինակի համաձայնությամբ։

Ինչպես նախորդ հատորներում, այնպես էլ այս հատորում հեղինակի գործածած տերմինները պահել ենք անփոփոխ։ Այդ առթիվ անհրաժեշտ ենք համարում նշել.

1) Բարդություն տերմինը հեղինակը գործածում է երկու իմաստով. ա) բարդություն բուն իմաստով (բարդ բառ, բարդ

բառերի կազմելը). բ) բազադրություն, այսինքն՝ թե բարդության, և՛ թե ածանցում։ Այդ է պատճառը, որ բարդությունների մեջ հաճախ հիշում է նաև ածանցավոր բառերը։

2) Հեղինակը ճիշտ կերպով բնորոշում է հոլովի քերականական կարգը, բայց նյութի ուսումնասիրության մեջ երբեմն թվում է, թե հակասում է այդ բնորոշմանը։ Այսպես, օրինակ, բարբառների հոլովները քննելիս, ելնելով իր բնորոշումից, միանգամայն ճիշտ կերպով գտնում է, որ շատ բարբառներ ներգոյական հոլով չունեն (Պոլիս, Նոր Նախիջևան և այլն)։ Բայց այդ բարբառների մասին խոսելիս հաճախ գրում է, թե ներգոյական հոլովը կազմվում է մեջ նախադրությամբ կամ տրականի հետ նույնն է և այլն։ Այսպես ասելն հակասություն չկա հեղինակը՝ մերժելով ներգոյական հոլովի գոյությունը այդ բարբառներում՝ այնուհետև ցույց է տալիս, թե ներգոյական հոլովի իմաստը ինչպես է արտահայտվում նրանց մեջ։ Ճիշտ այսպես պետք է հասկանալ նաև հնդեվրոպական լեզուներին նվիրված հատվածների մեջ, բոլոր այն դեպքերում, երբ հեղինակը խոսում է ներգոյական կամ բացառական կամ գործիական հոլովների կազմության մասին այնպիսի լեզուներում, որոնք այդ հոլովները չունեն։

Այս բոլորը, կրկնում ենք, հետևանք են այն բանի, որ հեղինակը հնարավորություն չունեցավ անձամբ մասնակցելու աշխատության վերջնական մշակմանն ու խմբագրությանը, իսկ մենք էլ, չկամեցանք փոխել այն, ինչ-որ ինքը գրել էր։

Ինչ վերաբերում է հատորին, ամբողջությամբ վերցված, ապա նա իր ընդգրկած փաստերի հարստությամբ, դրանց գիտական մանրամասն ու խորհրդատու-քննությամբ եզակի է հայագիտական-լեզվաբանական գրականության մեջ։ Լեզվական երևույթների ուսումնասիրության իր մեթոդով հեղինակը շատ ուսանելի օրինակ է տալիս՝ սովորելու համար, թե ինչպես պետք է գիտականորեն քննել լեզվական փաստերը, և, հետևաբար, նաև այն, թե ինչպես չպետք է քննել։

Պրոֆ. Էդ. ԱՂԱՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆ

ԳԼՈՒԽ Ա

ՋԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Խոսքի մեջ բառերը իրարից բոլորովին անջատ և անհարիր, անփոփոխելի ու քարացած վիճակ չեն ներկայացնում, ունեն իրար հետ դանազան կապակցություններ և կրում են դանազան ձևափոխություններ, որոնցով էլ խոսքը դառնում է հասկանալի՝ խոսակցի համար։ Եթե չլինեին այդ կապակցությունները և այդ ձևափոխությունները, մենք կարող էինք միայն շատ անորոշ գաղափար կազմել մեր ընկերոջ հայտնած մտքի մասին, կարող էինք ըմբռնել, թե նա ինչի մասին է ուզում խոսել։ Բայց թե հատկապես ինչ է ուզում ասել, այդ չէինք կարող հասկանալ և կամ նույնիսկ կարող էինք հասկանալ բոլորովին այլ բան, քան այն, ինչ նա էր ուզում ասել։ Օրինակ, երբ իրար մոտ շարենք եղրայր, թուղթ և կարդալ բառերը, մի ընդհանուր գաղափար կազմում ենք, բայց խոսքի բուն իմաստը ճիշտ է անորոշ։ Իմաստը պարզվում և որոշ ու տարբեր երանգներ է ստանում այն ժամանակ միայն, երբ յուրաքանչյուր բառի վրա դնելով կարևոր ձևափոխությունները, ասենք.

եղբայր, թուղթը կարդա՛.
եղբայրը թուղթը կարդաց.
եղբորը թուղթը կարդացի՛.
եղբորը թուղթը կարդա՛.
եղբորը թուղթը կարդալու եմ և այլն, և այլն։

Մենք այս նախադասությունների մեջ ունենք միայն երեք բառ, բայց տեսնենք, թե փոխելով նրանց թիվը, հոլովը և խոնարհումը՝ քանի՛-քանի՛ հարյուրավոր նախադասություններ կարող էինք կազմել, յուրաքանչյուրը տարբեր իմաստով։ Բայց որքա՛ն ավելի կշատանար նախադասությունների թիվը, եթե բառերի թիվը է՛լ ավելի մեծացնեինք։

Ուրիշ ձևը լեզվի հասկացողության մեջ ունի մի անգնահատելի գեր և ձևերի ուսումնասիրությունը, այն է՝ ձևաբանությունը, անհրաժեշտ մասն է լեզվաբանության։

Լեզվի կենսաբանությունը ուսումնասիրելու ժամանակ մենք տեսնում ենք, որ լեզվի նախնական վիճակը անջատական դրության էր։ Այստեղ բառ կամ արմատ միևնույն բանն է։ Դեռ ավելին կա. խոսքի մասերի գաղափարը դեռ զարգացած չէ, և բառը կամ արմատը ունի մի ընդհանուր իմաստ. նա թե գոյական է, թե ածական է, և թե բայ է միանգամայն, ինչպես, օրինակ, անգլերենում light, right. առաջինը նշանակում է «լույս, լուսավոր, լուսավորել», երկրորդը՝ «իրավունք, իրավացի և ուղղել, շտկել». ուրիշ առաջին նշանակությամբ գոյական են, երկրորդ նշանակությամբ ածական և երրորդ նշանակությամբ բայ։ Սրանից տարբեր երևույթ չէ, երբ օր. հայերենի մեջ ասում ենք կեր, որ թե գոյական է (ձիու կեր), և թե բայ (կեր)։ Մոտավորապես այս էր լեզվի նախնական վիճակը՝ բոլոր լեզվախմբերի մեջ։

Ժամանակի ընթացքում լեզվի զարգացումը առեղծում է տեսակ-տեսակ միջոցներ՝ որոշելու համար բառերի առնչությունը միմյանց հետ։ Այն բոլոր միջոցները, որոնք ծառայում են այս նպատակին, արդիական բառով կոչվում են ձևակ (морфема. ֆրանս. morphème, գերմ. Formans)։

Սովորական հասկացողությամբ մեզ համար ձևակ են կոչվում այն բոլոր մասնիկները կամ վերջավորությունները, որոնք կցվում են բառին՝ ձևացնելու համար հոլովումը, խոնարհումը և ածանցումը, կամ՝ մեկ բառով՝ թեքումը։ Բայց այդ բոլորը կազմում է ձևակների մի մասը միայն. ձևակը ավելի ընդհանուր գաղափար է, և այդ բառի տակ պետք է հասկանալ ոչ միայն մասնիկները, այլև բոլոր այն միջոցները, որոնք ծառայում են նույն նպատակին, սկսելով ամբողջական բառերից մինչև ոչինչը (զրոն)։ Այսպես՝ չինարենի լեզվի մեջ ամբողջական բառերը կարող են ձևակ լինել. այսպես նաև աննամերեն. օր. kua նշանակում է առարկա, բան, իր. բայց նախադրվելով մի բառի՝ կազմում է սեռական. ինչ. me «մայր», kua me «մոր», tço նշանակում է «տալ», բայց դառնում է տր. մասնիկ. tço me «մայրիկին»։ Չինարենի քերականության մեջ այս կարգի բառերը կոչվում են «դատարկ բառեր», մինչդեռ մյուսները «լիքն» են։ Երբ չին ուսուցիչը հարցնում է աշակերտին՝ «ինչ

է քերականությունը», աշակերտը պատասխանում է. «Քերականությունը այն գիտությունն է, որ սովորեցնում է զանազանել դատարկ բառերը լիքը բառերից»։ Հայերենի մեջ թող մի առանձին և անկախ բառ է (թողնել բայի հրամայականը), բայց նա դառնում է ձևակ, երբ ծառայում է իբրև հրամայական մասնիկ. թո՛ղ երթա, ասի՛ թող։ Գրաբարի մեջ իբր ձևակ են ծառայում առ, ընդ, ըստ, զ, ի, յ, որոնք անկախ գործածություն չունեն։ Այսպես նաև պիտի մի ժամանակ անկախ բառ էր և նշանակում էր «պետք է». հիմա ապառնի կազմելու մասնիկ է։ Երևույն էլ, ըստ չինական քերականության, դատարկ բառեր են։

Իբրև ձևակ ծառայող բառերը կրճատվելով դառնում են հետո մասնիկ կամ վերջավորություն, որ կարող է դրվել բառի թե սկիզբը և թե վերջը, կարող է նաև ներմուծվել բառի մեջ, կարող են զույգ լինել կամ միակ, և այդ զույգը կարող է միասին լինել կամ անջատ. օր. հյ. մի՛ ասիր—ֆրանս. ne dis pas! (մի՛ևնույն նպատակի համար դրված ne մասնիկը և pas մասնիկը՝ իրարից անջատ, մեկը՝ նախադաս, մյուսը՝ հետադաս)։

Մասնիկի ավելի թուլացած և ինքնուրույնը կորցրած ձևն է ածականը, որ արմատի իմաստը ձևափոխող մի տարր է. օր. հյ. լպիրծ և լպիրշ, ճար և ճարկ-(անել), տիլ և տիղմ բառերի մեջ ծ, շ, կ, մ ձայնները, որոնք կցված են արմատին, անբաժանելի կերպով։

Ձևակը կարող է լինել նաև արմատի ներքին փոփոխությամբ՝ առանց որևէ եկամուտ տարր ավելացնելու. ինչպես հայ. քոյր և քեռ, հայր և հօր, չոր և չիր, սիճ, սուճ և սաճ, անգլ. man «մարդ» և հոգ. men «մարդիկ», foot «ոտք» և feet «ոտքեր».— գերմ. Vater «հայր» և Väter «հայրեր». երբեմն էլ նույնը՝ որևէ մասնիկով ընկերացած. ինչ. հյ. կին և կանայք, գոլ և գաղջ և այլն։ Այս երևույթը կոչվում է ձայնդարձ։ Նույնը կարող է լինել նաև բաղաձայնների առոիճանի փոփոխությամբ, ինչպես է չինարենում. օր. kien[3] «տեսնել»— ǰien[3] «տեսանվել». čieu[1] «առասլոտ»— ǰieu[1] «կայսերական ունկնդրություն, այդ բառում» (H. Maspéro, MSL 23, 324)։

Իբրև ձևակ կարող է գործածվել նաև տոնը (երաժշտական շեշտ), որ շատ լեզուների համար ընդհանուր և սովորական քերականական միջոց է։ Այսպես, աֆրիկյան լեզուների մեջ եղակին հոգնակիից, ներգործական բայը կրավորականից, հատուկանը բացատականից, բայլ դեմքերն իրարից, վերջապես են-

Թաիան սեռի խնդրից զանազանվում են միայն երաժշտական շեշտով կամ տոնով (Les langues du monde, էջ 485, 490, 550, 555). Չինարենում տոնը միջոց է ածանցման, օր. čï[1] «գիտենալ», čï[3] «գիտուն», 'iem[1] «աղ», 'iem[3] «աղել»։

Աֆրիկյան սիվ լեզվի մեջ (բանտու) սուբստանտիվական եղանակը կազմելու համար բարձր տոնը վերածում են ցածր տոնի (Abraham, էջ 11)։

Իրրև ձևակ կարող է ծառայել նաև պարզ շեշտը. հունարենի և սանսկրիտի մեջ սովորական երևույթ է շեշտի տեղափոխությամբ փոխել բառի իմաստը. այսպես հուն. τόμος «կտոր, մաս», τομός «կտրող, հատու, սուր». բանկերենի մեջ հոգնակին և եզակին շեշտով են զանազանվում, օր. gizon «մարդ», եզ. ուղ. gizonák, հոգ. ուղ. gizónak. Թուրքերենի մեջ շեշտը գրվում է զանազանելու համար գրականը բացառականից. օր.

xašlamá	*մսի խաշու,*	xašláma	*մսի խաշիր*
dondurmá	*պաղպաղակ,*	dondúrma	*մսի առոցներ*
kesmé	*կտրուկ, վճռական*	késme	*մսի կտրիր*
qəzartma	*տապակած միս,*	qəzártma	*մսի տապակիր*
čevirme	*մի տեսակ անուշեղեն, որ շարունակ դարձնելով են պատրաստում*	čev'irme	*մսի դարձնիր*
dökmé	*թափծու, ձուլածո,*	dö'kme	*մսի թափիր*
asmá	*կախովի,*	ásma	*մսի կախիր*

Երբեմն իրրև մասնիկ ծառայում է ոչինչը, օր. հունարենի և լատիներենի մեջ ուղղական հոլով կազմելու համար բառի ծայրին դրվում են -ός,- us վերջավորությունները. հայերենի մեջ այդպիսի բան չկա, և բառը, առանց որևէ մասնիկի էլ, ուղղական է. լեզվաբաններն մտածելով՝ բառի մասնիկը դրո՛ւ է։ Երբ անգլերեն ասում ենք the man I have seen «այն մարդը, որ տեսա», հարաբերականը ոչնչով միայն հայտնում է։

Ձևակի դեր կարող է կատարել բաղաձայնի պարզ կրկնությունը. այսպես՝ Դրավիդյան լեզուների մեջ արմատի բաղաձայնի կրկնությամբ գոյականը դառնում է ածական, չեզոքը՝ ներգործական։ Բայարմատից ածանց մի բառ են. օր. ōdu «վազել»—ōṭṭu «վարել, քշել», eṛudu «գրել»—eṛuttu «նամակ» և այլն

(Caldwell,204), կամ ներքին ձայնավորի երկարությամբ. ինչպես՝ թամիլ. min «փայլել»—mīn «ասեղ», nakku «լիզել»— nākku «լեզու» (Անդ, 544)։

Վերջապես ունենք սրանից ավելի տակար մի միջոց՝ բառի պաշտոնը որոշելու համար. այդ է՝ բառի դիրքը կամ տեղը նախադասության մեջ. դա մի միջոց է, որից լայն չափերով օգտվում են շատ ու շատ լեզուներ, այդ թվում՝ նաև նորագույն եվրոպական լեզուները։ Այսպես, չինարենում որևէ գոյական նախադասելով մի ուրիշ գոյականի՝ դառնում է սեռական. օր. wang «թագավոր» և tien «տուն» բառերից կազմվում են wang tien «թագավորի տունը» և tien wang «տան թագավորը»։ Ցրանաերենում ենթական և սեռի խնդիրը միայն տեղով են որոշվում. այսպես նաև մեր արևմտահայ գրական լեզվի մեջ. Ներսեսը ծեծեց Գրիգորը, Գրիգորը ծեծեց Ներսեսը։ Տաճկերենում երբեմն բառի դիրքը որոշում է սեռը, օր. Սուլթան Սելիմ (ար.), բայց՝ Սելիմե Սուլթան (իգ.)։

Այսպես ուրեմն, ձևակների տեսակներն են՝ անջատ բառեր, մասնիկներ կամ վերջավորություններ, թեքում, աճականներ, ձայնդարձ, տոն, շեշտ և դիրք կամ տեղ, որոնց միջոցով էլ որոշվում են բառի տեսակները (խոսքի մասեր) և պաշտոնը։

Հաճախ ձևակը մի վերացական գաղափար է, ըստ որում անկախորեն երևան չի գալիս կամ ապրում է բառի մեջ և կարելի է անջատորեն ըմբռնել միայն դատողության ու վերլուծման և ուրիշ լեզուների հետ համեմատության միջոցով։ Ձևակի վերացմամբ բառը կարելի է անվանել նշանակ (sémantème, գերմ. Bedeutungselement), որ իրը թե բառի արմատական մասն է, այն, որ ունի հիմնական իմաստը, և որ միշտ է խորքում՝ հակառակ ձևակների պատճառած զանազան փոփոխություններին։

Այն գիտությունը, որ զբաղվում է ձևակների ուսումնասիրությամբ, կոչվում է ձևաբանություն (морфология, morphologie), որ է հների բառագիտությունը կամ ստուգաբանությունը (этимология)։

Ցուրաքանչյուր լեզվի մեջ ձևակը (եթե նա ներքին փոփոխությամբ կամ շեշտով չէ), ունի իր որոշ տեղը բառակազմության մեջ։ Ոմանք նախադաս են, ուրիշներ հետադաս. ոմանք դեռ խախուտ դրության մեջ են և կարող են թե հետադաս և թե նախադաս լինել. օր. պիտի ըսեմ, ըսեմ պիտի, թո՛ղ երթա,

երբա՛ բող: Կցական լեզուների մեջ, օր. Քուրքերենում, բոլոր մասնիկները հետադաս են և իրար վրա շարվում են: Հակառակը գտնում ենք ամերիկյան լեզուներում. օր. չինուկ լեզվում նախադասության մեջ գտնված բոլոր մասնիկները հավաքվում են սկիզբը, ինչ. օր. մարդը դանակով կնոջ սպանեց նախադասությունը դառնում է՝ ես երան-ը -ով || սպանել մարդ կին դանակ (Վանդրիես, Le langage, 102): Սրանից շատ տարբեր են հուն. ὁ τῶν βαρβάρων πόλεμος «Բարբարոսների պատերազմը», հայ. առ ի զխաւարն և զսուտերն զերկուց մեծացն աւօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ (Եղն. 14), որոնց մեջ դարձյալ մասնիկները հավաքված են նախադասության սկիզբը. բայց սրանք արդեն նախդիրներ են և ոչ թե վերջավորություններ:

Հնդեվրոպական լեզվի արդեն զարգացած շրջանում, որից և ժառանգ լեզուներում, բառը բաղկացած է երեք մասերից. արմատ, մասնիկ և վերջավորություն. սրանցից յուրաքանչյուրը ունի իր որոշ դերը. արմատը բառի այն անվերածելի մասն է, որ տալիս է բառի բնդհանուր գաղափարը, մասնիկը ճշտում է նրա արժեքը, իսկ վերջավորությունը (ինչպես և տոնն ու ձայնդարձը) որոշում են այդ բառի դերը նախադասության մեջ, (ձևացնում է հոլովումն ու խոնարհումը). Այսպես օրինակ, հայ. տալով բառի մեջ արմատն է տա, որ նշանակում է տալու բնդհանուր գաղափարը, մասնիկն է լ կամ ավելի ճիշտ՝ լու-, որ ցույց է տալիս գործողությունը, վերջավորությունն է ով կամ ավելի ճիշտ՝ վ, որ որոշում է թե այդ բառը եզ. գործիական է, այսինքն՝ բնության խնդիր: Վերջավորություններն էլ ձևապես մասնիկներ են և դրա համար-էլ կոչվում են նաև թևքման մասնիկ, բայց պետք է զանազանել նրանք իրարից, քանի որ պաշտոնով բոլորովին տարբեր են:

Թեև մենք ասացինք, որ մասնիկներն ու վերջավորությունները նախավոր անկախ բառերի մաշած ձևերն են, բայց լեզվի արդեն զարգացած շրջանում նրանք այլևս կորցրել են իրենց անկախությունը և բառը կազմող երեք տարրերից ոչ մեկը առանձնապես գոյություն չունի: Այսպես, նույն տալով բառի կազմիչ մասերից ոչ արմատը՝ տա, ոչ մասնիկը՝ լո և ոչ վերջավորությունը վ, չենք կարող գտնել որևէ դեպքում առանձին գործածված:

Հնդեվրոպական նախալեզվի ձևաբանության հիմնական սկզբունքը բունն է: Եթե մոտավորապես վերացնենք բառի ծայրից վերջավորությունը, միացյալը, որ կազմված է լինում արմատի և մասնիկի միացումից, կոչվում է բուն (թեմա) կամ արմատական (ռադիկալ): Այսպես՝ տալով բառի մեջ բունն է տալո:

Արդի լեզուների մեջ չգտնելով բունի գաղափարը, մեզ համար շատ դժվար է ըմբռնել նրա էությունը: Բայց կարելի է բավական պարզել մի այսպիսի օրինակով: Գիտենք, որ հայերենի մեջ հոդնակի սեռականի և տրականի մասնիկն է ց, ինչպես հար-ց, աստեղ-ց, դի-ց տարեր-ց և այլն: Արդ, առնենք մի խումբ ուրիշ ձևեր. ինչպես՝ բանից, ամաց, գետց, զգեստուց, տեղեաց, եթե սրանց մեջ ց հոդ. սեռականի նշանն է և բան, ամ, գետ, զգեստ, տեղի արմատներն են (մեզ համար), ինչ են հապա ի, ա, ո, ու ձայնավորները, որոնք գտնվում են այդ երկուսի միջև: Ահա դրանք բնի ձայնավորներն են և բանի-, ամա-, գետո-, զգեստու-, տեղեա- ձևերն էլ բներն են: Մի օրինակ էլ նոր եվրոպական լեզուներից տալու համար առնենք ֆրանս. formation և former բառերը. առաջինի մեջ form- արմատն է, -tion մասնիկն է, իսկ ինչ է ə, դա բնի ձայնավորն է և forma բունն է, որից գուրկ է form-er բառը. formation բնավոր է, former անբուն .(Marouzeau, La ling, 30): Օր. հուն. käzän «ձեռքս», käzät «ձեռնդ», käzüṅk «մեր ձեռքը», kēzen «ձեռքի վրա», kēzbön «ձեռքում» բառերի մեջ բուներն են käzä-, käzü-, kēze-, kēz- (Szinnyei, Finn-ugr, էջ 55): Սովորություն է բունը նշանակել գծիկով:

Բուները երկու տեսակ են. անվանական և բայական. անվանական է կոչվում այն բունը, որից անուն կամ դոյական է կազմվում, բայական է կոչվում այն բունը, որից բայ է կազմվում. օր. հուն. λόγ-ο անվանական է, որովհետև ունենք նրանից λόγος «խոսք», իսկ λέγ-ο բայական է, որովհետև ունենք նրանից λέγω «խոսել»:

Ինչպես արմատը, մասնիկն ու վերջավորությունը չեն կարող գործածվել առանձին, նմանապես բունը չի կարող գործածվել առանձին: Արդարև, տես-տեղ ունենք հնդեվրոպական նախալեզվի մեջ արմատ առանց մասնիկի և բուն առանց վերջավորության:

(Համմա. հայ. հրամայականի մեջ բե՛ր առանց մասնիկի, և ուղղականի և կոչականի մեջ հա՛յր, առանց վերջավորության). բայց սրանք հնդեվրոպական լեզվի ավելի հին և նախնական վի-

ճակի ճյուղավորումներն են, և լեզվաբանության մեջ համարվում են ոչ թե մասնիկ կամ վերջավորություն չստացող ձևեր, այլ զրո մասնիկով և զրո վերջավորությամբ ձևեր, որոնց մեջ մասնիկի և վերջավորության պակասը լրացնում են բառի ձայնդարձը և տոնը։

Բառը կազմող երեք տարրերի մեջ հնդեվրոպական լեզվում կա միշտ մի հաստատուն կարգ. բառի սկիզբը գրվում է արմատը, վերջում գրվում է վերջավորությունը, իսկ մասնիկները գրվում են այդ երկուսի միջև։ Հնդեվրոպական լեզվի մեջ նախամասնիկներ և միջամասնիկներ չեն եղել։

Չհաշվելով բարդ բառերը, հնդեվրոպական լեզվի մեջ յուրաքանչյուր բառ կարող է ունենալ միայն մի արմատ և մի վերջավորություն, իսկ մասնիկները կարող են լինել բազմաթիվ։ Եթե պատահում ենք այսպիսի մի ձևի, ինչպես ռուս. пойдемте «գնանք երկուսով», ուր ներկա են երկու վերջավորություն м առաջին դեմքի համար և -те երկրորդ դեմքի համար, դա մի անսովոր նորմություն է, որ բացառիկ է նույնիսկ ռուսերենի համար։

Ինչպես բուն, նույնպես և վերջավորությունները կարող են լինել անվանական և բայական, բայց կան վերջավորություններ էլ, որ միաժամանակ կարող են կցվել անունների և բայերի (օր.՝ ske մասնիկով ունենք հուն. և լատ. reminiscor բայաձևերը և միևնույն ժամանակ հուն. παιδίσκος անվանական ձևը), բայց դրանք բացառիկ բառեր են։ Առհասարակ այս երկու բառերը զանազանվում են իրարից իրենց վերջավորություններով. նույնիսկ այնպիսի քերականական երևույթներ, որ հատուկ են թե անվան, և թե բային, ձևանում են տարբեր վերջավորություններով. օր. անունների մեջ հոգնակիի նշաններն են թ, ս, ց, բայց բայի թվի մեջ սրանք ուրիշ արժեք ունեն (հայ. թ՝ բերեմք և այլն ձևերի մեջ ուրիշ հիմք ունի)։

Զատազանց շատ են վերջավորությունները հնդեվրոպական նախալեզվի մեջ. քերականական միևնույն ձևը կարող է կազմվել տարբեր վերջավորություններով. օր. բայի ներկայի եզ. առաջին դեմքը կազմելու համար կա երկու տարբեր վերջավորություն՝ mi և ō, ինչպես՝ didō-mi «տալիս եմ», bherō «բերում եմ»։ Եվ եթե մեկը այն նախալեզուն, որ վերակազմել են գիտուննները, համեմատության դնի արվեստական լեզուներից որևէ մեկի հետ, պիտի տեսնի, թե ինչքան բարդ և ինչքան կրճատ էր այդ հնդեվրոպական նախալեզուն։ Իրենց ամբողջ պատմական կյանքում լեզուների գործն եղավ վերակառուցել հնդեվրոպական նախալեզվի կառուցվածքը՝ պարզեցման, միատեսակության և ընդհանրացման սկզբունքների վրա. անգլերենը նրա ամենավերջին հանդրվանն է, որ հասել է պարզեցման գերագույն աստիճանին, իսկ հունարենն ու լատիներենը ներկայացնում են ամենից վաղնջական վիճակը (Meillet, Traité, 159-160)։

ԳԼՈՒԽ Բ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

Այն բոլոր երևույթները կամ ձևերը, որոնցով կարող է ներկայանալ որևէ բառ նախադասության մեջ, կոչվում է կարգ։ Գոյականների մեջ սեռը, թիվը, յուրաքանչյուր հոլովը, ածականների համեմատության աստիճանները, բայի յուրաքանչյուր ձևը, հատատոտական, բացառական, անցողական, ներգործական, չեզոք, կրավորական, ժամանակի ու եղանակի տեսակները և այլն, այդ բոլորը քերականական կարգեր են։ Լեզվից լեզու կարգերի թիվը նույնը չէ. այսինչ լեզուն ունի շատ ավելի կարգեր, քան այն ինչ լեզուն։ Եվ անհրաժեշտ չէ, որ մի լեզու մարդկային մտքի բոլոր կարգերը զանազանի և նրանց համար հատուկ ձևեր որոշի. կարող է մի ձևին մի քանի կարգեր հատկացվել, կամ որոշ կարգեր կարող են բնավ նկատի չառնվել. օր. Պոլսի հայը գիտե երկու ներկա. կովկասցին ոչ միայն չգիտե, այլև չի էլ հասկանում։ Բայց կան կարգեր, որոնք անհրաժեշտ են ամեն լեզվի մեջ, չկա լեզու, որ բայերի դրական ու բացասականը չզանազանի իրարից որևէ ձևով։ Տեսականորեն դատելով՝ կարգերի թիվը շատ մեծ է. որքան զարգացած է մարդկային միտքը և որքան մանրակրկիտ ու նրբազնին, այնքան էլ ավելի է և կլինի նրա մոտ կարգերի թիվը։ Գործնականին անցնելով՝ երբ հավաքենք այսինչ կամ այնինչ լեզվի մեջ գտնված կարգերը, նրանց թիվը մեծապես կպակասի, եթե համեմատենք կարգերի այն ընդհանուր գումարի հետ, որ ներկայացնում են աշխարհիս բոլոր կարգերը միասին վերցրած։ Այդ բոլոր կարգերը միասին անշուշտ բավական սուղ թիվ են կազմում։ Սովորական լեզվով խոսելով՝ որքան հարուստ է մի լեզվի քերականությունը, այնքան էլ շատ է նրա կարգերի թիվը։

Պետք չէ կարծել, թե ձևակ և կարգ միևնույն գաղափարներն են, և թե որքան ձևակ ունի մի լեզու, այնքան էլ կարգ ունի նա։ Այս դատողությունը ճիշտ չէ, նախ՝ որովհետև միևնույն կարգի համար կարող են գործածվել զանազան ձևակներ. օր. մեր բարբառների մեջ հոգնակի կազմելու համար ունենք -եր, -ներ, -ք, -իկ, -սաաց, -տիք, -տաւք և այլ մասնիկները կամ ձևակները, բայց նրանք բոլորը ծառայում են միայն մի նպատակի, այն է՝ հոգնակի կազմելու, և հոգնակին մի կարգ է միայն։ Նույնպես՝ անցողական կազմելու համար ունենք երկու ձևակ -ցնել և տալ (օր. սիրցնել, սիրել տալ), բայց անցողականը մի կարգ է միայն։ Երկրորդ՝ տարբեր կարգեր կարող են կազմվել միևնույն ձևակով. ինչպես՝ սեռականն ու տրականը գրաբարի մեջ և ուղղականն ու հայցականը աշխարհաբարի մեջ, որոնք միևնույն ձևն ունեն, բայց տարբեր կարգեր են, ինչպես երևում է ուրիշ կողմերից (սեռականն ու տրականը գերանունների հոլովման մեջ, ուղղականն ու հայցականը շնչավորների զանազանության մեջ)։ Այնուամենայնիվ, որևէ լեզվի կարգերը որոշելու գլխավոր միջոցը նրա ձևակներն են (այս բառի տակ հասկանալով բոլոր տեսակները. մասնիկ, վերջավորություն, շեշտ, բառի դիրքը, պաշտոնը և այլն) և ձևակներից դուրս կարգեր ենթադրել դժվարին, և ապացուցանելն էլ անկարելի է։— Այսպես օր. հունարենի մեջ կա ըղձական եղանակ. հին հայերենը չունի դրա համար առանձին ձև. այդ գաղափարը արտահայտելու համար նա գործածում է սահմանական եղանակը. ուստի կարելի չէ ասել կամ մանավանդ ապացուցել, թե հին հայերն էլ ունեին ըղձական, քանի որ առանձին մի ձևակ չէին հնարել դրա համար։

Կարգերը լեզուների կյանքի մեջ փոփոխական են. այսպես օր. հնագույն հայերենը (նախ քան ե դարը) գիտեր գոյականների սեռը և երկակի թիվը, գրաբարի մեջ դրանք արդեն ջնջված են։ Արդի հայերենի, մանավանդ բարբառների մեջ, հնարված են այնպիսի կարգեր, որ գրաբարը չգիտե, ինչ. Պոլսի բարբառի կրկին ներկաների տարբերությունը (կուտեմ և կուտեմ կոր)։ (Հնդեվրոպական նախալեզուն բայի անեղևույթ չուներ. այսպես և հունարենը. ավելի հետո հունարենը հնարեց այդ ձևը. նոր հունարենը նորից է կորցրել)։ Այս բոլորից պետք չէ հետևցնել, թե կարգերի առատությունը անպատճառ կուլտուրական բարձրության արդյունք է։ Կան ազգեր, որոնք բազմատե-

սակ քերականական կարգեր ունեն և սակայն կուլտուրական ամենացածր աստիճանի վրա են։

Կարգերի քերականական բաժանման և տրամաբանական բաժանման մեջ մեծ տարբերություն կա։ Միևնույն սեռականը, որ մի միակ կարգ է, իր իմաստով (այսինքն՝ տրամաբանորեն) կարող է ներկայացնել շատ կարգեր. օրինակ՝ «Սեպուհի ձին, Սեպուհի քամբը, երկու կոպեկի հաց» ձևերի մեջ երեք ստորադծված բառերն էլ սեռական են. բայց առաջինը ցույց է տալիս պատկանելություն, երկրորդը՝ վերաբերություն, երրորդը՝ արժեք, որոնք բոլորովին տարբեր բաներ են։

Ընդհակառակը, միևնույն տրամաբանական կարգը (օրինակ, պատկանելություն) ներկայանում է զանազան լեզուների մեջ զանազան ձևերով (այսինքն՝ քերականական կարգերով).— հայերենի, հունարենի, լատիներենի մեջ ներկայանում է սեռական հոլովով, չինարենի մեջ գոյականի հարադրությամբ, ռուսերենի մեջ ածականով (армянская церковь)։

Ֆրանսերենի մեջ երբեմն արականով (la maison á Pierre), թուրքերենի մեջ սեռացական հոդով (ǰeviz aγaǰə «ընկուզի ծառ»), հայերենի մեջ՝ նաև բարդությամբ (զորահանդես) և այլն, որոնք բոլորը ծառայում են նույն նպատակին[1],

[1] Հետաքրքրական պիտի լիներ կազմել աշխարհիս զանազան լեզուների տրամաբանական կարգերի համաքաժուն, և թե՝ յուրաքանչյուր լեզու ինչ ու ինչ միջոցների է դիմել բացատրելու համար այդ կարգերը։ Դա պիտի լիներ ընդհանուր մարդկային մտքի մատնոցության հայելին։ Այն ժամանակ պիտի տեսնվեր, թե որքան անճիշտ են հաճախ մեր քերականական տերմինները և անհամապատասխան՝ տրամաբանական մտածողության։ Այս իրողությունը, սակայն, իրավունք չի տալիս մեզ քան կամս փոխելու քերականական ընդունված տերմինները և նրանց տեղ նորերը հնարելու։ Քերականությունը միջազգային գիտություն է դրեթե նույնչափ, որչափ քիմիան կամ աշխարհագրությունը։ Անհատական ձևափոխությունները ջնջում են ընդհանուր գիտության։

ԳԼՈՒԽ Գ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

(Բառերի տեսակները և նրանց հատկությունները)

Ինչպես արդեն գիտենք, լեզուները իրենց նախնական վիճակում ճանաչում էին միայն արմատ-բառեր, իրարից անջատ ու անփոփոխ։ Զարգացման հետագա շրջանում երկրորդական բառերը մաշվելով ու կցվելով այդ արմատ-բառերին, առաջ բերին այն զանազան ձևափոխությունները, որ մեկ բառով կոչում ենք թեքում (flexion)։ Սկսած այդ պահից լեզվի մեջ ձևացան երկու կարգի բառեր. 1) փոփոխելի բառեր, այսինքն նրանք, որոնք ենթարկվում են թեքման օրենքներին, և 2) անփոփոխելի բառեր, այսինքն նրանք, որոնք թեքումից ազատ են։

Թեքումը կատարվում է զանազան նպատակներով, որոնցից գլխավորներն են՝ թիվ, սեռ, դեմք ու հոլով։ Իրերի բերմունքը այնպես է, որ ամեն բառ կարող է ունենալ թիվ և սեռ, բայց դեմքն ու հոլովը բաժանվում են. այն բառերը, որ ունեն հոլով, չունեն դեմք, և այն բառերը, որ ունեն դեմք, չունեն հոլով, բացի այն բառերից, որ հենց իրենք դեմք լինելով՝ բնականաբար ունեն և հոլով։

Այստեղից առաջանում է փոփոխելի բառերի երկու ստորաբաժանում. ա) անուն, այսինքն այն կարգի բառեր, որոնք բնդունակ են կրելու հոլովական փոփոխություններ. բ) բայ, այսինքն այն կարգի բառեր, որոնք ընդունակ են կրելու դեմք արտահայտող փոփոխություններ։ Այս սահմանը իհարկե հարաբար է այն լեզուներին, որոնց մեջ հոլովում և խոնարհում կա և չի հարաբերում այն լեզուներին, որոնք թեքում չունեն (ինչպես չինարենը)։ Օր. ճապոներենում գոյականը, ածականը և մակբայը անփոփոխելի են, իսկ բայը և ածականը փոփոխելի։ Կո-

բնական լեզվի մեջ գոյականը անփոփոխելի է և այլն: Բայց նույնիսկ այս կարգի լեզուների մեջ բառերի անփոփոխելիությունը ձևական է միայն, որովհետև փոփոխումը, եթե զանազան մասնիկներով ու վերջավորություններով չի կատարվում, կատարվում է գոնե տեղով, շեշտով կամ այլ ամբողջական բառերի հարադրությամբ, ուրիշ խոսքով՝ այլ ձևակներով:

Բառերի տեսակների այս սահմանը հիմնված է նրանց գործածության եղանակի վրա. բայց կարելի է տալ նաև նրանց վերացական սահմանը՝ անկախ գործածության եղանակից: Անունը ցույց է տալիս մի գաղափար, լինի դա նյութական թե վերացական (այն է՝ առարկա, էակ, հատկություն և այլն) և կարելի է ըմբռնել առանձին, անկախ որևէ նախադասությունից. այսպես, օր., մի որևէ կոչական, իսկ բայը ցույց է տալիս. 1) գործողություն, 2) ընթացք, 3) պայման և անկարելի է ըմբռնել առանց որևէ նախադասության: Եթե գործողությունից անկախ ուզենանք ըմբռնել գաղափարը, կունենանք մի այնպիսի բառ, որ բռնում է երկուսի միջին տեղը. այն է անեղևույթ կամ դերբայ[1], որ նշանակությամբ պատկանում է բային, իսկ գործածությամբ՝ անվան, որովհետև զուրկ է դեմքի արտահայտությունից և կարող է հոլովվել:

Անունն իր կարգին բաժանվում է զանազան տեսակների, այն է՝ գոյական, ածական, դերանուն: Երբ անունը ցույց է տալիս անձը կամ առարկան, գոյական է, իսկ երբ ցույց է տալիս նրա հատկությունը, ածական է, օր. մարդ եկավ, մարդ է նա: Դերանունը գործածվում է գոյականի փոխարեն:

Անփոփոխելի բառերն էլ ունեն իրենց տեսակները. նրանք, որոնք հարաբերություն ունեն բայերի հետ և որոշում են նրանց զանազան պարագաները, կոչվում են մակբայ. իսկ նրանք, որոնք հարաբերություն ունեն անունների հետ և որոշում են նրանց զանազան պարագաները, կոչվում են նախադրություն: Սրանցից դուրս կան նաև շաղկապներ, որոնք երկու անուն կամ երկու բայ (և առհասարակ երկու միատեսակ բառ) իրար միացնելու են ծառայում: Սրանցից ոչ մեկը անկախ ըմբռնելի գաղափար չէ. մակբայ և նախադրություն արդեն միևնույնն են և առնչության եղրով միայն տարբերվում են: Երկուսը միանում են նախդիր ձևի տակ, ըստ որում նախդիրը հավասարապես կարող է կցվել թե անվան, և թե բային: Ընդ-արձակ, ընդ-ունել, բոլորն

[1] Ոմանք կոչում են բնդունելություն:

էլ առհասարակ կարող են համարվել ձևակ, մանավանդ շաղկապն ու հոդը, որ արդեն ամեն լեզու չունի և ամենևին անկախ տարր չէ: Կան լեզուներ, որ ամեն մի նախադրություն իրը հոլով են գործածում:

Բոլորովին դուրս է մնում ձայնարկությունը: Ձայնարկությունները իրապես բառեր չեն, այլ ձայներ, որոնց նշանակությունը կախված է արտահայտության տոնից: Դրանք պատկանում են բնաձայններին և շատ անգամ պարունակում են այնպիսի ձայներ, որոնք ավյալ լեզվի ձայնաբանությունից դուրս են. ինչպես ջ՛ք ջ՛ք և այլն:

Այս է ահա բառերի տեսակների տրամաբանական բաժանումը, որ և կոչվում է խոսքի մասեր (մասունք բանի):

Վերևում ասացինք, որ բառերի տեսակների այս բաժանումը հիմնված է նրանց գործածության եղանակի վրա, ուրեմն, հենց որ գործածության եղանակը փոխվեց, փոխվում է նաև բառի տեսակը: Ամեն մի բառ, որ ի բնե համարվում է այսինչ տեսակի, կարող է հեշտությամբ անցնել մի ուրիշի. սրա համար բավական է, որ նա ընդունի թեքական այն ձևը կամ ձևերը, որ այդ մյուսը ունենում է: Այսպես, ածականը կարող է գործածվել իրը գոյական և դրա համար բավական է, որ առանձնա հոդ կամ հոդնակի դառնա և կամ հոլովվի և կամ նույնիսկ բավական է, որ գոյականից զրկվի և առանձին ու անկախ գործածվի, ինչպես՝ կարմիր գլխարկ.—այստեղ կարմիր ածական է. բայց՝ կարմիրը լավ է, կարմիրները եկան, կարմրին եմ նայում, կարմիր եմ ուզում. այս բոլորի մեջ կարմիր գոյական է:

Գոյական և ածական հաճախ միևնույն բառերն են. օր. հայ. թագավոր, որ բուն նշանակում է «թագակիր», էապես ածական է, ինչպես նման կազմությամբ բազմաթիվ բառեր (ժամանակավոր, գործարանավոր), բայց ընդունված է և գործածվում է իրը գոյական: Կան բառեր, որոնց գոյական թե ածական լինելը էապես հայտնի չէ և ըստ պարագային միայն, կամ այս են, կամ այն. ինչ. սուր, որ «հատու» իմաստով ածական է, «թուր» իմաստով՝ գոյական: Փակ՝ «կողպեք» իմաստով գոյական է, իսկ «փակված» իմաստով՝ ածական. դերանունները անմիջապես կապված են գոյականի հետ, որոնց տեղն են գործածվում: Երբեմն էլ գոյականներն են, որ դերանունների տեղ են գործածվում, ինչպես ևվատաս, երամաւքդ, Ձերդ մեծությունը. պրս. ban-

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ

da «ծառա» բառը շարունակ գործածվում է իբրև Ա. դեմքի անձնական դերանուն։

Ֆրանսերենի մեջ, ուր գոյականը սառնում է հոգ, իսկ ածականը՝ ոչ, միևնույն անունը առաջին դեպքում ունենում է հոգ, երկրորդ դեպքում՝ ոչ. ինչ. le maçon est venu կամ faites venir un maçon կամ il n'y a pas de maçon ici, բայց՝ Pierre est maçon (Meillet)։ Սակայն երբեմն այս միջոցն էլ չի օգնում. օր. ֆրանս. un philosophe grec և un grec philosophe ձևերի մեջ հայտնի չէ, թե որն է գոյական և որն է ածական. հայերենի մեջ հեշտությամբ կարելի է որոշել նույն փիլիսոփա և փիլիսոփա նույն. առաջինի մեջ հուն ածական է, որովհետև նախադաս է, երկրորդի մեջ գոյական է. բայց ֆրանսերենը, ուր ածականը կարող է գոյականից թե առաջ դրվել, և թե հետո, միջոց չունի որոշելու. այսպես նաև գրաբարի մեջ. փիլիսոփայ յոյն և յոյն փիլիսոփայ. բայց այս բոլորը լեզվի անորոշություններից է, ապա թե ոչ մարդկային միտքը գիտե, թե ինչ է ուզում ասել. դրա համար էլ ֆրանսերենը գրության մեջ գործածում է գլխատառ. Grec philosophe և philosophe grec (առաջինի մեջ grec գոյական է գլխատառով գրված, երկրորդի մեջ՝ ածական)։

Զուգաշարենում գոյական և ածական հաճախ միևնույն են. օր. sʸ uta «լույս և լուսավոր», šarax «տաք և տաքություն», soxam «ցուրտ և ցրտություն», axmax «հիմար և հիմարություն» (Աշմարին, Матер., էջ 115—6)։ Դարձյալ չուվաշերենում. ինչպես և արաբերենում, հաճախ բայ և գոյական չեն զանազանվում. օր. արաբ. qatl «սպանել և սպանություն», չուվաշ. əlxan «անիծել և անեծք», polaš «օգնել և օգնություն» (Ашмарин, Матер, էջ 103)։

Կարելի է որևէ գործված, նույնիսկ ամբողջ նախադասություններ իբրև առարկա ըմբռնել և այն ժամանակ նա կլինի անուն (գոյական) և կենթարկվի, բնականաբար, հոլովման։

Օր. քսի—քսավ «բամբասանք, տարածայնություն»
ասե—կոսե » »

Յայտաւուրք (որ կազմված է յայտ առար «այս օրվա մեջ», մի ամբողջ գործվածքից, բայց ամբողջը իբրև մի գիրք ըմբռնելով՝ եղել է գոյական և առացել է ք հոգնակերտը)։

Ֆր. qu'en dira-t-on (ինչ պիտի ասեն այդ մասին) մի գոյական է դարձել և կարելի է ասել օր. je ne fais pas attention à des.... Կարելի է կազմել հայերեն այդպիսի մի խոսք. քու այդ բոլոր «ենա, գնացի, պիտի գամ, պիտի գայի»-ները ամենևին արժեք չունեն ինձ համար, ուր չորս նախադասություն իբր մի գոյական են առնված։

Անգլերենի մեջ ոչ միայն գոյական և ածական, այլ նաև բոլոր տեսակի բառերը կարող են իրար փոխարինել. օր. round բառը՝

գոյ.— a round of the ladder
բայ.— he took his daily round
ած.— a round table
մակբայ.— he failed to round the lamp-post
նախադր.— come round to-morrow
he walked round the house
(Iespersen, Grouth, 151)

Զիրյեներենի մեջ (ֆիննական լեզու) գոյականը նաև ածական է, բայը գոյական է, գոյականը նախադրություն կամ մակբայ է (Wiedemann 111)։

Նման օրինակներ կարող ենք գտնել նաև հայերենի մեջ, ինչ. Նա հուր հեր ունէր, բոց ունէր մօրուս.

գոյ=ած. լույս աշխարհ, արև եր, աճապև օր, էշ մարդ, ծակ տակառ, երկաթ գրիչ, ոսկի բաժակ.
ած=գոյ. մութը պատեց; խավար իջավ.
գոյ=մկբյ. առավոտը արի, գիշերը դամ.
ած=մկբյ. լավ առացիր.
բայ=ած. առավ փախավի մեկը, հասցեն գրեցիր.

Կան բառեր, որ չեն իմանա բուն ինչ լինելը. ցերեկ, ցայգ մակբայ են գոյական գարձած, թե ընդհակառակը։

Բառերի տեսակների այսպիսի փոխանակությունը կոչվում է փոխակարգություն (hypostase)։

Բոլոր քերականները համաձայն չեն բառերի տեսակների բաժանման մեջ։ Արաբ քերականները ճանաչում են միայն երեք մասունք բանի. անուն, բայ և մասնիկ։ Այս բաժանմունքը, որ լավագույնն է, նույն է վերի բաժանման հետ, որովհետև մասնիկ ասելով նրանք հասկանում են անփոփոխելի բառերը։ Հույն և լատին քերականները, և նրանց հետևողությամբ նաև արդի եվրոպացի քերականները, ընդունում են 8—10 տեսակ մասունք բանի, որոնք են. գոյական, ածական, դերանուն, նախա-

դրություն, բայ, մակբայ, շաղկապ և ձայնարկություն, որոնց վրա երբեմն ավելացնում են հոդը և դերբայը:

Բայց կա այժմ բառերի տեսակների բաժանման համար մի բոլորովին նոր ուղղություն, որի մասին երկու խոսք անհրաժեշտ է դնել այստեղ:

Ինչպես տեսանք, բառերի տեսակների բաժանմունքը հիմնված է նրանց ձևաբանական կամ շարահյուսական գործածության վրա. այդ պատճառով էլ բառերի տեսակները կարող են շարունակ փոփոխվել (փոխակերպություն), նոր ուղղության քերականները հենց այս կետը գտնում են թերի և անհիմն.— բառերի տեսակների բաժանումը հիմնել ձևաբանության կամ շարահյուսության վրա անտրամաբանական է. բառի տեսակի որոշումը պետք է լինի քերականության այդ երկու ճյուղերից անկախ և ինքնագլուխ. նա պիտի հիմնվի իմացաբանության վրա: Բայց քե՞ն է այս իմացաբանությունը, և այդ իմացաբանության վրա հիմնված բաժանումը բառերի ի՞նչ տեսակներ պիտի որոշե, բոլորովին հայտնի չէ դեռ[1]:

1 «Իմացաբանական քերականության» մասին մի առանձին աշխատություն ունի Գ. Մակը՝ «Նոտք մասերի ուսմունքը» վերնագրով տպված է «Երևանի Պետ. համալսարանի պրոֆեսորական աշխատություններին» ժԱ հատորում, 1938, էջ 189—244: Նույնը ներկայացված էր իրրև դիսերտացիա՝ քեկնածուական աստիճան ստանալու համար (ատենին քերթիկ՝ 19 ֊ ի թ. դեկտ. 4): Բայց այստեղ էլ կա միայն հին սխեմայի քննադատությունը, հերքումը, բայց քե՞ն է իր առաջարկելիքը նոր ձևը, դեռևս հայտնի չէ:

ԳԼՈՒԽ Գ

ՏՈՆ ԿԱՄ ՇԵՇՏ ԻՐՐ ՁԵՎԱԿ

Երաժշտական շեշտի գործածությանը նայելով՝ մենք տեսնում ենք, որ հնդեվրոպական լեզվի մեջ ոչ մի ձայնական օրենք չկար ստեմանափակելու համար այդ. բառի տոնը ներկայացնում էր հարաշարժ մի վիճակ: Ահա այս վիճակը օգտագործվեց ձևաբանության մեջ և հնդեվրոպական լեզուն գործ ածեց շեշտի տեղափոխությունը իրր միջոց՝ տալու համար բառին ինչպես տարբեր իմաստ, նույնպես և տարբեր քերականական ձև: Ամենից առաջ բառը կարող է լինել առանց տոնի. այսպես հուն. τε, լատ. que, սանս. ca՝ մասնիկները, և հայ. և, ու շաղկապները առանց տոնի են: Շատ պարագաներում էական բայը (ինչ. հուն. ἐστι, սանս. asti, լատ. est և հայ. է) անշեշտ է:

Շեշտի փոփոխությամբ իմաստի և քերականական ձևի փոփոխության իրր օրինակ հիշենք՝ հուն. τόμος «կտոր, մաս, հատված» և τομός «կտրող, հատու, սուր», սանս. pā́dah «ոտքեր» և padáh «ոտքի»: (Տարբեր է ռուս. му́ка «տանջանք» և мука́ «ալյուր», որոնք գանազան արմատներից են առաջանում):

Հնդեվրոպական լեզվի մեջ ուրեմն շեշտի դիրքը ճանաչել անհրաժեշտ է և նա է շատ անգամ, որ որոշում է քերականական այս կամ այն ձևը:

Բայց հետագայում շեշտը բոլոր լեզուներից էլ վերացավ կամ ձևափոխվեց, այնպես որ ձևաբանական տարբերություն չպարկեշտ:

Հայերենի մեջ շարժական շեշտը ջնջված լինելով՝ այսպիսի ձևաբանական տարբերություններն էլ ջնջված են. բայց նույնիսկ հայերենի մեջ շեշտի միջոցով կարող ենք բառի իմաստի կամ ձևաբանական արժեքի մեջ փոփոխություն մտցնել. ինչպես օր. և բառը՝ որ անշեշտ դեպքում միացնող շաղկապ է, իսկ

շեշտ առանձրով՝ նշանակում է թե, մինչդեռ ու, որ և չափական համանիշն է, չի կարող բնավ առանձ շեշտ։ Նույնպես էլ, որ անշեշտ պարզ շաղկապ է, շեշտով դառնում է է՛լ «այլևս» (ես էլ, դու էլ, է՛լ չգաս). կամ ևս, որ անշեշտ նշանակում է «ևնաև», շեշտով նշանակում է «ավելի» (ես ևս. և՛ս առավել)։— Թե բառը անշեշտ նշանակում է «որ», շեշտյալ նշանակում է «ևնաև, էլ», ինչ. ասում է թե՝ թե՛ ես և թե՛ դու պետք է գնանք։

Կեր «ուտելիք»— կե՛ր (հրամայական).
Երթ «գնալը»— ե՛րթ «գնա».
չե՛րթար «չի գնում»— չերթա՛ր (անկ.)
չո՛ւտեր «չի ուտում»—չուտե՛ր (անկ.)

Լեհաստանի վերջին բռնությունները (այն բռնություններ-ը, որոնք նորերս են տեղի ունեցել).— Նա ծախսեց իր վերջի՛ն կոպեկը (այլևս չունի)։

Ժողովրդի սառին խավերը (ցածր, հասարակ. առանց անարգանքի).— Դա սառի՛ն մարդու գործ է (վատ, գեշ, անարգական իմաստով)։

ԳԼՈՒԽ Ե

ՁԱՅՆԴԱՐՁ

1. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Թուրքերենի մեջ թե գոյական, թե բայական արմատները ընդհանրապես միավանկ են, թեև կան նաև երկվանկ արմատներ։ Արմատները բաղկացած են լինում մի ձայնավորից+մի բաղաձայն, բայց ավելի շատ երկու բաղաձայնից՝ միջին մի ձայնավորով, որ ընդունում է բոլոր երանգները։ Այս դեպքում արմատի հիմնական իմաստը կազմող մասը դառնում է ձայնավորի երանգը, որով ձայնավորը դառնում է ավելի արժեքավոր, քան բաղաձայնը (հակառակ սեմական և հնդեվրոպական լեզուներին)։ Ահա մի խումբ օրինակներ.

as «կախել», es «փչել» (քամին), is «ճրագի մուր», us «խելք, բանականություն».

at «ձի», ta «ևնեաել», et «մխա», it «շուն», et «անել», ot «խոտ», öt «հնչել».

bal «մեղր», bel «մեջք», bul «գտնել», bil «գիտևնալ», bol «առատ», böl «ճեղքել».

baš «գլուխ», beš «հինգ», boš «դատարկ».

dal «ճյուղ, ոստ», dal «խորասուզվել», del «ծակել», dil «լեզու», dol «լցվել», dul «այրի».

sal «արձակել», sil «սրբել, մաքրել», sol «ձախ», sol «խուճանալ».

sar «փաթաթել», ser «փռել, տարածել», sər «ջնարակ», sor «հարցնել», sür «քշել, վարել».

yal «բաշ», yel «քամի», yəl «առյուծ», yol «ճամբա».

yar «ճեղքել», yer «տեղ, գետին», yor «հոգնեցնել».

yaz «ամառ», yaz «գրել», yüz «երես», yüz «հարյուր», yüz «լողալ»։

Այսպիսի երևույթ չենք տեսնում հնդեվրոպական նախալեզվի մեջ։ Այստեղ կարելի է գտնել համանուն արմատներ (ձևով նույն, բայց իմաստով տարբեր). այսպես՝ per ձևով վեց տարբեր արմատ կա, իսկ pel ձևով՝ չորս արմատ. բոլորն էլ տարբեր նշանակությամբ։ Բայց այդ արմատների հիմնական մասը երկու ձայրի բաղաձայններն են, իսկ մեջտեղի ձայնավորը արժեք չունի։ Նա կարող է փոփոխվել շարունակ հաղթաձայն այն օրենքի, որ կոչում ենք ձայնդարձ և որի մասին ընդարձակ կխոսանք քիչ հետո։

Մենք խոսեցինք հնդեվրոպական հիմնալեզվի մասին, բայց ոչ թե հնդեվրոպական ժառանգ լեզուների մասին, որոնց մեջ կարող ենք գտնել թուրքերենի նման բաղմաթիվ բառեր, որոնց բաղաձայնները նույն են, իսկ ձայնավորները տարբեր և այսպիսով կազմում են տարբեր բառեր կամ արմատներ։

Այսպես՝ հայերենում կան այսպիսի շարքեր.

դար «հարյուր տարի»
դար «բարձրություն»
դեր (դերասանի դերը)
դիր (դնել բայից)
դուր (հյուսնի գործիքը)
դիւր («հաճույք, հեշտություն»)

լար «թել»
լեր «եղիր» (լինել բայից)
լիր (լցնել բայից)
լուր (լսել բայից)
լոր «լորամարգի թռչունը»

կար «կարելու կար»
կար «կարողություն»
կեր «ուտելիք»
կիր «քիրեճ»
կուր (կեր բառի համանիշը)
կուր «տաշտ կամ նավակ»։

Այսպիսի բառերի խմբեր կարելի է կազմել բոլոր նոր հնդեվրոպական լեզուների մեջ. բայց դրանք ուշ ժամանակի

պարզացման արդյունք են, մի մասը՝ փոխառությամբ, մյուս մասը ներքին աճման բերմամբ. օրինակ՝ վերի բառերից երկրորդ խմբի մեջ չորսը հնդեվրոպական արմատներից են կազմված, իսկ վերջինը (լոր) անհայտ է։ Առաջին շարքից միայն դիր բառն է հնդեվրոպական, մյուսները անհայտ են։ Երրորդ խմբի մեջ կեր և կուր հնդեվրոպական են, կիր փոխառյալ է առաբերենից, մյուսները անհայտ են։

Ֆրանսերենը լիքն է այսպիսի համանուններով, որոնցից յուրաքանչյուրը լատինական տարբեր արմատի ձևափոխությունն է, որ հասել է միևնույն վախճանին։ Այդպիսի բառերը Ֆրանսիական ակադեմիան դիտմամբ որոշել է գրել տարբեր ուղղագրությամբ, ընդհանրապես բառավերջում դնելով ավելորդ բաղաձայններ, որով խորություն է գրել նմանաձայն բառերի մեջ իմաստի տարբերությունը աչքին շոշափելի դարձնելու համար։ Սրանից էլ ծագել է ֆրանսերեն լեզվի ուղղագրության անհաղթահարելի դժվարությունը։

2. ՁԱՅՆԴԱՐՁԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՎՈՒՄ

Երբ առնենք օր. հայ աճ- արմատը և կազմենք նրանից բարդեր, ածանցներ, հոլովյալ և խոնարհված ձևեր, կտեսնենք, որ արմատի ձևը ամեն տեղ էլ մնում է անփոփոխ։ Այսպես՝ ճանճել, սաւանճել, աճիւն, աճամբ, աճնաւոր, աճանճ, անճնական և այլն։ Բայց երբ ասում ենք ակր, սիրել, լուր, լքաւոր, արմատի է, ու ձայները փոփոխում են կանոնավոր կերպով։

Ձայնավորների այս փոփոխումը կոչվում է ձայնդարձ (Чередование гласных, apophonie կամ alternance vocalique, Ablaut)[1]։

Կարծվածից ավելի տարածված մի երևույթ է ձայնդարձը թե հին և թե նոր լեզուների մեջ, և լեզուների զանազան խմբերի մեջ, մի տեղ ավելի, մի ուրիշ տեղ պակաս չափով։

Օրինակ, ձայնդարձ կա չինարենում, ուր ծառայում է իբրև միջոց ածանցման. օր.

γám[3] «բերանում պահել»—γiem[3] «ուռնձ»
ku[3] «վառառականը»— kà[3] «գինի»
(H. Maspéro, MSL 23, 325—6)։

[1] Պետք չէ շփոթել գերմ. umlaut ֆր. métaphonie կոչված երևույթի հետ, որ ավելի մասնավոր մի պարագա է ներկայացնում։

Ձայնդարձ կա նաև ուգրո-ֆիննական նախալեզվի մեջ, ուր շեշտյալ վանկը ուներ ուժեղ ձայնավոր, իսկ անշեշտ վանկը՝ թույլ ձայնավոր։ Թուլությունը երևում էր թե տեղության, և թե երանգի կողմից.—երկար ձայնավորը կարճանում էր և կամ վերածվում էր ուրիշ ձայնավորի (ձայնդարձ)։ Այս օրենքը այժմ ընդհանուր չէ ուգրո-ֆիննական լեզուների մեջ, բայց նրա հետքերը մնում են ժառանգ լեզուներում (Szinnyei, Finn-ugr. spr., էջ 53)։

Ձայնդարձ կա մեր կովկասյան հարևաններից չէչեներեն լեզվի մեջ, ուր գոյականի ձայնավորը ամբողջ հոլովման ժամանակ շարունակ փոփոխվում է. օր.

t'ur	«թուր»,	սեռ.	t'üirin	հոգ. t'arraš
sai	«ճղճերուկ» »		sēń	» siēš

Ձայնդարձը շատ սովորական երևույթ է մանավանդ սեմական լեզվախմբի մեջ։ Սեմական լեզուների քերականությունը ամբողջապես հիմնված է ձայնդարձների վրա։

Ավելի լավ ըմբռնելու համար ձայնդարձի էությունն ու արժեքը, օրինակ առնենք արաբերենից։

Այս լեզվի մեջ արմատը սովորաբար բաղկացած է լինում երեք ձայնից, գլխավորապես երեք բաղաձայններից։ Այս երեք բաղաձայնները միանում են իրար հետ ə, ā, i, ī, u, ū ձայնավորներով և կամ առանց որևէ ձայնավորի։ Ձայնավորների կպած դիրքերով կազմվում են արմատի զանազան ածանցները. այսպես qtl «սպանել» արմատից ունենք.

qatala	«սպանեց»,	ներգործականի կատարյալ ձևը.
ya-qtulu	«սպանում էր», »	անկատար »
qutila	«սպանվեց»,	կրավորականի կատարյալ »
ya-qtalu	«սպանում էր», »	անկատար »
qātala	«սպանեց»,	ներգ. կոր. 3-րդ ձևը.
yu-qātilu	«սպանում էր»,	ներգ. անկ. 3-րդ ձևը.
qatl	«սպանել»,	անորոշ ձևը
qātil	«սպանող»,	ներկա դերբայի ձևը.
qattāl	«մարդասպան»,	արհեստ կամ զբաղմունք ցույց տվող ձև
maqtal	«սպանդանոց»,	տեղ կամ գործիք ցույց տվող ձև.

Կարելի էր դեռ շատ երկարել ածանցների թիվը. բայց այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ այս բոլորի մեջ՝

1) Բառի ընդհանուր նշանակությունը կապված է արմատի բաղաձայնների հետ.

2) Քերականական ձևերի նշանակությունը որոշում են բաղաձայնների միջև մտած ձայնավորները, որոնք ամեն մի ձևի համար ունեն մշտապես նույն դիրքը.

3) Արմատը բուն այսպես չունի առանձին ձև, նա երեք բաղաձայնների հասարակ հարաբերություն է, որ մասնավորապես կամ տեսականորեն միայն կա և խոսակցության մեջ գոյություն չունի, որովհետև ինքնին առանձին չի ներկայացնում ոչ մի քերականական ձև։

Մասնավորապես այսպես է նաև հնդեվրոպական նախալեզվի մեջ. արմատի անկախ գործածությունը, ինչպես տեսանք, արդեն սահմանափակված է. ձայնդարձի միջոցով արմատի միջին ձայնավորը առանում է այլևայլ կերպարանքներ, որանով էլ որոշվում են քերականական ձևերը. արմատը բնորոշվում է բաղաձայններով ու ձայնավորներով. ձայնավորները այդտեղ դեր չունեն։ Տարբերությունը, որ կա հնդեվրոպական ածանցման և սեմական ածանցման միջև, այն է, որ մինչդեռ սեմական ածանցման մեջ գործում է բացառապես ձայնդարձը և մասնիկները գրեթե դեր չունեն, ընդհակառակը, հնդեվրոպական ածանցման մեջ կան բազմաթիվ մասնիկներ, որոնք ձայնդարձի հետ համընթաց գործում են։ Այսպես. օր. հուն. πατήρ «հայր», πατέρες «հարք» πατρῶν «հարց» ձևերի մեջ նշ. ուղղականի նշանն է ē ձայնդարձը, հոգ. ուղղականի նշանն է e ձայնդարձը, հոգ. սեռականի նշանն է o ձայնդարձը։ Բայց սրանց հետ միասին ունենք նաև es, ōn մասնիկները, առաջինը հոգ. ուղ., երկրորդը՝ հոգ. սեռ։ Նույնպես նաև հուն. πέτομαι «թռչում եմ», é-πτόμην «թռա», ποτάομαι «թռչում» ձևերի մեջ e ձայնդարձը ցույց է տալիս սահմ. ներկա, զրո ձայնդարձը ցույց է տալիս կատարյալ և o ձայնդարձը ցույց է տալիս ըղձականը. սակայն այս բոլորի մեջ էլ կան կանոնավոր մասնիկներ։

Ձայնդարձը հնդեվրոպական լեզվի մեջ հատուկ է ոչ միայն արմատին, այլև մասնիկներին։ Օր. գործողության կատարողը ցույց տալու մասնիկն է t+r, որ զանազան ձայնդարձներով կարող է դառնալ tr, ter, tēr, tor։

Հնդեվրոպական լեզվի ձայնդարձի ամենասովորական ձևը ունի հետևյալ ֆորմուլան.

e o —

ուրեմն մի արմատ՝ որ բաղկացած էր p և t բաղաձայններից, առանում էր երեք ձև.

pet pot pt

առաջինը կոչվում է e կամ բարձր աստիճանի, երկրորդը o կամ միջին աստիճանի, երրորդը զրո կամ ցածր աստիճանի ձայնդարձ, որ ձայնավորից զուրկ աստիճանն է։

Երկրաբարառների և ձայնորդների ձայնդարձները գրեթե նույնն են. միայն ցածր աստիճանի մեջ դառնում են պարզ ձայնավոր, այսպես՝

ei	oi	i
eu	ou	u
er	or	r
el	ol	l
en	on	n
em	om	m
we	wo	u
re	ro	r

Առաջին ֆորմուլայի մեջ երբեմն e և o ձայնավորները կարող են երկարել և այն ժամանակ ֆորմուլան դառնում է՝

ē ō —

կան նաև ավելի քիչ գործածական ֆորմուլաներ, որոնք են՝

2) ē ō ə

3) ā ə

Այս բոլոր ձայնդարձները, որ նշանակեցինք, միավանկ արմատների համար են. բայց հնդեվրոպական լեզուն ուներ նաև մի խումբ երկվանկ արմատներ, որոնց մեջ հիշյալ միավանկի վրա ավելացած էր մի երկար ձայնավոր՝ ā, ē, ō ձևով, ինչ. pelā «մոտեցնել»։ Եվ որովհետև հնդեվրոպական լեզվի օրենքով մի արմատի մեջ չէր կարող գտնվել երկու հաջորդական e/o, ուստի երկվանկ արմատի մեջ կամ առաջին վանկի ձայնավորը դառնում էր ցածր աստիճանի ձայնդարձ, ինչ. teres. «դոդալ»> tres., ters., (ուրիշ խոսքով զեղչվում էր) և կամ երկրորդ վանկի ձայնավորը դառնում էր ə, որ հետո ձայնավորների մոտ ընկնում էր։ Այսպիսով, երկվանկ արմատը գործածության մեջ

մեծ մասամբ դառնում էր միավանկ։ Այսպես, օր.p e/o te երկվանկ արմատից առաջանում են հետևյալ ձայնդարձները.

բաղաձայնի մոտ	ձայնավորի մոտ
pətə	pet, pēt.
potə	pot, pēt.
ptē	
ptō	
ptə	pt-
p°tə	p°t-

Նորագույն քննությունները ցույց են տալիս, որ երկվանկ արմատների այս ə ձայնավորը առաջացել է ուրիշ ճանապարհով,— երբ արմատը ունեցել է վերջում h ձայնը, միանալով բաղաձայնով մի մասնիկի հետ, խճողումից խուսափելու համար մեջտեղը դրվել է ə ձայնը, որանից հետո ընկել է h ձայնը, որով առացվել է ə վերջավորությամբ երկվանկ արմատ։ Ըստ այսմ՝ երկվանկ արմատ չկա հնդեվրոպական նախալեզվում, եղածը հետին փոփոխության արդյունք է։

Այս բոլորը հավաքելով միասին՝ մենք տեսնում ենք, որ արմատի ձայնավորները կարող են լինել միայն՝ երկար կամ կարճ e, o, երկար ā, կրճատ ձայնավոր o կամ ə և կամ զրո. մյուս ձայնավորներից i, u. r̥, l̥, n̥, m̥ պատահում են իրրև ցածր աստիճանի ձայնդարձ. իսկ a ձայնավորը չի գործածվում. և դա մի շատ զարմանալի կետ է, երբ մտածենք հին քերականների մասին, որոնք հետևում էին այն կարծիքին, թե հնդեվրոպական լեզվի հիմնական ձայնավորն է a և բոլոր արմատները գնում էին այս ձայնավորով։ Ըստ արդի գիտության, a ձայնավորը հնդեվրոպական լեզվի մեջ գտնվում էր միայն մի խումբ մանկական բառերի մեջ և մի քանի մասնավոր բառերի մեջ, այն էլ առնապարակ բառակազմում. օր.

ագարակ, հուն.	ἀγρός	լատ. ager,	գոթ. akrs,	սանս. ájra
աստղ, հուն.	ἀστηρ	գնդ. star,	հրգ. sterno,	լ. stella
արմուկ, գոթ.	arms	հալ. ramo,	սանս. īrmá	
անձուկ, հուն.	ἄγχω	լատ. angō,	գոթ. aggwus,	հալ. o̯zūkū

Մինչև այժմ մենք խոսեցինք ձայնավորների ձայնդարձի մասին, որ ձևաբանական նշանակություն ունի. սակայն լեզուների մեջ կա նաև բաղաձայնների ձայնդարձ, թեև շատ ավելի քիչ չափով. օր. այսօր էլ լեհերենում տեսնում ենք c—cz ձայ-

նափոխություն. ինչ. S'wieca-S'wieczka։ Հնդեվրոպական նախալեզուն ուներ նաև ձայնորդների և բաղաձայնների ձայնդարձ։ Այսպես՝ 1) բառասկզբում բաղաձայն+ձայնորդ դառնում էր պարզապես բաղաձայն. օր. tv:t ինչ. առնս. հյդ. tvā և սր. te «քեզ». bhr:bh—ինչ. գերմ. brechen, լա. frango, fregi և հայ. բեկանել, առնս. bhana'kti.

2) Բառասկզբում s հաջորդ բաղաձայնի մոտ կարող է կորչել. օր. sp:p, ինչ. առնս. spáç «լրտես», գնդ. spasyeiti, լա. speciō, հրդ. spehōn և առնս. páçyati «դիտել, նայել»։

sw:w. ինչ. հնխ. swek's:wek's. համմտ. հուն. ἑκ, գալ. chwech, հայ. վեց և լա. sex, գերմ. sechs.

sk:k. ինչ. հրդ. skeran և հուն. κείρω «խուզել», հայ. քերել.

sm:m, ինչ. հրդ. smelzan և հանգլ. melfan «հալել».

3) Բառավերջում պատահում ենք ձայնավոր+ռնգային, ինչպես նաև առանց ռնգականի ձևեր. օր. հուն. ἔφερε և ἔφερεν «բերեր», ἔστι և ἔστιν «է», երկակի սրակ-դործ. առնս. bhyām, իրան.-byā և այլն։

Սակայն այս կարգի ձայնդարձները՝ լինելով մասնավոր դեպքեր և չունենալով ձևաբանական արժեք՝ ավելորդ ենք համարում ավելի ևս ծանրանալ սրանց վրա։ Հիմնական ձայնդարձը մնում է, ուրեմն, ձայնավորներինը։

3. ՁԱՅՆԴԱՐՁԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՈՒՍՏ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵՋ

Վերևում ասացինք, որ հնդեվրոպական ձայնդարձի և սեմական ձայնդարձի մեջև մի խոշոր տարբերություն կա. այդ այն է, որ սեմական լեզուների մեջ ձայնդարձը միայն բավական է ածանցներ կազմելու և արմատի նշանակությունը ձևավորելու համար. qtl արմատից կազմված qātil «սպանող» և qattāl «մարդասպան» ձևերի մեջ ոչ մի մասնիկ չկա. սակայն հնդեվրոպական նախալեզվի մեջ ձայնդարձը միայն բավական չէ արմատի նշանակությունը ձևավորելու համար, և մասնիկների օժանդակությունը անհրաժեշտ է։ Արդ՝ եթե մասնիկներն անհրաժեշտ են, որ պիտի ասե արմատին ուզած նշանակությունը, ուրեմն այլևս ինչ բանի են պետք դանազան ձայնդարձները։ Ձայնդարձի գերը այստեղ դառնում է ավելորդ և, տես, հնագույն ժամանակներից սկսած մայր լեզուները հետզհետե ջնջում են ձայնդարձը։ Բայց որովհետև ոչ մի բան, որ ջնջվում է, չի կարող

միանգամից վերանալ իսպառ, ուստի ձայնդարձի հետքերն էլ մնում են ամեն տեղ։

Ստնտկրիտը տալիս է մեզ ձայնդարձի շատ օրինակներ. բայց ամենից ավելի հին. հուն արևն է, որ պահում է ձայնդարձային զուգամիտ օրինակներ՝ դեռ իրենց հատակ վիճակի մեջ. ինչ. մի բազմաթիվ օրինակներ՝ դեռ իրենց հատակ վիճակի մեջ. ինչ.

e, o, —	πέτομαι	ποτάομαι.	ἐπτόμην
ei, oi, i	πείθω	πεποίθα,	πιστός
er, or, r	δερκομαι	δέδορκε,	ἔδρακον

Ձայնդարձների զանազան շարքեր գտնում ենք նաև գոթերենի մեջ. ինչ. rinnan, rannjan, runs և այլն, և այլն։ Գերմաներենում, անգլերենում և շվեդերենում կան մի խումբ բայեր, որոնք նկարագրական քերականության մեջ համաբվում են անկանոն ձևեր. սրանք հին ձայնդարձի հավատարիմ ներկայացուցիչներն են. այսպես՝

Գերմաներեն՝

binden	band	gebunden
brechen		gebrochen
singen	sang	
trinken	getrunken	trank

անգլերեն՝

tell	told	
give	gave	given
see	saw	
know		known

Շվեդերենի Դ լծորդությունը ամբողջապես կազմվում է ձայնդարձ ունեցող բայերից։

Ձայնդարձի հետքեր գտնում ենք նաև սլավոներենի մեջ. այսպես ռուս. со-беру' «հավաքեմ», собрáть «հավաքել» և со-бо'р «հավաքում», е—о—О աստիճանով։

Բայց այս բոլորը արդեն մասնավոր պարագաներ են, և պատմականորեն ծանոթ հնդեվրոպական լեզուներից ոչ մեկը չունի այլևս ձայնդարձի գրությունը այնպես, ինչպես որ հընդեվրոպական նախալեզվի մեջ, այն է՝ ածանցման մի ընդհանուր կանոն, որին ենթարկված էին բոլոր արմատները, ինչպես և մասնիկներն ու վերջավորությունները։

Ձայնդարձի հետ պետք չէ շփոթել լեզուների մեջ հետազոտում ձևացած՝ ձայնավորների փոփոխության այն երևույթը, որ արդյունք է լոկ ձայնավորների սղման կամ այլ ձայնաբանական պատճառների։ Օրինակ՝ դրաբարում ունենք հայր, սեռ. հաւր, որոնք առաջանում են հնխ. pətē'r, pətro's ձևերից, որոնց մեջ t երկու ձայնավորի միջև տալիս է յ, իսկ r բազաձայնից առաջ դառնում է ւ։ Այսպես նաև մայր—մաւր, եղբայր—եղբաւր։ Այս բառերը հետագայում aւ>o ձայնափոխության պատճառով դարձան հօր, մօր, եղբօր. իսկ երբ բարբառներում այ դարձավ է կամ ա, ունեցանք հայերենում

հար, հէր, սեռ. հօր,
մար, մէր, սեռ. մօր,
ախպար, ախպէր, սեռ. ախպօր,

որոնք ներկայացնում են ճիշտ հնխ. ձայնդարձի e, o,—երևույթը, բայց ամենևին էլ ձայնդարձ չեն։

Մեր հարևան լեզուներից էլ նման մի երևույթ տալու համար հիշենք թուրքերենի պարզ և շարունակական ներկայի կազմությունը։

Տաճկերենում ունենք

պարզ ներկ. alər—əm *կառնեմ*
verir—im *կուտամ*
gider—im *կերթամ*,

որոնց շարունակական ձևերն են՝

alə-yor-əm *առնում եմ*
veri-yor-əm *տալիս եմ*
gidi-yor-əm *գնում եմ*

Սրանց դեմ ադրբեջաներենն ունի

պարզ. ներկ. alar-am, verär-äm, geder-em
շար. ներկ. alər-am, verir-äm, gedir-em

Տեսնում ենք, որ շարունակականի yor մասնիկը ադրբեջաներենում՝ կորցնելով իր երկու առաջին ձայնները՝ վերածել է միայն մի r, որ միանալով բայի բնի հետ, սաեղծվել է այն սխալ երևույթը, որ իբր թե պարզ ներկայի ձայնավորներն են a, ä, e, որոնք շարունակականում դառնում են ə, i։

Սա էլ կեղծ ձայնդարձ է։

Այսպես է նաև գերմ. Vater «հայր»— Väter «հայրեր», անգլ. man «մարդ»—men «մարդիկ» և այլն ձևերի մեջ երևցած a-ä-a-e ձայնափոխությունը։

Բոդուեն դե Կուրտենեն կոչում է corrélation այն ձայնական փոփոխությունները, որոնք թեև սկզբում ձայնաբանական էին, բայց այսօր այդ ձայնաբանական պատճառները կորցրած՝ շարունակվում են իրրև ձևաբանական կամ իմաստաբանական երևույթ։

Իսկական ձայնդարձը այն է, որ անկախ է ձայնաբանական պատճառներից և ձևաբանական երևույթ է։

Այսպես է սեմական լեզուներում, այսպես էր նաև հնդեվրոպական նախալեզվում։

4. ՁԱՅՆԴԱՐՁԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնդեվրոպական ձայնդարձը ջնջված է հայերենի մեջ։ Հընդեվրոպական ձայնորդների դրությունը ամբողջապես խանգարվելով հայերենի մեջ և ձայնավորները մեծապես ձևափոխվելով՝ ձայնդարձի դրությունը արդեն անկարելի էր դառնում մեր լեզվում։ Բայց ինչպես մյուս լեզուների մեջ, նույնպես և հայերենում այնուամենայնիվ նա թողել է զանազան հետքեր, որոնց վրա մենք այլևս չպիտի նայենք իրրև առանձին ձևաբանական դրության, այլ համարելու ենք սոսկ հնության մնացորդ։ Ահա մի քանի օրինակներ ձայնդարձից։

1) Լավագույն մնացորդն է ներկայացնում -ն հանգող բառերի հոլովումը, այսպես՝ հարսն, հարսին, հարսամբ, հարսունք, մատն, մատին, մատամբ, մատունք և այլն, որոնց մեջ ին, ուն, ան ներկայացնում են հնխ.—en-,-ōn- և n (համմտ. հուն. φρήν, φρενός, φρασί, ἄφρονες)։—Այս ձայնդարձը ընդհանուր գործածություն ուներ հնդեվրոպական հոլովման մեջ, իսկ հայերենում պահվել է միայն -ն հանգող բառերից մի քանիսի հոլովման մեջ։

2) Հեա, հետ, սեռ. հետոյ, հետոց, բայական ձևով հետևիմ, որ ենթադրում է -հետև- մակրայականը, որանից նաև այսուհետև, այնուհետև, որովհետև. այս բոլորը ցույց են տալիս e-o ձայնդարձը։

3) Կին, գործ. կանամբ, հոգ. կանայք, կանանց, և այլն ներկայացնում է e-դրո ձայնդարձը, որովհետև կին համապատասխա-

նում է տպրուս. genna, հոլ. žena ձևերին, իսկ կանայք՝ բեռվտական Βανῆκες ձևին։

4) Քաղ, երեսուն, բառասուն և այլն ներկայացնում են հնխ. «տասնյակ» բառի n և ōn ձայնավորները. բայց հայերենի մեջ նրանց ծագումը անզգալի է։

5) Եռու, առաջ, առաջ ցույց են տալիս հնխ. ō, ə ձայնդարձները, բայց հայերենի մեջ համարվում են անկանոնություններ։

6) Մասնավոր բառեր են՝

Ոտն— հետ, հետք, յատակ (o-e-O).
դեզ, դալար (e-O)
գելում, գալարել (e-O)
հեղում, ողողել, հալել (e-o-O).
գոյ, գաղջ (o-O)
սին, սուն, սան (e-o-O) և այլն։

Այս օրինակները ցույց են տալիս, որ հայերենը երբեմն հին ձայնդարձի բոլոր աստիճաններն էլ պահած է եղել, բայց դա հայերենի մեջ ձևաբանական ոչ մի նշանակություն չունի այլևս և այժմ կրկնակ ձևերից յուրաքանչյուրը մեզ համար առանձին ու անկախ արմատ է համարվում։ Բավական դժվար է համոզել մի հայի, թե հետք և ոտք, մանավանդ հատակ մրենուն բառերն են։

Եթե գրաբարի մեջ ձայնդարձը արդեն ջնջված է, բնականաբար նոր բարբառների մեջ ավելի ևս. սրանց մեջ արդեն ձայնդարձը ներկայացնող բառերից էլ ամենք կորած են, ինչ. հետք, լուսն, բերմ. մյուսները նշանակության փոփոխությամբ էլ հեռացած են իրարից. ինչ. քորել «մարմինը քորել» (արևմտյան հայերենի մեջ ջնջված), քերել «քերթել» (արևմտյան հայերենի մեջ «քորել» իմաստն ստացած)։

Ձայնդարձը աուլգարանական տեսակետով օգտակար է մեզ. երբ հայերեն մի բառ համեմատենք օտար լեզուների այս կամ այն ձևի հետ, միշտ ի նկատի պիտի ունենանք, որ e, o, ē, ō, ā, ə և O փոխանակում են իրար և եթե հայերենը տարբերվի մյուս ցեղակից ձևերից հիշյալ ձայնավորների կողմից, նշանակում է, թե նա պահել է ձայնդարձի մի այնպիսի ձև, որ կորել է մյուսների մեջ. որովհետև ոչ մի լեզու հնդեվրոպական ձայնդարձի բոլոր աստիճանները պահած չէ, այլ այս կամ այն ձևը միայն՝ պատահաբար։

Հաջորդ ցուցակում հավաքում ենք հայերենի բոլոր այն բառերը, որոնք իրար հետ կապվում են ձայնդարձի դանդաղ աստիճաններով։ Այդ բառերը քաղել ենք Արմատական բառարանից՝ համաձայն նրա աված ցուցմունքների, այրուբենական կարգով։ Ցուցակը կազմել եմ ընկ. Գրիգոր Գարեգինյանի ժրաջան և արդյունավետ աշխատակցությամբ։

Վերևում արված սահմանումի համաձայն, այստեղ հավաքված են միայն հայերեն բառերը և օտար լեզուների ձայնդարձները դուրս են մնում մեր ցուցակից։ Հակառակ դեպքում Walde-Pokorny բառարանի 2212 արմատները ներքով պիտի հիշատակեինք այստեղ, ինչ որ մեր ծրագրից դուրս է։

Մեր ցուցակից դուրս են մնում նաև այն հայերեն բառերը, որոնք ուղղակի ներկայացնում են հնդեվրոպական արմատները, առանց ձայնդարձի տարբերության։ Այսպես են թվականները, հայր, մայր, եղբայր, քույր, տայգր և շատ ուրիշ նման բառեր։

Ցուցակից դուրս են մնում նաև այն հայերեն բառերը, որոնք ներկայացնում են ձայնդարձի մի որևէ աստիճան, որ համապատասխանում է օտար լեզուների ներկայացրած նույն աստիճանին, բայց այս դեպքում որոշ վիճակներ արել ենք և մեզ ենք բերել մի քանի հատ մի աստիճանի ձայնդարձով ձևվեր, որպեսզի ընթերցողը հարկավոր դեպքում իր ձեռքին ունենա մի քանի լավ օրինակներ այս մասին։

ԱԳԱՆԻՄ «հագնել», բուն արմատն է ag, որ գտնում ենք նաև առ-ագ-աստ բառի մեջ. արմատի մյուս ձևերն են* gh, որից g նախդիրով g-gh-նում, g-ghատ (բուն արմատը պահում է Դրբ. կէ՛նալ «հագնվել», Մշ. գ՛հատ «զգեստ»), op և oդ՝—հնխ. évō, óvō «հագնեմ», որոնք արմատի բարձր և միջին աստիճանի ձայնդարձներն են։ Հայերենի մեջ v գառնում է g, բայց նաև u (համմտ. արեգ, արև, կով, կոգի), որից opng «անկողնի ծածկոց», «վերարկու», oդ «հոշիկ»։ Հնխ. արմատի աճած ձևն է ves, որ հայերենի* մեջ s-ի անկումով առ. լիս է gh, իսկ այս ves արմատից ti աճականով vesti>gհատ, g-gհատ։

ԱԳԱՆԻՄ «դիշերելը». բուն արմատն է ag, որ ճիշտ նախորդի նման տալիս է p աճականով op, որից opնաց, opեկ, բաց-opեազ, երեկopը։— Հնխ. av արմատից, որ պահում է միայն հունարենը։

ԱԶԴՐ<հնխ. azgdh, p աճականով?

ԱԼԻՔ «հոհակ» | **ԱԼԻՔ** «ապիտակ մաղ» | Հնխ. plio ձևից. այս արմատի մի[ջ]ին ձայնդարձը պահում է հուն. polio's ձևը, իսկ հայերենը ունի առաջին ձայնդարձը:

ԱՂ, աղծ, աղտ, որոնք առաջանում են հնխ. sā'ld ձևից, որի սեռականն է salnés. ըստ այսմ՝ հայերենի հարադատ ձևն է աղտ, կրճատ ձևն է աղ, իսկ աղծ առաջացած պետք է լիներ ա-ից՝ հաջորդ քմականի ձայնի ազդեցությամբ:— Այս դեպքում թևե ծ և տ թվում են ճակատն, բայց չեն:

ԱՂԱՆՁ, հնխ. lndh ձևից, որ առաջին ձայնդարձն է lendh արմատի. մեր մեջ այս արմատը տվել է նախ աղաճդ-եր, հետո դ դառնալով ձ՝ առացել է աղաձձ (համմտ. փոխինդ—փոխինձ): Ըստ այսմ ձ ճակատն չէ, այլ դ-ի քմականն ձևը:

ԱՂՄ-ՈՒԿ «կոիվ». ծագում է հնխ. p^{0}lem արմատի առաջին ձայնդարձից, որ տալիս է նախ ալիմ (e անգլականի մոտ դառնում է ի. հետո բառը ուկ մասնիկը ստանալու պատճառով ի ջնջվում է, իսկ լ գոնվելով մ բաղաձայնի մոտ՝ դառնում է դ. այսպիսով առացվում է ադմուկ):—Նույն բառը գոնվում է միայն հուն. polemos ձևով, որ նույն արմատի մի[ջ]ին ձայնդարձն է:

ԱՄԷՆ, ամեն—այն<հնխ. smmo ձևից, որ ներկայացնում է առաջին ձայնդարձը:

ԱՄՊՐՈՊ <հնխ. mbhró ձևից, որի դեմ հույնը ունի o'mbros. հայերենը առաջին ձայնդարձն է ներկայացնում, իսկ հունարենը՝ մի[ջ]ին:

ԱՆԿԱՆԻՄ «ընկնել» <sng^{2} արմատից, որ առաջին ձայնդարձն է senk^{2} արմատի, բարձր առոիճանը ներկայացնում է լիթ. senku:

ԱՆՁՆ <հնխ. ang^{1}hen ձևից, որի պարզ արմատն է anə «շնչել», g'h=ձ ճակատնով:

ԱՆՈՒՐՋ<հնխ. anōr ձևից, ջ ճակատնով:

ԱՌԱՋՏԱՂ, ծագում է հնխ. stel արմատից՝ un մասնիկով. ուրեմն առաջին ձայնդարձն է ներկայացնում:

ԱՍՐ «բուրգ», անո առու<հնխ. p^{0}k^{1}u, որ առաջին ձայնդարձն է *pek^{1}u-*pok^{1}u. արմատից: Վերջածայն բ կարող ենք համարել ճակատն:

ԱՏԱՂՁ <հնխ. del արմատից, որի առաջին ձայնդարձն է (*dl) ձ ճակատնով, բարձր և մի[ջ]ին ձայնդարձները պահել են մյուս լեզուները:

ԱՏԱՄՆ <հնխ. dent, dont, dnt արմատի առաջին ձայնդարձից, մյուս ձայնդարձները գանում ենք այլ լեզուներում:

ԱՏ-ԵԱՆ <հնխ. sed «նստել» արմատի առաջին səd ձայնդարձից: Ավելին տես նիստ, նստել:

ԱՐԱԾԵԼ <հնխ. trəg^{1} առաջին ձայնդարձից. Ծ ձայնդարձը պահում է հունարենը:

ԱՐԲ «խմել» <հնխ. sṛbh առաջին ձայնդարձից, մյուս անանձանները պահել են ուրիշ լեզուներ:

ԱՐԴ «ձև» <հնխ. art արմատից, որ կազմված է ar պարզական արմատից t ճակատնով:

ԱՐԴ. «այժմ» <հնխ. art ձևից, որ նույն էր նախորդի հետ հնդեվրոպական շրջանում:

ԱՐԹ, ԱՐԹՈՒՆ <հնխ. ar «յառնել, վեր կենալ» արմատից th> թ ճակատնով:

ԱՓԱՂԱՂ <հնխ. kel արմատի առաջին kl ձայնդարձից՝ կրկնությամբ:

ԲԱՀ (բարհ), ԲԻՐ (բիրը) <հնխ. bher արմատից՝ առաջինը bhṛ առաջին ձայնդարձից, իսկ երկրորդը արմատի երկար bhēr ձևից:

ԲԱՌՆԱԼ, ԲԱՐՁ, ԲԵՐՁ, ԲԱՐՁՐ <հնխ. bhṛg^{1}h, bherg^{1}h ձևերից, մին՝ առաջին, մյուսը՝ բարձր ձայնդարձից:

ԲԼՈՒՐ, ԲՈՒՈՒՐ, ԲՈՂ, բողբոջ, բողկ <հնխ. bhel, bhol, bhōl ձևերից. առաջին արմատը մեր մեջ գոյություն չունի. bhōl ձևից ունենք բող, բողբոջ (կրկնական), բողկ (կ ճակատնով), բոլոր (որ մասնիկով), bhōl ձևից բլուր (*բուլ արմատից՝ ուր մասնիկով). Ըստ այսմ հայերենը ներկայացնում է արմատի մի[ջ]ին ձայնդարձը՝ երկար ու կարճ ձևերով:

ԲՈԿ <հնխ. bhosó- արմատից, որ տալիս է բռ- և կ ճակատնով՝ բոկ:

ԲՈԿԵՂ «բլուր» <հնխ. bhē արմատի մի[ջ]ին ձայնդարձ bho ձևից g ճակատնով: Սրա հետ նույն է և բովել:

ԲՈՑՍ <հնխ. bheu արմատից՝ u ճակատնով:

ԲՈՎ-ԵԼ<հնխ. bhē- արմատի մի[ջ]ին bho- ձայնդարձից, թերևս u ճակատնով:

ԲՈՐԲ, ԲՈՐԲՈՔ, գվ. բերփել <հնխ. bher արմատի կրկնական bho-bhr-o ձևից, ուստի և մի[ջ]ին ձայնդարձն է. գավառական բերփել ձևը ներկայացնում է բարձր առոիճանը:—Ոք մասնիկ է, ինչպես ունենք բարւոք:

ԲՈՐ-ենի <հնխ. bhero արմատի bhoro ձևից, որ միջին ձայնդարձն է։

ԲՈՑ <հնխ. bho-sk ձևից, որ միջին ձայնդարձն է bhē արմատի, ավելացած -sk մասնիկով։

ԲՈՒՐԴ, ԲՐԴԻԼ <հնխ. bhērdh ձևից, որ միջին ձայնդարձն է bherdh արմատի։

ԲՈՒՔ <հնխ. bhu- բնաձայն արմատից ք ածականով (այս արմատի հետ նույն են հյ. ֆեւալ, փուք, փչել). տես նաև ֆեւալ։

ԳԱՂՁՆ, գեղձ «պատատուկ» <հնխ. vel արմատից և նրա առաջին ձայնդարձի vl ձևից, ձ ածականով։

ԳԱՂՋ, ԳՈԼ «տաքուկ» <հնխ. vel արմատի միջին vol և սահմանին vl ձայնդարձներից։ Առաջինը ածած է ջ-ով։

ԳԱՑԹԻԼ, որի ձայնդարձն է գթլ (արմատը *գլթ կամ *գութ), ծագումն անհայտ։

ԳԱՆ «ձնձ» <հնխ. g²hēni առաջին ձայնդարձից, որի հետ նույն է ջինջգավազանը, ջնել «ձնձել»՝ նույն արմատի ghēn բարձր ձայնդարձից։ Նաև ջինջ, ջունջ՝ ջ ածականով։

ԳԱՐՇ <հնխ. g²hṛs ձևից, որ առաջին ձայնդարձն է g²hers արմատի։

ԳԵԼՈՒԻ «տլորևլ» գալ-ար, գիլ, գլորել, գիղ (գայթա-դղ-ել բառի մեջ), գաղձն=գեղձ «պատատուկ» <հնխ. vel արմատից և նրա vēl երկար ձևից ու vl առաջին ձայնդարձից, վերջինը երկուսը ձ ածականով։

ԳԵՂՋ «փափագ» <հնխ. vel արմատից ձ ածականով։

ԳԵՐԾ-ԵԼ <հնխ. ver արմատից ծ ածականով։

ԳՈՂ, գաղել «թաքցնել» <հնխ. vol, vl ձևերից, որոնք vel բարձր ձայնդարձի միջին և առաջին ասպիրացիաներն են (նախապես կարծում էի, թե Ղրբ., Շմ. կեղել «թաքցնել» ձևը հնխ. vel ձայնդարձի հարադասա նեղիկայացուցիչն է։ Հայոց լեզվի պատմության Բ. հատ.— ի մեջ, էջ 416 և 428 կատած եմ հայտնում, որ այդ և ձայնավորը ա-ի ձևափոխությունը լինի։ Այժմ վանա բարբառի քննությամբ հաստատվեց, որ թրթռուն բաղաձայններից հետո ա ձայնավորը դառնում է ա կամ է. վերջինը հատկապես Ղարաբաղի բարբառում (տես Քոն. վն. Բրբ.)։ Սրանով այս հարցը վերջնականապես փակված է լինում)։— Նույն երկու արմատները առանում են նաև ա ածականը, որով ունենում ենք գադա և գադա ձևերը, սրանցից էլ գոդուկ, գադուկ։

ԳՈՑ <հնխ. vos- արմատից, որ միջին ասպիրանն է ves- արմատի, բարձր ասպիրանը մեր մեջ պահված չէ։

ԳՈՐԾ <հնխ. vorg¹ ձևից, որ միջին ձայնդարձն է verg¹ արմատի։ Ուրիշ լեզուներ ունեն արմատի երկու ասպիրանները, բայց մեր մեջ միայն միջինն է պահված։

ԳՈՒՆ «ջանք» <հնխ. von կամ vōn ձևից, որ միջին ձայնդարձն է ven արմատի։ Վերջինը պահված է ուրիշ լեզուներում, բայց չկա հայերենում։

ԴԱՐԲԻՆ <հնխ. dhabh-ro, որի պարզական արմատն է dhabh-, ածած -ro մասնիկով։

ԴԱՐԵԼ, կրկնակաները դադար <հնխ. dher- արմատի dhṛ առաջին ձայնդարձից։

ԴԱՐՁ, դառնալ <հնխ. dhreg¹h, արմատի առաջին ձայնդարձ dhṛg¹h ձևից։

ԴԵՂ «խոտ». 2. դարմանդ, դեղին, դեղր, դեղձ, դեղձան, դեղձն, դալ-ար, դալ-ուկն, դաղձն <հնխ. dhel, dhḷ ձայնդարձներից, որոնք ածած են -r, -ձ ածականներով և -ար և -ուկն մասնիկներով։ Միջին ձայնդարձը մեր մեջ պահված չէ։

ԴԻԵԼ «կաթ տալ», դալ=դայլ «մոր առաջին կաթը» <հնխ. dhēi, dhəi-l արմատներից, վերջինը լ ածականով, որ հատուկ էր նաև հնդեվրոպականին։

ԴՆԵԼ (իմա *դի-նել), դիր, ընդիր (ընդ-դիր) <հնխ. dhē արմատից, վերջիններր -r ածականով։

ԵՋՐ <հնխ. eg¹h, r ածականով։

ԵՐԿ-ԱՑՆ երկ-ար, տևել, առկալ <հնխ. dewə, dowə, dwā, dū երկվանկ արմատի երեք ասպիրանի ձայնդարձներից, կ ածականով։

ԵՒ <հնխ. épi արմատից, որի միջին ópi ձայնդարձից էլ՝ հյ. ու, իսկ pi առաջին ձայնդարձից էլ՝ ըստ։

ԶԵՂՋ «հանգանքի վրա ցավելը», որի երկրորդ ձևն է գիղջ, զբղջալ. սրանք իրար հետ ձայնդարձ չեն կարող լինել, այլ երկրորդը ներկայացնում է առաջինի երկար ձևը (e, ē)։

ԶԻՐԿ, որի մյուս ձևն է զուրկ. երկուսը հնդեվրոպական հիման վրա կարելի է կապել իրար հետ երկար ē և ō ձայնդարձներով. նույն է լտ. urgeo արմատի հետ, զ նախդիրով։

ԶՈՒՍՊ և ԶԻՍՊ

ԹԱՌԱՄ <հնխ. tṛs արմատից, որի միջին ձայնդարձից է թռոռմիլ։

ԹԻՒ (Թուել) և ԹԵՐ (Թերթ) <հնխ. pter *արմատի երկար ու կարճ ձևերից. n առաջանում է հնխ. rs ածականից. p նույնպես ածական է:*

ԹՈՒՆ <հնխ. ter- *արմատի մի ջին* tor- *ձայնդարձից, որի առաջին ձայնդարձն է ներկայացնում* թար-մ:

ԹՈՒՐ <հնխ. tōr *ձևից, որ մի ջին ձայնդարձն է* ter- *արմատի. այս վերջինից է հայ. ըն-թեռ-նուլ, որ է «բարձր ձայնով կարդալ»:*

ԺԱՀ, *նոր բարբառներում* ժեխ *«աղբ»:*

ԻԲՐ, երր, բար *(մասնիկը) և* բարք *«բնավորություն»:*

ԻՋԱՆԵԼ, *արմատը է* <հնխ. ei *«երթալ» արմատից, ջ ածականով:*

ԼԵՍՈՒԼ, լսել *«մանրել»* <հնխ. qlek¹, qlok¹ *արմատից, առաջինը՝ բարձր, երկրորդը՝ մի ջին ձայնդարձով:*

ԼԻ, ԼՆՈՒԼ, յոի, յոլով <հնխ. plē *արմատի բարձր և մի ջին ձայնդարձներով. լի-ր ձևը կազմված է -ր ածականով:*

ԼԻՐԲ <հնխ. slei *պարզական արմատից ածած* slibr- *ձևից. ածականներն են* բր>րբ, ա, ծ, *և շ, որոնցից* լպրաել, լպիրծ, լպիրշ:

ԼԼՈՒԿ, լկել, *ժդ.* լելալ *«շարժել»* <հնխ. lel, lēl *ձևերից: Սրա մի ջին* lol *ձայնդարձից են հյ.* լող, լոյղ, լիւղ, լօղ, լուղ (ղող, ղոյղ, ղիւղ, ղօղ, ղուղ) *«լողալ», որոնց հետ ունենք նաև դարձյալ բարձր ձայնդարձով* լեղալ=ղեղալ:

ԼՈՅԾ, լուծանել <հնխ. leu, lou *արմատից -ծ ածականով:*

ԼՈՅՍ <հնխ. louk¹o *արմատից, որի ածականն է* լոյց, լուցանել <հնխ. louk¹s, *իսկ առաջին ածանցն է* լուսն <հնխ. luk¹on:

ԼՈՐԾ *«ջղագություն»* <հնխ. lord- *արմատից՝ ածած* lord-sk- *ձևից:*

ԼՍԵԼ <հնխ. k¹lu *արմատից, որից առաջանում է նախ հյ. լու, (լու ի լու, կար. լուայ), ս, բ, ռ ածականներով՝ *լուսել> լսել, լուր, լուռ:*

ՀԱՑԹ-ԵԼ <հնխ. khait, *որ հինդ հնդեվրոպականում ածած էր* qai- *պարզականից. հայերենում նույթ արմատը ներկայացնում է բազմաթիվ ձայնդարձներով, որոնք են. խեթել, խէր, խիր (մխիթար), խորել (ճխորել), խուր (խթել), խոյր, խօր: կ ածականով՝ խեթկել:*

ՀԱՋ *բուն իմաստն է «փայտ», որի հետ նույն են խոչ (խոչընդոտն, խոչընդակն), խեչ=խէչ (խեչակ). այս բոլորը ենթադրում են հնխ. khet- արմատը, որից ունենք միայն պրս.* xāda *«ճյուղ»: Հայերենը ներկայացնում է լիովին հնխ. արմատի երեք ձայնդարձները:*

ՀԱՒՆ *ձայնդարձն է խուռն:*

ՀԱՐԵԼ *«այրել»,* խար-ոյկ <հնխ. qer *արմատի առաջին ձայնդարձից, որի մի ջին առաիճանն է* խոր-ով, -չ *ածականով՝* խարշ-ել:

ՀԵՂ, *«հաշմանդամ»* <հնխ. sqel- *արմատից, -կ ածականով՝* խեղկել:

ՀԻՑ, *բան է* խնուլ, կ *ածականով՝* խծկել:

ՀՈՒՂ, ճիւղ *«խրճիթ»* <հնխ. squ, qu *արմատի* qul *ածած ձևից: Մյուս լեզուները ունեն նաև* n, l, t, r, m *ածականները: Սրանից ունենք հայերեն* քիւ, ցիւ, *որ նույն արմատի* (s) qēu *ձևից է:*

ՀՈՒՓՆ *«փափարիչ», կցվում է իրրև ձայնդարձ* խափ *(խափանել, խափուցանել) արմատին:*

ՇԱՂՐ, ծիծաղ <հնխ. g¹el *արմատի առաջին ձայնդարձից. բարձր առաիճանը մեզ մեջ չի պահված: Ի ածական է:*

ՇԵՇ, ձեծել <հնխ. g¹eg¹ *արմատից, որի ընդգային առաջին ձայնդարձն է ներկայացնում ծանծ «ցավենի կճեպ և տարփ»: Տես Աբեղ. բռ., Գ. հա., էջ 736:*

ՇԻՇ, ձծել և ծուծ, *ներկայացնում են ձայնդարձի երկու առաիճանները (ē, ō):*

ՇԻՇԱՒՆ, ծիծեռն և ծիծեռնակ <հնխ. g¹ar *արմատից, վերջնավանկը ներկայացնում է ա, ե ձայնդարձը:*

ԿԵԱՒ, կեանք, կենդան-ի և այլն, *վերջինի մեջ դ ածական է:*

ԿԵՐ <հնխ. g²er *արմատից, որի մի ջին ձայնդարձն է ներկայացնում կոր (կոկորդ) և երկար ձայնավորով՝ կուր: Կոկորդ ձևի մեջ դ ածական է?, որից զուրկ է որկոր ձևը:*

ԿԻԹ, կուր *«անասուններից կամ բույսերից քաղված բանջ», ներկայացնում են ձայնդարձի ē, ō ձևերը:*

ԿԻՆ <հնխ. g²ēn *արմատից, որի առաջին ձայնդարձը գտնում ենք հոլովյալ և ածանցյալ ձևերի մեջ (կանանց, կանացի):*

ԿԻՑ, *որի ձայնդարձն էլ կա կուց ձևով:*

ԿՈՏՐ, կոտորել, կատր, կտրել, *նաև* կտիր (հատուկտիր *բառի մեջ) ներկայացնում են նույն արմատի զանազան ձայնդարձները:*

ԿՈՐ «ծծուռ» և կեռ. ներկայացնում են նույն արմատի մի ձևին և բարձր ձայնդարձները։

ԿՏԻՏ, կատել, կատու. ներկայացնում են ē-ō ձայնդարձները։

ՀԱՂ, ճեղ «անգամ» <հնխ. pl̥-, pel- արմատից՝ ստորին և բարձր ձայնդարձներով։

ՀԱՐ, հարուլ «զարնել» և կ ածականով՝ հարիկաճել։ Հնխ. per- արմատի ստորին ձայնդարձից։

ՀԱՐԹ-ՆՈՒԻ, «վախից վեր ցատկել» <հնխ. pr̥th- արմատից, որի մեջ p թերևս ածական է։

ՀԱՐՍՆ և հարց <հնխ. pr̥k¹, pr̥k¹-sk հնխ. prek¹ արմատ ունը ստորին ձայնդարձից, երկրորդը g ածականով։

ՀԵԾ-ԱՆԵԼ <հնխ. sed արմատից, որի ստորին ձայնդարձն է հիստ։

ՀԵՂՈՒԼ, կրկնությամբ հնդեղ, ստատիկականը զեղուլ <հնխ. pel- արմատից, որի մի ձևին ձայնդարձն է հնխ. pol- > հյ. կրկնությամբ ողող-ել, իսկ ստորին pl ձայնդարձից՝ հյ. հալել։

ՀԵՒԻ <հնխ. per արմատից, որ մյուս լեզուներում առանում է զանազան ածականներ, հայերին թաթ մեջ էլ n թերևս -rs ածականից է։

ՀԵՏ-Ջ, նախնական իմաստն է «ոտք». <հնխ. pedo ձևից, որի հետ նույն են յեթ և եթ. մի ձևին pod- ձայնդարձից առաջանում է ոտն, ոտք, իսկ pəd ստորին ձայնդարձից էլ յատուկ։

ՀԵՒԱԼ, հով, հոգ, հոգի <հնխ. peu, pou ձայնդարձներից։

ՀԷՆ-Ջ, հիճուլ, հիճել, հեճել, հաճուլ, բոլորն էլ «հյուսել» նշանակությամբ. <հնխ. pen-, spen-, pn̥- ձևերից։

ՀԻՒԱՆԴ, կրկնված է հնխ. pon «ցավել» արմատի pn̥ ստորին ձայնդարձից։ Ներկայացնում է անցյալ դերբայի pe-pn̥-to ձևը։

ՀԻՒԹ, որից ni մասնիկով ճիւթ <հնխ. seip «քամվել» արմատի sip ստորին ձայնդարձից -to մասնիկով։

ՀՈԼ, ՀՈՂ <հնխ. pol արմատից, որի ստորին ձայնդարձի -t-ով ածած plātə-no ձևից՝ լայն։

ՀՈԼՈՎ <հնխ. qᵘol ձևից, որ մի ձևին ձայնդարձն է qᵘel արմատի՝ -ով մասնիկով. նույն արմատի բարձր ձայնդարձը պահում են հայ. -յեղ, -եղ արմատները։

ՀՈՂՄ «քամի» <հնխ. onə- արմատից, որ ածել է -mo մասնիկով։ Տես և աճմն։

ՀՕՏ <հնխ. pā արմատից ածած pā-d ձևից։ Այս արմատից է նաև հօրաճ <հնխ. pā-tro + ան։

ՁԱՂԵԼ «ցպղրել» ծագում է <հնխ. gʰhel- արմատի gʰhl ձայնդարձից։

ՁԱՂԿ «ծնծղի փայտ» <հնխ. gʰhalg ձևից, որ թերևս ածած է gʰel արմատից -g ածականով։ Սրա մի ձևին gʰhol- ձայնդարձից էլ թերևս ձող։

ՁԵՎ, ձոյլ, ձօճ <հնխ. gʰheu- արմատից բարձր, մի ձևին և ստորին ձայնդարձներով։

ՁՈՅԼ բառի մեջ -լ ածական է, իսկ ձօճ կազմված է ստորին ձայնդարձի gʰhu ձևից, -ուճ մասնիկով։

ՁՈՒԿՆ <հնխ. ghu- արմատից -կն մասնիկով, ինչպես մու-կն արմու-կն։

ՃԻՒՂ, ճեղ, ճող, ճիղ կ p ածականով ճեղք և ճողք։

ՃՈՒՏ, ճետ թերևս ձայնդարձ։

*ՄԱԼԵԼ «մանրել, ջարդել», մլ-ադաց (*մուլ արմատից), որից և մամուլ, մլ-մլել, «շփել, քերել», մլ-ուկ «փայտաջիլ», մեղ-կ, մեղ-մ, ժդ. մուղ «ցօրեն ապալը», մղեղ «փուշ», մղ-մեղ, մղ-մող, ժդ. «ցեց» և վերջապես մառաղ և մառաղաշ, որոնց մեջ m և ղ շրջված են։ Այս բոլորը հանդում են մեղ, մող, մալ, մուլ, մուղ արմատներից <հնխ. mel, mol, mōl, ml̥.*

ՄԱՂԹԵԼ «ապօքել» <հնխ. mel- արմատի ածական melth- ձևից, ստորին ձայնդարձով և p ածականով։

ՄԱՇԵԼ (հինը մարշել) <հնխ. mer- արմատի -s-ով ածած ձևից իբր mr̥-s ստորին ձայնդարձից, ուրեմն -շ ածական է։

ՄԱՐՏ «կախվ» <հնխ. mṛd ձևից, որ կազմված է հնխ. merə- արմատից՝ d ածականով։

ՄԵՌ-ԱՆԵԼ <հնխ. mer- արմատից, որի ստորին ձայնդարձն է նեղկայացնում մարդ (mr̥to և թերևս մահ (մարհ)։

ՄԻԳ <հնխ. meigʰh արմատից, որի l=ւ-ով ածած ձևից է մզլել, մզլոտիլ։

ՄՈՅԹ «հնձուկ» <հնխ. meuthi ձևից, որ mei արմատ ածած ձևն է p=thi ածականով։

ՄՈՅՆ «վայելչություն» <հնխ. mou-no ձևից, որ կազմված է mou- պարզ արմատից -no ածականով, որ գոնում են նաև գերմանականում։

ՄՈՒԿՆ <հնխ. mūs,-կն մասնիկով։

ՄՈՒՆ «ճանճ» <հնխ. mus արմատից՝ -no ածականով։

*ՄՈՒՆԶ «համբ», *մուռ, մռել, «լսել խոսքը» <հնխ. mu- արմատից՝ ն և n ածականներով։*

*ՄՈՒՐ— <հնխ. meu- արմատի սաորին ձայնդարձից -p (tro) ածականով։ Նույն արմատից սարբեր ածականներով ունենք *մուր-ն «խավար», մրուր, մրրիկ։*

ՄՈՒՐԿ «ադանձ, մրկել» <հնխ. smug-ro ձևից, որ ծագում է smug- պարզ արմատից՝ -ro մասնիկով։

ՄՐՋԻՒՆ <հնխ. moruo արմատից -ջ ածականով և -իւն մասնիկով։

ՅԱԳ-ՆՆԱԼ <հնխ. sā արմատի՝ ածած sāw ձևից։

ՅԱՐՄԱՐ <հնխ. ar արմատից՝ -մ ածականով։

ՅԵՒՈՒԼ <հնխ. ser- արմատից՝ -s ածականով։

ՅՕԴ <հնխ. au- պարզ արմատից - dh ածականով։

ՆԱՅ <հնխ. snā պարզ արմատից -t ածականով։

ՆԵԱՐԴ <հնխ. snē- պարզ արմատից, -rt ածականով։

ՆԵՐԳԵՒԼ «ներքարել» <հնխ. snē- պարզական արմատից -r և -q ածականներով։

ՆԻԳ <հնխ. kneig²h արմատի սաորին knig²h ձայնդարձից։

ՆԻՍՏ <հնխ. sed- արմատի սաորին səd=zəd ձայնդարձից, որից նաև առեաց, իսկ բարձր ձայնդարձից է ճիճաճել. բարձր ձայնդարձից է նաև տեղ, -lo մասնիկով։

ՆՈՐ <հնխ. névo արմատից -r ածականով, որ կա նաև հունարենում։

ՆՈՒՐԲ <հնխ. snōbhri ձևից, որ կազմված է snēbh- արմատի միջին ձայնդարձից +ri մասնիկով, որ կա նաև մյուս լեզուների մեջ։

ՇԵՂ, շիւ, շաղ-իլ, որոնք ունեն ընդհանուր «ծուռ», «սխալ» իմաստը։ Ծագում են հնխ. sqel-,sgel- արմատի բարձր և սաորին ձայնդարձներից։ Նույն արմատից է նաև խեղ, նաև՝ սխալ։

ՇՈՂ, շող-իք և շաղ «ցող». ներկայացնում են իրար հետ ձայնդարձի երկու սաստիճանները։ Ծագումը անորոշ է։

ՇՈՒՐՔՆ, շուրջ, որոնք ծագելով շուռ (ժդ. շուռ գալ) արմատից, ցույց են տալիս ք—ջ ածականները։

ՈՋՆԻ <հնխ. og¹hinio- ձևից, որի համապատասխան օտար ձևերը ներկայացնում են բարձր ձայնդարձը (e)։

ՈՉՈՐ «ճյուղ» <հնխ. ozg¹ho, ր մասնիկով։

ՈՒՈՐ, ո մասնիկով ածած՝ ոլորտ։

ՈՒՈՓ (ոտքի) <հնխ. oleq ձևից, որ կազմված է ole- պարզականից՝ q ածականով։

ՈՂԲ «լաց» <հնխ. olbh- արմատից, որ կազմված է ol- պարզականից, bh ածականով։

ՈՂՆ «մեջ», ուլն «վիզ», ուղուկ «թիզ», ոլոր «ոտքի» <հնխ. ol- և ōl- արմատներից n և q ածականներով։

ՈՂՈՂԱՆԱԼ «լաց լինել», գող. ուլուլալ «ողբալ» <հնխ. ol-, ōl- արմատից «ողբալ, ճչալ». այստեղ է նաև ող-ր։

ՈՂՈՐԿ, լերկ <հնխ. lorg², lerg² ձայնդարձներից։

ՈՂՋ <հնխ. olyo ձևից, ջ ածականով։

ՈՄՆ, կազմված n «ով» արմատից -մն մասնիկով, ինչպես որ նույն արմատից ունենք նաև n-ր, n-ք, և գարձյալ ի արմատից՝ ի-ր, ի-ք, չիք, իմն և իճչ։

ՈՒՆԱԼ <հնխ. rū արմատից ն ածականով. բարձր ձայնդարձն է reu, որի սաորինը՝ rū։

ՈՍԿՐ <հնխ. ostw-er ձևից, որի բուն արմատն է os՝ ածած դասական ածականներով՝ բոլոր լեզուների մեջ։

ՈՍՏԻՆ «անջրդի» <հնխ. ozd արմատից, որ կազմված է āš- պարզական արմատից՝ d ածականով, միջին ձայնդարձից։

ՈՐԾԱԼ <հնխ. rug¹ արմատից, որ և կ ածականով՝ որձկալ։

ՈՐՈՎԱՅՆ «փոր» <հնխ. qrep- արմատի միջին ձայնդարձով և -այն մասնիկով։ Սանսկրիտը ունի սաորին ձայնդարձը։

ՈՒԼԻ «ճամփա» <հնխ. eül- արմատի սաորին ul- ձայնդարձից։ Նույն արմատի aulo ձևից առանում ենք օղ։

ՈՒՆԻՄ <հնխ. ēp- արմատի միջին ōp- ձայնդարձից՝ -n ածականով։

ՈՒՍԱՆԻԼ <հնխ. euk¹-, ouk¹- արմատի uk¹- սաորին ձայնդարձից։

ՈՒՏԵԼ <հնխ. ed- արմատի միջին ōd- ձայնդարձից։

ՀՈՐ <հնխ. k²soros ձևից, որի բարձր k²sēros ձևից էլ գալիս է չիր։

ՓԱԼ «մեծ քար», պաղ-ատնալ «քարայր», պղպղ-աքար «խաշոր քար» <հնխ. bal, bāl, bļ, bil ձևերից, որոնք bel բարձր ձայնդարձի սաորին աստիճանն են ներկայացնում։

ՓԱԼ-ԱՐ, պլ-պլուկ, պղ-պջակ <հնխ. bul, bļ ձևերից, որոնք ձայնդարձի սաորին աստիճանն են ներկայացնում, bu- պարզական արմատից՝ -l ածականով։

ՊԱ-ՊԱՆՋ-ԻՄ ենթադրում է *պանդ արմատը, որ է թևերա հնխ. bhendh արմատի առորին ձայնդարձը bndh։ Բարձր աստիճանն է պինդ, պնդել «կապել <հնխ. bhendh.

ՊԼՈԿԵԼ, լոպկել «կեղևել» <հնխ. leb- արմատի միջին ձայնդարձից՝ k ածականով։

ՊՈՒՏ «բշտիկ» պտուկ «ծիլ» <հնխ. bud արմատից, որ ածած է bu- «ուռչիլ» պարզական արմատից՝ d ածականով։

ՊՈՒՐԾ, պրծաճիլ, կազմված է պուր պարզ արմատից՝ ծ ածականով, ինչպես ցուցց է տալիս մազապուր և մազապուրծ բառերի համեմատությունը. Պարզ արմատը պահում է ապուր, ապրիլ. նույնից p ածականով ունենք փրթաճիլ, փրփիլ։

Պ . . . <հնխ. bul-sk¹ ձևից, որ կազմված է bul արմատից sk¹ ածականով. բայց bul արմատն էլ ձևացել է bu «ուռչիլ» պարզ արմատից, l ածականով։ Հայերենի մեջ l- ը ընկել է, ինչպես կաթն բառի մեջ։

ՋԱՆ-ԱԼ, ջանք <հնխ. ye արմատի առորին yə ձայնդարձից՝ n ածականով։

ՋԵՐ, ջերմ, ջեռ, ջերմն <հնխ. gʷher-, gʷhermo- ձևերից, վերջինը ածած -mo մասնիկով։

ՋՈՎ «ծիլ» <հնխ. yewo- բառի միջին yowo- ձայնդարձից։

ՍԱՆ, սին, սուն, երեք աստիճանի ձայնդարձներով, ավելին տես՝ սաին-ք։

ՍԱՌՆ <հնխ. k'ar արմատից, որ առորին ձայնդարձն է k'er արմատի։

ՍԱՍՏ <հնխ. k¹əsti արմատից, որ կազմված է -ti ածականով։

ՍԱՐ «լեռ» <հնխ. k¹r ձևից, որ առորին ձայնդարձն է k¹er արմատի։

ՍԱՐԵԼ, «պատռատել», սարքել, սարի «շղթա», սարդ <հնխ. k¹r արմատից, որ առորին ձայնդարձն է k¹er «կապել» արմատի։ Վերջինը դ ածականով։

ՍԵՐԵԼ, սեռ, սերմն <հնխ. k¹er- արմատից՝ վերջինը -մն ածականով։

ՍԷՐ, ՍԻՐԵԼ <հնխ. k¹ei պարզական արմատից՝ -ro մասնիկով։

ՍԼԱՔ <հնխ. k¹u պարզական արմատից ածած k¹ul ձևից՝ -ap մասնիկով։

ՍՈՂԱԼ, սող, որից ածել են սող-կ, սող-մ, սող-ոսկել ձևերը։

ՍՈՐ «խոռոչ» <հնխ. k¹ovro ձևից, որ k¹eu- արմատի միջին ձայնդարձն է՝ -ro մասնիկով ածած։

ՍՈՒՏ <հնխ. pseudo արմատի առորին psudo ձևից։

ՍՈՒՐ <հնխ. k¹ō-ro ձևից, որ կազմված է k¹ō- արմատից -ro մասնիկով։

ՍՈՒՐԲ <հնխ. k¹ubhró ձևից, որ կազմված է k¹u- արմատից -bh ածականով և ro մասնիկով։

ՍՏԱՆԱԼ <հնխ. stā- արմատից՝ -n ածականով, որ կա նաև ուրիշ լեզուների մեջ։

ՍՏԵՂԾԵԼ <հնխ. stā- արմատից ածած stel ձևից՝ ծ ածականով։

ՍՏԵՐՋ <հնխ. ster- արմատից՝ ջ ածականով։

ՍՏԻՊ, ստիպել <հնխ. stei- արմատից, որ ածել է -b ածականով։ Ուրիշ լեզուներ ածել են նաև -bh, -p ածականներով։ Նույն արմատի առորին ձայնդարձից է տուիպ (կրկնությամբ)։

ՍՏԻՆՔ <հնխ. pstēn ձևից, իսկ սրա psen, pson, psn ձևից զանազան ձայնդարձներով սին, սուն, սան։

ՍՏՈՑԴ <հնխ. steuwā ձևից, որ կազմված է es «լինել» արմատից, -te+wo ածականով։ Ըստ այսմ հայերեն է և սառյգ նույն արմատից են ծագում։

ՏԱԼ, տու, տուր <հնխ. də, dō արմատներից, վերջինը -r ածականով, որ կա նաև հունարենում։

ՏԱՄՈՒԿ <հնխ. dē արմատի առորին dā ձայնդարձից, -m ածականով, որ կա նաև ուրիշ լեզուներում։ Ուկ մասնիկ է։

ՏԱՏԱՆԻԼ <հնխ. den արմատի առորին dn ձայնդարձից։ Միջին ձայնդարձը կա հունարենում։

ՏԱՏԱՍԿ <հնխ. denk¹ արմատի առորին ձայնդարձ dək¹ ձևից՝ k ածականով։

ՏԱՐՏԱՄ <հնխ. dre «քնել» արմատի առորին ձայնդարձ dr ձևից m ածականով, որ կա նաև ուրիշ լեզուներում։ Սրան է կցվում նաև տրտում, որ միջին ձայնդարձն է։

ՏԵՌ «1. կաշի, 2. քոց», տեռել, «քերթել» <հնխ. der արմատից -s ածականով, որ ունի նաև հունարենը։

ՏԵՄԱՆԵԼ <հնխ. derk¹ արմատից, որի միջին և առորին ձայնդարձները պահում են մյուս լեզուները։

ՏԻՂԻ, տիլ, տող=տողուր «թուք» <հնխ. stel արմատի բարձր և միջին ձայնդարձներից՝ -n ածականով։

ՏՈՒՆ «տանդի փայտե կոթ», տարգալ «գդալ», որ նախապես շինվում էր փայտից <հնխ. doru- «փայտ, ծառ» բառի միջին և առորին ձայնդարձներից։ Եղել է հնագույն հայերենում *տորի գավազան բառը, որ հետո կորել է, սակայն

անփոփոխ մնում է վրացերենում «գավազան» նշանակությամբ։ Այստեղ է պատկանում նաև առրգ «ոսոսայնա»։

ՅԻՏ, ցտել, «ճեղքել» <հնխ. sk¹hid ձևից. զարմանալի է այս բառի ծագումը։ Առաջին պարզական արմատը գրվում է seq- «կտրել», որ գառնում է sqēi, սա էլ -d ածականով sqei-d։

ՅՈՅՅ <հնխ. skeu պարզ արմատից՝ ածած -sk¹ ածականով. առանց ածականի է քաւել, որ սոսրին kau ձայնդարձից է։

ՓԱՅԼ, փաղփաղիլ, փողփողել <հնխ. sphel, phel արմատից՝ միջին և սոսրին ձայնդարձի աստիճաններով և առանց ածականի, մինչդեռ մյուս լեզուները ունեն դանազան ածականներ։

ՓԱՐԻԼ «փաթաթվել» <հնխ. spher- արմատի սոսրին ձայնդարձից։

ՓԵՂԿ <հնխ. sphel- արմատից՝ g ածականով, որ ունեն նաև ուրիշ լեզուներ։

ՓԵՌԵԿԵԼ, փերք <հնխ. spher արմատից՝ կ և p ածականներով։

ՓՈՒՅԹ, փութալ <հնխ. speu- արմատից -p ածականով, մինչդեռ հունարենը ունի d ածականը։

ՓՈՐՁ <հնխ. phor- ձևից՝ ձ ածականով, որ միջին ձայնդարձն է per արմատի։

ՓՈՒՉ, փչել, փուք <հնխ. phu- բնաձայն արմատից՝ -չ, -ք ածականներով։ Մյուս լեզուները ունեն ուրիշ ածականներ։ Նույն արմատից են նաև ֆնալ, ֆոգի և այլն, որ տես վերը։

ՓՈՓՐ <հնխ. pōu պարզ արմատից՝ -ք ածականով։

ՓՌԵԼ <հնխ. per արմատի սոսակական phēr ձևից, -s ածականով։

ՔԱՂԵԼ <հնխ. ql ձևից, որ սոսրին ձայնդարձն է sk¹el արմատի, որ տալիս է հայերեն ցելուլ և ցեղ։

ՔԱՂՑ <հնխ. swel- արմատի swl սոսրին ձայնդարձից d և sk¹ ածականներով։ Այսպիսով նախաձևը կլինի swld-sk¹.

ՔԱՐ «օձը» <հնխ. ker- արմատի սոսրին ձայնդարձից՝ -p ածականով։

ՔԵՐԵԼ, քորել <հնխ. sqer, qer արմատից՝ բարձր և միջին ձայնդարձներով։ Սրա ածականներն են քարր, քերթել, քերծուլ, քերթել։

ՔՈՒՆ <հնխ. swopno- ձևից, որ կազմված է swep- պարզական արմատի միջին ձայնդարձից -no մասնիկով, որ պահում են նաև մյուս լեզուները։

ՔՈՒՔ «ողբ» <հնխ. kū «գոչել» արմատից՝ -ք ածականով։

ՕԴ «հավա» <հնխ. aw «փչել» արմատից՝ -դ ածականով։

Այն բոլոր բառերը, որոնք հավաքեցինք վերոհիշյալ ցուցակի մեջ, բաժանվում են երեք խմբի.

ա) Բառեր, որոնք ներկայանում են հայերենի մեջ ձայնդարձի միայն մի աստիճանով, առանց նկատի առնելու այն հանգամանքը, թե այդ աստիճանը բարձրն է, միջինը, թե սոսրինը։

բ) Բառեր, որոնք ներկայանում են հայերենի մեջ միայն երկու աստիճանի ձայնդարձով։

գ) Բառեր, որոնք ներկայանում են հայերենի մեջ լիակատար երեք աստիճաններով։

Բառերի ամենամեծ մասը պատկանում է առաջին խմբին և այդ բնական է։

Հայերենը այն լեզուներից չէ, որ իրրև քերականական կարգ պահած լինի ձայնդարձը, ինչպես եղել են հունարենն ու սանսկրիտը։ Ընդհակառակը, նա ջնջել է ձայնդարձը քերականական նուիթյունից և ընդհանրապես պահում է միայն մի աստիճան։ Հայտնի չէ, թե հնդեվրոպական 3 կարգերից ո՞րն է, որ առավելություն է ստացել և պահվել հայերենում։ Գուցե այդտեղ էլ մի օրենք կա և եթե կա, դա կախված պիտի լինի արմատի վերջին բաղաձայնից, բայց այդպիսի օրենք մեզ առայժմ հայտնի չէ։

Բնականաբար մեր ցուցակում մենք չէինք կարող հիշել բոլոր այն բառերը, որոնք մի աստիճանի ձայնդարձով են պահված. այդ դեպքում հարկ պիտի լիներ ամբողջ բնիկ հայ բառերի շարքը դնել, ինչ որ արել ենք հայոց լեզվի պատմության 1-ին հատորի մեջ։ Մենք հիշել ենք մեր ցուցակում հատկապես այն բառերը, որոնք ներկայանում են որևէ ածականով, որովհետև մեր ցուցակը կազմելիս մենք նպատակ ենք ունեցել ձայնդարձների հետ հավաքել նաև անխտիր բոլոր ածականները։

Գուցե հետաքրքիր էր իմանալ նաև, թե մի աստիճանի ձայնդարձ ունեցող բառերի մեջ քանիսը բարձր է, քանիսը միջին, քանիսը սոսրին։ Բայց այդ էլ չէինք կարող հաշվել, քանի որ մեր ցուցակը կատարյալ չէ։

Այստեղ դնում ենք մի քանի օրինակ, ցույց տալու համար,

Քե մեր մի ասոիճանի ձայնդարձները քուլր լեզուների որ ասոիճանի ձայնդարձին են համապատասխանում:

ՄԵՐՁ=հուն. μέχρι<հնխ. meg¹hri,

ԱԼԻՔ «հոհակ»=հուն. πολιός, *ալիք «մռայեր»*=հուն. πολιος, աղ-մուկ=πόλεμος բոլորն էլ հնխ. pl- *ասորին ձայնդարձից, մինչդեռ հունարենը երեքն էլ միջին են:*

ԱՂ, աղա, աղծ <հնխ. sā'ld, հուն. ἅλς, լտ. sal, գոթ. salt, *բոլորն էլ ունեն* a *ձայնավորը:*

ԳՈՐԾ <հնխ. verg¹- *արմատի միջին* vorg¹ *ձայնդարձից, որ գիտե նաև հուն.* ὄργανον *«գործիք» և անգլ.* work *«գործ» բառերը:*

ԱՂԱՆՁ, աղանձ-եր, լանդակ *(ժգ. «մի տեսակ կերակուր»)* <հնխ. lendh- *արմատի ասորին ձայնադարձ* lṇdh- *ձևից. եթե լիներ բարձր ձայնդարձից, պիտի ուննեայինք* լինդ, *իսկ միջին ձայնդարձից՝* լուդ:

ԱՐԲ, արբի *«խմել»* ներկայանում է *մեզ հայերենում ասորին ձայնդարձով, իսկ մյուս լեզուներում* e, o *ձայնդարձներով, ինչպես* ῥοφάω, լտ. sorbeo, *լիթ.* srebiu', srobiù, *ալբան.* g'erp *«կուլ տալ» և այլն:*

Այս օրինակները ցույց են տալիս՝ որ հնդեվրոպական ձայնդարձի երեք ասոիճանների համար էլ համապատասխան ձևեր կան մեր առաջին խմբի մեջ:

Երբեմն հնխ. o-ի դեմ հայերենում դանում ենք երկար ō, որ տալիս է հյ. ու. այսպես՝ մինչդեռ մի կողմից ունենք բոլոր, բող, բողբոջ, բողկ, *մյուս կողմից ունենք* բլուր, *որ է* *բուլուր, նմանապես* ողն, ոլոք, ուլն, ուղուկ *կարճ և երկար o-երով:*

Բ խմբի բառերը բաժանվում են 3 կարգի. առաջին կարգը բովանդակում է այն բառերը, որոնք ներկայանում են հայերենի մեջ ասորին և բարձր ձայնդարձով. ահա դրանց ցուցակը.

1. *ասեան, նիստ, հեծանել, տեղի*
2. *բան, բիր*
3. *բառնալ, բարձ, բերձ, բարձր*
4. *գնալ, գալար, գիլ, գլորել, գիղ (գայթագղել). նաև գաղձն=գեղձ «ազատատակ».*
5. *դեղ, դեղին, դեղբ, դեղձ, դեղձան, դեղձն, դալար, դալուկն, դաղձն:*

6. *դիել, դալ=դայլ*
7. *իբր, երբ,—բար, բարք*
8. *ծեծ, ծանծ «ցորենի կճեպ»*
9. *կին, կանայք*
10. *հաղ, հեղ «անդամ»*
11. *հէնք, հինուլ, հենել, հանուլ «հյուսել»*
12. *մեռանիլ, մարդ, մահ?*
13. *շեղ, շիլ, շաղիլ, խեղ, սխալ*
14. *պապանձիմ, պինդ, պնդել*
15. *քաղել, ցելուլ, ցեղ*
16. *առէալ, առիալ*
17. *գայթել, գթիլ. հայտնի չէ, թե վերջինի արմատը *գիբ է, թե *գութ*
18. *ծիծառն, ծիծեռն և ծիծեռնակ:*

Երկրորդ կարգի բառերը ներկայանում են հայերենի մեջ ասորին և միջին ձայնդարձով: Ահա դրանց ցուցակը.

1. *գաղջ, գոլ*
2. *գաղել, գաղտ, գաղտուկ, գաղտնի, գող, գողտուկ.*
3. *Թաոամիլ, Թարշամիլ, Թոռամիլ*
4. *Թոռն, Թարմ*
5. *խառն, խուռն*
6. *խարել, խարոյկ, խարշել, խորով.*
7. *խուփն, խափանել, խափուցանել*
8. *հոլ «մերկ», հոլանի, հող, լայն*
9. *անձն, հոգի*
10. *ձագկ, ձող?*
11. *շոգ, շոգիք, շաղ «թաց»*
12. *տալ, տու, տուր*
13. *տարտամ, տրտում*
14. *տոռն, տորդ «տատայն», տարգալ «գղալ»*
15. *ցոյց, քաւել.*
16. *փայլ, փաղփաղիլ, փողփոդել*
17. *լոյս, լուսն*

Երրորդ կարգի բառերը ներկայանում են հայերենում միջին և բարձր ձայնդարձներով: Ահա դրանց ցուցակը.

1. Բորբ, բորբոք, ժղ. բերփել
2. բուք, փուք, փչել, հով, ոգի, հոգի=հոգ, հեւալ
3. եւ, ու
4. զիրկ, զուրկ
5. զուտակ, զիսակ
6. լեսուլ, լոսել
7. լի, յոլով, լնուլ, յղի, լիր, լրանալ
8. լլուկ, լլկել, լելալ, լոզ, լոյդ, լիւղ, լօղ, լուղ (զոդ, զոյդ, զիւղ, զօղ, զուղ, զեղալ)։
9. խուղ, հիւղ, քիւ, ցիւ
10. ծիծ, ծուծ, ծծել
11. կեր, կոր, կոկորդ, ոսկոր
12. կիթ, կութ, կթել
13. կից, կուց, կցել
14. կտտոր, կտտորել, կտուր, կտրել, կտիր (հատուկտիր)։
15. կոր, կեռ
16. կտիտ, կտտել, կտուտ
17. ճիւղ, ճեղ, ճիղ, ճող, ճեղք, ճողք
18. ճուտ, ճեւտ. թերեւս ձայնդարձ
19. ողորկ, լերկ
20. չոր, չիր
21. տիղմ, տիլ, տող=տոզուք

Այստեղ վերջանում է երկրորդ խմբի երեք կարգի ձայնդարձների թիւմբը. բոլորի գումարը լինում է 18+16+21=55։ Այս բառերն էլ, համեմատութեամբ ուրիշ լեզուների, կարող են ներկայացնել երբեմն համասպառասխան, երբեմն էլ անհամապատասխան ձայնդարձներ։ Բայց այդ մասին օրինակներ ավելորդ ենք համարում տալ, որովհետեւ նույն երեւոյթը ավելի մեծ չափերով տեսանք արդեն առաջին խմբի մեջ։

Գ. խմբի բառերը 11 են.

1. դանել, ջին, ջնել, ջինջ, ջունջ
2. երկայն, երկար, տեւել, տոկալ
3. խայթել, խեթել, խէթ, խիթ (մխիթար), խոթել, խութ (խթել), խոյթ, խօթ
4. խաչ, խոչ, խեչակ (խեչ=խէչ)
5. հեղուլ, զեղուլ, հեղեղ, ողողել, հալել
6. հետք, յետ, ետ, ոտն, յատակ
7. ձև, ձոյլ; ձօն
8. մաղել, մլաղաց, մաղուլ, մլմլել, մլուկ, մեղկ, մեղմ, ժղ. մուղ ջրորեն աղալըձ, մղեղ, մղմեղ, մղմող, մաատղ, մաատղաշ
9. սան, սին, սուն, սոխնք
10. հոլով, յաղ (յաղակարծ), յեղ, յեղուլ, եղ, եղանիկ, եղան, հոլ (ֆռիկ)
11. քերել, քորել, քարբ, քերթել, քերծուլ, քերբել։

* * *

Ձայնդարձը հնդեվրոպական նախալեզվի քերականութեան մեջ պարզ արմատը ձեւավորելու և բազմացնելու միջոցներից մեկն է։ Առաջին երեք աստիճանները տալիս են մեզ երեք ձև, ձայնավորը երկարելով՝ 5 ձև, ձայնավորը երկրաբրաուի վերածելով՝ մինչև տասը ձև, ամականները ավելացնելով՝ մինչև 50 ձև, ամականների քանակի համեմատ։ Այս բոլորի մասին բավական կատարյալ գաղափար են տալիս մեզ հնդկերենն ու հունարենը, որոնք ամենից ավելի լավ են պահել ձայնդարձի դրութիւնը։ Մյուս ժառանգ լեզուները, ինչպես ասել ենք, իրրև բացառիկ դեպքեր են պահում ձայնդարձը։ Այս վերջինների կարգից է նաև հայերենը։

Ցույց տալու համար, թե ձայնդարձն ու ամականը միասին ինչպիսի բազմազան ձևերի կարող են հանգել՝ հիշենք ագանիլ «հագնել» բառը, որ գրված է ցուցակի սկիզբը։ Այս բառի առաջին ձևերն են՝ ագ, աւ, օթ, օդ, գե, գեսա, զգեցուլ, զգեսա, չհիշելով սրանցից կազմված զանազան բառերը։ Գրաբարի մեջ գե և գեսա գոյութիւն չունեն, միայն պահված են նրանք Ղարաբաղի և Մուշի բարբառում, բայց դրաբարի զգեցուլ և զգեսա բառերը (կազմված զ նախդիրով) ցույց են տալիս, որ նրանք էլ անպատճառ գոյութիւն ունեցել են գրաբարում, թեև չեն ավանդված մեզ հասած գրականութեան մեջ։ Զգեցուլ բառն էլ, որ գրաբարից հայտնի է, այժմ արդեն անգործածական է դարձել, իսկ զգեսա՝ ավելի շատ փոխանակվում է շոր, հագուստ, ճոպան բառերով։

Այս օրինակը ցույց տվեց մեզ, թե արմատը ինչքան կա-

բող է առնել քանակով։ Իսկ ձևափոխության (այսինքն որակի) համար էլ առնենք է և սառյգ բառերը։

Սրանցից առաջինը (է) էական բայի եղ. գ. դեմքն է, որ առաջանում է հնխ. es «լինել» արմատից։ Այս արմատից, երկու տարբեր ածականներով, նախալեզուն կազմում էր steuwā բառը, որ տալիս է հայերեն սառյգ (թեև s չընկվում է հայերենում, բայց է-ի մոտ պահվում է)։

Այսպես, ուրեմն, երկու բոլորովին անկման բառեր, որոնք քսո արտաքին նմանության ոչ մի կապ չունեն իրար հետ, բոլորովին նույն են ծագմամբ։

Այժմ քննենք այն հարցը, թե ձայնդարձը իրրև քերականական կարգ գոյություն ունե՞ր հին հայերենում. ուրիշ բառով ասած՝ հայերը իրենց լեզվի մեջ կարո՞ղ էին զանազան ձայնդարձներով բառեր հոլովել։ Այս մասին մեր խոսքը համառոտ կերպով արդեն ասել ենք նախապես։ Գրաբարում ձայնդարձով ոչ մի բառ և ոչ մի ածանց չունենք, որ անկախաբար կազմված լինի հայերենում։ Եթե այդպիսի օրինակ գոյություն ունեցած լիներ հայերենում, նաև այնպիսի հայերեն բառեր, որոնք հընդեվրոպական ծագում չունեն, պիտի ներկայացնեին ձայնդարձի տեսակները։ Բայց այդպիսի օրինակ չունենք։

Արդարև հայերենի ոչ-բնիկ բառերի մեջ գտնում ենք հետևյալ օրինակները, որոնց մեջ տեսնում ենք 2 աստիճանի ձայնդարձ։

Այդ բառերն են՝

1. դայթիլ, գթիլ
2. դուսպ, դիսպ
3. իրր, երր, բար, բարք
4. խառն, խուռն
5. խուփն, խափանել
6. ծին, ծուծ, ծծել
7. կիթ, կութ, կթել
8. կից, կուց
9. կոտոր, կտուր, կտիր
10. ճեղք, ճողք, ճիւղ
11. ճուտ, ճետ
12. շող, շաղ «թաց»
13. կոր, կեռ

Այս 13 բառի համար ունենք հետևյալ նկատողությունները.

№ 1. Ծագումը անծանոթ լինելը՝ դեռ չի նշանակում, որ բառը հնդեվրոպական չէ։ Հյուրշմանի մահից հետո որքա՜ն անծանոթ բառեր մեկնվեցին իրրև հնդեվրոպական։

№ 2. Հիշված բառերից մի քանիսը գոյություն ունեն նաև վրացերենում (ծին, շող = շաղ), և հայտնի չէ, թե որ լեզուն որից է փոխ առել։ Հայոց լեզվի պատմության Ա. հատորում, կարծիք եմ հայտնել, որ վրացական մի ցեղ՝ հայերենը իրրև երկրորդ մայրենի լեզու ընդունելով՝ միացել է հայ ժողովրդի հետ, իր հետ բերելով իր լեզվի ամենատարածուն բառերից մի խումբ։ Ահա այսպիսով է վճռվում հայ և վրացի բառերի փոխառության հարցը։

№ 3. Հայերենը ուներ, ինչպես որ մինչև այժմ էլ ունի, ու ձայնավորով բառը կրկնելու սովորություն. ինչպես ծակ ու ծուկ, ձայն ձույն, մարդ մուրդ, ջարդ ջուրդ, խարեխ խուրեխ, մանր մունր. այս կարգի բառերից է թվում խառնիխուռն, որից խուռն բառը հետո առանձին դարձավ։

№ 4. Հայերենի այն բառերը, որոնք սկսվում են երկու համերաձայնով, հայտնի չէ, թե ինչ արմատ ունեն։ Ըստ հայերենի սովորական օրենքի՝ արմատը կարող է ունենալ ի կամ ու ձայնավորը. և այդ բանը որոշվում է միմիայն այն դեպքում, երբ արմատը առանձին ավանդված է։ Օրինակ կրթել բառի արմատն է կիրթ, շնչել բառի արմատն է շունչ, բայց ոչ շինչ։ Իսկ եթե պատահաբար արմատը ավանդված չէ, միշտ էլ կասկածելի է արմատի ձայնավորի երանգը։ Օրինակ, ճնշել բառի արմատը կարելի է դնել *ճինչ կամ *ճունչ. փնչել բառի արմատը կարելի է դնել *փինչ կամ *փունչ, բայց այս բոլորը կասկածելի են։ Մեր օրին էին նաև հին հայերը և պատահաբար գրել են մի ձև, որ մենք այժմ ձայնդարձ ենք համարում։ Այս կարգի բառերի մեջ առաջին տեղը տալիս ենք զիսպ, զուսպ բառերին։

* * *

Եթե ձայնդարձի գրությունը չընկված էր արդեն գրաբարում, ուստի ավելորդ է մտածել այն մասին, թե արդի բարբառները գիտե՞ն այդպիսի երևույթ։

Արդի բարբառները գրաբարի շարունակությունը լինելով, պահած պետք է լինեն այն հարաբերությունը, որ ժառանգել են գրաբարից։ Ուստի գրաբարի ձայնդարձները ավելի կամ պակաս չափով մնում են բարբառներում։ Կարելի չէ ենթադրել, թե որևէ նոր միջոցով նոր ձայնդարձներ հնարված լինեն բարբառներում։

Երբեմն գրաբարից մնացած բառերը այնքան են ձևափոխվել՝ ձայնական օրենքների պահանջմամբ, որ ձայնդարձը բոլո-

բովին անճանաչելի է դարձել։ Օրինակ 3 աստիճանի ձայնդարձներից (ետք, ոսք, յատակ) Ղարաբաղի բարբառում, ինչպես և ուրիշ շատ բարբառներում յատակ բառը ջնջված է. ետք իր նախնական «ոտք» իմաստը կորցնելով, պահված է միայն իբրև նախադրություն՝ ետս «մխասին», որ դառնում է Ղրբ. ըրեէս. իսկ ոսք բառը դարձել է Ղրբ. վըէննը։ Ի՞նչ կապ կարելի էր դնել ըրեէս և վըէննը բառերի մեջ, որոնք ձայնդարձի առաջին երկու աստիճաններն են ներկայացնում։— Նույն ետ բառը «մխասին» նշանակությամբ մակաց և ոդմեցոց բարբառում դարձել է խա. օրինակ խաձի «ինձ հետ», իսկ ոսք բառը դառնում է Մկ. ուտ։ Ինչպե՞ս կարելի է խա և ուտ կապել իրար հետ։

Բարբառները ներկայացնում են նաև սրա հակառակ երևույթը, որ արտահայտվում է երկու ձևով. ա) Ունեն ձայնդարձի այնպիսի ձևեր, որոնք չկան գրաբարում։ Վերևում տեսանք Ղրբ. կէնալ «հագնվել» (հրմ. կէ՛ց «հագիր») և Մշ. գեսա «հագուստ» ձևերը, որոնք չեն ավանդված գրաբարում. բայց անշուշտ են դարում գոյություն ունեցած պիտի լինեին, որովհետև զ նախդիրով ունենք նրանցից զգենուլ և զգեստ բառերը. կարելի չէ ասել, թե Ղարաբաղի և Մուշի բարբառները ավելի հին են գրաբարից, որովհետև առանց *գենալ և գեստ բառերի գոյության, անկարելի է ենթադրել զգենուլ և զգեստ։— Մի ուրիշ օրինակ է Ղրբ. պէ՛րփէլ «իրակը արծարծել, հրահրել», որ բորբոքել բառի բարձր աստիճանի ձայնդարձն է ներկայացնում և չկա ոչ գրաբարում և ոչ էլ ուրիշ բարբառներում։ Բայց այսպիսի օրինակներ շատ հազվագյուտ են և բարբառների ընդհանուր քննությունը միայն կարող պիտի լինի ասել, թե ուրիշ ինչ նման օրինակներ կան։ Հայոց լեզվի պատմության Բ հատորում խոսել ենք արդեն բարբառներում գոյություն ունեցող մի քանի ձայնդարձների մասին, բայց միևնույն ժամանակ հայտնել ենք նաև, թե նրանք նոր դառնված մի ձայնական օրենքի (տես Ինն. վանի բարբ.) արդյունք են և չեն ներկայացնում հին ձայնդարձի աստիճաններ։

բ) Երբեմն բարբառը ներկայացնում է միևնույն ձայնավորի կարճ կամ երկար աստիճանը, որ գրաբարից հայտնի չէ։ Հայտնի է, որ ուտել բառը, որի բարձր աստիճանն է ed, ներկայացնում է միջին աստիճանի ձայնդարձի երկար ձևը (ō)։ Այս ձևը գտնում ենք միայն հունարեն կրկնական ἐδωδή «ընտունդ, ուտելիք» բառի մեջ։ Մեր բարբառներից Ղրբ. օ՛տէլ, Ագլ. օ՛տիլ

ներկայացնում են ձայնդարձի կարճ o աստիճանը, որ ոչ միայն գրաբարում, այլև ոչ մի լեզվի մեջ պահված չէ։ Բայց սա ինքնախաբեություն է։ Հիշյալ երկու բարբառները գրաբարի ու ձայնը միշտ դարձնում են o, ինչ. առուն>աօն, ծուռ>ծօ՛ռիք, ունիմ> օ՛նիմ և հետևաբար ուտեմ> օտէմ ձևի մեջ ձայնդարձ փնտրել ավելորդ է։

Ըստ այսմ՝ եթե ձայնդարձը գրաբարում քառացած ձև է միայն, բարբառներում բոլորովին մեռյալ տարր է։

ԳԼՈՒԽ Զ

Ա Ճ Ո Ւ Մ

Ինչպես դիտենք, արմատը բառի այն անվերածելի մասն է, որ ծառայում է նրան իբր գլխավոր հիմք, և որի վրա ավելանալով մասնիկներն ու վերջավորութիւնները՝ կազմվում է բառը։ Արմատը հին լեզվաբանութեան մեջ կոչվում է նաև հիմք (Base)։ Արմատը կազմված է լինում մի կամ մի քանի ձայներից. բայց ամեն մի ձայնի պատահական խառնուրդ չի կարող կազմել արմատ. և ամեն լեզվի մեջ էլ կան կամ պետք է լինեն որոշ պայմաններ, որոնց համեմատ ձայները դասավորվելով՝ կազմում են արմատը։ Անջատական լեզուների մեջ բոլոր բառերը կամ արմատները միավանկ են, օր. չինարեն, աննամերեն և այլն, և այլն։ Արդի չինարենի մեջ արմատը կազմված է լինում. 1) կամ մի ձայնավորից, 2) կամ մի բաղաձայնի և մի ձայնավորի, կամ երկբարբառի դումարումից և 3) կամ սրանց վրա մի ընդհանրի հարաբերութիւնից։ Այսպես i, lī *կամ* lau *և* an, san *կամ* šuan։ *Ուրիշ որևիցե բաղաձայնով վերջացող կամ երկու բաղաձայնով սկսվող արմատ կամ բառ անկարելի է գտնել (մի բառ միայն կա* ärl «աղա», *որ ունի վերջում բաղաձայն)։*

Սեմական լեզվախմբի մեջ, ինչպես ասացինք, արմատը սովորաբար բաղկացած է լինում երեք ձայներից, որոնցից մեկը կամ երկուսը կարող է լինել ձայնավոր, բայց ավելի սովորականն այն է՝ որ երեքն էլ լինեն բաղաձայն. չորս կամ երկու ձայնով արմատները սակավաթիվ են. երկձայն արմատները համարվում են եռաձայն ձայնավորանոց արմատի սղված ձևը։

Բանասու լեզվի արմատները բաղկացած են լինում բաղաձայն+ձայնավոր+բաղաձայն և կամ վերջին բաղաձայնից առաջ նաև մի ձայնավոր ներմուծված։ Թյուրքական լեզուների արմատների կազմութեան մասին արդեն խոսել ենք վերը։

Հնդեվրոպական արմատն էլ ունի իր պայմանները, որոնք շատ ավելի բարդ են, քան նախորդները։

Հնդեվրոպական արմատը կարող է լինել միավանկ և երկավանկ։ Միավանկ արմատի կազմիչ տարրերը կարող են լինել՝

1) Մի ձայնավոր կամ մի երկբարբառ, ինչ. i «երթալ», au, u «հագնվել, օթևանել»։

2) Ձայնավոր կամ երկբարբառ+բաղաձայն, ինչ. es «լինել», eus «այրել, վառել»։

3) Բաղաձայն (կամ ձայնորդ)+e+բաղաձայն կամ ձայնորդ. ինչ. tep- «տաքցնել, տապ», tek «թևքել»։

4) Բաղաձայն կամ ձայնորդ+e+ձայնորդ+բաղաձայն. ինչ. terp «հյուտացնել, դոնացնել»։

5) Բաղաձայն կամ ձայնորդ+ձայնորդ+e+բաղաձայն կամ ձայնորդ. ինչ. prek[1] «հարցանել, հարս ուզել»։

6) Բաղաձայն կամ ձայնորդ+ձայնորդ+e+ձայնորդ+բաղաձայն, ինչ. twois «հուզել»։

Այս բոլորի մեջ բաղաձայնի փոխարեն կարելի է դնել s+պայթուցիկ *կամ* պայթուցիկ+s։

Բոլոր դեպքերում էլ e *նշան է ձայնդարձի, որ բնականաբար կարող է փոխանակվել իհարկին ձայնդարձի բոլոր ձևերով։*

Երկավանկ արմատների վրա արդեն խոսել ենք, ուստի ավելորդ ենք համարում նորից խոսել դրանց մասին։

1) Արմատը չի կարող քե սկզբում, և քե վերջում ունենալ պարզ բրթռուն պայթուցիկ. պետք է որ մեկը կամ մյուսը կամ երկուսն էլ լինեն շնչեղ. կարելի է ասել bedh, bhed, bhedh, *բայց չկա* bed *ձևը։*

2) Եթե արմատը սկսվում է պայթուցիկ բրթռուն շնչեղ բաղաձայնով, չի կարող վերջանալ խուլ բաղաձայնով և ընդհակառակը. կարելի է ասել, ինչպես տեսանք, bhedh, bhed, *բայց չի կարելի ասել* bhet *կամ* tebh.—*սակայն եթե արմատը սկսվում է* s-*ով, որին հաջորդում է խուլ բաղաձայն, կարող է ունենալ վերջաձայն բրթռուն շնչեղ, ինչ.* stebh

3) Արմատը չի կարող վերջանալ երկու. ձայնորդով կամ երկու բաղաձայնով, բացի ձայնդարձի առաջին աստիճանից, կարելի չէ ասել tewl-, sil- *կամ* tept *և* nokt *կամ* leingh, dheing[1]h, mezg, keirk yeung *և այլն։*

4) Ոչ մի միավանկ արմատ չի կարող վերջանալ e *ձայնավորով կամ իր ձայնդարձի մյուս աստիճաններով. կարելի չէ*

ասել e, te, pe, po, p- և այլն, այլ միայն երկար ē, ō, ā. ինչ. dhē «դնել», sē «ցանել»։ Երկվանկ արմատները կարող են հանգել ē, ō կամ ə։

Երբ արմատի վերջավանկի ձայնավորը երկար է, արմատը կոչվում է ծանր (lourde), երբ այդ ձայնավորը կարճ է՝ արմատը կոչվում է թեթև (légère)՝

Հնդեվրոպական արմատը ունի մի զարմանալի հատկություն. արմատի վրա կարելի է ավելացնել և մի նոր ձայն (բաղաձայն, ձայնավոր կամ երկբարբառ)՝ առանց իմաստը կամ նշանակությունը դժալի կերպով փոխելու և կամ մի նոր երանգ տալով։ Այս երևույթը կոչվում է աճում (élargissement) և այն ձայնը՝ որ ավելացվում է արմատի վրա, կոչվում է աճական (déterminatif)։ Արմատը առանց աճականի կարելի է կոչել պարզական կամ պարզ արմատ։ Օրինակ առնենք հնխ. *wel- արմատը, որ նշանակում է «փափաքել, հուսալ». այս արմատից ծագում են հգ. wēllan «ուզել», գերմ. wollen «ուզել», լիթ. veĺyju «փափագիլ», ռուս. воля «կամք», լ. volo «ուզել», հուն. fέλεσθαι «ուզել»։— Այս արմատի վրա կարելի է ավելացնել *p աճականը և դարձնել *welp-, որից ծագում է հուն. fέλπω «հուսագրկել», fέλπι'ς «հույս».— կարելի է ավելացնել և d աճականը, որով արմատը դառնում է weld և այս արմատից ծագում է հուն. fέλδομαι «փափագիլ, ունենալ»։ Հայերենի մեջ ունենք գեղձալ, գեղձիլ «սաստիկ փափագիլ», գեղձ «սաստիկ փափագ», որ ենթադրում է նույն wel արմատի մի ուրիշ աճումը՝ ձ աճականով։

Ավելի լավ օրինակ է լսել բայը, որի պարզ արմատն է լու (կար. լուայ) <հնխ. k²lu, որ առորին աստիճանի ձայնդարձն է k¹leu «լսել» արմատի. համմտ. հն. κλύω «լսել», լ. cluo «լսվիլ», անունը «հեղինակ». այս արմատի աճած ձևերն են՝ 1) k¹leus կամ k¹lus, որ է հյ. լսել, արմատը լուս-ել, մյուս լեզուներից համմտ. Քոխար. kloçäm «լսել», գերմ. lauschen, գվո. lōsen «ականջ դնել», ռուս. слушать «լսել», լիտ. klusti «հնու լինել»— 2) k¹lur, որից հյ. լուր, համմտ. հիռլ. cloor «լսել»— 3) k¹lusr, որից հյ. լուռ։ Հնխ. ter «դողալ» պարզ արմատից ունենք tres-, trem- աճած ձևերը։

Աճականները դառնում են այսպիսով մասնիկներ, բայց երկուսի մեջ կա խոշոր տարբերություն. մասնիկը լինում է կամ բայակերտ և կամ գոյականակերտ. իսկ աճականը պետք է լինի միաժամանակ թե բայակերտ, և թե գոյականակերտ։

Միայն հնդեվրոպական լեզուների մեջ չէ, որ կա աճականի դրությունը. նույնը կա նաև սեմական լեզուների մեջ. սեմագետները ենթադրում են, որ սեմական եռաձայն արմատի վերջին ձայնը միշտ աճական է, որով և եռաձայն արմատները ծագած են լինում նախավոր երկձայն արմատներից։ Օրինակ՝ արաբերենում ունենք قطع «կտրել», قطل «կտրել» (այլ է قتل սպանել), قطّ «ծուռ կտրել», قطب «կտրել», قطف «ծառից պտուղ կտրել», قطم «կտրել, հատկապես առամով կտրել», قدّ «կտրել, հատկապես ըստ երկարության կամ ըստ լայնության ամբողջովին կտրել» (Renan, Hist. des langues sem. I 97)։ Այս բոլորը առաջանում են ق երկձայն արմատից, ուստի l, m, b, d, f և այլն աճական են։

Ուրիշ լեզվաբաններ աճականի երևույթը գտնում են նաև ուրիշ լեզվախմբերի մեջ, և ինչպես երևում է, դա մի ընդհանուր և բնական երևույթ է բոլոր լեզուների համար (համմտ. Trombetti, էջ 66—68)։

Հնդեվրոպական լեզվախմբի աճականները առանձին և մանրամասն քննության չեն ենթարկված, ոչ ընդհանուր սիստեմի են վերածված, և ոչ էլ օրենքի ու կանոնի տակ դրված։ Ավելի լա՝ հայերենը, ուր այս մասին ոչ մի աշխատություն չկա։

Թե ինչպես են ծագել աճականները հնդեվրոպական նախալեզվի մեջ, դրա մասին ոչինչ հայտնի չէ. բայց անշուշտ գրանք էլ, ինչպես մասնիկները, ծագած պետք է լինեն նախավոր ամբողջական բառերից կամ բառիկներից։

Հոտենդոտյան Նամա լեզվի մեջ երկու բայական արմատ կցելով իրար առացվում է մի նոր բայ, մի նոր երանգով, որի մեջ հիմնական իմաստը առաջին բայն է պահում, օր.

ǃgū˘n երթալ, bē՛ հեռանալ —որից ǃgū˘n-bē՛ դեն գնալ, weggehen, uri ցատկել, ≠gā՛ մանել,—որից urī՛-≠gā՛ ներս ցատկել uri ցատկել, ≠ ui դուրս գալ, ելնել, որից՝ uri-≠ui դուրս ցատկել և այլն։

Ենթադրելով, թե վերջին բայը սղվելով մի ձայնի կվերածվեր, պիտի առացվեր մի աճական։ Նմանապես արխագերենում կան բայեր, որ կազմված են երկու գոյականից, օր. gu «սիրտ»

+pʻx «տաքութիւն» >guapʻx «սիրել»։ Եթե վերջին բաղաձայնը կրճատվեր, դառնալու էր ահա ածականս։

Նեգրական մանդե լեզվի մեջ sa «գնել», so «երթալ», ke «առնել» բայերը կցելով գոյականներին, առացվում է բայ, օր.

bawa	*կռիվ*	— bawa-sa	*կռվել*
sera	*ապրանք*	— sera-so	*վաճառականութիւն անել*
kere	*կռիվ*	— kere-ke	*կռվել*

(Wundt, Völkerps I. *Բ մաս, էջ 164)։*

Աֆրիկյան մի ինքնուրույն լեզվի մեջ կարող է բայարմատը լինել պարզ, բայց նաև ածած լինել մի մասնիկով, որ զարդացնում է նրա իմաստը և անրաժանելի է։ Հաճախ հնարավոր էլ չէ ճանաչել այդ մասնիկը և կարել հանել՝ բուն արմատը գտնելու համար։ Օր.

gua, guaga	*խմել*
dle, dleni	*քաշել*
yi, yige	*հարցաքննել*
dyo «ասել»,	dyomo «խոսք» (Chéron, *էջ 7)։*

Այժմ, երբ երկու ձևերը գոյություն ունեն, կարելի է մտածել, թե երկրորդները առաջինից են, բայց եթե կարճ ձևերի արագ կորստյան օրենքով մի օր խափանվեն, ինչպես կարելի պիտի լինի հաստատել, թե նրանք ածանցված են։

Ահա այս է աճականի ծագման ապրյուրը, որ պետք է ենթադրել նաև հնդեվրոպական նախալեզվի համար։

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՃԱԿԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Այստեղ գնում ենք հայերենի բոլոր աճականների ցուցակը այբուբենական կարգով, իրենց օրինակներով միասին։ Օրինակները քաղել եմ Արմատական բառարանից ընկ. Գրիգոր Գաբեգեանի աշխատակցությամբ։ Որովհետև աճականները անկախ գոյություն չունեն, այլ միացած են միշտ մի որևէ բառի հետ, ուստի անհրաժեշտ էր հավաքել նախ բոլոր օրինակները, ինչ որ արել ենք արդեն ձայնդարձների ընդհանուր ցուցակում։

Բ.— Դեղր «դեղին», լիրբ, ողր, սուրբ, քարբ, քերբել

Գ.— յագենալ, առոյգ, ներգևիլ

Դ.— օդ «կոշիկ», արդ «ձև», արդ «այժմ», կենդանի, կոկորդ, յօդ, նեարդ, սարդ, օդ «հավաս».

Թ.— օթ «օթոց», օթ «օթևան», արթ «արթուն», թերթ (թեր+թ), խայթել, հարթնուլ?, մաղթել, մոյթ, շուրթն փրթանիլ (փրթիլ), փերթ, փոյթ=փութալ, քերթել։

Լ.— Դալ (դալ, դի-ել), ձոյլ, մգլիլ, պալ-ար (պլպլուկ, պլեղպլջակ), ալ-աք։

Ծ.— գերծել, լպիրծ, լոյծ, պուրծ=պրծանիլ, առեղծել, քերծուլ։

Կ.— Բողկ, բոկ «բոբիկ», բոկ-եղ, խեթիկել, խեղկել, խծկել, հարկանել (հարուլ, զարկ), ձաղկել?, մեղկ, ոսկր, ործկալ, պլոկել=լոպկել, սողկ (սողալ), տատասկ, փեղկ, փեռնկել։

Զ.— Անձն, առաղձ, գաղձն=գեղձ, «պատառուկ», գեղձ «փափագ», գեղձ, գեղձան, դաղձն=գեղձն, փորձ։

Ղ.— խուղ (հիւղ), տեղ (lo մասնիկով), առեղծել, պղպջակ, պ . . . (դ ընկած)։

Ճ.— մուրճ «խառատ»։

Մ.— թարմ, հոգմ, մեղմ, յարմ-ար, ջերմ (mo մասնիկով), սերմն, սողմ (սողալ), տամ-ուկ, տարտամ, տրտում, տիղմ։

Յ.— լայն, նայ։

Ն.— Մոյն, մուն «ճանճ», մունջ, ողն=ուլն, ոռնալ, սունիմ, ջանալ, առանալ, քուն

Շ.— լպիրշ, խարշել, մառդաշ, մաշել (մարշել)։

Չ.— Փչել։

Պ.— Սոխպել, տոխպ։

Ջ.— Անուրջ, գաղջ, ջինջ=ջունջ, իջանել (էջ), մրջիւն, շուրջ, ողջ, պղպջակ, առերջ։

Ռ.— Թխ (թռչել), ·լուռ, հեռի?, մռել (լսել), յեռուլ, ջեռնուլ, տեռ «հաշիւ», փռել (սփռել)։

Ս.— Բոյս, լսել։

Վ.— բովիլ։

Տ.— Գոզտ=գաղտ, գաղտուկ, գոզտուկ, հօտ (ոչխարի), մատաղ?, մարտ «կռիվ», ոլորտ, ոստին «անջրդի», պուտ «բշտիկ», սատա=սատափկ, տաղտ, ցիտ=ցտել։

Ր.— Ապրը, սար, դիր (գնել), եղր, լիր (լրանալ), լուր,

ծաղր, մուր, նյարդ, ներգևիլ, նոր, ոզոր, նուրբ, սէր, սար, սուր, սուրբ, տուր (տալ), փոքր, ոսկր։

Ց.— Բոց, լուցանել, լորց, «ջղաձգութիւն», հարց, պ..., ցոյց, քաղց։

Ք.— Բուք, փուք, ձեղք=ճողք, ոլոք, փոքր, քուք «ոզր»։

* *
*

Զայնդարձի մասին խոսելիս տեսանք, որ նա թեև ժառանգ լեզուների գյուտ չէ և պատկանում է նախալեզվին, սակայն ձայնդարձը ընդհանուր երևույթ է բոլոր ժառանգների համար, և ձայնդարձի այս կամ այն աստիճանը, երբեմն էլ երեք աստիճանները միասին, ընդհանուր են բոլորին։ Նույնը կարելի է ասել աճականների մասին, բայց այն խոշոր տարբերությամբ, որ թեև բոլոր ժառանգները աճական ունեն, և այդ աճականները պատկանում են նախալեզվին, սակայն շատ քիչ աճական կա, որ ընդհանուր լինի բոլոր ժառանգներին։ Օրինակները կտեսնենք քիչ հետո։

Աճականները գտնելու միջոցները հետևյալներն են.

1. Երբ ժառանգ լեզուների մեջ մի որևէ ձև իր համազորը ունի մի ուրիշ լեզվի մեջ, բայց տարբերվում է նրանից բառավերջում գտնված մի ավելորդ ձայնով, այդ ավելորդ ձայնը աճական է։ Օրինակ հյ. լոյծ, որից՝ բայական ձևով լուծել, լուծանել, իր համազորներն են հունարեն λύω, լա. luō, համեմատությունը այս 3 բառերի ցույց է տալիս, որ հայերենը բառավերջում ունի մի ծ, որ չկա մյուս երկուսի մեջ. ուրեմն դա աճական է (նրա հնխ. ձևն է g^{i})։—

Հայերեն թերթ բառը իր համազորը ունի հուն. πτερόν, լա. acci-piter, գերմ. Feder, սանս. pátra և այլն ձևերի մեջ. բայց հայերենը բառավերջում ունի թ, որ պակասում է մյուսների մեջ։ Այդ թ ձայնը աճական է։

2. Երբ մի լեզվի այսինչ կամ այնինչ արմատը իր նմանները ունի հենց նույն լեզվի մեջ, բայց նրանք զանազանվում են արմատի վերջում գտնված որևէ մի ձայնով, այդ նոր կամ ավելորդ ձայնը կամ ձայները աճական են. ինչպես հյ. լպիրծ լպիրշ նույն բառերն են և տարբերվում են իրարից ծ և շ վերջաձայնով, որոնք աճական են։ Նույնիսկ թերթ բառը իր ընկերները ունի՝ թերի, թերևս, թիռ, թիթեռն, և մինչև անգամ ժդ. թեր բառերի մեջ (որ նույնպես նշանակում է «թերթ կամ տերև»), ուստի բառավերջի թ աճական է։

3.— Երբ ժառանգ լեզուների մի մեծ թիվ համեմատենք իրար հետ, կտեսնենք, որ այդ բոլորը ունեն նույն արմատից ծագած զանազան բառեր, որոնք, սակայն, տարբերվում են զանազան այնպիսի հավելուածներով, որոնք բոլորը աճական են. ինչպես հյ. լռել բառը իր մեջ ցույց է տալիս 3 աճական. լուռ, լուր, լուս, (լսել). իսկ մյուս ժառանգ լեզուների համապատասխան բազմաթիվ բառերի մեջ գտնում ենք. սանս. çru «լսել», çruš «լսել», զնդ. sru «լսել», sruš «լսել», քուչ. kloçöm «լսել», հուն. κλύω «լսել», լա. cluo «հռչակվիլ», գոթ. hliuþ «լսելը, լռություն», հրգ. hlosēn «ականջ դնել», hlūt «բարձրաձայն», նրգ. lauschen «լրտեսել», ժգ. lōsen «ականջ դնել», laut «բարձրաձայն», հիռլ. clū «հռչակ», cloor «լսեմ», անգլ. listen «լսել», հալ. sluti, slovą «կոչիլ, հռչակվել», ռուս. слушать «լսել», слухъ «լսելիք, ձայն, համբավ», լիթ. klu'sti «հնազանդել» և այլն։ Օրինակների այս խառն ի խուռն բազմությունից երևաց, որ աճականը մի հատ չի լինում ոչ միայն մի քանի լեզվի մեջ, այլև նույնիսկ մի լեզվի մեջ։ Այսպես և՝ հյ. լռ արմատից ունենք լուս, լուռ, լուր *(3 աճական)*։

Հայերեն խուղ=հիւղ բառը թեև կազմված է ղ աճականով, բայց մյուս լեզուները ցույց են տալիս n, l, t, r, m աճականները *(5 հատ)*։

Պետք չէ աճականը առնել արդի ձևի տակ, այլ ձայնական օրենքների համաձայն վերականգնել նախկին ձևը, որ կարող է արդի ձևից բոլորովին տարբեր լինել։ Այսպես հյ. լռ արմատի 3 աճականները u, n, p ծագում են հնխ. k^{1},rs կամ sr, r ձևից։

Նույնիսկ յ աճականը ծագում է հնխ. t ձևից, ինչպես կտեսնենք հետո լայն բառի մեջ։

Պետք չէ կարծել, թե մի բառի վրա միշտ դրվում է մի աճական, այլ կարող է լինել նաև 2 աճական. օրինակ՝ մուճ բառը ունի 2 աճական (ն և ջ), սառեցնել ունի 2 աճական (ղ և ծ), ներգևիլ ունի 2 աճական (թ և գ, որ ծագում է գ ձևից), ճեպարդ ունի 2 աճական (թ և դ), սառյգ ունի 2 աճական (տ և գ)։

Պետք չէ շփոթել աճականը մասնիկի հետ. օրինակ՝ նախալեզվի մեջ սովորական մի մասնիկ կար-ro ձևով, որ կցվում էր շատ բառերի վրա, և եթե այդ մասնիկը ավելանար մի այնպիսի բառի վրա, որ ուներ արդեն մի աճական, աճականի և -ro մասնիկի խառնուրդով առաջվում է դժվար վերծանելի մի ձև։ Այդ ավելի վատ է լինում հայերենում, որովհետև հայերեն թ

ձայնը միշտ հաջորդ բաղաձայնից առաջ անցնելով, ածականի և մասնիկի կարգը խանգարում է։ Այսպես սուրբ բառը առաջանում է հնխ. kʲubh-ró ձևից, ուր ածականն է -bh և մասնիկն է -ro. համմ. սանս çubhrá-։ Հայերենում pp շրջվելով, առացվել է սուրբ, որով այն սխալ կարծիքն է առացվում, որ արմատն է *սուր և ածականն է բ։

Այսպիսի մասնիկներով կազմված բառեր են՝ ճուրբ (-ri), սէր (-ro), սոր (-ro), սուր (-ro), սեղ (-lo), ջերմ (-mo), քուն (-no), մուրկ (-ro), դարբին (-ro)։

Հետաքրքրական է լայն բառի ծագման պատմությունը։ Այս բառը ծագում է հնխ. *plātəno ձևից, ուր -no մասնիկ է. արմատը դրվում է *plat, որ ածած են կարծում *pel- պարզական արմատից -t ածականով, որ երկու ձայնավորի միջև տալիս է հյ. յ։ Նույն բառի հուն. πλακεῖα ձևից փոխ է առնված լիտ. plātīā «հրապարակ», որից էլ հյ. պողոտայ «լայն փողոց» առար.

Երբեմն էլ դժվարին է լինում գանազանել մասնիկը ածականից. օրինակ՝ տարգալ «գղալ» բառի մեջ լ (al) մասնիկ է, որից գուրկ է առնս. darva «փայտյա»։ Նույն լ մասնիկը տեսնում ենք հայտնապես հյ. տես-իլ բառի մեջ, ուր ոչ մի կասկած չկա թե -իլ մասնիկ է։

Կրկնակ մասնիկ էլ կարող է լինել. այսպես՝ ճօրան «հօտ», որ առաջանում է հնագույն pā-tro+ ան ձևից։ Անտարակուսելի է, որ -tro մասնիկը արդեն դրված էր արմատի վրա հենց նախալեզվի մեջ, որովհետև -tro>ր ձայնափոխությունը հնդեվրոպական շրջանից է, իսկ -ան հայկական մասնիկն է։

Ավելի հետաքրքրական է զգեստ բառի ծագումը, որ կազմված է զ նախդիրով *գեստ ձևից, իսկ այս էլ հնխ. ves-ti ձևից, որ երկու ածական ունի. պարզ արմատն է ev, ov, av, որից հյ. ագանիլ, երկրորդ ածականն է -ti։ Հայերենում թեև s առանձին ջնջվում է, բայց t-ի հետ միացած տալիս է հյ. -ստ։ Այս -ստ մասնիկը իրեն առանձին հայերեն մասնիկ գտնում ենք ուրիշ շատ բառերի վրա, ինչպես՝ ճամբեստ, գովեստ, ուռեստ, զգաստ, փախուստ, հագուստ և այլն։

Ածականը մասնիկի հետ շփոթելու լավ օրինակ են ներկայացնում հայերենի մեջ ճիւթ, ճիւթ, մարդ, ճիւաղ բառերը, որոնք կազմված են հնխ. անցյալ դերբայի -to մասնիկով, որ հայերենում անկախ գոյություն չունի։ Սրանցից առաջինը (ճիւթ) կազմված է sēp=sip «քամել» արմատից՝ նույն -to մասնիկով, որով sip-to դառնում է ճիւթ, նշանակում է քուն քամված, իսկ սրանից էլ ni- մասնիկով ճիւթ, որ ներկայացնում է վերևում կախված մի բան, որից դեպի ցած (ni) ծորում է մի քամված։ Որովհետև ճ և թ բաղաձայններից հետո -t դառնում է հայերեն դ, ուստի անցյալ դերբայի նույն -to մասնիկով կազմված են մադդ «մեռած» և ճիւաղ <pe-pn-to (արմատը pon «ցավել, ցավ զգալ»)։

Ածականը միանալով արմատի հետ երբեմն այնպես է մերված լինում, որ իր տեսքը բոլորովին կորցնում է և առանում պարզ արմատի երևույթ։ Այսպես հնխ. ar- «յօրինել, շինել» արմատը, որ առանց ածականի տալիս է հյ. առնել, յարել, արարի և այլն ձևերը, -t ածականով տալիս է հուն. ἀρτός «կարդավորություն», որի համապատասխան ձևն է հյ. արդ «ձև», սրանից էլ՝ զարդ, յարդարել, արդ-ար, որի վերջին -ար մասնիկը բուն հայկական է (ինչ. մութ բառից՝ մթար և մեծ բառից մեծարել)։

Նույն ar արմատից մ ածականով կազմված է յ նախդիրով յ-ար-մար։ Նույն արմատին է պատկանում նաև հյ. արդ «այժմ», որի համապատասխան՝ նույն ձևն է ἀρτι «այժմ»։

Ածականի և մասնիկի գումարման լավ օրինակ է հյ. ալաք, որի պարզ արմատն է kʲu, -l ածականով kʲul և ակ մասնիկով՝ ալաք. այսպիսով այս քառատառ բառի արմատն է միմիայն ա իսկ -ակ մասնիկը արդյոք հայերեն է և ինչ ծագում ունի.— ակ մասնիկով գտնում ենք նաև սայթաքիլ. բայց սրա արմատը սա՞յթ է։

Ածականների գանազանակերպության օրինակ է սողալ և նրանից կազմված սող-կ, սող-մ, սող-ոսկել ձևերը։

Հայերենի սովորական մասնիկներից է -ուկն, որ հաճախ գտնում ենք կարճ արմատների ծայրին. ինչպես ձուկն, մուկն, արմուկն, աղմուկն։ Այս բոլորի ծայրին -ուկն կամ ուկ ավելացած է կարճ արմատին երկարություն տալու համար։

Վերևում ասացինք, թե ածականի բուն ձևը գտնելու համար պետք է դիմել հնդեվրոպականին. այսպես՝ յեռուլ, ջեռնուլ, փռել բառերի մեջ ռ մեզ թվում է ածական, բայց այդպես չէ. սրանց մեջ ռ առաջանում է rs ձևից, որից r արմատական է, իսկ մյուս s ածական։ Օրինակ՝ յեռուլ բայի արմատն է յեր< ser, որից ունենք առանց ածականի յերիւրել։

Պետք չէ կարծել, թե ամեն անգամ, որ ժառանգ լեզուները ներկայացնում են ածականով ձևեր, հայերենն էլ

պետք է ունենա նրանց համապատասխան ածականը. այսպես՝ փայլ բառը ներկայանում է մյուս լեզուներում զանազան ածականներով, իսկ հայերենը զուրկ է դրանցից։

Զարմանալի է հայերենի մեջ -ր վերջացող բառերի մի շարք, որ հոլովման մեջ էլ կորցնում է այդ -ր ձայնը, ինչպես փոքր, մանր, ծանր, մեղր, ասր, նաև ոսկր, և այլն, որոնց սեռականներն են փորու, մանու, ծանու, մեղու, ասու, բայց՝ ոսկեր։ Այս ր-ի ծագումը լավ հայտնի չէ։

Այս բոլոր կանոնները ցույց են տալիս, որ հատակ որոշիչ մեջց չկա զանազանելու համար, թե մի բառի վերջում դրված ձայնը, մանավանդ բազաձայնը արմատական է (այսինքն արմատին է պատկանում), թե ածական է կամ մասնիկ։

Այս հարցը վճռելու համար պետք է օգնության կանչել բոլոր ժառանգ լեզուների համապատասխան բառերը։ Եթե որևէ մի լեզվի մեջ արմատը առանց այդ բազաձայնի գոյություն ունի, նշանակում է, թե վերջին բազաձայնը արմատական չէ։ Նմանապես, եթե այդ վերջին բազաձայնը տարբեր մի բազաձայնով գոյություն ունի որևէ լեզվում, ուրեմն ածական է։ Իսկ եթե պատահաբար մի պարզ արմատ միմիայն մի ածականով պահված է բոլոր լեզուների մեջ և ուրիշ ածական չունի, այդ բառը կլինա անորոշ և կհամարվի պարզ արմատ։

ԳԼՈՒԽ Է

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Կրկնություն ասելով հասկացվում է բառը կամ արմատը ինքը իրենով բարդել։

Կրկնությամբ կազմված բառերը կոչվում են կրկնավոր։

Կրկնությունը, իբր բառակազմության շատ հասարակ մի միջոց, ամեն լեզվի մեջ էլ գործածական է, հատկապես նախնական լեզուների մեջ։

Երեք գլխավոր նպատակ ունի կրկնությունը.

1) Հենց առարկան ինքն է կրկնական և բառը ներկայացնում է նրա պատկերը. այսպես են բոլոր բնաձայն բառերը՝ թե գոյական, և թե բայ. օր. հ. կկու=հն. κόκκυξ, լ. cuculus, ֆր. coucou, անգլ. cuckoc, իռլ. cuach, գերմ. kuckuck, ռուս. кукушка, պրս. kūkū, վրաց. գուգուլի, թրք. ququ, ֆինն. kākö և այլն։ հ. ճոպոպ=լ. upupa, գերմ. hupphupp, լեթթ. pụppukis, պրս. pūpū, արևել. թրք: hupup և այլն,— հուն. πιππίζω, լ. pipo, pipio, pipilo «ճռվողել, կակաղալ» և այլն,— հուն. ὀλολύζω «ողբալ», լ. ululare «ոռնալ»,— հ. քչքչալ (ջրի), ալալալ (քամու), կռկռալ (ագռավի) և այլն։

2) Առարկան թվով շատ է և կրկնությունը ցույց է տալիս բազմություն. և կամ գործողությունը սեռական ու շարունակական է և այդ ժամանակ կրկնությունը կոչվում է ճանախական. օր.

ջավայերեն dongèng «պատմություն», dongèng-dongèng «զանազան պատմություններ»

woh «պտուղ», woh-woh «տեսակ տեսակ պտուղներ».

lampu «ճրագ», lampu-lampu «տեսակ տեսակ ճրագներ»

պրս. gōna gōna «տեսակ տեսակ, զանազան տեսակ»

սանս. dáme-dame «ամեն մի տան մեջ, տուն առ տուն».
divé-dive «օր օրի»
Թրք. qapu qapu gezdim «դուռ ի դուռ ման եկա»
լտ. quis-quis «ամեն անգամ նա որ...
սանս. uttarottara «միշտ ավելի բարձր»
սանս. pra-pra, հուն. προ-πρό «միշտ հառաջանալով, շարունակաբար»
Ֆիջի կղզ. kere «խնդրել», kerekere «մուրալ»
հյ. վազվգել, գողդոդալ, կմկմալ, դոդոռալ
մալգաշ. mandeha «գնալ», mandehandeha «այս ու այնտեղ գնալ»
անգլ. shilly-shally «վախվխելով»
fiddle-faddle «դատարկ խոսքեր»
hurly-burly «աղմուկ-աղազակ»

Կա այսպիսի կրկնության մի այլ ձև, որ շատ սովորական է արևելյան լեզուների մեջ և ցույց է տալիս զանազան բաներ։ Դա հայերենի ճաց-մաց, ջուր-մուր, քաղաք-մաղաք ձևով կրկնությունն է, որի հետ նույնն են Թրք. balaq-malaq «ձուկ-մուկ», պրս. xurda-murda «մանր-մունր», դրավիդյան բրահուի լեզվով urā-murā «տներ-մներ», hullī-mullī «ձիեր-միեր», bīš-mīš «գոմեշներ» (Bray, 48), ինչպես նաև քրդ., վրաց., նույնիսկ ուկրաիներեն համապատասխան կրկնություններ։

Թրքական կումուխ լեզվով at-mat «ձի», kitab-mitab «գիրք», qiz-miz «աղջիկ», az-maz «քիչ-միչ» և այլն (Дмитриев, 47)։

Այս երևույթը՝ ավելի զարգանալով՝ հասնում է ուղղակի հոգնակիի գոյափարին. ամերիկյան ցիմշիան լեզվի մեջ Թե գոյականների և ածականների, և Թե բայերի հոգնակին կազմվում է կրկնությամբ (Boas, Handbook, I, 365 շար.), օր.

t'aq «լիճ», t'aqt'aq «լճեր»
gan «ծառ», gangan «ծառեր»
asāx «ոտք», asasāx «ոտքեր»
hā°s «շուն», hashā°s «շներ»
hōmçîx «համբուրել», hamhōmçîx հգ.

Գրեթե նույնն է նաև ամերիկյան մայդու լեզվի մեջ, ուր հոգնակին շատ քիչ է գործածվում, և նրա մեջ կա բաշխական (distributif) ձևը, որ կազմվում է կրկնությամբ. օր.

ca «ծառ», cacato «ամեն մի ծառ»

sēwi «ափ», sēusēuto «ամեն մի եզերք»
höbo «տուն», höboboto «ամեն մի տուն»
(Boas, Handbook, I, 708)

Կրկնության այս ձևը սովորական երևույթ է նաև աննամերենի մեջ, ուր բուն կամս ամեն բառից կարելի է կրկնական կազմել՝ ձայնավորը դարձնելով ie և վերջաձայնը դարձնելով k-, օր.

satç «գիրք», satç-siek «գիրք-միրք»
bak «գրամ», bak-biek «գրամ-մրամ»
mük «թանաք», mük-miek «թանաք-մանաք»
soŋ «գետ», soŋ-siek «գետ-մետ»։

Այսպիսի կրկնավորներ ուզած բոլեին ամեն մարդ կարող է կազմել և կազմում է, հենց որ մի հարմար բառ չի գտնում իր միտքը լրիվ արտահայտելու համար (Dirr, Gr. annam., էջ 101)։

3) Առարկան առանձնապես կարևոր է և կամ գործողությունը սաստկություն կամ չափազանցություն է ցույց տալիս. այս դեպքում կրկնավորը կոչվում է սաստկական։ Օր.

սանս. priyás-priyas «շատ սիրելի»
լտ. mē mē «ինձ խակ»
հրգ. selbselbo «ինքն խակ»
արաբ. ǰāa rākiẓān rākiẓān «եկավ (շատ) վազելով»
մալգաշ. kaika «գանգատ», kaikāika «սուր ճիչ»
ջավայ. ləmbat «նրբություն», lələmbat «շատ նուրբ մի բան, ուրվական»
aṅin «քամի», aṅin-aṅin «փոթորիկ»
leńei e leńei «շատ աղքատ»

Աֆրիկյան օնո լեզվով բառի երկրորդ վանկը կրկնելով սաստկվում է նույնի սաստկականը, օր. kiroine «երկար», kiroroine «շատ երկար», իսկ առաջին երկու վանկը կրկնելով՝ իմաստը Թուլանում է. օր.

kirokiroine «մի քիչ պակաս երկար»
nigatne «փոքր», niganigatne, nigagatne
wakoine «սպիտակ», wakowakoine «քիչ սպիտակ»
(Wacke, էջ 184)

Սուդանական շիլլուկ լեզվում կրկնությունը ծառայում է իմաստը հաստատելու համար. օր.

yā čamo čamo «ես անշուշտ պիտի ուտեմ»
(Westermann, էջ 79)։

Մելանեզյան տոնգա լեզվի մեջ կրկնությունը նշան է իմաստի մեծության. օր. buti «բլուր», butibuti «լեռ», moru «փոս», morumoru «խոր ձոր» (Bay, էջ 358)։

Կրկնությունը մասամբ կամ ամբողջական շատ սովորական է պոլինեզյան հավաի լեզվում և ծառայում է բառի իմաստը աստիճանելուն. օր.

no-i «հարցնել», no-no-i «խնդրել»
a «այրել, վառել», a-a «տաքորել»
po-i «ծածկել», po-po-i «վրան ծածկել»
ma-kai «նայիլ», ma-kai-kai «գողնել»
na-ha «կոտրել», na-ha-ha «խորտակել»
hāma «բանալ», ha-ma-ma «լայն բանալ»
pu-lu «թաց», pu-lu-pu-lu «խոնավ»
pa-la «նկարել», pala-pala «գրել»
la-ma «ջահ», lama-lama «լույս»
(Andrews, էջ 16—17)

Հաճախ վերջին երկու պայմանները միանում են և կրկնավորը թե հաճախական և թե աստիճական է միանդամայն. օր.

Ջավայ. ḍawah-ḍawah «քանիցս անգամ կամ բոլորովին գետին փռվել» (Bohatta, Gr. jav. 73)
Բրք. abur-ǰubur «խառնիխուռն»
abuq-sabuq «անհնթեթ»
patər-patər «դղրդալով»
parəl-parəl «փայլ ի փայլ»
ǰayir-ǰayir «ճարճատելով (վառիլ)»
ǰangəl-jungəl «ադմկալից»

Կրկնությունը տալիս է նաև՝

4) սովորական գոյականներ. օր. Ջավայ. suhunnan «խընդիրք» բառից՝ susuhunnan «թագավոր», իբր այն անձը, որին շարունակ խնդիրներ են ներկայացնում (Bohatta, Gr. ǰav. էջ 37)։

Ֆիջի կղզիների լեզվով կրկնությամբ կազմվում են տեղ և գործիք ցույց տվող բառեր և ածականներ. ինչ.

ndave «հոսել», ndavendave «ջրանցք»
mbulu «թաղել», mbulumbulu «գերեզմանատուն»
loa «կեղտ», loaloa «սև, կեղտոտ»
ndre «քաշել», ndrendre «ձանր»

Մելանեզյան նովիանա լեզվով գոյականի կրկնությունը կարող է կազմել ածական. ինչ. binu «մարջան», binubinu «մարջանե», patu «քար», patupatu «ապառաժուտ» (Ray, էջ 549)։

Դրավիդյան լեզուների մեջ կա բայի մի կրկնական ձև, որ թեև հաճախական է կոչվում քերականներից, բայց ցույց է տալիս սովորական գործողություն. օր. veḷ «սպիտակ», veḷuveḷukku «սպիտակացնել», min «երևալ», minuminukku «փայլել», (Caldwell, Comp. gram. drav., 462)։

Ամերիկյան կուակյուտլ լեզվի մեջ կրկնությունը նշանակում է «ջանալ այդ բանը անել». օր. laēl° «մտնել», lālaēlā «ջանալ մտնել», gək «կին», gāgək'a «սիրաբանել», xunok «մանչ», xwāxunk'wa «ջանալ մի տղա ունենալ» (Boas, Handbook, I, 527)։

Ամերիկյան մայդու լեզվի մեջ կրկնությամբ կազմվում են սովորական բառեր (գլխավորապես մարմնի մասեր, անասուններ, թռչուններ) և ածականներ. ինչ.

dadaka «ուս», polēpolē «պճեղ», pakpaka «ձուլ», wilili «բամբակ», popo «արտա», nāna «հուրծք», tötö «ճյուղ», laklakpe «հարմիր», daldalpe «սպիտակ», cūcukpe «թթու», lēlepe «տկար», sēūsēūpe «սև» (Boas, Handbook, I, 720, 722)։

Կոնգոյի չիլուբա (բանտու) լեզվումն էլ կան բազմաթիվ կրկնավոր բառեր՝ սովորական իմաստով. օր.

lutalatala «փոքր աքլոր»
kanyungunyungu «գլխի պատյան»
mukelekele «մսի հյութ»
čidingidingi nigaud «տղուշ»
(Gabriel, էջ 256)

Այս բոլորի գումարն է ներկայացնում կրկնությունը ամերիկյան ալգոնկին լեզվում, ուր կրկնությունը նշանակում է. 1) գործողության սաստկություն, 2) գործողության սովորական լինելը, 3) գործողության շարունակություն, 4) կրկնություն

5) շատությունն, հոգնակիությունն կամ բազխում. 6) անդամությունն, 7) քանակությունն, խոշորությունն, 8) բնաձայնությունն։

(Boas, Handbook, I, 814—5)

Աֆրիկյան կանուրի լեզվով կրկնությունը նշան է բայի մեջ գործողության կրկնության. ինչ.

leléŋgena «նորից գնացի»
lelénema » «գնացիր»
lelésena » «գնաց»
tultulliǰena «մենք նորից լվացինք»
tultulluwa «դուք նորից լվացիք»
tultúlsana «նրանք նորից լվացին»

(Duisburg, էջ 42)

Այս բոլորից դուրս կրկնությունը ծառայում է նաև ուրիշ նպատակների համար. այսպես՝

5) իբր նշան արհամարհանքի՝ մելանեզյան լեզուների մեջ. ըստ այմ Սալոմոն և Թանկ կղզիների մեջ բնաձայն պատուի անունը կրկնելով առացվում է նույնի վայրի տեսակը.

6) իմաստի թուլացում կամ նվազում. այսպես՝ աննամերենում ածականները կրկնվելով՝ թուլացնում են իրենց նշանակությունը. օր. ça «հեռու», çaça «քիչ հեռու»։

(Dirr, Gr. ann., 13)

Աֆրիկյան կոնգո լեզվի մեջ կրկնությամբ կազմում են նվազական (դնելով նաև kin նախամասնիկը). օր.

koko «քե», kinkokokolo «քեփիկ»
etadi «քար», kintaditadi «փոքրիկ քար»
ngulu «խոզ», kingulungulu «փոքրիկ խոզ»
nkunga «երգ», kinkungankunga « » երգ

(Bentley, էջ 535)

Մելանեզյան կվամերա լեզվով կրկնությամբ կազմում են նվազական. ինչ.

kapir «քար», kapirkapir «փոքր քարեր»

(Ray, էջ 148)

Ամերիկյան մայա լեզվով կրկնությունը կազմում է նվազական. ինչ.

noh կամ nohoč «մեծ»
sak «սպիտակ»
no-noh կամ no-nohoč «քիչ մեծ»
sa-sak «ճերմակիկ»

(Tozzer, էջ 97)

մալգաշ. mena «կարմիր», menamena «կարմրավուն»
akaiky «մոտիկ», akaikikaiky «բավական մոտիկ»
lalina «խոր», lalindalina «քիչ խոր»

(Montogné, էջ 12)

Նույնպես է նաև ամերիկյան կուակյուտլ լեզվի մեջ. ինչ.

çədāq «կին», çāçədāgəm «կնիկ»
gōku «ատուն», gāgogum «տնակ»

(Boas, Handbook, I, 526)

Աֆրիկյան նիամ-նիամ լեզվի մեջ կան բազմաթիվ ածականներ, որ կազմված են բայերից՝ կրկնությամբ.

zera «գրտել, առնել», zezere «գոռալ»
naga «քանձրանալ», nanaga «քանձր»
zelenga «առնել», zezelenge «առնուն»

Ամերիկյան տիլլամուկ լեզվի մեջ կրկնությունը կազմում է նվազական. ինչ.

haneluh «քե», huhaneluin «փոքրիկ քե»
tiyilhu «մարդ», dutiyilhu «տղեկ»

(Edel, էջ 14)

7) Ընկերակցություն. այսպես պոլինեզյան լեզուների մեջ. օր. nofo «բնակվել», nonofo «կենակցել»։

Հոտենդոտյան կորանա բարբառում կրկնությունը ծառայում է ածականից բայ կազմելու. օր.

/nubu «կարճ», /nubu/nubu «կարճացնել»
≠xanu «հարթ», ≠xanu≠xanu «հարթել»
/ai «զորեղ, ուժեղ», /ai/ai «զորացնել»
/haba «լայն», /haba/haba «լայնացնել»

(Meinhof, էջ 47)

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնգե լեզվով կրկնությամբ կազմվում է բայի անանցողական ձևը. ինչ.

hu «չորացնել», huhu «չորանալ»
mli «կլորացնել, գլորել», mlimli «կլոր լինել»
su «փակել», susu «փակվել»
ki «հանգցնել», kiki «հանգիլ»
(Westermann, էջ 140)

8) Կազմում է բայի անցողականը. այսպես՝ հոտնդոտյան *նամա լեզվի մեջ՝* !anù *«մաքուր լինել»,* !anù-!anù *«մաքրել» (այնպես անել, որ մաքուր լինի),* !nái *«տաքանալ»,* !nái-!nái *«տաքացնել»* (Seidel, Hauptsp., 14)։

9) Կազմում է ներկա դերբայ. օր. ամերիկյան ցիմշիան լեզվի մեջ։

algîx *«խոսել»*	aalgîx *«խոսող»*
gibāyuk *«թռչել»*	gîgibāyк *«թռչող»*
txâxkᵘ *«ուտել»*	ttxâxkᵘ *«ուտող»*
bax *«վազել»*	bbax *«վազող»*

10) Կովկասյան կյուրիներեն լեզվի մեջ կրկնությունը ծառայում է հրամայական կազմելու համար. կրկնվում է միայն արմատի վերջաձայնը՝ հետևյալ ձևով.

alkuk, k'usûs, ǰaqùq, k'iḥiḥ, čüxüx

ուրիշ լեզուների մեջ նման երևույթ չկա (Dirr, Einl, 293)։

11) Տարօրինակ գործածություն ունի ամերիկյան կուակյուտլ լեզվի մեջ, ուր գոնադան բույսերի կամ ձկների անունները կրկնվելով տալիս են «ուտել» նշանակությամբ բայեր. ինչ. xamās *«չոր ձուկ»,* xamsxās *«չոր ձուկ ուտել»,* pəta *«գեղ»,* pətrāt *«գեղ ուտել (կամ խմել)»* և այլն (Boas, Handbook, I, 525)։

Այլ նշանակությամբ են՝ իտալ. navigare riva riva *«ափին շատ մոտիկ նավել»,* andare muro muro *«պատի երկարությամբ երթալ»։*

Կրկնությունը լինում է գոնադան ձևերով. 1) Ամենատարածական ձևը բառի ամբողջական կրկնությունն է. ինչ. աննամ. çaça, *հոտնդոտ.* !nái-!nái, *ֆիջի* mbulumbulu, *ջավա.* ḍawahḍavah, *արաբ.* rākiẓān-rākiẓān, *սանս.* damedame, *ցիմշիյան՝* t'aqt'aq, *հյ. վաղվաղակի, կափկափել և այլն։*

Կարող է առաջին եղրում բառը այնպես կրճատվել, որ միայն մի ձայնավոր կամ մի բաղաձայն մնա. ինչ. ամերիկյան ցիմշիան լեզվի մեջ՝

algîx-aalgîx *«խոսել»*
txâxkᵘ ttxaxkᵘ *«ուտել»*
bax-bba x *«վազել»*
ptô *«գուռ»*, pptô *«դռներ»*

Երկրորդ եղրի մեջ բառը կրճատվում է, և նրանից մնում է միայն վերջին վանկը. այսպես, ամերիկյան մայդու լեզվի մեջ՝

höbo *«տուն»*, — höboboto
yaman *«լեռ»* — yamanmantò
(Boas, Handbook, I, 708)

Կրկնված արմատը կարող է տառնալ դանազան նախդիրներ. այսպես՝ օսերենում līj- *«վազել» արմատի կրկնությամբ և* „ra" *«դուրս» և* ba *«ներս» նախդիրներով կազմվում է.*

ra-līj	ba-līj	känjn
դուրս վազել,	*ներս վազել,*	*անել*

որ է «վազվզել, դես ու դեն վազել»։

Ամերիկյան սիլամուկ լեզվի մեջ կրկնությունը կատարվում է բառասկզբում երկու անգամ. այսպես՝ մի ցործողության սկզբնավորությունը ցույց տալու համար՝ yahs *«առնանել»,* ła ls yiyiya hisui *«ես սկսեցի առնանել».*

łłł *«հիվանդանալ»* — da s-łłitłłi *«սկսեցի հիվանդանալ»*
(Edel, էջ 16)։

2) Կրկնվում է բառի առաջին վանկը միայն. այսպես՝ ջավայերենում, երբ բառը միավանկ կամ երկավանկ է, կրկնվում է ամբողջ բառը, իսկ երբ բազմավանկ է, միայն առաջին վանկն է կրկնվում. օր. ləlambat *«ուրբաթան»,* susuhunnan *«թագավոր»։ Պոլինեզյան* no-nofo *«կենակից», հյ. փափագել, բարախել, փոփոխել և այլն։*

3) Երկրորդ եղրում բառը կրում է որոշ ձևափոխություն. օր. թրք. jangəl-ǰungul, *չուվաշ.* kürše-aršа *«հարևաններ», անգլ.* fiddle-fadle, shilly-shally, *վրաց.* ჩիჩი — *բուճերի «երեխաներ», կամ ավելի փոփոխյալ ձևով՝ աննամ.* bak-biek, soŋ-siek, satç-siek, *հյ. խաղնուխաղուղն, ճաց-մաց և այլն։*

Եթովպական լեզվի մեջ բառակազմության ձևերից մեկն է արմատի վերջին մի կամ նույնիսկ երկու բաղաձայնները կրկնել՝ հակառակ ընդհանուր սեմական լեզուների սկզբունքին, որ ըն-

դունում է հատուած դրութիւնը. օր. dalaqlaqa «ցնցվել», ʿawy-awa «ոռնալ», hawlala «գլուխը պտտվել», sawṭaṭa «սարսափահար լինել» և այլն, saʿar «մեղր» → sâʿrara «քաղցրացնել», barad «կարկուտ» → bardada «կարկուտ տեղալ»։

(Dillman, էջ 108, 118)

4) Երկրորդ եղրը կորցնում է իր բոլոր տարրերը և միայն նախաձայնն է պահում. այսպես՝ լատիներէնի մէջ կայ կրկնական մի ձև, ուր առաջին եղրում արմատը ամբողջ մնում է, իսկ երկրորդ եղրում արմատի նախաձայնն է միայն մնում, օր. gur-g-es «անդունդ», bal-b-us «կակաղ», pal-p-are «շոշափել» (Meillet, Esq. lat. 172)։ Այս երեւոյթը մենք նկատում ենք նոյնիսկ ճարտասանական կրկնութեան ժամանակ, երբ ամբողջ բառեր ու քերականական ձևեր կրկնում են. այստեղ էլ առաջին եղրն է, որ կրկնվում է, երկրորդը՝ ջնջվում, ինչ. հայ եմ ես, հայ... չեմ կարող, չեմ... չեմ տանի, չեմ...

5) Երկրորդ եղրը բոլորովին փոփոխված է և կամ բոլորովին տարբեր մի բառ է, որ հնչմամբ և իմաստով պատահական նմանութիւն միայն ունի։

Այսպես, կազակ-կիրգիզ լեզվով՝ səyər-səbər «կով-մով», tüyö-tege «ուղտ-մուղտ» (Лаптев, Матер. по каз.-кирг. яз., էջ 91), թրք. abuq-sabud «անհեթեթ», abur-ǰubur «խառնիխուռն»։ Աննամերէնում այս ձով կարելի է կազմել բազմաթիւ բարդութիւններ, ինչ. bau-ban «ընկեր», mau-me «ներկ, գույն», bui-bam «փոշի», հյ. առն-աեղ, շենք-շինրիք և այլն։

6) Վերջապես կրկնութիւնը զուտ ճարտասանական է. իրար հետ միանում են երկու և աւելի այնպիսի բառեր, որոնք նշանակութեամբ նոյնն են և ձևով բոլորովին տարբեր. ինչ. հյ. մուր ու խաւար, ճիճաղալ գնաց, թաց ու խոնաւ, մեծ ու խոշոր և այլն, խենթ ու խելառ, նաև՝ թրք. համանիշով՝ շուտ մը թեզ (ննե)։

Կրկնութիւնը սովորաբար երկու անգամ է լինում. ինչպես վերի բոլոր օրինակներում. բայց, ահա, ինդոնեզյան մի լեզվի մէջ չորս անգամ իրար հետից կրկնված ունենք՝ igi «շատ» բառից՝ igi-igi-igi-igi «անհունապես շատ»։ Այս ձևը հիշեցնում է մեր հեքիաթների «կերթա կերթա կերթա կերթա...» և նման դարձվածները։

Կրկնութիւնը շատ սովորական երեւոյթ է նաև մանկական բարբառի մէջ, ուր ունենք գրեթե միշտ երկավանկ կրկնավոր

ձևեր, նույնիսկ մեծերի սովորական միավանկ արմատների դեմ, ինչ. պահպահ «պահել», չաչայ «թեյ, չայ», տալտալ «ձի», օշոշ «շուն», ֆրանս. dodo, lolo, bébé, joujou, sesoeur և այլն։ Երբ մանուկները մեծանում են, բնականաբար այս բառերը ջնջվում են, բայց մի քանիսը դեռ երկար շարունակվում են, ինչ. papa, maman, մանավանդ հատուկ անունների մէջ, ինչ. Jeanjean, Coco, Nini, Mimi, Popol և կամ նույնը ձևափոխյալ՝ Lélène (Hélène), անգլ. Nan (Anne), Bob (Robert), Ted, Ned (Edward), իտալ. Beppo (Giuseppe) և այլն։

Կրկնութիւնը ինչպես բառերի, նույնպես և մասնիկների վրա կարող է լինել. օր. ամերիկյան հնդկ լեզվով կրկնելով -gañ մասնիկը, ստանում ենք գործողության կրկնութիւնը, օր. la gîñgañ «նա նայում է», la qîñgañgañ «նա հաճախ նայում է» (Boas, I, էջ 215)։ Հայերենի մէջ մասնիկների կրկնութեան պատահում ենք սակավաթիվ դեպքերում. օր. Պլ. ցուցական դերանունների մէջ ասիկակ, ատիկակ, ասիկակ, ավիկա, ավիկակ, նվիկակ, Շմ. անձնական դերանունների մէջ՝ դուիկիկդ, իսիկիկս, և նույնիսկ գրական լեզվում ընդունված նվազական ստուգական՝ մինակուկ, աղջկուկ և այլն։ Բոլորն էլ նվազական մասնիկներ են։

Լյուբոկը (Les origines de la Civil. էջ 521—5) գտնում է, որ կրկնութիւնը, ինչպես մանուկների, նույնպես և վայրենի ժողովուրդների սիրական ձևն է. իր կարծիքով՝ որքան վայրենի է ժողովուրդը, այնքան շատ ունի կրկնութիւն և որքան քաղաքակիրթ՝ այնքան քիչ։ Այսպես՝ քննելով անգլերէն բառարանի առաջին հազար բառերը, գտել է միայն երեք կրկնութիւն (adscititious, adventitious, agitator), ֆրանսերէնի բառարանի առաջին հազար բառերի մէջ երկու կրկնութիւն (ananas, assassin), գերմաներէն բառարանի c, d տառերից հազար բառի մէջ 6 կրկնութիւն (cacadu, cacao, cocosbaum, cocusnuss, dagegen), հնաբերէնի առաջին հազար բառերի մէջ միայն մեկ կրկնութիւն (ἀβαρβαρος)։ Եվ գրեթե այս բոլորը կամ վերաբերյալ բառեր են կամ ներկայացնում են պատահական կրկնութիւն։ Սակայն քննելով 18 դանազան լեզուներ Աֆրիկայից, Ամերիկայից, Ավստրալիայից և Պոլինեզիայից, գտնում է 36-ից մինչև 170 կրկնութիւն հազարի մէջ։ Ամենամեծ տոկոսը (170) տալիս է Բրյումեր կղզու լեզուն։ Այդ լեզվի մէջ գտնում ենք օր.

ahi ahi «երեկո», aki aki «թռչուն», aniwa- niwa «ծիածան», awa awa «հովիտ» և այլն։

Նույնպես՝ մելանեզյան Մուրրեյ այլանդ կղզու լեզվի մեջ կրկնավոր բառերը չափազանց շատ են։ Այս կրկնավորներից ոմանք ուժգնության համար են (աստիճական), ոմանք տեւողության համար (duratif), ուրիշներ հոգնակի ցույց տալու համար և ուրիշներ էլ որակական (qualificatif) են. օր.

laglag «ուզել»	kakekake «շատ ապիտակ»
nasnas «սիրել»	perper «շատ դեղեցիկ»
gerger «արև, օր»	zoromzorom «շատ պայծառ»
gimgim «հիվանդանալ».	

բայց կան և հասարակ բառեր. ինչ. laulau «ախտան». մինչև անգամ դերանունները ունեն կրկնավոր ձև. ինչ. ka, kaka «ես», ma, mama «դուն», ua, uaua «յուր» (Schulenberg, էջ 5—6)։

Մելանեզյան յարեմ լեզվի մեջ ամբողջովին կրկնված բառեր շատ շատ են, որոնց մեջ կան և սովորական բառեր. ինչ. meloc-meloc «խենթ», kwalam-kwalam «ապիտակ» (Dempwolff, էջ 9)։

Լյուբոկի քննության, ինչպես տեսնում ենք, նկատի ունի ոչ միայն իրական կրկնավորները, այլև այնպիսի բառեր, ուր ըստ պատահման երկու նման հնչյուններ իրար են հանդիպել (ինչ. անգլ. agitateur)։ Այս պատճառով շատ հետաքրքիր է իր քննության արդյունքը։ Ինչ վերաբերում է Լյուբոկի այն ասածին, թե ahimahi «երեկո», awa awa «հովիտ» և նման բառեր միայն «վայրենիների» լեզվի մեջ կարելի է գտնել, բոլորովին ճիշտ չէ։

Լյուբոկը անգլերենում գտել է միայն 3 կրկնական, այն էլ պատահական, բայց անգլերենը այնքան շատ կրկնական բառեր ունի, որ մի հեղինակ կազմել է անգլերենի կրկնավոր բառերի մի ամբողջ բառարան (Wheatley, A dictionnary of reduplicated words in the English language. London, 1866)։ Եվ սխալ է Լյուբոկի այն ասածը, թե քաղաքակիրթ լեզուների մեջ կրկնություն չկա։ Օրինակ՝ այն հունարենում, ուր հազար բառի մեջ միայն մեկ կրկնություն է գտել, կրկնությունը այնպես սովորական է, որ կազմում է քերականական մի ձև և բոլոր բայերը խոնարհման ժամանակ որոշ պարագաներում անպատճառ կրկնվում են։ Բառարանը չի նշանակում այդ ձևերը, որի

համար էլ Լյուբոկը նկատի չէ առել. բայց քերականությունը պիտի, ինչպես պիտի տեսնենք քիչ հետո։

Ավելացնենք նաև, որ Լյուբոկի ասածին ճիշտ հակառակ, կան «վայրենի» լեզուներ, որոնք չունեն կրկնական. օր. ամերիկյան ալինդիա լեզվի մեջ բնավ կրկնական չկա և հուպա լեզվի մեջ միայն մի կրկնական կա, որ է milmil «սրինգ»։

Կրկնականի շատ ընդարձակ գործածություն ունի Աֆրիկյան բանդու լեզուն գրեթե ամեն տեսակ մասունք բանիների մեջ։ Այսպես՝

Բայերի մեջ

1) Հաճախական բայ.— badinar «գողանալ», babadinar «ննջից գողանալ», babanar «խոսել», babalanar «շաղփաղփել, շատախոսել».

2) Աստիճական բայ.— balitar «քաշել», babalitar «ուժգնապես քաշել», pūar «փչել» (կրակը), pūpūar «ուժգին փչել»։

Գոյականների մեջ

3) Կազմում է հավաքական, որ ըստ օրինի համարվում է հոգնակի. ինչ. bagri «տերև», babagri «տազարթ, տերևներ», ĭīū «մոլախոտ», ĭīĭīū «մոլախոտեր»։

4) Զարմանալի կերպով ցույց է տալիս սահմանափակում (restrictif). ինչ. gītaṅ «քար», gīgītaṅ «միմիայն քարեր», būna «ադամի», būbūna «միայն ադամիներ», sūgule «ոսկոր», süsügule «միայն ոսկորներ», gēmor «երեխա», gēgēmor «միայն երեխաներ»։

Ածականների մեջ

5) Աստիճացնում է իմաստը, ինչ. dībe «մութ», dīdībe «խոր խավար», gaue «նոր», gagaue «նոփ-նոր», gauge «քաղցր», gagauege «շատ քաղցր»։

6) Ածականը կրկնվում է նաև այն ժամանակ, երբ նրա գոյականը թեև հոգնակի իմաստ ունի, բայց եզակի է գրված. ինչ.

wab պատուղ	ainiainī մեծ մեծ	պատուղները բոլորն էլ մեծ են.
mongī կոկոս	bībīlen լավ լավ	կոկոսի ընկույզները բոլորն էլ լավ են.

Դերանունների մեջ

7) andu «նա», andandui «միայն նա», jīg «մենք», jījīg «միայն մենք», nadī «նրանք», nanadī «միայն նրանք» (նույնն է վերի 4-րդ կետի հետ)։

Այս բոլորը կրճատ կրկնությամբ էին. բայց կա նաև ամբողջական կրկնություն. օր. ɣale-ɣale «նորից հարվածել», ɣanī-ɣanī «շատ սուտդ»։

Վերջապես կազմում է տեղանուններ. օր. Bilībilī, Bagabaga, Karakara, Gedageda *և այլն։*

2. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՎՈՒՄ

Արմատի ձևափոխությունների մեջ՝ այն որ կանոնավոր գործածություն ունի հնդեվրոպական նախալեզվում, կրկնությունն է, որին ենթարկվում էին ոչ միայն անունները, այլև (ավելի մեծ չափով) բայերը։ Բայերի դանագան ժամանակները կազմվում էին կրկնությամբ։

Հնդեվրոպացիք ունեին ամբողջական կրկնության դրությունը. բայց նրա կողքին կար նաև մերի կրկնության մի ձև.— արմատը երկու եղերի մեջ էլ անփոփոխ չէր մնում, այլ առաջին եզրում կրում էր որոշ կրճատում և կերպարանափոխություն։

Կրկնությունը հնդեվրոպականում երկու տեսակ է. սովորական և աստիճական։

Սովորական կրկնության մեջ բառի առաջին եզրը կազմվում է արմատի նախաձայն բաղաձայնից կամ ձայնորդից + ձայնավոր։ Այս ձայնավորը սովորաբար լինում է i *կամ* e։ -i *լինում է հատկապես ներկա ժամանակում. ինչ. սանս.* pi-par-mi «լնում», հն. γί-γνομαι, լտ. gi-gnō «ծննդել»։ -e *լինում է կատարյալում. ինչ. հն.* μέ-μονα, լտ. me-minī «հիշեցի», լիթ. de-dù, հսլաք. deda «արարի»։ *Այն արմատները, որոնք ունեն* i *և* u *ձայնավորները, կատարյալի կրկնության ժամանակ առաջին եզրում պահում են իրենց ձայնավորը. այսպես են արիական, իտալական և կելտական լեզուները, մինչդեռ հունը նույն պարագային դնում է* e։ *Օր. լտ.* tundo «բախել», կար. tutudi, *սանս.* tu-tudé «բախեցի»։

Աստիճական կրկնությունը գոր է ածվում աստիճական բայերի և մի խումբ գոյականների մեջ. այս ձևը ուժեղացնում է բառի իմաստը կամ ցույց է տալիս գործողության կրկնությունը կամ տևականությունը։ Այս ձևի կրկնավորը կազմելու ժամանակ առաջին եզրի մեջ արմատի ձևը ավելի ամբողջու-

թյամբ է պահված, քան նախորդը։ Նա կազմվում է արմատի նախաձայն բաղաձայնից կամ ձայնորդից + մի ձայնավոր + արմատի ձայնավորին հաջորդող ձայնորդը, եթե կա։ Եթե արմատի վերջում կա բաղաձայն, այդ բաղաձայնը չի կրկնվում առաջին եզրի մեջ, այնպես որ մի արմատ ter- *ձևով, մի ուրիշ արմատ* terp- *ձևով՝ կրկնության մեջ պիտի տան նույն արդյունքը. այսպես՝ առաջինից* tor-tor, *իսկ երկրորդից,* tor-torp։ *Գալով առաջին եզրի ձայնավորին, այդ դժվար է որոշել, հաճախ* o *է, բայց կարող է լինել նաև* a. *շատ անգամ էլ արմատի ձայնավորի հետ նույն է լինում։*

Կրկնության այս ձևը գլխավորապես սովորական է արիական լեզուների մեջ, բայց մյուս լեզուներն էլ, ինչպես և հայերենը, նրանից ունեն հետքեր։

Կրկնության երկու ձևերի մեջ էլ, եթե արմատը սկսվում է կրկին բաղաձայնով, բաղաձայնների խումբը կրճատվում է. այսպես՝ եթե սկսվում է բաղաձայնով + ձայնորդ, կրկնության մեջ բաղաձայնը մնում է, իսկ ձայնորդը ջնջվում է. ինչ. սանս. çu-çrā'va «լսեց», հն. κέ-κλυθι «լսիր»։ *Եթե արմատը սկսում է շչականով + պայթուցիկ, այս պարագային դանագան լեզուներ վարվում են դանագան ձևերով, գոթականն ու լատիներենը պահում են ամբողջ խումբը, սանսկրիտը կրկնում է միայն պայթուցիկը, մյուս լեզուները կրկնում են միայն շչականը։ Երբ արմատը սկսում է ձայնավորով, որին հաջորդում է բաղաձայն, ամբողջը կրկնվում է, ինչ. հն.* ἀρ-αρεῖν «հորինել», ἄλ-αλκε «հեռացրեց», ὀδ-ώδα «բուրեց», ὀπ-ωπα «տեսա»։

3. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենի մեջ կրկնությունը կատարվում է դանագան ձևերով.

1) Կրկնելով բառը պարզապես անջատորեն իր հոլովմամբ հանդերձ. ինչ. երկու երկու, գունդ գունդ, ամի ամի, ի կողմանց կողմանց, դիւաց է կերպարանս կերպարանս ցուցանել (Եղն., էջ 97), զարմացեալ զարմացեալ իմ և կարի քաջ (Ագաթ., 113, էջ 66), զպատեհ պատեհ տեղիսն (Բուզ. Դ., 4.)։

2) Նույնը՝ նախդիրով. լու ի լու, օր ըստ օրէ, ճուպ ընդ ճուպ, մօտ ընդ մօտ, մերձ ընդ մերձ (աշխ. մոտ առ մոտ), մերկ ընդ մերկ (հետին), գոյն զգոյն, գոյն ի գոյն, փոյթ ընդ փոյթ, խիտ առ խիտ, մէջ ընդ մէջ, մէկ առ մէկ, մի առ մի, մօտ ի մօ-

առյ, մաս առ մաս, առուն առ առուն, քայլ առ քայլ հետզհետէ, եռ ընդ եռ, ոռն առ ոռն:

3) Նույնը՝ բարդությամբ. գունդագունդ, գոյնզգոյն, մեծամեծ, չարաչար, ջերմաջերմ, արագարագ, լուռլուռ:

4) Բարդության մի մասը սեռականով կրկնելով. ջրնեղեղ ջուրց:

5) Բարդության մի մասը կրկնելով այլ բառով. ինչ. մեծազօր զօրությամբ:

6) Կրկնելով ձայնով և իմաստով մոտավորապես նման բառեր: Ահա այդպիսի կրկնավորների մի ցանկ, որ քաղում ենք Եվդոկիա հայոց գավառաբարբառից (Ծանոթություն 1, էջ 68—69, տպ. Վիեննա, 1899 թ.):

«Ձեզ-դեհ, առն-տեղ, դուռ-դրացի, գող ու գաղտուկ, խաղք ու խայտառակ, խաղ ու խնդում, ցավ-ցեց, նեղ-նվազ, կյանք-կենդանություն, քիս-քիկունք, առն-դուռ, հարել-թրել, ծլիծաղկիլ, շենք-շնորհք, մորթել-քերթել, շարուկ-շարմղուկ (=շարմաղից անցած ալյուրի պես սպիտակ), երդում-ջարդում, արևաշխարհք, աշխարհք-արարած, դար ու դուր, գերել-գերփել, մութմլար (=մռայլ), քեն-քին և այլն, և այլն: Ասոնց մեջ կան այնպիսիները՝ որոնց երկրորդ բառն առանձին նշանակություն մը չունի. օր. տղա-տեվշեկ, քար-քէօճէկ, փոր-փսոր: Կան նմանաձայն կրկնավոր ասացվածներ ալ, որոնց երկրորդ բառն առջի բառեն տարբեր ձևով է կրկնված. օր. շուն-շնվոր, չունիմ-չունեվորակ (=չուննոր), հառ-հառաւրանք, ճար-ճարակ, տեր-տիրական, կեր-կերակուր, մազ-կուզ և այլն: Այս տեսակ կրկնավորներ են՝ բայց տաճկախառն, սեր-սեվտա, բայ-բաժին և այլն: Կան ուրիշ գործածական ասություններ ալ՝ գարձյալ երկու համանիշ, բայց տարաձայն բառերով ձևացած, օր. քար-ապառաժ, եղ-ճինճ, ծեծփետ, (=փայտ), սուղ ու կրակ, խուլիկ-մլիկ, տեր-ապավէն, մազ-կծիկ, օր-արև, կտոր-փրթուճ, թքնել-մրել, էրիլ-մրկիլ, չորնալ-աղնկիլ (աղնձիլ?) և այլն, և այլն»:

Սրանց վրա մենք կարող ենք ավելացնել թեմիզ-փաք (առաջինը թուրքերեն, երկրորդը պարսկերեն «մաքուր» նշանակությամբ): Փիրի-փաք «շատ մաքուր» (առաջին եզրը անհայտ, երկրորդը պրս. «մաքուր»), շուտ մը թէզ (ննխ. «շատ շուտ»), պատ-պատուակ «տան ներսի պատերը, բակը և հատակը», շուն-շանգյալ (իբր՝ շուն և շնագայլ) (երև.), մարդ-մարդասանք «իբր մարդ և մարդ ասված բաներ», ջարդ-խուրդ (ջարդ+պրս. xurda). *ուրիշ տեղ՝* ջարդ ու բուրդ՝ ջարդել և բրդել *արմատներից և այլն:*

Այս բոլորի մեջ ամենից կարևորը, որ բուն կրկնավորն է և հարստացնում է լեզուն նորանոր բառերով՝ երրորդն է և մենք հաջորդ էջերով պիտի քննենք մանրամասն նրանց կազմությունը:

Կրկնավորները հայերենի մեջ կազմվում են հետևյալ վեց ձևերով[1]*.*

1. Այս առաջին ձևի մեջ, բառերը, որ իրրև իսկական արմատ միավանկ են, պարզ հարադրությամբ կրկնվում են, առանց դույզն իսկ փոփոխության: Կրկնության այս ամենապարզ ձևը ամենից ավելի սովորականն է միանգամայն, և այս ձևն է, որ գործածվում է նաև աշդի լեզվում հարկավոր եղած ժամանակ:

Նյութ մատակարարելու համար մեր հաջորդ քննության՝ պատշաճ ենք համարում դնել այստեղ այս ձևով կրկնավորների մի հարուստ մթերք, արմատական վերջածայնի այբուբենական կարգով: — Ջանացինք որ, որչափ կարելի է, ընդարձակ լինի այս մթերքը, բայց չենք էլ կարող վկայել, որ ցանկը ամբողջական եղած լինի. ինչ-ինչ բառեր կարող են խուսափած լինել բառերի այս խառն կույտի մեջ:

Գ.— Զգձգել (<*ձիգձիգել).

Զ.— Վազվազել.

Լ.— Գալգալիւն, գլգալ, գլգլունք, այլայլել, թալթալ, խըլխըլել<* խիլխիլել, մլմլել, մլմլոտ, փայլփայլուիմ:— *Ուրիշ է* խալխալ «ապարանջան», *որ պարս.* xalxāl *բառից փոխառություն է:*

Ա.— Ադխադխել, բախբախել, մխմխանք, մեխմեխ (կամ մեղմեխ), ջախջախել (կամ ջաղջախել), վախվախել.

Ծ.— Արծարծել.

Կ.— Ադկադկ, բեկբեկ, ճանկճանկոտ.

Հ.— Բոհբոհել «շողիքները վազցնել» (բոհ արմատից՝ որ նշանակում է «շողիք, լորձունք». *ասվում է նաև* բոխոհել, բոհբոխել).

Ղ.— Ադադակ, բաղբաղել, բաղբաղայք, որ և բաղաբաղել «կցկցել», գեղգեղ և գեղգեղել «եղանակել», դողդողալ, խողխողել,

1 *Այս և հաջորդ համարները նախապես հրատարակած եմ ՀԱ 1899, էջ 205—7, 232—6:*

կղկղալ, կղկղանք, կողկողել, կողկողիթ, ճղճղկէն, մաղմաղ (թեև գավառական բառ է, բայց հնից կա մաղմաղատեսակ), մեղմեղել (կամ մեղմեխել, մեխմեխել), հեղհեղել, հեղհեղուկ, շողշողալ, ողողել, ուղուղիլ, պազպազակ, վազվազակի, վազվազել, փոփոդիլ «փայլփլիլ», փոփոդող «պապաչող», փողփողել։

Ճ.— Ցճքճել։

Մ.— Լմլմել, լոմլոմել։

Յ.— Կայկայել, փայփայել, քայքայել։

Ն.— Լեռնլեռնային։

Շ.— Խորշխորշան, կէշկէշել։

Պ.— Ճոպճոպել, շոպշոպել։

Ջ.— Աղջազջ, շրջշրջել, խնջխնջել։

Ռ.— Գոգռալ, թռթռալ, մոմռալ, խաղխաղռուտ, վռվռաուկ։

Ս.— Խուսխուսել (<*խոյսխոյսել), հոսհոսիլ «հոսդել, դեղուլք, պէսպէս, պօսպօսող։

Տ.— Աղտաղտ, ապտապտիլ, ապտապտուկ, ոստոստել։

Ր.— Արարիչ, բարբարել, գրգռալ, երերալ, թրթրակ, թռթռել, խաբխաբել, նգախաբխաբ, խռխռուտ, ծռծռոր, կերկերել, չարչարել, ջրջրուկ (<*ջուրջուրուկ), սաբսաբուկ, սոբսոբ, սոբսոբել, փարփար, փերփեր, փերփերան, փրփրեմ (այս չորը թվում են նույն բառը. փրփրեմ իբր պրս. փոխառություն՝ տես Հյուբշ. Arm. Gram., էջ 278), փրփուր<*փուրփուր, փրփրիլ<*փուրփուրիլ, քրքիր (<*քիրքիր), քրքրել (<*քիրքիրել)։

Ց.— Կցկցել։

Փ.— Ապփապփուն, թափթափել, ծափծափել, ծփծփալ (<*ծուփծուփալ), կափկափել, շփշփել (<*շուփշուփել)։

Ք.— Թաքթաքուն, թաքթաքուր, թքթքել<*թուքթուքել։

Այս ցանկից դուրս են մնում զուգագուգդ, մեծամեծ, բազդաբաղել, ջերմաջերմ, տարմատարմ, զանազան, պատիպատ, խուխխու, ճորանճոր, տրխուր (<*տուրխուր) և այլ այսպիսի բառեր, որոնք իսկապես կրկնավոր չեն, այլ հարաբարդ բառեր։ Ա հոգակապը ցույց է տալիս այդ։

Հետնագույն ժամանակի ծնունդ են մազմզուկ, քաշքշել, կապկպել, վազվզել, թափթփել, շափշփել, խաբխբել, ծամծմել, ցանցնել, պանպնել, խազխզել և այլն, և այլն, այսինքն՝ այն ժամանակից, երբ երեք և ավելի վանկով բառերի մեջին ա ձայնը սկսել էր ընկնել։

Մեր մայրենի լեզվի սիրական մեկ սովորությունն է նմանաձայն բառերով բարդություններ կազմել, այնպես որ ամբողջը կրկնավորի երևույթը տա. ինչպես են՝ բարձրաբերձ, հաստաբեստ, խուժադուժ, շաղաշարել, ապրատուր, աղծապիղծ, բամբասանք, խծբիծ, բանիբուն, կեթակուր, հետազոտել, ցեցամեծ, սափռտուտ, ջերմջերմ և այլն. որոնք ոչ այս առաջին և ոչ էլ հաջորդ ձևերին են պատկանում. ըստ որում կրկնավոր չեն, այլ պարզապես նմանաբարդ բարդություններ։

2. Կրկնավորների երկրորդ ձևի մեջ սրմատական ձայնավորը կրկնության երկրորդ եղրում փոխվում է ուրիշ ձայնավորի. այս ձայնավորն առհասարակ ու է լինում։

Ահա սրա հին օրինակները՝ սպառսպուռ, խաղխախուղճ, խաղախխուղտ, թերուք (ի թեթուս մատչել. եղն.), ճայճոյել, բոբով «ակնթարթ, (իբր՝ թաւթով<*թավթով), ճայ յու (<*յայ յույ. որովհետև հայերենի ոգու համեմատ չէր կարելի ասել յույ), յերիւրել և ըստերիւրել։ Կա նաև խաբխուր, որ և՝ խարխուլ, արմատը խար, որից առաջին ձևով՝ խարխարել։

Կրկնաձայնների այս ձևը սովորական է նաև ժողովրդական լեզվին, որտեղ կան խարես-խուրես «խարերա», ձայն-ձուն, մարդ-մուրդ, ճարթ-ճուրթ «մեծամեծ կոտորել» (ըստ Եղնկյան բացատրության), կարթ-կուրթ «լիակոկորդ ըմպել» և այլն, աղբատուղբուտ, ծակուծուկ։

Խառնիխուռն նմանաձայն բառերի բարդություն է և՛ չի պատկանում այս ձևին։

Արդի գրականում ունենք մաճր-մուճր, որ կարող է պատկանել թե այստեղ, և թե հաջորդին։

Բարդության այս եղանակի վրա տես նաև Meillet, MSL 10, 279։

3. Կրկնության երրորդ եղանակը, ինչպես ամենքին հայտնի է, ժողովրդական լեզվի ամենից ավելի սովորական, ամենից ավելի ընթացիկ մի ձևն է, որին ենթակա է ամեն բառ անխտիր։ Սրա համար կան հետևյալ երեք պայմանները.

ա) Ամեն ձայնավորով սկսվող բառ կրկնության ժամանակ ձայնավորից առաջ ստանում է մի ավելորդ մ. օր. ամուճ-մամուճ, աղ-մաղ, ոսկոր-մոսկոր և այլն։ Այս ձևի հակադարձից են՝ Թադրված է Ասիս անգոյ բառը և ասում են՝ Ասիս-Մասիս (հին Նախիջևանի և Երևանի բարբառով, իբր թե Մասիս=մեծ Մասիս, Ասիս=փոքր Մասիս)։

բ) Ամեն (բացի մ–ից) բաղաձայնով սկսող բառ կրկնության ժամանակ բառասկզբի բաղաձայնը փոխում է մ. օր. առուն–մուն, գավակ–մավակ, կնիկ–մնիկ:

Կան ոմանք, լեզվաբանական գիտության համբակները, որոնք կարծում են, թե այսպիսի կրկնության արդյունք է օր. մշտել, որ իբր թե առաջացել է ռրել բայից. նախ եղել է ռրելմրել, հետո՝ հրմրել, հետո՝ առաստական ռրմրտել>ռրմշտել, ապա անկախ ձև դարձած՝ մշտել:

Կրկնավոր երևույթն ունի մուխ բառը: Ոմանք բառախաղով կարծում են, թե ծուխ և մուխ իրար հետ կրկնավոր են, բայց միևնույն ժամանակ գիտակցում են, թե դրանք տարբեր, բառեր են և իրոք այս երկուսը իրար հետ ոչ մի կապ չունեն. ծուխ վրացական փոխառություն է, որի բնիկ հայ բառն է մուխ. այս բառը հնդեվրոպական ծագում ունի և կապվում է անգլ. smoke «ծխել» բառի հետ. արմատն է հնխ. smuɡh «ծխել»:

Նրանք, որ հայերենի հնդեվրոպական ծագման հակառակորդ էին, շահագործելով այս պատահական առիթը, քարոզում էին, թե մուխ–ը ծուխ բառի կրկնավորն է, ինչ որ բոլորովին ավելորդ էր:

Երբեմն երկու տարբեր, բայց համահնչուն և համանիշ բառեր միասին իրար հետ՝ տալիս են այսպիսի կրկնության երևույթ, բայց իրոք կրկնավոր չեն: Այսպես է հայտնապես լուռ ու մունջ, լուիկ մնջիկ, որոնք կազմված են անկախ լուռ և մունջ բառերից: Իսկ թոնչ է լուռ ու մուռ. այս իմաստով դտնում ենք նախ լուռ լուռ ձևը, որ անշուշտ Մեսրոպյան է և գործածված է Առակք ԺԸ 18 և Եւագր. ԺԼ. կա նաև լուռ մուռ, բայց գործածված է Ոսկ. ապաշխ., էջ 47, որ Մեսրոպյան չէ: Հարց է, թե այս մուռ–ը կրկնականն է լուռ բառի, թե մռել «լռել, հնազանդվել» բառի արմատն է:

գ) Եթե բառը սկսում է մ–ով, կրկնության ձևը. բարձրանում է երկրորդ ձևին. այսինքն՝ արմատական ձայնավորը դառնում է ու. օր. մարդ–մուրդ, մազ–մուզ: Իսկ եթե արդեն ձայնավորը ու է, կրկնությունը լոկ հարադրության է վերածվում (այսինքն՝ առաջին ձևին) կամ դրկվում է կրկնականից: Օր. մուկ, մուր, մուք: Այս բոլորը համարվում են ժողովրդական ձևեր. բայց արդի գրականն էլ ունի նույն ոճով մաներ–մուներ:

Կրկնության այս երրորդ ձևը հատուկ էր նաև հին հայերենին[1], որից ունենք հետևյալ բառերը. աղխամաղխ, արհամարհել, շեշտամեշտ, սուտմուտ, խանդումանդ, խառնումառն, շոգմոգ[2]:

*Հների մեջ արմատական ձայնավորը կարող է նաև փոփոխվել, այսպես՝ աղջամուղջ (արմատը աղջ=հն. ἀχλύς և հպրուս. aglo «անձրև», բատ Meillet MSL 10, 279), աղամամուղա, խամամուճ, աղամող, հեղձամղձուկ (<հեղձամուղձուկ), քամոս (<*քուսմոս, համմտ. քուս<*քուսու, փասքուս, քսփուս<*քուսփուս): Սրանց մասին տես վերոհիշյալ տեղը՝ MSL 10, 279:*

*Մի տեղ բ, պ, փ ռանեն՝ խուճդրուճդ կամ խճդրուճդ, խորտարորտ, ուճկն և բուճկն, ալճիփելոց, ճապիտ<հիապիտ, խբտպբտալ (<*խիտպիտալ), քսփուս<*քուսփուս (համմտ. վերը):*

Փոփոխյալ ձայնավորով կամ ուրիշ ձայներով են խառնափեղոր կամ խառնաբնդոր, խացփցի, մոթխոթել, բարխրել, ճադգդել, ափլափել, քնթմնթալ, փասքուս, աղաւաղել:

Տարբեր բաղաձայններով կրկնություններ ժողովրդական լեզվի մեջ քիչ կան. սրանցից են աւուն–սաւուն, մազ–կուզ, ամառ–չամառ:

*4. Կրկնության չորրորդ ձևով արմատի վերջին մասը թևթևանում է բառի առաջին եղրի մեջ, օր. *պանձ– արմատը տալիս է պապանձել և ոչ *պանձպանձել, փոխել բառի փոխ արմատից կազմվում է փոփոխել և ոչ փոխփոխել. բառ (=բարր) ձևից առանում ենք բարբառ (<բարբարր) և ոչ *բառբառ (<բարր+բարր), *տասկ արմատից առաջ է գալիս տատասկ և ոչ թե *տասկտասկ: Նույնը պետք է հասկանալ նաև մյուս ձևերի համար:*

Անավարտիկ այս կարգի կրկնության օրինակների ամբողջությունը՝ արմատական վերջաձայնի համեմատ:

Զ.— Կակազել, կոկոզավիզ.

*Ղ.— Փոփոխել (*փոխփոխել), բաբախել, թաթախել, պապախել.*

*Կ.— Շոշոկել (<*շոկշոկել), ճճճկեկել, պապակ, պոպոկ (ամկ. ընկուզի կեղև, իբր պոկել «կեղևել»?).*

---

[1] *Կարծեմ այս մասին են Մովսես քերդողի մեկն. քեր. (տես Դիոն. Թրակ., էջ 174) հետևյալ հատվածը. Լծորդութիւնս գտեալ եղև ի տպաչափական կշռոց ուսումնասիրութիւն ոմանց, որք ի մտացդութեան գեղեցիս կացին: Զի զսահմանաչափութիւն բանին լծորդոն չինէին տեղ, այլ էր իսկ ճշմարտապէս ի տեսակին խօսից, որպէս բազուկ և մազուկ:*

[2] *Ցարմար բառը կրկնական չէ, ինչպես կարծում էի առաջ, այլ առ արմատից մ ածականով+ար մասնիկով կազմված, ինչպես արդար:*

Ն.— Տատանիլ (<*տանտանիլ), սասանել, կախանել, ծածանել, կոկոն, բարան։

Շ.— Գագաշել, վաւաշ<*վաշվաշ, թոթոշ։

Ռ.—Կարկառել, բարբառ, մարմառ (ոչ իրր մարմարիոն՝ որ հն. փոխառութիւն է, այլ մարմառ «ետք, մրջմնոց հիվանդութիւնը»՝ մարմաջել բառին արմատակից), փարփառ, քրթռալ, գրգռել, քրքռեցուցանել, թրթռուռ<*թուռթռուռ։

Վ, ւ.— Թաթաւ, թեթև, թոթովել, կոկովանք, դեղեւիլ։

Ր.— Դագար, ծոծրակ, որ և ծոծորակ, ծոծոր՝ փոխանակ ծործոր. (քաքար ասորերէն փոխառութիւն է և գործ չունի այստեղ)։

Ր դ.— կոկորդ, սոսորդ, շուշորդ։

Փ.— Սասփիլ «զարհուրել»։

Սակավաթիւ ձևեր են հետևյալները, որոնցից մի քանիսի մէջ նաև արմատական ձայնավորը փոփոխութիւն է կրել. պոպանձել, սոսինձ, ճաճանչ, խախանչել, տատամսիլ, փափագ, փոփոգել, տատակ կամ տատաշկ, տատաս, փափուկ, ծածուկ, տաղտաղտալ, ծիծաղ, կակուղ, թաթաղուն, քիքեղն, զազիր, կակաչել և քաքաչել՝ փոխանակ կայկայել, քայքայել, խոխոտ, խաւխաւել, գագացել, խոխոմք, խոզոմեալ՝ փս. խոխոմեալ, սարսուռ, ճապաղիք՝ որ և ճաղպախիք, ճաղճախիք, խախուտ, խախաց, տխտեռն, թիքեռն։

Մի քանի բառերի մէջ ծ, ճ, ձ բաղաձայնները պարզութեան օրինքով այլափոխված են. կսկիծ<*կիծկիծ, կսկուծ<*կուծ, կուծ, կասկած<*կածկած (ըստ Մեյեի՝ կարծ-ել բառից), կոշկռճել <*կոճկռճել, կկինծաւալ կամ կծկաւալ, կաղկանձել «գայլի ձայնը»<կնծկնծաւալ։

Բաղաձայնների այս փոփոխութեան վրա արդէն խոսելու ենք Ձայնաբանութեան մէջ. ծ, ձ, ճ և այլն լինելով իրր առաւելականն+շչական, պարզութեան ժամանակ առաւելականի անկումով կմնա միայն շչականը։ Դիտողութեան արժանի է նաև այն կետը, որ թեև մեր այժմյան արևմտյան բարբառներում պարզութեան ժամանակ ծ>զ, ճ>ժ, չ>շ և այլն, սակայն հին հայերենի մէջ ծ>ս, ճ>շ, ձ>ց և այլն, որ ուրիշ բան չի ապացուցում, եթե ոչ մեր հին հնչման տարբերութիւնը արդի արևմտյան արտասանութիւնից։ Ըստ այսմ կզկճծաւալ (Ոսկեփոր.) հետևին է. սրա արմատը պետք է լինի *կանճ, ինչպես ցույց են տալիս կաղկանճել և կճնճայն բառերը, որոնք նույն արմատից

են կազմված, հետևաբար վերի բառի հին գրչութիւնը պիտի լինի *կազկանճաւալ կամ առաւաւելն *կզկնճաւալ։

Ծիծաղ բառը, որ հայերենի կրկնականի հազվագյուտ ձևերից մեկն է, ծագում է ծէծաղ ձևից. պարզ արմատն է ծաղ-ր (տես. ծաղու)։ Սա հնդեվրոպական առաւելական կրկնութեան մի ձևն է, որ կազմվում էր արմատի e ձայնավորը առաջին եզրի մեջ դարձնելով oi. այսպես g'el, g'oi-g'el, g'oi-g'l*>*ծէ-ծաղ, ծիծաղ։ Սրան նման է ,ծիծառն (հնխ. g'ar արմատից կրկնված), որից և ծիծեռնակ։

Ուրիշ լեզուների մեջ նման երևույթներ (նույն կամ տարբեր ձայնավորով) ներկայացնում են հն. ցαιδάλλω, κοικύλλω, μοιμύλλω, παιπάλη, լիթ. gaĩgalas «բադ», լիթթ. paĩpala «լորամարգի» և այլն։ (Այս երևույթի մասին տես Meillet, MSL 12, 216—8, 13, 375 և BSL հա. 27 (1927 թ., № 81, էջ 136)։

5. Հինգերորդ ձևը չորրորդի ճիշտ հակառակն է. այստեղ փոխանակ առաջինի՝ երկրորդ վանկն է, որ թեթևանում է. և փոխանակ վերջինի՝ արմատի առաջին բաղաձայնն է, որ ընկնում է։ Ենթադրելով ուրեմն, որ արմատը bac ձևն ունենար, չորրորդ ձևով կունենայինք babac, իսկ հինգերորդ հետով՝ bacac։ Այսպես են՝ ճայթայթել <*ճայթճայթել, շաղփաղփ <*շաղփշաղփ, փչուչ <*փուչփուչ, պատատել<*պատպատել և այլն։

Ահավասիկ այս կարգի բառերի ցուցակը, ընկած բաղաձայնի, այսինքն՝ արմատի նախաձայնի համեմատ դասավորված.

Հ.— Հագագ<*հագհագ, հայթայթել, հեթեթանք, անհեթեթ, հառուռել, հափափել, հրճրճուկ, հեղեղ, հեծեծել, հինինալ, հեկեկալ, հծծել։

Խ.— Խոշոշ, խաղաղ, խոճոճ, խոսոսափիկ, խծուծ<*խուծուծ.

Ց.— Ցեղեղուկ, յողդողդ, յորջորջել, յոտոտ (վերջինիս ձևը կրկնավոր է. ինքը կարող է ծագմամբ ուրիշ, բայց հայկական բերաններում այսպես ձևավորված լինել)։

Բ.— Բուճուճ, բշիշ<*բիշբիշ, բժիժ<*բիժբիժ, բժուժ, բըժժանք<*բուժուժ։

Գ.— Գճուճ<*գուճգուճ, գեղեղել.

Դ.— Դայլայլիկ, դալալիկ, գեխեխանք. վերջինը ասվում է նաև գեղեխանք, որ խ և ղ տառերի շփոթութեամբ առաջ եկած ձև է. այսպես են նաև սեղեխ, մեղեխ?

Կ.— Կուռուռ<*կուռուռ, կնտնտոց, կուզուզիկ «կուզ» Ախց.

*Ն.— Տատանիլ (<*տանտանիլ), տատանել, կախանել, ծածանել, կոկոն, բարան։*

*Շ.— Գագաշել, վաւաշ<*վաշվաշ, թոթոշ.*

*Ռ.—Կարկառել, բարբառ, մարմառ (ոչ իբր մարմարիոն՝ որ հն. փոխառութիւն է, այլ մարմառ «ևոք, մրջինոց հիվանդութիւնք»՝ մարմաջել բառին արմատական), փարփառ, թրթռալ, դրդռել, քրքռեցուցանել, թրթուռ<*թուռթուռ։*

Վ, ւ.— Թաթառ, թևթև, թոթովել, կոկովանք, դեղեւիլ.

Ր.— Դագար, ծոծրակ, որ և ծոծորակ, ծոծոր՝ փոխանակ ծործոր. (քաքար ատոլերեն փոխառութիւն է և գործ չունի այստեղ)։

Րդ.— կոկորդ, տատրդ, շոշորդ.

Փ.— Ստոփիլ «զարհուրել».

Սակավաթիվ ձևեր են հետևյալները, որոնցից մի քանիսի մեջ նաև արմատական ձայնավորը փոփոխություն է կրել. պապանձել, տոչին, ճաճանչ, խախանչել, տատամսիլ, փափագ, փոփոգել, տատասկ կամ տատաշկ, տատաս, փափուկ, ծածուկ, տաղտապիլ, ծիծաղ, կակուղ, թաթաղուն, քիքիճն, զազիր, կակաչել և քաքաչել՝ փոխանակ կայկայել, քայքայել, խոխոտ, խախալ, գագացել, խոխոմք, խոխոմեալ՝ փխ. խոխոմեալ, տարտուր, ճապաղիք՝ որ և ճաղապախիք, ճաղճախիք, խախուտ, խախաց, տխտուն, թիքիճն։

*Մի քանի բառերի մեջ ծ, ճ, ձ բաղաձայնները պարզության օրենքով այլափոխված են. կսկիծ<*կիծկիծ, կսկուծ<*կուծ, կուծ, կասկած<*կածկած (ըստ Մեյեի՝ կարծ-ել բառից). կոշկռճել <*կռճկռճել, կղկղծտալ կամ կծկտալ, կաղկանձել «գայլի ձայն»<կնճկնճտալ։*

*Բաղաձայնների այս փոփոխության վրա արդեն խոսելու ենք Ձայնաբանության մեջ. ծ, ձ, ճ և այլն լինելով իբր առաւիւնական+շշական, պարզության ժամանակ առաւիւնականի անկումով կմնա միայն շշականը։ Դիտողության արժանի է նաև այն կետը, որ թեև մեր այժմյան արևմտյան բարբառներում պարզության ժամանակ ծ>զ, ճ>ժ, շ>շ և այլն, սակայն հին հայերենի մեջ ծ>ս, ճ>շ, ձ>ց և այլն, որ ուրիշ բան չի ապացուցում, եթե ոչ մեր հին հնչման տարբերությունը արդի արևմտյան արտասանությունից։ Ըստ այմ կղկղծտալ (Ոսկեփոր.) հետին է. սրա արմատը պետք է լինի *կանճ, ինչպես ցույց են տալիս կաղկանճել և կնճռձայն բառերը, որոնք նույն արմատից*

*են կազմված, հետևաբար վերի բառի հին գրչությունը պիտի լինի *կազկանճտալ կամ տատասվելն *կզկնճտալ։*

Միծաղ բառը, որ հայերենի կրկնականի հազվագյուտ ձևերից մեկն է, ծագում է ծէծաղ ձևից. պարզ արմատն է ծաղ-ր (տես. ծաղու)։ Սա հնդեվրոպական աստիճական կրկնության մի ձևն է, որ կազմվում էր արմատի e ձայնավորը առաջին եղրի մեջ դարձնելով oi. այսպես g'el, g'oi-g'el, g'oi-g'l>*ծէ-ծաղ, ծիծաղ։ Սրան նման է ծիծառն (հնխ. g'ār արմատից կրկնված), որից և ծիծեռնակ։*

Ուրիշ լեզուների մեջ նման երևույթներ (նույն կամ տարբեր ձայնավորով) ներկայացնում են հն. ζαιδάλλω, κοικύλλω, μοιμύλλω, παιπάλη, լիթ. gaigalas «բադ», լեթթ. paîpala «լորամարգիւ» և այլն։ (Այս երևույթի մասին տես Meillet, MSL 12, 216—8, 13, 375 և BSL հտ. 27 (1927 թ., № 81, էջ 136)։

*5. Հինգերորդ ձևը չորրորդի ճիշտ հակառակն է. այստեղ փոխանակ առաջինի՝ երկրորդ վանկն է, որ թևթևանում է. և փոխանակ վերջինի՝ արմատի առաջին բաղաձայնն է, որ ընկնում է։ Ենթադրելով ուրեմն, որ արմատը bac ձևն ունենար, չորրորդ ձևով կունենայինք babac, իսկ հինգերորդ ևով՝ bacac։ Այսպես են՝ ճայթայթել <*ճայթճայթել, շաղփաղփ <*շաղփշաղփ, փչուչ <*փուչփուչ, պատատել<*պատպատել և այլն։*

Անհավասիկ այս կարգի բառերի ցուցակը, ընկած բաղաձայնի, այսինքն՝ արմատի նախաձայնի համեմատ դասավորված.

*Հ.— Հադագ<*հագհագ, հայթայթել, հեթեթանք, անհեթեթ, հոտոտել, հափափել, հրճրճուկ, հեղեղ, հեծծել, հինինալ, հեկեկալ, հծծել։*

*Ղ.— Ղռշոշ, խաղաղ, խռճռճ, խոպոպիկ, խծուծ<*խուծուծ.*

Ց.— Ցեղեղուկ, յողդողդ, յորջորջել, յոպոպ (վերջինիս ձևը կրկնավոր է. ինքը կարող է ծագմամբ ուրիշ, բայց հայկական բերաններում այսպես ձևավորված լինել)։

*Բ.— Բուճուճ, բշիշ<*բիշբիշ, բժիժ<*բիժբիժ, բժուժ, բըժժանք<*բուժուժ։*

*Գ.— Գձուձ<*գուձգուձ, գեղեղել.*

Դ.— Դայլայլիկ, դալալիկ, դեխեխանք. վերջինը ասվում է նաև դեղեխանք, որ խ և ղ տառերի շփոթությամբ առաջ եկած ձև է. այսպես են նաև սեղեխ, մեղեխ?

*Կ.— Կուտուտ<*կուտուտ, կնտնտոց, կուզուզիկ «կուզ» Ախց.*

Ղ.— Մաղաղ, մեղեղուկ.

Շ.— Շաղաղել, շաղփաղփ, շիլփիլփ.

Գ.— Պաղաղ (միապաղաղ և այլն), պատառել, պատառուկ.

Փ.— Փանդանդել, փոթոթ, փոդոդ, փաքաքել, փթիթ<*փթթիթ, փաղաղել և փաղդական:

Ք.— Քթիթ, քնին<*քիթքիթ, *քինքին?

Համեմատիր նաև վոխտ<*վխտվխտ, փչուչ<*փուչփուչ, գնին<*գին-գին կամ գքինքին՝ իբր գքննել (Տերվ. Նախալ., էջ 50):

Այս տեսակ կրկնությանց մեջ էլ ձայնավորի փոփոխություն կարող է պատահել, այսպես՝ պաճուճ, պատուտակ<պատպոյտակ, պարոյր, փաթեթ, փաքոյթ, բդեգ, բզեզ, *բիդբիդ, *բիդբէդ, համեմ, բադեղն, մղեղ, տղեղել (գվո.):

Մինչև այժմ հիշված եղանակների խառնուրդն են ներկայացնում զարնուրիլ, արնաւիր, ծեթևեթ և սեթևեթ:

6. Վերջինն է այս վեցերորդ ձևը՝ որի համեմատ կրկնավորի երկու եղերը տարբեր բաղաձայններով են հանդում. այսպես, ուրեմն, կրկնավորի ձևը լինում է bacbad. օր. թարթափել, ծանծաքել, ցնցուղ<*ցուցնցուղ, բողբոջ, թաւթափել<թափթափել և այլն:

Հնավասիկ այս ձևի կրկնավորների ամբողջական ցուցակը՝ արմատական վերջաձայնի համեմատ դասավորված.

Ն և զ.— Ծանծաղ, դանդաղ, ճնճղուկ, ճնճուղ<*ճունճուղուկ, ցնցուղ, դոնդողական:

Ն և շ.— Փնքուշ<*քունքուշ.

Ն և տ.— Դանդատ կամ քանքատ.

Ն և ք.— Ծանծաքել:

Ն և ռ.— Ցանցառ.

Ն և ր.— Ջանդիր, ճնճռեր, քաւքարտալ.

Ր և մ.— Տարտամ, կարկամ, տրտում<*տուրտում.

Ր և ք.— Բորբոքիլ, մորմոքիլ.

Ր և փ.— Ծարխափել, սարսափել, շարշափիւն, կարկափել, թարթափել, գարգափուռն.

Ր և շ.— Թորթոշ, գարգաշել, քերքեշել.

Ր և տ.— Ճարճատել, պարպատել, ցրցատել<*ցիրցիտել, սարսատ, կարկատել, կարկուտ, կրկիտ<*կիրկիտ, կրկուտ<*կուրկուտ.

Ր և ս.— Բորբոս.

Ր և լ.— Ծորխոլել, խարխուլ, խարխալել կամ խարխարել.

Ղ և փ.— Շաղշափել.

Ղ և պ.— Տաղտապել.

Ղ և մ.— Ճղճիմ<*ճիղճիմ և սրանից բայաձև՝ ճղճմճիլ.

Ղ և նճ.— Կաղկանճել.

Ղ և կ.— Տաղտուկ.

Ղ և ջ— Բողբոջ, պղպջակ, պղպջանալ կամ փղփջանալ, պաղպաջակ, մաղմաջ, բաղբաջ կամ բաղբանջ, դողդոջ, դողդոջել, կաղկաջահոս, խողխոջիլ, խողխոնջել, խղխնջել:

Մ և բ.— Սամռաբել.

Մ և յ.— Ղամզայեալ.

Ց և ս.— Մեղցամէս.

Շ և ռ.— Կաշկռոտ, կշկռուտ, կշռոտուն.

Շ և նգ.— Կաշկանդել.

Ւ և փ.— Շաւշափել, թաւթափել, սաւսափիւն, որ և սաւսափիւն. սրանց արմատն է շափ, թափ, սափ. ներկա շօշափել, թօթափել, սօսափիւն ձևերի համար հմմտ. Ափշին>Աւշին>Օշին հատուկ անունը:

Ւ և նջ.— Ղօղանջել.

Ս և ն.— Քաւքանել, քաւքնել.

Այստեղ վերջանում է հայերեն լեզվի սույն հինգ հարյուր (500) կրկնավորների կազմության եղանակների քննությունը: Մնում է մեզ քննել այժմ յուրաքանչյուրի ծագումը և ցույց տալ, թե արդյոք հնդեվրոպական նախալեզվյան շրջանից են ճեպացած, թե հայկական հայակապ լեզվիս յուրածին ծնունդն են հետագա ժամանակավ:

4. ՀԱՅԵՐԵՆԻ ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս քննության ամբողջությունը պարունակում է երեք խնդիր.

1. Վերոհիշյալ վեց ձևի հայ կրկնավորների մեջ որոնք են պարզ և մաքուր արմատները.

2. Հայերենը կարող էր կրկնավորի դրությունը նախամոբից ժառանգած լինել.

3. Վերջապես՝ մեր կրկնավորները կազմության կողմից համաձայն են նախալեզվյան դրության, հետևաբար և նախալեզվյան դրության են, թե զուտ հայկական:

Առաջին խնդրի մասին մի փոքր ուշադիր քննություն բավական է կրկնավորների կրկին եղերից դասել՝ դուրս հանելու համար պարզ արմատը։ Այս մասին նեղություն չպիտի կրենք առաջին ձևի համար, որովհետև արմատը այստեղ՝ երկու եղրերի մեջ էլ անփոփոխ պահված լինելով, ուրիշ բան չի մնում մեզ անել, եթե ոչ պարզապես իրարից հեռացնել. այսպես՝ վաղ–վաղակի, արծ–արծ–ել և այլն։ Երկրորդի համար ևս հայտնի է, որ մաքուր արմատն առաջին եղրն է և ոչ երկրորդը, որովհետև շատ անգամ այս մաքուր արմատն ուրիշ բառերի մեջ էլ պահված կա. ինչպես են՝ ի սպառ, սպառել, խաղնմունք, խաղնեցնել, խաղացնելու, խաղացուր, խարխարել, յեռուլ, այսպես նաև ժողովրդական ձևերի մեջ։ Անորոշ են մնում հայհոյ, հայհոյել, բառով բառերի արմատները։

Երրորդ ձևի մեջ էլ պարզ արմատը կրկնավորի առաջին եղրն է. բան որում անկարելի է ենթադրել, թե նույն մ ձայնը շ, ս, խ, յ, ճ, ք, և այլ այսպիսի բազմատեսակ բազաձայնների վերածված լինի, փոխանակ ասելու հակառակը, այսինքն՝ թե նույն բազաձայնները վերածված լինեն մ–ի։

Չորրորդ ձևի մեջ պարզ արմատը անշուշտ կրկնավորի երկրորդ եղրն է. սրա հակառակը ենթադրելու, այսինքն ընդունելու համար, թե պարզ արմատը առաջին եղրն է, պետք է ընդունել նաև, որ այս պարզ արմատը երկրորդ եղրի մեջ ճ, խ, կ, վ, շ, ռ, րդ, ճմ, փ, ղ և այլ այսպիսի ձայներով աճած լինի, ինչ որ անկարելի է, քանի որ ուրիշ տեղ այսպիսի աճում չգիտենք, մյուս կողմից՝ երբ մեջտեղում մնում է ավելի պարզ մի ենթադրություն, թե դրանք մաքուր արմատները եղած լինեն և առաջին եղրի մեջ թեթևացած։ Գիտենք նաև, որ մեր պարզ արմատը երբեմն առանձին ձևով էլ պահված կա. ինչպես՝ փոխել, բախել, ծորել, բառ, դարել և այլն։

Այս վերջին նախադասությունների կարգը շրջելը բավական է, ցույց տալու համար նաև, թե հինգերորդ կարգի կրկնավորների էլ մաքուր արմատը դարձյալ առաջին եղրն է, և թե երկրորդը նրանից թեթևացած է։

Վեցերորդ ձևի համար չորս կարելի ենթադրություն կա.

1) Թե այս բառերի արմատը երկու եղրերի մեջ գտնված նման մասերն են. և թե առաջին, և թե երկրորդ եղրի մեջ բազաձայնը արմատական չէ. ուրեմն ծանծաքել, բողբոջ, սարսառ

բառերի արմատները պետք է լինեն ծա, բո, սա, խակ ն, ք, ղ, ջ, բ, ս մասնիկ են։

2) Թե պարզ արմատը կրկնավորի առաջին եղրն է, երկրորդը՝ սրա ձևափոխությունը. ուրեմն վերի բառերի արմատներն են՝ ծան, բող, սար։

3) Սրա հակադարձը. ըստ այսմ՝ արմատները՝ ծաք, բոջ, սատ, խակ ծան, բող, սար սրանց ձևափոխություններն։

4) Թե պարզ արմատը կրկնավորի երկու եղրերի նման և տարբեր մասերի գումարն է. այսինքն՝ ծանծաք, բողբոջ, սարսատ, արմատները՝ ծանք, բողջ, սարս։

Առաջին ենթադրությունը հայտնապես անհիմն է. հակորդ երեքը միանգամայն ընդունելի, բայց ակներև է նաև, որ այս վերջին երեք ենթադրություններից յուրաքանչյուրը ոչ թե ամբողջ օրինակների, այլ սրանց համար միայն կարող է գործել, այսպես՝ կարկատել, ցանցառ, բորբոս, խորխորել, դողդոջ, մեցամէս բառերի մեջ՝ հայտնի է, որ արմատը առաջին եղրն է, քանի որ նույն արմատները՝ նաև կարել, ցանել, բոր, խոր, խարխափել, դողալ, ցեց և մեց բառերով անխառն պահված են։ Նույնպես՝ ցրցառել, կարկափել, կաշկանդել, կաղկանձել, դոնդող, բօքափել բառերի մեջ հայտնի է, որ արմատը երկրորդ եղրն է, քանի որ նույն արմատները նաև ցառել, կափուցանել, կանգաղեալ, կնճաձայն, դողալ, թափել ձևերով անխառն պահված են։

Մանավանդ Սանսկրիտի և հունարենի մեջ էլ կան n-ով կրկնություններ, ինչպես՝

Սանս. čaṅ-čūryate «չարժիլ»
ǰáṅ-gahe «մխրճել»
dan-dahiti «այրել»
հուն. γαγ-γαλίζω «խտխտալ»
սանս. gaṅ-gūyati «խայտալ»
հուն. γαγ-γύζω «մրմնջել»

Չորրորդ ենթադրությունը՝ որչափ և ընդունելի, այնչափ էլ դժվարին է շոշափելի օրինակներով հաստատել. Դիտողության առնելու գլխավոր կետն այն է, որ վեցերորդ ձևի կրկնավորների առաջին եղրը մեծ մասամբ ն, ղ, բ ձայներով է վերջանում, որոնք, իրոք էլ, հայերեն լեզուն, ակսյալ իր նախալեզվյան շրջանից մինչև այսօր, առանձին հաճույք է զգում այս ու այն կողմ տեղափոխելու. այս բանի օրինակ թող լինեն աշխարհ, եղ–

բայր, աղբիւր, եղունգ, արտասուք և այլն և այլն: Մնացեալ ձայնները (մ, ց, շ, ւ, ս), որոնք համեմատաբար մյուսների հագիվ 1/6-ն են կազմում, կամ առանձին ձայնաբանական պատճառ ունեն, և կամ արմատական են: Բացի սրանից, կան մի քանի օրինակներ, որ մեր ասածը փորձով էլ հաստատում են. օր. ճղնիմ բառի ենթադրյալ ճիղմ արմատը խոսում էլ գոյություն ունի. տարտամ բառի արմատը կարող է լինել տարմ, որ իրոք էլ կա և նշանակությամբ համաձայն է. բորբոք, մորմոք ըստ Հ. Տերվիշյանի (Նախալ., էջ 96, 99) պատկանում են հնխ. *bhark-*mark արմատներին (թեև Հյուբշմանը չի ընդունել) և այլն: Այս ընթացքով համեմատական քննություններ կարող կլինեին թերևս մի քանի տպահով տուգաբանություններ երևան հանել:

Երկրորդ խնդրի համար էլ՝ թե հայերենը կրկնավորի դրությունը կարող էր նախալեզվից ժառանգած լինել, պետք չկա երկար քննությունների, ոչ մի արգելք չկա սրա համար. և լեզվաբանները հավատում են, որ եթե երբեք հայերենի խորագույն հնության վիճակը որևէ կերպով մի օր երևան գա, բայերի կրկնավոր ժամանակներն էլ մեջտեղ պիտի ելնեն, որին ապացույց է մի քանիսին նշխարք, արարի ձևը, որ ամենածախ ժամանակի մեջ դեռ անկորուստ մնացել է:

Երրորդ խնդիրը վճռականն է. համաձայն են մեր կրկնավորները նախալեզվյան դրության:— Առաջին ձևը բոլորովին նման է նախալեզվի հնագույն վիճակին, որ սկզբում իր բոլոր կրկնավորները անշուշտ արմատի ամբողջական կրկնությամբ էր ձևացնում. չենք ուզում ասել, թե այս ձևով հայերեն կրկնավորները նախալեզվյան վիճակն են ներկայացնում, այլ թե՝ կրկնության այս ձևը ժառանգություն է մնացած նախալեզվից. և քան որում շատ պարզ և շատ բնական մի միջոց է, մինչև այսօր էլ կենդանի է մնացել մեր մեջ:

Նույն ապահովությունը չկա սակայն երկրորդի համար. ճշմարիտ է, թե նախալեզվյան արմատները, ինչպես նաև նրա ժառանգները, կրկնության ժամանակ ձայնավորի փոփոխություն կրում են, բայց մերն էլ սրանց հետ վերաբերություն ունի՞ արդյոք— Թերևս:

Երրորդ ձևը չկա մեր մյուս ցեղակից քույրերի մեջ: Սրան հակառակ թաթարական լեզուների մոտ գտնում ենք նրա հետքը. (նույնը գիտե նաև ուկրաիներենը). արդի թուրքերենը (թե օսմանյան և թե Ադրպատականի) մերին ճիշտ հավասար զորությամբ այսպիսի կրկնավորներ կարող է կազմել, բայց այս բանը թվում է, թե հայերից փոխառյալ է, քանի որ միայն ժողովրդական լեզվի մեջ գոյություն ունի: Ավելի խոհատիպ են կովկասյան լեզուները. այսպես՝ վրացերենի, ինչպես և լազերենի մեջ (տե՛ս մեր Etude sur la langue laze աշխատությունը, Paris, 1899, էջ 38. 71. 73 և այլն) մ ձայնը, իբրև ավելորդ, կարող է կցվել բառերի սկիզբը կամ վերջը: Օր. լազ. žora, žoram, mžora «արեգակ», nosei, noseim «խելացի», koči, kočim, mkoči «մարդ» և այլն: Հավանական է, ուրեմն, որ մեր ձևի էլ ծագումը կովկասյաններից լինի:

Սեմական լեզուների մեջ էլ շատ տարածված է նախադաշն մ-ի գործածությունը. Թայական մի որոշ ձև, անցյալ դերբայը, տեղ և գործիք ցույց տվող բառերը կազմվում են արմատի սկիզբը դնելով m նախդիրը: Արաբերենի մեջ կա նույնիսկ masdari-i mīmī (մ-ով անորևույթ) կոչված ձևը, որ ուրիշ բան չէ, եթե ոչ միևնույն անորևույթը՝ վրան ավելացրած m նախդիրը, առանց իմաստի որևէ տարբերության, ինչ. sa'ādat կամ mas'adat «երջանկանալ, երջանկություն» և այլն: Այսպես նաև՝ սաորերենի մեջ. օր. qəlā'ā „funda (sling)" և maqəlā'ā նույն նշ. ;qapsā կամ maqpāsā „poples (knuckle)"; rəbā'ā կամ marbā'ā «անկոդին», raumā կամ məraumā «բարձրություն», targmānā կամ mətargmānā «թարգման»:

Հայերենը կարող է նաև սեմական լեզուներից ազդված լինել:

Չորրորդ ձևը ամենից կարևորն է լեզվաբանական տեսակետով: Մենք գիտենք, որ հնդեվրոպական նախալեզվի կրկնավորները ունեին երկու տիպ. սովորական կրկնության մեջ առաջին եզրը բաղկացած էր մի բաղաձայնից և մի ձայնավորից, իսկ առատական կրկնության մեջ դրա վրա ավելանում էր ևս մի ձայնորդ: Երկուսի տարբերությունը կայանում էր ուրեմն նրա մեջ, որ առաջին դեպքում արմատի ձայնորդը չէր կրկնվում, իսկ երկրորդի մեջ կրկնվում էր: Բացի սրանից, առաջին դեպքում ձայնավորը լինում էր i, e, u, իսկ երկրորդ դեպքում o, a կամ այն ձայնավորը, որ կրում էր արմատը: Արդ, մեր չորրորդ ձևի կրկնությունները սրանցից որ տիպին են պատկանում:

Չորրորդ ձևի կրկնավորների մեջ առաջին եզրի ձայնավորը առհասարակ նույնն է արմատի ձայնավորի հետ և մեծագույն մասամբ (ամբողջի կեսից ավելին) ներկայացնում է ա, նրանից մի քիչ պակասը՝ ո, մեկից մինչև երեք օրինակ. ե, ի, ու (թեթև,

դեգևիլ, ճեճեկեալ, թրթիռ, գրգիռ, քրքռեցուցանել, թրթուռ), իսկ 11 օրինակ էլ տարբեր ձայնավորներով, որանցից էլ վեց հատը առաջին եզրում ունեն ա (ծածուկ, փափուկ, կակուղ, գազիր, սարսուռ, խախուտ), իսկ մյուսները ի կամ ո (ծիծաղ, թիթեղն, տիտեռն, թիթեռն, սոսինձ)։ Եթե այս բոլորը համեմատության դնենք հնդեվրոպական նախալեզվի կրկնավորների հետ, պիտի ասենք, որ հայերենի չորրորդ ձևը ներկայացնում է հընդեվրոպական նախալեզվի սաստկական կրկնավորը, որ ներկայացնում էր o, a ձայնավորները և կամ նույն էր արմատի ձայնավորի հետ։ Բայց այս պարագային անհարմար են գալիս առաւաւեել, ւաւաւեել, կոկորդ, պապաղձել, սոսինձ և այլ այս կարգի բառերը, որոնք, եթե սաստկական ձևին պատկաներին, պիտի պահեին իրենց ձայնորդը և գոնե լինեին *առաստաեիլ, *աաեսաեիլ, *կորկորդ, *պաեպաեձիլ, *սոեսիեձ և այլն, իսկ քանի որ չեն պահել ձայնորդը, ուրեմն պատկանում են հնդեվրոպական կրկնության սովորական ձևին։ Սակայն այս պարագային էլ անհարմար են առաջին եզրի ա, ո ձայնավորները։

Այսպես դեմ առ դեմ դնելով երկու իրար հակառակ պայմանները, մենք ստիպված ենք եզրակացնել, թե հայերենը պահած լինելով հանդերձ հնդեվրոպական կրկնության ընդհանուր ոգին, մշակել է իր մեջ մի ավելի կանոնավոր ձև. այն է՝ միացրել է սովորական և սաստկական կրկնավորները իրար հետ և ընդհանրացրել է արմատական ձայնավորի անփոփոխ կրկնության դրությունը՝ փոխանակ տատանվելու a, o, ē, i, u (այս վերջին երկուսը արդեն ջնջվելու էին հայերենի մեջ) ձայնավորների միջև։ Այս երևույթը համապատասխանում է հայերենի ընդհանուր ոգուն, որ ամեն տեղ, ուր գոնում է անկանոնություն և ձևերի զանազանակերպություն, աշխատում է մացնել կանոնավորություն և միօրինակություն։

Հինգերորդ ձևի կրկնավորների դրությունը դժբախտաբար համաձայն չէ ընդհանուր հնդեվրոպական լեզուների ոգուն։ Արդարև ծանոթ է լեզվաբանության, որ հնդեվրոպականների մեջ միշտ վերջինն է, որ ազդում է առաջինի վրա, մինչդեռ հակառակը հատուկ է Ուրալ-Ալթայական լեզուներին, օր. թուրքերենին. ուստի դժվար է ընդունել, որ այս կարգի ձևերն էլ բնիկ հնդեվրոպական լինեն. հայտնի է, որ հետին հայ ձնունդ են, բացի ճ, խ, յ ձայններով սկսող բառերից, որոնք իրենց այս ձայներ կորցրած են պարզապես ներդաշնակության պատճառով, հետևաբար իսկապես առաջին ձևին են պատկանում։

Վեցերորդ ձևի համար վերը չորս ենթադրություն էինք արել և որանցից երեքը միայն հնարավոր էինք գտել։ Այս երեքն էլ ուրիշ բանի չեն ծառայում, եթե ոչ քանդել-հանել մեր վեցերորդ կոչած ձևը և մի մասը (երկրորդ ենթադրության հպատակողները) մուտեցնել հինգերորդ ձևին, իսկ ավելի մեծ մասը (երրորդ և չորրորդ ենթադրության հետևողները) տանել դնել չորրորդ ձևի մեջ. բան այսմ՝ առաջինները հետին հայկական ձնունդ, իսկ վերջինները՝ բնիկ նախալեզվյան են։

Կա մի խնդիր էլ, որ պարտ է բոլոր ձևերի համար էլ. այն է, որ մինչ մեր քույրերը առնառարակ կատարյալի և գերակատարի մեջ են պահել կրկնավոր եղանակը, ընդհակառակը, մեր մեջ ամրողջ բայը կրկնավոր է (տմմտ. սանսկրիտի կրկնավոր ներկան)։ Բայց որանով մեր կրկնավորների ճոխ և զանազանյալ կատարությունը գեղեցիկ համաձայնության մեջ է լինում կրկնավոր կատարյալների բնաջինջ կորուստի հետ. մեկի կորուստը մյուսի դոյության պատճառով է և մեկի դոյությունը՝ մյուսի կորուստի պատճառով։

Ծան.— Մի քանի դեպք կա, երբ հայերենը կրկնության է դիմում համանուններն կամ մի բառի տարբեր իմաստների մեջ զանազանության մացնելու համար։ Այսպես, շուտ բառը երկու իմաստ ունի մեր լեզվում. մեկը «վազ», մյուսը «արագ», առաջինը «ուշ» իմաստի հականիշն է, երկրորդը՝ «դանդաղ» իմաստին։ «Շուտ արի» ասելով մենք կարող ենք հասկանալ թե «վազ կամ կանուխ արի», և թե «արագ-արագ, ճեպով, արագաքայլ»։ Զանարաղի բարբառում այս երկուսը զանազանելու համար առաջին դեպքում ասում են շուտ, երկրորդ դեպքում՝ կրկնության շուշուտ.— շուտ արի «կանուխ արի», շուշուտ արի «արագ քայլիր»։

Գրաբար առաք նշանակում է թե «մարդ», և թե «արբանեակ» (հրեական իմաստով)։ Բնականաբար այս երկուսի մեջ նախնականը առաջին իմաստն է։ Սակայն շատ բարբառներում առաջին իմաստը բոլորովին ջնջված է (թեև հետ է արքել «մարդրել», բայց ավելի շուտ «չորացնել, թացը վերցնել»). իսկ մյուսը իբրև եկեղեցական բան հետ է։ Կան բարբառներ (հատկապես Մուշ և Վան), որոնք զանազանության դնելով այս երկուսի մեջ, պարզ ձևը հատկացրել են երկրորդ իմաստին (Մուրբ

Մարգիս, Սուրբ Գևորգ), իսկ առաջինի համար գործ են ածում նրա կրկնական ձևը (սուրբ-սուրբ, սուսուրբ>սեսուրբ>սերսուփ), որից էլ սերսփել «մաքրել», սերսիկ «մաքուր», սերսփվիլ «մաքրվել»։

Առանձնապես հետաքրքիր է տէր բառը, որ նույնպես ունի երկու իմաստ. 1) մի բանի սեփականատերը, 2) աստված, իշխան կամ նախարար, եկեղեցական կամ հոգևորական։ Հին հայերը գրության մեջ այս երկուսը դանազանում էին հետևյալ ձևով. առաջինը գրում էին ամբողջությամբ, երկրորդը՝ պատիվով, այն է համառոտագրությամբ՝ Տր, սեռ. Տն.=տեառն, գրծ. Տր.=տերամբ (այն ժամանակ գեռ գլխատառի գործածություն չկար)։ Բայց երկրորդ տէրն էլ երկու իմաստ ուներ. աշխարհական և հոգևորական։ Վարդան Մամիկոնյանն էլ կամ Վասակ Սյունին էլ կոչվում էին Տեր (Տէր Վարդան Մամիկոնեան, Սիւնեաց տէր), եկեղեցականն էլ (Տէր Ներսէս Շնորհալի, Տէր Սահակ Պարթև, Եպիսկոպոսն Հարքայ Տէր Ներսէս)։ Ավելի ուշ, եկեղեցականի համար գործածված տերը սկսեց կրկնվել. տէր Ներսէս Շնորհալի, Տեառն Տեառն Ներսիսի հայոց հայրապետի, որ հիմա էլ համառոտությամբ գրում ենք Տ. Տ. Գարեգին կթղ. Տանն Կիլիկիոյ։ Սրանից առաջացավ տէրտէր «քահանա» ձևը։ Թե ո՛ր թվից գործածական դարձավ այս վերջին ձևը, ճիշտ չեմ կարող ասել։ Բայց նրանից ուշ տէրտէր բառը դարձավ հասուկ անուն, որի հնագույն վկայությունը 1264 թվից է։ Տէրտէր, աւագերէց Տփղիսի, ուղեկից եղավ Վարդան պատմիչին՝ Հուլագու խանի մոտ այցելության գնալու ժամանակ։ Այս նշանակում է, թե ժի դարում տէրտէր «քահանա» արդեն գործածության մեջ մտել էր։

Իսկ թե ինչու տէր տէր կրկնական ձևը հատկացվեց հոգևորականներին, դրա էլ պատճառը Ս. Գրքի սովորական ձևն է։ Ավետարանում հատկապես գտնում ենք հետևյալ վկայությունները։

Ոչ ամենայն որ ասէ ցիս Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն երկնից (Մտթ., է, 21)։

Բազում ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր, Տէր (Մտթ.է, 22)։

Ձի կոչէք զիս Տէր Տէր և զոր ասեմ ոչ առնէք (Ղուկ., Ձ. 46)։ Տէր, Տէր մեր, զի աքանչելի է անուն քո (Սղ., Ը. 2. 10)։

Արևմտահայոց մեջ տէր-ը սովորական գործածությամբ ափսո. ձևն է առացել իբրև աշխարհականի պատվանուն, որի հոգնակին էլ լինում է ափարք (փոխանակ գրբ. տեարք)։

ԳԼՈՒԽ Ը

ՄԱՄՆԻԿՆԵՐԻ ԵՎ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ցուրաքանչյուր մասնիկ, որ կցվում է մի արմատի կամ մի բառի, պահանջում է որոշ աստիճանի ձայնդարձ, օր. ter մասնիկը, որ ցույց է տալիս «գործող անձ», պահանջում է e ձայնդարձ. ինչ. հն. Μέν-τωρ=սանս. man-tā՛ «մտածող», հն. γενέ-τωρ, γενε-πήρ=լտ. geni-tor=սանս. ǰani-ta՛ «ծնող». -to մասնիկը պահանջում է o աստիճանի ձայնդարձ. հմմտ. գոթ. munda=սանս. mata՛s «մտածած», լտ. nā-tus=սանս. ǰā-ta՛s «ծնված»։

Թեքման ժամանակ ձայնդարձի ձևափոխությունները ենթարկվում է միայն վերջավորությունից անմիջապես առաջ գտնված մասը, այնպես որ, եթե արմատի ու վերջավորության մեջ կա մի որևէ մասնիկ, մասնիկը ձևափոխվում և արմատը անփոփոխ է մնում. իսկ եթե մասնիկ չկա և վերջավորությունը ուղղակի կցված է արմատին, այդ դեպքում արմատն է ձևափոխվում։ Այսպես՝

հն. γενέ-τωρ,	հայց. γενέ-τορα	
սանս. ǰani-tā՛,	հայց. ǰani-tār-am,	ներգ. ǰani-ta՛r-i
		արտակ. ǰani-tr-é,

հն. πατήρ, πατέρ-α, πατρ-ός

Թե անվանական, և թե բայական բառերը բաժանվում են երկու տեսակի. բնավոր և աբրուն։ Բնավոր են կոչվում այն բառերը, որոնք վերջավորում են e ձայնավորով կամ իր o ձայնդարձով. անբառն են կոչվում այն բառերը, որոնք վերջավորվում են բաղաձայնով կամ ձայնորդով։ Առանձին դիրք են բռնում

նում ā, ē, ō երկար ձայնավորներով վերջացող բուներ։ Այսպես բերե-մ, սիրե-ցից, գործո-ց բնավոր են, իսկ բեր-ց, ճառ-ցէ, ճար-ց, ոսկեր-ց անբուն են։ Նույնպես հն. φέρε-τε, φέρο-μεν, φόρο-ς բնավոր են, իսկ φερ-τε, φώρ անբուն են։ Բնի ձայնավոր հետև ամենից ավելի սրանք են գործածվում։ Հնդեվրոպական լեզուները աշխատում են հնագույն անբուն ձևերի տեղ դնել նոր բնավոր ձևեր։ Բայց շատ հազվագյուտ են այնպիսի դեպքեր, երբ միևնույն արմատը ունենա թե՛ բնավոր, և թե՛ անբուն ձևեր. ինչ. սանս. bhárati և bharti «բերէ», հն. φέρει, φαρτε, հիթ. berid, հյ. բերէ և լտ. fert, հյ. ոսկերց և ոսկերաց, աստեղց և աստեղաց, ճարց և ճարաց։

Բնավոր և անբուն ձևերի գանազանությունը կարևոր է հնդեվրոպական լեզվաբանության մեջ մի քանի կետերով.

1) Անբուն ձևերի մեջ թեքման ժամանակ բուի տունը շարժական է, դրվում է գանազան վանկերի վրա. այսպես սանս. é-ni «գնում եմ» (առաջին վանկի վրա), i-más «գնում ենք» (վերջավորության վրա). իսկ բնավոր ձևերի մեջ տունը անշարժ է, և երբեք վերջավորության վրա չէ, բացի այն պարագայից, երբ վերջավորության ձայնավորը բնի ձայնավորի հետ միախառնված է, ինչ. սանս. bhárāmi, bhárāmas «բերեմ, բերեմք», tudā'mi tudā'mas «խփում եմ, խփում ենք»։

*2) Անբուն ձևերի մեջ վերջավորությունը գրեթե միշտ անխառն ու անջատ մնում է, իսկ բնավորների մեջ հաճախ վերջավորության ձայնավորը բնի ձայնավորի հետ է խառնվում. այսպես՝ անբուն սանս. pitár- «հայր» բառից տր. pitr-é, իսկ wl'k^{w}o- «գայլ» բնավոր ձևից՝ գնդ. vəhrkāi, լիթ. vil'kui, հն.-լատ.

Որոշ վերջավորություններ ենթարկվում են ձայնդարձի օրենքներին, այսպես՝ եզ. սեռականի մասնիկը երևան է գալիս երեք ատոմանոով՝ es, os, s. բայերի մեջ հգ. Ա դեմքի վերջավորությունը երևում է երկու ատոմանոով՝ -mes, mos։ Ուրիշներ ձայնդարձից ազատ են և գործ են ածվում միշտ մի[illegible]նույն ձայնավորով. ինչ. հգ. ուղղականի -es վերջավորությունը։

ԳԼՈՒԽ Թ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲՈՒՆ

Ա.ՆՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Իբր օրինակ առնենք բաւ «խոսք» բառը։ Այս բառը գոյական է և հետևաբար ընդունակ է հոլովման։ Եթե քննենք այս բառի ծագումը, կտեսնենք, որ նա կազմված է բա (խոսել) արմատից, և մասնիկով։ Բայց բա արմատը ինքնին անընդունակ է հոլովման. ուրեմն, որպեսզի հոլովելի դառնա, նա ստացել է և մասնիկը։ Լեզվաբանական բացատրությամբ բա արմատ է, իսկ բաւ՝ անվանական բուն։

Ուրեմն անվանական բուն նշանակում է պարզ արմատի մի այնպիսի ձևավորում, որով նա ընդունակ է դառնում ստանալու հոլովական վերջավորությունները։ Այսպես հնխ. men- «մտածել» արմատից կազմվում էին հետևյալ անվանական բները. mén-es-, mén-men-, m^{o}n-ei-, men-ter-, mén-tro- կամ mén-tlo-, mn̥-tó-, mn̥-tei- և այլն։

Սակայն հնդեվրոպական նախալեզվի հնագույն շրջանում այսպես չէր. ամեն արմատ արդեն բառ էր և կարող էր հոլովվել, ճիշտ այնպես, ինչպես մենք այսօր հոլովում ենք բաւ, ձաց, ջուր բառերը, առանց ամենևին մտածելու, թե սրանք արմատ են, թե բառ։ Օր. հնխ. ped- «ոտք» բառը հոլովվում էր ուզ. pō′ ts, հայց. pódm, սեռ. բց. pedés կամ pedós, հգ. pódes և այլն։ Այսպես նաև k′erd- «սիրտ», g^{2}ow- «կով», nāu̯- «նավ», diw- «տիվ», rēg^{2}- «թագավոր», sneig^{2}h- «ձյուն», leuk- «լույս», mūs- «մուկ» և այլն։ Այսպիսի բառերը կոչվում են անբուն տիպ (athématique) կամ պրո մասնիկով բուն։

Հետագայում անբուն տիպը վերացավ հնդեվրոպական նախալեզվից և հատատավից անվանական բնի գրությունը։ Վե-

բի բառերը ձեում են զանազան լեզուների մեջ իրրև հին ձևացորդներ և այդպիսի բառերը այնքան առատ են մի լեզվի մեջ, որքան հին կամ հնաձև (վաղնջական) է լեզուն։

Անբուն և բնավոր ձևերի տարբերությունը շատ լավ են պատկերացնում հյ. հուր և ջուր բառերը. որոնց եզ. գրծ. հոլով է հուրբ, ջուրբ, բայց նաև հրով և ջրով, առաջիններն անբուն են, երկրորդները բնավոր. հին ձևն է անբուները, որ հետո վերածվել է բնավորի։ Սրա գեղեցիկ ապացույցն է այն, որ ջուր բառը հգ. սեռ. լինում է ջուրց և ջրոց, բայց հուր չունի հգ. սեռ. հուրց ձևը, այլ միայն հրոց։

Անբուն տիպի բառերի հատկանշական կողմն այն է, որ արմատի և վերջավորության միջև որևէ տարր չդնվելով՝ արմատն է, որ ենթարկվում է ձայնդարձին և ահա, այս պատճառով էլ միևնույն բառը զանազան լեզուների մեջ զանազան ձևվերով է պահվել։

Անվանական բուն կազմող մասնիկները բավական բազմաթիվ էին. հիշենք գրանցից գլխավորները։

1) Ձայնավորով կազմված բուներ.— Այս կարգի բուները կազմվում են արմատի վրա ավելացնելով o ձայնավորը։ Այս ձայնավորը իր վրա հրավիրելով թեքման ձայնափոխությունները, պատճառ է դառնում, որ արմատի ձայնավորը ևս հաստատուն, ինչպես նաև տոնի տեղը։ Մենք սրա հակառակը տեսանք նախորդ տիպի մեջ։

*Այս կարգի բուները ցույց են տալիս գործ կամ առարկա։ Սովորաբար արմատը ունենում է o ձայնավորը, իսկ տոնը փոխադրվում է արմատի վրա։ Այս կարգի բառեր գտնում ենք զանազան լեզուների մեջ, բայց ամենից հայտնի ձևով պահում է հունարենը. ինչ. φέρω «բերել, կրել» — φόρος «բերված հարկը», λέγω «խոսել» — λόγος «խոսք»։ Երբ տոնը փոխադրվում է բնային ձայնավորի վրա՝ բառը ցույց է տալիս «գործողը» և շատ անգամ դառնում է ածական. ինչ. նույն արմատից՝ հն. φορός «վարող, տանող», նաև τομός «հատու, հաջողակ, բեղուն»։ Սրանցից զուրս նաև *udrós «ջրային անասուն» > հն. ὕδρος, սանս. udrás, *piveros «պարարտ», հն. πιερός, սանս. pīvarás։ Այս պարզագային արմատի o ձայնավորը կարող է երկարել. ինչ. *ōmo-, որից հն. ὠμός.. սանս. āmás և հյ. հում (ո հլ.), որի մեջ ու հաստացնում է հնխ. երկար ō-ից։*

*Արմատի ձայնավորը քիչ անգամ կարող է լինել e. ինչ. հնխ. *séno- > սանս. sánas, հն. ἔνος, հիտ. sen, լիթ. sẽmas, բրիտ. hen, հյ. հին (հնոյ)։*

*Հնխ. *vérg'o- > հն. ἔργον, գերմ. werk, որի դեմ հայերենը հանում է o ձայնդարձը՝ գործ, սեռ. գործոյ։*

*Կարող է նաև ունենալ ցածր աստիճանի ձայնդարձ. ինչ. հնխ. *yugó «լուծ» (որ ներկայացնում է yeug- «կապել» արմատի առորին ձայնդարձը). սրանից սանս. yugá, հն. ζυγόν, լատ. jugum, ռուս. uro, գոթ. juk, գերմ. joch, հյ. լուծ։*

*Հնխ. *ni-zdó- (կազմված է ni մասնիկով՝ sed «նստել» արմատի zd- առորին ձայնդարձից), որից հյ. նիստ (ո հլ.), գերմ. nesd, լատ. nidus և այլն։*

Երբեմն այսպիսի բները կազմված են լինում հենց անբուն տիպից՝ վրան ավելացնելով o ձայնավորը. օր. ped- անբուն տիպից առանում ենք հնխ. pedo- «ոտք», որից հյ. ոտ-ք (սեռ. հեաոց), հն. πέδον «հող», հիտ. fed «քայլ», կամիս. pedan «տեղ», համմ. սանս. pat «ոտք» անբուն ձևից և padam «հետք, քայլ» բնավոր ձևից, հայերենի մեջ էլ ոտն անբուն ձևից և ոտն (-ոց)՝ բնավոր ձևից։

Այն լեզուների մեջ, ուր վերջավանկի ձայնավորը բնկնում է, անբուն տիպն ու բնավորը միևնույն ձևն են առանում և այլևս չի որոշվում բնավորը անբուն տիպից, այսպես է հայերենում, գերմանականում և այլն։

*1) -es- մասնիկով բուներ.— Սրանք սովորաբար վերացական գաղափար են ներկայացնում. արմատն ունի e ձայնավորը և կրում է շեշտը իր վրա (երբեմն էլ շեշտը անցնում է մասնիկին). ինչ. հնխ. g'enə- > «ծինդ» արմատից՝ g'én-is-, որից սանս. ján-as, սեռ. ján-as-as, հն. γένος, սեռ. *γέν-ε-ος > γένεος, լատ. *gen-us, սեռ. *gen-es-is > generis։*

Հնխ. k'léu-es- > սանս. çrávas- «համբավ», գոթ. sravah- «բառ», հն. κλέος «հռչակ», հսլ. slovo «խոսք» (slovese)։

Հնխ. reg²os-, սեռ. rng²es-os «մթություն» > սանս. ra'jas-, հն. ἔρεβος, սեռ. ἐρέβε(ɔ)ος, գոթ. riqizis, հյ. երեկ ոյ։

Հնխ. nebh-es- > հն. νέφος, սեռ. νέφεος, հսլ. nébo, սեռ. nebese, սանս. na'bhas-, սեռ. na'bhasas, հյ. ամպ։

2) -eu- մասնիկով բուներ.— Սրանք մեծագույն մասամբ ածական են, բայց կան նաև գոյականներ. շեշտը դրվում է մասնիկի վրա, իսկ արմատի ձայնավորը առորին ձայնդարձով է,

կարող է լինել նաև o. ինչ. սանս. gur-ús, հն. βαρ-ύς, գոթ. kaur-u-s «ծանր», *pol-eu> հն. πολ-ύ-σ, հյ. յոլով, այլ ձայնդարձ-ներով՝ սանս. pur-ú-s, գոթ. fil-li·

*g'en-eu-> հն. γένυς, սանս. ha'nu-, գոթ. kinnus, լտ. genu-, և համեմատաբար հյ. ծնաւտն<*ծին-աւտ·

3) -yo-կամ -iyo- մասնիկով բուցներ.— *Այս մասնիկը երկբորդական է և կազմում է ածականներ և վերացական բառեր, որոնք ածանցված են ուրիշ անուններից, ինչպես՝*

Հնխ. pətriyos «հայրական» (pəter- հայր բառից) >սանս. pitryas, pitriyas, հն. πάτριος, լտ. patrius. *Հնխ.* *g^{w}ow-, որից սանս. gáv-ya- «եզայինը», գնդ. gao-ya-, հյ. կոգ-ի «կարագ»: *Ունի նաև մեր* -եի *մասնիկի նշանակությունը, ինչ.* սանս. yaǰya- «հարգելի», ādya «ուտելի», dṛ'çya- «տեսանելի», հն. ἅγιος «սուրբ», στύγις «ատելի», լտ. eximius «ընտիր», *plē-yo = հյ. լի, հն. πλεῖος·

Այս մասնիկը ցույց է տալիս սովորաբար բազմաթիվ անձերի կամ իրերի միջև հակադրություն, մինչդեռ երբ հակադրությունը երկուսի մեջ է՝ գրվում է -ero- *կամ* -tero- *մասնիկը, ինչ.*

Հնխ. *al-yo «այլ, ուրիշ»> հն. ἄλλος, լտ. alius, հիսլ.-aile, հյ. այլ. *այս բոլորը ցույց են տալիս բազմաթիվ անձերի և իրերի տարբերություններ, իսկ* լտ. al-ter «երկուսից մեկը» *է:*

Հնխ. *név-yo-> սանս. náv-ya, գոթ. niu-li-s, գալլ. nov-io, լիթ. naū-ja-s նշանակում են «նոր»՝ հակադրությամբ այն բոլորի, որ հին է. իսկ նույնը* -er *մասնիկով (այն է հն.* νεαρός, լատ. nouer-ca, *հյ.* նոր*) բնականաբար երկու առարկաների համեմատությամբ մտածված ձև է:*

4) -en- մասնիկով բուցներ.— *Այս մասնիկը նույնպես երկբորդական է. հաճախ գտնում ենք դերմաներենի հոլովման մեջ. հիշենք մի քանի անկախ օրինակներ.*

Հն. ἄρσ-εν-, *գնդ.* arš-an- «արուն», *հյ.* առն «վայրի խոյ», *սանս.* yúv-an, *գնդ.* yuv-an, *լտ.* juv-en-is, *պրս.* ǰiv-ān, *որից հյ.* յաւուցակ «երիտասարդ»:

Լտ. homō, *սեռ.* hominis:

Այս մասնիկը հնդեվրոպականում երևան էր գալիս չեզոք սեռի բառերի հոլովման ժամանակ. օր. wed-, ud- «ջուր» *բառից կամիս. սեռ.* wetenaš, *վեդ.* udnás:

5) -no- մասնիկով բուցներ.— *Այս մասնիկը, ինչպես և* -eno, -ono-, onā-, -nā, *տալիս է գոնազան բառեր, գոյական և ածական, ինչ.* *swóp-no- *կամ՝* *sup-no> *սանս.* sváp-na-, *լիթ.* sap-na-s, *հն.* ὕπ-ν-ος, *լտ.* som-nu-s, *հսլ.* sŭn-ŭ, *ռուս.* сонъ, *հյ.* քուն:

Mus no-> *հյ.* մուն «ճանճ», *համմտ. հսլ.* muxa (<*mous-ā), *հն.* μυῖα (<mus-ya), *լտ.* mus-ca (<mus-ka)·

Louk'-eno> *հյ.* լուսին. *համմտ. լտ.* lūna, *հսլ.* luna (<*louks-no), *հն.* λύχνος <luks no s *և այլն,* bher-no-> *հյ.* բեռն, *համմտ. ալբան.* barr (< bhorno)·

Pleno-> *սանս.* prāṇas, *լտ.* plēnus «լիո», *սորին ձայնդարձով՝* plnó-s>*սանս.* pūr-ṇas, *իռլ.* lān, *հսլ.* plunŭ, *լիթ.* pilnas-. plātno-> *հյ.* լայն, *հիսլ.* lethan, *գալլ.* litano, *իսկ պարզ արմատը համմտ. հն.* πλατύς, *լիթ.* platùs; dek^{s}si-no-> *սանս.* dakšiṇa-, *գնդ.* dašina-, *հսլ.* desĭnŭ «աջ» *(որոնց դեմ հն.* δεξίτερος, *լտ.* dexter *կազմված* ter *մասնիկով). *k^{w}oinā'-, *k^{w}ei-nā'-> *գնդ.* kaẹ-na, *հյ.* քէն, *հսլ.* cĕna, *հն.* ποινή, *լտ.* poena, ino, īno. eino, oino *ձևերով:*

Այս մասնիկը շատ գործածական է ինում հայ, իտալական և բալթիկ-սլավոնական լեզուներում, որոնց մեջ տալիս է նյութ ցույց տվող ածականներ, օր.

Հն. φᾱγῖνος «ծառից», *լտ.* fagimus, *լիթ.* áuksimas «ոսկյա»:

հսլ. želězĭnŭ «երկաթյա», *հսլ.* materinŭ «մայրական»

հն. εαρι-νό-ς «գարնանային», χειμερινός «ձմեռային»

լտ. hibernus «ձմեռային», *հն.* πεμῳτινός «տերուից»

սանս. navīnas «նոր»

լտ. dīvīnus «աստվածային», Latīnus *լատին* (Latium-*ից*)

գնդ. ərəzataēna «արծաթյա», *գոթ.* staineins, *հգ.* steinīn «քարե»:

Հետագայում այս մասնիկը, ինչպես նաև -to- *մասնիկը, անուններից անցան նաև բայերին. այսպես՝ իտալական, կելտական, գերմանական, բալթ-սլավ. և արիական ճյուղերում, իսկ հունարենը և, նրա հետ, հայերենը պահեցին հին հնդեվրոպական ձևը, այն է՝ միացին իրը անվանական բուն:*

6) -mo- մասնիկով բուցներ.— *Այս մասնիկը տալիս է սովորաբար ածականներ, երբեմն նաև գոյականներ, երկուսն էլ երկբորդական. ինչ.* *g^{w}her-mo-> *սանս.* gharmás, *հյ.* ջերմ (*սեռ.* ջերմոյ), *հն.* θερ-μό-ς, *համմտ. նաև գնդ.* garə-ma-, *լատ.* for nu-s, *հգ.* warm, *պարզ արմատը* ջեր- *պահված է նաև հայերենի մեջ:*

*ar-mo-> գնդ. arə-ma- սանս. īr-má-, գերմ. arm, հալ. ramo «ուսք», հպրուս. irmo «թեւ», հմմտ. հյ. արմուկն։

Ցույց է տալիս նաև հակադրությունն զանազան իրերի միջև. ինչ.

հն. πρόμος, լտ. primus, գոթ. fruma, լիթ. pir-ma-s «առաջին», գնդ. maδəma-, գոթ. miduma «միջև», սանս. madhyama-s, հրգ. mittamo «միջև», սանս. upamás «գերագույնը»։

7) -er- մասնիկով բուներ.— Այս մասնիկը արդեն հնդեվրոպական նախալեզվի շրջանում գործել էր գոյական նախադրությունների կազմման մեջ։ Դրանով կազմվել են մի խումբ բառեր, որոնցից հիշելու արժանի են այդ պատկանության վերաբերյալ բառերը և երկու իրերի հակադրությունը ցույց տվող մակրայներ. ինչ.

հնխ. swésor-> սանս. svásar-, լտ. soror

գերմ. schwester, գոթ. swistar, անգլ. sister, հալ. sestra, հյ. քոյր, որ ծագում է հնխ. své-sōr ձևից։

հնխ. daivē'-> հյ. տայգր, սանս. devā'r, հալ. deverī, լիթ. déveris, հն. δαήρ։

հնխ. uper-> սանս. up-ár-i, հն. ὕπερ, լտ. super, գերմ. über, հյ. վեր. վերոյ, հնխ. nev-er-os> լտ. nouer-ca, հն. νεαρός «նորթ»։

*8) -ro-, -ero- մասնիկով բուներ.— Կազմում են ածականներ և գոյականներ, բայց շատ գործածական չեն. ինչ. սանս. tamisrā «մթություն», լտ. tenebrae, հրգ. dinstar «խավար», հն. ἄκρον, ἄκρα «ծայր», ἄκρος «սրածայր», հալ. ostrŭ «սուր», հն. θῶρον, հալ. darŭ, հյ. տուրք, լտ. ruber, rubra «կարմիր»։

հն. κρατ-ερός «ուժեղ», գերմ. bitter «դառն» (<*bhid-ro's), սանս. cit-rá- «փայլուն» և այլն. հյ. դալար, հն. θαλερός։

9) -lo- մասնիկով բուներ.— Այս մասնիկը գործ է ածվում կազմելու համար գլխավոր առեակ բառեր։

ա) ածականներ. օր. սանս. bahu-lá-s «բազում», հն. παχυλός «կոպիտ», μεγόλος, գոթ. mikils «մեծ», լտ. humilis «ցածր», similis «նման»։

բ) գոյականներ. օր սանս. nābhī-la-m, հն. ὀμφα-λό-ς, լտ. umbi-l-(icus), հրգ. nabolo «պորտ», լտ. oc-ulus, հաթ. akalaš, «աչք»։

գ) Նվազականներ. օր. լտ. porcu-lu-s, լիթ. paršē-l-is, հրգ. farheli «փոքր խոզ», հն. ἀρκτύλος «արջուկ», սանս. vṛšalá- «մարդուկ».

դ) դերբայներ. Այս կարգին են պատկանում՝

լատիներենի մեջ, գործոն ցույց ավող ձևերը. ինչ. bib-ulus «խմող», cred-ulus «տխրահավան», trem-ulus «դողդոջուն»։ *Սրանց հետ հմմտ. նաև հն.* μιμῡλός «միմոսող», σιγαλός «լռին, լռող».

Հայերենի նախավերևնի մեջ անցյալ դերբայները՝ եկեալ, տեսեալ, բերեալ *(սեռ. -ելոյ), հալ.* neslŭ, *սլաս.* хо:блъ, пошёлъ куша:ъ *և այլն. շատ գործածական է նաև թոխարերենի մեջ։*

Հայերենի մեջ անորոշի ձևը. ասել, բերել *և այլն։*

10) -et- -ed- մասնիկով բուներ.— Այս մասնիկները, առանձին նշանակություններից զուրկ, ծառայում են ընդարձակելու բառի բուները։ Ա՛յ-բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. սանս. daçá-t-, հալ. desę-t-, հն. δεχά-δ-, δέκατας, *որոնց հետ հմմտ. պարզ ձևը՝ հյ.* տասն, հն. δέκα, լտ. decem *և այլն։*

Սանս. yákṛt, հյ. լեարդ, *առաձնական վերջավորությամբ, մինչդեռ մյուս լեզուները՝ գնդ.* ẏākarə, հն. ἧπαρ, լտ. jecur, *պրս.* ǰigar *զուրկ են նրանից։*

հն. ὄνομα. *սեռ.* ὀνόματος, *հյ.* անուն, լտ. nomen

հն. κλέπτω «գողանալ», *արմատը* κλεπ-.

հն. νύξ, լտ. nox «գիշեր», *սեռ.* νυκτός, noctis, *գերմ.* nacht.

11) -to- մասնիկով բուներ.— Այս մասնիկը՝ կցվելով արմատի առարին առաձանի ձայնդարձին և իր վրա առնելով շեշտը՝ տալիս է

ա) շատ բազմաթիվ ածականներ. ինչ. հնխ. k¹lu-tó-s> սանս. çru-tá-s, գնդ. sru-tō «լսված», հն. κλυτός. լտ. in clutus «հռչակավոր»=հյ. լու «լսված».

բ) որևէ բանի կրող՝ ունեցող. ինչ. լտ. bar-bā-tu-s, հալ. bradātŭ, լիթ. barzdó-ta-s, բոլորն էլ «մորուսավոր».

գ) գոյականներ՝ o ձայնդարձով. ինչ. հն. φόρ-το-ς «բեռ», հալ. živo-tŭ =լիթ. gyva-tà «կյանք», լտ. vī-ta. Նաև հալ. dobrota «բարություն», rabota «ծառայություն, պաշտոն», լտ. bonitās, facultās, facilitās *և այլն։ Սրանց կարգից է նաև* մարդ <հնխ. mr̥-tó (mer- *մեռանելը արմատից*), սանս. mr̥tás։

Մասնիկը առանում է նաև eto, oto *և* do *ձևերը. վերջինիս համար օրինակ են՝ հալ.* tvrŭdu «ամուր, պինդ», լտ. calidus «տաք», horridus «կոշտ» *և այլն։*

12) -ko- մասնիկով բուներ.— *Գոյնում է շատ լեզուների մեջ. կազմում է մակրայներ, նախադրություններ, ածականներ, սրանցից գոյականներ և հատկապես նվազական բառեր. ինչ.* *pro-ko> հն. πρόκα «իսկույն», լա. reci-procus «դեպ և առաջ գարձած». *pos-ko> սանս. paçčā', զնդ. paskāţ «դեպ», լիթ. paskuī «այնուհետև», հյ. ետևկ.

հն. πέριξ «շուրջը»

հն. φυσικός «բնական»

գոթ. stai-na-h-s, հրգ. steina-g «քարոտ», հասս. chodó-k «քայլող, սուրհանդակ»

լա. bellicus «մարտիկ»

սանս. sanaka-s, լա. senex, senica, գալ. seneca «ծեր, հին». սանս. tanuka-s, հսլ. tĭnŭ kŭ «բարակ»

լա. unicus «միակ», գոթ. ainahs «միակ», հսլ. inokŭ «միայնակ»

հսլ. ązŭ- kŭ, հյ. աճձ-ուկ «նեղ»

նվազականներից՝ սանս. marya-ká- «մարդուկ», aǰakā, aǰikā «այծիկ», հսլ. synŭ-kŭ «որդյակ», հասս. коротко «կարճ».

Միացած -is- *բաղդատական մասնիկի հետ՝* is-ko- *ինչ. գոթ.* mannisks «մարդկային», հրգ. irdisc> գերմ. irdisch, «երկրային, հողային», հրգ. altisc «հին», հսլ. nebesĭskŭ «երկնային», լիթ. dĕviškas «աստվածային», նաև նվազական παιδίσκος «մանչուկ».

Հայերենի մեջ ունենք բարւոր, որ հետևաբար հոլովված է սեռ. բարւորոց.

13) yes- *և* istho- *մասնիկներով բուների մասին տես հատոր* I *(Ածականների համեմատության աստիճանները).*

14) -tero-, -toro- մասնիկով բուներ.— *Այս մասնիկը երկբորդական է և կազմված է երկու մասնիկների միացումից, այն է՝* to+ero, *ցույց է տալիս երկու առարկաների հակադրություն. ինչ. հնխ.* k^{w}o-tero> *սանս.* ka-tará-, *հն.* πό-τερο-ς. *հասս.* ко-торый, *լիթ.* ka-tr-às, *լա.* uter «երկուսից որը».

Բազմաթիվ առարկաների միջև հակադրություն ցույց տալու համար գործ է ածվում նույն -to *մասնիկի հետ միացնելով* -mo, *ինչ. սանս.* ka-tamás, *լա.* quo-tumus «որը (շատերից)». *լա.* ul-timus «վերջինը բոլորից».

Այս մասնիկի մասին տես և ածականների աստիճանները (հատոր I*).*

15) -ter- մասնիկով բուներ.— *Այս մասնիկը, որ ցույց է տալիս գործող անձ և ունի ընդարձակ գործածություն, երևան է գալիս հետևյալ ձևերով. հնհայերենի մեջ* tor, tēr, *լատ.* tōr, *սլավերենի մեջ* tel, *իսկ արիական լեզուների մեջ* tar- *արմատը առանում էր* e *ձայնդարձը, իսկ մասնիկը կարող էր ոգմամբ առանալ* -tr- *ձևը. ինչ. լա.* geni-tor, -tr-ī-c-, *հն.* γενέτωρ, γενε-τήρ, *սանս.* ǰani-tar- «ծնող», *ռուս.* учитель «ուսուցող», «տալ բայից՝ *սանս.* dātār, *հն.* δοτήρ, δῶτωρ, *լա.* dator, *հսլ.* datelĭ.

Հայերենի մեջ այս մասնիկի համապատասխանն է ող, որ գրվում է երկու ձևով՝ ող, և օղ, *այն է՝* աւղ. *Թե որն է սրանցից հարազատը՝ հայտնի չէ. հավանաբար աւղ. Ըստ որում* t *բաղաձայնից առաջ տալիս է* ւ *(համմա.* aratrum=արաւր, πατρός- հաւր*), ուրեմն և* աւղ <atl, *միանում է վերի մասնիկի սլավական* tel *ձևի հետ, իրը նրա սոսրին ձայնդարձը.*

16) -tro,- tlo մասնիկներով բուներ.— *Այս երկու մասնիկները, որոնք նախորդների բնավոր ձևերն են, ցույց են տալիս գործիք (կամ տեղ), ինչ. սանս.* çró-tra-m «ականջ», pā'-tra-m «բաժակ», հն. θέατρον «թատրոն», ὀρχήστρα «պարելու տեղ», μετ-ρον «չափ», λέν-τρο-ν «անկողին». ἄρο-τρο-ν «արօր». *Նույն մասնիկը* tlo *ձևն առանալուց հետո՝ դարձել է լիթ.* kla. *ինչ.* žén-kla-s «նշան». *Լատինը ունի երկու ձևերն էլ. ինչ.* rōs-tru-m «կռուց, որևէ գործիքի քիթ՝ ծայր», pō culu-m «բաժակ», castrum «ամրոց». *այսպես նաև իռանդերենն ու գերմանականը. Այս պարագային պատահում է, որ միևնույն բառը գտնում ենք երկու տեսակ մասնիկով. ինչ. հն.* ἄρο-τρο-ν, *լա.* arā-tru-m, *հյ.* արաւր, *բայց լիթ.* ár-kla-s «արօր».

Հայերենի մեջ այս մասնիկը պահված է ւր *ձևով, որովհետև* tr *գառնում է* ւր, *և այս մասնիկով ունենք* արաւր =*լա.* aratrum. *ուրիշ օրինակ չի հայտնված.*

Նույն մասնիկների համանիշ և զուգահեռական ձևերն են -dhro-, -dhlo-, *որոնցով ունենք մի խումբ բառեր հունարենի, լատիներենի, սլավականի և գերմանականի մեջ. օր. լա.* crī-bru-m, *չեխ.* rá-dlo «արօր» *(հն.* ἄρο-τρον *ձևի դեմ).*

17) -tei-, -ti- մասնիկով բուներ.— *Այս մասնիկը՝ դրվելով արմատի սոսրին ձայնդարձի վրա՝ կազմում է բայանուններ. ինչ. սանս.* mati- «միտք, խորհուրդ», *լա.* mens, mentis «միտք», *հսլ.* pa-mętĭ «հիշատակ», *լիթ.* at-mintīs «հիշատակ», *հրգ.* (gi)-bur-t «ծնունդ» *և այլն. Սանս.* dāti-, *հն.* δῶτις,, *լա.* dōs, dotis

լիթ. dūtis, հալ. datĭ «տուրք», հն. φάτις, φᾶσις «խոսք, հայտարարություն»=հյ. բայ։

Հայերենի մեջ այս մասնիկը ներկայանում է նախ յ ձևով. ինչ. բայ=հն. φάτυ. հետո՝ eu մասնիկի հետ միանալով՝ տալիս է eu-ti> ոյթ։

Լատիներենում, ինչպես նաև իտալականում, այս մասնիկը ջնջվելով, նրա տեղ դրված է -ōn- ձևով ածած մի նոր մասնիկ. ինչ. mentio, սեռ. mentionis «հիշատակություն»։ Միևնույնը կատարված է նաև հայերենում՝ տալով -ութիւն ձևը, որով կազմվում են մեր բոլոր վերացական բառերը։

Նույն մասնիկի մի ուրիշ ածած ձևն է -os-tei-, որ գտնում ենք կամխերեն և ավելի հաճախ սլավերեն լեզվի մեջ. օր. կամիս. dalugaštiš «երկարություն»=հալ. dlugostĭ (նույն նշանակությունը)։ Նույնը հայերենում ներկայանում է -ատ, -ուտ, -իտ ձևերով, ինչ. զգատ, իմատ, համեատ, ապրուտ, հագուստ, կորուստ, որոնք ծագում են -ās- tei. -ōs-tei-, es-tei- ձևերից։

18) -teu, (-toy-, tu) մասնիկով բուներ.— Այս մասնիկն էլ կազմում է բայանուններ, բայց այստեղ գործողության գաղափարը ավելի ակնհայտ է. ինչպես՝ հնխ. ar-tu-ṛ-tu- «հորինվածք, կարգ», սանս. ṛtu-, հն. ἀρτύς, լտ. artus, գերմ. art, հյ. արդ, սեռ. արդու։ Սանս. mántus «խորհելու գործողություններ», gán-tus «քայլելու գործողություններ», լտ. ad-ventus «գալուստ»։ Այս մասնիկից է առաջացել լատիներենի supinum ձևը (tum), սանսկրիտի աներևույթը (-tum) և այլն։ Կան նաև մի քանի մասնավոր բառեր. ինչ գնդ. pərə-tu- «կամուրջ», լտ. por-tu-s «նավահանգիստ», հրգ. fur-t «հունձ» և այլն։

19) men մասնիկով բուներ.— Այս մասնիկը ձևացնում է չեզոք և արական սեռի բայանուններ. ավելի առատ են չեզոքները։ Արմատն ունի e ձայնդարձը, իսկ տոնը ընկնում է վերջավորության նախորդ տարրի վրա. ինչ. սանս. bhár-ma «բեռը, բերուիճ», հն. φέρ-μα «բերք», և արմատի երկավանկ ձևով՝ սանս. bhári-man- «բերուիճ», հալ. breme «բեռ». լտ. lūmen «լույս», հն. τέρ-μα կամ τέρ-μων=լտ. termen, termo, (սեռ. termōnis), terminus «եզր, ծայր», examen «խուռն, քննություն»։ Ունենք նաև արմատի առարին ձայնդարձով ձևեր, որոնց մեջ շեշտը ընկնում է մասնիկի վրա. ինչ. հն. ὑ-μήν «թաղանթ, հիմեն», ἀυτ-μήν «օդի շունչը» և այլն։

Նույն մասնիկը երբեմն տալիս է գործող անձ. ինչ. հն. ἰᾶ-μων «դիացող», ἡγε-μων «առաջնորդ», համմտ. հատկապես սանս. bráhma (չեզոք) «աղոթք» և brahmā′ (ար.) «քահանա, բրահման»։

Երբեմն այս մասնիկը ածում է երկրորդական մասնիկով. ինչ. սանս. çró-ma-ta-m «հռչակ», բայց այս բանը ավելի սովորական է լատիներենի մեջ. ինչ. augmen և aug-men-tum «աճուիճ», monu-men-tum «հիշատակարան», alimentum «անուդ», testamen-tum «կտակ» և այլն։

Հայերենի մեջ այս մասնիկը մեծ գործածություն ունի. նա ներկայանում է ուղ. հյց. -ումն (համմտ. լտ. monumentum) և սեռ. ար. բց. գրծ. -մանց ձևով (համմտ. սանս. bhárī-man-)։ Արդի լեզվի մեջ՝ հակառակ գրաբարի, այս մասնիկը կորցրել է իր կենդանությունը, բայց որոշ բարբառների մեջ առացել է առվորական երևույթ՝ կազմելու համար դերբայներ, ինչպես եփման, եռման, որոնք -ումն մասնիկի սեռականի ձևերն են։

20) went- մասնիկով բուներ.— Գործածական է արիական լեզուների և հունարենի մեջ և տալիս է «ունեցող, -ուէտ» իմաստը. ինչ. սանս. ápa-vant- «ջրավետ», սանս, putrá-vant-, պնդ. puθra-vant- «որ ունի որդի», հն. χαρί-ris (<*χαρι-fεντ-ς> «շնորհալի, որ ունի շնորհք», οἰνό-ris գինեվետ։

Հայերենի մեջ ամանք այս մասնիկին համապատասխան են դնում -ուէտ ձևը (գինուէտ, խոտաուէտ), որ թեև նշանակությամբ նույն, բայց ձևով համապատասխան չէ։

Վերոհիշյալ բոլոր մասնիկները պարզ են. նրանցից մի քանիսը կազմված են երկրորդական մասնիկների գումարումից, ինչ. vent-, որ կազմված է v+en+t- մասնիկներից, բայց քան արում կցվում են բառերին իբրև պարզ, ուստի դրվում են նրանց շարքը։ Ուրիշներ հատկապես բաղադրյալ են. ինչ. ven, որ կազմված է u+er. մասնիկներից, համմտ. հն. αἰ-f-έν «միշտ»։ Սրանք չեն մտնում հիշյալ ցանկի մեջ։

Պետք է ասենք, որ մասնիկների միացումը հին երևույթ է և կար նույնիսկ նախալեզվի ժամանակ. սրան իբրև ապացույց է ծառայում այն հանգամանքը, որ այսպիսի միացումներ գտնվում են այսօր էլ միաժամանակ մի քանի լեզուների մեջ. ինչ. հյ. ութիւն (այթիւն) և լտ. -tio-, tionis (tei+ōn). Նույնպես է նվազականի մասնիկը հնխ. i-ko, իտալ. i-kā, որ գալն-

վում է թե սանսկրիտի, և թե սլավոներենի մեջ. սանս. mū'ṣ-ikā, լեհ. myška «մուկ», հյ. -իկ։

Այսպիսի մասնիկների թիվը շատ մեծ է.

Երբ մի բառ սառնում է երկրորդական մասնիկ, եթե մասնիկը սկսում է բաղաձայնով կամ ձայնորդով, մասնիկից անմիջապես առաջ գտնված մասը իջնում է առաջին ձայնդարձի։ Օր. դերադրականի մասնիկն է հնխ. *is-kho-, որ բաղկացած է yes+kho մասնիկներից, բայց չէ պահված yes, այլ նրա առաջին ձայնդարձը՝ is. հմմտ. սանս. iṣ-ṭha-, հն. ισ-το-, գոթ. is-ta։ Նույնպես i-ko-, i-kā նվազականի մասնիկը, որ բաղկացած է ei+ko i. հմմտ. սանս. ovi-kā' «մաքի»=հսլ. ovĭ-ca։

Նույնիսկ արմատը՝ երկրորդական կազմությանց մեջ՝ իջնում է առաջին ձայնդարձի. ինչ. հնխ. dei-wo «աստուած», որից diw-yo «աստվածային». հմմտ. սանս. deva'-, լտ. deus «աստված» և սանս. div-ya'-, հն. δῖος, լտ. dius «աստվածային»։ Ժամանակի ընթացքում անալոգիան աշխատել է արմատի բուն ձևը վերականգնել և այդ օրինակները այժմ բացառիկ են լեզուների մեջ։

Ինչպես ակզբում ասացինք, այս մասնիկները ամենից ավելի սովորական անվանական բներ են. կան սրանցից դուրս ուրիշ մասնիկներ էլ, որոնք շատ ավելի քիչ գործածական են. օր. -wo և -bho-, որոնք դուրն են ցույց տալիս. հմմտ.

-wo-> սանս. çyāva-, լիթ. šy'vas, հսլ. sivŭ «գորշ» (հյ. սեաւ), լտ. helvos, լիթ. želvas «կանաչավուն», լտ. liveo (*sliwo) «կապտավուն»,

լիթ. paẽvas, հսլ. plavŭ «դժգույն»....

-bho-> հն. ἀλ-φός «սպիտակ», լտ. albus «սպիտակ», հն. ἄργ-φος «արծաթափայլ», լիթ. raĩbas «խառուտիկ». նույն մասնիկով է հյ. դեղ «դեղին»։

Պետք չէ կարծել, թե ամեն արմատ պատ էր ընդունելու ամեն տեսակի մասնիկ, կազմելու համար անվանական բուններ. անշուշտ նախալեզվի, ինչպես նաև ժառանգ լեզուների մեջ, մասնիկների գործածությունը չափավորված և սահմանափակված էր. սովորությունն է, որ նվիրագործում և ընդհանրացնում է այս կամ այն ձևը, իսկ մյուսները գործածության մեջ չեն մտնում։ Թե ինչից են ծագել անվանական բները կազմող

այս մասնիկները՝ ընդհանրապես անհայտ է, բայց բոլոր մասնիկների նման՝ նրանք էլ նախապես բների ամփոփված ձևերը կամ վերջամասերն են։

Լեզվի հետագա ընթացքում անվանակերտ մասնիկները այնպես միացան արմատին, որ այլևս իրենց ինքնուրույնը կորցնելով՝ բառի անբաժան մասը կազմեցին. այսպես հայերենի մեջ ցոր, մարդ, մուճ, արդ բառերը ամբողջական բառեր են և մեր լեզվի համար առանձին արմատներ. ոչ ոք չի կարող ըմբռնել, որ ցոր՝ կազմված է ցո արմատից ro մասնիկով կամ մարդ՝ կազմված է մար<mr-, mer- «մեռանել» արմատից to մասնիկով և կամ մուճ կազմված է մու արմատից, no մասնիկով, և կամ արդ, զարդ (տես. արդու) կազմված է ար արմատից tu մասնիկով, և այս ար էլ նույն է ար-ար, առնել բայի հետ։ Միայն լեզվաբանական քննություններն են, որ կարող են ուրիշ լեզուների համեմատությամբ կորած ու անհետացած այս մասնիկները երևան հանել։ Ջլերն են միայն, որ կենդանի են դեռ այս կամ այն լեզվի մեջ, ինչ. օր. -to- լատիներենում կամ -yo- արիականում. Այսպիսիներից հաճախ քուր լեզուները կազմում են զանազան խառնուրդներ, ինչ. սանս. -tā-vant-, -anīya-, հսլ. tĭrnŭ, enĭnŭ և այլն։

Մի ավելի չշոշափելի օրինակ էլ տալու համար առնենք հայերեն քուն բառը. մեր լեզվի համար այս բառը զուտ արմատ է, որից նույնիսկ ձայնավորի կորստով ունենք քնել։ Ո՞վ կարող էր մտածել, որ այս բառի մեջ *ն մասնիկ է և բառի արմատն է քու և եթե մեկը հանդգներ մտածել մի այդպիսի բան, անշուշտ այդ ենթադրությունը կհամարեին բոլորովին սուտ և անմիտ։ Այսպես նաև ռուսերեն с н հոմանիշ բառը. այստեղ, սակայն, ենթադրությունը մի քիչ ավելի հիմնավորված պիտի լիներ, որովհետև իր հետ ունենք спать «քնել» բառը։ Այստեղ էլ սակայն, եթե մեկը՝ հիմնվելով երկու բառերի իմաստի նույնության և միաժամանակ նախաձայն с (ս) հնչման նույնության վրա՝ համարձակվեր դուգորդել երկուսը միմյանց հետ, դարձյալ պիտի համարվեր հանդուգն և անմիտ։ Միայն, ինչպես ասացինք, համեմատական լեզվաբանությունը կարողացավ այդ «սուտ» ենթադրությունները ճշմարիտ ու հաստատուն գիտության վերածել՝ հիմնվելով լտ. somnus, հուն. ὕπνος, մանավանդ սանս. svapnas «քուն» բառի վրա։ Այսպիսով, նա որոշեց, թե արմատն է հնխ. svep. svop, որի վրա եկել ավելացել է -no մասնիկը (կամ

անվանական բունը)։ Այս է համեմատական լեզվաբանության մեծագույն արժանիքը, որ կարողացավ մինչև անգամ արմատ կարծված բառերը քանդել ու պարզ արմատը գտնել, և այս բանը կատարվեց միմիայն ցեղակից լեզուների համեմատության շնորհիվ։

Լեզվաբանության այս արարքը նույն է քիմիայի հետ։ Այստեղ էլ ունեինք մի խումբ մարմիններ, որ ամբողջ մի դար պարզ տարր (էլեմենտ) էին համարվում. իսկ վերջին ժամանակներս գիտությունը անջատեց դրանք մասերի և կամ միացրեց այլ տարրերի և կամ գտավ նոր տարրեր։

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Երբ երկու բառ (անվանական բուն) իրար հետ միանան այնպես, որ ամբողջը կազմի մեկ բառ (մի անվանական բուն), այդպիսի միացումը կոչվում է բարդություն և կազմված նոր բառը կոչվում է բարդ բառ։

Բարդության ամենանախնական ձևը հետևյալն է. երկու կամ ավելի բառ, որ իրար հետ միասին գործածվում են հաճախ հարակից ու անբաժան, ըմբռնում ենք իրրև մի բառ և միացնում ենք իրար հետ։ Այս երևույթը կոչվում է կցում։

Ստորև՝ ՆՀԲ-ից քաղելով՝ տալիս ենք այն բառերի ցուցակը, որոնց մասին խոսեցինք վերևում, որ և կոչեցինք կցում.

այսպէս, այդպէս, այնպէս, առնպէս, նոյնպէս, որպէս, առպէս, (առյապէս), այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ, որչափ այսքան, այդքան, այնքան, որքան, այժմ, յայնժամ, այսգունակ, սագունակ, այդգունակ, այնգունակ, նոյնգունակ, այսօր, ցայսօր, յայնկոյս, յայսկոյս, յորժամ, ցայնժամ, ցայնվայր, ցայնքան, ցայսվայր, ցայսցայն, ցայսքան, ցորչափ, ցորժամ, ցորվայր, ցորքան

այս օր > այսօր
օր հասարակ > օրհասարակ > գվո. օհարակ
առ հասարակ > առհասարակ
ընդ հանուր > ընդհանուր
այս տեղ > այստեղ
այդ տեղ > այդտեղ
այն տեղ > այնտեղ

Ուրիշ լեզուներից օրինակներ՝ լտ. respulica, հն. Ἔλλης πόντος

Հաճախ նույնիսկ դժվարանում է մարդ որոշելու, թե արանք մի՞ բառ են, թե երկու. համմտ. եղն էջ 18 յամենայն կողմանս

վարդին և ընդ հանուր արշաւին և ընդ բնաւ պանան։ Նշի ընդհանուր բառը գրում է երկու ձևով, առանձին առանձին (ընդ հանուր) և միացյալ (ընդհանուր)։ Այսպես և հունարենում՝ Հոմերոսի մէջ անխտիր կարելի է կարդալ Διί φίλος կամ Διϊφίλος.

Ֆրանս. ce ci > ceci
plus tôt > plutôt
tous jours > toujours
au jour d'hui > aujourd'hui
dés jà > déja
vert jus > verjus
լ. hanc horam > Ֆր. encoré
Թրք. bir il dir «մի տարի է» > bildir «ներում»

Բարդ բառերը, նշանակության կողմից դառնալով, բաժանվում են երեք խմբի։

ա) Բառեր, որոնց մեջ երկրորդ եղրի իմաստը (քերականական արժեքը) անաղարտ պահվում է, ինչ էլ որ լինի բարդության մեջ մանող բառերի հարաբերությունը. այսպես՝

1) Գոյական գոյականի հետ, երկուսն էլ պահելով իրենց իմաստը, մեկը մյուսին իբր պարզ հարադրություն, իբր թե երկուսը իրար հետ և շաղկապով միացած լինեին։ Օր. սանս. rāja rṣiḥ «արքա-քահանա», divā-naktam «օր ու գիշեր», aǰāva'yas «այծեր ու ոչխարներ», çaṃ-yóš «երջանկություն և հաջողություն», հն. ἰατρό-μαντις «բժիշկ-մարգող», ἀρτο-κρεάς «հաց և միս», νυχθ-ήμερον «գիշեր-ցերեկ», լ. ascia-mallia «մի գործիք, որ միաժամանակ կացին է և մուրճ», ἀνδρό-γυνος «որձևէգ», հրգ. sunu-fatarungo «որդու և հոր մարդիկը», հալ. bratu-sestra «քույր և եղբայր», հռուս. otec-matь «հայր ու մայր», հիոլ. cenn-anim «գլուխ և հոգի», fot-lethet «երկայնություն և լայնություն» և այլն։ Այս կարգի բարդությունները հնդկական քերականության մեջ կոչվում են dvandva և բնում են կցման և իսկական բարդության միջին տեղը (եվրոպական բառով composé copulatif).

Հնդեվրոպականներից դուրս, ուրիշ ընտանիքում էլ կար բարդության այս ձևը, օրինակ՝ վրացերենում ունենք՝

da-jma «քույր ու եղբայր»
ded-mama «մայր ու հայր (ծնողք)»

բասկ. aitamak «հայր և մայր»
oineskuak «ոտք ու ձեռք»
zerulurrak «երկինք-երկիր»

Հայերենի մեջ ամանք արտահայտվում են և կամ ու շաղկապով միացած. ինչ. այրևի կամ այրուձի «ձիավոր զինվոր, հեծյալ» (մի մարդ և մի ձի), նոր լեզվի մեջ անցուդարձ, շարժուձև, կարգուսարք, կերուխում, կարդալ-գրել, «ուսում» և այլն, մինչև իսկ բարբառներից՝ գլ. քուրվախպար «քույր և եղբայր»։ Առատ է Ղրբ. բարբառում, ուր ու վերածված է ը. ինչ. վըղըմօ'խիր դառնա՞ս։

Այս դեպքում հաճախ երկու մերձանիշ բառերի միացումը ու շաղկապով՝ տալիս է մեզ բարդ բառի գաղափարը. բայց իրապես չկա բարդություն. ինչ. սար ու ձոր, հայր ու մայր, այր ու կին և այլն։

Ի նկատի ունենալով վերջին հանգամանքը, հաճախ դժվար է լինում որոշել, թե ու-ով միացած երկու բառ բարդ են, թե ոչ. օրինակ հին հյ. պարտուպատշաճ, երբեմն համարվում է բարդ և գրվում է մի բառ, երբեմն էլ համարվում է երկու բառ և գրվում է առանձին առանձին։

Ճանաչելու համար, թե այս կարգի բառերը բարդ են, թե ոչ, երբեմն կարելի է ի նկատի ունենալ այն, թե առաջին բառը անկախ գոյություն ունի՞. օրինակ կարգ ու սարք երկու անկախ բառեր են և կարող են այս երկուսը բարդ համարվել կամ ոչ. բայց շարժուձև բաղկացած է շարժ և ձև բառերից. առաջինը շարժ իբր առանձին գոյական չկա, ուստի շարժուձև անշուշտ բարդ է և սխալ է գրել առանձին առանձին, ինչ որ ավելի լավ է ցույց տալիս նույնի հոլովյալ ձևը. օր. եկան ու բախվեցին Ֆիբարի շարժուձևին.— եթե առանձին բառեր լինեին, պիտի ասեինք շարժին ու ձևին, ինչ որ անսովոր է։ Նմանապես անցուդարձ մի բարդ բառ է, և չի կարելի գրել անց ու դարձ, քանի որում անց առանձին գոյություն չունի։

Հետևելով եվրոպական լեզուների սովորության, հայերենի մեջ մտել են այժմ նաև գծիկով միացած ձևեր. ինչ. բառ-արմատ, բժիշկ-քահանա և այլն։

Կան նաև ա հոդակապով կազմված ձևեր. ինչ. մարապարսիկ, ֆրանսացայ (բառարան) և այլն։

Այս կարգի բարդությանց մեջ կա նաև այնպիսի մի ձև,

ուր իմաստը ներկայանում է մեզ ոչ թե իբր երկուսը միասին, այլ երկուսի միջինը, որ ոչ մեկն է բոլորովին, և ոչ մյուսը. օր. մարդակապիկ, շնագայլ, մարդ-գազան, մարդապայքար *Ոսկ. մ. ա. 4, էջ 58 (առասպելական գազան, որ միաժամանակ մարդ է, պայ է և քաղ է, կամ այս բոլորի միջինը)։*

Ձինարևնում այս կարգի բարդութիւնը, որ կոչվում է dvandva, *տալիս է դումարում կամ ամբողջութիւն.* օր. fu *«հայր»*, mu *«մայր»*, *իսկ* fu-mu *«ծնողք».* yuan *«հեռու»*, kin *«մոտ»*, *իսկ* yuan-kin *«տարաձայնութիւն»։*

Ճապոներևնում իրար հակառակ բառերի բարդութիւնը սովորական է կազմել ամբողջական իմաստ. օր.

Ši-maç *(սկիզբ և վերջ) «գործի բոլոր հանգամանքները»*
kami-šimo *(վերև ներքև) «ամբողջ մարմինը»*
yaši-aši *(լավ-վատ) «օրակ»*
dai-šo *(մեծ-փոքր) «ամենքը»* (Plaut, 308).

2) Ածական գոյականի հետ, ինչ, հն. ἀχρόπολις *«ծայրաքաղաք», սանս.* adhara-hanúḥ *«առարին կզակ», գերմ.* halb-insel *«թերակղզի», հյ. կիսատուած, կիսաճղրի, նախարտ, թերակղզի, նաև թվականով՝ սանս.* saptá-rṣayas *«եօթն իմաստուններ». այս կարգի բարդերը կոչվում են* attributif։

3) Գոյական գոյականի հետ, առաջինը ծառայելով երկրորդին իբր հատկացուցիչ. ինչ. հն. πατρ-άδελφος *«հոր-եղբայր», սանս.* mātṛ-svasā *«մորաքույր»*, brahma-putrá *«բրահմանի որդի», հյ. ծովեզր «ծովի եզերք», գանձատուն «գանձի տուներ», արքայորդի «արքայի որդին»։ Այս կարգի բարդերը կոչվում են պատկանողական և շատ առատ են՝ ինչպես ուրիշ լեզուների, նոյնպես և հայերենի մեջ։*

4) Ածական ածականի հետ, իբր թե երկուսը և շաղկապով միացած լինեին, ինչպես dvandva *բարդութիւնները. օր. սանս.* dakṣiṇa-savyá- *«աջ ու ձախ», իռլ.* gerr-gel *«կարճ և սպիտակ»,* cruind-bec *«կլոր և փոքր», հոռս.* tonko belyj *«բարակ և սպիտակ», հյ. յորդառատ «յորդ և առատ», լայնարձակ, կանաչ-կարմիր, գվո. Ղրր. սրվրաէ'դին «սև ու դեղին»։ Նոյնիսկ և շաղկապով միացած՝ որձևէզ=պրս.* nar-māda։

Այստեղ էլ կան դեպքեր, երբ իմաստը ոչ մեկն է, և ոչ մյուսը, և տատանվում է երկուսի միջև. ինչ. դեղնակարմիր, կապտականաչ և այլն։

5) Գոյական ածականի հետ, որի մեջ գոյականը ածականի համար որոշիչի դեր է խաղում. օր. վարդակարմիր «վարդի պես կարմիր», ձիւնասպիտակ «ձիւնի պես սպիտակ»,— այս կարգի բարդեր քիչ կան հայերենի մեջ, բայց բավական առատ են գերմաներենում, ուր կազմում են գերադրական ածականների մի առանձին խումբ. ինչ. schnelweiss *«ձյունասպիտակ»,* feuerrot *«հրակարմիր»,* eiskalt *«սառույցի պես ցուրտ» և այլն։*

6) Թվական թվականի հետ, որոնք կազմում են dvandva, *ինչպես երկու գոյական կամ երկու ածական. օր. սանս.* dvā'-daça, *հն.* δώ-δεκα, *լատ.* duo-decim *«երկուասան», աշխ. առասներկու. այսպես նաև երեքտասան, չորեքտասան, հնգետասան, ավելի հետո՝ շաղկապով միացած՝ եօթնետասան, ութետասան, իննետասան, քսան և մի, քսան և հինգ և այլն։*

7) Ածական ածականի հետ, մեկը մյուսին իբր լրացուցիչ. ինչ. ωχρὸ-ξανθος *«բաց կանաչ»,* ὠχρο-μέλος *«դժգույն սև, գորշ».* լատ. semi-vivos *«կիսակենդան», մրգ.* bleich-grüne, *ռուս.* svetlo-zelenyj *«բաց կանաչ»,* τρισ-άγιος=եռասուրբ *«երիցս սուրբ, շատ սուրբ»։*

8) Նախադրութիւն կամ մակրայ գոյականի հետ. ինչ. մերձավայր, մոտաքաղաք. *Բ. մկ. գ. 8։*

9) Բայի հրամայականը մի ուրիշ բայի հրամայականի հետ. ինչ. երթևեկ, առնուտր, տուրիառ, եկէչ. *Թրք. ևս սովոր է* gel-git *կամ* git-gel *«երթևեկութիւն», օր.* gel-git-imiz yoq *«իրար հետ դնալ-դալ չունենք», ört-bas (ծածկիր-ծածկիր) «մի բան դաղտնի պահել, թաքցնել, պարտակել»։*

Բայով կազմված բարդութիւններ են նաև քաջալեր «քաջ եղիր», մխիթար «մի՛ ցավիր» և նմաններ. երկուսն էլ բայի արմատով են կազմված, բայց առաջինը (քաջ) ածական կամ մակրայ համարելով, իսկ երկրորդը (մի) արգելական մակրայով։

10) Նախդիրով կազմված ձևեր. արիառուր, յափսիթերս, խառնիխուռն, այրընդայրոյ, մէջընդմէջ, գիրկընդխառն, ուսընդանուխ, օրըստօրէ, մատամատս, կէտառկէտ, մերթընդմերթ։

թ) Բառեր, որոնք ունեն ածականի արժեք և ցույց են տալիս, որ այսինչ մարդը կամ իբր ունի երկրորդ եղրի առարկան՝ առաջին եղրի հատկութեամբ կամ արտով. ինչ. սանս. hiraṇya-keçaḥ *«ոսկեգլուխ», լատ.* magn-animus *«մեծասրտի», հն.* μεγαλόδοξος *«մեծափառ», ֆր.* rouge-gorge *«կարմրալանջ», հոլ.* čruno-vlasu

«ոհահներ», հյ. մեծատուն, «որի տունը մեծ է կամ որ մեծ տուն ունի», մեծագին, «որի գինը մեծ է», պարս. xūb-rū «գեղեցկադեմ», հն. δυσ-μενής, պրս. dušman «չարամիտ»: Այս կարգի բարդերը կոչվում են ստացական (composè possessif), մինչդեռ մյուսները կոչվում են ուղիղ բարդություն (composé direct): Ստացական բարդերը շատ առատ են զանազան լեզուների մեջ, հատկապես հայերենում: Այս կարգի բարդությունների մեջ երկրորդ եզրը միշտ գոյական է լինում և առաջին եզրը սովորաբար ածական, քիչ անգամ լինում է գոյական և այն ժամանակ էլ առնված է լինում ածականաբար. ինչ. Վարդգես և այլն, պրս. փէրի-փէյքեր «որ փերիի պատկեր ունի»:

Թվականները իրր ածական սովորական են առաջին եզրում. ինչ. հն. τριόδους, τρίβολος, ռուս. трезубець «եռատուճիճ», τετράπους=չորքոտանի:

Արդի հայերենում, ինչպես նաև բարբառներում, ունենք սրա հակառակ դասավորություն, այն է՝ նախ գոյական, հետո ածական. ինչ. սավերախիտ «որ ունի խիտ սավեր», ոսկրահատ «որ ունի հատ ոսկորներ», կողքահատ «որ ունի հատ կողք, որի կողքը հատ է, համատ»:

Հին լեզվի մեջ, բայց ավելի արվեստակյալ ոճով, ունենք նաև դերանուններով կազմված ձևեր. ինչ. մերանիւթ, մերակերպ, մերասեռ, մերաւոր, մերատիպ, մերատոհմակ, քոյինակրօն և այլն. ոսկեզարյան է միայն մերազգեայ (Եւս. քր. ս.). հմմտ. նաև սանս. tvām'-kāma-s «որ ձեր ունի քեզ համար»: Նախադրությամբ կամ մակբայով՝ մերձազգական, միջազգար (մեջը փառած), միջազեաք, ներսահմանք:

դ) Բառեր, որոնց մեջ մի եզրը բայարմատ է, որ և կատարում է գլխավոր դերը, իսկ մյուս եզրը նրա լրացուցիչն է. ինչ. հն. φιλό-σοφος «իմաստասեր, որ սիրում է իմաստություն», φυγο-πτόλεμος «ռազմախույս, որ փախչում է պատերազմից», սանս. vida'd-vasuḥ «բարեգիւտ, որ գտնում է բարիներ», գնդ. frādaṭ-gaēθō «որ բարգավաճեցնում է աշխարհը», հյ. հայրասպան «որ սպանում է հորը», միջամուխ «ներս մտած», պրս. dūr-bīn «հեռադիտակ» (որ հեռուն է տեսնում), մերձակայ «մոտակա», մարդասէր «որ սիրում է մարդկանց», ականատես, միայնակեաց, բարեկաց: Այս բոլորի մեջ ստացված բարդը լինում է կամ ածական և կամ անձ ցույց տվող գոյական, բայց ոչ բնավ՝ վերացական բառ:

Այս պարագային հայերենում բայարմատը առնվում է բայի աորիստի ձևից. ինչ. կեամ (կեցի, եկեաց, կեցեալ) բարեկեաց, մեճակեաց, միայնակեաց.

-եմ, -իմ լծորդութեանց մէջ, եթէ գերբայը չունի -ց, այլ պարզապես -եալ, բայարմատն էլ չի ստանում ց. ես բնակիմ (բնակեցի, բնակեալ), օր. լեռնաբնակ:

Իսկ եթէ գերբայը ունի -ցեալ ձևը, բայարմատն էլ ստանում է ց. ինչ. հայիմ (հայեցայ, հայեցեալ), օր. բարձրահայեաց:

Միավանկ բայերի մեջ գտնում ենք երկու ձևն էլ. օր. կամ բայից (կաց. կացի, կացեալ), մերձակայ. կեալ բայից (կեցի, կեցեալ) միայնակեաց.

Նկատելի են նաև՝

դնեմ—դիր.— մատադիր
լսեմ—լուր.— ականջալուր
տալ—տու.— լուսատու

Այս բոլոր դեպքերում կարող է բարդի վրա և մի մասնիկ ավելանալ. ինչ. անարիւս, բանասարկու, երկդիմի:

Կան բարդ բառեր, որոնք չեն մտնում այս երեք շրջանակների մեջ և մի առանձին կազմություն ունեն. օր. լտ. nu-diūs «առջի օրը». սանս. yaḍ-bhaviṣya-s «ֆաատալիստ»:

Այս կարգի բառերը գեղջուհիների արդյունք են. նրանց իմաստը պարզելու համար՝ պետք է զորությամբ հասկանալ նաև գեղջված մասերը. այսպես՝ սանս. yad-bhaviṣyas, որ իսկապես նշանակում է «ինչ լինի», պետք է լրացնել «նա որ առում է ինչ կլինի, թող լինի»:

Վերջապես կան այնպիսի բարդություններ, որոնք սխալ կազմություն ունեն և այդ պատճառով էլ չեն համապատասխանում նախորդ կանոններին. այսպես օր.

Սիրաբան, որ հն. φιλόλογος բառի թարգմանությունն է, հունարեն դպրոցում կազմված. ըստ օրինի պիտի լինի բանասէր, այն է՝ «սիրող բանից, որ բանն է սիրում», մինչդեռ սիրաբան պիտի նշանակեր «սիրո խոսք»:

Սեղմիրան «կոթսեա, որ սեղմում է իրանը». ըստ ձևի նշանակում է «նա, որ սեղմված իրան ունի». արևմտահայ գրագետ ե. Տեմիրճիպաշյանի կազմած բառն է. ըստ օրինի պիտի լիներ իրանասեղմ. օրինքը զոհել է գեղեցկության, ըստ որում սեղմիրան ավելի կարճ և ավելի գեղեցիկ է:

Միջագիշեր «կես գիշեր» Բրս. Թղթ. Յհ. իմաստ. պետք է ուղղել գիշերամէջ, ինչպես ունենք քաղաքամէջ Սգր.:

Ամբողջ մի նախադասություն էլ կարող է համարվել մի բառ օրինակ՝

Ֆրանս. qu'en-dira-t-on (ինչ են ասելու այդ մասին) «հասարակական կարծիք, սրա նրա վերաբերմունքը». ինչ. Je ne fais pas attention aux qu'en dira-t-on «Ես ուրիշների կարծիքին ուշադրություն չեմ դարձնում»:

Եգիպտ. Ես մի նա գնում է մեծանում է եմ,
je suis un il-va-il-grandit
որ է «հետզհետե մեծացող մի մարդ եմ» (BSI, 33, № 100, էջ 200):

Հայերեն. Առավ-փախավ-ին մեկն է «խաբեբա է, գող է»:
» » էջմիածին «միածինը իջավ», մխիթար «մի ցավիր», քաջալեր «քաջ եղիր»:

Սեմական լեզուներից սովորական օրինակներ են՝ էմմաուսէլ «Աստված մեզ հետ», Սեմեքիրիմ «Մեն աստվածը ավելացնի իմ եղբայրները», Ռուբեն «տես, որդի»:

Թուրքերեն. dedi-kodə (ասաց դրեց) «բամբասանք», հոգ. dedi-kodələr «բամբասանքներ»:

Ֆրանսերեն. pourboire (խմելու համար) «դրամական պարգև»:

Ռուսերեն начай (թեյի համար) «նույն նշ.»,

Թուրքերեն. gel zeman git zeman (արի ժամանակ, գնա՛ ժամանակ) «մի ժամանակ հետո»:

Նույն երևույթը գտնում ենք նաև ուրիշ լեզուներում. օր. ամերիկյան բանակների լեզվով isoγeri e բառը նշանակում է «այրիա». այս բառը արմատ չի կարող լինել. նա ծագել է iso-iγe-lepe նախադասություններից, որ նշ. «ամուսինը մեռած է» (Steinen, էջ 325): Ջայնական դանադան փոփոխություններ միանալով առկծել են այդ բարդ բառը:

Նույնիսկ հյ. բամբասել, բամբասանք բառերը կազմված են գրբ. կորած բայ «ասել» բայի եզ. Ա և Բ բամ, բաս դեմքերից՝ բայական -ել և հոգնակի -անք մասնիկների հավելումով: Նշանակում են «ասեմ—ասես» անել, «ասեմ—ասեներ», ինչպես Թիֆլիսի բարբառով ասում է ասէ-կոսէ:

Բայց ինչ տարրերից էլ կազմված լինի բարդությունը, արդյունքը կլինի գոյական կամ ածական. հնդեվրոպական լեզվաբանության սկզբունքն այն է, որ չկա բնավ բարդ բայ. իսկ

եթե ունենանք բարդ բայ, դա կամ նախադրության և բայի թույլ միացումն է, և կամ ածանցական մի բայ: Այսպես, հունարենի մեջ նախադրության և բայի միացումը այնքան թույլ է, որ նախահավելված ձայնավորը և կրկնությունը ներմուծվում է միշտ նրանց միջև: Բարդ բայերն էլ ածանցված են բարդ գոյականից կամ բարդ ածականից. օր. ճեռախոսել չի կազմված ճեռի մակրայի և խոսել բայի գումարումից, այլ ճեռախոս բարդից է ածանցված. մեծամտել չի կազմված մեծ և մտել բայից (որ գոյություն էլ չունի), այլ մեծամիտ ածականից (Henry, Gr. comp. gr. 185): Այսպես նաև հունարենում, լատիներենում և այլ լեզուներում:

Սրանց հակառակ մի խումբ ոչ հնդեվրոպական լեզուների մեջ կան բարդ բայեր. օր.

Ամերիկյան մայա լեզվում բայի արմատը՝ միանալով սեռի ինդրի հետ՝ կազմում է բարդ բառ. ինչ.

šot «կարել» + če «փայտ»
šo(t)-če-n-ah-en «փայտ կարեցի»
(իրրև թե՝ փայտահատել). այսպես և ջուր քաշել և այլն:

Այժմ էլ հյ. ունենք ջրցանել (ջրջնել), փառատրել, դեղատվել, օրհնաբանել:

Բարդ բառերը բազկացած են լինում սովորաբար միայն երկու բառից, որոնցից երկրորդը լինում է միշտ գոյական կամ ածական. կարող չէ լինել գերանուն կամ անփոփոխ մասունք բանի. իսկ բայերից միայն ունենք բայարմատի ձևի տակ: եթե պատահի նախադրության կամ մակրայ, առնված է գոյականի կամ ածականի իմաստով. ինչ. քաղաքամեջ, ջրամոտ:

Ավելի հետո բարդության մեջ են մտնում երկուսից ավելի բառեր. օր. հյ. երկաթուղագիծ, աշխարհագրագետ, վիճակագրագետ, պրս. midādpākkun «առևտրական», գերմ. handwörterbuch «առձեռն բառարան» և այլն: Այս կարգի բառերը կոչվում են հարբարդ: Հարբարդի օրինակներ են հին լեզվից՝ արծաթափոխատու (ՄԽ). վերամբարձանաւ (Մծբ). մեծապաճուճալաշուք (Բուզ. 74): Ավելի ուշ՝ մերուճակներպախատուրյուն: Հն. λᾶλα-βαρυ-παραμελο-ρυθμυ-βάτος «նա որ շռայլակրատում է ծանրաբար ծուռ ու մուռ առանց հետևելու ոչ եղանակին և ոչ չափին»: Սանս. viṣa maçi latalaskhalitāmbunirghoṣaçravaṇasantrastamatsyaparivartana-

sanjanita çvetaphenasabalatarangaḥ мощная волна, покрытая белой пеной, порожденной метанием рыб, испуганных ревом воды, стесненной скалистыми берегами (Шор, язык и общ. էջ 13)։ Հնդեվրոպական լեզուների ընդհանուր սկզբունքն այն է, որ լրացուցիչը դրվի լրացյալից առաջ. այսպես է բոլոր պատկանողական և առացական բարդությանց մեջ. այսպես ծովեզր «ծովի եզերք», գանձատուն «գանձի տուն», πατρ-άδελφος «հորեղբայր», սանս. mātṛ-svasā=մորաքույր, լա. magn-animus=հյ. մեծամիտի, հսլ. čruno-vlasu=սևահեր և այլն, այսինքն նախ սևահարը, որ հատկացուցիչն է և հետո գոյականը, որ հատկացյալն է. նույնպես նաև ածականավոր բարդությանց մեջ. ինչ. հն. ἀκρόπολις=մայրաքաղաք, կամ սանս. adhara-hanūh=ներքնակզակ, գերմ. halb-insel=թերակղզի, ռուս. полуостров, նախ ածականը, որ լրացուցիչ է, և հետո գոյականը։ Միայն բայական բարդությանց մեջ հին լեզուներից ոմանք այս շարքը փոխելով՝ լրացուցիչը դնում են լրացյալից հետո. այսպես հն. φιλό-σοφος «իմաստասեր», բուն շարքով «սիրիմաստ», φιλό-λογος «բանասէր», բուն շարքով «սիրաբան». այսպես նաև վերև հիշված մյուս օրինակները՝ առնակրիտից ու գենդերենից։ Մյուս լեզուները, ինչպես նաև հայերենը, ընդհանուր կանոնը պահում են և բայական բարդությանց մեջ էլ լրացուցիչը դնում են լրացյալից առաջ, այն է գոյականը բայից առաջ. օր. ռուս. водо-возъ «ջրկիր», людо-едъ «մարդակեր», պրս. but-parast «կուապաշտ», hoqqa-bāz «ճաղարար», լա. lucifer=հյ. լուսաբեր, գերմ. wasser-träger «ջուր քաշող» և այլն։ Հին հայոց հունարան հեղինակները տեսել էին մեր լեզվի այս տարբերությունը՝ համեմատությամբ հունարենին և հունարենի տրիական հետևողությամբ կազմեցին սիրաբան (փխ. բանասէր) և նման ձևեր, որոնք հաջողություն չգտան։

Հայերենի մեջ երբեմն բարդ բառի երկու եզրերի շարքը փոխելով փոխվում է նաև իմաստը կամ ավելի ճիշտ իմաստի երանգը և գործածության տեղը. օր. պատվարժան և արժանապատիվ նույն բաներն են, բայց առաջինը գործ է ածվում աշխարհական իմբակցության համար (վարչություն, խորհուրդ, իմբագրություն, ժողովներ և այլն), իսկ երկրորդը՝ քահանաների համար։ Լուսաճոգի և հոգելույս միևնույն բաներն են, բայց առաջինը ժողովրդական ձև է և գործ է ածվում աշխարհականների համար, երկրորդը գրական ձև է և գործ է ածվում կրոնավորների համար։ Նույնպես՝ յուղածու և ձվածեղ։

Բարդությունը ձևացնող երկու եզրերի կցումը նախալեզվյան շրջանին լինում էր պարզ հարադրությամբ. առաջին եզրը ներկայանում էր իբր մի սովորական անվանական բուն և չէր կարող ընդունել արևէ հոլովական վերջավորություն. հոլովական վերջավորությունները կարող էին կցվել միմիայն երկրորդ եզրի վրա։ Այսպիսի հարադրությամբ պարզ բարդություններ ներկայացնում են մեզ այսօր էլ հյ. ծովեզր, գետափն, գերմ. kopf-weh «գլխացավ», պրս. but-parast «կուապաշտ» և այլն բառերը։

Անընդհատ տիպի բառերի մեջ առաջին եզրը վերջանում էր առարին առաիճանի ձայնդարձով, եթե բառը ունենար մի ձայնորդ, ինչ. հն. τρί-ποδ, սանս. tri-pa'd-, լա. tri-ped-, հանդլ. ðri-fe'te «հոսանուի», — սանս. nr-ha'n, ն. առատ. ἀνδρα-φόνος «մարդասպան», հն. δυσ-μενής, սանս. dur-manās, զնդ. duž-manah-, duš-manah- «չարամիտ» > պրս. dušman, հյ. փոխառությամբ՝ թշնամի։ Երբ բարդության առաջին եզրը բնավոր է, ձայնավորը լինում է o. ինչ. հն. ἱππό-δρομος «ձիարձակարան», հսլ. dobro-dějĭ «բարեգործ», ռուս. рукопись «ձեռագիր», կելտ. Ουινδο-μαγος «սպիտակամազ» (հատուկ անուն), գոթ. guda-faurhts «աստվածավախ»։ Այս o նմանությամբ տարածվեց նաև ոչ բուն բառերի վրա, այնպես որ հունարեն բառերի մեծագույն մասը բարդության մեջ ունի այս ձայնավորը, որ և համարվեց վերջապես բարդության հոգեկապ։ Այս o-ի տեղ լատինն ունի e, որ վերածել է i ձայնավորի։ Լատինը այս i ձայնավորից դուրս ուրիշ հոգեկապ չի ճանաչում, թեև հույնը հաղորդյուտ ձևով ունի նաև o-ից դուրս ուրիշ հոգեկապ (Henry. Gr, comp. gr, 186)։

Երբ բարդության երկրորդ եզրը սկսի ձայնավորով, երկու ձայնավորների հանդիպման պատճառով ծագում են դժվարություններ։ Երբ առաջին եզրը ածական է, ածականի մասնիկը ինչ էլ որ լինի, կարող է դառնալ i. ինչ. հն. εὐδι-άνειρα «ընչանավոր անձ» (ած. εὐδρος «ընչանավոր»), զնդ. bərəzi-čaxra «բարձր ճախարակներով» (ած. bərəzant- «բարձր»)։ Երկրորդ եզրի մեջ ձայնավորը լինում է o, մինչդեռ բառը իր անվան վիճակում ունենում էր e. այս օրենքի հետքերը պահում են դեռ լա. extorris «տարագիր», terra «երկիր» բառից, հն. φυσι-ζοος «ցորենով

արգավանդ», ζεά «ցորեն» բառից և այլն։ Սրանից է լ. velim nolim, velis nolis «ուզես չուզես» հակադրությունը։

Եթե երկրորդ եզրը սկսեր ձայնավորով, հնդեվրոպական լեզվի օրենքով այդ ձայնավորը երկարում էր։ Այս օրենքը պահել է, օրինակ, հունարենը. ինչ. παν-ήγυρις «առնական հանդես կամ հավաքույթ» (թրք. փանայիր), δυσ-ώνυμος «վատանուն», εὐ-ώνυμος «լավանուն» և այլն (Meillet, Traité 400)։ Բայց կարող էր սինն հոլովի տեղ գործածվել. օր. ունենք

ուղղական իմաստով ἰατρὸ-μαντις բժիշկ—հմայող,
սեռ. οἰνο-φύλαξ տան պահապան
տր. Θεο-*f*είκελος աստուծո նման
հյց. πτολί-πορθος քաղաքներ կործանող
ներգ. fun-ambulus յարախաղաց
գործ. mani-festus (ձեռքով բռնած) ակնհայտ

կարելի էր նաև դնել մի այնպիսի իմաստով, որ հոլովական ձևվերով կարելի չէ արտահայտել. օր. μελι-ηδής «մեղրի պես քաղցր». նույնպես հայերենի մեջ՝

սեռ. քաղաքապետ
տր. արեգակնանման
հյց. աշխարհաւեր
բաց. բնատուր
ներգ. քաղաքաբնակ
գործ. ծովագնաց (ընդ ծով)

Հայերենը բները չնջած լինելով՝ բնականաբար բարդությանց առաջին եզրը պիտի դներ ուղ.—հյց. հոլովաձևերով. այսպես են հատկապես՝

1) Բ-ականով կազմված բարդություններ. երկայրի, չորեք-կուսի։

2) ն, ր, ղ բնով բառերը. ձիռներեկ, հրձիգ.

3) երկար բառերը. երկայնամիտ, բայց՝ երկայնամտություն։

Կան նաև մի խումբ ուրիշ բառեր, ինչ. բանբ՝ր, խրատատու, բայց ամեն մի դեպքում չի կարելի հաստատել, թե սրանք նախկին բներից են (այսպես *բաններ>բաներ, *խրատատու>խրատատու), թե նոր կազմություն։

Ընդհանուր կանոնով, երբ երկրորդ եզրը սկսում է բաղաձայնով, հայերենի մեջ ներմուծվում է ա հոդակապը, որ հնխ. a բների ձայնավորն է. ինչ. այրաւերպ, միամիտ, երկայնամիտ։ Այսպիսով ա, որ բնի վերջին ձայնավորն է, դառնում է հոդակապ։

Հայերենի ա հոդակապի մասին երկու կարծիք կա. նախ այն, որ այդ հոդակապը առաջացել է ա հոլովման բնի ձայնավորից. օր. փառ, փառաց, փառասէր. երկրորդ. որ ա հոդակապը առաջացել է պարսկերենից փոխառյալ բառերի ազդեցությամբ. հայերենը պարսկերենից առնելով բազմաթիվ բառեր, որոնք կազմված էին պարսկական a հոդակապով, նրանց օրինակով կազմեց նաև իր բառերը։ Այսպես Մելիեն (Esquisse), I, տպ. էջ 71 համաձայն է հայերենի ա բնիկ, իսկ II. տպ., էջ 98 համաձայն է պարսկերենի ազդեցությամբ։

Այս պատասխանատու երեւույթը պետք է քիչ ավելի ուշադիր կերպով քննել, որովհետև բուն օրինի քերականական փոխառություններ լեզվից լեզու չեն կատարվում, մանավանդ այնպիսի մի տարբ, ինչպես է ա հոդակապը, որ իշխում է ամբողջ լեզվի վրա։ Հայերենի ամենահին բարդություններից են մեծատառ և մեկնել բառերը։ Սրանք ծագում են *միատառաց և *միամեկնել ձևերից, որոնք ունեն ա հոդակապը, բայց նրանց կազմությունը այնքան անճանաչելի էր և է, որ հազիվ թե ժողովուրդը գիտակցեր։ Կարելի՞ բան է այս դեպքում ա հոդակապը պարսկերենի ազդեցության վերագրել։

Հայտնի է, որ մասնիկները երկու կարգի են բաժանվում՝ կենդանի և մեռյալ. մեռյալ մասնիկով կազմված բառերը անշուշտ ավելի հին են, քան մյուսները։ Մեռյալ մասնիկ է -բիմ, որով ունենք միայն երեք բառ. հավատարիմ, ոխերիմ, մաերիմ.— Առաջինը արդեն հնության կնիքը կրում է. երկրորդը նրանից ավելի հին է, որովհետև ներկայացնում է հայերենի այն շրջանը, երբ դեռ բնի ձայնավորները ընկած չէին. ոխերիմ ներկայացնում է հին *ոխի-աբիմ ձևը, ուր իա միանալով ավել ե.— իսկ երրորդը՝ մաերիմ, ոչ միայն մեռյալ մասնիկով և բնի ձայնավորով (*մաի-աբիմ), այլև անհետ կորած *միաի արմատով ցույց է տալիս, որ այդ բառը պատկանում է լեզվի ամենահին շրջանին. այն շրջանին, երբ դեռ բազմաթիվ բառեր չկային պարսկերենից փոխառյալ, որպեսզի նրանց օրինակով հայերենի ա հոդակապն էլ փոխ առնվեր։

Վերևում հիշեցինք մեծատառ և մեկին բառերը, որոնք առաջանում են միատառաց և միակին հնադույն ձևերից։ Մեկն հա-

յագետը իր դասախոսությունների մեջ միշտ խոսում էր այն մասին, թե -ի վերջացող բառերը միավանկ լինելու դեպքում էլ միանալով ա հոդակապի հետ բազմավանկների նման տալիս են ե (գարեջուր, մեռասան): Մենք էլ վերևում նույն երևույթը ընդունելով՝ հիմնավորեցինք մեր կարծիքը ա հոդակապի ծագման մասին:

Բայց նկատելի է, որ թվականները բարդության ժամանակ հոդակապ չեն վերցնում, ինչպես երեքասան, չորեքասան, վեշասասան. մյուս թվականներից երկու և հինգ պահում են նախասասան. մյուս թվականներից երկու և հինգ պահում են նախաձայնավորը՝ երկոտասան և հնգետասան. Այս պարագային, ինչ իրավունք ունենք մեռասան և մենկի բառերը ծագած համարել ա հոդակապով և ոչ թե smia նախածանի a ընդից:

Այս բացատրությունը անշուշտ խանգարում է վերևում տրված բացատրությանը, բայց մտերիմ և ոխերիմ բառերը անխախտ Ձևալով, անխախտ են պահում նաև տրված բացատրությունը:

Կարելի էր մտածել, թե հնդեվրոպական o հոդակապը որևէ բառի մեջ հայերենում պահված կա. այս կետը իմանալու համար որոնեցինք ամբողջ ՆՀԲ և գտանք հետևյալ բառերը.

Գոլո(ր)շի, շոգոլի, խոլոմուկն, ամոխախ, ընդոծին, որոնք բոլորն էլ կասկածելի են: Գոլո[ր]շի և շոգոլի իրարից կազմված և անհայտ կազմությամբ բառեր են. այս երկուսի հետ նաև խոլոմուկն (համմտ. ճոլամուկ) կասկածելի է, որովհետև երեքն էլ ունեն նախորդ վանկում ո ձայնավորը, որ կարող էր ազդած լինել հաջորդ ձայնավորի վրա: Ամոխախ անշուշտ պարսկերեն է (հմմ. այսինքն մինենուշն կերակուրը (խահ) ուտող) և կարելի է կարծել, որ ո հոդակապը զննդերենի o հոդակապն է: Մնում է վերջինը՝ ընդոծին, գրված է նաև ընդածին և երկուսն էլ վկայված լինելով Մեսրոպյան շրջանից, ամենից ավելի վստահելի բառերն են: Սրանցից դուրս ունենք ջրոհոս (այլ բառով ջրհոս, կենդանակերպը) և ոդոշաղ (այլ բառով ոդնաշաղ), երկուսն էլ հետին կամ սեռականի ձևով և կամ դարձյալ ո-ից ազդված: Առանձնապես կարևոր է հիշել որոգայթ բառը, որ ամենք մեկնում են որ «մարդ» (համմ. որ-եար «մարդիկ») բառից+գայթել, այսինքն՝ մարդ գայթեցնող (Թակարդ):

Վերևում ասացինք, որ բարդության առաջին եզրը հոդակապի վերջավորություններ չէր կարող ընդունել. այսպես էր հնդեվրոպական նախալեզվի մեջ: Ավելի հետո առանձին լեզուները անկախաբար զարգացրին իրենց մեջ այնպիսի բարդություններ, որոնց մեջ առաջին եզրը ներկայացնում է բառի հոլովական մի ձևը: Օր. սանս. agré-ga-s «համբարկտ, որ գլխին է քայլում», լտ. aquaeductus «ագուդաց», հն. Πυλοι-γενής «ծննդյալ ի πυλος քաղաքի», νουν-εχής «իմաստուն» (νοῦς «խելք» բառի հյց. νουν), հալ. Bogu-milu «Աստուծուց սիրված», լտ. manufactus (manufactura) «ձեռքով շինված», respublica «հանրապետություն» (հանրային գործեր), նույնիսկ ֆր. oeil-de-boeuf, arc-en-ciel, tête à tête և այլն. հունարենում գրեթե բոլոր հոլովները կարող են մտնել բարդության մեջ (Henry, Gr. comp, gr. lt,, 182):

Այս կարգի բարդությունները կոչվում են շարահյուսական և երևում են նաև Մեսրոպյան հայերենում, ինչ. գայլոցակերություն, զմիմեանսզրկուբիւն, ընդմիմեանսարութիւն, ի միմեանսայր, միմեանցաւէր. ձերբակալ, բանսարկու, օրէնսդիր և այլն:

Հայերենի հակառակ ընթացքն է ցույց տալիս գերմաներենը. օր. հրգ. տաւմ էին beta-hūs «ազոթատուն», ուր beta գոյական է և նշանակում է «ազոթք». վերջին ձայնավորը ընկավ և beta դարձավ bet, որով բառը եղավ bethaus. այժմ սկսեցին մտածել ոչ թե beta գոյականի մասին, այլ. beten «ազոթել» բայի մասին:

Երբ առաջին եզրը հանդում է ի ձայնավորով, երկու ձայնավորների միացմամբ (իա) առաջվում է ե. ինչ. բարիագործ> բարեգործ, միայն միավանկ բառերն են, որոնց ի ձայնավորը չի տալիս ե. օր. ձիապան, թիավար, սակայն լեզվի հնագույն վիճակում այս ևս հետևում էր ընդհանուր կանոնին, ինչպես ցույց է տալիս մեռասան (այն է միա-տասան): Այսպես նաև մեկին, մեկնել (=*միակնել), մեկուսի (=*միակուսի):

Այս դեպքում ե և ո բնականաբար իրը ձայնավոր որևէ հոդակապի կարոտություն չունեն. ինչ. արագատն և ոչ թե արագատուն, ինչպես ունի ախալմամբ Համերի Իլիակ. Թրգ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 74: Նոր լեզվի մեջ ե և ո հնչվելով բառասկզբում չէ և վո, համարվել են բազմաձայն: Օրինակ գրում են հողմայերեր (ուզում է ասել հոգմերերը), Զարենց, Գիրք ճանապարհի, էջ 158:

Գրում են չարվորակ. բայց դա սխալ է, պետք է գրել չարաքակ, իսկ եթե որակ բառի վորակ հնչման են հետևում, այն ժամանակ պետք է ասեին չարավորակ, որովհետև վ բազմաձայներ ա հոդակապ է պահանջում:

Առողջ բառն էլ ամենք «գրագետներս» գրում են առվողջ, իբր թե հետևելով ժողովրդական հնչման։ Ճիշտ է, որ երևանի բարբառով ողջ բառը հնչվում է վողջ, և ժողովուրդն էլ կազմել է դրանից առվողջ, բայց միևնույն ժամանակ ամբողջ արևմտահայ ժողովուրդը հնչում է օխչ, որից էլ առօխչ. կրկնությամբ ասվում է օխչ-առօխչ։ Եթե հետևենք ո առաջ այս vo հնչման, այն ժամանակ պիտի գրենք և հնչենք չորքվոտանի, եռվոտանի, ինչոր շատ անհեթեթ է։ Դա նման է երգել և եփել բառերին, որ ժողովուրդը հնչում է կը եփէ, կը երգէ, բայց ոչ ոք չի գրում այդպես, այլ կերգէ, կեփէ։

Վերջերս սկսեցին դրել լեզվաբնտանիք. դա հայ ականջի համար անսովոր է։ Դա նման էր այն բաներին, երբ ասեինք դասարկներ կամ ճատաբետիր (փխ. դասընկեր, ճաստընտիր)։ Հայերենի բարդության օրենքով պիտի ասեինք լեզվընտանիք, բայց որովհետև այս էլ է խորթ, ուստի պետք է հրաժարվել այդ բարդություններից և ասել լեզվական ընտանիք։

Այսպիսի բառերը ոչ գրական են և ոչ ժողովրդական, ուստի գոյության իրավունք չունեն։

Հետևելով եվրոպական լեզուներին (և հատկապես այն բառերի մեջ, որոնց գոնե մի կեսը օտար է) հայերենի մեջ էլ դրվում է երբեմն ո հոդակապը. օր. էլեկտրոկայան, կինոնկար, ֆրանկոռուս և այլն։

Նոր գրական լեզուն ա ձայնավորը դնում է նույնիսկ ձայնավորով սկսող բառերից առաջ, ինչ. կիսաուշաթափ, ամենաանմիտ, կիսառասպելական։

Հների մեջ էլ տեղ-տեղ ունենք ո հոդակապը՝ մի խումբ հատուկ անունների մեջ. ինչ. Զորոփոր, Կողրոփոր, Ծորոփոր. բայց սրանք ձևռագրի Զորոյ փոր, Կողրոյ փոր, Ծորոյ փոր ձևվերից են, ուստի ո ոչ մի կապ չունի հոդակապի հետ. անձայն յ-ի ջնջումը պատճառ է եղել այսպիսի ձևերի ծագման։ Գրեթե նույնը կարելի է ասել նաև Անդոկարերդ և նման հատուկ անուններների համար, որոնք կարող են ոչ թե ո հոդակապով կազմված լինել, այլ առաջացած լինել սեռ. Անդոկայ բերդ ձևից (Հյուբշ, Հին հայոց տեղ. ան. 290)։

Կան ձևեր, որոնք գրաբարի մեջ երկու բառ են, բայց աշխարհաբարում միացած են և այլևս առանձին գրել սովորություն չէ։ Օր.

Ո՛հ, ակն ածիր առումածներից (Համերի Իլիակ., Թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 248)։

Նա դրված էր փայտակույտի մեջ տեղը (անդ 218)։
Հեկտոր երկու բանակների մեջ տեղն կանգնեց (էջ 91)։
Ինդուքյամբ բռնեց յուր նիզակի մեջ տեղից (էջ 91)։

Այս բոլորը սխալ է, կամ վրիպակ։ Այսպիսի բառերի ամբողջական ցուցակը տես այս գլխի հավելվածում։ Բայց ինչ էլ լինի, դրանք բացառիկ ձևեր են՝ ինչպես մյուս լեզուներին, նաև հայերենի մեջ, բացի սեռականից, որ բավական առատ է հայերենում. ինչ. ճորեղբայր, ճորաքույր, մորեղբայր, առճակին, գեղջավազ, գեղջիից և այլն։ Երբ բառը անեզական է, հոգնակիի ը նշանը ջնջվում է բարդության մեջ. ինչ. գիրք—գրասեր, երկինք—երկնամած, ձեռք—ձեռագործ և այլն։ Կան դարձյալ այնպիսի բարդեր, որոնց մեջ երկրորդ եզրը հոլովված կամ խոնարհված մի ձև է. ինչ. հն. ἐγχειρίξω «ընձեռել, հանձնել» (<ἐγχειρί ձեռքում, ի ձեռս), ֆրանս. enchaîner «շղթայել (en chaîne ի շղթայ), սանս. kiṃvadanti-s «ասարամայնություն» (<kiṃ vadanti ինչ են ասում)։

Վերացական բառերը չեն կարող կազմել բարդության երկրորդ եզրը. նույնիսկ հնդեվրոպական լեզվի մեջ -ter ձևով բառերը, որոնք ցույց են տալիս «այս ինչ բանը գործող» (nom d'agent), չեն կարող ծառայել բարդության իբր երկրորդ եզր. այսպես և հայերենի մեջ -ող մասնիկը. այս պարագային պետք է դնել բայարմատը. ինչ. բանասեր և ոչ թե բանասիրող. իսկ -ող ձևով բարդություններդ առնասարակ հետին են. ինչ. լրագրող, մատենագրող և այլն։ Այս հանգամանքը պատճառ է դառնում երբեմն նշանակության երկիմաստության, օր. գիր բառը բարդվելով մի ուրիշ բառի հետ՝ կարող է տալ թե «գիր», թե «գրող» և թե «գիրք» նշանակություններդ։ Լեզուն սովորություն է դարձրել այսպես կամ այնպես հասկանալու. ինչ. երկաթագիր, բոլորգիր, շղագիր և այլն բառերի մեջ գիր նշանակում է «գիր կամ տառ». պատմագիր, ժամանակագիր, տարեգիր, մատենագիր բառերի մեջ նշանակում է «գրող», իսկ օրագիր, լրագիր, ամսագիր, տեղեկագիր բառերի մեջ «գրված», «գիրք կամ գրություն». վերջին պարագային երբեմն դրվում է գիրք՝ շփոթությունից խուսափելու համար. ինչ. տարեգիրք, ճամփագիրք, աղոթագիրք։

Արդի հայերենում սկսեց վարանողական դրություն ունենալ բառերի ը ձայնի վերաբերմամբ. բարդության և ածանցման մեջ պահել այդ ը, իսկ ոչ։ Գրաբարից ավանդված բառերը անփոփոխ մնացին. ինչ. երկնային, գրավաճառ և այլն։ Բայց բոլորովին նոր բառերը պահեցին իրենց ը ձայնը. ինչ. ճանճրաբանություն, ճանճրաբան, ճանճրաբանական և այլն։

Մինչև անցած հին կամ հնացած բառերը երկրնտրանքի մեջ ընկան. օր. գրքավաճառ (Անիծեալն, Թրգմ. Մամուրեան, տպ. Զմիւռնիա, 1875, հտ. Գ, էջ 45)։

Գրքածախ (անդ, էջ 57)։

Նույնպես առարկան և բայական բարդությունները շատ անգամ անկի են տալիս իմաստի կողմից երկդիմություն. օր. արարչագործ նշանակում է թե «արարիչ» (արարչություն գործող) և թե «արարած» (արարչից գործված կամ արարչի գործը) և այս երկու իմաստով էլ գործածված է. մարդավճառ նշանակում է «մարդու վճառող, մարդուց վճառված կամ մարդու վճառ». մարդատար «մարդ տանող կամ մարդուց տարված» և այլն։ Այսպես և մյուս հին լեզուներում, ինչպես հն. ἀγνὼς «անծանոթ», նշանակում է թե «որ ծանոթ չէ, չգիտե» և թե «որ ճանաչված չէ» և այս բանը հասնում է մինչև հնդեվրոպական շրջանը։ Սրա պատճառն այն է, որ բայի բունը թե՛ ներգործական, և թե՛ կրավորական է։ Այս պարագային լեզուներից ոմանք օգտվում են առնից և առնի տեղափոխությամբ բառի իմաստն էլ որոշում. այսպես՝ սանս. rāja-putrá- նշանակում է «արքայորդի», իսկ rā'ja-putra- «նա, որի որդին արքա է, որ արքա որդի ունի». հն. πολυ-λόγος «շատախոս», πολύ-λογος «որի մասին շատ են խոսում, անվանի», πολύ-τροφος «շատ անված, պարարտ». իսկ πολυ-τρόφος «որ շատ անուն է տալիս, պարարտացնող»։ Շեշտի զանազանությունը հասնում է մինչև հնդեվրոպական նախալեզուն, ուր ուղիղ բարդերը շեշտը դնում էին երկրորդ եղրի վրա, իսկ առարկական բարդությունները առաջին եղրի վրա (Meillet, Traité 403)։ Հայերենը չունի այս առավելությունը և սովորություն է դարձած յուրաքանչյուր բառ որոշ իմաստով գործածելու. ինչ. մարդատար նշանակում է միայն «մարդ տանող» և ոչ «մարդուց տարված», իսկ ջրատար ընդհակառակը նշանակում է «ջրից տարված» և ոչ թե «ջուր տանող», կառավար «կառքը քշող» և հողմավար «քամուց քշված», ոչ թե «քամի քշող»։

Ինչպես էլ կազմված լինի, բարդ բառը դառնում է մի ամբողջություն և հպատակվում է պահանջված քերականական օրենքներին իր մի բառ առաջից կամ վերջից կրելով այդ փոփոխությունները. ինչ. անմարդասեր, մարդասերներ, մարդասերների և այլն։ Այս դեպքում, երբ բարդ բառի հիմնական նշանակությունը վերջին եղրումն է, հակառամարտանական ոչինչ չի առաջ գալիս. բայց երբ բուն նշանակությունը առաջին եղրումն է, ծագում են տարօրինակ երևույթներ. օր.

վառասիրտ— հգ. վառասիրտներ, ուր հոգնակին ձեռնհաս ընկել է սիրտ բառի վրա, մինչդեռ քան իմաստի վառ բառը պիտի լիներ հոգնակի։

Պրս. šikasta-dil «սրտաբեկ» (կոտրած սիրտ), հգ. šikasta-dilān «հատրած սրտեր»։

Պրս. toxm-i murγ «ձուն», որ բուն նշանակում է «սերմ հավի», հգ. toxm-i murγhā «ձվեր», որ բուն դառնում է «սերմ հավերի», մինչդեռ պիտի տային «սերմեր հավի»։

Ավելի կարևոր է նկատել այն, որ բարդությունը՝ լինելով մի ամբողջություն՝ ածականը չի կարող պատկանել բարդության միայն մի մասին. օր. կարելի չէ ասել ճանքային ջրավաճառ, իբր թե հանքային ջուր ծախող, գեղեցիկ գրավաճառ իբր թե՝ գեղեցիկ գրքեր ծախող։

Նմանապես, երբ ասում ենք ճորաձույլ ոսկեդրամ, պետք չէ հասկանալ «նոր ձուլված ոսկուց շինված դրամ», այլ «նոր ձուլված ոսկեղեն դրամ». ուրիշ խոսքով ճորաձույլ ածականը պատկանում է ոչ թե ոսկի եղրին, այլ ամբողջությամբ ոսկեդրամ բառին (կամ նույնիսկ դրամ-ին)։

Ածասվածներ— այս բառի մեջ -ներ դրված է ասված բառի վրա, ուր ամենևին դործ չունի. բառը նշանակում է «այն անձերը, որոնք ասված չեն ընդունում». ուստի նույնիսկ պատկասում է այն բառը, որի վրա պիտի դրվեր -ներ հոգնակի մասնիկը։

Եթե բարդ բառը ներկայացնում է մի ամբողջություն, բնականաբար պիտի ունենա մի շեշտ։ Եվ մենք տեսնում ենք, որ եթե բարդ բառը նախնական շրջանում պահում էր յուրաքանչյուր բառի շեշտը առանձին, ավելի հետո վերացվում է այս սովորությունը և բարդ բառը առնում է միայն ուժեղ շեշտ՝ հիմնական բառի վրա, ինչքան էլ երկար լինի բառը և քանի բառ էլ որ մասնակցած լինեն բարդության։ Այսպես, օր. առնս.

anyá-rūpa-s «այլակերպ», հն. ἀνδρο-γονος «արձևէգ», լ. magnanimus «մեծամտոդիթ», պրս. midād-pāk-kún «ոեսին», հյ, երկաբուղի, հոուս. путеводи́тель «ուղեցույց», նույնիսկ հն. Βατραχομυο-μαχία «գորտամկնամարտությունն» (անվանի պոեման) կամ վերոհիշյալ λαλο-βαρυ-παρα-μελο-ρυθμο-βάτος։ Իսկ թե ուր պետք է դրվի շեշտը, այսուհ առեղծվել են որոշ կանոններ գրաբարյան լեզուների մեջ։ Բացառական բայերը, որոնք նախավոր բարդություններ են, շեշտը առանում են բացառականի վրա. օր. առնս. á-dīrgha-s «ոչ-երկար», հն. ἄ-χαχος «ոչ-չար»։ Երբեմն էլ գտնում ենք տարբեր իմաստի համար տարբեր շեշտ, ինչ. վերոհիշյալ առնս. rā'ja-putra-s «որ արքա որդի ունի, որի որդին արքա է», rāja-putrá-s «արքայորդի, թագավորի որդի», πολύ-τροφος և πολυ-τρόφος։

Ավելի ուշ, լեզուներից ամենք սկսեցին բարդության յուրաքանչյուր եղրը շեշտել առանձին. այսպես, օր. գերմ. finger-hút «մատնոց», անգլ. néws-pàper «լրագիր» և այլն։

Հայերենը այ մի նման երևույթ չունի, և բոլոր տեսակի բարդերը շեշտում է պարզ բառի նման. ինչպես՝ աճառո'ւն, երկաթուղի' և այլն։

Ավելորդ է ասել, թե բարդ բառը, իբր մի ամբողջություն, պիտի դրվի միատար, առանց բաժանման. եթե մի որևէ ձևով նրա կազմիչ մասերը բաժանվեն, կատացվի տարբեր իմաստ. օր.

Մտածվում էր ուղարկել անգլիական թագավորին նոր ընտիր դեսպանի ձեռքով (Մօրթիր, Հայկ Բարայի արկածները, Թիֆլիս, 1905 թ., էջ 4).— պիտի լինի նորընտիր «նոր բնաբերված». իսկ այս ձևի տակ նշանակում է «նոր և ընտիր»։

Նա այժմ ինձ հրամայում է ձեռն ունայն վերադառնալ հայրենիք (Համերի Իլիակ., թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 102)։

Համարվեցան մեր հին ավուրց լրագրի շուրջը (Պռոշյան, Հուշեր, Երևան, 1940, էջ 110). պետք է հասկանալ հինավուրց. իսկ այսպես՝ նշանակում է «հին օրերի»։

Հին լեզուների համեմատություններից երևում է, որ բարդությունը հնդեվրոպական նախալեզվի մեջ բոլորովին ազատ երևույթ չէր։ Բարդության այնպիսի .ազատություն, ինչպիսին տեսնում էինք վերջին տարիներում փաստաբիտական կամ նույնիսկ դեկադենտական դրվածքների մեջ (օր. հրատապությունը կարճաոապատեցավ, այսինքն «առաջին հրատարակությունը կարճ ժամանակում սպառվեց»), չկար։ Նախալեզվյան շրջանի բարդությունը ընդունված և առատ էր գլխավորապես առնական հանդիսավոր խոսակցության մեջ, կրոնական ծիսակատարության կամ դյուցազներգական պատմության մեջ. այսպես է նաև հին հունարենում և սանսկրիտում. վեդայական հնդկերենը դասական հնդկերենից շատ ավելի սակավապետ է. բարդ բառերը վեդայականում սակավաթիվ և շատ ավելի կարճ են, քան սանսկրիտում. երկու բառից ավելի եղր ունեցող բարդերը շատ հազվագյուտ են, ճիշտ ինչպես հին հունարենում. լատիներենում բարդությունը շատ ավելի սահմանափակ է, քան հունարենում. հին սլավոներենում գրեթե բոլոր բարդ բառերը հունական թարգմանություններն են ներկայացնում և կրում են արվեստական բնույթ։

Հայերենը երկու բառով բարդության կողմից հարուստ է և ամեն տեղ, ուր որ հունարենը նման մի ձև է գործ բերում, հայերենը կարող է մրցել նրա հետ. օր. πρὸς τὴς σκληροκαρδίαν ὑμῶν ἐπέτρεψεν ὑμῖν ἀπολῦσαι τὰς γυναῖκας ὑμῶν ἀπὸ δὲ ἀρχῆς οὐ γέγονουτως, πρωτοκαθεδρίας ἠγάπησαν, συναναχειμένος ἐκεραύνωσεν, սակաւանդամ (Թիրեաքեան, Հայերէն-յուն., 177).

Նույնիսկ դեպքեր կան, երբ հունարենը երկու բառ է, հայերենը դնում է մի բարդ բառ. λίθον βολὴν- քարընկէց մի, φωνῆς μεγάλης- մեծաձայն, τῇ δὲ μιᾷ τῶν σαββάτων- բայց ի միաշաբաթուն, βραδεῖ τῇ καρδίᾳ- դանդաղսրտք, ἔχουσαν φύλλα- տերևալից (Թիրեաքեան, անդ 182)։

Սրանց հակառակ, արվեստական բնույթ է կրում հին հայերենի բարդության մի մեծ մասը. ինչ. դամբարանագործ, լուսաջահակիր, կայծակնանշանակ[1] և նման ճամարտակ բառերը, որոնցով հեղինակները ուզում էին իրենց գրվածքներին ուժ և ազդեցություն տալ։ Ժողովրդական լեզուն թե՛ հնդեվրոպական շրջանում և թե՛ հին լեզուների մեջ այս կողմից շատ ավելի չափավոր էր։ Բարդության մեջ գլխավոր տեղ էին բռնում հատկապես հատուկ անունները, որոնք սովորաբար բաղկացած էին երկու բառից և ցույց էին տալիս անձնական մի յուր հատկություն կամ աստվածային մի շնորհ. այս սոը շարունակվեց հին արիների, հույների, մինչև գերմանների ու սլավների մեջ. համմա. հն. Φίλ-ιππος «Փիլիպպոս, ձիասեր». Hippo-kra-

[1] Այս կարգի բառերի ցուցակը տե՛ս հավելվածում։

tēs «ձիու ուժ ունեցող» Νικό-λαος «Նիկոդայոս, ժողովրդանպաթ», Ἀλέξανδρος «Ալեքսանդր, մարդկանց պաշտպանող», առն. Açva-medhirah «որ ձիազոհ է արել», կելտ. Epōpennus «ձիագլուխ», հանդլ. Eo-mcer «ձիերով նշանավոր», հպրս. Aspa-čanah «ձիասեր», հբ. Bogu-milu «աստվածասեր», ռուս. Владимир և այլն: Իրանյաններից փոխառությամբ հյ. Վարազդատ, Տրդատ, Բագարատ, Միհրդատ, կամ նույն ճամբ՝ բուն հյ. Աստվածատուր, Աստուածատուր, Վարդես, Տիրատուր, Թեոդոսիկ և այլն:

Հաճախ դավակների անունը կազմում էին հոր կամ մոր և կամ մոտիկ մի ազգականի անվան մի եզրով, որից մի նոր բարդ բառ էին առեղծում. ինչ. հն. Διογ-κράτης որդի Διογ-κλῆς-ի, հրգ. Wald-bert և Wolf-bert որդիք Nram-bert-ի. երբեմն էլ եզրեր շատ տարով էին նոր անուն կազմում. օր հն. Ἀνδρό-τιμος, τίμ-ανδρος (Brug, Abr, § 380): Լատիններեը ջնջել են այսպիսի բարդ հասուկ անուններեը (Meillet, Traité 393):

Այսպիսի անուններեը ունեին նաև իրենց ժողովրդական-փաղաքշական ձևերը, ընտանեկան գործածության մեջ, ինչ. հն. Ἱππίας, Ἵππυς, Ἵππυλλος, հյ. Շաղիկ, Ասո, Ծառուր և այլն: Համաձայն այսպիսի երբեմն անունների ամբողջական իսկական ձևերը հայտնի չեն:

Սրանցից դուրս կային նաև մի բառից բաղկացած անուններ, որոնք նույնպես մի անձնական հատկություն էին հայտնում. ինչ. հն. Κεφάλων= լտ. Capito, հն. Ετρόβων (շիլ) և այլն:

Բարդության կազմից արդի լեզուներն էլ բաժանվում են երեք խմբի. սեմական լեզուները բարդել չգիտեն, բարդությունը նրանց մեջ նոր երևացած երևույթ է. ամենք ամենևին չեն սիրում բարդել. այսպես են ֆրանսերենը (մանավանդ արդի լեզուն), Թուրքերենը, մոնղոլերենը, սեմական լեզուները, բանասեր լեզուները և այլն: Ռուսական ցիգաններենը խիստ քիչ բարդ բառ ունի: Ուրիշներ գտնվում են միջին և չափավոր աստիճանի վրա և ունեն բավականաչափ բարդություններ՝ երկու բառից բաղկացած. այսպես են ռուսերենը, պարսկերենը, անգլերենը, իտալերենը և այլն: Իսկ առնկրիան ու գերմաներենը գտնվում են ծայրահեղ աստիճանի վրա և կազմում են ազատորեն բազմաթիվ բառերից բարդված երկար երկար բառեր: Շվեդերենի մեջ սեռականը հաճախ բարդությամբ է արտահայտված, այնպես որ լեզուն լիքն է բարդ բառերով, որոնցից շատերը մինչև իսկ

բառարանների մեջ չեն մտնում: Լավ բարդող լեզուների կարգին է պատկանում և ճապոներենը, որ ի միջի այլոց ունի մինչև 4 բառով հարադրություն. օր.

umare- toši- çuki- hi
ծննդյան տարին ամիսն (ու) օրը (Plaut 307)

Սովորական է իրար հակառակ բառերի բարդությունը. ինչ.

ši-maç (սկիզբը և վերջ) «գործի բոլոր հանգամանքները»
kami-šimo (վերև ներքև) «ամբողջ մարմինը»
yoši-aši (լավ ու վատ) «բրակ»
dai-šō (մեծ ու փոքրը) «ամենքը»

Ձախ բարդություններ ունի վոտյակերենը, ուր մինչև 4 բառ կարող են իրար միանալ. այս շատ ազատ բարդության պատճառն այն է, որ քերականական կապեր բառերի մեջև հաճախ պակասում են և երկուսը միասին բարդ բառ են համարվում. բարդություններ կան նաև բայերի հետ, ինչ. մեղրաքայլել, սպիտականձրևել և այլն (Емельянов, Гр. вот. яз., §§ 58—62):

Հայերենը նույնպես թեև շատ հարուստ է բարդության կողմից, բայց պահում է չափավորության. երեք բառից կազմված բառերը, ինչպես ասացինք, արդեն սակավաթիվ են և մեր ճաշակով խորթ են համարվում: Այսպես, խորթ է ճանապարհաշինարարություն (երեք բառից բարդված), որ այժմ գրված է հրապարակի վրա, մինչև շատ ավելի տանելի պիտի լիներ ուղեշինություն, երկու բառից: Այսպիսի երկու բառից կազմված բարդներից էլ նրանք, որ արդյունք են համարատակ գրողների եռանդի, ջնջված են արդի լեզվից. մյուսները, որ կյանքի պահանջների համեմատ առեղծված ձևեր են, մնում են և հետզհետե ավելանում:

Նոր գրողներից էլ ոմանք շատ սեր ունեն բարդելու. օր. Ե. Տեմիրճիպաշյանը իր «Գրպանի բառարան ֆրանսերեն լեզվի» աշխատության առաջաբանում պարծենում է, թե 10.000 բառ է կազմել և մուծել այդ բառարանի մեջ: Լուսինյանն էլ իր ֆրանսահայ բառարանը լցրել է բազմաթիվ նորակերտ բառերով, մեծ մասամբ ավելորդ. ինչ. դերձակամկրատ, մկրատապատյան և այլն:

Այս կողմից նշանավոր են հատկապես արեմտահայ գրողները. արևելահայ գրողները այնքան նոթասեր չեն։ Բայց այստեղ էլ կան բացառություններ. օր. Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուր» (Երևան, 1935) շատ հետաքրքրական վեպի մեջ գրանում եմ հետևյալ նորակերտ բարդությունները.

արծաթապայծառ 173
լուսամուտափեղկ 32, 34
դարբասափեղկ 21
երկաթավանդակ 34, 35, 37, 50
աղբյուրագլուխ 173, 181, 189
աղյուսափոշի 139
պայծառադեղին 40
քառամբակող ձի 172
պանակատպան անել 150

Մեր լեզուն այսպիսի նորություններ չի սիրում։

Ածանցումն ու բարդությունը շատ է զարգացած ամերիկյան լեզվում. օր. pisim «արեգակ» բառից՝

pisimokkân «ժամացույց»

pisimokkanikkawew- «ժամացույց է շինում մեկի համար»

pisimokkanikkakewin- «ուրիշի համար ժամացույց շինելու գործողություններ»

ayamih «խոսել, աղոթել» բայից՝

ayamihewattik աղոթում է

ayamihewattik «խաչ» (աղոթքի միայն)

ayamihewattikonamawew «խաչակնքում է»

ayamihewattikonamasuw «ինքն իրեն խաչակնքելը» (Lacombe, էջ 4)։

Ուրիշ լեզուներ էլ սիրահար են բարդության, օր. Օվկիանյան տախիթի լեզուն պետք եղած դեպքում, առանց կապակցության, բառերը շարում է իրար կողքի։ Օր. տախիթի կղզում ձի չկար. երբ եվրոպացիք այդ կենդանին ներմուծեցին այդ կղզին, տեղացիք տարբեցին puaa horo fenua (անասուն—վազել—երկիր), որ է «ձի» բառը (Senac, էջ 19)։

Բարդության կողմից մեր բարբառներն էլ մեծ տարբերություն չունեն գրաբարից. սրանց մեջ հարաբարդ ձևերը խորթ,

իսկ պարզ բարդերը շարունակում են իրենց գոյությունը, ամանց մեջ ասակավ, ինչպես օր. Գոլթի բարբառում, իսկ ամանց մեջ ավելի մեծ չափով, ինչպես է օր. Ղարաբաղի բարբառը, ուր գրանում ենք հարյուրավոր նոր բարդություններ, որ չկան գրաբարի մեջ կամ ուրիշ բարբառներում։ Այսպես օր, հում բառից կազմված են՝ պղնձահոտ, ժանգահոտ, ոսկրահոտ, խնձորահոտ, տանձահոտ, քահոտ, մկնահոտ, մահոտ, ձկնահոտ, հոգահոտ, փոշահոտ, յուղահոտ, կծծահոտ, եփշահոտ, շմփշմփահոտ, շնահոտ, ծաղկահոտ, խնձորահոտ, թթվահոտ, սամիթահոտ, կանաչահոտ, երաշտահոտ, առահոտ, թահոտ, կծվահոտ, տապդեղահոտ, հացահոտ, ըրբծահոտ (այրածի հոտ), քոլախնձորահոտ, քոլատանձահոտ, մոշահոտ, թութահոտ, կնձիճնձուկահոտ, սխտորահոտ, քացախահոտ, գինահոտ, շմաթահոտ, սերկևիլահոտ. հումահոտ, քյոմյուրահոտ, մինչև անգամ արևահոտ, այն է՝ արևի մեջ փռած շորից եկած սխորժելի տաքուկ հոտը։ Նույնպես հում բառից ունենք. հոգսահամ, մածնահամ, ջրահամ, փոշահամ, կրկժահամ, հումահամ, պղնձահամ, ժանգահամ, ոսկրահամ և այլն.

Բարդության կողմից առանձնապես արտոնյալ վիճակ ունի գիտական լեզուն, մանավանդ քիմիան, որ ազատորեն բարդում է ամեն տեսակի բառեր, առանց նույնիսկ չափ կամ սահման դնելու նրանց թվի մեջ։

mèthyle- èthyle- propyle- amyle- ammonium,
nitrosopentameé thyltriaminotriphénylcarbinol,
naphtosulfonique- azo- diméthoxybiphényle- azo- naphtolsulfonique.

Ջավայերենում կա մի տեսակ բարդություն, որ ձևով բարդություն է, իմաստով կրկնություն. այսինքն՝ բոնում է բարդության և կրկնության միջին տեղը.— երկու բառ, որ միևնույն նշանակություններն ունեն, բարդում են իրար հետ, որով առաջանում է իմաստի աստիճություն. օր. sukâ «երջանկություն», pirənnò նույն նշանակությունը, բարդությամբ՝ suk·a-pirənnà նշանակում է «մեծ երջանկություն» (Bohatta, Gr, jav, 36)։

Բարդությունը լեզվի բառակազմության լավագույն միջոցներից մեկն է. առանց բարդության կամ պետք է բաց անեինք բառերը, կամ նոր արմատներ հնարեինք, կամ պետք է բառը նոր մանեկներով խճողեինք և կամ վերջապես օտար լեզուներից բառ փոխ առնեինք. օր. նավապետ, կայարանապետ, ճաշարանա-

պետ, խոհարարապետ, գրագարանապետ, ուսուցչապետ, դասապետ, դպրապետ, դիվանապետ, ատիկանապետ, քաղաքապետ, ժողովրդապետ, գյուղապետ, գանձապետ, արհեստապետ, բժշկապետ, վաճառականապետ, գնդապետ, վաշտապետ, զորապետ, գերատոհմապետ, և այլն և այլն այնպիսի կարևոր բառեր են, որ անհրաժեշտ են լեզվին և նրանց փոխարեն «նավի գլխավոր վարիչ, կայարանի գլխավորը, ճաշարանի վարիչը և այլն» բավական անհարմար են։ Հետաքրքրական են, օրինակ, արևմտյան կովկասյան լեզուներից կարաբուլիներում մեր արմատական բառերի դեմ հետևյալ ձևով բարդություններ.

ʒa-k'e *միրուս (=ագի բերանոյ)*
na-p'e *դեմք (=աչք ու քիթ)*
ne-p's *արցունք (=աչքի ջուր) և այլն*

Բարդությունը լեզվի մեջ միջոց է սեղմ ու կարճ բառեր ունենալու, որով խոսքը դուրս է գալիս ավելի ամփոփ և իմաստը ավելի ցայտուն. համմտ. հետևյալ հայտվածը բարդ բառերով և առանց բարդությունների.

Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջ՝ձգանգուր, խայտակն և հասատարգուկ,— ասում է թե այս Հայկը գեղեցիկ պատշաճավորություն ուներ մարմնի, կազմը լավ էր, մազերը լավ գանգուր էին, աչքերը խատուտիկ, իսկ բազուկները՝ հաստ։

Կամ եթե ուզենայինք ավելի հատարակ մի օրինակ տալ.

Շոգենավերի երթևեկության ժամացուցակը,—շոգիով-շարժվող նավերի երթալու և գալու ժամանակը նշանակող ցուցակը։

Բարդ բառերի պակասը երբեմն ուրիշ անպատեհության էլ է տեղիք տալիս. որ.

... առաց հատատրեզ, կարճահասակ, լիքը կարավանատան տերը խեղդվելով իր գեր վրի մեջ։ ... խոնարհվեց կրկին կարավանատան տերը (Թեմիրճյան, Վարդանանք, Ա. 239)։

Կարավանատան տերը չունի բարդ ձև. ուստի լիքը և կրկին ածականները կարելի է առնել կարավանատան մասին և ոչ թե տիրոջ։ Այսպիսի դեպքերում բնականաբար պետք է աշխատել որևէ ձևով խուսափել երկիմաստությունից. օր. կրկին խոնարհվեց կարավանատան տերը։

Այն լեզուները, որոնք չունեն բարդություն, ստիպված են զանազան միջոցներով խուսափելու այս անախորժ և երկարաբան ձևերից։

Բարդ բառերը մի ամբողջություն են կազմում. կարելի չէ այլևս նայել նրանց վրա իբր տարբեր կամ անկախ մասերից կազմված բառ. այս պատճառով մասնիկ կամ վերջավորություն կցվում է նրանց վրա՝ մի անգամ և պատկանում է ամբողջության և ոչ թե այս կամ այն մասին։ Այնպիսի երևույթ, ինչպես, այրուձի կամ այրևձի, սեռ. առևձիոյ, անսովոր է լեզուների մեջ և հատկապես հայերենում։ Այս բանը երբեմն հասցնում է մեզ անտրամաբան դարձվածների. ինչ.

Անբարեացակամ, անպարտաճանաչ, անհամապատասխան և նման բառերի մեջ ան բացասականը պատկանում է ոչ թե բարեաց, պարտք, համ բառերին (իբր ան-բարեաց, անպարտ, անհամ), այլ կամ, ճանաչ, պատասխան բառերին, «իբր բարիք չկամեցող, պարտականություն չճանաչող, նույնին չպատասխանող»։

Հորաքույրս, մորաքույրս, հորեղբորորդիս բառերի մեջ թեև ս առացական հոդը դրված է քույր և որդի բառերի վրա, բայց ոչ քույրն է, իմս և ոչ որդին, այլ հայրն ու մայրը. այսինքն պիտի ասեինք հորս-ա-քույրը, մորս-ա-քույրը, հորս-եղբոր-որդին, ինչպես պիտի ասեինք, եթե բարդ բառը քանդեինք և իր մասերին վերածեինք։

Նմանապես պրս. toxmi murɣ «ձու, հավկիթ» թեև բարդ բառ չէ, այլ հատկացուցիչ և հատկացյալ (իբր «սերմ—թռչնոյ»), բայց երբ վերածվի հոգնակիի, լինում է toxmi-murɣ-hā «սերմ հավերի» և ոչ թե toxm-hā-im-urɣ «սերմ-եր հավի», ինչպես նշանակում է իրոք, որովհետև այստեղ ոչ թե հավն է հոգնակի, այլ նրա ածած «սերմերը» (տես վերը)։

Սրանց ճիշտ հակառակը, երբեմն էլ բարդ բառը դեռ մի ամբողջություն չի կազմում և բաժանվում է ամեն մի եզրը առանձին։ Այս կարգի սակավաթիվ բառերից կարելի է հիշել մինչդեռ, մինչչև, մինչև և նմաններ, որոնք եթե դուռ բարդ բառեր լինեին, իրենց ի ձայնավորը պիտի կորցնեին։

Քննարկենում բարդությունը ուրիշ հետաքրքրական նպատակների էլ է ծառայում.

1) Որովհետև շատ բառեր բազմաթիվ նշանակություններ ունեն, ուստի երկու համանիշ իրար հետ են միացնում, որով երկուսը իրար համար որոշիչ են դառնում և երկիմաստությունը վերանում է.

čï[2] «հիմանդություն» + ping[4] «հիմանդություն» = čï[2]-ping[4] «հիմանդություն».

xu² «տղվեա» +li² «տղվեա»=xú²-li «տղվեա».

2) Երկու մանավոր դադափարների միացմամբ առացվում է ընդհանուր դադափարը.

ti⁴ «փոքր եղրայր» +çiuŋ' «մեծ եղրայր»=ti⁴-çiuŋ¹ «եղրայր»
čie³ «մեծ քույր» +méi⁴ «փոքր քույր» =čie³-mèi⁴ «քույր»

3) Բազմաթիվ իմաստներից մեկը որոշելու համար.

p'iŋ² նշանակում է «հավասար, հարթ, խնձոր, շիշ, վազ, տղաղույց, համեմատ և այլն», իսկ եթե բարդենք kuo³ «պատուղ» բառի հետ, p'iŋ²-kuo³ կդառնա անշուշտ «խնձոր»։

(Seidel, Chin. gr. 44—45)։

Չինարենի նման է նաև սիամերենը, որ երկու հոմանիշներ իրար հետ բարդելով ճշտորոշում է իմաստը. իրը թե հայերեն ասեինք ուղեմարգ և հասկանայինք «ճանապարհ»։ Միևնույն ժամանակ, սիամերենը, իրրև ազգատիպ լեզու, բարդություններով հարստացնում է իր բառապաշարը. օր. աչքի ջուր «արտասուք», փայտի տղա «պտուղ» (Wershoven, էջ 38)։

Այս կարգի բառերին նման է հյ. ջերմուանդ, որ մի կողմից dvaṁdva է, մյուս կողմից երկու հոմանիշների բարդում (իբր՝ տաքցոց—դողցոց)։

Մի դեպք կա, երբ բարդությունը կարող է տեղիք տալ թյուրիմացության. բայց այդ էլ միայն երեք կամ ավելի բառերով բարդված բառերի մեջ։ Այդ թյուրիմացությունը հետևյալն է. քանի որ գիտենք, թե ինչքան էլ շատ բառերից կազմված լինի բարդությունը, միշտ ներկայացնում է երկու բառերի դումար, մենք չենք կարող որոշել, թե օր 1+2+3 ձևի բարդության մեջ, 1+2 միացած են 3-ի հետ, թե 2+3 միացած են 1-ի հետ։ Այսպես՝ հեռագրավաճառ նշանակում է «հեռու տեղեր գիրք ուղարկող և վաճառող անձ, հեռվի գրավաճառ», թե «հեռագիր վաճառող»։ Երեքն էլ կարող է լինել։ Այսպիսի թյուրիմացություններ կարող են ծագել հատկապես գերմաներենի մեջ, ուր բազմաթիվ բարդություններ խիստ շատ են, իսկ հայերենը ընդհանրապես չի ընդունում նման բառեր։

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Հաջորդ էջերով տալիս ենք հավելվածական տեղեկություններ և ցուցակներ բարդության մասին, հետևյալ կարգով.

ա) Առանց հոգնակիի բառեր
բ) Հոլովյալ ձևով բարդ բառեր
գ) Երեք և ավելի բառերով բարդություններ
դ) Առանց սղման և ամփոփման բարդություններ
ե) Կրճատմամբ կազմված բարդություններ
զ) Ն-ով բարդեր
է) Նախդիրով և նախամասնիկով կազմված բարդեր
ը) Այլ հոգնակերով բարդեր
թ) Անկանոն բարդություններ

Ա) ԱՌԱՆՑ ՀՈԳՆԱԿԱՊԻ

Նշե-ից քաղելով հավաքում ենք այստեղ այն բոլոր բարդ բառերը, որոնց մեջ բացակայում է հոգնակապը։ Այս բառերի մի մասը անշուշտ շատ հին է և պատկանում է հայ գրականության ամենահին շրջանին. օր. ակնկոր։ Բայց հայերենի շատ նոր շրջանում էլ հոգնակապի սղումով առաջացան նույն ձևով բառեր, այսպես՝ արդի բարբառներով ասում ենք. փորկապ, մեծխօսիկ, փորլից, մեծքիր, ծուռքիր և այլն։ Այսպիսով երկու ձայրերը միանում են. այնպես որ՝ հնարավոր է միշտ կասկածել, թե առանց հոգնակապի բառը ուշ ժամանակի գրչության արդյունք կարող է լինել։ Մենք այս հարցի մասին քննություններ չենք կատարում, այլ տալիս ենք այս կարգի բառերի այբուբենական լիակատար ցուցակը։ Երբ բարդ բառը երկու ձևով էլ կա, միասին հիշում ենք։

Երբ բառի երկրորդ եղրը սկսվում է ձայնավորով, բնականաբար հոգնակապ չի դրվում. այսպիսի օրինակները չենք հիշում, ինչպես՝ ամենօրհնյալ։ Երբ բառը ա ձայնավորով է սկսվում, երկու ա-ի փոխարեն միայն մեկը, ինչպես ամենամպարիշտ, ամենազգի։ Սակայն նոր լեզվի մեջ այսպիսի բառերը ա հոգնակապը պահում են և երկու ա հանդիպում են միասին, առանց մեջտեղում յ ձայնը ընդունելու. ինչպես՝ ամենաանգուր ամենաանմեղ, ամենաարգար, ամենաանաչառ, ինչպես նաև ուրիշ

ձայնավորների մոտ. ամենաերջանիկ, ամենախմաստուն, ամենաուրախ և այլն։

Թև հնագույն հայերենում հոդակապ չկար, սրա ամենալավ ապացույցը կարելի է համարել այն բառերը, որոնք չափազանց հին են և աննայրին է երևակայել, թե երբևիցե նրանք հոդակապ ունեցել են։ Այս կարգի բառերի մեջ ամենալավ օրինակն է այժմ բառը, որ առաջացել է այսժամ կամ նույնիսկ յայսժամ ձևից և չափազանց շատ գործածական բառ լինելով, գրկվել է ա–ից (երեք երբեք ուներ) և ա–ից։

ազատքեղ	*անձն[ա]գիւր*
ականջկիկիտ	*անձնկամակ*
ականջկրկիտ	*անձն[ա]հաճ*
ակնբացել	*անձնյարգութիւն*
ակնկատոյց, ակնակատոյց	*անձ[ա]պուրծ*
ակնթարթ	*անձնասիրութիւն*
ակնկալել	*անձն[ա]տուր*
ակնկոր, ակնակորիկ	*անուան[ա]դրութիւն*
ակնհաճո, ակնահաճո	*անունդրութիւն*
ակնհար	*առաջիկայ=առաջակայ*
ակնյայտ	*առաջիկոգմանէք*
աղպէտ, աղապէտ	*առաջինեղուկ*
աղուաշ, աղուաշ	*առաջճանապարհ*
աղհայք «աղուհայց»	*առատմտութիւն*
աղջուր, աղաջուր	*առընթերդրութիւն*
աղքատ[ա]սիրութիւն	*առողջ[ա]մտութիւն*
ազօթ[ա]կեր	*առունկնճառ*
ազօթ[ա]ւոր	*աստուածգիտութիւն*
ամենափիւռ	*աստուածխօսութիւն*
այլակրեն	*աստուածյայտնութիւն*
այլ[ա]գունակ	*աստուածպաշտութիւն*
այլատարագարար	*աստուածպատուութիւն*
այծքաղ	*աստուածպետական*
այպն[ա]կատակ	*աստուածսիրութիւն*
այսբար «այսպես»	*աստուածտեսութիւն*
անդրէն[ա]դարձութիւն	*արդար[ա]մտութիւն*
անձն[ա]հաճոյ	*արդհարաւունք*
անձն[ա]տէր	*արդվատնական*
անձն[ա]գովութիւն	*արյանհեղութիւն*

արեգջեր	*բագձաձեմ*
արե[ա]ցայթ	*բազէկիր*
արևկայ	*բազմբոհչտ*
արևմայր	*բազումժամանակեայ*
արևմուտք	*բանբեր=բանաբեր*
արևշատութիւն	*բանագիտություն=բանգիտութիւն*
արև[ա]պաշտ	
արիւն[ը]առչտ	*բանկայ*
արիւնքար	*բանհոգ*
արծաթասիրութիւն	*բանսուտ*
արծաթքաղցութիւն	*բառգիրք*
արվեստագիտութիւն	*բարձիրարձ=բարձրաբերձ*
արուեստասիրութիւն	*բարձրմտութիւն=բարձրամտութիւն*
արջնդեղ	
արջտակ (բույս)	*բարձրպարանոց = բարձրապարանոց*
արտհունձ	
արքայկաղնի	*բարձրվզել=բարձրավզել*
աւելհոգություն	*բարսգիտութիւն*
փիկից	

Թեև *բառը* ընդհանրապես առանում է ա հոդակապը, ինչ. *բացակայ, բացատրել, բացագլուխ, բայց առանց հոդակապի են բացբարձումն, բացբերան*

բացխփիկ	*դեղնդեղ*
բացկացեալ	*դի[ա]թաւալ*
բենկորճ	*դիպկից*
բիճհայեաց	*դիտապատառ*
բուրվառ?	*դիւր[ա]հաւան*
բոնխէթք	*դիւր[ա]վատնելի*
բրդգզեալ=բրդագզեալ	*դոյզնաժամանակեայ*
գարճիլ	*դռնբաց=դռնաբաց*
գայլխառ	*եղբայրսիրութիւն*
գունդասազար	*երագմտութիւն*
գունդխազ	*երգեհ[ա]ատութիւն*
դրպակաս (ձիլատ)	*երեսպաշտութիւն*
դեղդիր	*երեստեսու*
դեղ[ա]թափ	*երեսփոխան*

երեք թվականը թեև կարող է ա հոդակապով կապվել, բայց շատ ավելի են առանց հոդակապի բարդությունները. ինչ. երեքթզեան, երեքդանգեան, երեքքառեան, երեքքաղաքեան։

երկարժամանակեայ *երկայն[ա]մտութիւն*

Երկու թվականն էլ թեև մեծ մասամբ երկա ձևով է բարդվում (օր. երկակոդմանի), բայց կան նաև առանց հոդակապի ձևեր. օր.՝ երկրայիմ, երկրաո, երկրացիկ, երկրոյս, երկգլուխ, երկդիմի, երկդրամեան, երկթեւեան, երկմտեմ, երկպառակութիւն և այլն։

երկրպագել

Եօթն ունի թե՛ ա- հոդակապով և թե՛ առանց հոդակապի բարդեր. ինչ. եօթնածին, եօթնգիսակ, եօթնկաշեան, եօթնճառագայթեան, եօթնճրագեան, եօթնպատիկ և այլն։

զանազանատած
զուարթ[ա]մտութիւն
զարդխուռմ
զեղծմտութիւն
զինչպէս
զինչպիտակէն
զինչպիսի
զրպարտել
զօրհանապազ
ընդդէմդարձութիւն
ընդդէմյանդիմման
ընծայբեր=ընծայաբեր
ընկերհաշտութիւն
ընկերսիրութիւն
ըսըմբդարկ
թագ[ա]կապութիւն
թաղ[ա]նար

թավալ[ա]գլոր
թավդատել (բռնադատել)
թերխորով, թերխոս
թողիք լինել
թոյլտուութիւն
ժուժկալ
իննիգեան, իննհարուածեայ, իննպատիկ...
ինքնյայտնապէս, ինքնյատուջածութիւն, ինքն[ա]հօժար
իշխանախրակեան
իշխան[ա]սիրութիւն
յայնաերեւ
լափլեզ, լափլիզող
լիբերան?.= լիսբերան
լծնրարձ=լծաբարձ
լուանթագ
լրջ[ա]միտ
լրտես, որ և՝ լրուտես
խաղտեար=խաղտեար
խայծկեր
խաշնգեղ, ճակնդեղ, մկնդեղ կապնդեղ
խաչ[ա]վերաց
խաչգիւտ
խաչկրօն=խաչակրօն
խաչհանու=խաչահանու
խառն[ա]խօսութիւն
խեթկալ
խեկրեկս
խեղ[ա]կատակ, խեղտեսակ
խեղճմիտք, խեղճմտութիւն, խղճմտութիւն
խեցրեկ
խեցգետին
խեցխեղեփ
խժդուժ=խուժադուժ, խժդրժութիւն
խծրիծ, խծրծել
խնդրուեղ «անհարթ տեղեր»
խոզանատեւ
խոզկապին
խոլխեցգետի[ն]
խոխկեր=խոհակեր
խոխկերութիւն
խոյգդոլութիւն (խոյ գոդանալ)
խոնարհ[ա]մտութիւն
խոտորկուտք
խորան[ա]յարկ
խրատ[ա]տու
ծառայ[ա]վաչելուչ
ծուներգրութիւն
կաթն[ա]կեր
կայծքար
կանթեղխոտ
կանոնդրմունք (կանոնադրքի հավելված)
կաշմբուռն
կապծագ
կապնդեղ
կապրցախ
կարճժամանակեայ
կարճմտութիւն (= կարճամտութիւն)
կեղցաւ
կէսսարկաւագ=կիսասարկաւագ
կիրակմուտ=կիրակամուտ
կոյգկապ
կովծուծ=կովածուծ «մոդես»
կովկիթ (կով կթող)
հաղարտեբեւուկ
հակառակքրխտոս (անտիքրխտոս)
համառեալ

հայդաւան=հայադաւան
հայխունկ, հայկաւ
հանճարդիտութիւն
հապճեպ
հաս[ա]կոտոր, հասկաւոր
հասկտաւ=կտաւատ
հարթհամասարութիւն?
հարթ[ա]յատակ
հարիւրթևրթի
հարան[ա]մատն
հարցփորձ=հարցափորձ
հացկատակ
հացկերոյթ
հաց[ա]կից
հացհատեմ
հացմիջուկ
հացտուր
հացքուլեփ
հաւկիթ, ձկնկիթ
հաւձագ
հաւ[ա]պատիր
հաւտուն
հաւփալ
հաւքաջ=քաջհաւ
հինգկանգնեան
հինգկրկին
հինգհնգեան
հինգշարաթի
հինգտերևեան
հինգքառաք=հնգաքառաքք
հինժամանակեայ
հոգատարութիւն=հոգաւորութիւն
հոգվարք
հոյկապ?.=«գաբմանիչ»?
հուրրակ «աւրուշան»
հօրքոյր
ձագիծոնեայ, ձագիտուտ
ձայնդարձ
ձարխուտ
ձեռնրեկ
ձեռն[ա]գրութիւն
ձեռնթափ
ձեռնկալ
ձեռնհաս (երև. նորերը ասում են՝ ձեռնհասուս)
ձեռնձգութիւն
ձեռնպահ
ձեռնտու (երև. նորերը ասում են՝ ձեռնհատու)
ձիլախուր (ձիալախուր)
ձորձմոյկ
ճանկխոտ
ճարտարլեզուութիւն
ճարտարմտութիւն
ճարտար[ա]մտել
ճոխճեմեալ
ճոխսիրութիւն=ճոխասիրութիւն
ճրագ[ա]յոյց
մազկոինչ=մազակոիչ
մազմանոց, իբր՝ մազամանոց
մահտարաժամ
մազասկիթ
մամ [ա]կալ
մայր[ա]պետ
մայրփայտեայ
մանմուտ
մատրամանն
մատնտու
մատն[ա]ցոյց
մարգճախին
մարգպետ
մարզպետ
մեծգիտակական «քաջահմուտ»
մեծակայաղօր
մեծվայելչութիւն
մեռե[ա]յարոյց
մերկ[ա]պարանոց
մէգմուղ=մթամուղ
մխտան
մինչդեռ, մինչչեւ
մոգպաշտէ
մոգպետ
մորթա[ա]խտութիւն
մոպին
մտացծնոյց
յայտերեւութի
յայտյայնդիման
յանձնկալութիւն
յառաջգիտական, յառաջգիտութիւն,
յառաջխոպացութիւն, յառաջասարկաւագ, յառաջանստութիւն...
յարդդող=յարդագող
յարտեւական
յար[ա]կայութիւն
յեղկոյս
յետ[ա]ձիաց
յետադարձութիւն
յիսունժամեան
յոռնկացութիւն
հատակ[ա]մտութիւն

յառաջբերական, յառաջգալուստ, հօժար[ա]մտութիւն
նախգիտական, նախգիր, նախդիր, նախծին, նախկրթականք=նախակրթութիւն, նախհաշտութիւն, նախպահպանութիւն, նախատեսութիւն

նանիրխոսութիւն
նաւմարձութիւն
նաւմարութիւն=նաւամարութիւն
նեղ[ա]սրտութիւն
նոյնբանութիւն
նոյնժամայն
նոյնհնտայն
նոր[ա]հաւատ
շանախաւր, շանփին=շնփին
շատ[ա]խօս
շատժյռ
շատ[ա]կերութիւն
շրջծակ
շնկխարէ, շիկխարէ

շնխաղող
շնկնճիթ
շնմոլութիւն
շնյարկ
շնջրի
շուրջբնացուցանել
շուրջգունել
շուրջծիրանացեալ
շուրջճանապարհ
շալեղ
շրջմոլիկ
ոզնդժնեայ
ոզնտես
ողջ[ա]մտութիւն
ոսկրկուլ

ոսնբեկ, ոսնդատոյց, ոսնխիթ, ոսնկայ (յոսնկայս), ոսնկոպ, ոսնկացութիւն, ոսնկելիք, ոսնկոխ, ոսնտար, ոսնփոխ, ոսնքայլել

Որ անորոշ դերանունը միշտ զուրկ է ՅՈՒմ հոդակապից, ինչպես՝ որպէտ, որզոն, որզան. (ՅՈՒացյալը ան կգուՅՈՒեր չարքում)։

Ուր առանում է ա հոդակապը. ինչ. ուբամասնեայ, ուբանիսա, կամ առանց հոդակապի, ինչ. ուբբեւեան, ուբկանգնեայ, և կամ՝ և -ու շաղկապով, ինչ. ուբուառաս, ուբեւառաս։

ուղիղհաւաճ
ուղղափառհաւատ
ումպէտ
ունկնդիր
ուրկայ «գանված տեղը կամ բանը», որից՝ ուրկայութիւն

չարխօրհրդութիւն
չար[ա]կամ, չար[ա]համբաւ
չարհոտ
չափ[ա]հասակ
չափչփտութիւն

չորեք, չորեքգլխեան, չորեքգրամեան, չորեքժամանակեան, չորեքթեւեան, չորեքկուսի, չորեքշաբաթի (չկա ա հոդակապով բարդ)։

չորրորդ[ա]պետութիւն
չորքթիդ
պագնեղ
պատկանդարան?
պատկողանոց «գնավի ողնափայտ»

պարզկայ
պարզմիտ=պարզամիտ, պարամայր
չահլուցութիւն
չանգհեծ (թևերևս՝ չանգ, հեծ)
չերմ[ա]կալ

չուբ.— շատ անգամ ա հոդակապով (չըա-), բայց նաև անհոդակապ, ինչպես՝ չրթեր, չրթուղխ, չրգեա, չրչգնաց, չրգող, չրդեղել, չրթափել, չրժողով, չրխնդիր, չրխոտ, չրխոց, չրկայ, չրկիր, չրհան, չրհեղ, չրհեղեղ, չրհեղձ, չրհոս, չրհոր, չրմխել, չրմոյր, չրմուղ, չրշեղջ, չրհորդան, չրվէժ, չրտուլ, չրտունչ, որոնցից մի քանիսը լինում են նաև ա հոդակապով։

ամիկապաս
առաւժամանակեայ
սինկքեալ, սինկքոր
առյնպիսի
առւսխօսութիւն, առւսկերպարանեան
սրրկեր
սրտկեղ, սրտհեշտութիւն, սրտամիտ, սրտանեղիլ, սրտցաւութիւն

վաղժամանակեան
վաղ[ա]հասուկ
վաղցասուցիկ
վակքաղ
վայր[ա]թերել
վատ[ա]նշան
վատ[ա]շուէր
վատ[ա]տոհմակ
վեց, վեցաւ— օրինակ՝ վեցքանակ, վեցաչափք, վեցքրլեան, վեցքեւեան, վեցձեռնի...
վեցասկարգութիւն
վրէժխնդիր, վրէժխնդրութիւն

տաղտարափ=տեղատարափ
տանտէր
տանտիկին

տաս, տասն.— տասնարանեայ—տասնրանեայ, տասնագրամեան=տասնդրամեան, տասնապատիկ=տասնպատիկ...

տեղհար=տեղահար «երկար շղթ»
տիկտեասակ
տնկից, տնպահ, տնտես
տուրտուութիւն
ցախսարեկ
ցամաք[ա]կղզի
փայտ[ա]բեր, փայտկոփութիւն
փայտիսորիկ (նոր բառ)
փոստ[ա]բանական
փորձ[ա]պետ
քաջբանականութիւն
քաջ[ա]հաճոյ, քաջ[ա]մտութիւն, քաջնաւահանգիստ=քաջ[ա]նաւահանգիստ
քաջվայելչութիւն
քառասրբեան

քարբեկ, քարխոտ, քարկոթող, քարկոծել
քար[ա]գործ, քար[ա]կուռ, քարկոփ, քարհատ
քաժբոր
քաղհանել (քաղհանք)
քաղցկեղ=քաղցրկեղ
քարձգութիւն=քարաձգութիւն
քարմարցանկ
քարքաշ?
քոյրդիր
օտարթիրադոյն
օտար[ա]ազանութիւն
օրէնզանցութիւն
օրհաս
օրհասարակ

Բ) ՀՈԼՈՎՅԱԼ ՁԵՎՈՎ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

ՆՀԲ-ից քաղելով դնում ենք այստեղ այն բոլոր բարդ բառերը, որոնց առաջին եղրը բառի ուղղական հոլովը չէ, այլ որևէ մի հոլովյալ ձև. այս կարգի բարդերը երկու տեսակ են. առաջիններըզուրկ են հոդակապից. ինչ. զմիմեանցզրկութիւն, զայլոցկերութիւն, իսկ երկրորդներըունեն նաև ա հոդակապը, ինչ.՝ ձերբակալել:

Առաջին հերթին դնում ենք սեռականով կազմված բարդությունները, որոնք ամենից ավելի են։

Ադամայածին, ադամածին (ինչպես կա նաև՝ ադամայականաց=ադամական)։

ականատես և այլն
աղբերակն
աղբերահոս
աղախնայել (փխն. աղախնել, երևի աղախնայ ձևով սեռականից)
ազնիորդի (Առաք. պտմ., երևի ազն բառի սեռական ազնի ձևից)
անկանարոթ (բլթակ)
անկաստեղ
անուանա—....
աշնանային=աշնային
աշնանաբեկ
աշնանաուռնկ
առնաբար, առնազէն, առնակին...
ասղանագործ=ասեղնագործ
աստեղա...=աստղա
արեանագին
արեանապարտ
արեանաուռ
արեանարբու
արեանեբանգ
արեանհեղութիւն
արենազանգ
արենաթաթաւութիւն
արենաճեմ
արենապարտ
արենաջուր
արենհեղութիւն
ափազափի
բարեացապարտ
բարձուանդակ=բարձրանդակ
բնութենակիր, բնութենակից
գարնան... օր.՝ գարնանամուտ
գեղջաւագ, գեղջերէց
դիցազն (դիւցազն), դիցախառն
դիցակրօն
դստերագիր=դստրագիր
դրացսպաս
եղբօրորդի, եղբօրասպան
եղջերաբոյս, եղջերագեղ, եղջերուս, եղջերուաքաղ...
եռեղակալ, եռաղապահ...
երիցօրեայ
զայլոցկերութիւն
թագաւորացարար
թագմանական
թաւերախաղք
թաւերասիրութիւն
իւրեանցակուս, իւրեանցանման
իւրեանցասարաս
լերանցամէջ
ծովեզերակայ
կայսերագիր, կայսերակերպ, կայսերազարմ...
կանանցարարոյ, կանանցածին...
կենացածին=կենածին
կենացունարեր «կենսաբեր»
կենց=փխ. կենաց, ինչ. կենցական, կենցաղ...
կնոջածին, կնոջական, կնոջաչէր
կողինապատիր? (Եւայի կողմից խարխոծ) հմմտ.
կողմանակալ=կողմնակալ
հոգնցաուռ
հօր.— հօրածին, հօրամոյն, հօրաքոյր և այլն
ձկանակեր=ձկնակեր
մահուչափ
մեղացածին

մեղուակն, մեղուաքաղ, մեղուղոյզ...
միականի
միակողմանի
միաձեռանի=միաձեռն
միամօր
միմեանցասէր
միոտանի
մտացաթել
մտացածին, մտացերար
մտացծնոյց
մօրաքոյր
մօրեղբայր
նմանօրէն (իբր թէ՝ նմանից*օրէն)
նոտոյտեղի
շուն..., շան..., օր.՝ շանաճանճ, շանսիրտ, շանփին
ոտանաւոր=առնաւոր
որդան (կարմիր)
որմզորմայն
չարեացապարտ
չորեքթեղուանեայք
չորսոտանի=չորքոտանի
սանդիտոռն=սանդատոռն
պարզիոտային
սերմանակորոյս
սերմանահան, սերմանամատոյց, սերմանարկու, սերմանացան, սերմանաքաղ, բայց և՝ սերմնակաթ, սերմնակէր, սերմնահան, սերմնացան... ինչպես և՝ սերմանալ, սերմակրել, սերմահեղութիւն և այլն
սիրայիսնունդ?=սիրասնունդ (ինչ լինելը անհայտ)
երիվնաեղիփին (արական)
վազերաձի
վանացկէց
վարդիձէթ
տանուտեր, տանտիկին
տէր, տեառն— օր.՝ տեառնաբար, տեառնամատոյց, տեառնեղբայր, տեառներնգատաջ...
փրկութենագործ=փրկութենագործ
քաջառնաբար
քեռայր, քեռորդի=քորոջդի

Այս բառերի շարքում կարելի է ավելացնել նաև ծնկուչափ (մինչև ծունկը), ցախիճան «ցախի փայտ»:

Հայցական

առ-աչս-երեւութիւն
ափս-ի թերս
ափս-զափի
բանս-արկու
բարս-գիտութիւն
երէս-որս=երէսորս
զայլ-ա-զրկութիւն, զայլ-իմաց, զայլ-ա-խորհ
զօր-հանապազ
ընդ-ունչս-արկու
ժուժկալ (իբր թէ՝ զոյժ-կալ)
կենս- փոխանակ՝ կեանք, կեանս, ինչ. կենսաբաշխ, կենսաբեր, կենսածին...

կից-ընկէց «քացի ուղղ» ձեռ-ի կապ
մեղս—մեղս-աբեր, մեղսածին
մխիթան-անկութիւն, մխիթան-զրկութիւն, զմխիթան-զրկութիւն, զմխիթան-կալութիւն, զմխիթան-ա-սէր, զմխիթան-ունակութիւն, զմխիթան-ապանութիւն, ընդ-մխիթան-հարութիւն։
մեղս-ամակարդ, մեղս-ա-սէր...

չ-մեղս, չք-մեղս
չորս-տանի
պարս-մայր (մեղու)
օրէնս-ա-տու, օրէնս-գէտ, օրէնս-դիր
օրհնութիւնս-ընկալու

Նախդրիվ հայցական

ան-ի-բաց-բառնալի
ան-ի-բաց-դնելի
ան-ի-դուրս-ելանելի
ան-ի-կապ-գալի
ան-ի-մի-կոյս-ք̔աւալ
առ-ի̔ք̔աւալ
առ-ի̔ք̔ափ
առ-ի̔կողմն
առ-ի̔կողեալ
առ-ի-յապայ
ափս-ի-ք̔երս
բացէ-ի̔բաց, ի բացէ-ի-բաց
բացուստ-ի բաց
ի բաց-ընկնիլ
ի միմեանս-ա-յար
յայսմ-աւուրք
յանձն-ապատամն, յանձն-առակաս յանձն-արարել
յանձն կալութիւն
յառաջի-կայ
յափս-ի ք̔երս, յափս-ե̔ք̔երս
յետս-երեակի, յետս-ընդդեմ, յետս-դարձու̔թիւն
յինքն-ա-քարշումն
յուղ-արկել
յոռն-կացու̔թիւն
յու-կամ, յու-պէտ
յուշ-ա-բերիլ, յուշ-արար
ի նմանայքն, ի նմայքն
չ-ի մէջ (որ չէ ի միջի)

Բացառական և պատճառական

առ-ի ներքոյ
բացէ-ի բաց, ի բացէ-ի բաց, հետ-զհետէ
մի-բան-մի-ոջէ
յայնմ-հետէ, յայսմ-հետէ, յօրմէ-հետէ
վեր-ի վերոյ

Գործիական և պարառական

Այնուդունակ, այնուհետև, որովհետև, այսուհետև (ք̔ե այնու և ք̔ե այսու գործիականի կորած ձև է նաև

հետև, որ առաջանում է հնխ. pēdebhi. ճիշտ նույն կազմությունը ունի որովհետև, որի երկու եզրերն էլ գործիական են)։

անզմտաւածելի
առանչո̔թիւն
իմով-անն
ձերբ-ազատ, ձերբ-ակալ (գրված կա նաև՝ ձեռբակալ)
մեօք-ա-կերպ

Ին

Հոլովյալ ձևերի մեջ ք̔իում է, ք̔ե պետք է հիշել այն բարդ բառերը, որոնք կազմվում են -ին մասնիկով։ Ահա սրանց ամբողջական ցուցակը.

Անվայրենափակ (դուռն՝ անվայրափակ), կողինաւոր, ւիւք̔եղինագուարթ (տապաչափինների կողմից շինված բառ, փոխանակ հիւք̔եղինագուարթ), հրեղինա... (մի քանի բառեր այս ձևով), մատինայօրին «մատով հորինված», մաքրինաճեմ, յոփինաճեմ, յոփինընթաց, նարդինահոս, նոյինաստաստ, շառաւեղինաշնորհ, ոսոխինակոտոր, ուղխինահոս, ոսոխինախառն, սօսինաթաց, վհինաճեմ, տնկինագործ, փողփողինէջ, փ̔ք̔ինագարդ, փայփինատաւար, փաղփինափայլ, քաջնափայլ, քոյինագործ (քոյին ձևով կա 8 բառ), օձինաշարժ։

Հայտնի չէ այս -ին մասնիկի ծագումը. կարելի է բացատրել 4 ձևով։ 1) համարել և հոլովման երկրորդ ձևը, որի համար հմմտ. մատինայօրին, որ հայտնապես կազմված է մատան-ա-ւոր. մատին ձևից։ Սրան ապացույց կարելի է համարել երփն առ երփին զգոյնզգոյնն բառը, որ բուն նշանակում է երփը երփին (գույնը գույնի մոտ)։ Բայց եթե այսպես է, ինչու ի ձայնավորը ազված չէ։ 2) կարելի է համարել կազմված -ին մասնիկից, ինչպես ունենք լուսին, երրին, չնչին, ամենայն և այլն։ 3) կարելի է համարել եղյն մասնիկի ամփոփյալ ձևը, որին ապացույց են հրեղինա... հիւք̔եղինագուարթ։ 4) կարելի է համարել (բայց այս միայն մասնավոր դեպքերում) իւ-ն մասնիկի ազյալ ձևը. այսպես են փաղփիւնափայլ, նարդինաոհս (արմատը՝ նարդիւն), փաղփինափայլ (հմմտ. փաղփիւնափայլ)։

Բայց այս 4 ենթադրություններից ոչն է ուղիղ։

Գ) ԵՐԵՔ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՌԵՐՈՎ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

այլազանցաուակ
այսրանդրագարձութիւն
աշխարհավարդապետութիւն
թեւաարձակել
արուեստաննարագործութիւն
բազմակամարակապ
բազմահնարագէտ
բազմանշանականապէս
երեկանիրնասէր
երկնամիջոցակէտ
երկշարավանկ
երփնագանագեղ
եօթնաձանկին
լուսաջահակոց
խաւարթանգարդել
խոյրագակագարդ
ծաղկաւարտակիւնալ
ծայրաւորմոզութիւն
կոնաձևապէս
հասարակիմակայ
հարձորդէգիր
հեշտախառնել
հոսանահոլովաշարժ
հրալուսաճաճանչագեղնութիւն
հրեշտականմանապէս
հօրաքեսորդի
հօրեղբօրորդի
մեծաագանչելաշուք
մեծակայազօր
մերակերպունակ
մերանակերպախառնութիւն
միխաեսակապէս
միխաեսակագոյն
մշանջենաւորակցապէս
մօրեղբօրորդի
յածեզածի
յայտյայտնիմանակաց
յարաշխատոլոր
յոգնագանգունակ
նախախորհրդագէտ
նախատահմանադրութիւն
նաւացոկավար
նորափառախնդիր
շուտափութաշարժ
շրթնաշղթայաշար
շրջաբերաձև
շրջածգուցիկ
շքեղազարդափայլ
ոսկեհուսագարդ
ուղղափառհաւատ (Բուզ.)
չարագործարաշխ
չարախառակ
չարախօսակից
չորեքտասանալուսնեայ
պարտախաթափ
պղծագործախօս
ջոկագատակարգութիւն
ջրամզահոս
սաղարթաճեմափթիթ
տաւերատածակերպել
մարդապաշքաղ. գրված՝ վարդապաշքաղ, վարդապայնքաղք
վերամբարձադնաց
վերամբարձհան, վերամբարձայաժու
վերգրկարարձիկ
վերնագրաքաժայր
տասնաւեբացօյց
տարտարտարօս
տիեզերատահմանակալ
փոխատեղծակերպել
քաջաժուժկալութիւն
քաջանաւահանգիստ
քարանձաւամուտ

Այս բառերի մեծագույն մասի «բազմաբարդյուն» հեղինակն է «շաւտաճոռոմախոսարան» Թեոդորոս Քրթենավորը և, երկրորդ շարքի վրա, Գրիգոր Մագիստրոսը և Գրիգոր Նարեկացին։

Նոր լեզվի մեջ կազմված են երկուսից ավելի բառերով բարդություններ՝ կյանքի պահանջների համաձայն

հեռագրալար, հեռագրատուն
հեռագրասյունաշարք
յրագրավաճառ
քաղաքատնտեսութիւն
անտեսագիտութիւն
երկաթուղագիծ
բացօթյագ
օդերևութաբանութիւն
աշխարհագրագետ
ազգագրագետ
հեռագրալար
ապրանքաշրջանառութիւն
օդանավակայան
վիմատրատուն

Գ) ԱՌԱՆՁ ՍՂՄԱՆ ԵՎ ԱՄՓՈՓՄԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարդութեան և ածանցման մեջ սղումը և ամփոփումը ընդհանուր են։ Եղած բացառութիւնները հետևյալներն են.

ակումբտոյլ (փխ. ակմբատոյլ)
անդրէնագործութիւն
անկիրընդունակ
անորիշութիւն
անուննագործութիւն
անուննագրել
անուննագրութիւն
անփոյթաբար
պիտականունութիւն, յարանունութիւն=յարանուանութիւն
աշխոյժութիւն=աշխուժութիւն
առաքինի, առաքինանալ
առոյգաբարձ, առոյգանձն, առոյգանալ...
արթունագնաց
արևնուտային
բազումժամանակեայ
բազումդողրմ
բազումանուանութիւն
բազումանութիւն
բարեացապարտ
բուքանկիւն=բթանկիւն
բուռնալիր=բռնալիր
գանգուրագեղ=գանդրագեղ
գաբունաթեր (Ագաթ.)=գաբնանաթեր
գէրութիւն=գիրութիւն
գիղամայ?
գիրթող (գիր+թող)
գոտելած «ավելորդ»
գունդաապար, գունդխապ
գ[ի]րկընդխառն
գայե[ա]կորդի
դէպուդիպ, դէպվերոյ
դէտակն
դիւա... ինչ.՝ դիւահար (իբր արմատը լիներ դէւ)
դղեակապարիսպ
դոյզնաբար, դոյզնագիւտ, դոյզնժամանակեայ
դուստրիկ
երդ[ու]ճասիրութիւն
երեկանիրնասէր
երէցեկրայր
երէցութիւն=երիցութիւն

երիզ... տալիս է մի խումբ բարդ ձևեր առանց սղման, բայց ըստ իս բառն է երէզ, որից ածանցվում են այս բոլոր բառերը (ավելի ընդարձակ տես Աբմ. բռ.)։

գէնըննկէց
գոյգանուն=զուգանուն
գոյգերկնային=զուգերկնային
դուրավաստակ=դրավաստակ
էշայծեամն
եմպելիքախառնոց (Վրք. Հց.)
ընդդէմդարձութիւն=ընդդիմադարձութիւն
ընդհանուրապիւռ
թոյլ=թուլ. ինչ. թոյլգոյն թոյլանդամ, թոյլաառարագ, թոյլասուիթիւն,
թոյրաթուխ
թուղթագրել
ժիրաժիր
ինքնուրոյնաբար, ինքնուրոյնութիւն
ինքնօբէնութիւն=ինքնօբինութիւն
լեառն,... և լեռնա... լեառնադէտ
լոյսանուն
լոյսընկալ
լոյսիջոյց
խանութպան
խար[ի]սխաձև
խարտեշագոյն=խարտիշագոյն
խուժադուժ, խուժգուժ
խիտաառագարթ
խիտաերախ=խոտերախ
խոյրագործ, խոյրագիր, խոյրարար
խուժախուժմբ, խուժան...
խուներդմնական
խուներդմնական=խնկեղէգն
խուռնախիտ, խուռնաառագարթ, խուռներամ, խուռնընթաց, խուռնճաղանջ
ծաղիկընձիւղ
ծիրային (ծիր բառից)
ծուներդրութիւն=ծնրադրութիւն
կապոյտերանգ
կաց[ու]րդիլ
կեամաառարագ=կեմաառարագ
կեանաարեր=կենաարեր
կեանագգեաց=կենագգեաց
կէսէշ=կիսէշ «ջորի»
կէսաարկաւագ=կիսաարկաւագ
կիրթերաան
կիցընթաց
կիցընկէց, կիցընկէց
կճեայարկ (կճեայ հարկով)
կոյրարար=կուրարար
հանգէսահասակ, հանգէսակար
հենախաղաց=հինախաղաց
հինամեայ=հնամեայ, հիննաւանդ=հնաւանդ
հիմն միշտ պահված, օր.՝ հիմնադիր, հիմնարկել...
հինգ կամ հնգ. օր. հինգապատիկ=հնգապատիկ, հինգամեայ=հնգամեայ
հողագոյնակն=հողագունակ
հունաւոր
հուրաատաց
հ[ու]րընկէցութիւն
ձեղունահանք, ձեղունանամ
յախուռնախօս
յամոյրանմման
յիսունժամեան
յուսուբ[ու]կունք=յուսաբուկունք
նախիղձիկք=նախըղձիկք
նանրխօսութիւն
նեարդապատ=ներդպատ, նեարդատեսակ,
ներհուն, ներհունանալ, ներհունութիւն
ներքին, ներքինի, ներքինանալ...
նժոյգաձիգ

Նոյն. երբեք չի ամփոփվում, ինչ.՝ նոյնաղգի, նոյնգունակ, նոյնաձեւ և այլն.

շամբ[ու]շութիւն
շառաւիղազարդութիւն, շառաւիղուղէշ
շաուռաասուիթիւն
շեկխարի=շիկխարի

շուրջ, որից՝ շուրջարնակ, շուրջանակաւ, շուրջանակի, շուրջառ, շուրջբնացուցանել, շուրջգունել, շուրջընթացք, շուրջծիրանացեալ, շուրջճանապարհ. քեև կա նաև շրջ- օր.՝ շրջան, շրջել, շրջագայիլ և այլն։

ոսկեհուռազարդ
ուղիղհաւաճ (փոխանակ՝ ուղղահաւաճ)
ուշիմութիւն
ուսուիճականն=ուսուիճական, ուսմբնական
ուսուիճասէր...
ուրոյն, ուրոյնանալ, ուրոյնութիւն
ուրուկ, ուրուկանալ=ուրկանալ
պախուցաթափ
պարոյկացեալ
ջուրաութէք, ջուրաութոյց,
ռամիկապաս
ռեսխնական
սահիրական
սեաւամագձութիւն, սեաւական
սէրարիփ
սինեալ «սնացած» (այսպէս, թերևս չշփոթելու համար սնեալ «սնված» բառի հետ)
սինլքեալ, սինլքոր
սուխնաւոր=սունաւոր (սրնաւոր)
սուղ, սուղանուրջ, սուղասական, սուղիշխանութիւն (փխ. սղ-)

սուտ, սուտակասպաս, սուտամեռուկ, սուտանուն, սուտերդմնութիւն, սուտխօսութիւն...
սուբ, սուբաղէն, սուբակն, սուբակոխ, սուրիմաց
վարագոյրաձիգք=վարագուրաձիգք
վէմաճաոական, վէմատաշ=վիմատաշ
վիրգահան (իբր՝ վրգահան)
վրէժառութիւն=վրիժառութիւն
վրէժխնդիր, վրէժխնդրութիւն
տանուտէրաբար, տանուտէրական,
տանուտէրացոյց, տանուտէրութիւն
տարօրէնութիւն
տեառնա, օր. տեառնեղբայր, տեառնամայր...
տէգընկէց
տէր, տէրունի, տէրունավայել, տէրունատուր...
տժգոյնութիւն=տժգունութիւն
տիկտեսակ (փխ. տիատեսակ)
տնօրէնութիւն
տուրուտութիւն
ցցունազարդ
փոխարէնատրութիւն
փոփողէնէզ
փոյթ, փոյթեառնդն, փոյթատգ...
քաջօրէնագոյն, քաջօրէնութիւն
քէնահատոյց=քինահատոյց
քէշակարկատ
քոյրաթիւ, քոյրդիր
օրէնադիր, օրէնազանց

ե) ԿՐՃԱՏՄԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Երբեմն բառի վերջին ձայնավորը բարդության ժամանակ կարող է կրճատվել. հատկապես ի ձայնավորը, որ սովորաբար միանալով ա ձայնավորի հետ տալիս է ե, շատ անգամ էլ հոդորդ ձայնավորի մոտ ջնջվում է. այսպես և ածանցներում: Ահա դրանց ամբողջական ցուցակը:

աբեղաթաղ
աբեղութիւն
բարութիւն
մոլութիւն
ածելել
ամայի
ամայութիւն
ամեհաբար
անկարելագոյն
անճոռնացեալ
անպատուութիւն=անպատուութիւն
ապականագործ=ապականէգործ
ապականատարազ
առաքինաբար...
արգասալիր
արծաունգն
արքազունք=արքայազունք
արքակաղին=արքայակաղին
արքակօրոյս, իբր՝ արքայակօրոյս
արքազատակեր
արքունա... (արքունաշէն, արքունատուր)
վարժնականիշ (փխ. վարուժնականիշ)
փեսեղբայր
փիլիսոփապետ=փիլիսոփայապետ

զ) Ն ՈՒՎ ԲԱՐԴԵՐ

Գիտենք, որ այն բառերը, որոնք ունեն և վերջավորություններ (ինչպես՝ ձուկն, կաթն և այլն) բարդության և ածանցման մեջ պահում են այս և ձայնը. ինչ. ձկնորս, ձկնավաճառ, կաթնկեր, կաթնեղէն: Աշխարհաբարում թեև բառերի ծայրից այս և ձայնը ընկավ, բայց բարդության և ածանցման մեջ մնում է. ինչպես գրաբարում, նույնպես և աշխարհաբարում ասում ենք ձկնորս, կաթնեղեն, թեև մեզ համար բառն է ձուկ, կաթ:

Սակայն գրաբարում պատահում ենք նույնիսկ հին բառերի, որոնք զարմանալի կերպով դուրս են ն-ից:

Ընդհակառակը, կան բառեր էլ, որոնք ավելորդ ն ունեն: Ահա այդ երկու կարգի բառերի ցուցակը:

Աղբախումբ (Բուզ.)
անդամենաւորիմ (ընդհակառակը՝ ունի ն)
անձեռոց
առատմատան
առատմացել
առատմացի=առատմացի
արեգնապաշտ
արիւնաքեալ
բերդնորդ
եառնղալից=եառնդնղալից
թափառնակի
իշնապէս (էշի պես)
լծնարձ=լծարարձ
լուսնթաղ (եթէ լույս բառից է)
լրթնաստեաղ
խոտորնակ
ծխնելոյզ
կոզմակալ, կոզմապահ=կոզմանակալ, կոզմապահ
նակալ, կոզմնապահ,
ձմեռատուն, ձմերային=ձմեռնային, ձմերել, ձմերուկ...
ողջնութիւն
որմնադիր (չունի ՆՀԲ). Միացյալ բարդերը ունեն միշտ ն
անգամար (և սղյալ)
անդեղջիւր (նոր բառ)
սականնջնել «լսել»=սկանջնել
սաղմոսերգն
սառամանիք=սառնամանիք
մարգապայքար, վարդապայքարդ
փորձնական (նոր բառ)
քրտաղանգ=քրտնաղանգ
սառեղնագոյն
դալնկագոյն

Ավելորդ ն ունեցող բառերի մի մասը կարելի է վերագրել այն բանին, որ բարբառներում որոշ բառեր սառցել են ավե-

լորդ ն, որ սակայն գրաբարում չկա. այսպես՝ Ղարաբաղի բարբառը ունի անդէմը (անդամ), թօզը (թուզ) և այլն։

Առանձնապես պիտի հիշել այն բառերը, որոնք -ական մասնիկից առաջ ավելացնում է ն. ինչպես՝ գործնական, փորձնական, վերջնական (եթե վերջին բառից չէ)։

է) ՆԱԽԴԻՐՈՎ ԵՎ ՆԱԽԱՄԱՍՆԻԿՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԴԵՐ

Երբ նախդիրը կամ նախամասնիկը դրվում է արմատի վրա, կարող է միանալ կամ ա հոդակապով և կամ առանց հոդակապի. օր.՝ առ. առգին, առդնեմ, առժամայն, առձեռն, առձեռնապարապաս, բայց միևնույն ժամանակ ունենք առադրել, առանձնութիւն, առասպել և, նույնիսկ, ամենահին կազմությամբ՝ առաստղ, առաշոտ [ի], առլեզ=արալեզ։

Արա.— *միշտ առանում է ա հոդակապը, ինչ. արտագրեմ, արտագրեմ, արտահանեմ, արտահանման... արդի լեզվի մեջ կա առանց հոդակապի, ինչ. արտահայտութիւն։*

Բաղ.— *կա երկու ձևով էլ. ինչ. բաղադրել, բաղաձայն, բաղադասել... բաղբանական, բաղդատել, բաղդատել, բաղկնաել.*

Գեր.— *գերա- ձևով՝ գերագասել, գերազանց, գերակատար և այլն, իսկ գեր ձևով՝ գերբնական, գերդովելի, գերսոբական...*

Գեր.— *գերաքրիստոս, գերհասուցական, գերհիւսիսական,*

Եվր.— *եվրախաչ, եվրագրել, եվրաճաշակ...*

Ընդ.— *ընդարձակ, ընդառաջն, ընդգերանալ=ըմբերանալ, ընդգծիլ=ընկճել, ընդգրկել, ընդդեմ, ընկողմնեալ=ընկողմանիլ, ընկրկել=ընդգրկել, ընդվզել, ընդրել=ընտրել, ընտիր=ընդտիր։*

Ըստ.— *բառհուն, բառմանևայք, բառնմայք։*

Հակ.— *միշտ ճակա ձևով, ինչ.՝ հակագրել, հակաճառութիւն, հակամարտ...*

Համա.— *համագումար, համաբարբառ, համագոյ, համաբաստան, համախոհ, համաձայն, համամիտ... իսկ առանց հոդակապի՝ համբերել, համբառնալ, համբուն, համհարզ, համհօրեայ, համմօրեայ...*

Հոմ.— *միշտ ա հոդակապով, ինչ. հոմախոհ, հոմածին...*

Մակ, մակա.— *մակագրել, մակալեզու, մակբայ, մակդիր...*

Յար, յարա.— *յարաբարգ, յարադրել, յարաժամ, յարաշնչա...*

Յեղ, յեղա.— *յեղափոխութիւն, յեղաշրջել, յեղաշրջել, յեղակարծ...*

Ներ, ներա.—*ներակրթել, ներամիտ, ներաքաղաքեան... ներկայ, ներբող, ներբուն, ներգոյ, ներգործել, ներգաշնակ, ներհակ, ներհուն, ներշնչել...*

Շաղ, շաղա.— *շաղ[ա]կապ, շաղաշարութիւն։*

Շար, շարա.— *շարագրութիւն, շարահիւսութիւն, շարակարգել, շարաբանել... և մի անգամ՝ շարկայ, շարակայիկ։*

Պար, պարա.— *պարագայ, պարագրեմ, պարականոն, պարբայաձիլ... կա նաև առանց հոդակապի՝ պարբերութիւն, պարպատել=պարապատել, պարփակել։*

Ըստ, ստա.— *ստգիտել, ստգիտա, ստգտանել (ա հոդակապով չկա).*

Ստոր, ստորա.— *ստորաբաժանել, ստորագրել, ստորագաս, ստորակէտ, ստորաքարշ... ստորնեղուլ=ստորանեղուլ*

Վեր, վերա.— *վերաբերիլ, վերագաոնալ, վերաբնակեալ, վերածել, վերածնութիւն... վերլուծել, վերծանել...*

Տար, տարա.— *տարակարծ, տարագատել... տարբերել, տարբաղմատ...*

Տրամ.— *միայն տրամա ձևով, ինչ. տրամաբանութիւն, տրամագրել, տրամախոհութիւն, տրամագիծ և այլն։*

ը) ԱՅԼ ՀՈԴԱԿԱՊԵՐՈՎ ԲԱՐԴԵՐ

Բացի ա հոդակապից, որ ընդհանուր է ամբողջ լեզվի մեջ, կան և այլ հոդակապեր, շաղկապ, նախդիր, որոնցից կազմված բառերը դասավորում ենք այստեղ հերթով։

Եւ կամ ու շաղկապով.

այրուձի, այրևձի	*խորտուբորտ (նոր բառ)*
անցուդարձ	*ծայրախոյզ? (=ծայրախուզ)*
առևանգել	*ձեթևեթել (հմմտ. սեթևեթել)*
առևտուր	*կալևկապ*
բարեվիճակ առնել	*կացնինաց «հետաքրքրաց»*
դէպուդէպ=դէպևդէպ	*հալմաշ=հալումաշ*
դիրևառ (առնել)	*հասևառիկ*
եվևել, եվևմուտ, եվևէջ, եվևմուտ	*հասևխած*
երդումարգ	*հասուհաս*
երկևկ	*հասուկճիր, հասուկտիր*
պինչուվինչ	*հարևանցի*
լիուլի	*հարսնևորդի*
լիուլրումնօրէն	*հարցևխնդիր*
լրատես=լրատես (լուր և տես)	*հարցափորձ=հարցափորձ (նաև՝ հարցուփորձ)*

հարցնքնին—հարցաքննութիւն
մարքուպատշաճ
յարևյարմար
յարևնման
ռևպէտ
որձևէգ
ումևպէտ
ունկնևրսունկն
չէուչիք
չէքուչէք

պարտուպատշաճ
տարկևատւտ (ուղղել՝ արկևատ «մագիլ»)
սևքևևքել (հմմտ. ձևքևևքել)
տանուտէր
տարուբերիլ
տուբևատ
ցեղուցեղ, ցեղևցեղ=ցեղացեղ
քարուկիր
քարուքանդակ

Այստեղ պետք է հիշել նաև՝ զիարդուպէտ, որ թերևս զիարդումպէտ ձևից է։

Այս բոլորի մեջ ու ընդհանրապես շաղկապ է. միայն տանուտէր բառի մեջ հայտնի չէ, թե ինչ ծագում ունի։

Ընդ նախդիրով

Գ[ի]րկընդխառն
դևռընդդեռ
երագընդհան
խոչընդոտն, խոչընդոտն
հետընդհետ
մերկընդմերկ
մերթընդմերթ

մերթընդմերթ
որոտընդոստ
վաղընդվաղ
տեառնընդառաջ (ժդ. տերընդաս)
քարընդոտն

Ծան.— Կորնթարդ բառը, որ կազմված է կոր և արդ բառերից (հմմտ. խորանարդ, գմբեթարդ) հայտնի չէ, թե ընդ նախդիրով է, թե ոչ. եթե այո, այդ դեպքում ինչո՞ւ գրված է ներ։

Ի նախդիրով

առիգած
արևիշուշտ
ափիբերան
ափսիքերս
բանիբուն
բարձիթողի առնել (հմմտ. բարձևթող)
բարձրիգլուխ
բարձրիձայն

բացէիբաց
բնէիբուն
գաղտիկուր=գաղտակուռ «ջղախտ»
գլխիբաց=գլխաբաց
գլխիվայր
գառիթափ, գառիհետ, գառիվայր, գառիվեր
թագիգլուխ

լուիլու
խառնիխուռն
ծայրիծայր (այժմ՝ ծայրէ ի ծայր)
կապիկապ (այժմ՝ կապնիկապ)
կարճ ի կարճոյ
կորիդլուխ (կորագլուխ)
կորիկոր=կորակոր
հինիվեր
հոիգայօղ «շրջող»
ձեռնիկապ
պանտիպանտէ «պատ ի պատէ»

սրտիգիւր, սրտիբերան (եթե սրանք սեռական չեն)
վառիվառ
վերիվայր
տրիտուր
ցախիճան «ցախի վայր» (եթե սեռական չէ)
փախիփախ
փորիբաց
քաջիբաց
քրէիքուր

ե=է հոդակապով

Հայտնի է, որ ի վերջացող բազմավանկ բառերը բարդվելով մի ուրիշ բառի հետ և ի ձայնավորը խառնելով ա-ի հետ ասելիս են ե, որ երբեմն սխալ ուղղագրությամբ գրվում է է. սրանցից դուրս կան մի խումբ ուրիշ բառեր էլ, որոնք բարդվում են և կամ է հոդակապով։ Ահա դրանց ամբողջական ցանկը։ Սրանց թվում դնում ենք նաև մի քանի այնպիսի բարդեր, որոնց հոդակապը կարող է բացատրությամբ։ Այս կարգի բառերը դնում ենք փակագծի մեջ։

(Ածանեգործ.— անշուշտ ածական «թևել» բառից, որի ի ձայնավորը միանալով ա-ի հետ ավել է ե. միակ անկանոնությունը ա-ի անկումն է, փոխանակ լինելու ածաանեգործ։ Անշուշտ ա-ի անկումը տեղի է ունեցել միջին հայերենում), դարէալիւր, իջևան=իջաւան, տարեւան (նոր բառ), օթևան (զարմանալի է, որ վանք բառը միշտ համարվել է աւան և նախորդ եղրն էլ ի ձայնավորով է կարծվել, այսպես՝ իջի, օթի, տարի)։

Աբեբեայ=խաբեբեայ, խարեական, խարեպատիր. որոնց էլ արմատը կարծես թե համարվել է խաբի։

Խեչափառ, խեչեփառ, խաչափառ. այս երեքից ճշտագույնն է խեչափառ, որ կազմված է խեչ «հոգի» և փառ «թեև» բառերով. (խեչափառը այն կենդանին է, որ հոգիներից մի քանի թև ունի). հետո առաջին վանկի ե ձայնավորը ազդելով երկրորդ վանկի վրա, այստեղ էլ ա դարձել է ե. իսկ վերջին ձևի մեջ առաջին արմատը սխալմամբ կարծել են խաչ։

Մնեբեկ

Հաղրէվարդ

Հնգետասան. այս բառի մեջ ե ձայնավորը ամենախոր հնութեան ճեացորդ է, որովհետև ծագում է հին<հնխ, penk²e ձևից։

Հոգեբարձու (կաապակով թե սխալմամբ կազմվել է հոգի բառից), փոխանակ հոգ բառից, որից կանոնավորապես ունենք հոգաբարձու. Այսօր էլ ամիկը ասում է հոգեբարձու, ակնարկելով այն հոգաբարձուներին, որոնք ժողովրդի հոգին էին հանում)

Մազեկամաս «շապիկ»

Մորթեգործ, մորթէգործ (հետևաբար կազմված ժդ. մորթի բառից, որ այսօր էլ գործածական է)։

յորդէգնաց (կարծելով, թե արմատն է* յորդի)

նեզնեժոտ=նենգաժէտ

շանթեքար (իրը՝ շանթաքար)

շլենատակ (անշուշտ ժդ. շլնի ձևից, իրըև՝ շլնիատակ)։

շորեքափիլ

ողրէլալիք

ողջէգալ

ուղղեղատաև=ուղղաղատաև

պաշտօնեատեղ (կամ եաղ բառից, կամ առաջին եղրը պաշտօնեայ կարծելով). այժմ դարձել է պաշտոնատեղի.

վարդէհոտ, վարդէջուր

քարէնաւ, քարէկարիուտ, քարէպարիսպ.

քեռեմեճակ (խառնակված՝ քայտամանեակ բառից).

քնէած

Սրանց մի մասի մեջ է անշուշտ բացառական հոլովի նշան է. ինչ. քարէկարիուտ և այլն։

Արդի հայերենում է (բացառական) հոդակապով բառեր ավելի շատ կան. ինչպես՝ քարեատխտակ, քարեգրիչ, քարեգընդակ, մազեկամուրջ և այլն, որոնց մեջ է=ե ձայնավորը անշուշտ բացառական հոլովի նշան է և ոչ թե իա ձայնախմբի գումարը։

Նկատելի է, որ այն բառերը, որոնց նախավերջին հնչյունը է է, բարդության մեջ ստանում են հաճախ ե հոդակապը, իբր թե ձայնավորը բառավերջում լիներ, օր. ծագկեփունջ. հաշվեկշիռ, հաշվեյարդար, հաշվեմատեան, հաշվետես, կարնեցի, հաշվեփափայտ և այլն։

թ) ԱՆԿԱՆՈՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բոլորից դուրս կան այնպիսի բարդություններ, որոնց մեջ սովորական կանոնները անտեսված են։ Այս կարգի անկանոն բարդությունների մեջ առաջին խումբը կազմում են կրկին ձայնավորով բարդությունները և երկրորդ խումբը այլ անկանոնություններ, որոնց ցուցակը տալիս ենք ներքևում։

Կրկին ձայնավոր

Գիտենք արդեն, որ երբ երկրորդ եղրը սկսվում է ձայնավորով, ա հոդակապը չընկնում է։ Կան այս դեպքում մի քանի բացառություններ և հատկապես ո ձայնավորով սկսող բառերի մոտ։ Սրա պատճառն այն է, որ ո նախաձայնը հետին շրջանի հայերենում առանալով վո հնչումը, ամիկի բերանում բազաձայն է դարձել (այսպես և ե)։ Այսօր էլ կան մարդիկ, որ նույն մտածմամբ գրում կամ հնչում են աճվօրակ, կը յերգե, կը եփե. կը վօրուա, առվօղջություն և այլն։ Ահա այս կարգի բառերը, որոնք անցել են ՆՀԲ-ի մեջ.

Բազմատոա=բազմոստ

դեղեցկաերանգ, դեղեցկայերանգ

խորախմաց=խորխմաց

հնգեշարժ (կազմված է ազդեցությամբ հնգետասան բառի, որի մեջ ե կանոնավոր է)

երկնաելք

զուարճաբնծայք

համաէութիւն (ճիշտն է՝ համէութիւն)

մեծախմաց, մեծայխմաց

մեղաատացութիւն (իմա մեղայատացութիւն)

ոսկէօձ

ոսկէօղ

քաջատուաեաց=քաջուսուաեաց

աստուածատուր

դիւաերդ

Արդի լեզվին ինչպես վերն ասվեց, հատուկ է կրկին ձայնավորով բարդության մի ձև, հատկապես երկու ա-ով. ինչ. ամենաանմեղ, ամենաապիկար և այլն։

Այլ անկանոնություններ

Թևև բառավերջի ի-ն միանալով ա հոդակապի (կամ ձայնավորի) հետ առացվում է ե, բայց երբեմն էլ հակառակ կանոնի ի և ա մնում են (այսպես՝ նաև ածանցման մեջ. ինչ. անարիաբար և այլն), ինչ. ալիասպատ փխ. ալեասատ, երբեմն էլ ե-ի տեղ գրվում է ա, ինչ.

ապաւնէվաճառ=ապաւնավաճառ
ապաւնաբօտ=ապաւնաբօտ
անդրիագործ
անդրիաատնգծ
առաջիակաց
առտիագոյն
արծուէիկիր, արծուէնշան (կազմված են արծուի և ոչ թե արծիւ բառից)
արփի... արփիափայլ, արփիազարդ և այլն.
բաղանեպան=բաղանապան

Բարի դառնում է բարեա, օր. բարեագործ, բարեախոհ, բարեանուն, բարեազգի...

բարեընկալ
բարեաց, իբր՝ բարեասաց
բարիագգի, բարիանուն...
գինի. գինա, գինե (գինարբու, գինեբրուբ, գինաւեան, գինեեան)
դօտիածու
եկեղեցապան=եկեղեցեպան
եկեղեցաձև
գինիագոյն
ընտանակցիմ, փխ. ընտանեցիմ, ընտանաէր=ընտանեսէր...
ընտանիականագոյն
Քաղիանամ

Կարեձմեռն «առաջին ցուրտ ձմեռ» առաջանում է կարի բառից, ուստի կարիաձմեռն ձևից անցնելով դարձել է կարեձմեռն, հետո գրվել է կարէձմեռն և հոդակապի սխալով կարաձմեռն:

Կարիական

Կիրամուա, կիրակէմուա, կիրակիմուա (ամենահաճախ ձևն է երկրորդը, որովհետև իա տալիս է ե. վերջինը առանց հոդակապի է, իսկ առաջինը կազմված է վերջածանցի զոդումով):

Հոգիա.— այս ձևով ՆՀԲ.ունի 26 բառ, ինչպես հոգիաբուղխ...

մանկաաւագ
նոճիաճահ
շոգիամէգ
ոգիակողմն.

ոսկի թևև պետք է տար ոսկե—, բայց գրված կա նաև ոսկիա- ձևով. ինչպես ոսկիազարդ=ոսկեզարդ և այլն (ՆՀԲ ունի այսպիսի 28 բառ). Բայց կա նաև արմատական ոսկի- ձևով. ինչ. ոսկիբերան=ոսկեբերան (ՆՀԲ ունի այսպիսի 9 բառ):

Որդի նախորդի նման տալիս է թե կանոնավոր որդի և թե որդիա- ձևով բարդեր.

Աարդիաատունկ (փխ. ատրդեատունկ)
անուանիաբարեաբ, անուանիագործ, անուանիախօս և այլն:
վագեմի=վագի-ամի
տեղեակիրութիւն=տեղեակէր
փոշանոզ=փոշեհոզ, փոշաջուր=փոշեջուր
փոշիաձև, փոշիատեսակ
քաջարիագոյն, քաջարիագէս
քրիստոնեայասէր=քրիստոնէասէր
արփիազարդել

Առանձնապես պետք է հիշել երկու բառ, որոնց մեջ ներմուծված է լ բաղաձայնը իբր հոդակապ?: Սրանք են գոռելած, մռռալուտ, որ գրված կա նաև մռռաշուտ (շ և լ տառերի նմանության պատճառով շփոթված):

Անասնոյ հոդակապերի մեջ կարելի է հիշել ի, որից հետևվարար ունենք աճիպարանոց. բայց այս բառը արդյոք պետք էր հասկանալ աճ ի պարանոց (պարանոցում սարսափ), թե ոչ: Նրա հետ միասին ունենք աճիասարսափ, որի մեջ նույն աճի-ի հետ կցված է ա սովորական հոդակապը:

Ասացինք, որ բարդ բառը քանի բառից էլ բաղկացած լինի, բան իմաստի միշտ երկու բառի գումար է. օրինակ՝ լրագրավաճառ ոչ թե լուր+գիր+վաճառ, այլ՝ լրագիր+վաճառ. նմանապես՝ հեռագրասյունաշարք ոչ թե հեռու+գիր+սյուն+շարք, այլ՝ հեռագրասյուն+շարք:

ԳԼՈՒԽ ԺԱ

Թիվ

Թիվը վերաբերում է թե՛ անուններին, և թե բայերին: Առաջին դեպքում թիվը ցույց է տալիս, թե առարկան քանի՞ հատ է, երկրորդ դեպքում ցույց է տալիս, թե գործողությունը կատարող անձերի քանակը ինչ է: Թե առնահատակ ինչպես է ծագել մարդկության մեջ քանակության կամ հաշվելու գաղափարը և ինչպես է զարգացել այն, մանրամասն կարելի է տեսնել թվականների գլխում. այստեղ կասենք միայն այն, որ նախնական մարդը գիտեր միայն հաշվել երեք թիվ, այն է՝ մեկ, երկու և երեք. վերջինը համանիշ է շատության և բազմության գաղափարին: Հին եգիպտական մեհենագիր արձանագրությանց մեջ, երբ ուզում էին մի բան հոգնակի դնել, գաղափարանշանը նկարում էին երեք անգամ, կամ նրա կողքին երեք գիծ էին քաշում (Roeder, էջ 16). Նույն ոճով գրաբարի մեջ ունենք երեքալյաց, երեքշուառեաց, երեքսրբեաց, եռատեղի, եռամեծար և այլն, որոնց իմաստն է՝ «բազում ալիքներ ունեցող» և այլն: Նույնպես հունարեն ասվում է τρισ-καταράτος «երիցս անիծյալ», τρίν-μακαρ «երիցս երջանիկ» կամ լատիներեն՝ tricruum «երեք անգամ հոգս, մեծ նեղություն», trifur «երիցս գող»:

Ղափերենում գոյականը թե եզակի, և թե հոգնակի միևնույն ձևն ունի. թիվը ճանաչվում է միայն բառի սկիզբը դրված հոդով. ինչ. Šire «որդի, որդիներ», Šeere «դուստր, դուստրեր», բայց՝ p-šire «որդին», ən-šire «որդինները», t-šeere «դուստրը», ən-šeere «դուստրքնը»:

Կան նաև մի խումբ բառեր, որոնց հոգնակին կազմվում է բառի ներքին փոփոխությամբ (արաբերենի նման), կամ բառի վերջում առանալով առանձին մասնիկ (արականի համար տարբեր, իգականի համար տարբեր), բառեր էլ կան, որ միաժամա-

նակ կրում են ներքին փոփոխություն և առանում են հոգնակիի արական կամ իգական հետամասնիկը: Այս բոլորից երևում է, որ նախապես մասնիկը ընդհանուր էր, ապա կրճատվեց և մնաց առանց մասնիկի ձևը (Steindorff, 68):

Հոգնակիի համար թվականներ գործածելու սովորությունը չափազանցության է հասել տիբեթերենի մեջ, ուր երբեմն իբր հոգնակիի նշան դնում են dgoa 9 կամ brgya 100 թվականները (Foucaux, էջ 27):

Աֆրիկյան յորուբա լեզվում հոգնակի չկա. հոգնակի կազմելու համար դնում են գոյականի հետ ցուցականների հոգնակին՝ wonyi «սրանք» կամ wonni «նրանք». Օր.

okonri wonyi այս մարդիկը, kinni wonni այն բաները (Crowther, էջ 10):

Ամերիկյան բակաիրի շատ նախնական լեզուն ոչ երկակի ունի և ոչ հոգնակի. երբ ուզենան գոյականի բազմությունը ցույց տալ, վրան ավելացնում են kx անձնական հոդը, որ նշ. «մեր» (Steinen, էջ 324):

Մալքիզյան կղզիների լեզվում հոգնակի չկա. հոգնակիի գաղափարը տալու համար գոյականից առաջ դնում են na, ta, tāu, mou հոդերը և poi «ժողովուրդ», huuà «ընտանիք», naho, fatu, kahui, puke, motuhāna և այլն հավաքական բառերը՝ նրանցից առաջ էլ դնելով te հոդը: Կան բառեր էլ, որոնց հոգնակին կազմվում է սկզբից կամ միջից 1 կամ 2 վանկ կրկնելով. ինչ.

te ima	ձեռքը,	na iima	ձեռքերը
te vae	ոտքը,	te vaevae	ոտները
te mana	ճյուղը,	te mañamana	ճյուղերը
makona	կուշտ, հոգ.	makokona	

(Dordillon, էջ 6, 29)

Ամերիկյան ալէուտերեն լեզուն ունի 3 թիվ (եզ. երկ. հգ.), օր. եղբայր՝ եզ. agitudak, երկ. agitudakuk, հգ. agitudan (ուրեմն հասել են մի հոգնակի ունենալու աստիճանին). Նույնը նաև դերանվան մեջ ինչ.

imin քեզ, imdik ձեզ երկուսիդ,
imči ձեզ (հգ).

Նաև բայերի մեջ, ինչ.

axgada գնա, axgadik գնացեք երկուսդ, axgači գնացեք (հգ.).

Այսպես է նաև ամերիկյան մոսկիտո լեզուն, որ հոգնակիի

նշան չունի. ծայրահեղ դեպքում գոյականներին կցում է nanni *բառը. օր.*

manirin	nanni	*կանայք*
əaiwan	nanni	*անասուններ*
dɯss	nanni	*ծառեր*

Այս նույն nanni *բառը գործածվում է նաև դերանունների հոգնակին կազմելու համար. ինչ.*

yang	*ես,*	yang nanni	*մենք*
man	*դու,*	man nanni	*դուք*
witi	*նա,*	witi nanni	*նրանք*
ba	*այն,*	ba nanni	*այնոքիկ*

(Adam, *էջ 14*)

Ամերիկյան տիմուկվա լեզվով հոգնակին կազմում են հավաքական բառերով. այն է՝ գոյականի հետ գնում են kare *«բազմաթիվ»* puqua *«շատ»,* tooma *«լրացում»,* inemi, amiro, aciro *բառերը (վերջին երեքն էլ նշանակում են «բոլոր»), օր.* paha-kare *տներ,* huya-puqua *ձկներ* (L. Adam-Vinson, *էջ 23*)*:*

Ամերիկյան միքս լեզվով գոյականը հոգնակի չունի. բայց դերանունն ու բայը ունեն հոգնակի. անհրաժեշտ դեպքում գոյականի հետ կարելի է գնել cuxtai *կամ* huina *«բոլոր»,* mai *«շատ» և նման բառեր: Կարելի է նաև կցել գոյականին* ait, *որ էական բայի Դ դեմքն է. ինչ.* huning-ait *«բաներ»* (Grasserie, langue Zoque, *էջ 320*)*:*

Մեքսիկայի օթոմի լեզվով գոյականը անփոփոխ է, ոչ թիվ ունի, ոչ հոլով. Թիվը հասկացվում է հոդից, որ դրվում է բառի սկիզբը, եզակիում na, *հոգնակիում* ya. *այսպես՝* ye *«ձեռք» բառից՝* naye *«ձեռքը»,* yaye *«ձեռքեր»:*

Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) բներյան լեզվով կան բառեր, որոնք երկու տարբեր ձև ունեն, մեկն ընդհանուր, և մյուսը՝ մասնավոր. օր.

lakai	*փայտ,*	*ծառ*	*(ընդհ.)*
leke	*փայտ,*	*ծառ*	*(մասն.)*
vatu	*քար*		*(ընդհ.)*
votu	*քար*		*(մասն.)*

Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) տանգոա լեզուն գոյականի մեջ հոգնակի չունի. հոգնակին իմացվում է նախադասության

բայից, որի ենթակա դերանունը ունի եզակի և հոգնակի տարբեր ձև.

օր. tamloci la le nai
մարդ(իկ) եկան
tamloci mo le nai
մարդ(իկ) եկան.

առաջին նախադասության մեջ la *(նոքա) հոգնակի է, երկրորդ նախադասության մեջ* mo *(նա) եզակի է. սրանով էլ հասկացվում է, որ* tamloci *«մարդ» մի դեպքում եզակի պետք է առնել, մյուս դեպքում՝ հոգնակի:*

Բայց հաճախ գոյականի մոտ դնում են matea *«մի» կամ* matuvana *«շատեր», որով որոշվում է գոյականի թիվը:*

(Macdonald, *էջ 3*)

Սրա նման՝ Նոր-Հիբրիդյան բակի լեզվումն էլ հոգնակին կազմվում է գոյականին կցելով nalo, *որ նշ. «նրանք», ինչ.*

kalisa	*մի տղայ,*	kalisa-nalo	*տղերք*
tomo	*մի անձ,*	tomu-nalo	*անձինք*

(Macdonald, *76*)

Լապպերեն լեզվում գոյականն ունի միայն երկու թիվ՝ եզակի և հոգնակի. երկակին կա միայն բայի մեջ և որոշ դերանունների մեջ. հոգնակիի վերջավորությունն է -k *(պատահաբար նման հայերենին), որ սակայն միայն ուղղականումն է դրվում: Լապպերենում բառավերջի* k *ընկնելու օրենքով, այս հոգնակերա* k *ևս ընկնում է* (Wiklund, *192*)*:*

Փյունիկերենում հոգնակիի վերջավորությունն էր ար.— īm *(նույնը նաև Երր.), հգ.* ōth=պուներեն *(Կարքեդոն)-*ūth. *Նախնական ձևն էր-*āt. *Համմ.* Bērūta *(=Պեյրութ) քաղաքի անունը, որ բուն նշ. «ջրհորներ», եղ. Երր.* בְּאֵר bēr *«ջրհոր»:*

Անհավանական չէ, որ փյունիկերենը, ունենար նաև երկակի թիվը, բայց արձանագրությանց մեջ ավանդված չէ. երկակիի վերջավորությունը պիտի լիներ նման եբրայականին -aim,-em, *բայց դա չփոթվել կամ խառնվել հոգնակիի-*īm *վերջավորության հետ՝ ձայնավորները չդրելու պատճառով. «երկու» բառը* שְׁנֵים šənēim *ձևն ունի.*

Եվրոպական հարաբ լեզվով հոգնակին թե՛ արական և թե՛ իգական կազմվում է -āč *մասնիկով. ինչ.*

qalāč *երեխայ*—qalāč-ač
indoč *տիկին* —indočāč
aškar *ընկեր* —aškar-āč

(Cerulli, *145*)

Ամերիկյան մի քանի լեզուների մեջ շնչավորների հոգնակին կազմվում է -k *վերջավորությամբ (պատահաբար նման գրաբարի), ինչ.* naña-k *մարդիկ,* occa-k *կանայք,— իսկ անշունչները դուրս են մնում հոգնակիի նշանից (*Kroeber, *էջ 280). Սրան հարաբերական է մի քանի գոյականների մեջ չունենալ հոգնակիի նշան. մի քանի գոյականներ, որ անձ են ցույց տալիս, հոգնակի են դառնում* a *վերջավորությամբ կամ առանում են առանձին ձև ցուցականների հարակցությամբ. օր.*

gauk *անձ, հգ.* hiba-ya
da *կին, հգ.* gara-ya

da-gara *ձեր կին. հգ.* magatcur-a
butsi-gi *ձեր մարդ, հգ.* butsi-a, butsi-yaya
cela *երիտասարդ, հգ.* cela-ya
ազգականներ — gametegi-a

Խնամիներին վերաբերյալ բառերը հարգանքի համար գրվում են հոգնակի. այսպիսով հոգնակին գործածվում է շնչավորների համար՝ ցուցականների հավելմամբ. դերանունները հոգնակի ունեն. հոգնակիի թերին լրացնում են բազմավորական բայերը, որոնց համար պիտի խոսենք առանձին գլխում.

(Kroeber, *321, 325*)

Սրան նման է գրձյալ՝ նախորդներին հարակից կորոկ լեզուն, ուր գոյականը թիվ և հոլով չունի. միայն որոշ բառեր, որոնք անձ են ցույց տալիս և կամ բայից ածանցված ներկա դերբայը, որ կազմված է -an *մասնիկով (հայերենի պես) և ցույց է տալիս գործող անձ, ինչպես նաև որոշ ածականներ կարող են դառնալ հոգնակի՝ առանալով* -c (k') *վերջավորությունը. Դերանունները հոգնակի ունեն. ինչ.*

na *ես*	īm	*դու* ūm	*նա*
nu *մենք*	īm-kun	*դուք* ūm-kun	*նոքա*

(Kroeber, *430—431*)

Սրանց հարակից յոկուց լեզվի մեջ էլ միայն անձ նշանակող բառերն ունեն հոգնակի. անասունների անունները միայն որոշ

պարագաներում գործում է, թե դառնում են հոգնակիներ. անշունչ առարկաներից միայն «առուն» բառը ունի հոգնակի, այն էլ շատ զարմանալի ձևի տակ. եզակին լինում է te, *հոգնա'ին* te-away *«տներ». ընդհանրապես խոսելով՝ այս լեզվի մեջ հոգնակին հատուկ է միայն անձանց, ազգականական բառերի, ցեղանունների և այնպիսի ներկա դերբայների (գործող անձ), որ ծագում են բայից* -ite *մասնիկով:*

Երկակի կա միայն դերանունների մեջ. գոյականը չունի:

Հոգնակիի մասնիկն է i, *որի ազդեցությամբ այնքան է փոփոխվում բառը, որ հաճախ անճանաչելի է դառնում: Հետևնակը տալիս է 64 այս կարգի բառերի մի ցանկ, որից մեջ եմ բերում հետևյալները.*

երիտասարդ	notco	*հգ.* nutcei
գլխավոր	chief	diya deaci
այրի	hupana	hopnatci
երեց քույր	naat	naita

(Kroeber, *189, 192*)

Այս գրության հետ համապատասխան է Ավստրալիայի արևմտյան լեզուներից մեկը, որ քան Թրիլիխլդի (հ. IV, էջ 49), հոգնակի կազմելու համար գնում է նախ 1, 2, 3 թվերը, ավելի բարձր գնում են միշտ bula, *որ նշանակում է «շատ»: Իսկ երբ խոսքը մարդկանց մասին է, հոգնակիի համար գնում են* man, -arra garra. *որոնցից առաջինը (*man) *կրճատված է* manda *«բոլորը միասին», հավաքական բառից և ցույց է տալիս, որ մյուսներն էլ նման հավաքական բառերից են կրճատված:*

Մելանեզյան կուլիվու լեզվով հոգնակի չկա. հոգնակին ցույց տալու համար գոյականի կողքին գնում են sombur *«շատ» բառը. օր.*

natite sombur *բան շատ (բաներ)*
nevanuan *մարդ շատ (մարդիկ)*

(Ray, *267*)

Մալայերեն լեզուն էլ հոգնակի չունի. հոգնակին հասկացվում է կողքին դրված թվանշանից, ամեն, բոլոր, մի քանի և նման բառերից և կամ կրկնական է դրվում. ինչ. orang-orang *մարդիկ (*Sēidel, *էջ 18):*

Հնդկական մունդարի լեզվում կենդանի էակները ունեն

երեք թիվ (եզակի, երկակի և հոգնակի). իսկ անկենդան էակները ունեն միայն եզ. թիվ։

Եզակին ոչ մի առանձին նշան չունի։

Երկակին կազմվում է բառի վերջին դնելով king, որ Գ. դեմքի դերանվան երկակին է և նշանակում է «երկուսը»։

օր. horo *մարդ*, horoking *երկու մարդ*
ipil *ասող*, ipilking *երկու ասող*

Հոգնակին կազմվում է ko *մասնիկով (պատահաբար նման հյ. ք-ին)*, որ Գ. դեմքի դերանվան հոգնակին է և նշ. «ներանք». *ինչ.* horoko «մարդիկ», ipilko «ասողներ»։

Անկենդան էակները՝ չունենալով երկակի և հոգնակի, եզակին նաև երկակի և հոգնակի է. *ինչ.*

daru *մի ծառ, երկու ծառ, ծառեր*
Ըստ այսմ թիվը իմացվում է տեղից։

(Hoffmann, *էջ 7*)։

Օվկիանյան տոնգա լեզվի մեջ հոգնակիի մասնիկ չկա. եզակիից առաջ իբրև անորոշ հոդ դնում են he. *ինչ.* he togi «մի կացին», he falle «մի տուն», he tangata «մի մարդ», he gooli «մի շուն»։ *Եթե ուզում են շեշտել, թե նա մի հատ է, անորոշ հոդը ջնջում են, և բառի վրա ավելացնում են* be «միայն» և taha «մեկ» *բառերը.* togi be taha «կացին միայն մի», falle be taha «տուն միայն մեկ», gooli le taha «շուն միայն մի»։ *Եթե մեկից ավելի է, դնում են այդ թիվը և թվի ու գոյականի միջև* e. *ինչ.* vac a efa «նավակ չորս». *իսկ երբ թիվը անհայտ է՝ դնում են* lahi «շատ», *ինչ.* lahi e togi «շատ կացին», lahi e waca «շատ նավակներ»։ *Շնչավորների համար հոգնակիի դեպքում կարելի է դնել նաև* cow, toonga, *որոնք նշանակում են «մարմին, խումբ, բազմություն»։ Բանավոր էակ ցույց տալու համար դնում են* toca «անձ». *օր.* tangata be toca taha «մարդ միայն անձ մի»։

Ավելի հետաքրքիր է այն երևույթը, որ գտնում ենք հիպերբորյան նիմիլան կամ կորյակ լեզվի մեջ. գոյականը ուղղական հոլովի մեջ ունի երեք թիվ (եզակի, երկակի և հոգնակի), բայց մի ուրիշ հոլովի մեջ, օրինակ տեղական (locatif) հոլովի մեջ, ոչ մի թիվ չի առանձնում։

Կարեներեն լեզուն հոգնակի չունի. կարևոր դեպքում կարելի է գոյականը կրկնել. ինչ. pᶜoto «խաղող», *հգ.* pᶜoto-pᶜoto.

Միկրոնեզյան տրուկ լեզվի մեջ թիվ չկա. եզակին և հոգնակին չեն տարբերվում իրարից. դա իմացվում է բառի կողքին դրված ցուցական դերանունից (որ ունի հոգնակի) և կամ բայից (որ նույնպես ունի հոգնակի)։

(Bollig, *էջ 260*)

Աֆրիկյան մամսիլա լեզուն չունի ոչ մի տեսակ նշան հոգնակի կազմելու համար.

miem *նշ. տուն կամ տներ.*
nie *նշ. տատամ կամ տատամներ.*

հոգնակին հասկացվում է տեղից, կողքին դրված թվանշաններից և հատկապես ցուցական դերանունից (Meyer, էջ 16)։

Աֆրիկյան բոնգու լեզվով թիվը արտահայտվում է հետևյալ ձևով.

1) Եզակին ցույց տալու համար գոյականից հետո դնում են gudi «մեկ» *բառը (կամ սրա կրկնականը՝* gudi-gudi *կամ* gugdi). *ինչ.* tamō gudi ginen
մարդ մի եկավ
(կամ tamō g di-gudi ginen *և կամ* tamōgugudi ginen). adi *և* yaib *ձուկ* gudi *մի,* gudi *(մի)* aman *բռնեցի*

adī wāb gudi-gudi sien
ես պատուկ մի ունեմ

2) Կամ գոյականից հետո դնում են andū «նման» *դերանունը. ինչ.*

tamō andū *մարդ*
mong andū *կոկոսի ընկույզ* } *եզ.*
bū na andū *ազավնի*

3) Երբ բայը եզակի է, ուրեմն ենթական էլ եզակի է և այսպիսի միջոցների կարիք չկա. ինչ.

undī tamō sien
այնտեղ մարդ կա

Երկակին կազմում են գոյականից հետո դնելով gal «երկուսը, երկոքեան» *բառը. ինչ.* adi ne, pan ne, gal ginmum
ես և Պան (և) երկուսս եկանք
Հոգնակին կազմելու համար

1) դնում են «շատ, բոլոր, ամբողջ, մի քանի, մի խումբ» բառերը.

2) nadi «ընթանք» դերանունը. օր.
an'am ծառ nadi նոքա gom ճամբան tūtebel վակել են
3) գոյականը գնում են կրկնութեամբ
aan'am ծառերը, babagrī տերևները
(Hanke, 23—24)։

Մալայան պլե-տեմներ լեզուն, որ շատ նախնական վիճակի մեջ է գտնվում, հոգնակի չունի։ Նախադասության ընդհանուր կազմից է իմացվում, գոյականը եզակի է, թե հոգնակի։ Բայց կարևոր դեպքում կարելի է հոգնակիի իմաստ տալու համար գոյականին նախադրել mən կամ bən բառը. օր.

iurl մեռելոց հոգին, հգ. mənīurl
ǰehu ծառ mənǰehu ծառեր
ale աղջիկ mənale աղջիկներ
(Schebesta, YRAS, 1931, 646)

Բիրմայի պեգու լեզվում եզակին և հոգնակին չունեն տարբերություն. երբեմն միայն կարելի է հոգնակիի համար դնել taw (Haswell, էջ 12)։

Ավելի ակար է Մալայո-Պոլինեզյան բոնաոկ իգորոտ լեզուն, որ ոչ միայն հոգնակի արտահայտող մասնիկ չունի, այլև հոգնակի հող չունի (թեև եզակիի համար ունի չորս տեսակ հող)։ Հոգնակին հասկացվում է տեղից և կամ բայի վերջավորությունից։ Միայն մի քանի գոյական կա, որոնք ունեն հոգնակի, և այդ հոգնակին կազմվում է գոյականի նախավանկի կրկնությամբ։ Այս առանձնաշնորհյալ բառերն են՝

lalaki մարդ—հգ. lalalai մարդիկ
fafāyi կին— fafafāyi կանայք
anak տղա ananak տղայք
fobfallo երիտասարդ fobfafallo երիտասարդներ

և մի քանի ուրիշ բառեր էլ (Seidenadel, 17)։

Սրան նման է ամերիկյան նավահո լեզուն, որ ինչպես հայով և սեռ, նմանապես թիվ չունի. հոգնակին իմացվում է բայից, որ ունի թե եզակի և թե հոգնակի։ Գոյականներից կա միայն մի մասնյակ բառ, որոնց հոգնակին կազմվում է -kᵉ մասնիկով։ Սրանք են ազգականություն ցույց տվող բառեր. ինչ. եղբայր, քեռորդի, քոռ, և այլն. օր. Šinai երեց եղբայր, հգ. Šinaikè (Haile, 24, 36)։

Ամերիկյան գալիբի լեզուն չունի հոգնակիի համար որևէ վերջավորություն, ուստի և գոյականների և մինչև անգամ դերանունների հոգնակին ցույց տալու համար գործածում է papo «բոլոր» կամ tapuime «շատ» բառերը, ինչ. au papo «մենք», amore papo «դուք», moco papo «ընթանք այր. և իգ.» (Crevaux-Sagot-C. Adam, էջ 26)։

Ամերիկյան գոք լեզվում էլ գոյականը հոգնակի չունի ոչ մի ձևով։ բայց զարմանալի կերպով ածականը ունի հոգնակի, որ կազմվում է tam վերջավորությամբ. օր aye-bue լավ (բան). հգ. aye-tam-bue լավ բաներ, yatzi-tam-bue վատ բաներ։ Հոգնակի ունի նաև բայը. իսկ դերանվան հոգնակին տարբեր ձև ունի եզակիից։

(Grasserie, Langue, էջ 10)։

Օվկիանիայի կարոլինյան լեզվում, որ շատ նախնական վիճակի մեջ է, թիվ չկա. գոյականի թիվը իմացվում է կամ մտքը դրված թվականից, կամ զուգացած ածականից և կամ բայի հոգնակի ձևից։ Օր.

Sār դանակ, sāreka մի քանի դանակ
aramas tūmok այր մեծ

aramas tōtu mok այրք մեծամեծք
„ „ etu mok մարդը մեծ է
„ „ retotūmok մարդ(իկ) մեծ են
„ „ e angang մարդը աշխատում է
„ „ re angang մարդ(իկ) աշխատում են
īueri īm տեսնում եմ տունը
īueri nīm տեսնում եմ տները
(Fritz, էջ 10)

Օրինակները ցույց են տալիս, որ բայն ունի հոգնակի, որով և իմացվում է ենթակայի քանակը. վերջին օրինակի համար տես բազմավորական բայ գլուխը (բային հատկացված հատորում)։ Իսկ ածականի զուգացած ձևն այն է, որ հոգնակիի դեպքում նախավանկը կրկնում են։

Յապոնիայի հարևան այնու լեզուն էլ, ինչպես սեռ ու հոլով, նույնպես թիվ չունի. միևնույն բառը թե՛ եզակի է և թե՛ հոգնակի. օր. aiai «երեխա, երեխաներ», umma «ձի, ձիեր», ainu «մարդ, մարդիկ»։ Կարելի է, սակայն, հարկավոր դեպքում հոգնակիի համար ավելացնել utara «ընկերներ» բառը. օր.

ainu—utara *մարդիկ*
aiai—utara *երեխաներ*
umma— utara *ձիեր*

Կարելի է նաև դնել čin *բառը. օր.*

aini—čin *«մարդիկ»*
čikap—čin *«թռչուններ»:*

Անասուններ հաշվելու ժամանակ գործածում են piš *բառը, իբրև նշան հոգնակիի. ինչ.*

umma tuppiš *երկու ձի*
umma reppiš *երեք ձի*

Կան և մի խումբ բառեր, որոնք հոգնակիում, սկզբից կամ վերջից, առանում են մասնիկ. օր.

kema *ոտք*, ukemex *ոտներ*
nimaki *առարմ*, unimaki *առարմներ*
ašikipet *մատ*, ašikipettu *մատներ*
(Batchelor, էջ 39)

Մի ուրիշ ձև էլ ունի այնու լեզուն հոգնակի կազմելու համար. գոյականը թողնում է անփոփոխ, իսկ եթե նա ունի ածական, այդ ածականը վերածում է հոգնակիի՝ ավելացնելով -pa *մասնիկը. օր*

pirika *լավ*, wen *վատ*
čep *ձուկը*, pirika *լավ* pa *են*
ainu *մարդ(իկ)*, wen-pa *վատ են*
(Batchelor, 50)

Բաց այսի՝ գոյականը հոգնակի է դառնում շնորհիվ իր ածականի:

Նմանապես ցուցական ածականի հոգնակիները գործածվելով գոյականի եզակի ձևի հետ՝ բավական են ցույց տալու համար, որ գոյականը պետք է հոգնակի հասկանալ (Batchelor 51):

Սոլոմոնյան կղզիների վաուբանդա լեզվով հոգնակի կազմելու համար գոյականի մոտ դրվում է անձնական դերանվան հգ. Գ դեմքը՝ hira *«ներանք». ինչ.* na ome *«մի բանց,* hira na ome *«բաներ»: Այս ձևը գիտեն նաև ուրիշ լեզուներ: Հոգնակի կազմելու մի ուրիշ ձևն էլ է կրկնել բառը* ma *(և) շաղկապով. ինչպես*

na ome ome na ome *բաներ. այս ձևը գիտեն նաև լանգգու, բաուդաուու լեզուները* (Ivens, 353):

Նույն վաուբանդա լեզվով հոգնակի կազմելու համար կարելի է գոյականի վրա ավելացնել kode, *որ նշ. «վերջացած, բոլոր»: Նույն նպատակի համար գործածվում է նաև* lalaka *«ամբողջ, բոլոր» բառը, որ կրկնված է* laka *«կատարյալ, ամբողջ, շատ լավ» բառից: Բոլորը միացնելով իրար հետ՝ ասում են.* hira na ome kode lalaka *«բոլոր բաները» (երեք բառ մի հոգնակի կազմելու համար):*

(Ivens, *էջ 353, 356*)

*Սոլոմոնյան կղզիների լանգգու լեզվում էլ անձնական դերանվան Գ դեմքի հոգնակի ձևերը (*inggira nggira, ara, *որոնք բոլորը նշանակում են «ներանք») գործածվում են գոյականը հոգնակի դարձնելու համար. ինչ.* nggira na mwane *մարդիկ,* ara na kiboa *մեղավորներ* (Ivens, 6(9):

Աֆրիկյան բամբարա լեզվի մեջ գոյականների հոգնակին կազմելու համար դնում են u *հանգը, որ Գ դեմքի դերանվան հոգնակին է և նշանակում է «ներանք»* (Butavand, 44):

Աֆրիկյան էվե լեզվով հոգնակի կազմելու համար դնում են Գ դեմքի դերանվան հոգնակին՝ wo *«ներանք». ինչ.*

ame *մարդ*, amewó *մարդիկ*
ati *ծառ*, atiwó *ծառեր*
(Westermann, *էջ 50*)

Մելանեզյան տասիկո լեզվով հոգնակի կազմելու համար գոյականի վրա ավելացնում են lala, *որ* la *«ներանք» բառից է կրկնված. օր.*

yuma lala *տներ*
lomara lala *օձեր*
(Ray, 236)

Մելանեզյան բակի լեզվով էլ հոգնակի կազմելու համար դնում են nalo *«ներանք» բառը. ինչ.*

kaliso nalo *տղայք*
veru nalo *քարեր*
(Ray, 247)

Ավելի հետաքրքիր մի երևույթ ունի աֆրիկյան պապուասյան խմբի կառե լեզուն, որի մեջ գոյականը թեև ունի 11

հոլով, բայց չունի հոգնակի և երկակի թվերը։ Հոգնակին և երկակին երևան են գալիս միայն այն դեպքում, երբ գոյականի մոտ առարկան ածական կա։ Այս պարագային երկակիի համար դնում են yahec և հոգնակիի համար՝ fâc. օր.

nole *իմ* motec *փոքր* fâc *երը*
poɒele *ձեր* nalu *աղջիկ* fâc *ները*
nâpâcne *մեր* âgo-yahec *բարեկամ-ները երկու*

Եթե սրանց մեջ fâc *չդրվեր, առարկյալը մի հատ կլիներ և միջոց չկար հայտնելու, թե նա հոգնակի է. այսպես նաև՝ երկակին։*

(Pilhofer, 56)

Սումերերենում հոգնակի կազմելու համար դնում են me, ḫia=ḫa *մասնիկները, որոնք «խումբ» նշանակող բառեր են. առաջինը գրվում է անձ նշանակող բառերի վրա, երկրորդը անասուն կամ իր նշանակող բառերի վրա. օր* Šuḫame *«ձկնորսներ»,* nitame *«ատրուկներ»,* nagidme *«հովիվներ»,* uduḫia *«ոչխարներ».—բայց հոգնակին կարելի է կազմել նաև կրկնությամբ. ինչ.*

lugal kurkurra
թագավոր աշխարհաց

(Deimel, 101—105)

Հոգնակի կազմելու շատ անսովոր մի ձև ունի աֆրիկյան սերեր լեզուն, որ հոգնակի կազմելու համար բառասկզբի թըրթռուն բաղաձայնը վերածում է խուլի և ընդհատառակը՝ խուլը վերածում է թրթռունի. այսպես d, nd, d^y, nd^y, b, mb, g, ng *դառնում են* t, t^y, p, k, *միայն* v *դառնում է* b. *իսկ երբ խուլերը դառնում են թրթռուն, միայն* p *դառնում է* f *և* t *դառնում է* r *կամ* d (Butavand, 35)։

Մալգաշերեն լեզուն հոգնակի չունի ոչ գոյականի և ոչ էլ ածականի մեջ. նույնիսկ որոշիչ հոդերը՝ եզակի և հոգնակի՝ նույնն են. օր.

ny tany tsara
le, les pays beau
ը երկիր(ները) գեղեցիկ
= գեղեցիկ երկիրը կամ երկրները

Սակայն դերանունը ունի հոգնակի. ոչ միայն անձնական դերանունը ունի «ես — մենք, դու — դուք, նա — նոքա» ձևերը, այլև մանավանդ ցուցականները ունեն re *մասնիկով կազմված հոգնակի ձևերը (ինչ.* io *այս, հգ.* ireo *և այլն)։—*

(Montagnè, *էջ 76, 88)*

Հնդկական գարո լեզվում հոգնակի չկա. գոյականը հոգնակիի վերածելու համար կողքին դնում են rāng *«խոլոր» բառը (*Grierson, III *մ.*, II, *էջ 71). Նույն բառը հնդկական բարձր լեզվում նույնիսկ դերանունների մեջ է մտել. օր* nā ng *դու,* nā rang *դուք,* ō *նա,* ō-rang *նրանք,* ō-rang-i *նրանց (առարկան ածական)։*

Հնդկական չուտիյա լեզվով հոգնակին շինում են raǰu *կամ* laǰu *մասնիկով. օր.* mōši *«մարդ»,* mōši-raǰu *«մարդիկ»։ Դերանունների հոգնակին լինում է* ru *մասնիկով, որ կրճատվելով դառնում է նաև* u. *օր. մենք—*ǰa-ru *կամ* jau. *դու—*na, *դուք—*noru, nou, *նա—*la, lā, *նրանք—*lau, bau (Grierson, III *մ.*, II, *էջ 120)։*

Մելանեզյան լիֆու լեզվի մեջ երկակին կազմում են la lue *մասնիկով, որի բուն նշանակությունն է «երկուս». իսկ հոգնակի կազմելու համար գոյականից առաջ դնում են* anga *(որ պատվի տիտղոս է և գործածվում է հարգելի մարդկանց համար),* ite *(թե անձերի և թե իրերի համար),* itete, nödei *(ընդհանուր հոգնակիի նշան),* o, i *հավանական* (Ray, 113)։

Մելանեզյան կվամերա լեզվով երկակիի մասնիկն է mi,-emi. *եռակիի՝* mirahar *և հոգնակիի՝* me (Ray, 148)։

Պապուական լեզուների ճիշտ հակառակը՝ մի խումբ ավստրալիական լեզուների մեջ ոչ միայն կենդանի են եզակին, երկակին և հոգնակին, այլև գոյություն ունի եռակի թիվը (trial), *հոգնակին այսօրվանից սկսում է չորսից։ Ավելի հետո պիտի տեսնենք, որ մի խումբ պոլինեզյան լեզուների մեջ էլ եռակիի վրա ավելանում է նաև քառակի* (quatral) *թիվը, բայց միայն անձնական դերանունների մեջ։ Հաշվական կարողության մեջ զարգացած այս լեզուների համար զարմանալի պիտի լիներ թվի այս աստուածությունը, եթե չիմանայինք, որ դա ավելի նոր ժամանակի գյուտ է, ինչպես ցույց է տալիս հենց կազմության եղանակը. այսպես ավստրալիական վուտյաբալուկ լեզվի մեջ* wille *«ագեվազ» բառից ունենք*

եզ. wille, *երկ.* willebule.
հոգ. willebarak *եռակի* willebarakkulik

ուր եռակիի մեջ kulik մասնիկի հավելումը հոգնակի ձևի վրա, ցույց է տալիս, որ եռակին հնարված է հոգնակիի հնարումից հետո (Kieckers, 136)։

Աֆրիկյան ոչ-բանաու լեզվի մեջ հոգնակին կազմվում է երեք ձևով.

ա) անձ ցույց տվող բառերից առաջ գրվում է ndi, որ նշանակում է «զրանք». ինչ.

oyi բարեկամ, ndi oyi բարեկամներ.

բ) ուրիշներ առանում են umu մասնիկը. ինչ. odibo ծառ, umu odibo ծառեր.

գ) իր կամ անառուն նշանակող բառերը առանում են ga հետաժասնիկը. օր. osisi ծառ, osisi-ga ծառեր.

xyolo քնձառյուծ xyolo- ga

Դրավիդյան կուրուխ լեզվի մեջ իգական գոյականը միայն անորոշ ձևով է. որոշյալ չունի. հոգնակիում առանում է ar մասնիկը կամ guthiar (հավաքական) հետագրությունը (երկուսն էլ անորոշ) օր. ālī «կին», ālīguthiar «կանայք»։ Բայց guthiar նաև արականի համար է։ Կա նաև baggar, որ ծագում է Bagger «շատ» բառից և առացել է ar մասնիկը. Թե արական է և թե իգական, գործածվում է ազգականների համար. կա գարձյալ xarrā «ձիել», որ գործածվում է երեխաների համար և թե՛ արականն է, և թե իգական։ Սրանցից ոչ մեկը չի գործածվում չեզոքի համար. չեզոքը առանում է միայն guthi (անորոշ հոգնակի), օր. aḍḍo եզ., հգ. aḍḍoguṭhi եղներ, man ծառ, հգ. manguṭhi ծառեր (այս guṭhi բառն էլ ծագում է goṭā «ամբողջ» բառից)։

Ուրեմն ունենք

	ար.	իգ.	չեզ.
եզ.	as (որոշյալ)	—	—
հոգ.	ar, guṭhiar	ar, guṭhiar	guṭhi
	baggār	baggar	
	xarrā	xarrā	

Ըստ այսմ ար. և իգ. ունեն միևնույն հոգնակին, ուրիշ խոսքով հոգնակին մի ևեռ է. եզակին միայն ունի ար., իսկ իգ., և չեզ. նույնն են։ Ուրեմն և երկու ևեռ կա՝ ար. և չեզ., որովհետև կինը իրրև եզակի քերականորեն չեզոք է (իր է), իսկ հոգնակիում կինը արական է։

(Hahn, էջ 10)

Անշուշտ լեզուների նախնական շրջանում թիվը գոյություն չուներ քերականության մեջ. թիվ կամ շատություն ցույց տվող որևէ բառի հարաբերությունը գոյականի հետ բավական էր հոգնակիի գաղափարը արտահայտելու համար. Այսօր էլ հայերեն առում ենք շատ մարդ, շատ տուն և կարիք չենք զգում անպատճառ շատ մարդիկ, շատ տներ ասելու. իսկ երկու հոգի, հինգ կին, առասք տղա ուղղակի պահանջ է հայերենի մեջ, փոխանակ ասելու՝ հինգ հոգիներ և այլն։

Այս նախնական դրությունը ներկայացնում են դեռ բազմաթիվ լեզուներ, որոնք չունեն հոգնակի։ Զինարենում հոգնակի չկա. ma[3] նշանակում է «ձի» և «ձիեր». հոգնակի գաղափար տալու համար գնում են բազմություն հայտնող մի բառ. ինչ. ʒən[2] tōu (մարդ բոլոր)։ Աննամերենն էլ չունի հոգնակի. Թիվը իմացվում է խոսքի ընթացքից. անհրաժեշտ դեպքում դնում են ka, ket, het t'ay, het ka, moi, may, nʸūŋ, kak tçuŋ բառերը, որոնք նշանակում են «բոլոր, ամեն», օր. moi ŋay «օրեր» (Dirr, gr. annam. 10)։ Յապոներենն էլ առանձին հոգնակի չունի և միևնույն բառը թե եզակի, և թե հոգնակի է. fude նշ. «վրձին» կամ «վրձիններ». անհրաժեշտ դեպքում գործադրվում են զանազան միջոցներ հոգնակիի գաղափարը տալու համար. այսպես օր. կղզում են ban «տասը հազար», mina «բոլոր, ամեն, շատ», sū «թիվ, շատ, šo «բոլոր» բառերը. ինչ. ban-koku «երկրներ, բոլոր երկրները», sunen «տարիներ, շատ տարիներ», šo-kun «պարոններ» (Plaut, էջ 301)։ Ջավայերենում թե գոյականների, թե դերանուններին, և թե բայերի մեջ եզակի և հոգնակի միևնույնն է. ես և մենք, ես և դուք, կամ ուտում եմ և ուտում ենք միևնույն ձևով են արտահայտում. գոյականների մեջ հոգնակին կամ թվականներով է իմացվում (հինգ մարդ և այլն) և կամ pārā, sami «մի քանի» բառերի հարաբերությամբ, ինչ. pārā ratu «իշխաններ, մի քանի իշխան»։

Երբ լեզուն սկսում է ավելի զարգանալ, հնարում է զանազան միջոցներ հոգնակին արտահայտելու, առեղծում է նոր քերականական կարգ։

Այդ միջոցներից ամենահասարակը կրկնությունն է։ Այս միջոցն են օգտագործում շատ լեզուներ. օր. չին. ʒən[2] մարդ, ʒən[2]-ʒən[2] մարդիկ, աննամ. nʸa տուն, nʸa nʸa տներ, յապոն. niči օր, ničiniči ամենօրյա, kuni գավառ, kuniguni գավառներ, tokoro տեղ, tokorodokoro «տեղեր» (Plaut, էջ 301), hito «մարդ», hitobito

«մարդիկ», ǰama «սար», ǰamaǰama «սարեր»: Սամոա (Պոլինեզիա) fulu «մազ», fulufulu «մազեր»: Սեմական լեզուների մեջ էլ հնագույն ժամանակ հոգնակին կազմվել է կրկնությամբ, որի հետքերը մնում են դեռ գոնազան ժառանգ լեզուների մեջ. ինչ. սումեր. kur «սար», kur-kur «սարեր», արամ. rabrəbē, սոսր. raṷrəbē «մեծեր» (եզ. rab), daqdəqe «փոքրեր», հբր. yom yom «օրեր», mēmē «ջրեր» և այլն: Միևնույն երևույթը գտնում ենք նաև պարսկերենում. օր. gōua gōna «տեսակ, տեսակ», և վերջապես մեր հին լեզվի մեջ. ինչ. ի քաղաքս քաղաքս, ի տունս տունս և այլն: Բուզանդի մոտ (Դ. ԾԸ) կարդում ենք. «Եւ զայլ գիտութիւնս գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, աշխարհի աշխարհ՝ ածին ժողովեցին ի քաղաքն» (եզ. և հոգ. խառն կրկնված):

Գոյականի հետ «խումբ կամ բազմություն» նշանակող բառի հարաբերությունը առաջնորդում է մարդկանց՝ հնարելու հոգնակիի մասնիկը, որ առաջին հերթին դրվում է անձ նշանակող բառերի, մանավանդ դերանունների վրա: Այսպես՝ ամերիկյան լեզուներից մի քանիսը հոգնակի չունեն, բայց նրանց մեջ դերանունները, ինչպես նաև ազգականություն ցույց տվող գոյականները հոգնակի ունեն. օր. հարիպա լեզվում lañ հոգնակերտ մասնիկով են կազմված t'alañ «մենք», dalañ «դուք» դերանունները և ազգականություն ցույց տվող բառեր: Ամերիկյան կարբիեր լեզվի մեջ գոյականը հոգնակիի նշանակություն չունի. երբ գոյականի կողքին դրվում է «շատ, բոլոր, մի քանի» և այլն բառը, հասկացվում է, որ նա հոգնակի է: Բայց անձ ցույց տվող բառերը (հայր, մայր, տղա, որբ, այրի, դյուղապետ, հյուր) առանում են հոգնակիի k'e կամ ne մասնիկը (պատահաբար նման հայ. ք և ճի մասնիկներին): Անշուշտ առարկաները չեն առանում այսպիսի մասնիկ (Morice, Carr. lang, էջ 100—102):

Ամերիկյան տակելմա լեզուն, ուրիշ մի խումբ ամերիկյան լեզուների նման, անհրաժեշտ չի համարում հոգնակին նշանակել. այդ իմացվում է խոսքի ընթացքից. բայց կա հոգնակիի համար an մասնիկը, որ երբեմն էլ առանում է han, t'an, k'an ձևերը և բավական հաճախակի է. ինչ. sīnsam «զառամյալ պառավ կին», հգ. sīnsanhan, yap'a «անձ», հգ. yap'ahan.

(Boas, հմ. 2, էջ 247)

Մանջուերեն լեզուն քիչ անգամ միայն գործ է ածում

հոգնակիի մասնիկը և այն էլ անձ ցույց տվող սակավաթիվ բառերի վրա: Ջինարենում, որ ընդհանրապես չունի հոգնակի, առկայվել է mən հետամասնիկը, որ գրվում է շնչավորների և հատկապես դերանունների վրա. ինչ. lao³-ye²-mən «պարոններ», wo-tŋ. womən «մենք», ni «դուս», ni-mən «դուք». յապոներենում էլ չկա հոգնակի. բայց դերանունների մեջ կա. այսպես kore, sore, are «այս, այդ, այն», հգ. korera, sorera, arera, նաև ware «ես», warera «մենք», omae «դուս», omaera «դուք»: Մայրահեղ պարագաներում յապոներենի մեջ հոգնակի (կամ հավաքական) կարելի է կազմել նաև հետևյալ բառերով. gata, tači, šu. domo անձ նշանակող բառերի համար (ամենից քաղաքավարականն է gata). ra- անձերի, անասունների և իրերի համար. օր. fuǰingata «տիկնայք», hitotači «մարդիկ», kodomora «տղայք» (Plaut. 391):

Մելանեզյան առլուա լեզվում հոգնակին չունեն են երկու ձևով. կամ ավելացնելով hera «ներանք» բառը.

ինչ. nimua hera «տներ,

և կամ դնելով bisogk «շատ» բառը.

ինչ. asamayk bisogk / hera } մարդիկ

Դերանունների մեջ կան երկակի և հոգնակի ձևեր. երկակին կազմելու համար դնում են rua մասնիկը (որ rua «երկու» բառն է), իսկ հոգնակիի համար til-tul մասնիկը, որ «երեք» բառն է (Ray, 274—5):

Մելանեզյան ուրիխով լեզվով հոգնակին կազմվում է niri «ներանք» բառով. ինչ.

naim niri «տներ
dan » երկրներ
ǰinis » մարդիկ

(Ray, էջ 285)

Եթովպական սահո լեզուն ունի թե մի քանի տեսակ հետամասնիկներով կազմված հոգնակի, և թե բառի վերջածայնի կրկնությամբ կազմված հոգնակի: Մասնիկներն են t, á, wá են: Ավելի շատ են կրկնությամբ կազմված հոգնակի բառերը, որոնց համար կան շատ լավ կանոններ. ինչ.

Երբ բառը վերջանում է ձայնավորով, այդ ձայնավորը չի կրկնվում, այլ՝ նրանից առաջ գտնված բաղաձայնը, օր.

iko *առամ.*— հգ. ikok
amu *գլուխ.*— հգ. amu-m
haδo *միս.*— հգ. haδoδ

Իսկ եթե բառը բաղաձայնով վերջանա, երկուսի մէջև կդրվի մի ձայնավոր, որի համար էլ որոշ կանոններ կան. օր.

han *կաթ.*— հգ. hanun
adam *մարդ*— հգ. adamam
bus *բունոց*— հգ. bus-as
af *բերան*— հգ. afof

(Reinisch, 448—9)

Աֆրիկյան սոմալի լեզուն հոգնակի կազմելու համար հետևում է երեք դրութիւն. 1) գոյականի վրա ավելացնում է u, o, in, od հոգնակերա մասնիկները. 2) բառը հոգնակիում կրկնում է ամ. պղջութիւնամբ. 3) մի խումբ միավանկ բառերի հոգնակին էլ կազմում է կրճատ կրկնութիւնամբ. օր.

gud *ծակ*— հգ. gudud
ǰid *ճամբա*— ǰidud
ged *ծառ*— gedud
mus *օձ*— musus
kis *քսակ*— kisus
hel *պղպեղ*— helul
nin *մարդ*— nimun *և այլն։*

(Praetorius, էջ 159)

Ամերիկյան կուենա լեզուն ունի երկու տեսակ հոգնակի և մի հավաքական։

Առաջին տեսակի հոգնակին կազմվում է kana մասնիկով և ցույց է տալիս «անհատական հոգնակիա, այսինքն՝ զանազան տեսակի տարբեր բաներ. ինչ. tule-kana «զանազան ժողովուրդներ», sipu-kana «սպիտակ քարեր կամ խիճեր», niis-kana «առագեր»։

Երկրորդ տեսակի հոգնակին ցույց է տալիս բնական կապ կամ զանազան տեսակի ընկերակցութիւն, պաշտոնի մէջ միութիւն. կազմվում է mala մասնիկով. ինչ. kilu-mala «քեռիներ», ammx-mala «մորաքույրներ», ua-mala «ձուկ (ձկների ցեղը)»,

ipya-mala *աչքեր (երկուսը միասին, մի պաշտոնում).—այս ձևով է կազմվում նաև գերանունների հոգնակին։*

Հավաքականը կազմվում է pi *մասնիկով և ցույց է տալիս ամբողջութիւն (ոչինչ ավելի և ոչինչ պակաս). օր.* san-pi *«ամբողջ միս կամ միայն միս (ամբողջովին միս)»,* ka-pi *«բոլոր խոտերը կամ խոտեր միայն»։*

(Holmer, էջ 188—9)

Հոգնակի կազմող տարրերի մէջ տեսանք մի խումբ բառեր, որոնք թիվ, քանակ կամ շատութիւն են արտահայտում։ Կան բառիկներ կամ մասնիկներ էլ, որոնք գործածվում են նույն պաշտոնով, բայց մենք նրանց ծագումը չգիտենք։ Ընդհանրապես կարող ենք առաջուց ենթադրել, որ դրանք (կամ գոնե մի մասը) շատութիւն ցույց տվող մի բառի կրճատ ձևերն են։ Բայց անշուշտ կան նույն ճանապարհով, բայց ուրիշ աղբյուրից բխած մասնիկներ։ Այսպիսիներից մեկն է Գ գեմքի դերանվան հոգնակին, որ զանազան լեզուների մէջ ծառայում է իբր հոգնակերա մասնիկ։ Այսպես, մոն-քմեր խասի լեզվի մէջ Գ գեմքի դերանվան հգ. ki *«նրանք» ծառայում է իբրև նշան հոգնակիի, ինչպես որ նույնի եզակին էլ (*u *«նա»,* ka *«նա») գործածվում է իբրև եզակին ցույց տվող հոգ.* (u—brīw *«մարդ»,* ki—brīw *«մարդիկ»)։ Նմանապես Թայ=Սիամ խմբից ահոմ լեզվի մէջ հոգնակիի նշանն է* khau *«նրանք» դերանունը. օր.*

khau kham—kulā *ծառաներ*
khau po *«հայրեր»*

Աֆրիկյան կպկլի լեզվով հոգնակին կարելի է կազմել ni *մասնիկով, որ պատահաբար նման է միջին հայերենի ճի մասնիկին,*

ինչ. ḍō *տղա* dōiō *հգ.*
ḍe *մայր* dēni *հգ.*

(Westermann, էջ 10)։

Մելանեզյան սինեսիկ լեզվով երկակին կազմում են iru, ruar *մասնիկով, իսկ հոգնակին* ar *մասնիկով, որոնք գրվում են նաև դերանունների վրա.* iru *նշանակում է «երկուս»։*

(Ray, էջ 303)։

Մելանեզյան ամբրիմ լեզվով հոգնակին շինում են ge *մասնիկով, որ նշանակում է «նրանք» (Ray, էջ 334)։ Դերանունները ունեն եզ., երկակի, եռակի և հոգնակի ձևեր։ Երկակին կազմվում է* zo *մասնիկով (որ է «երկու»), եռակին կազմվում է* sul

մասնիկով (որ նշանակում է երեք), հոգնակին կազմվում է -er մասնիկով (Ray, էջ 335)։

Մելանեզյան տասիրիկի լեզվում հոգնակի չկա. հոգնակիի գաղափարը տալու համար դնում են alulusi «շատ» բառը և կամ «ներանք» բառը. ինչ. inira natum } երեխաներ
նրանք երեխա

(Ray, էջ 371)

Տիբեթերենում հոգնակիի վերջավորություններն են rnams, dag, čag. երբ բառը հոլովում են, նախ դնում են այս վերջավորությունները, ապա հոլովական վերջավորությունները, որոնք նույն են եզակիի հետ (Foucaux, 25)։

Բիրմաներեն լեզվի մեջ հոգնակի կազմելու համար բառի ծայրին դնում են do մասնիկը, կամ mya «շատ» բառը և կամ այդ երկուսը միասին. ինչ.

lū մարդ, lūdo մարդիկ, lūmya մարդիկ, մի խումբ մարդիկ, lūmya do շատ մարդիկ։

Եթե մի քանի գոյական միասին գտնվեն, կարող է մասնիկը դրվել միայն մի անգամ. ինչ.

k'oung – let – k'ye – myettsie – mya
գլուխ – ձեռք – ոտք – աչք – երը

Հոգնակի կազմելու համար կարելի է նաև գոյականը կրկնել, ինչպես՝

arat-rat-do տեղեր, վայրեր

(Latter, էջ 41)

Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) վեսոխի լեզվում հոգնակին կազմվում է 3 ձևով.

ա) բառավերջից վանկ կրկնելով. ինչ.
suakaku տղա, հոգ. sua'alkala
բ) վերջից ավելացնելով min մասնիկը, օր.
kuri շուն, հոգ. kurimin
գ) բառասկզբում դնելով n նախդիրը.
yetamini մարդ, հոգ. netamini

(Macdonald, էջ 135)

Սուդանական շիլլուկ լեզվում հոգնակի կազմելու համար 3 միջոց կա. ա) մի մասնիկ ավելացնել. բ) բառի ձոնը փոխել. գ) ձայնավորի երանգը փոխել։ Բայց ոչ թե սրանցից մեկն է

գործ դրվում մի բառի համար, այլ ընդհանրապես երեքն էլ միասին։ Ամենից ավելի սովորական ձևն է բառի ծայրին դնել i մասնիկը, երբեմն էլ k, t, կամ n. եթե կա բառի մեջ թրթռուն բաղաձայն, դառնում է խուլ. օր. afudo հգ. afuti. եթե բառի ծայրին կա o իբր նշան եզակիի, այդ o ջնջվում է. ինչ. gyero «հավ», հգ. gyen. որոշ բառեր հոգնակի են դառնում առանալով ne- նախամասնիկը. օր. akayo հգ. nekai «հղորորդի».—ոնը փոխելու օրինակ է՝ atwâk «ինչ որ թաչուն», հգ. atwâk. ձայնավորը փոխելու ժամանակ կարճը կարող է երկար դառնալ, երկարը կարճ, կամ ձայնավորն ինքը ամբողջովին կփոխվի. ինչ. yet «կարիճ», հգ. yit.

Ես դիտմամբ ջոկեցի այնպիսի օրինակներ, որոնց մեջ միայն մի դերծողություն է տեղի ունեցած. բայց այդպիսի օրինակներ հազվագյուտ են. ընդհանրապես մի բառ հոգնակի դառնալու համար ենթարկվում է բոլոր երեք երևույթներին միաժամանակ։ Բայց այս բոլորի համար ոչ մի կանոն գոյություն չունի։ Լինում են նաև այնպիսի դեպքեր, երբ բառը ոչ[ինչ] բոլորովին անճանաչելի է դառնում. ինչ. fâl «դդալ», հգ. fêt-wič գլուխ, հգ. wat-dʸal «մարդ», հգ. dʸok և այլն։

Այս բոլորը սարսափելի են դարձնում հոգնակիի կազմությունը այս լեզվում. և մարդ հարցնում է, թե արդյոք արաբերենի բեկյալ հոգնակին է ավելի դժվարին, թե այս։ Անշուշտ այս։
(Westermann, էջ 46—55)։

Օվկիանիայի կարոլյան լեզվում, որ շատ նախնական վիճակի մեջ է գտնվում, գոյականը հոգնակի չունի. բայց առաջական դերանունները ունեն հոգնակի, որ կազմվում է ue նախամասնիկով։ Այսպես՝

nēi	իմ,	հգ. uenei	իմերը
nōm	քո,	ue nom	քոնոնքը
naün	իր,	uenaün	
naämem	մեր,	uenaämem	
naüš	մեր,	uenaüš	
naämi	մեր,	uenaämi	
naämi	ձեր,	uenaämi	
naür	իրենց,	uenaür	

(Tritz, էջ 13)։

Օվկիանյան լաբիալ լեզվի մեջ թևև դոյականը ոչ մի փոփոխություն չի կրում, բայց դերանունը ունի եզ., երկակի, եռակի և հոգնակի թվերը։

Մասնիկները ավելի զարգանալով սկսում են գործ ածվել ամեն տեսակ դոյականների համար, բայց դեռ բուն հոգնակիի նշան չեն, այլ կազմում են հավաքական բառեր և ըստ այսմ միայն կարևոր դեպքերում են գործածվում։ Այսպես՝ կորեական լեզուն դեռ հոգնակի չունի և անհրաժեշտ դեպքերում գործածում է teul հետադրությունը։ Հիպերբորյան գիլակ լեզվում հոգնակիի նշանն է xun հետադրությունը, բայց այս նշանը չի դրվում դոյականի վրա, եթե խոսքի իմաստից հասկացվում է, որ նա հոգնակի է։ Ամերիկյան ալինգիտ լեզվի մեջ էլ հոգնակի չկա. երբ նակի է։ Ամերիկյան ալինգիտ լեզվի մեջ էլ հոգնակի չկա. երբ հարկ լինի բազմություն ցույց տալ, գնում են q կամ qi մասնիկը, որ սակայն ոչ թե հոգնակիի մասնիկ է, այլ կազմում է հավաքական. օր. hît «տուն», hîtqî «տներ», ta «քար», teq «քարեր» (Boas, Handb, I, 166,169)։

Անցման շրջանում է գտնվում ամերիկյան դոախերա լեզուն, որ արդեն սեռեծել է հոգնակիի մասնիկ, այն է՝ iru (պատահաբար նման հյ. -եր մասնիկին), որ կցվում է դոյականներին. ինչ. er «շուն», հգ. eriru «շներ»։ Բայց կարելի է նաև հոգնակի չդնել և տեղից հասկանալ, թե բառը հոգնակի է։ Հաճախ գնում են միայն maima «շատ» կամ süpöšuai «բոլոր» բառերը, որով իմացվում է հոգնակին (Caledon, gram. goajira, էջ 12)։

Ամերիկյան տարատակ լեզվի մեջ հոգնակիի մասնիկն է echa, որ գրվում է միայն շնչավորների վրա. օր. angel «հրեշտակ», հգ. angel-echa. իսկ անշունչները չեն կարող առանձ այս մասնիկը. նրանց հոգնակին կազմելու համար գրվում է «շատ» բառը կամ նման մի բառ. ինչ.

tzacâpu քար vân-tzacâpu շատ քար (քարեր)
(Grasserie, էջ 45)։

Ամերիկյան ջիվարո լեզուն էլ գործ է ածում losa հոգնակերտ մասնիկը, բայց միայն շնչավորների համար, անշունչները հոգնակի չունեն (Brinton, էջ 23)։

Որովհետև «խումբ կամ բազմություն» նշանակող բառերը բազմաթիվ են, ուստի զանազան լեզուներ սեռեծել են նրանցից բազմաթիվ մասնիկներ. այսպես՝ կովկասյան լակ լեզվում հոգնակիի նշաններն են՝ du, diu, ru, ri, iu, û, lu, t'al, t'ttu, tti և մի քանի ուրիշ քիչ գործածական ձևեր։ Կովկասյան արչի լեզվում հոգնակիի մասնիկներն են՝ t'il, ttu, mul, ur, or, um, om, lu, lo, ut', ot', ul, ib (Dirr, Einl., 241, 255)։

Տարբեր երևույթներ են այն, որ մի լեզու ունենում է տարբեր բառերի համար տարբեր հոգնակի, և այն, որ մի բառը ունի մի քանի տարբեր ձևով հոգնակի. օր.

Ամերիկյան հատուկ լեզվի մեջ հոգնակիի մասնիկներն են una,-anu,-ane,-ai,-i,-o,-u,-ye,-î,-ki,-še,-či,-ji և չկան հատատուն կանոններ՝ իմանալու համար, թե որ բառը ինչ մասնիկ է առնում. կան էլ դեպքեր, երբ միևնույն բառը կարող է զանազան մասնիկներ առանալ. այս բոլորը սովորում են միայն վարժությամբ։ Եթովպական գալլա լեզվի մեջ էլ հոգնակին ունի շատ ձևեր, և բառը կարող է ունենալ մի քանի տեսակ հոգնակի։

Շատ անկանոն է հոգնակին նաև աֆրիկյան մինիանկա լեզվում. ընդհանրապես կազմվում է ti հետամասնիկով, բայց հաճախ գտնում ենք տարբեր մասնիկներ. ինչ. ya, na, la, ma, ko, goʒ ja, որոնք բառի վերջավանկի ձայնավորի հետևողությամբ փոխում են նաև իրենց երանգը և լինում են ya, ye, yo, yi, la, e, li, lo և այլն։ Նույնիսկ բառավերջի վանկը փոփոխվում կամ ընկնում է. կան բառեր էլ, որոնք միաժամանակ ունեն մի քանի տեսակ հոգնակի։ Օր. na «մարդ». հոգ. nali, nama, namali «մարդիկ», -tyeue «կին», հգ. tyebi, tyele, tyebile, tyelebi «կանայք»։ Այս բոլորի համար կանոն չկա, և մարդիկ վարժությամբ միայն գիտեն։

(Chéron, էջ 15—26)։

Ալբանևերենում հոգնակին ունենում է զանազան վերջավորություններ ըստ բառի տեսի և ըստ վերջավորության։ Կան մի խումբ բառեր էլ, որոնք թե եզ. և թե հոգ. միևնույն ձևն ունեն։ Այսպես են՝

faqe	երես,	երեսներ
fjalë	խոսք,	խոսքեր
fe	հավատք,	հավատներ
fugi	ուժ,	ուժեր

Ալբանևերենում կա նաև հոգնակիի մի առանձին ձև, որ կազմվում է ra մասնիկով և ցույց է տալիս ոչ թե մի առարկայի շատությունը, այլ նույն առարկայի զանազան տեսակները. օր. lule «ծաղիկ», lubra «ծաղիկների զանազան տեսակներ կամ զանազան տեսակի ծաղիկներ»։

bukē *հաց*, bukēra *զանազան տեսակի հացեր*
pemē *պատղ*, pemēra *զանազան տեսակի պատղներ*

Հնդկական մարթի լեզուն, թեև առնակրիտի շարունակությունն է, բայց հոգնակիի կազմության մեջ այնպիսի խճողում է առաջ բերել, որ քննիչը (Seddon, *էջ 10—13*) *բազմաթիվ կանոններ է դուրս բերել հոգնակիի կազմությունը սովորելու համար։*

Շատ բազմաթիվ հոգնակիններ ունի ամերիկյան սալինամ լեզուն. օր. h-m *բառնալ բառը ունի 7 ձևով հոգնակի.* ţamael, ţamelax, ţamalen, ţemhal, ţarnaténax, ţamanilax, tamanilten. *սրանց էլ դուրս ուրիշ տեսակ հոգնակիի նշաններ էլ կան. ինչ.* pal, -xe, -plet, -tenat, -el, -nel, -anel, -nanel, -tel, -let, -elet, l, -il, -el, -al, t, te, h։

Մի խումբ բառեր էլ բոլորովին անկանոն և ինքնաձև հոգնակի ունեն։ Մագոնը, որ ուսումնասիրել է այս լեզուն, էջ 22—28, այն կարծիքն է հայտնում, որ իբր թե ամեն մի հոգնակի ձև նախապես որոշ հոգնակիի երանգ էր արտահայտում, հետագայում, իբր թե, այդ երանգները կորել են, և այժմ սրանում է բոլորովին խառնակ գրություն.— այս կարծիքը, իհարկե, ճիշտ չէ։

Ամենի վատ է վերշիկերենը, ուր հոգնակի կազմելու համար 60 տեսակ մանրիկ կա, որոնք են. a, i, o, uo, wa, wo, u, jo, ju ik, ko, ng, ang, äng, ing, ong, ung, a-ing, j-ang, h-ang, kj-ang, ag-o, un—ngo, uc, nc, anc, enc, inc, w-anc, j-anc, ih-unc, inč, čing, i-č—ang, i, č-ing, a č-ing ǰu, ǰo, d-o, ting, mu, muc, ming, mičang, šu, šo, ešo, išo, kišo, ško, taru, daru, daro, taro, tero, toro, štaru, n daru, endaru (Bleichsteiner, WRKL *1, էջ 303—6*)։

Այս կարգի լեզուները գեռ չեն կարողացել ընդհանրացնել իր անել և մի կամ մյուս մանրիկին ընդհանուր գործածություն տալ։

Ավելի ուշ լեզուների մեջ սկսում է ընդհանրացումը, որ դեռևս երկու գծով. նախ առեղծվում են տարբերացումներ, որոնք հետո չփոթվելով իրար հետ՝ վերածվում են մեկի։

Կամուկերենում հոգնակի կազմելու մանրիկները 5 հատ են. s, d, ni, ud, ir, čud. *սրանցից յուրաքանչյուրը հատուկ է բառի ասյա կամ այնվերջավորության. օրինակ՝ ձայնավորով վերջացող բառերը առնում են* s *(ինչ.* noxa *շուն,* noxas *շներ),* n *բազաձայնով վերջացող բառերը ջնջում են այդ ձայնը և իբրև հո-*

նակիի մանրիկ առնում են d, *այն բոլոր բառերը, որոնք վերջանում են բաղաձայնով (բացի* n-*ից և* g-*ից) առնում են* mud *մանրիկը...* (Санжеев, *էջ 39*)։

Հոգնակիի մանրիկների տարբերացման մեջ միայն մի քայլ է արել ամերիկյան մակուչի լեզուն, որ ճանաչելով շնչավոր և անշունչ տեսակ, իր 8 հոգնակերտ մանրիկներից մեկը հատկացրել է անշունչներին (kon *մանրիկը*), *իսկ մյուսները խառն ձևով գործածում է շնչավորների համար* (sa-ma, to-non, čan, nan, ran, po-kon, gon)։ *Մինչև անգամ ցուցական և հարցական դերանունները հոգնակիում այլ ձև ունեն շնչավորների համար, և այլ ձև՝ անշունչների համար* (Williams, 51)։

Տարբերացումից ընդհանրացման անցնելու օրինակ է բացի պրս. ān *և* hā *ձևերի միացումից, նաև բիրմանական լեպխա կամ ռոնգ լեզուն, որ հոգնակիի համար ունի երկու մանրիկ. շնչավորների համար* sang, *անշունչների համար՝* pang. *ինչ.* ma-rò sang *«մարդիկ»,* li- pang *«տներ», բայց կարելի է նաև շնչավորների համար էլ գործածել* pang *ձևը, ինչ.* ma-rópang *«մարդիկ»։*

(Grierson, *հտ. Գ, մասն 1. էջ 237*)։

Սրանով sang *ձևը ջնջվում է և* pang *դառնում է ընդհանուր։*

Ընդհանրացման հասնելու միջոցներից մեկն էլ երկու մանրիկ գումարելն է. օր. Հիմալայան լիմբու լեզուն հոգնակին կազմում է hā *կամ* sī *մանրիկներով. ինչ.* pā-hā *«հայրեր»,* sā-sī *«պողաներ». բայց կարելի է նաև երկուսը միացնել. օր.* ōn-hā-sī *«ձիեր»,* pā-hā-sī *«հայրեր, նախնիք»* (Grierson, *հտ. 3, մասն 1, էջ 285*)։

Տարբերացումից ընդհանրացման անցնելու օրինակ է գարխալ Զիլիի բնիկների լեզուն, ուր հոգնակիի մասնիկն է pu. *օր.* pučao *«հայրեր»։ Նույն լեզվի որոշ բարբառներ գործածում են հետագա* pu *շնչավորների համար, իսկ* ika *անշունչների համար, ինչ.* rukaika *«տներ»։ Բայց ուրիշ բարբառներ էլ* pu *դարձրել են ընդհանուր* (Febres, *էջ 4*)։

Ամերիկյան մասսաչուզետ լեզուն զանազանում է իրարից շնչավոր և անշունչ առարկաներ. շնչավորների հոգնակին կազմում է og *մանրիկով. ինչ.*

wosketomp	*մարդ, հոգ.*	wosketompaog
mittamwossis	*կին*	mittamwossissog
manit	*առաված*	manittoog

ox *(անգլ.)* եզ — oxesog
horse *(անգլ.)* ձի — horsesog
puppinašim *գազան* — puppinašimwog
muhhog *մարմին* — muhhogkôog
anogqs *ատող* — anogqsog

(մարմինը և ատաղը չնչավոր են համարվում. իսկ մարմնի մասերը, ինչպես և առաքինություններ և մոլություններ՝ անշունչ են. բայերն էլ, եթե հոգնակի դառնան, անշունչ կհամարվեն)։

Անշունչ առարկաները հոգնակիում առանում են aš *ինչ.*

hussun *քար* — հոգ. hussunaš
mehtuy *ծառ* — հոգ. mehtugquaš (Eliot, *էջ 8—10*)։

Մի փոքրիկ առարկացում էլ մտցրել է հիպերբորյան յուկագիր լեզուն, որ ուներ հոգնակիի համար երկու ձև. pe *և* pul, *ինչ.* šorómo *մարդ, հոգ.* šorómo-pe, šorómo-pul'.

Եթե գոյականից առաջ կան 2—5 թվերը, գոյականը կառանա pe *հոգնակի նշանը, իսկ եթե թվականը 5-ից ավելի է, գոյականը կառանա կրկնակ հոգնակիի նշան. ինչ.*

3 երիտասարդ կին yan pái-pe
6 երիտասարդ կին málgiyan pái-pepul'
(Jochelson, *էջ 110—111*)։

Օվկիանյան առնիթի լեզվով հոգնակի կազմելու համար գոյականից առաջ դնում են na, mau, tau, pue, hui *նախամասնիկները, որոնց գործածության տեղը տեղացիք լավ գիտեն, բայց օտարները չեն հասկանում։ Սրանցից* na *և* tau *ցույց են տալիս «մի երկու կամ մի քանի հատ», այսինքն դուռ հոգնակի չէ, այլ եզակիի և հոգնակիի միջև գտնված մի եզր։ Օր.*

ia *ձուկ*, na ia *2—3 ձուկ*
ofai *քար*, na ofai *մի երկու քար*
ua haere mai na feata
եկել են մի — երկու հոգի

tau *ցույց է տալիս «մի քանի», իսկ* mau *«շատ». օր.*

tau mahana *մի քանի օր*
fetia *ատող*, mau fetia *ատողեր*
feniua *երկիր*, mau fenia *երկրներ*
te mau manu *թռչուններ.*

Նույն լեզվի մեջ կան մի քանի ածականներ, որոնք իրենց հոգնակին կազմում են մի ձայնավորի կամ մի վանկի կրկնությամբ. օր.

e *տարբեր*, հոգ. ee
ino *վատ*, հոգ. iino
maita *լավ*, հոգ. maitatai
rahi *մեծ* հոգ. rarahi
(Sénac, *էջ 19*)։

Եթե մեկը ուզենար եզրակացություն հանել որանցից, թե հոգնակիի որ ձևը նախավորն է, կրկնությամբ, թե մասնիկնեով, դոնե այս լեզվում, անշուշտ պիտի հետևցներ, թե կրկնությանն էր հնագույնը։

Ամերիկյան. մայա լեզվում հոգնակիի մասնիկն է գոյականի համար՝ ob, *ածականի և դերբայի համար* ak, tak, lak. *օր.*

uç na *լավ տուն*
uç-tak na-ob *լավ տներ*
(Tozzer, *էջ 95*)։

Ամերիկյան անտի լեզուն հոգնակիի համար ունի 2 մասնիկ. gei *և* paye, *առաջինը արտական, երկրորդը՝ իգական և չեզոք բառերի համար. օր.*

amachenga-gei *մարդիկ*
chinane-paye *կանայք*

Կա նաև ni *մասնիկը (պատահաբար նման հայ.-ին մասնիկին), որ գոնվում է սակավաթիվ բառերի վրա. ինչ.*

aparo *մեկը*
aparo-ni *մի քանիսը.*
(Z. Adam, Indios Antis, *էջ 20*)։

Դրավիդյան տուլու լեզվում հոգնակին կազմվում է rə *(պատահաբար նման հյ. եր- մասնիկին), կամ ļə մասնիկներով. օր.* kartave *տեր*, kartaverə *տերեր։ Ազգակցական անունների հոգնակին կազմվում է* aḍļu *մասնիկով* (Brigel, *էջ 10—11*)։

Ամերիկյան կիչ լեզուն հոգնակին կազմում է բառի առաջին վանկի կրկնությամբ կամ nöt, rot *մասնիկներով. ինչ.*

kīč *ատուն, հոգ.* kīkič *տներ*
haix *լեռ, հոգ.* hahaix *լեռներ*
mohai *վատ, հգ.* momohai *վատեր*
činui *փոքր, հգ.* čičinui *փոքրեր*
yupixa *սև — հգ.* yupinöt *սևեր*
arawātai *սպիտակ — հգ.* rawānöt
worōit *մարդ — հգ.* wororot *մարդիկ*

(Buschmann, *էջ 512*)։

Ամերիկյան կրի լեզվում հոգնակի կազմելու համար շնչավորների վրա դնում են -ok, -ak *մասնիկները (որոնց համար կանոն չկա), իսկ անշունչների վրա՝* -a (Lacombe. *էջ 5, 144*)։

Ամերիկյան դակոտա լեզվում գոյականների հոգնակիի նշանն է վերջահար pi *մասնիկը, որ նաև բայի խոնարհման ժամանակ իբրև հոգնակիի նշան է գործածվում. օր.* šunka «շուն», šunkapi «շներ»։ *Անշունչ իրերի անուննները հոգնակի չունեն. ինչ. ծառ, տուն և այլն։ Ածականները հոգնակիում առանում են կամ նաև* -pi *մասնիկը և կամ կրկնում են բառի սկզբի, միջի կամ վերջի մի վանկը. օր.*

wašte *լավ,* *հոգ.* waštepi *կամ* waštešte
tankinyan *մեծ, լայն, հոգ.* tankinkinyan
tanka *մեծ, հոգ.* tanktanka

(Riggs, *էջ 42, 46*)։

Բերբերական կարիլ լեզվում արական բառերի հոգնակին կազմելու համար նախ բառակզբի ձայնավորը դարձնում են i, *ապա բառի վերջում ավելացնում են* n, *որ կարող է դառնալ նաև* en, in, an, un, uan, *երբեմն էլ բառի վերջին ձայնավորը դարձնում են* a, *կամ նախավերջին ձայնավորը փոխում են* a-*ի։ Իգական բառերի հոգնակին կազմելու համար նախ նրա արական ձևի սկիզբը դնում են* th, *ապա բառի վերջում դնում են* in, atin, inin *կամ նաև՝* a։ *Բայց այս բոլորի համար ոչ մի կանոն չկա. սովորում են միայն վարժությամբ։*

(Hanoteau, *էջ 22*)։

Ճիշտ այսպես է բերբերական տամաշեկ լեզուն էլ, որ կրկին լեզվի ազգակիցն է։ Արական բառերի հոգնակին լինում է երկու ձևով. ա) բառի սկզբում եթե կա a *կամ* e *ձայնավորը, հոգնակիում դառնում է* i, *բ) ամեն տեսակի բառ՝ ընդհանուր կանոնով՝ հոգնակի դառնալու համար բառավերջում առանում է* n,

որ կարող է նաև իրենից առաջ ունենալ զանազան ձայնավորներ. ինչ. asaka *միամյա ուղտ — հգ.* isakan

ašek *ծառ — հոգ.* iškan

սմանք էլ մի ավելորդ -t *են կպցնում. ինչ.*

akerua *գառն —հգ.* ikeruaten

երբեմն էլ բառի վերջավանկի ձայնավորը դարձնում են a, *ինչ.*

anhil *ջայլամ — հգ.* inhal

կամ զանազան, ուրիշ անկանոն ձևերով. ինչ.

afuc *ձեռք — հգ.* ifassen
ehī *ճանճ — հգ.* ihan
imi *բերան — հգ.* imauen

իսկ իգական բառերի հոգնակին կազմվում է արական հոգնակիի սկիզբը դնելով t *և եթե բառավերջում կա անգական՝ վերածելով* in, *օր.*

imrareñ *ձերեր — հգ. իգ.* timrarin
ikeruaten *գառներ — հգ. իգ.* tikeruatin
inhal *արու ջայլամներ — հգ. իգ.* tinhal

(Hanoteao, *էջ 19, 21*)։

Զեչեներենում հոգնակի կազմելու համար բառի վերջում դնում են š, arš, muš, naš, rči, y, ri *մասնիկները, որոնց ընտրության համար ընդհանուր կանոն չկա* (Мациев, *45*)։

Հնդկական նեվարի լեզվի մեջ շուրջ 6 տեսակ հոգնակի կա, հետևյալ ձևով։ Նախ անշունչ առարկաների անուննները հոգնակի չունեն, միայն շնչավորներն ունեն հոգնակի, որ կազմվում է pani *կամ* -to, ta- *մասնիկով։ Առաջինը դրվում է փոխառյալ բառերի, առավածների անուննների, ինչպես և գերբայների վրա, եթե սրանք իրը գոյական գործածվեն. ինչ.* rāǰā-pani «թագավորներ», coñ-pani «ննաաձները». *իսկ* putr-pani «որդիներ», *բնիկ նեվարի բառերի վրա քիչ է պատահում. ինչ.* kāy-pani «որդիներ», jhamgalpani «թուչուններ»։ *Բնիկ բառերի վրա դրվում է* -to, -ta *մասնիկը, ինչ.* mocāto «երեխաներ», misāto «կանայք»։ salato «ձիեր»։ *Ինչ անգամ կարող է դառնալ փոխառյալ բառերի վրա։*

Իսկ եթե հարկավոր լինի անշունչ առարկաների անուններն էլ հոգնակի դարձնել, դնում են dakwo, samast, saklē, «բոլոր» *և* oneg «շատ» *բառերը* (Jorgensen, *17—18*)։

Ամենից խառնակ է աֆրիկյան աշխատ լեզուն, որ գրաւում ենք հոգնակիի հետևյալ ձևերը.

ա) կան բառեր, որոնք հոգնակիում փոխում են բառի առաջին ձայնաւորը. ինչ. ohene «թագաւոր», հգ. ahene.

բ) ուրիշ բառեր սկզբից ավելացնում են a ձայնաւորը. ինչ. gyata «առյուծ», հգ. agyata.

գ) ուրիշներ առաջին ձայնաւորը դարձնում են m, ինչ. oba «աղջա», հգ. moba, apata «ձուկ», հգ. mpatā «ձկներ»:

դ) ոմանք բառավերջի ni մասնիկը դարձնում են fo, ինչ.

oburoni եվրոպացի, հգ. aburofo
obibini խաւիշիկ, հգ. abibifo

ե) ազգակցական բառերը հոգնակիում առանում են nom. մասնիկը. ինչ. agya «հայր», հգ. agyanom.

զ) կան բառեր, որ ունեն մի քանի տեսակ հոգնակի. ինչ. ohene «թագաւոր», հգ. ahene և ahemfo.

է) վերջապես կան բառեր, որոնք հոգնակի չունեն. եզակի և հոգնակի նոյնն են. ինչ. esono «փիղ», nsa «ձեռք» և այլն:

(Christaller, 33):

Այս բոլորը ցույց են տալիս, որ լեզուն գտնվում է անցման շրջանում և որոնում է. կատարում հոգնակի գտնելու համար:

Սեմական լեզուների մեջ և հատկապես արաբերենում թիվը բաբանվում է 4 տեսակ. Առաջին երկուսն են եզակի և հոգնակի, որոնք ուղղակի մեկ կամ մի քանիսն են ցույց տալիս: Երրորդ տեսակն է հավաքականը, որ ձևով եզակի է, բայց ցույց է տալիս մի խումբ կամ բազմություն. երբ այսպիսի բառերից ուզենանք մի եզակի կազմել, այն ժամանակ կատանանք մի նոր ձև, որ է չորրորդը: Այսպես «մազ» բառից, որ մի խումբ կամ մի ամբողջություն է ցույց տալիս, կշինենք այն, ինչ որ կոչվում է nomen unitatis (խմբից մեկը, մի հատ մազ), մինչդեռ հավաքականը (մազ) կոչվում է generalis.

Այն, ինչ որ արաբերենում կոչվում է جمع مكسر ǰamm'-i mukassar (բեկյալ հոգնակի), հավաքական ձևն է, որ կազմվում է արմատի ներքին ձայնավորների փոփոխությամբ: Այս կազմից սեմական լեզուների մեջ ամենից գերազանցը արաբերենն է, մյուսները շատ ավելի սակաւ չափով են: Իսկ եթովպացերենում քիչ չեն նման ձևեր:

Հոգնակիի հինգերորդ ձևն է արաբ. جمع جمع ǰam'-ul-ǰam, «հոգնակիի հոգնակի, կրկնակի հոգնակիի» կոչված հոգնակին, որ բոլոր սեմական լեզուների մեջ կա, և հատկապես արաբերենում: Բայց եթովպացերենը այնքան է առաջ տարել այն, որ գերազանցում է բոլոր սեմական լեզուները: Կրկնակ հոգնակին կազմվում է բեկյալ (կամ անկանոն) հոգնակիներից, որի համար երկու պատճառ կա. ա) կրկնակ հոգնակին ըստ ձևի հոգնակի չէ. այսինքն հոգնակի արաբ.-ān կամ հգ. իգ. āt մասնիկները չունի, ուստի գյուրավ կարող է առանալ. բ) նրանցից շատերը հավաքական բառեր են, այսինքն՝ մի քանի մասերից կազմված առարկաների անունն են և՝ դրա համար էլ ներքին փոփոխությամբ հոգնակի են դարձել. ինչ. երկինք, առնգուղք, գրական սիրուղք և այլն. բնական էր, որ այս կարգի բառերը առանային հոգնակիի նշան և իրոք հոգնակի դառնային, ինչպես՝ հյ. կառք, կառքեր: Եթովպացերենում այսպես կրկին հոգնակի ունեն հատկապես գետի, ծովի, լեռների, տեղերի, գործիքների, ամիսների, ժամանակի, երկրների, ազգերի և այլն անունները (Dillmann, էջ 226—7, 237—249):

Դրավիդյան կուի կամ կանդ լեզվի մեջ հոգնակիի մասնիկները հետևյալներն են. արական բանական էակներ — aru

իգական » » — sak, riska, liska

չեզոք անբանական » » — ŋga, ska, ka

անշունչ իրեր

(Friend-Pereira, 14—15)

Չիլիի առուկա լեզվում հոգնակիի համար կա երկու մասնիկ. առաջինն է pu, որ լինում է նախադաս և գործածվում է շնչավորների համար, երկրորդն է yüca, որ լինում է հետադաս և գործածվում է անշունչների համար. օր. puche «մարդիկ», pu domo «կանայք», ruca yüca «տներ», cüdü yüca «շորեր»: Երբ գոյականը ունի իր հետ ածական, հոգնակիի նշանը դառնում է que, որ դրվում է ածականի և գոյականի միջև. ինչ.

cüme que che huera que che cay
բարի ներ մարդ չար ներ մարդ և

(= բարի մարդիկ և չար մարդիկ):

(Grasserie, էջ 14, 17):

Ամերիկյան կիբիրի լեզվում հոգնակի չկա. իմացվում է մեկից կամ մուր դրված թվականից, բայց ունի նաև երկու

առեակ հոգնակերտ մասնիկ, որոնք սացել են տարբերացում. վերջադիր a դրվում է մարդուն պատկանող առարկաների համար (ինչ. vinua «տղաներ», bechiça «մարդու ձևոքով անկված բույսեր»), իսկ te դրվում է մի քանի ազգականական և նման բառերի հետ (ինչ. byraente «իրատեր եղբայրներ», tidzite «հանդնայք», isete «առանուաներ»):

(Gabelentz, էջ 7):

Հինդուքուշի խովար լեզուն էլ հոգնակիի մեջ շնչավորների համար գործածում է ān մասնիկը, անշունչների համար՝ ā'n մասնիկը, որոնց միացման համար շատ չնչին բան է մնում. Բայց այս լեզուն այն զարմանալի հատկությունն ունի, որ եզ. ուղ. և հգ. ուղ. չեն տարբերվում իրարից. օր.

dag «տղա, տղաներ»
an «տատ, տատեր»

ուրիշ խոսքով՝ հոգնակի կազմող մասնիկը չի դրվում ուղղականի վրա, իսկ մյուս հոլովների վրա (հայց. սեռ. և այլն) դրվում է: Այսպիսով, այս լեզվում հոլովումը բաժանվել է երկուսի. շընչավորների հոլովում և անշունչների հոլովում, որոնց գլխավոր տարբերությունը այն է, որ մեկի մեջ դրվում է ān մասնիկը հոգնակիի հիշյալ հոլովներում, մյուսի մեջ ā'n: Այս լեզվի մեջ մինչև անգամ էական բայը զանազանվում է. շնչավորների համար լինում է assik «լինել», անշունչների համար՝ šik «լինել»:

(Grierson, հտ. 10, էջ 284—5):

Տարբերացման օրինակներ են նաև հետևյալները. արաբերենում և եբրայերենում արական բառերի հոգնակին ուրիշ մասնիկով է կազմվում, իգական բառերի հոգնակին ուրիշ: Եբրայեցերենում այն բառերը, որոնք եզակիում մերթ արական են և մերթ իգական, հոգնակիումն էլ առանում են համապատասխան մասնիկը: Աբխազերենի մեջ բանական էակների հոգնակիի նշանն է -c^{v}a, իսկ ոչ-բանական էակներինը՝ k'wa. օր. á-an «մայր», à-anc^{v}a «մայրեր», a-žà «ընտանատակ», a-žakwa «ընտանատակներ»: Երբեմն երկու մասնիկ միասին է դրվում, ինչ. a-xàcca «մարդ», axàc^{v}a կամ axac^{v}k'wa «մարդիկ» (Dirr, Einl., էջ 41): Պարսկերենն էլ զանազանում է շնչավոր էակների համար հոգնակիի ān մասնիկը և անշունչների համար՝ hā մասնիկը, ինչ. mardān «մարդիկ», zanān «կանայք», gurgan «գայլեր», tanhā «մարմիններ», sarhā «գլուխներ» և այլն: Այստեղ սկսում են նախայն շփոթություններ և անկանոնություններ. օր. պրսկ. āfitāb «արև», māh «լուսին», rūz «օր», šab «գիշեր», թեև անշունչ, բայց հոգնակիում առանում են ān մասնիկը. āfitābān, māhān, rūzān, šabān, direxț «ծառ» բառը հոգնակիում լինում է երկու ձևով՝ direxthā և dirextān: Նույնպես և šab «գիշեր», šabān, sābha և lal «շրթունք» 'labān և labhā, šuturān-šuturhā «ուղտեր»: Սրանք բացատրվում են այնպես, որ իբր թե աճող, մեծացող կամ փոխվող առարկաներ լինելով՝ համապատասխան են շնչավոր: Շփոթությունը ընդարձակվելով՝ վերջապես մասնիկներից մեկը ընդհանրացել է և առաջանում է մի ընդհանուր մասնիկ. այսպես, պարսկերենում թեև գրական լեզուն զանազանում է շնչավորների համար ān և անշունչների համար hā մասնիկը, բայց ժողովրդական լեզուն ընդհանրացրել է ān մասնիկը, և ընդհանրացրել hā: Շնչավորների և անշունչի տարբերությունը վերացված է: Բերելիքներից, որ նույնպես իրանական լեզու է, բնավ չգիտե hā և իբր հոգնակի մասնիկ ճանաչում է միայն ān. օր. log «տուն», logān «տներ» (Grund. ir. phil I, 238): Լևհերենն էլ առեղծել է ուրիշ տեսակ զանազանություն հոգնակիի մեջ. անձ նշանակող բառերի մեջ պատվավորների համար դրել է owie մասնիկը, իսկ սովորականների համար e կամ i մասնիկը: Այսպես՝

króle թագավորներ (սովորական) և krolowie թագավորներ (պատվավոր ձևով).

męże մարդիկ (սովորական) և mężowie անձինք (պատվավոր ձևով):

Վերջապես խաղերենը հոգնակիի տարբերությունը գործ է ածում գոյականի իմաստն էլ զանազանելու համար. օր.

ossi կորիզներ, ossa ոսկորներ
risi բրինձներ, risa ծիծաղներ
legni նավեր, legne փայտեր և այլն:

(Ferrari, 39):

Այս տեսակետից զարմանալի է աֆղաններենը, որ շատ ավելի հետամնաց է, քան իր ընկերները (պարսկերեն և բելուջերեն). հգ. ուղղականի համար ունի զանազան ձևեր, որոնց համար ոչ մի ընդհանուր կանոն չկա: Համմա.

ghar լեռ, հգ. ghrā
ās ձի, āsūna
lindai ագեղնավոր, līndī
zrā ալիր, zrūna
ǰan աղջիկ, ǰani
špa դիշեր, špē
ghlā դոզուքյուն, ghlā

Սրանցից դուրս կա նաև ān հոգնակերտ մասնիկը, որ Դարմեստետերը համարում է պարսկերենից փոխառյալ և ասում է, թե սահմանափակված է միայն ոչ բնիկ ածականներեն բառերով (Darmesteter, Chants pop., էջ LXX և LXXII)։

Սոլոմոնյան կղզիների ֆիջիերդա լեզվով tama բառը ցույց է տալիս մերձավոր անձանց խումբ. ինչ. tamahogoni մոտիկ ազգականներ (hogo ազգական բառից)։

tamavavine եղբայր և քույր
tamatahi եղբայրներ, քույրեր
tamatau այր և կին
tamadale հայր և որդի
(Ivens, էջ 1082)։

Ֆրանսերենում ընդհանրապես հոգնակիի համար առանձին ձև չկա. բառավերջում գրված s կամ x տառերը չեն հնչվում, ուստի ձևական են միայն. հոգնակին հասկացվում է բառից առաջ հոդով, որ եզակիում ուրիշ ձև ունի, հոգնակիում մի քիչ տարբեր, իսկ ձայնավորով սկսվող բառերից առաջ էլ տալիս է z հնչյունը. ինչ.

la porte դուռը, les ports դռները
l'arbre ծառը, les arbres ծառերը
(ըստ հնչման lapert, lepert, larbr, lezarbr)։

Պրովանսալը, որի ուղղագրությունը հավատարիմ է արտասանության, ավելորդ տառեր չունենալով, հոգնակին միայն հոդով է զանազանում. ինչ.

lou castèu դղյակը
li castèu դղյակները
(Savinian, էջ 16)

Երկու տեսակ հոգնակիները ջնջելու ձևերից մեկն էլ երկուսի միացումը կամ գումարումն է։ Այսպես է թաթերենը, որ պարսկերենի ān և hā (շնչավոր և անշունչ) մասնիկները գումարելով՝ կազմել է hon(ha>ho+on), ինչ.

xunä-hon տներ
väzir-hon վեզիրներ
möhon մայրեր, pül-hün փողեր

Նույնիսկ մի խումբ բացառիկ բառեր, որոնք պատահաբար պահել են an>un՝ հոգնակի մասնիկը, դրա վրա նորից ավելացնում են այս նշանակերտ hon մասնիկը. ինչ.

piyär հայր, հգ. piyär-un, piyär-un-hon
zän կին, հգ. zän-un
märd մարդ, հգ. märd-un,
bror եղբայր, հգ. bror-un, bror-un-hon
xuvar քույր, հգ. xuvar-un, xuvar-un-hon
(В. Миллер, էջ 28)

Այս բոլորը հիշեցնում են մեր հգ. ներ մասնիկը, որ գումարն է եր+ներ մասնիկների. ինչպես նաև աղջկ-եր-ք, տղ-եր-ք, աղա-ք-ներ, կնկտիք, ոսկրատիք և այլ կրկնակ հոգնակի ձևերը։

Կրկնակ ձևով հոգնակիներ ունի նաև ռուսերենը. ինչ.

годы, года տարիներ
слесари, слесаря փականագործներ
учители, учителя ուսուցիչներ և այլն։

Այս վիճակը անցման շրջան է. ժողովուրդը մի օր պիտի ջնջի անշուշտ նրանցից մեկը և կամ պիտի մոցնե տարբերությամբ. ինչպես որ արդեն ունենք՝

учители մեծ ուսուցիչներ, վարպետներ
учителя սովորական ուսուցիչներ

Կովկասյան ավարերեն և դարգիա լեզուների մեջ հոգնակին շատ անկանոն է։ Անկանոնությունը բխում է նախ հոգնակիի վերածվելու ժամանակ բառի կրած ներքին փոփոխություններից, որով բառաձևը անճանաչելի է դառնում թե՛ ավարերենում,

և քե (նույնիսկ ավելի մեծ չափով) դարգվա լեզվում, օր. դարգվա լեզվով՝

gwani փոր— հգ. gummi փորեր

Երկրորդ. հոգնակիի վերջավորությունները բազմաթիվ են և իրարից շատ տարբեր. և կարելի չէ որոշել, թե ինչ կանոնների համաձայն լեզուն այս բազմաթիվ և բազմազան վերջավորությունների մեջ որ բառի համար որ մասնիկն է ընտրում, երբ փոխ է առնվում լեզվի մեջ ուրիշ լեզվից օտար բառ, չգիտեն, թե ինչ մասնիկ պետք է դնել հոգնակիի վերածելու համար։ Ավարերենում գոնե որոշվել է այս գեպքում դնել իրրև ընդհանուր մասնիկ zabi, իսկ դարգվա լեզվում դեռ այդպիսի ընդհանուր մասնիկ չի տարածվել, խոսողները գնում են մերթ այս և մերթ այն մասնիկը՝ առանց խորության։ Մի խոսքով չգիտենք, թե որն է հոգնակիի մասնիկը և հոգնակին վերածել որևէ կանոնի հպվով թե հպ̌ողվի։

(Жирков, էջ 47, 56—57)

Կովկասյան ուրիշ լեզվով հոգնակիի մասնիկն է na, ինչ.

a-t'it'-giza-na մեծ մարդիկ
ն-այր-մեծ-ք

Բայց հաճախ հոգնակիի մասնիկը չի գրվում, եթե տեղից իմացվում է, որ բառը հոգնակի պիտի լինի։ Այսպես, օր. առոգական նախամասնիկները եզակի և հոգնակի տարբեր ձև ունեն ուստի երբ հոգնակիի նախամասնիկ է գրված, այլևս na հոգնակիի մասնիկը չի գրվում։ Օր. γθ-çi իր ձին, γo-çi իր ձիերը, (այստեղ γθ «իր» եզակի է, γo «իւրք» հոգնակի է, ուստի չի առնում çi-na (Dumézil, 35)

Անհրաժեշտ չէ, որ գոյականը հասնի հոգնակիի ամբողջ ձևին. օր. բրահուի լեզվի մեջ ընդհանրապես գոյականը հոգնակիի նշան չի առանձնում։ Բայը գրվում է կանոնավոր կերպով հոգնակի և այդ բավական է, որ գոյականն էլ հոգնակի հանկացվի։

(Caldwell, էջ 232)

Եթե «բազմություն» ցույց տվող բառերի հարաբերություն հասցնում է մեզ մի հոգնակերտ մասնիկի, կրկնությունը առած է գնում ուրիշ ճանապարհով և առեղծում նոր հոգնակիի ձև։ Նախ կրկնությունը կարող է լինել կրճատ. օրինակ՝ ամերիկյան

լեզվի մեջ հոգնակին կազմելու համար բառը կրկնվում է ամբողջությամբ կամ կրճատ ձևով. ինչ.

t'ag լեռ, t'agt'ag լեռներ
gan ծառ, gangan ծառեր
wālb առուն, wîlwālb առներ
ptô դուռ, pptô դռներ

Կարելի է կրկնել միայն առաջին վանկը. ինչ. ամերիկյան սահոպային լեզվով pitin «աղջիկ», pipitin «աղջիկներ», ամերիկյան առնոր լեզվով՝ teodi «աղամարդ». հգ. teteodi. կարելի է կրկնել միայն վերջին վանկը. այսպես՝ պոլինեզյան առնիթի լեզվով՝ taata maitai «լավ մարդ», հգ. taata maitatai (կրկնելով ածականի վերջավանկը). աստր. alka-tu «ճանապարհ», հգ. al-kātu կամ alkākātu, šamū «երկինք». հգ. šamamū, mū «ջուր», հգ. mamū (Ungnad, Asr. gram. 21)։ Աֆրիկյան հաուսա լեզվով՝ ira «ժողովուրդ, ազգ», irari «ազգեր», fure «ծաղիկ», furari «ծաղիկներ», danga «պարտեզ», dangogi «պարտեզներ», tufa «շուր», tufofi «շուրեր» (Marré, Spr. d' Hausa, էջ 44)։

Ամերիկյան մայա լեզվում al վերջացող բառերի հոգնակին կազմվում է վերջավանկի կրկնությամբ. ինչ. Çupal «աղջիկ», Çupl-al «աղջիկներ» (Tozzer, 37)։ Կան ածականներ, որոնց հոգնակին կրկնությամբ է կազմվում. ինչ.

taš-be հարթ ճանապարհ
ta-taš be-ob հարթ ճամբաներ

Նկատելի է, որ ածականը ուրիշ ձևով է հոգնակի կազմում (կրկնությամբ), գոյականը՝ ուրիշ (հետամասնիկով)։

(Tozzer, էջ 96)

Նկատելի է նաև, որ այս լեզվի մեջ հոգնակիի վերջավորությունը դրվում է գոյականի վրա միայն այն դեպքում, երբ նա ունի ածական, թեև կարող է պատահել, որ թե գոյականը, և թե ածականը առանձին հոգնակիի վերջավորություն (Tozzer, էջ 95)։

Եթովպական գալլա լեզվում ածականները թե սրական, և թե իգական, հոգնակի են դառնում միշտ նախամասնիկի կրկնությամբ. օր.

	ար.	իգ.	հգ.-ար.	հգ. հգ.
դեղեցիկ	bareida	bareidu	babareido	babareidu
դեղին	daleča	dalati	dadaleča	dadalati
սև	gurača	gurati	gugurača	gugurati

(Hodson, էջ 80)

Ամերիկյան նահուատլ լեզուն (Մեքսիկա) հոգնակիի կազմության մեջ պահում է երեք դրությունները էլ։ Նախ նկատենք, որ այս լեզվում հոգնակիի մասնիկ առանում են միայն շնչավորները. անշունչների հոգնակին կազմվում է miec «շատ» բառի հարադրությամբ. մի քանի անշունչ առարկաների անուններ միայն արդեն անցել են շնչավորների խմբի մեջ։ Շնչավորների հոգնակին կազմվում է me, que և tin մասնիկներով. օր.

ocelo-tl *վագր.* — հգ. ocelo-me
quauhtl *արծիվ* — quauhtin
oquich-tl *մարդ* — oquichme, oquichtin

կամ կրկնելով բառի առաջին վանկը, օր.

teo-tl	*աստված*	— հգ.	te-teo
coa-tl	*օձ*	— »	co-coâ
conetl	*երեխա*	— »	co-conê
ticitl	*բժիշկ*	— »	ti-tici
coyotl	*շնագայլ*	— »	co-coyô
maçatl	*եղջերու*	— »	ma-maça
cueyatl	*գորտ*	— »	cue-cueyâ

կամ՝ ինչ որ զարմանալի է՝ կրկնելով բառի միջին վանկերից մեկը. ինչ. milcalatl «գորտ» — հգ. milcacalatl.

Երբեմն էլ հավելելով բառի tl վերջավորությունը, որ որոշ չափ հոդն է, առացվում է հոգնակի. օր.

tlaca-tl *մարդ* — հգ. tlaca
cihau-tl *կին* — cihâu

(Grasserie, Le nahuatl, էջ 13, 34)

Այսպիսի բազմազան ձևեր ունի հոգնակին նաև մելանեզյան մուտա լեզվի մեջ։ Նախ՝ գոյականը, եթե հոգնակիի նշան չունի, այդ չի նշանակում, թե հոգնակի չէ կամ եզակի է։ Եթե ուզում ենք, որ հատկապես իմացվի, թե եզակի է, անպատճառ պետք է դնել tuwale «մեկ» թվականը։ Հոգնակին կազմվում է երեք ձևով

կրկնությամբ, հոգնակերա նշանով կամ մի նախամասնիկով։ Հոգնակերա մասնիկն է ընդհանրապես nan. օր. ima «առուն», ima-nan «առներ»։ Ինչ անգամ գործածվում է նաև taure հավաքականը։ Երկու նախամասնիկ կա՝ re և ra, որոնք ցույց են տալիս «անձերը»։ օր. Առաջինը ցույց է տալիս դասակարգ. օր. retamtamai «գյուղի հայրերը» (իրրև դասակարգ) իսկ երկրորդը՝ ra զանազան անձեր. օր. ratamak «իմ հայրերը, հորեղբայրները» և այլն։

Կրկնությամբ հոգնակին լինում է երեք տեսակ. ա) ամբողջական կրկնությամբ. ինչ. vat-vat «քարեր». բ) կրկնելով միայն առաջին վանկը. ինչ. nanatiu «ներևնաներ». գ) առաջին վանկը և մի բաղաձայն ես. ինչ. ranranoi «սրտեր»։ Երբ մի բույսի անուն կրկնավոր հոգնակի լինի, այդ նշանակում է, թե բույսը վայրի է կամ անպետք (Codrington, էջ XV)։

Վերևում տեսանք զանազան լեզուներ, որոնք երկար թափառումից հետո հասել են մի միակ հոգնակիի։ Նույնիսկ զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող ժողովուրդների լեզուներ հասել են այս վերջին հանգրվանին։ Օր. Նոր-Զելանդիայի լեզուն ունի մի տեսակ հոգնակերա մասնիկ, nga, որ դնում է բառի սկիզբը. ինչ.

ika *ձուկ*, nga ika *ձկներ*
ware *տուն*, nga ware *տներ*
ranga-tira *պարոն*, nga ranga-tira *պարոններ*

Դրավիդյան տելուգու լեզուն հոգնակի կազմելու համար ունի միայն lu մասնիկը. ինչ. bidḍa *տղա* — հգ. bidḍalu *տղայք* (Makshmi narasayya, էջ 7)։

Մալայան գոյակ լեզուն հոգնակի չունի։ բառը ինքնին թե եզակի է, և թե հոգնակի. օր.

olo *մարդ, մարդիկ*
ololui *մեծ մարդ, մեծ մարդիկ*
tanah *երկիր, երկրներ*
klambi *զգեստ, զգեստներ*

Տարբավոր դեպքում կցում են karä բառը.

karä rasul *մարգարեներ*
» radja *թագավորներ*
» pahari *եղբայրներ*
» andau *օրեր*

(Gabelentz, 18, 19)

Վերջավանկի կրկնությունը կարող է վերածվել մեջն վերջավանկի երկարության. օր. Մեքսիկայի Նահուատլ լեզվով՝ siwatl *«կին», հգ.* siwā *«կանայք», ամերիկյան չիտչանեկա լեզվով* nahui *«կին», հգ.* nahuī *«կանայք»* (Albornoz, *էջ 14*)։

Սիամերեն լեզուն թիվ չունի. կարևոր դեպքերում եզակին և հոգնակին որոշում է հետևյալ ձևով.— եզակին նշանակելու համար գոյականի վերջում դնում է nəng *«մեկ» կամ* dio *«մենակ» բառը, իսկ հոգնակիի համար գոյականից առաջ դնում է* laī *«շատ» կամ* lao *և կամ գոյականից հետո* puok *«խումբ» բառը։* (Wershoven, 37)

Աշխարհիս բոլոր տեսակի լեզուների մեջ ամենապարզ ձևը հոգնակիի կազմության համար ունեն ամերիկյան կարիբի ընտանիքի կիպեա և ձուբուկուա լեզուները, որոնց մեջ թե գոյականները, թե դերանունները, և թե բայերը հավասարապես իրենց հոգնակին կազմում են a վերջավորության միջոցով։ Այսպես՝

Կիպեա լեզվով — winu *«մանկիկ»,* bechie *«պարտեզ»* — *հգ.* winua, bechiea, ero *«այն»,* eroa *«այնոքիկ»*

ku-padzu-a *«հայր մեր»,* e-padzu-a *«հայր ձեր»,* i-padzu-a *«հայր նոցա»*

ku-coto-a *«մենք գողանում ենք»,* e-coto-a *«դուք գողանում եք»,* i-coto-a *«նրանք գողանում են»։*

Ձուբուկուա լեզվով.— arayede-a *«նախահայրեր»,* munakie-a *«զինվորներ»,* kiki-a *«ազգիկներ»,* ku-to-a *«պապ մեր»,* a-to-a *«պապ ձեր»,* i-to-a *«պապ նոցա»։*

ku-e-a *մենք պարտավոր ենք*
a-e-a *դուք » եք*
i-e-a *նրանք » են*

(L. Adam, *էջ 10*)

Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) ֆաւտումա լեզվում թիվը չորս է. եզակին կազմվում է բառասկզբում դնելով ta *մասնիկը, երկակին՝* ru *(որ նշանակում է երկու), եռակին՝* taka, *հոգնակին՝ ձ. ինչ.*

tagata *մարդ*
tatagata *հգ. մարդ*
rutagata *երկ. 2 մարդ*
taka tagata *եռ. 3 մարդ*
atagata *հգ. մարդիկ (4 և ավելի)*

(Macdonald, 173)

Ավստրալիայի Նոր-Պոմերանյան լեզվով էլ թիվը չորս է. եզակին կազմելու համար (որոշիչ հոդով) դնում են a *կամ* ura, *երկակին* a ura *կամ* ra ura *(բուն նշ. երկուսը), եռակին* a utul *կամ* ra utul *(բուն նշ. երեքը), իսկ հոգնակին (սկսած չորսից)* a umana *«մի քանի» կամ* a lawur *«բոլորը», կարելի է նաև հոգնակին կազմել կրկնությամբ* (Costantini, *էջ 3,5*)։ *Ամանք ժամանակ էին որոշել, թե երկու ձևերից ո՞րն է ավելի նախնականը. հոգնական բառերի հարագրությունը, թե գոյականի կրկնությունը։ Բայց երեք թե երկուսը ժամանակակից են. այդ ցույց է տալիս Ֆիլիպպյան կղզիների նաբալոյ լեզուն, որ հոգնակի չունենալով՝ հոգնակին կազմում է* amin *«բոլոր», ačum «մի քանի», ačaxal «շատ» և այլն բառերի հարագրությամբ։ Բայց ահա այս լեզվի մի բարբառում էլ կա կրճատ կրկնությամբ ձևը. ինչ.*

balei *տուն,* bal-balei *տներ*
ili *քաղաք,* il-ili *քաղաքներ*
bilin *հրաման,* bil-bilin *հրամաններ*

(Scheerer, *էջ 108*)

Նմանապես ամերիկյան տեպեկանա լեզուն ունի երկու ձևով էլ հոգնակի։ Բան մի ձևի հոգնակի կազմելու համար կրկնում է բառի առաջին վանկը. օր.

nov *ձեռք, հգ.* nonov
pinic *ամերուկ, հգ.* pipinic
tiup *ևկեղեցի, հգ.* titiup
misu *կատու, հգ.* mimsu

Բայց կան շատ բառեր, որ չեն ենթարկվում այս կանոնին և հոգնակին կազմում են նախադրելով mui *«շատ» բառը. օր.* mui gaaan *«թղթեր»* (Mason, *էջ 328, 331*)։

Այսպես նաև Ավստրալիայի Նոր-Պոմերանյան լեզվում հոգնակին կազմվում է երկու ձևով. ա) կրկնությամբ. ինչ. a pal *«տունը» a pálpal «տները». բ) գոյականին հարագրելով* a umana *«մի քանի», a lawur «բոլոր» բառերը, և հայտնի չէ, թե որն է սրանցից նախնականը։*

(Costantini, *էջ 3,5*)

Նմանապես մանջաւրերեն լեզվում, ուր ընդհանրապես հոգնակի չկա, հոգնակին կազմվում է երկու դրությամբ էլ. կրկնությամբ և հոգնական բառերի հարագրությամբ։ Այսպես՝

կրկնությամբ հոգնակի.— ǰalan ǰalan *«դարեր».*

հոգնական բառերով.— geren «դեզ, քանակ, բազմաթիվ» բառով. օր. geren niyalma «մարդիկ».

tumen «10,000 բառով». օր. tumen fafpun «օրենքներ»:

Բառավերջում դնելով tome «հաշվել», gemu «բոլոր», ǰergi «շարք, դաս, խումբ», urse «բոլոր». օր.

gurgu ǰergi	անասուններ
irgen gemu	ժողովուրդներ
moro tome	թասերը

Բայց նաև վերջում դնում են sa, se, si, ta, te, ti մասնիկները. ինչ.

morin ձի, morisa ձիեր.
hafan մանդարին (իշխան), hafasa իշխաններ
(L. Adam, էջ 35)

Մի մխակ հոգնակի մասնիկի հասել է աֆրիկյան մանդինգ լեզուն, որ ամեն տեսակ բառի հոգնակին կազմելու համար բառավերջում ավելացնում է u. օր.

dę	մանուկ	dę-u	մանուկներ
bǫ	տուն	bǫ-u	տներ
kų	գլուխ	kų-u	գլուխներ

Երբ գոյականը հետադաս ածական ունի, մասնիկը դրվում է բոլորի վերջը. ինչ.

moro gyą հգ. moro gyą-u
մարդ մեծ
morofi մարդ սև, հգ. moro fi-u

Նույնիսկ ni ես և nu մենք.
Նույնն է նաև բարբառ լեզվով. օր.

foro արտ foro-u արտեր
teri բարեկամ teri-u բարեկամներ

Այս u հոգնակերտ մասնիկը Գ. դեմքի դերանվան հոգնակին է և նշանակում է «ընտանք»:

(Delafosse, էջ, 175—6).

Եթովպական կաֆա լեզվում հոգնակին կազմվում է բառի վերջավանկի բաղաձայնի կրկնությամբ. ինչ.

bággō	ոչխար	հգ.	baggigō
būšē	աղջիկ	»	būšišē
káfō	թռչուն	»	kafifō
nōnō	շրթունք	»	nōnonō

(Reinisch, 95)

Միօրինակ հոգնակի

Միօրինակ հոգնակիի հասած լեզուների մեջ առաջին հերթին պետք է հիշել անգլերենը, որ բացի մի քանի՝ աննշան թվով բառերից (man, men «մարդիկ», tooth, teeth «առոտիներ», foot, feet «ոտքեր», child, children «երեխաներ») բոլոր գոյականների և ածականների հոգնակին կազմում է s վերջավորությամբ, որ հնդեվրոպական նախալեզվի էլ հոգնակիի մասնիկն էր:

Միօրինակ հոգնակիի հասել է նաև ֆրիզերեն լեզուն (Հոլանդիա), որ ամեն բառի հոգնակին կազմում է ծայրին ավելացնելով e ձայնավորը, իսկ եթե բառը արդեն վերջանում է e ձայնավորով՝ ոչինչ չի ավելացնում. օր.

grünn հիմք,	հգ.	grünne
böhr գյուղացի	»	böhre
ljāgt լույս	»	ljāgte
wâhg մի շարաթ	»	wâhge

Այն դեպքում, երբ բառը արդեն e ձայնավորով վերջանալով՝ նոր e չի առանում, բնականաբար հոգնակին որոշվում է հոգից. այն է՝ de արտ., jö իգ., dāt չ.— բոլորի հոգնակին՝ dâ.

(Bendsen, էջ 107)

Մունդա խմբից ոռնլ լեզուն ամեն տեսակ բառի հոգնակին կազմում է ko վերջավորությամբ:

Ֆրանսերենում, ինչպես ասացինք, հոգնակի կազմելու համար թե գոյականի և թե ածականի վերջում ավելացնում են մի s, երբեմն էլ x, որ միևնույն բանն է. երկուսն էլ չեն կարդացվում, ուստի հոգնակին նույնն է մնում եզակիի հետ: Հոգնակին որոշվում է միայն հոդով, որ եզակիում գրվում է le (հնչվում է lə), հոգնակիում գրվում է les (հնչվում է le): Ձայնավորով սկսվող բառերը այն հատկությունն ունեն, որ les հոդի անձայն s-ն իրենց վրա են վերցնում z հնչյունով: Օր.

les elèves instruits en des écoles indiennes sont des adorateusr aveuglés des idées erronées des anciens érudits

«Հնդկական դպրոցներում կրթված աշակերտները կույր պաշտող են հին գիտուններուի սխալ գաղափարներին»։

Այս հատվածը եթե հնչական ուղղագրությամբ գրենք, պիտի առանար հետևյալ ձևը (փոխում եմ միայն ձայնավորով սկսվող հոգնակի բառերը).

les z-elèves z-instruits z-en des z-écoles z-indiennes sont des z-adorateurs z-aveuglés des z-idées z-erronées des z-anciens z-érudits

Նախադասության մեջ 11 բառ առացավ նախաձայն z, այսպիսով՝ դուրս է գալիս, որ ֆրանսերենի մեջ ոչ միայն ձայնավորով սկսվող բառերի հոգնակին կազմվում է նախասար z-ով, այլև նախադասության բոլոր բառերը առանում են այդ նախաձայն z հավելվածը աֆրիկյան (բանտու) լեզուների դասանիշների ոճով։

Եգիպտական արձանագրությանց մեջ երկակի ցույց տալու համար բառը երկու անգամ է գրվում կամ մոտը երկու գծիկ են քաշում, իսկ հոգնակիի համար բառը 3 անգամ են գրում, կամ մոտը 3 գծիկ են քաշում։

Երբ տառերով են գրում, եգ. ուղ. չունի նշան, իգականը ունի -t- վերջավորությունը, հգ. ար. -w-, իգ. wt, երկակի ար. wy, իգ. ty. (Gardiner, 58)

Բազմազան հոգնակի

Աֆրիկյան դինկա լեզվում հոգնակին շատ անկանոն է, կազմվում է հետևյալ վեց ձևերով.

ա) մի խումբ բառեր առանձին հոգնակի չունեն և իրենց հոգնակին նույնն է եզակիի հետ.

բ) շատ բառեր եզակիի երկար ձայնավորը հոգնակիում վերածում են կարճի.

գ) ընդհակառակը, ուրիշներ եզակիի կարճ ձայնավորը հոգնակիում վերածում են երկարի.

դ) ուրիշ բառեր բառամիջի ձայնավորը փոխում են ձայնհարձակի օրենքով. օր. nom «գլուխ», հգ. nim «գլուխներ».

ե) ուրիշ բառեր ձայնավորը կրճատում են հոգնակիում։ Օր. lyeb *«լեզու», հգ.* lib, nguot *«կնիկ», հգ.* ngût.

զ) երբեմն էլ բառերի ձևը բոլորովին փոխվում է. ինչ.

ran	*մարդ,*	հգ. ror
tik	*կին,*	» dyar
puóu	*սիրտ,*	» puót
uet	*բառ,*	» uèl

(Mitterrutzner, 15)

Վերևում ասացինք, որ բազմությունն ցույց տվող բառեր վերածվում են հետագայում հոգնակի մասնիկի։ Բայց կա նաև սրա հակառակ շարժումը։ Այսպես՝ ամերիկյան սիուսլական լեզվում թեև կա երկու մասնիկ հոգնակի կազմելու համար, բայց ընդհանրապես նրանք չեն գործածվում, և նրանց տեղ դրվում են բառերը։ Եվ նույնիսկ այս բառերի գործածության պատճառով բայն էլ հոգնակիի տեղ եզակի է դրվում (Boas, II հա., էջ 609)։

Ասուրերենի մեջ էլ հոգնակի շինելու համար երկարացվում է բառի վերջին ձայնավորը, որ լինում է միշտ u, a, i *և ցույց է տալիս բառի հոլովը։ Բայց այդ երևույթը առաջացել է ուրիշ ճանապարհով. հոգնակիի նշանը եղել է* e, *որ միացել է նախորդ* u, a, i *ձայնավորների հետ և երկարել* (Bertin, էջ 32)։

Աֆրիկյան լեզուները ուրիշ միջոցներ էլ ունեն գոյականը հոգնակիի վերածելու համար. այն է՝ բառի շեշտը փոխել, արմատի ձայնավորի քանակությունը կամ երանգը փոխել, բառի վերջին բաղաձայնը թրթռումից խուլի վերածել, և կամ բառի դասանիշը փոխել։ Բասկերենում էլ հոգնակին կազմվում է շեշտի փոփոխությամբ. օր. gizona *«մարդ», հգ. ուղ.* gizonák *«մարդը», հգ. ուղղ.* gizónak *«մարդիկը»* (Van rys, էջ 16)։

Բառի նեբքին ձայնավորների փոփոխության օրենքը հատկապես զարգացած է եթովպացերենի և արաբերենի մեջ։ Արաբերենում հոգնակիի այսպիսի ձևը կոչվում է անկանոն կամ թեկյալ հոգնակի (ǰam'- mukassar). *այժմ գիտունները կոչում են նաև նեբքին հոգնակի. օր.* ارمنى armanī *«հայ» բառի թեկյալ հոգնակին լինում է* ارامينا arāmina, insān *«մարդ» բառի հգ. լինում է* nās. imam *հգ.* aimme։ *Այսպիսով, ձևով բառը դառնում է բոլորովին անճանաչելի, և յուրաքանչյուր ձև եզակիի համար*

առանձին և հոգնակիի համար առանձին պետք է սովորել։ Ինչպիսի՜ ահռելի դժվարություն լեզվի համար։

Կան բառեր, որոնք մի քանի հատ հոգնակիի ձևեր ունեն. օր. عبد ‘abd «ծառա» բառը ունի 15 անկանոն հոգնակի (Համառ. 26, էջ 640), որոնք են.

عبدون ‘abdūn	عباد ‘ibād	معبدة ma‘bida
عبيد ‘abīd	عبدان ‘bdān	معابد ma‘ābid
اعبد ā‘bad‘	عبّدان ‘ibiddān	عبّدا ‘ibiddā
عبّدى ‘ibiddī	عبدد ‘abdūd	اعابد a‘ābid
معبودة ma‘būdā	عبد ‘ubud	اعباد ā‘bād

Արաբական բնիկյալ հոգնակիի առակալի կերպով անկանոն ձևը շարունակում են դեռ հարավ-արաբական ընտանիքի լեզուները՝ շհաուրի (Bittner, հտ. 1, էջ 50—51), մեհրի (Bittner, 45) և սոքոթրի (Bittner, Vorstud.), թեև բոլորն էլ նրա հետ միասին գործածում են նաև կանոնավոր հոգնակիի ձևերը։

Սուգանի լեզուն, որ հարազատ արաբերեն է, չի մաքրել բնիկյալ հոգնակիի գրությունը. ընդհակառակը, այստեղ էլ «կանոնավոր հոգնակի ունեցող բառերի թիվը շատ ավելի քիչ է համեմատությամբ բնիկյալ հոգնակիի ընդարձակ մեծամասնության» (Worsley, էջ 12)։

Եթովպական բեղաուն լեզվում հոգնակին կազմվում է երկու ձևով. ներքին և արտաքին։

Արտաքին հոգնակի առանում են այն բառերը, որոնք վերջանում են բաղաձայնով, որին ավելանում է միայն a. ինչ.

mōk	վիզ,	հգ.	mōka վզեր
rəgàda	ոտք,	հգ.	rágad-a
šā	կով,	հգ.	šə̄’a
būr	երկիր	հգ.	būra և այլն։

Ներքին (որ է բնիկյալ) հոգնակի առանում են նույնպես բաղաձայնով վերջացող բառերը. այս դեպքում վերջավանկի ձայնավորը կարճանում է. ինչ.

rāt տեւև, հգ. rat, libə̄’n խունկ, հգ. libán
tāt ոչիլ, հգ. tat, kām ուղտ, հգ. kam
minšār ոգոց, հգ. minšar, mōk վիզ, հգ. máka

իսկ ձայնավորով վերջացող բառերի հոգնակին նույնն է եզակիի հետ. թիվը որոշվում է միայն հոդով. ինչ.

ába	կետ,	հգ.	ába
dēmo	կեզև,	հգ.	dēmo

(Reinisch, էջ 62)

Մարոկկոյի բերբեր լեզվում հոգնակին արական բառերի համար կազմվում է 3 ձևով. ա) արտաքին հոգնակի, բ) ներքին հոգնակի և գ) խառն հոգնակի։

Արտաքին հոգնակին կազմելու համար բառի նախաձայն a դարձնում են i և բառի վերջում ավելացնում են en մասնիկը. ինչ. aṛiaz մարդ, հգ. iriazen.

agums	ագգր	հգ.	igumsen
aḥam	վրան,	հգ.	iḥamen չադիրներ

Ներքին հոգնակին կազմելու համար բառասկզբի a դարձնում են i և բառի ներսում գտնված ձայնավորի կամ ձայնավորների երանգը փոխում են զանազան ձևով. այս ձայնափոխությունը որևէ կանոնի տակ չէ. ինչ.

abaġus կապիկ, հգ. ibuġas

Խառն հոգնակին նախորդ երկուսի գումարն է. այսինքն՝ բառի սկզբի a բաղաձայնը դարձնում են i, ներքին ձայնավորը կամ ձայնավորները փոփոխում են և վերջում ավելացնում են en մասնիկը. ինչ.

aſus	ձեռք,	հգ.	ifassen
azag	բազ,	հգ.	izaggen

Այս ձևը ունի շատ երկրորդական կանոններ և ձևեր։

Բուն արաբերեն բառերը պահում են իրենց բնիկյալ հոգնակի՝ ձևը։

Իգական բառերի հոգնակին էլ կազմվում է երեք ձևով. ա) արտաքին հոգնակի, բ) ներքին հոգնակի և գ) խառն հոգնակի։

Արտաքին հոգնակի կազմելու ժամանակ նախաձայն θ պահում են, հաջորդ a դարձնում են i, վերջին θ ջնջում են և նրա փոխարեն դնում են in մասնիկը ինչ.

θafullusθ	հավ,	հգ.	θifullusin
θafunasθ	կով,	հգ.	θifunasin

Ներքին հոգնակի կազմելու համար պահում են նախաձայն ð, հաճախ a գարձնում են i, վերջաձայն ð ջնջում են և ներքին ձայնավորը կամ ձայնավորները փոխում են. ինչ.

ðazzerð եղան, հգ. ðizzar
ðasirð ջաղացք, հգ. ðisar

Մառն հոգնակին կազմելու համար այս բոլորի վրա ավելացնում են նաև in կամ նման մի մասնիկ. ինչ.

ðadisð փոր, ðidusin
ðamarð մորուս, ðimira

Այս բոլորից դուրս երբեմն էլ ամբողջ բառն է, որ փոխվում է. ահա օրինակներ՝

ullma	քույր	հգ.	isðma	քույրեր
illi	աղջիկ	„	issi	աղջիկներ
ðit	աչք	„	allen	աչքեր
ðiẖsi	մաքի	„	ulli	մաքիներ
ðameţiut	կին	„	ði'ayyalin	կանայք

(Laoust, էջ 20—30)

Բերբերական այսուհ բարբառումն էլ կա արաբական ձևի նման քե արտաքին և քե ներքին հոգնակի. բայց կա նաև երկուսի գումարը, որ է խառն հոգնակի. օր. izim «գազել», հոգ. izamen.

(Basset, էջ 15)

Աֆրիկյան բիշարի լեզուն ունի արտաքին և ներքին (թեկյալ) հոգնակի. բաղաձայնով և երկրարբառով վերջացող բառերի հոգնակին կազմվում է վերջում ավելացնելով a. ինչ.

hūs	գանակ,	հգ.	hū'sa
sim	անուն	„	sima
argin	գառն	„	argina

Ձայնավորով վերջացող բառերը եզակի և հոգնակի նույնն են մնում. ինչ.

gurma	գլուխ,	գլուխներ՝
lága	հարթ,	հարթեր

i վերջացող բառերը այդ ձայնավորը գարձնում են a. ինչ. kuàlani «կապին», հգ. kuàlanya

Բաղաձայնավ վերջացող բառերի մեծ մասը ունենում է բեկյալ հոգնակի. այն է՝ վերջավանկի ձայնավորը կարճացնում են կամ փոխում. ինչ.

miušār	ազգ,	հգ.	minšar
tāt	ոչխար	„	tat
yās	շուն	հգ.	yas
derār	ընթրիք	„	derér
genūf	քիթ	„	genif

(Almkvist, էջ 61—62)

Բերբերական գետաբարբառում բեկյալ հոգնակի կազմելու համար բառավերջի բաղաձայնից առաջ եղած ձայնավորը գարձնում են a, իսկ բառասկզբի ձայնավորը գարձնում են i. օր.

arušef	կոկորդիլոս	հգ.	irušaf
abaïur	սիկ	„	ibiar
aǰedhidh	թռչուն	„	iǰedhadh
daǰel	վասպիկ	„	iduǰal
adaǰir	պատ	„	iduǰar

Ուրիշ բառեր ներկայացնում են ներքին և արտաքին հոգնակիների խառնուրդը, բայց միշտ նախաձայնը լինում է i, վերջումն էլ գրվում է n. օր.

ilem	մարթ,	հգ.	ilmauen
iǰǰidh	էշ	„	iǰǰadhen
afud	ծունկ	„	ifadden
azeǰ	մաղ	„	izəǰǰen
isem	անուն	„	ismauen

(Nehlil, էջ 17—18)

Շատ անկանոն և դժվար է նաև աֆրիկյան ֆուլլահ կամ փոլ լեզվի հոգնակիի կազմությունը. Ընդհանրապես բառավերջում դնում են i, dyi, ebe մասնիկները. բայց մեկնույն ժամանակ բառի առաջին վանկը և արմատի վերջին բաղաձայնը կրում են այնպիսի ձայնափոխություններ, որոնց համար ոչ մի կանոն չկա. սրանք երբեմն այնպես են փոխում բառը, որ բոլորովին անճանաչելի է դառնում. օր. բառասկզբի f, h, r, w դառնում են հգ. p, k, d, b. mb դառնում է b, իսկ ng>g, օր.

faburu	*գորտ,*	հգ.	pabi
hutoru	*(ազդ է)*	հգ.	kutoyi
redu	*փոր,*	հգ.	dedi
wossaru	*շուն,*	հգ.	bossayi
mbala	*ոչխար,*	հգ.	bali
ngeloba	*ուզտ,*	հգ.	gelodi

(Steane, էջ 1—2)

Աբաբերնի նման բարդ ու անկանոն հոգնակի ունի նաև Բամյան ափար լեզուն, որ ուսումնասիրել է Կոլիզան («Colizza, Lingua 'Afar, nel nordest dell' Africa, Vienna, 1887»):

Այս լեզուն ունի, բացի եզակիից և հոգնակիից, նաև անհատական կամ ընդհանուր անասկի տարբերությունը, օր. lū'bāk «առյուծ», հգ. lū'buk «առյուծներ» (իբրև առյուծի ցեղը կամ անասկը ընդհանրապես), իսկ ար. lubak-tō և իգ. lubāk-to (անհատ, մի հատ առյուծ), որի հոգնակին է lubā'k-tit թե ար. և թե իգ. առյուծի առանձին անհատներ:

Մասնիկներն են՝

Անհատականի համար՝ ta, to, ար. tā', tō', իգ. (երկուսն էլ եզակի).— tit երկու սեռի համար՝ ար. և իգ. հոգնակի:

Տևական կամ սեռ ցույց տալու համար երկու տևասկ հոգնակի կա. արտաքին (առողջ) և ներքին (բեկյալ) հոգնակի:

Արտաքին հոգնակին ՅՏ ձև ունի.

ա) երբ բառը վերջանում է ձայնավորով, նախորդ բաղաձայնով մի վանկ են շինում և ավելացնում նույն բառի վրա, ինչ.

lā'fā	հգ.	lafo-f
hadō	հգ.	hā'do-d
ikō'	հգ.	iko-k
amō'	հգ.	ámo-m

բ) երբ բառը վերջանում է բաղաձայնով, որանով շինում են մի նոր վանկ, որ կցում են նույն բառին. ինչ.

af	հգ.	áf-of
bār	հգ.	bār-or
sandūg	հգ.	sándūg-ug

գ) երբ բառը վերջանում է բաղաձայնով, կարելի է նրա վրա ավելացնել ā ձայնավորը. ինչ.

sāhad	հգ.	sāhad-ā'
aûr,	հգ.	aûr·ā'

Իսկ եթե բառը վերջանում է ձայնավորով, ավելացնում են wā' վանկը. ինչ.

ē'lā	հգ.	ēl-u wā
heyó	հգ.	heyā'-wā

դ) բառի սկիզբը կարելի է դնել a, ինչ.

lāh	հգ.	ā'- laḥ
ruḥ	հգ.	ā-ruḥ

ե) կամ թե վերջում ավելացնում են t. ինչ.

awī'	հգ.	awī'-t
egī'dā	հգ.	egī'di-t

Ներքին (բեկյալ) հոգնակին ունի 7 կանոն. որոնք են.

ա) եթե բառը վերջանում է ձայնավորով, ձայնավորը կորչում է և նախորդ ձայնավորը երկարում է. օր.

arorā'	հգ.	ā'ror
yandúlā	հգ.	yā'ngul
dama'átā	հգ.	dāma'at

բ) եթե բառը վերջանում է ձայնավորով և նախորդ վանկում կա ā կամ a, ձայնավորը կորչում է և a, ā դառնում են o կամ u. օր.

hā'ḷa	հգ.	hoḷ
abálā	հգ.	aból
dakánō	հգ.	dókun

գ) եթե բառը վերջանում է ձայնավորով և նրանից առաջ կա զույգ բաղաձայն, իսկ այդ բաղաձայնից առաջ էլ ուրիշ ձայնավոր, այդ դեպքում բառավերջի ձայնավորը կորչում է և երկու բաղաձայնների միջև ավելանում է մի ձայնավոր, որի երանգը որոշվում է հետևյալ ձևով. եթե այդ զույգ բաղաձայններից առաջ կա o կամ u, ավելացած ձայնավորը կլինի a. իսկ եթե զույգ բաղաձայններից առաջ կա մի ուրիշ ձայնավոր, ավելացած ձայնավորը կլինի o կամ u, օր.

álsā—álos qási—qurús
furdā'—fúrad árdā—árud
la'aftā'—la'afot

դ) եթե բառը վերջանում է բազաձայնով, բառի վերջին ձայնավորը, եթե ā է, դառնում է o *կամ* u. *ինչ.*

danā'n	հգ.	dā'nun
lū'bā'k	հգ.	lū'buk
da'ār	հգ.	dá'or
kirāf	հգ.	kiruf
dirāb	հգ.	dirob

ե) եթե այդ ձայնավորը a *է, դառնում է* i, *օր.*

farás	հգ.	fáris
mangar	հգ.	mángir

զ) եթե այդ ձայնավորն է e, i, o *կամ* u *դառնում է* ā, *օր.*

sā'her	հգ.	sā'hār
wakī'l	հգ.	wákāl
hasū'l	հգ.	hásāl
rakūb	հգ.	rákāb

է) եթե նախավերջին վանկը վերջանում է երկու բազաձայնով, նրանց միջև մտնում է ā. *ինչ.*

miskin—misā'ken	aska'r—asā'kar
danbīl—danā'bil	mistir—misātir
kiswat—kisā'wat	

Վերևում արդեն տեսանք շատ լեզուների հոգնակիի կազմության զանազանակերպ վիճակ. ահա առավել խառն վիճակ ունեցող լեզուներ։

Ինչպես սեմիտկան սահո և սխալ լեզուները, նույնպես և բիլին լեզուն գոյականների մեջ զանազանում են ընդհանուր սեռ և անհատականը. օր.

եզ. dimmū *կատու և հգ.* dimā'mū *ներկայացնում են «կատու» կոչված սեռի ընդհանուր գաղափարը. իսկ*

եզ. dimmū-rā *և հգ.* dimmū'-t *ներկայացնում են կատուների սեռից մի կամ մի քանի անհատ։*

Անհատը կազմելու համար եզակիի վրա դնում են rā *մասնիկը, իսկ սրա հոգնակին կազմում են* rā *մասնիկը հանելով և սեռը դնելով* t. *օր.* jungulā' *մի տեսակ ծառ է, որ գիտական անունով կոչվում է* kigelia abessinica A. Rich. *սրա անհատականն է* jungulá-rā, *որ այս ծառի սեռից մի հատ ծառ է ներկայացնում։*

Սահո և սխալ լեզուներում -tā,-to *մասնիկներով կարելի է սեռ ցույց տվող որևէ բառից անհատական ձև կազմել. բայց բիլին լեզվում այժմ այս ձևը քարացած ձև է դարձել։ Սեռի նշան ունեցող որոշ բառեր էլ այլևս անհատական ձև չունեն. ինչ.* gamaná «*առյուծ*», yībā «*հովազ*», luwī «*կով*» *և այլն։ Ուրիշ դեպքերում էլ* -rā *մասնիկը, որ անհատական սեռ է ցույց տալիս, միացել է բառին և այլևս ընդհանուր է դարձել։*

Ասացինք, որ անհատական անունը դառնում է հոգնակի՝ սահանալով t *մասնիկը. այժմ անցնենք սեռ ցույց տվող անվան հոգնակիին բիլին լեզվի մեջ։ Սրանք ընդհանրապես կազմվում են վերջին վանկի բազաձայնի կրկնությամբ. ինչ.*

manká?		հգ. mankik
lā'ngī	*լեզու*	հգ. lā'ngig
kas	*ուս*	kasis
yil	*աչք*	yili

a *վերջացող բառերը պրկվելով* a-*ից կազմում են հոգնակի. ինչ.*

amarā' *տարի, տա* — հգ. ámar
bitā *պչել* — bit (*Քրք.* bit)
gamanā' *առյուծ* — հգ. gáman

Բազմաթիվ ուրիշ բառեր էլ անկանոն հոգնակի ունեն և նման են արաբերենի բեկյալ հոգնակիին (Reinish, *667—8*)։

Սուդանի վանդալա լեզվով կա հոգնակերտ ha *մասնիկը. ինչ.* ire «*գլուխ*», ireha «*գլուխներ*» (Lukas, *էջ 116*)։

Սուդանի գուլֆեի լեզվով հոգնակին շինում են we, ni *մասնիկներով. ինչ.*

na *մատ*, ná-wé *մատներ*, *մատվի*
dumu *աչքաբ*, dumu-we *աչքարներ*
sar *առյուծ*, sar-ni *առյուծներ*
(Lukas, *էջ 151*)

Բայց այդ լեզուն էլ ունի բեկյալ կամ ներքին հոգնակի. ինչ.

yilge *ասող*, հգ. yalke
sulu *ճանապարհ*, հգ. salle
sken *քիթ*, հգ. skale
gerem *կին*, garame *կանայք*
geleu *շուն*, հգ. gelle *շներ*
(Lukas, էջ 152). ունեն նաև «առողջ» հգ.։

Ներքին կամ բեկյալ հոգնակի ունի նաև Սուդանի մուրի լեզուն, թեև ունի նաև կանոնավոր հոգնակի. բայց բեկյալ հոգնակին ավելի է ընդունված և ավելի է սովորական. երբեմն էլ բեկյալ հոգնակին վերջում առանում է մի մասնիկ ևս. օր.

irin *աչք*,	հգ. aran
fuga *շուն*,	հգ. fage
durgul *էշ*,	հգ. durōgul
sin *սրունք*,	հգ. sani
gin *ասող*,	հգ. genyo
gip *ծունկ*,	հգ. gōbub
ndūri *կոշիկ*,	հգ. ndōrar
lisi *լեզու*,	հգ. lesas
sumāmu *ականջ*,	հգ. sammam

Սրանից դուրս այս լեզուն ունի նաև հոգնակիի մի ուրիշ ձև, որ կոչվում է հավաքական։ Հավաքականը ներկայացնում է այդ առարկայից մի խումբ կամ մի ամբողջություն, որի մի անհատն է եզակին։ Այսպես եզակին կամ անհատը ավելի երկար ձև ունի, քան հավաքականը. ինչ.

beriyo *տերև*,	bere *տզարիթ*
disso *ձու*,	dis
masiyo *երկաթ*,	mase
dinkiri *ճյուղ*,	dankar
wēgiri *այծ*,	wāger
orūwa *առյուծ*,	ore (Lukas, *160—161*).

Բերբերական կարիլ լեզվի մեջ կան շատ բառեր, որոնք հավաքական են և ցույց են տալիս առարկայի ընդհանուր տեսակը։ Այսպես են ծառերի անունները, երկաթ, կաթ, հող, հարդ, բուրդ, չոր թուզ, ջերմ հիվանդություն, ոսկորի ծուծ և

այլն։ Այս կարգի բառերը կարող են հավաքականից միավորի վերածվել՝ դառնալով իգական. այսինքն՝ բառի սկիզբը դնելով ti. օր.

azemmur *ձիթենի (ընդհանուր տեսակը)*
thazemmurth *մի ձիթենի*

(*Ձիթենին, ընդհանրապես, բուսնում է մեր երկրում. բայց՝ ես մի-ձիթենի ունեմ իմ պարտեզում*)։

Հավաքական բառը թեև իմաստով հոգնակի է, բայց քերականորեն եզակի է. օր.

illa uzemmur at'as di themurth en nuen
կա (եզ.) ձիթենի շատ մեջ երկրի ձեր
(Hanoteau, *էջ 20*)

Ձիշտ այսպես է նաև սրան ազգակից տամաշեկ լեզուն, ուր հավաքականը իմաստով հոգնակի է, բայց քերականորեն եզակի, և վերցնում է եզակի բայ։ Սա էլ ընդհանուրից միավորի վերածելու համար պետք է դարձնել իգական. օր. aluni «հարդ» (*ընդհանուր*), talumit «*մի հարդ*»։

(Hanoteau, *էջ 19*)։

Մարոկկոյի բերբերական լեզվի մեջ էլ բույս կամ պտուղ նշանակող բառերը սովորաբար հավաքական են. նրանք եզակիի վերածելու համար դարձնում են իգական. ինչ.

azalim *սոխ (հվք.)*	ðazalinð	*մի սոխ*
lkuar *ձմերուկ (հվք.)*	ðalkuarð	*մի ձմերուկ*
aziðun *ձիթենի* »	ðazzitunð	*մի ձիթենի*
lluz *նշենի* »	ðalluzð	*մի նշենի*

(Laoust, *էջ 16*)

Աֆրիկյան ափնի լեզվի մեջ էլ շատ բառեր կան, որոնք հավաքական իմաստ ունեն. նրանց միավորը կազմելու համար գործում է թիվը՝ կցելով ba «հատ» բառին։ Օր.

mānda *բանանիներ*, aloa *լոբիներ*
afre *մարգարիտներ*, ana˝grema˝ *մարջաններ*
ao˝n˝ya *ավազ(ներ)*, güe *ձկներ*
իսկ afre ba n˝yo˝ *2 մարգարիտ*

ana˝grema˝ ba nu *5 մարջան*
güe ba buru *10 ձուկ*

(Delafosse, *էջ 2*)

Արաբերենից ավելի անկանոն է հոգնակին աֆրիկյան բառերի լեզվի մեջ, որ ուսումնասիրել է Միտտեռուցները։ Եթե արաբերենը ունի 28 տեսակ բնկյալ հոգնակի, ասում է այս հեղինակը, բարի լեզուն է՛լ ավելի բազմաթիվ անկանոն ձևով հոգնակիներ ունի։ Ինքը այս հոգնակիները բաժանում է 8 խմբի։

ա) Հոգնակին առանձին ձև չունի և նույնն է եզակիի հետ։

բ) Կան բառեր, որոնք միայն հոգնակի են գործածվում և եզակի չունեն (անեզական բառեր)։

գ) Կան բառեր էլ, որոնք հոգնակի չունեն և միայն իբրև եզակի են գործածվում (անհոգնական բառեր)։

դ) Հոգնակին կազմվում է եզակիի վերջում ավելացնելով դանագան մասնիկներ. սրանք թվով 27 են. ոչ մի կանոնի չեն ենթարկվում և միայն բառարանի միջոցով կարելի է իմանալ։

ե) Հոգնակին կազմվում է եզակիից, վերջից հանելով մի վանկ. ինչ. reat «երկաթ», հգ. re։

զ) Անկանոն կազմով հոգնակի, որ ասկայն վանկերի թվով հավասար է եզակի ձևին. ինչ. bunit «բժիշկ», հգ. bunuk։ Այս բառերից յուրաքանչյուրը տարբեր ձև ունի և ոչ մի կանոնի չեն ենթարկվում։

է) Հոգնակի, որ կազմվում է եզակիի սկզբին դնելով ko մասնիկը. ինչ. baba «հայր», հգ. kòbaba «հարք»։

ը) Հոգնակին եզակիից բոլորովին տարբեր բառ է. ինչ. kilolng «գառնուկ», հգ. giji։

(Mitterrutzner, էջ 64—70)

Աֆրիկյան դագոմբա (բանտու) լեզվի մեջ հոգնակին կազմվում է բուն դասերի. բառի վերջում ավելացնում են դանագան մասնիկներ, որոնք կամ ուղղակի կցվում են բառին և կամ բառի վերջից կտրում են մի վանկ և նրա փոխարեն դնում են հոգնակիի մասնիկը. օր. tomsele «լիմոն» — հգ. nomsa (Fisch, էջ 5)։

Արաբերենի և զուլուերենի նման եթովպական սահմանլեզուն էլ դիտե՛ և սիրում է կազմել բնկյալ հոգնակի։ Բայց զարմանալին այն է, որ բնկյալ հոգնակիի քառսի մեջ մտցրել է հիանալի կանոնավորություն՝ առեղծելով առանձին դեպքերի համար հատուկ կանոններ, որոնք չունեն բացառություն։ Տալիս ենք այստեղ այդ կանոնները համառոտակի։

1) Եթե բառի վերջավանկի ձայնավորն է ā, հոգնակիում դառնում է o կամ u. իսկ եթե ձայնավորն է a դառնում է i. միևնույն ժամանակ հոգնակիում չեչաը գնում է վերջընթեր վանկի վրա, որ և երկարում է. օր.

danā′n էշ, հգ. dā′nun
lubā′k առյուծ, հգ, lùbuk
fārās ձի, հգ. fā′ris
dàmbar ճակատ, հգ. dā′mbir

2) Եթե վերջավանկի ձայնավորն է ē, ī, o, u, դառնում է a. օր.

gengor գծակ», հգ. gòngar
gamīš «շապիկ», հգ. gāmaš
kobēr ձի, հգ. kòbar

3) Եթե վերջընթեր վանկը ունի երկու բաղաձայն, ընդհանրապես երկուսի միջև ներմուծվում է ā, կամ հոգնակին լինում է նախորդ ձևով. օր.

zembil զամբյուղ, հգ. zanābil
կամ zembal
kúrkur չնիկ, հգ. kurā′kur, kùrkar,

4) Եթե բառը վերջանում է ձայնավորով, հոգնակիում ջընջվում է այդ ձայնավորը, եթե նախավերջին վանկի ձայնավորը a չէ, այլ ē, i, o, u, օր.

kimbiró խոչուն, հգ. kimbir
habukā′ խեժ, հգ. hā′buk
lagotā′ տոպրակ, հգ. lā′got
yangúla բորենի, հգ. yā′ngul

5) իսկ եթե նախավերջին վանկի ձայնավորն է a, վերածվում է o կամ u, իսկ վերջաձայն ձայնավորը ընկնում է, օր.

agadā′ թև, հգ. āgod
dakā′nu փիղ, հգ. dókun
laqayó արծաթ, հգ. lā′qoy

6) Եթե վերջաձայն ձայնավորից առաջ գանվում է, կրկնակ բաղաձայն, նրանց միջև մտնում է o, u, կամ նաև a, իսկ վերջաձայնը ընկնում է. օր.

qárši «դուրուշ», հգ. qúruš
dibnā՛ մորուք հգ. dibun

Արաբերենը այլափոխված ձևով խոսվում է նաև Մալթա կղզում. բայց այս լեզուն էլ չի կարողացել կարգավորել արաբերենի անկանոն հոգնակին։ Մալթայի լեզվի քերականության հեղինակ Ռուդանովսկին (Roudanovsky, էջ 64—70) թեև 28 կանոնն է գտել սրա համար, բայց էլի գրել է «անկանոն հոգնակիների» մի ցանկ։

Արաբերենի նման բեկյալ հոգնակի ունի նաև եթովպական սեմբրինյա լեզուն, որ, սակայն, կարողացել է գրեթե վերացնել նրա գործածությունը։ Այժմ նրա տեղ տարածված է «առողջ» կոչված հոգնակին, որ շինվում է at հետամասնիկով։ Բայց կան նաև բեկյալ, այն է՝ անկանոն հոգնակիներ, որոնց քիվը թեև քիչ է, բայց եղածները շատ սովորական են և բաժանվում են վեց ֆորմուլայի (Leonessa, էջ 40—51)։

Արաբերենի նման բեկյալ հոգնակի ունեցել է նաև սուդանական բուդումա լեզուն, որ սակայն հետզհետե ջնջել է այդ ձևը և նրա փոխարեն այժմ ընդհանուր տարածվել է ei հետամասնիկով հոգնակի կազմելու ձևը։ Այնուամենայնիվ բեկյալ հոգնակիից դեռ ՚ետ են հետքեր։ Այս լեզվի լոգոն բարբառում շատ կան այդպիսի հետքեր. խոկ այս բուդումա լեզվում սակավ. օր. ŋgerum «կին», հգ. ŋgeram, որ միաժամանակ ei մասնիկն էլ վերցնելով՝ դարձել է ŋgerem-ei «կանայք» (Lukas, 29, 31)։

Արաբերենի բեկյալ հոգնակիի նման մի շատ անկանոն երևույթ ենք գտնում էակիմասերենի մեջ, ուր գանազան ձայնարանական պատճառներից դրդված առանում ենք հգ. այնպիսի ձևեր, ինչ.

ateg անուն, հգ. arait
aaq թևզանիք, հգ. atsit
inuwaq ոտքի մատ, հգ. inukkat
(Boas, Handbook, I, 1013—15)։

Եվ այսպես շարունակ. այնքան փոփոխված, որ եզակիից ՚ետ է միայն w ոտը և վերջում դրվում է t, իբր նշան հոգնակիի. լեզվաբանի համար այս բոլորը հասկանալի է, բայց սովորողի համար մի քաոս է, և նա պարտավոր է յուրաքանչյուր բառի եզ. և հգ. առանձին սովորել ատանձին։ Ահա թե ինչպիսի անկանո-

նության ու խառնակության է հասնում ձայնարանական օրենքների կուրության, երբ անալոգիան չի գալիս կարգ ու կանոն մտցնելու։

Թեև ոչ այնքան անկանոն, բայց այնու ամենայնիվ անկանոն է հոգնակին նաև ամհարիկյան արտավակ լեզվում։ Այս լեզուն թեև ունի եզակի և հոգնակի թիվ, բայց շատ բառեր բնավ հոգնակի չունեն։ Սրա պատճառը կարծում եմ հոգնակիի կազմության անկանոնությունն է։ Այսպես, օր.

itti հայր, հգ. ittinuti
uyu մայր, հգ. uyunuti
ussa տղա, հգ. üssanuti
kanssissia սիրական, հգ. kanssissianna

Սրանք ոչ մի կանոնի չեն ենթարկվում և վարժությամբ միայն կարելի է սովորել։

Հոգնակի չունեցող բառերից հիշենք bahü «աուն», hime «ձուկ», siba «քար» և այլն։

(Crevaux-Sagot-Adam, էջ 168)։

Հոգնակիի կազմության բարդության և բազմազանության կողմից նշանավոր է նաև աֆրիկյան նձիմա լեզուն (տես Welmanit, Preliminary study of the nzima, էջ 92—99)։ Այս լեզվում հոգնակի կազմելու համար կա հինգ տարբեր ձև, որոնք են՝ 1) բառասկիզբը դնելով մի որևէ մասնիկ. 2) բառավերջում դնելով մի մասնիկ. 3) մասնիկը դնելով թե բառի սկիզբը, և թե վերջը. 4) կրկնելով բառը՝ մասնակի կամ ամբողջական կրկնությամբ. 5) մի խումբ բառեր էլ չունեն հոգնակի. ուստի նրանց հոգնակի գաղափար տալու համար բառավերջում դնում են կամ մի թվական և կամ «շատ, մի քանի» և այլ բառերը։

Ամենաշատ գործածված ձևը առաջինն է, որով սակայն մասնիկի և բառասկզբի բաղաձայնի միացմամբ այնպիսի խառնուրդներ են առաջանում, որ բառը անճանաչելի է դառնում։

Բառասկզբում դրվող հոգնակերտ մասնիկներն են a, e, m, n, ŋ, ասելիս ենք մի քանի տիպական օրինակ՝ սրանց խառնուրդները ցույց տալու համար։

Երբ բառը սկսվում է b բաղաձայնով, a մասնիկից հետո b դառնում է w, օր. bule հգ. awule

budani հգ. awudani

Երբ բառը սկսվում է d բազաձայնով, a մասնիկից հետո դառնում է l կամ nl, ինչ.

doka հգ. aloka
duma հգ. anluma

Երբ բառը սկսվում է f բազաձայնով, a մասնիկից հետո f դառնում է v, ինչ. fuke հգ. avuke

Երբ բառը սկսվում է k բազաձայնով, a մասնիկից հետո դառնում է h, ինչ.

kusu հգ. ahusu

e նախամասնիկով հոգնակի կազմելու ժամանակ, երբ բառը սկսվում է be նախավանկով, մասնիկի և այս նախավանկի միացումով առաջանում է մի այն մի el. ինչ.

belembuñli— հգ. elembunli

m նախամասնիկով հոգնակի կազմելու ժամանակ, երբ բառը սկսվում է ab նախավանկով, մասնիկի և այս նախավանկի խառնուրդից առաջանում է mm. ինչ.

abuka հգ. mmuka

Երբ բառը սկսվում է e ձայնավորով, այս ձայնավորի և m նախամասնիկի խառնուրդից առացվում է mmu. օր.

ebule հգ. mmubule

Երբ բառը սկսվում է nd ձայնախմբով, e հոգնակերա նախամասնիկի միացումով դառնում է m, ինչ..

ndedele հգ. medele

Տալիս ենք ուրիշ օրինակներ նախամասնիկների և նախավանկերի զանազան խառնուրդներից. ինչ.

anluma հգ. nnuma
enlake հգ. nnake
eleni հգ. nneni
ehani հգ. ngani
akele հգ. ngakele

Այս ձայնական խառնուրդները այնքան շատ են, որ հեղինակը տալիս է նրանց համար 56 դեպք կամ կանոն:

Հոգնակի կազմելու երկրորդ ձևն է բառավերջում դնել ma մասնիկը. օր. amiladu, հգ. amiladuma, այս էլ սակայն ունի խառնուրդների զանազան ձևություններ. օր. եթե բառը վերջանում է vule, այն ժամանակ ma մասնիկի միացումից առացվում է lema. ինչ.

dasivule հգ. dasilema
կամ նաև pepenli հգ. pepema

Հոգնակերա մասնիկները կարող են դրվել բառի թե սկզբից, և թե վերջից. ինչ.

esofu հգ. asofuma
apufunli հգ. mpufuma

Վերջապես տալիս ենք երկու օրինակ (մեկը մասնական, մյուսը ամբողջական) կրկնությամբ հոգնակիի կազմության համար:

nzezu հգ. nsisezu,
ndedele հգ. medele-medele

Այս բոլորը սովորում են վարժությամբ և նրանց համար կանոն չկա:

Որոշ լեզուների մեջ կան եզակիի և հոգնակիի տարբեր զուդորդություններ. այսպես. ամերիկյան կարիբեր լեզվի մեջ այն առարկաները, որոնք ի բնե երկու են, արտահայտվում են մի բառով, որ երկուսը միասին է ցույց տալիս. ինչ. nella «երկու ձեռք», nekran «երկու թև». երբ հարկ լինի մեկը միայն ցույց տալ, ավելանում է ker մասնիկը (բուն նշ.՝ կես). օր. nella-ker «մի ձեռք», nekran-ker «թև» (բուն երկու ձեռքի կեսը և այլն):

(Morice, Carr. lang, էջ 96):

Նույն լեզվում կան մի տեսակ հավաքական բառեր (որոնք կոչվում են inclusive), որոնք ցույց են տալիս իրար հետ կապ ունեցող անձերի դասերը (հատուկ է միայն անձ, ընտանիք կամ ազգական ցույց տվող բառերի). կազմվում է l «փոխադարձ, իրար», em նախամասնիկով և k'e հոգնակերա մասնիկով. օր. ʰlə ᵘltəs-k'e քույրեր (իրար հետ միասին եղած բոլոր քույրերը).

Այսպես և մեկի կանայքը, եղբայրները, հորեղբորորդիք և այլն (անդ, էջ 97):

Արաբերենի մեջ էլ կան մի քանի անկանոն հոգնակի ձևեր, որոնք ցույց են տալիս 3—10 առարկա. այսպես ظفر zufr «եղունգ», aẓfār «3—10 եղունգներ». حرف harf «գիր», aḥruf «3—10 գիր», sayf «սուր», asyāf «3—10 սուր», որոնց տասնից ավելին լինում է hurūf, suyūf:

Ուրիշ բառեր հավաքական են համարվում և հետևաբար հոգնակի են. այսպես. tamr «արմավներ», tuffāh «խնձորներ», varaq «տերևներ». այսպիսի բառերի եզակին կազմելու համար ավելացնում են t մասնիկը. ինչ. tamrat «մի արմավ», tuffāḥat «մի խնձոր», varagat «մի տերև» (Belot, 86, 95): Այսպիսով, ոչ թե հոգնակին է, որ կազմվում է եզակիից, այլ եզակին է, որ կազմվում է հոգնակիից: Նման երևույթ գտնում ենք նաև դրավիդյան լեզուներում, ուր թեև հոգնակիի նշան կա, բայց առհասարակ չի գործածվում. գոյականը ինքնին թե եզակի է, և թե հոգնակի. այստեղ ավելի եզակին է որոշվում. օր. թամուլ. māḍu նշ. եզ և եզներ. իսկ երբ հարկավոր է հատկապես եզակին նշանակել, ասում են «մեկ» բառի հարադրությամբ orumādu (Caldwell, 234), ճիշտ ինչպես ասում ենք դրաբար՝ թևաւոր «խաղողի մի հատիկ կուտ» և ժողովրդական լեզվով չամչաւոտ, ցորենաւոտ «մի հատ չամիչ, մի հատ ցորեն»:

Ինչպես հոգնակիից կազմվում է եզակի, այնպես և կարելի է հոգնակիից կազմել հոգնակի և այն ժամանակ կստացվի կրկին հոգնակի: Այս երևույթը տեղի է ունենում հատկապես անկանոն հոգնակիների և հավաքական բառերի դեպքում, երբ հոգնակի արտահայտող նշանը ծածկված է բառի մեջ: Այսպես օր. յապաներեն tomo «բարեկամ», ko «տղա» բառերը առանալով հավաքականի dači, domo մասնիկները՝ դառնում են tomodači, kodomo, որոնք իսկապես հոգնակի են. բայց այս մասնիկները այնպես են կպել բառերին, որ բնական կարծելով՝ բառին ավելացել են նոր մասնիկներ, այսպես՝ tomodačigata, tomodačidomo «բարեկամներ», kodomošu, kodomora «տղայք» (Plaut, 301): Այս երևույթը ավելի սովորական է արարերենում, որի մասին խոսեցինք վերը:

Հայերենի մեջ ևս կա նման երևույթ, որի վրա խոսելու ենք. առայժմ երբ օր. հիշենք ձիաներ, ձիաներ, աղաքներ, գրքեր, օրենքներ և այլն, որոնք կազմված են գրաբարի աներ, ք հոգնակերա մասնիկների վրա ավելացնելով նոր հոգնակերա մասնիկներ (ք, եր, ներ):

Հնդեվրոպական լեզվաճյուղի մեջ էլ հոգնակին հատուկ չէ միայն մի առարկայի, որ երկուսից ավելի է թվով, այլև այնպիսի առարկաների, որոնք թեև մի հատ են, բայց բաղկացած են զանազան մասերից. այսպես, հն. ἀλός «աղ», κρέας «միս», լատ. carne «միս», հոմեր. ζειαί «հատիկ» — վեդ. yavā's, հոմեր. ὄχεα լատ. bigae, հսլ. kola և հյ. կառ հոգնակի են: Նույնիսկ երբ առարկան երկու մասից է բաղկացած, գործ է ածվում հոգնակի ձևով. ինչ. դուռը, որ վեդ. dúras, հսլ. dvьri, լիթ. dùrys, հյ. դուրք, հն. θύραι, πύλαι, լտ. forēs ձևերով հոգնակի է. նույնպես — լիթ. nasrai, «կոկորդ», առնս. óšṭhas «շրթունք» — հսլ. usta «բերան» հոգնակի են ձևով: Այս պատճառով կան բառեր, որոնք անեզական են, այսինքն միմիայն հոգնակի ձևեր ունեն. ինչ. լտ. antae — վեդ. ā'tās «դռան շեմերը» կամ հատկապես քաղաքների անունները, ինչ. հն. Ἀθῆναι «Աթենք», Πλαταιαί «Պլատեա», հյ. Հայք, Վիրք, Բզնունիք, Կարս, Ագուլիս, Մասիս (հդ. հյց.) և այլն:

Հին հայերենը նախալեզվյան այս դրությունը պահել է. երեսք գործածվում է հոգնակի ձևով մի միակ առարկայի համար, որովհետև երկու մասերից է բաղկացած, ճիշտ ինչ. հն. πρόσωπα համանիշը, հյ. աղաւթք համապատասխանում է ճիշտ լտ. precēs ձևին և այլն: Սակայն ավելի հետո միության գաղափարը հետզհետե հաղթանակում է. այսպես առեղծվում է դուռն, փխ. լտ. forēs, հրգ. turi, լիթ. dúrys անեզականների:

Հայերենը անեզական բառեր շատ ունի, որոնց մի մասը զանազան մասերից բաղկացած լինելու պատճառով, մյուսները նույնիսկ վերացական գաղափար լինելով հանդերձ, ինչ. գիրք, երկինք, կրոնք, բարք, վարք, կյանք և այլն: Աշխարհաբարը այսպիսի բառերի թիվը ավելի է մեծացրել և գրաբարի հոգնակի բառերին եզակի իմաստ է ավել. ինչ. ոտք, ձեռք և այլն: Ավելի ընդարձակ տես առոք:

Նոր լեզուներից լիթվերենը ունի շատ բազմաթիվ անեզական բառեր. այսպես՝ բույսերի, թռչունների (բայց ոչ ծառերի) և հացահատիկների անունները, զանազան նյութեր և բազմություն ցույց տվող բառեր (ինչ. ալյուր, մոխիր, փոշի, հարդ, ավազ և այլն), մի քանի մասերից բաղկացած իրեր (դուռ, սանդուխք, կառք, սաներ, ցանկապատ, ցաքան, թամբ և այլն), տեղական անուններ (գյուղ, կալված և այլն), տոների անուններ, զանազան պատահություններ (հոգս, բարկություն, անձկություն) և այլ կարգի բառեր (հարսանիք, ծարավ, մկրտություն, տուն) և այլն:

(Brentano, 21—22)

Ավելի շատ են անեզական բառերը լիներենում, ուր նրանց թիվը հարյուրավոր է. զանազան մասերից կազմված իրերի անունները այս կարգին են պատկանում, որոնց ցանկը տալիս են քերականությունները (օր. Joel, էջ 58, 78 և այլն): Օր. անա-

սուննների մարմի անունը նույն անասունի հոգնակիի ձևն ունի. lis *«աղվեսս», հգ.* lisy *«աղվեսի մարմիններ» և այլն:*

Լատիշներենի մեջ անեզական են՝

1) Միամման իրեր, ինչ. rudzi *«հնաճարս»,* kvieši *«ցորեն»,* milti *«այլուր»,* jaudis *«մարդիկ»,* lini *«վուշ»,* pelni *«մոխիր»:*

2) Շորեղեններ. lindraki *«շրջազգեստս»,* bikses *«տափատս»,* svārki *«վերարկու» և այլն:*

3) Հիվանդություններ. ինչ. masalas *«կարմրուկ»,* bakas *«ծաղկախտս»,* iesnas *«հարբուխս» և այլն:*

4) Զգացմունքներ. ինչ. bailes *«սարսափս»,* dusmas *«պայրույթ»,* skumjas *«տխրություն»,* ilgas *«վիշտ, կարոտս» և այլն:*

5) Աշխարհի չորս կողմերը. austrumi *«արևելք»,* rieţumi *«արևմուտք»,* ziemeli *«հյուսիս»,* dienvidi *«հարավ»:*

(Паэгле, էջ 21)

Ուրիշ լեզուների մեջ էլ գտնում ենք այսպիսի անեզական բառեր. օր. անգլերենի մեջ անեզական են

pantaloons *տափատս*, drawers *վարտիք*
seissors *մկրատս*, clothes *շոր և այլն:*

Սրանք անեզական են քան էության, որովհետև կազմված են երկու մասերից: Սրանց եզակին ունենալու համար ասում են օր. գույգ բառով՝

a pair of pantaloons— *տափատների մի գույգ. այն է՝ մի տափատս — այստեղ* pair *նշանակում է հատ:*

Ֆրանսերենում անեզական են ciseaux *«մկրատս»,* cunettes *«ակնոց» և այլն, որոնք ներկայացնում են երկու մասերից բաղկացած առարկաներ. սրանց եզակին արդեն տարբեր նշանակություն ունի. այսպես՝* ciseau *«դուբ»,* cunette *«պիտակ»:*

Ռուսերենում անեզական են часы *«ժամացույց»,* ножницы *«մկրատս», որոնք նույնպես բարդ կամ երկմասնյա առարկաններ են. առաջինի եզակին ունի տարբեր նշանակություն. այսպես՝* час *«ժամ», երկրորդի եզակին չկա:*

Պորտուգալերենում անեզական են alviçaras *«ավետիք»,* calças *«վարտիք»,* trêvas *«մթություն». ուրիշ բառեր եզակիում տարբեր և հոգնակիում տարբեր իմաստ ունեն. օր.* bexiga *«փամփուշտս»,* baxigas *«ծաղկախտս»,* genero *«սեռ»,* generos *«ապրանք»,* oculo *«պիտակ»,* oculos *«ակնոց». ուրիշ բառեր եզակիում տարբեր*

կան, հոգնակիում հավաքական են. ինչ. filho *«որդի»,* filhos *«զավակներ»,* pai *«հայր»,* pais *«ծնողք»:*

(Anstett, էջ 543)

Անհոգնական բառեր

Ինչպես կան բառեր, որ չունեն եզակի և միայն հոգնակի ձևով են գործածվում, նմանապես կան բառեր էլ, որ չունեն հոգնակի և միայն եզակի են գործածվում: Այսպիսի բառերը կոչվում են անհոգնական բառեր: Օր. հաւնարենի և լատիներենի մեջ գործողություն ցույց տվող բառերը հոգնակի չունեն. այսպես են լտ.-tus և հն.-σις (-τις) բառերը: Կան նաև նման բառեր, որոնք հոգնակիի մեջ մի քիչ տարբեր նշանակություն են ստանում. օր. հն. τεῦχος *եզ. «զեռն, անոթ», հգ.* τεύχεα *«զենք, պատերազմական անոթք», լտ.* rostrum *եզ. կտուց, հգ.* rostra *«բեմ, ամբիոն»,* littera *եզ. «գիր», հգ.* litterae *«գրություն, նամակ, գրականություն»:*

Հաճախ եզակին ցույց է տալիս մի ամբողջություն, իսկ նրա հոգնակին ցույց է տալիս այդ ամբողջության անջատ մասերը. օր. հն. ἄμπελος *եզ. «այգի», հգ.* ἄμπελοι *«որմատունկեր», լտ.* caro *եզ. «միս», հգ.* carnes *«մսի կտորներ», հն.* λαός *եզ. «ժողովուրդ», հգ.* λαοί *«անհատ մարդիկ», լտ.* vinum *«գինի», unguentum «օծանելիք», հոգնակիում նշանակում են* vina *«զանազան տեսակ գինիներ»,* unguenta *«տեսակ տեսակ օծանելիքներ»:*

Վերացական բառերը հոգնակի ձևով նշանակում են գործողություն. օր. լտ. laus *«գովք»,* laudes *«գովասանք, փառաբանական խոսքեր», virtus «առաքինություն», հգ.* virtutes *«առաքինի գործեր», հն.* μανία *«հիմարություն», հգ.* μανίαι *«հիմար գործեր»: Այս ձևով է, որ վերացական բառերը վերածվում են թանձրացյալի:*

Շատ անգամ էլ հոգնակիի փոխարեն հավաքական ձևն է գործածվում. այսպես՝ հն. δρυμός *«փայտ»,* πέλευθος *«ճանապարհ»,* κύκλος *«անիվ», ὑός «նետ, սլաք», σῖτος «հաց» բառերի դեմ իրր հգ. գործածվում են* δρυμά, πέλευθα, κύκλα, ἰά, σῖτα *հավաքականները:*

Սրա հետևանքը այն է, որ որոշ բառեր ունեն երկու տեսակ հոգնակի. մեկը՝ հավաքական, մյուսը՝ իրական հոգնակի. այսպես հն. ἡνία *«սանձ», — հգ.* ἡνίαι *և* ἡνία, ῥύπος *«ցեխ»—*

'ρόποι և 'ρόπα. Նմանապես լտ. jocus — joci և joca, locus «տեղ» — loci և loca.

Սլովեն լեզվի մեջ անհոգնական են հատկապես.

1) վերացական բառերը. ինչ. երգեցողություն, աշխատասիրություն և այլն.

2) դանագան նյութերի անուններ. ինչ. բուրդ, ոսկի և այլն.

3) հատուկ անուններ.

4) հավաքական անուններ. ինչ. մացառ և այլն:

Սերբերենի մեջ — stvo վերջացող վերացական բառերը հոգնակի չունեն. օր. prijateljstvo «բարեկամություն» *և այլն:*

Այլ լեզուների համար չենք կարող այսպիսի խիստ օրենքներ նշանակել. օր. հայերեն կարելի է ասել իմաստություններ, բրդեր, ոսկիներ, Պետրոսներ, Աճառյաններ, մացառներ և այլն:

Ինձ պատահել է հաճախ լսել վեճ այն մասին, թե այսինչ բառը հոգնակի՞ ունի: Օր. կարելի՞ է ասել շոգիներ, ձյուներ, դինիներ, անձրևներ, տաքեր և այլն. ինչո՞ւ չէ: Ահա օրինակներ սրանց համար:

Թեյատան մեջ շարված էին երեք մեծ ինքնաեռներ և նրանց շոգիները (կամ գոլորշիները) ամպի նման բարձրանում էին դեպի սևացած առաստաղը:

Գնում էր նա առպալվելով ձյուների մեջ (պղտահայ բարբառով էլ ասվում է՝ «ձյուներու պես ճերմակ»): Ռուսինյանի կազմած տոմարում առաջին ամսանունն է ձիւներ, որին հաջորդում են սառներ, մրրկներ:

Թեյին ջուրը արդեն... սամավարին մեջ կեփի և շոգիներ դուրս կուտա (Բոսեան, Բարձր Հայք. Ա, Վիեննա, 1925, էջ 367):

Սեղանը ճոխ էր. շարված էին մի քանի տեսակ գինիներ, կարմիր ու սպիտակ, տեզական ու արտասահմանյան, Երևանի, Կախեթի, Դանձակի, Ղարաբաղի և այլն և այլն:

Աշնան ժամանակ տեղացող հորդ անձրևները ջրառատ են, սկսան աշնանային հերկարատև ու ձանձրալի անձրևները: Տաքերը անտանելի են: Շոգերը կոխեցին:

Այս բոլորից հետևում է, թե կարելի է այսպիսի հոգնակի ձևեր գործածել, երբ կարիք լինի:

Զանագան լեզուների մեջ կան մի խումբ բառեր, որոնք հոգնակի չունեն:

Ֆիննական ճյուղին պատկանող լեզուներից կոմի-պերմեերեն լեզվում իրեղեն ցույց տվող բառերից շատերը հոգնակի չունեն. ինչ. zɜrni «ոսկի», körf «երկաթ», yöb «կաթ», saxar «շաքար», kerosin «նավթ» *և այլն:*

Հատիշերենում անհոգնական են՝

1) դանագան իրեր. ինչ. alus «գարեջուր», maire «հաց», piens «կաթ», vaŗš «պղինձ», medos «մեղր», ledns «սառույց *և այլն:*

2) վերացական բառերը. ինչ. laime «երջանկություն», miers «խաղաղություն», kārtība «կարգ-կանոն», voronība «հերոսություն»:

3) šana *վերջավորվող գոյականները, ինչ.* lasišana «ընթերցում», domašana «մտածմունք», aizbraukšana «մեկնում մի տեղից», sveicanašana «ողջունում»:

Եթովպական ամհարիկ լեզվում կան սովորական բառեր, որ հոգնակի չունեն. ինչ. դիշեր, ցերեկ, տաբիք, ամիս, մարուս, արյունք, տարի, ուրախություն, դժբախտություն, մազեր:

Երկակի

Մինչև այժմ մենք խոսեցինք թվի զանագան տեսակների մասին այլևայլ լեզուներում, սկսած այն կետից, երբ լեզուն բոլորովին զուրկ է քերականական թվի գաղափարից, մինչև այնտեղ, երբ լեզուն ստացել է քառակի և հնգակի թիվ: Մենք տեսանք եզակի, երկակի, եռակի, բազմատեսակ հոգնակի, հավաքական թվեր: Տեսանք նաև անեզական և անհոգնական բառերը: Վերջապես տեսանք ներքին (բեկյալ կամ անկանոն) հոգնակի ձևր, որ հատուկ է ոչ միայն արաբերենին, այլև հյուսիս-արևմտյան Աֆրիկայի զանագան լեզուներին:

Այժմ այս վերնագրի տակ ուզում ենք հավաքել երկակի թվի ծագման, զարգացման և կորուստի վերաբերյալ կարևոր տեղեկություններ: Երկակիի մասին ավելի ընդարձակ տեղեկություններ պիտի տեսնենք արդեն հոլովման բաժնում:

Սկզբում ասացինք, թե նախնական մարդը գիտե հաշվել միայն երեք թիվ. մեկ, երկու, երեք. Նախնական մարդու այս մասավոր վիճակի արդյունքն է, որ քերականական թվի բաժանումը բազմաթիվ լեզուների մեջ էլ երեք է. եզակի, երկակի և հոգնակի. եզակին հայտնում է մի առարկա կամ մի անձ, երկա-

կին՝ երկուսը, իսկ հոգնակին՝ երեք կամ ավելի։ Այսպես, հին եգիպտացիներն ուներ երկակի թիվ (որ պապիրուսների մեջ էլ հետքեր է թողել) և մեհենադիր գրության մեջ նշանակվում էր բառը երկու անգամ գրելով կամ բառի կողքին դրված երկու գծիկով։ Ճիշտ ինչպես հոգնակին նշանակվում էր երեք գծիկով։ Երկակին գոյություն ուներ սեմական նախալեզվի մեջ, որ նախապես բնական երկակիների համար էր գործածվում, ինչպես են մարմնի անդամները. բայց ավելի հետո սկսեց գործածվել այն ամեն բանի համար, որ թվով երկու է։ Երկակին գոյություն ունի ուրալ-ֆիննական, ուրալական, հոտենդոտ, մունդա, մոն-քմեր, ավրոտալիական լեզուների մեջ։ Զկա սակայն ալթայականն լեզուների մեջ։

Հնդեվրոպական նախալեզուն էլ ուներ երեք թիվ. եզակի, երկակի և հոգնակի. և այդ վիճակը տևեց նույնիսկ պատմական շրջանում։

Այստեղ պետք է ասենք, որ երկակին միայն թվով երկու և հոգնակին միայն թվով երեք և ավելի առարկաներ ցույց չեն տալիս, այլ գրանագան լեզուների մեջ երկակին հատուկ է նաև այնպիսի առարկաների, որոնք թեև թվով մեկ են, բայց կազմված են երկու մասից. նույնպես հոգնակին հատուկ է նաև այնպիսի առարկաների, որոնք թեև թվով մեկ են, բայց կազմված են բազմաթիվ մասերից։ Նախնական լեզուներից օրինակ առնելու համար հիշենք ամերիկյան չինուկ լեզուն, ուր այր երես, ամորձիք, նիզակ, խորոված շամփուր, երկփող հրացան, երկհյուղ սլաք և այլն ի բուն երկակի են, որովհետև երկու մասերից են կազմված. նույնպես՝ ավազ, առու, մոխիր, արտ և այլն ի բուն հոգնակի են, որովհետև շատ մասերից են կազմված։

Արաբերենի մեջ երկակին գործածվում է երբեմն ոչ թե նույն, այլ նման առարկաների մի զույգ կազմելու համար, այսպես՝

vālīd	*հայր, երկ.*	vālidayn	*հայր և մայր*
qamar	*լուսին,* »	qamarayn	*լուսին և արև*
mašriq	*արևելք* »	mašriqayn	*արևելք և արևմուտք*

Ինչպես տեսնվում է, այս բառերը չեն նշանակում «երկու vālidayn չի նշանակում «երկու հայր», որովհետև երկու հայր չի էլ լինում, ոչ էլ երկու լուսին, երկու արև, երկու արևելք և այլն

Հնդեվրոպական նախալեզվի մեջ, երբ խոսքը հատկապես երկու անձի կամ իրի մասին է, գործ է ածվում երկակի թիվ։ Բայց երկակին, ինչպես եզակին և հոգնակին են, չի կարող ինքնին առանձին ցույց տալ երկուսը և անհրաժեշտաբար պետք է, որ հետն էլ «երկու» թվականը գործածվի, բացի այն պարագայից, երբ խոսողները արդեն գիտեն, որ խոսքը երկուսի մասին է։ Բայց թե այս դեպքում և թե նաև «երկու» թվականը գործածված ժամանակ՝ բառը դրվում է միշտ երկակի։ Ըստ այսմ մարմնի զույգ անդամների անունները գործ են ածվում միշտ երկակի. ինչ. սանս. ákšī, հալ. oči, հն. ὄσσε «աչքեր»։

Երկակին ավելի շատ լեզվի նախնական վիճակի աստիճանն է. այսպես՝

Բիրմանական լեպխա կամ առնգ լեզվի մեջ էլ կա երկակի, որի համար գրվում է nyum բառը, որ նշանակում է «երկուսը» և հաճախ փոխանակվում է nyet «երկու» բառով։ Այս պատճառով Գրիերսոնը ասում է, թե «թերևս ավելի ուղիղ կլիներ, եթե երկակին առանձին թիվ չհաշվեինք և ընդունեինք միայն եզակի և հոգնակի» (Grierson, հտ. Գ, մասն 1, էջ 237)։

Ղպտիերենում երկակի չկա, բայց կան մի քանի երկակի բառեր, որոնք ժառանգել են եգիպտացիներենից. այսպես են՝

spotu	*շրթունք,*	pahu	*հետույք*
snau	*երկու,*	htou	*առավոտ*
əmnote	*կուրծք,*	sənte	*երկու (իգ)*
uerēte	*առներ,*	glote	*երիկամունք*
šet	*երկուհարյուր*		

Եթովպացերենում երկակին խոպան ջնջված է, ինչպես և ասորիերենում. բայց թե նա մյուս սեմական լեզուների նման ուներ հնագույն երկակի, այդ ապացուցվում է kəl'ê «երկու» բառով, որ բուն նշանակում է «զույգ» և ծայրին ունի ê, որ երկակի վերջավորությունն է։

Թայ-Սիամ խմբի քամոի լեզվում թեև երկակի չկա, բայց դերանուններն ունեն. ինչ.

hāng khū	*մենք երկուս*
shāng khū	*դուք երկուսդ*
shāng khā	*նրանք երկուսը*

Օսայակերէն լեզվի մէջ կան բարբառներ, որ ունեն 3 թիվ (եզակի, երկակի և հոգնակի) բոլոր տեսակի բառերի համար (գոյական, դերանուն և բայ)։ Բարբառ էլ կա, որ երկակի թիվ ունի բայերի և անձնական դերանունների համար, իսկ գոյականների, ածականների և մյուս դերանունների համար չգիտե երկակի։ Երկակիի նշանն է օսայակերենում gan, kan, xan, որ լապտների նում ga, ka, իսկ նեննեցերենում ha ձևն ունի։

Հիպերբորյան չուքչի, կորյակ և կամչադալ լեզուները ունեն միայն եզակի և հոգնակի. իսկ կորյակ լեզվի մի բարբառ ունի նաև երկակի, որ կազմվում է չուքչի լեզվի երկակիի ձևով (երկուսն էլ -t մասնիկով)։ Դերանուններից մէջ էլ այս բարբառը գիտե զանազանել «մենք երկուսս, դուք երկուսդ» և «նրանք երկուսը»։

Երկակին անհետացել էր արամերենից. Միշնան պահում է ոչ միայն ս. Գրքի հին երբայական երկակի ձևերը, այլև ավելացնում է գոյականների երկակիի բացարձակ ձևեր, որոնք Գրքում մասնիկներով էին հիշված։

Արդի լեզուներից երկակի ունեն դեռ Ջիլիի բնիկների լեզուն՝ թե գոյականի, թե դերանվան, և թե բայի մէջ։ Երկակիի մասնիկն է egu (օր. čao egu «երկու հայրեր»), բայց նույն լեզվի արաուկան բարբառում երկակիի նշանն է epu, որ դրվում է գոյականից առաջ (epu čao) և նշանակում է բուն «երկու»։ Հոգնակիի մասնիկն էլ է pu։

Արաբական Սոքոթրա կղզու լեզուն, որ պատկանում է հարավ-արաբական լեզուների խմբին, բոլորովին անկախ ուրիշ դանի պահում է երկակի թիվը թե գոյականի, թե դերանվան և թե բայի մէջ։

Փիննական վոգուլերեն լեզուն ունի երկակին թե գոյականների հոլովման մէջ, թե դերանունների մէջ և թե բայի խոնարհման մէջ յուրաքանչյուր դեմքի համար։

Մունդա խմբից ոռո լեզուն պահում է երկակին թե գոյական, թե դերանվան և բայի մէջ։ մասնիկն է -king։

Մելանեզյան mota լեզվում, ուր երկակիի հետ նաև եռակի և հոգնակի թվեր կան, երկակին կազմվում է rua «երկու» թվականով, և հոգնակին կազմվում է նույն բառի կրճատ ra մասնիկով (ուրեմն, երկակիից հետո է հորինված). հաճախ սխալմամբ երկակի հոգուց ավելին էլ է գրվում եռակի, բայց ոչ շատ ավելին։

Ամերիկյան տակելմա լեզվի մէջ կա երկակիի մի ուրիշ տեսակ, որ բուն երկակիից շատ տարբեր է։ Մասնիկն է dil, որ կցվում է գոյականին ու դերանվան և ցույց է տալիս, որ՝ 1) տարրական երկու է. 2) կամ իր բնական անորոշ քանակը կամ հոգնակի գործածությունը վերածում է երկուսի. 3) թե այդ բառը (իր կամ անձ) ընկերակցում է մի ուրիշ իրի կամ անձի հետ, որ նույն տեսակից, որ հիշված էր քիչ առաջ կամ պիտի հիշվի քիչ հետո։ Այս վերջին պարագային dil մասնիկը ունի «և» շաղկապի դերը։ Ինչ.

gaumdil *մենք երկուսս.*
sgisidil *երկու* coyote-ներ *(իբր թե մի* coyote *և մի ուրիշը)*
sgisi nixidil coyote-ը *և իր մայրը։*

Երկակին՝ կարևոր մի ձև է վայրենու համար, որովհետև նա գիտե հաշվել միայն 1 և 2, իսկ 3-ից սկսած իրեն համար «շատ» է։ Լեզվի զարգացման ընթացքում, քանի ապրելու կուլտուրական մակարդակը բարձրանում է, երբ թվի գաղափարը արդեն սուսումնասիրում է իր արդիական ձևակերպությունը, երկակին դառնում է ավելորդ և հետզհետե վերանում է՝ միանալով հոգնակիի հետ։ Այսպես, մեզ համար երկակին հոգնակի է։ Քաղաքակրթության մեջ ընկղմում է ուրեմն երկակին էլ։ Այսօր, օր. նեննեցները, որոնք տնտեսությամբ պարապող մի փոքրիկ ժողովուրդ են (15,000 հոգի), դեռ իրենց լեզվի մէջ ունեն երկակի թիվը, բայց զույգ կազմող առարկաները (ինչպես՝ ոտք, չմուշկ) հոգնակի են գործածվում և ոչ թե երկակի։ Բայց այս լեզվի մէջ էլ երկակին վերանալու վրա է. նրա տեղ գնում են «երկու + եզակի թիվ»։

Նեննեցերենին ցեղակից սելկուպ լեզվում երկակի կա, բայց հոլովման ժամանակ երևում է միայն արական հոլովի մէջ. մյուս հոլովների մէջ առանում է հոգնակի հոլովաձևի մասնիկները։ Այն առարկաները, որոնք ի բնե զույգ են (աչք, ձեռք, ոտք, ձեռնոց և այլն), եզակի են և երկակի չունեն. նրանք նշանակությամբ երկուսն են ցույց տալիս, երբ ուղենան նրանցից մեկը միայն ցույց տալ (մի աչք, մի ձեռք և այլն) ավելացնում են peläl «կես» բառը։ Օր.

peläl utə-sä *մի ձեռքով*
„ sayi-sä *մի աչքով*

(բուն «կես ձեռքով, կես աչքով»)։

էսկիմոսերենի մեջ կա գեռ երկակի, բայց քիչ է գործածվում. շատ բառեր կան, որ չունեն երկակի, այլ միայն հոգնակի։

Ամերիկյան մայա լեզվի մեջ երկակի թիվը կա միայն դերանունների և բայերի խոնարհման մեջ, բայց նույնիսկ այդ-քանը այլևս շատ քիչ է գործածվում։

Նկատելի է երկակիի ջնջման ընթացքը սեմական և ուրալ-ֆիննական լեզուների մեջ։ Սեմական հնագույն քաղաքակիրթ լեզուները, ինչպես՝ ասուրերենը, բաբելերենը, սամարերենը, արամերենը գեռևս երկակի ձևը. արամերենում արդեն սկսում է ջնջվել. մինչդեռ ս. Գրքում գործածական են երկակի ձևեր. ասորերենի մեջ երկակիի հետքը պահում են միայն երկու բառ tarēn «երկու» և maθēn «երկու հարյուր»։

Եթովպացերենում նույնպես միայն մի քանի բառ է մնում, ինչ. kel ē երկու, ʿešra 20 (=2×10), ḫaqūē „hanche“։

Արաբերենը, որ մինչև էլ գրի մի կիսավայրենի ժողովուրդի լեզուն էր, ունի երկակին անունների, դերանվան և բայի մեջ. բայց այսօր ժողովրդական լեզվի մեջ խոնարհման ժամանակ երկակի թիվը ջնջված է։ Հնագրա-ֆիննական լեզվախմբի մեջ միայն վոգուլերեն և օստյակերեն լեզուները պահում են երկակին. հունգարերենի և ֆիններենի մեջ հետք անգամ չկա, այլևս։

Բանտու լեզուներից մեկը (սոնգա) միայն մի հետք ունի երկակիից. հրամայականի հգ. ա դեմքում bppaŋp բայը երկու հոգու համար ուրիշ ձև ունի, 3—4 հոգու համար՝ ուրիշ։

Այսպես եղավ նաև հնդեվրոպական լեզվախմբի մեջ։ Նախնական ուներ երկակի, որ հետագայում ժառանգ լեզուների մեջ հետզհետե ջնջվում է։ Առաջին քայլը անում են հիթիթները, որոնք իրրև կանխառաջ քաղաքակիրթ ժողովուրդ արդեն չդիան երկակի թիվը։ Բայց թե նրանք ունեցել են երկակի, այդ հայտնի է այն բանից, որ երկակիի որոշ հոլովական ձևեր մտել են հոգնակիի մեջ, ինչպես արել են ավելի ուշ նաև սերբերենում։

Ավելի ուշ երկակին գտնում ենք ինչպես անունների, այնպես էլ բայերի մեջ հնդ-իրանական ճյուղում, ուր ջնջվելս մեր թվ. առաջ։ Թեև ամենակրիտ ունի երկակի թիվ, բայց պալի լեզուն ջնջել է այն, փոխանակելով հոգնակիով. երկակին երևում է միայն «երկու» բառի հոլովման մեջ։ Երկակին ջնջված է նաև պրակրիտ լեզվում և արդի հնդկաստանի բոլոր արիական լեզուներում։ Հին պարսկերենն ու զինդերենը ունեն երկակին, բայց սոգդերենում երկակի չկա։

Պահլավերենում երկակիից արդեն ոչ մի հետք չկա։ Հին հունարենը (հատկապես ատտիկյան բարբառը) ներկայացնում է երկակիի գործածության բազմաթիվ ձևեր, բայց հետո ջնջել է։ Լատիներենը իր ամենահին վիճակումն էլ արդեն Դ դարից զուրկ է երկակիից։ Կելտական խմբից միայն հին իռլանդերենն է, որ գոյականների հոլովման մեջ պահում է երկակին, բայց անպատճառ da «երկու» թվականի հարադրությամբ։ Կելտական վիշ լեզվի մեջ էլ երկակին կորած է. մնում են միայն չնչին հետքեր. ինչ. deurudd «այտեր», dwfron «ծծեր», dwylaw «ձեռքեր»։ Գոթերենը վերացրել էր երկակին գոյականներից և պահում էր միայն անձնական դերանունների ու և բ դեմքի և բայի մեջ։ Հին բարձր գերմաներենում միայն դերանվան մեջ կան երկակիի հետքեր, բայց նրա ջնջումը դեռ կատարված չէ, որովհետև մինչև այժմ էլ բավական բարբառներում պահվում է դերանվան մեջ։ Ամենից ավելի մնում է երկակին բալթիկ-սլավոնական ընտանիքում. երկակին գոյություն ունի լիտվաներենում, թեև նրա մի քանի բարբառներում ջնջման ճանապարհին է. հին սլավոներենը բոլորովին կենդանի պահել է երկակին մինչև Թ դար և այսօր էլ կենդանի է դեռ սլովեներենի և սորաբերենի մեջ։

Սլովեներենում գոյականը հոլովման ժամանակ իր ածականով միասին առանում է երկակի ձև, թեև հաճախ «երկու» բառի հոլովաբերությամբ. ինչ. lepi hrib «գեղեցիկ բլուրը», lepa hriba «երկու գեղեցիկ բլուրներըե», միայն որոշ բարբառներում իգականում բոլորովին ջնջված է երկակին, չեզոքը մասամբ ջնջված և միայն արականի երկակին է, որ դեռ անխախտ մնում է։

Չեխերենում երկակին թեև կորած է, բայց դեռ մնում է կենդանի էակների կրկնակ անդամների անվան վրա, ինչ. ձեռք, ոտք, աչք, ականջ, ծիծ, շրթունք և այլն, ավելի քիչ է սլովակերենում, ուր ունենք միայն աչք, ականջ, երկու և երկոքյան բառերի երկակիները։

Սլովինց լեզվում թեև երկակին ջնջված է, բայց հոլովման մեջ միայն տր.-գրծ. հոլովաձևով մնում է. ուրիշ տեղերում՝ փոխանակված է հոգնակիով։ Սա գլխավոր հետքն է բոլոր սլավոնական լեզուների մեջ, ինչպես և ռուս. «աչք» և «ականջ» բառերը։ Սլովինց լեզուն նաև բայերի խոնարհման մեջ է պահում երկակիի հետքը։

Պոլաբերենում էլ գանում ենք նույնպիսի հետքեր. այսպես՝ գոյականի հոլովման մեջ ուղ.-հայց. և գործիականում, դիրանունների մեջ մի քանի դեպքեր և, վերջապես, խոնարհման մեջ։

Այսօր ուրեմն երկակին ջնջված է գրեթե բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ և միայն մի քանի տեղ ցնում է իրրև հնության հետքեր։

Հետաքրքիր է երկակիի ջնջման ընթացքը հունարենում։

Հունարենում էոլիական բարբառը արդեն երկակի չուներ, աատիկյան բարբառը երկակին շարունակում էր մինչև Ն. Ք. 4-րդ դարի վերջը, 410 թվերին արդեն սկսում են դանց առնել արձանագրությունների մեջ։ Պլատոնը և Քսենոփոնը, որոնք ծնված են 440—425 թվերին, դեռ գիտեն գործածել երկակին, բայց ոչ միշտ, հետո ջնջվում է ուղ.-հյց. ձևը, մինչդեռ շարունակվում է սեռականում. այնուհետև սեռականն էլ է ջնջվում և սկսած 300 թվից այլևս աատիկյան արձանագրությունների մեջ երկակի չի երևում բնավ։

Հունարենի համար նկատելի է այն երևույթը, որ Փոքր Ասիայի հունական գաղութները, որոնք մայր երկրից ավելի քաղաքակիրթ ու առաջադեմ էին, ջնջեցին երկակին իրենց լեզվից մինչդեռ Հունաստանի հույները դեռ շարունակում էին գործածել, մինչև քաղաքակրթությունը եկավ այնտեղ էլ հասցնելու իր հարվածը։

Թոխարերենում երկակին գործածվում է մարմնի զույգ անդամները ցույց տալու համար. wū, we «երկու» բառից հետո եկած գոյականը հոգնակի է դրվում։

ԳԼՈՒԽ ԺԲ

Ս Ե Ռ

Մեր արդի ըմբռնողությամբ և գիտական հայացքով ամբողջ ախեզերքը բաժանվում է երեք թագավորության. կենդանական, բուսական և հանքային (այս վերջինիս մեջ առնելով նաև մարդու ձեռքով կազմված բոլոր առարկաները)։ Այս երեքի հիմնական տարբերությունը հետևյալն է. կենդանին ունի կամք և աճում, բույսը չունի կամք, այլ միայն աճում, հանքը չունի ոչ կամք և ոչ աճում. եթե կենդանուց և բույսից վերցնենք կամքի և աճման կարողությունը՝ երկուսն էլ կանցնեն հանքային վիճակին։ Կամքը հատուկ է միայն կենդանուն, իսկ աճումը ընդհանուր է թե՛ կենդանուն, և թե՛ բույսին։ Մեր արդի հասկացողությամբ նույնպես կամքը համարվում է մի արդյունք, որ պատճառն է հոգին կամ շունչը։ Ըստ այմ էլ առարկաները բաժանում ենք երկու կարգի, շնչավոր և անշունչ. առաջինի մեջ դնում ենք կենդանիները, իսկ երկրորդի մեջ բույսերն ու հանքերը։

Այսպիսով, ուրեմն, մեզ համար շնչավոր և անշունչ առարկաների բաժանման հիմքը կազմում է «հոգին», որի արտաքին նշանն է շունչը։

Բայց այսպես չէ և չէր վայրենիների և հնագույն մարդկության ըմբռնողությամբ։ Նրանց համար բաժանման իրր հիմք է ծառայում ոչ միայն կամքը կամ շունչը, այլև շարժումը. ամեն ինչ որ շարժվում է՝ հոգի ունի կամ շնչավոր է. այսպես՝ արևը, լուսինը, աստղերը, քամին, գետը, ջուրը և այլն շնչավոր են. Եղնիկը (էջ 158) կռվում է նրանց դեմ, որոնք պնդում էին, թե աստղերը կենդանի են «Այլ թէ (աստեղք) չէին կենդանիք, ասեն, և ոչ գնայինք էին. բայց զի գնան, յայտ է թէ կենդանիք են»...Եւ արդ՝ որպէս ոչ ամենայն գնայուն՝ կենդանութիւն մեծ ու բանաւոր ունի, նոյնպէս և ոչ արեգակն, և ոչ լուսին և աստեղք, և ոչ երկինք իսկ ընդորում նոքա շրջին, կենդանութիւն ինչ

մասաւոր և բանաւոր ունինն: Այս տրամաբանութեամբ Պլատոնը ասում է, թէ ապագերը հոգի ունեն. իսկ պյութագորյանները ոչ միայն էակ, այլև ասում էին համարում նրանք, Օգոստինոսի ժամանակ, մանիքեացիք բույսերին վերագրում էին շնչավոր հոգի. Օվկիանիայում, Ֆիջի կղզու բնակիչ վայրենիները կարծում էին, թէ կացիններն ու մկրատներն էլ հոգի ունեն և թէ նույնիսկ դրախտը բնդունում էր նրանց հոգին, երբ նրանք մարդկային ծառայութեան մէջ կտրվում էին: Աննամերենում, ուր կա շնչավոր և անշունչ առարկաների համար երկու տարբեր տեսակի որոշիչ հոդ, «աչք, դանակ, պտուտակ, ճրագաճի թաթիկ, մանգաղ, ջրի տեղատվութիւն և մակընթացութիւն» բառերը շնչավորի հոդ են առանում:

Վերջապես ֆետիշական ժողովուրդների մէջ հոգին մի սեղերական սկզբունք է, որ գոյութիւն ունի ոչ միայն շնչավոր էակների մէջ, այլև այնպիսի առարկաների մէջ, որոնք մեր հասկացողութեամբ իսպառ անշունչ են:

Մեկնելով այս սկզբունքից՝ լեզուների նախնական շրջանում առարկաները բաժանվում են երկուսի՝ շնչավոր և անշունչ:

Այսպես է օրինակ՝ այսօր էլ հնդկական վարի լեզուն, որ դանագանում է կենդանի և անկենդան (շնչավոր և անշունչ) իրերը· -hma մասնիկը ցույց է տալիս շնչավոր էակներ, իսկ -gu -guei անշունչ իրեր. այս մասնիկները կարող են դրվել ածականների, դերանունների, թվականների և բայանունների վրա: Դեռ չկա սեռի դանագանութիւն:

Ամերիկյան Մասաչուզետս նահանգի բնիկների լեզուն չգիտե սեռ, այլ միայն շնչավոր և անշունչ, և այս երկուսի դանագանութիւնը իշխում է ամբողջ քերականութեան մէջ:

Նույնպես է նաև ամերիկյան կրի լեզուն, որ չգիտե սեռի դանագանութիւն, այլ միայն շնչավոր և անշունչ էակներ: Բայց շնչավորների մէջ մտնում են նաև՝ թիվ, գդալ, ծխախոտ, ծխախոտի քսակ, կաթսա, աստղ, պատմվածք, գարի, ձյուն, այծ, շաքար, արծաթ, խեժ, քիմք, ժապավեն, ցորեն, ալյուր և այլն: Լակոմբը, որ ուսումնասիրել է այս լեզուն, իր ընդարձակ աշխատութեան մէջ, էջ 144—6, ասում է ցանկը այն բառերի, որոնք թէև անշունչ առարկաների անուն են, բայց կրի լեզվում շնչավոր են համարվում: Բոլորի թիվը 100 է. բայց կան անշուշտ պատկառներ էլ. օր. էջ 5 հիշված է «գիակ» բառը իբրև շնչավոր, բայց չկա ցանկում:

Այսպես է նաև ամերիկյան լենապե լեզուն, որ չունի սեռ և բառերը բաժանում է շնչավոր և անշունչ կարգերի. ծառերը և բառերը բաժանում է շնչավորների շարքը, իսկ փոքրերը և մեծ բույսերը մտնում են շնչավորների շարքը, և տերևատ բույսերը մտնում են անշունչ իրերի շարքը:

Մունդա խմբից ոչ լեզուն էլ չունի սեռ. դանագանում է միայն շնչավոր և անշունչ, այն էլ միայն դերանունների և բայական վերջավորութիւնների մէջ:

Մելանեզյան յարեմ լեզվի մէջ գոյականը չունի սեռ. այլ բաժանվում է միայն երկուսի՝ անձ և իր:

Հնդկական մունդարի լեզվով, ուր կենդանի և անկենդան առարկաների բաժանումը շատ կարևոր է հոլովման և խոնարհման մէջ, ապրող կենդանի էակ են համարվում բոլոր երկնային մարմինները, ինչպես նաև անձրև, որոտում, փայլակ, կարկուտ, իսկ բույսերը անկենդան են:

Հնդկական մարաթի լեզուն ունի 3 սեռ, որոնք որոշելու համար, ինչպես Սաեվենսոնը՝ այդ լեզվի ուսումնասիրողը՝ ասում է, կա 3 միջոց. ա) բնական ճանապարհով, այսինքն՝ ըստ նշանակութեան. բ) ըստ նշանակութեան և միաժամանակ՝ ըստ վերջավորութեան. գ) ըստ վերջավորութեան: Սրանց համար տալիս է կանոններ, բայց կանոնների հետ խիստ դնում է երկար ցանկեր, որոնք պարունակում են կանոնից բացառութիւն կազմող բառերի երկար շարքեր:

Այսպիսի բաժանումներ ունեն այսօր էլ ամերիկյան և աֆրիկյան դանագան լեզուներ. օր. ալգոնկիններեն լեզվի մէջ շնչավոր սեռին են պատկանում ծառերը, քարերը, արևը, լուսինը, աստղերը, որոտումը, ձյունը, սառույցը, ցուրնը, հացը, ծխախոտը, տաճնակը, հրանգը և այլն: Այսոնց սակայն սեռի դանագանութեան գոյութիւն չունի: Բայց մի անգամ որ լեզվի մէջ ընդունվեց շնչավորի և անշունչի գադափարը, այլևս բնական է, որ անշունչ առարկաները պատկանեն անշունչ սեռին, որ է չեզոք, իսկ շնչավորները պատկանեն շնչավոր սեռին, որ հետո բնականաբար բաժանվում է երկուսի՝ արական և իգական: Չեզոքը ոչ թէ մի սեռ է, այլ սեռ չունենալն է: Եվ հետո է, որ դանագան լեզուներ վերածել են այդ սեռի ինչպես է հատկապես սլավոնական: Շնչավոր խմբի մէջ մտնելով նաև մեզ համար անշունչ առարկաներ, բնական ճանապարհով առաջանում է անշունչ առարկաների էլ սեռը, որ վայրենիների երևակայութեան համաձայն լինում է այս իսկ անշունչ առարկայի համար արական,

մյուսի համար իգական։ Ընդհակառակը՝ որոշ շնչավոր առարկաներ համարվելով իր կամ առարկա, մանում են չեզոքների շարքը, ինչ. լա. mancipium «սարուկ», լինի տղամարդ թե կին, միշտ չեզոք է, որովհետև հաղթողի համար նա մի իր կամ առարկա է։

Սեմական լեզուները մյուս լեզուների պես բնութիւնը ապրող և չապրող (կենդանի և անկենդան) էակների չեն վերածել, այլ ամեն ինչ բմբռնել են իբրև կենդանի՝ ապրող էակ։ Այս պատճառով էլ նրանք չեզոք չունեն. այն՝ ինչ որ ուրիշ լեզուների մեջ չեզոք է, այստեղ, իբրև կենդանի էակ, կամ արական պիտի լինի կամ իգական։ Վերացական գաղափարները, իբրև ծնունդ տվող ուժ, բմբռնվել են իբրև իգական և ստացել են իգական վերջավորութիւն։ Ուրիշ բաներ, որոնք ուրիշ լեզուների մեջ չեզոք են բմբռնվել, սեմականների մոտ համարվելով ավելի թույլ կամ սակաւ, դարձել են նույնպես իգական, որ արականի համեմատութիւնով թույլ սեռ է։ Բայց կան և ուրիշ բաներ, որոնք այնքան էլ թույլ չեն, որպեսզի իգական համարվեին, ուստի նրանք թողնվել են առանց իգական նշանի։ Բայց որովհետև արականն էլ առանձին նշան չունի, այն «չեզոքները», որոնք այս ձևով իգական նշան չստացան, շփոթվեցին արականի հետ և արական համարվեցին։ Այսպիսով, չեզոք էակները կամ դարձան իգական (և այս բանը օրինաչափորեն) կամ համարվեցին արական (իսկ այս բանը սխալմամբ և շփոթմամբ)։ Եթե արականի համար սեմական լեզուները առանձին նշան ունենային, այստեղ էլ կունենայինք արական (նշանով), իգական (նշանով) և չեզոք (առանց որևէ նշանի)։

Սրանից տարբեր չէ նաև «կին» բառը գերմաներենում. երբ կինը ազատ է, իգական է (frau), բայց երբ նա մեկի կինն է (weib), իբրև իր ամուսնու ստացվածքը՝ չեզոք է։

Սրանց կարգը կարող ենք դասել նաև նվազական բառերը, որոնք բոլոր հին հնդեվրոպական լեզուների մեջ էլ չեզոք են, ինչ. հն. (ἀνδρίον) «մարդուկ» (ἀνδή բառի նվազականը), գոթ. gaitein «ուլիկ» (gaits «այծ» բառի նվազականը), հպրուս. wosistian «ուլիկ» (wosee այծ բառի նվազականը), մինչև անգամ գերմ. Weibchen, Fräulein, Vaterchen և այլն։ Այս պատճառներով, անա, առանց վայրենիների հոգեբանութեան մեջ մտնելու, կարելի չէ այժմ մեզ համար գուշակել կամ մանավանդ բմբռնել որևէ բառի սեռը։ Օրինակ՝ հոտենդոտյան նամա լեզվի մեջ բառերը ունեն 3 սեռ. արական (որի վերջավորութիւնն է b), իգական (որի վերջավորութիւնն է s) և հասարակ, այսինքն՝ երբ մարդ չի ուզում որոշել, թե ինչ սեռ է (վերջավորութիւնն է ï). այսպես՝ aob «տղա», taras «կին», k'óiï «մարդ» (առանց սեռի խորութեան)։

Այսպիսի խելոք բաժանումից հետո բնական էր կարծել, որ սեռը չպիտի ունենար տարօրինակութիւններ և անկանոնութիւններ։ Բայց ընդհակառակը։ Ահա «պոչ» բառը, որ պիտի լիներ հասարակ, լինում է արական | hā'b (եթե ձիու պոչ է) և իգական | hā's | (եթե եզան պոչն է). և բազմաթիվ բառեր (անշունչ առարկաներ), որոնք պիտի լինեին հասարակ, արական են և կամ իգական. այսպես՝ որոտումը՝ qurub արական է, աստղը՝ gamiros իգական, մազը՝ lūb արական է, աչքը՝ mus իգական և այլն։ Ամերիկյան չինուկ լեզվի մեջ, ուր կան արական, իգական և չեզոք սեռեր, չեզոք բառերի թիվը շատ փոքր է, այսինքն՝ անշունչ առարկաներից շատերը շունչ առանձնալով դարձել են արական կամ իգական։ Նմանապես, ըստ այդ լեզվի, խոշոր անասունները արական են, փոքրերը՝ իգական։

Այս բաժանումը բնականաբար շատ խելոք է և տալիս է լեզվին հաճախ կանոնավոր կերպարանք. օր. եզը կոչվում է qamab, կովը՝ gamas, եղբայրը՝ !gāsab, քույրը, !gāsas, հայրը՝ ǁ gūb կամ ib, մայրը՝ !lqûs կամ is, արու ձին՝ hāb, էգը՝ hās և այլն։

Ամերիկյան յուկատեկան լեզվի մեջ որոշել են 6 սեռ. արական, իգական, չեզոք, հասարակ, երկսեռ, կասկածական։ Այնուամենայնիվ այս լեզվի մեջ սեռը մեծ է անբնական. օր. huum «թուղթ» արական է, իսկ carta «նամակ» իգական։ Չեզոք կոչվում են այն բառերը, որոնք, ըստ Կինգդոմի, անորոշ ձև ունեն և ոչինչի չեն ունենում. ինչ. «լավը, վատը, հոտեղույնը, ամենատվյալ»։ Հասարակ կոչվում են այն բառերը, որոնք կարող են լինել թե արական և թե իգական, ինչ. մարդասպան, ճանապարհորդ և այլն, նաև՝ անձնանուններ. ինչ. ventura, որ թե արական է և թե իգական։

Երկսեռ կոչվում են այն կենդանիների անունները, որ կարող են լինել թե ար. և թե իգ. ինչ. ձուկ, առնետ, բադ, թռչուն և այլն։

Կասկածական են կոչվում այն բառերը, որ թե արական են համարվում, և թե իգ. ինչ. «ծով» բառը, որ թե ար. է (heli kanab) և թե իգ. (lex kanab).

Ամերիկական ամենահին լեզուն ունի երկու սեռ՝ արական և իգական. բայց բացի այն բառերից, որոնք բնաւորեն իգական են,

ներացյալ բոլորը արական են։ Այսպես՝ անշունչ առարկաներ նշանակող գոյականները արական են։ Սակայն հին գեզ լեզվից մնացած մի խումբ գոյականներ կան, բնհանրապես աստղաբաշխական, որոնք իգական են։ Անասունների էգերի անուններն էլ իգական են, եթե արականը տարբեր անուն չունի։ «Այսպիսի բերականական ամենանուրբ հարցի վերաբերմամբ ամհարների համաձայնության չեն եկած դեռ, և իրենք էլ չգիտեն, թե այս ինչ գոյականը արական է, թե իգական» (Սիրոնոն)։

Թոխարեերենը ունի 3 սեռ, որոնց տարբերությունը երևում է հատկապես ցուցական դերանուններուն մեջ. säm, sam, täm, ուրիշ կարգի բառերում սեռերը միանում են. օր. ածականի մեջ միայն ար. և իգ. զանազանվում են հոլովական վերջավորությամբ. գոյականներից շատերը եզակիում արական են, հոգնակիում (և երկակիում) իգական. բայց շատ բառեր էլ կան, որոնց կամ միայն եզակին է հայտնի, կամ միայն հոգնակին. ուստի և սեռի հարցը անհասատատ է։

Ավստրալիայի նարրինյերի լեզուն սեռ չունի. գոյականները և ածականները առանց սեռի խտրության են. բայց մի քանի բառ կա (անշուշտ բնական սեռի պատկանող), որ ստացել են իգական ձև. օր. yuġa «եղբայր», yuġata քույր։

Սումերերենում անշունչ առարկաների համար երբեք սեռ նշանակված չէ. միայն Գ դեմքի դերանուններից «յուր» ունի ni ձևը, եթե ընչավորի է պատկանում, և bi ձևը, եթե անշունչ իրերի է պատկանում։ Սեռը ոչ մի ազդեցություն չունի հոգնակի կազմելու, ածականի, բայի խոնարհման և դերանուն-մասնիկների գործածության մեջ։

Ամերիկյան լեզուներից մի խումբ (օր. մայպուրե, ախագվա, բորե, պիապոկո, գոայիրա, առուագե, կարաիբ) առարկաները բաժանում են երկու սեռի. ա) arrênique, որ բովանդակում է արական սեռի բառերը, բ) mètarrênique, որ բովանդակում է արական և չեզոք սեռի բառերը։ Մոքսո լեզուն վարվում է ուրիշ ձևով. եզակիում զանազանում է անբանական իրերը՝ իգական էակներից, իսկ հոգնակիում իրերը բաժանում է երկուսի՝ բանական և անբանական. օր. ma-ibope «այր մարդու ոտքի տակ», su-ibope «անասունի ոտքի տակ», իսկ հոգնակի՝ na-ibope «արական կամ իգական բանական էակների ոտքի տակ», ta-ibope «անբանական կենդանիների ոտքի տակ»։

Վերոհիշյալ մի քանի ամերիկյան լեզուների նման, արավակ լեզուն էլ (որ նույնպես ամերիկյան է) ճանաչում է երկու սեռ՝ արական և իգական. երկուսն էլ բնական են. արականը վերջավորվում է i, իգականը՝ u. բայց անշունչ իրերն էլ և բոլոր չեզոք համարված բաներն էլ մտնում են իգական սեռի մեջ։ Ամանք այստեղ տեսնում են կնոջ ստորացման նշանը, այսինքն՝ թե կինն էլ հավասար է անշունչ իրի. ուրիշներ բացատրում են երևույթը ավելի հասարակ ձևով՝ ասելով, թե u վերջավորությունը հատուկ է թե իգական, և թե չեզոք սեռին։ Բայց շատ անգամ սեռը իմաստից է իմացվում այս լեզվի մեջ։

Ամերիկյան ջիվարո լեզուն էլ սեռը վերածել է բնականի. իգականը կազմվում է lu մասնիկով. ինչ. vila «տղա», vilalu «աղջիկ», lus «մարդ», luslu «կին»։

Աֆրիկյան յորուբա լեզվում սեռը բնական է, և որոշվում է բառիկներով. արականի համար դնում է նախադաս ako կամ հետադաս konri, իսկ իգականի համար՝ նախադաս abo կամ հետադաս binri. օր. ako-esin արու ձի, abo-esin էգ ձի
ako-malu եզ, abo-malu կով
ommo-konri տղա, ommo-binri աղջիկ

Եթովպական բեդաուե լեզվում սեռը երկու է. արական և իգական (չունի չեզոք). բայց որովհետև սեռը զանազանելու համար արտաքին նշան չկա, ուստի երկու սեռերը խառնվում են։ Մեծ և ուժեղ առարկաները արական են համարվում, իսկ փոքրերն ու տկարները՝ իգական։ Օր. ša «կով» արական է, որովհետև խոշոր է և տնտեսության գլխավոր հիմունքն է կազմում. իսկ միևնույն ձևով ša «մուկ» բառը իգական է, որովհետև փոքր է։ Սեռի ճանաչման նշանն է հոդը։

Սուդանական մուբի լեզվում բնական սեռը որոշվում է դնելով բառի ծայրին՝ իգականի համար -e կամ -i, արականի համար -o. ինչ. fersī էգ ձի, fersó արու ձի
mindirè աղջիկ, múndúró տղա

Բայի սրանից այս լեզվում մի հետաքրքրական ձև էլ կա բառի արականն ու իգականը որոշելու.— հատկացուցիչ և հատկացյալ դրվում են գրաբարի շարքով և սրանց միջև դրվում է gi, di կամ bi նախդիրը (իբր թե ֆրանս. de). երբ հատկացյալը եզ. ար. է,

Ցեացյալ բոլորը արական են։ Այսպես՝ անշունչ առարկաներ նշանակող գոյականները արական են։ Սակայն հին գեզ լեզվից Ցեացած մի խումբ գոյականներ կան, ընդհանրապես աստղաբաշխական, որոնք իգական են։ Անասունների էգերի անուններն էլ իգական են, եթե արականը տարբեր անուն չունի։ «Այսպիսի բերականական ամենանուրբ հարցի վերաբերմամբ ամհարները համաձայնության չեն եկած գեռ, և իրենք էլ չգիտեն, թե այս ինչ գոյականը արական է, թե իգական» (Սիրոնոն)։

Թոխարեերենը ունի 3 սեռ, որոնց տարբերությունը երևում է հատկապես ցուցական դերանուններում. säm, sam, täm, ուրիշ կարգի բառերում սեռերը միանում են. օր. ածականի մեջ միայն ար. և իգ. զանազանվում են հոլովական վերջավորությամբ. գոյականներից շատերը եզակիում արական են, հոգնակիում (և երկակիում) իգական. բայց շատ բառեր էլ կան, որոնց կամ միայն եզակին է հայտնի, կամ միայն հոգնակին. ուստի և սեռի հարցը անհաստատ է։

Ավստրալիայի Նարրինյերի լեզուն սեռ չունի. գոյականները և ածականները առանց սեռի խտրության են. բայց մի քանի բառ կա (անշուշտ բնական սեռի պատկանող), որ ստացել են իգական ձև. օր. yuġa «եղբայր», yuġata քույր։

Սումերերենում անշունչ առարկաների համար երբեք սեռ նշանակված չէ. միայն Գ դեմքի դերանուններից «յուր» ունի ni ձևը, եթե շնչավորի է պատկանում, և bi ձևը, եթե անշունչ իրերի է պատկանում։ Սեռը ոչ մի ազդեցություն չունի հոգնակի կազմելու, ածականի, բայի խոնարհման և դերանուն-մասնիկների գործածության մեջ։

Ամերիկյան լեզուներից մի խումբ (օր. մայպուրե, ախագվա, բորե, պիապոկո, գոայիբա, առուագե, կարաիբ) առարկաները բաժանում են երկու սեռի. ա) arrênique, որ բովանդակում է արական սեռի բառերը, բ) mètarrênique, որ բովանդակում է իգական և չեզոք սեռի բառերը։ Մոքսո լեզուն վարվում է ուրիշ ձևով. եզակիում զանազանում է անբանական իրերը՝ իգական էակներից, իսկ հոգնակիում իրերը բաժանում է երկուսի՝ բանական և անբանական. օր. ma-ibope «այր մարդու ոտքի տակ», sa-libope «անասունի ոտքի տակ», իսկ հոգնակի՝ na-ibope «արական կամ իգական բանական էակների ոտքի տակ», ta-ibope «անբանական կենդանիների ոտքի տակ»։

Վերոհիշյալ մի քանի ամերիկյան լեզուների նման, արավակ լեզուն էլ (որ նույնպես ամերիկյան է) ճանաչում է երկու սեռ՝ արական և իգական. երկուսն էլ բնական են. արականը վերջավորվում է i, իգականը՝ u. բայց անշունչ իրերն էլ և բոլոր չեզոք համարված բաներն էլ մտնում են իգական սեռի մեջ։ Ամենք այստեղ տեսնում են կնոջ առարացման նշանը, այսինքն՝ թե կինն էլ հավասար է անշունչ իրի. ուրիշներ բացատրում են երևույթը ավելի հասարակ ձևով՝ ասելով, թե u վերջավորությունը հատուկ է թե իգական, և թե չեզոք սեռին։ Բայց շատ անգամ սեռը իմաստից է իմացվում այս լեզվի մեջ։

Ամերիկյան ջիվարո լեզուն էլ սեռը վերածել է բնականի. իգականը կազմվում է lu մասնիկով. ինչ. vila «տղա», vilalu «տղիկ», lus «մարդ», luslu «կին»։

Աֆրիկյան յորուբա լեզվում սեռը բնական է, և որոշվում է բառիկներով. արականի համար դնում է նախադաս ako կամ հետադաս konri, իսկ իգականի համար՝ նախադաս abo կամ հետադաս binri. օր. ako-esin արու ձի, abo-esin էգ ձի
ako-malu եզ, abo-malu կով
ommo-konri տղա, ommo-binri աղջիկ

Եթովպական բեգաուե լեզվում սեռը երկու է. արական և իգական (չունի չեզոք). բայց որովհետև սեռը զանազանելու համար արտաքին նշան չկա, ուստի երկու սեռերը խառնվում են։ Մեծ և ուժեղ առարկաները արական են համարվում, իսկ փոքրերն ու տկարները՝ իգական։ Օր. ša «կով» արական է, որովհետև խոշոր է և անասնության գլխավոր հիմունքն է կազմում. իսկ միևնույն ձևով ša «մուկ» բառը իգական է, որովհետև փոքր է։ Սեռի ճանաչման նշանն է հոդը։

Սուդանական մուբի լեզվում բնական սեռը որոշվում է դնելով բառի ծայրին՝ իգականի համար -e կամ -i, արականի համար -o. ինչ. fersī էգ ձի, fersó արու ձի
mindirè աղջիկ, múndúró տղա

Բայի սրանից այս լեզվում մի հետաքրքրական ձև էլ կա բառի արականն ու իգականը որոշելու.— հատկացուցիչ և հատկացյալ դրվում են գրաբարի շարքով և սրանց միջև դրվում է gi, di կամ ti նախդիրը (իբր թե ֆրանս. de). երբ հատկացյալը եզ. ար. է,

մոտը դրվում է gi, եթե իգական է՝ di, իսկ հոգնակիի մոտ՝ առանց խտրության՝ hi, օր.

gir gi	nyogorok
տուն	*մարդու*
gir gi	manderet
տուն	*մարդկանց*
ambabât	di hin
լազուտը	*մոտս*
gare hi	nyogoron
տները	*մարդու*
alē hi	kae
մագերը	*գլխի*

Զարմանալի է սիրելիները, որ սեռ չունի. բայց գերանուններուն մեջ և գործող անձ ցույց տալու ժամանակ եթե ուզենա, կարող է սեռ ցույց տալ՝ արականի համար գնելով -pa մասնիկը և իգականի համար -mo մասնիկը. օր. kho «նա» երկու սեռի համար, khopa «նա» (արական) և khomo «նա» (իգական); նմանապես գոյականների համար՝ օր. rgyal po «թագավոր», rgyal mo «թագուհի», mi vo (փխ. po) «տղամարդ», mi mo «կին»: Վերջին կետով սիրելիները նման է հայերենին, բայց այն առավելության համար, որ po, mo ավելի կարճ են, քան -ուհի և հետևաբար կարող են կցվել ամեն տեսակ բառերի, նույնիսկ գերանուններուն վրա, ինչ-որ մեզ մոտ աննշան է:

Մալայան գոյակ լեզուն սեռ չունի. բնականից արու էակների հետ գնում են hatuä, էգերին՝ bawi «կին», ինչ.

djipen hatuä	*ծառա,*	djipen bawi	*աղախին*
pahari „	*հղրայր,*	pahari „	*քույր*
radja „	*թագավոր,*	radja „	*թագուհի*

Ամերիկյան կիրիրի լեզվի մեջ սեռ չկա, օր. cradzo նշանակում է թե կով և թե եզ:

Օվկիանյան շատ նախնական կարոլինյան լեզվի մեջ սեռ չկա. սեռերը որոշվում են muan «մարդ» և šabot «կին» բառեր ով. որ

bui	muan	*եղբայր,*	bui šabot	*քույր*
uāke	„	*ցուլ,*	uēke „	*կով*
malük	„			*հավ*

Ամերիկյան բակաիրի լեզվում բնավ սեռ չկա. imeri նշանակում է ընդհանրապես «երեխա». երբ ուզենան սեռը որոշել, կավելացնեն uɣuroto «տղամարդ» կամ pekoto «կին» բառերը. բուն այսմ

imeri	uɣuroto	*տղա, մանչ*
„	pekoto	*աղջիկ*

Նույն բառերով որոշվում է նաև անասունների սեռը:

Հնդկական նեպալի լեզվում սեռը վերածվել է բնականի. միայն բնականից իգական բառերն են, որ իգական են. մնացյալ բոլորը արական են. բուն այսմ չեզոք չկա. և շատ բառեր, որ հինդի լեզվում իգական են, նեպալի լեզվում վերածված են արականի: Այս փոփոխությունը համարվում է նեպալ երկրի տիբեթ-բիրմանական լեզուների ազդեցության արդյունքը:

Սումատրայի բատա լեզվում իգական կազմելու համար գործածվում է boru «դուստր» բառը (միայն անձերի համար), իսկ արականի համար դրվում է doli, որ այժմ առանձին չի գործածվում, բայց ժամանակին գործածված պիտի լինի «մարդ» նշանակությամբ. օր. ompu doli «պապ», ompu boru «տատ».— boru կարող է նաև անասունների համար գործածվել:

Բիրմաներենում արական կազմելու համար կարելի է դնել ա'ի «արու», ap'a «հայր», atho „penis" և p'o «ուժեղ» բառերը:

Նույն դրությունը գտնում ենք ամերիկյան մենամա լեզվում: Այստեղ էլ սեռը երկու է. արական (որ կոչվում է ազնիվ սեռ) և իգական (որ համարվում է անազնիվ սեռ): Արականի մեջ մտնում են մարդը և արու կենդանիները. իսկ իգականի մեջ՝ կանայք, էգ կենդանիները և ամեն անշունչ իր: Երբեմն, երբ ուզենան պատվել մի անշունչ իր, արական են դնում. օր. որպէս իր նոր զենքերի անուններըը կարող է արական դնել. մի երիտասարդ կարող է մի ծերունու մազերն ու մորուսը ի հարգանս արական դնել. մի կին իր ամուսնու բոլոր իրերը կարող է արական դնել: Իգականի նշանն է a, որ դրվում է բառավերջում, բայց միայն այն դեպքում, երբ այդ բառը ունի երկու սեռ (արական և իգական). օր.

nga	*եղբայր,*	ngaa	*քույր*
nuhor	*մարդ,*	nuhora	*կին*
konswar	*արու ձի,*	konswara	*զամբիկ*
tido «castor» (*աբ.*)		tidoa	*նրա էգը*

Իսկ անշունչ իրերի անունները (բնական սեռ չունենալով) համարվում են իգական՝ առանց a վերջավորութիւնն ունենալու. օր.

gtetno	քաջութիւն
wove	խոսք
orktai	ծառայութիւն
nrab	ծաղիկ
tkara	այտ

Բերբերական կաբիլերեն լեզուն ունի միայն երկու սեռ. ար. և իգ. — եզ. արական բառերը սկսվում են a ձայնավորով, որ երբեմն միայն, հաջորդ ձայնավորների ազդեցութիւնով, կարող է դառնալ e, i, u. — հոգնակիում այս a ձայնավորը դառնում է i. ուրեմն բոլոր հգ. ար. բառերը սկսվում են i ձայնավորով, սակավ բացառութիւնով:

Բոլոր իգական բառերը սկսվում են th բաղաձայնով և վերջավորվում մեծ մասամբ th-ով, քիչ եզակի, և քիչ հոգնակի: Շատ բառեր կան, որոնք սկսվում են th-ով, բայց վերջանում են ձայնավորով. սրանք անշունչ առարկաներն են, և արական ձև էլ չունեն. համարվում են իգական:

Բերբերական տամաշեկ լեզուն էլ, որ կաբիլերենի ազգականն է, երկու սեռ է ճանաչում. ար. և իգ. (թեև սեռը այստեղ բնական չէ): Արական բառերը սկսվում են a, e, i, u ձայնավորներով, որոնք հոգնակիում վերածվում են i-ի, իգական բառերը քիչ եզակի, և քիչ հոգնակի սկսվում են t-ով, որով ար. մի բառ իգականի վերածվելու համար՝ սկզբից և վերջից առնում է t. օր.

amrar	ծեր մարդ	— tamrart	ծեր կին
amadhan	հովիվ	— tamadhant	հովուհի
uluki	հարթ	— tulukit	երինջ
ekahi	աքլոր	— tekahit	հավ

Կան սակայն շատ բառեր, որոնք իգական են, բայց վերջում չունեն t, այլ միայն՝ սկզբում:

Շատ ավելի կանոնավոր է սեռը հարևան ափար լեզվում, որ քամյան ճյուղին է պատկանում. այստեղ էլ սեռը երկու է՝ ար. և իգ. ամեն բառ, որ վերջանում է երկար ձայնավորով (ā, ē, i, ō, ū), իգական է. մնացյալ բոլորը՝ արական:

Գալով անտի (կամ կամպա) լեզվին, սա էլ մայոտուրե բնանիքի շատ լեզուների նման՝ սեռը բաժանում է արական և ոչ-արական. բայց միևնույն ժամանակ զանազանում է բանականները անբանականներից: Այս դեպքում իրար հետ փոխանակվում են t և n ձայները: Այսպես «փոքր» ածականը բանականի հետ դառնում է acanigeri, իսկ անբանականների հետ՝ acatigeri: Նմանապես սրան համապատասխանող խոպան. alli esta բացատրութիւնը ըստ այսմ առանում է երեք տարբեր ձև. եթե էնթականը մարդ է, կլինի ariniri եթե կին է՝ կլինի ariniro. իսկ եթե անշունչ առարկա է՝ կլինի aritero:

Դրավիդյաններից տուլու լեզուն շատ է կանոնավորել սեռի հարցը. արական և իգական բնական են. իսկ անշունչ իրերը չեզոք են, նրանց հետ նաև անասունները:

Օվկիանյան տահիթի լեզուն սեռ չունի. բնական սեռի համար այր և կին նշանակվում են ար. tane և իգ. vahine բառերով. իսկ անասունները՝ pac կամ oni ար., և ufa իգ. բառերով. օր. puaa «խոզ» ար. և puaa ufa «էգ խոզ».—մինչև անգամ բույսերի համար կա otane ար. և ovahine իգ., ինչ. anuhe «պտեր բույսը», որ գիտութիւն մեջ էլ ունի ար. և իգ. անասնները, տահիթի լեզվով որոշվում է anuhe otane «արու պտեր» և anuhe ovahine «էգ պտեր»:

Նման մի բաժանմունք կա նաև կովկասյան լեզուներում: Օրինակ, ավարերենում առարկաները բաժանվում են երկուսի. 1) շնչավոր բանական էակներ. 2) շնչավոր անբան էակներ և անշունչ առարկաներ: Առաջինների մեջ կա արականի և իգականի խառութիւն (բնական սեռ), իսկ երկրորդները բոլորը չեզոք են (այսպես նաև անասունները). արականի նշանն է u կամ v, իգականինը՝ y, չեզոքինը՝ b, և այս երեք հատկանիշները երևում են լեզվի գրեթե բոլոր բառերի և ձևերի մեջ. ինչ. vaç «եղբայր», yaç «քույր», baç (անասունների մեջ քույր և եղբայր), dòu «նա», doy «նա», dob «նա» (չեզոք), au «այս», ay «այս» (իգ.), ab «այս» (չեզոք) և այլն և այլն:

Սեռը կանոնավորված և գրեթե բնականի է վերածված աֆրիկյան նիամ-նիամ լեզվի մեջ: Այստեղ սեռը վերածված է չորսի. արական, իգական, կենդանական և չեզոք: Առաջին երկուսը բնական են և պարունակում են միայն ար. և իգ. բնական էակները: Կենդանական սեռը պարունակում է բոլոր տեսակի անասունները՝ ար. և իգ. անխտիր. չեզոքը պարունակում

է անշունչ իրերը։ Բացառություն են կազմում միայն 2 առանձին բառ՝ բույս կամ էր, որոնք մտնում են կենդանական սեռի մեջ։ Այս բառերն են՝ ապառաջան, օդակ, ասեղ, կարթ, դանդակ, բոժոժ, գամ, մանդոլին, մարգարիտ, լոբի, ծխամորճ, բուրմունք և այլն։ Սրանց հետ նաև բոլոր եվրոպական դրամները, մեդալները, նաև լուսին, աստղ, ծիածան, կայծակ (այս չորսը քան իրենց հավատալիքների առնասուն են)։ Փոքր երեխաների էլ կենդանական սեռի մեջ են մտնում։ Եթե մի արական բառ ուզենան վերածել իգականի, սկզբից ավելացնում են na «մայր» ինչ. iradihi «գող», nairadihi «գողուհի»։ Առնասուններին սեր որոշելու համար՝ արականին գնում են ba «հայր» և իգականին՝ na «մայր». օր. ąngo «շուն», ba ąngo «արու շուն», naąngo «էգ շուն»։

Նույն ոճով է նաև գրավիդյան տելուգու լեզուն, որ գիտի 4 սեռ. ար. իգ. չեզոք և հասարակ, որոնք բնական են. օր.

tammudu	ար.	կրտսեր եղբայր
čellelu	իգ.	կրտսեր քույր
pustakamu	չեզ.	գիրք

pakši «թռչուն» (հասարակ սեռ է, այսինքն՝ կարող է լինել թե ար., և թե իգ.)։

Հնգկական դարդիկ խմբից գիլգիտի լեզուն ունի երկու սեռ, արականը վերջավորում և ō, իգականը՝ ī, որից էլ malō «հայր», mālī «մայր»։

Դրավիդյան գոնդե լեզուն ունի երկու սեռ, արական և չեզոք. արականը գործածվում է միայն մարդկանց և աստվածների համար. ինացյալ բոլոր բառերը չեզոք են համարվում։

Դրավիդյան կուրուխ լեզվի մեջ միայն տղամարդն է արական և միայն կինն է իգական. բոլոր անբան էակները չեզոք են, երբ տղամարդիկ խոսքն կանանց հետ կամ կանանց մասին, նրանց պիտի ընդունեն իրրև իրենց հավասարը և նրանց համար պիտի գործածեն արական ձև, բայց եզակի բ դեմքից, որ միայն իգական։ Անպարկեշտ բան է համարվում, երբ տղամարդը խոսի կանանց մասին և նրանց կին համարի։ Նմանապես երբ մի կին խոսի տղամարդկանց հետ և կանանց համար իգական գործածի, անպարկեշտ է արարքը։ Նա էլ այս դեպքում կանանց արական պիտի համարի, բայց եզ. բ դեմքից։ Մնացյալ ուրեմն, որ կանայք իրար հետ խոսելիս իրենց համարեն կին և

իգական ձևեր գործածեն։ Ահա դրա համար է, որ քերականության մեջ էլ կա իգական խոնարհում՝ բայի բոլոր դեմքերի համար։

Սեռը որոշվում է դերանվան մեջ, ուր կա 3 սեռ (ար., իգ. և չեզ.)։ Այստեղ էլ անձնականի իգականը առանձին ձև չունի. եզակիում նույնն է չեզոքի հետ, հոգնակիում նույնն է արականի հետ. այսպես է նաև ցուցական ածականը։

Հնդեվրոպական նախալեզվի մեջ վերացական բառերը չեզոք են (ինչպես ցեղ կամ սիր). առարկաներից ամանք չեզոք են (ինչպես լուծը և առնառարակ -tlo,-tro վերջավորությամբ գործիքի անուններըը). մարմնի անդամներից առաջ արական է, ձեռքը՝ իբրև առաջող՝ հաճախ իգական, լեզուն իգական է. ներքին գործարաններըը, որոնք զբաղված են իբրև անշարժ (ինչպես լյարդ, սիրտ և այլն) չեզոք են. ծառերը, որովհետև պտուղ են ծնում, իգական են, իսկ պտուղները չեզոք են։ Այնժանուններըը, որոնք ցույց են տալիս մի ներքին զորություն, որով տեղի է ունենում (այսինքն ծնվում է նրանից) մի երևույթ կամ մի հատկություն, իգական են, ինչպես՝ գիշեր, լույս, հիվանդություն, առողջություն, համ և այլն։ Բանը, որ մի զորավոր ուժ է և իրեն է ենթարկում բոլոր մարդկանց՝ արական է. իսկ երազը, որ քնի մեջ երևցած անկենդան առարկան է, չեզոք է։ Երկինքը, որ տալիս է բնդմնավարիչ անձրևը, արական է, իսկ երկիրը, որ բնդմնավորվում է, իգական է։ Կան առարկաներ, որոնք մերթ իրրև զուտ առարկա ըմբռնվելով, համարվում են անշունչ և չեզոք են, և մերթ էլ իրրև կենդանի էակ առնվելով՝ շնչավոր են և սեռ ունեն. այսպես՝ կրակը puros ձևով առարկա է և չեզոք է. իսկ agnis ձևի տակ՝ կենդանի էակ է և արական։ Վեդաների մեջ նա աստված է։ Նույնպես ջուրը, vedos ձևով չեզոք առարկա է իսկ āpas ձևով իգական-շնչավոր էակ է, նույնպես աստվածացյալ։

Ժամանակի ընթացքում սեռի տեսակը կարող է փոփոխության ենթարկվել. լեզուները լիքն են այսպիսի օրինակներով. շատ բառեր, որ այսօր ֆրանսերենում արական են, հին ֆրանսերենում իգական էին և այսօր էլ իգական են ժողովրդական լեզվի մեջ. օր. exercice «վարժություն», ouvrage «գործ» և այլն։

Լատիներենում կան բառեր, որոնք քան թվի փոխում են իրենց սեռը. օրինակ՝

Հզակիում		Հոգնակիում	
ար. tartarus	թաթար	չ. tartara	
իգ. carbasus	շղարշ	չ. carbasa	
ար. jocus,	կատակ	չ. joca, ար.	joci,
ար. locus	տեղ	չ. loca, ար.	loci
չ. frenum	սանձ	չ. frena, ար.	freni
իգ. ostrea	ոստրե	չ. ostrea, իգ.	ostreae

Սանսկրիտ լեզվի սեռը փոխվեց պրակրիտ լեզվի մեջ. հաճախ չեզոքը ար. դարձավ, արականը իգ. կամ չեզոք և այլն. և այս բոլորը ընդհանրապես բառի վերջին ձայնավորի փոփոխության պատճառով։

Ամեն լեզվաբնի համար էլ սեռի ճանաչումը պարտադիր չէ. այսպես՝ սեռ դիտեն, բայց հնդեվրոպացիներից, սեմականները (սկսած ասուրերենից մինչև արաբերենը), քամյանները, հին եգիպտացերենը, հաուենդաո, դրավիդյան լեզուները և այլն։ Սեռ չունեն ուգրո-ֆիննական լեզուները, ուրալ-ալթայականները, կովկասյաններից չաուերը, էլամերենը, չինարենը, ճապոներենը, մոնղոլերենը, ջավայերենը, աֆրիկյան բանաոու լեզուները և այլն։ Օր. սվահիլի լեզվում, որ բանաոու ճյուղին է պատկանում, ndugu նշանակում է թե եղբայր և թե քույր։ Կան նաև լեզուներ, որոնց հին շրջանը սեռ ունի, որ հետո ջնջվել է։ Այսպես՝ լիթվերենի և լիտվաներենի մեջ սեռը, որ հին պրուսերենում մինչև ԺԴ դարի վերջը գոյություն ուներ, ջնջված է։

Բայց սեռի մերժման լավագույն օրինակը տալիս է ամերիկյան մոսկիտո լեզուն, ուր ոչ երբորդ դեմքի դերանունը, ոչ ածականը, ոչ բայը՝ ոչ մի բառ սեռ չունի։ Նույնիսկ այն բանավոր և անբան էակները, որոնք ունեն բնական սեռ և լեզուների մեջ տարբեր բառերով են որոշվում, այստեղ սեռ չունեն և բնհանուր են։ Maya բառը կնոջ համար նշանակում է «մարդ, ամուսին», իսկ մարդու համար նշանակում է «կին»։ Եղբայրները իրար կոչում են՝ moini-ki «եղբայր իմ» և քույրերն էլ իրար կոչում են moini-ki։ Եղբայրը քրոջ մասին խոսելիս ասում է laikra (քույր) և քույրն էլ եղբոր մասին խոսելիս ասում է laikra (եղբայր)։ Տարբեր են միայն՝

aissa	հայր,	gapti	մայր
dama	պապ,	kuka	տատ
kiki	աղջիկ,	wainatka	արու

Մայրահեղ դեպքում գործածում են waikna «արու», mairin «էգ». օր.

lupia	waikna	որդի,	lupia	mairin	դուստր
tukta	„	տղա.	tukta	„	աղջիկ

Անասունների արուն կոչվում է wainakta, *իսկ էգը՝* mairin, *ինչ.* bip wainakta «ցուլ», bip mairin «կով»։

Նույն վիճակումն է գտնվում նաև աֆրիկյան մինիանկա լեզուն, ուր սեռ չկա. միակ բառերը, որ այս լեզվի մեջ սեռ ունեն՝ չորս հատ են.

na	տղամարդ,	tyeue	կին
to	հայր,	nu	մայր

ուրիշ չկա։ Ուր որ հարկ լինի սեռ ցույց տալ, արուի համար դնում են polo, *էգի համար՝* šyo, *ինչ.* mrya «աչխար», mryapolo «խոյ», mryašyo «մաքի»։

Աֆրիկյան սարա լեզվում սեռ չկա. միևնույն բառով ասում են նույնիսկ՝

kü *քույր, եղբայր*
debe *տղամարդ, կին*
mono *տղա, աղջիկ (երեխա)*

Կարևոր դեպքում, տարբերելու համար գործածում են ngaba «արու» *և* manda «էգ» *բառերը. ինչ.*

debe ngaba	կամ	ngaba	ամուսինը	(vir)
„ manda	»	manda	կին	

mono ngaba *մանչ,* mono manda *աղջիկ (բացառաբար ասում են* biya «հայր», yana «մայր»)։

Անասունների էգը որոշելու համար գնում են mba *բառը. ինչ.*

sunda	ձի,	mba sunda	զամբիկ
bise	շուն,	mba bise	քաժ

Եվրոպական կուլտուրա լեզվում սեռի զանազանություն չկա և նույնիսկ բնական սեռը միևնույն բառով է արտահայտվում. օր.

afo *պապ կամ տատ,*
imbo *մորեղբայր կամ մորաքույր*

anda *կամ* ina *երից եղբայր, երից քույր*
isa *փոքր եղբայր կամ փոքր քույր և այլն։*

Այսպես է նաև Էֆոտպական բարեա լեզվում, ուր մինչև անգամ երկու սեռերի համար երբեմն գոնում ենք միևնույն բառը. ինչ. abta «*ամուսինը կամ կինը*», selebi «*փեսան կամ հարսը*»։

Ննեցերենին չեզակից սելկուպ լեզվի մեջ սեռ չկա. բայց կա շնչավորի և անշունչի զանազանություն, սակայն այդ էլ միայն տրական, ներգոյական և բացառական հոլովների մեջ, այսպես՝

տր. շնչ.	- nək,	*անշ.*	- ndə,— tə
ներգ. »	- məgət,	»	- gət
բց. »	- nan	»	- gənə

Միայն հոլովներում մասնիկները նույնն են թե՛ շնչավորի, և թե՛ անշնչի համար, որ նշանակում է, թե խառնությունը վերացնում է։

Սուդանական շիլլուկ լեզվի մեջ սեռ չկա. սեռի զանազանություն գոնվում է միայն դերանունների մեջ։

Նոր-Զելանդիայի լեզուն, որ տահիթի լեզվի հետ նույնն է հոլովման և թվականների մեջ, այս կետումն էլ նման է նրան։ Սեռ չունի. իսկ երբ ուզենա բնական սեռը որոշել, արականի համար դնում են tane *կամ* tourawi, *իսկ իգականի համար՝* wahine *կամ* uwha։ *Սրանց մեջն զարմանալի տարբերացում է առեջված։* Tane *և* wahine *դրվում են այն էակների անվան վրա, որոնք խնամությամբ կապված են իրար հետ, իսկ* tourawi *և* uwha, *երբ նրանք իրար համար օտար են։ Այսպես՝ ծնողները կոչվում են՝*

e	matua	tane	*հայր*
e	»	wahine	*մայր*

իրար զուգակցող ձկները կոչվում են ըստ սեռի՝

e	tane	ika	*արու ձուկ*
e	wahine	»	*էգ ձուկ*

իսկ որևէ երկու գազան, որոնք իրար հետ զուգակից չեն, կոչվում են՝

e	kara	ree	tourawi	*արու գազան*
e	»	»	uwha	*էգ* »

Այժմ պիտի խոսենք այն մասին, թե ինչպես սեռը փոփոխում և ջնջվում է լեզվից։ Սեռի համար նախ պետք է ըմբռնել այն կապը, որ կա բառի սեռի և բառի վերջավորության միջև։

Սեռը արտահայտվում է սովորաբար վերջավորությամբ. այսինքն այս կամ այն սեռի բառերը առանում են այս կամ այն վերջավորությունը։ Ժամանակ՝ անցնելով սեռ ու վերջավորություն այնպես են զուգորդվում, իբրև հետ, որ այլևս ոչ թե բառն է, որ ունի սեռ, այլ մասնիկն է, որ առեջծում է սեռ։ Սրա ամենալավ օրինակը տալիս է նվազական մասնիկը. նախնական մարդը շատ բնականորեն կարիք չէր զգացել փոքրիկ կենդանիներին սեռով որոշելու. բայց երբ մեծանում էին, անհրաժեշտ էր կոմն ու եզը տարբերել սեռով որոշելու։ Այս պատճառով էլ՝ բնականաբար, նվազական մասնիկը չեզոք է։

Բայց նա չեզոք մնում է նաև այնտեղ, ուր սեռը՝ արական կամ իգական, շատ որոշ է։ Սրա հակառակն է բերբերական, քուշյան և սեմական մի քանի բարբառների մեջ, ուր իգականը միաժամանակ նվազական է։ Այս պարագային զարմանալի չէ անենք, ուրեմն, այնպիսի բառեր, որոնց սեռը մարդկային տրամաբանության և նույնիսկ լեզվի՝ ըմբռնողության հակառակ լինի։ Մի քանի դարի ֆրանսերենում prophète «*մարգարե*» *բառը և նույնիսկ* pape «*Հռոմի պապը*» *իգական էին* (Vandriès, Le Langage, *էջ 109*), *որովհետև իգական վերջավորություն ունեին։*

Ժամանակի ընթացքում սեռը փոփոխելու լավ օրինակ է լա. jumentum, *որ նշանակում է «գրաստ, բեռ կրող անասուն, ինչ. ձի, էշ, ջորի, ուղտ», բոլորն էլ առանց սեռի խտրության, նաև՝ փոխադրական միջոց. սայլ։ Բառը չեզոք է, ինչպես ցույց է տալիս* -um *վերջավորությունը։ Բառը ծագում է* jugo «*լծել*» *արմատից և նշանակում է բուն «լծկան անասուն»։ Սկզբում սեռի խտրություն չի եղել. բայց հետո ձիու սեռը պատճառ է դարձել գործածության խտրության։ Այսպես, արու ձին գործածվել է հեծնելու համար, իսկ էգը ծառայել է իբրև բեռնատար։ Սրա համար էլ* jumentum *դարձել է ֆրանս.* jument, *իտալ.* giumenta, *երկուսն էլ՝ իգական (վերջինը* -a *վերջավորությամբ, որ իգականի նշանն է)։*

Արդի ֆրանսերենում sentinelle «պահակ զինվոր» իգական է, որովհետև -elle վերջավորությունը իգական է։ Դարձյալ գերմ., ինչպես տեսանք, Fraulein «օրիորդ» և Mädchen «աղջիկ», որոնք գերազանցապես իգական գաղափարներ են, համարվում են համասարապես չեզոք, որովհետև -lein և chen նվազական մասնիկները չեզոք են։

Աֆրիկյան բիլին լեզվի մեջ ամեն նվազական բառ իգական է. ուստի եթե մի որևէ բառ արական է, նրա նվազականը պիտի լինի իգական. օր. bukuana «ամպ» արական է, նույնը դառնալով «ամպիկ» լինում է իգական. ar «հատիկ», արական է, իսկ ara «փոքրիկ հատիկ» իգական է։

Ռումիներենի մեջ էլ sluga «ծառա», sentinela «պահակ զինվոր», călăuză «առաջնորդ», catana «զինվոր» և, նույնիսկ, տան կական aga «աղա!» իգական են։

Դանիերենի մեջ (ինչպես նաև նորվեգերենում) առաջացել է միայն երկու սեռ՝ հասարակ և չեզոք. առաջինը պարունակում է արական և իգական բառերը, ուրեմն ունենում ենք շնչավոր և անշունչ. սակայն շատ բառեր, որ շնչավոր են, չեզոքի մեջ են, և շատ բառեր, որ անշունչ են, հասարակ սեռի են։ Երբեմն կեցերենում կան մի խումբ բառեր, որոնք եզակիում արական են, հոգնակիում իգական և ընդհակառակը։ Արաբերենում ամեն անկանոն հոգնակի իգական է։ Ռումիներենում, ուր կա արական և իգական, այս երկուսից դուրս կա նաև խառն (heterogen) սեռ, որին հետևող բառերը եզակիում արական են, հոգնակիում՝ իգական. այսպես օր. du «ձուն», oras «քաղաք», lemn «փայտ» և այլն։ Իտալերենում էլ centinaio «հարյուրյակ», migliaio «հազարյակ», paio «զույգ» եզակիում արական են (որովհետև o արական նշան է), իսկ հոգնակիում centinaia, miglinaia, paia իգական են (որովհետև a իգականի նշան է)։

Այն մասին, թե այլևս բառը չէ, որ կազմում է սեռ, այլ բառի վերջավորությունը, իբր լավագույն ապացույց ծառայում է շվեդերենը։ Այս լեզվի մեջ սեռը չորս է. բացի արական, իգական և չեզոք սեռերից առաջացել է նաև իրական (reale) սեռ։ Արական են կոչվում այն բառերը, որոնց տեղ կարելի է դնել han «նա» դերանունը, իգական՝ hon «նա», սեռ՝ den, չեզոք՝ det. այնուամենայնիվ այս բոլորի մեջ դեռ իրական ոչինչ չկա և բնական սեռերը անմիտ կերպով բաժանված են հիշյալ չորս սեռերի մեջ։

Սեռի կողմից ամենաբարդ վիճակը ներկայացնում է լեհերենը. ոչ մի լեզու չի գնացել այնքան հեռու, որքան այս լեզուն։ Լեհերենը՝ 1) պահել է նախ ընդհանուր հնդեվրոպական արական, իգական և չեզոք սեռերը, 2) առաջել է ընդհանուր սլավոնականից եզակի արականում շնչավոր և անշունչ սեռերի տարբերությունը, 3) ավելացրել է հոգնակի արականում անձնական և ոչ-անձնական սեռերի տարբերությունը, որ առեղծել է մի դարից հետո։

Այստեղ էլ սակայն սեռի բնական բաժանում չկա։

Եվ դարմանալի է, որ այսպես սեռերով տոգորված լեզուներ չեն կարողանում սեռ առեղծել այնտեղ, ուր իսկապես սեռը հարկավոր էր. օր. ֆրանս. auteur «հեղինակ», professeur, littérateur «պրակտիկագետ», mèdecin «բժիշկ», écrivain «գրող», peintre «նկարիչ» և այլն իգական չունենն. ռուս. врач «բժիշկ», իգական չունի, որովհետև այս բոլոր պրոֆեսիաները նախկին ժամանակներում միայն տղամարդկանց էին հատուկ։

Ժամանակի ընթացքում գաղափարները փոխվում են, ֆեմինիզմը վերանում է. այլևս ծիծաղելի է այն գաղափարը, թե, օրինակ, սեզոնը կամ վայրը հոգի ունեն և աղջիկ կամ տղա են. բայց այնուամենայնիվ սեռը շարունակում է իր գոյությունը լեզվի մեջ, որովհետև լեզվի ձևը գերազանցապես պահպանողական է և չի կարողանում հետևել մեր առաջընթացին։

Եթե սեռի դասակարգությունը բնական չէ և բուն ժամանակի էլ փոփոխական է, գարմանալի չէ, ուրեմն, եթե նա լեզվից լեզու տարբեր լինի։ Այսպես, օրինակ՝ «լեզու» բառը բոլոր եվրոպական լեզուների մեջ իգական է, սլավոնական լեզուների մեջ արական։ «Ծաղիկ» բառը արական է լատիներենում (flos), իգական է ֆրանսերենում (fleur) և չեզոք է հունարենում (ἄνθος)։

Երբ ֆրանսերենի ուսուցչին հարցնենք, թե ինչպես իմանալ, բառը արական է, թե իգական. նա կպատասխանի.— երբ բառը le ունի՝ արական է, իսկ եթե la ունի՝ իգական է։— Իսկ ինչպես իմանալ, թե բառը le ունի, թե la, նա կպատասխանի. երբ արական է՝ le ունի, իսկ երբ իգական է՝ la ունի։

Վերևում տեսանք, թե սեռի գաղափարը պարտադիր չէ բոլոր լեզուներին և օրինակ բերինք, թե չինարենը կամ այլ ասիական լեզուները սեռ չունեն։ Այս խոսքը թերևս ոմանց հակասական թվա այն գաղափարի հետ, թե ֆետիշական ժա-

դովուրդները շնչավորն ու անշունչը քաշ շարժման են որոշում և շնչավորը այսպես որոշելուց հետո բաժանում են արականի և իգականի՝ քաշ իրենց երևակայության։ Հարցը այն չէ, թե չի՞նացիք կամ ալթայականները շարժումը իբր հոգի ընդունում են, թե չէ, կամ այդպես ընդունելուց հետո անշունչ էակները՝ արական կամ իգական բնորոշում են, թե չէ, այլ այն, թե արականը կամ իգականը, որ իրենց բնորոշության մեջ կա, որևէ նշանով բառի մեջ արտահայտում են, թե չէ։ Այս վերջինի պատասխանն է՝ ոչ։

Ինչպե՞ս է կատարվում սեռի ջնջումը լեզվի մեջ։

Առաջին գերակատարը այստեղ նմանողության կամ ընդհանրացման օրենքն է։ Ռուսերենի մեջ ածականների վերջավորությունները էին հգ. ուղ. ար. ые, не. իգ. ыя, ия. ավելի հետո ընդհանրացման օրենքով՝ ыя, ия ջնջվեցին և նրանց տեղ գործածվեցին ые, не. Բուլղարերենում ընդհանրացման գործը ավելի առաջ գնաց և երեք սեռի համար էլ ածականի հոգնակիի վերջավորությունը դարձավ u (կարդա i), ինչ որ նշանակում է, թե սեռը ջնջվեց հոգնակիությում, բայց սեռը բուլղարերենում չի բուն ակվում է դեռ, քանի որ եզակիի մեջ կա։ Արաբերենում խոնարհման ժամանակ, ինչպես և գերանունների մեջ, երկրորդ և երրորդ դեմքում սեռը գոյություն ունի, իսկ ժողովրդական լեզվի մեջ հոգնակիի սեռը ջնջված է, և թե բայի և թե գերանունների մեջ արականն է ընդհանրացած, թեև եզակին դեռ մնում է։ Սա՝ ընդհանրացման օրենքը, առաջին քայլն է։

Բայց սեռի ջնջման գլխավոր գերակատարը հետևյալն է։

Վերևում ասացինք, թե սեռ ու վերջավորություն այնպես են զուգորդվում իրար հետ, որ սեռը ոչ թե բխում է բառից, այլ վերջավորությունն է, որ առեղծում է բառի սեռը։ Արդ՝ եթե որևէ կերպով այդ վերջավորությունը վերանա, ուրեմն բառն էլ կզրկվի սեռի նշանից, ուրիշ խոսքով՝ սեռից։ Սեռ ցույց ավող նշանները առնասարակ բառավերջի ձայնավորներն են։ Ամեն լեզվի հետագա ընթացքում նկատելի է, որ վերջին ձայնավորները ընկնում են. հետևաբար և սեռը ինքնին ջնջվում է։ Ուրեմն սեռի ջնջումը լեզվի մեջ ոչ թե տրամաբանական պատասխանության կամ մարդկային քաղաքակրթության ավելի բարձր զարգացման արդյունք է, այլ առաջացած է բոլորովին պատահար՝ իբրև արդյունք ձայնավորների կամ բառավերջի բոլոր ձայնի ջնջման օրենքի։ Այսպես, հին պարսկերենը և վենդերին

որոնք դանազան ձայնավորականդ վերջավորություններով հատուկ լեզուներ էին, ունեին արական, իգական և չեզոք սեռ. ավելի հետո՝ պահլավերենի և պարսկերենի շրջանում, բառերի վերջավորությունները սղվեցին, և այդ լեզուներն էլ սեռից զրկվեցին։ Այսպես նաև քրդերենը։ Օր. հին պարսկ. gauša=գնդ. gaoša «ականջ» բառը արական էր. պահլավերենի և պարսկերենի մեջ վերջածայն a ընկավ, բառը դարձավ gōš, որ սեռ չունի։

Սանսկրիտը և պրակրիտը ունեին երեք սեռ, որ արդի հնդկական լեզուներից միայն մի քանիսն են դեռ պահում, իսկ մյուսները հետզհետե ջնջում են։ Առաջին հերթին ջնջվում է չեզոքը։ Հինգուստանի լեզուն ունի արական և իգական, բայց չեզոք չունի։ Չեզոքի պահպանման մեջ ամենից ավելի հետամնաց են գուջարաթիի և մարաթիի լեզուները։ Երկրորդ հերթին կարելի է հիշել ոսկաթիանի լեզուն, իսկ մյուսները տեղ-տեղ միայն հետքեր են պահել։ Արևելյան հնդկական լեզուներում (ինչ. բենգալի և օրիյա) սեռը բոլորովին ջնջված է։ Գուջարաթիի լեզվում չեզոքը հաճախ գործածվում է իբրև ընդհանուր սեռ. օր.

գուջարաթիի čhōkarō ար. ոգա (մանչ)
čhokarī իգ. աղջիկ
čhūkarū չ. զավակ (արու կամ էգ)

Նույնիսկ իգիլ (հրեական) լեզվի մի բարբառում՝ o բարբառ, որ գերմաներեն լեզվի մի բարբառի շարունակությունն է, ջնջված է չեզոք սեռը, մինչդեռ գերմաներենը ամեն տեղ պահում է այն։

Սրանց ճիշտ հակառակն է ռաֆսանեբենը, որ պարսկերենի և քրդերենի հարազատ քույր լեզուն է, մինչև այժմ էլ սեռը պահում է, որովհետև վերջավորությունները դեռ չի ջնջել. օր.

ūdă՛ ար., uda իգ. քնած
ghă՛l ար., ghla իգ. գող
puštūn ար., puštana իգ. աֆղան։

Ալբանեբենում ար. և իգ. դեռ շարունակվում են. բայց չեզոք սեռից քիչ բառ է մնացել, այն էլ՝ անշունչ առարկաներ ցույց ավող. ինչ.

ver գինի
miš միս

ujē *(կարդա* uyö*)* ջուր
voj ձեթ

Սեռի դրութիւնը շատ փոխված է նոր հնդկական լեզուներում։ Օրինակ՝ սինդհի լեզվում չեզոքը ջնջված է (հին չեզոքները մեծ մասամբ դարձել են արական, փոքր մասը միայն իգական). բոլոր բառերը վերջանում են ձայնավորով և շատ դժվար չէ որոշելու սեռը բառավերջի ձայնավորի միջոցով։ Ո վերջավորութիւնը միշտ արական է, a միշտ իգական. մյուս ձայնավորները որոշ չեն, ունեն ավել կամ պակաս բացառութիւններ։ Սրա նման և ավելի լավ է հնդկական գիլգիթի շինական լեզուն, որ չեզոքը բոլորովին ջնջել է և գիտե միայն երկու սեռ՝ արական և իգական. արականը հանգում է միշտ o, իգականը՝ i։

Սեռի ջնջման մեջ առաջին հերթը չեզոքինն է, որովհետև շատ քիչ զանազանութիւն ունի արականից. օր. լատիներենում ձայնարանական օրենքներով բառավերջի m ընկավ և որովհետև այդ էր չեզոք սեռի նշանը. չեզոքը այլևս իր գոյութիւնը վաղուց կորցրեց և վերացավ արդեն նախ հռովմեական կայսրութեան միջոցին և հետո էլ՝ բոլոր նորալատին լեզուների մեջ։

Սոգդիերենը չեզոքը ջնջել էր. արականը և իգականը դեռ շարունակում էին իրենց գոյութիւնը, բայց հետզհետե ջնջվում էին։ Հին իրանական լեզուները 3 սեռ ունեին. արդի իրանական լեզուները ընդհանրապես ջնջել են սեռը. միայն աֆղաններենն է, որ ունի արական և իգական, բայց ջնջել է չեզոքը. այսպես և նաև իրանական շիղնի բարբառը, որ գիտե ար. և իգ., բայց չգիտե չեզոք։ Վեղը լեզուն և բրեաուներենը ունեն արական և իգական, բայց չունեն չեզոք։ Լիտվաներենը գիտե արական և իգական, բայց ջնջել է չեզոքը, որ պահում է միայն դերանվան մեջ, իսկ պրուսերենը նաև գոյականների մեջ. լեթթերենը չեզոք բնավ չունի։

Այս ասածները լավ ըմբռնելու համար ունենք անգլերենի մեջ սեռի ջնջման ընթացքը, որ շատ հետաքրքրական է։ Հին անգլերենը զանազանում էր երեք սեռ, որոնց նշանները էին որոշյալ հոդի մեջ. ար. sé, իգ. séo, չեզոք՝ daet։ Այս բոլորը ունեին և իրենց հոլովական ձևերը (չորս հոլով), ամեն մի սեռի համար տարբեր ձևով։ Նախ՝ նմանողութեան օրենքով se և seo դարձան ðe, ðeo, հետո իգականի վերջին ձայնավորն ընկնելով դարձավ ðe, որով արական և իգական միացան, և իրենց հետ

բաշխելով նաև չեզոքը՝ երեքն էլ դարձան ðe։ Ածականը արդեն վերջավորութիւններից զրկված էր, որով այլևս ոչ մի նշան չմնաց սեռը զանազանելու, և անգլերենը այդ ավելորդ բեռից ազատվեց։ Երևույթը սկսվեց ԺԴ դարից և վերջացավ ԺԶ դարում։

Միևնույն ճանապարհի վրա է դանիերենը, բայց դեռ մի քայլ հետ է։ Այստեղ զանազանվում են երկու սեռ. հասարակ և չեզոք (հասարակ ասելով հասկացվում է արական և իգական միասին, իսկ չեզոք ասելով հասկացվում է անշունչ սեռը)։ Այս վիճակը առաջ է եկել դանիերենում 16-րդ դարում։ Հոգնակիի մեջ բոլոր սեռերի համար որոշյալ հոդն է de, բայց եզակիում ար.-իգ. լինում է den, չեզոքը՝ det։ Այսպես նաև ածականը, որ եզակիում ար.-իգ ունի մի ձև, չեզոքը մի ուրիշ ձև, իսկ հոգնակիում երկուսն էլ նույնն են. ինչ. ung «երիտասարդ» (ար.-իգ.), ungt չեզ., unge հգ.։ Այսպիսով՝ տակավին սեռի գոյութիւնը պարունակվում է. վերջնական ջնջումը կախված է մի հատիկ t ձայնից. արդեն բազմաթիվ ածականներ չունեն չեզոք սեռ, այլ միայն՝ հասարակ. ոմանք էլ, և այս է զարմանալին, թեև չեզոք սեռի մեջ առանում են t նշանը, բայց այդ t-ն չի հնչվում. օր. fersk «թարմ», ferskt «թարմ» (կարդա՝ ֆերսք)։ Դանիացիք իրենք հակառակ են ածականի համաձայնութեան և համեմատ բոլոր սեռերի համար էլ թողնում են միևնույն ձևով։ Այստեղ էլ, ուրեմն, վերջնական ջնջումը կախված է մի ձայնից։

Իտալներենի մեջ չեզոք սեռի ջնջման պատճառ եղան հոլովական վերջավորութիւնները. արական հոլովման նման հոլովվող չեզոքները դարձան արական, իգականին նմանողները դարձան իգական, որով հին իտալներենի երեք սեռերից չեզոքը ջնջվեց։ Այսպես է նաև բրեաուներենը, որ ինչպես ասացինք, ունի ար. և իգ., բայց չգիտե չեզոք սեռ։

Կան լեզուներ, որոնց մեջ վերջավորութիւնները ջնջված են, բայց սեռը շարունակվում է։ Դրա պատճառը հոդերը, դերանունները և կամ ուրիշ նման բառեր են, որոնք չեն ենթարկվել այնպիսի ուժեղ ձայնափոխութեան, որ զրկվեին իրենց բնորոշ մասերից և հետևաբար շարունակում են դեռ իրը սեռի զանազանիչներ ծառայելու։ Այսպես, օր. ֆրանսերենը համեմատած լատիներենի հետ՝ չունի վերջահանգ ձայնավորներ. ինչ. լատ. forma «ձև», ֆր. forme, լ. formica>fourmi «մրջյուն», լ. formo>ֆր. je forme «ձևացնում եմ» և այլն։ Այսպիսով, ֆրանսերեն բառի ծայրին սեռի նշան չկա։ Բայց որովհետև լ.

altus դառնում է haut, իսկ alta դառնում է haute, ուստի սեռի արտաքին ձևը և հետևաբար նրա գոյականը շարունակվում է: Այսպես նաև le, la, ce, cette և այլն հոդերը, ցուցականները, սահմանականները և դերանունները: Ֆրանսերեն համար բառը ինքնին վերցրած բնավ չի տալիս սեռի գոյականը. օր. arbre նույնիսկ իր հոդով՝ չունի ոչ մի նշան արական կամ իգական լինելու. և միայն իրեն կցված ածականն է, որ իր վերջավորությամբ առիթ է տալիս սեռի գոյականը. l'arbre saint (իգ. sainte): Թե բառը ինքնին չունի սեռի գոյականը՝ ցույց է տալիս այն, որ երբ մի օտար բառ նոր է մտնում ֆրանսերենի մեջ, սեռի կոմիից ետուում է շփոթ դրության մեջ:

Բրետոներենը ունի երկու սեռ՝ արական և իգական, բայց այս սեռերը գոյականելու համար ոչ մի նշան (վերջավորություն) չունի: Նույնիսկ որոշիչ հոդը (en, er, el) թե արական, թե իգական, թե եզակի և թե հոգնակի միևնույն է: Ածականն էլ սեռից զուրկ է: Միայն մի քանի բառեր կան, որոնք սեռի գիտակցությունը դեռ շարունակում են. այսպես՝ թվականներից 2 deu, 3 tri, 4 piar, որոնք արական են, իսկ նրանց իգականները են diüe, tair, pedair. դերանունների մեջ էլ երբորդ դեմքի համար գոյականում են ար. ean «նա» և իգ. hi «նա»:

Ածականների մեջ էլ նրանք, որոնց նախաձայնն է b կամ m, իգականում այդ բաղաձայնը դարձնում են v. ինչ.

un dén brahue	մի մարդ գեղեցիկ
ur voës vrahue	մի կին գեղեցիկ
un dén bras	մի մարդ մեծ
ur voes vras	մի կին մեծ

Բառավերջի ջնջման, բայց միևնույն ժամանակ սեռի պահպանության հետաքրքրական օրինակ է տալիս Պամիրի իրանյան շիղնի բարբառը: Բոլոր իրանյան բարբառները ջնջել են սեռը, և աֆղաններենի պես շիղնի բարբառն է միայն, որ պահում է սեռը, միմիայն ներքին ձայնավորի փոփոխությամբ. այսպես՝ ունենք շիղնի puc «որդի», pic «դուստր», čuš «աքլոր», čiš «հավ», warǰ «արու ձի», wērǰ «զամբիկ», նաև ածականների մեջ՝ ար. tušp և իգ. tašp «քթոտ», ար. šuž, իգ. šiž «քաղցր», ինչպես նաև բայերի մեջ՝ ար. sud, իգ. sad «գնաց», ար. wud իգ. wad «եղավ» և այլն: Այս երևույթը առաջանում է նրանից, որ իգականի ī, ā վերջավորությունները նախապես ազդած են

հնչել ներքին ձայնավորի վրա, և հետո, երբ այդ ī, ā-ն ընկել են, ներքին ձայնավորի փոփոխյալ վիճակը շարունակել է իր գոյությունը և սրանով պահում է իգականի գիտակցությունը:

Կան լեզուներ, որոնք սեռի վերջին հետքն են միայն պահել. այսպես՝ քրդերենը սեռ չունի. բայց կոչականը կազմելիս արականների ծայրին դնում է o վերջավորությունը, իգականներին՝ e, ինչ. babo «հայրիկ», daie «մայրիկ», Abdiko «ով Աբդի», Meryamke «ո՛վ Մարիամ», azizo «ով սիրելիս», azize «ո՛վ սիրուհիս»:

Քրդերենի նման է նաև ամերիկյան ձուրուկուա լեզուն, որ թեև սեռ չունի, բայց կոչականում դնում է mo, իգականին՝ bo, ինչ. mo hi-buiʀa «ով իմ եղբայր», bo Maria «ով Մարիամ», mo santo «ով սուրբ», bo nu-tedzi «ով իմ աղջիկ»: Սա նման է հայերենին, երբ ասում ենք՝ քա աղջի՛կ, ծո աղա՛:

Անգլերենում սեռ չկա, բայց դերանունն ունի սեռ, և նավի ու առաքինությունների մասին խոսելիս դնում են she «նա» իգական դերանունը, իսկ գետերի, լճերի, լեռների ու մոլորակների մասին խոսելիս՝ he «նա» արական դերանունը:

Ցույց տալու համար, թե ինչպես սեռ գիտակցող մի լեզու կարող է մտնել սեռը ջնջելու ճանապարհի մեջ՝ օրինակ առնենք իսպաներենը.— այս լեզուն, իբր ժառանգորդ լատիներենի, ջնջել է չեզոք սեռը, և դիտե միայն արական և իգական. առաջինի նշանն է el, երկրորդինը՝ la. բայց սրանց կողքին ստեղծել է նաև lo, որ գործ է ածվում միայն այն դեպքում, երբ ածականը գոյականաբար է առնում, օր. lo hermoso «գեղեցիկը, ինչ որ գեղեցիկ է», lo grande «մեծը, ինչ որ մեծ է». բայց այս lo թեև կոչվում է չեզոք, բայց նա չեզոք չէ, այլ հատարակ, այսինքն՝ հատուկ է թե արականին, և թե իգականին: Բացի սրանից, այն իգական բառերը, որոնք սկսվում են ձայնավորով, ոչ թե առանում են la հոդը, այլ՝ հարանջից խուսափելու համար վերցնում են el հոդը. ինչ. el alma «հոգին», el agua «ջուրը», el ama «տանտիրուհին»: Այսպիսով, մի կողմից ճանապարհ է բացվում գեպի ընդհանուր սեռը, մյուս կողմից արականը անցնում է տիրապետելու նաև իգական սեռին:

Նոր հունարենի բարբառներից մեկը (Փոքր-Ասիայում գտնվող բարբառը) սեռի ջնջման ճանապարհին է. այստեղ հոդը ջնջվում է, ջնջվում է նաև ածականների վերջավորությունը, հետևաբար ջնջվելու վրա է սեռը:

Այս օրինակները ցույց են տալիս, որ սեռի ցնդման երևույթը մի անգամից չի առաջանում լեզվի մեջ, այլ սկսում է մի հեռավոր կետից, կամաց կամաց տարածվում և հետո բնդհանուր երևույթ դառնում։ Դրա համար է, որ զանազան լեզուների մեջ նա գտնվում է դեռ մասնավոր դեպքերում միայն։ Օր. լեհերենում բոլոր ածականների և գոյականների էլ մեծ մասի սեռական, ներգոյական, տրական և գործիական հոլովների մեջ երեք սեռերն էլ նման են։ Բայց մյուս հոլովներում սեռի տարբերություն կա։

Սեռի պահպանության հարցում ամենից ավելի հավատարիմներն են. Եվրոպայում՝ գերմաներենն ու ռուսերենը, որոնք գոթերենից և հին սլավոներենից սկսած մինչև այսօր պահում են հնդեվրոպականի երեք սեռերը (ար., իգ. և չեզ.)։

Այս բոլոր հանգամանքները, այն որ շատ լեզուներ սեռի զանազանություն բնավ չունեն, որ շատ լեզուներ ունեցել են անցյալում սեռ, բայց հետո ցնդել են առանց լեզվի ամբողջությանը որևէ վնաս հասցնելու, այն, որ սեռը մի լեզվի մեջ այսպես և մի ուրիշ լեզվի մեջ այլապես է ըմբռնվում, կամ նույնիսկ մի լեզվի տարբեր շրջաններում տարբեր են,— ցույց են տալիս, որ սեռը լեզվի մեջ անհրաժեշտ մի երևույթ չէ և չի բխում իրերի բնական ու տրամաբանական պահանջից. նա տրամաբանության հետ ոչ մի կապ չունի, շատ անգամ էլ տրամաբանության հակառակ է. նա մի ավելորդ մանրամասնություն է, որ կարելի է նկատի ունենալ կամ չունենալ։ Քերականական մարդու համար նա կարող էր մի կարևոր լրացում համարվել, բայց քաղաքակիրթ մարդու համար նա բոլորովին ավելորդ և հաճախ նույնիսկ սխալ ու անհիմն է։

1949 թվին մեր համալսարանում վեճ ծագեց հետևյալ ռուսերեն նախադասության համար. Москва хороша, Москва красива, Москва богата; она большой город.

Առաջին երեքը ճիշտ են. Москва իգական է, ուստի նրա կողքի ածականն էլ իգական պիտի լինի։ Բայց վերջինը սխալ էին համարում. նույնիսկ ռուսերենի ռուս ուսուցչուհիները սխալ էին համարում, ասելով թե, թեև Москва իգական է, բայց քանի որ город «քաղաք» արական է, ուստի այստեղ она իգ. չպիտի գրվի, այլ ար.։ Ամբոխի ժողով գումարվեց և ավելի մեծ մասը նագոնները հաստատեցին, որ գերանունը իգական պիտի գրվի։

Ենթադրենք, թե մի քանի կանանց մասին է խոսքը. և հարց ենք տալիս. «Ո՞վ էր ձեզանից». ռուսերեն պիտի ասենք. кто был? արական է և ոչ թե իգական բայ. իսկ պատասխանը կլինի. она была.

Այսպես է. լեզուն տրամաբանության հետ շատ գուգընթաց չէ։

1910 թվականին, երբ մեռավ Մատթեոս Բ. Իզմիրլյան կաթողիկոսը, Պոլսում հայտարարվեց մահազդ՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով։ Ֆրանսերեն մահազդում գրված է. Sa Sainteté Monseigneur Izmirlian décéde. երկար վիճաբանություններ տեղի ունեցան, որոշելու համար, թե վերջին բառը արական պիտի գրվի, թե իգական։ Եթե համաձայնեցնեինք Sa Sainteté բառի հետ, պիտի գրվեր իգական. իսկ եթե համաձայնեցնեինք Izmirlian բառի հետ, պետք է գրվեր արական։ Այս վեճը կարելի չեղավ լուծել. վերջում որոշեցին, թե ածականը պետք է համաձայնեցնել վերջին բառի հետ և ոչ թե առաջինի հետ։ Ըստ այսմ մնաց արական։

Ռուս տանտիկինը իր ռուս ադախնի հետ վիճում էր հետևյալ խոսքի մասին.— ադախինը տեսնելով, որ միլիցիոները եկել էր միջամտելու մի վեճի, ասաց. милиция пришла.

Տանտիկինը ծաղրեց և ասաց, որ պետք է ասել անպատճառ милиционер пришел, իսկ милиция пришла սխալ է, որովհետև „милиция“-ն արական է։ Ադախինը պնդեց և երկուսը համաձայնության չեկան։ Մի լավ մտածելուց վճռեց, թե պաշտոնյաների անունը պաշտոնեության անունով է կոչվում։

Ահա թե ինչ անպատեհությունների է հասցնում սեռի գոյությունը սեռ ճանաչող լեզուների մեջ։

Ամփոփելով այս բոլորը՝ կտեսնենք, որ սեռը մարդկային նախնական շրջանի արտադրություն է, որ հիմա գրկված է իր տրամաբանական իրավունքից, բայց շարունակում է իր գոյությունը միմիայն ձայնական օրենքների մի պատահական խաղի պատճառով։ Նա ցնդում է, հենց որ բառավերջի ձայնավորը իսպառ է։ Բայց սեռի ցնդումը չի կապված մարդկային մտքի զարգացման ընթացքի հետ, այլ արդյունք է ձայնավորների կրճատման օրենքին։

Մեր մեջ կան մարդիկ, որ սեռի գոյությունը համարում են լեզվի մեջ իբրև գեղեցկություն, հարստություն, հատկու-

թյան և գտնում են, որ հայերենը սեռ չունենալով՝ զրկված է մի մեծ առավելությունից։ Այդպիսիները չեն տեսնում այն դանազան անպատեհությունները, որոնց պատճառ է դառնում սեռը։ Աչքի առջև բերենք այն ասկալի դժվարությունը, որ կա սեռավոր լեզուները սովորելու մեջ, դժվարություն, որ մինչև մահ էլ կարելի չէ հաղթահարել, մանավանդ, երբ նկատի առնենք, որ միևնույն բառը շատ հաճախ լեզվից լեզու տարբեր սեռ ունի. այսպես, օր. լեզու ֆրանս., իտալ., գերմ., իգական է, ռուսերեն՝ արական է, արտ. ֆրանսերեն իգական է, գերմ. արական է։ Միակ առավելությունը սեռի՝ կայանում է անձնական դերանունների Դ դեմքի արականի, իգականի և չեզոքի դասության մեջ, բայց այդ էլ միայն շնչավորների համար և ոչ անշունչ առարկաների, ինչ որ շատ քիչ լեզուներ միայն ունեն (այսպես՝ անգլերենը)։

Սեռ ունեցող լեզուների մեջ էլ սեռը հաճախ շփոթության տեղիք է տալիս. օր. գերմ. Was Maria und Fritz so zueinander zog, war, dass *jeder* von ihnen am anderen sah, wie er unglücklich war?-jeder արական է, մինչդեռ իգ. էլ կարող է լինել և այլն։

Նույնիսկ անգլերենի համար, ուր կա միայն գ դեմքի դերանվան իգ., գտնում ենք նույն թյուրիմացությունը, ինչ. It would be interesting if each of the leading poets would tell us what he considers his best work.— այստեղից պիտի հետևի, որ բոլոր պոետները տղամարդիկ են, և եսպերսոնը, որ անգլերեն լեզվի զերազանցության չատագովն է, գոհ չէ, որ անգլերեն he, she, it գանազանում է, և ուզում է, որ սեռ բնավ չլիներ։

Սեռ և թիվ լինելով մի ընդհանուր հասկություն թե բայերի և թե անունների համար, մենք պատշաճ համարեցինք առ այս գլխում նրանց մասին ընդհանուր ծանոթություն. բայց նրանց կազմության եղանակը, բայերի համար տարբեր և անունների համար տարբեր լինելով, այդ կարգի քննությունները վերապահում ենք բայերի և անունների առանձին գլուխներին, որոնց մեջ խոսելու ենք նաև դեմքի և հոլովի, կամ առհասարակ խոնարհման և հոլովման մասին։

ԳԼՈՒԽ ԺԹ

ԻԳԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Սեռի բնբռնողության մասին մենք արդեն խոսել ենք ժի պլուսում. նախնական ժողովուրդները առարկաները բաժանում էին երկու խմբի. բանական և անբանական, կամ շնչավոր և անշունչ (շնչավորների մեջ դնելով նաև մի խումբ անշունչ առարկաներ, որոնց ֆետիշական հասկացողությամբ վերագրում էին շունչ և կենդանություն)։ Անշունչները կազմում էին չեզոք բառերի խումբը, իսկ շնչավորների մեջ մտնում էին արական և իգական բառեր միանգամայն. սեռի խտրություն դեռ չկար։ Ավելի ուշ շնչավորների մեջ մտնում է սեռի խտրությունը (արական և իգական), իսկ չեզոքը մնում է իբր ոչ սեռ, որ հետո սեռ է դառնում։ Այսպիսով առաջանում է լեզվի մեջ երեք սեռ։

Այժմ պետք է քննենք, թե ինչ միջոցների են դիմել լեզուները՝ որոշելու համար քերականական սեռը։

Առաջին և նախնական ձևն է հնարել առանձին բառեր յուրաքանչյուր սեռի համար. այսպես՝ չին. nan² «տղամարդ», nü² «կին», աննամ. trai «տղա», gai «աղջիկ», հյ. եզ և կով, ճագ և արջր, ֆրանս. boeuf և vache, poul և coq, ռուս. бык և корова, петух և курица և այլն, և այլն։

Երկրորդ ձևն է արականի համար հարապրել առանձին արու մի էակի անունը, իսկ իգականի համար հարապրել առանձին մի էգ էակի անունը. այսպես՝ չինարենում արականի համար դնում են nan² «տղամարդ», իգականի համար՝ nü «կին», ինչ.

nan²-cə *որդի*	niu-cə *աղջիկ*
nan²-žen² *տղամարդ*	nü-žən *կնիկ-մարդ*

Աննամերենում արականի համար դնում են oŋ «պարոն, տեր», trai «մանչ, ազա», *իգականի համար՝* ba «տիկին» *և* gai «աղջիկ» *բառերը։*

Անգլերենում արականի համար դնում են man «մարդ», *իգականի համար՝* woman «կին», maid «աղջիկ» *բառերը. օր.* a mam-servant «ծառա», a maid-servant «աղախին»։ *Թռչունների մեջ արական և իգական նշանակելու համար դնում են* cock «աքլոր» *և* hen «հավ» *բառերը. ինչ.*

cock-sparrow *արու ճնճղուկ,*	hen-sparrow *էգ ճնճղուկ*
peacock *արու սիրամարգ,*	peahen *էգ սիրամարգ*

Հայերենի մեջ էլ կա բարբառներում՝

աղջիկ ազա,	*մանչ ազա,*
աղջիկ կառու,	*մանչ կառու*

Երրորդ ձևն է «արու» և «էգ» բառերի հարագրությունը, այսպես՝ չինարեն kung[1]-ti «արու» *և* mu[3]-ti «էգ» *բառերով՝* kung[1]-ti-či[1] «աքլոր», mu-ti-či[1] «հավ»։ *Աննամերեն՝* dük, troŋ, «արու», kai-mai «էգ» *բառերով՝* gatroŋ «աքլոր», ga mai «հավ», bokai «կով», bo dük «ցուլ»։ *Պրս.* nar «արու» *և* māda «էգ» *բառերով՝* širi-nar «արու առյուծ», šir-i māda «էգ առյուծ», *Թուրքերեն՝* erkek «արու» *և* diši «էգ» *բառերով՝* erkek aslan «արու առյուծ», diši aslan «էգ առյուծ»։ *Այս ձևը մի շատ տարածված ձև է այն բոլոր լեզուների մեջ, որոնք սեռ չունեն, այսպես նաև հայերենի մեջ՝* արու առյուծ, էգ առյուծ, արու ձի, էգ ձի, *կամ մասակ բառով՝* մասակ առյուծ, մասակ ձի։

Երկրորդ և երրորդ ձևերի մի տեսակ խառնուրդն է նկատվում լազերենում։ Այստեղ թեև կա զուրա (zura) «էգ» բառը՝ անասունների էգը արուից զանազանելու համար, բայց կան նաև gobaxi «արու» *և* ganǰugi *կամ* kanǰugi «էգ», *որոնք գործածվում են անասունների արուն և էգը նշանակելու համար, ինչ.*

gobaxi aslani *արու առյուծ*
ganǰugi aslani *էգ առյուծ*
gobaxi çxeni *արու ձի*
ganǰugi çxeni *էգ ձի*

Այս բառերը կարելի է գործածել նաև անշունչ իրերի համար. այսպես՝

gobaxi gila *արու բանալի*
ganǰugi gila *էգ բանալի*

Տարօրինակ է անշուշտ «արու և էգ բանալի» հասկացությունը, բայց դա շատ սովորական է Պոլսում, ուր Թրք. ասում են բանալիների համար diši «էգ», *երբ բանալիի բերանը ծակ է, որ խրվում է կողպեքի մեջ. իսկ երբ բանալիի խողովակը լիքն է (ծայրին այդ ծակը կամ փոսը չկա), կոչվում է* erkek «արու»։ *Նմանապես լիմոնը ունի* erkek «արու» *և* diši «էգ», *երբ լիմոնի ծայրը սոխնջի պտուկի նման ուռուցիկ է, դա կոչվում է «արու», իսկ երբ ուռուցք չկա և ծայրը հարթ է՝ կոչվում է «էգ»։ Հարցի է էգ լիմոնը, որի հյութը ավելի առատ է լինում, իսկ արու լիմոնը չոր է լինում, հյութ քիչ է ունենում։ Այս բառերը (թե լիմոնի, և թե բանալիի) ոչ միայն Թուրքերենի մեջ են գործածական, այլև սովորական են մեր մեջ (պոլսահայ բարբառում)։ Տարակույս չկա, որ լազերենի մեջ էլ դրանք կազմված են Թարգմանաբար՝ Թուրքերենից[1]։*

Ամենից ավելի հետաքրքիրն այն է, որ այս ganǰugi *բառը Թուրքերեն է և նշանակում է «էգ շուն, քած կամ էգ էշ», Թրք. ասվում է* qanǰəq, *որ հայ ժողովրդի մեջ էլ սովորական է դաւիչող ձևով։ Ըստ այսմ «էգ ձի» կամ «էգ բանալի» ասելու համար լազերը ասում են «էգ շուն կամ էգ էշ, ձի», և «էգ շուն կամ էգ էշ, բանալի» և «էգ էշ կամ էգ շուն» բառը դարձել է լազերենում իգականակերպ մասնիկ։*

Բայց նույնիսկ այն լեզուները, որոնց մեջ սեռ կա, դիմում են այս միջոցին ամեն անգամ, երբ այսինչ կամ այնինչ կենդանու համար արուն և էգը ցույց տվող մի առանձին բառ կամ ձև չկա. օր. ֆրանս. կա lion «արու առյուծ» *և* lionne «էգ առյուծ», *բայց չկա* hérisson «ոզնի» *կենդանու արուի և էգի համար առանձին ձև. ուստի և ասում են՝*

hérisson mâle *արու ոզնի*
hèrisson femelle *էգ ոզնի։*

[1] *Սրանց մասին տես* Adjarian, Etude sur la langue laze, *էջ 67։ Այս մասին խոսում է նաև* Марр, Грамм. чан. яз., *էջ 8—9, բայց ասում է, թե Հավետաստում շատերին հարցրել է, բայց ոչ ոք չի իմացել իմ նշանակած բառերը։ Մտի մեծագույն թերությունը այն էր, որ պարսկերեն քիչ գիտեր, իսկ Թուրքերեն գնաց չգիտեր։ Իսկ այս երկու լեզուների գիտությունը, մանավանդ Թուրքերենինը՝ անհրաժեշտ է թե հայերենի, և թե վրացերենի ուսումնասիրության համար։*

Նկատելի է, որ կենդանիների անուններըբ արական և իգական առանձին բառեր են առանում, երբ նրանք անտեսության մեջ առանձնապես կարևոր են։ Օր.՝ եզ և կով, ճավ և արլոր, իսկ ձմաքի և այլն։ Բայց այն կենդանիները, որոնք մեր անտեսության համար արժեք չունեն կամ գոնե նրանց սեռը արժեք չունի մեզ համար, այդ դեպքում արական և իգական զանազանություններ չեն առանում։ Մեզ համար բոլորովին միևնույն է, թե մեր ոչխարը պատառող գայլը արու էր, թե էգ։ Կան լեզուներ, որ այսպես էլ սեռի խտրություն են դնում. օր. ֆրանս. chat, chatte, ռուս. кот, кошка, բայց հայերեն անխտիր՝ կատու ասում ենք՝ արու կատու, էգ կատու, բայց ոչ թե՝ «կատվայր» և «կատվուհի»։

Գրեթե միևնույն ձևը գոնում ենք նաև աֆրիկյան հներեն և օշինդոնգա լեզուների մեջ, որոնք սեռ չունեն և կարևոր դեպքում սեռը որոշում են «արական» և «իգական» ածականներով (հետագաս). բայց անձերի համար տարբեր և անասունների համար տարբեր բառերով. օր.

հներեն լեզվով	ար.	իգ.
անձ	- rumendu	- karendu
անասուն	- orduezu	- ondendu
		- ongare

օշինդոնգա լեզվով		
անձ	omulumentu	omukiintu
անասուն	ontuesui	onsuinsui.

Զարմանալի ձևն է բառի սկզբում կամ վերջում դնել առանձին մասնիկ, որ բուա սեռի տարբերվում է. օր. հին եգիպտացիներեն իգականի մասնիկն է t (արականը չունի որևէ մասնիկ). արաբերեն էլ իգական բառերը վերջավորվում են at-ով, որ ի կրճատմամբ գոնում է a.— սուդաներենը, որ նույնպես արաբերեն է, իրրև իգականի վերջավորություն ճանաչում է -a (օր. siggāda «գորգ»), բայց այս a-ն մի ուրիշ բառի հետ միանալու ժամանակ գոնում է -at (օր. siggādat). այսպիսով, արաբերենը կամ սուդաներենը տարբեր ճանապարհներով հասել է այն վիճակին, ուր գոնվում են նաև եվրոպական լեզուները, որոնց մեջ a հանգը նշան է իգականի (ռուս. -а, ая).

Աֆրիկյան բիշարի լեզվով արական սեռը որևէ նշան չու-

նի, իսկ իգականը կազմվում է բառի սկզբից կամ վերջից ավելացնելով t մասնիկը. օր.

mēk էշ (ար. անորոշ), mēkt իգ.
ū-mek էշը (ար. որոշյալ), tū-mek իգ.

Բերբեր լեզվում բառը իգական դարձնելու համար բառասկզբում դնում են θ(— արար. ت) կամ նաև նույն ձայնը բառի թե սկզբում, և թե վերջում (եգ. արականի նշանն է՝ բառասկզբում a). քան այժմ բոլոր իգական բառերը սկսվում են θa վանկով, որի հոդնակին էլ լինում է θi. օր.

afqir ծեր, իգ. θafqirθ ծեր կին
ubay հրեա, իգ. θubayθ հրեուհի։

Բուշմեննների լեզվով, ուր սեռ չկա, արական բառը իգական վերածելու համար սկզբից կամ վերջից ավելացնում են x. կեր. ‖ ka «եղբայր», kaxai «քույր», ǒä «հայր», xǒä «մայր»։

Թոխաբերենի իգական մասնիկն է -an̄c, որ համապատասխանում է սոգդիերենի -nc վերջավորությանն։

Կարևական լեզվով գոյականի արականն ու իգականը որոշելու համար առանձին վերջավորություններ չկան, այլ zu- և am- նախամասնիկները, որոնցից առաջինը արական սեռի համար է, երկրորդը՝ իգականի. օր. zu-zo «եզ», am-zo «կով»։

Եվրոպական գլխավոր լեզուներից ռուսերենը ունի 3 սեռ, որ գոյականների մեջ որոշվում է հետևյալ ձևով. ընդհանրապես արականը վերջավորվում է կոշտ բաղաձայնով, իգականը փափուկ բաղաձայնով կամ a ձայնավորով, չեզոքը o, e ձայնավորներով, իսկ ածականների մեջ արականը միշտ ий(ый), իգականը՝ ая, չեզոքը՝ ое վերջավորությամբ։

Գերմաներենն էլ ունի 3 սեռ. բայց գոյականների մեջ նրա գոնադանության համար որևէ նշան չկա. սեռը իմացվում է միայն հոդի միջոցով, այն է՝ արականի համար der, իգականի համար die և չեզոքի համար՝ das. հոդնակին 3 սեռի համար էլ die, իսկ ածականների մեջ արականը վերջավորվում է er, իգականը՝ e, չեզոքը՝ es։

Խաչերենը ունի երկու սեռ և ավելի որոշ է. թե գոյական, և թե ածական արականը ընդհանրապես վերջավորվում է o, իգականը՝ a. հոդնակիում արականը՝ i, իգականը՝ e, օր.

fratello *եղբայր*, fratella *քույր*
fratelli *եղբայրներ*, fratelle *քույրեր*
caro *սիրելի ար.*, cara *իգ.*
cari » *ար. հգ.*, care *հգ. իգ.*

Ֆրանսերենը նույնպես ունի երկու սեռ, բայց սեռը որոշելու համար գոյականները ոչ մի նշան չունեն. արական իգականը որոշվում է ար. le, *իգ.* la *հոդով, իսկ ձայնավորով սկսվող բառերի մեջ երկուսն էլ հավասարապես* l-*են, հոդնակին միշտ՝* les:

Ածականի դրությունը չափազանց դժվար է: Կան մի խումբ ածականներ, որ թե ար. և թե իգ. միևնույն ձևով են, օր.

large *լայն*, pauvre *ազգատ*
malade *հիվանդ*, riche *հարուստ*

Բայց ածականների մեծագույն մասը արականի համար ունի առանձին ձև, իգականի համար առանձին ձև, որ ստացվում է արականից՝ վերջում ավելացնելով մի ինչոր բաղաձայն և կամ արականի վերջին վանկը ձևափոխելով: Օր.

Ար.		*Իգ.*	
ba	*ցած*	bas	
o	*բարձր*	ot	
fo	*սխալ*	fos	
pti	*փոքր*,	ptit	
gra	*մեծ*,	grand	
örö	*երջանիկ*,	öröz	
bref	*կարճ*,	brèv	
bo	*գեղեցիկ*,	bel	

Այս հավելումների համար ոչ մի կանոն չկա, և ամեն ինչ սովորովի է:

Բայց ֆրանսիական ակադեմիան մի ճարպիկ հնարքի է դիմել իգականի կազմությունն այս անսահման դժվարությունից իբր թե բարվոքելու համար: Նա օրենք է դրել իգականի ձայնին ավելացվող բաղաձայնը ավելացնել նաև արականի վրա, բայց չկարդալ. իսկ իգականի վրա ավելացնել մի ինչ որ հնարանով և այդ հնարանն էլ չկարդալ. այսպես՝

bas *ցած*, basse
haut *բարձր*, haute
faux *սխալ*, fausse
ptit *փոքր*, ptite
grand *մեծ*, grande
heureux *երջանիկ*, heureuse
bref *կարճ*, brève
beau *գեղեցիկ*, belle

Այսպիսով, իգականի կազմությունը բարվոքելու, այսինքն որոշ կանոնի տակ դնելու համար դժվարացրել է ուղղագրությունը և հասցրել անտանելի դժվարության:

Պրովանսալ լեզվով ածականը իգականի վերածելու համար արականի ծայրին դնում են o, *ինչ.* ancian *«հին»*, anciano *«հին» (իգ.)*, franc *«ազատ»*, franco *«ազատ» (իգ.)*, venerable *հարգելի (ար.)*, venerablo *(իգ.) և այլն:*

Թուսկան ցիգաննների լեզուն, որ հնդկերենի մի ճյուղն է, ունի երկու սեռ, որոնք արտահայտվում են արականի համար o, e *վերջավորություններով, իգականի համար՝* ы, i *վերջավորություններով: Բայց կարելի է նաև այս վերջավորությունները չգնել:*

Հասենդոության նամա լեզվում արականի վերջավորությունն է b, *իգականինը՝* s, *հասարակ սեռինը՝* i *(երբ մարդ չի ուզում որոշել, թե բառը արական է, թե իգական). Հին իռլանդերենում արականի, իգականի և չեզոքի համար թե գոյականի և թե ածականի մեջ կա առանձին վերջավորություն, բայց գրանցից զատ կա նաև իգականի համար* ban- *նախամասնիկը (օր.* ban-dia *«դիցուհի»*, ban-file *«բանաստեղծուհի»*, ban-tuath *«կախարդ կին»*, ban-chu *«էգ շուն»). Դրամվիդյան լեզուների մեջ արականի կազմելու համար դնում են* -an *վերջավորությունը, իգականի համար՝* -al *վերջավորությունը և չեզոքի համար՝* -du *վերջավորությունը. օր.* mag-an, *«որդի»*, mag-al *«դուստր»*, ill-an *«ամուսին, այր»*, ill-al *«կին, տանտիկին» (երկուսն էլ* il *«տուն» բառից)*, nalla-du *«մի լավ բան»: Եվ այսպես ամեն մի լեզվի մեջ:*

Այս մասնիկները անշուշտ ունեն իրենց ծագումը. բայց ինչպես շատ ու շատ մասնիկների, նմանապես սեռ ցույց տվող մասնիկների ծագումը բնդհանրապես անհայտ է: Վերև հիշված

մանիկներից հին իռլ. ban- առաջանում է հնդեվրոպական «կին» բառից. գրավիդյան -an և -al վերջավորությունները ծագում են an-u «մարդ» և āl-u «կին» բառերից. չեզոքը՝ -du հայտնի չէ, թե ինչ ծագում ունի:

Սեռի նշանների ծագման մասին որոշ հետքեր է ցույց տալիս մեզ հոտենդոտյան նամա լեզուն, հատկապես նրա կորած բարբառը, որ ուսումնասիրել է Մայնհոֆը: Այս բարբառում անձնական դերանունները գործածվում են թե առանձին, և թե իրրև վերջածար մասնիկ՝ կցվելով բայերին ու գոյականներին. վերջին դեպքում նրանք ծառայում են թե իրրև սեռ, և թե իրրև թիվ ցույց տալու նշան: Սեռի համար գործ են ածում եղ. գ դեմքի դերանունները, որոնք են՝ ար. b, իգ. s, հատարակ՝ '

Սեռը բնական է թե մարդկանց, և թե անասունների համար. օր. khoe-b «տղամարդ», taras «կին», /aixa-b «բժիշկ», /asa-b, «եղբայր», /asa-s «քույր», goma-b «եզ», goma-s «կով», gu-b «խոյ», gu-s «մաքի»: Երբ սեռը ընդհանուր է կամ աննշան դնում են հատարակ. ինչ. ‖ xao-'i «գառն», kx'au-'i «թշնամի», /noa'i «հորթ»:

Մեծ կենդանիները արական են դրվում, փոքրերը՝ իգական. օր. ‖ au-s «մուկ», kx'ani-s «թռչուն» իգական են, իսկ ≠xoni «փիղ», xammi-b «առյուծ» արական: Սրան հետևելով՝ փոքր առարկաներն էլ, որ սեռ չունեն և հատարակ պիտի լինեին, իգական են լինում, մեծերն էլ՝ արական. օր. hai- b «ծառ», hai- «թուփ», /hari-b «քարաք», /hari-s «գյուղ», gora-b «ծոպիկ», gora-s «փոքր ծոպիկ», երբեմն էլ՝ երկուսը խառն, ինչ. sore-b, sore-s «արեգակ», ≠'u-b, ≠'ū-s «վերակուր» և այլն:

Սեռ ցույց տալու համար այս չորս գլխավոր ձևերից դուրս կան նաև երեք նվազ սովորական ձևեր. այն է՝ դերանունը, ձայնդարձ և բառի դիրքը:

Ամերիկյան չինուկ լեզվի մեջ իգականը հաճախ բառի ներքին փոփոխությամբ է ձևանում. օր.

īkala տղամարդ, ō'ōkuil կին
ik'asks մանչ ōk'ōsks աղջիկ
ēpl°'au այրի ōpl°'au այրի կին
iq'ēyogxut ծնրունի ōq'oeyōqxut պառավ
ēlaēntix առուկ, ōlaētix առկուհի:

Ալթայական լեզուների մեջ էլ, ուր սեռ չկա, արական և իգական երբեմն որոշվում են ձայնավորների փոփոխությամբ. օր.

Մանղուերեն abai հայրիկ, ebei մայրիկ
aǰai հայր, eǰei մայր
axa երեց եղբայր, eke մայր, երեց կին

մանջուերեն xax տղամարդ, xexe կին

ama հայր, eme մայր
amha աներ, emhe զոքանչ
haha տղամարդ, hehe կին
amba մեծ եղբայր, ambu մեծ քույր
dehema քեռի, deheme մորաքույր
amila արու թռչուն, emile էգ թռչուն

(Այս երևույթի բացատրությանը նպաստում է այն հանգամանքը, որ մի քանի բայեր էլ կան, որ ձայնդարձի փոփոխությամբ հակառակ իմաստ են ստանում այս լեզվում. ինչ.

wasime իջնել, wesime բարձրանալ
icane խրխնջալ, inceme խնդալ

Կարելի է ենթադրել, թե արու և էգն էլ իրար հակադիր գաղափարներ են, ուստի ձայնդարձով են բացատրվել):

Ձայնդարձով սեռ որոշելու մի հետաքրքրական օրինակ, միևնույն ժամանակ երևույթի բացատրությունը տես էջ 272:

Բառի դիրքով սեռի որոշումը գտնում ենք սահկերեն լեզվի մեջ, ուր թևև սեռ չկա, բայց «սուլթան» բառը արական և իգական որոշվում է միայն տեղով. այսպես սուլթան Սելիմ (արական), Սելիմե սուլթան, վալիդե սուլթան «մայր թագուհի», Քաթիմե սուլթան (իգական):

Դերանուններով սեռի որոշումը գտնում ենք անգլերենի մեջ, ուր he «նա» (արական) և she «նա» (իգական) կազմում են արական և իգական կենդանիների անուններ, ինչ. he-goat «արու այծ», she-goat «էգ այծ»:

Երբ մի լեզու, որ սեռ չի ճանաչում՝ բառեր է փոխառնում մի ուրիշ լեզվից, որ սեռ ունի, այդ փոխառյալ բառերը կորցնում են իրենց սեռը. օրինակ՝ արաբ. dovlat «հարստություն», millat «ազգ» իգական են, բայց անցնելով պարսկերենի ու թուրքերենի և այստեղից էլ հայերենի՝ կորցրել են իրենց սեռը:

Նույնպես և՝ ռուս. воротник, իտալ. gazetta, ֆրանս. journal, որոնք այդ լեզուների մեջ արաբական կամ իգական են, անցնելով հայերենին, գրկվել են սեռից։

Եթե փոխառու լեզուն սեռ չունի, իսկ փոխառու լեզուն սեռ ունի, այս վերջինը կարող է վարվել փոխառյալ բառերի հետ՝ իրեն սովորական կանոնների համաձայն։ Օր.՝ թրք. buza կորեկից պատրաստված թուրքական կամ թաթարական խմիչք է. ռուսերենը փոխ է առել այս բառը буза՛ ձևով և դարձրել իգական, որովհետև а վերջացող բառերը իգական են լինում, իսկ նույն բառը ֆրանսերենում դարձել է արս. (le bouza). — թրք. qarpuz «ձմերուկ» բառը սեռ չունի. բայց անցնելով ռուսերենին (ápбуз), դարձել է արս., որովհետև բաղաձայնով հանդող բառերը իգական են ռուսերենում. ֆրանս. hautbois երաժշտական գործիքը արական սեռի է, որ փոխ առնվելով ռուս. гобой ձևով, նույնպես ստացել է արական, քանի որում-ой վերջացած բառերը ռուսերենում արական են։

Հնդկական բրաջ լեզուն բառեր է փոխ առել անգլերենից և արաբերենից. և որովհետև ինքը ունի արս. և իգ. սեռ, փոխառյալ բառերն էլ գրել է այս կամ այն սեռի տակ։ Այս փոխադրությունները կատարում են երեք ուղղություններ.

ա) Ըստ իմաստի. անգլ. railway բառը փոխ առնվելով դարձել է rēl «երկաթուղի», որ իգական է, որովհետև իրենց gāṛī «կառք» բառը իգական է։

բ) Ըստ վերջավորության. արաբ. qahva «սուրճ» բառը փոխ առնվելով դարձել է kāphī և համարվում է իգ., որովհետև բրաջ լեզվում ī հանգող բառերը իգական են, թեև ամեն անասնի համիչք արական է այդ լեզվում։

գ) Շատ բառեր էլ կան, որոնց սեռի փոփոխության պատճառը հայտնի չէ, շատերն էլ կան, որ այսինչ բարբառում արական են, մի ուրիշ բարբառում իգական, ինչպես է, օրինակ. անգլ. station «կայարան» բառը, որ բրաջ լեզվում դարձել է ṭēsan։

Ինչ որ նկարագրեցինք վերը լեզուների նախնական վիճակի համար՝ նույնը գտնում ենք նաև հնդեվրոպացոց շատ նախնական վիճակում։ Այստեղ էլ եղել է միևնույն շնչավոր և չեզոք սեռ, առանց արականի և իգականի խտրության։ Այս վիճակը ներկայացնում է գեռ հիթիթերենը։ Ավելի հետո հնդեվրոպական նախալեզվում շնչավոր սեռը բաժանվում է երկուսի՝

առանձնում են արական և իգական սեռերը, որ շարունակում են կամ խանգարվել դուրս մյուս հնդեվրոպական լեզուները, կենդանում ավելի զարգացած ձևով, իսկ ծայրամասերում գեռ ոչ ընդհանրապես. այսպես՝ լտ. գերբայը (ferens) և ած. omnis գեռ սեռ չեն դանազանում. մինչդեռ գերմ. և բալթ.-սլ. ճյուղերում սեռը կատարյալ է։

Հնդեվրոպական նախալեզվի մեջ չեզոքը (այսինքն անշունչ համարված իր) որոշվում էր վերջավորությամբ կամ վերջնահար ձայնավորով և կամ երբեմն էլ առնով. այսպես լտ. aliud դանազանվում է alius-ից՝ վերջավորությամբ. հն. ἤδιον դանազանվում է ἡδίων-ից վերջնահար ձայնավորով և առնով։ Հոլովման ժամանակ էլ չեզոքները ուղ.-կոչ.-հյց. հոլովի համար ունեն մի ձև, որ տարբեր է արական-իգականից. մյուս հոլովները նույնն են։ Շնչավոր առարկաների բնական սեռը ցույց տալու համար, երբ կարիք լիներ արականը և իգականը դանազանելու, տալիս էին տարբեր բառեր. այսպես՝ հայր և մայր, քույր և եղբայր և այլն։ Այսպես է նաև սեմականում, ուր ունենք արաբ. ḥimār «արու էշ», ātān «էգ էշ», ḥiṣān «հովատակ», rimā «գամբիկ», եբր. ʾāyil «խոյ», rāḥēl «մաքի» և այլն։ Բայց այդ բառերը, թեև արական և իգական, ոչ մի քերականական նշան սեմականում սեռ ցույց տալու համար չունեին. նույնիսկ արաբերենում այն ածականները, որոնք ըստ սեռի իգական են, ունեն իգականի նշան, ինչ. ʾāgir «ասեղջ», ḥāmil «հղի», ḥāʾiḍ «պայակ» և այլն։ Այսպես նաև՝ հնդեվրոպական նախալեզվի մեջ հայր (pətḗr), մայր (mātḗr) և այլն, որոնցից առաջինը գուտ արական գաղափար է և երկրորդը գուտ իգական գաղափար, ոչ միայն նույն վերջավորությունը և նույն բառնը ունեին, այլև հոլովվում էին միևնույն ձևով։ Նույն վիճակը պահպանվում է նաև ժառանգ լեզուների մեջ մինչև այսօր, ինչպես լտ. pater, mater, հյ. հայր, մայր, սեռ. հօր, մօր և այլն։ Այս բառերը ըստ իմաստի արդեն հակադրվում են, թեև ինչ սեռի են։ Բայց շնչավոր առարկաներից նույնիսկ նրանք, որոնք կարող են լինել թե արական և թե իգական, չունեն դարձյալ որևէ ձև որոշելու համար իրենց սեռը. այսպես հյ. արջ, ձի են, ինչպես ἄρκτος «արջ», ἵππος «ձի», ըստ պարագայի արական են կամ իգական։ Հնխ. gʷou նշ. ընդհանրապես տավար (թե եզ, և թե կով), ավելի հետո է, որ լեզուների մեջ մի տեղ դարձավ կով,

մի ուրիշ տեղ եզ. ավելի հաճախ անասունների անունները իգական են, որովհետև արուները սահմանափակ թվով են պահում և միայն ցեղատատրության համար. այս պարագային գոր էին ածում հարկավոր դեպքում արու և էգ բառերը. ինչ լա. agnus mas կամ femina «գառն արու կամ էգ», լա. ovis թե արու և թե էգ ոչխարն է. հալ. մանրիկների զանազանության համար կազմել է ovĭ-nus «հոտ» և ovi-ca «մաքի»։

Հնդեվրոպական լեզվով խոսող ժողովուրդների գիտակցության մեջ գոյական բառը արական կամ իգական էր ուրեմն ըստ էության, ինչպես մեզ համար այսօր եղբայր և քույր բառերը, և բնականաբար արտաքին նշանների կարիք չկար։ Այսպես նաև հատուկ անունները. օր. Գարեգին, Սուրեն, Արտաշես, Երվանդ և այլն արական են, իսկ Արուսյակ, Սոֆիկ, Բնարիկ, Անահիտ, Զարուհի, Նվարդ և այլն իգական են, թեև սրանցից ոչ մեկը արականի կամ իգականի որևէ նշան չունեն. նրանց սեռը գոյությունն ունի արդեն մեր գիտակցության մեջ և որևէ արտաքին նշանի կարիք չկա։ Ինդիրը փոխվում է, երբ անցնում ենք ածականներին։

Ածականը իրրև մասունք բանի զանազանվում է գոյականից հենց նրանով, որ մինչդեռ գոյականը սեռ ունի ըստ էության, ածականի սեռը ըստ դիպի է. այսինքն՝ երբ արական գոյականի հետ հարաբերություն ունի՝ արական է, իգականի հետ իգական և չեզոքի հետ չեզոք։ Նույնպես և գոյականը իրեն ունի մի տեսակ, իսկ ածականը լինում է թե արական, թե իգական, և թե չեզոք։ Այսպես՝ հայր բառը արական է և միայն արական, մայր բառը իգական է և միայն իգական, իսկ մեծ բառը արական է, երբ ասում ենք մեծ հայր, իգական է՝ երբ ասում ենք մեծ մայր և չեզոք է՝ երբ ասում ենք մեծ տուն։ Անշուշտ կան ածականներ, որոնք նաև ըստ էության և ոչ ըստ դիպի արական են կամ իգական. այսպես են այն ածականները, որոնք զուտ արական կամ զուտ իգական մի հատկություն են ցույց տալիս, ինչ. միրգի արական, հղի, սաթրջ, չքեր, առնաւու, կաքնաւու, միասանի, մերկածիծ, տեռասես իգական։ Բայց այսպիսի ածականների թիվը մեծ չէ, և ընդհանուրի մեջ կազմում են մի փոքր խմբակ։ Մնացյալ ածականների անտգին ածամանությունը փոխում է սեռը ըստ դիպի, ուրեմն և բայմասեռ է։

Անշուշտ կարող էր լինել, որ ինչպես գոյականների, նույնպես և ածականների մեջ, արականի համար լիներ բոլորովին

առանձին բառ, իգականի համար առանձին, և չեզոքի համար առանձին։ Այսպիսի ածականներ այսօր էլ ունենք մեր լեզվի մեջ. օր. արու ածականը արական է, էգ ածականը իգական. նույնպես մատակ, մանկամարդ, պառավ ածականները իգական են և չեն գործածվում արական բառերի հետ. ասում ենք սովորաբար՝ երիտասարդ մարդ, մանկամարդ կին, ծեր մարդ, պառավ կին։

Ամուլ բառը նշանակելով «չբեր կին» իգական է. գտել եմ պրպարի մեջ նոր բառ՝ սուբ (դեռ բառարանում մտած չէ), որ նշանակում է «չբեր տղամարդ», ուստի և արական է։

Բայց ածականի յուրաքանչյուր սեռի համար այսպես առանձին բառ հնարելը մի մեծ դժվարություն և ավելորդ ծանրաբեռնություն էր լեզվի համար. ուստի և գիմել են մի ավելի հեշտ միջոցի, այն է՝ զանազանել ածականի սեռը միայն վերջավորությամբ։

Զանազան լեզուների մեջ գտնում ենք արականի և իգականի մի քանի այնպիսի ձևեր, որոնց տարբերությունը միայն վերջավորության մեջ չէ, այլ գնում է ավելի խորը։ Այսպես՝

ար.		իգ.	
հն. πολύς		շատ	πολλή
գոթ. kaurus		ծանր	kaurjo-
լիտ. platus		լայն	plačo
սանս. palitáh		գորշ	páliknī
սանս. patih			pátnī
հն. πόσις		«տեր»	πότνια «տիրուհի»
լիտ. patis			patni
հն. πίων «պարարտ»			πίειρα և այլն

Սրանք ցույց են տալիս, որ հնագույն ժամանակ իգականը կազմվում էր ոչ թե պարզապես արականի վերջավորությունը փոխելով, այլ արականից անկախաբար՝ բուն արմատից, առանձին վերջավորությամբ։ Ավելի հետո, նմանության օրենքով և ավելի հեշտության համար, իգականը կազմվում էր արականից՝ -ā,—yā մանրիկներով. -a գործ էր ածվում բնավոր ձևերի համար. ինչ. սանս. sana-, հն. ἕνο-, լիտ. sena- «հին» արական ձևերի դեմ, սանս. sánā- հն. ἕνᾱ, լիտ. seno իգականները. կան սանս. çrutā-, հն. κλυτό-, լա.-clito- արականների դեմ՝ սանս. çrutā՛, հն. κλυτᾱ՛, լա.-clita- իգականները և այլն։

yā(iya,i) գործ էր ածվում անբուն ձևերի համար. ինչ. հն. πο'τνια=սանս. patnī «տիրուհի», սանս. bhárant-ya «բերող կին», գոթ. frijond-i «բարեկամուհի», սանս. yūn-ī (ար. yúvan-) «երիտասարդուհի»=լ. junux «երինջ», սանս. svādvī (ար. svādav-) «քաղցր»=հն. ἡδεῖα «քաղցր» (ար. ἡδύς)։

Ածականներից հետո անցան գոյականներին և սկսեցին նրանցից էլ կազմել իգական ձևեր ā, yā վերջավորությամբ՝ արականներին զուգընթացաբար։

Այս օրենքին ենթարկվեցին հատկապես գործող անձ ցույց տվող բառերը, որոնք ածականների պես երկու սեռ ունենալու արտահայտիչ են. ինչ.

ար.		իգ.
սանս. janitar	«ծնող»	jánitr-i
լ. genitor		genitrix
հն. γενετήρ		γενέτειρα

Սեռ ունենալու հարմար էին նաև շնչավոր արականներից նրանք, որոնք հնդեվրոպական լեզվի մեջ կրում էին մի ընդհանուր անուն թե՛ արականի, և թե՛ իգականի համար. այսպես կազմվեցին՝

ար.		իգ.
սանս. vṛ'kah լիտ. vilkos	գայլ	vṛkīh vilke
լատ. deus վեդ. devah	աստված	dea devī'
սանս. raǰan	արքա	rāǰnī
լ. ursus սանս. ṛkṣah	արջ	ursa ṛksi
սանս. açvā-s լ. equus լիտ. —	ձի	áçvā equa ašva

Սրանց մեջ իգականներից ոմանց տարբեր տիպի կազմություններ (ինչ. լ. ursa, բայց սանս. ṛkṣi) ապացույց է, որ այդ տիպի կազմություններն հետին ժամանակի գործ են և յուրաքանչյուր լեզվի մեջ եղած են անկախաբար։ Նույնիսկ այն պարագային, երբ զանազան լեզուներ ունեն միատեսակ կազմություն (ինչ. սանս. açvā, լ. equa և լիտ. ašva)։ Այդ կազմություններն գործել

նույնն են և իրարից անկախ, որովհետև հունարենի մեջ նրանց համապատասխանը պակասում է և ἵππος ձևը գործածվում է թե՛ արականի, և թե՛ իգականի համար։

Բացի շնչավորներից, մեծ թվով անշունչ բառեր նույնպես ենթարկվեցին իգականի կազմության այս օրենքին. ինչ. հունարենի մեջ.

ար.		իգ.
πλο'κος	հյուսք	πλοκή
νεῦρον	նյարդ	νευρα'
ἦμαρ (չեզ.)	օր	ἡμέρᾱ

Նման երևույթներ կան նաև ուրիշ լեզուների մեջ։

Վերջապես այնպիսի բառեր, որոնք, ըստ էության, իգական լինելով՝ հնդեվրոպական նախալեզվում պետք չունեին որևէ սեռորոշ վերջավորության, սկսեցին ենթարկվել իգական կազմության այս օրենքին. օր. հնխ. snuso'- > հյ. ունս, սեռ ունոյ— հն. νυός «հարս» բառը, որ էապես իգական է, զանազան լեզուների մեջ փոխեց իր վերջավորությունը և սառնալով իգականի -a նշանը՝ դարձավ սանս. snusā, հբ. snūxa, լ. nora և այլն։ Այսպես նաև՝ ուրիշ բառեր, այնպես որ հնդեվրոպական նախալեզվի գրեթե բոլոր այն բառերը, որոնք ըստ էության իգական լինելով, միաժամանակ կրում էին e/o բուներ, վերածվեցին a-ի, որով e/o բուները մնաց արականին և չեզոքին հատուկ, ինչպես որ -ā, -yā իգականին հատուկ։ Վերածումը բնականաբար կատարյալ չեղավ և մինչև այժմ էլ զանազան լեզուների մեջ կան նույնիսկ a, ya վերջավորությամբ բառեր, որոնք ըստ էության էլ արական են. ինչ. լ. agricola «երկրագործ», հբ. sluga «ծառա», հյ. ընկեր (սեռ. ընկերաց), հն. δεσ-ποτ-α (ուղ. δεσπο'της) «տանուտեր, բանակալ» և այլն։

Ամփոփելով այս բոլորը՝ տեսնում ենք, որ հնդեվրոպական նախալեզվի մեջ հնագույն ժամանակ սեռը (իբրև քերականական արտահայտություն) ինքնին հասկանալի էր խոսող անձի համար և արտաքին նշաններով էլ արտահայտվելու պետք չուներ։ Աստիճանաբար արտաքին նշաններ, այն է՝ սեռորոշ վերջավորություններ, պետք եղավ կցել ածականների վրա. ածականները գործածվելով գոյականի հետ կարող էին ցույց տալ ի հարկին նրա սեռը։ Այդ վերջավորությունները հետո անցան գոյական-

ներին. նախ՝ նրանց մի փոքր մասի վրա, հետո սահմանը հետզհետե ավելի ընդարձակելով, բայց յուրաքանչյուր լեզվի մեջ անկախաբար։ Լեզուներից ամենք գրեթե հասան մինչև ծայրը և բոլոր դռյականներն էլ հպատակեցրին ընդհանուր կանոնին. այսպես օր. խոսքերենի և խոպաներենի մեջ ամեն բառ, որ վերջանում է o-ով՝ արական է, a-ով՝ իգական, ռուսերենի մեջ բազաձայնով՝ արական է, а, ь-ով՝ իգական և o, е-ով չեզոք, չեխերենի մեջ կոշտ բազաձայններով (h, ch, k, r, n, d, t) հանգող բառերը արական են, a հանգողները իգական, o, ĭ հանգողները՝ չեզոք։ Այնուամենայնիվ ոչ մի լեզվի մեջ էլ օրենքը բացարձակ չէ, և, օր., իսպաներենում poeta «բանաստեղծ», monarca «ինքնակալ» և այլն թեև հանգում են a, բայց արական են. ռուսերենի մեջ կան բառեր, որոնք թեև վերջավորվում են ь, բայց արական են. ինչ. путь «ճանապարհ», կամ որոնք թեև վերջավորվում են a, բայց արական են. ինչ. голова «քաղաքացուհա» և այլն։

Հին հունարենում ածականը առանում է երեք տեսակ վերջավորություն։ Ա հոլովման հետևող ածականները իգականում առանում են η վերջավորությունը, երկրորդ հոլովման մեջ արականի ος վերջավորությունը հատուկ է նաև իգականին. իսկ որոշ վերջավորությամբ ածականներ իգականում առանում են α, ինչ. νέος «նոր» ար. νέα իգ. νέον չեզոք։

ՍԵՌԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Այժմ մենք մեր խոսքը դարձնում ենք հայերենի վրա և ուղում ենք քննել, թե արդյոք հայերենը ինչպես է վարվել սեռի որոշման խնդրում։

Հայերենը՝ լինելով հնդեվրոպական լեզու, բնականաբար իր մորից ժառանգած պիտի լիներ սեռը։ Այսպես, օր. նու «հարս» բառը, որ բնականաբար իգական է և o վերջավորությամբ իգական էր նախալեզվում, իգական էր նաև հայերենում, քանի որում պահում է սեռականի մեջ (նուոյ) նույն o բուն։ Նույնպես մուն «ճանճ» բառը, որ մյուս լեզուների մեջ իգական է, հայերենի մեջ էլ ունի նույն բուն (սեռ. մնոյ)։ Ավելի հետո, երբ բառերի վերջավորությունները առնասարակ չնչվեցին, սեռի նշանը, և հետևաբար նաև՝ սեռը, ինքնին չնչվեց լեզվից։ Այնպես որ հայերենի ամենահին հիշատակարաններում էլ, որչափ մեզ ծանոթ են, այն

է՝ ե դարի առաջին գրվածքներում, սեռը բացարձակապես բացակայում է։

Հայագետ Ֆեքթերը (Հյուբ. աշխատ. Թրգմ. Վիեննա, 1895, էջ 131) քննելով հայերենի այս հնագույն հիշատակարանները, կարծում է գանել սեռի հետքը, այսպես՝ վանադնի երգի առաջին տողը՝

Երկնէր երկին և երկիր, երկնէր և Ֆերանի ծով,

պարունակում է այդպիսի մի հետք, երկին իբր արական և երկիր՝ իբր իգական։ Այսպես էր նաև հնդեվրոպական նախալեզվի մեջ, ուր երկինքը՝ իբր անձրև արտադրող, արական էր և երկիրը՝ իբրև այդ անձրևն ընդունող կամ վարելի հող՝ իգական էր, համմտ. հն. οὐρανός, լտ. caeli «երկինք» արական, և հն. γῆ, լտ. terra «երկիր» իգական։

Սակայն այս կարծիքը ճիշտ կամ գոնե վճռական չէ. մեր վիպասանները կարող էին առանց քերականական սեռի մասին պատկեր ունենալու, լոկ բանաստեղծական պատկերավորությամբ՝ երկինքն ընդունել իբր արական և երկիրն իգական։ Ճիշտ այսպես է նաև մեր արդի ժողովրդական բանահյուսության մեջ, ուր արևը ներկայանում է իբրև մի հերոսական աղջիկ, իսկ լուսինը՝ տղա, և սակայն արդի լեզուն քերականական սեռի մասին պատկեր անգամ չունի։

Ավելի լավ ենթադրություն է անում Մեյե հայագետը, որ կարծում է, թե արական և իգական սեռի տարբերության հետքերը պահված են մեր-ի հանգող բառերի հոլովման մեջ։ Արդարև. հայերենի մեջ -ի հանգող բառերը ունեն երկու տեսակ հոլովում. մի մասը լինում է սեռ. -ւոց, գրչ. -ւով, մյուսները սեռ. -եաց, գրչ. -եաւ, համմտ. որդի, որդւոց, որդւով, չարիք, չարեաց, չարեաւ։ Արդ՝ Մեյեն կարծում է, որ առաջին խմբի բառերը պահում են արական հոլովումը, այն է՝ հնխ. -iyo, իսկ երկրորդ խմբի բառերը պահում են իգական հոլովումը, այն է՝ -iya. համմտ. հն. ար. πάτριος, իգ. πάτρια, լտ. ար. patrius, իգ. patri-a, սնս. ար. pitriyas, իգ. pitriya «հայրական»։

Որովհետև այս խնդիրը առանձնապես կարևոր է հայերենի համար, ուստի պետք է մանրամասն քննության ենթարկել այն։

Ամբողջ Հայկազյան բառարանում կա 2137 բառ, որ վերջանում է -ի-ով. սրանցից 1523 հատը հետևեալ ձևով են ավանդված մեզ, գոնե

արքան կարելի է եղրակացնել Հայկազյան բառարանի աված վկայութիւններից և Երուսաղեմի համաբարբառից։ Մնացյալ 331 բառերն են միայն, որ ունեն մի այնպիսի հոլովաձև, որով կարելի է նույն բառի հոլովումը որոշել (այն է՝ եղ. գործ., հղ. սեռ., տր. բց. և գործ. հոլովներից որևէ մեկը)։

Բայց այս 331 բառերն էլ հոլովման տեսակետից նույնպես պետք է երկու կարգի վերածել. առաջին՝ այն բառերը, որոնց հոլովական ձևերը ամբողջված են մեզ ուղիղ մեսրոպյան շրջանից, և երկրորդ՝ այն բառերը, որոնց հոլովական ձևերը ամբողջված են հետմեսրոպյան շրջանից։ Առաջինների թիվը է 263, երկրորդներինը՝ 68։

Պետք է, թե հետմեսրոպյան շրջանի հեղինակները կարծես էին պահած լինել հին հոլովման ձևը, հատկապես այս բառերի նկատմամբ, որ պահանջում էին քերականական սեռի զանազանության դիտակցություն։ Այս բանն ինքնին անկարելի չէ։ Հետին հեղինակները, որ շարունակ կարդում էին ս. գիրքը և հին մատենագրության մյուս հատորները, բնականաբար առանց նույնիսկ քերականական սեռի զանազանության մասին գաղափար ունենալու, կարող էին լոկ ականջի վարժությամբ շարունակել այն ձևերը, որ գտնում էին հին՝ մեսրոպյան շրջանի գրականության մեջ։

Բայց այստեղ կար և մի ուրիշ հանգամանք. ժողովրդական լեզուն ձգտում էր դեպի մի հոլովմունք (սեռ. տր.-ի կամ -ու, բցա.-էն կամ -ից, գրձ.-ով), և այն հեղինակները, որոնք իրենց խոսվածքում վարժվում էին մեսրոպյան շրջանի հոլովման ձևերին, կյանքի մեջ, ընդհակառակը, լսում և գործածում էին շարունակ ժողովրդական լեզվի նոր հոլովաձևերը. ինչքան էլ պահպանողական լինեին նրանք և ուզենային հավատարիմ մնալ հին ձևերին, այնուամենայնիվ անկարելի էր, որ չդղվեին նոր լեզվից։ Պետք է, ուրեմն, ենթադրել, որ նրանց ավանդած հոլովաձևերը թեկուզ մեծ մասամբ հավատարիմ մեսրոպյան շրջանի գրության, այնուամենայնիվ, գոնե փոքր-ինչով, հետևում են ժողովրդական ձևին. հետևաբար և մեսրոպյան շրջանի հոլովման վիճակը պարզելու խնդրում ընդհանրապես արժեք չունեն։

Մի օրինակ բավական է այս կետը փորձով էլ ցույց տալու համար։ Հայկազյան բառարանի վկայությունների մեջ պատահում ենք ընդունելի, ունելի, ցանկալի բառերի համար հետմեսրոպյան շրջանի գրձ. ընդունելովք, ունելովք, ցանկալով ձևերը։

Բայց մենք գիտենք, որ -ելի, -ալի վերջավորությամբ դերբայաձև ածականները, ինչպես և նրանցից ձեացած անեզական գոյականները (տեսանելիք, խաղալիք և այլն) հոլովվում են -եաւ ձևով, թե մեսրոպյան շրջանում և թե նույնիսկ հետմեսրոպյան գրականության մեջ. միայն մեսրոպյան շրջանից դրա համար ունենք 55 օրինակ, իրենց հազարավոր հոլովյալ ձևերով։ Հետևաբար վերև հիշված ընդունելովք, ունելովք, ցանկալով ձևերը հետին գրականության մեջ՝ կրում են աշխարհաբարի -ով ձևով գործիականի ազդեցությունը և մեսրոպյան շրջանի համար սխալ են։

Այս բոլորից հետևում է այն, որ ինչպես հետմեսրոպյան շրջանի բառերը, նույնպես և մեսրոպյան շրջանի բառերի ուշ ժամանակների հոլովումը ամբողջապես դուրս պետք է ձգել մեր հետազոտություններից և մեր քննությունը սահմանափակել միմիայն 263 բառերի վրա, որոնց հոլովումը ամբողջված է մեզ մեսրոպյան շրջանից։

Այժմ քննենք այն խնդիրը, թե մեսրոպյան շրջանում հայերենը ունե՞ր որևէ գիտակցություն քերականական սեռի մասին։

Մեսրոպյան շրջանում մեր հայրերը իրենց թարգմանությունների ժամանակ երբեմն գտնվել են մի այնպիսի անհրաժեշտ պահանջի առաջ, որ բնագրի այս կամ այն բառի իգական ձևը հայերենում էլ երևար։ Օրինակ՝ Ծն. Բ. 23 Ադամի բերանը դրված է այսպիսի մի նախադասություն՝ Եվայի համար. «Սա կոչեցի կին, զի յառնէ իւրմէ առաւ». երրայեցերեն բնագրում ասված է՝ «Սա թող կոչվի iššа, որովհետև iš-ից կազմվեցավ»։ Այստեղ iššа «կին» բառը՝ իգականն է iš «տղամարդ» բառի և ակնարկված է երրայեցերեն հիշյալ երկու բառերի առուգաբանական հարաբերության մասին. դրա համար էլ «որովհետև» բառը շատ հարմար է և արամաբանական։

Հայերենի մեջ դրանց փոխարեն դրվել է «այր» և «կին», որով ոչ միայն երրայեցերենի նրբությունը, ինչպես և Ադամի խոսքերի բուն նպատակը լավ դուրս չեն եկել, այլև նրա մեջ ցցվում է զի «որովհետև» բառը՝ իբրև բոլորովին անտեղի և անարամաբանական պատճառաբանություն։ Եթե հայերենը մեսրոպյան շրջանում ունենար իգականի գիտակցությունը և այդպիսի մի իգական արտահայտելու կարողությունը, անհրաժեշտ էր, որ գործ դրվեր այստեղ։ Այդպես արել են ուրիշ լեզուներում. որ. նշն. αὕτη θέλει ὀνομασθῆ ανδρίς, διότι ἐκ του ἀνδρος αὕτη ἐλήφθη.—

անգլերեն՝ she shall be called *woman*, because she was taken out of *man*.

Եվսեբիոսի եկեղեցական պատմության հայ թարգմանության մեջ կա այսպիսի մի հատված. «Եւ ասաց զնոցանէն (Փիլոն), եթէ կոչին հաճգստարարք և կանայք որ էին ընդ նոսա հաճգստարարիթայք» (էջ 108). Փիլոնի հույն բնագրում, որից առել է Եվսեբիոսը, աստրագծյալ բառերն են θεραπευτής (արական) և θεραπευτίς (իգական); Եվսեբիոսի հայ թարգմանության մեջ նույն բառերը պահելով իրենց սեռը՝ եղել են mənixna (արական), mənīxnītā (իգական). Եվսեբիոսի հայ թարգմանիչը աստրերենի մեջ գտնելով նույն արական և իգական ձևերը և պահանջ զգալով սեռի զանազանության պահելու հայերենի մեջ էլ, ստիպվել է արականի համար թարգմանել հաճգստարար, իսկ իգականի համար փոխ առնելով աստրերենի -ītā իգականակերտ մասնիկը՝ անճահ կերպով կցել հյ. հաճգստարար բառի վրա. եթե մեսրոպյան շրջանում լիներ արևէ ձև իգականի արտահայտության համար հայերենի մեջ, ճիշտ տեղն էր գործադրելու այն, փոխանակ ստրքելու հաճգստարարիթայք կապկական ձևը. Մենք ունենք նաև Փիլոնի գործերի թարգմանությունը՝ ավելի ուշ ժամանակից. այստեղ էլ հայ թարգմանիչը կարիք է զգացել հույն երկու բառերի սեռը պահելու, և ահա մի ճարպիկ դարձվածով ավել է մեզ.— «Քանզի բուժիչք ըստ երկոցունց ազգաց՝ ըստ արուին և ըստ իգին առուգապէս կոչին.» (Փիլոնի ճառք, Վիեննա, 1892, էջ 6)[1].

Այս երկու բնորոշ հատվածներից դուրս ունենք նաև հունարենից և աստրերենից թարգմանված ուրիշ բազմաթիվ օրինակներ, որոնց գեմ բնագիրը ունի իգական ձև, բայց հայ թարգմանիչը գրել է միշտ արական բառ կամ խուսափել է հարազատ հետևողությունից և կամ առ առավելն արական բառի կողքին ավելացրել է կին բառը. ինչ.

Եւ ասացեր (դուստրդ Բաղդեացւոց). Ցաւիտեան կացից իշխան. Ես Ի՛է, 7 (հն. ἄρχουσα. նոր Թրգմ. ես հավիտյան տիկին պիտի լինեմ).

Ասաց ցգունապանն. Ցովհ. ժբ. 16 (հն. τῇ θυρωρῷ. այլ Թրգմ.— Ասաց ցգունապանուհին. Բրս. մրկ. ֆրանս. à la portière).

1 Վարդանյան, Բառաքննական գիտողություններ, Ա. Վիեննա, 1913, էջ 64 և wzku 27 (1913), էջ 126—7։

Գտանիցեք էշ կապեալ. Մաթ. Իա. 2 (հն. ὄνον δεδεμένην, ֆրանս. ânesse attachée).

Եւ կինն էր հեթանոս, փիւնիկ ասորի յազգէ, Մարկ. է. 26 (հն. Ἑλληνις, Συροφοίνισσα, ֆրանս. grecque, syro-phénicienne).

Զքոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն. Հռոմ. ժզ. (հն. οὖσαν διάκονον. այլ Թրգմ. սարկաւագուհի, ֆրանս. diaconesse). Նույնը ևԹաղ. էջ 152 (3 ձևս.), կնոջ մասին սարկաւագի.

Մարիամ մարգարէ, և Աննա մարգարէ, Յուդէ մարգարէ և եղիսաբէթ մարգարէ. Մարիամ մարգարէ ծնաւ զգլուխ մարգարէից և Թարթրա մարգարէ վարեաց զիսրայէլ. Մծբ., էջ 362 (ասոր. nəbīta «մարգարէուհի». հետին շրջաններում՝ Մարիամ մարգարէուհին քոյրն Ահարոնի. եվր. պ., Մարգարէուհին (Աննա) ոչ մեկնէր ի տաճարէն, Բրս. մրկ., Ցաւուրս Դերոմրայ մարգարէուհոյ, Շիր. քրոն.).

Ամենայն իշխանքն արք և կանայք ը. Մնաց. լև. 25 (հն. οἱ ἄρχοντες καὶ ἄρχουσαι, նորագիւտը՝ ամենայն երդիչքն արք և կանայք. ⇒ աշխ. բոլոր երդիչներն ու երգչուհիները).

Արարի ինձ դուստրս և երգեցիկս արս և կանայս. Ժող. բ. 8 (հն. ᾄδοντας καὶ ᾀδούσας. աշխ. երգիչներ և երգչուհիներ). Նույնը Ասկ. պօզ. Արարի ինձ երգեցիկս արս և կանայս.

Բարձր է յերուսաղեմէ զայր հզօր և զկին զօրաւոր. Ես. Գ. 1 (հն. ἰσχύοντα καὶ ἰσχυούσαν).

Ի Ցոպպէ էր կին մի աշակերտեալ անուն Տաբիթա. Գծ. թ. 36 (հն. μαθήτρια).

Չբարդ մարթիցի, ասեն, կնոջ ազատի երկու և երեք ծառայիւք միայն արուսթս ելանել...զազատականն ոչ բազում ազատաւորք երեւելի առնեն... ազատականն ազատութեամբն զարդարեսցի. Ոսկ. երր. էջ 551, 556 (հն. ἐλευθέτα «ազատուհի»).

Ընդ փեսային մտանեն իմաստուն կուսանքն և արգելանին յմարթուքն և անմիտքն. Զգօն, էջ 393 (ասորի բնագրի մեջ «իմաստուհիքն» և «անմտուհիքն»)[1].

Այս բոլորը ցույց են տալիս, որ մեսրոպյան շրջանի հայերենում քերականական սեռի գիտակցություն չկար.

Բայց առանց ունենալու սեռի գիտակցություն, հայերենը կարող էր այդ շրջանում, ինչպես նաև ավելի ուշ էլ, պահել հա-

1 Վարդանյան, Ուշի մասնիկը դասական հայերենի մեջ, Հանդես, էջ 313—4։

լովական այնպիսի ձևեր, որոնք հնագույն ժամանակներում առանջացած լինելին ապրելը հոլովումներից, համաձայն քերականական սեռի, և հետո շարունակելին իրենց գոյությունը, պարզապես իբրև ինացորդ հնության: Այս է ասում նաև Մեյեի տեսությունը:

Մի քանի հանգամանքներ դալիս են հաստատելու նույնը:

1) Մի խումբ բառեր, որոնք բնական իգական դասվելով, ներ են ներկայացնում, հոլովվում են -եա-հոլովմունքով. այսպես՝

մարի «հաւ, թխամայր», սեռ. մարեաց

մաքի «էգ ոչխար», սեռ. մաքեաց

յղի, սեռ. յղեաց

այրի «մարդը մեռած կին», սեռ. այրեաց

•ոխի «ոչխար»? սեռ. օխեաց:

2) -Ուհի վերջացող իգական բառերը, ինչ ժամանակի էլ լինեն ներանք, հոլովվում են -եա ձևով. ինչ.

թագուհի, սեռ. թագուհեաց

սարկաւագուհի, սեռ. սարկաւագուհեաց

3) Ընդհակառակը, մի քանի արական բառեր հոլովվում են -ւո հոլովմունքով. ինչ.

անդի «եղ», որի ուղղական ձևը գործածված չէ, բայց հոլովյալ անդուց, յանդուց ձևով ունենք քանիցս անգամ, ինչ. Դատ. Իր. 19, 21, Ա. Թագ. ԺԷ, 9 Ժող. Բ, 7:

Որդի «արու զավակ», սեռ. որդւոց, բցա. յորդւոց, գրբ. որդւով, որդւովք: Ս. գրքում առաջին երկու ձևերով գործածված է 790 անգամ, վերջին երկու ձևերով՝ 15 անգամ, որոնց վրա կարելի է ավելացնել ճօրեղբօրորդի, սեռ. ճօրեղբօրորդւոց:

4) Հին հնդեվրոպական լեզուներից դիտենք, որ ծառերի անունները իգական են, իբրև արտադրող պատուղների, օր. լ. arbor «ծառ», այսպես էր նաև նախալեզվում, ինչպես նաև հ. բոլոր բույսերի անունները (օր. արմավենի, եղևնի, բնկուզի, Թզենի, կաղամախի և այլն) հոլովվում են -եա ձևով. ինչ. արմավենեաց, եղևնեաւ և այլն. համմ. ռուս. ЯБЛОНЯ «խնձորենի»:

5) Հնդեվրոպական լեզուների մեջ երկրների անունները իգական են, բան այսմ էլ հ. խաղաիք, եկեղիք, ուխտիք և այլն հոլովվում են իգականաձև՝ Խաղտեաց, Եկեղեաց և այլն. մինչև անգամ Տփղեաց, Անգղեաց և այլն:

6) Ասորի բառը հոլովվում է երկու տեսակ. սեռ. Ասորւոց կամ ասորեաց. առաջինը արական հոլովումն է և ներկայացնում է «Ասորի մարդ», երկրորդը իգական հոլովումն է և ներկայացնում է «ասորաց երկիրը», որովհետև «երկիր» նշանակող բառերը իգական են լինում: Նշանակությունների զանազանությունը արդեն կորած է մեսրոպյան շրջանում, որովհետև Ասորեաց գործ է ածվում անխտիր երկուսի համար էլ. բայց երկու ձևերը, իբրև հին գործածության արդյունք, դեռ շարունակվում են: Այսպես՝ ս. գրքի մեջ ունենք 86 անգամ ասորւոց և 11 անգամ ասորեաց (Ա. Մաց. ԺԲ, 6, 14, Բ. Մաց. ա. 17, Ժգ, 7 Իբ, 34, ի. 2. Իգ. 23, 24, Իբ. 5, 16. Լգ. 5: Վերջին՝ ասորեաց ձևն ունի նաև Եւս. պատ., էջ 597):

7)-ցի վերջացող բառերը, իբրև անձ ցույց տվող, հոլովվում են միշտ արական ձևով. ինչ. Երբայեցի, Երբայեցւոց, Երբայեցւով և այլն: Այս կարգի բառերի թիվը շատ մեծ է. Հայկազյանը հիշում է նրանցից մեկտեղ 21 հատ, բայց Համաբարբառը ունի ևս 235 բառ: Ավելացնենք սրանց վրա նաև պատմագրերի հիշած ձևերը, որոնք անթիվ են. ինչ. կարնեցի, Տայեցի և այլն: Այս բոլորի մեջ գեղեցիկ բացառություն է կազմում Անձևացիք, որ նախորդին նման, իբրև երկրի կամ գավառի անուն, լինում է սեռ. Անձևացեաց, իգական ձևով:

8) Եթե հնագույն հայերենում -ւո- արական և եա- իգական էր, պետք էր, որ ածականներն ունենային երկու տեսակի հոլովում. այսպես օր. բարւոց՝ արականի համար և բարեաց՝ իգականի համար: Մեզ ծանոթ մեսրոպյան շրջանի հայերենում ածականների այսպիսի կրկնակ հոլովում չկա ընդհանրապես. բայց կան մի խումբ բառեր, որ նույն վիճակը շարունակում են: Այսպես սնոտի ածականը՝ որ ս. գրքի մեջ հոլովված է 20 անգամ, 14 անգամ գործածված է իգականաձև (հգ. սեռ. սնոտեաց, գրբ. սնոտեաւք) և 6 անգամ՝ արականաձև (հգ. սեռ. սնոտւոց, գրբ. սնոտւով).— օտարոտի ածականը հոլովված է 4 անգամ, որից 3-ը՝ արականաձև (հգ. սեռ. օտարոտւոց, գրբ. օտարոտւովք) և մեկը՝ իգականաձև (հգ. սեռ. օտարոտեաց). ավելացնենք սրա վրա հգ. գրբ. օտարոտեաւք. Եփր. Ծն.:

Կարելի է հիշել նաև մի քանի ուրիշ բառեր, որ նույն խմբին են պատկանում. այսպես՝ հգ. բցա. ի քաղաքացեաց Բ. մակ. ԺԲ. 30 (նույնը հետևաբար Սարգ. ա. պ. ը), հգ. սեռ. Նիկողայիցեաց Ցայտ. Բ. 15 (հետին), հգ. (հին Քրգմ. Նիկողաեցւոց, քան Ն. Մուրատ, Ցայտ. յովհ. Եմ. 1905, էջ 8). հգ. սեռ. չորքո-

առեւց Եփր. հռ. (որ այլուր միշտ լինում է շորքոտանեաց), արշակունեւց Բուզ. էջ 218, այլուր՝ Արշակունեաց,

Ծանոթություն.— ի վերջացող բառերի -ւց և -եաց հոլովման վրա խոսում է նաև Նորայրը (Կորիւն վրդ., էջ 479—81), ինարկե, բոլորովին հատարակ ձևով և գտնում է, որ մեսրոպյան շրջանի գրվածքների մեջ երկուսն էլ անխտիր գործածական են։ Իր հիշած օրինակները հետևյալներն են.

Արշակունւց, Բուզ. Դ. իգ. ե. թ. Դ. Ծա. ե. է. Խո.
Շահունւց, » Դ. իգ.
Որդունւց, » Գ. գ.
Աւորեաց, Եւս եկեղ. է. Ժա. Մ 49, լ. 597, ժմ. 165
Աւդիք, ւց, Ոսկ. մտթ. Գ, յորդ. 13, ապղ հ.
Աւղեաց ծն. լ. 32, 33, 35
Օտարոտիք, ւց, Դատ. ԺԲ, 12
Օտարոտեաց, Սիրաք Իս 28, լԲ. 5
Հոգիք, հոգեաց, Եփր. սամ. է. 411
Զօրքոտանիք, ւց, Եփր. հռ. ա. 11
Զօրքոտանեաց, Հռ. Ա. 23
Մնոտիք. ւց, Դատ. ե. 8, Ոսկ. ա. գեմ. ԺԳ, 106
Մնոտեաց, Ելք ի 7, Ղևտ. ԺԷ. 7, Դ Թգ. ԺԷ. 15. Առակ Իս 6, Ոսկ. ա. տիմ. ԺԵ. յորդ. 140, Եքես. ԺԲ. 800
Քաղաքացիք, ւց, Ղուկ. ԺԵ. 15—Լապ. Ճեմ. Ջեռ. -եաց
Քաղաքացեաց, Ոսկ. Մտթ. Բ. ժ. 532, Բ. ՄԿԲ. ե. 6, ԺԵ 30.

9) Ոսկի և ծիրանի բառերը՝ թե գոյական և թե ածական, առաջինը գոյական է, երբ նշանակում է մետաղը և ածական է, երբ նշանակում է «ոսկյա». երկրորդը գոյական է՝ երբ նշանակում է «ալաման» և ածական է, երբ նշանակում է «ծիրանագույն կարմիր»։ Իրրև գոյական այդ երկու բառերը պիտի լինեին կամ արական և կամ իգական, և քան այնմ պիտի ունենային մի հոլովում. իսկ իրրև ածական, պիտի ունենային թե արական, և թե իգական հոլովում. կրկին հոլովումները գտնում ենք ս. գրքում. ոսկի բառը իրրև գոյական հոլովված է միշտ արական ձևով (գրծ. ոսկով՝ 50 անգամ). իսկ իրրև ածական հոլովված է միշտ իգական ձևով (հգ. սեռ. ոսկեաց՝ Դատ. Ը. 26, Դ. Թագ. Ժ, 29, երգ. ե. 15)։ Ծիրանի բառից ունենք եզ. գրծ. ծիրանեաւ Ել. լե. 35, հգ. գրծ. ծիրանեօք Եսթեր. ա. 6, բայց նաև եզ. գրծ. ծիրանւով Թիւք Դ. 13։

Մեջ բերված փաստերից յուրաքանչյուրը առանձին առանձին վերցրած բավական զորեղ չէ գուցե, բայց նրանք չեն էլ կարող պատահական զուգադիպության արդյունք լինել, և միանալով իրար հետ, եթե ոչ հաստատել, գոնե կարող են հավանական գարձնել հիշյալ տեսությունը։

Բառավերջի ձայնավորների անկումից հետո սեռի գաղափարը չնջվեց հայերենից. -ի հանդող բառերն էլ մի ժամանակ բարունակելով իրենց կրկնակ հոլովումը՝ սկսեցին այնուհետև իսկանվել իրար հետ. մեսրոպյան շրջանում դերակշռեց իգական հոլովումը. բոլոր ածականները պահեցին միայն այս վերջավորությունը. նույնիսկ արական բառեր՝ հետևելով ընդհանրացման օրենքին, սկսեցին հոլովվել իգականի ձևով. այսպես գտնում ենք արդեօք Եփր. գաղ. պոռնկօրդեաց նխ. օրին. կանամբեաց Ա. Կոր. է. 10, այծենեօք Երր. ժա. 37 (բայց և գրված՝ այծենւովք). փորուտով և փորուտեաւք կոչ. ժբ., մայրեաց, բայց նաև մայրով վեցօր. ե. և այլն։ Հետմեսրոպյան շրջանում, երբ աշխարհաբարի առաջին ծիլերն են սկսում և գրծ.-ով ձևը ընդհանրանում է հոլովման մեջ, -ի վերջավորվող բառերն էլ գտնում են այս ձևին. դերակշռում է -ւց ձևը, որ հին հայերենի արական հոլովումն էր. և այդ ժամանակ այնպիսի մի բառ՝ որ բնապես իգական է, ինչ. արամբի, սկսեց հոլովվել արականի ձևով. սեռ. արամբւոց։

Մենք մինչև անգամ կարող էինք ճշտիվ որոշել, թե ո՛ր ժամանակ ջնջվեց հայերենում սեռի գաղափարը՝ գոնե -ի հանդող բառերի վրայից։ — եկեղեցի բառը, որ փոխառյալ է հն. ἐκκλεσία ձևից, հոլովվում է իգականաձև (սեռ. եկեղեցւոյ), անշուշտ, որովհետև հունարենում էլ իգական է։ Եթե այդպես է, ուրեմն այն ժամանակ, երբ եկեղեցի բառը փոխ էր առնվում հունարենից, փոխառուները գիտակցում էին սեռի գոյությունը հայերենի մեջ։ Արդ՝ եկեղեցի բառը կարող էր փոխ առնվել միայն քրիստոնեության մուտքից հետո Հայաստան և այն էլ հունական քրիստոնեության։ Այդ շրջանն է Դ դարի սկզբից մինչև Ե դար։ Որովհետև Ե դարի սկզբին այլևս սեռը գոյություն չուներ հայերենում, ինչպես տեսանք, ուստի ջնջման սկիզբը պետք է դնենք նրանից ավելի առաջ, մոտավորապես Դ դարի կեսին։

Այս վարկածը կարող էինք իրրև ճշմարիտ ընդունել, եթե երկյուղ չունենայինք, որ եկեղեցի բառն էլ, առանց հունարենի օրինակին հետևելու, պարզապես ենթարկված լիներ -եաց հոլով-

ման, որովհետև մեսրոպյան շրջանում բառերի մեծամասնությունը այդպես էր հոլովվում:

Եթե մեսրոպյան շրջանում գերակշռում էր -եա հոլովումը և նույնիսկ արական բառեր անցնում էին այդ հոլովման, իսկ հակառակն դառնալով՝ այն բառերը, որոնք հետևում են -ւս- հոլովման, իրապես արական բառեր են և այնպես հաստատուն, որ նույնիսկ մեծամասնության քաշող ուժը չի կարողացել նվաճել նրանց: Այս դասակարգությամբ, հին հայերենի արական բառերից են ուրիճ՝ որդի, ճոգի, ոգի, լեղի, կոգի, լկտիք (դանաւորակ), աճղի (եզ), կարասիք, գինի, այգի, գարի, ոսկի, փորոտիք, մեխեղոտի, մանկտի, ջորի, որոնք ամբողջապես կամ մասամբ հետևում են -ւս- հոլովման՝ մեսրոպյան հայերենում: Զենք դնում ածական բառերը, որովհետև նրանք բնականաբար պիտի ունենային թե արական և թե իգական հոլովում:

Ե դարից բավական հետո, երբ սեռը բոլորովին ջնջված էր հայերենից, հունաբան հեղինակները պահանջ զգացին հունարենի համեմատ արական, իգական և չեզոք սեռի զանազանությունը արվեստական կերպով մացնելու հայերենի մեջ: Տիմոթեոս կուզի թարգմանության մեջ կարդում ենք.

Եզ Տէր, մու հաւատ, մի մկրտութիւն. ուր եզ՝ մի բառ արական ձևն է, մու իգական, և մի չեզոք, ճիշտ համաձայն հունարեն բնագրին՝ εἷς κύριος, μία πιστις, ἓν βάπτισμα.

Ահա այս ժամանակ է, որ երևան եկան մի քանի իգական հոգնակեր մասնիկներ (ուհի, է, իա, իթայ կամ եր, ի), որոնցով և կազմվեցին զանազան բառեր:

Ուհի մասնիկով կազմված իգականները թվով 60 են. դնում ենք այստեղ այդ բառերը՝ այբուբենական կարգով.

արքասուհի
ազատուհի
ազգականուհի
ամազոնուհի, ամազուհի
ամենաարեգակաշուհի
ամենաերեսուհի
ամենուհի
անարատուհի
աշակերտուհի
աշխարհածուհի
առաքելուհի
աստուածածանուհի
աստուածուհի
արքարուհի
արքայուհի
աւազուհի
բարեկամուհի
բարեպաշտուհի
գոնապանուհի
եգիպտուհի
երանելուհի
երանուհի
երիտասարդուհի
զարմանուհի
դինուորուհի
զօրականուհի
ընտանուհի
թագադարմուհի
թագուհի
թշուառուհի
իմաստուհի
իշխանուհի
իսկուհի
խարուհի
ծերուհի
կապկուհի
համեստուհի
հարսնուհի
հաւատուհի
մարգարէուհի
մարտիրոսուհի
մեծուհի
միայնուհի
նախավկայուհի
նահատակուհի
չաստուածուհի
պարկեշտուհի
սամարուհի
սարկաւագուհի
սպասաւորուհի
սրբուհի
վարդապետուհի
վայուհի
տիրուհի
քանանացուհի
քաղաքուհի
քանանուհի
քրմուհի
օդոյուհի?
օտարուհի

Այս բոլորն առհասարակ գոյական են. բայց կա նույնիսկ նույն վերջավորությամբ ածական. ինչ. Իսկ ի վեցերորդում աւուրն, այսինքն ի սրբուհի ուրբաթն. Չնայն սրբուհի օրս պարտ է ամենայն քրիստոնէից պաշտել: Անդադար ազօթիւք պատուելով զսրբուհի զորս գայս. Վրք և վեր. p. 203—4:

Մյուս իգականակերտ մասնիկներով կազմված բառերը չափազանց քիչ են. ահա գտնված օրինակները.

-է մասնիկով. սէ, նէ դերանուններ (իբր սա, նա), որոնք հոլովվում են հետևյալ ձևով՝ սեռ. սորա, նորա, հգ. սէք-սայք, սեռ. սոցա:

-Իա մասնիկով. ընտանիայ «ազգականուհի», թոռնիայ կամ թոռնեայ «աղջիկ թոռ», ձագրոռայ, ձագրոռնիայ կամ ձագրոռնեայ «թոռան թոռը»:

-եր, իթայ մասնիկով.— ճաւակեր «աղջիկ զավակ» (որի չէզոքն է ճաւակ՝ բուս Մար. և Երզն. քեր.), հանգստարարիթայք «հանգստարարուհի, բժշկուհի»:

-ի մասնիկով.— աստուածի «աստուածուհի» Գիտն.

Այժմ պետք է քննել, թե ինչ ծագում ունեն այս մասնիկները. -իթա մասնիկի մասին վերևում արդեն խոսել ենք, իսկ ասոր. -ītā, որ ծանոթ էր հայոց նույնիսկ ս. գրքում գործածված ապիթայ «աղջիկ» բառով (Մրկ. է, 41) և որ հետո սովորական գործածական ձև դարձավ հայ մատենագրության մեջ (տե՛ս եփր. ծն. քա 10, 23, անընդ. 41, Սրճ. ածած. 436, չրչր. 196, Բնիկ (Սոփերք, իա, 107), Գնձ. Տպ. Տաթև ձմ. մը և այլն). Նույն մասնիկն է անշուշտ նաև եբ. արիթ ունենք ճանապարհ:

Է մասնիկը հունական դ ձևն է, որ գործ էր ածվում քե իբրև իգականի որոշիչ հոդ, և քե իբրև իգականի վերջավորություն. ինչ. κόρη «կույս», γυνή «կին» և այլն: Կար նույնիսկ հունարենից առառարձված սերասած «օգոստափառուհի»<ն. σεβαστή նաև. քր.:

Մեր հունաբան հեղինակները նախընտրել են այս մասնիկը անշուշտ այն պատճառով, որ նա գործածական և ծանոթ էր հայերենի մեջ էլ հատուկ անունների միջոցով. ինչ. Նանէ (առավածուհին), Գայիանէ, Հռիփսիմէ, Սողոմէ, Վասվասէ, Կատրամիդէ, Նունէ, Մանէ, Մլքէ և այլն: Այսպես կազմվեցին սէ, նէ բառերը, իսկ սրանց սեռականի մեջ է դարձավ ե (սերա, ներա), որովհետև հին հայերենում է գոնվում էր միայն վերջին վանկում, իսկ նախորդ վանկերում գոնվում էր միայն ե:

Իա մասնիկն էլ բնականաբար հունական ια ձևից է կազմված: Այս մասնիկն էլ իբրև իգականի վերջավորություն ծանոթ էր հայոց զանազան հատուկ անունների մեջ. ինչ. Սոփիա, Անաստասիա, Եղոքսիա, Եւպրաքսիա, Եփիմիա և այլն. նույնիսկ հայկական հոդի վրա կար Սահակիա (իշխանուհի Սիւնյաց, որ հրաւիրեց Մուշէ կաթուղիկոսին՝ ընտրելու Սիւնյաց համար մի առաջնորդ, Օրր. ԺԹ), Բաւրինիա (դուստր Կիւրիկէ Գ-ի և քոյր Մածնաբերդի Աբաս Քագաւորի, կիր. 72):

Ի մասնիկի ծագումը անորոշ է, Meillet, Rev. Et. arm. 2,348 կարծում է, թե հնխ. -iyā- իգական վերջավորության ձևն է, բայց մի բառի գոյությունը բավական չի համարում նույն ենթադրությունը իբրև հաստատ ընդունելու:

Գալով -ուհի մասնիկի ծագման, պետք է ընդունել հետևյալ բացատրությունը.—Նախապես -ուհի (հին ձևով -ուրիհ) գոյություն ուներ իբրև բարգության երկրորդ մաս՝ մի խումբ իգական հատուկ անունների մեջ. այսպես են Ջարուհի, Խոսրովուհի, Համազասպուհի, Ոգուհի, Սմբատուհի, Վարդանուհի, Տաճատուհի, Տիգ-

բանուհի: Այս բոլորը իրանյան փոխառություններ են, հետևաբար և -ուհի<ուրիհ իրանյան բառ էր և անշուշտ նշանակում էր գուսար, աղջիկ, ճիշտ ինչպես Խոսրովիդուխտ, Որմզդուխտ, Սանդուխտ, Վարազդուխտ, և Վարդանոյշ, Սմբատանոյշ, Խոսրովանոյշ, Հրանոյշ, Արշանոյշ, Սահականոյշ անուննների մեջ դուխտ և անոյշ բառերը: -Ուհի մասնիկով ե դարում կա նաև մի հատուկ անուն, որ է Եւս. քր. Ամուհեան ձևը (Նորայր, Կոր. 406): Բայց այս ձևն էլ -ուհի մասնիկով չէ, այլ պետք է կարդալ Ամուհեայն, որ, ըստ Զոհրապի, է Ամուհիա, իսկ ըստ Կարապետ՝ Ամուհ-եան (ազգանվան մասնիկներով)[1]:

Ինդիր է, թե բացի այս հատուկ անուններից՝ նույն մասնիկով կազմված արևէ հասարակ անուն կա՞ր ե դարի հայերենի մեջ: Նոր Հայկազյան բառարանի վկայություններից, ինչպես և Նորայր Բյուզանդացու քննություններից (Կորիւն վարդապետ և նորին Քարգմանութիւնք, Տփղիս 1900, էջ 406) երևում է, որ ե դարի հայերենում կար նաև 7 հասարակ անուն՝ -ուհի վերջավորությամբ. դրանք են՝ թագուհի, քանանուհի, երանուհի, իմաստուհի, հավատուհի, սարկաւագուհի և առաքելուհի: Այս բառերի վավերականության մասին առանձին մի քննություն ունի Հ. Ա. Վարդանյան (Հուշարձան, էջ 309—314), որ ձեռագրերի քննությամբ ապացուցում է, թե դրանցից վերջին վեցը հետաքրքրական են և գոյություն չունեին մեսրոպյան հայերենի մեջ: Մեսրոպյան հայերենը իբր հասարակ անուն գիտեր միայն թագուհի բառը, որ գործածված է ս. գրքի մեջ 4 անգամ[2] և Լաբուբնայի մեջ 3 անգամ[3] (երկուսը անվավեր): Բայց թագուհի բառն էլ անշուշտ թեև իրանյան համազորը անհայտ, բայց գուտ իրանյան փոխառություն է, ինչպես թագ և թագավոր, որից հետևում է, որ -ուհի կամ -ուրիհ՝ իբրև առանձին բառ, անծանոթ էր մեսրոպյան հայերենի մեջ:

Ինչպես Գայիանէ, Հռիփսիմէ և այլն բառերից, նույնպես և այստեղ հունաբան հեղինակները ջոկեցին -ուհի մասը և դարձնելով մասնիկ, սկսեցին հորինել իգական բառեր: Այսպես է եղել նաև հունարենի մեջ, ուր βασίλισσα բառի վրայից կազմված է մեջ -ισσα(-ιττα) հանգող իգականների խումբը: Այսպես ձևացավ

[1] Վարդանյան, WZKM (1913), էջ 126—7:
[2] Բ. Մակ., Թ. 1,3, երգ, Զ. 7, 8:
[3] Լաբուբ., էջ 13, 15, 30:

-ուհի իգական մասնիկը, որով հորինվեցին այն գանազան բառերը, որոնց ցուցակը դրինք վերևում։ Բացի դրանցից կազմվեցին նաև նորանոր հատուկ անուններ՝ հայ կամ օտար. ինչ.

Համամուհի
Աբեղուհի
Ադամայուհի
Արտեմուհի
Կայինուհի
Պիթագորուհի և այլն

Մոտավորապես նույն երևույթը տեղի ունեցավ նաև նորագույն ժամանակներում. -ուհի մասնիկը բաժանվելով դարձավ առանձին բառ, «կին կամ օրիորդ» ընդհանուր նշանակությամբ։ Այս ձևով գործածական էր դրագետների շրջանում ավելի հաճախ արևմտյան հայոց մեջ և ավելի կատակի ձևով։ Բայց նույնը կար նաև ԺԴ դարում և Աբրահամ Կրետացու պատմության մեջ[1] գործածված է երեք անգամ, Արձակեաց գունիքն իւր. Ուհեաց տեղն եղեգնեայ. Եւ իւր ուհեացն տեղն եղեգնեայ[2]։

Այս բոլոր ասածներից երևում է, որ իգականի բոլոր մասնիկներն էլ գրագետների ձեռքով սարքված և արվեստական կերպով հայերենի մեջ մտցրած ձևեր են։ Ամեն տարակույսից դուրս է այն, որ այդ մասնիկները չկարողացան մուտք գործել ժողովրդական լեզվի մեջ։ Նույնիսկ գրագետները շատ սահմանափակ գործածություն տվին է, իք, իա մասնիկներին և միայն -ուհի մասնիկն է, որ բավական հաջողություն ունեցավ։ Արդի լեզուն իգական մասնիկներից ընդունել է միայն այս վերջինը, որով սիրում է կազմել իր համար կարևոր համարած իգական բառեր։

Ահա մի ցուցակ այդ նորակերտ բառերի.

Հասարակ անուններ

անգամուհի	գնչուհի
առաքեալուհի	գործավորուհի
բանասեղծուհի	գրագիուհի
բժշկուհի	գրադարանապետուհի
դանձապահուհի	դասախոսակիչուհի
գեղջկուհի	դերասանուհի
դերձակուհի	մանկաբարձուհի
դյուցազնուհի	մանկապարտիզպանուհի
դքսուհի	մարկիզուհի
երգչուհի	մեքենագրուհի
ընկերուհի	միանձնուհի
լվացարարուհի	նախագահուհի
խոհարարուհի	նկարչուհի
կաթնավաճառուհի	ուսանողուհի
կարուհի	ուղուցչուհի
կոմսուհի	պարուհի
կոշկակարուհի	պարտիզպանուհի
հայրենակցուհի	սիրուհի
հաշվապահուհի	սպասուհի
հերոսուհի	տեսչուհի
հիվանդապահուհի	տնտեսուհի
հոմանուհի	քարոզչուհի
հովվուհի	

Հատուկ անուններ

Արմենուհի	Հայկուհի
Արշակուհի	Հրաչուհի
Բերիրուհի	Վերճուհի
	Վարդուհի

Կան նաև ազգ ցույց տվող բազմաթիվ բառեր. ինչ. հայուհի, թրքուհի, վրացուհի, պարսկուհի, լհուհի, ֆրանսուհի, անգլուհի, իտալուհի, ամերիկուհի, քրդուհի և այլն։

-Ուհի մասնիկի ազատ գործածության իրը օրինակ տանք Հակոբ Հատվածը արևմտահայ գրական լեզվից.

— կերևի թե փոխատուի արհեստեն զատ՝ ուրիշ խելքե մըտքե գուրս արհեստներ ալ կը բաներ. գողակիցուհի ալ է եղեր, վհուհի. ձյուլուհի(?), գողուհի, մոգուհի, բանասիրուհի, փոխանակուհի, կապելուհի, վերջապես ամեն բան որ նենգուհիի հետ կը հանգի։ (Գազանիք Բարիզի, Թրգմ. Մամուրեան, Զմիւռնիա 1869, հտ. Զ, էջ 102)։

Վերև գրված բառերի մեջ կան մի քանիսը, որոնք վատ են կազմված, այսպես են՝ պարուհի, կարուհի, որոնք պար և կար բառերի իգականները են և ոչ թե պարող և կարող բառերի. այս-

---

[1] Պատմ. Նահապետի, տպ. Վղրշպտ, 1870, էջ 15, 38, 95։

[2] Աճառյան, Հայ նոր բառեր, Վենետիկ, 1913, էջ 133։

պես և թագուհի՝ թագ բառի իգականն է և ոչ թե՝ թագավոր։ Առաջ եղել է գործուհի բառը (տես Իզմիեն Միւ, Գաղտնիք Բիւրեղի, Թրգմ. Մամուրեան, Զմիւռնիա, 1868, հա. Ա, էջ 94), բայց հետո կազմեցին գործավորուհի. սրան հակառակ նախապես եղել է կարկարուհի «կար կարող կին» (տես անգ, հա. Ե, էջ 42), որ մի քիչ ավելի հարմար ձև է, բայց չի անցել. նմանապես կ պարչուհի (տես Բօլ ալ Գօգ, Կին, Ազգ. գիրք, Պոլիս. 1880, էջ 78, երկու անգամ, և 142, մի անգամ). այնպես որ այժմ պ րուհի, կարուհի, ինչպես և թագուհի, սիրուհի հաստատված են լեզվի մեջ։

Մյուս մանրիկները խոպան վաղուց են և միայն նվ բանուհին է, որ բանաստեղծության մեջ ընդունված է՝ սեռ. նվ բա, բցա. ներառնէ ձևերով[1]։

Ավելորդ է ասել, թե ինչպես հին ժամանակ, նույնպես և այժմ, բուն ժողովրդական լեզուն ոչինչ չգիտե այս մանրիկնե րից. նա իր արական և իգական ձևերը կազմում է արու, որ կամ տղա, էգ, մատակ, քան կամ տղիկ բառերի հարադրությամբ և կամ յուրաքանչյուր սեռի համար առանձին առանձին բառ րով։ Պոլսի ժողովրդական բարբառով ասվում է նույնիսկ տղիկ կով և մանչ կով «եզ». իսկ կով ընդհանուր բառ է։

Թե ինչու ժողովրդական բարբառը չունեցավ բնավ արա կան և իգական սեռերի առանձին վերջավորություն, իսկ գրա կան լեզուն ունի մանրիկին ավավ առանձին կենդանության դրա պատճառը պետք է փնտրել անշուշտ տիրող լեզուների ազ դեցության մեջ։ Ժողովրդական լեզուն դանվել է պարսկերենի, թուրքերենի, մասամբ էլ վրացերենի և քրդերենի ազդեցության տակ. արդ՝ այդ լեզուները չգիտեն բնավ արական և իգական սեռ դանազանություններ. և այս բանը անշուշտ նպաստեց, որ հայ րենի մեջ չձևանար սեռը, ինչ որ արդեն բնականից էլ չկար։ Ընդհակառակը, գրական լեզուն դրվել է արևմուտքում՝ ֆրան սերենի, արևելքում՝ ռուսերենի ազդեցության տակ. այդ երկու լեզուներն էլ գիտեն սեռը, և այդ բանը եղել է գրիչ պատճառ որ գրական լեզուն էլ մշակվի իգական սեռի զանազան նորա կերտ բառեր։ Ահանք հնարվել են անտեսի բառեր, ուրիշներ ստա լեզուների հետևողությամբ հորինել են անմիտ իգականներ, ին

1 Նէ գերանվան գործածության գարկ սկզբ եղել է Դուբյանը, որին հետևում են ուրիշ բանաստեղծներ։

պարսկահպատակության Ֆաթմա. Հայրենիքը սարկուհի է այնտեղ, ուր փայտն է իշխում[1]։

Գրագետներից ոմանք նույնիսկ առաջարկել են մի քանի անձնական ձևեր՝ հայերենի մեջ իգական սեռը մացնելու համար։ Այսպես օր. Մ. Նուպարյան առաջարկում է ավելացնել բառի հայրին ի մասնիկը՝ կազմելու համար անասունների անվան իգականը։

Վերագառնալով դշխոյ բառին, որքան հիշում եմ, Հ. Ա. Վարդանյանը գանելով Երգ Երգոցի մի հին ձեռագիր, նկատել էր, որ այնտեղ գործածված թագուհի բառը հայտնապես նոր սրբագրություն է. տակին դրված է եղել դշխոյ, իսկ մի նոր ձեռք ուղղել է թագուհի, բայց դշխոյ բառի հետքերը դեռ ճառում են։ Այսպիսով, ջնջվում է թագուհի բառի մեսրոպյան շրջանի գործածության լավագույն վկայություններից մեկը։

Ինչպես ասացինք վերևում, ժողովրդի մեջ -ուհի վերջավորությամբ բառեր չկան և եթե կան, նրանք գրական նոր վերաբերություն են, ինչպես՝ բժշկուհի, ընկերուհի, տեսեսուհի, կամ ամենայն հնուց ճանաչած իգական անուններ, ինչ. Թագուհի, Մարգուհի և այլն։ Այս կարգից է նաև դշխո անունը, որ գործել է անճոռնի ձևով դշխուհի։ Ինքը դշխո բառը արդեն իգական է, այնպես որ իգականը նորից իգական գարձնել միևնույն է թե ասել մայրուհի, քույրուհի, սկեսուրուհի և այլն։ Որովհետև ժողովուրդը -ուհի մասնիկ չգիտե, ուստի կարծում եմ, որ այս կամ դշխուհի բառն էլ ոչ թե նրա ձեռքով հորինված է, այլ ամենածածկն 7 անուններին նմանության է. այն է՝ Թագուհի, Տիրուհի, Իսկուհի, Մարգուհի, Սրբուհի, Դշխուհի, Մարիամ։

* * *

1928 թվին Ստ. Մալխասյանը հայտնեց ինձ իր հետևյալ ենթադրությունը.— Հին լեզուների մեջ երկինքը արական է և երկիրը իգական. առաջինը իբրև ուռդող անձրևով և երկրորդը իբրև պտղաբեր։ Երկինք բառը կազմված է երկ արմատից -ին մասնիկով, իսկ երկիր բառը նույն երկ արմատից -իր մասնիկով։ Սրանից կարելի է հետևցնել, թե հին հայերենի մեջ արականի մասնիկն էր -ին, իսկ իգականի մասնիկը՝ -իր։

1 Հայրենիք, Շիրակ օրաց. 1912 հունվ., 3։

Այս մասին իմ կարծիքն էր հարցնում։ Ես պատասխանե-
ցի.— Եթե հայերենը հնդեվրոպական լեզու է, ուրեմն նրա քեր-
կանությունն էլ հնդեվրոպական քերականություն է։

Հնդեվրոպական քերականությունը մեզ սովորեցնում է, թէ
հին հնդեվրոպական նախալեզուն գոյականի սեռը հայտնելու հա-
մար որևէ նշան չուներ. խոսողի և խոսակցի համար ամեն գո-
յական անուն, քան հին հասկացողության, արական և իգական
էր առանց որևէ արտաքին նշանի, ինչպես որ մինչև այսօր էլ
հայր և եզ մեզ համար արական են, մայր և կով իգական են
առանց որևէ նշանի. Միայն ածականներն են, որ արական, իգա-
կան դառնալու համար ստացան որոշ նշան. արականի համար o
իգականի համար ā և չեզոքի համար on (om)։

Այս սեռ ցույց տվող նշաններն այնուհետև կամաց կամաց
անցան գոյականներին։ Արդ՝ եթե, ինչպես ասացինք, հայերենը
հնդեվրոպական լեզու է, սեռի համար էլ այս նշանները պիտի
ունենար և ոչ թե -իւն կամ -իր, որոնց հետքը որևէ ուրիշ լեզվի
մեջ չենք գտնում (գերմաներեն -ēn իգականի նշան է և ոչ թե
արականի)։

Իսկ եթե -իւն և -իր մասնիկները որևէ անծանոթ լեզվից
անցած մասնիկներ են, պիտք է, որ այդ մասնիկները գտնվեն
նաև ուրիշ գանազան բառերի վրա և ոչ թե միայն երկին և նր-
կիր բառերի վրա։ Հանգամանք-ի մեջ (տպ. Թէոդոսիա, 1862 թ.)
-իր վերջավորված բառերը բռնում են 14 այսունակ (մի այսունա-
կը 40 տող ունենալով՝ ընդամենը 560 բառ), որոնց մեջ կա
միայն 33 արմատական բառ։ Մնացյալները կամ այս 33-ից
կազմված բարդ բառեր են և կամ միևնույն արմատական բա-
ներ, որոնց գումարն է 14 (լեր, բիր, պեր, դիր, ժիր, լեր, խիր,
ձիր, կիր, հիր, ձիր, սիր, տեր, ցիր)։ Անկարելի է, որ այս մի-
վանդ բառերը -իր մասնիկով կազմված իգական լինեին, որով-
հետև նրանց արմատը պիտի լիներ միայն մի բաղաձայն։ Ան-
կարելի է նաև, որ լեզվի մեջ գտնվեր միայն 33 իգական բառ,
փոխանակ լինելու մի քանի հազար։ Ուրեմն ենթադրել, թե -իր
իգական կազմող մասնիկ է, անհնարին է, որովհետև 33 բառի
համար առանձին իգական մասնիկ չի չինվիլ լեզվի մեջ։ Այս-
պես հասկանալ նաև երկին արական բառի համար։

Սա ցույց է տալիս, թե առաւգաբանական փոփոխությունները
պետք է կատարել մեծ զգուշությամբ. ուստի պետք է դիմել ի

հասարի վերջում. բայց որովհետև պատկանում է նաև իգական
կազմելու օրենքին, ուստի դիմենք այստեղ։

* * *

Հայերենի մեջ սեռը ներկայանում է հետևյալ ձևով.
արական — ազա, հովատակ
իգական — աղջիկ, դամբիկ
հասարակ — գավակ, ձի
Սրանցից դուրս գտնված բառերը սեռ չունեն և չեզոք են
ինչ. փայտ, ծառ և այլն։

Դնում ենք այստեղ սեռ ներկայացնող բառերի ցուցակը,
որ կազմեցինք Աշոտ Սուքիասյանի աշխատակցությամբ։

այր	կին	—
հայր	մայր	ծնող
եղբայր	քոյր	—
հօրեղբայր	հօրաքոյր	—
մօրեղբայր, քեռի	մօրաքոյր	—
ճուտակ, ուստար, որդի, զրպանդ	դուստր, ճուտակիք	զաւակ
փեսայ	հարսն	—
հոր	նու	—
սկեսրայր	սկեսուր	—
աներ	զոքանչ	—
հօրու	մօրու	—
եղն, ցուլ	կով	առւար, արջառ, դուար
աքաղաղ, աքլոր	մարի	հաւ, թռչուն
խոյ, առն, մալ, թամեղ	մաքի, արտիկ?	ոչխար, օդիք
կանամբի	արամբի	
—	ագիճ, բոզ, պոռնիկ	—
փեսանաս	—	թզենի, արմաւենի
ծօլա	քալա	—
—	քամ, քէնիք	սկաւնգ, շուն
—	սկնդիկ «լքեալ կին»	—
անկորդի	քենի	—

գոտատա	*օգոստա*	—
—	*օրիորդ*	—
դուարակ, մոգի	*երինջ,*	*ընջուղ, որթ (հորթ)*
որձ, արու, հաւանի	*էգ, մատակ*	*արուէգ, որձևէգ*
ամիկ	*ալոջ*	*ուլ*
ամուսին	*կին, եղար*	—
ամուրի	—	—
այծքաղ (արու վայրի այծ)	*յամոյը*	*(քարայծ)*
—	*այրի*	—
ծեր, ծերունի	*աւատրդ, պառաւ*	—
եղջերու	*եղն, եղնիկ*	—
թագաւոր, արքայ	*թագուհի, դշխոյ*	
	բամբիշն	—
քօշ, նոխազ, քաղա	—	*այծ*
յովատակ, փանդ	*դամբրիկ, ճակ*	*նժոյգ, ձի, երիւար*
սուք	*ամուլ*	—
—	*կոյս, առերջ*	—
կանդ	—	*արծիւ, արծուի*
—	*հարճ*	—
ծառայ	*աղախին, նաժիշտ*	—
անմատ	—	—
դայեակ	*առնտաւ*	*երաժիշտ*
—	*վարձակ*	—
տայդը	*մարի*	—
—	*տալ*	—
—	*ներ, տագերակին*	—
պապ, հաւ	*մամ, տատ, հանի*	—
տէր	*տիկին*	—
պլուզ, տղայ, մանչ, լամ	*աղջիկ*	—
ճուտակ, քուպիճ	*գաւազ (ձագ)*	*բազէ, շահէն*
—	*թռանիայ*	*թռան*

ԳԼՈՒԽ ԺԴ

ՀՈԼՈՎՈՒՄ

1. ՀՈԼՈՎՄԱՆ ԵՎ ՀՈԼՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԳԵՏ

Խոսակցության մեջ ոչ մի բառ ազատ ու անկախ չէ. նա կապված է մյուս բառերի հետ որոշ առնչութեամբ, և այդ առնչությունը արտահայտվում է այլևայլ կողմնակի կամ օժանդակ բառերով: Ինչպես լեզվի կենսաբանության մեջ տեսել ենք, (նկատ. Գլ. Թ.) լեզվի հետագա շրջանում այդ օժանդակ բառերը մյուսներից շատ ավելի մաշվելով վերածվում են մասնիկների և կցվելով բուն բառերին՝ տալիս են նրանց հարափոփոխ կերպարանք:

Այն մասնիկները, որոնք կցվելով անուններին կամ դերանուններին, որոշում են նրանց զանազան առնչությունները սրիշ բառերի հետ, առանց սակայն նրանց հիմնական իմաստը փոխելու և միայն մի հանգամանք կամ պարագա են ավելացնում նրան, կոչվում են հոլովական մասնիկներ, իսկ այն բառը, որին կցվել է հոլովական այս կամ այն մասնիկը, նրա հետ միասին վերցրած՝ դառնում է հոլով:

Մարդկային միտքը, ինչքան էլ տկար լինի այն, կարող է յուր բազմաթիվ առնչություններ գտնել ամեն մի բառի համար. այսպես՝ բոլոր նախադրությունները, ինչպես և նրանց հոլովական ձևերը (մեջը, մեջում, մեջից, մեջով, մեջերքը, մեջերքում, մեջերքից, մեջերքով և այլն) ներկայացնում են գոյականի համար մի մի առնչություն: Հին պարսկերենը ունի մի խումբ հետադրություններ. սովորություն է, պարսկական արձանագրությունների մեջ բառերը բաժանել նշանով. արդ, այսպիսի հետադրությունները չեն բաժանվում գոյականից: Այստեղ է, ահա, հոլովների սկզբնավորությունը: Բայց այդ դեռ հոլով չէ:

Որպեսզի առնչութիւնը վերածված լինի հոլովի, պետք է, որ առնչութիւն ցույց տվող օժանդակ բառը այնպես մաշված և իր ինքնութիւնը կորցրած լինի, որ այլևս անկարելի լինի առանձին գործածել և առանց իր հարակից բառի անբմբռնելի լինի։ Օրինակ՝ հյ. հացով որդ հոլով է, որովհետև -ով մասնիկը առանձին անգործածելի է. բայց նույնի ֆրանսերենը՝ avec le pain առանձին հոլով չէ, որովհետև avec բառը, որ համապատասխանում է -ով մասնիկին և նրա հետ միևնույն նշանակութիւնը ունի, կարող է առանձին ու անկախ էլ գործածվել։ Ռայբվ (գործ.) հոլով է, բայց ծառայի հետ հոլով չէ։ Նմանապես պարսկերում հոլով է (ներգ.), բայց պարսիզի մեջ հոլով չէ։

Այս խոսքերից հետևում է երկու բան. նախ, որ ամեն լեզվի մեջ էլ անուննների առնչութիւնները ավելի բազմաթիվ են, քան հոլովները, և հոլովները ներկայացնում են մեզ առնչութիւններից ամենաշատ գործածականները, բան որում մի այդպիսի մաշված վիճակի հասնելու համար անհրաժեշտ է չափազանց մեծ գործածութիւն. երկրորդ՝ որ հոլովների թիվը լեզվից լեզու տարբերվում է՝ համաձայն նույն լեզվի մաշիչ կամ վերլուծող հատկութեան և պահպանողականութեան։

Հոլովական սեռականից ամենից քիչ զարգացած վիճակումն է գտնվում չինարենը, որ գիտե միայն ուղղական հոլով, իսկ մանդարինական չինարենում կա և սեռական հոլով։ Այս հոլովը կազմելու համար գոյականի կողքին դրվում է ti, իբր օժանդակ բառ, որ սակայն գեռ խախուտ դրութիւն ունի և բոլորովին անհրաժեշտ չէ, օր. t'ien cə «երկնքի որդի», որ և՝ t'ien ti cə։

Նույնպիսի դրութեան մեջ է մարյո-պոլինեզյան բնաշխարհաբառ լեզուն, որ չինարենի նման չունի հոլով և նրա նման գիտե միայն մի հոլով, որ է ներգոյականը, և որ կազմվում է նախդիրով։ Մի քիչ ավելի զարգացած վիճակ է ներկայացնում հին եգիպտացիերենը, որ ունի ուղղական և հայցական (միևնույն ձևով և առանց որևէ նշանի) և սեռական-տրականն, որ կազմվում է նախդիրով։

Մալայան դայակ լեզուն էլ նույն վիճակին է. ուղղական և հայցական դիրքից են միայն որոշվում. իրրև հոլով կարելի է համարել միայն տրականը, որ կազմվում է akan, dengan կամ into նախադրութիւններով։

Օվկիանյան առնպա լեզուն հոլով չունի. հաճախ գնում են

gi տրականի համար, երբեմն էլ՝ սեռականի համար a, որ կարելի է և չդնել։

Մալայերեն լեզուն չունի հոլովում. բառը ենթում է անփոփոխ, ուղղական և հայցական տեղից են իմացվում. սեռական կազմելու համար երկու գոյական կողք կողքի են դնում և կամ գոյականից հետո դնում են punya «տիրականութիւն» բառը, ինչ. radʸa punya «թագավորի».— տրական կազմելու համար գոյականից առաջ դնում են kapada «դեպի», akan «մոտ», dengan «հետ», pada «դեպի» բառերը։

Մելանեզյան յարեմ լեզուն հոլովմունք չունի. իրրև հոլով գիտե միայն սեռականը, որ կազմում է հետևյալ ձևով։

Նախ գոյականները բաժանվում են երկու սեռակի. անձ և իր. անձ ցույց տվող բառերի սեռականը կազմելու համար եզակիում ավելացնում են nê մասնիկը, և հոգնակիում՝ nên, օր. apômtaunê intêna «տիրոջ ճանապարհը», launên kôm «մարդկանց տրտը»։

Իսկ իր ցույց տվող բառերի սեռականը կազմելու համար հաջորդ բառի վրա դնում են ɒa մասնիկը, օր. ka ɒa-laka «ծառի ճյուղը, ծառերի ճյուղը», lom ɒa-tau «տան տերը» (այս ձևը նույնն է, ինչ որ թրք. ev sahab-əsə «տուն նրա — տերը = տան տերը», jeviz ayaja «ընկույզի նրա— ծառը=ընկույզի ծառ»)։

Աֆրիկյան պագումբա (բանտու) լեզուն չունի հոլովում. հոլովները իմացվում են տեղից կամ դիրքից. եթե դրված է բայից առաջ, ուղղական է. եթե դրված է գոյականից առաջ, սեռական է. եթե դրված է բայից հետո, հայցական է. իսկ եթե դրված է այդ հայցականից հետո, տրական է։ Հաճախ հոլովը որոշվում է հետադրութիւնմբ. որանք իսկապես գոյական են, նոր իմաստ առացած. այսպես՝

zúgu գլուխ>վերևը
nyāña թիկունք>հետևը
pū ne փոր>մեջը

Աֆրիկյան կեղևե լեզվում հոլովումբ գտնվում է նոր կազմակերպման շրջանում։ Ուղղականը դրվում է բայից առաջ և երկուսի մեջև դրվում է «նա» դերանունը. ինչ.

kāḷoṅ e pa
թագավորը (նա) եկավ

Տրական կազմելու համար՝ ա) բառի սկիզբը դնում են «նա» դերանունը, բ) ավելացնում են «տալ» բայը, գ) մի հետադրություն.

օր. e ńgului fe kwī mè
նա գավազանը տալ սպիտակ նմա
(«նա գավազանը տվեց սպիտակին»)

e kweli ɣaḷ fe mè
նա երկաթ դարբնեց տալ ինձ
(նա մի երկաթ դարբնեց ինձ)

e seńikau tē suḍon po
նա փող տալ մարդ կոզմը
(նա գրամ տվեց մարդուն)։

Սիամերենը ինչպես թիվ, նույնպես և հոլով չունի. հագիվ երբեմն սեռականի համար գնում են k'ong «բան, իր» բառը և տրականի համար kä «դեպի»։

Չինարենի նման է դարձյալ ամերիկյան արտավակ լեզուն, որ չունի հոլով. օր. datti «հայրս» թե ուղղական է, թե հայցական, և թե սեռական։ Իրրև հոլով որոշվում է միայն տրականը, որ կազմվում է umun մասնիկով. օր. datliumun «հորս» (հոր համար)։

Հին եգիպտացերենին նման է աֆրիկյան յորուբա լեզուն, որ ունի միայն 3 հոլով. ուղ. հյց. և սեռ.։ Առաջին երկուսը բառի անփոփոխ ձևերն են. իսկ սեռականը կազմվում է կամ ti նախդիրով և կամ գոյականի պարզ հարադրությամբ (գրավորի մեջ դնում են մի ապաթարց). ինչ.

ille ti babba
տուն հոր(համոյ)
okko 'obba
նավ արքայի (երկուսն էլ անհոլով)

Հոլովումը գեռ կազմակերպված չլինելով և նոր սկսելով հռոմեդոյան կորանա բարբառում, կարող ենք հետևել նրա առաջին քայլերին ըստ Մայնհոֆի (էջ 40)։ Այստեղ նոր ձևավորվող առաջին հոլովը սեռականն է. հաճախ նա տեղից է հանկացվում. բայց կարելի է դնել նաև di նախդիրը կամ մասնիկը։ Այս մասնիկը կարող է գոյականից թե առաջ դրվել, և թե հետո ինչ որ նշան է նախնական տարատաս դրության. օր.

xoasao-b di kx'ob
լեռպարդ ի միսը
xu-b khoe-b di-b
ինչքը տղամարդ—ու

Բայց կան նախադրություններ էլ, որոնք իրրև հոլովական նշան, դրվում են գոյականից հետո, ինչ.

/'au-b /na արտում
ha-ku /xa ձիերով։

Ջանազան լեզուների մեջ արտական հոլովը տալ բայից է կազմվում. օր. աֆրիկյան դանգ լեզվով ha՛ «տալ» բայը նշան է արտականի. ինչ.

ala xo oyi ha՛ mo՛
գնել գավազան տալ նա
«նա գնեց մի գավազան նրանց»։

Սրանցից ավելի զարգացած վիճակ են ներկայացնում սեմական լեզուներից ասորերենն ու արաբերենը, որոնք գիտեն երեք հոլով. ուղղական, հայցական և սեռական. այս երկու լեզուների մեջ էլ առաջինը կազմվում է -u վերջավորությամբ. երկրորդը՝ a, և երրորդը՝ i։ Մյուս բոլոր հոլովները կազմվում են սեռականի վրա ավելացնելով զանազան նախդիրներ։ Այս դրությունն ուներ հոլովումը, հավանաբար, նաև սեմական նախալեզվում։

Ինչպես արաբերենի հոլովները (u, a, i) դրության մեջ չեն նշանակվում, նույնպես և փյունիկերենը։ Այս վերջիններն երեվում են միայն հատուկ անուններն մեջ, որոնցից իմացվում է, թե ուղղականի նշանն է -u (o), սեռ. i. օր. փուն. Hann-i-baal «շնորհք բահալի», հին քանան. yərušalēm «բնակարան ուրախության»։

Սեռականի ձևերից մեկն էլ արտականի գործածություն է, որ է արաբերենի նման l նախդիրը. այսպես՝ փյուն. gubulim lasibthim «երկիր (սահմանք) բնակության իւրոց»։

Եթովպական հարաբ լեզվի մեջ սեռականը կազմվում է հարադրությամբ. ինչ.

nagâš waldi արքայ որդի=թագավորի որդին.

Բայց միտքը ավելի պարզելու համար կարելի է ավելացնել համապատասխան դերանուն մասնիկը. ինչ.

amir čilot-ziyu = *ամիրի դաստարանը*
ամիր դաստարան իւր

Կոչականը կազմում են բառի ծայրին դնելով o *ձայնավորը։ Հայցականի վերջավորութիւնն է* u. *ինչ.* lām «*կով*», lāmū «*զկով*»։

Աֆրիկյան էվե լեզվի մեջ հոլովումը կազմվում է հետևյալ ձևով. սեռական կազմելու համար դնում են we, *որ նշանակում է «սեփականություն». օր.*

fia we xo = *թագավորի տունը*
արքա սեփական. տուն
ale we afo = *ոչխարի ոտքը*
ոչխար սեփական. ոտք

Տրականը կազմվում է na «*տալ*» *բայով*

egblo nya na ame = *մարդուն մի բան ասաց*
ասաց բան տալ մարդ

Ֆիլիպինյան տագալոգ լեզուն ունի 3 հոլով, եզակի և հոգնակի մխնուշ ձևով և նախամասնիկով. օր.

	եզ.	*հգ.*
ուղ.	táwo *մարդ*	manga táwo
սեռ.	nang táwo	nang „ „
խոսար.	sa táwo	sa „ „

Մի ասիճան բարձրանում է ջավայերենը, որ ունի ուղղական, հայցականն, սեռականն և տրականն։ Ուղ. և հյց. բառի անփոփոխ ձևն են ներկայացնում և դանագանվում են նախադասութեան մեջ՝ մինը դրվելով բայից առաջ, իսկ մյուսը՝ բայից հետո։ Սեռականը կազմվում է նախադր (!) բառի վրա դնելով hipun *կամ* hing «*յուր*» *բառը և կամ պարզ հարադրութեամբ. իսկ տրականը կազմվում է գոյականից առաջ դնելով* ḍatəng *կամ* marang *կամ* mənnang «*գալ, դեպի*» *բառերը. օր.* pangèran «*իշխան*» *բառից՝* fimbal-lan-hipun pangéran «*իշխանի հրամանը*». tiyang ǰawi «*Ջավայի ժողովուրդը*», handangu ḍatəng déwā «*հարյուրեց Աստուծուն*»։

Համեմատական նամա լեզուն դիտե ուղղ-հյց. (որ միշտ նույն ձևն ունի), կոչական (որ առանձին հոլով է), սեռական, և կարող է նաև հայցականը մի առանձին դարձվածով տրականի վերածել։

Ջավայերենի աստիճանի վրա է ճապոներենը, որ նույնպես ունի ուղ., սեռ., տր., հյց., որոնք կազմում են դանագան

համամանիկներով. բայց սրանցից դուրս կա նաև բացարձակ կոչված հոլովը (casus absolutus), *որ ուղղականի մի ուրիշ տեսակն է։ Ուղղականը երկու է. կարելի է կոչել ուղղական և բացարձակ ուղղական։ Երբ հարցնում են՝ «ով է փոքր», պատասխանն է «ոգան է փոքր»*—kodomo ga čiisai. *իսկ երբ հարցնում են՝ «ինչպես է ոգան»,—պատասխանում են. «ոգան փոքր է»*—kodomo wa čiisai». *առաջին դեպքում (որ մեր շեշտյալն է) ուղղականն է* kodomo ga, *երկրորդ դեպքում (որ մեր անշեշտն է) ուղղականն է* kodomo wa *(բացարձակ ձև)։*

Ավստրալիայի ավարակալ լեզվում երկու տեսակ հոլովում են անձնանունների հոլովում, և ուրիշ ամեն տեսակ բառերի հոլովում։ Այս տարբերութիւնը դրված է անշուշտ նրա համար, որ իրրև անձնանուն գործածված հասուկ անունները զանազանվեն հասարակից։ Օրինակ՝ հյ. Հասմիկ անունը ճասմիկ հասարակ անունից։

Օրինակ առնենք Biraban *անձնանունը.*

Ուղղ. (1) Biraban
Ուղ. (2) Biraban-to
սեռ. Biraban-nmba
տր. Biraban-nung *կամ* Biraban-kin-ko
հայց. „ „
կոչ. ala Biraban!
բց. Biraban-kai, Biraban-ka-birung, Biraban-ka-to-a, Biraban-kin-ba

Կրկին ուղղականները տարբերում են իրարից հետևյալ ձևով.—Անունդ ինչ է.—Բիրաբան։ Ես Բիրաբանն եմ. Սա Բրաբան է.—սրանք առաջին ձևն են ուղղականի։

Իսկ գործող անձը երկրորդ ձևի ուղղականն է. ինչ. Բիրաբանը հերկում է, Քոչունը երգում է։

Իսկ մնացյալ բառերը՝ անձ թե իր, նույնիսկ biraban *հասարակ անունը, որ անգլ.* eaglehawk *Քոչունն է, հոլովվում են հետևյալ ձևով.*

Ուղ. (1) և հյց.—(անփոփոխ)։
Ուղ. (2) -to,-ko
սեռ. -ko,-ba
տր. -ko, ta-ko, ka-ko
բց. -tin, ka-ta-birung, ka-birung, ra-birung,-toa,-koa.-

roa, ta-ba, ka-ba, ra-ba *(10 տեսակ մասնիկ մի բացառական կազմելու համար)։*

Անձ նշանակող բառերի և իր նշանակող բառերի համար առանձին հոլովմունք ունի նաև Ամաորալիայի նաբրինյիբի լեզուն։

Ամաորալիայի վիրապհուրի լեզուն էլ ճիշտ նախորդի նման ունի երկու տեսակ ուղղական, որոնցից գործող ննթական կազմվում է -du,-dgu,-gu,-lu,-ru *մասնիկներով։*

Ճապոներենից մի քայլ առաջ է անցնում ամերիկյան առանձին լեզուն, որ ճանաչում է ուղ., հյց., սեռ., տր., կոչ. և բացառական հոլովները. որոնցից ուղղականը որևէ նշան չունի. տրականն ու հայցականը միևնույն հետամասնիկն ունեն. կոչականը կազմվում է ê վերջավորությամբ. սեռականը հետադրությամբ, իսկ բացառականը տրականից կամ հայցականից՝ հետադրությամբ։ օր. angel «հրեշտակ» փոխառյալ բառը՝

Ուղ. angel		*Սեռ.* angel-evêri
Տր.	angel-ni	*Կոչ.* angel-ê
Հյց.		*Բաց.* angel-ni-himbo

Հոլովումը անկազմակերպ դրության մեջ է ափրիկյան մանդինգ լեզվի մեջ, որ ուսումնասիրեց Դըլաֆոսը։ Հեղինակը երկար խոսում է դոյականի և բայի հարաբերությունների մասին (էջ 187—200) և ստիպված է երբեմն անվանել զանազան հոլովներ. բայց ինչքան շատ են այդ մասնիկները, և բոլորը անորոշ ու ցրված. երկու հոլով կա միայն որոշ ձևով կազմակերպված. դրանք են տրական և ներգոյական. տրականի մասնիկն է ma, *օր.*

fe nkyi moro-ma
մի քան ուղարկել մարդուն

Ներգոյականի մասնիկներն են la, lo, ra, ro, na, no *և պես ցույց են տալիս հետևյալ օբինակները.*

a be sa-na
նա է վերևում
kọgo b' u-ra = *քաղցած են*
քաղցը է նրանցում
o be n' kono-no = *մխաքս է, հիշում եմ*
նա է իմ խղճում

Կարևորն լեզվի մեջ հոլովումը հետևյալ ձևով է կազմվում. սեռականի նշանն է na, *տրականինը՝* nur, *հայցականինը՝* ru, *բացառականինը՝* put'ur. *բոլորն էլ իրրև հետադրություն կցվում են գոյականին։*

Սամերերեն լեզվի հոլովումը հետևյալ ձևն ունի.
ուղղական և հայցական՝ մասնիկն է -e
սեռական՝ -ak, -ag
տրական՝ անձերի համար ra, *իրերի համար՝* a.

Սրանցից դուրս կան մակբայական հոլովներ, որոնք կազմվում են šu, da, ta, a *մասնիկներով. սրանցից* a *կազմում է ներգոյական, իսկ* da *ծագում է «կողմ» բառից։*

Ամաորալիայի նար-պոմերանյան լեզվում չորս հոլով կա (ուղ. սեռ. տր. հյց.). սեռականի մասնիկն է kai, *տրականինը՝* ta, *ուղ. և հյց. մասնիկ չունեն։*

Ահա բոլոր 4 թվերի հոլովումը՝ որոշյալ հոդով (հոդն է a, ra) dawai *«ծառ, փայտ»*

	Եզ.		*Երկ.*		
Ուղ.	a	dawai	a ura		dawai
Սեռ.	kai	ra dawai	kai ra	ura	„
Տր.	ta	„ „	ta „	„	„
Հյց.		„ „	ra	„	„

	Եզ.		*Հգ.*		
Ուղ.	a	utal dawai	a umana		dawai
Սեռ.	kai	ra „ „	kai ra	„	„
Տր.	ta	„ „ „	ta „	„	„
Հյց.		„ „ „	ra „		„

Ամաորալիայի բնիկների լեզվով հոլովումը կանոնավոր է. ունեն 3 թիվ (եզ., երկ. և հգ.) և 5 հոլով. ուղ.-հյց. սեռ. տր. և բց. Ահա հոլովական մասնիկները.

	Եզ.	*Երկ.*	*Հգ.*
Ուղ. Հյց.	—	la (rla, dla)	nna
Սեռ.	ko (nna)	ko	ko (itya)
Տր.	nni	nni	nni
Բց.	lo (rlo, dlo)		

Օրինակ

	եզ.	երկ.	հդ.
Ուղ. Հյց.	tinyara «տղա»	tinyarurla	tinyaranna
Սեռ.	tinyarunna	tinyarurlakko	tinyarannkko
Տր.	tinyaranni	tinyarurlanni	tinyarannanni
Բց.	tinyarurlo		
Ուղ. Հյց.	ngaityaii «մայր»	ngangkidla	ngangkinna

«2 էգեր»

Սեռ.	ngaityaiiko	ngangkidlakko	ngangkinnakko
Տր.	ngaityaiinni	ngangkidlanni	ngangkinnanni
Բց.	ngaityaiidlo		

Տիրեքեբենը ունի 8 հոլով (ճիշտ հայերենի պես, հաշվելով նաև կոչականն ու ներգոյականը). կազմվում են հետևյալ ձևով.

Ուղ. չունի նշան

Սեռ. մասնիկներն են hi, yi, kyi, gi, gyi *(նշ. վերաբերյալ).*

Տր. -la, -tu, -du, -ru, -su

Հյց. նման է ուղղականին, երբեմն էլ՝ սրականին

Բց. -nas, -las *(նշ. գործ)*

Գրծ. -his, -yis, -s, - kyis, -gis, -gyis *(նշ. միջոցով)*

Ներգ. - na *(մեջ)*

Կոչ. նույնն է ուղղականի հետ:

Կալմուկերենը ունի 10 հոլով, որոնցից անսովոր են միայն երկուսը. ա) կրողական, որ է «այն բանը ունեցող», համապատասխանում է մեր -ատոր մասնիկին. ինչ. ձիատոր «ձի ունեցող» և այլն. բ) սահմանական, որ ցույց է տալիս՝ մինչև մի տեղ, այն է հյց.:

Հոլովական բարձր աստիճանի վրա է նաև աֆրիկյան պապուասյան խմբից կաու լեզուն, որ ունի 11 հոլով: Եվ որովհետև այս հոլովներից շատը մեր սովորական հոլովներից չէ, ուստի տալիս ենք նրանց թվումը:

1. Անտարբեր (indifferent). *սա մեր ուղղական հոլովն է, բայց տարբեր է հաջորդից. օր. ջուրը չորացել է:*

2. Ուղղական. գործող անձն է ցույց տալիս.

3. destinatife *(ցույց է տալիս թե որի՞ համար է). համապատասխանում է ուրեմն մեր սեռականին կամ սրականին.*

4. Գործիական, որ միայն անշունչ իրերի համար է.

5. Ընկերական, որ իհարկե մարդկանց համար է (մեկի հետ).

6—7. Ժխտական ա և բ (caritif). *առաջին տեսակը այն է, որ ցույց է տալիս, թե այդ անձը կամ իրը պատահարար, միայն և միայն այդ միջոցին չունի այդ բանը. իսկ երկրորդը ցույց է տալիս, որ նա ընդհանրապես և միշտ չունի այդ բանը,* որ. moneʁ-tâ mlie «անփող» (փողը հետը չի վերցրել) և monen—mâc «անփող» (որ ապրատ է և փող չունի): *Հայերենի մեջ այս երկուսի համար տմմա. աճրի և բևազուրկ:*

8. adlatif *(ներգոյական և նախդրիվ հյց.).*

9. delatif *(որ տեղից.)*

10. adversif *(դեպի մի տեղ)*

11. deversif *(դեպի, ուղղությամբ, ինչ. ծովի ուղղությամբ).*

Գերազն սունդա կամ կեչուա լեզուն բացի գրաբարի 6 հոլովներից, ունի և illatif, transitif, terminatif, inessif, *ընկերական,* causatif *(պատճառական) հոլովները, ընդամենը 12 հոլով:*

Հիպերբորյան յուկագիր լեզուն ունի 11 հոլով, որոնք են՝ բացի սովորական 7 հոլովներից (ուղ., սր., հյց., բցա., գրծ., ներգոյական, ընկերական), նաև vialis, temporalis *և երկու տեսակ բաղադրական:*

Տունգուսական էվեն (լամուտ) լեզուն ունի 12 հոլով:

Կովկասյան համալալ լեզուն քան Բակարևի (էջ 47) ունի 37 հոլով, որոնցից 20-ը տեղ ցույց տալու համար:

Ամերիկյան այմարա լեզուն ունի 12 հոլով. այն է՝ ուղ., սեռ., սր., հյց., բցա., գրծ., կոչ., ներգ., որոնց հետ նաև illatif, terminatif, *ընկերական և պատճառական հոլովները:*

Զարգացման կանոնավոր աստիճանի վրա են կանգնած հարավային կովկասյան լեզուներն ու թուրք-թաթարական լեզուները, որոնք գիտեն 7 հոլով. ուղղական, սեռական, սրական, հյցական, բացառական, գործիական և ներգոյական: Տունգուսերենում կա 2 հոլով ավելի. այն է՝ ընկերական և prelatif:

Հոլովական զարգացման տեսակետից շատ բարձր աստիճանի են հասած ուգրո-ֆիննական լեզուները. այսպես էստոներենը 11 հոլով ունի, ֆիններենը՝ 16, կոմի-պերմերենը՝ 17, հունգարերենը գիտե 21 հոլով, որոնք են.

1) *ուղղական*
2) *հայցական*
3) *սրտական*
4) *նախդրիվ հայցական* (illatif)
5) *միջական* (inessif)
6) *սրտական* (elatif)
7) *կրոզական* (sublatif)
8) *վերակայական* (suressif)
9) *պատմական* (délatif)
10) *բացառական*
11) *մերձական* (approximatif)
12) *մոտական* (adessif)
13) *պատճառական* (causatif)
14) *եզրական* (terminatif)
15) *ընկերական* (comitatif)
16) *վերածական* (factitif)
17) *փոխանակական* (essif)
18) *ներգոյական* (locatif)
19) *շաղկապական* (conjonctif)
20) *համեմատական* (aequatif)
21) *ժամանակական* (temporalis)

Ինչնական վոտերեն լեզվում ուսումնասիրողները գանում են 24 հոլով, որոնք են՝ բացի ուղ., սեռ., հյց., տր., գրծ. հոլովներից՝

6) лишительный — *առանց մի բանի*
7) причинный — *պատճառով*
8) предложный — *ինչի մասին*
9) предельный — *գործի ժամանակը, տեղը, հեռավորություն*
10) заменительный — *փոխարեն*
11) сравнительный — *համեմատությամբ*
12) судительный — *բան, վայել կերպով*
13) местный — *տեղը*
14) ценительный — *արժեքը*
15) переходный — *մի տեղի վրայով*
16) проходный — *մի բանի միջով (օր. թղթի)*
17) последовательный — *նրանից հետո*
18) временный — *ժամանակը*
19) предположительный — *ենթադրական*

20) исходный — *բացառական*
21) предостерегательный — *նախազգուշական*
22) входный — *նախդրիվ հայցական*
23) полнительный — *լիություն, շատություն*
24) послесловный — *մոտը*

Սակայն հոլովական զարգացման տեսակետից ամենաբարձր աստիճանի վրա են հյուս. կովկասյան լեզուները. այսպես՝ ավելորդին լեզուն, բացի ուղ., սեռ., տր., պատմողական, քննիչական, համեմատական հոլովներից, ունի 24 հատ locativus *(տեղի), որոնք գտնվորվում են հետևյալ ձևով.*

	վրա	*մեջը*	*մոտը*	*տակը*
ձեր (դպրոցում)	-da	-t'i	-k	-k'o
դրսից	-dasa	-t'ia	-ka	-k'oa
դեպի ձեր	-de	-t'ie	-ke	-k'oe
ձի միջով	-dasan	-t'ian	-kan	-k'oan
ձի կողմից	-dasaxun	-t'iaxun	-kaxun	-k'oaxun
դեպի ձի կողմը	-dexun	-t'iexun	-kexun	-k'oaxun

Ի ուրիշ ձևի locativus *էլ կա չորս կողմից փակ շինքերի համար, որով ընդամենը լինում է 39 հոլով։*

Կովկասյան տարատարան լեզուն, բացի սովորական հոլովներից, դիտե՝ f մոտը, k' առ, (ɛ)r մեջ, ril վրա, k տակը, h քովը, k հանը, ķ «միջև», որոնցից յուրաքանչյուրը տասնապով 5 ձև, լինում է ընդամենը 40 ձև, օր. fur *«սայլ» բառից՝* furif, furil *և այլն և այլն։*

Լիրկովը տարատարան լեզվում գնում է, բան հների, 52, նաև բան նորերի՝ 27 կամ 11։ 52 հոլովից 42 հատը տեղ են գտել տալիս, որոնք հետդհետե կրճատվում են. տեղականներից յուրաքանչյուրը 3 գիրք ունի (որոնց գեպի ձեր և ձեր տեղից). ընդամենը կա այսպիսի 7 խումբ, որով 3×7=21 հատ։

Վերջապես ունենք լակերենը, որի տեղականները բաշխվում են հետևյալ ձևով.

վրա	*մեջ*	*քովը*	*տակ*	*մոտ հետևը*	
i	b	c	l	č	x

դեպի
մինչև
հետացում
դուրս
դադարում

Սրանք ասլիս են իրենց զանազան խառնուրդներով. այնպես որ քան Ուսլարի լակերենի բոլոր հոլովների քիվը լինում է մոտ 50! (Услар, Лак. язык, էջ 16):

Հնդկական մարաթի լեզուում բացառականը շատ ձևեր ունի, այսպես՝ 1) մինչից, 2) մոտից, 3) կողքից, որոնք առանձին հոլովներ են և կազմվում են հետադրութեամբ:

Կովկասյան ավարերեն և գարդվա լեզուների մեջ հոլովումը շատ դժվար է. դժվարութեան առաջանում է երկու պատճառով. նախ՝ որ հոլովման ժամանակ բառի ներքին պահակին էլ փոխվում է, և երկրորդ՝ որ հոլովումն էլ շատ բազմակերպ է, հատկապես սեռական հոլովը, ուր մանում է նաև սեռի առարկութեյունը. օր. երբ ասում են «վերմակի տակ», ուրիշ է արտականի համար, ուրիշ է իգականի համար և ուրիշ է անշունչ իրի համար և այս թե եզակիում և թե հոգնակիում: — Նմանապես, երբ ասում են «գյուղից», այդ բավական չէ, կա նաև «գյուղից դուրս գեպի վեր» (օր. գեպի սարը), «գյուղից դուրս գեպի վար» (օր. գեպի հարթավայրը) և այդ էլ նախորդի նման բուն սեռի այն անձի, որ դուրս է գալիս գյուղից, թե արդյոք արական է, իգական, եզակի, հոգնակի է, շնչավոր, թե անշունչ կամ անասուն:

Կովկասյան ուրիշներեն լեզուում հաճախ գոյականը չի հոլովվում և նրա հոլովի փոխարեն դրվում է մի մանրիկ բայի վրա. այսպիսով, բայը դրեթե միշտ ունի մի նախամասնիկ, մի մասամբ տեղ ցույց տվող: Փոխանակ ասելու «մանում եմ այգուն մեջ», ասում են «տանս մինչգնում եմ»:

Հանիր ջրի մինչից > ջրին մինչուհանիր
շորով պատած > մի շոր շրջափաթթեալ.
«մի մարդ մտավ խաղի մեջ» գառնում է՝

zä—t'i·	a-kumalä-n	wo-tu-qa
մի մարդ	խաղը	մինչմտեց

Սեռականը կազմվում է երկու ձևով.

1) Առարկողը՝ ուղղական, առարկյալը առարկականով՝ ուղղական. ինչ.

Հայրը իր — որդին=հոր որդին

2) Առարկողը՝ սրական, առարկյալը առարկականով՝ ուղղական. ինչ. եթե ասեինք՝ ֆրանս.

au—père	son—fils
հորը	իր — որդին=հոր որդին

Սեռականը գրվում է հաճախ հարաբերութեամբ. օր

a-či-çxa =ձիու ապրը
ձի ապր

2. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԹՎԻՆԸ

Այս ընդհանուր տեսութեյունից հետո կարևոր ենք համարում տալ այստեղ թվումը այն բոլոր հոլովների, որոնք գործածական են զանազան լեզուների մեջ: Հոլովները պետք ենք այրուբենական կարգով եվրոպական անվանակոչութեյամբ, խուսափելու համար հայերեն նորակերտ բառերի պատճառելիք թյուրիմացութեյունից.

1) abessif (*ժխտական*), որ կոչվում է նաև caritif կամ adverbial nègatif. ցույց է տալիս՝ առանց այս ինչ բանի. ինչ. անպոչ=քրք. quyruqsəz. մեր մեջ սովորական ածական է, բայց արխազերեն, ուբիխերեն, կաբարդիներեն, չերքեզերեն, լապերեն, ֆինիերեն, էստոներեն, օսյակերեն, մորդվիներեն լեզուների մեջ առանձին հոլով է համարվում. օր արխազ. ča-da «առնագ», jinka-da «առանց ապի»:

2) ablatif (*բացառական*). ցույց է տալիս նաև պատճառականը, նյութը.

3) absolut (*բացարձակ*). ուղղականի շեշտյալ ձևն է, որ հատուկ է հնդեվրոպական լեզվին, իբրև առանձին հոլովական ձև (տես վերը).

4) accusatif (*հայցական*).

5) adessif (*մոտական*). ցույց է տալիս մեկի մոտը (դադարման գազափարով). գոյութեյուն ունի հունգարերենի, վրացերենի, չերքեզերենի, վեպսերենի, ավարերենի և էստոներենի մեջ, օր. վրաց. ձմասթան «եղբոր մոտ»:

6) adverbial (*մակբայական*). ցույց է տալիս գործողութեյան եղանակը, գտնվում է վրացերենում. օր. թեթրաղ չաես «ապիտակով է երևում, ապիտակ է երևում», կարգաղ մղերիս «լավ է երգում», ավադ աթիս «հիվանդ է» (այսինքն ավի «վատ» բառի մակբայականը):

Adverbial հոլով գանվում է նաև վերջիններին լեզվի մեջ և նշանակում է «բան, համառձյնդ. որ պատից ծառն է ճանաչվում, գործից մարդն է իմացվում։

agential տես ergatif

7) affectif (տես Dirr, Einf., 151)։

8) allatif կամ latif «դիմողականդ. ցույց է տալիս դեպի մի տեղ շարժում. գրեթե արտականի արժեքն ունի. մի բան, դեպի որը դիմում է գործողությունը. գանվում է ֆիննական վերջիններեն լեզվի մեջ. կոչվում է նաև communicatif, որ կա դրավիդյան տուլու լեզվում.

9) approximatif (մերձական). ցույց է տալիս «դեպի մի բանի մոտդ (շարժման գաղափարով). այս ճանապարհը դեպի ծով է տանում. կա վերջիններեն լեզվում.

Caritif տես abessif

10) causatif կամ causal (պատճառական). ցույց է տալիս «համար, պատճառովդ, որ հայերենի մեջ բացատրվում է բացառական հոլովով. օր. ինչից եղավ «քեզ պատճառով եղավդ։ Causatif (համար, պատճառով) հոլովը կա Պերուի ռունաս խմբ կամ կիշու լեզվում։

11) circumlatif (պարառական). ցույց է տալիս մի բանի շուրջը։

12) comitatif (ընկերական). ցույց է տալիս «մեկի կամ մի բանի հետ միասինդ. կոչվում է նաև sociatif կամ unitif և է գործիականի մի տեսակը, հատկապես անձերի համար. ինչ. եղբոր հետ (=եղբորմով)։

Ընկերական հոլովը ընդհանրապես անձերի համար է. ինչ. եղբոր հետ, քրոջը հետ և այլն. բայց կա նաև անշունչ իրերի համար. այսպես՝ պոլինեզյան հավաի լեզվով ասում են. ատն հետ էլ մի խանութ էլ։

13) commoditatif (պատշաճական). ցույց է տալիս, թե որի համար է. գործածական է կարտրվելենում և ավանդելենում. ինչ. ավան. mare «մարգդ բառից՝ maremišd «մարգդց համարդ (Dirr. Einf. էջ 114). նույնը կա նաև վրացերենում. օր. մամիսթվիս «հոր համարդ։

14) Comparatif (բազդատական). ցույց է տալիս մեծությամբ հավասար այս ինչին. գանվում է մորդվիներեն լեզվում։

Թուրքական շոռ լեզվի մեջ էլ կա բազդատական կամ հա-

մեմատական հոլով, որ նշանակում է մի բանի պես կամ նման և կազմվում է tag, tig, dəg, dig մասնիկներով։

Շոռ լեզվի մեջ կա նաև համադրական հոլով, որ նշանակում է «ինձությամբ նույնդ, և կազմվում է če մասնիկով. ինչ. իրե չափ, քոչունի չափ և այլն։ Այս վերջիններեը անկայն կարելի է համարել նաև identif (տես № 26)։

15) conjonctif (շաղկապական). նշանակում է «նաև, այն էլ ևսդ։

Conversit տես directif.

16) consecutif. ցույց է տալիս նպատակը. օր. ջրի համար գնաց, ձիու համար ուղարկեց, փայտի համար եկավ. գանվում է ֆիննական վերջիններեն լեզվի մեջ։

17) datif (արտական).

18) délatif (պատմական). ցույց է տալիս «վրայովդ։

19) directif կամ conversif (նախդրով հայցական). ցույց է տալիս՝ դեպի մի տեղ. գանվում է ինչպես հին հայերենում, նոյնպես և վրացերենում. օր zγvisken «դեպի ծով, ի ծովդ։ Գանվում է նաև հնդկական նեվարի լեզվում և շնչավորի մոտ նահոս արտականի իմաստն ունի, իսկ անշունչների մոտ allatif-ի նշանակությունը։

— 20) egressif. ցույց է տալիս՝ միջից, տակից, դրսից. գանվում է վերջիններեն լեզվի մեջ։

21) elatif (արտական). ցույց է տալիս «մի բանից դուրսդ։

équatif տես identif

22) ergatif կամ narratif (պատմական), որ և historique կամ agential։

Այս հոլովը կա գանազան լեզուներում. ենթական ոչ թե դրվում է ուղ., այլ ergatif, որ կարող էր համապատասխանել մեր գործիականին կամ բացառականին, իսկ սեռի խնդիրը դրվում է ուղ.։

Այսպես՝ վերշիկերենում. օր.

Ուղտը հորթ չի ուտի

պառնում է՝

ut-e	bušu	ai	šičimi
ուղտից	հորթը	չի	ուտվի

Նման հոլովաձև ունեն նաև գանազան հյուս. կովկասյան լեզուներ, ինչպես և վրացերենը։

Հնդկական նեվարի լեզուում էլ կա այս հոլովը. օր. rājāo dhu syātaṃ «թագավորով (եղև) վագրորութիւն»։ Այս հոլովը նեվարի լեզուում միայն շնչավորներին է հատուկ։

Նույնը գտնում ենք նաև հնդկական գուջարաթի լեզուում. օր. Նա Թողեց Թագուհուն=որանով Թողվեց Թագուհին։ Նույնպես է և հնդկական բաշդալի կամ քաֆիրի լեզվով, ուր մասնիկը է -eze, ինչ.

tot-eze	plastai	
հայր-ով	սրված	=հայրը սվեց
tot-eze	waṇyān	aske
հայր-ով	սեռնվեց	նա (հայր եառես գնա)

Նույն բանը ունի նաև սիբեթական սիկիմ-բհուտիա լեզուն։

Կովկասյան լեզուներից օրինակներ. չեչեներեն.—

das	kʿantana	žayna	yeçca
հայրով	որդուն	գիրք	գնեալ
(հայրը որդու համար գիրք գնեց)			
kʿanta	dena	gazet	döšu
որդվով	հորը	լրագիր	կարդացվում է (որդին հորը լրագիր է կարդում)
beriša	döšu	noxčiŋ	abaf
մանուկներով	կարդացվի	չեչեներեն	այբբենարան

(մանուկները չեչեներեն այբբենարան են կարդում)։

23) essif (փոխանակական). ցույց է տալիս «փոխարեն, մի բանի տեղ, իբր, պես». օր. «իբր աշակերտ»։

24) factitif (վերածական). ցույց է տալիս «այն, որին վերածվում է». ինչ. հյ. փեսացու, շապկացու. կոչվում է նաև translativ. գտնվում է վեպսերեներում և ուրիշ լեզուներում։

25) genitif (սեռական)

historique տես ergatif

26) identif (նմանական). ցույց է տալիս՝ նույն կամ նման. գտնվում է հիպերբորյան յուկագիր լեզվի մեջ. նաև մորդվինները նշում, որ ուսումնասիրողը (Евсевьев) կոչում է translatif կամ transformatif. ինչ. ինչի՞ նման. խոզի նման մի ուտիր. կարիք ունի կոպեկի գույնը յուղ դարձավ։ Կոչվում է գործյալ équatif կամ modale և ցույց է տալիս «պես, ձևով, կերպով» և

կամ նաև՝ «համեմատելով», ինչպես ունի հիպերբորյան յուկագիր լեզուն (տես և № 14)։

27) illatif (նախդրիվ հայցական). սովորաբար ցույց է տալիս գնալ մի անձ կամ գնալ մի տեղ, ուր ուղղվում է ենթադրվում է ֆիննական լեզուների մեջ. կա նաև չեչեներեն, որի ուսումնասիրողը (Мациев) կոչում է обращающий падеж և օրինակ է տալիս «Գու նայիր քո հոր. Կոպեկացիան գնալ սոցիալիզմ տանող ճանապարհն է»։ Բայց կա նաև՝ գնալ ներսը թափանցում։

28) inessif (միջական). ցույց է տալիս մի բանի մեջ, ներսում, ներգոյականն է։

29) instrumental (գործիական). գործիականը երկու տեսակ ունի Ավստրալիայի կամիլարոյ լեզվում. առաջինն այն է, երբ առարկան կանգուն է և շարժման մեջ չէ. այսպիսի գործիականը կազմվում է -kunda մասնիկով։ Երկրորդը այն է, երբ առարկան շարժման մեջ է. կազմվում է -kale մասնիկով։ Օր. mullion-kunda «արծիվով (կանգ առած) և mullion-kale արծիվով (ի շարժման)։

30) intentionnel (նպատակական). ցույց է տալիս նպատակը, որին դիմում է. օր. գնում եմ խոսի. գործածական է գրություններնի մեջ։

latif տես allatif

31) locatif (ներգոյական). ցույց է տալիս այն տեղը, որի մեջ գտնվում է մի բան։

Ներգոյականը ունենում է իր դանագան տեսակները. օր. աֆրիկյան սենա լեզվում, որ բանաոու ընտանիքին է պատկանում, երեք տեսակ ներգոյական կա, որոնք կազմվում են հետևյալ նախամասնիկներով. ku- ցույց է տալիս անորոշ մի տեղ, pa- ցույց է տալիս որոշ մի տեղ, mu- (m կամ n), ցույց է տալիս շատ որոշ մի տեղ։

32) médiatif (միջոցական). ցույց է տալիս այն, որի միջոցով կատարվում է գործողությունը. գործիականի մի տեսակն է, գտնվում է բառերենի մեջ։

modale տես identif

33) motif. ցույց է տալիս՝ մի բանի վրա։

narratif տես ergatif։

34) nominatif (ուղղական). ուղղականը զարմանալի կերպով երկու դանագանություն ունի Ավստրալիայի կամիլարոյ և տուբ-

բուբուլ լեզուների մեջ. առաջին տեսակը այն է, որ պարզապես առարկայի անունն է ներկայացնում. այսպիսի ուղղականը ոչ մի վերջավորություն չունի։ Երկրորդ տեսակը գործողություն կատարող անձն է (ենթական), որ կազմվում է նախորդի վրա ավելացնելով dū կամ du մասնիկը։ Հաճախ այս մասնիկը չեն դնում, որով երկու տեսակի ուղղականները նույնանում են։

Ամատալիայի նարրինյերի լեզվումն էլ ուղղականը ունի առանձին վերջավորություն. այսպես korn «մարդ» բառից՝

եզ. ուղ. korn-i երկ. ուղ. korn-ejn
հգ. ուղ. korn-ar (որ պատահաբար նման է հյ.-եր վերջավորության)։ Իսկ Ամատալիայի մուբունդի լեզվում ուղղականի վերջավորությունն է եզ.-po, երկ.-pakal, հգ. pa.

35) partitif (մասնական). ցույց է տալիս առարկայի մի մասը. հայերենի մեջ արտահայտվում է բացառականով. օր. ջրից խմեցի՞ր, կարկանդակից կեր՞ր, մսից վերցրի՞ր. առանձին հոլով է ֆիններենում։

36) potential (կարողական). գոնվում է կովկասյան լեզուների մեջ։

37) praeclusif. ցույց է տալիս՝ բացի այս ինչ բանից, օր. բացի տերևից ուրիշ բան չկար. գոնվում է դիրյներեն լեզվում։

38) prolatif. ցույց է տալիս՝ մի բանի երկարությամբ. առանձին հոլով է և գոնվում է ֆիններենում, ինչպես նաև մորդվիներենում, լապերենում, վոտյակերենում, սուոդուսերենում և մոնղոլական դագուր բարբառում։ Ռուսերեն կոչվում է продолжительный.

39) similatif (նմանական). ցույց է տալիս՝ մի առարկայի հետ համեմատելով նրա չափ լինելը, գոնվում է իբր առանձին հոլով կովկասյան լակերեն լեզվի մեջ. ինչ. varanik'sa «ուղտի չափ (մեծ)», adaminanuk'sa «մարդու չափ (խելոք)», aslanuk'una չափ (մեծ)», malayikkunda «հրեշտակի չափ (գեղեցիկ)».— քան իմաստով նույն կամ նման է identif-ի հետ, բայց առանձին հոլով է, քան որում Դիսը էջ 219-ում առանձին հիշում է identif հոլովը, էջ 241-ում՝ similatif հոլովը։

40) prosecutif. ցույց է տալիս՝ մի տեղի երկարությամբ կամ միջով. ինչ. անտառով թափառում է, դաշտով գնում է և այլն։ Գոնվում է ֆիննական դիրյներեն լեզվի մեջ (տես նաև prolatif).

sociatif տես comitatif.

41) subessif (ներքևական). ցույց է տալիս՝ մի բանի տակ. գոյություն ունի կովկասյան լեզուների մեջ։

42) sublatif. ցույց է տալիս՝ դեպի մի բանի վրա (շարժում). գոյություն ունի հունգարերենում։

43) superessif. որ ցույց է տալիս՝ մի բանի վրա՝ դպպարման դադարվարով, հակառակ նախորդին, որ ցույց է տալիս շարժում. գանում ենք հունգարերենում և վրացերենում. օր վրաց. սախլզեզ «տան վրա»։

44) temporalis (ժամանակական). ցույց է տալիս՝ «միջոցին, այն ժամանակը». գոյություն ունի հունգարերենում և վոտյակերենում. օր. «աքլորը երգելիս մեր կացա»։ Կա նաև հիպերբորյան յուկագիր լեզվի մեջ և ցույց է տալիս իսկական ժամանակը. ինչ. ցերեկը, առավոտյան, երեկոյան. կազմվում է me մասնիկով. ինչ. yûole «երեկո», yúole-me «երեկոյան», ogóye «առավոտ», ogóy-me «առավոտյան»։

45) terminatif (վերջական). ցույց է տալիս՝ «մինչև, ց, այս ինչ տեղը». գոյություն ունի հունգարերենում, վիրյներենում, սիբիրյան այմարա լեզվում և ցույց է տալիս գործի վերջը։

46) transitif (անցողական). ցույց է տալիս՝ «վրայով, միջով». գոնվում է Գերսի առնաս իմի կամ կեշուա լեզվում։

47) vialis. ցույց է տալիս՝ շարժում մի մակերեսի վրա կամ շուրջը և կամ միջով. գոնվում է հիպերբորյան յուկագիր լեզվում և կազմվում է -gen մասնիկով. այս էլ՝ ձևացած է ներգոյականի -ge մասնիկից։

transformatif, translatif, unitif } տես identif և factitif

տես comitatif և sociatif

48) vocatif (կոչական)։

Բայց այս բոլորով չի վերջանում հոլովների ցանկը. կան կանոնական հոլովներ էլ. օր. սլանելենում կա մի ուրիշ հոլով, որ նշանակում է «միջով, վրայով» ինչ. «անցա ջրով, կամրջով, սարով», կազմվում է -k'a մասնիկով. այսպես՝ lack'a «ջրով», t'anayk'a «սարով», bogk'a «կամրջով». նույն հոլովը կա նաև կարաբուլինեերեն լեզվում։

Կարաբուլինեերեն լեզվում կան դարձյալ «բացի» և «մասին» նշանակող հոլովները։

Աբխազերենում կան մի խումբ հոլովներ, որոնք համապատասխանում են մեր «տակը», «մեջը», «մոտը կամ մեջը կամ վրա» (-qnə), «դեպի», «առջևը», «հետը» նախադրություններին։ Այս բոլորը մասնիկների կամ վերջավորությունների ձևով կցվում են գոյականին։

Հիշենք վերջապես ներգոյականի այն զանազան տեսակները, որ տեսանք հյուս. կովկասյան լեզուների մեջ (§ 30)։

Շահումյան, Грам. агул. яз. (էջ 25. — շար.) վերագրելով ագուլերենին 28 հոլով, ասելիս է մի քանի նոր անուններ էլ, որ դնում եմ այստեղ.

adhaesivus. ցույց է տալիս մոտիկություն, միացում, վերաբերություն.

postessivus «հետևը».

obessivus «վրան, տակը, ուղղահայաց դիրք»
diffusivus ցույց է տալիս՝ բաշխում, բաժանում,
adablativus «հեռացում, պատճառ»
postablativus «հետևից, համար»
subablativus «տակից, պատճառ»
exablativus «մի բանից»
inablativus «փակ տեղից հեռացում»
superablativus «վերևից շարժում, հեռացում, համեմատություն»
adallativus «մոտեցում դեպի մի բան»
postallativus «շարժում դեպի մի բանի հետևը»
suballativus «մոտեցում դեպի մի բանի տակը»
superallativus «մոտեցում թեք մակերևույթի վրայով»
collativus «պատասխ շարժում որևէ մեկի հետ»։

Հիշենք նաև հատկացման հոլովը, որ ունի հիմնաբոլյան նիմիլան կամ կորյակ լեզուն (քան Կոբռսակովի). ինչ. այսինչին կին առա. x-ին տեսուչ դրին կամ նշանակեցին։ Այսպիսի դեպքերում մենք դնում ենք ուղղական, որ է գրաբարում իրր նախադրվիվ հայկական։

Սրանցով կարող ենք եզրակացնել, որ հոլովների ընդհանուր գումարը զանազան լեզուների մեջ 70 է։

Բայց հոլովների թիվը մի լեզվի մեջ նրա համար զարգացման նշան չէ, այլ, ինչպես ակզբում ասացինք, ասպիսանում է նրա մաշիչ կամ վերլուծող հատկություններից։ Ասպա թե ոչ, լինչպես կարող էր, օրինակ, հունգարերենի պես հոլովաշատ մի լեզվի մեջ պահպանել այն սեռականը, որ նույնիսկ անհոլով չինարենը գիտե։

3. ՀՈԼՈՎՈՒՄԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՎՈՒՄ

Հոլովական տեսակետից հնդեվրոպական նախալեզուն գտնվում էր այն աստիճանի վրա, որի մեջ են հր. կովկասյան և բուրթ-թաթարական լեզուները։ Հնդեվրոպական նախալեզուն ուներ հետևյալ 8 հոլովները. ուղղական, կոչական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական։

Այս անունները գործածական են գիտության մեջ բոլորովին պատահար և նրանց կազմություն ու դասավորություն կախված է ոչ թե ձևի, այլ միայն նշանակության վրա։

Ըստ այսմ՝ տարբեր ձևի մասնիկներ դրվում են միևնույն անվան տակ. այսպես, es, os, s, syo սեռական են հավասարապես, ē, ō, bhi, mi գործիականի մասնիկ են հավասարապես։ Ի հակառակն, երբ միևնույն մասնիկը երկու տարբեր գործածություն ունի, երկու տարբեր հոլով է. այսպես, սեռականը և բացառականը՝ հնդեվրոպական նախալեզվի մեջ, և սեռական ու տրականը՝ կամ ուղղական ու հայցականը՝ հայերենի մեջ։

Թեև որոշ բառեր հնդեվրոպական նախալեզվի մեջ կարող են միացնել որոշ հոլով առանց որևէ վերջավորության, բայց ընդհանրապես հնդեվրոպական նախալեզվի հոլովումը կազմվում է զանազան վերջավորություններով, որոնց գործակցում են նաև ձայնդարձն ու տոնը։ Այս երեք տարրերի վրա կխոսենք առանձին բաժիններով։

Հնդեվրոպական նախալեզվի մեջ գոյական և ածական հնարկվում են միևնույն հոլովական օրենքներին։ Նմանապես բառի սեռը արժեք չունի, որովհետև երեք սեռերի համար էլ հոլովումը միևնույնն է, միայն բացառաբար չեզոք սեռի մեջ ուրիշություն կա։ Հոլովը տարբեր է արական-իգականի հոլովանիից։

Հոլովումը 3 սեռի է՝ համաձայն բառի բուն վերջավորության։ Առաջինը պարունակում է այն բուները, որոնք վերջանում են բաղաձայնով կամ ձայնորդով. այս վերջիններին կարելի են պատկանում նաև i, u ձայնավորները, որոնք y, w ձայնորդների փոփոխություններն են։

Երկրորդ խումբը պարունակում է ā(ē) հանգող բուները (որոնք մեծագույն մասամբ իգական են), իսկ երրորդը՝ e/o բուները (որոնք ընդհանրապես արական կամ չեզոք են)։

Համեմատական քերականության մեջ e/o բունները կոչվում են թեմավոր (thématique), իսկ որևէ բաղաձայնով, ձայնավորով կամ ā, i, u ձայնավորներով վերջացող բունները կոչվում են անթեմ (athématique)։

Հնդեվրոպական նախալեզվի հոլովական վերջավորությունները հետևյալներն են։

Եզակի

Ուղղականի վերջավորությունն է ·զերո կամ s. *զերո, այսինքն՝ առանց վերջավորության են* ā *բունները, և* r, n, s *հանգող բունները. իսկ* s *են առանում* e/o *բունները, բաղաձայնով կամ* i, u *ձայնավորներով հանգող բունները և բոլոր միավանկ բունները. օր.*

հնխ. *èk'wā «ձի», *սանս.* áçvā, *լտ.* equa,

հնխ. *k'wōn «շուն», *հն.* κύων, *սանս.* çuvā', *գոթ.* spô,

լիտ. šū *(նկատելի է, որ* n *բունները, ինչպես նաև* r *բունները լիտ. բառերի մի մասի մեջ ուղղականում պրկվում են իրենց ձայնավորների մի մասի մեջ նորմից. այս համեմատ լտ.* homō «մարդ», *սեռ.* hominis, *գոթ.* auhsa «եզ», *սեռ.* auhsins *և այլն)։*

Հնխ. *mātēr «մայր», *հն.* μάτηρ, *լտ.* māter, *հյ.* «մայրը», *բայց սանս.* mātā, *լիտ.* móte «կինն», *հալ.* mati *և այլն.*

Հնխ. *dusmenēs «չարամիտ» > *սանս.* durmanas, *հն.* δυσμενής

Հնխ. *wlqos «գայլ», *հն.* λύκος, *լտ.* lupus, *գոթ.* wulfs

(< *wulfa- z), *լիտ.* vilkas, *սանս.* vṛkas, *գնդ.* vəhr'kas *և այլն։*

Հնխ. *voks «ձայն», *լտ.* vāx, *գնդ.* vāxš, *սանս.* vāx[ṣ]. *հն.* ὄψ

Հնխ. *ovis «ոչխար», *լտ.* ovis, *լիթ.* avis, *սանս.* aviš

Հնխ. *swek'rú-s «սկեսուր», *սանս.* çvaçruš, *լտ.* socrus, *հ.* ակեսուր

Հնխ. *sūnus «որդի», *գոթ.* sunus, *լիտ.* sūnus, *սանս.* sūnuḥ

Հնխ. *g^{w}ōus «առվար», *սանս.* gāuḥ, *գնդ.* gəuš, *հյ.* կով, *հն.* βοῦς, *լտ.* bos *և այլն։*

Հիթ. antuḫšaš «մարդ», adama «ուսուկիք», ḫalkiš, «ցորեն», idaluš «հոռի», nebiš «երկինք», wāter «ջուր», paḫḫar, «հուր», mekiš «մեծ»։

Կոչականի վերջավորությունն է սովորաբար զերո, իսկ e/o *բունները դառնում են* a, *և* e/o *բունները դառնում են* e. *Օր. հնխ.* *mater «ով մայր», k'won «ով շուն», ék'wa «ով ձի», vlqe «ով գայլ», g^{w}ou «էյ կով», dusmenes «ով չարամիտ» *և այլն, համ-*

սեռակապա հն. λύκε, *լտ.* lupe, *հալ.* vlūče «ով գայլ», *սանս.* vṛ'ka, *լիտ.* vilkè *և այլն։ Բայց շատ լեզուների մեջ հաճախ ուղղականն է, որ գործածվում է իբր կոչական։*

Կոչականի մեջ շեշտը դրվում է առաջին վանկի վրա։

Հայցականի մասնիկն էր n, *որ ձայնավորներից հետո երևում էր իբրև սովորական բաղաձայն* n, *իսկ բաղաձայններից հետո դառնում էր ձայնավոր ը։ Ժառանգորդ լեզուների մեծ մասն, նրանց հետ նաև հիթիթերենի մեջ այս բաղաձայն* n *ջնջում է անխտիրա, իսկ արիական և իտալական լեզուների մեջ դառնում է* m, *քան որում այս լեզուների մեջ առաջնականը թույլ նշում ունի։*

Ձայնավոր ը դառնում է ըստ օրինի a, em *և այլն։ Օր.* vlqo-n «գայլ» > *սանս.* vṛkam, *գնդ.* vəhrkəm, *հն.* λύκον, *լտ.* lupum, *լիտ.* vil'ka, *հալ.* vlukŭ, *գոթ.* wulf.

*ek'wān-n «ձի», *սանս.* açvām, *լտ.* equam. *հն.* -αν, *լիտ.* *հալ.* -ą.

*bheront-n «կրող» > *հն.* φέροντα, *լտ.* ferentem, *սանս.* bhrantam.

sūnu-n «որդի» > *հպրսս.* sunun, *սանս.* sūnúm, *լիտ.* sūnų *հն.* -ύν, *լտ.* -um.

*kvon-ը «շուն» > *սնս.* çvanam

*māter-ը «մայր» > *սնս.* mātáram, *հն.* μητέρα, *լտ.* matrem, *լիտ.* materį

*nau-n «նավ» > *սանս.* nāvam, *հոմեր.* νῆα, *լտ.* nāvem,

*g^{w}ou-n, *որից սղմամբ՝* g^{w}ō-n «կով» > *սանս.* gam, *հն.* βων, *սմբր.* bum.

*rēi-n, *որից սղմամբ՝* rēn «հարստություն» > *լտ.* rem, *սանս.* rām։

Զեղոք սեռի մեջ ուղղականը, կոչականը և հայցականը նույն ձևն ունեին և այս հոլովը կազմվում էր բաղաձայնահանգ և i, u *բուներին համար զերո վերջավորությամբ, իսկ* o *բունների համար՝ հայցականի պես* on (om), *ինչ.*

հնխ. óqi «աչք», médhu «մեղր», nomn «անուն», yugón «լուծ»։

Մանրբ.— Ուզրո-ֆիննն. նախալեզվում էլ հյց. կազմվում էր m *մասնիկով, որ պահել են մինչև այժմ վոգուլ, լապ. ֆինիա* m *ձևով, ֆիննն.* n *ձևով, մորդվ.* ń *ձևով, լապ.* m, b, v, u

ձևերով, իսկ սմանց մեջ էլ խոպոտ ը-ի-վելով՝ հայցականը միացել է ուղղականի հետ՝ քե եզակիում, և քե հոգնակիում։

Սեռականի վերջավորություններն են es, os, s *(երեք տեսակի ձայնդարձներով)*, syo, so *(վերջին երկուսը* e/o *բունների համար), որոնք քուլր լեզուների մեջ երևում են հետևյալ ձևով.*

*mātres, matros, mātṛs *«մոր»*> *սանս.* matur, *լ.* mātris, *հլ.* matere, *լիտ.* moter´s.

*k´un-es, k´unos *«շուն»*> *սանս.* çuna, *գնդ.* sūnō, *լիտ.* šunes, *լ.* canis, *հն.* κύνός.

*sunous, sūnves, sūnvos *«որդուց»*>*սանս.* sūnoš, *գնդ.* hunaos, *լիտ.* sūnaus, *գոթ.* sunaus, *հլ.* synu.

*ék'vā-s *«ձիոյ»*>*սանս.*-ās, *հն.*-ās, *հլտ.*-ās, *գոթ.* -os, *լիտ.*-os.

*vḷqosyo *«գայլոյ»*>*սանս.* vṛ´ka-sya, *համեմ.* λύκοιο *հն.*-*առաս.* λύκου, *գոթ.* wulfis, *հրգ.* wolfos *(վերջին երկուսը ծագում են* *vḷqe-so *նախաձևից), իսկ լ.* lupī *ցույց է տալիս միայն* ī *հանգը, այսպես է նաև կելտականը. որոնք նոր կազմություններ են.*

*nebhes-es *«ամպի»*>*սանս.* nabḥasas, *հն.* νέφεος, *հլ.* nebese, *հինթեվրոպերենից օր.*

սեռ. antuhšaš	*մարդոյ*
ḥalkiyaš	*ցորենոյ*
idaluaš	*յոռի, պիղծ*
nebišaš	*երկնքի*
ḫūmandaš	*ամենայնի*
watenaš	*ջրոյ*
paḫḫuenaš	*հրոյ*

Սրանց վերջավորությունն է միշտ aš, *որ է հնխ.* os. *չունի* syo, so *ձևը։*

Տրականի վերջավորությունն է ei. *այս մասնիկը բազաձայնով ու ձայնորդով վերջացող բունների վրա ավելում էր անփոփոխ, իսկ* ā, o *հանգող բունների վրա՝ միանալով բունի վերջաձայն ձայնավորի հետ՝ դառնում էր* āi, ōi, *ինչ. հնխ .*nāvei *«նավու», *ék'uai *«ձիու», vḷqōi *«գայլի» և այլն։ Ժառանգորդ լեզուների մեջ այս* ei *պահված է հլտ.* ei *(դասական* ī*),* oսկ. ei, *սանս.* e *(որ է հին.** -ai), *գնդ.* e, ae, *հլ.* i, *հն., գերմ.* i *ձևերով.* -ai *պահված է սանս.* ai, *լիտ.* -ai, *հն.* -āi *(գրված* ᾳ*), գոթ.* ai.-ōi *դառնում*

է գնդ. āi, *հն.* ωι *(որ գրվում է* ῳ*), լիտ.* ui, *հլտ.* oi, *որ դասական շրջանում լինում է* o. *ինչ. հայր, տր. հօր, հնխ.* pātrēi> *սանս.* pitré, *հն.* πατρί, *լտ.* patri, *օսկ.* paterei, *հլ.* materi. *գայլ, տր. գայլոյ, գնդ.* vəhrkāi, *հն.* λύκωι *(գրվում է* λύκῳ*), լիտ.* vilkui, *հլտ.* lupoi, *լտ.* lupo *և այլն։*

Հինթեվրոպերենում տր. վերջավորությունն է i, *որ միանգամայն ներգոյականն է. ինչ.*

antuḫši	*մարդոյ, ի մարդ*
ḫalki	*ցորենին, ցորենում*
idalaui	*վատին, վատում*
nebiši	*երկնքին, երկնքում*
ḫumanti	*ամենքին, ամենքում*
weteni	*ջրին, ջրում*
paḫḫueni	*կրակին, կրակում*

Բացառականը առանձին ձև չունի հոլովման մեջ և նրա փոխարին սեռականն է, որ գործածվում է. այսպես է անբուն հիմք և ā հանգող բունների մեջ։ Միայն e/o *բուներն են, որ ունեն առանձին բացառականի ձև՝ եզակիի մեջ. կազմվում է* ōd *(ոմն) վերջավորությամբ. ինչ. *vḷqōd *«ի գայլոյ». ժառանգ լեզուների մեջ բացառականի այս ձևը պահված է հինթեվր.* az, *վեդ.* āt, *գնդ.* āt, *հլտ.* ōd *ձևով. ինչ. սանս.* vṛkād(āt), *գնդ.* vəhrkaṭ, *հլտ.* lupod. *դասական լատիներենի մեջ այս* ōd *դարձավ* o, *ինչպես պիտի նաև լիտ.* o, *հլ.* a (vilka, vlūka *«ի գայլոյ»*) *և հն.* ω *(պահված միայն մակրայների մեջ)։*

Հինթեվր. antuḫšaz *«մարդուց»,* ḫalkiyaz *«ցորենից»,* idaluaz *«վատից»,* nebišaz *«երկնքից»,* tannaz *«երկրից»,* ḫumandaz *«յամենայնէ»,* paḫḫuenaz *«ի հրոյ»։*

Ծան.— Ուգրո-ֆիննական նախալեզվում ևս բց. կազմվում է t *մասնիկով, որ հիմա մակրայական գործածություն ունի.*

լտ. allē *«արևմուտք»,* allēt *«արևմուտքից»*
մորդվ. oš *«քաղաք»,* ošta *«քաղաքից»։*

Պարթիական հոլովի վերջավորություններն են e, ō, bhi, mi. *Թե այս վերջավորությունները ինչ պարագաների մեջ էին գործածվում, հայտնի չէ, որովհետև ժառանգ լեզուները իրար անհամաձայն պահում են մեկ այս, մեկ այն ձևը. այսպես՝ ուներ, սանս.* pitrā, *լտ.* patre, *որոնք ցույց են տալիս հնխ.* *pa-

tre «հարբ», — սանս. vṛkā, գնդ. vəhrka, լիտ. vilkù, որոնք ցույց են տալիս հնխ. *vl̥qō.-bhi և mi իրար համապատասխան վերջավորությունները պահված են փ,փւ ձևով համեմատական հոլովի մեջ (իբրև բացառիկ մնացորդներ). ինչպես հն. ναῦφι(ν) «նավ», θεοφιν «աստուածոյ», ἵφι «ուժով». սրանց մեջ փ(ւ) ունի ևզ. և հգ. բց., ներգ., տր. և գործ. գործածության՝ անորոշ կերպով. բայց կանոնավոր կերպով գործիական պահված է հայերենում և բալթիկ-սլավականում. ինչ. գայլով, սրտիւ, մեծաւ, հարբ, լիտ. sūnu-mïs = հսլ. synū-mi «որդուվ», հսլ. vlūko-mī «գայլով». սրանցից դուրս գտնում ենք նաև արիական, իտալական, գերմանական և կելտական ընտանիքներում, բայց բոլորն էլ միայն հոգնակիի մեջ:

Հիթիթերենում գրծ. նշանն է t. ինչ. antuḫšit «մարդով», adennit «ուտելիքով», ḫalkit «ցորենով», taknit «երկրով», wetenit «ջրով», paḫḫuenit «հրով»:

Գործիականի այսպիսի դանազանակերպ կազմություն և վերջավորության բացակայությունը արևմտյան աշխարհում ցույց են տալիս, որ այս հոլովը դեռ կազմակերպված չէր հնդեվրոպական միասնության ժամանակ և գործիականը ավելի նոր ժամանակի գործ է:

Ներգոյականի վերջավորությունն է i. կցվում է բազմաձայնահանգ բուների վրա և կարող է նաև վերածվել դերոյի. ահա բուների վրա գտնում է ei, oi, ā բուների վրա՝ ai, և i, u բուների վրա՝ ēi, ōi, ēu, ōu. ժառանգ լեզուներն ունեն առաջին պարագային i կամ դերս, իսկ երկրորդ պարագային՝ սանս. գնդ. ē, հսլ. ē, լիտ. ē̆, հն. οι, ει, լ. ī. ինչ. վեդ. murdhán-i, murdhán հսլ. ē, լիտ. ē̆, հն. οι, ει, լ. ī. ինչ. վեդ. mūrdhán-i, mūrdhán «գլխի վրա», kárman «գործումբ», սանս. mātári, հն. μητέρι, լ. Karthagini, domi «ի տան», սանս. vṛ'ke, գնդ. vəhrke, հսլ. vlūce = հնխ. vl̥qoi, հն. οἴκοι, οἴκει «ի տան», լիտ. namē̆ «ի տան», հնխ. ek'wāi «ի ձի», լ. Romae «ի Հռոմ» և այլն:

Կամիսաբերենում գործիականը նույնանում է սրտականի հետ և ունի միշտ i:

Երկակի

Երկակիի համար ունենք միայն 3 ձև. առաջինն է ուղղական-կոչականհայցական. երկրորդն է սեռական-ներգոյական և երրորդը՝ սրտական-բացառական-գործիական:

Ուղ.-կոչ.-հյց. հոլովը կազմվում էր. բազմաձայնահանգ բուները՝ e վերջավորության, a բուները՝ ai վերջավորության, o, i, u բուները՝ իրենց բուների ձայնավորը երկարելով. ինչ.

Հնխ. *pətere «հարբ երկու», k'wone «շուներ երկու», mātére «մարբ երկու», որոնց ժառանգներն են՝ հն. πατέρε, μητέρε, κύνε, սանս. pitárā և այլն:

Հնխ. *vl̥qō «գայլք երկու» > հն. λύκω, սանս. vṛ'kā, հսլ. vlūka, լ. lupō, լիթ. vilkú.

Հնխ. ovī «ոչխարք երկու», հմմտ. սանս. áhī «օձք երկու», հսլ. nošti «գիշերք երկու», լիտ. nakti.

Հնխ. sūnū «որդիք երկու» > սանս. sūnū', հսլ. syny, լիտ. sū'nu (որ է *sū'nū):

Հնխ. ék'uai «ձիք երկու» > սանս. açve. Նույն-ai վերջավորությունը գտանում է՝ սանս. գնդ. e, լիտ. i, հսլ. ē.

Ձևոք սեռի նույն հոլովի վերջավորություններն էլ ī, ինչպես ցույց են տալիս սանս. nā'man-ī «անուանք երկու» = հսլ. jimen-i, գնդ. vi-saiti = լ. vī-gint-i «քսան» և այլն:

Սեռական-ներգոյականի վերջավորությունն է սանս. -oh և հսլ. u (լիտ. au, aus), որոնք տալիս են հնխ. -eus կամ -ous.

Տրական-բացառական-գործիականի վերջավորությունը եզակի գործիականի պես անորոշ է. ցեղակից լեզուներից սանսկրիթը ունի -bhyam մասնիկը, որի հետ նույն են գնդ. bya, հպրս. biyā, իսկ հսլ. ma, լիտ. m, ինչ. սանս. sūnū-bhyām = հսլ. synu-ma «երկուց որդուց», գնդ. aži-bya «երկուց իժից», լիտ. naktim «երկուց գիշերաց», naktim̃ «երկու գիշերովք», սանս. vṛ'kabhyām = գնդ. vəhrkaeibya, հսլ. vlьkoma «գայլոց երկուց»: Այս բոլորի վրայից նախատիպը վերականգնել դժվար է:

Հոգնակի

Ուղղական-կոչական հոլովի վերջավորությունն է es, որ այս ձևով երևում է բազմաձայնահանգ բուների վրա, իսկ a, o բուների վրա՝ այս ձայնավորների հետ միանալով՝ դառնում է ās, ōs. ինչ.

Հնխ. *mātéres «մարք», սանս. mātáras, հն. μητέρες, հլիտ. māteres, հսլ. māthir (<*māter-es):

Հնխ. k'vones «շուներք» > սանս. çvā'nas, հն. κύνες, լ. canes.

Հնխ. *sūnéves «որդիք» > սանս. sūnavas, հն.-ες, լ.-ūs (<*sūnewes), հսլ. synove (s գնկած).

Հնխ. oveyes> «օդիք», սանս. ávayas, լա. oves.

Հնխ. vl̥qos>սանս. vṛ'kās, գոթ. wulfos, դնդ. vəlrkâ (որ է*-as).

Հնխ. ék'uās> սանս. açvās, օսկ.-as, գոթ.-os, լիտ.-os.

Հնխ. nāves> սանս. nāvas, հն. νῆες, լա. nāvēs։

(Հետագայում ժառանգ լեզուներից շատերի մեջ հգ. ուղ. -os վերջավորությունը փոխանակվեց oi ձևով, որ ցուցական դերանուններից ածականներին անցնելով, այնտեղից էլ գոյական-ներին հասավ. ինչ. հն. λύκοι, լա. lupi, հալ. vlīci, գերմ. գիս միայն ածականների մեջ՝ blind-ai «կույրք» և այլն)։

Ձևաբ սեռի մեջ հոգնակի ուղղական-կոչական-հայցական հոլովը իրապես հոգնակի չէր, այլ հավաքական ձևի եղակի ուղղական հոլովն էր, որ կազմվում էր -ā մասնիկով, և իրրև ā բուն ուղղականի մեջ որևէ վերջավորություն չէր առանձնում. ինչ. *հնխ. yuga «լուծեր»> վեդ. yugā, գոթ. ǰuka, հալ. jiga, հն. ζυγά, լա. iugā և այլն։

Հիթիթ. antuḫšeš «մարդիկ», ḫalkeš «ցորեններ», idalaweš «վատեր», ḫumanteš «բոլորք»...որանք առաջանում են հնխ. -ēs կամ -ēyes ձևերից։

Հայցական հոլովի վերջավորությունն է -ns կամ -n̥s. այս վերջինը պահված է ժառանգ լեզուների մեջ՝ սանս. -as, հն. -ας, լատ. -es, (իսկ՝ ումբր. ſ), գոթ. -uns, լիտ. -is ձևերով։ Նույնիսկ նախալեզվյան շրջանին՝ ā բուները, որոնք հայցականի մեջ առ-ձին էին āns, երկրաբրառի հայնորդը կորցնելով դարձան ās։ որ-

Հնխ. *mātr̥ns կամ mātér̥ns «մարս»> հն. μητέρας, լա. mātres, լիտ. móteris, հալ. materi

Հնխ. *k'un̥s կամ k'von̥s «շուներս»> սանս. çúnas, հն. κύνας, հթոչ. cona, լա. canēs, հպրուս.-ins, լիտ. šunis.

Հնխ. *vl̥kōns «գայլս»> սանս. vṛkān կամ vṛkāṃç-, դնդ. vəhrkąs, հն. λύκονς, որ հետո եղավ λύκους, λύκος, լա. lúpos, գոթ. wulfans, հպրուս. -ans, հալ. vlūky, լիտ. vilkús.

Հնխ. *ek'uās «ձիս»> սանս. àçvās, դնդ. å, լա. equas, գոթ. -vs, լիտ. -as, հն.-ας, հետո՝-as.

Հնխ. *ovins «գոչխարս»> սանս ávīn, համեմ. ōις, լա. ovīs, գոթ.-ins, լիտ.-is, հալ.- i, հպրուս.- ins, կրետ.- ins.

Հնխ. *sūnuns «որդիս»> կրետ. υἱόνς, լա.- ūs, գոթ. sunjus, լիտ. súnus, հալ. syny.

Հնխ. nāv̥ns «նաւս»> սանս. nāvus, հն. ναῦς, լա. nāvēs,

Հիթիթ. antuḫšuš «մարդիկ», ḫalkiuš «ցորեանս», ḫūmandāš

duš «ամենեսին», որանք պետք է հասկանալ -ūš, որի նախա-ձևն է հնխ. -ons.

Սեռականի վերջավորությունն է -ōm կամ-ōn, որ գործածական էր բոլոր բուների համար (կա նաև կարճ o ձևը). ինչ.

Հնխ. *k'unṓ'm «շանց»> սանս. çúnām, հն. κυνών, դնդ. sunąm, հլիտ. šuni˜, հթոչ. conn, լա. canum.

Հնխ.* mātrōm «մարց»> սանս. mātṛ(n̥)ā'm, դնդ. mathrąm, լա. matrum, հալ. materū.

Հնխ. *vl̥qōm «գայլս»> վեդ. vṛ'kām, հն. λύκων, գոթ. wulfe, դպ. wolfo, լիտ. vilkų̃, հալ. vlūkū.

Հնխ. *ovi̯ōm «օգնաց»> հն. ὀΐων, լա. ovium, լիտ.-iu˜, հալ. lyi, գոթ.-ye.

Հնխ. *sūnvōm «որդուց»> հն. ων, լա. uum, լիթ. sunu˜, հալ. synovū, (գոթ. suniwe), սանս. sūnu(n)am.

Հնխ. *nāvōm «նաուց»> սանս. nāvām, հն. ναῶν.

ā բուների վրա անշուշտ նույն -om վերջավորությունը կցված-վելով գարձավ -ām, որ և պահված է լիտ. ų˜, գոթ. o ձևերի մեջ. սակայն լեզուներից շատերը հնարել են նորանոր ձևեր. ինչ. սանս.-anam, հն. ᾱων, ῶν. լա.-arum(*āsōm), օսկ.-azum և այլն։

Այսպես և հիթիթ.-aš, որ հասուկ է նաև արականին. ինչ. antuḫšaš «մարդոց», ḫūmandāš «բոլորից»... որ եզ. սեռ. վերջավորության երկարն է (a գարձած ā) բուս ամանց. Բենվենիստը (BSL. հա. 34, էջ 27) մերժում է այս բացատրությունը և կարծում է, թե երկակիի վերջավորությունն է (os), որ անցել է հոգնակիին, ինչպես եղել է և սերբերենում։

Փիտուններն այժմ հասկանալի են համարում հոգնակի սեռականը իբրև հոլով։ Ձանազան լեզուների մեջ հգ. սեռականի մասնիկն է on և ոչ թե -ōn (այսպես հալ. խոլ. գերմ.), հիթիթ. էլ յունի -on. նկատենք, որ այս վերջավորությունը կցվում է ոչ թե բուներին, այլ արմատին, որից հետևում է, թե նա մասնիկ է և ոչ թե վերջավորություն։ Ուրիշ խոսքով հնդեվրոպական քերականության հգ. սեռ. հոլով չուներ նախապես, այլ նրա տեղ գործ էր ածում բարդություն, ածանցական մի ձև կամ բացառական հոլովը (ինչպես եզակիում, ուր սեռականը մեծ մասամբ նույն է բացառականի հետ)։ Ավելի ուշ մասնիկը կպավ արմատին և այս ածանցը համարվեց հոլովական ձև (BSL. 36, № 107, էջ XX)։

Տրական-բացառական հոլովի վերջավորությունը եզակի գործիականի և երկակի սրական-բացառական-գործիականի պես անորոշ է և ընդհանրապես վերջինիս նման։ Ցեղակից լեզուների մեջ գտնում ենք՝ սանս. bhyas, գնդ. byō, լտ. bos, bus, գալլ. bo, հլիս. mys, հպրուս. mans, հալ. mù, որոնց բոլորի համեմատությունից երևում է, որ հնդեվրոպական նախալեզվյան մասնիկն էր bh կամ m ձայնով սկսող և s հանգող մի ձև՝ անորոշ ձայնավորով։ Ահա օրինակներ այս լեզուներից.

գայլոց — սանս. vṛ́kebhyas, հլիս. vilkamus, հալ. vlūĸomu,
ձիոց — սանս. açvabhyas, լտ. equābus
ոչխաց — սանս. avibhyas, լտ. ovibus
որդւոց — սանս. sūnúbhyas, հլիս. sūnumus, հալ. synumu
շանց — սանս. çvabhyas, հլիս. szunimus
մարց — սանս. mātṛbhyas, գալլ. matrebo, հլիս. moterimas, հալ. materĭmu
նաւուց — սանս. nāubhyás, լտ. nāvibus։

Գործիական հոլովի վերջավորությունն է bhīs, բայց e/o բուները ունեն ōis.— առաջինը ժառանգների մեջ երևում է հնաեյալ ձևերով. սանս. bhīs, հպրս. biš, գնդ. biš, հիոլ. b, լիս. mis, հալ. mī, գերմ. mīz։

Երկրորդը թեև արիական լեզուների մեջ պահում է իր երկար ձայնավորը (սանս. aīs, գնդ. āiš), բայց մյուսների մեջ կարճանալով դառնում է հն. oīs, լիս. aīs, լտ. īs.

Հնխ. ék'uābhis «ձիովք»>սանս. açvā́bhis,
Հնխ. sunubhīs, «որդւովք>սանս. sūnúbhīs լիս. sūnumis, հալ. synūmi, գոթ. sunum
Հնխ. vl̥'gōis «գայլովք»>վեդ. vṛ'kāis, գնդ. vəhrkāiš, լիս. vilkaīs, հալ. vlĭky, լտ. lupīs, հն. λύκοις.
Հնխ. K'vn̥bhīs «շամբք»>սանս. sváhhīs, լիթ. szunimis.
Հնխ. mātrbhīs «մարբք»>սանս. mātrbhis, լիս. moterimis, հալ. materĭmi.
Հնխ. nāubhīs «նաւուք»>սանս. nāubhīs, հն. ναῦφι.

Ներգոյական հոլովի վերջավորությունը թվում է, թե նախապես պարզ s էր, որ e/o բուների մոտ լինում էր -ois. այնուհետև նույն բաղաձայնի վրա ավելացավ u կամ i մասնիկը, որով ներգոյականի վերջավորությունները եղան su, si, oisu, oisi. սրանցից u հանգող ձևերը հատուկ են արիական և բալթիկ-սլավոնա-

կան բնաանիքներին, իսկ i հանգող ձևերը միմիայն հունական, մյուսները ընդհ. են այս հոլովը. օր.

Հնխ. mātṛs, mātṛsu, mātṛsi>սանս. matṛ́šu, հն. μητράσι, [illegible]xu̯, հլիս.-su.

Հնխ. k'vn̥s, kvn̥su, k'vnsi>սանս. çvásu.

Հնխ. ek'vās,>ekvāsiu, ek'vāsi>սանս. ąçvāsu, հն.,-ασι, լիս. -mis, հալ.-achu̯.

Հնխ. vl̥qois, vl̥qoisu, vl̥qoisi>սանս. vṛ'kšu, գնդ. vəhrkaēšu, հալ. vlūkexu̯, հնխ. λύκοισι, լտ. lupīs, լիս. vilkûsu.

Երբև ամփոփում՝ դնենք այստեղ հնդեվրոպական երեք բուների հոլովման համառոտյց տախտակը.

Եզակի

Ա. mātē'r	ék'wā	vl̥'qos
Ե. mā'ter	ék'wa	vl̥'qe
Հ. materṇ	ék'wān	vl̥'qon
Ա. matṛ's,-trés,-trōs	ékwas	vl̥'qosyo
Տ. mātreĭ	ék'wāi	vl̥'qōi
Բ. mātrès,-ōs-tr's	ék'was	vl̥'qōd
Գ. mātrē?	ek'wābhi?	vl̥'qō, vl̥qom.?
Ն. mātéri	ék'wāi	vl̥'qoi

Երկակի

Ա. Կ. Հ. mātēre	ék'wai	vl̥'qō
Ա. Ն. mātèreus?	ék'waus?	vl̥'qous?
Տ. Բ. Գ. ?	?	?

Հոգնակի

Ա. Կ. mātères	ék'wās	vl̥'qōs
Հ. mātrns	ék'wās	vl̥'qōns
Ա. mātrō'm	ék'wam	ul̥'qōm
Տ. Բ. mātr'bh-s	ék'wābh-s	vl̥'qobh-s
Գ. mātrbhis	ęk'wābhīs	vl̥'qois
Ն. mātṛsu	ek'wasu	vl̥'qois

Դնում եմ այստեղ թոխարներենի հոլովումը. թոխարներենը ունի 8 հոլով. ուղ., կոչ., սեռ., տր., բցա., գրծ., ընկերական և ներգ-

Ուզ. վերջանում է ամեն տեսակ ձայնավորով.

Սեռ. կա 6 մասնիկ. ap, yap, s, is, es, i, c, որոնցից ամենատարածականն է -is.

Հգ. ուզ. ունի զանազան վերջավորություններ. ինչ. ap, am, ā, u, antu, in˜, an˜, i.

Գործ.	*Քն եզ. և Քն հգ.*				yo
Ընկ.	»	»	»	»	as′s′āl
Տր.	»	»	»	»	ac
Բց.	»	»	»	»	as
Ներգ.	»	»	»	»	am
					(իմա an*)*

Զարմանալի է, որ հոլովներից 5 նույն են Քն եզ. և Քն հոգնակի։

Մեյեն (MSL *20, 126*) *համառոտում է, Քն հնխ. երկ. ներգ. վերջավորվում է* -u, *չկա ծայրին* -s.

Նույնը ընդունում է Բրուգմանը։

Զգիտեմ միայն, Քն սեռականն էլ փոխված է. Քվում է, բուռ խս, Քն սեռականը eus *էր, ներգ.* eu, *հետո միացան։*

4. ՁԱՅՆԴԱՐՁԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ՄԵՋ

Միայն վերջավորությունները չէին, որ հնդեվրոպական նախալեզվի մեջ որոշում էին հոլովները, այլ, նրանց հետ զուգընթացաբար, կար նաև ձայնդարձը։

Ձայնդարձի երևույթը հայտնի է մեզ. դա ձայնավորի երանգի փոփոխություն է։

Արդի կենդանի լեզուների մեջ հոլովական ձայնդարձի շատ լավ օրինակ է տալիս ոչ-հնդեվրոպական մի լեզու, կովկասյան չեչեն լեզուն, որի մեջ գոյականը ամբողջ հոլովման մեջ շարունակ փոխում է իր կերպարանքը, օր.

t'ur	«ծուռ»,	սեռ.	t'üirin,	հգ.	t'arraš
sai	«եղբայր»,	սեռ.	sēn,	հգ.	siēš

և որովհետև այս փոփոխությունները, ինչպես օրինակները ցույց տվին, կանոնավոր չեն, յուրաքանչյուր բառի հոլովումը զարմ-

նում են անկանոն, որով չեչեներենը ամենադժվար լեզուներից մեկն է լինում։

Նույն դրությամբ է նաև կովկասյան ավարերեն լեզուն, ուր բառը հոլովման ժամանակ ամբողջ է փոխվում, որ այլևս անճանաչելի է դառնում. օր.

betèr «գլուխ»,	պատմողական՝	botròca	հգ. bútrul
emèn «հայր»,	»	insuca	» umúmul

Հնդեվրոպական նախալեզվի ձայնդարձը հոլովման մեջ շատ ավելի պարզ ձև ուներ։

Նախալեզվի այս վիճակը հիշեցնում է մեզ օր. պատր բառի հոլովումը՝ հունարենի մեջ.

Եզ.

Ա.	πατήρ
Կ.	πάτερ
Ս.	πατέρος, πατρος
Տ.	πατέρι, πατρί
Հ.	πατέρα

Հոգն.

Ա.	πατέρες
Տ.	πατράσι

Նույնպես և՝

Ա.	ἀπατωρ «անհայր»
	ἀπάτορος
	ἀπάτορα

Նույնպես է նաև հայերենը, ուր ունենք ուզ. հայր, սեռ. հօր, հգ. հարք.

Ո՛չ մի լեզվի մեջ պահված չէ հնդեվրոպական հոլովման ձայնդարձի հարատած պատկերը. հունարենը Քեև պահում է ձայնավորների երանգը, բայց ջնջել է հոլովներից երեքը և ձայնդարձների մի մասը. սանսկրիտը Քեև պահում է բոլոր հոլովները, բայց խառնում է ձայնավորների երանգը, e և o հավասարացնելով a. մյուս լեզուները ավելի են փոփոխած և ներկայացնում են միայն առանձին հետքեր, այնպես որ ոչ մի մեջտեղ չկա հնդեվրոպական հոլովման ձայնդարձի պատկերը ամբողջությամբ վերականգնելու։

Ընդհանուր սկզբունքը հետևյալն է. հոլովական վերջավորություններից առաջ գտնված ձայնավորը առանում է ձայնդարձի բոլոր երեք աստիճանները՝

e o 0 (զրո)

Դամ նրանց համապատասխան երկար ձևերը՝

ē ō 0 (զրո)

Այս փոփոխությունը տեղի է ունենում մանավանդ բազաձայնահանգ և i, u բուների մեջ. ā բուները գրեթե ապահա են ձայնդարձից, իսկ e/o բուները կարող են առանալ երբեմն e և երբեմն o. այսպես, օր. հյ. գրբ. հետ-ո-վ՝ ունի ո բուը, բայց այսուհետև, որովհետև ձևերի մեջ ցույց է տալիս e բուը: Բայց նույնիսկ բազաձայնահանգ բուների մեջ ամեն բան անխախտ և անպայման չի հպատակվում միևնույն ձևով ձայնդարձի. օր. ո հանգող բուների մեջ կան բառեր, որոնք հոլովման ժամանակ ներկայացնում են՝

Հգ. ուղ. en-es, եզ. ներգ. en-i, հգ. գրբ. n-bhis, իսկ ուրիշները՝

Հգ. ուղ. on-es, եզ. ներգ. en-i, հգ. գրբ. n-bhis. Իսկ -ոն ածանցիչ մասնիկով կազմված բառերը բնավ չեն ենթարկվում ձայնդարձի փոփոխություններին:

Լեզվաբանները քննելով այն բոլոր մանր ձայնական փոփոխությունները, որ ներկայացնում են այլևայլ լեզուներ հոլովման ժամանակ, երևան են հանել հնդեվրոպական նախալեզվի հոլովական ձայնդարձի գանագան հանգամանքները, որոնցից մենք այստեղ մեջ կբերենք միայն մի քանի կարևորները, համապատասխան նրանք, որ անհրաժեշտ են հայերենի հոլովական ձևերը մեկնելու համար:

1) N հանգող բուները, ինչպես քիչ առաջ հիշեցինք, հգ. ուղղականի մեջ երբեմն առանում էին en-es, երբեմն էլ on-es ձևը, մինչդեռ միշտ եզ. ներգ. լինում էր en-i և հգ. գրբ. n-bhis.

Ձևերի այս հակադրությունը պահում են դեռ գանագան լեզուներ, տմմ.

եզ. ուղ.	հգ. ուղ.	եզ. ներգ.	հգ. գրբ.
սնս. vṛṣa «արու»	vṛṣaṇ-as	vṛṣ-aṇ-i	vṛṣ-a-bhis
áçma «քար»	àçm-an-as	àçm-an-i	açm-a-bhis

որոնց համապատասխանում են՝

հն. ἄρσ-ην	ἄρσ-εν-ες	ἄρσ-εν-ι
ἄκμ-ων	ἄκμ-ον-ες	ἄκμ-ον-ι

(առաջին խմբի մեջ սանս. a ծագում է հնխ. e-ից, և սանս. ā ծագում է հնխ. o-ից, իսկ երկրորդ խմբի մեջ հն. ἄκμ-ον-ι կազմված է նմանողությամբ, փոխանակ՝ ακμ-εν-ι): Այսպես նաև գոթականի մեջ՝

	հգ. ուղ.	եզ. տր. ներգ.	հգ. ածա.
auhs-a «եզ»	auhs-an-s	auhs-in	auhs-n-e

Բայց բոլոր լեզուներից ավելի հայերենն է, որ n բուների ձայնդարձը պահում է կանոնավոր և կատարյալ կերպով. այսպես՝ ն հոլովման մեջ մի կոդմից ունենք՝

անձն	անձ-ին-ք	անձ-ին	անձ-ամ-բք
գառն	գառ-ին-ք	գառ-ին	գառ-ամ-բք

երկրորդ կոդմից՝

շարժուն	շարժմունք	շարժման	շարժմամբ

և երրորդ կոդմից՝

հարան	հարս-ունք	հարս-ին	հարս-ամ-բք
մաան	մաս-ունք	մաս-ին	մաս-ամ-բք:

Առաջինի մեջ ձայնդարձի երկու աստիճանները՝ ի, ա, երկրորդի մեջ՝ ու, ա, իսկ երրորդի մեջ բոլոր երեք աստիճանները՝ ի, ա, ու. որովհետև հնխ. e, o ձայները անդրականից առաջ վերածվում են հայերենի մեջ ի, ու, ուստի և վերոհիշյալ ձևերը ներկայացնում են հնխ. հգ. ուղ. en-es, on-es, եզ. ներգ. en-i և հգ. գրբ. n-bhis.

2) r հանգող բուները նույն հոլովներում ներկայացնում են մերթ o, e, 0 (զրո) և մերթ e, 0 (զրո) ձայնդարձները. ինչ. մի կոդմից՝ «քույր» բառի հոլովները.

	հգ. ուղ.	եզ. ներգ.	հգ. գրբ.
սանս.	svás-ar-as	svás-ar-i	svás-ṛ-bhis
լտ.	sor-or-es	լիտ. ses-er-yjé	

և մյուս կոդմից «մայր» բառի հոլովները՝

սանս.	māt-ár-as	māt-ar-i	mat-ṛ-bhis
հն.	μητ-έρ- ες	μητ-έρ-ι	

3) Երբ պարզ բառը ունի e ձայնավորը եզ. հյց. և հգ. ուղ. հոլովիներում, բարդության մեջ e դարձնում է հաճախ o, ինչ. հն. πατήρ, πατέρες, բայց ἀπάτωρ «աննայր», ἀπάτορες «աննարք»; սանս. pit-ár-as «հարք», բայց՝ tvát-pit-ar-as «որք դեպ ունին հայր», հն. φρέν-ς «միտք», բայց՝ ἄφρονες «անմիտք»: Այս օրինքը շատ լավ պահված է նաև հայերենի մեջ, ուր ունենք մի կողմից՝ անձն, անձին, անձինք, անձամբ
և մյուս կողմից, բարդության մեջ՝

միանձն, միանձին, միանձունք, միանձամբ.

Հայերենը հնության համար զերազանցում է նույնիսկ հունարենին նրանով, որ մինչդեռ հունարենը բարդության մեջ ընդհանրացրել է o ձայնը (այսպես՝ սեռ. ἄφρονος, տր. ἄφρονι), ընդհակառակը՝ հայերենը պահում է հգ. ուղ. ո, սեռ., տր. ի և այլն, այսինքն՝ o, e հակադրության:

է) Երբ հոլովական վերջավորությունն սկսվում է բաղաձայնով (նույնպես և բաղաձայն ձայնորդով), բառի վերջին ձայնավորը սառնում է սաորին սաոիճանի ձայնդարձ. ինչ. հն. φρήν «սիրտ, միտք», տր. φρα-σι.

πατήρ «հայր», տր. πατράσι, սանս. pitṛ-ṣu

սանս. sūnú-ṣu=հյ. synu-xu «յորդիս».

սանս. sūnu-bhis=հյ. synu-mi «որդւովք»

Այս է պատճառը, որ հայերենի մեջ էլ ն բառերը, թեև սուռականի մեջ ունեն ի, հգ. ուղ. ի, ո, բայց գործիականի մեջ սառնում են ու (հարսամբ, մատամբք), որ սաոչանում է հնխ. ṇ ձևից (-ամբ>ṇbhis): Ճիշտ ինչպես սանսկրիտի մեջ n բառերի հգ. գործիականի մեջ ունենք -a-bhis, ուր a ներկայացնում է ṇ.

Այս բոլոր փոփոխությունները պատկանում են հոլովական վերջավորություններից առաջ գտնված ձայնավորին, որովհետև նա է միայն, որ ենթարկվում է ձայնդարձի օրենքներին, բայց կան բառեր, որոնց մեջ ձայնդարձը ենթարկվում են նաև անվանական մասնիկը և այդ մասնիկից առաջ գտնված սաորը: Այս անկանոն բառերը թվով շատ չեն և պատկանում են գլխավորապես չեզոք սեռին. մենք կնշենք միայն մի երկու օրինակ. ինչ.

Հնխ. dōr, dor, der «ծառ, փայտ», սաորին ձայնդարձով dr, բառը eu, հավելյալ en մասնիկով,— լիտ. dervá, հյ. drevo,

հգ. drūva, սանս. dā'ru, սեռ. drú-n-as, հյ. ստան «ստանդի փայտ կոթ», հն. δόρυ, սեռ. δορ-ός, δρῦς (<drew-ə-):

Հնխ. cus, us, aus «ականջ», es ածականով, որի վրա ավելանում է նաև en ածականը, տիպ. հիոլ. au, o, սեռ. aue, հն. οὖς (<ousos), οὐ-ατος, երկակի զնդ. uš-i, հյլ. uxo (սեռ. ušese), երկ. uš-i. լիտ. aus-i, լտ. auris, aur-es, գոթ. auso, սեռ. aus-in-s, հյ. ակն-ի:

Նույնիսկ հնդեվրոպական նախալեզվի մեջ հետագայում ձայնդարձը, ինչպես ուրիշ պարագաներում, նույնպես և հոլովման մեջ սկսեց հետզհետե ջնջվել տեղի տալով ձայնավորի միօրինակության: Նույն երևույթը ավելի առաջ տարան ժառանգող լեզուները, յուրաքանչյուրը անկախաբար, ընդհանրացնելով մերթ այս և մերթ այն ձայնավորը միևնույն բառի ամբողջ հոլովման ընթացքում: Օրինակի համար *ped «ոտք» բառը հնդեվրոպական նախալեզվի մեջ հոլովվում էր հետևյալ ձևով.

եզ. ուղ. pōt-s	հգ. ուղ. pód-es
հյց. pōd- ṇ	
սեռ. ped e/o'-s	
ներգ. péd-i	

Անկանոնությունը վերացնելու համար լատինը ընդհանրացրեց ձայնավորը (pēs, pedis, pedem, pedes և այլն), հունարենը ընդհանրացրեց o ձայնավորը (ποῦς, ποδός, ποῦν, πο'δα, ποδῶν, ποσί և այլն), գոթականը ընդհանրացրեց ուղղականի o ձայնավորը (հյց. fotu, հգ. fotus, ուղ. fotus): Հունարենն նման է վարվել նաև հայերենը, որ ընդհանրացրել է o ձայնավորը (ոտք, ոտից, ոտիւք և այլն): Այսպիսի ընդհանրացումներով ամեն մի բառ հոլովում միօրինակ ձև ստացավ և ձայնդարձը ջնջվեց՝ թողնելով միայն աննշան հետքեր, որոնք յուրաքանչյուր նոր լեզվի մեջ հանդիպում են անկանոնության կամ բացառության:

5. ՏՈՆԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ՄԵՋ

Բացի վերջավորություններից և ձայնդարձից, հնդեվրոպական հոլովումը ուներ և մի երրորդ կարմ, որով որոշվում էին հոլովիները իրարից. այն է՝ տոնը կամ շեշտը: Հայերենի կամ գերմաներենի պես՝ բառերի հոլովման ժամանակ շեշտը միշտ միևնույն դիրքի մեջ չէր մնում հնդեվրոպական նախալեզվի մեջ,

այլ բառ հոլովի տեղափոխում էր, միայով մերթ բառի առաջին վանկի վրա, մերթ՝ վերջավորության նախորդող ձայնավորի վրա, և մերթ էլ՝ վերջավորության վրա։ Շեշտի այս զանազանությունն էր երբեմն որոշում, թե այս բառի ինչ ձև իսկապես ար հոլովն է ներկայացնում։

Հոլովման այս վիճակը նույնն է, ինչ որ հիմա ռուսերենի մեջ. ինչ. лицо́ «դեմք», սեռ. лица́, հգ. ուղ. ли́ца, կամ եզ. ուղ. голова́, հյց. го́лову, սեռ. головы, հգ. ուղ. го́ловы, գրծ. головами։ Սերբերենը նույնիսկ շեշտի կամ առնի տեսակն է զանազանում բառ հոլովման. օր. եզ. ուղ. žène, կոչ. ženo, հգ. սեռ. žèna «կին»։

Սակայն, ինչպես ձայնգարձը, նույնպես և ավելի ևս հնդեվրոպական նախալեզվի շեշտը վերականգնել աննպատակահարմար է։ Պատճառն այն է, որ ժառանգորդ լեզուներից շատերը տեղծել են հատուկ շեշտ, ամանք փոխադրելով արմատի վրա, ամանք վերջավանկի վրա, ուրիշներն էլ վերջընթեր կամ նախավերջին բեր վանկի վրա. այնպես որ նրանց վկայությունը ոչինչ չի տալիս վերականգնելու համար նախալեզվի շեշտը։ Միայն այն լեզուներն են կարևոր այս դեպքում, որ, ունենալով շարժական շեշտ, կարող էին ներկայացնել հնդեվրոպական նախավիճակը։ Այդ լեզուներն են վեդայական հնդկերենը, հունարենը, լիտվերենը, ռուսերենն ու սերբերենը։ Հնդկերենն ու հունարենը շատ անգամ գնում են բոլորովին համապատասխան ձևով, որպես՝ «ոտք» բառի հոլովման մեջ.

Եզ.	Ուղ.	pa't	πούς
	Հյց.	pa'd-am	πο'δ-α
	Սեռ. բց.	pad-ás	ποδ-ός
	Ներգ.	pad-i	ποδ-ί
Երկ.	Ուղ. հյց.	pa'd-ā	πόδ-ε
	Սեռ.	pad-ós	ποδ-οῖν
Հգ.	Ուղ.	pa'd-as	πο'δ-ες
	Հյց.	pad-ás	ποδ-άς
	Սեռ.	pad-ā'm	ποδ-ῶν
	Ներգ.	pat-sú	ποσ-σί

Բայց նույնիսկ այս համապատասխանությունը չի կարող ճիշտ պատկերը լինել հնդեվրոպական նախավիճակի, որովհետև առաջացած է երկու լեզուների անկախ մշակումից, որ ամեն

պատահարար նույն արդյունքը։ Նույնիսկ շարժական շեշտ ունեցող լեզուները առեղծել են շեշտի նորանոր օրենքներ, այսպես նաև արևելյան, լիտվաներենը, սլավական լեզուները, և մինչև անգամ վեդայական հնդկերենը։ Այնպես որ եթե կարելի է օրանցից մի ճիշտ եզրակացություն հանել, այդ այն է, որ հնդեվրոպական նախալեզվի հոլովման մեջ շեշտը շարժական էր, և խաղում էր կարևոր դեր, բայց ճշտել օրա երբուքյուններն՝ անհնար է։

6. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐԻՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱԳՈՒՄԸ

Հնդեվրոպական հոլովման մեջ հետևյալ նկատելի հանգամանքները կան.

1) Հոլովներից մի քանիսը իրար հետ նույն են. այսպես՝ կոչականը հաճախ ուղղականի հետ, եզ. բացառականը՝ սեռականի հետ, եզ. ներգոյականը՝ տրականի հետ, հոգնակի բացառականը՝ տրականի հետ, երկակիի մեջ՝ ուղղական-կոչական-հայցական, սեռական-ներգոյական և տրական-բացառական-գործիական նույնն են։ Սրանից պետք չէ հետևցնել, թե հնդեվրոպացոց մեջ հոլովական շփոթություն կա, որովհետև նման հոլովները շատ անգամ իրարից տարբերվում էին ուրիշ ձևով. այսպես՝ կոչականը ուղղականից իր շեշտով, բացառականը սեռականից տարբերվում էր նրանով, որ հոգնակիում այդ երկուսը բաժանվում էին իրարից, և այս անգամ բացառականը նույնանում էր տրականի հետ, բացի սրանից e/o բուների մեջ եզ. բացառականը բոլորովին տարբեր ձև ուներ, եզակի ներգոյականը տրականի հետ նույն էր, բայց ոչ միշտ, և բացի սրանից, երկակիի մեջ բաժանվում տրականից, նույնանում էր սեռականի հետ, իսկ հոգնակիի մեջ՝ բոլորովին առանձին ձև ուներ։ Այսպիսով, հոլովների անկախ գոյությունը հնդեվրոպացոց մեջ ըմբռնելի էր։

2) Արական և իգական սեռի ուղղական և հայցական հոլովները, թե եզակի և թե հոգնակի, բոլորովին տարբեր են իրարից, մինչդեռ չեզոք սեռի մեջ այդ երկու հոլովները նույն են։ Տարբերության մեծությունը պիտի սեռներ հատկապես դերանունների մեջ, ուր ունենք հատկապես ուղ. ego «ես», հյց. me, me «զիս», ուղ. so «սա», հյց. tom «զսա և այլն, մինչդեռ չեզոքն է ուղ.-հյց. tot «սա, դա»։ Այս երևույթը առաջանում է նրանից, որ չեզոք սեռի մեջ ուղղականի և հայցականի

շփոթություններ միշտ պատահած է, մինչդեռ չեզոք սեռի մեջ այդպիսի շփոթություն չի կարող ծագել։ Երբ առանք Պետրոսը ջարդեց Գողոսը կամ Պետրոսը ջարդեց լուծը, առաջինի մեջ հայտնի չէ, թե ո՛վ է ջարդողը և ո՛վ է ջարդվածը, ինչ երկրորդի մեջ շատ պարզ է, որ ջարդողը Պետրոսն է, ջարդվածը՝ լուծը։ Այս պատճառով, անա, լեզուն առեղծել է ընդհանուր սեռի հայցականի համար առանձին վերջավորություն, իսկ չեզոքը տարբերել անկարևոր է համարել։ Նույն հիման վրա կազմված է դանազան լեզուների մեջ ընդհանուր հայցականը, ինչպես նաև արևելյան հայերենի մեջ ընդհանուր և անշուշտ առարկաների հայցականի դանազանությունը. Պետրոսը ջարդեց Գողոսին, Պետրոսը ջարդեց լուծը։

Ուղղականը հայցականից դանազանելու նշանն է s, *որ ծառայում է նաև ընդհանուր սեռը (արական-իգական) դանազանելու անշունչից (չեզոք)։ Ուր.* matēr *չի առացել* s, *որովհետև հյց.* mātérn *արդեն ձևով շատ տարբեր էր.* -a *վերջացող բուները (ék'wa) ևս ուղղականում չեն առանում* s, *որովհետև այս բնի տակ չկա չեզոք բառ, որից հարկ լիներ դանազանել* s-*ով.— Նաև դերանունների ուղղականը չունի* s, *ինչպես պիտի սեռեինք, որովհետև հայցականը բոլորովին տարբեր է։ Ուրեմն ուղղականի վրա դրվում է միայն հայցականից դանազանելու համար, իսկ որ շփոթելու վտանգ չկա, դանազանելու էլ կարիք չի զգացվել։*

3) Յուրաքանչյուր հոլովի վերջավորությունը եզակիի մեջ տարբեր, երկակիի մեջ տարբեր և հոգնակիի մեջ տարբեր է. օր. սեռականի մասնիկն է՝ եզակիում -es, -s, *հոգնակիում* -ōm, *ներգոյականի մասնիկն է՝ եզակիում* -i, *հոգնակիում* -su *և այլն. և այս բոլորի մեջ որևէ կապակցություն չկա։ Միայն հայցականը, դործիականը և ներգոյականն է, որ մասամբ ցույց են տալիս նմանություն դանազան թվերի մեջ. այսպես, եթե եզ. հյց.* mātérn, ék'wan, vḷqon *և իգ. հյց.* mātṛns, ék'uas, vḷqōns *համեմատենք իրար հետ, կտեսնենք, որ վերջինները կազմված են առաջինները հյց. ձայնի հավելմամբ, որ անշուշտ հոգնակիի նշանն է։ Նույնպես՝ եզ. գործ.* -bhi, -ō *և հգ. գործ.* -bhis, ōis *դանազանվում են իրարից հոգնակիի* -s *նշանի հավելումով։ Վերջապես՝ եզ. ներգ.* vḷqoi, *և հգ. ներգ.* vḷqois *հայտնապես տարբերվում են միայն նրանով, որ վերջինս առացել է հոգնակերտ* s *մասնիկը։*

Այսպես է հոլովների կազմությունը հնդեվրոպական լեզուների մեջ։ Սակայն եթե համեմատության առնենք ուրիշ լեզուներ, կտեսնենք, որ եզակի և հոգնակի միևնույն հոլովական նշաններ ունեն ամեն տեղ. օր. ուղղ-ինֆինատիվ լեզվախմբի մեջ արականի նշանը՝ k, *հայցականի նշանը՝* m, *բացառականի նշանը՝* t, *և ներգոյականի նշանը՝* n *կցվում են ամեն տեսակ բառի՝ թե եզակի, թե երկակի, և թե հոգնակի թվերին։ Թուրքերեն լեզվի մեջ սեռ.* ən, in, *տր.* a, e, *բաց.* dan, den, *գրծ.* əla, ile *մասնիկները անփոփոխ կցվում են թե եզակիի, և թե հոգնակիի մեջ։ Արաբերենի մեջ ուղ* u, *սեռ.* i, *հյց.* a *վերջավորություններն ընդհանուր են թե եզակիին, և թե հոգնակիին։ Այսպես՝ նաև վրացերեն և այլն։*

Հնդեվրոպական լեզուների մեջ հոլովական մասնիկների դանազանակերպությունը եզակիում և հոգնակիում հետաքրքրական է, օրինակ. հոլովական դրության ընդհանուր տեսակետից։ Բայց որքան փոփոխվում է պատկերը, երբ նկատենք, որ նորագյուտ հիմիկներին այս կողմից բացառություն է կազմում։ Այստեղ միայն հգ. ուղ. և հյց. հոլովներն են, որ եզակիից տարբեր հոլովակերտներ ունեն, իսկ մյուս հոլովները այսպես չեն։ Այս դեպքում պետք պիտի լինի ենթադրել, թե հնդեվրոպական նախալեզվի հոլովական տարբերացումն էլ ուշ ժամանակի գործ է։

4) Ավելի զարմանալի է այն, որ միևնույն հոլովի վերջավորությունը միևնույն թվի մեջ երբեմն տարբեր է բաների դասնազան տիպերի մեջ. այսպես՝ եթե եզ. հայցականը բոլոր տիպերի մեջ էլ վերջանում է n, *արականը՝* ei, *ներգոյականը՝* i, *հգ. ուղղականը* es, *հայցականը* -ns, *սեռականը՝* om, *արական-բացառականը՝* bh- s, *ընդհատառակը՝ եզակի սեռականը լինում է մերթ* -es, *մերթ՝* -syo, *բացառականը՝* -es *կամ* -t, *գործիականը* -e *կամ* bhi?, *հգ. գործիականը* -bhis *կամ* -is, *ներգոյականը՝* -su *կամ* -is։ *Տարբեր ձևերից ամենք հայտնապես հետո են առաջացած. այսպես՝ հգ. սեռ.* -syo *անշուշտ կազմված է* -es *նույնանիշ ձևից՝* -yo *մասնիկի հավելումով. ներգոյական* -su *կամ* -is *հավասարապես ծագում են հնագույն* -s *մասնիկից. մյուսները (եզ. բյց. գրծ. և հգ. գրծ.) միայն են անբացատրելի։*

5) Հոլովներից ամենք նույնիսկ հնդեվրոպական շրջանում գոյ էին ունենում նախդիրներով, մյուսներն առանց նախդիրների և կամ խառն. նախդիր կարող էին առանալ հայցականը (ուղի խմաոաով), գործիականը, բացառականը և ներգոյականը. մյուսները նախդիր չունեին։ Այսպես է նաև հայերենի մեջ, ուր

հայցականը, բացառականը և ներգոյականը միշտ նախդիրով են գործածվում։

Մի քանի խոսք պետք է ասենք հոլովների ծագման մասին։

Լեզուն իր նախնական վիճակում դեռ հոլովից զուրկ է։ Այս անհոլովական վիճակը ցույց են տալիս մեզ այսօր էլ՝ անջատական լեզուները, հատկապես չինարենը։ Չինարենը չունի հոլով. այն բառը, որ գրված է նախադասության սկիզբը կամ բայից առաջ՝ համարվում է ուղղական. երբ գոյականից հետո գրված է մի ուրիշ գոյական՝ առաջինը համարվում է սեռական, բայից հետո գրված մի բառ՝ արտական կամ հայցական է. իսկ երբ երկու են նրանք՝ առաջինը արտական է, երկրորդը հայցական։ Ահա հայերեն բառերով մի օրինակ չինարեն անհոլով նախադասության.

Հարևան որպէ տալ դռնապան փող
որ նշանակում է՝
Հարևանի որպեն փող է տալիս դռնապանին։

Անհրաժեշտ դեպքերում չինարենն էլ կարող է, սակայն, դնել այնպիսի ձևեր, որոնք ներկայացնեին ավելի որոշ հոլով. այսպես՝ սեռականի համար բառի վրա դնում են ti, հայցականի համար բառից առաջ՝ pa, որ նշանակում է «առնել», իսկ արտականի համար՝ kei³, որ նշանակում է «տալ»։

Այս պատկերը նախատիպն է բոլոր լեզուների. ամեն մեկ հոլովումը հետագա զարգացման արդյունք է։ Այս բանը հայտնի կերպով երևում է ուգրո-ֆիննական լեզվաընտանիքի մեջ. հունգարերենը թևս ունի 21 հոլով, բայց նրանք չկան իր ցեղակից մյուս լեզուների մեջ. այսպես, ֆիններենը ունի միայն 16 հոլով, էստոներենը՝ 11 և լապոներենը՝ միայն 8, իսկ վոգուլերենը՝ 6 հոլով. նույնիսկ այս հոլովները իրար չեն համապատասխանում ծագմամբ. օրինակ՝ վոգուլերենի ներգոյականը համապատասխանում է ֆիններենի inessif և adessif հոլովներին. վոգուլերենի lativ հոլովը համապատասխանում է ֆիններենի արտական, allatif և illatif հոլովներին։

Այնպես որ բուն ուգրո-ֆիննական լեզվաընտանիքի նախամայրը ունեցել է միայն 4 հոլով (արտական, հայցական, բացառական և ներգոյական). մյուս բոլոր հոլովները կազմվել են հետո՝ առանձին լեզուների մեջ։

Հոլովական մասնիկները նախավոր անջատ բառերի և հատկապես նախադրությունների կրճատյալ ձևերն են։ Այս բանը հայտնի կերպով երևում է զանազան լեզուների մեջ։

Թյուրքական լեզուների մեջ ներգոյականի մասնիկն է il, օր. ūr քաղաք, ūril քաղաքում. առաջանում է il «տուն» բառից.— գործիականը կազմվում է -to, -dan-odan, -ōdu մասնիկներով, որոնք առաջանում են tōdu «օգնություն», oda «միություն» բառերից. սեռականը կազմվում է -uḍei կամ -uḍeiya մասնիկներով, որոնք նշանակում են «առաջում» կամ «առաջող»։

Պարսկերենի մեջ սեռականի,- արտականի և հայցականի մասնիկն է rā. ծագում է հին պրս. radiy «վանդ» բառից. դեռ պահլավերենում (ray) գործածվում է այս նշանակությամբ և քիչ անգամ միայն գործածվում է իբր նշան արտականի և հայցականի։ Այս նախնական իմաստը պահում են դեռ պարսկերենի մեջ՝ čirā «ինչու՞ համար» և zīrā «ըրա համար» (որովհետև, քանզի) և այլն։

Նոր ժողովրդական պարսկերենի մեջ կա սեռականի հատուկ մի այլ ձև, որ կազմվում է māl «ապրանք» բառով. օր. asbi-i māl-i padar «հոր ձին» (այն է հոր ապրանք ձին), qonsul mali sīstān «Սագաստանի հյուպատոսը» (Գեորգ դպիր, Բառ. պրս. էջ 8)։ Եվ որովհետև պրս. mal ծագում է արաբ. mal «տավար» բառից, ուստի «տավար» դարձել է վերջապես սեռականի մասնիկ։

Չուվաշերենի մեջ հոգնակիի մասնիկն է sam, sem, որ ծագում է «բիւր, բանակ» նշանակող մի բառից. հմմտ. թաթար. san «բիւր»։ Ավբիկյան վեհ լեզվում հոգնակիի մասնիկն է nu, որ Հյուլեն ծագած է համարում anu «ներանք» դերանունից։

Չուվաշերենի մեջ գարձյալ՝ անձ ցույց տվող մի խումբ բառերի կոչականը կազմվում է ay, ey վերջավորությամբ. սա ուրիշ բան չէ, եթե ոչ ծանոթ բացագանչությունը, բայց այդ բացագանչությունը փոխանակ իբր բացագանչություն գրվելու, դարձել է մասնիկ և իբր վերջավորություն կցվում է բառի ծայրին. օր. atey «ով հայր», apay «ով մայր», pitʸey «ով եղբայր», ukay «ով քույր» և այլն։ Այսպես է նաև թաթար. kəzəy «ով աղջիկ» և օս. čizga'i «ով աղջիկ», ūsai «ով կին»։

Նեգրական մանդե լեզվի մեջ «հետև, հետոյ» նշանակող հոլովը կազմված է մի մասնիկով, որ իբր անկախ բառ՝ նշանակում է «կանգ, թիկունք, հետև».— «վրա» նշանակող հոլովական մասնիկը առաջանում է «ծնծրակ, ծայր, կամ օդ, երկինք» բա-

ախց.— սեռական կազմող մասնիկը կազմված է «ձևաթ բառից. «շուրջ, պատճառաւ, համար» նշանակող մասնիկը կազմված է «իր, բառ» բառից:

Սեմական նախալեզվի մեջ ուղղականի նշանն էր ū, հայկականի ā, սեռականի i այս բոլորը արաբերենի մեջ պահված վերջավորություններն են. ենթադրվում է, թե u աստիճանում է hū դերանունից և ā աստիճանում է ha դերանունից. ուրեմն այդ հոլովները կազմվում էին երկու առարկայի ուղղություն. իսկ սեռականի նշանը (i) համապատասխանում է ասկան, ալին» վերջավորությունն է:

Բայց ամենից ավելի նախադրություններն են, որ վերջ դառնում են հոլովական վերջավորություններ. այս երևույթը շատ զեղեցիկ կերպով երևան է գալիս հունգարերենի մեջ, ուր ունենք նախ բառը իր անկախ ձևի տակ՝ իբր մակրայ, երբորդ՝ նույնը հին հունգարերենի մեջ իբր հոլովական մասնիկ՝ ուղղակի կցված գոյականին, երրորդ՝ նոր հունգարերենի մեջ արդեն մաշված և գարձած զուտ վերջավորություն. այսպես՝

անկախ մակրայ	հին հունգ. հոլովական մասնիկ	նոր հունգ. հոլովական վերջավորություն
bänn *մեջը*	-bänn	-bän նեղդ. (օր. kezbän «ձեռքում») ժող. հնգ. -bä
bäböl *«նախիր գառան»*	-bäböl	-böl բզո. (օր. ձեռքից)
väl *«հետ»*	—	-väl գրծ. (օր. köväl քարով)

և այսպես շատ ուրիշներ:

Հոլովական մասնիկներն էլ կարող են հետագայում աճել ու զորանալ և դառնալ նոր մասնիկ. Օր. Թուրքերենի գործածական մասնիկն է ile, որ ստում է նաև ilen և կրճատ ձևով le, ev բառից գրծ. évile, évilen և évle. յայց կումուխերենում, գրաբարյանի մասնիկն է bile, bilen, որ ուրիշ բան պետք չէ համարել, եթե ոչ bir մեկ բառ գործականը, իբր birle «միասին, մի տեղ», որ այժմ էլ գործածական է Թուրքերենում:

Քանի հոլով կա ֆիննական ընտանեության, հարցնում է Վիդեմանը և գտնում է, որ կարելի չէ ճիշտ թիվը որոշել, որովհետև մի քանիսը հոլովներից կարելի է համարել մակրայական կազմություն, մի քանիսն էլ նախադրությամբ կազմություն: Գոյականների հոլովական վերջավորություններից շատերը առաջանում են նախադրություններից, այսինքն ինքնագլուխ և անկախ բառերից:

Կան մասնիկներ, որոնք երկու տարբեր մասնիկների զուգումարն են, և հետևաբար առաջացել են ավելի ուշ, քան իրենց կազմիչ մասերը. այսպես՝

լապ.	-sno, *որ է՝*	inessif -s+locatif-n
ֆիննն.	-sta, *որ է՝*	elatif -s+ablatif-t և այլն:

Նույն վիճակը ցույց է տալիս նաև վրացերենը, ուր նոր լեզվի մեջ ձևացած ենք տեսնում մի խումբ հոլովական վերջավորություններ, որոնք հին լեզվի մեջ գործածվում են իբր զուտ նախադրություն. օր. հվրաց. սախլ-սա շինա «տան մեջ», նվրաց. սախլշի «տնում»: Հվրաց. խմա-սա բանս «ձայնով», նվրաց. ձմապան «եղբոր մոտ», հվրաց. բալ-սա զեղա «գլխի վրա», նվրաց. սախլզիդ «տան վրա»:

Այս վերջիններից հատկանշական կողմը այն է, որ կազմված են սեռականի վրա ավելացնելով որոշ վերջավորություններ (ինչ. սեռ. խմա-սա բանս «մոտ»). այսպիսով, որոնք դառնում են հոլովների հոլովները: Ընդհանրապես խոսելով՝ վրացերենը ունի 12 պարզ և 14 բաղադրյալ հոլովական մասնիկներ (գումարը 26), գոյականի զանազան առնչությունները զուտ բերելու համար, որոնց մի մասը միայն զուտ հոլով է. «հոլովական վերջավորությանց և անկախ նախադրությանց կամ հետադրությանց սահմանը դեռ որոշված չէ, ասում է Դիոը (Gram. géorg., էջ 22—26 և էջ 39), մինչդեռ Ջոգտը դնում է 7 հոլով. իսկ մյուսները համարում է հետադրություն: Բայց մեզ համար պարզ է, որ սրանք գանվում են դեռ անցման շրջանի մեջ, այսինքն՝ ներկայացնում են այն վիճակը, երբ անկախ նախադրությունները մտչելով՝ դառնում են վերջապես հոլովական վերջավորություններ:

Աբխազերենի մեջ էլ այդպես է. այսեղ էլ նախադրությունները (տակը, միջև, մոտը կամ մեջը կամ վրա (qnə), դեպի,

առջևը, ետևը), ինչպես վերևում ասացինք, մասնիկներ կցվում են գոյականներին և կազմում են զանազան հոլովներ:

Նոր հոլովների կազմությունը կարելի է միշտ որոշել մասնիկների բարդության միջոցով: Բարդ մասնիկը կազմված է պարզ մասնիկից, ուստի այն հոլովը, որ ունի բարդ մասնիկ, ավելի ուշ է ձևացած, քան այն հոլովը, որ ունի պարզ մասնիկ: Օր. հյ. պարառական հոլովը (գքաղաքաւ) կազմվում է գործիականի վրա ավելացնելով զ նախդիրը, ուստի ավելի ուշ է կազմված, քան գործիականը. նմանապես՝ պատմական հոլովը կազմված է բացառականի վրա դնելով զ նախդիրը, ուստի ավելի ուշ է կազմված, քան բացառականը:

Սրա նման աֆրիկյան օնա լեզվում կան բացառական, adversif, reversif հոլովները, որոնց մասնիկները կազմված են ներգոյականից. այսպես՝ օր. vesi «քար» բառից՝

ներգ.	vesi -mo			քարի վրա
բցո.	» »		gino	քարից
adversif	» »		ken	դեպի քարի վերևը
reversif	» »	»	gino	քարից դեպի...

ուրեմն բոլորն էլ ավելի ուշ են կազմված, քան ներգոյականը:

Նմանապես պապուասյան խմբից կաուե լեզվի մեջ delatif, adversif և deversif հոլովները կազմված են adlatif հոլովից նոր մասնիկով, ուստի ավելի ուշ ժամանակից են, քան առաջինը: Ահա այս հոլովները՝

ուղ.	nepgoc «մայր»
adlatif	nepgoc -tao
delatif	nepgoc -tao -nec
adversif	nepgoc -tao -pec
deversif	» » » nec:

Նախատա վիճակ է ներկայացնում հոլովը նույնպես ամերիկյան ալինգիտ լեզվի մեջ, ուր իրապես հոլով չկա, այլ միայն հետադրություններ, որոնք կցվելով գոյականին՝ ձևացնում են զանազան հոլովներ. բայց հետադրություններից ամենք այնպես են կրճատված, որ այլևս կարելի չէ կոչել հետադրություն, այլ իրապես հոլով: Իսկապես անկազմակերպ հոլովի վիճակն է: Օր.

t, dê	դեպի (անգլ. to)
n	հետ, միասին (with)
x	-ից (from)
q	դեպի (at)
tu	մեջ (into)
dax	-ից (from)
tāk	մեջտեղում
ka	վրա
nax	միջով
ya	տարևանության մեջ, մոտ
qox	հետս և այլն և այլն:

Մի այսպիսի անցման դրության մեջ է գտնվում նաև բանակերենը, որի համար քերականը նշանակել է իրապես երեք հոլով (ուղ., սեռ., տր.). բայց սրանցից դուրս կան նաև 22 հետադրություն կամ մասնիկ, որոնք կցվում են գոյականի վերջը՝ ասելու համար նրան զանազան առնչություններ և հոլովական ձևեր. այսպես gan մեջ, gana դեպի, gandik մոտից, gatik համար, նպատակով, trak համար, kin հետ (գործիական է լինում), dik -ից, դուրս (բացառական է լինում) և այլն: n- ներգոյական է կազմում:

Ամերիկյան մայա լեզվի մեջ էլ գոյականները դեռ հոլովական մասնիկներ չունեն. գործիականը, ներգոյականը և այլն կազմում են մակբայներով (իմա նախադրություններով), որոնց կապը գոյականի հետ շատ թույլ է: Իսկ սեռականը կազմվում է ասացականներով. օր. «կրակի քարը» ասելու համար ասում են «կրակը իւր քարը»: Այսպես upeg winik իր շուն մարդ (=մարդու շունը), u-huun Juan իր գիրք Ջոն (=Ջոնի գիրքը):

Այսպես է նաև ամերիկյան բորև լեզուն, որի մեջ տրականը կազմվում է ena «համար» հետադրությամբ (համմա. արաբերենի տրականը, որ կազմվում է ena «համար» նախդիրով):

Նախատա դրության մեջ է նաև ամերիկյան զոք լեզուն, ուր հազիվ միայն մի հոլով կա, մյուսները կազմվում են հետադրություններով: Այսպես, ուղղականը կազմվում է -is մասնիկով. ինչ. Juan-is tzecu coa Հովհաննեսը գործել է հանցանք.— սա արդեն իսկական հոլով է:

Տրականի համար ավելացնում են cootoya «համար» կամ casi «վրա» բառերը. օր.

Puen	cootoya	checu	Dios-is	tzap
մարդու	*համար*	*առեզծից*	*աստված*	*աշխարհը*
Juan	casi	me	namo	Pedro
Հովհաննես	*-ին*	*այս*	*ասաց*	*Պետրոսը*

Բացառականը շինվում է բառի վրա ավելացնելով pit «*հետ*», hing «*հետ*», casi «*դուրս*», itoma «*մեջ*», homac «*դուրս*» *բառերը. գործիականի համար գրվում է* pit «*միասին*»,—*ոմն բառից, իսկ ընկերական հոլովի համար* hing- «*հետ*» *բառը: Գոյականը չունի հոգնակի, հոգնակին իմացվում է բայից:*

Նույն անցման դրությունը գտնում ենք նաև կրնեական լեզվի մեջ, ուր գոյականը անփոփոխելի բառ է. չունի սեռ, թիվ և հոլով հայտնող վերջավորություններ. բայց հոլովների համար կան զանազան հետադրություններ, որոնք գրվում են գոյականից հետո՝ իբր մասնիկ. օր. բացառականի համար -eyu, *հայցականի համար* heul, *տրականի համար* eui-kei *և այլն. այսպես՝* son «*ձեռք*» *բառից՝ սր.* son-eui-kei, *հյց.* son-eul, *բաց.* son eisye *և այլն:*

Նույնիսկ այնպիսի մի լեզու, ինչպիսին է գրաբար մանդղերենը, որ արդեն կատարյալ հոլովական դրություն է ստեղծել իր համար, կարող է նորից նոր հոլովական վերջավորություններ ստեղծել: Այս լեզվի մեջ ուղղականը առանձին վերջավորություն չունի և հայերենի կամ ռուսերենի պես ներկայացնում է բառի պարզ ձևը, բայց նախադասության մեջ ենթական ավելի ցայտուն գծագրելու համար՝ ուղղականը կարող է առնել anu, inu, ni, gu, ču *և* bar *(կամ* ber*) մասնիկները (ժող. մանդղ.* ni, či, čigi), *որոնք նշանակում են էապես՝ նույնիսկ, հատկապես, հիշյալ, ինչ վերաբերում է, գալով և այլն:* (Клюкин, Ключ монгол. яз., Владивосток, 1926. *էջ 67*)*, բայց իրական ուղղական հոլովի վերջավորություններ են:*

Սանսկրիտը կանոնավոր հոլովական լեզու էր. բայց երբ պրակրիտի և նոր հնդկերեն լեզուների մեջ հոլովական կազմը քայքայվելով նոր մասնիկներ հնարելու կարիք զգացին, օգտագործեցին զանազան նախադրություններ, որոնք կրճատվելով մասնիկ դարձան: Այսպես, հնդկական սինհալի լեզվի մեջ ընկերական հոլովի մասնիկը եղավ ha, *որ պալի լեզվի* saha «*միասին*» *բառն է. բացառականի մասնիկն եղավ* gen, *որ պալի լեզվի* gēhēna «*տնից*» *բառն է. ներգոյականի մասնիկն եղավ* kere, *որ* kara «*տուն*» *բառն է:*

Լեզուների ընդհանուր այս ճակատագրից անցել է նաև հնդեվրոպական նախալեզուն. այս լեզուն էլ իր հնագույն շրջանում հոլովների կողմից գտնվում էր շատ անկազմակերպ վիճակում, պրեպոզիցիոնալ էր, ինչպես երևում է անձնական դերանունների և 5—10 թվականների հոլովումից. ավելի հետո այս էլ զարգացավ հոլովումը և ձեռացան 8 հոլովները:

*Թե որտեղից առաջացան հնդեվրոպական նախալեզվի հոլովական մասնիկները՝ շատ բան չենք կարող ասել. բայց ինչպես լեզուների ընդհանուր օրինակը ցույց է տալիս, նրանք էլ առաջացած պիտի լինեն նախապես անկախ բառերից և կամ նախադրություններից: Այս բանը հայտնի կերպով երևում է հոգնակի բացառականի մեջ, ուր մասնիկը ուրիշ բան չէ, եթե ոչ մի հետադրություն, անշուշտ կամ հետացման գաղափարով և որ կարելի է համեմատել լտ. dē, հնլ. dī հլ. ot- նախդիրների հետ: Համեմատելով գրբ. bhis, bhyas մասնիկները կարելի է համեմատել գրբ. bai «*մոտ*», հն. ἀμφί ձևերի հետ և գրբ. m համեմատել գրբ. imi և հն. μέτα «*միասին*, *հետ*» ձևերի հետ (Brugmann, Abrégé, *էջ 407*):*

*Երբ նկատի ենք առնում, որ վեդայական հնդկերենում ներգոյականն ունի օր. áçman և áçmani, և հին հունարենում կան αἶψ և αἶψα կրկնակ ձևերը, կարելի է եզրակացնել, որ այս i-ն հոլովական վերջավորություն չէ, այլ նախադրություն: Նմանապես՝ երբ տեսնում ենք, որ հգ. ներգ. հոլովը վերջավորվում է սարիական և բալթիկ-սլավոնական լեզուների մեջ, իսկ -si հունարենում, կարելի չէ չեզրակացնել, որ այդ u-ն և i-ն նախադրություն են: Այս տեսական նախադրությունը գտնում ենք նաև մի քանի հարցական դերանունների մեջ. ինչ. հյ. ո՞ւր, վեդ. kúva, kútra, kúher, լիտ. kū-r, ռուս. kuda և այլն. նույնը և հավելածով՝ հուն. πῆλυι, ἄλλυδι մակրայների մեջ (Meillet, MSL, 22, *էջ 50—51*):*

Ոմանք, լեզվաբաններ, ավելի առաջ տանելով իրենց քննություններն այս հողի վրա, տալիս են այլևայլ բացատրություններ. օր. եզ. ուղղականի -s վերջավորություններ համարում են առաջացած so ցուցականից, հոգնակի ուղղականի -es վերջավորությունը համարում են եզ. ուղղականի s վերջավորության կրկնությամբ առաջացած և այլն. բայց այս բոլորը անհաստատ ենթադրություններ են միայն (Henry, Gram. comp. gr.-lat. *էջ 195*):

7. ՀՈԼՈՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջանազան լեզուների հոլովական դրութիւնը ուսումնասիրելուց հետո, ի լրացումն այդ բոլորի, պիտի նկարագրենք հոլովական այն մի քանի դրութիւնները, որոնք բոլորովին այլ ոճի են հետևում։

Այս բոլորի մեջ ամենից զարմանալին ամերիկյան չիկիտա լեզվի հոլովումն է։

Այս լեզվի մեջ, երբ ուզում են որևէ գոյական հոլովել, հոլովում են ոչ թե գոյականը, այլ երբորդ դեմքի դերանունը արս. կամ իգ. և եզ. կամ հգ. ու կցում են գոյականին, որ բուն այսպէս մնում է անփոփոխ, կամ որ նույնն է՝ եզ. և հգ. ուղ. հոլովով։

Եթե նույնը հայերենով լիներ, պիտի ասեինք օր.

Ո.	*եզ.*	*Նա մարդ*	*հգ.*	*Նրանք մարդիկ*
Ս.	»	*Նրա մարդ*	»	*Նրանց մարդիկ*
Տ.	»	*Նրան մարդ*	»	*Նրանց մարդիկ*
Բ.	»	*Նրանից մարդ*	»	*Նրանցից մարդիկ*

Ահա չիկիտա լեզվով արս. noneis «*մարդ*» *և իգ.* pais «*կին*» *բառերի հոլովումը.*

	եզ.	*արս.*	*հոգ.*
Ո.	axtii	noneis	axma oneica
Ս.	izatii	»	ezasma »
Տ.	motii	»	moma »
Հ.	tii	»	ma »
	iotii	»	ioma »
Բ.	oitii	»	
	ìitii	»	oima »

	եզ.	*իգ.*	*հգ.*
Ո.	pais		paica
Ս.	iza pais		yobeza paica
Տ.	mo	»	nome »
Հ.	io	»	yara »
Բ.	oi	»	obei »
	ii	»	yopi »

Այս երկրորդ հոլովման պատկանում են ոչ միայն իգական բառերը (կանանց), այլև անշունչ իրերի և անասունների անունները։

Հոլովական նույն դրութեան է հետևում նաև ամերիկյան յուրակարև լեզուն. անա այս լեզվից մի խումբ օրինակներ.

sama cam-pupa-ì
գետ անցա զայն=գետը անցա
Pedro can-yuju-m
Պետրոս դու կասես նրան=դու կասես Պետրոսին
mala-tecte-i du-on
նրանից մժեղները ինձ պաշտպանում՝ եմ=ինձ պաշտպանում եմ մժեղներից.
ù-tata cu-su-i *հայրս քաղհանեցի նրա հետ=հորս հետ քաղհանեցի*
ù-tata cai-mala *հայրը գնաց նրան տանել=գնաց տանելու հորը.*
cu-vu-ma tule tata *ուզիր նրանից ազ հայր=ազը հորից ուզիր.*
Տեսակապես սեռական կազմելու ձևը.
Pedro a-sibe *Պետրոս նրա տունը=Պետրոսի տունը։*

Հոլովման այս ձևին են հետևում նաև ամերիկյան կարիբի քանանիբի կիպևա և ձուբուկուա լեզուները, բայց միայն սեռականում։ Անա օրինակներ՝

Կիպևա լեզվով. i-popo hi-de *երէց եղբայր նորա մայրս=մոր երէց եղբայրը.*
a-era ware *տուն նորա քահանայ=քահանայի տունը։*

Ձուբուկուա լեզվով. i-buaga-te Adam *մեկը նորա Ադամ=Ադամի մեկը.*
i-mudu virgem Maria *որովայն նորա կոյս Մարիամ=կույս Մարիամի որովայնը։*

Միկրոնեզյան տրուկ լեզուն հոլովում չունի. պիտի միայն տեսական հոլովը, որ բնորոշում է երկու ձևով. 1) Հովսեփի պատկերը (այն պատկերը, ուր նկարված է Հովսեփը). 2) Հովսեփի պատկերը (այն պատկերը, որ պատկանում է Հովսեփին); կազմում է Գ դեմքի սեռացական հոդի միջոցով. ինչ. mar-i «*իմ պատկեր*», mar-in «*իր պատկեր*», *իսկ Հովսեփի պատկեր ասելու համար՝* marin Josef *(իր պատկեր Հովսեփ)։*

Հոլովական մի զարմանալի հատկութիւն ունի աֆրիկյան Ենա լեզուն. այստեղ բոլոր հոլովիչները (բացի գործականից) կարող են միանալ բոլոր բայական ձևերին և գլխավոր նախադա-

սության համար մի երկրորդական նախադասություն կազմել (հոլովված բայ)։

Առնենք իբրև օրինակ ari «գնալ» *բայի ներկ. եզ. 3 դեմքը (գնում է) և միացնենք նրան գոյականի սովորական հոլովական մասնիկները, կստանանք հետևյալ պատկերը.*

ուղ.	arimaike–ŋo	«նա որ գնում է, գնացողը»
սեռ.	arimaik–ane	որովհետև նա գնում է
ընկ.	arimaike-rop	մինչդեռ նա գնում է, երբ նա գնում է
ներգ.	„ -o	այնտեղ, ուր նա գնում է
բղա.	„ -o–ŋino	» որտեղից նա գնում է
	-o-ken-ŋino	այն ուղղությամբ, որ նա գնում է
		այն ուղղություններից, որով նա գնում է, նրա գնացած ուղղություններից

Բանաոս լեզուները հոլովական ուժեղ կազմ չունեն. ուղղականը հասկացվում է նրանով, որ բայից առաջ է գալիս, հայցականը հասկացվում է նրանով, որ բայից հետո է դրվում, տրականը, բացառականը և ներգոյականը որոշվում են առանձին նախադրություններով, իսկ սեռականը ունի առանձին հոլովական ձև։ Օրինակ առնենք բանաոս առնգա լեզուն և կազմենք «երկրի որսորդ» ձևը. երկիրը կոչվում է tika, *որսորդն է* hloti. *Նախ՝ գրաբարի շարքով պետք է ասել «որսորդ երկրի», դասական նիշները ավելացնելով* mu–hloti, mu–ti–ko. *սեռականի մասնիկն է* a, *որ դրվում է երկուսի միջև՝ պարզական իզաֆեթի նման* mu *և* a *իաոնելով իրար հետ՝ ասվում են* wa, *որով առանում ենք* mu-hloti wa tiko «որսորդն երկրի»։

Ավելի պարզ է հոգնակին.

*Որսորդք երկրի=*ba-hloti ba tiko *(ուր երկրորդ* ba *ծագում է* ba a *ձևից).*

Այս ամբողջը մի դասանիշի համար էր. իսկ որքան որ դասանիշ կա, այնքան էլ սեռականի մասնիկ կա՝ թե եզակի, և թե հոգնակի։

Ամերիկյան կոնիտա լեզուն այն զարմանալի հատկությունն ունի, որ հոլովվում է գոյականի միայն եզակին, իսկ հոգնակին մնում է անփոփոխ. առանում է միայն հոգնակիի նշանը ուղղական, որին նման են մյուս բոլոր հոլովները (Buelna, էջ 42)։

Ամերիկյան կիչե լեզվի մեջ էլ գոյականը հոլովում չունի. գոյականը միայն մի ձև դիտե՝ ուղղական. իսկ այն բոլոր պա-

դեպքերը, որոնք սրանք հոլով պիտի կազմեին գոյականի համար, դնողան մասնիկներով մատնում են բայի մեջ։ Օրինակ, եթե հայերեն ասենք քաղաք արտաքսանեց փխ. քաղաքից դուրս հանեց, ինչպես ասում ենք իրոք՝ քաղաք ներմուծեց (փխ. քաղաքում մուծեց)։

Ափրիկյան վայոգորա լեզվում ուղ. կոչ., հյց. և տրական նույն ձևն ունեն. նրանց արժեքը ճանաչվում է բայի դիրքից. այդ նշանակում է, որ հոլովում չկա. միայն սեռականն է, որ ունի առանձին հոլովաձև, այդ էլ կազմվում է հետևյալ ձևով.— հատկացյալը դրվում է առաջ, հատկացուցիչը հետո, երկուսի մեջն դրվում է երկու մասնիկ. առաջինն է հատկացյալի դասանիշը, երկրորդը՝ a, *որ առոցականի մասնիկն է, երկուսը միասնավելով կազմում են մի մասնիկ. օր. վերք* čironda, *դասանիշն է եզ.* či, *հգ.* vi

առք ligullu
առքի վերքը — čironda ča ligullu
առքի վերքերը — vironda vya ligullu։

Այս կազմությունը նման է թրք. ayaq yarasə, yaralarə *ձևին. հայերեն ճիշտ թարգմանությունը պիտի լիներ «վերք բ(ն) առք»։*

Սուդանական շիլլուկ լեզվի մեջ հոլովմունքը հետևյալ ձևն ունի.

Սեռականը կազմվում է բարդ բառի ձևով. ինչ.

yit kyen
ականջ ձի = ձիու ականջ

Հայցականը անփոփոխ գոյականն է, որ դրվում է բայից հետո. ինչ.

a čam byel
Նա կերավ բիել

բայը կարելի է ավելացնել նաև ki, *որ նշանակում է «հետ». ինչ.*

a čam ki byel

Տրական չկա. երբ հարկ լինի տրական դործածելու, վերածում են հայցականի. ինչ. փոխանակ ասելու «Նա տվեց տղային», կդարձնեն «Նա պարգևատրեց տղային (հյց.) փողով». այս դեպքում մասնիկն անհրաժեշտ է դառնում. այսպես՝

Ci weki nol ki nyen
Նա տվեց տղայ դրամ

Բայց ավելի լավ է՝ թնավ չգործածել հայկական կամ արտա-
կան, և ասել կրավորական ձևով՝ ես տեսա նրան>նա տեսնվեց
ինձնից. նա ավեց կաթ ոչխարին>ոչխան արվեց կաթ նրանով։

Լիվերևն լեզվի մեջ (ֆիննական ճյուղ) բառը այնպիսի ու-
ժեղ և բազմատեսակ ձայնափոխություններ է ենթարկվում
հոլովման ժամանակ, որ շատ դժվար է լինում, միայն ընդհա-
նուր օրենքների համաձայն, խոսորնակ հոլովների մեջ բառի
բուն ձանաչել։ Այդ ձայնափոխությունները առաջանում են
երբեմն բառի և մասնիկի միացումով, երբեմն էլ առանց մաս-
նիկի, հենց բառի ծնի մեջ։ Օր.

ver արիւն,	հգ. vierd
mer ծով,	հգ. mierd

Քննիչը (Sjögren, էջ 45—109 մեծ էջերով և 128 սովորական
էջ) խոսում է հոլովման մասին և լիվերևն բառերը բաժանելով
32 խմբի, աշխատում է տալ նրանց համար կանոններ։ Ուրեմն
և լիվերևն լեզուն ունի 32 հոլովում (!?)։

8. ՀՈԼՈՎՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Նույնիսկ հնդեվրոպական նախալեզվի մեջ, ինչպես տեսանք
վերջին հատվածում, որոշ հոլովներ իրար հետ միևնույն ձևն
ունեին։ Հետագայում ժառանգորդ լեզուների մեջ ուրիշ նմա-
նություններ և նույնացումներ էլ առաջացան. դրա պատճառ-
ներն եղան. ա) հոլովների գործածության շփոթություն-
ը) հոլովական վերջավորությունների անկումը։

Պետք չէ կարծել, թե ամեն մի հոլով կամ հոլովական ամեն մի
ձև միայն և միայն մի որոշ առնչության է հատուկ. ընդհակառակը,
նա կարող է ներկայացնել զանազան առնչություններ. օր. մի-
նույն գործիականը ներկայացնում է միջոց, գործիք, ընկերու-
թյուն և ուրիշ զանազան առնչություններ. ինչ. մուրճով զարնել,
ծառայով ուզարկել, փողոցով անցնել, քարով փաթաթել, քա-
շովը ասկի արժե, ասկով առնել, խոտովեզավ և այլն։ Նույնպես և
սեռականը ներկայացնում է սեփականություն կամ հատկացում,
օր. կարապետի թամբը, ձիու թամբը, երկուսն էլ սեռական են։
Բայց առաջինը ներկայացնում է սեփականություն կամ պատ-
կանելություն, իսկ երկրորդը՝ հատկացում։ Նույն երևույթը
նկատելի է նաև ուրիշ լեզուների մեջ կամ լեզվից լեզու հաս-

մատության մեջ. օր. ֆրանս. leur crainte à tous était grande=
=նրանց բոլորի երկյուղը մեծ էր. առաջինի մեջ տրական է,
երկրորդի մեջ բոլորի՝ սեռական է, նմանապես իտալ. baccio le
mani alla sua madre = իր մոր ձեռները համբուրեց. որից հե-
տևում է, որ սեռական և տրական կարող են նույնանալ իրար
հետ։ Նույնպես՝ ֆրանս. tasse à thé = թեյի բաժակ. ննն. ἔδωκα
τὸ λεπτὸν τοῦ πτωχοῦ = աղքատին դրամ տվի. աղքատին հյ. տրա-
կան է. ննն. սեռական. երբայեցերենում կա սեռական կազմե-
լու ձև. բայց կարելի է տրական էլ դնել սեռականի տեղ. օր.
ben Ia-Isai = որդի եսայեայ, իբր թե որդի (որ պատկանի) Եսա-
յիին»։ Անգլ. the baptism of John, whence waas it? from heaven,
or of men? = Մկրտությունն Հովհաննու ուսի՞ էր. յերկնի՞ց
թե ի մարդկանէ (Մատթ. ԻԱ, 25). հայերենի մեջ երկու առոգա-
դեալ բառերը բացառական են, անգլերենի մեջ առաջինը բա-
ցառական է, երկրորդը սեռական, որից հետևում է, թե սեռա-
կան և բացառական կարող են նույնանալ իրար հետ։ Ռուս.
ключ от комнаты=սենյակի բանալին. առաջինի մեջ սենյակը
բացառական հոլով է, երկրորդի մեջ՝ սեռական, որից հետևում
է նույնպես, թե սեռական և բացառական կարող են նույնանալ
իրար հետ։ Ֆրանսերեն առում են emprunter à l'ami=բարեկամից
փոխ առնել. առաջինում տրական է, երկրորդում՝ բացառական,
որից երևում է, որ տրական և բացառական կարող են նույնա-
նալ իրար հետ։ Պարսկերենի մեջ, ուր կա սեռական, այս հո-
լովը կարող է երբեմն դրվել բացառական. օր. kitābi padari
man = հորս գիրքը, բայց նաև՝ kitābi az padari man, որ է՝ հորիցս
գիրքը (Գեորգ դպ. Բռ. պրս. էջ 8)։ Ֆիններենի մեջ ամեն սեռա-
կան միևնույն ժամանակ նաև հայկական է։ Արաբերենի մեջ
սեռականը կարելի է նաև դնել տրական. ինչ. մարդու տունը —
al-baitu raǰuli (սեռ.) կամ al-baitu lir-raǰuli (տր. այն է՝ բուն՝
տուն մարդու համար»)։

Հայերենում նույնիսկ միևնույն գազափարը կարող է
դրվել մերթ սեռական, մերթ տրական, նայելով թե նախադա-
սությունը ինչ կազմություն ունի։ Օր. Որի ուսուցիչը լինելու
պատիվը ունեմ, կամ որին ուսուցիչ լինելու պատիվը ունեմ (մի
հոգի տարբերությամբ)։ Առաջինի մեջ որի սեռական է, երկ-
րորդի մեջ դարձել է տրական.

Նույնպես է. որի ընկերն եմ, որին ընկեր եմ։
Որի ճարհասն եմ, որին ճարհաս եմ և այլն։

Սեռականից արական փոխանցման պատճառներից մեկն էլ խնդրառության փոփոխություններն է, օրինակ՝ Աճառյանի սեփական գրքերից կամ Աճառյանիս սեփական գրքերից. առաջինում Աճառյանի սեռական է և իրրև հատկացուցիչ կապված է գրքերից բառին, իսկ երկրորդում արական հոլով բնության խնդիր է և կապված է սեփական բառի հետ, իբր թե «պատկանող կամ պատկանած». ուրիշ ձևով խոսակցական լեզվում ասվում է՝ Աճառյանի իրեն սեփական գրքերից:

Իտալերենում ասում են il ladro si conosce alle *(տր.)* sue opere *(արական)*, մինչդեռ հայերեն ասում ենք. Գողը իր գործերից է ճանաչվում: Վեդայական հնդկերենում, երբ երկու կոչական հոլովներն իրար, երկրորդը դրվում է ուղղական, որից հետևում է, թե ուղղական և կոչական կարող են նույնանալ իրար հետ, ինչ որ այժմ սովորական երևույթ է բոլոր լեզուների մեջ: Ֆրանսերեն ասում են une tasse en porcelaine = ճախճապակե բաժակ. առաջինի մեջ հոգնակին ներգոյական է, իսկ երկրորդի մեջ՝ բացառական: Ֆրանսերեն ասում են ces livres étaient mangés aux vers = այս գրքերը որդերից կերված էին. առաջինի մեջ որդ բառը դրված է արական, բայց հայերենում բացառական: Իսլանդերենում ինչ որ արականի անուն է հայտնի, ծառայում է թե իրր արական և թե իրր ներգոյական, բացառական և գործիական: Այսպես է նաև լատիներեն homine «մարդուց» ասելի հոլովը, որ թե բացառական է, թե գործիական, և թե ներգոյական:

Նույնիսկ մի լեզվի երկու բարբառներ կարող են ներհակացնել նման դեպքեր. օր. արևելյան հայերենով ասվում է երկիրը սիրեցին, կարագը ճավանո՞ւմ եր, մինչդեռ արևմտյան հայերենով ասում ենք՝ երկիրն սիրեցին, կարագին կճավնի՞ր, որից երևում է, որ արական և հայցական կարող են նույնանալ իրար հետ: Նույնիսկ միևնույն բարբառում երկու տարբեր հոլովներ կարող են նույնանալ իրար հետ: Օր. գրաբարում վայելել բայը կարող է առնել ներգոյական, բացառական, գործիական և հայցական հոլովով խնդիր, ինչ. Կշտասին զվայելեցէք ի գալստենէ փառաց դորա. Եկայք և վայելեսցուք ի բարութիւնս որ կանս. ի մէջ հնոցին տերբքն ցօղովն վայելէին. Վայելեցէք զանճառ բարիսն: Աշխ. Տունը ինչ բարձրութեան է (կամ՝ ինչ բարձրութեամբ է):

Լեզվական այն երևույթը, երբ մի հոլով կատարում է ուրիշ հոլովների պաշտոնը՝ կոչվում է սինկրետիզմ:

Չկա մի լեզու, որի մեջ հոլովի արժեքը կամ պաշտոնը բացարձակապես որոշված ու ճշտիվ սահմանված լիներ: Տարբերությունը երևում է հատկապես լեզվից լեզու, երբ միևնույն բայը մի տեղ առնում է մի խնդիր, մի ուրիշ տեղ՝ այլ խնդիր: Այսպես՝ վախենալ բայը հայերեն, թուրքերեն, պարսկերեն վերցնում է բացառական խնդիր. ինչ. Ոչ երկեայց ես ի բիւրուց զօրաց նոցա. Ոչ երկեայց ի չարէ. Ես յումէ՞ երկեայց.

Պրս. zi-kas gar ná-tarsī, bitars az xudāy.

Եթէ մարդուց չես վախենում, վախեցիր Աստուծուց. Թրք. ben senden korkmam ես քեզնից չեմ վախենում.

Նույն բայը ֆրանսերեն առնում է հայցական խնդիր. Je vous crains = ես ձեզնից վախենում եմ, Je le crains = ես նրանից վախենում եմ. իսկ ռուսերեն՝ սեռական խնդիր. Дети боятся темноты = երեխաները վախենում են մութից:

Պետք չէ կարծել, թե հնդեվրոպական նախալեզվում էլ հոլովների գործածությունը միատեսակ և անփոփոխ էր. այնտեղ էլ նույնացումներ կային:

Այսպիսի նույնացումները, բնականաբար, պատճառ պիտի դառնային ապագայում երկու տարբեր հոլովների միացման, կամ որ նույն է՝ այս կամ այն հոլովի ջնջման:

Բայց հոլովների ջնջման բնական և ճակատագրական պատճառը եղավ հոլովական վերջավորությունների ջնջումը:

Քաղնագրությունից գիտենք, թե որքան խախուտ է առհասարակ որևէ բառի վերջավանկի ձայնավորների և բաղաձայնների դրությունը, թե ինչպիսի դյուրությամբ կարող են նրանք բնկնել՝ մանավանդ անշեշտ լինելու պարագային: Այս օրենքի համաձայն, ուրեմն, օրինակ՝ հնխ. ék'wa «ձի» բառի զանազան հոլովները՝ հյց. ék'wan, սեռ. ék'was, տր. ներգ. ék'wāi, հգ. ուղ. կոչ. հյց. ék'uas, սեռ. ék'uām և այլն, կորցնելով իրենց վերջին բաղաձայնը, բոլորն էլ համապատասխան պիտի դառնային ék'wa, որով այս միևնույն ձևը պիտի ծառայեր թե իրր հյց. սեռ. տր. ներգ., և թե իրր հգ. ուղ., կոչ., հյց. սեռ: Հետաքրքրական է այս կողմից օր. հին իսլանդերենի մեջ հայցականի ջնջման ընթացքը: Այսպես ուղ. և հյց. հոլովները՝ վերջավորությունների հավիտյան նույն ձևին էլին վերածվել. բայց հայցականը գեռ ուներ հին m վերջավորության հետքը նրանով, որ հաջորդ բա-

ոի նախաձայնի վրա տալիս էր անգլական, օր., ar- ech-n-donn. բայց այս n ձայնը կարելի էր բնականաբար ավելացնել միայն այն դեպքում, երբ հայցականին կապակցված մի հաջորդ բառ էլ կա. իսկ երբ հյց. բառը նախադասության վերջումն էր չէր կարելի այլևս n ավելացնել։ Այսպիսով, ահա, հիշյալ հավելումն էլ ջնջվեց, հետո ուղ. և հյց. նույնացան բոլորովին։ Հին իռլանդերենի մեջ ավելի հետաքրքրական օրինակներ էլ կան։ Այսպես է fer «մարդ» բառի հոլովումը. այս fer ձևը եզ. ուղ., հյց., հգ. սեռ. և երկ. ուղ., հյց., սեռ. է միանգամայն, ներքին փոփոխությամբ՝ fir է, եզ. սեռ., կոչ., հգ. ուղ., սրանցից դուրս fiur է, եզ. տր., feraib է, երկ. և հգ. տր., և վերջապես firu է, հգ. հյց. և կոչ. բառամայր fer, fir, fiur, feraib, firu հինգ ձևերը գործ են ածում տասնհինգ հոլովի նշանակությամբ։ Ավելի վատ են ուրիշ բառեր. ինչ. flaith «իշխան» և guth «ձայն», որոնք այս ձևի տակ եզ. ուղ., տր., հյց., կոչ. և երկ. ուղ., հյց., կոչ. են միանգամայն (այսինքն մեկ ձևը 7 հոլով). ri «թագավոր» բառից rig եզ. սեռ., տր., հյց., երկ. ուղ., հյց., կոչ., սեռ., հոգ. ուղ. սեռ. է միանգամայն (9 հոլով)։

Լեզվի մեջ կան բարբառներ, ուր սեռականը տրականի տեղ է գործածվում, ուրիշներ տրական էլ չունեն։

Գոթերենը պահեց 4 հոլով (ուղ., սեռ., տր., հյց.), իսկ կոչական կա միայն եզակիում. ուրիշ դեպքերում նույնն է ուղղականի հետ. գոթականի տրական հոլովը ներկայացնում է հնդեվրոպականի տրական, ներգոյական, բացառական և գործիական հոլովները։

Հին պրուսերենը բացի ուղ., կոչ և հյց. հոլովներից գիտի միայն սեռ., տր. և ներգոյական։ Հին բարձր գերմաներենը ունի 4 հոլով՝ ուղ., սեռ., տր., հյց. (տրականը ներկայացնում է հնխ. 4 հոլով, այն է՝ տր., ներգ., բցռ. և գրծ.—իսկ եզակի գրծ. հոլովը մնում է միայն ուժեղ հոլովման գոյականների մեջ և գերանվան մեջ՝ հին չըջանում, ապա մեռնում է)։

Արիական ճյուղի ոչ մի նոր լեզվում չի մնացել հոլովական այն հին ձևը, որ ուներ սանսկրիտը. պալին և պրակրիտը պահել էին դեռ հին հոլովումը ամբողջությամբ, բացի տրականից, որ իր տեղը զիջել էր սեռականին։ Արդի արիական լեզուները իրենց հոլովները կազմում են կամ հետադասական հոդերով և կամ հետադրություններով. հազիվ տեղ-տեղ երևում են սանսկրիտից հոլովական հետքեր։

Հոլանդերենում հոլովումը գլխավորապես հոդից է խմացվում. օր.

Ո.	de	եզ.	տր.	de	եզ.	իգ.	het եզ. չ.
Ս.	des	»	»	der	»	»	des » »
Տ.	den	»	»	der	»	»	den » »
Հ.	»	»	»	de	»	»	het » »

Հոգնակի

Ո.	de	հգ.	տր.	իգ.	չ.
Ս.	der	»	»	»	»
Տ.	den	»	»	»	»
Հ.	de	»	»	»	»

Իսկ գոյականը ստանում է եզակիում երբեմն –s կամ -en, մեծ մասամբ անփոփոխ է. իսկ հոգնակիում ամենամեծ մասամբ՝ -en, երբեմն էլ՝ -es։ Սրանց համար հատատուն կանոն չկա։

Հնդկական պալի լեզուն, թեև անվանապես ունի 8 հոլով, բայց իրապես տրականը (եզակի և հոգնակի) ամբողջապես միացել է սեռականի հետ. բացառականը և գործիականը հոգնակիում միացել են իրար հետ. հոգնակիում ուղ. և հյց. շատ անգամ նույնն են։

Մինչև անգամ արդի ֆրանսերեն ժողովրդական լեզվի մեջ սեռականի de նախդիրը վերացել է և նրա տեղ դրվել է à, որ տրականի նշանն է. այսպես՝

le cousin à Simon «Սիմոնի հորեղբորորդին»
le frère à Jacques «Ժակի եղբայրը»
le livre à Paul «Պաուլի գիրքը»։

Ինձ թվում է, որ այս փոփոխությունը տեղի է ունեցել գանազանելու համար de սեռականը de բացառականից. բայց արանով սեռական, տրական և ներգոյական հոլովները միացել են։

Հնդկական կիսթթալի լեզվի մեջ ամեն բառ առանց բացառության թե եզ., և թե հգ. գործիական և ներգոյական հոլովում նույն ձևն ունի. օր. gōhre «ձիով, ձիերով, ձիում, ձիերում». ամեն բառ (բացի ուղ. և կոչ.) բոլոր հոլովներում թվով չեն տարբերում իրարից (եզ. և հգ. նույն ձևն ունեն). միայն ā վերջացող բառերն են, որ եզ. և հգ. զանազանություն ունեն։ Հոլովման մեջ կան ուրիշ այսպիսի նմանացումներ էլ, որոնք արդյունք են ձայնական օրենքների։

Դրավիդյան գոնդի լեզվի մեջ սր. և հյց. նույն ձևն ունեն թե գոյականների, և թե գերանունների հոլովման մեջ։

Նույն ընտանիքից բրահուի լեզվի մեջ սեռ. և սր. նույն են իրար հետ։

Հին պարսկերենում էլ եզ. սեռ. և սր. խառնվեցին իրար հետ և վերածվեցին միայն սեռականի։ Նմանապես բց. և գործ. հոլովները իրար խառնվեցին հին պարսկերենում, որով հնդեվրոպականի 8 հոլովները իջան 6-ի։ Այս բոլորի պատճառը վերջին ձայնավորի անկումն էր շեշտի պատճառով, որով իրանական նաև եզակի ուղ., կոչ., հյց., բց. և գրծ. հոլովները դարձան մի հոլով։

Այսօր էլ նոր պարսկերենում սեռ., սր. և հյց. հոլովները նույնն են և կազմվում են հավասարապես -rā վերջավորությամբ։ Ավելի վատ է բհլուջերենը, ուր բոլոր հոլովները նույնն են իրար հետ և այս -rā վերջավորությունը գնել անհրաժեշտ չէ։ Համապատասխան թե նույնն է նաև քրդերենը, ուր բոլոր հոլովները ուղղական են դառնում. օր.

սրական՝	dā bazərgan	*մեր վաճառական (ին)*
	rūvi qartal gō	*ազվեսը արծիվ(ին) ասաց*
սեռական՝	ez hātim māl	*ես գնացի (ի) տուն*
բացառական՝	ber dā mepisxane	*արձակից բանտ(ից)*
գործիական՝	čakuǰ kottum	*մուրճ(ով) զարկեցի։*

Մանջուրերենում բացի հայկականից՝ բոլոր հոլովները գրեթե իրար նման են. այսպես՝ bira «գետ» բառից՝

Ուղղական և կոչական	bira
Սեռական և գործիական	birai
Տրական և ներգոյական	bira-de
Հայցական	bira-be
Բացառական և èlatif	bira-či:

Հոլովների ջնջման կամ միացման այս երևույթը տեղի ունեցավ, անա, դանադան հնդեվրոպական լեզուների մեջ և հոլովների թիվը ավելի կամ պակաս չափով կրճատվեց։ Դեռ պատմական շրջանից էլ առաջ և ավելի շուտ, քան մյուս բոլոր լեզուները, հունարենը կորցրեց նախալեզվի 8 հոլովներից երեքը (բացառականը, գործիականն ու ներգոյականը) և պահեց միայն հինգը (ուղ., կոչ., սեռ., սր., հյց.). հիմիներենը կորցրեց կոչականը, մեկի վերածեց սրականն ու ներգոյականը, հոգնակիում նաև՝ սեռականը, ջնջեց գործիականը հոգնակիում. հին պարսկերենում անկախ սրական չկա և սեռականը բռնում է նրա տեղը. մի խումբ հատուկ անուններ մեջ ներգոյականը և բացառականը նույնն են. և օրինակ՝ միայն սրականը՝ սրական, ներգոյական և գործիական է միաժամանակ. նոր հունարենը ավելի առաջ գնաց և ջնջեց նաև սրականը՝ տեղը դնելով հյց. εἰς, πρός «ի, առ» նախդիրներով. լատիներենը պահում է եզակիում 6 հոլով (այն է՝ ուղ., կոչ., սեռ., սր., հյց., բցռ.), բայց երբեմն 5, հոգնակիում՝ 4 ձև, չեզոքների մեջ՝ 3 ձև (ներգոյական ունեցել է, բայց միացել է միայն մի քանի բառի մեջ, միացյալը միացրել է բացառականի հետ, գործիականը ձուլված է բացառականի հետ). Գոթերենը սրդի գերմաներենի պես ուներ 4 հոլով (ուղ., սեռ., սր., հյց.). սրա մեջ սրականը համապատասխանում էր հին. սր., ներգ., բց. և գրծ. հոլովներին. հին իոլանդերենը ուներ 5 հոլով (ուղ., սեռ., սր., հյց., կոչ.), այժմ 4. կելտական մեկ լեզուն հոլովումը ջնջել է և բոլոր հոլովների համար ունի մի ձև, որ առաջանում է հին ուղղականից, երբեմն էլ՝ հայցականից։ Թեև հոլովների հետքերը պահում են մակրայները և հաստատությունները։ Շվեդերենը ունեցել է 4 հոլով (ուղ., սեռ., սր., հյց.), հիմա միայն ուղ. և սեռ. (գերանունների մեջ դեռ կա սր.-հյց. հոլովաձևը, որ մեկ անունով կոչվում է սուբյեկտական հոլով — objectif). հին ֆրանսերենը ուներ երկու հոլով (ուղ. և հյց., այսպես՝ ուղ. murs «պատ», հյց. mur «պատ»), այժմ (սկսած ԺԴ—ԺԴ) դարից հոլով չունի. այսպես նաև՝ պարսկերենը, անգլերենը և այլն։

Հնդկական մարաթի լեզուն պահում է 8 հոլովները (ուղ., կոչ., սեռ., սր., հյց., բց., գրծ., ներգ.) 2 թվով (եզ. և հգ.) և 3 սեռով։ Ածականներից շատերն ունեն առանձին առանձին տարբեր վերջավորություններ երեք սեռերի և երկու թվերի համար։ Սրանք ունեն միայն երկու հոլով՝ ուղղական և թեք։ Ուղղականը գրվում է միայն գոյականի ուղղական հոլովի վրա, իսկ թեքը գրվում է ամեն գոյականի միացյալ բոլոր հոլովների վրա։ Մյուս միացյալ ածականները հոլովում չունեն, և հոլովվում են միայն այն ժամանակ, երբ մենակ են գործածվում, այսինքն՝ երբ գոյական են դառնում։

Շատ պարզ է հոլովումը ֆրիգերենում. ուղ., հյց. և տր. հոլովները թե եզ., և թե հգ. նույն են. միայն սեռականն է, որ տարբեր է և առանում է s (եզ. և հգ.)։ Օր.

Ո. Հ. Տ. bijn *սրունք*, հգ. biéne
Ս. bijns.

Ամենից ավելի պահպանողական են առնակրիտը և գննդը, որոնք անփոփոխ պահում են միշտ այն հոլովական վիճակը (8 հոլով), որ ուներ նախալեզուն։ Առնակրիտի հաջորդներից հինդուստանին այսօր էլ պահում է նույն 8 հոլովները։ Սրանցից փոքր չափով միայն պակաս են բալթիկ-սլավոնական լեզուները, որոնք ունեն 7 հոլով (դեռ թ դարում)։ Ջնջված է միայն բացառականը։ Այսօր էլ ռուսերենը և չեխերենը ունեն ուղ., սեռ., տր., հյց., ներգ. և գրծ. հոլովները։ Լեհերենը ունի ուղ., սեռ., տր., հյց., ներգ. և կրեեին էլ կոչ.։ Բուլղարերենը եզակիում միայն ուղ., կոչ. և հյց., մյուս հոլովները ջնջված են, իսկ հոգնակիում բոլոր հոլովները միաձև են, իսկ Մակեդոնիայի բուլղարական բարբառը ամբողջապես ջնջել է հոլովները, ինչպես իրանական ճյուղի մեջ պարսկերենն ու քրդերենը։

Ոչ մի լեզվի մեջ նոր հոլով ավելացած չէ, եթե չհաշվենք illatif հոլովի սկզբնավորությունը արևելյան լիտվաներենում և illatif ու superessif հոլովները՝ օսերենում։

Հայերենը պատկանում է այն լեզուների շարքին, որոնք խոսիվ հապավում են բառի վերջավանկը. այս նկատումով ապահովի էր, որ հայերենի մեջ էլ հոլովների թիվը մեծ չափով կրճատվեր։ Բայց զարմանալի է, որ այդպես եղած չէ։ Հնդեվրոպական նախալեզվի 8 հոլովներից հայերենում ջնջված է միայն մեկը, այն է՝ կոչականը. մյուս հոլովները (ուղ., հյց., սեռ., տր. բց., գործ.) և նույնիսկ ներգոյականը, թեկուզ զանազան նոր ձևերի տակ, շարունակում են իրենց գոյությունը հնից մինչև այսօր։ Ոմանք ավելացնում են նաև պատմական, պարագայական և նախդրիվ հյց. հոլովները, բայց սրանք նախդիրներով կազմված ձևվեր են և իրավունք չունեն մտնելու բուն հոլովների շարքը։ Այսպիսով, հայերենի հոլովական հարստությունը նույն է բալթիկ-սլավոնական լեզուների հետ։ Այստեղ պետք է նկատել, որ զանազան հոլովները իրենց ինքնությունը կորցրած և միացած են մի ուրիշ հոլովի հետ. այսպես՝ սեռականը տրականի հետ և այլն, բայց որովհետև կան դեպքեր, ուր նրանք իրենց անկախությունը պահում են (օր. տրականը դերանունների մեջ անկախ ձև ունի), կամ մերթ այսինչ հոլովի հետ է նույնանում, մերթ այսինչ (օր. ներգոյականը եզակիում տրականի հետ է, հոգնակիում հայցականի հետ) և կամ վերջապես ունի երբեմն իրեն հատուկ մի մասնիկ (զ, ի), ուստի և իրենց անկախ գոյությունը ըմբռնելի է։

Այս երևույթի պատճառը ոմանք վերագրել են ուղում Հայաստանի նախաբնիկների (խալդեների) լեզվի ազդեցության։ Կովկասյան լեզուները ունեն ճոխ հոլովում. վրացերենը գիտե 12 հոլով, լազերենը, որ որոշ կետերում վրացերենից ավելի մոտենում է հայերենին, ունի բացի ուղ., հյց., սեռ., տր., բց., գործ. հոլովներից, նաև պատմողական (narratif), որ ուղղականի մի ուրիշ տեսակն է, նույնպես՝ նախդրիվ հայցական և ընկերական (որ գործիականի մի ուրիշ տեսակն է)։ Կովկասյանների պես խալդերեն լեզուն էլ ունի ճոխ հոլովում. կա՝ ուղ., սեռ., տր., հյց., բց. և ներգ. հոլովները (գործիականը չի ավանդված). և այդ է պատճառը, որ հայերենի մեջ էլ հնդեվրոպական նախալեզվի հոլովական վիճակը գրեթե անփոփոխ շարունակվեց, հապավելով միայն կոչականը, որ կովկասյան լեզուների և խալդերենի մեջ էլ արդեն չկար։

Նոր և նորագույն լեզուների մեջ հնդեվրոպական հոլովման կազմությունը բոլորովին այլ ձև ստացավ։

Որովհետև զանազան հոլովներ հանգել էին մեկին, ուստի նրանք իրարից զանազանելու համար հարկ եղավ հնարել մի նոր միջոց. իռլանդերենում հաջորդ բառի նախաձայն բազաձայնը ենթարկվեց որոշ փոփոխության, որ կապված է շատ դժվարությունների հետ. ավելի բնական էր բառի սկիզբը դնել այլևայլ նախդիրներ, ինչ. հարս. բացառականի համար գրվում է միշտ hača նախդիրը, լա. in urbem «ի քաղաք», in urbe «ի քաղաքի», ab urbe «ի քաղաքէ», հն. ἐν οἴκῳ «ի տան», εἰς οἶκον «ի տուն», ἐξ οἴκου «ի քաղաքէ», ռուս. от города «քաղաքից», из города «քաղաքի միջից», իսկ պարզապես города «քաղաքի» սեռական է, ինչ. εἰς τον ἀδελφὸ եղբոր (տր.)։ Սրանց մեջ, ինչպես տեսնում ենք, հոլովները իրենց վերջավորությունը պահում են, իսկ բուն իմաստը որոշողը նախդիրներն են։ Սակայն եթե նախդիրներն են, որ պիտի որոշեն բառի կամ հոլովի իմաստը, ուրեմն հոլովական վերջավորությունը ավելորդ է։ Այսպես, տես-

նում ենք, որ լեզուների հետագա ընթացում ջնջվում են նախ հոլովական վերջավորությունները, և մնում է միայն նախդիրը։

Այս վիճակն են ներկայացնում մեզ նորագրական լեզուները (ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն և այլն), անգլերենը, պարսկերենը, քրդերենը և այլն։ Ֆրանսերենում սեռականն ու բացառականը կազմվում են de նախդիրով, տրականը և ներգոյականը՝ a՝ նախդիրով, գործիականը՝ avec նախադրությամբ։ Իտալերենում սեռականի նշանն է di նախդիրը, տրականինը՝ a, բացառականինը՝ da, գործիականինը՝ con։ Իսպաներենում սեռականի նշանն է de, տրականինը՝ á, կատալան լեզվում՝ սեռ. pg. de, տրական a, անգլերենում սեռականի նշանն է of նախդիրը, տրականինը՝ to, բացառականինը՝ from, գործիականինը՝ withe, by. բրետոներենում սեռականը կազմվում է a, ag նախդիրով (կամ առանց որևէ նշանի), տր. d', բզ. dol, գրծ. guel, dre, ներգ. e նախդիրներով։ Պարսկերենում տրականի նշանն է bā նախդիրը, բզ. äz, գրծ. bā, քրդերենում՝ տր. be, բզ. žə, աֆղաններենում՝ սեռ. da-, տր. na-, բզ. la-, ներգ. pa-. բելուջերենի մեջ, ուր հոլովական ձևերը մեկի են վերածվել, թյուրիմացություն ծագելու դեպքում գնում են՝ բզ. aĕ, գրծ. gō, նախդ. հյց. pa նախդիրները։ Եվ այս բոլորը ուղղակի բառի պարզ ձևի հետ առանց որևէ հոլովական վերջավորության։ Նույնիսկ հոգնակիում, ուր վերջածայն s պահվում է ֆրանսերենում և անգլերենում, ջնջված է միանգամայն կամ պրովանսալ լեզվում, ուր գոյականը զուրկ է s նշանից և միայն հոդն է հոգնակի գառնում, օր. la femo «կինը», li fimo «կանայք» (Salvat, Gram. occ. էջ 27)։

Նախդրավոր հոլովման գրության է հասել նաև բերբերական կարիլ լեզուն, որ սակայն շատ անկարգ հոլովում ունի դեռ։ Ահա այս լեզվի հոլովման նկարագիրը։

Առնենք argar «մարգ» բառը. սա ուղղական ձևն է. բայց երբ նախադասության մեջ իրանից առաջ մի բառ էլ լինի՝ գառնում է ուղ. b urgar և հոլովվում է հետևյալ ձևով.

սեռ.	i rgar	հյց.	argar
տր.		կաչ.	ai argar.
		բզ.	seg argar

Իսկ հոգնակի բառերը կամ այն եզակի բառերը, որոնք սկսվում են i կամ u ձայնավորով, բնավ չեն փոխում իրենց նախաձայնը։

Որոշ եզակի բառեր և բոլոր a-ով սկսվող հոգնակի բառերը հոլովման ժամանակ առանում են նաև u. օր. adhu գառնում է uaphu «քարի»։

Սեռ. հոլով կազմելու համար բառի վրա դնում են b նախդիրը, որ ըստ դառնալու գավառների տեղ-տեղ էլ հնչվում է u, g կամ ii, օր. thasirth b uadhu «ջաղացք քարու»։

Իգական բառերի սեռականը թե՛ եզակի, և թե՛ հոգնակի կազմվում է n, en, ne, a նախդիրներով։

Տրականը կազմվում է i նախդիրով։

Բացառականը կազմվում է seg նախդիրով, որ և լինում է նաև se, sug, ·

Եվրոպական ամհարիկ լեզվում հոլովները կազմվում են նախդիրներով. yä սեռականի համար, lä տրականի, kä, tä բացառականի, bä ներգոյականի. ընկերականի կամ պատճառ (միջոցով) ցույց տալու համար։

Այսպիսով, վերանում է լեզվից վերջահոլով հոլովման դրությունը և նրա փոխարեն գրվում է նախամասնիկային դրությունը։

Այս դրությունը բնականաբար մի անգամից չի առաջանում լեզուների մեջ, այլ երկար տատանումներից և որոնումներից հետո։ Հնի և նորի միջև կա մի խառնակ ու անորոշ վիճակ, երբ հոլովման կանոնների և ձևերի բարդությունը երբեմն այն տատիճանի է հասնում, որ մարդիկ դժվարանում են որոշ բառեր հոլովել, հատկապես օտար փոխառությունները։ Այս կարգի բառերը ամանք պահում են օտար լեզվի հոլովման ձևով, ամանք հոլովում են իրենց լեզվի կանոնների համաձայն, ամանք էլ չեն հոլովում։ Այս վիճակումն է գտնվում, օրինակ, գերմաներենի հոլովումը, որ զանազան քերականագետներ զանազան ձևերի են վերածում. ամանք գնում են 6 հոլովում, ուրիշներ՝ 5 կամ 4, ուրիշներ էլ՝ 3 կամ 2։ Բառը, նայելով թե արական է, իգական կամ չեզոք, և կամ թե միավանկ է, թե բազմավանկ, պատկանում է այս ինչ կամ այն ինչ հոլովման։ Օտար բառերը տարտամ վիճակ ունեն. մերթ անցնում են այս հոլովման, և մերթ՝ այն հոլովման, կամ թե՛ եզակիում այս ինչ հոլովմամբ են հոլովվում, հոգնակիում՝ մի ուրիշ։ Ամեն մի հոլովման համար կան բազմաթիվ բացառություններ։ Հատուկ անունները առանձին հոլովական ձևեր ունեն, որ նրանց վերջավորությունների համեմատ փոխվում են։ Iesus Christus անունը լատիներեն

է հոլովվում և ոչ գերմաներեն։ Բաներ կան, որ մարդ չգիտե, թե ինչպես պետք է հոլովել. և վերջապես կան շատ բաներ, որոնք չեն հոլովվում։

Այսպես է նաև չեխերեն լեզվի հոլովումը։ Այստեղ էլ տեսնում ենք, որ հատուկ անուններըը խառն. հոլովումներ ունեն. ոմանք պահում են այն հոլովաձևերը, որ ունեն բնիկ լեզվի մեջ, ոմանք հոլովվում են չեխերենի օրենքներով, ուրիշներ բնավ չեն հոլովվում, և երբ հարկ լինի հոլովել, հոլովում են նրանց բնկերակցող գյուղ, քաղաք, գետ և այլն բառերը, իսկ այս բառերը հատկապես դրվում են, որպեսզի հոլովը կարելի լինի որոշել։ Ռուսերենում բազմաթիվ օտար բառեր բնավ չեն հոլովվում, ինչպես՝ депо, метро, фойе, тире, пальто, бюро, кашне, какаду, кенгуру, кофе, ситро, жюри, пенсне, кино և այլն։

Սլովակերենում կա 3 սրական հոլովում, 3 իգական հոլովում և 4 չեզոք հոլովում, որոնցից ոմանք ունեն և իրենց երկրորդ տեսակը, որով ընդամենը լինում է 14 հոլովում և բազմաթիվ բացառություններ։

Այս խառնակ վիճակը բնականաբար նախադուռն է վերջնահոլովով հոլովման դրությունը ջնջելու և նրա տեղ հաստատելու նախամասնիկներով կամ հոդերով հոլովում։ Մինչև վիճակը ներկայացնում է օր. բուլղարերենը։ Այս լեզուն սլավոնական ճյուղին է պատկանում, որ ինչպես ռուսերենի օրինակը ցույց է տալիս, հոլովական դրությունը շատ լավ է պահպանում։ Բայց բուլղարերենը պահում է միայն ուղ., կոչ., հյց., հոլովները, իսկ մյուսները կազմում է նախդիրներով. այսպես՝ սեռականը և սրականը՝ на նախդիրով, բաց. отъ, գրծ. съ, ներգ. въ, որոնք դրվում են հայցականի վրա։

Նույն խառնակ դրության մեջ է գտնվում նաև ալբաներենը։ Այստեղ հոլովման մեջ չորքանչյուր հոլով որոշ և իր համար սեփական առանձին ձև չունի, այլ նույնանում է մի ուրիշ հոլովի հետ։ Այսպես՝ անորոշ բառերի հոլովման մեջ ուղ., հյց., կոչ. և ներգ. միևնույն ձևն ունեն, ինչպես և սեռ., տր. և բցո. նույնն են իրար հետ։ Որոշյալ բառերի հոլովման մեջ դրությունը մի քիչ ավելի լավ է..բառը առանում է 4 ձև, ուղ. և կոչ. առանձին-առանձին ձևեր ունեն. սեռ., տր. և բցո. միևնույնն են, հայց. և ներգ. միևնույնն են։ Ըստ այսմ, ներգոյական հոլովը թե որոշյալ, և թե անորոշ միշտ նույնն է հայցականի հետ։ Այս չափով վիճակից դուրս գալու համար ալբաներենը դիմել է զանազան միջոցների. սեռականին հատկացրել է որոշիչ i, e, të հոդերը՝ ըստ այնմ, թե բառը տր., իգ., և չեզոք է։ Բացառականը առանում է nga կամ prej նախադրություններ, կոչականը առանում է o ձայնարկություններ, ներգոյականը՝ në, երբեմն էլ՝ ndë, ndën, nëpër նախադրություններըը։

Հնդեվրոպականից դուրս ուրիշ լեզուների մեջ էլ կան նման խառնակ դրություններ։ Բիրմաներենում հոլովումը շատ բազմազան է. օր.

Ուղղականի մասնիկներն են՝ thī, -ga, -mūga, -raga, -mū
Հյց. go
Նախ. հյց. -t'o
Տր. -aa
Գրծ. -hneng, որ նաև կրավորական բայերի ենթական է։
Ներգ. -hnoit, -dweng, -way, -h.na
Բցո. -hmā.

Անշուշտ այս խառնակ դրությունը պահանջում է մի ելք։ Ջնջելով վերջահոլով հոլովման դրությունը և հաստատելով նրա տեղ նախամասնիկային դրությունը, լեզուները կատարում են հետադարձ մի շարժում դեպի պարզացում, դեպի բառի հաստատուն ձևը, դեպի անջատականություն։

Այսպես, երբ առնենք հնդեվրոպական նախալեզուն, կամ նրա հավատարիմ ժառանգներից սանսկրիտը, հույնը կամ լատինը, չենք կարող ասել, օր., թե ինչպես պետք է ասել «գայլ». եթե՝ vlqos, դա եզ. ուղղականի ձևն է, եթե՝ vlqe, դա կոչականի ձևն է, եթե vlqō, դա երկ. ուղ., կոչ., հյց. ձևն է և այլն։ Եվ չկա ոչ մի ձև, որ չեզոքաբար և միմիայն «գայլ» անկախ գաղափարը տա մեզ։ Այսպես նաև լտ. equus «ձի», եզ. ուղ. է, equī եզ. սեռ., equōs հգ. հյց. է և այլն։ Իսկ նոր լեզուների մեջ, ինչպես հայերենը, գերմաներենը, անգլերենը, ֆրանսերենը, գաղափարը առանձնանում և դառնում է անկախ իր զանազան վերջավորություններից։

Այսպիսի վիճակումն է նաև արաբերենը. գրաբար լեզուն ուներ ուղ. -u, հյց. a, սեռ. i վերջավորությունները. ժողովրդական լեզվի մեջ, վերջածայն կարճ ձայնավորները առհասարակ ընկած լինելով, հոլոշներն էլ անհետացան, ուստի պետք եղավ կամ տեղով որոշել կամ նախդիրներով. սեռականի համար

դրել են matā', batà', tab', xʷssat բառերը, որոնք նշ. «սեփակա-
նություն». օր. kitāb matā' Buṭrus «Գիրք Պետրոսի»:

Արաբերենից շատ առաջ՝ նրա ցեղակից եբրայեցերենն էլ հասել է նախդրավոր հոլովման դրության. այստեղ էլ ջնջվել են հոլովական վերջավորությունները և հոլովումը վերածվել է հետևյալ պարզագույն ձևին:

Սեռականը կազմվում է հարադրությամբ. ինչ. beit ēl «Տան աստծո».

Տրականը՝ lə նախդիրով, որ նշ. «դեպի».

Հայցականը՝ āt նախդիրով.

Բացառականը՝ mi նախդիրով.

Գործիականը և ներգոյականը՝ bə նախդիրով:

Նմանություն ցույց տալու համար դրվում է kə «որպես, համեմատ» նախդիրը:

Այսպես նաև սամարերենը, որ հոլովական վերջավորություններ չունի և իր բոլոր հոլովները կազմում է միայն նախդիրների օգնությամբ:

Եթովպական սեմերեն լեզուն էլ հասել է նույն նախդրավոր հոլովման. սեռականը կազմվում է nay նախդիրով. ինչ. nay Pieṭrōs meṣebâf «Պետրոսի գիրքը». արականը կազմվում է nĕ կամ lĕ նախդիրով. ինչ. nĕ-Maryam կամ lĕ-Maryam «Մարիամին».—հայցականը նույնն է ուղղականի հետ. բայց կարելի է նաև դնել արական. գործիականը կազմվում է bĕ նախդիրով:

Հոլովական քայքայման նույնպիսի ընթացքում է գտնվում դանեզերենը. այստեղ կա 4 հոլով և 4 հոլովում. հոլովման դանազանությունը երևում է հոգնակի ուղղականի կազմության մեջ, որ ունի e, er, r և զրո վերջավորությունները. բայց բոլոր հոլովներն էլ նման են ուղղականին, բացի սեռականից, որի վերջավորությունն է s: Սակայն բացի սրանից՝ սեռականը կարելի է կազմել դանազան նախադրություններով. ինչ. aī, i, pā, til, omkring, efter, for. արականը, որ նույնն է ուղղականի և հայցականի հետ, ճանաչվում է իր տեղով. դրվում է հայցականից առաջ, բայց կարող է առանձնել նաև til, for, af նախադրությունները, որոնք հատուկ են նաև սեռականին: Նախադրությունները, որոնք համապատասխանում են նախդիրային դրության դեռ վերջնական չափով հաստատված չէ ուրեմն, որին հասնելու համար պետք է ջնջել սեռականի առանձին կազմությունը և նախդիրներից մեկը կամ մյուսը ընդհանրացնել սեռականի կամ արականի համար: Նույն դրության մեջ է և շվեդերենը, ուր բոլոր հոլովները ջնջվել են և միայն սեռականը կա, որ կազմվում է -s-ով: Բայց կան նաև սեռականացուցիչ դանազան նախդիրներ, ինչ. av «-ից», till «ց», bland «առակը», hos «մոտը», på «վրան», at «ի» և այլն. արականի համար էլ åt, för:

Այսպիսի խառնակ դրություն է ներկայացնում նաև աֆղաններենը, որ հոլովման կողմից շատ ավելի հետամնաց է, քան իր ընկեր պարսկերենը: Աֆղաներենը ոչ միայն չի հասել կանոնավոր նախդիրների դրության, այլև նախդիրները բազմաթիվ են և նախդիրների հետ դրվում են նաև հետամատնիկներ. այսպես (բառը համարելով—).

Սեռ. da-
Տր. va-, va-ta, va-vata, tâ-, -vata, -la, -lara
Բց. la-a, la-na, tar-a, tar-na, da-, -da-na, la-, lara-
Ներգ. pa-, pa-kše:

Կանոնավոր ձևը պիտի առացվի այն ժամանակ, երբ ընդբվի միայն մի նախդիր (ինչպես սեռականն է) և բոլոր հետամատնիկները ջնջվեն:

Ինչ որ ասացինք եզակիի համար, նրան զուգահեռ պետք է տեսնանալ նաև հոգնակիի համար: Երբ հոգնակիի նախկին ձևը ջնջվեց, լեզուները սկսեցին հնարել նոր հոգնակերտ մատնիչներ. այսպես, պարսկերեն -an և -ha, վախի՝ -išt, բելուջերեն՝ -ān, կրմանջերեն՝ en, er և այլն:

Լեզուներից ոմանք այստեղ էլ հասել են միաձևության բերին. անգլերենն հոգնակին լինում է միօրինակ -s հանգով. ֆրանսերենը՝ s (բայց երբեմն էլ x, որ միևնույնն է) և այլն: Բայց ուրիշներ առատանում են դանազան ձևերի մեջ: Ամենից խառնակ դրություններից մեկն է ներկայացնում, օր. կիլտական մի լեզուն, որի մեջ հոգնակիի կազմությունը 7 ձև ունի.

ա) բառի մեջի ձայնավորը փոխելով. ինչ. march «ձի», հգ. meirch., haearn «երկաթ» հգ., heyrn.

բ) ավելացնելով հոգնակիի վերջավորությունը.

գ) ներքին ձայնավորը փոխելով. և միևնույն ժամանակ հոգնակիի վերջավորությունը ավելացնելով. այսինքն ա) և բ) միասին.

դ) ջնջելով բառի ծայրից եզակիի վերջավորությունը. ինչ. pluen «փետուր», հգ. plu.

ե) ջնջելով եզակիի վերջավորությունը և ներքին ձայնավորն էլ փոխելով. այսինքն ա) և դ) միասին. օր. cneuen «ընկույզ», հգ. cnau.

զ) եզակիի վերջավորությունը հանելով և նրա փոխարին դնելով հոգնակիի վերջավորությունը. օր. cwingen «ճագար», հգ. cwingod.

է) այս միևնույնի վրա ավելացնելով նաև ներքին ձայնավորի փոփոխությունը. օր. gelyn «թշնամի», հգ. gelinion։

Կան նաև շատ բառեր, որոնք երկու կամ երեք տեսակ հոգնակի ունեն. ինչ.

esgob եպիսկոպոս, հգ. esgyb, esgobion
kaer դղյակ, հգ. keyrydd, kaeroedd, caereu.

Հետաքրքրական են այս կողմից Գամբրի իրանյան բարբառները, որոնք հոգնակին այսպես կորցնելուց հետո, նոր որոնումներով անցել են հոգնակիի ամենանախնական ձևին, այն է՝ «խումբ» նշանակող բառերի հարադրությանը. այսպես՝ սարի-քոլի բարբառը պրս. xeyli «շատ» բառից սեռեղծել է -xel մասնիկը (օր. čed «տուն», čed-xel «տներ»), չիղնի բարբառը՝ gala «խումբ, բազմություն» բառից՝ baĭ-gala «տղայք» և այլն։

Նախդիրների գործածությունը՝ այս ինչ կամ այն ինչ հոլովը որոշելու նպատակով՝ գտնում ենք նաև հայերենի մեջ, այսպես՝ ի ներգոյականի, նախդրով հայցականի և բացառականի վրա. զ որոշյալ հայցականի, պատմականի և պարառականի վրա, ց տրականի իմաստով (ցնա, ցքեզ) և այլն։ Մինչև անգամ ունենք առ նախդիրը տրական կազմելու համար. այսպես՝ Նոր կտակարան Ա. Մնացորդաց գրոց մեջ Գլ. ԻԴ. 7—18. և ել վիճակն առաջին առ Յարիմ. և երկրորդն առ Յուգայա, և երրորդն առ Բարամ, և չորրորդն առ Դեսուրիմ, և հինգերորդն առ Մելքիել, և վեցերորդն առ Մէխման, և եւթներորդն առ Ակովս, և ութերորդն առ Աբիայ, և իններորդն առ Յիշով, և տասներորդն առ Յեքոնիայ և մեհասանեորդն առ Եղասաւէի, և երկոտասաներորդն առ Յակիմ... և այսպէս 24 անգամ, որոնց բոլորի դեմ յոթանասունից մյուս թարգմանությունը դնում է սովորական տրական ձև. ինչպես Յարիմայ՝ փխ. առ Յարիմ և այլն։

Մինչև անգամ մեր մեսրոպյան շրջանի թարգմանության մեջ գտնում եմ՝ Եւ ասէ առ աշակերտսն (Ղկ. ԺԲ, 1). Ասաց եւ առ աշակերտսն իւր (Ղկ. ԺԷ. 1). Ասաց եւ առ աշակերտսն (Ղկ. ԻԲ, 22) և այլուր շատ տեղեր։

Սակայն հայերենն այս երևույթից չի օգտված և հոլովման մեջ նախդիրների գործածությունը մինչև վերջը չի օգտագործած։ Հայերենի հոլովները 3 ձևով են. վերջահոլով (հացի, հացին, հացից), նախդրիվ (զբան, ի բան), նախդրիվ վերջահոլով (ի հացի, գնացէ)։ Նոր հայերենում, ինչպես ուրիշ դեպքերում, այնպես և հոլովման մեջ նախդիրները իսպառ ջնջվել են և վերջահոլովի հոլովման հին դրությունը ավելի ևս շեշտված է։

Հոլովական դրության այս զարգացումը (վերջահոլովից դեպի նախդիրավոր) վեճի առարկա է դարձած գիտունների մեջ։ Զարգացման պատճառը մարդկային մտայնության փոփոխության արդյունք է արդյոք և ավելի պարզ բառով մարդկային մտքի ավելի մեծ զարգացում չի՞ նշանակում։ Եթե առնենք մի կողմից չինարենի հոլովումը, մյուս կողմից ռուսերենի և երրորդ կողմից անգլերենի հոլովումը, կարող է լեզվաբանը մոլորված և մտատանջ դրության մեջ ձեալ և մտածել, թե ինչ որոշում տա։

Բայց երբ առնենք հայերեն հին ու նոր ձևերը, մի կողմից դրբ. քաղաքաց և մյուս կողմից աշխ. քաղաքների, պարզվում է ամեն ինչ և այլևս մտատանջության բան չի մնում։

Ո՞վ կարող է համեմատել ե կամ ավելի հին դարերի հայը իր կամ ի դարերի հայի հետ, և զարգացման բարձրությունը նկերին տալ։ Ջենք ուզում խոսել այս մասին, բոլորովին ավելորդ գտնելով այն։

Բայց մենք ավելի պարզ պատասխան ենք տալիս հարցին. ոչ. զարգացում, ոչ էլ մտայնության փոփոխություն. այլ միայն ձգտումը դեպի պարզություն, դեպի աշխատանքի խնայողություն և դյուրություն։

Ինչպես լեզուների մեջ կա ձգտում հոլովումը նախդրավորի վերածելու, կա նաև ձգտում հետադրությամբ հոլով կազմելու։ Օր. հնդկական մարաթի լեզուն թեև վերջահոլով ձևն ունի իրրև շարունակություն սանսկրիտի, բայց որոշ հոլովներ կարող են կազմվել հետադրություններով. այսպես, օրինակ, բացառականը, որ առացել է երեք տարբեր հոլովաձև 1) միջից, 2) մոտից, 3) կողքից, որոնք կազմվում են հետադրությամբ։ Հայե-

բենի մեջ էլ գործիականը վերածվելով ընկերականի, առանում է ճետ հետադրությունը. ծառայով ուղարկեցի> ծառայի հետ ուղարկեցի։

Բացի նախդիրային դրությունից կա և մի ուրիշ ճանապարհ, ուր ձգտում են. այն է՝ մասնիկների հավասար գործածությամբ քե եզակիում, և քե հոգնակիում, ինչպես է թուրքերենի մեջ և այլն։ Այս վիճակին հասել է հինդուստանին. օր. mard «մարդ» բառի հոլովումը.

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	mard	mard!
Տր.	mard-ko	mardoṉ-ko
Սեռ.	mard-kā	mardoṉ-ka
Հյց.	mard-ko	mardoṉ-ko
Բցռ.	mard-se	mardoṉ-se
Ներգ.	mard-men	mardoṉ-men
Գրծ.	mard-ne	mardoṉ-ne
Կոչ.	he mard!	he mardo!

Կամ նույնպես աֆղաններենը. օր.

	Եզակի	Հոգնակի
Ո. Հ.	γar «լեռ»	γrūna
Ս.	da γṛa	da γrūṇa
Տ.	γṛa la	γrūnō la
Բ.	bala γṛa	la γrūnō
Ն.	pa γṛa	pa γrūnō

Այս վիճակին հասավ նաև աշխարհաբարը, ինչպես պիտի տեսնենք։

Մասնիկների նույնացումը քե եզակիում, և քե հոգնակիում մի երևույթ է, որ հատուկ է ոչ միայն հնդեվրոպական լեզուներին, այլ, ինչպես թուրքերենի օրինակը ցույց տվավ, նաև ուրիշ ընտանիքների և ընդհանուր լեզվաբանական երևույթ է։ Այս երևույթի հետ կա նաև հոլովումների միօրինակությունը, որ բոլոր լեզուների համար էլ մի իդեալ է, որին հասել են արդեն նախապատմական հոլովում ունեցող եվրոպական նոր լեզուները։ Բայց սրանցից դուրս, կան նաև ուրիշ լեզուներ, որոնք հասել

են այդ աստիճանին և փոխանակ դանազանելու առաջին հոլովում, երկրորդ հոլովում, երրորդ հոլովում և այլն, հասել են մի ընդհանուր հոլովման։ Այսպես, օրինակ, ամերիկյան լեզուներից մեկը՝ բևոյա կամ տուկանո հասել է այսպիսի միօրինակության։ Այս լեզվի մեջ բոլոր գոյականները հետևում են այս հոլովման.

	Եզակի		Հոգնակի
Ո.	óko	ջուր	oko-koa
Ս.	oko-kéhe		oko-koá-kehe
Պատ.	okö-náyeni	ջրի համար	oko-koá-nayeni
Տ. Ն.	oko-ná	ջրին, ջրում	oko-koá-na
Գ.	oko-nákohoni	ջրով	oko-koá-nakohoni
—	oko-roye	ընդ ջուր, ջրով	oko-koá-roye.

Դրավիդյան տելուգու լեզուն էլ հասել է քե հոլովական միության, և քե եզակի ու հոգնակի թվերի միակերպության։ Ահա այդ լեզվի հոլոՓները և նրանց հոլովական վերջավորությունները.

Ո.— —
Ս. -yokka
Տ. -ki կամ-ku
Հ. -ni կամ-nu
Գ. -četa
Ընկ. -to, -tōda
Ն. -lō
Կ. -ā

Հոգնակիի մեջ գրվում է նախ lu մասնիկը, որի վրա ավելանում են նույն հոլովական մասնիկները՝ ճիշտ մեր աշխարհաբարի նման։

Տիբեթերենում գոյական և ածական, թվական, դերանուն և դերբայ հոլովվում են միևնույն ձևով. հոգնակիի հոլոՓներն էլ եզակիի նման են. նախ գրվում է հոգնակիի վերջավորությունը, ետև հոլովական մասնիկը՝ ճիշտ մեր աշխարհաբարի պես։

Չիլիի բնիկների լեզուն երկակին պահելով հանդերձ հասել է վերջհոլովի միօրինակության, բայց միօրինակությունն ոչ միայն բոլոր գոյականների հոլովման, այլև դերանունների, այլև եզակի, երկակի և հոգնակի թվերի հոլովման։ Իբր օրինակ առնենք čao «հայր» բառը.

	Եզակի	Երկակի	Հոգնակի
Ո.	čao	čao egu	pu čao
Ս.	» -ñi	» » ñi	» » -ñi
Տ. Հ.	» -meu	» » -meu	» » -meu
Բ. Գ.	» -mo	» » -mo	» » -mo

Կոչականը բոլոր թվերի համար կազմվում է բառասկզբում դնելով a (իբր ձայնարկություն)։

Ճիշտ այսպես է նաև մուննդա խմբի ռոկ լեզուն, որ եր կակին պահելով հանդերձ, հասել է վերջնահոլով կանոնավոր ս միօրինակ հոլովման թե գոյականների և թե դերանունների հա մար՝ բոլոր երեք թվերով. օր. առնենք bing «օձ» բառը.

	Եզակի	Երկակի	Հոգնակի
Ո.	bing	bing-king	bing -ko
Ս.	bing-a	» » -a	» -ko-a
Տ.	» -ke	» » -ke	» -ko-ke
Հ.	» -ke	» » -ke	» -ko-ke
Բ.	» -ete	» » -ete	» -ke-ete
Գ.	» -te	» » -te	» -ko-te
Ն.	» -re	» » -re	» -ko-re

Հայցականի վերջավորությունն է -kè, որ կարելի է դնել և չդնել. երբ խոսքը երկդիմի է դառնում, այն ժամանակ -kè-ն պարտադիր է։

Կոչականը լինում է he bing, երկ. he bing-king, հգ. he bing-ko, բայց հոլով չի համարվում և կարելի է ուրիշ բացա դանչություններ էլ դնել։

Բոլոր լեզուներն էլ հոլովական միօրինակության չեն հա սած, դա մի իդեալ է. շատերը ներդաշնակության օրենքի կամ այլ պատճառներով բազմազան ձևեր ունեն։ Օր. մանդոլական բուրյաթ լեզվում հոլովմունքն է՝ (բոլորն էլ վերջնահոլով).

Սեռ.	-i, -in
Տր. ներգ.	-da, -de, -do, -dö
Հյց.	-gi, yi, -i
Բդ.	-aha, -ehe, -oho, -öhö
Գրծ.	-r, -ar, -er, -or, -ör
Ընկ.	-tai, -tei, -toi, -töi
Հոգն. ուղ.	-nar, -ner, -nut, -ut, -t։

Մյուս հոլոֆները՝ եզակիի վերջավորություններով։

Այս դլխի ամբողջ ընթացքից երևաց, որ հոլոֆները նախա պես անկախ բառիկներ են եղել, որոնք կցվեցին բուն բառին, ապա՝ մաշվելով դարձան հոլովական մասնիկներ (վերջնահոլով), Հետո, սրանք էլ մաշվելով և ընկնելով, առաջացավ նախդրավոր հոլովումը։ Այսպես՝ առնակրիտից մինչև անգլերենը, որ հնդեվրոպական լեզուների ընթացքն է։

Բայց պետք չէ կազմել այն սխալ կարծիքը, որ իբր թե աշխարհիս բոլոր լեզուներն էլ այս ընթացքով են ընթացել։ Բառիկները ինչպես վերջից, այնպես և առջևից կարող էին կցվել, ուստի փոխանակ վերջնահոլովի գրություններից երկար բարակ համբորդելու, կարող էինք կարճ ճանապարհով հասնել նախդրավոր, կամ նախամասնիկավոր հոլովման, ինչպես և արել են բազմաթիվ լեզուներ։

Օր. Օվկիանիայի տահիթի լեզուն ունի վեց հոլով և նախդրավոր կամ նախամասնիկավոր հոլովում, որ միօրինակ է թե եզակիի, և թե հոգնակիի մեջ. ինչ. (te որոշիչ հոդով).

Ո.	te tiare *ծաղիկը*	te haavâ *դաստավորը*
Կ.	e te tiare	e te »
Հ.	te tiare	te »
Ս.	no te »	no te »
Տ.	i te »	i te »
Բ.	na te »	i te »

Հոգնակի

Ո. Հ.	te mau tiare	te mau	haavâ
Կ.	e te » tiare e!	e te »	»
Ս.	no te » »	no te »	»
Տ.	i te » »	i te »	»
Բ.	na te » »	i te »	»

Հատուկ անուններից Terii անձնական հոլովումը՝ o որոշիչ հոդով.

Ո.	o Terii	Ս.	no (na) Terii
Կ.	e » e!	Տ.	ia »
Հ.	ia »	Բ.	e (na) »

Սրան շատ նման է Նոր-Զելանդիայի լեզվի հոլովումը օր. ranga-tira «պարոն» բառից՝

Ո. Հ.	te ranga-	tira	
Ս.	no »	»	(իսկ եթե իր սեփականությունն է, ասվում է՝ na ranga- zira)
Տ.	ki »	»	
Բ.	i »	»	

Նույն ձևով հոլովվում է և հոգնակին, բայց միայն te նախամասնիկի տեղ առանալով nga հոգնակերտը, ինչ. Ո. Հ. nga ranga-tira, բայց կարելի է նաև ասել Ո. te anga ranga-tira և այլն՝ ցվերջ։

Այսպես է նաև այնու լեզուն, որ հոլովում չունի, բայց ունի զանազան նախդիրներ, նույնիսկ մի ձայնավորից բաղկացած նախամասնիկներ, որոնք հոլով են կազմում։ Սրանք էլ նախկին նախդիրների մնացորդն են։ Այսպես՝ e «դեպի», o կազմում է բացառական, ko «դեպի». օր. pišne «ծովափ», epišne «դեպի ծովափ», opišne «ծովափից»։

Մարկիզյան կղզիների լեզվով էլ հոլովումը նախդիրներով է. այսպես՝

Ո.	te	Հ.	նման Ո. կամ Տ։
Ս.	no	Բ.	na, ma
Տ.	i	Կ.	e

Պոլինեզյան հավաք լեզուն ունի 10 հոլով (ուղղական, երկու սեռական, տրական, հայցական, նախդիրով հայցական, կոչական, բացառական, գործիական և ընկերական). բոլորն էլ նախդիրով են կազմվում և գոյականը քե՛ եզակի, և քե՛ հոգնակի ձևում է անփոփոխ.

օր. անից=	mai	ka	hale
	ից	(հոգ)	տուն
աներից=	mai	na	hale
	ից	(հգ.)	տուն

Միևնույնն է նաև մաո-քմեր խասի լեզուն, որ ունի կարի նախդիրներով հոլովում, եզակին և հոգնակին միևնույն ձևով. օր. brīw «մարդ», հգ. ki brīw «մարդիկ» բառից.

Ուղ.	u brīw	հգ. ki brīw
Սեռ.	jong u brīw	jong ki brīw
Տր.	ha u brīw	ha ki brīw
Հյց.	ia u brīw	ia ki brīw
Բց.	na u brīw	na ki brīw
Գրծ.	da u brīw	da ki brīw

Նույնպես է գարձյալ Օվկիանիայի սամոա լեզուն, որ ունի le որոշիչ հոդով հոլովում, նախդիրներով և եզ. ու հգ. միօրինակ ձևով. ինչ.

Ուղ.	o le tama	տղան
Սեռ.	o le (կամ ale)	tama
Տր.	mo le (կամ ma le)	»
Հյց.	i (կամ ia) le	»
Բց.	e le (կամ nai le, mai le)	tama
Կոչ.	tamaē	

Հոգնակին նույն է, միայն le հոդը վերացվում է։

Լեզուների մի ուրիշ շարք էլ կա, որ հոլովական շփոթության հանդելուց հետո, փոխանակ նախդիրներ առնդնելու, օգտագործել են հետադրություններ, որոնք մաշվելով առաջացրել են նոր կրճատ հետամասնիկներ։ Այս կարգի մասնիկները կոչվում են postfix—հետդիր։ Սրանով առացվում է ոչ թե նախդրավոր նոր հոլովում, այլ հետդրավոր հոլովում, որ վերջահոլով հոլովման մի ուրիշ, ավելի նոր տեսակն է։

Այսպես՝ սանսկրիտից պրակրիտին և պրակրիտից նոր հնդկերենին անցնելու ժամանակ իրար հետ նույնացել էին սեռականն ու տրականը, գործիականն ու բացառականը, ներգոյականն ու սեռականը, որոնք զանազանելու համար գոյականի այդ հոլովների վրա գրվել են այդպիսի հետդիրներ։ Հնդկական սինհալի լեզուն տրականի վերջին դնում է ţa, գործիականի վերջին՝ visin, ընկերականի վերջին՝ hā (որ պալի լեզվի saha «միասին» բառն է), սեռականին՝ gē, բացառականին՝ gen (որ է պալի լեզվի gēhēna «տնից» բառը), բացառականին նաև՝ keren, ներգոյականին՝ kerehi, kere կամ նաև՝ karā (որ նշանակում է «մոտ»)։

Երևի նույնպիսի ընթացքով է անցել տիբեթական սիկկիմբուտիա լեզուն, որ իր 7 հոլովները կազմում է հետդիրներով.

այսպես՝

Ո.	khim	či մի տուն
Ս.	»	ki
Տ.	»	lo
Հ.	»	կամ khim lo
Ն.	»	na
Բ.	»	ne կամ le
Գ.	»	kyi

Հոգնակի չունի. հարկավոր դեպքում դնում են ča կամ to, որից հետո գալիս են հոլովական մասնիկները։

Նոր գիտուններից ամենք այնպես առաջ են գնում, որ երբ լեզվի մեջ հոլովումը հասնում է այս աստիճանին, ուրանում են նրա գոյությունը, վերացնում են սեռական, տրական, հայցական և այլն անունները և տալիս են նոր անուններ, ինչպես դիմում (կոչական), ենթակա (ուղղական), առարկա (հայց. և տրակ.), գործիք (գործիական), կապակցություն (սեռական) և այլն, կամ թե ենթակայի հոլով, առարկայական հոլով, հավելվածական հոլով, առորդասության հոլով և այլն (տե՛ս Iespersen, The phil. of gram., 1929, էջ 185—6)։ Այս անուններով իրր թե հոլովը հանվում է ձևաբանության և մտնում է շարահյուսության մեջ, ուրիշ խոսքով այլևս չի քննվում նրա ձևը, այլ միայն պաշտոնը, որի բուն նպատակը մանկավարժական է, այն է՝ ուսման հեշտացումը նորուս աշակերտների համար։

Այս մեթոդին ուզում են հետևել նաև մերոնցից ամենք՝ թեև շատ ավելի փոքր չափով, այն է՝ ուրանալով սեռականի և հայցականի գոյությունը, նրա հետ նաև այս անունները։

Բայց իրոք ինչ առանձին տարբերություն, եթե հոլովը չկոչվի այլևս սեռական, այլ՝ կապակցական, կամ չկոչվի այլևս հայցական, այլ՝ առարկայական և այլն, կամ թե աշակերտը այդ հոլովները սովորի ոչ թե ձևաբանության, այլ շարահյուսության մեջ։ Եթե իրոք մանկավարժորեն կա որևէ հետաքրքրություն՝ հոլովները հերթականությամբ առաջին մասում, թե երկրորդ մասում սովորելու մեջ, կարող են տեղափոխել այս տեղ, սեռական և այլն անուններն էլ միասին փոփոխելով, որովհետև անունների փոփոխությունը ոչինչ չի տալիս. դրանք պայմանական բառեր են, որոնք ընդհանուրի կողմից ընդունված են և ոչ ոք այլևս արժեք չի տալիս նրանց ներքին նշանակու-

թյան և բոլորն էլ պահում են միմիայն ձևական հարմարության համար։ Ո՞վ է հայցական բառը գործածելիս մտածում հայցելու մասին, կամ սեռական ասելիս՝ ինչ որ սևի մասին. նույնիսկ հին լեզուների համար ճիշտ չէ ուղղական բառը, որ հարմարվում է հայերենին, պարսկերենին, ռուսերենին և այլն։

Գալով հատկապես հայերենին, անունների փոփոխությունը բոլորովին ավելորդ է, որովհետև հայերենի մեջ հոլովները դեռ ինքնման ճանապարհը չեն մտած։

Դրավիդյան լեզուները բազմաթիվ հոլովներ ունեն, բայց նրանց քերականները հետևելով սանսկրիտ քերականներին, վերցրել են միայն ութ հոլով, որոնք անվանվում են ոչ թե առանձին անուններով, այլ ըստ կարգի. այսպես՝

առաջին	հոլով	—ուղղական
երկրորդ	»	—հայցական
երրորդ	»	—գործիական (որի հետ և ընկերական, թեև սա առանձին հոլով է)
չորրորդ	»	—տրական
հինգերորդ	»	—բացառական
վեցերորդ	»	—սեռական
յոթերորդ	»	—ներգոյական
ութերորդ	»	—կոչական

Այսպես են նաև սերբերը, որոնք իրենց 7 հոլովները ոչ թե կոչում են ուղ., սեռ., տր..., այլ ա, բ, գ...։ Այս սխեմային հետևեցին նաև մեր հարևան ադրբեջանցիները, որոնք արաբական հոլովական անուններին հարմար թարգմանություն չգտնելով, դիմեցին գաղական թվականների օգնության։

Այս բոլորը ցույց է տալիս, որ անունները նշանակության հետ կապ չունեն։

ԳԼՈՒԽ ԺԵ

ՀՈԼՈՎՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գրաբարի հոլովումը

Հնդեվրոպական հոլովմանց հիմնական տարբերությունը ինչպես գիտենք, բուն է կազմում, օր. եզ. հյց. mādérm, ék'wās, vḷkon կամ հգ. ուղ. mātéres, ék'wās, vḷkās ձևերի մեջ թե տարատառը, և թե n, s վերջավորությունները նույն են. տարբերությունը կայանում է միայն առաջինում բազաձայն բունի, երկրորդում ā ձայնավորի և երրորդում ō ձայնավորի մեջ.

Բունը հնդեվրոպական քերականության սկզբունքով տարատառից ու վերջավորությունից անջատ է ու անկախ. հետևյալ բունը և վերջավորությունը իրարև մի ամբողջություն ըմբռնելով՝ երկուսը միասին իրարև մի մասնիկ համարվեցին, այսպիսով, բունի գազափարը վերացավ և մարդիկ բառի մեջ սկսեցին այլևս տեսնել միայն երկու տարրը, այն է՝ արմատ և մասնիկ (կամ մասնիկներ). Այսպես, օր., լտ. հգ. տր.-բց. pedibus որ կազմված էր երեք տարրերից (արմատը՝ ped, բունի i և վերջավորությունը՝ -bus), այլևս համարվեց բազկացած երկու տարրերից և i բունը միանալով -bus վերջավորության մասնիկը համարվեց ոչ թե -bus, այլ՝ -ibus: Նույնպես հնդ. sūnú և այլն ձևի բառերի մեջ հգ. արականի վերջավորությունն է այլևս ոչ թե nu, այլ՝ ūnu. Նմանապես հն. ուղ. ὕπνος, սեռ. ὕπνου, տր. ὕπνῳ և այլն ձևերի մեջ այլևս նույնի համար չկա նշանակ ձևով մի բուն, այլ միայն ὑπν- արմատ և -ος, -ου, -ῳ մասնիկներ կամ վերջավորություններ:

Այս է հնդեվրոպական հոլովման ձևափոխության առաջին սկզբունքը, որ տիրապետում է նաև հայերենում: Ինչպես աշխարհաբարի, նույնպես և գրաբարի մեջ բունի գազափարը խափանված է. սեռ.-տր. քնոյ, բց. ի քնոյ, գրծ. քնով ձևերի մեջ մենք երբեք չենք զգում, որ բառն է *քնո-, այլ թե սեռ. տրականի մասնիկն է ամբողջապես ոյ. գործիականի՝ -ով և այլն: Այսպիսի փոփոխությամբ կազմվում են ամբողջ հնդեվրոպական լեզվամաքի մեջ մասնիկներ, որոնք սկսվում են ձայնավորով, և որոնց ձայնավորը հին բնի ճեացորդն է: Բայց եթե բունի գազափարը այլևս ջնջված է և մասնիկներն են ով, ի, ibus, os, ου, ῳ և այլն, ուրեմն սրանք կարող են կցվել ամեն տեսակի բառի, առանց բների խառնության. մասնիկները սկսում են ընդհանրանալ և կարելի է ասել աղի և աղոյ և այլն. դեռ ավելին կար. բազմաձայնանոց բուները, որոնք նախալեզվի ամենահին ճեացորդներն էին, սառցան այս մասնիկները և հետզհետե ժառանգ լեզուներից ջնջվեցին: Պահվեցին միայն ն և ր հանգույները, որոնք ամենացայտունն էին:

Բունի ջնջումը առաջնորդեց լեզուներին մի ուրիշ հիմնական ձևափոխության:

Ինչպես ասել ենք, հնդեվրոպական նախալեզվի մեջ բառ առանց արմատի մերկ ու ազատ չէր, ինչպես, օր., հայերենի մեջ հաց, մարդ և այլն, կամ ուգրո-ֆիննականի, թաթարականի, կովկասյան և այլ լեզուների մեջ, այլ գրեթե միշտ ծածկված զանազան վերջավորություններով: Այսպես, օր. «ոտք» գազափարի համար կար ուղ. pṓs, հյց. pṓdm, սեռ.-բց. pedés, pedos, հգ. ուղ. pódes և այլն. բայց առանձին pod «ոտք», որ այս բոլորի հիմքն էր, գոյություն չուներ: Նա կար միայն խոսողի գիտակցության մեջ: Այժմ սակայն, ըմբռնելով բունն ու վերջավորությունը իրր մի մասնիկ, մերկանում էր արմատը և գուրս էր ցայտում իրր բառ: Այստեղից, անշուշտ նաև բազաձայնանոց r, n և այլն. բառերի անբուն տիպի ազդեցությամբ առաջացավ բառերի անկախ գոյությունը և ուղղականի վերջավորության ջնջումը: Լեզուները միանգամից չհասան այս վիճակին. լատիներենը, օր., գիտե lupus, lupe, lupum, lupī, lupo, lupōs, lupōrum, lupīs, բայց գիտե *lup, որ պիտի առաջանար ռոմանական լեզուների մեջ: Լատիները իր հնագույն շրջանից արդեն մերկացրել է բառը, մի վիճակ, որին պիտի հասնեին հետզհետե մյուս ժառանգները, ինչպես՝ սլավոնականը, ռուսերենը, գերմաներենը, անգլերենը և այլն:

Հնդեվրոպական հոլովման ձևափոխության երկրորդ սկզբ
բունքը հետևյալն է. նախալեզվում, ինչպես գիտենք, բուններ
երեք են և հանդում են երեք կարգի հնչյունով, բաղաձայնով
կամ ձայնորդով, ā ձայնավորով և e/o ձայնավորով, i, u ձայ
նավորներով հանդող բառերը չեն կազմում առանձին բուն և
չեն էլ մտնում ձայնավորների շարքը, որովհետև i, u ոչ այլ ին
են, եթե ոչ y, w ձայնորդների ձևափոխությունները, հետևաբար
և մտնում են առաջին խմբի մեջ։ Հետագայում, զանազան լե
զուներ ուսանելով, որ ā, o ձայնավորները կազմում են առան
ձին բուն, մի տեսակ նմանություն ըմբռնեցին նաև y, w ձայ
նավորների i, u ձևափոխության միջև և սրանք էլ համարելին
առանձին ձայնավորահանդ բուն։ Այսպես առաջացան i և u
բունները, որ նախապես գոյություն չունեին հնդեվրոպական նա
խալեզվի քերականական ըմբռնողությամբ։ Համմտ. սանս. nāpti
«թոռնիայ», հալ. junostĭ «երիտասարդություն», սանս. çvaçrū
«սկեսուր», հալ. svekry, լտ. socrus, հն. ἑκυρᾶ «կարգավորություն
և այլն։ Այսպես եղավ նաև հայերենի մեջ, ուր առաջացան ի, ու
բունները, ճիշտ հավասարազոր ա, ո բուններին, ինչ. արվեան
արուեսաի, արուեսաիւ, արուեսաից և զարդ, զարդու, զարդուց

Գալով զուտ բաղաձայնով և մյուս ձայնորդներով հան
դող բուններին, պետք է նկատենք, որ նախալեզվի բաղաձայնա
հանդ բունները արագության ընթացքում ենթարկվել են լեզուների մեջ. սանս
կրիտը և հին հունարենը առատորեն ունեն բաղաձայնահանդ
բուններ, բայց պրակրիտն ու նոր հունարենը ամբողջապես
ջնջել են։

Ըստ Ջատերջի, Սունիտի, Քումարի (The origin and deve
lopment of the bengali language, էջ 715) հին հնդկերենի ավելի
քան 12 (over a dozen) հոլովական բունները միջին և նոր հնդկե
րենում հետզհետե իջան, նախ հասան վեցի, ապա երկու ձայ
նավորով հանդող բառերն էլ կարճանալով, վերջի վերջը ā բու
նը հավասեց և ընդհանուր դարձավ։ Արդի հնդկական բենգալի
լեզուն ունի միայն մի հոլովում, առանց սեռի և բունի խտրու
թյան (էջ 717)։ Այսպես է նաև հին հայերենը։ Իսկ ն, ր, ղ ձայ
նորդներով հանդող բունները հայերենի մեջ առացել են առանձին
տիպի հոլովում (մ բուն չկա հայերենում)։

Յուրաքանչյուր բունի զանազան հոլովիները կազմելու ձևը
կոչվում է հոլովում. հնդեվրոպական նախալեզուն ուներ 8 հոլո
վում. ժառանգ լեզուները ձևափոխելով բունները և առեղծելով

նոր բուններ, առաջ բերին նորանոր հոլովումներ, որոնք և կազ
մում են հոլովական լեզուների դժվարությունը։ Այսպես, հու
նարենը ունի 3 հոլովում, լատիներենը՝ հինգ հոլովում, որոնք
զանազանվում են իրարից եզ. սեռ. հոլովի վերջավորության հա
մաձայն (ae, ī, is, ūs, ēī), գոթերենը՝ 6 հոլովում (a, ô, i, u, n
և այլ բաղաձայնով հոլովում), լատիշերենը՝ 7 հոլովում (a, ja,
u, ā, ē, ī և բաղաձայնավոր հոլովում), լիտվաներենը՝ 5 հոլովում
(a, i, u, o և բաղաձայնական), չեխերենը՝ 9 հոլովում և այլն։ Այս
հոլովումները որոշվում են ըստ սեռի և ըստ վերջավորության.
լատիներենի հոլովումները որոշվում են հետևյալ ձևով. առաջին
հոլովման հետևում են այն բառերը, որոնց վերջավորությունն է
ā (rosa), երկրորդ հոլովման հետևում են այն բառերը, որոնց
վերջավորությունն է o, որ ապա դարձավ u (hortos>hortus),
երրորդ հոլովման հետևում են այն բառերը, որոնց վերջավորու
թյունն է մի բաղաձայն և կամ i ձայնավորը (color, ovis). չոր
րորդ հոլովման հետևում են այն բառերը, որոնց վերջավորու
թյունն է-u (fructus) և հինգերորդ հոլովման հետևում են այն
բառերը, որոնց վերջավորությունն է e (res)։

Հին բարձր գերմաներենը գոյականների մեջ ունի՝ 1) ձայ
նավոր (stark) հոլովում, այն է a հոլովում, ô հոլովում, i հոլո
վում, u հոլովում, 2) բաղաձայնավոր հոլովում, այն է՝ n հոլո
վում (schwach), es/os բուններ, ter բուններ, nt բուններ։

Հին պրուսերենի հոլովմունքներն են a, īja, ā, ī, ē, i, u
և բաղաձայնահանդ բուններ։

Հին հունարենի հոլովմունքներն են՝ Ա. հոլովում՝ ար. ας,
ης և իգական α, η վերջավորած բառերը, Բ հոլովում՝ ար. և իգ.
ις և չեզ. ϙ վերջավորված բառերը, իսկ Գ հոլովում՝ բաղաձայ
նահանդ բունները։

Լեհերենի հոլովումներն են. 1) արական բառեր կոշտ վերջա
վորությամբ, 2) արական բառեր փափուկ վերջավորությամբ,
3) իգական բառեր կոշտ վերջավորությամբ, 4) իգական բառեր փա
փուկ վերջավորությամբ, 5) իգական բառեր խառն վերջավո
րությամբ, 6) չեզոք բառեր կոշտ վերջավորությամբ, 7) չեզոք
բառեր փափուկ վերջավորությամբ և այլն, և այլն։

Դասական լեզուները մի ուրիշ ծանր հոլովական դժվա
րություն էլ են առեղծել։

Վերը տեսանք, որ դասական լեզուները բառավերջի բաղա
ձայնները կրճատում են։ Սրանով էլ բառի վերջածայնը դար
ձավ մեծ մասամբ ձայնավոր, որոնց հետ նաև որոշ թվով բա-

ձայնները։ Հայերենը այդպիսի երևույթ չգիտե, և ամեն ձայնավոր ու ամեն բաղաձայն կարող է բառի վերջաձայն դառնալ։

Բայց դասական լեզուների մեջ այն բառերը, որոնք կորցին իրենց վերջին բաղաձայնը, իրենց հոլովումը կազմեցին ոչ թե բառի նոր ձևի հետ, այլ հետաձայն նախկին ձևի, որով նոր ուղղականի և մյուս հոլովների միջև առաջացավ խոշոր տարբերություն, որին հաղթահարելու ոչ մի հնար չկար։

*Օր. հնագույն հն. և լտ. «կաթ» բառի ուղ. ձևերն էին γά-*λακτ և *lact, որոնց սեռականներն էլ լինում էին γαλακ-tos և *lactis, սրանց հետևյալ նման մյուս հոլովները՝ շատ կանոնավոր ձևով։ Այժմ վերջաձայն բաղաձայնի անկումով *γάλακτ և *lact դարձան γάλα և lac, բայց սեռական γάλακτος և lactis մնացին անփոփոխ։ Այնպես որ առացվեցին հոլովման մեջ՝*

հն.	γάλα	սեռ.	γάλακτος
լտ.	lac	սեռ.	lactis

բացարձակ անկանոն ձևերը։

Միայն մի քանի բառեր չեն այդպես, այլ բոլոր նախկին բաղաձայնառանգ բառերը. ինչ.

լտ.	bos, bovis	եզ
	corpus, corporis	մարմին
	homo, hominis	մարդ
	pes, pedis	ոտք
	sanguis, sanguinis	արյուն
	miles, militis	զինվոր
	leo, leonis	առյուծ
հն.	φώς, φῶτος	լույս
	γονυ, γόνατος	ծունկ
	οὖς, ὠτος	ականջ
	ποῦς, ποδός	ոտք

Մասամբորապես նույնն է ռուսերենում, ուր հոլովման մանակ ունենք՝

Ուղ.	мать	*մայր,*	սեռ. матери
»	дочь	*դուստր,*	» дочери
»	небо	*երկինք,*	հգ. небеса
»	чудо	*հրաշք,*	հգ. чудеса

Ուրիշ լեզուներ էլ (հնդեվրոպական խմբից դուրս) քան հոլովման ձևի առեղծել են խմբեր, որոնք կոչվում են Ա հոլովում, Բ հոլովում և այլն։ Օրինակ՝ էտռուներեն լեզուն, որ ուգրոֆիննական լեզվաընտանիքի լեզուներից մեկն է, բառերը հոլովման մեջ բաժանում է 18 խմբի, համաձայն իրենց վանկերի քվի և վերջավորությունների զանազանության։ Այս բոլորը առաջանում են բառերի կրած զանազան ձայնական փոփոխություններից, որոնց համար էլ կան առանձին կանոններ։

Հայերենի մեջ հնդեվրոպական նախալեզվի զանազան բուներից կազմված է ճիշտ լիովանդենի պես չորս ձայնավորանոց (ա, ի, ո, ու) և երեք բաղաձայնանոց հոլովում, որոնք են.

I հոլովում

Օրինակ՝

		եզ.	հգ.
	Ուղ.	*բան*	*բան-ք*
	Հյց.	»	*բան-ս*
	Սեռ. տր.	*բան-ի*	*բան-ից*
	Բցտ.	*բան-է*	*բան-ից*
	Գրծ.	*բան-ի*	*բան-իք*

Այս հոլովումը համապատասխանում է նախ հնդեվրոպական i բուևին, որ ծագում է y ձայնորդից. և այս հոլովման հետևող բառերից նրանք, որոնց հնդեվրոպական ծագումը ճըշտված է, մեծ մասամբ ներկայացնում են մյուս լեզուների մեջ i համապորը. ինչ.

իժ. գրծ. իժի <հնխ. ēghi-, սանս. áhiḥ, գնգ. âžiš, հն. ὄφις.

-թ, -դ մասնիկը <հնխ. -ti-, որից ունենք՝ աւթ «օթևան», գրծ. աւթի, արմատը ագանիմ, հմմտ. հն. ἰαὐω, αὖλις։

Բարդ «գէզ», գրծ. բարդի, հմմտ. սանս. bhrtih «սպասնդ», գրծ. սպանդի, արմատը՝ սպան-անել։

-ն մասնիկը <հնխ. -ni-, որից ունենք՝

Բան, գրծ. բանի, հմմտ. դոր. φᾶμι, սանս. գրաբ. գոյ, գոչի, հալ. hasni.

Այս հոլովումը ներկայացնում է նաև հնխ. իգական yā կամ yē բուևները՝ որոնց ուղղականը էր ī, ինչպես նաև ī բուևներ. ինչ.

*այծ, գրծ. այծի <հնխ. aig'ī ձևից և ոչ թե հն. αἴξ, գոթ. gaits, գորտ, գրծ. գորտի, հմմտ. լեթթ. warade, որ է բալթյան *wardye- բուևից։*

Բարդ ածականների մի ամբողջ խումբ (իմաստով առարկան բարդություններ), հետևում են ի հոլովման, թեև իրենց պարզ ձևը պատկանում է ուրիշ հոլովման. այսպես՝

Ո հլ.	Ի հլ.
խմոր[ոյ]	*անխմոր[ից]*
գործ[ոյ]	*անգործ[ից]*
շունչ[ոյ]	*անշունչ (եզն. Գ. 6 անշնչից, բայց անդ 11՝ անշնչոց)*
ողորմ[ոյ]	*անողորմ[ից]*
Աստուած[ոյ]	*անաստուած[ից]*
տես[ոյ]	*անտես[ից]*
լոյս	*անլոյս[ից]*
փորձ	*անփորձ[ից]*
հաւատք	*անհաւատ[ից] Բ. կոր. Դ. 4*
Ա հլ.	
փառք	*անփառ[ից]*
Ու հլ.	
մահ	*անմահ[ից]*
խրատ	*անխրատ[ից]*
Ր հլ.	
տարր	*անտարր[ից]*
Ն հլ.	
ազն (ազին)	*սրբազան[ից]*

Այս երևույթը հատուկ է ոչ միայն հայերենին, այլև ուրիշ դասական հնդեվրոպական լեզուներին. համմ.

լտ.	somnus *քուն,*	exsomnis *արթուն,*
	barba	imberbis
	cornu	bicornis
		inermis
իռլ.	adbur	saidbir
գնդ.	ahura-	āhuiriš

այսպես նաև

սանս.	prátyardhi— *որին պատկանում է կեսը*
»	dhūmágandhi— *ծխահոտ*
գնդ.	avimiθri— *Միհրին թշնամի*
սանս.	nikucyakarni— *ականջները կախ*
գնդ.	dawrāmaeši— *որ պարարտ մաքիներ ունի (հտ. անուն)*
»	apaitibusti—*աննշմարելի կերպով*
հուն.	τριστοιχί
	ἁμιτθί
սոլ.	ἄσυλι
»	ἄσκονδι *և այլն։*

Այս բոլորը ye, yo *մասնիկով կազմված ածականներ են (ինչ. հն. ἐννεάβοιος), որոնք անցել են i բայնին՝ ապրվելով եզ. ուղ. -is ձևից (ինչ. լիտ. bete'vis, bevaīkis, nebylys և այլն)։*

Հայերենը ուրիշ դեպքերում երկու ձևն էլ պահած է. ինչ. այլազդի, սեռ. այլազգւոյ (ուր գտնում ենք՝ առաջինը ի, երկրորդը -n)

Հունարենից առնված հտ. անուններ, ինչ. Պետրոս, Պետրոսի (կոչ. Պետրոս, բայց նաև լատ. Պետրե)։

Մովսէս, Մովսեսի, Մովսիսի,
Սարգիս, Սարգսի, Սարգսու...

Ներգոյականի մեջ այս հոլովման հետևող բառերից ոմանք ի չեն առանում, հատկապես հտ. անունները.

Բաբելոն, ի Բաբելոնի կամ ի Բաբելոն.
Եգիպտոս, յԵգիպտոսի կամ յԵգիպտոս
որովայն, յորովայն (եփր. հտ. Բ. էջ 50, 55), փխ. յորովայնի.

Ա. հոլովում[1]

Օրինակ՝

	Եզ.	Հգ.
Ուղ.	*ամ*	*ամ-ք*
Հյց.	»	*ամ-ս*
Սեռ.-տր.	*ամ-ի*	*ամ-աց*
Բցո.	*ամ-է*	»
Գրծ.	*ամ-աւ*	*ամ-աւք*

[1] *Իսկապես ներկայացնում է ի-ա հոլովում, ինչպես կոչում ենք զարգացական քերականության մեջ։*

Այս հոլովումը համապատասխանում է հնդեվրոպական ā բունին. և այս հոլովման հետևող բառերից նրանք, որոնց հինդեվրոպական ծագումը ճշտված է, մեծ մասամբ ներկայացնում են մյուս լեզուների մեջ ā համապարը. ինչ.

ամ, գրբ. ամաւ = սանս. sama «տարի»
ակեսուր, գրբ. ակեսրաւ, հմմտ. հն. ἑκυρά
լեզու, գրբ. լեզուաւ, հմմտ. սանս. jihvā՛, լտ. lingua

Մի խումբ բարդ բառեր, որոնք ցույց են տալիս անձ, հանում են այս հոլովման և նրանց մեջ ա բունը համապատասխանում է մյուս լեզուների արական բունների a մասնիկին. ինչ.

Ընկեր (իրբ ընդ-կեր, «միասին ուտող», հմմտ. իմաստով համար ֆր. com-pagnon, գոթ. ga-hlaiba), գործ. ընկերաւ, հմմտ. լտ. agri-cola, հն. ὀρνιθο-θήρᾱς «թռչնորս», հսլ. voje-voda, «զորավար»: Այսպես բունը, որ ունի կերա- ձևը, տարբերվում է ուրեմն կեր «անուն, ուտելիք» բառից, որի բունն է կերո, գրբ. կերով:

Նույնպես -աւոր մասնիկով կազմված բառերը հոլովվում են այս հոլովման համաձայն. ինչ. թագաւոր, գրբ. թագաւորաւ (բուն նշ. «թագաւորը»), ուրեմն -աւոր մասնիկը չի համապատասխանում ճշտիվ հն. -φορο ձևին (ինչ. στεφανη-φόρος), այլ ծագում է հնի -bhorā- ձևից:

Դարձյալ ի մասնիկը, որ ցույց է տալիս գործողը, հոլովվում է այս հոլովմամբ, ինչ. դատիչ, գրբ. դատչաւ, ուրեմն ծագում է ոչ թե ik-yo- մասնիկից (ինչպես ունի հսլ. kovačŭ «դարբին», kotoričŭ «ռազմիկ» և այլն), այլ անշուշտ ik-yā մասնիկից:

Այս հոլովման առորոշիչ անուններն են կազմում ա բուն նոյն հատուկ անունները, որոնք ունեն երկու ձևի հոլովում, հետևյալ ձևով.

Ո. Հ.	Տրդատ	Հռիփսիմէ
Ու. Տ.	Տրդատ-այ	Հռիփսիմեայ
Բ.	»	»
Գ.	Տրդատ-աւ	Հռիփսիմեաւ

Լինելով հատուկ անուն, այս կարգի բառերը, բնականաբար, հոգնակի չունեն:

Այսպես են՝ Հայկ, Մանակ, Անահիտ, Հառմ, Մեսրոպ, Յովսեփ, Վարազ, որ իրր հատուկ անուն լինում է Վարազայ (Բուզ. Բ. 21), իսկ իրբ հասարակ՝ սեռ. վարազի.

երկրորդ ձևով՝

Եսայի, Եսայեայ, եաւ	Հեղինէ, նեայ, նեաւ,
Տիբեր, եայ, եաւ	Փիլիպպոս, պայ,
Կրեսէ, եայ,	
Գալիլեա, սեռ. -եայ, -լեէ, -եաւ	

Այս կարգին են պատկանում նաև.

1) մի քանի օտար բառեր, ինչ. Հյուդ ՕՀղ (Եղն. էջ 9), Հիւդեայ (էջ 25):

2) Ա վերջացած հատուկ անուններ, ինչ. Յուդա, սեռ. Յուդայ:

3) Իա վերջացած օտար տեղանունները, որոնք մեսրոպյան հայերենում հոլովվում են՝ -իայ ձևով, ինչ. Արաբիա-Արաբիայ, Մակեդոնիա—սեռ. Մակեդոնիայ. Լիկիա, Կեսարիա, ի Կեսարիայ և այլն. այս կարգի բառերը ավելի հետո սկսեցին հոլովվել -իոյ ձևով. այսպես՝ Կեսարիոյ, Մակեդոնիոյ, Լիւդիոյ, Արաբիոյ, որոնց համեմատ որքագրվեցին նաև մեսրոպյան շրջանի -իայ ձևերը: Արդի արևմտահայերենում ընդունվածն է Անգլիոյ, Գերմանիոյ, Ռուսիոյ և այլն (Վարդանյան, Եւքեաղ, էջ 187 ծան.):

-իկ վերջացած հատուկ անունները (ինչ. պարսիկ) հոլովվում են ամ բառի պես. սեռ. Պարսկի:

4) երրայեցերենից վերցված մի խումբ բառեր, որոնք ս. գրքից դուրս համարյա թե գործածված չեն և կամ եթե գործածված են՝ ս. գրքի հետևողությամբ են. այսպես՝ սաբբաթայ, գաբրիել, նեսարաւ, արդոթայ, զեղզուբայ և այլն (Դուրեան, Աստուա. Եմ. 1935, էջ 215):

5) բառեր. որոնք իրապես հատուկ անուն են, թեև հասարակ անվան են վերածվել հետո, ինչ. Տիտան, տիտանայ:

Ո հոլովում

Օրինակ՝	Եզ.	Հգ.
Ուղ.	գետ	գետ-ք
Հյց.	»	գետ-ս
Սեռ.-տր.	գետ-ոյ	գետ-ոց
Բցս.	»	»
Գրծ.	գետ-ով	գետ-ովք

Այս հոլովումը համապատասխանում է հնդեվրոպական o բունին, և այս հոլովման հետևող բառերից նրանք, որոնց հընդեվրոպական ծագումը ճշտված է, մեծ մասամբ ներկայացնում են մյուս լեզուների մեջ o համապորը. ինչ.

սուտ, սեռ. ստոյ, համմտ. հն. ψεῦδος
գործ, գրծ. գործով, համմտ. հն. ἔργον
կեր, գրծ. կերով, համմտ. հն. λοῦγος, φόρος տիպը
ուլ, սեռ. ուլոյ, համմտ. հն. πῶλος
հին, գրծ. հնով, համմտ. սանս. sānah, լիտ. senas
նուս, սեռ. նուսոյ<հնխ. snusó-, հն. νυός.

Այս կարգի բառերի մեջ ունենք միայն արմատ՝ միացած բունի ձայնավորին. բայց կան նաև ուրիշ բառեր, որոնց մեջ արմատի վրա ավելացած է հնդեվրոպական մասնիկը. այսպես՝ yo մասնիկով՝

մէջ, գրծ. մէջով, համմտ. սանս. mādhyaḥ, լատ. medius

no մասնիկով՝

քուն, սեռ. քնոյ <հնխ. swop-no, սանս. svap-na-, հն. ὕπνος,
մուն, գրծ. մնով <հնխ. musno- համմտ. ուրիշ գանազան մաս-

նիկներով՝ լտ. mus-ca, լիտ. mus-é, հսլ. muxa, հն. μυῖα, լիթվ. mūs-cha և այլն.

-to- մասնիկով՝

մարդ, սեռ. մարդոյ <հնխ. mr-to-, սանս. mrtás.
-ko մասնիկով՝ բարւոք, սեռ. բարւոքոց (յետին).
-ro մասնիկով՝
ժառ, տուրք, սեռ. տրոց, համմտ. հն. δῶρον, հսլ. darū.
գալար, գրծ. գալարով, համմտ. հն. θαλερος.
նոր, սեռ. նորոյ, համմտ. հն. νεαρός.
-tro մասնիկով՝
արաւր, գրծ. արաւրով, համմտ. լտ. aratrum

Այս հոլովման պատկանում են թերևս նաև հնդեվրոպական բունները. համմտ.

Ամպ, սեռ. ամպոյ, համմտ. սանս. nàbhas, սեռ. nábhasas,
հն. νεφος, νέφευς, հսլ. nebo, nebese.

*հոտ, գրծ. հոտով, համմտ. լտ. odor (<*odos), հն. ευ-ώδης*
քանու շահոտ:

Գետ, գրծ. գետով <հնխ. wedes-, համմտ. հն. ὕδεσ-. տր. ὕδει,
սանս. ùt-s-as «ակունք»:

Այս հոլովման սակ են գնում.

3) -եալ վերջացող դերբայները. ինչ. առաքեալ, օրհնեալ, սիրեցեալ, օծեալ և այլն:

4) -ուր հանգող բոլոր բառերը:

Սրանից հետևում է, թե արիտուր բառը կազմված է ոչ թե սեռ. արի+տուր, այլ տուր ի տուր, քանի որում արի հոլովումը սակեգարյան չէ, այլ հետին:

Ո հոլովման համար քերականության մեջ ունենք այն օրենքը, թե ներգոյականի մեջ նրանցից ոմանք անցնում են ի հոլովման: Օր.

Գիշեր, գիշերոյ, ի գիշերի
Բերան, բերանոյ, ի բերանի
փոր, փորոյ, ի փորի
գուբ, գրոյ, ի գրի և այլն:

Բայց արված օրինակներից դուրս կան շատ բառեր, որոնք նույն օրենքին են պատկանում, սակայն քերականությունների և նույնիսկ բառարանների մեջ չեն նշանակվում: Այսպես, օր.

Զոյլ, սեռ. ձուլոյ, ներգ. ի ձուլի.— ինչ. Ձուլեալք ի ձուլին նորա հաստատեալք. Գ. Թագ. է. 24

Մուխ, մխոյ, ի մխի. Ոսկ. Մատթ. ես. Սերեր Գ.
շեղջ, շեղջոյ, ի շեղջի. Ագաթ. (տես ՆՀԲ).
շուք, շքոյ, ի շքի. Բուզ. Ե. Լէ:

Ուշ «խելք» բառը ընտիր հայերենում պատկանում է Ո հոլովման, ուստի յուշի ձևը վերի ներգոյականների շարքին է պատկանում: Հետևաբար ի հոլովումը (սեռ. ուշի, գրծ. ուշիւ) հետին է:

Պատիւ, պատուոյ, ներգ. ի պատուի
սով, սովոյ, ի սովէ
սուգ, սգոյ, ի սգի
տիզմ, տզմոյ, ի տզմէ
տօթ, տօթոյ, ի տօթի
քացախ, քացախոյ, ի քացախի

Փոր բառի ներգոյականը համաբարբառը տալիս է 2 ձևով. ի փորի (4 անգամ), ի փոր (2 անգամ.— էր Յովնան ի փոր կիտին. Յհ. Բ, 1, Մատթ. ԻԲ—40):

Այս հոլովման հետևող բառերից մի խումբ ներգոյական-նում առանում են ո-ի տեղ ի. ինչ.

մէջ —միջոյ— ի միջի, ի մէջ
գետին—գետնոյ—ի գետնի
գիշեր — գիշերոյ — ի գիշերի
գուբ — գբոյ — գբի
ջրհոր — ջրհորոյ — առ ջրհորի
փոր — փորոյ — ի փորի
մարմին — մարմնոյ — ի մարմնի
ամուր — ամբոյ — յամբի
ծոց — ծոցոյ — ի ծոցի
բերան — բերանոյ — ի բերանի
թև — թևոյ — ի թևի
թուղթ — թղթոյ — ի թղթի
ոտ — ոտոյ — ի ոտի

Ամխա բառի ներգոյականը լինում է՝ յամսեան. ջուր և հուր պատկանում են այս հոլովման, բայց գրծ. լինում է թէ ջրով, հրով, և թէ ջուրր, հուրր, սեռ., տր., բց. ջրոց, հրոց և ջուրց, հուրց:

Այս հոլովման հետևող բառերից ոմանց եզ. տրականը և ավելի՝ ներգոյականը լինում է հաճախ -ում. մանավանդ -ին և -եալ վերջացող բառերը. ինչ.

վերին — վերնում, գրեցեալ — գրեցելում, սուրբ — ի սրբում
նոր — ի նորում.

յետին — յետնում
հին — ի հնում

Ուշ ժամանակից՝ խնդրելով օգնական վտանգեցելում. վրք. հց. ա 309:

Դիմի ոչ է պարտ կեալ՝ յամենայնի հպատակելումդ. Այ. Ոսկ. գծ. 394:

Այս հոլովման տորբաթաժանմունքն են կազմում ուղղականի մեջ ի հանգող բազմավանկ բառերը, որոնց հոլովումը երկու տեսակ է. մեկը ո բունով, մյուսը ա բունով. բունների տարբերությունը երևում է միայն եզ. գրծ. և հգ. սեռ.-տր.-բց. գրծ. հոլովների մեջ. մյուսները կամ բուն չունեն և կամ հավասարապես ո բունով են: Օր.

Եզակի

	ո բունով	ա բունով
Ուղ. հյց.	հոգի	տեղի
Սեռ. տր.	հոգւոյ[1]	տեղւոյ
Բց.	հոգւոյ	տեղւոյ, տեղւոջէ
Գրծ.	հոգւով	տեղեաւ
Ներգ.	հոգի	տեղւոջ

Հոգնակի

Ուղ.	հոգիք	տեղիք
Հյց.	հոգիս	տեղիս
Սեռ. տր.		
բց.	հոգւոց	տեղեաց
Գործ.	հոգւովք	տեղեաւք

Սրանցից առաջինը ներկայացնում է հնխ. iyo-, երկրորդը՝ -iya-, առաջինին հետևում են -ցի վերջացող բառերը (գիւղացի և այլն), երկրորդին՝ ի հանգող ծառանունները (կաղնի և այլն) և մի խումբ ածանցներ (մատաղի և այլն) և ածականներ (-ագին), ավելի ընդարձակ տես վերը:

Նկատելի է ներգ. տեղւոջ ձևը և սրանից կազմված բց. տեղւոջէ. առաջին տիպում չկա այս ձևը:

Ավելի ուշ շատացել է այս ձևը. օր. առ նախանձելոջ (նախանձելիի մոտ). փիլ. լին. 435.

Ահա ի վերջացող բազմավանկ բառերից մի քանիսը.

ասորի, ւոց	հոգի, ւոց
լալիք, եաց	
	պատասխանի, եաւ
բարի, եաւ	սիրելի, եաւ
	սպառնալից, եաց
գինի, եաւ, ւով	
գօտի	
ընթրիք, եաց	կարծիք, եաց
	կղզի, եաւ
թզենի, եաւ	սրտի, ւոց

[1] Գրված կա նաև առանց ւ-ի. ինչ. եկեղեցոյ, հոգոյ, և այլն:

Պատասխան բառը երկու ձև ունի հին հայերենում. հնագույնն է պատասխանի, որ ապա եղավ պատասխան: Ձեմ կարծում, թե այստեղ ի ձայնը ջնջված լինի, այլ նա ներկայացնում է պարսկական մի հին բարբառ. և իրոք, ըստ Բենվենիստի (Gram. sogd., էջ 73) գտնում եմ, որ սոգդերենում եզ. ուղ. հոլովի վերջավորությունն է -i, Մեյեն (Essquisse d'une gram. comp. d'arm. clas., բ. տպ. էջ 21) ի-ւոյ հոլովման նախաձևը դնում է -iyo-, որ հետո դարձել է -iwo-, այսինքն՝ գինի, գինիյոյ, ապա՝ գինիւոյ, որից գինւոյ. բայց ինչպես տարօրինակ է յ կիսաձայնի անցումը ւ կիսաձայնին, նույնպես և այն, որ չէ գրված գինւոյ, այլ՝ գինւոյ: Ինչպես հայտնի է, մի բաղաձայնի և մի ձայնավորի միջև հայերենում պահանջվում է ու. ինչ. ագուէս, առուիր, առուտուր, գինուոր...: Նույն ձևով է նաև ածականը. ինչ. բարի, բարւոք (չէ գրվում բարուոք): Մինչդեռ -ի հանդոյ բառերը տալիս են ու. ինչ. պատիւ, պատուոյ, ի պատուի և այլն: Ջարմանալի է նաև, որ այսպիսի ւ կիսաձայնը անհետ կորել է այժմ բարբառներում. ինչ. հոգի, հոգւոյ>հոգու:

Ու հոլովում

Օրինակ՝

	Եզ.	Հգ.
Ուղ.	զգեստ	զգեստ-ք
Հյց.	»	զգեստ-ս
Սեռ. տր.	զգեստ-ու	զգեստ-ուց
Բց.	զգեստ-է	»
Գրծ.	զգեստ-ու	զգեստ-ուք

Այս հոլովումը համապատասխանում է հնդեվրոպական ū կամ ū բուներին, որոնք ծագում են w ձայնորդով հանդոյ բուներից. և այս հոլովման հետևող բառերից նրանք, որոնց հնդեվրոպական ծագումը ճշտված է, մեծ մասամբ ներկայացնում են մյուս լեզուների մեջ u համազորը. ինչ. npp, սեռ. որդու, հմմտ. սանս. pṛthu-ka (կազմված -ka մասնիկով). արդ, սեռ. արդու (q սաստկականով՝ զարդ, սեռ. զարդու)= հն. ἀρετή «կարգավորություն», կազմված tu մասնիկով. զգեստ, սեռ. զգեստու (կազմված q սաստկականով՝ հնխ. wes>* գես արմատից -tu մասնիկով. հմմտ. լտ. vestis):

Այս հոլովման հետևող բառերի թիվը բոլորից քիչ է:

Այս հոլովման հետևող բառերից ոմանք բց. առանում են ուն, ինչ,

դարդ — զարդուէ
խրատ — խրատուէ
սպաս — սպասուէ
այգ — այգուէ
զօր — զօրուէ
նախանձ — նախանձուէ (եզն. 45)
դաս — դասուէ

2) Մի խումբ հատուկ անուններ.

Աբրահամ, Յովհաննէս (սեռ. Յովհաննու), Ղուկաս, Յորդանան, Յովսէփ, Յակոբ.

3) Պառաւ բառը հոլովվում է՝ պառաւու, ւէ, ւուն, ւանց.

Ն հոլովում

Այս հոլովումը ներկայանում է մեզ հետևյալ երկք ձևերով.

Եզակի

	1	2	3
Ուղ. հյց.	անձն	հիմն	գիտութիւն
Սեռ. տր. ներ.	անձին	հիման	գիտութեան
Բաց.	անձնէ	հիմանէ	գիտութենէ
Գրծ.	անձամբ	հիմամբ	գիտութեամբ

Հոգնակի

Ուղ.	անձինք	հիմունք	գիտութիւնք
Հյց. ներգ.	անձինս	հիմունս	գիտութիւնս
Սեռ. տր. բցո.	անձանց	հիմանց	գիտութեանց
Գործ.	անձամբք	հիմամբք	գիտութեամբք

Առաջին տիպին պատկանում են առանձին բառեր. ինչպէս, անձն, բեռն, գառն, գաշն, եգն, եղն, լեառն (լերին), ի լեռնէ, լերինք, -անց, խաշն. Մի մասը լինում է հգ. ունք, -ունս, -անց, -ամբք. այսպես են՝ հարսն, թոռն, մասն, մատն, ոտն, ձեռն, հաւասին: Հայտնի չէ, թե որին է պատկանում դառն: Սրանցից ոմանք բց. լինում են աւէ, ինչ. ի գառանէ, ի բեռանէ, ի թռանէ, յեզանէ, ի մատանէ:

Բարդութիւնների մէջ մէյ-մէյին ձայնաւորը տեղ-տեղ փոխ-
ւում է. այսպես՝ միանձն բառը, որ կազմված է մի անձն բառ-
ից, եղակիի մէջ թեև պահում է անձն բառի հոլովման ձեր,
բայց հոգնակիում լինում է՝ ուղ. միանձունք, հյց. միանձունս:
Այսպես նաև դասապետանձն-դասապետանձունք:

Ագն-ագինք, բայց՝ ակայազն, ակայազունք, դիւցազունք.

բեռն-բեռինք, մեծաբեռուն, սակայն՝ ծանրաբեռնինք:

Երկրորդ տիպին պատկանում են բոլոր -ումն վերջացող
վերացական բառերը, ինչպես նաև մի քանի մասնավոր բառեր,
ինչ. նուռն-նռան, խուռն-խռան, ձուկն-ձկան, հիւսն-հիւսան,
շուրթն-շրթան, գուռն-դրան-դրունք, հիմն-հիման, եղեամն-եղե-
ման, ջերմն-ջերման, ատամն-ատաման, այծեամն-այծեման, որդն
-որդան, սկիզբն-սկզբան, քիրտն-քրտան, ուղեղն-ուղեղան, ասղ-
ընդն, արմունկն, գագաթն:

Ն հոլովման հետևում են նաև՝ տուն, շուն, սիւն, ձիւն,
արիւն, անուն, ատուն, ձեղուն և այլն:

Սրանցից տուն, շուն, ատուն շատ հեշտ է բացատրել. սոսկ
նայով ա ձայնաւորը (ինչ. հիմն-հիման) դարձել են նախ տուան,
շուան, ատուան, որոնց մէջ անշեշտ ու աղվելով՝ առաջացել են
տան, շան, ատան ձևերը:

Հեշտ է նոյնպես՝ արիւն, սիւն, ձիւն, որոնք անցնելով
արիւան, սիւան, ձիւան ձևերից՝ ավել են արեան, սեան, ձեան
(պետք է ընդունել միայն որ իւա դառնում է եա):

Դժվար է միայն անուն-անուան, ձեղուն-ձեղուան, որոնց
համար պետք է ենթադրել ուղ. անուեն, ձեղուեն:

Այս բոլորը կարելի է բացատրել հետևյալ ձայնարանական
ձևով.

Բառի մէջ՝ ձայնաւորից հետո mn թվում է թե տալիս է
ւն (բացի թևերս ու-ից հետո գտնված դեպքում). այս ւն առաջա-
նում է անշեշտ մի ձևից. ինչ.

շարժուին (ու-ից հետո), բայց՝ պաշտաւն, սեռ. պաշտամանի,
մրջիւն, սեռ. մրջման (Meillet, esq; 26), անուն = հն. ὄνομα = իմ
անուին (anown)<anōmn (իսկ սեռ. անուան, որ պիտի լիներ
անման՝ առաջանում է ուղղականի ազդեցութեամբ):

Օր — աւր, սեռ. աւուր <հնխ. amor (հն. amérā):

Բառավերջում m > ն. օր. աւուն = ռուս. дом.

Իւ-իու, ուրեմն և՝ իւն-իուն, սեռականում նեղմուծվելով ա
կատանանք սիւն-սիուն, սեռ. սիուան, որից անշեշտ ու ընկնելով

մնում է սիան, և հայերենի ուղղագրութեամբ իա գրելով ևա՝
կստանանք սեան.

Այսպես նաև ձիւն-ձիուն, սեռ. ձիուան > ձիան > ձեան:

Արիւն-արիւն, սեռ. արիւան > արիան > արեան:

-ութիւն > ութիուն, սեռ. ութիուան > ութիան > ութեան:

Բացի սրանցից, նույն տիպին են հետևում -իկ, -ուկ հանդող
ածական բառեր. ինչ. աղջիկ-աղջկան-աղջկունք, անդրանիկ,
-կան, -նկունք (բայց -նկաւ, -նիկք). մանուկ-մանկան-մանկունք.
մարդիկ-կան (բց. մարդկաւ!), փոքրիկ-փոքրկան:

Կողմն բառը լինում է կողման, կողմանք, կողմանս.

Սերմն բառը լինում է սերման, սերմանք (սերմունք, սեր-
մանք):

Երրորդ տիպին պատկանում են բոլոր -ութիւն վերջացող
վերացական բառերը, ինչպես նաև մի քանի -իւն հանդող մաս-
նավոր բառեր. ինչ. արիւն-արեան, բենէ, անկիւն-անկեան, սիւն-
սեան, սիւեղ կամ սեանէ, ձիւն-ձեան, ձեանէ. իւն հանդող և ձայն
ցույց տվող բառեր. գոչիւն-գոչման (գոչիման). արտնջիւն, հրն-
չիւն, շշիւն, սոսափիւն, նաև՝ մրջիւն, մրջման և մրջեան:

Այստեղ առանձնապես կարևոր է հիշել այն մի խումբ բա-
ռերը, որոնք ուղ.-հյց. հոլովի մէջ չունենալով հանդերձ ն հանգը,
հոլովվում են այս հոլովմամբ, այսպես են՝

Հանգիստ, սեռ. հանգստեան, որից՝ նաւահանգիստ-նաւա-
հանգստեան, Ոսկ. մաթ. ա. 317

փախուստ, սեռ. փախստեան

թագուստ, սեռ. թագստեան

կորուստ, սեռ. կորստեան

ժողովուրդ, սեռ. ժողովրդեան, դենէ, գեամբ, ուրդք, դոց,
դովք

գալուստ, սեռ. գալստեան

տեսիլ, սեռ. տեսլեան, տեսլեամբ, ի տեսլենէ, տեսիլք, տես-
լեանց:

Սրանց սեռականը չունենալով ոչ -ին և ոչ -ան ձևը, միա-
նում է երրորդ տիպարի հետ, որից հետևում է, որ -ութիւն վեր-
ջացող վերացական բառերի մէջ էլ սեռականի նշանն է -եան և
հետևաբար -ութիւն մասնիկը կազմված է ույթ + իւն մասնիկնե-
րից, համմ. երևոյթ: Բայց որովհետև երևոյթ և այլն պատկանում
են ի հոլովման (սեռ. երևութի, գրծ. երևութիւ), ուստի և իւն ձևի
մէջ ի ներկայացնում է բուն և մասնիկն է ւն. ուրիշ խոսքով՝

ութիւն մասնիկը հնխ. ti մասնիկի n-ով աճած ձևն է. ինչ. լա-
-tio, tionis:

Այս հոլովման են հետևում նաև՝

պաշտօն, պաշտամանն, պաշտամունք.

անուն, անուան, անուանէ, անուամբ, անուանք.

ձեղուն, ձեղուան, ձեղունի. (անկանոնությունը վերածվում է կանոնավորության, երբ դնենք հնագույն ձևերը. ձեղուն, սեռ. ձեղուան, որոնք պիտի տային հետո ձեղուն, ձեղուան).

առին, առևան, առևնէ, առինք, առինս, առեանց.

կոյս բառի հգ. լինում է կուսք կամ կուսանք, կուսանց, ծնունդ, ետն, դենէ, ծնունդք, ծննդոց.

խորհուրդ, ետն (նաև -դոյ, -դիւ).

ամիս, ամսեան.

մահ (սեռ. մահու և այլն). ունի ն հլ. մահուան, մահուանէ, մահուամբ, մահունք, մահուանց.

ամառն, ձմեռն, գարուն, աշուն, հոլովման ժամանակ՝ ածանց ձևերից. ամառայնոյ, ձմերայնոյ, գարնայնոյ, աշնանայնոյ, ներգ. ամառայնի, ձմերայնի. կա և՝ ձմերունք (Եզն. 174). յամառան (թվում է հետին):

Հգ. -ն հոլովմունք ունեն

Քար, եզ. քարի, քարիւ, հգ. քարինք, քարանց, քարամբք.

երէց, եզ. երիցու, հգ. երիցունք, երիցանց.

պառաւ, եզ. պառաւու, հգ, պառաւունք, ւանց.

սարկաւագ, եզ. -ագի, հգ. -գունք, կամ -գք. այս երկուսը հետևվելով երեց բառին

եպիսկոպոս, եզ. -սի, հգ. -սունք, -սաց.

ճրագ, գրծ. ճրագաւ, հգ. ճրագունք, -գաց.

պատերազմ, գրծ. -մաւ, հգ. պատերազմունք, -մաց.

ակն (մարգու), ական, հգ. աչք, բայց՝ ակն «գրիչ», ակունք, ականք «գրիչ»

ունկն, ունկան, հգ. ականջք, -ջաց.

դուր (անդորձածական), որից՝ ի դուրս, զդուրս, դրաց. դրաւք. այլ է՝ դուռն, դրան, դրունք:

Ակն «աչք» բառի հոլովման վիճակագրությունը Ավետարանից հետևյալն է[1].

Եզ.	Հգ.
Ուղ. ակն Մտթ. ե 29, 38, 2 22, 23, ժԸ, 9, ի 15, Մրկ. թ 46, Ղկ ժԱ. 34	աչք Մտթ. թ 30, ի 33 իզ 43, Մրկ. Ը 18, ժԴ, 40 Ձկ ԺԲ 30, գ 20, ժԸ 41, իզ 16, 31 Յհ. թ. 10
Հյց. (զ)ակն Մտթ. իզ 44, 50, Մկ ժե 43, չկ. ե. 19, ի, 21, իզ 8, 51, իզ 21, Յհ ե 3 ա 21, բ 25, 38, գ 15, դ 34, 35, Ը 40, ԺԲ 36, 46	(զ)աչ Մտթ. թ 39, ԺԴ 15, ժե 8, ԺԸ 9, ԺԹ 9, ի 31, ԻԱ 42, Մրկ Ը 23, թ 46, ԺԲ 11, Ղկ Ջ 20, ԺՋ 23, ԺԸ 13, Յհ դ 35, դ 5, է 24, բ. 11, 14, 17, 21, 26, 30, 31 ժ 21, ԺԱ 41, 37, ԺԲ 40, ԺԷ 1
Ս. Տ. ական Մտթ. ե 38, է 3, 4, Ղկ Ջ 41	աչաց Մտթ. ԺԴ 16, Մրկ Ը 25, Յհ թ. 6, 15, Ղկ. ժ, 23
Բց. յականեի Մտթ. է 4, 5, Ղկ. դ 42	յաչաց (չիք)
Դրբ. ականք Մրկ. բ. 46	աչօք Մտթ. ԺԴ 15, Յհ. ԺԲ 40

Զանազանությունը այն է, ինչ որ հսլ. oko, երկ. oči:

Ն ձևով հոգնակի ունի նաև երագազանը:

Եւ եթէ ի դաշտս երագապանք ձգիցին (Եզն. էջ 197), որի ուղղականը պիտի լիներ երագազ:

(Ե. Դուրեան, Ուսումն. եմ. 1935, էջ 189 համարում է անք մասնիկով՝ ինչ. որսանք, կապանք, բայց անհարմար է այս բացատրությունը, քան որում որսանք և կապանք կազմված են որսալ և կապել բայերից, իսկ երագազել բայ չկա): Ուշադիր համեմատելի է նախորդների հետ, որոնք եզ. ն չունեն, հոգնակի ն ունեն:

Այս հոլովումը համապատասխանում է հնդեվրոպական նախալեզվի -n բուներին: Բազաձայնով հանգող բուները հայերենի, ինչպես և ուրիշ լեզուների մեջ, անխնա ջնջված են թեև, բայց n բունը մնում է և մինչև իսկ իր կազապար է ծառայել հայերենի մեջ և ետագին թվով բառեր կազմվել են նրա օրինակով: Ն հոլովումը ընդհանրապես նույն է նախորդ բուների հետ, բայց ունի այն տարբերությունը, որ ներկայացնում է հնդեվրոպական հնդկարձի դրությունը և այնքան հավատարմությամբ, որ մինչև իսկ գերազանցում է հունարեն և մյուս բոլոր լեզուներին: Այս մասին արդեն խոսել ենք վերը:

[1] Վիճակագրությունը կատարել է Հերց., IF, 4, 113, պակասները լրացրել եմ Համաբարբառից:

Ձայնդարձի պահպանության համար մեր և հոլովումը դառնում է մի շատ հնավիճակ երևույթ ոչ միայն հայերենի մեջ, այլև չափազանց կարևոր՝ ընդհանուր լեզվաբանության համար։

Այն բառերը, որոնց հնդեվրոպական ծագումը ճշտված է, մյուս լեզուների մեջ ներկայացնում են n համապորը. ինչ.

եղն = հլ. jelen—.

-ման խումբը (ջերմն, սերմն) = սանս.-ma (jānima, janimanas «ծնունդ»), հն. -μα (ինչ. πνεῦμα «շունչ»), լա. -men, այն է՝ հնխ. -mn։ Այս -ման վերջավորության հետ առանձնացով մի ձայնավոր՝ դարձել է -ումն, ինչ. շարժումն և այլն։ Գառն, սեռ. գառին = հն. φαρήν։

Ունենք սակայն մի խումբ բառեր, որոնք եզակիի մեջ բին ունեն և հոլովումը, բայց հոգնակիի մեջ հետևում են տարբեր հոլովման. ինչ.

ոտն, ոտին, ոտանէ, ոտամբ, հգ. ոտք, ոտս, ոտից, ոտիւ

ձեռն, ձեռին, ձեռանէ, ձեռամբ. հգ. ձեռք, ձեռս, ձեռաց, ձեռաւք (սրա հին դործիականի մնացորդն է ձեռբ, որ պահված է ձեռբակալ բառի մեջ)։

Այս բառերը հնդեվրոպական նախալեզվում n բուն չեն, ուստի հայերենի մեջ և հոլովման վերածելը հետին երևույթ է, որին ենթարկվել է միայն եզակին։ Ուրիշ դեպքում եզակիի հետ հոգնակին էլ ենթարկվել է և հոլովման, սրայց դեռ առանց ն-ի հոլովումն էլ պահում է. այսպես՝

դուռն, դռան, դրանէ, դրամբ, հգ. դրունք, դրանց. հգ. դուրք, դրաց, դուրս, դրաւք.

(Համմտ. նաև ի դուրս մակբայը. և դրացի, դրաճդի և այլ բառերը, ինչպես և մեր. բցս. ի դրէ ձևը. վրք. և վկ. Ա. 33)։

Այս օրինակը ցույց է տալիս, որ անշուշտ կան ուրիշ շատ բառեր, որոնք սկզբում n բունին չէին պատկանում, հետո հայերենի մեջ վերածվել են և հոլովման. այս կարգի բառերը որևէ հետք չեն թողել առանց ն-ի հոլովման (հակառակ՝ ձեռն, ոտն դուռն բառերի օրինակին), որով այժմ կազմում են դուռ և բուն ներ և անկարելի է շատ անգամ ճանաչել նրանք, եթե առուգաբանությունը հայտնի չէ։

Բարբառների մեջ այս երևույթը ավելի ուժեղ է. շատ բառեր, որոնք գրականում և գրաբարում առանց ն-ի են, բարբառներում ունեն և հանգով ձևեր. ինչ.

ծուռ — երև. ծուռը, ծուռն է

թուզ — ղրբ. թօզնը

Օրինակներ ունենք նաև մյնյին հայերենի շրջանից. ինչ. ցործ մագլամբքդ վ.բք. հց. ա. 316 (և դարում մագիլ հոլովում է ի—ա հոլովմամբ. ըստ իս փոփոխությունը եղել է համանիշ եղունգն բառի նմանությամբ. եղնդամբ և մագլամբ)։

ջահ, հգ. հյց. ջահունս վ.բք. և վկ. ա. 552 (ԺԹ դար). փոփոխությունը եղել է նմանությամբ՝ նրագունք բառի։

Հետևելով և հոլովման բառերին, որոնց մեջ հգ. սեռականի նշանը (ց) ուղղակի միանում է և ձայնին (անձանց, մատանց), համեմատական շրջանի հեղինակները տարբեր բունով և հանգող բառերի էլ հգ. սեռականը կազմում են ուղղակի ց-ով, այսպես՝

երկնայինց, ածայինց, երկրայինց փիլ. լին. 416.
Յարբունց փիլ. Ղ. 489 (արբունքից).
ի ճողածինցն փիլ. Ղ. 507։

Նույնը պիտի տեսնենք նաև ր հանգող բառերի համար։

Ր կամ Ղ հոլովում

Եզակի

Ուղ. հյց.	ոսկր	աստղ
Սեռ. տր. ներգ.	ոսկեր	աստեղ
Բցս.	ոսկերէ	աստեղէ
Գրծ.	ոսկերբ	աստեղր

Հոգնակի

Ուղ.	ոսկերք	աստեղք
Հյց. ներգ.	ոսկերս	աստեղս
Սեռ. տր. բց.	ոսկերց	ոսկերաց, աստեղց, աստեղաց
Գրծ.	ոսկերբք	ոսկերաւք, աստեղբք, աստեղաւք

Այս հոլովումը համապատասխանում է հնդեվրոպական r, l բուներին. այն բառերը, որոնց հնդեվրոպական ծագումը ճշտված է, մյուս լեզուների մեջ ներկայացնում են r (կամ l) համապորը. ինչ.

աստղ, աստեղք = հն. ἀστήρ, ἀστέρες.
դուստր, դստերք = հն. θυγάτηρ, θυγάτερες.

Այս հոլովման հետևող բառերը բազմաթիվ չեն և չեն նե
կայացնում այնպիսի հնավիճակ կիրպարանք, ինչպես ն հոլով
ման հետևող բառերը. չկան նրանց վերջավանկի ձայնավորի մե
հնդեվրոպական ձայնդարձի հետքեր:

Վերջավանկի e (և) ձայնավորը տարածվել է ամբողջ հոլով
ման մեջ. բացի սրանից, հոգնակին անցել է նաև ա հոլովման
և թեք հոլովները բացի սովորական ց, բբ վերջավորություննե
րից, առանում են նաև աց, աւք վերջավորություններ. Բայց
այս նորությունը չի վարակել բոլոր բառերը, և ոմանք դեռ մնա
ցել են առանց ա-ի. ինչ. համբ, տարբ. սեռ. համերց, տարբերց

Այսպես են հոլովվում՝ բ, ղ վերջացող բառերը (բացի մեզբ
և այլն խմբից). ինչ.

կայթ, ազդր, կոզբ, տարբ, համբ, եզր (նաև՝ ախեկերբ)
տայդր. գուսար, ուսար, լիտ. անգղ, արկղ, կոճղ, եաղ, սիկղ
սկուտղ (սեռ. սկտեղ), նաև՝ խաբբ(!).

Այս հոլովման են պատկանում նաև -եւր վերջացած բառերը
ինչ.

ազրևր, ազրեր, ազրերէ, ազրերբ, ազրերք. երս, երաց, եր
աօք. ալևր, եղջևր, ագռևր կամ եզռևր.

Սրանց մեջ սեռականը (ազրեր, ալեր, եղջեր և այլն) ներկա
յացնում է հնագույն ազրևեր, ալևեր, եղջևեր և այլն ձևերը. հե
ձայնախումբը հայերենում ազվում-դառնում է ե, որով ալեւեր >
ալեր, ազրեւեր > ազրեր, ըստ այսմ՝ այս բառերի հոլովումը ա
վորականից ամենևին չի շեղվում և կազմվում է վերջածայնից
առաջ ավելացնելով ե:

Ճիշտ սրանց նման է նաև գիւղ, հինը՝ գեւղ, ըստ հոլով
ման նույն կանոնի՝ սեռ. գևեղ, որ ապա եզավ գեղ, և ջ-ի հա
վելումով՝ գեղջ:

Հետևաբար այդ շրջանում տարբեր բնի հետևող, բայց ի
հանգող ուրիշ բառեր էլ շփոթվելով այս հոլովման հետ հդ. սեռ
տր.-ի մեջ առանում են ց վերջավորություններ. այսպես, ունենք
պատուերց փիլ. սամփս. 555 (փխ. պատուիրաց)։ Համմտ. նույնը
ճ հոլովման մեջ:

Ր/Ն հոլովում

Ուղ.	փոքր	փոքունք
Հյց.	»	փոքունս
Սեռ., տր.	փոքու	փոքունց
Բցտ.	փոքուէ	փոքունց
Գրծ.	փոքու	փոքումբք
Ներգ.	փոքու	փոքունս

Այսպես են հոլովվում ածականներ՝ ծանր, բաղցր, մանր, կարծր, բանձր:

Այս հոլովումը ներկայացնում է հնդեվրոպական u բունի մի ձևափոխություն:

Հնդեվրոպական նախալեզվի մեջ կար արդեն -er և -en բունների փոխանակություն. այսպես՝ հնխ. *ǰeqᵘrt «լսարդ» բառը հոլովման ժամանակ դառնում էր* ǰeqᵘnès և այլն. համմտ. սանս. yákṛt, սեռ. yaknós, լտ. iecur, iecinoris, հն. ἧπαρ, ἥπατος. Նույնպես էր և «գարուն» բառը. համմտ. լիտ. vasarà, սանս. vasantas, հն. ἔαρ, հսլ. vesna և այլն: Նման փոխանակություններ ամենից ավելի լավ չափերով պահում է հիթիթերենը իբրև վագնջական տիպի լեզու. paḫḫur «կրակ», սեռ. paḫḫuenas, wātar «ջուր», սեռ. wetnas:

Նույն հիման վրա են նաև հյ. ձուր և ճնճղ բառերը, որոնց առաջինը համապատասխանում է հն. πῦρ, հրգ. fiur ձևերին, իսկ երկրորդը՝ գոթ. fon, սեռ. funins* «կրակ»:

r/n փոխանակությունը երևում էր հատկապես u բունների մեջ, որոնք առանում էին -en- և -er- ածականները, որով բունը դառնում էր -wen-, -wer- համմտ. սանս. pīvan- ար., pīvarī իգ., հն. πῖων ար., πιειρα, իգ. ,πῖαρ չ. «պարարտ»:

Հայերենի մեջ նույն u բունների ածականները առացան r վերջավորությունը եզ. ուղ. հոլովի մեջ, որ մյուս հոլովներում փոխանակվում է ն-ով. այսպես փոքր <* փոքուր, մանր <* մանուր, ծանր < ծանուր, սեռական՝ փոքու, մանու, ծանու՝ միայն ու բունով, իսկ հոգնակիի մեջ փոքունք, մանունք, ծանունք՝ ն փոխանակությամբ: U վերջացող ածականների վրա այս n-ածականը հին հնդեվրոպական երևույթ է. հունարենը նրանից շատ օրինակներ չի պահած:

U բունների այս փոխանակությունը հայերենում կատարվում է միայն չեզոք սեռի մեջ. վերի փոքր, մանր, ծանր ածականները պատկանում էին չեզոք սեռին. արականները ունենում էին միայն ն, բայց ոչ r. այս պատճառավ անա երեք բա-

* Meillet, MSL, 21, 250. չի ընդունում r/n փոխանակությունը այս բառի համար և կարծում է, որ pūr և fon տարբեր բառեր են:

որ, որ բնապես արական է, հոլովվում է Ս. Տ. ներգ. երիցու, բցո. երիցուէ, գրծ. երիցու, հգ. ուղ: երիցուիք, հյց. ներգ. երիցուիս, սեռ. տր. բց. երիցացից, գրծ. երիցամբք (չկա ուղ. երիցք ձև): Նույնպես հնդեվրոպական նախալեզվի չեզոք սեռի գոնագան բառեր, որոնք կազմված են u ածականով և հոլովման մեջ ատանում են n, հայերենի մեջ ուղղականում ատանում են r. այս բառերը կամ բոլորովին անհոլով են և կամ գոնե հոգնակի չունեն. այս պատճառով էլ չունեն ցեղակիցների n ձայնը, ինչ.

ծաղր, ծաղու, ծաղուէ
ծունր < հնխ. gʻōn-u-r, հմմտ. սանս. jānu, երկ. jānu-nī, հն. γόνυ, γονfατος.
մեղր, սեռ. մեղու, մեղուէ
ասր, սեռ. ասու, ասուէ
արտաւսր = հն. δάκρυ:

Այս բառերից ոմանք արդեն հայերենի մեջ անհոլով են, այսպես ծուներ (հգ. ծունգք, ծնգաց), արտաւսր (հգ. արտասուք, արտասուաց):

Բարձր բառը եզ. լինում է սեռ., տր., ներգ. գրծ. բարձու, բց. բարձու, բարձուէ, բայց հոգնակին ևիմն բառի պես՝ բարձունք, բարձանց, որով ներկայացնում է r/n փոխանակությունը. վերջինը գտնում ենք սնս. bṛhant, գնդ. bərəzant համանիշների մեջ:

Այսպիսով, հայերենի u բունով ածականները ամենախոր հնություն են ներկայացնում. այսպես՝ բարձր-բարձու ածականը, որ ամբողջ հնդեվրոպական ընտանիքի մեջ առանձնացած մի ձև էր, հանկարծ իր նմանը գտավ քուչերենի և հիթիթերենի մեջ. ինչ. քուչ. parku «բարձր» և հիթ. parkuš «բարձր» (որ և՝ pargatar «բարձրություն»): Նույնպիսի հնություն պետք է վերագրել նաև ծանր, փոքր, կարծր և այլն բառերին, թեև սրանց հնդեվրոպական ծագումը հայտնի չէ: Սակայն հիմնվելով այս հնության վրա պետք է ասել, թե բնիկ հնդեվրոպական են, որոնց համազորները կորել են հնդեվրոպական ընտանիքի մեջ (Meillet, MSL, 23, 328):

Անկանոն հոլովումներ

Ամեն լեզվի մեջ էլ կան բառեր, որոնց հոլովումը սովորական կանոններից քիչ ու շատ տարբերվում է կամ չի հպատակվում ընդունված օրենքներին: Այդ կարգի հոլովումները կոչվում են անկանոն հոլովումներ:

Անկանոն հոլովումները սովորական քերականության մեջ համարվում են ապօրինի ձևեր կամ բացառություններ. լեզվաբանությունը, որ չի ճանաչում բացառություն, հասատատում է, որ այդ անկանոն հոլովումները նախկին կանոնավոր հոլովումների մնացորդներն են:

Այսպես և՝ հայերենի մեջ:

Գրաբարի առաջին շրջանում, այսինքն Ե դարի սկզբում, հայերենի անկանոն հոլովումները հետևյալներն էին:

1. Հայր

Ուղ.	հայր	հարք
Հյց.	»	հարս
Սեռ. տր.	հօր	հարց
Բց.	հօրէ	հարց
Գրծ.	հարբ	հարբք
Ներգ.	հօր	հարս

Այսպես են հոլովվում ճայր, մայր, եղբայր[1], որոնք (մօր, մարբ, եղբօր, եղբարբ) բոլորն էլ r բուներ են, և նրանցից կազմված բառերը՝ վանահայր, հօրեղբայր, մօրեղբայր:

Հայր բառը հգ. սեռ. լինում է նաև հարանց, բայց մյուս բառերը չունեն այսպիսի ձև:

2. Քույր

Ուղ.	քոյր	քորք
Հյց.	»	քորս
Սեռ. տր.	քեռ	քերց
Բց.	քեռէ	»
Գրծ.	քերբ	քերբք

[1] Գրաբարին անդիտակ մարդիկ երբեմն ուղենալով աշխարհաբարում գրաբար ծախել՝ եղբայր բառի հոգնակին գնում են եղբայրք, որ սխալ է: Այսպես, Ս. Վահունին թարգմանել է ռուսական մի հին պոեմ և նրա մեջ գրծածել է այս ձևը.

«Արդեօք առաւել խոհեմ չէ՞, եղբայրք,
Որ հնաբարբառ յանդով յօրինենք...

Եվ Ս. Ագաթաբյանը, քննադատ, դովաբանում է թարգմանչին, որ պահպանել է նրա մեջ այսպիսի ձևերով պոեմի հնադարյան ոգին (Մովսես. Հայասաց, 1919, մարտ 9, էջ 9, այուհանակ 6-րդ):

Սրա նման են հոլովվում քոյր բառից կազմված բարդերը՝ ճօրաքոյր, մօրաքոյր.

3. այր

Ուղ.	այր	արք
Հայց.	»	արս
Սեռ. տր.	առն	արանց
Բցա.	առնէ	արանց
Գրծ.	արամբ	արամբք
Ներգ.	առն	արս

Այսպես են հոլովվում այր բառի բարդերը. քեռայր և ախ (իմա ախ-այր «մեծ մարդ»), սկեսրայր բառի սեռականը բացառաբար լինում է սկեսրայրի, Ա. Թգ. գ. 19. բայց կա նաև ուղ. սկեսրեայ, սեռ. սկեսրէի անգ. 22։

Տէր բառը հոլովվում է հետևյալ ձևով.

Ուղղ.	տէր	տեարք
Հայց.	»	տեարս
Սեռ. տր.	տեառն	տերանց, տերց
Բցա.	տեառնէ	» »
Գրծ.	տերամբ	տերամբք
Ներգ.	տեառն	տեարս

Սրանց մեջ նկատելի է միայն տեարց, որ կազմված է տեարք տեարս ձևի համեմատ, բայց այր բառի սեռականը այդպիսի ձև չունի (արանց, բայց ոչ նաև՝ արց)։

Այս ձևով են հոլովվում նաև տէր բառից կազմված բարդերը. պարապատէր, -տեառն, տանուտէր, -տեառն։

4. Աւր/օր

Ուղ.	աւր	աւուրք
Հայց.	»	աւուրս
Սեռ. տր.	աւուր	աւուրց
Բցա.	աւրէ	»
Գրծ.	աւուրբ	աւուրբք
Ներգ.	աւուր	աւուրս

5. Կին

Ուղ.	կին	կանայք
Հայց.	»	կանայս
Սեռ. տր.	կնոջ	կանաց
Բցա.	կնոջէ	»
Գրծ.	կնաւ, կնամբ	կանամբք
Ներգ.	կնոջ	կանայս

Այս ձևով են հոլովվում նաև կին բառի բարդերը. ախկին, տանկին (հգ. ախկնայք և ոչ թէ՛ ախկանայք), ախկնոջ, -ջէ, -նամբ, կամ -նաւ, ախկնաց կամ -նայց, -նամբք. մասամբ՝ աղախին, աղախնոյ, աղախնով, աղախնայք, աղախնայս, աղախնանց (նաև՝ աղախնեայք և այլն)։

6. Գիւղ

Ուղ.	գիւղ (գեաւղ, գեղ)	գիւղք
Հայց.	»	գիւղս
Սեռ. տր.	գեղջ	գիւղից
Բցա.	գեղջէ	»
Գրծ.	գիւղիւ	գիւղիւք
Ներգ.	գեղջ, գեղ	գիւղս

7. Տիւ

Ուղ.	տիւ	տիւք
Հայց.	»	տիւս
Սեռ. տր.	տուընջեան	տուընջեանց
Բցա.	տուէ, տուընջենէ	»
Գրծ.	տուընջեամբ	տուընջեամբք
Ներգ.	տուընջեան, տուէ	տիւս

Հունական հոլովում

Մեր Թարգմանիչները հունարենից Թարգմանութիւններ անելու ժամանակ, բնագրում գտնում էին, իհարկե, զանազան հատուկ անուններ, որոնք հոլովված էին հունարենի քերականութեան համեմատ և որոնք պետք էր վերածել հայերենի։ Հունարենի հոլովմունքը հայերենից այն մեծ տարբերութիւնն ունի, որ մինչդեռ հայերենի մեջ ուղղականի ձևը գրեթե ամբողջու-

թյամբ կարելի է գտնել մյուս հոլովներում (ինչ. հաց-հացի, գետ-գետոյ-գետով), հունարենի մեջ ընդհակառակը, շատ հաճախ ուղղականն էլ առանձին վերջավորություն ունի (ինչ. ἄνθρωπος «մարդ», ἄνθρωπου, ἄνθρωπον, ἀνθρώπῳ, ἄνθρωποι, ἀνθρώπους, ἀνθρώποις, ἀνθρώπων)։

Հունաձև հոլովումների առաջին աղբյուրն է Ավետարանը, ուր գտնում ենք բազմաթիվ ձևեր. ինչ. Թէոփիլէ Ղուկ. Ա. 3, Փիլիպպէ Յովհ. ԺԲ. 9. և այլն։

Հունարենին լավատեղյակ թարգմանիչը անշուշտ գտնում էր հունարեն հոլովյալ ձևի ուղղականը և այդ ձևի տակ վերածում հայերենի։

Կան դեպքեր, երբ թարգմանիչները չեզոքում են այս բնականաճանապարհից և հունարենի հոլովյալ ձևն են պահում նաև հայերենի մեջ. օր.

Ի Փիլիպպուս—εἰς Φιλίππους Գծ. Ժղ. 12. Եւթագ 187 և 188[1].

ՅԱսան — Ἄσσον (ուղ. Ἄσσος) Եւթագ 188. Գծ. ի. 13։

Ի Սամոն —εἰς Σάμον (ուղ. Σάμος), Եւթագ 189. Ա. Մակ. ԺԵ 23 (բայց Գծ. ի. 15, ի Սամոյ)։

ՅԲոդոն — εἰς Ῥόδον (ուղ. Ῥόδος) Եւթագ 189, ի Ռոդոս Ա. Մակ. ԺԵ 23, ի Հռոդոն Գծ. Իա 1։

Ի Կնիդոն — εἰς κνίδον (ուղ. κνίδος) Եւթագ 190, որ ի Ա Մակ. ԺԵ. 23 ի Կնիդոս, իսկ Գծ. Իէ. 7—κατὰ τὴν κνίδον առ Կնիդոս դեաւ (այլ ձ.-առ Կնիդոն)։

ՅԲսխուէթրոն — Եւս. քր Ա, էջ 29։

Կոչեցին զՄերրագոն ի Բարելոնէ... և ի նորա վախճանին կոչեցին զնորին եղբայր գիրովմոն. Եւս. քր. Ա, էջ 75 (զՄերբոլոն, Εἰρωμον)։

Եւ բնակիչ նմին հաշուի զգօրավար գաղթականութեանն զՌոմոն. Եւս. քր. Ա. էջ 376 (Ῥῶμον)։

ԶԲոսպորոն Ագրիպաս հնազանդեաց. Եւս. քր. էջ 388 (Βόσφορον)։

Առաքեալն Յովհաննէս ի Պաւմոն կղզի տուաւ. Եւս. քր. էջ 278 (εἰς Πάτμον)։

Ի վաղիւ անդր եկաք ի Միլետոն (εἰς Μίλητον) Գծ. ի. 15 (թեև Բ. տիմ. Դ. 20 ունի կանոնաւոր կերպով «զՏրոփիմոս թող զի ի Մելիտոս հիւանդացինն». այսպես և՝ Ոսկ. Գօղ. Ա. 271, 272)։

1 *Այս բոլոր օրինակները քաղված են Վարդանյանի տետրակից էջ 188—189։*

Նախ ի Պիսոաս գրանամարտիկոն յաղթելով. (խոր. Գ. խ) հունարենն է Πίσα հգ. հյց. Πίσας. քաղաքի անուն (Մալխասեան) Բրգմ. Խոր. պատմ. ծան. 301)։

Դեկապոլիս բառը բառ Համբրրս գործածված է 3 անգամ՝ հետևյալ ձևերով. Մտթ. Դ 25, ի Դեկապոլեայ, Մրկ. Ե. 20, ի Դեկապոլիս, Մրկ. է. 31, ի Դեկապոլիս։

Դեմեար, Դեմեարիոս լինում է սեռ. տր. Դեմեարի, Դեմեարեայ, Դիմեարի։

Դիոս, սեռ. Դիայ Գրծ. Ժգ. 12։

Եպաֆրաս, յԵպաֆրեայ (Կողոս. Ա. 7)։

Եպաֆրոդիտոս, սեռ. Եպաֆրոդիտեայ (Փիլիպ. Դ. 18)։

յն. Կոչական՝ Զակքէ Ղկ. ԺԹ. 5, Կուանելիէ Գծ. Ժ. 31։

Ղազարէ Յհ. Ժա. 43։

Պետրէ Ղկ. ԻԲ. 34։

Պօղէ Գծ. Իգ. 11, Իգ. 24, Իէ. 24։

Հունաձև հոլովման գործածութիւնը նկատելի է հատկապես կոչականի մեջ։ Հայերենի մեջ, ինչպես հայտնի է, կոչականի առանձին հոլովաձև չկա. բայց հետևելով հունարենին, առիթ է տրվել հին հայ Ոսկեդարյան գրականության մեջ-է, երբեմն էլ ա հանգով կոչական, որ երբեմն այժմ էլ գործածական է։ օր.

Ղազարէ, արի եկ արտաքս. Յհ. Ժա. 43

Մալխս, Պաւղէ. Գծ. Իգ. 24

Արքայ Ագրիպպա. Գծ. Իգ. 2, 19, 27

Եղբայր սիրելի Աթանասիէ. Եւթագ. 169։

Ավելի ուշ ժամանակի մատենագրություններից՝

Ուլնպիէ Վրք. հց. ա. 155, Պափնուտիէ 176, 177, Ղևոնդէ 208, Պետրէ 275, Մարտիանէ 334, Մակարիէ 344, Վիտալիէ 655. Ո՛ Զոսիմա «ով Զոսիմոս» Վրք. հց. Ա. 294։

Շատ տարածված մի ձև է Յովհաննէս, սեռ. Յովհաննու, երբ հն. Ἰωαννου, այնքան որ, մինչև իսկ խափանել է Յովհաննեայ ձևը։

Նույնիսկ հասարակ անունների համար կա՝

անթիւպատէ «ով փոխ—հիւպատոս» Վրքհ. վկ. ա. 401, Բ, 76։

Ոչ միայն հատուկ անուններ, այլև երբեմն հասարակ անուններ, որոնք հունարենից անցել են հայերենին, տատադարձվել են հունաձև հոլովով. ինչ.

Քան զեղջերու չիք ինչ պիղծ և վասն այնորիկ, ասեն, կոչի եղջիւն (տպ. եղջիւն), զի զօձ ուտէ. Ոսկ. մտթ. Ա. 306 (=καὶ Παρὰ τοῦτό φασιν αὐτὸν καλεῖσθαι ἔλαφον).

Ուր տային զմաննայն և զլիբանոն... և զարձուցի անդրէն զմաննայն և զլիբանոն. Նեեմ ԺԳ, 5, 9 (=τὴν μανὰ καὶ τὸν λίβανον. ուղ. ὁ λιβανος)[1].

Միայն հայերենը չէ, որ գոնվում է այս անբնական վիճակում, այլ ուրիշ լեզուներ էլ։ Օր. հայերենի նման նույն վիճակում է գտնվում նաև գոթերենը. այստեղ էլ հնչառիեն բառերը, հատկապես հատուկ անունները, մերթ հպատակվում են գոթական հոլովական օրենքներին և մերթ պահում են հնչարին ձևը. օր. Iêsus Յիսուս < հն. Ἰησοῦς հոլովվում է ոչ թե գոթական u հոլովման համաձայն (օր. sunus «որդի», սեռ. sunaus, տր. sunau, հյց. sunu), այլ՝ սեռ. Iêsius, տր. Iêsua, Iêsu, հյց. Iêsu, իսրայելացիք լինում է ըստ հունականի հգ. ուղ. Israêleitai < հն. Ἰσραηλῖται և ըստ գոթականին Israêleiteis և այլն։

Հատուկ անունների հոլովումը

Հատուկ անունները մեծ մասամբ պահպանում են ա հոլովման. ինչ. Արշակ, Արշակայ, Արշակաւ և այլն. Տրդատ, Հռիփսիմէ։

Բայց կան շատ հատուկ անուններ, որոնք տարբեր հոլովման են հետևում և կամ երկու հոլովման միաժամանակ, օր. Ղուկաս, սեռ. Ղուկասու և Ղուկայ, Հայկ, սեռ. Հայկայ և Հայկի և այլն...

Ի հլ.— Եգիպտոս, Հրեայ, Մովսէս, Սարգիս...

Ո հլ.— Աստուածատուր, Հռոմ, Կարին, Հայք

ույ հլ.— Աստր

ու հլ.— Աբրահամ, ու, աւ, Յովհաննէս, ու, Ղուկաս, ու կամ Ղուկայ, Յարդանան, ու

Այ հլ.— Եսայի, Տիրեր, Հեղինէ, Մեսրոպ, Հռոմ, Սահակ, Կրիտե, Գալիլեա, եայ

Հայկ, Հայկայ կամ Հայկի

Յովսէփ, այ կամ ու

Յակոբ, այ կամ ու

Փիլիպպոս, պեայ կամ ոսի։

---

1 Վարդանեան, Եւթագ, էջ 189։

Հատուկ անունների հոգնակին անգործածական է. բայց դրարարում կան սակավաթիվ օրինակներ, ինչ. Յուդայք, Սիմոնիկ և այլն (Զարխան, էջ 25 ծան.), ավելի սովորական է աւք, եանք վերջավորությամբ. ինչ Ներսեհեանք, -հանց. Վարդանանք, նան, -նամբք և այլն։

Աշխարհաբարում կարելի է հարկ եղած դեպքում հատուկ անունը հոգնակի դարձնել, օր., Սահակներ, Մեսրոպներ, Ներսեհներ ենք ունեցել. և այս դեպքում հոգնակին ունի «ընտանեկան» նշանակություն։

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԼՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

1) Եզակիում ուղղական և հայցական հոլովները միշտ միևնույն ձևն ունեն և ներկայացնում են բառի պարզ ձևը՝ առանց բանի և առանց որևէ վերջավորության. այսպիսով՝ ա) երբ որևէ բառ առանձին է գործածված, այդ դեպքում հայտնի չի լինում թե ուղղական է, թե հայցական. հոլովը որոշվում է նախադասության ընթացքից կամ մտքից. բ) ուղղական-հայցական հոլով թե առանձին լինելու դեպքում, և թե նախադասության մեջ բնավ չի կարող որոշել, թե բառը ինչ բանի է պատկանում և հետևաբար որ հոլովմամբ պետք է հոլովել։

Ծանոթ.— Մեր քերականությունները հայցականի համար գնում են միշտ զ-ով ձևը, բայց զ հայցականի նշան չէ, այլ որոշյալի. անորոշ հայցականը լինում է առանց այդ զ նախդրի. եթե հայցականի վրա զ նախդիրը միշտ միասին առնենք, ապա ուղղականի վրա էլ ն հոդը անբաժան պիտի պահենք։ Այն հայերենում հայցականը կարող ենք արտահայտել 4 ձևով. այսպես՝ առն, առն մի, զառն, զառնն։

2) Սեռական և տրական հոլովները թե եզակիում և թե հոգնակիում, ինչ հոլովման էլ պատկանի բառը, միշտ միևնույն ձևն ունեն. ձայնավորահանգ հոլովման մեջ այդ հոլովների նշանները են եզակիում ի, ու ձայնավորները կամ ոչ երկբարբառը, որոնք կցվում են ուղ.-հյց. հոլովաձևի վրա (ի կցվում է ի և ա բառերի վրա, ու կցվում է ու բանի վրա, ոյ կցվում է ո բանի վրա). բաղաձայնանհանգ հոլովման մեջ վերջավորություն չկա, և միայն բառի վերջին բաղաձայնից առաջ դրվում է մի ձայնավոր, որ ուղ.-հյց. հոլովաձևի մեջ չկա. ինչ. հարսն-հարսին, ապագ-ապագեղ։ Հոգնակիում սեռականի և տրականի նշանն է ց,

որ ձայնավորանոգ հոլովման մեջ կցվում է ուղղակի պարզ բուն վրա (-ից, -աց, -ոց, ուց), իսկ բաղաձայնանանոգ հոլովման մեջ՝ եզ. սեռ.-տրականի հոլովաձևի վրա կամ անմիջապես (պահելով սակայն ձայնդարձի օրենքը) և կամ ա ձայնավորի հավելումով (ինչ. շարժման-շարժմանց, հարթին-հարթանց, աստեղ-աստեղց կամ աստեղաց)։ Ի նկատի ունենալով այս հանգամանքը, դպրոցական քերականության մեջ կարելի է հոլովումը բաժանել երեքի. հետամահնկավոր, միջամահնկավոր և անկանոն. այսպես արել եմ ես էլ, թեև մասնիկ բառը այստեղ վերջավորության իմաստով անհարմար է։

3) Բացառականը եզակիում ի, ա, ու բուների հոլովման մեջ ասանում է ն վերջավորությունը (բանէ, ամէ, գիւղասէ), ո բունի հոլովման մեջ նույն է սեռ. տրականի հետ (գետոյ), իսկ բաղաձայնանանոգ հոլովման մեջ կազմվում է եզ. սեռ.-տրական հոլովաձևի վրա ավելացնելով ն (շարժմանէ, աստեղէ)։ Ն հոլովման առաջին տիպարի մեջ կան բառեր, որ հետևում են այս ընդհանուր կանոնին, ինչ. անձն-անձնէ, իսկ ուրիշներ, երկրորդ տիպարի նմանողությամբ՝ ասանում են -աւնէ վերջավորությունը, ինչ. ձեռն. ձեռին, ի ձեռանէ։ Հոգնակիում ամեն տեսակ հոլովման մեջ էլ նույն է սեռ.-տր. հոլովաձևի հետ։

Ծանոթ.— Բացառականը ամեն տեսակ հոլովման մեջ էլ թե եզակի, և թե հոգնակի՝ ընկերացած է լինում միշտ ի, յ նախդիրով, որով տրական և բց. որոշվում են իրարից։

4) Եզակիի գործիականը կազմվում է վ, ւ, բ վերջավորությամբ. վ դրվում է ո բունի վրա, ւ դրվում է ի, ա բուների վրա. օր., գետով, բանիւ, ամաւ, հարսամբ, աստղեր, ապերի վրա. իսկ բ դրվում է բաղաձայնանանոգ (մ, բ, ղ-ից հետո) բուները։ Միայն ու բուներն են, որ գործիականի վերջավորություն չունենն, բաց որում հայերենի մեջ ո—վ հնչյուն չկա։ Այսպիսով ու բուների այս հոլովը սեռ.-տր. հոլովաձևի հետ նույն է դառնում գալիս։

5) Հոգնակիի նշաններն են ք, ս, ց. ուղղականը կազմվում է ք վերջավորությամբ, որ ձայնավորանոգ հոլովման մեջ կրճատվում է պարզ բառին՝ առանց բունի ձայնավորի. իսկ բաղաձայնանանոգ հոլովման մեջ երևան է գալիս վերջընկեր մի ձայնավոր, որ եզակի ուղղականում պակասում է (բանք, ամբ, գիւղաք, հարսունք, գառինք, աստեղք)։ Այս ք ձայնը կարող է նախորդ ձայնավորի կամ բաղաձայնի հետ մի վանկ կազմել

մած. ինչ. գիւղաք և այլն։ Բայց երբ նախորդ բաղաձայնն է գ, կ կամ ք, մեջտեղը (ք-ից առաջ) մտնում է անշեշտ և անգիր ը, բան որում հայերենում երկու նման բաղաձայններ բառավերջում առանում են միշտ ը. ինչ. տարբր. այսպես՝ երգըք, քաղաքըք, երկըք։ Տաղաչափության մեջ հներն արտասանել են նաև նուիրեալըք, մարըք «մայրերք», գետերըք (Աբեղյան, Տաղաչ., 331, 333)։

6) Հոգնակի հայցականի նշանն է ս, որ փոխարինում է հգ. ուղղականի ք բաղաձայնին (բանս, ամս, գետս, գիւղաս, հարսունս, գառինս, աստեղս)։

7) Հոգնակի գործիականը ունի ճիշտ եզ. գործիականի ձևը, որի վրա ավելանում է ք հոգնակերտ նշանը (բանիւք, ամաւք, գետովք, գիւղաւք, հարսամբք, աստեղբք)։

8) Ներգոյականը հոլովը նույնանանում է մերթ տրականի և մերթ հայցականի հետ. այսպես՝ եզակիի մեջ տրականի հետ նույն է ի, ա, ու բուների և բաղաձայնանանոգ հոլովման մեջ, իսկ հայցականի հետ նույն է ո բունի եզակիի և ամեն տեսակ հոլովման հոգնակիի մեջ։ Երկու դեպքում էլ ասանում է միշտ ի, յ նախդիրը. ինչ. ի բանի, յամի, ի գիւղասւ, ի հարսին, յաստեղ, ի գետ, ի բանս, յամս, ի գիւղասս, ի հարսունս, յաստեղս։ Ի վերջացող բաղմավանկ բառերի համար կա հատուկ վերջավորություն (ոջ)։

9) Այս բոլորից երևում է, որ հայերենը թեև ունի 7 հոլով, բայց դրանցից մի մասը իրար նման լինելով, դուրս է գալիս, որ ամեն մի բառ յուրաքանչյուր թվի մեջ ունի 3 կամ 4 ձև, իսկ երկու թիվը միասին 7 կամ 8 ձև։ Հոլովների ավելի բազմազանություն երևում է դերանունների մեջ։

10) Բունի ձայնավորը երևան է գալիս սեռական, տրական, գործիական, երբեմն նաև բացառական հոլովի մեջ, թե եզակի և թե հոգնակի։ Բան այսօր ուղ.-հյց. հոլովաձևը բավական չէ որոշելու բառի բունը. նույնպես նաև սեռ.-տր. հոլովաձևը ի, ա բուների մեջ, բան որում երկուսն էլ ասանում են ի վերջավորություն։ Այս պատճառով բառի բունը, կամ որ նույն է՝ հոլովման որոշելու համար անհրաժեշտ է ունենալ եզակի գործիական կամ հոգնակի սեռ.-տր., բց., գործ. հոլովներից որևէ մեկը (ո, ու հոլովման մեջ եզ. սեռ.-տր. հոլովն էլ բավական է)։

Հոլովածների ծագումը (թե ինչ ձևափոխություններ է կրել ինդեվրոպական հոլովումը հայերենի վերածվելու համար)

Ուղղականի վերջավորությունը ինդեվրոպական նախալեզվում էր զրո՝ á, r, n բուների համար, իսկ e/o, i, u միավանկ և բազմաձայնահանգ բուների համար՝ s։ Համաձայն հայերենի ձայնական օրենքների՝ s հանդը չկորավ և ուղղականի մեջ միայն բառի պարզ ձևը։ Այսպես, օր., քուն ուղղականը համապատասխանում է սանս. svàpnah, լտ. somnus, հն. ὕπνος ուղղական ձևերին. նույնպես և ամ = սանս. sàmā (զ)արդ = հն. ἀρτὸς, սիրտ = լիտ. širdis և այլն։

Կոչականի վերջավորությունն էր ինդեվրոպական նախալեզվում սովորաբար զրո, á բուների համար՝ a, և o բուների համար՝ e, այս վերջավորությունները հայերենի մեջ նախորդի նման չկորչելով՝ պիտի միայն պարզ բառը, որով ուղղական և կոչական անուղղակի միջոցով պիտի նույնանային։ Ըստ այսմ հյ. կոչական քուն համապատասխանում է սանս. svàpna, լտ. somne, հն. ὄπνε կոչականներին. նմանապես սիրտ = լիտ. կոչական širdē և այլն։

Հայցականի վերջավորությունն էր ինդեվրոպական նախալեզվում n, որ ժառանգորդ լեզուների մեջ երևան է գալիս m կամ n ձևով. m ունեն արիականը և իտալականը, իսկ n՝ ունեն հունարենը, բալթիականը և մյուս լեզուները։ Հայերենն էլ այսպիսի պիտի ունենար ն, ինչպես ցույց է տալիս քան = լտ. quam։ Բայց այդ ձայնն էլ՝ համաձայն նախորդների, պիտի չկորչեր հայերենի մեջ, որով հայցականն էլ պիտի զուրս գար ուղղականի և կոչականի հետ բոլորովին նույն։ Այսպես, օր. քուն հայցականը համապատասխանում է սանս. svapnam, լտ. somnum, հն. ὕπνον հայցականներին. նույնպես հյց. ամ = սանս. sāmam, (զ)արդ = հն. ἄρτὸν, սիրտ = լիտ. širdį, հլիտ. szirdin հայցականներին։ Նկատենք, որ լատիներենի մեջ էլ m վերջաձայնը այնպես տկար էր հնչում, որ հաճախ չի գրված հնագույն արձանագրությունների մեջ, ինչ. oino, viro փխ. oinom, virom և արդի ռոմանական լեզուներից ոչ մեկը նրա հետքը չի պահած։

Երեք ձևերի (ուղ., կոչ. և հյց.) ծագման նույնությունը ավելի հայտնի կերևա, եթե համեմատենք, օր. սիրտ ձևը լիտ. ուղ. širdis, հյց. širdį, կոչ. sirdē ձևերի հետ։

Ն հոլովման մեջ ուղ. և հյց. հոլովների նույնությունը բացատրվում է մի քանի պատճառներով. հնդեվրոպական նախալեզվի մեջ չեզոք բառերի ուղ. հյց. հոլովը նույնն էր, ուստի նրանց համանդներն էլ հայերենի մեջ պետք է ունենային նույն ձևը. այսպես. հյ. -մն (շարժումն և այլն) ներկայացնում է հնխ. ուղ. հյց. mn վերջավորությունը (որից սանս. -ma, հն. -μα, լտ.-men). արևականի և իգականի մեջ ուղղականը սանում էր մի երկար ձայնավոր (= սանս. ā, լտ. ō, լիտ. ū), որի վրա կարող էր ավելանալ և մի անգային (հն. -ᾱ, -ω)։ —Հայցականը մի վանկ ավելի ուներ. ինչ. սանս. -ānam, -anam, հն. -ονα, -ενα, լտ. -inem և այլն։

*Հայերենի մեջ առաջինը իր անգամանով միասին կրճատվելով ուղղականում պիտի միայն պարզ բառը, իսկ հայցականը՝ վերջավանկը կորցնելով՝ պիտի միայն ն. եթե մենք թե ուղղականում, և թե հայցականում ունենք ն վերջավորությունը, պետք է ենթադրել, թե ուղղականը նմանապարտ սառել է հայցականի ձևը՝ հետևելով մի կողմից չեզոք սեռի բառերին և մյուս կողմից ձայնավորանանգ բուներին, որոնց մեջ ուղղական և հայցական միշտ միևնույն ձևն ունեին։ Նույնպես ոտն, ձեռն, դուռն և այլ այս կարգի բառերի մեջ ուղղականի ն հետացած է հնագույն հայցականի նմանողությամբ, ուր ն կանոնավոր է. այսպես՝ ոտն = հն. πόδα, ձեռն = χεῖρα, դուռն <*dhurṃ. այնուհետև՝ ուղ. հյց. ոտն, ձեռն ձևերի վրայից առաջացել է ամբողջ ն հոլովումը, որ սակայն դեռ չի անցել հոգնակիին, և կամ միայն մասամբ անցել է։ Ընդհակառակը, -իկ, -ուկ հանդող բառերի մեջ (աղջիկ, աղջկան) հայցականն է, որ հետևել է ուղղականին և երկուսն էլ ձեռնել են առանց այն անգականի, որ գտնում ենք մյուս հոլովներում (աղջկունք և այլն)։*

Սեռական հոլովը ինդեվրոպական նախալեզվում առանում էր զանազան վերջավորություններ։ O բուների սեռականը կազմվում էր -osyo վերջավորությամբ, որ տալիս է սանս. -asya, հն. համեր. -οιο և որ անշուշտ պիտի տար հյ. -ոյ, այնպես որ այս վերջավորության մեջ յ ձայնը ոչ թե ն ձայնավորին իբրև հավելված է, այլ սեռականի իսկական վերջավորությունը, որ նախապես հնչվում էր իբրև y և շատ հետո միայն դարձավ անձայն։ Այսպես, սանս. svápnasya = հն. հոմեր. ὕπνοιο = հյ. քնոյ. ի, ա բուների սեռականը ինդեվրոպական նախալեզվում կազմվում էր -es, -os մասնիկներով (համմտ. սանս. -eḥ, -oḥ, լիտ. -ēs, -aus, գոթ. -ais, -aus և այլն). այս ձևերը հայերենի մեջ իբրև վերջավանկ

պիտի չնչվեին, հետևաբար և սեռականի համար էլ պիտի մնար բա-
ռի պարզ ձևը։ Արդ՝ եթե հայերենի մեջ ունենք սեռականի համար
ի, ու մասնիկները, ուրեմն դրանց ծագումը պիտի փնտրենք ու-
րիշ տեղ։ Իրոք էլ, դրանք համապատասխանում են սանս. -iyaḥ,
-uvaḥ, հն. -iyos, -ufos սեռականներին, որոնք ī, ū երկար ձայ-
նավորով բառերի սեռականներն են. ըստ այմ հյ. սրտի, գիս-
կան, դորիական և հոմերական) πόλιος «քաղաքի» (ուղ. πόλις) և
ὄφρυος «յոնքից» (ուղ. ὀφρύς) ձևով սեռականներին։ Հայերենի մեջ
i և ī, u և ū բառերը շփոթվելով իրար հետ՝ այսպիսի մի ձև կա-
րող էր հեշտությամբ առաջանալ։

Գալով ա բունով բառերի սեռականին (ամի, կամ Տրդա-
տայ) ոչ մի լեզվի մեջ դրանց համապատասխանը չկա. առաջինը
նման է հայերենի ի բունի սեռականին և պետք է կարծել, որ
նրա նմանողությամբ առաջացած մի ձև է, ինչպես որ այդ նման-
դությունը հետո ուրիշ բունների վրա էլ պիտի տարածվեր, իսկ եր-
րորդը առաջացած պիտի լինի ո բունի նմանողությամբ ոյ սե-
ռականից. ինչպես ո բունի մեջ յ դարձել էր սեռականի մաս-
նիկ, նույնպես եղավ նաև ա բունի մեջ

Ն հոլովման մեջ սեռականը առանում է երկու ձև. -ին և -ոյ.
առաջինը ներկայացնում է հնխ. սեռ. en-es, en-os, երկրորդը
n-es. առաջինի համար համմտ. հն. ποιμέν-ος «հովվի», սանս. brah-
maṇ-as «աղօթքի», brahmàn-as «քահանայի», երկրորդի համար
սանս. vṝṣṇ-as «արուի» և այլն։

Տրական հոլովի նշանն էր հնդեվրոպական նախալեզվի մեջ
ā և o բունների համար āi, ōi. հայերենի մեջ սրանց վերջին մաս-
նավորը ընկնելով՝ մասնիկը պիտի դառնար ա, ո, որոնք հետո
սեռականի նմանողությամբ առանալով յ կիսաձայնը, դարձան
այ, ոյ. այսպիսով, առաջացան Տրդատայ, գեղոյ տրականները։
Գալով ի, ու բունների տրականին, սրանք չեն կարող համապա-
տասխանել ոչ սանս. aye, ave, ոչ հսլ. i, ovi ձևերին, որոնք
պիտի տային հայերենում է, ե։ Հայերենի ի, ու բունների տրա-
կանը համապատասխանում է սանս. iye, uve; հն. ī, ui տրական-
ներին։ Այստեղ էլ ī և ī, ū և ū բունների շփոթությունը պատ-
ճառ եղած է հիշյալ ձևերի առեղծման։

Ն հոլովման տրականն էլ սեռականի պես ունի ին և ոյ
ձևերը. առաջինը համապատասխանում է հնխ. տր. en-ei ձևին

որի դեմ համմտ. հն. ποιμέν-ι «հովվինն», սանս, brāhmaṇ-e «աղօթ-
քինն», իսկ երկրորդը՝ հրճատ ո--ei ձևին. համմտ. սանս. rājñ-e
«արքայինն»։

Բացառականը, ինչպես գիտենք, հնդեվրոպական նախալեզ-
վի մեջ նույնն էր սեռականի հետ. և միայն o բուներն էին, որ
ունին առանձին բացառական՝ ōd վերջավորությամբ։ Այսպիսի
մի վերջավորություն հայերենի մեջ պիտի ընկներ և ո բունի բա-
ցառականի համար պիտի ունենայինք բառի պարզ ձևը. այսպես՝
սանս. svāpnāt, հլտ. somnod ձևերի դեմ՝ հյ. քուն։ Արդ հայե-
րենի մեջ հենց ո բուներն են, որ առանձին բացառական չու-
նեն, այլ նույն են սեռական-տրական հոլովի հետ, և մյուս բու-
ներն են, որ ունեն առանձին վերջավորություն՝ բացառականի
համար, այն է ի։ Այս վերջավորությունը կցվում է բառի պարզ
ձևին, առանց բունի, բայց ու բունի մեջ երբեմն բունի ձայնա-
վորն էլ պահվում է. ինչ. զարդուի, խրատուի։ Այս է վերջավո-
րությունը ծագելով նախավոր եյ ձևից, նույնանում է ո բունի
բացառականի ոյ վերջավորության հետ. երկուսը միասին կա-
րելի է թևրևս հանել հնխ. tes (կամ tos), ապա -otos, -etos
ձևից, որի ներկայացուցիչներն են սանս. tāḥ,-ataḥ, հն. -τοῦ, հաթ.
-tis, լտ. tus, համմտ. սանս. mukhat-táḥ «ի բերանոյ», լտ. fun-
dus «ի հիմանէ» և այլն։

Մանոթ. — Lejeune, BSL, *34*, № *102*, էջ XI առաջարկում
է այս փոխարեն -ոյ բացատրել մակբայական -dh- ձևով, ինչպես
հն. -οθε, -οθεν, թեև dh>γ ձայնափոխության ալյուր չենք պատա-
հում, բայց անսպասելի չէ. այսպիսով, հայերենը ոչ միայն
կապվի οχ<odhi ձևին, այլև կմիացնի հն. մի ձև հայերենի
մեջ, ինչ-որ շատ սովորական երևույթ է։ Բայց քանի որ հն. -οθεν
գործիս է արդեն ոչ (տես էջ 440—441), ուստի անհարմար է
նրան նաև ոյ։

Փորթիական հոլովը, ինչպես գիտենք, հնդեվրոպական նա-
խալեզվի մեջ կազմվում էր ē, ō, bhi կամ mi վերջավորություն-
ներով. ժառանգորդ լեզուները այս մասնիկների գործածության
մեջ իրար անհամաձայն են, որովհետև՝ ա) մեկի մեջ գործ-
ում ենք այս ինչ մասնիկը, մի ուրիշի մեջ՝ ուրիշ մասնիկ.
նույն մասնիկը գործ է ածվում մեկի մեջ միայն գործիա-
կան համար, մյուսների մեջ՝ զանազան հոլովների համար.
նույն մասնիկը մեկի մեջ գործ է ածվում միայն եզակիի հա-
մար, մի ուրիշի մեջ՝ նաև հոգնակիի համար։

Այսպես, նույն «գայլ» բառի գործիականը լինում է սանս. vṝkā, լիտ. vilkù, իսկ հալ. vlīko-mĭ.— հն. -φι(ν) ոչ միայն գործիականն է, այլև տրականն ու բացառականը. նույն հն. -φι(ν) մասնիկը հատուկ է թե եզակիին և թե հոգնակիին, այսպես՝ նաև նրան համապատասխան հալ. mĭ եզակիի համար, և mi հոգնակիի համար, իսկ արիական, իտալական, գերմանական և կելտականը լիմար, իսկ արիական, իտալական, գերմանական և կելտական լեզուների մեջ միայն հոգնակիի համար։ Այս բոլորի մեջ միայն հայերենն է, որ ունի բոլորովին կանոնավոր գործածություն և ներկայանում է մեզ հետևյալ հանգամանքներով. 1) մասնիկը, որ ունի վ, ւ, բ ձևերը, իրապես միևնույն ձայնի հնչական տարբեր երևույթներն է ներկայացնում. ձայնավորից հետո՝ ւ, կամ՝ n ձայնից հետո վ, և կամ բաղաձայնից հետո՝ բ. Նույնիսկ ու բունի գործիականը ու՝ իրապես ոչ թե սեռ.-տրական հոլովաձևն է, այլ ներկայացնում է ուվ նախավոր ձևը. հայերենը անընդունակ լինելով արտաբերել ու ձայնավորից հետո վ ձայնը, ուր որ պատահել է այդպիսի երևույթ, ջնջել է. այնպես որ հայերենի մեջ չկա ոչ մի բառ և ոչ մի ձև, ուր ուվ ձայնախումբը գոյություն ունենա. 2) մասնիկը առաջանում է հնխ. bh ձևից և ոչ թե m ձևից, որով միանում է ոչ թե բալթիկ-սլավոնական և գերմանական խմբին, այլ արիական, հունական, իտալական և կելտական խմբին։ Հայերենի համապատասխան ձևերն են հատկապես -ով = հն. հոմեր. -o-φι, աւ = հոմեր. -ῃφι, հին՝ -āφi, սանս. հգ. գթ. -á-bhis, ի = հոմեր. -ι-φι, սանս. հգ. գթ. -i-bhis, ու (< *ուվ) = հոմեր. -υ-φι, սանս. հգ. գթ. -u-bhis։ Հնխ. -bhi վերջավորության վերջին ձայնավորը բնականաբար ընկած է հայերենի մեջ, բայց նրա հետքը բացառաբար պահպանում է իւիք գործիականը, որ կազմված է ք մասնիկով՝ նախկին գործիական իւի ձևի վրա։ Մասնիկի հավելումը պատճառված է եղած ի վերջաձայնի պահպանման։ Առանց այդ հավելման՝ ունենք իւ «ինչով»։

3) Հայերենը նույն մասնիկը գործածում է միմիայն գործիականի համար եզակիում, իսկ հոգնակիի մեջ նույնին ավելացրել է ք հոգնակերտ մասնիկը, որ գտնում ենք նաև հգ. ուղ. հոլովի վրա։ Գործիականը հնապես ուներ նաև -և ձևը, որ ապա վերացել է, պահվելով միայն այսուհետև, այնուհետև, հետևի բառերի մեջ. այս բոլորի մեջ հետև գործիականն է հետ «ապա» բառի, որ ապա դարձավ հետով։

Ներգոյականը նախալեզվի մեջ կազմվում էր ei, oi վերջավորությամբ, o բունների համար. հայերենի մեջ այս վերջաձայն երկբարբառները բնականաբար պիտի ջնջվեին, որով ներգոյականը հոլովման մեջ անուղղակի ճանապարհով դուրս պիտի գար ուղ.-հյց. հոլովի հետ նույն։ Օր. ի բուն համապատասխանում է ճշտիվ սանս. svàpne, հն. ὕπνοι, հալ. sūnē ներգոյականներին։

Մյուս բուններից i, u կազմում են իրենց ներգոյականը ēi, ōi, ēu, ōu վերջավորություններով, իսկ ā բունը՝ āi վերջավորությամբ. այս բոլոր երկբարբառներն իրրև վերջաձայն հայերենի մեջ պետք է ջնջվեին և ներգոյականը դուրս պիտի գար ուղ. հյց. հոլովաձևի հետ նույն, ճիշտ ինչպես n հոլովման մեջ։ Բայց ի, ու, ա հոլովման մեջ հայերենի ներգոյականը այդպես չէ, այլ նման է սեռ.-տր. հոլովաձևին։ Ըստ իս, ինչպես սեռականի և տրականի մեջ, նույնպես և այստեղ ա, i ևս շփոթված են իրենց համապատասխան երկարների հետ և ī բունի ներգոյականը՝ iyi դառնալով հյ. ի և ū բունի ներգոյականը՝ uvi դառնալով հյ. ու, այնուհետև ընդհանրացած է նաև կարճ i, u բուններին։ Գալով a բունի ներգոյականին, այստեղ էլ, ինչպես սեռ.-տր. հոլովաձևը, փոխառնված է ի բունից։

Բաղաձայնատանգ բուների մեջ հնխ. հոլովման ներգոյականի վերջավորությունն էր i. հայերենի մեջ այստեղ էլ ձայնավորը ջնջվելով՝ արդյունքը անուղղակի ճանապարհով դուրս եկավ սեռ. տր. հոլովի հետ նույն։ Ըստ այսմ մեր ն հոլովման ներգոյականի ին, ան վերջավորություններից առաջինը ներկայացնում է հնխ. en-i (*համմտ. հն. ποιμέν-ι «հովվին», հալ. kamen-e «քարում», սանս. brāhman-i «աղոթքում»), երկրորդը կրճատ՝ n-i (*համմտ. սանս. rājn-i յարքայի*)։

Հոգնակի ուղղական հոլովը հնդեվրոպական նախալեզվում ā, o բունների մեջ կազմվում էր ās, ōs վերջավորությամբ. այս երկուսն էլ պիտի ջնջվեին հայերենի մեջ, որով եզ. ուղ. և հգ. ուղ. նույն ձևը պիտի առանային։ Այսպես՝ սանս. եզ. ուղ. svàpnaḥ և հգ. ուղ. svàpnāḥ, հն. եզ. ուղ. ὕπνος և հգ. ուղ. ὕπνοι համապատասխան պիտի դառնային հյ. քուն։ Նույնպես՝ սանս. եզ. ուղ. sàmā և հգ. ուղ. sàmāḥ պիտի դառնային հավասարապես հյ. ամ։ Երկու թվերի շփոթության առաջն առնելու համար հոգնակիի մեջ նույն ձևի վրա ավելացվեց ք մասնիկը, որ գտնում ենք նաև հոգնակի գործիական հոլովի, երեք, չորք թվականների

և բայերի հգ. առաջին և երկրորդ դեմքերի մեջ։ Այս մասնիկը տարբեր է այն p մասնիկից, որ գոնում ենք իւիր «մի բանով գործիականի մեջ և որ ծագում է ke ձևից = սանս. ca, հն. τε։ Բացի նշանակությունից՝ տարբերությունը հենց նրանում է, որ հոգնակիի p-ից առաջ բառավերջի ձայնավորը կորչում է, իսկ անորոշի p-ից առաջ պահվում է. այսպես՝ նախավոր չորիք ձևը, որ համապատասխանում է հն. դոր. τέτορες ձևին և որ անազարտ պահված է չորեքտասան և չորեքհարիւր բառերի մեջ, առանձնակի վիճակում դառնում է չորք. մինչդեռ իւիր ձևի մեջ գործիականի ի ձայնը պահված է (իւի, որի առանձնակի ձևն է իւ)։

Ի՞նչ է այս p հոգնակերա մասնիկի ծագումը։

Անտարակույս է, որ այս մասնիկի հետ պատահական նմանություն միայն ունի ուգրո-ֆիննական լեզուների հոգնակերա k մասնիկը, որ երևում է հունգարերենի մեջ k և լապոներինի մեջ hk ձևով. ինչ.

հունգ. kö քար, köväq քարեր
լապ. männi ձու, mänīhk ձվեր։

Վերջապես, պատահական նմանություն ունեն հնաոմար ամերիկյան լեզուների հոգնակերա q կամ k'e մասնիկները. այսպես՝ կարրիեր լեզվով k'e, որ գործածվում է անձ ցույց տվող բառերի հոգնակին կազմելու համար (տես վերը). ալինդիա լեզվով՝ q, ինչ. ta «քար», teq «քարեր». նասս լեզվով՝ qā, որ դրվում է գոյականից առաջ. ինչ. smax «միս», qasmach «մսեր», tgamāq «շուրթ», qatgamaq «շուրթեր». նավահո լեզվով՝ k'e, ինչ. šinai «երես եղբայր», հգ. šinaik'e։

Նույնպիսի պատահականությամբ գոնում ենք գարձյալ իրրև հոգնակերա դրավիդյան լեզուների մեջ. ինչ. գոնդի լեզվով nai «շուն»—naik «շներ», kāl-k «ոտքեր» (իրր թե՝ քայլը), նույնիսկ kalle «գող», հգ. kallērk «գողեր» (այս վերջինը Գրիերսոնը բացատրում է իրր կրկնակ հոգնակի՝ բաղկացած er և k հոգնակերա նշաններից, որով լինում է ճիշտ մեր տղերք, աղջկերք ձևերի հետ նույն).—բրահուի լեզվով էլ հոգնակիի մասնիկն է k կամ āk. ինչ. hulī «ձի», hulīk «ձիեր», xan'k «տներ», nak «ոտներ», māk «որդիք», bā «բերան»—հգ. bāk, urāk «աուն», հգ. urāk, zān «ծունկ»—հգ. zānk և հատկապես pāṭ «փայտ»—հգ. pāṭk «փայտք» (ամեն կողմով նման հայերենին)։

Ամերիկյան սիլլամուկ լեզվում հոգնակի կազմող մասնիկը նույնպես k կամ kt է, բայց դրվում է բառասկզբում. օր. k-smawin «տներ», k-sqaxa «շներ», k-sgugagk «թռչնիկներ», kt-tiyilhu «մարդիկ»։

Եթովպական բարեա լեզվում հոգնակին կազմվում է ka վերջավորությամբ. օր. ašker «պինդ»—հգ. ašker-ka, ten «պատուկ»—հգ. tenka «պատուկներ»։

Ամերիկյան մի ուրիշ լեզու էլ կա, որ իր հոգնակին կազմում է կանոնավորապես koa վերջավորությամբ. այն է՝ բնաթա կամ տուկանո լեզուն. օր. o'ku «ջուր», հգ. oko'-koa «ջրեր», մինչև անգամ՝ kacke «հնա», հգ. kacke-koa «հնրանք»։

Ամերիկյան մի անծանոթ լեզու էլ կա, որ կոչվում է խաուհամա (Բոլիվիա) և որի քերականական ուրվագիծը հրատարակված է MSL, *19*, էջ *301—322*. այստեղ էլ հոգնակին կազմվում է -ke մասնիկով (էջ *304*)։

Ամերիկյան տեհուա լեզվով հոգնակիի համար կան դանագան մասնիկներ, որոնցից մեկն էլ k կամ ki է. ինչ. revyek «մարգ», revyek-ki «մարգեր», xapka «աբեր», հգ. xapkak.

Հյ. հոգնակերա p ծագում է հնդեվրոպական համապատասխան s ձևից։ Գիտենք, որ հնխ. s ընդհանրապես ջնջվում է հայերենի մեջ. բայց բառասկզբում sv դառնում է ճշտիվ p։ Համենայն դեպս դուր չէ, որ հոգնակիի մեջ երեք, չորք թվականների մեջ և բայերի հգ. ա և p դեմքերի մեջ, ինչպես նաև դերանունների ա և p դեմքերի հոգնակիում (մեք, դուք), հյ. p համապատասխանում է միշտ հնխ. s-ին[1]։ Նրա հնությունը հաստատելու համար պետք է հիշել Քսենոֆոնի καρδοῦχοι «կորդուք» և Τάοχοι «Ծայքք» անուններըր, որոնց մեջ χ = p, ճիշտ ինչպես որ Cordueni (Պլինիոս) և Γορδυηνή (Ստրաբոն) կազմված են gr = ŋr մասնիկով. այսպիսով, p հոգնակերա մասնիկը հասնում է մինչև Ն. մեր թվ. ե դարը. (եզակի այս ձևը տալիս է Ստեփ Բիւզանդացի Τάοι ձևով, առնելով Սոփենեդոսից) և վրաց. tao կամ taos-kari։

Թե Քսենոֆոնի (*352* թ.) Καρδοῦχοι ձևը իրոք հոգնակի հյ. կորդուք ձևից է՝ ցույց է տալիս սար. Qardū ձևը, որ քուրդ

[1] Կարծիքս առաջին անգամ հաստատել ուզեց Բուգգեն, հետո Պիկտեն, վերջին անգամ Մեյեն (BSL 87, էջ *89*) սասւմ է, թե այս կարծիքը լեզվաբանների մեջ հետզհետե ընդունվում և հաստատվում է։

ազգի անվան հնագույն ձևն է։ Սրանով հաստատվում է, որ
մեր թվ. Դ դարում հյ. ք արդեն հոգնակիի մասնիկ էր։

Երկու ձևերից առաջինը -χοι հայկական անվանակոչութ
առատագործությունն է, իսկ երկրորդը՝ -ni բնիկ կամ վրացական
հնչման. հույները, առնելով հայերենից Տայք, Կորդուք ձևերը,
որոնք արդեն հոգնակի են, երկրորդ անգամ վերածեցին հոգնա
կիի՝ ավելացնելով հունական հոգնակերտ -οι վերջավորությու
Այսպես են վարվել հույները նաև սկյութական ու սարմատա
կան զանազան ցեղերի անուննները առատագործելիս, օր., Σαιδοῖ
ται, Σαυρομάται, Μασσαγέται, Λυκάται, Ζακάται, Μαῖται Παιονῖ
ται, Σαυρομάται, Μασσαγέται, Λυκάται, Ζακάται, Μαῖται Παιονῖ
և այլն, որոնց բոլորի մեջ -ta հոգնակիի մասնիկ է և մինչև այսօր
կենդանի է օսերեն լեզվի մեջ, ուր հգ. ուղ. մասնիկն է -տե։
Նույնիսկ Σκῦθαι = Սկյութացիք բառը ըստ այսմ ծագած պիտի
լինի Սակ բառի հոգնակիից. սկյութացիք իրենք իրենց կոչում
էին Սակ (Σάκαι), որի հոգնակին պիտի լիներ *Sku-tä։

Այսպես, ուրեմն, հայերենը սեռնելով, որ հոգնակիի մեջ
բառավերջի s ընկչվելով եզակիի հետ պիտի չփոթվեր, ավելաց
րեց v կիսաձայնը և այսպիսով առաջվեց sv = p վերջավորու
թյունը։

Մ. Գրամոն (MSL 20, 229) ուրիշ ձևով է բացատրում այս
երևույթը։ Ընդունում է, թե հոգնակիի վերջավորության
նույն s-ն է, բայց ոչ թե v-ի հավելումով, այլ s կանոնավորա
պես դարձած ĥ, ապա այս ĥ գորանալով՝ դարձած p։ Նման
երևույթ գտնում է գերմաներենում, ուր հետաքրքրական
ջին ĥ դառնում է k. օր. գերմ. floh, schuh, մրդ. vlôch, sch
uoch, իսկ այսօր Լայպցիգում, Միլեզիայում և այլն՝ flok, schuk
u բառերի հոգնակի ուղղականի վերջավորություններն էին հն
eyes, ewes. այս ձևերը, որոնք տալիս են սանս. ayas, awas,
εγεσ, εfες (առատ. εις), հալ. īje, ovē, հայերենի մեջ պիտի տայի
եք, ևք, ինչպես իրոք էլ ունենք հգ. ուղ. երևք = սանս. trāyas
առատ. τρεῖς, հալ. trīje։ Ըստ այսմ, օր. սիրտ, զարդ բառերի հոգ
նակի ուղ. ձևերի համար սպասելի էր սիրտեք, զարդեք։ Թե ին
չու սրանց տեղ դրված է սիրտք, զարդք, կարելի է բացատրել
դանազան ձևերով, բայց թե ինչ է առաջդ պատճառը՝ կարելի
չէ որոշել։

Բազաձայնանանգ բառերի մեջ հգ. ուղ. ունենում է
երկու ձև. en-es և on-es, ինչպես սեռանք վերը. առաջինը
տալիս է հյ. -իճք, երկրորդը՝ -ուճք, որոնք ն հոլովման երկ

սիպարների հգ. ուղղականի ձևերն են. գալով երրորդ սիպարին
(գիտություն), այստեղ տարածված է մյուս բառերի սովորա
կան ձևը։ Բոլորի մեջ էլ es վերջավորությունը ըստ օրինի ընդ
ունած է, բայց նրա ձայնավորի հետքը պահում է դեռ ամեն-եք-
եան բառը, ուր և պահպանված է եան մասնիկով, համմ. չո-
բիրատաաեն, չորեքհարիւր բարդերը։

Հոգնակի հայցականի նշաններն էին հնդեվրոպական նա
խալեզվում համաձայն բառերի o-ns, ā-ns, i-ns, u-ns, որոնք
համաձայնապես պիտի դառնային մեր մեջ u (վերջավանկի ջնջ
ումով, բայց ոնգականից հետո u պահվելով)։ Ըստ այսմ հգ.
բուճս, ամս, սիրտս, արդս ձևերը համապատասխանում են
նրա. *swopnons, s°māns, rtuns, k'ērdins ձևերին։

Ո հանգող բառերի հայցականի մեջ բառի ձայնավորը
ուղղականից տարբեր էր. հայերենը թեև այնքան հավատարիմ
է հոլովման ձայնագարձը պահելուն, սակայն այստեղ հետևելով
հոլովական կազմության ընդհանուր օրենքներին, հայցականի
մեջ էլ դրել է հգ. ուղղականի ձայնավորը, այնպես որ Ն հոլով
ման երեք սիպարների մեջ էլ հգ. հայցականը կազմվում է հգ.
ուղղականից, ք մասնիկը փոխելով u։

Հոգնակի սեռականի վերջավորությունն էր հնդեվրոպական
նախալեզվի մեջ om, որ հայերենի մեջ ամբողջապես պիտի ընկ
ներ, այս պատճառով եզ. ուղ. ձևից դառնալու համար հարկ
էր հնարել մի նոր միջոց։ Այդ եղավ ց մասնիկը, որ կցելով
բառի ձայնավորին՝ ձևացնում է սեռական, արական և բայա
կան հոլովները՝ ից, աց, ոց, ուց։

Այս մասնիկի ծագումը անհայտ է։ Բուգգե հայտնում
առաջարկում է հետևյալ բացատրությունը. գիտենք, որ հյ. ց
ծագում է հնխ. sk կամ ks ձայնախմբից. սրանցից ks խումբը
հայից հետո դառնում է քրքռուն, իսկ sk չի փոխվում։ Արդ՝
հնդհնաև սեռականի ց մասնիկը նայ և անդային բազաձայննե
րից հետո չի վերածվում քրքռունի (օր. անձանց, հարց), ու
րեմն ծագում է sk ձայնախմբից և ոչ ks-ից։ Այս sk ձևը պետք
է լինի -sko- երկրորդական մասնիկը. համմ. հալ. nebesiskū «երկ
նային» և այլն։ Հին սլավերենի, ինչպես և առևերենի մեջ ածակա
ը յոտ անգամ իրրև սեռական է գործածվում. օր. армянская
церковь «հայոց եկեղեցի»։

Այսպես և հայերենի մեջ նույն սիպի կազմություններ,
որոնք նախապես եզ. ուղ.-հյց. հոլով ածական էին, սկսեցին գոր-

ծածվել իրրև սեռական հատկացուցիչ, հետո նաև իբր տրական և բացառական։ Ըստ այսմ ոց < o-sko-s կամ o-sko-m, աց < ysko-s, ից < i-sko-s, ուց < u-sko-s, ինչ. քնոց < swopno-sko-s կամ swopno-sko-m և այլն։ Հայերենի հգ. սեռականի այս բացառութիւնը հաստատում է այն կարծիքը, թե հնխ. չուներ սեռ. հոլով և հայերենը ուրեմն ներկայացնում է մի շատ հին կերպարանք այս շրջանում։ Տրական-բացառականի անկման կարելի է բացատրել նրանով, որ հնդեվրոպական նախալեզվի այս հոլովի մասնիկը (bh-s) ձայնարանորեն պիտի շփոթվեր յերենի մեջ և սոսկ եզակի գործիականի ձևը[1]։

Հոգնակի գործիականի մասնիկն էր հնդեվրոպական խալեզվի մեջ bhis, թեև o բուները ունեին ōis. հայերենի նախ bhis ընդհանրացած է բոլոր բուների համար, երբոր որովհետև bhis ձայնարանորեն պիտի տար ճիշտ այն ձևը, ինչ ուներ եզ. գործիականը (bhi), ուստի զանազանության համար ավելացրին հոգնակերտ ք մասնիկը, որ գտնում ենք նաև ուղղականի վրա։

Հոգնակի ներգոյականի մասնիկն էր հնդեվրոպական խալեզվի մեջ su, որ կցվում էր o, ā, i, u բուներին. այսպես, s բաղաձայնը գտնվում էր երկու ձայնավորի միջև և ուրեմն բուա հայերենի ձայնական օրենքների՝ պիտի ջնջվեր նավորը. այսպես՝ սանս. svàpnesu, rtusu պիտի լինեին հյ. քն արդու։ Սակայն այսպիսի ձևեր չկան հայերենի մեջ և նրանց փոխարեն ունենք հայցականի ձևով ի քուս, յարդս և այլն։

Այս ձևերի բացատրությունը պետք է փնտրել անորոշ մեջ. այստեղ su մասնիկը գտնվում էր բաղաձայն, անկախ կամ նայ ձայներից հետո, հայերենի ձայնական օրենքների մնում է այդ բաղաձայններից հետո, ուստի պիտի առաջ մի այնպիսի ձև, որ պատահարար նույնանար հգ. հյց. ձևի այսպես սանս. cət-sù = հյ. յ-ոսս, dur-su = ի դուրս և այլն։ Այ հետև հգ. ներգոյականի այս գրությունը անցավ նմանությամբ մյուս բուների եզ. ներգոյականի մեջ և այսպիսով հգ. ներգոյական նույնացավ հգ. հյց. հոլովի հետ։

[1] Bugge, Lykische Studien I. 74. Meillet, Esquisse 47.

Կանոնավոր հոլովումների ծագումը բացատրելուց հետո մնում է մեզ մի քանի խոսք ասել անկանոն հոլովումների մասին։

Արդեն ասացինք, որ անկանոն հոլովումները նախկին կանոնավոր հոլովումների մնացորդներն են։ Հայր, մայր, եղբայր բառերը ներկայացնում են հնդեվրոպական նախալեզվի r բուներ. համմտ. հայր — հն. πατήρ, մայր — հն. μήτηρ, եղբայր — φράτηρ. հայցականի մեջ վերջավորության անկումով ուղղականի ձևը ընդհանրացած է. այսպես եզ. հյց. հնխ. matern > մայր, հն. πατέρα = (ղ)հայր — սեռ. և տր. հաւր ձևի հետ համեմատելի են հն. սեռ. πατρο'ς, տր. πατρί, լտ. patris, սանս. pitre. սրանց մեջ վերջավորությունը բնականաբար ընկնելով, իսկ tr խումբը դառնալով ր (համմտ. օր. arātrum, դոր. ἄρατρον = հյ. արաւր), երկու ձևերն էլ հավասարապես և կանոնավորապես տվել են հաւր. սրանից էլ առաջանում է բցո. հաւրի՝ համաձայն ի, ա հոլովման. դրժ. հաւրր հիմնվում է հնխ. patr-bhi ձևի վրա, որ պիտի տար բուս օրինի հաւրր, բայց բաղաձայնների խճողման պատճառով դարձել է հարր. համմտ. մաւտ և մատչիլ, այն է մաւտչիլ։ Այսպես է նաև հոգնակիի բոլոր հոլովներում, ուր աւ երկբարբառը գտնվում է միշտ երկու կամ երեք բաղաձայնից առաջ (հարս, հարց, հարրք)։

Քոյր ուղղական-հայցականը ներկայացնում է հնխ.* swesōr (εσο դառնալով ehu, որից h-ի անկումով eu > ոյ). հնխ. սեռ. swesros, տր. swesrai, ներգ. swesri, դառնում են համապատասխան — դրժ. swesrbhi պիտի դառնար քեհարր > քարր, որ հետո տր. ներգ. բցո. հոլովի ազդեցությամբ եղած է քերր.— հգ. swesores դառնում է քեհորր > քորր — հոգնակիի մյուս ներից քերց կազմված է քեռ ձևի վրայից, և քերրք՝ եզ. քերր ձևի վրայից։ Այս բոլորի մեջ, ուր որ ռ գտնվել է բաղաձայնի դրա՝ բուս օրինի գարձած է ր։

Այր ներկայացնում է հն. ուղ. ἀνήρ ձևը. սրա սեռ. ἀνδρος, տր. ἀνδρί ձևերը եղել են նախ աներ, որից շրջմամբ արն և ր փոխելով անգլականի մոտ՝ առն, այս ձևի վրայից կազմված է արամբ.— հգ. հյց. արս կարելի է բացատրել հնխ.* anrns (հն. ἄνδρας) ձևով և նրանից էլ հգ. ուղ. արք.— հգ. սեռ. արանց տր. արամբք կազմված են եզակիի վրայից։

Օր. < աւր բառը կապվում է հն. հոմեր. ἦμαρ «օր» բառի հետ, ինչպես որ հն. τεκμαρ «նշան» բառը ունի իր հետ նաև τέκ-

բար ձևը և ինչպես հն. ὄναρ ձևի դեմ ունենք հյ. աւուրջ համա-
պատասխան ձևը, նմանապես ἦμαρ ձևի դեմ պետք է ենթադրել
*amor, որ կաս հյ. ամուր, սրանից ամր և մ-ի անկումով ար
օր: Սեռականի մեջ ու ձայնավորը մնում է (աւուր), որից էլ
բցո. աւուրե > աւրե և բոլոր մյուս ձևերը:

Կին բառը հնդեվրոպականում էլ անկանոն հոլովմունք ու-
ներ: Որովհետև լեզուները բոլորովին համաձայն չեն իրար հետ,
ուստի դժվար է կազմել նախաձևը. բայց հայտնի է, որ այս
բառը նախալեզվում ներկայացնում էր gʷen-, gʷ-ē-n̄, gʷ-
gʷon — ձայնդարձները. բացի սրանից պարզ բունի հետ ուներ
նաև ածած ձև: Հնխ. gʷen-ā ուղղական ձևը պահվում է հարուս
genna, հլ. žena, հիռլ. ben. Նույնը գտնում է հյ. կին.— սեռ.
հնխ. gʷ-ās ձևը պահում են վեդ. gnā's-, հիռլ. mna, իսկ gʷon
γυνή, բեռլտ. Βανᾶ. սրանց առաջին ձայնդարձը գտնում ենք հյ.
կանա-ց ձևի մեջ: Ածած ձևերը ներկայացնում են հն. att. γυναῖκα,
γυναικός, բեռլտ. հգ. հյց. Βανῆκας (<Βανακας), հգ. ուղ. γυναῖκες,
որոնց հետ համեմատելի են հյ. կանայք, կանայս: Գրծ. կնա
և հգ. սեռ. կանաց հնագույն ձևերն են (հմմտ. հանդերձ
կնաւ իւրով սափիրաւ (Գծ. Ե.»). մերթ վկանաց... (Ագ
էջ 178), որոնք այլ բառի հետ հաճախակի գործածության
պատճառով՝ նրա նմանությամբ շուտով ստացել են կա-
նամբ, կանաց ձևերը. այսպես՝ արանց և կանանց, արամբ և
կանամբք: Անշուշտ պետք է ենթադրել, որ եղել է նաև հգ. գրծ.
կնաւք ձևը, բայց բնավ ավանդված չէ, և հետո նույն եղանա-
կով գարձել է կանամբք:— Այլ կազմություն ունի կնոջ սեռա-
կանը՝ իր n բունով և ջ մասնիկով[1]: Այս նույն մասնիկը գտ-
նում ենք նաև գեղջ. տուրնջեան սեռականների մեջ: Գիւղ բ

[1] Lejeune, BSL 34, № 102, էջ XI -ոջ կցում է հն. οϑu ձևին:

Գիւղ բառի սեռականը կազմվում է համաձայն այն ձայնաբանական
օրենքի, որ նկատեցինք վերը՝ էջ 416. հին ուղղականը գիւղ, սեռականը
ըստ օրինի առել է գեւղ (հգ. ոսկր-ոսկեր), սրա մեջ եւ դառնալով ի,
առացվել է գեղ (ինչ. ալեր, ալեաց — լեր). իսկ սա էլ ավելի հետո առաջ
է -ոջ մասնիկը (ինչ. կին, կնո-կնոջ): Գեղ-ջ բառի մեջ ջ մասնիկը անդ
(athēmatique) ձևով է, իսկ կնոջ, մրոջ բառերի մեջ բնավոր (thematique) ձևով
Ըստ որում ջ առաջանում է հնխ. dhy ձևից, ուստի այս վերջավորությ
ծագումն էլ պետք է փնտրել նույն բազաձայնով սկսող մի ձևի մեջ: Իրոք
էլ կան հն. -ϑι, -ϑεν մասնիկները, որոնք մակբայորեն գործածվում են
շատ բառերի վրա. ինչ. α''λλοϑεν այլուսա, ε''νϑεν այն կողմից, ε'ξο՞ϑεν այն մ
մանակից իվեր, πατρο'ϑεν «հորից, հոր կողմից» Διοϑεν «Զևսի կողմից»,

այլ բառերի մեծ հոլովները կանոնավոր են կամ նույն սեռա-
կանների վրայից կազմված. տուրնջեան ձևի նջ խմբի համար
հմմտ. մշանջեան, վաղնջուց (միշտ, վաղ բառերից):

Այս բոլոր քննություններից հետևում է, որ հայերենի հո-
լովումը թեև հնդեվրոպական վիճակի շարունակությունն է, բայց
չափազանց այլափոխված: Այլափոխման գլխավոր պատճառը
վերջածայնի անկման օրենքն է, որով շատ հոլովներ վերածվել
են մեկի և շփոթվել իրար հետ. շփոթման առաջն առնելու
համար հայերենը ստիպված էր մերթ սահեցնելու նորանոր մաս-
նիկներ (ք, ց) և մերթ նմանողության օրենքով այս կամ այն
մասնավոր ձևը ընդհանրացնելու բոլոր բառերին: Նմանողու-
թյան օրենքը մեծ դեր ունի հայերենի հոլովման կազմության
մեջ, ինչպես նախամեսրոպյան, նույնպես և միջին հայերենի
շրջանին. ինչպես պիտի տեսնենք քիչ հետո՝ հոլովման հետագա
զարգացումը ուսումնասիրելու ժամանակ: Բայց այն բոլոր
պայմաններն ու մանրամասնությունները, որոնց մեջ տեղի է
ունեցել հնդեվրոպական նախալեզվի հոլովական դրության ձևա-
փոխությունը հայերենի մեջ, չենք կարող մենք ճշտիվ որոշել,
այ էլ կարելի ենթադրություններն ու վարկածները ճշտել կամ
ստուգել, որովհետև միջին ձևերը պակասում են մեզ: Հայերենի
հոլովումը ստացած է մի շատ կանոնավոր ձև, միթերնակու-
թյունը իշխում է ամեն տեղ և բացառություններ չկան, որ-
պեսզի գոնե այդ բացառությանց վրա հիմնվելով՝ կարելի լիներ
հնդեվրոպական հոլովման զարգացման ճիշտ պատկերը երևան
հանել:

3. ԵՐԿԱԿԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենին ժամանակակից հնդեվրոպական լեզուներից շա-
տերի մեջ երկակին արդեն ջնջված էր. ուստի և նրա ջնջումը
նաև հայերենում պետք չէ անպատճառ վերագրել խալդերենի
կամ կովկասյան լեզուների ազդեցության, որոնց մեջ երկակի
թիվը գոյություն չունի, այլ իրերի բնական ընթացքին, մարդ-
կային մտքի զարգացման աստիճանին:

-νϑεν «կեկիւնանա զաւառի կողմից» և այլն: Ինչպես տեսանում ենք, հա-
յերենում—ϑεν ձևի դեմ շատ անդամ գտնում ենք բնավոր—οϑεν ձևը, որին
համապատասխանում է ճիշտ հյ. -ոջ, որով կազմվում է մեր մեջ -ի հան-
գույց բառերի ներգոյականը. ի կղզւոջ, ի տեղւոջ, յեկեղեցւոջ և այլն (Meillet
BSL, հմ. 33, № 98, էջ 51): Սրանից է կազմվել -ոջէ բացառականը, որ ոջ-
ի մասնիկների դումարն է:

Բայց ինչպես ամեն երևույթ, որ անհետանում է, թողնում է այնուամենայնիվ որոշ հետքեր, այսպես է եղել նաև երկակին։ Երկակիի հետքերը հայերենում հետևյալներն են.

1) Ակն բառը ունի երկու տեսակ հոգնակի. երբ նշանակում է «մարդու աչք», հոգնակին լինում է աչք, աչս, աչաց, աչաւք, իսկ երբ նշանակում է «ջրի աչք» հոգնակին լինում է ակունք, ակուանս, ականց, ակամբք: Վերջինս իսկական հոգնակին է, իսկ առաջինը երկակի թիվ է. բոլոր հնագույն լեզուների մեջ մարդկանց զույգ անդամները սառնում էին երկակի և ոչ բնավ հոգնակի. այսպես, հն. հոմեր. ὄσσε <(okʷye), հսլ. oči, լիտ. akì, որոնց համեմատ նաև՝ աչք (չ<ky): Սլովակերենում էլ oko, «աչք» բառը իբրև մարմնի անդամ լինում է երկակի՝ oči, իսկ այլ նշանակությամբ՝ հգ. oká:

2) Ունկն բառը ճիշտ նախորդի պես ունի երկու տեսակ հոգնակի. երբ նշանակում է «մարդու կամ անասունի ականջ», հոգնակին լինում է ականջք, ականջաց, ականջաւք, իսկ երբ նշանակում է «ամանի բռնելատեղ», հոգնակին լինում է ունկունք, ունկունս: Վերջինս իսկական հոգնակին է, իսկ առաջինը երկակի: Նույնպես է նաև սլովակերենում, ուր ucho «ականջ» իբրև մարմնի անդամ լինում է երկ. uši, իսկ այլ նշանակությամբ՝ հգ. ucha: Այս ձևերի ծագումը մութ է, բայց անշուշտ մի կողմից կապ կա պնդ. uši «երկու ականջ». հն. οὖς, հսլ. ucho «ականջ», uši «երկու ականջ» և այլն բառերի հետ և մյուս կողմից՝ նմանողությունն ակն և աչք բառերի հետ: Ինչպես աչք բառի մեջ, նույնպես և այստեղ գտնում ենք չ ձայնը, որ ունգականի հաջորդելու պատճառով դարձել է ջ:

3) Ծունր <հնխ. gōnu-r եզակիում անհոլով է, իսկ հոգնակիում լինում է ծունգք, որ անշուշտ հիմնվում է հնխ. երկակի *gónwi ձևի վրա:

Ծան. Ձեռք և ոտք բառերը ըստ իրենց իմաստի նույնպես երկակի ձևի շարունակություններն են ըստ Հյուբշմանի (IF 4, 115), թերևս՝ նաև դուրք:

4) Գալատական բարբառների, ինչպես և միջին հայերենի մեջ ունենք մարդկային զույգ անդամների մի խումբ բառեր, որոնք կազմվում են ուի—վի մասնիկով. ինչ. աչուի (աչվի, աչվի), ոտուի (օտվի), ձեռուի (ձեռվի, ձեռքվի), ծնգվի (ծընկվի). այս բոլորը երկակիի մնացորդներ են, որոնք հետո ստանալով նաև հոգնակիի մասնիկը՝ դարձել են՝ աչվըներ, ոտվըներ, և այլն:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Ն հանգը բազմաթիվ հայերեն բառերի ծայրին՝ կարելի է բացատրել երկու ձևով: Սակայն նախ պետք է նկատենք, որ այս ն հանգը բոլորովին տարբեր է ն որոշիչ հոդից, և այդ հայտնի է նրանից, որ ն հանգը ունեցող բառերն էլ կարող են ստանալ որոշիչ ն հոդը. ինչ. ձուկնն, զձևնն, որդնն և այլն:

Որովհետև հնխ. վերջածայն m տալիս է հյ. ն, ուստի հյ. ն հանգը կարելի էր կարծել թե հնդեվրոպական չեզոք սեռի m հանգն է, որ ապա բոլոր հայերեն բառերի վրա տարածվեց, ինչպես որ ուշ ժամանակ ունենք հունարենից μαρτύριον (չեզոք սեռով) >մատուռն:

Սակայն այս դեպքում, գոնե զուտ իգական բառերը պիտի չստանային այդպիսի ն, և չպիտի ունենայինք հարսն, և հետևաբար բամբիշն ձևերը: Այսպես նաև արական բառերը, ինչպես՝ եզն:

Մեզ հայագետը կարծում է, թե հայերեն բառերի այս ն հանգը ծագում է հնխ. հայցականի m վերջավորությունից, որ հյ. պիտի տար նույնպես ն: Ըստ այսմ այս կարգի բառերի մեջ հայցականի ձևն է, որ դարձել է ուղղական, ինչ որ անսովոր երևույթ չէ լեզուների կյանքում: Հայտնի է, որ արդի ֆրանսերենի ուղղականները ծագում են միջին լատիներենի հայցական ձևից: Մեր աշխարհաբարում ուղղական և հայցական նույն ձևն ունեն և հաճախ կարելի է գտնել բառեր, որոնք գրաբարի հայցական ձևը պահած լինեն: Սակայն արևելյան հայերենը նույնիսկ այս անապատի մեջ գտել է հայցական ձևեր և վերածել ուղղականի, ինչպես՝ երկուս, պահս >պաս, բաղանիս, բալնիս. բարբառներում կարելի է գտնել երդիս. իսկ չորս բառը ընդհանուր է թե արևելյան, և թե արևմտյան գրականին: Զեմ խոսում հատուկ անունների մասին, որոնք միշտ հայցական ձևով են, ինչ. Ագուլիս, Մասիս, Նորագուս, Մոկս, նույնիսկ՝ Տփղիս, Մանգլիս, որոնց ս վերջավորությունը արմատական է, իսկ մենք սխալմամբ հայցականի նշան կարծելով՝ սեռականը դրել ենք Տփղեաց, Մանգղեաց, իսկ Կարս բառը այնպես է յուրացրել ս հայցականի նշանը, որ նրանից կազմում են կարսեցի:

Ստորև տալիս ենք ն հանգն ունեցող բառերի ցուցակը:

ազրն
ազն
ակաթն
ակն
ակն
ադեղն
ամառն
այծեամն
այպն
անձն
անփիտն
աշխարհամատան
առանձինն
ասեղն
ասկն
առաւմն
արդն
արեգակն
արեւակն
արդն
արմն
արմուկն
ափն
բաղեղն
բամբիշն
բանդն, բանկն (բեդմն)
բեռն
բեւեկն
բնդեռն
բոյթն
բուռն
բուրդն
գագաթն
գաղձն
գառն
գեղարդն
գեղմն
գեբրն
գուղձն
գուռն
գալուկն
գաղձն
գանգիռն
գաշն
գառն
գիակն
գոխն
գոյզն
գուռն
գուրգն
եզն
եղեամն
եղեռն
եղերդն
եղեգն
եղիամն
եզն
եղունգն
եռանդն
երգումն
երիկամն
երկն
երփն
եօթն
զոմն
զօրավիգն
ընչավատն
թակն
թխթեղն
թիկն
թոխթն
թռուն
թռչնթն
իմն
իմովսաննն
իննն
ինքն
լեառն
լիրիմն
լիկն
լիսեռն
լորձն
լուսաննն
Լուսն
խաշն
խառն
խառնամատն
խարտեղն
խլիրդն
խլուրդն
խղունջն (խանջան)
խոռն
խուժդն
խուռն
խուփն
ծիծառն
ծունկն
կաթն
կամն
կայծակն
կանկեղն
կառն
կառափն
կարտկն
կարշն
կաւառն
կիգն
կիսիսեռն
կլափն
կնճիթն
կնճիռն
կոզն

կոյմն
կոռն
կոտիմն
կունդն
կունձն
կուռն
կրճիմն
կրունկն
հանգուշն
հարսն
հինգն
հիմն
հիւռն
հոգմն
ձեռն
ձմեռն
ձուկն
ճպուռն
մագիզն
մառն (մաս)
մառն
մառն
մատուռն
մեղեղն
միջն
մանուշն
մութն
մուկն
մուկն (ջիղ, մկան)
մսառն(ն)
մրջիմն
մրտիմն
յախուռն
յանդուգն
յոգն
նեռն
նուռն
շառաւն
շաւառն
շիկն
շուառն
շուրթն
շունջառն
ոլոռն
ողն
ոմն
ոռն (պորտաքար)
ոռն (անգ)
ոսկեհաւն
ոսպն
ոստն
որդն
որիզն
որոմն
ոդն (վիզ)
ուլն (ուլունք)
ունկն
ուռն
ուրաստն
ուրևմն
պալատն
պայն
պճեղն
պոյտն
պռեմն
պտեղն
ջայլամն
ջերմն
ռունգն
սաղմն
սարդիոսն
սառն
սեռն (առանցք)
սերմն
սիղիգն
սխտեռն
սկիզբն
սպանկն
սունկն
սուսամկն
սուսաշկն
սուեղն
սուսգն
սրունգն
վանակն
վառն
վիդն
վիռն
տառեղն
տասն
տիտեռն
տոռն
տուռն
տուռն
ցակն
ցուրմն
փակեղն
փայլակն
փայլատակն
փայծաղն
փանդամն
փանդիռն
փուռն
քրտամն
քիրտն
օդն

4. ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերևում հիշեցինք հայագետների այն կարծիքը, թե հոլովական դրությունը շատ անկանոն է գրաբարում. բացի վերացական բառերից (-ումն -ման, ութիւն -ութեան) ուրիշ ոչ մի բառի համար չկա որևէ կանոն իմանալու համար, թե ինչպես պետք է հոլովել։ Նույնիսկ և հանդով բառերը, որոնք բավական կանոնավոր են, հետևում են 2 տեսակ հոլովման. -ին, աւ (անձին, հիման). և հայտնի չէ, թե այս 2 ձևերից որը պետք է ընտրել։ Եթե հին գրականության մեջ որևէ տեղ ավանդված չէ բառի հոլովական ձևը, անկարելի է հոլովել։ Օրինակ՝ նույնիսկ պայն «առնպան ոգի» բառը, որ եզնիկի մեջ մի քանի անգամ գործածված է և հոլովվելու է ն հանգի համաձայն, չգիտենք, թե տեսականում ինչպես պիտի հոլովվի՝ պայի՞ն, թե՞ պայան։

Մյուս կողմից, հայագետները գովաբանում են գրաբարը, իբրև շատ կանոնավոր լեզու, ուր եթե որևէ կանոն կա, դա բնականոն է և բացառություններից զուրկ։

Այս երկու իրար հակառակ կարծիքների միջև կանգնած, բայց ավելի հենված երկրորդի վրա, հարց եմ տալիս, թե հին հայերը իրոք ոչ մի կանոն չունեին բառի հոլովումը որոշելու։

Այս հարցը ուսումնասիրել սկսելուց առաջ անհրաժեշտ է տալ ցուցակը այն բոլոր բառերի, որոնք հետևում են մեր գոյական տեսակի հոլովումներին (բացի, իհարկե, -ումն և -ութիւն բառերից և գանազան մասնիկներով ածանցված բառերից)։

Ահա դրանց ցանկը՝

1. Ի հոլովում
2. Բառեր, որոնց եզ. տեսականն է ի, բայց հոգնակին չկա
3. Ի—Ա հոլովում
4. Ո հոլովում
5. Ու հոլովում
6. Ն հոլովում (ին, ամբ)
7. Ն հոլովում (ան, ամբ)
8. Ղ, Ր հոլովում։
9. Ծառն հոլովում։
10. Անհայտ կամ անհոլով։
11. -ակ վերջացած բառեր։
12. Ա հոլովմամբ հատուկ անուններ
13. Ա հոլովմամբ հասարակ բառեր
14. Ի հոլովմամբ հատուկ անուններ
15. Ու հոլովմամբ հատուկ անուններ
16. Ի—Ա հոլովմամբ հատուկ անուններ
17. Ծառն հոլովմամբ հատուկ անուններ։

Ի հոլովում

արբայ	(անասառաւած)	անպարկեշտ
արեգայ	անարատ	անպիտոյ
ապօյդ-ք	անբան	անասացուած
(ապուգայ)	անբիծ	անվախճան
ապոխ	անգարձ «անդառնալի»	անտաշ
(ախութեայ)	անդարձ («կտակ»)	անց-ք
ախոյեան	անեւևոյթ	անօսր (հգ. սրունք, ունք)
ախտրմ	անէծք	աշխարհածին
ակամայ	անթլփատ	աշխարհաւանդ
ակումբ	անլոյս	աշտեայ
ակօս	անխառն	ասպարան
ան	անխմոր	ասպարանք
ապ	անխրատ	ասպարատան
ապխ	անխօս	(ասպուգայ)
ապիւսաքիւ	անկասկած	առ «առնել»
ապո «ապդ»	անկոփ	առանց-ք
(ապդ-ք)	անհամ	առատաձեռն (-ից)
ապթ-ք	անհաւան	առընթերակայ
(ապօտ)	անհաւատ	առնէտ
ամբարտաւաճ	անհնազանդ	ասպնջական (ի հլ. թեև -ական մասնիկով)
ամբարտաւան	անհնար	աստուածաբան
(ամբաւ)	անմատոյց	աւետան
ամբիծ	անոգորմ	(արահետ)
ամբոխ	անոյշ (յգ. նաև անուշութիւն)	արամուր
(ամբողջ)	նոսպայ	արդարագնաց
ամենայն	անոտք(ոտքի կողմը)	արևելք
ամսամուտ	անուրջ-ք	արևմուտք
այծ	(անջատ)	արժան
(այտ)	անպատեհ	արուեստ
այր (քարայր)	անպատրաստ	
անամօթ		

արուսեակ
արքայ
արօտ
ափափայ
աքսոր (տես Աբմ.)
բազմամբոխ
(բաժ)
բաժին
բախտ
բան
բանտ
բաշխ
(բաո)
բարգաւաճ
բարդ
բարձ
բարոյ-ք
(բայլ)
բրուտ
գադիշ
գահոյ-ք
գայլ
գան (ձևձ)
գիւտ
գիտահարց
գնաց-ք
(գողբայ)
գոյ
(գովեաց)
գործոյ-ք
դատ
դար (բարձր տեղ)
դարձ
դիր-ք
եղ-ք
եկամուտ
եղևնափայտ
եպիսկոպոս
երախայ
երեսուն
երեք
երկին-ք
երկապաշտ
երկիւղ
երկոտասան
հօխանասուն
զգաստ
զգօնաբարոյ
զոհ
զոպայ
զրահ
զրաչան
էջ
ընթաց-ք
ընձայ
ընչաքաղց
թաթ
թախանձ
թախիծ
թանչ
թերահաւատ
ժլատ?
իժ (ēg²hi)
իմաստ
ինձ-ք
լալօն-ք
լաստ
լիր
խաղ (չրի)
խան
խանութ
խայչ
խառն-ք
խառնաղանճ
խարձ
խեղդ
խեթ
խիղճ
խղխայթ
խնջոյ-ք
խոյղ
խոնաւայոյզ-ք
խորխորատ
խոշշ
խուչ
խուճապ
խաստոր
Խրամատ
խօս-ք
ծայր
ծանօթ
ծառայ
ծերպ
ծնծղայ
ծնօտ
ծոպ
կաթսայ
կամայ
կամնասայլ
կայ-ք
կանխատաց
կապերտ
կառկարայ
կարթ
կարիուտ
կարիուրէ, -բեայ
կարճատօտ
կացուրդ
կէտ (նպատակ)
կիւս
կող
կոյս (ազջիկ)
կորովարան
կուրծ-ք

[illegible]ապաշտ
[illegible]ան
[illegible] (հազիւ հազ)
[illegible]ր-ք
[illegible]յ-ք
[illegible]տօտ (-տիւ)
[illegible]մբոյր
[illegible]այկ (աստղը)
[illegible]անդերձ (շոր)
[illegible]անկէս
[illegible]աս (հարկ)
[illegible]արթ
[illegible]արոյ
[illegible]արոյափորձ
[illegible]աց
[illegible]աւանդայ
[illegible]եղ
[illegible]եռ
[illegible]էն
[illegible]ինդ
[illegible]իւս-ք
[illegible]մայ-ք
[illegible]նար-ք
[illegible]ունչ
[illegible]պարտ
[illegible]ոհասարայք, ըէ[illegible]յ
[illegible]ոհայ
[illegible]րամեշտ
[illegible]րացան
[illegible]րեայ
[illegible]ռօտ
[illegible]ւայն
[illegible]ՀՀնատեան
[illegible]կերձ
[illegible]ոայ
[illegible]ոանձ
[illegible]ոատ
[illegible]ոիլդ (ճշդիւ.)

ճշդրիտ (ճշդրտիւ)
ճշմարիտ
մայր (ծառը)
մանանայ
մանգղիոն
մատեան
մարգարէ
մարգահաճոյ
մարգամատն
մարգապայքար
մարտ
մեղրապոպ
մեռաւսան
մեռաքս
մեքենայ
մթնեք
մնաց-ք
մղավաջէ
մոյթ
մուտ-ք
յաշտ
յարդ
յաւիտեան
յիսուն
յոյդ
յուռութ
յօդ
նարդոս
նետրդ
նետ
նզով-ք
նժար
նժդեհ
ներ (600 տարի)
նշանագրուշմ
նուրբ
նօթ
շանաթակրօն

շահ
շաղ
շանաճանճ
շատ
շար (դարը)
շարիատ
շափիւղայ
շերտ
շեփորայ
շղթայ
շտապ
շօթ
ոզնոյն
ոչինչ
ոսոտայն
ովսաննայ
որոգայթ
որովայն
որովայնապարար
որջ
ուխ
ուխտուն
ուխտ (գնդ. uxti)
չարաբարոյ
չափոյ-ք
չդոյ
չիղջ
չորք
չքնաղ
պախրէ
պան (panis)
պատեան
պատճէն
պատշաճ
պատուաստ
պատուհան
պատուհաս

պարեգօտ
պարկեշտ
պարս
պենտեկոստէ
պերեզեշտ
պիտոյ-ք
պղնձակերտ
պողոտայ
պռեմն (-նից)
պտոյտ
պրախ (պրասս)
ջահ
ջան-ք
ջրադարձ
ջրարբ
ջրժողով
ռեփին
սակ (տուրք)
սակաւամէջ
սամիտ, սամիտէ
սայլ
սայր
սան (կաթսայ)
սաստ (k'əsti)
սատանայ
սարդ (ծառը)
սարդ (միջատը)
սարդիոստային
սերտ (սերտել մկ.)
սերովբէ
սիրտ (k'ērdi)
սնար-ք
սոս (60 ամ)
սովոր-ք
սուտքրիստոս (-ից)
սպանդ
ստարկէ
սրահ
վաթսուն
վադ (վադիւ)
վաշխ
վաչ
վարդ
վարս-ք
վերջ-ք
վեց
վկայ
տաշտ
տարած
տոյժ
տօն
րոպէ
ցան-ք

Սեռ. ի (որոնց հոգնակին ճայտնի չէ)

(արեթ)
ագոն
ադամանդ
(ալելուհ)
ախաւեղագէս
ահեկան
աղկիոն
աղխամազխ
ամենաժանտ
անթեղ (ն. յանթեղի)
անկան (ն. յանկանի)
անկարճ «ծոց» (ն. յանկարճի)
անքատ
ապահարզան
ապառին
ապերատ
արձոյլ, արձող
արոյր
աւեր
բնաւ, ի (յեան.՝ի կ)
դահեկան
դահճապետ
դինար
դժնիկ
դիակողոպուտ
դատիկոն

հրթ
հրկան
գերանչ
էգ, իգի
իմբան
բոպիւտ
քանաք
քարշիշ
քեր
իմարմինէ
իգէան
լսկիկ
խարոյկ
խիտան
խոյր
խոսան
խուղ
կաթ
կարկառի
կարկեհան
հաշիւ
հերկ
հէգ
մագաղաթ
մահաղ
մամռնայ
մայս
մարդաթիւ
մարմար
մաքս
նաքարակիտ
ոսոխ
պահանգ
պահեստ
պատուանդան
սուդար
վակաս
տպրանկ
տրմուղ
քոս
քուրձ
քահանայ
քրքում
օգուտ

Ի—Ա. հոլովում

ագահ
(ագապ)
ագարակ
ագռնարար
ագատ
ագգ
ագգապետ
ագգատոհմ
ագնիւ
ագռաքեալ
(ախոնդ)
ախորժակ
(ախտաւոր)
ախտարակ
(ախտաւորմաւր)
ախանջ-ք
ակնագործ
անեակ
ագարդոգն
ագապ
ագապակ
ագաննեմաճառ
ազբե-ք
ազմուկ
ազգիամարդ
ազահեղաստէր
ազօքիկիր
աճառ «ձիու սարք»
ամ
ամբաստան
ամբար
ամբարիշտ
(ամբարտակ)
ամենազօր
ամենակալ
ամճաբեր
ամպամած
ամպրոպ
այգեկուլթ
այլակերպ
(այլանդակ)
այսահար
անագ
անագանոս
անապակ
անապատ
անարար
անարդ
անարժան
անգէտ
անգամատան
անգերձապետ
անդրուվար
անդրշամ
անդգամ
անիրաւ
անկու (չկսող)
անհոգ
անճաւ
անձնագրիւր
անձնապահ
անմեղ
անմիտ
անյագ
անյոյն
աննմանի

անուանարկ
անուառ
անուեղեակ
անցաւ
անօրէն
աշակերտ
աշխարհ
աշխարհական
աչ-ք
ապաժոյժ
(ապաթառաբ)
ապաշնարհ
ապաւառ
ապաւառամբ
առապար
առասպել
առասպաղ
առասպաղական
առաւառ
(առեղ)
առիգած
առիթ
առուտանան
ասիապետ
ասպար
ասպարեզ
ասպետ
ասպարակիր
աստիճան
աստղագէտ
աստուածախօս
աստղնագործ
աստուածապաշտ
աստուածասէր
աստուածատես
աստենական
աստրուշան

արագիլ
արբանեակ
արգանդ
արգելան
արդիւնարար
արդու (չափը)
արեւապաշտ
արծաթասատ
արծաթարար
արիւնահեղ
արձագանք
արձակահեր
արձան
արշաւան
արու
արուագէտ
արուարձան
արուեստագէտ
արուեստագիտ
արուեստակից
արտասուք
արքեպիսկոպոս
արտաւար
աւազ
աւազան
աւան
աւար (մի անգամ կառնէ.)
բազմամեղ
բազմանիւթ
բազուկ
բազում
բաթրոն
բակ
բակեղէթ
բաղարջակերք
բաճկոն (տես Արմ.)
բանակոխ

բանասպան
բարբարոս
բարեգործ
բարեկամ
բարձակից
բաց
բարեկեաց
բարեմիտ
բարեպաշտ
բարեւարար
բացատ
(բդեշխ)
(բեմ)
բեռնակիր
բեւեռ
բժիշկ
բիբ
բիր
բնագիր
բնակից
բնատէր, բաց
բնիոն
բոզ
(բոյժ)
բորկոնիմ
բուրվառ
բռնաքար
բրէտ
գազանաբեկ
գաղատոս
(գաղափար)
գայիսոն
գայլիկոն
գանահար
գանձապահ
գարշապար
գաւազան
գաւակ

գաւառ
գաւառապետ
գիգն (կոյս աղջիկ)
գիգնիկ
գիանակոչ
գիանաձայն
գիրան
գիրեզման
գիրեզմանակրկիտ
գիրեկից
գիրեվար
(գիլ)
գինդ (օդ)
գինեմոլ
գիշակեր
գիրկ, գիրկք
գլխագերծ
գիներրուք
գմբեթ
(գոմար)
գործակից
գործավար
գուսան
գրագէտ
գրամատիկոս
գրապան
գրաւ
գրիչ
գրուան
գոհաժուռ
գոգազ
գաժան
գոհիճ
գանկ
գանգանաւանդ
գոշխուրան
գոչ (երկիցս ի հլ.)
գոչաւայր

դարան
դարանակալ
դարբին
դաւաճան
դելփին
դև
դէմ-ք
դէպ-ք
դէտ
դժուար
դիապարդ
դիահան-ք
դիմադարձ
դիւահար
դիւան
դիւթ
դիւր, դիւրաւ
դիք (դից, դիս, բայց՝ դիօք)
դպիր
դրախտ
դրոշմ
դրուագ
դրուատ
եկ
եղազ = աղազ
եղջերու
երազահան
երախան
երախտաւոր
եպիսկոպոսակից
երամ
երան-ք
երաստան-ք
երես
երթեւեկ
երիզապինդ
երիւար

երիտասարդ
երկաթագործ
երկիր
երկնահար
երկրագործ
երկրածին
երկրակոխ
երկրպագու

զազիր
զարդասէր
զատիկ
զիստ
զինակիր
զմելին
զուգան
զրապարծ
զօրագլուխ
զօրավար
ըմբշամարտ
ընդարձակագնաց
ընդդիմակաց
ընդդիմակից
ընդերք
ընդվայրախօս
ընկեր

թագ
թակարդ
թամբ
թանգար
թարգման
թեւեռ
թիզ
թիւր
թմբուկ
թոչն
թուլամորթ

ժանուար
ժանտագործ

ժառանգ
ժառանգակից
ժիր
ժողովրդապետ
ժպիրն
ինքնակալ
ինքնեկ
իշխան
իշխանի
իր
իրան
իրեար
իւղագործ
իւղեփեաց
լամբար
լանջ-ք
լապտեր
լու
լուիմաց
լեղու
լուշկամաշկ
լիճ
լինդ
լուսանցոյց
լուսնապաշտ
լուրջ
լրտես
խալարիկ
խաղաղարար
խաղխաղ
խաշնարած
խաչանանուշ
խառնակեաց (խարազան)
խարխափ
խաւար
խել-ք
խեցգործ
խերեզ
խնկաբեր
խնկազաց
խոզամիտ
խոժոռադէմ
խոհակեր
խոներ (ցեխ)
խոճկոր
խոնարհ
խոռոչ
խորագէտ
խորամանկ
խորան
խարանափեզկ
խորհրդակից
խորտիկ
խաւատպարանոց
խաւատարար
խրախճանք
խրատուու
խօթասիրտ
ծագ
ծածկաւեայ
ծաղարար
ծամակալ
ծանրախօս
ծառայակից
ծիածան
ծիրանանկարկ
ծովախաղանիթ
ծովակալ
ծուռդ
կապեսիմ
կաթարտս
կաթեդր
կալանաւորակապ
կախազան
կախարդ
կախարդապաար
կահակալ
կող
կամակից
կամակոր
կամար
կամարար
կամ-ք
կամո՞ւրջ
կանանոցածին
կանքեղ (καυδήλα)
կանոն
կաշուառուու
կապարանատ
կապարճակիր
կապչէն-ք
կապիկ
կապիճ
կառամուտ
կառապետ
կառավար
կառ-ք
կարդ
կարիճ
կարին
կարկին
կեանք
կենդանածին
կենդանարար
կէտ (կենդանին)
կճղակահերձ
կնդրուկ
կնճիթ (խողկ)
կոճան
կոյտ (կոպտ)
կոյր
կուշտ (կող)
կուսակալ
կուսան
կուր (պաշտ)
կուսարար
կտակառու
կօշիկ-ք
կօշկակար
հազար
հազարապետ
համադամ
համարձակահայեաց
համբար
համբարու
համազգակեր
հանդիսապատիւ
հայրապետ
հանդրուան
հանդերձիկ
հանդիսատես
հասակակից
հասարակած
հասակաճառ
հարազատ
հարիւրապետ
հարկ (ամէն իմաստով)
հարկահան
հարուստ
հացարար
հաւատարիմ
հաւարս
հեթանոս
հեղեղ
հեղեղատ
հետամուտ
հերետիկոս
հոգ
հիմէն (չափը)
հիւանդ
հիւանդամիտ
հնդիկ
հնձանահար
հնոց
հոգարարձու
հոգեմարտ
հոգագործ
հովիտ
հովիւ
հրահանգ
հրաման
հրամանառու
հրաւիրան
ձաղկ
ձեռագէտ
ձեռագործ
ձեռակապ
ձեռակերտ
ձկնահան
ձկնորս
ճակատագիր
ճանապարհ
ճանապարհակից
ճաշագործ
ճարտար
ճարտարախօս
ճեմ «պատոյտ»
ճենճեր
ճիւղ
ճկոյթ
ճնճղուկ
ճրագ
ճրագարկեան
մագիլ
մահարձան
մահիճ-ք
մահկանացու
մայրաքաղաք
մանգաղ
մանկ
մանկաբարձ
մանրագործ
մաշկապատճէն
մաշկեակ
մառան
մատակարար
մատենագիր
մատենադարան
մարդակեր
մարդապետ
մարդելոյզ
մարմնասէր
մարկեղ
մարտիկ
մարտիրոս
մեծ (méga)
մեծամեծ
մեծամեղ
մեղ-ք
մեղու
մենեհան
մենակեաց
մխածին
մխայնակեաց
մխիթագետ
մխիթնայարկ
միտ-ք
մխիթարերդ
միկան
մշտիկ
մոմոս
մորթս
մուղ (էգ էշ)
մուրկ
մատան

մտադիր
մտախոհ
մտրուկ
մրգապահ
մրրիկ
մօտակայ
մօր
մօրուք
յաճախ
յամառ
յամրայր
յայրատ
յանդիմանական
յարկ
յիմար
յողդողդ
յոյն
յուշկապարիկ
յստակամիտ
յօն-ք
Նաժիշտ
Նախարար
Նախիր
Նահանգ
Նահապետ
Նարօտաներկ
Նաւասարդ
Նենգ
Նենգագործ
Նենգան
Նեռաբար
Նժոյգ
Նիգ
Նիզակարուն
Նիզակակից
Նկարակերտ
Նմանգ
Նմանակից

Նշան
Նշանադիմակ
Նշանախնդիր
Նոխազ
Նորակերտ
Նուագ (եղանակ)
Նուագ (բաժակ)
Նուագածու
Նուագրուան
Նուէր
Նուիրաբեր
Նոնաձև
շահավաճառ
շառաւիղ
շաւիղ
շեղջակոյտ
շէն
շիրիմ
շնինճիթ
շուշան
շտեմարան
շրջան
ոխակալ
ոդոմպիտգ
ոզջակէզ
ոչխար
ոսկեհան
ոսկեսպատ
ոսոխնանկ
ոսոխկան
ոտնակապ
ոտնհար
որթոդոքս
որոջ
որսակից
ուղղագործ
ունչ (քընչաց)
ուշարար

ուռկան
ուռկանաքարկ
ուսումնասէր
ուրագ
ուրջու
չազդ
չար
չարագործ
չարամտաց
չարաչար
չարախօս
չափան
չկեցու-ք
չղջիկան
չուան
չուանամատն
պախճաւանդ
պակասամիտ
պահակեր
պահանգ (Գ. թգ. գ. Ե)
պաղատիս
պայծղատ
պայմանաւոր
պանդուխտ
պառակտան
պատատատ
պատատատակալ
պատան
պատատատ
պատարագ
պատգամ
պատերազմ
պատկեր
պատճառ
պատճառախնդիր
պատմուճան
պատնէշ
պատշգամ

պատուար
պատուիրան
պարան
պարանոց
պարարտ
պարաւանդ
պարգև
պարիսպ
պարտէզ
պէտ
պղակատնտրագործ
պղնձագործ
պոռնիկ
պուտուկ
ջիղ, ջիլ
ջնար
ջրակոյտ
ջրաշեղջ
ջրրուխ
ջրհեղեղ
ջրկիր
սամիկ
սամկապետ
սմբաքար
սոճիկ
սունգ
սագ
սակ (սակաւ)
սակատ
սակուր
սանման
սանմանակից
սպրմոսերգ
սանգարամետ
սանձ
սատար
սատրապետ

սարկաւագ
սեղանայօրէն
սեղեխ
սենեակ
սերմանահան
սինկքոր
սիրամարգ
սլաք
սկեռուր
սղոց
սուսեր
սուսերամերկ
սպատապէն
սպասիկ
սպարապետ
սուէպ (սոխպաւ)
սունդիևաց (-իեցաց)
սունտու (-տուաց)
ստոման
ստոյգ
ստուեր
ստուերագիր
ստուերանիսա
ստրուկ
սրտաւար
սրբագիր
սրբակեաց
սրինգ
սրտատրախ
վախճան
վահան
վաճառապետ
վայր
վայրագաւիթ
վանք (ի-ա)
վառօտակաբեր
վատ
վատասիրտ

վատախնդիր
վատիճար
վարագոյր
վարազ
վարդապետ
վարձկանագրիչ
վարշամակապատ
վերագիր
վարձկան
վերակացու
վերնագաւառ
վեցօրինակ
վէմ
վէպ
վէր-ք
վին
վիշապ
վիշտ
վիպասան
վհուկ
վնասակար
վտաւան
վտաւատ
վրան
տագնապ
տախտակամած
տակ
տաղտապարանոց
տաճար
տապար
տատատոկ
տաւիղ
տեղ (վայր)
տեսագիրծ
տգէտ
տէգ
տժգոհ
տիեզերք

տիկ
տիտան
տիրասպան
տխմար
տկար
տնանկ
տնկարկ
տոհմակից
ցամաք
փայտահար
փայտատ
փանդիռ
փանդռնահար
փառք
փեսաւէր
փիչ
փղապեստ

փշարիր
փոխարէն
փողար, փողահար
փոկ (ծովահորթ)
փռալտ
փքին
քաղաք
քաղաքակից
քաղաքամէջ
քաղխրթ
քաջ
քարահատ
քարանձաւ
քարկոփ
քաքար
քեսուր (բաժակ)
քիլ

քիմք
քնահատ
քնար
քնարահար
քնարերգ
քորեպիսկոպոս
քուրմ
քրիստոսասէր
օգտակար
օձապաշտ
օդալամբ
օտար
օտարալեզու
օրան
օրեր «նախատինք»
օրէն-ք
օրինապատգամ
օրնաս

Ո հոլովում

(Ագուռ «ագիւռ»)
ագռաւ
ականատես
աղբ
աղիւս
աղտ «կեղտ»
աճառ «օճառ, օշնան»
(ամիճ)
ամիս (որի հին հոլովաձևն է ամսեաց)
ամուլ
ամուսին
ամպ
ամսագլուխ
ամօթ
այլ
այլալեզու
այս (ոգի)

այրևէժ (առն և ձիոյ) կամ այրուձիոյ
անանուխ
անասուն
անարդար
անգամ
անդնդախոր
անդունդ-ք
աներ
անթիւ
(անիծ)
անհիւթ
անուր
անասուրբ
անօթ
աշտուճ
առաջ
առաջին
առաւօտին

առէջ
առու
աստուած
աստուածանարուած
արաւտ
արար-ք
արգ «գործ»
արդար
արծաթ
արմատ
արջառ (յետն. ի-ա, բստ այժմ՝ եզն, արջառաց յետին է)
բուծին
բուռ (ձեռք)
բուրդ
գայլ
գեղ (գեղեցկութիւն)
գետ

գետին (ն. ի գետնի)
գէշ (գի)
գէջ
գէս
գի (ծառը)
գին
գինձ
գիր, գիրք
գլուխ
գոգ
գող
գոռնէս
գործ
գուբ
գուխ
գադար
գալար
գաւ
գդում
գեղ
գժախ-ք
գի
գիւրին
գուբ
երազ
երբուծ
երդ
երդ
երես
երկ
երկաթ
գուռ
էշ (նաև՝ -ու)
ընկոյզ
ընչուղ
ընտիր
Քեզան
քեռ

քեփ
քի
քիւ
քուղ
քուխ
քուղխ
քուր
քուք
քոթ
քրքուր
քեռ (գրծ. քեւօք)
ժանտուռ
ժանգ
ժողով
իլ
իւղ
իւր
(իւրաքանչիւր)
լի
լոկ
լոյս
լու
լուծ
լուր
խաղմուղ
խաղ (երախայրք)
խաղող
խանձարուր
խաւ (շերտ)
խեցգետին
խիթ (փորի)
խիւս
խմոր
խնամ
խնդիր
խոչ
խոտ

խոր
խորդ
խորդ (թռչունը)
խորխոխ
խուխ
խունկ
խուփ
խոխ
խտիր
խտտիղ
ծամ
ծառ
ծարաւ
ծեր
ծեփ
ծիր
ծծումբ
ծկոյթ
ծովալիճ
ծործոր
ծոց
ծուխ
ծուծ
ծուռ
կագ
կալ (ցորենի)
կակուղ
կաղին
կայտիռ
կապ
կասկած
կաբ (քել)
կարճ
կարմիր
կացին
կեղ
կեղև
կեղտ

կեմ
կեր
կերակուր
կես
կինամոն
կուճ (մարմար)
կնիւն
կնիք
կշիռ
կոծ
կոճ
կուշտ
կոպիճ
կոտոր
կու
կուբ-ք
կուռ-ք
կուտ
կպրածիւթ
կռիւ
կտաւ
կտուր-ի
կրկին
հաճար
հաճ
համ
հայ
հանճար
հատ
հարաւ
հարիւր
հաւատ-ք
հեզ
հեռակ
հետ-ք
հին
հիւթ
հիւր

հոգ
հող
հողմ
հոյզ
հոտ
հոր
հունձ-ք
հուսկ (ի հպոյ)
հուր
ձեռ
ձև
ձէթ
ձի
ձիւթ
ձող
ձոյլ
ձոր
ձորձ
ձու
ճաշ
ճարպ
ճիւռ
մալուխ
մաղաս
մաճ
մանանեխ
մատաղ
մատ-ք
մարախ
մարդ
մարմին
մեղմ
մեղրախորիսխ
մերկ
մէջ (medyo-)
մի (մյոյ, միոջ)
միայն
միջին

միս
միրգ
միւս
մոխիր
մամ
մոյր
մորթ
մուն
մուր
մուրճ
մուրտ
մասուր
մրմունջ
մրուր
մօտ (ի մօտոյ)
յետ (յետոյ)
յետնաժեր
յոյս
յոպոպ
նաշխի
նեխ
նիւտ (նստոյ տեղի)
նոր
նու
շաղախ
շաղիկ
շարաւ
շիլ, շիւղ
շեղջ
շնչափող
շունչ
շուք
ողջ
ողկոյզ (նաև՝ խ-ա)
ողոք
ողջ
ոճ
ոյժ

ոսա (ozdos)
որ
որայ
որը
որևար
որթ (խաղողի)
որթ (կոդով)
որկոր
որմ
որոթ
որս
ուղեղ (ուղղոյ)
ուղիղ »
ուշ
ուռ «ճիւղ»
ուտ (omso)
ոտ (փոս)
չաման
չամիչ
չանչ
չինչին (-չենոյ, նոց)
պաղպաջ
պատուք
պատառ
պատիճ
պարտակ
պարզ
պիղծ
պինդ
պղինձ
պորտ
պտուղ
պրտուտ
ջեր
ջերմ
ջուր
ջրհոր
սար (լեռ)

սարսուռ
սափոր
սեամ-ք
սեխ
սեղան
սեագիր
սեագեղ
սէգ
սէր
սիկ
սին
սոխ
սողոսն
սոսինձ
սոսորդ
սով
սոր
սուգ
սուր
սուրբ
սպիտակագիր
սպունդ
սուտ
սաև
սառրուտ
վաստակ
վեր (ի վերոյ)
վուշ
տասղ
տարափ
տանդ
տես
տերև
տի-ք (տարիք)
տիղմ
տիպ (հն. -os)
տղայ

տունկ
տտուն
տուր-ք
տուփ
տրտունջ
տօթ
տօսախ
ցած
ցանկ (գրքի, այգու)
ցաւ
ցեց
ցին
ցից
ցխու-ք
ցնցուղ
ցորեան
ցուպ
ցուց-ք
ցօղ
ցօղուն
(փետուր)
փոխինդ
փող (շեփոր)
փուշ
փուտ
փուք
փրփուր
քաղցու
քացախ
քիսա
քող, քօղ
քոս
քուն (swopno)
քուք (ծնծղի)
քուք (ողբ)
օդ (կօշիկ)
օդ (հավա)

Ու հոլովում

(աբաս)
ագռաւ
ալ-ք «խորք»
ազուէս
այգ (կայ և ո հլ. որ թվում է թե հեաին է)
այժմ, -ու
անդորը
առիւծ
արդ «ձև» (=ἀρτύς)
արև
բազմազօր
բահ
բար-ք
բիւր (նաև՝ ո)
գահ
գամ (գամու մխոջ)
գզաթ
գրաստ
դաս (հետո. ի)
դար (100 տարի)
դրօշ
զարգ
զգեստ
զէն-ք
ժահ
ժամ
իրրամէն
ինձ, ընձու
իշացուլ
խրատ (xratu)
ծակ
ծով
կով
հայելեկց
հաւ (թռչուն)
ձագ
ձիացուլ
ճակատ
մաթ (չափը)
մոգ (movu), վրաց. մոգու
նախանձ
նկար
շաբաթ
որթ (հորթ)
ուղտ
ուրբաթ
պահ (ժամ)
պար
պարտ-ք
սակաւ
սան (աշակերտ)
սպաս
վաշտ
վար-ք (բայց կա «երկիր վարոյ» բառը՝ ո հլ.)
վարձ
վրէժ
տարազ
տարաժամ
տարապարտ (-ուց)
տօթաժամ
ցուլ
քէն

Ն հոլովում (ին, ամբ)

ապրն (ին, ամբ)
ազն (ազին, ինք, անց)
անձն (անձին, ինք, անց)
առն (առին)
արիւն (միւն, միամբ)
ափն (ջրի)
բեռն
բոյթն
գառն
դաշն
դառն
եղն
եղն
թոռն
լեառն (լերին)
լեռնուտն
լորձն
խաշն
կաթն
կամն
կառափն
հարսն
ձեռն (-ին), հգ. ի-ա հլ.
մատն
մաշկն «վրան» ս. մաշկան (թևև ասոր. maškan)
մատն (-սին)
նեռն (-ին)
ոդն (ոդին)

ոտն (ոտին)
ուռն (-ռին)
ատաշխն (-խին)
տասն (-սին)
տոռն (-ռին) «չուան»

Ն հոլովում (ան, ամբ)

ակն (ական, ակամբ)
ագեղն (-ան)
ագիւսագուռն (-բան)
ազջիկ (-ան)
ամառն (-բան, ոան)
այծեամն
անկիւն (-եան)
անուն (-ուան)
ասեղն (ասղան)
աստեղատուն
աստղիկ (-դկան)
աստուածակոդմն (-ման)
ատամն
արգիւն(ք)
արեգակն
արիւն
արմուկն
բամբիշն
բասեռն
(թևդմն, ման)
(ընդեռն, ան)
բուռն (ռին, ոան)!
բուրգն
գագաթն
գալուստ (-տեան)
գարուն
գաւառակոդմն
գեղարդն (-ան, -եան)
գեղմն
գեռնատուն
(գուղձն)
դալուկն
դաշտակոդմն
դիակն
դուռն
դուրգն
եղեամն
եղեռն
եղէգն
եղունգն
եռանդն (ան, եան)
երկն
եօթն
(ընչիկ, չընչկանէ)
քէկն (քիկան)
քիքեղն (-ղան)
ինքն (ինքեան)
իրաւունք, -անց (իրաւն բառից, որ չի գործածված)
լեռնակոդմն (լիսեռն)
խուժդն (ի խժդան)
խուռն (ի խռան)
խուրձն
խցիկ
ծիծառն
կազանչանն
կայծակն
կնճիռն (-ռան)
կոդմն (-ման, մանք, ման)
կորեակ (-եկան)
կորիւն (կորեան)
կորուստ (-տեան)
կուռն (կռան)
հանդիստ (-տեան)
հացիկ (-կան)
հաւալուռն (-ռան)
հերիւն (-եան)
հիմն
հիւռն
ձեղուն
ձիւն
ձմեռն (-բան)
ձուկն
ճիգն
մազդեզն (-ան)
մանգառն (-ռան)
մանուկ (-կան)
մառուռն (-բան)
մարդիկ (-կան)
մեծատուն (-տան)
մուկն (մկան)
մրջիւն (-ջեան)
նարդիւն (-դեան)
նաւթուրան (-ան)
նեբքնատուն (-տան)
նուռն (-ան)
շուն
շուրթն
ոսպն
որդն
որոմն (-ման)
որքիւն (-քեան)
ուլն (ուլուն)
ունկն (-կան)
ուռն «մուրճ» (-ան)

չարակն (-կան)
պալատն
պաշտօն (-տամն)
պոչան (պուտան)
ջերմն (-ման)
սերմն (-ման)
սիւն (սեան)
սկիզբն
սնունդն (-դան)
տեղն (-դան)
տաերդումն (-ման)
տաճն (-տաճան)
տեսիլ (-լեան)
տուն
տուտն (տտան)
ցակն (-կան. համմա. ցականեալ և ոչ թէ ցակնեալ)
փայլակն
փայլատակն (-կան
փոքրիկ (-րկան)

Ղ, Ր հոլովում

ազգր
ալիւր
աղբիւր
անգղ (թռչունը)
ասող
ասր (ասու)
արթր (յօղ)
արկղ (բակղ)
բարձր (-ձու)
գետեղր (զեր)
գուսանր
եղր
եղջիւր
եղտիւր
եղ, առ եղեղ
թանձր (ձու)
թառր
լիտր
ծաղր (-ղու)
ծանր (-նու)
կայտր (-տեր)
կարծր, ծու
կողր (հգ. կողերս)
կոճղ
համր
մանր (նու)
մեղր (-ղու)
շիգղ (շգեղ)
ոսկր (-կեր)
ուսուր (sukter)
սակր (-կեր)
սիկղ (-կեղ)
սկուտղ (-տեղ)
վագր (-գեր)
տարր (-եր)
փոքր (-քու)
քաղցր (-ցու)

Խառն հլ.

ազախին, ո, ի-ա
ազանգ, ո, ի-ա
ազերս, ո, ի
ազէտ, ի (կա և հգ. գրծ. ազետոք)
ազքատ, ի-ա հլ. (Սգր. Ջ անգամ ո հլ.)
ամբիւն (հին հլ. հայտնի չէ, հետևաբար ն, ի, ո հլ.)
աման, ի-ա, ո
ամոլ, ի, ո
ամուր, ո, ի-ա
անգ ճարտ, ո, ի
անդրանիկ, ն, ի-ա
անխմաստ, ի, ի-ա։
անիւ, ո (քիչ անգամ՝ ի-ա)
անկոզին, ի-ա, ո
անձուկ, ո, ի-ա
անձրև, ի-ա ո (ս. գրքի 21 օրինակներից 17 ի-ա, 4 ո)
անմտունչ, ի, ո
անյոյս, ի, ի-ա (տես ՆՀԲ)
անշունչ, ի-ա, ի (տես ՆՀԲ)

անուխ, ի, ո
անկրպետ ի, ի-ա, ո
ապառաժ ի, ի-ա
ապաստան ի, ի-ա
ապատակ, ի-ա, ո
ապարդում, ի-ա
առագաստ, ի, ի-ա
(առած, ի, ո)
առաւել (գրծ. օք, ովք)
առաւօտ, ի, ու հլ.
արած, ի, ո
արբշիռ, ի, ի-ա
արմատ, ո, ու
արջ, ո, ու
(աւաչ, ո, ի-ա)
բազարջ, ի-ա, ո
բիրք, ո, ի
բիրտ, ի, ի-ա
բիծ, ի, ի-ա, ո
բոլոր, ի, ո
բոյթ, ո, ի-ա
բուծ, ի-ա, ո
բուն, ի-ա, ո, ո
(բրաբիոն, ի-ա, ի)
(գանձ, ու, ի)
գառագիղ, ի, ի-ա
(գաւիթ, ի, ի-ա)
(գետին, ի, ո)
գէտ, ի-ա, ի
գիշեր ո, ի-ա
գոմ, ո, ի-ա
գոյժ, ի, ո
գոյն, ի, ո
գօրա, ի, ո
գունդ (կլոր) ի, ի-ա
գունդ (խումբ) ի, ի-ա
գոհ, ի-ա, ի
գօր ո հլ. (նաև՝ սեռ. ի)
դաշտան, ի, ի-ա
դաստակերտ, ի, ի-ա
դարման, ո, ի
դրամ, ի, ո
եկամուտ, ի, ի-ա
եղէգ (խոտը) ի, ո
երանգ, ո, ի-ա
երէց, ու, ն և լ. (տես Աբմ.)
երինջ, ու, ո
երկիւղած, ի, ի-ա, ո
զոյգ, ի, ի-ա
զօր, զօրք, ու, ա
Է, ի, ո հլ.
թագանթ, ո, ի-ա
(թաւ, ի-ա, ու)
թաքուստ, ի, ևան
ժամ, ու (բացի սեռականից մյուսները նաև՝ ի -ահլ.)
ժանտ, ի, ի-ա
ժողովուրդ, ևան, ոց, ովք
իղձ, ի, ի-ա
ինն, ըննի, ընննի, ինուն, ինուանց, ընննից
իջավայր, ի, ի-ա
լար, ո, ի-ա
լուսին, ո, ի
խաղող ո, ի-ա
խիտ, ի, ի-ա
խնբիթ, ի, ի-ա
խոզ, ի, ի-ա
խոյ, եղ. ի, հգ. ո հլ.
խորհուրդ, ո, -հան, քիչ անգամ՝ -ի հլ.
ծախ-ք, ի, ո
ծաղիկ, ն, ի-ա, ո
ծարիր, ո, ի-ա
ծնունդ, ո, ն (ևան)
կահ, ի, ու

կանգուն, ո, ի-ա
կանուխ, ո, ի-ա
կաշառ, ի-ա, ո
կապար, ո, ի-ա
կատար, ո, ի-ա
կերպաս, ո, ու
կին (կնոջ, կնաւ)
կիրճ, ի, ի-ա
կողոպուտ, ու, ի
կոնք, ի, ի-ա
կուզ, ի, ո
կրասեր, ո, աւ, աց
համար, ո, ու, ի
համբաւ, ո, ու, ի-ա
հաւ (պտղ), ու, ոյ
հեր, եզ. ո, հգ. ի-ա հլ.
հրաշակերտ, աց, ից
ձախ, ո, ու (բց. ի ձախմէ)
ձեռն (եզ. ն հլ. հգ. ի-ա հլ.)
ճեպ, ո, ի, ի-ա
ճիշ, ո, ի
ճիրան, եզ. ի-ա, հգ. -ն հլ.
մազ, ո, ի
մահ, ու, ն (սեռ. -ուան)
մաղ, ու, ո
մաղձ, ո, ի
մանկամարդ, ո, ի-ա
մառախուղ, ո, ի
մարգարիտ, ո, ի-ա
մեհեան, ի, ի-ա
մեղեխ, սեռ. ի, գրծ. -ով
մէգ, ս. միգի, ն. ի, միգի, գ. միգով
մժեխ, ի-ա, ո
միամօր, ո, ու
մուխ, ո, ի
նանիր, ի-ա, ո
նարօտ, ու, ի-ա
նաւահանգիստ (-ստայ, -ստեան)
նաւ -ու, ի-ա
նշանագիր, ի-ա, ո
նշոյլ, ի, ի-ա
նոճ, ի, ո
շղթայագործ, ի, ա
շնորհ, ի-ա, բայց եզ. նաև՝ ի հլ.
ոսկն, ն հլ. (հգ. ի հլ).
որթագլուխ, ո, ի-ա
ուլ, ո (pòlo), ու (անասնոց)
չափ, ո (եզ.), ու (հգ.)
չէ «չնգած բանն», ի, ո հլ.
պաշար, ո, ի-ա
պատիժ, ո, ի-ա
պատիւ, սեռ. -ի, բց. է
սաղմոս, աց, իւք
սնդոյր, ի-ա, ո
սուտակատապաս, ի, ի-ա
վաճառ, ի-ա, ու
վայ, ի, ո
վշտաս, ոյ, ի
տաղանդ, ի-ա, ո (հն.)
տոհմ, ի, ի-ա
ցիտ, ո, ու
ցուրտ, ո, ի
փախուստ, ի, եան
փոխ, ո, ի
փոկ, ո, ի-ա
փոճակ, ի-ա, ո
փոս, ո, ի
փոր, ո, ի
փորձ, ո, ի
քաղց, ի, ո
քանդակագործ, ի, ի-ա, ո
քանքար, ո, ի-ա
քար (եզ. ի հլ. հգ. ն հլ.)
քարող, ի-ա, ո
օդ, ի, ո

Անհայտ կամ աննիւթ

ապուռ «բուռ»
ապտ
արմուր «տուքս»
արկուխա
ալ-ոջ
ախլրակ
ախտո
ածուխ
ակահ
ականն
ակատ (քարը)
ականգեր
ակիճ
ակու
անառ «կոճիկ»
ամբոկ
ամեխ
ամիկ
ամկան
ամփոփ
այդն
այլ
անագորոյն
անկատակ
անհեխեխ
անհրաժեշտ
անճահ
աննիւազ
անփոյթ
աչխար
աչխոյժ
ապախտ
ապահով
ապատուհ
ապարանջան
ապարուհ
ապարօշ
ապուխտ
ապուռ
ապիկար
ապուշ
առաւիր
առոյգ
առկն
առատ
առատձ
առոք
արագ (հգ. -ունք)
արատոյ
արբուն-ք
արգաւանդ
արգել
արդն (նիզակ)
արհամարհ
աւել (գյ.)
բարկ
բաւ
բեկ
բոկ
բոր
գոլ
գոհ
գուճ
գումար
գուն (ջանք)
գահլիճ
գազձն
գաւիթ
գոյզն
գուլ
գուն
դդոյշ
զեղխ
զնին
զուարթ
զուր
զրաւ
զրոյց
զօդ
զօրավիգն
թան
թափուր
թշուառ
թօթով
թուէմ
լայն
լուռ
խարտեաշ
(խիզախ)
խնձոր (ի, ո)
խոստովան
խոտոր
խորով
խոց
խրախոյս
ծածուկ
ծուռը
ծուփ
ծրար
կիրթ
կեց
կծու
կոզն (-ան, թե -ի՛ն)
կոր (ծուռ)
հակիրճ
հեճուկ
հիւ

հնազանդ
մեհեանդ
մեց
մէտ
մթար
մթին
մխիթար
յամր

յօժար
նախատ
նեղ
նոդկ
ուրախ
պատիր
պատուէր
պէս-ք

ջինջ
սխալ
վսեր
վստահ
վտիտ
տխուր
տրտում
փափագ

ակ- հանդող բառերը (քան Համբ.)

ագահակ
աղաղակ
անապակ
(անուշակ)
աշտանակ
աշտարակ
առակ
ասպատակ
արգանակ, ի
(արձակ)
արտախուրակ
աւազակ
աւերակ
բաղմակ
բաժակ
բակ
բանակ
բարձրաւանդակ
բարուկնակ
բլթակ
բնակ
(բծրակ)
(գահաւանդակ)
գահաւորակ
գանձանակ, ի
գաւակ
գաւառակ
(գիսակ)

գիտակ
(գնդակ)
(գումարտակ)
գունակ
գոտակ
գրակ
գռնակ
դաշնակ
(դատակ)
դատաիրակ
դեսպակ
դիմակ
դիպակ, ի
(դմակ)
դրակ, ի
դռնափակ
դրօշակ, ի
(երակ)
երամակ
(երասանակ)
զաւակ
զուարակ
(էակ)
ընդարձակ, ի
(թաշկինակ)
թիակ
թոշակ
ժամանակ

լծակ
լուղակ
(խնդրակ)
(խողովակ)
խոյակ
խոտորակ, ի
խորշակ
ծակ, ո
ծանակ
ծուղակ
ծմակ
(ծովակ)
(կայմակ)
կամփռակ, ի
(կայլակ)
կապուտակ
կատակ
կզակ
կճղակ
կշտապանակ, ի
կոզակ
կուտակ
կտակ, ի
կրակ, ի
(կրկնակ)
կրպակ
(հակատակ)
(համբակ)

նահատակ
նամակ
նապատակ
ներքնակ
նիզակ
նկանակ, ի
նշանակ
(նշաւակ)
(նուիրակ)
շալակ
շեմակ «օր»
շրջանակ
պայուսակ
պատակ
պատգարակ
պատմուճակ
պատրուակ
պատրուճակ
(պարեւտակ)
(պիծակ)
պղպջակ
պնակ
պտակ
սայլակ
սեակ
սիւնակ, ի
(սկաւառակ)
սմբակ

սախակ, ի
սուսնակ (սվին)
սուրհանդակ
սպիտակ
սրահակ
(սրուակ)
վահանակ
վանդակ
վաստակ (ո հլ., թեև կա և՝ -ացք, -օք)
վարագանակ
վարձակ
վարշամակ
վիճակ
վտակ
վտաւակ
վրիպակ
տախտակ
տապակ
տապանակ
տատրակ
(տափարակ)
(փակաղակ)
փոխանակ
քամակ
քանդակ
քսակ, ի
օժանդակ
օչարակ, ի
օրինակ

Ան վերջացող բառերի այսքան բազմաթիւ օրինակների մէջ ունենք մի քանի բառ, որ շեղւում են ի-ա հոլովումից, այսպես են՝ ճարակ-ից, ի ճարակոյ. Ամբակ. գ 17. այս վկայութեան մէջ նշէ դնում է նաև ճարակաց ընթերցուածը. սակայն մյուս կողմից տալիս է ի ճարակոյ ՄԾՒ. գ։

Վաստակ, թեև կա -ացք, -օք, Ժղ. Բ. 19, Բ. Կոր. Ժ, 15, Ես. 23) բայց աւելի հետեւում է ո հլ.

Բաժակ, թեև հետեւում է ի-ա հլ., բայց կա նաև բաժակոյ, Ել. Համաբ. 210, որ հետեւաբար աւելի է տարածւում։

Գերման «բարակ ալյուր» ո հլ.։
Ծակ, ու հլ. հետնաբար՝ ի-ա հլ.։
վարսակ վեցօր. էջ 88 հոլովված է վարսակոյ:

Հատուկ անուններ

Ա. հոլովման հատուկ անուններ

Աբդիմելէք
Աբդեդովմ
Աբդիա } -դիայ
Աբդիաս }
Աբեդդ
Աբեդդար
Աբեդդոմ
Աբեդնագով
Աբենեզեր
Աբեններ
Աբենրայիմ
Աբեսաղոմ
Աբեսա
Աբեր
Աբելմաուլա
Աբիա } -իայ
Աբիաս }
Աբիգեա
Աբիգան
Աբիեզեր
Աբիմելէք
Աբինէադ
Աբիուդ
Աբիասափ
Աբիասու
Աբիսուա
Աբիսուր
Աբիտաղ
Աբիքեա
Աբլաթաք
Աբրոնէ
Ագար
Ագիա
Ագիթ
Ագար
Ագաա
Ագամ
Ագամա
Ագայիա } -այ
Ագայիաս }
Ագաոսա
Ագդինէ (-եայ)
Ագդով
Ագեր
Ագիա
Ագինա
Ագինոր
Ագլիա
Ագոնիա
Ագոնիամ
Ագուս
Ագրամելէք
Ագար
Ագարիա(ս) -այ
Ագդարովթ
Ագեր
Ագեբիզեբկիա
Ագիա
Ագովաոս, -աայ
Ագովր
Աթալիա
Աթանիա
Աթարինա
Ալագա
Ալոէն
Ալովկ
Ակրոս
Ակիւզաս
Ակկուս
Ակովս
Ակուզ
Ակուս
Ակուփա
Ակրաբիմ
Ակրաբին
Ակքով
Աղաիա
Աղէր, -ելայ
Աղոէլէ, -նեայ
Աղփադա
Ամա
Ամադովթ
Ամաթի, -թեայ
Ամաթիտա
Ամազէկ
Ամամելէք
Աման
Ամասիա[ս]
Ամարիա[ս]
Ամարփազ
Ամեսայի, յեայ
Ամինադար

Ա. հոլովման հատուկ անուններ

Ամխուէթ
Ամման
Ամովթ
Ամովս
Ամպղեա
Ամրամ
Ամրան
Ամրի, -եայ
Անելովթ
Անյիա
Անաթ
Անաթովթ
Անան
Անդրէաս, -րեայ
Անդրոնիկոս, -կեայ
Անոն
Անովր
Անտիոք, բց, -քէ
Անտիոքոս, -քայ
Անքուս
Ապելէս, -լլեայ
Ապողոնիոս, -եայ
Ապքիա, -փեայ
Առան
Առնեայ
Առնոփն
Ասարիաս, Բեայ
Ասարոն
Ասամ
Ասան
Ասափ
Ասեդովթ, -այ, -աւ
Ասել
Ասեմոն
Ասեմովթ
Ասենա
Ասեր
Ասերմաքթովթ
Աստովթ
Աստր
Աստարովթ
Աստարտ
Ասքափ
Ասքուր
Աատգա
Ատեր
Ատիփա
Ատիտա
Աուսիփա
Աուսերեզեա
Արաբա
Արագ
Արագաք
Արամ
Արաս
Արարատ
Արբոկ
Արդովր
Արեգ
Արես
Արեատա
Արեմաթեա
Արովդիմ
Արիովք
Արխովթ
Արխատաբուզոս, զեայ
Արշակ
Արշաւիր
Արոյեր
Արուագի, եայ
Արուս
Արաս
Արսիփուր
Արտասաս
Արտեմիս, մեայ
Արփաթ
Արփաքսադ
Արքատարովթ
Արքիպպոս, պեայ
Ասիեկ
Ասիփեմ
Ասիփեր
Ասիփուսովթ (քէ -ոս-սովթ)
Ասքալիա
Ասքել
Ասքեբա
Ասքիա
Ասքիաբ
Ասքիաքար
Ասքիբուզ
Ասքիեզեր
Ասքիլիդ
Ասքիլուդ
Ասքիկամ
Ասքիմաաս
Ասքինովամ
Ասքսամ
Ասքիտովր
Ասքիտոփել
Ասքիբան
Ասքոբովր
Ասքովր
Ասքուր

Բաղ
Բաան
Բաաս, Բաասան
Բաբովկ
Բաելմովթ
Բալլա
Բանադիմ
Բազակ
Բազդան
Բազներման, -եայ
Բազտասար
Բամա
Բամովթ
Բաննեա[ս], -եայ
Բանուի, -ուայ
Բանուննեա
Բառնաբաս, -բայ, -բաւ
Բասի, -դեայ
Բասուրովթ
Բաահեմաթ
Բարադ
Բարակ
Բարաքիաս, -քեայ
Բարուք
Բաուրիմ
Բաքիդ, -դեայ
Բեանա
Բեթազար
Բեթազմ
Բեթանաթ
Բեթանգան
Բեթանիա
Բեթաբարա
Բեթաւան
Բեթաքարիմ եթրագովն
Բեթբէա, գ. -եաւ
Բեթել
Բեթելի, -լեայ
Բեթելհաբ
Բեթելլուզ
Բեթլեհեմ
Բեթովր
Բեթսայիդա
Բեթսամես
Բեթսամիս
Բեթսամովթ
Բեթսան
Բեթսարիա
Բեթսոնն
Բեթսովր
Բեթքովր
Բելփեգովր
Բեկեղիթ
Բեսէ, սեայ
Բեհիղուա
Բեռոլիամ
Բերդի, -դեայ
Բերզելի, -լեայ
Բերիթ
Բերովթ
Բերուքքամամ
Բերսաբէէ, բեայ
Բեքովրաթ
Բէզոսեզովնեվն
Բէերա
Բէէլիմ
Բէլ
Բէովր, այ, եայ
Բիսաար
Բոաղոր
Բոաս
Բոսալում
Բոսերա
Բոսոր, այ, եայ
Բովկի, կեայ, իայ
Բոբքի, քեայ
Բուա
Բուզի, եայ
Բովթան

Գաազ
Գաբայէլ
Գաբելայիմ
Գադ
Գադգադ
Գադդի, -դայ
Գադեր
Գադիբոն
Գազա
Գազարա
Գաղեր
Գազիբոն
Գալիլովթ, աւ
Գակուբէ, բեայ
Գաղամ
Գաղդազա
Գամարիա, բեայ
Գամեր
Գայեր
Գայի, յեայ
Գասայ, յայ
Գասիոնգաբեր
Գարգասի, սեայ
Գարեր
Գեդդուր
(Գեդովր, աւ)
Գեսուր
Գեեզի, զեայ
Գեթաքոբեբա
Գեթթամա
Գենթաւր

Գիլգալ
Գիպրաէէ, ուայ
Գիննեսարէթ
Գիսեմ
Գիսուր
Գիբա, -բեայ
Գիբարա, -բայ
Գիբպալ
Գիբսամ
Գիբսաթիմ
Գիթ, Գիթայ
Գոգոզիա
Գոթոզիա
Գոմոր
Գոսամ
Գոփաս
Գովգ
Գովգան
Գոփխաթ
Գորգի, -գեայ

Դաբիր
Դաբրիա, -բեայ
Դագոն
Դագան
Դալան
Դալափ
Դակար
Դան
Դելթաթա
Դերթովրա
Դեսան
Դեսան
Դիմոնգաթ
(Դկլաթ, գրծ. -աւ)
Դովթայիմ
Դովր[ա], -այ
(Դրուսիլ, գրծ. աւ)

Եբեր
Եբերիմ
Եբրոնա
Եգդոմ
Եգդա
Եգրեբիլա
Եգեն
Եգովմ
Եգովմին, -եայ
Եգեկիա[ս], -այ
Եգերիա
Եզիր
Եգրայելոմ
Եգրեկամ
Եգրոմել
Եթան
Եթթի, -թեայ
Ելա
Ելամաթա
Ելամեսի, -սեայ
Ելեմար
Ելեմ
Ելիասաբ
Ելիմելէք
Ելիոնէ, նեայ
Ելիուդ
Ելիսամա
Ելիսափան
Ելէք, -եքայ
Ելկիա
Ելովա
Ելովմ
(Ելսաբոն, գ. -աւ)
Ելքիաս, -քեայ
Եկբատանա
Եղիազ
Եղիակիմ, -այ
Եղիմ

Եղիսափան
Եղիսուբ
Եզկանա, սեռ. -նայ, -նայի
Եզոմիմ
Եմաթ
Եման
Եմիուդ
Եմմեր
Եմովր
Ենադադ
Ենակ
Ենգադ
Ենդովր
Ենով
Ենովք
Ենովս
Եպիրովթ
Եսայի, Եսայեայ, Եսայայ
Եսաւ
Եսդա
Եսթաւուլ
Եսթեր
Երիէլ
Երիլա
Եւիլատա
Եւնիկէ, -կեայ
Եփեսոս, -սեայ, -սեաւ
Եփրաթա
Եքէմ
Եքրան

Զաթու
Զաթսեա
Զամբրի, բեայ
Զամմա
Զաոան
Զաքարիա[ս], -րիայ

Ջաքուր
Ջերեթէ, -թեայ
Ջելփա
Ջեմաթ
Ջեքրի, -բեայ
Ջիփ
Ջոռնէթ

Էլամ
Էղոլի, Էղեայն
Էր

Թաաթ
Թաբռվր
Թագդաթփաղաար
Թակուաթ
Թամա
Թամար
Թաննա, -նայ, -նեայ
Թանայեմ
Թասիր
Թարակ
Թարգալ
Թափթռվթա
Թափուա
Թափսա
Թեզրէ, -իեայ
Թեկեմինա
Թեկուէ, -ուայ
Թեմա
Թեման
Թերա
Թերոն
(Թերսա, գ. Թերսաւ)
Թերսիլա
Թռվկի, -կեայ
Թորգոմ

Թուղագ

Իդիթռվն
Իդիթռվմ
Իդիթուտա
Իդիթուն
Իթամար
Իլան
Իսահակ, Սահակ
Իսահաս
Իւկինէ, -նեայ

Լաագանա
Լաբանէ, -եայ
Լաբիդռվթ
Լաւոդիկէ, -եայ
Լաքիս
Լեսեմ
Լիա
Լիւսանի տեռ. -նեայ
Լիւսիա[ս], -իայ
Լիւսիմաքոս, -քեայ
Լոզոն

Մուբ

Կաբէս
Կադեսիմ
Կադէս
Կուէ, ուայ
Կալամոլի, -լայ
Կայնան
Կանդակա
Կաստասաթ
Կարխաթարիմ
Կարխաթբաալ
Կարմելոս, -լայ
Կարքեդոն
Կեդար
Կեդեմ
Կեդմոթռվթ
Կենդրոս, -բեայ
Կեսարիա, -րեայ
Կերա
Կեհլա
Կիլիկիա, -կեայ
Կիմար
Կիս, Կիսեայ
Կիւրենոս, -նեայ
(Կղեմէս, գ. մաւ)
Կղէոպատրոս, -բայ
Կղէոպաս, -պայ
Կղօդիոս, -դեայ
(Կնիդի, գ. -դեաւ)
Կոդոլի, -լայ
Կովլիա, -այ
Կոլասէ
Կորնէլիոս, -լեայ
Կրետէ, -տեայ, -տեաւ

Համան
Հեղի, -ղեայ
Հեղիոդորոս, -րայ
Հերմա, -մեայ
Հերովդիոնէ, -նեայ
Հերովդիա, -դիայ
Հոդոփեռնէս, -նեայ
Հռաբաթ, -այ
Հռաբիա
Հռագաւ
Հռագուէլ, -ելայ
Հռադիա
Հռամա
Հռամաթի, -սեայ
Հռասամ
Հռափա

Հռաքաբա
Հռեմփա
Հռեսիմ
Հռեքար
Ռռոմ
Հռոմէելա
Հռուբել
Հռութ

Ղարեկ
Ղամէք, -եքայ
Ղէբռնա
Ղէի, Ղեեայ
Ղեբան
Ղեբռնի, -հռնեայ
Ղեմա
Ղեմսան

Մաաթ
Մաագոն
Մաան
Մաասն
Մաաքա
Մաաքի, -քեայ
Մադդադի, -դեայ
Մադդովդ
Մագոգ
Մադդաբովթ
Մադիան
Մազովր
Մախանէիա, -յ
Մալաեիա
Մալեելա
Մակեդա
Մակեդովն
Մակեղովթ
Մակելլաթ
Մակբի, -քեայ
Մազովա
Մայաս
Մանայեմ
Մանթանէն
Մանովէ, -վայ,
Մանովգա
Մառոն
Մառթակ
Մասեկա
Մասեփա
Մասեփաթ
Մասուբութ
Մասփի, -փեայ
Մաաաթի, -թեայ
Մաաեկա
Մաաաաբի, -բեայ
Մաարեթա, -յ
Մարեսայ
Մարեբովթ
Մարիա
Մարիամ, -բեամայ
Մարիովթ
Մարիսա
Մարովթաա
Մաւուլ
Մափկաթ
Մաքաթի, -քեայ
Մաքամենա
Մաքիր
Մաքմաս
Մաքուլ
Մեդարա
Մելիտինէ, -տեայ
Մելքա
Մելքի, -քեայ
Մելքիա, -յ
Մեղբի, -քեայ

Մեղքոզ
Մեղքոմ
Մեմփաթա
Մեմփիփոթէ, -թեայ
Մենեղաւոս, -սեայ
Մեսոլոմ
Մեսսիա, -յ
Մեսաբել
Մերաբի, -բեայ
Մերոբ
Մէուզ
Միթրիդատ
Միսագան
Միսաք
Միսսիր
(Միսսիա, սեաւ.
Մոզոք
Մոզի, -զեայ
Մոսաթա, -յ
Մոսոզոմ
Մոսոքլոմովթ
Մոսփաթեմ
Մովաք
Մուսի, -սեայ

Յաբասի, -սեայ
Յաբիա, -յ
Յաբին, -ինայ
Յաբիս, -իսայ
Յաբովկ
Յադիա, -յ
Յադին
Յազկ
Յազեր
Յակիմոս, -մայ
Յակոբ, 163, -այ (16, -ու)
Յամաթ

Յամարեթ
Յամբրի, -բեայ
Յամին
Յայիր
Յաննէ, -նեայ
Յանով
Յասայիա, -յեայ
Յասուբ
Յարիմ
Յաւան
Յափաղէտ, -ետայ
Յափխէթ
Յաքին
Յաքիտովբ
Յաքիրան
Յերան
Յերդան
Յերահէմ
Յերուս
Յերուսթէ, -թեայ
Յեգիա, -գեայ
Յեդդուա
Յեհուէ, -ուայ
Յեհել
Յեղաբել
Յեղեբիաս, -իայ
Յեթեր
Յելա
Յելամ
Յելելա
Յեկնամ
Յեկտան
Յեմաուէթ
Յեմինա
Յեմլա, -լեայ,
Յեսեման
Յեսով
Յեսու

Յեսսա
Յեսէ, -սեայ
Յեսեբեաղ
Յերակա
Յերիմութ
Յերոբոաղ
Յեփագթի, -թեայ
Յեփթայէ, -յեայ
Յեփոնէ, -նեայ
Յեփոնիա, -նեայ
Յեւս, -այ
Յխուս, -այ
Յորաբ
Յոգբա
Յոթոր
Յովաբ, -այ (33), ու (12, այն է՝ Ա, Մն. Ժա. 20, Իե, 7)
Յովաթամ
Յովակիմ
Յովարիմ
Յովաբ
Յովաքիմ
Յոբ
Յովբաբ
Յովբադ
Յովբաղ
Յովիդա, -յ
Յովիդիա, -դեայ
Յովիդայէ, -յեայ
Յովիդան
Յովմաւմ
Յովնադաբ
Յովսէ
Յովսեդեկ, -հեայ
Յովսէ, -սեայ
Յովսիա, -յ

Յովբամ
Յուդիթ, Յուդիթայ, -թեայ
Յուլիոս, -լեայ
Յուդա
Յունի, -նեայ

Նաբադ
Նաբատ
Նաբաւ
Նաբէովթ
Նաբիա
Նաբոպոթ
Նաբուզարդան
Նաբուքոդոնոսոր
Նագեբ
Նագեթ
Նաթան
Նաթանիա
Նայեմ
Նանդի, -գեայ
Նանէ, -նեայ
Նասա
Նասրաքա
Նաւոր
Նարկիոս, -կեայ
Նաւաթ
Նաւէ, -ւեայ
Նաւում
Նափեթ
Նափեկ
Նափթով
Նափիա
Նափթաւ
Նափթաւիմ
Նեեմիա, -մեայ

Ոմա
Ովբեդ, -այ
Ովդ
Ովդ
Ովնա
Ովը
Ովբեկ
Ովբիա
Որկանի, -նեայ
Որոնիմ
Ուբադ
Ուլկի, -կեայ
Ուզամա
Ունոմա
Ուռնա
Ուսի, -սեայ
Ուրիա
Ուփխիա
Ուփեր

Ոգիմ
Ոփնի, -նեայ
Ոքոբոբա
Ոքոզիա, -յ, -ւեայ

Պասքովր
Պարմեն
Պաքոն
Պետափրէս, -րեայ
Պողլիոս, -լեայ
Պրիսկոս, -կեայ

Ռաբաթ
Ռագաւ
Ռաթամա
Ռամա
Ռամաեա
Ռամեսա, -յ, -սեայ

Ռափա
Ռափիդիմ
Ռափիդին
Ռաքնա
Ռափոխ
Ռափու
Ռափսակ
Ռաքաբիմ
Ռեբեկա
Ռեման
Ռեմանա
Ռեմոն
Ռեմոնփարէս
Ռեքաբ
Ռիբա
Ռինոկորուր
Ռիսոն
Ռոբովաամ
Ռոբովթ
Ռոգելիմ
Դամեսա
Ռովամ
Ռովբ
Ռովգել
Ռովմա
Ռուփա

Սաբա
Սաբաքթա
Սաբանիա
Սաբէէ, -էեայ
Սաբիա
Սաբիմ
Սապիուբ
Սագովկ
Սաթրաբուզան
Սալալա
Սալիա

Սալոմէ, -մեայ
Սալոմն
Սակատան
Սահակ
Սահառ
Սաղակիմ
Սաղէմ, -եմայ
Սաղիմ
Սաղմանա
Սաղովմ
Սամաա
Սամամիէլ, -ելեայ
Սամանասար
Սամարիա, -րեայ
Սամարիթա
Սամէա, -մեայ
Սամեդար
Սամեթի, -թեայ
Սամեր
Սամէաս, -մեայ
Սամի, -մեայ
Սամուէ, -մուեայ
Սամրոն
Սանաբալատ
Սանասսա
Սանէր
Սասան
Սասիէլ
Սատիմ
Սարաա
Սարայիա
Սարեբիա
Սարեկ
Սարիա
Սարիս
Սարիփա
Սարովթ
Սարոնէա
Սարուէ, -րուայ,
Սարքայոնէ
Սաուղ, -այ (113 անգամ)
Սաւսակիմ
Սափա
Սափան
Սափատ
Սափատիա, -յ, -աեայ
Սափիա
(Սափիրա, -աւ)
Սափոն
Սաքոնէ
Սերիմ
Սոգովր
(Սեգուբ, -աւ)
Սեղեկիա
Սեղիւր
Սեգուիա
Սեղրաք
Սեթեմոն
Սելեմիա
Սելեկիոս, -կեայ
Սելեկոս, -կեայ
Սելլա
Սելլասար
Սելլեմ
Սելլովմ
Սելլում
Սելմոն
Սելով
Սելովամ
Սելովմ
Սելում
Սելքա
Սեղում
Սեմա
Սեմէի, -մեայ
Սեմէննիթ
Սեմիուդ
Սեմիրայի, -յեայ
Սենա
Սենասր
Սենասրա
Սենեքերիմ
Սեննա
Սեսբիա
Սեսրին
Սեպփամար
Սերուբ
Սեփելա
Սեփփարուիմ
Սեքեմ
Սեքենիա
Սէթ, Սեթայ
Սէիր
Սէիրմա
Սէմ, Սեմայ
Սէմիր
Սէովբիմ
Սէսար
Սերգիոս, -գեայ
Սիկիմ
Սիմա
Սիմայի, -յեայ
Սիմորոր
(Սինաք, -աւ)
Սիրաթամ
Սիսաքեմ
Սկեւ, -ւեայ
Սոբաղ
Սոգովգ
Սոդամ
Սոկքովթ
Սոսիպատրոս, -բեայ

Սոփրաղ
Սոփգար
Սոփմեր
Սոփսան
Սոփփար
Սոփփերա
Սուա
Սուբայիմ
Սուբաս
Սուդիա
Սունի, -նեայ
Սուսա
Սուրի, -րեայ
Սուփիցա
Սուփիմ
Սոխոնիա, -նեայ
Սոքովթ
Սոքոր
Սոսվր

Տանաք
Տափեթ
Տիրերիա, -րեայ
Տիրերիոս, -րեայ
Տիմոնէ
Տոմանի, -նեայ
Տովր
Տովրեի, -վեայ
Տուբան
Տուբիա
Տովրիթ
Տրիփոն, -նեայ
Տրիփոս, -սեայ

Փաղատաւր
Փալայիա
Փալէ, -լեայ
Փալլուս
Փակդուր
Փաղէթ
Փաղէկ, -եկայ
Փամփանա
Փանէ, -նեայ
Փառանտիփող
Փառնաք
Փասայովթ
Փասգա
Փասոր
Փարաքոնէ, -նեայ
Փարակ
Փարեգա
Փարիդ
Փարուա
Փարսալ
Փաքարի, -րեայ
Փաքերովթ
Փեքովր
Փիլիպպէ, -պեայ
Փիլոմիտովր
Փիլոպատովր
Փոգովր
(Փոգոր, -աւ)
Փորոնէ, -նեայ
Փորոս, -այ, -եայ
Փորտունատէ, -տեայ
Փովրիմէոս, -մեայ

Քաթաւինէ, -նեայ
Քաբեր
Քաբրաթա
Քադիասէ, -սեայ
(Քազրի, -բեաւ)
Քադան

Քամ
Քամովս
Քադովգ
Քարագաթ
Քարեմ
Քարես
Քարմի, -մեայ
Քափիր
Քելլան
Քելկիա, -կեայ
Քելոնէի, -նեայ
Քելուբ
Քեղեգ, -եկեայ
Քեղկիա, -կեայ
Քենար
Քենեբեթ
Քեսսա
Քեսսիմ
Քեսսուբա
Քեւրեթի, -թեայ
Քիրոս, -րեայ
Քիլովթ
Քիրամ
Քոգոգագոմոր
Քոռի, -ռեայ
Քորրի, -րայ
Քորէբ, -ևրայ
Քուզա
Քուզեի
Քուքի, -քայ
Քումուր
Քուշ
Քուս
Քուսարսաթէմ
Քուսի, -սեայ, -եաւ

Օսէս, Օսեայ
(1083 հատ)

Ա. Հոլովմամբ հաստարակ բառեր

Ագանովթ
Ագար
Ադին, ադին

Բլլիար
Բենդերուզ
Բոսոր

Գեղդուր

Դարիր
Դարում (հետն.)

Եղեմ
Եթեր

Թարսիս
Թեմանն

Մեքենովթ

Շեփոր
Ովան

Սաբաւովթ
Սաբեկ
Սադերովթ

Վիթոքենայ

Փովթար

Ի հոլովմամբ հատուկ անուններ

Աբգիել
Աբիել
Ագայ
Ադդա[յ]
Ադիել
Ադրիել
Աղայէլ
Աղայել
Աղիել
Ակկարոն
Ահարոն
Ահեբմոն
Ադեքսանդրոս, -բի, -բեայ, (յԱդեքսանդէ)
Ամար
Ամիել
Ամիսադայ
Անայ
Անամայէլ, -ելի (մի անգամ՝ բց. յԱնամայելայ)
Անայիել
Անանիէլ, -եայ (առբ. Ա. 1)
Անաւէլ, -այ

Բեաս, -սի

Գաբաւոն
Գագաբիէլ
Գաղաադասաան
Գամադիէլ
Գամայ
Գամուէլ
Գարգաբիզ, -ի
Գեդէոն, -ի
Գեհէն
Գերսոն

Դամասկոսի, -կեայ
Դանիէլ, -ելի, -լիս
Դարհի
Դովդայ

Եգիպտոս
Եգլոն
Եզրիել
Եզեկիէլ
Եզրայէլ
Ելիէլ
Եղիա, -յի
Եղիսաբեթ

Եղիսեէ, սեռ. Եղիսէի
Եսէլ, Եսելի
Երիքոյ
Երուսաղէմ -ամի (226 անգամ), իսկ 5 անգամ գրված է «Հուրջ ղերուսաղեմաս», այն է՝ Ա. եզր. Բ 16, Ա. մկ. է. 17. Սղ. Հր, 3, Երեմ, ԼԲ. 44, ԼԹ. 13

Զաբուդոն, -ի (29) անգամ)
Զադուէլ
Զաբա, -այի (7 անգամ)
Զարհի, -ի (1 անգամ)
Զաւսաբրա, -յի
Զորաբաբել, -ելի

Թառայ, -յի
Թարա, -յի
Թումա, -յի

Իգրայէլ
Իսմայէլ, -ելի (1573 անգամ)

Կադմիել
Կամուէլ
Կայէն
Կեհաս, -այի
Կիսոն
Կիւրոս

Հաբէլ, Աբէլ
Հայկ, -ինն, -իս (իսկ՝ հայ, -ոց)
Հերմոն
Հերովդէս, -դի
Հոսաբէլ, -ելի
Հրեայ, հրէի
Հրէաստան

Մադէ, -էի
Մաթանա, -յէի
Մաթուսադա, -յի
Մազազայէլ, -ելի
Մամբրէ, -էի
Մանասէ, -էի
Մանահաթ
(Մասփա, -յիս)
Մատթան
Մատթէոս
Մարթա, -յի
Մարկոս
Մելքիել, ելի
Մելքիսեդեկ
Մխայէլ, ելի
Միքայել, ելի
Մնասոնէ, նի
Մովդիէլ
Մովսէս, սիսի
Մուրթքէ, էի

Յարագա, յիս
Յարեթ
Յամուէլ, ելի
Յայէլ, ելի
Յարեդ
Յեզրայէլ, ելի
Յելմոն
Յերամիել
Յերեմիել
Յերիել
Յեսէլ, ելի

Յիսուս, սի
Յովքեզ

Նաասոն, ի
(Նազաբեթ, ի, -է)
Նաթանայէլ, ելի
Նիկոդայոս
Նինուէ
Նոյ

Շաւուղ
Շիղա, -յի
Շիմոն
Շմաւոն, ի (Ա, Մկ. ե. 17, 20 -Նեայ)

Ուզայ

Պետրոս
Պիղատոս
Պօղոս

Ռագուէլ, ելի
Ռուբէն, ենի

Սադաքիել, ելի
Սադամիէլ
Սամիել, ի
Սամուէլ, ելի
Սամսա, յի
Սամփսոն
Սառա, յի
Սարեփ
Սերեգո[վ]ն
Սեհոնի
Սեմերոն
Սիղուանոս, ի, ու
Սիմէոն, Սիմոնի, Սիմոն (Սին, ի Սինէ)
Սիոն, ի (69), ի Սիոնէ, Սիոնիւ
Սողոմոն, ի (109)
Սողոս
Սուսաղա, յի
Սուրիսադա, յի

Վահագն

Տաճկաստան
Տարսոն
Տիմէ
Տիտոս
Տիւրոս

Փագեէլ
Փակէէ, կեի
Փազաիել, ելի
Փանուէլ, ելի
Փարաւոն
Փելիքս
Փենեհես, եսի
Փեննանա, յի
Փեստոս
Փիլիմոն

Քաբիէլ, ելի
Քաղեր
Քասբ
Քեբրոն, ի (մի անդամ Քեբրոնայ)
Քեգրոն
Քրիստոս

183 հատ

Ոի հոլովմամբ հատուկ անուններ

Աբրաամ (Ծն. ժէ, 22 յԱբրաամէ, ԺՀ 17, Ա. մակ. ժԲ. 21, Յոր. Խր. 17, Ես. իԲ. 22, Մտթ. ա. 17, 11. գրծ. -աւ, Երր. է. 9)
Աքաաբ, սեռ. Աքաաբու (41 անգամ)
Աքազ, սեռ. Աքազու (9 անգամ)
Բուհազ, ու (40 անգամ)

Բազաամ, ու (12 անգամ, բոլորը հին կտ. իսկ նոր կտ. ունի 2 անգամ Բազաամայ, Բ. պետր. Բ. 15, Յուդա, 11)
Բելսեբիմոս, տր. -մու
Բիջան, ու

Գազատ, ու (61 ու), 1 -ի (Յես. ժէ, 5. ըց. -է Ծն. լԹ. 25. Բ. օր. 16. սեռ. -այ Ա. Ճառց. է 17. ըց. -է. Ա. Ճառց. ժ. 12, ըց. ի -այ Ա. Ճառց. ԺԲ. 8. ըց. -է, Երգ դ. 1, զ. 4)
Գայոս
Գողիաթ
Ելիաբ
Լիէս, եսու

Ելիփազ, -այ, -ու
Եղիազար, ու (30 անգամ), ըց. յԵղիազարայ (1 անգամ) և Եղիազարայն (1 անգամ)
Եզան, -ու (1 անգամ), -այ (4 անգամ)
Եհեմեսար, -ու
Եփրատ, -ու

Լիբանան, -ու (ըց. -անէ)

Մաուան, -ու (ըց. ի-նէ)

Կահաթ, -ու (31 անգամ)
Կեդար, -ու (8 անգամ)

Հագար, -ու
Համաթիմոս, մու

Ղուկաս, -ու

Մագիամ, -ու (33 անգամ. հմմտ. Մաբիամ)
Յակոբ, այ (բայց 16 ու)
Յեհուան
Յովաբ, -ու, այ
Յովաս, -ու (21), այ (3 հատ)
Յովաքազ, -ու (9), այ (3)
Յովասափաթ, -ու
Տայան (5)
Փաւան
Քանան

34 հատ

Ի–Ա հոլովմամբ հատուկ անուններ

Մար, -ի, -ից
Յոյն, յունի, նաց

Պարթև, -[ի], -աց
Պարսիկ, -սից

Խառն հոլովմամբ հատուկ անուններ

Աբիաթար, այ, ու
Աբիրոն, ի, աւ
Ագրաւադար, այ, ու
Ամոն, այ, ի, իակ
Ամոնի միշա -այ
Անանիա[ս], -նիայ, նիայի
Անգէ, -ի, -այ
Ասկաղոն, -ի, -յ, -է, -այ, -նեայ
Աբովմ, -ի, -այ

Բագու, -ի, -այ
Բասան, -ու, -այ
Բարիա, սեռ. -ա, -այի
Բեթզեհէմ, ի, -այ
Բեթորոն, -այ, -ի
Բիբէ, սեռ. բիբեայ, Բիբէի

Գարաա, բց. -այ, -աէ, գրծ. -աւ, սեռ. -այ
Գաբաթոն, բց. -է, -այ, ներգ. -ի
Գարեր, -ի, -այ
Գալիլեա, սեռ. -եայ, բց. -լէէ աեռ Գադաղ
Գեթսան, -ի (22 անգամ), -այ (1 անգամ)

Դաւիթ, թի (325 անգամ, Դաւթայ՝ 21 անգամ)
Դիսոն, այ, ի
Դինա, սեռ. Դինայ, Դինայի

Եզր, սեռ. Եզրի, Եզրայ
Ելամ, այ, ի
Ելիփազ, այ, ու
Ելոհի, -այ (տեղ), -նի (անձ)
Եղիաբ, այ, ու
Եսերոն, այ (12 անգամ), ի (5 անգամ)
Երեմիա, սեռ. -իայ (3 անգամ), -իայի (9 անգամ)
Երիփով, -(10 անգամ), այ (4 անգամ)
Եփրատ, այ (13 անգամ), ու (3 անգամ)
Եփրեմ, այ (43 անգամ), ի (64 անգամ)
Եփրոն, ի (4 անգամ), այ (1 անգամ), յԵփրոնէ (3 անգամ)

Թարսիս — Թարշիշ, սսի, սսայ, շշի, շշայ

Թովդա, յ, յի

Իսաքար, այ, ու

Լաբան, այ, ու
Լոբնա, յ, այի

Մայդան, այ, ու

Կայիափա, յ, այի
Կանա, յ, այի
Կեդրոն, ի, այ
Կենէզ, ի, եայ, այ

Հռափայէլ, ելայ (Տովբ. Գ. 24), Հռափայելի (Ը. 2)

Մակաբէ, բեայ, բէի
Միքա, քայ, քայի
Միքիա, քիայ, քայի քեայ, քէի
Մովաբ, այ (32), ու (61 անգամ)

Յակոբ, այ (163), ու (16)
Յասոն, -նեայ, եաւ, բց. ի Յասոնէ
Յասոնի, սեռ. -իայ, բց. -ի -այ,
Յեբոբովամ, այ, ու
Յովաբ, այ, ու
Յովէլ, այ (3), ի (3)
Յովհաննէս, ննայ (1), ննու (34)
Յովնաթան, այ (8), ու (34)
Յովսափատ, ու (6), այ (13)

Յովսէփ, ու (22), այ (66)
Յորդանան, ու (89), Յորդանանաւ (3), ի է (9)
Յուդա, այ (460), Յուդայի 27, դՅուդայէ 3, Յուդայիւ (2), անորոշ է ի Յուդայ (օր. Ծն. ԽԲ. 10 մի պակասեսցէ իշխան ի Յուդայ), որ կարող էր նշանակել թէ Յուդայից և Յուդայում. բայց իհարկե բացառական է. ներգոյական լինելու դեպքում պիտի ասէին՝ ի Յուդայի կամ ի Յուդա
Նաաս, այ, ու
Նաբազ, այ, ու, աւ
Նեփթափիմ, դիմայ, դեմի

Ոզիէլ, ելայ, էլի, ելեայ
Ոմէէ, սէի, սեայ

Պադոմէոս, ի, մեայ

Ռաքէլ, էլի, էլայ

Սալպաադա, դայ, դոս
Սաղա, յ, այի
Սաւուղ, այ (113), ի (1)։

Մեպփովրա, յ, այի
Մերա, յ, յի
Միգոն, ի (8), այ (1), աւ (1), իէ (3)
Մինա, յ, յի, նեայ
Միսարա, յ, յի
Սամսոռնի, ի, այ
Սուրա, յ, յի
Ստեփաննոս, ի, աննայ
Տիմոթէոս, թէայ, թևիս, ի-թէէ, թէոսի
Փարէս, եաի, եասյ
Փիլիպպոս, սի, պեայ
Փուա, յ, յի
Քեղոնի, այ, ի
Քոռաթ, ու, այ

85 հատ

Երբ մի ակնարկ գցենք այս ցանկի վրա, կտեսնենք, որ հատուկ անունների մեծագույն մասը պատկանում է ա հոլովման (բոլորը 1083 հատ), երկրորդ տեղը բռնում են ի հոլովման հետևող բառերը (ընդամենը 183 հատ), երրորդ տեղը բռնում են ու հոլովման հետևող բառերը (միմիայն 34 հատ). ի–Ա հոլովման հետևող բառեր, եթե կան, չգիտենք, որովհետև հատուկ անունները հոգնակի չունենալով, չենք կարող իմանալ թե հոգնակի սեռ. բց. գրծ. ինչ պիտի լինեին՝ կըն եզ. գրծ. աւ ձևով անուններ, որոնց դրությունը անորոշ է. եթե նրանց եզ. սեռ. ձևը լինում է այ, ուրեմն պատկանում են ա հոլովման. իսկ եթե նրանց եզ. սեռ. ձևը հայտնի չէ, մենք չգիտենք, թե ա՞ հոլովման են պատկանում, թե ի–Ա հոլովման:

Այս կարգի բացառիկ բառերը դրել եմ փակագծի մեջ, գրծ. ձևի հետ:

Ինչպես տեսնում ենք, ո հոլովման հետևող օրինակ չկամ բոլոր Գրքում բացի ճայ, ճայոց (Տոբ. ա. 24) բառից, գտել եմ միայն մի հատուկ անուն, որ ունի ոյ վերջավորություն. այդ է Ովնոյ, որի եզ. ուղ. ձևը Համաթարրաթը գնում է Ովնի, «եկ և ժողովեցուք ի միասին ի գեղ մի ի դաշտին Ովնոյ» (Նեեմի Զ. 2). սրա դեմ հույնը ունի ἐν πεδίῳ Ὠνώ (տես Tischendorf-ի հրատ., Lipsiae, 1869, 1-ին, էջ 618), որից երևում է, որ Ովնոյ ոչ թե ուղ. Ովնի ձևի սեռականն է, այլ ինքն է հենց ուղ. բառաձևը:

Ամենից ավելի հետաքրքրականն են խառն հոլովումները, որոնց թիվը է 85:

Հայերեն բառերի հոլովումը ուսումնասիրելու համար երեք պատրաստի աղբյուր ունենք: Առաջինն է նոր Հայկազյան բա-

ռարանը, որ մեր հին մատենագրության լիակատար գանձարանն է, ուր մթերված են մեր բոլոր բառերը՝ աղբյուրների հիշատակությամբ և զանազան վկայություններով: Բառարանը յուրաքանչյուր բառի մոտ՝ նշանակում է նաև նրա հոլովական ձևը: Բայց այս ցուցմունքները միշտ վստահելի չեն: Վստահելի են միայն այն ձևերը, որոնք վկայություններով էլ հաստատվում են: Բառարանի նպատակն էր տալ ամեն մի բառի հոլովական ձևը, որովհետև գրաբարը այն ժամանակ գրավոր լեզու լինելով՝ գրողները գրաբար շարադրության մեջ հաճախ պետք ունեին իմանալու այս կամ այն բառի հոլովումը: Բառարանը լրացնում էր այս կարիքը՝ ենթագրելով, թե հոլովումը այս կամ այն ձևով եղած պիտի լիներ: Այս ենթագրությունները բնականաբար մեր նպատակի համար միշտ առաջնորդ չեն կարող լինել, ուստի մենք վերցնում ենք միայն այն հոլովաձևերը, որոնք վկայությամբ էլ հաստատվում են:

Երկրորդ, ավելի վստահելի աղբյուրն է Երուսաղեմի հայմատրբառը, որ տալիս է մեզ ամբողջ ս. Գրքի բառերը՝ իրենց բոլոր վկայություններով, որոնց մեջ երևում են հոլովական բոլոր ձևերը մի առ մի:

Երրորդ աղբյուրն է իմ Արմատական բառարանը, ուր հավաքել եմ նախորդ երկու աշխատությունների արդյունքները՝ ավելացնելով նրանց վրա նոր լուսաբանություններ, որ հավաքել եմ իմ երկարամյա ընթերցումների ժամանակ:

Նախորդ էջերով տվել եմ յուրաքանչյուր հոլովման հետևող բառերի ցուցակը:

Ցուցակը կազմված է հետևյալ ձևերով.

1) Հիշում եմ այն բոլոր արմատական բառերը, որոնց հոլովումը հայտնի է մեզ մեսրոպյան շրջանի գրականությունից:

2) Այն բառերը, որոնց հոլովումը մեզ հայտնի է մասամբ միայն (օր. եզ. սեռ. -ի և ուրիշ ոչինչ). այդ ձևով էլ հիշում եմ:

3) Եթե բառը մեսրոպյան շրջանից չէ և կամ եթե բառը այդ շրջանից է, սակայն նրա հոլովումը հետին է, դնում եմ փակագծի մեջ:

4) Այն բառերը, որոնք կազմված են -ելի, -իչ, -ող, -ութիւն, -ումն, -ական, -աւոր և այլն մասնիկներով, ամենևին չեն հիշատակվում այստեղ, քանի որում այդ մասնիկների հոլովումը միշտ միանձև և արդեն հայտնի է:

5) Նախամասնիկներով (ան, համ, ամենա, ընդ և այլն) կազմված բառերը, որոնց մեսրոպյան շրջանի հոլովումը հայտնի է մեզ, հիշատակվում են այստեղ։

6) Բարդ բառերը նմանապես, եթե նրանց հոլովումը հայտնի է մեզ այդ շրջանից, հիշատակվում են այստեղ։

7) Ուշ ժամանակի փոխառյալ բառերը (արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն, լատիներեն) բոլորովին վտարված են մեր ցուցակից։

8) Վտարված են նաև Երեմիա Մեղրեցու, Քաջունու և նման հեղինակների հիշատակած անվավեր բառերը, նույնիսկ Նորայրի և ուրիշների հավաքած մի քին հայկերեն բառերը, որոնք հիշատակված են իմ Արմատական բառարանում։

9) Ավելորդ է ասել, թե առնում եմ միայն բառերի մեսրոպյան շրջանի հոլովումը, իսկ եթե բառը բացի այդ շրջանի հոլովումից ունի նաև հետին հոլովական մի ձև, այս վերջինը չեմ հիշում. օր., ազատ ի-ա հլ. (բայց չեմ դնում հետնարար՝ ի հլ.)։

Թեև Նոր Հայկազյան բառարանը մեր լավագույն աղբյուրներից մեկն է, բայց ունի ինչ-ինչ քննադատելի կետեր։

Երբ որևէ բառի հոլովումը ավանդված չէ մատենագրության մեջ, ուրեմն և հայտնի չէ, շատ անգամ ՆՀԲ ինքն է հնարում մի ձև և դնում է։ Օր., գնուձ բառի հոլովումը նշանակում է գնձոյ կամ գնձի. բայց իր հիշատակած 15 հին ու նոր վկայությանց մեջ ոչ մի անգամ հոլովյալ ձև չկա։

Գուգազ «անկանոն գործի ամբոխ». մի անգամ գործածված բառ է Բուզ. գ. 7, 8, հոլովված չէ. բայց ՆՀԲ դնում է ի-ա հլ։

Թաղիար «մի տեսակ կանացի գլխարկ». մի անգամ գործածված է Ոսկ. Եփես. Ի. «Մի ծամակալս ի ծամս, մի գեռակալս, և մի թաղիարս ի գլուխս» (Հունարեն բնագրում չկա)։ Հոլովված ձևով չէ. իսկ ՆՀԲ դնում է ի-ա հլ։

Թոժիւն «արջի ձագ» բառը միայն մի անգամ է գործածված (Եզն. 69) հյց. ձևով. իսկ ՆՀԲ դնում է սեռ. ի, ից, մինչդեռ -իւն վերջավորության համաձայն պիտի լիներ թոժեան, ինչպես կորիւն—կորեան

Կաճոյր «սափոր». մի անգամ գործածված է Բուզ. էջ 170. ուրիշ տեղ չկա. ՆՀԲ դնում է ի-ա հլ.։ Եւ կարելի չէ ասել, թե ՆՀԲ ուրիշ որևէ մեզ անծանոթ վկայություն էլ ունեցած լինի

իր ձեռքի տակ, որովհետև այդ թանկագին օրինակը տեղով և վկայությամբ անշուշտ պիտի հիշեր։

Կանաչ-ի դեմ դնում է ի կամ ո հլ. և տալիս է 10 օրինակ, որոնցից ոչ մեկի մեջ հոլովյալ ձև չկա. ուրեմն ՆՀԲ-ի ասած «ի կամ ո» նշանակում է, թե երկուսն էլ կեզծ են։

Ճառագայթ բառի հոլովումը ՆՀԲ նշանակում է ճշտիվ ի, ից. գրված են նաև վկայություններ, թե ս. Գրքից և թե հետին. բայց ս. Գրքի վկայությանց մեջ չկա ի, ից հոլովյալ ձևը, այլ միայն հետին օրինակների մեջ. մինչդեռ Համաբարբառը տալիս է 3 վկայություն -ից հոլովմանով։

Գանձագ բառի դեմ դնում է ի-ա հլ., բայց իր տված գանձան վկայությանց մեջ հոլովված ձև չկա. Համաբարբառն էլ չունի. այժմ գտնում եմ Գ. Թագ. գ. 9 պահանգօք ձևը, որով ապացուցվում է նույն բառի հոլովումը։

Ուրիշ անգամ ՆՀԲ տալիս է ճիշտ հոլովումը, գնում է վկայություններ այդ հոլովմամբ, բայց վկայությունները հետին են և հայտնի չի լինում, թե մեսրոպյան շրջանում հոլովումը ինչպես էր։

Օր. ինձ գազանի անվան դեմ գրված է ընձու, ընձուց. այդ շատ ճիշտ է. այնուհետև գրված է 8 վկայություն, որոնցից 6 մեսրոպյան շրջանի վկայությանց մեջ ինձ գրված է ուղ.-հյց. հոլովով, մյուս 2 վկայությանց մեջ (Ծար. Ա. Ի և Աճազգ. Ե) գրված է հոլովյալ ձևով ընձու, ընձուց։ Սակայն, երբ բաց ենք անում Համաբարբառը, տեսնում ենք այնտեղ 6 վկայություն ս. Գրքից, որոնցից երկուսը հոլովված է (ընձու, ընձուց)։

Մի ուրիշ անհարմարություն, որ գտնում ենք ՆՀԲ-ի մեջ հոլովման մասին, այն է, որ հաճախ նա հիշում է հոլովումը, բայց վկայությամբ չի հաստատում. այնպես որ ընթերցողը չգիտե, թե տրված հոլովումը ՆՀԲ-ի հնարածն է (ինչպես լինում է շատ անգամ), թե իրապես գոյություն ունի։ Օր. բրմբուկ բառի կողքին հիշում է «բիկ -կաց» (ի-ա հլ.), թեև 20 տող բացատրություններ է տալիս, բայց ոչ մի անգամ չի գնում սեռ. բմբկաց կամ գրծ. բմբկաւ ձևով մի վկայություն հին մատենագրություններից, մինչդեռ Համաբարբառում 13 վկայություն կա ի-ա հոլովմամբ։

Երբեմն էլ վկայությունների թիվը անբավարար է հոլովման մասին կարծիք կազմելու համար։ Օր., խաղող սովորական բառը լինում է սեռ. խաղողոյ, որի համար Համաբարբառը ունի

7 օրինակ։ Սրանց դեմ հոգնակին պիտի լիներ խաղողից, բայց ՆՀԲ ունի սրա փոխարեն խաղողաց կոչ. Բ. (միայն մի վկայություն), պետք չէ՞ կարծել, թե այս բառի մեջ ա սխալագրություն է։ Սուտման համար պետք ունենք նոր վկայության։

Այս բոլոր անորոշ կամ կասկածելի երևույթները ի նկատի ունենալով, որոշեցի չհետևել ՆՀԲ-ի տված հոլովական ձևերին։ Ավելի լավ համարեցի հոլովական օրենքները գտնելու համար ունենալ փոքրաթիվ, բայց հաստատուն կռվան, քան խախուտ և անվստահելի բազմություն։ Ուստի, 1) հետևեցի մի կողմից ՆՀԲ-ի մեջ բերած վկայություններին, 2) համաբարբառի օրինակներին, և 3) իմ ընթերցումների ժամանակ գտած օրինակներին։ Եթե ձեռքի տակ ունենայի Վիեննայի Մխիթարյանց կազմած մեծ բոլյան շրջանի գրականության համաբարբառը, կամ Նորայրի կազմած նմանօրինակ բառարանը, ամեն ինչ վճռական և վերջնական կլիներ. բայց ես չունեցա և այլևս չեմ ունենա այդ բարձրավորությունը։

Կարելի է ասել, թե Վիեննայում կազմված նոր Հայկազյան բառարանի ձեռագիր բնագիրն էլ, որ 12 հատորից էր կազմված, իր վկայությունների շատ մեծ քանակությամբ կարող էր այս ծառայությունը մատուցանել, բայց հայ ազգը չկարողացավ տպագրել այդ վառահեղ գիրքը և մենք զրկված մնացինք դրա տալիք օգուտներից։ Կարելի է ասել նաև, թե երբ ՆՀԲ-ի հեղինակները այս կամ այն բառի դեմ դնում են զանազան հոլովաձևեր, որոնք չեն հաստատվում մեջ բերված վկայություններով, հանված են այն 12 հատոր բառարանի վկայություններից։

Զանազան բառերի հոլովումը ևս կարողացել եմ ճշտել և հաստատել իմ ընթերցումների միջոցով։ Օրինակ՝ մեղրապող բառի դեմ ՆՀԲ գնում է «ի կամ ոյ» հոլովաձևերը. հետևում են երկու վկայություն միայն, որոնց մեջ այդ բառը միայն հյգ. հոլովով է. բայց ես գտել եմ ՄԾԲ. էջ 240 գրծ. մեղրապողի-ն, որով ի հոլովումը հաստատվում է։ Այս կարգի դեպքերը հիշված են իմ Արմ. բառարանի մեջ, որին և հետևում եմ այստեղ, բայց առանց աղբյուրը հիշելու։ Ընթերցողը այսպիսի դեպքերում կարող է դիմել Արմ. բառարանին։ Նմանապես յարդ «գարման» բառի համար ՆՀԲ գնում է ի հլ., բայց օրինակ չի տալիս. համաբարբառն էլ ունի 16 վկայություն, բայց ոչ մեկը հոլովյալ է։ Իմ Արմ. բառարանում նշանակում եմ ի հլ. և գնում եմ յարդից (կոչ. 116) ձևը։

Այսպես ուրեմն, իմ ընթերցումների ժամանակ հին մատենագրությունից հավաքած հոլովաձևերը հիշված լինելով Արմատական բառարանում, ուր նշանակված են նաև աղբյուրները, դրանք (աղբյուրների ցուցումը) այստեղ ցուցակիս մեջ կրկնել ավելորդ համարեցի։ Ընթերցողը կարող է դիմել Արմ. բառարանին։ Օր., քոշ «արու այծ» բառի դեմ ՆՀԲ գնում է ի հլ. վկայությունների մեջ չկա դրա համար օրինակ. հիշվում է միայն գանձարանից քոշից ձևը քոշ ճգնավորների համար։ Գանձարանը շատ հետին գործ է և անվստահելի. ես գտել եմ քոշից ձևը Ոսկ. մաթ. Ա. էջ 192 (բց. ի քոշից), որ հիշում եմ Արմ. բառարանում քոշ բառի տակ, իսկ այս ցանկում գնում եմ միայն «քոշ» ի հլ.։

Հատուկ անունների համար ունենք երեք հավաքածո. առաջինն է Համաբարբառը, որ պարունակում է ս. Գրքի բոլոր հատուկ անունները՝ անձնական թե տեղական։ Սրանց ամենամեծ մասը բնականաբար եբրայական է, կան և սակավաթիվ հունական անուններ (կա նաև մի հյ. անուն՝ Վահագն, որ հայ Թարգմանչի հավելվածն է)։

Երկրորդն է իմ «Հայոց անձնանունների բառարանը» 5 հատոր, ուր հավաքված են Հայոց կրած անունները՝ բնիկ թե փոխառյալ, իրենց հոլովմամբ և մանրամասն վիճակագրությամբ։

Երրորդն է Հայոց տեղանունների բառարանը, որ մասամբ միայն արված է և աչքերիս ծայրահեղ տկարության պատճառով կիսատ մնաց։

Նախ և առաջ նկատենք, որ ս. Գրքում (որից և Համաբարբառում) չափազանց շատ են հատուկ անունների գրչության սխալները. եբրայական բնագրի և հույն Թարգմանության ձևերի մեջ անվերջ զանազանություններ կան. հայերեն Թարգմանությունն էլ, որ անշուշտ հետևած է հունական այս ինչ օրինակին, տարբերվում է հաճախ հունարենի մյուս օրինակներից և ավելի ևս եբրայականից։ Բայց ավելի վատ է այն հանգամանքը, որ հայերենը նույնիսկ իր մեջ միօրինակ չէ և այս ինչ ընթերցվածը այն ինչ ընթերցվածի հետ նույն չէ։ Շատ չատերից մի օրինակ հիշելու համար մեջ բերենք հետևյալը.

Ամովս, Ա. 14, կարդում ենք. «ի վերայ պարապացն Հռաբայ», որի հետ նույն է Ամովս գ. 2 «ի մեծն եմաթ Հռաբայ»։ Իսկ Ա. Մակաբ. Ի 1, կարդում ենք «Նատան շուրջ զՀռաբաթաւն»։ Այս բոլորը նույն են. բայց ո՞րն է ճիշտը. Հունարենը առաջին օրինակում ունի «ῥαββάθ (այլ ձեռ. ῥαββά), երկրորդ օրինակում ունի Ἐμαὶῥαββά (այլ ձեռ. αιμαθραββά), երրորդ օրինակում ունի ῥαββά (այլ ձեռ. ῥαββαθ)։ Պարզ է, որ ուղիղը պիտի լինի Հռաբաթ։ Համաբարբառն առաջին երկու օրինակի համար դնում է՝ Հռաբա, իսկ վերջինի՝ Հռաբաթ. երկու տարբեր ձև՝ միևնույն բառի համար։ Բայց մենք չէինք կարող այսպիսի քննություններ վրա ժամանակ վատնել, ուստի պահեցինք այն, ինչ որ տալիս է Համաբարբառը՝ սխալ թե ուղիղ։

* * *

Պետք չէ կարծել, թե մեր ամբողջ մատենագրության շրջանում մեր հոլովումները կատարյալ միօրինակ ձևով են ավանդված. ընդհակառակը, հաճախ պատահում ենք մեծամեծ տարբերությունների. ահա քանիցիկ մի ցանկ։

Ա ր ջ

Արջ բառը 3 ձևով է հոլովված (ոյ, ու, ի), հնագույն ձևն է ոյ։

Որպես առիւծուն և արջոյ և այլոցն. Եզն. 65։

Եւ այլ ոք զարջոյ թոժիւն անուցեալ՝ կաքաւիչս ուսուցանէ. Եզն. 69։

Եւ արջոյ՝ յատաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ. Եզն. 175։

Այնուհետև առացել է ու հոլովմունք։

Ի վերայ արջուցն և առիւծուցն. Ագաթ։

Եւ գազանն զոր տեսանի նման բնաւ։ Եւ ուտ նորա իբրև զարջու. Յայտ. ԺԳ. 2։

Ամենաուշը առացել է ի հոլովումը։

Մանկունքն յարջիցն սառակին. Մագ. ԺԵ։— Առաջին հնագույն ձևը (ոյ) համապատասխանում է հն. ἄρκτος, երկրորդը՝ (ու) կազմված է համաձայն այն օրինքի, որի համաձայն ե պրից սկսած՝ անասունների անունները հետևում են ու հոլովման

(ապուեաու, ընձու, կովու, հաւու, առիւծու, ուղտու, կաքաւու)։ Իսկ վերջինը՝ (ի) արդեն աշխարհաբարի հոլովմունքն է։

Գատ, ի հ. (սեռ, գատու եփր. Համաբ. 163)։

Զարդ, ու հ. (գրծ. զարդիւք Ագաթ. տես ՆՀԲ)։

Սակ, ու հ. (գրծ. ծակօք Եւս պատմ. գ. 38)։

Մանօթ, ի հ. (բց. ի ծանրթոցն Ոսկ. Ես. տես ՆՀԲ)։

Կամք, ի-ա հ. (բայց՝ ո հ. են ցույց են տալիս Ոսկ. Ես. 419։ կամով, Ագ. ՃՁԴ 19 կամովք)։

կաւ, ոյ հ. (բայց Ոսկ. յհ. Բ. 9 կաւու)։

հանդերձ, ի հ. (բայց Դևտ. ժա. 32 բստ Համաբ. ի հանդերձոյ, իսկ ըստ հրտ. Պլ. 1895 ի հանդերձէ. ամբողջ հատվածը այսպես է. «յամենայն պատուղէն անօթոյ կամ ի հանդերձէ կամ ի մաշիկ կամ ի քրձէ». պարզ է, որ առաջին բացառականը (անօթոյ) ազդել է երկրորդի վրա (ի հանդերձէ) և դարձրել ի հանդերձոյ, որ սխալ է։ Սակայն ըստ քննության Նորայրի (Կորիւն վրդ. էջ 262) ո հ. գանում ենք նաև հետևյալ տեղերը. Ագաթ. էջ 571 հանդերձով, Բուզ. Ե. 6, գ. 4 (երիցս) հանդերձոյ։

Հասարակ, ի-ա հ. բայց Ա. մկ. ժ. 30 հասարակուց, որի դեմ այլ ձե. հասարակաց։

Հարկ բառը իր բոլոր իմաստներով հետևում է ի-ա հ., որից էլ հարկաւ մակբայն է. Միայն Եւս. պատմ. ունի «հարկին ոսկւոյ և արծաթոյ» (ՆՀԲ). պետք է կարծել, թե այստեղ ի հ. յետին է, ըստ որում հետին հայերենում հարկ հետևում է թե ի-ա և թե ի հոլովման։

Սեռն հոլովվում է եզ. ն հ. հգ. ի-ա հ. բացառաբար՝ ձեռամբք գատ. է. 20, ձեռովք բ. Մաց. գ. 4։

Մանի, ո հ. բայց կա մանիւ եփր. գ.-տ. էջ 329, 330։

Ուղտ, ու հ. պատահաբար կա վեցօր. 158 սեռ. ուղտոց, որ ուղղելի է ուղտուց։

Պատերազմ բառը պատկանում է ի-ա հոլովման. Համաբարբառը իր մեջ բերած հարյուրավոր վկայությունից մեջ ունի 26 անգամ պատերազմաւ, 10 պատերազմաց, 1 ի պատերազմաց, ընդամենը 37 օրինակ, ուստի պատահական սխալագրություններ են սեռ. պատերազմից, գրծ. պատերազմով՝ Եփր. աւետ. էջ 332—3, 343։

Պատուհան, ի հ. բայց գ. Թագ. գ. 9 գանում ենք գրծ. պատուհանօք *(այսպես ունի Համաբարբառը, որին հետևելով*

նույնը հիշել եմ եւ էլ Աբմ. Բառարանում պատուհան բառ տակ. բայց սխալ է։ Համաբարբառը վրիպակով կարդացել է պատուհանիօք, մինչդեռ ս. Գրքի Պլ. 1895 թ. հրատարակությունը ունի նույն հատվածում պահանգօք։

Պորտ, ո հլ. բայց Ծոբ. խ. 11 գրծ. պորտիս։

Սան «կաթսայ», ի հլ. բայց Նարպիւտ Բ. Ես. լե. 13 ունի հգ. գրծ. սանուք, որ կարելի է ուղղել սանիք։

Սով հետևում է ո հլ. բայց Ծն. խա, 31 Երեմ. լը. 9 ունենք՝ սովու, ուղղել՝ սովոյ։

Եւս. պատ. էջ 155 սովի նկարագրության մեջ կա մի անգամ սովոյն, մի անգամ սովուն և մի՝ անգամ էլ ի սովի, որ ցույց է տալիս, թե տրականն է սովոյ։

Ստոյգ, ի-ա հլ. բայց մակրայն է ստուգիւ։

Վանիք, ի-ա հլ. բայց Բուզ. Ե. 27, վանիւք։

Գայլ, ո հլ. բայց հետևարար դարձել է ու. պատճառն այն է, որ, ինչպես գիտենք, կենդանիների անուններից շատ հետևում է ու հլ.։ Զարմանալի է այս բառի երկրորդ խմաստը՝ գայլ «բերանակապ», որ անշուշտ նույն բառն է, քան որում հնդեվրոպ. թե «գայլ կենդանին», և թե «առնձ»։ Նշի առաջինի համար դնում է ո հլ., երկրորդի համար՝ ի հլ. բայց մեջ բերված օրինակների մեջ ոչ մի վկայություն չկա ի հոլովմամբ. ս. Գրքի բոլոր օրինակներն էլ անհոլով են. պարզ է, որ ի հոլովումը Նշի-ի հնարածն է։

Էշ բառն էլ ընդհանրապես հետևում է ո հլ. (ս. Գրքում ունենք 39 անգամ իշոյ, իշոց, իշով), Նշի հիշում է մի անգամ իշու եփր. եվ. և մի անգամ էլ Զաք. ԺԴ. 15 իշուց, իրը տարբեր ընթերցված։ Կարծում եմ, որ այս երկրորդ ձևը հետո է շինված, իրը անասունի անուն։

Զարմանալի է պահ բառը երկու տեսակետից. նախ այն, որ պահ նշանակելով «հերթական ժամ» հետևում է ու հոլովման (պահու, պահուց), իսկ նշանակելով «ուտելիքի մեջ ժուժկալություն», հետևում է ո հոլովման (պահք, պահոց)։ Երկրորդ այն՝ որ այս պահիք բառը հետևելով ո հոլովման, գրծ. պիտի լիներ պահովք, ինչպես որ իրոք էլ գտնում ենք Եփր. համար, 192 և Մաթ։ ԺԷ. 20, սակայն սրանց դեմ Համաբարբառը հանում է 8 անգամ պահօք ձևը։

Կան բառեր, որոնք մեսրոպյան շրջանում հետևել են ո հոլովման, իսկ հետագայում նաև ի, ի-ա հոլովման, այսպես օր.

Ամուլ, ամլոյ,	հետագայում	ի-ա
աղբ, աղբոյ	»	ի
բանջար, բանջարոյ	»	ի, ի-ա
բեհեզ, բեհեզոյ	»	ի-ա
բերան, բերանոյ	»	ի-ա (որ նաև 3 անգամ ս. Գրք. Ագ. ՄԲ. 14, իէ 36, Առակ. ԺԱ. 11 երեքն էլ բերաւնօք, որ պետք է ուղղել բերաւնովք)։
Բլուր, բլրոյ,	հետևաբար ի, նաև ր հլ. (բլիր-բլերբ)	
բողբոջ, բողբոջոյ	հետև.	ի, ի-ա
բողոք, բողոքոյ	»	հգ. սեռ. բողոքաց
գետ, գետոյ	»	ի-ա
գերան, գերանոյ	»	ի հլ.
գէս, գիսոյ	»	ու, ի-ս հլ.
գին, գնոյ	»	նաև՝ ի հլ.
երկաթ, երկաթոյ	»	նաև՝ ի-ա հլ։
խաղ, խաղոյ	»	նաև ու, ի

Ասաո հոլովում ունեն՝

երինջ, ո, ու, երկուսն էլ ս. Գրքում.
երկիւղած, ի, ի-ա, ո (տես Նշի և Համաբ.)։

Կող, ընդհանրապես ի հլ. բայց Բ. Թագ. ՃԷ. 13 կողաց, Ագիկ. լա. 21 կողամբք, հետևաբար էլ ո հլ.— նախավերջին ձևը, ինչպես նաև Զքր. կԹ. կողուցս՝ ենթադրում է անգային կողն ձևը։

Քիւ, քիչ գործածված բառ է. ի-ա հոլովմամբ ունենք գրծ. քուաւ կոչ. 280, իսկ ո հլ. սեռ. քուոց, Վեցօր. 97։

Ասաո հոլովում ունի գիծ բառը, որ հոլովվում է ի, ի-ա, ո հլ. բոլորն էլ հետևաբար։

Գրաւ բառը հնապես ուներ ի-ա հլ., հետևաբար դարձավ նաև ի, ու հլ.։

Ասաո հոլովում ունի երամ բառը, այն է՝ ի, ի-ա, ո հլ. բոլորն էլ հետևաբար. մեսրոպյան շրջանի հոլովումը պիտի լիներ ի-ա։

Նման խաո հոլովումներ են ներկայացնում։

երաշտ, ի, ո, ու երաստ, ի, ու	} հետևաբար։

Թագ, ի-ա հլ. հետևաբար՝ ի, ո հլ.։

Ո հոլովման պատկանող սխալների մի մասը վերագրում եմ գրչության. օր., գետին բառը ընդհանրապես հոլովվում է գետնոյ ձևով, ուստի գրծ. գետնովք. իսկ Ագաթանգեղոսի մատ. ունենք գետնօք (այն է՝ գետնաւք), որ գետնովք ձևի սխալագրությունն է:

Այսպես է նաև գլուխ, ո հլ. որից գրծ. գլխօք Գ. Թագ. բ. 1, որ պետք է ուղղել գլխովք:

Շատ ավելի բացորոշ մի օրինակ է գործակից բառը, որ՝ ինչպես ուրիշ -կից բառով բարդված բառեր (օր., բարձակից, բնակից, գերեկից և այլն) պատկանում է ի-ա հոլովման: Բայց այս համաբարբառը տալիս է բացառիկ մի ձև: Այլովք գործակցովք իմովք (Փիլիպ. Դ. 3): Բայց ենք անում Պոլսի 1895 թվի հրատ. ցօք իմովք»: Պարզ է, որ երկու կողմի բառերի -ովք վերջավորությունը ազդել է նաև գործակցաւք ձևի վրա և դարձրել -ովք:

Սրա նման է թև, որ հետևում է ո հլ., ուստի հգ. գրծ. լինում է թև-ովք, ինչպես գտնում ենք 4 անգամ ս. Գրքում, բայց 2 անգամ էլ (Ղևտ. ա. 16 Հռութ Բ. 12) լինում է թևօք, որ՝ ինչպես կարծում եմ, թևովք ձևի սխալագրությունն է:

Լոկ բառը հետևում է ո հլ. ըստ այսմ կոչ. 106 լինում է հգ. գրծ. լոկովք, բայց նույն գրքում, էջ 56, կարդում ենք լոկօք:

Խունկ բառը ունի ո հլ., որով հգ. գրծ. լինում է խնկով, ինչպես գտնում ենք Ծն. Լէ 25, Ա Թգ. Գ. 14. բ. Մաց. ժզ. 14, Սղ. կե. 15, Յհ. ժԲ. 40. միայն ըստ Համաբարբառի երգ գ. 14 և Ե. 1, ունեն խնկօք, որ պետք է ուղղել խնկով, վերջինը (Ե. 1) արդեն ս. Գր. Պոլսի 1895 թ. հրատ. ունի ճշտիվ, խնկով:

Ծառ բառը ունի ո հլ. հգ. գրծ. լինում է ծառով, ինչպես ունի Յոբ. Ի. 16, ուրեմն երգ գ. 14 ծառօք ձևը սխալ է և պետք է ուղղել ծառով:

Ծեփ հետևում է ո հլ. ինչպես ցույց է տալիս Միքիա, է. 11 (օր., ծեփոյ ապիւսոյ), իսկ վեցօր. ը. «մոմակերա ծեփօք» պետք է ուղղել՝ ծեփով:

Կնիք հետևում է ո հլ., ուստի գրծ. կնքով, հգ. կնքովք. իսկ Ծոր. Ի. 6 ունի կնքօք, պետք է ուղղել կնքովք:

Ընդհակառակը ցաւ ունի ի-ա, ու հլ. ուստի հգ. գրծ. պիտի լինի ցաւուք, ցաւօք, ինչպես ունի Համաբարբառը 8 անգամ. բայց սրանց դեմ Սղ. ճգ. 23 և Ես. խր. 10 ունեն ցա-

ովք. Պոլսի 1895 թ. հրատարակության մեջ վերջինը ուղղված է ցաւօք, ինչում է առաջինը, որ նույնպես պետք է ուղղել ցաւօք կամ ավելի լավ՝ ցաւուք:

Ունչ «քիթ» բառը պետք է որ պատկանի ի-ա հլ., ինչպես ցույց է տալիս յրնչաց քերել «ծաղրել» ոճը (Ագաթ. Բուզ. եզն.), ուստի ճիշտ է «Ոչ էր արարեալ զընչօք իւրովք «քեխերը չէր հարթարել» (Բ. Թագ. ԻԹ. 24) և սխալ է նէՒ, որ ոճը գնում է «զրնչովք առնել» ձևով:

Սեամ բառը (անեզականն) հետևում է ո հլ., Համաբարբառը ունի 5 անգամ սեմոց և մի անգամ էլ սեմովքն, ուստի սխալ է սեմօք (դատ. ԺԶ, 3. Ա. Թագ. Ե. 4, ինչպես և Եփր. գ-տ. 343, 345), որ պետք է ուղղել սեմովք:

Սեղան բառը ակնհայտ կերպով հետևում է ո հոլովման. Համաբարբառը ունի 171 անգամ սեղանոյ, ի սեղանոյ, 3 անգամ՝ սեղանոց, 21 անգամ՝ սեղանով, և մի անգամ էլ՝ սեղանովք, (Եզեկ. գ. 13), ուստի սխալ է սեղանօք (Եզեկ. գ. 5, Յուդթ. ժ. 10), որ ուղղելի է սեղանովք, ինչպես ուղղված է Պլ. 1895 Եզեկ. գ. 5:

Սողուն, ինչպես ամեն -ուն մասնիկով կազմված բառ՝ հետևում է ո հլ. ուստի լինում է գրծ. սողնով, սխալ է Ովս. Բ. 18. սողնօք, որ պետք է ուղղել սողնովք:

Ցաւ բառը հետևում է ո հոլովման. Համաբարբառը ունի 25 օրինակ սեռ. ցաւոց և բց. ի ցաւոց ձևով. հգ. գործ. հոլովի համար ունենք 6 անգամ ցաւովք և 8 անգամ ցաւօք. սխալը գերազանցում է ուղիղից. ցաւօք ձևը այնքան շատ է գործածված, որ այսօր էլ՝ աշխարհաբարում ընդհանուր ընդունված է ցաւօք սրտի «դժբախտաբար» մակբայական ասությունը, որի համառոտ ձևը (ցաւօք) հրատարակ դցեց Մ. Աբեղյանը: Բայց թե ցաւօք ձևը գրչական սխալի և ապա բարեհնչյուն լինելու արդյունք է՝ հայտնի է նրանից, որ ի-ա ձևով ոչ մի հոլով (օր., ցաւաւ, ցաւաց) չկա նրանից:

Քահանայապետ բառը հետևում է ի հոլովման. Համաբարբառը ունի 24 անգամ քահանայապետից և 1 անգամ էլ քահանայապետիւ. բայց այս բոլորի դեմ հանում է մի անգամ էլ քահանայապետօք (Ագ. Եզր. Ը. 78), որ, իհարկե, պետք է ուղղել քահանայապետիւք:

Նախորդ օրինակները ցույց տվին, որ որոշ հոլովական ձևեր կարող են տառական վրիպակներից առաջացած լինել: Հատատատապես այսպիսի մի վրիպակ է օր. վեցօր ե հիշված վար-

սակայ ձևը՝ իբրև վարսակ բառի սեռականը, որ դնում է ՆՀԲ -այ ձևով սեռականը հատուկ է միայն հատուկ անուններին կամ մի քանի երբայական բառերին, ուստի չի կարող ներկա լինել այստեղ։ Անշուշտ պետք է ուղղել վարսակաց, քանի որ -այ վերջացող բառերի հոգնակին լինում է -ացւ։ Իսկ տպագիրը (էջ 88) ունի վարսակոյ։

Նմանապես ուր որ կա մի օրինակ -օք ձևով հգ. գրծ., եթե ուրիշ օրինակներով չի հաստատվում, կասկածելի է, և թերևս պետք է ուղղել -ովք, հմմտ. վարշամակապատ, տախտակամած և այլն։

Մինչև անգամ եղնիկը (էջ 121) ունի մի նմանօրինակ սխալ. երբեք զսահմանօքն եղելոք նոցա ոչ անցանեն։ -Եալ վերջավորող դերբայների ո հոլովումը այնքան հայտնի բան է, որ օրինակներ բերել ավելորդ է. համարձակ պետք է սրբագրել եղելովք. պարզ է, որ կողքին գտնված սահմանօք բառի վերջավորությունը պղտորել է գրչագրի միտքը, և նա մեքենայաբար օրինակել է եղելօք։

Կան բառեր, որոնք մեսրոպյան շրջանում հետևում են ի—ա հոլովման, իսկ հետագայում անցել են նաև ի հոլովման. այսինքն՝ եթե նախապես եղել են եզակիում սեռ. ի և հոգնակիում աց, հետագայում եղել են երբեմն ից, երբեմն ից. ուրիշ խոսքով հգ. սեռ. հոլովը եղել է տատանյալ դրության մեջ։ Այսպես են օր. ապատամբ, աղմուկ և այլն։

Բարդ բառերի հոլովման մեջ տարօրինակ է բց. ի մեծագրնոյ, որ գտնում ենք Սևբեր. գ. հետևյալ հատվածի մեջ (ըստ ՆՀԲ)։

Կոչի հայր մեծատուն, կոչի և որդի մեծատուն, մեծատուն ի մեծատնոյ։

Քիչ անգամ է պատահում, որ բարդության վերջին մասը բոլորովին փոխի իր հոլովական ձևը և ուրիշ ձև ստանա։ Այսպիսի բացառիկ ձևերից են՝

սկեսրայր, որի երկրորդ մասը (այր) փոխանակ լինելու առն, դառնում է այրի—սեռ. սկեսրայրի (Ա. Թագ. դ. 21)։

Սուտակն, որի երկրորդ մասը (ակն) փոխանակ լինելու յակաճեայ, դառնում է բց. ակէ, ի սուտակէ (Տովբ. ժգ. 21), ինչպես որ սեռականն էլ լինում է հետևաբար՝ սուտակի (Փիլ.)։

Ի-ա հոլովման հետևաբար ի դառնալուն տանք մի օրինակ էլ։

Աստուածապաշտ բառը ս. Գրքում հոլովված է հգ. աց.—դիւրթեայ և պատրաստեալ են ճանապարհք աստուածապաշտաց (Ես. ԽԶ. 7)։ Ագաթանգեղոսն ունի «յամենայն աստուածապաշտաց» և նգնիին էլ «աստուածապաշտաց պատահեաց»։— Իսկ Նարեկացին (պլ. խէ) այս բոլորի դեմ դնում է «աստուածապաշտից տանմանն» (սեռ ՆՀԲ)։

Ձիատ բառը ուներ ի-ա հլ., հետևաբար դարձավ ի, ո հլ. ատաջինը ի հատկանալի է, որովհետև հետևել է ընդհանրացման օրենքին. երկրորդը [ո], որ ինքնին հատկանալի չէ, անշուշտ պետք է բացատրել նիստ (սեռ. նստոյ) բառի հետևողությամբ։

Ա հոլովման հետևաբար ի դառնալու լավ օրինակներից մեկն է աչք բառը. սրա հոգնակին թեև միշտ գրվում է աչաց, բայց կա նաև աչից, այսպես Վրք. հց. ժգ, թեև ապված է «Աչք նորա նման է աչաց, Ալեքսիանոսին խմոյթ, բայց ըստ ՆՀԲ ձեռագիրն ունի աչից, ինչպես գործածված է նաև ուրիշ տեղերում։ Բայց ավելի կարևորն այն է, որ նույնիսկ վանա բարբառում մնում է աչիչ (վերջին ց դարձել է չ՝ նախորդ չ-ի նմանողությամբ), իսկ Սվեդիո բարբառում ասվում է իչուցս (այսքան «աչքիս լույսը, սիրելիս», ուր աչուց ծագում է աչաց ձևից՝ ա>ու ձայնափոխությամբ, որ սովորական է այս բարբառում։

Շատ խառն հոլովման է հետևում աչ բառը, որ բովանդակ ս. Գրքի մեջ գործածված է (ըստ Համարարարքի) հետևյալ ձևով. 33 անգամ աջոյ, 8 անգամ աջով, 5 անգամ աջու, 2 անգամ աջուց, 2 անգամ յաջում, 62 անգամ յաջմէ, հետևաբար սրանց հետ սկսում է գործածվել նաև ի հոլովումը, որ վերջ ի վերջո հաղթելով պիտի դառնար միակ ձևը։

Գրոշ բառը մեսրոպյան շրջանում պատկանում էր ու հոլովման. Դնգագին գրոշու գրոշու պատրաստությունն (Բ. մակ. ժԵ. 21), բայց այդ շրջանից անմիջապես հետո դառնում է ի հլ. Եպիշեն և Փարպեցին արդեն ունեն ի հլ. Գրոշից անգամ իւրաքանչիւր տեղեկանայր (Եղիշ.). Նշանք գրոշիցն զօրաւոր արանց (Փարպ.)։

Ձեռն, զեռնք նմանապես հետևում էր ու հլ. հետևաբար ստացավ նաև ի, ի-ա հլ.։

Ձօր բառը եզակիում հետևում է ու հլ. հոգնակիում՝ ի-ա հլ. (զօրու, զօրաց, չկա բնաւ՝ զօրի). բայց կա նաև հաճախ հգ. սեռ. զօրուց, մի անգամ եզ. գրծ. զօրաւ Դան. ժա. 13. այսպես՝

ըստ ՆՀԲ. բայց ս. Գրքի Պոլսի 1895 թ. տպագրության մեջ՝ զօրու մեծաւ։

Սեռական-տրական կազմելու օժանդակ է ջ, որ կցվում է ո ձայնավորի վրա կամ ղ, ր նայերի վրա։ Այսպես՝ միոյ-միոջ, կին-կնոջ, կղզւոյ-կղզւոջ, եկեղեցւոյ-եկեղեցւոջ, հունարան լեզվով՝ եզոյ-եզոջ և այլն։ Սրանից էլ բացառականի մեջ ի միջէ, ի կնոջէ, ներգոյականի ի կղզւոջ և այլն։ Աշխարհաբարում ավելի է ընդհանրացել այս մասնիկի գործածությունը և դարձել իգական ազգականական բառերի սեռականի նշան. ինչ. տալոջ, քրոջ, հարսրոջ. աներոջ. այստեղից անցել է արականներին՝ ինչ. աներոջ, տագրոջ, սիրոջ, ընկերոջ։

Նայ բաղաձայնների համար ունենք միայն գիւղ-գեղջ և իմ կարծիքով նաև ուր «որդի» բառից սեռ. ուրջ, որից ծնում է ուրջու «խորթ որդի», ինչպես կան հօրու «խորթ հայրը» և մօրու «խորթ մայրը» բառերը։

Նույն ջ մասնիկը գտնում ենք նաև տուրճեան, մշաճեան, վաղճուց, վաղճական բառերի մեջ, միացած ճ-ի հետ։

Անշուշտ, ինչպես շատ բաներում, նույնպես և հոլովման մեջ, մի բառի հոլովումը ազդած կարող է լինել մի ուրիշ բառի հոլովման վրա։ Երբ հունարան լեզվի հեղինակները հնարեցին եզ «մեկ» բառը, ճիշտ մի բառի նման հոլովեցին սեռ. եզոյ, բց. յեզոջէ (=մի, միոյ, ի միոջէ)։ Նմանապես՝ անասունների անունները սկսեցին ընդհանրացնել ու հոլովումը։

Սեռական-տրական կազմելու օժանդակ մասնիկ է -եան, որ կարող է կցվել բառին անմիջապես կամ ջ-ից հետո. այսպես՝ ժողովրդեան, գալստեան, փախստեան, քաքստեան, տուրճեան, մշաճեան, վաղուեան, վաղորդեան, առաւօտեան, երեկոյան, ամսեան (յամսեան) և այլն։ Ինչպես տեսնում ենք, սրանց մեծ մասը մակրայ է և ցույց է տալիս ժամանակ. հիշել հատկապես ամսեան, մյուսներն էլ կարող են նշանակել ժամանակը. ինչ. փախստեան. «փախչելու ժամանակը», թագստեան «թաքչելու ժամանակը», գալստեան «գալու ժամանակը», ասկայն ժողովրդեան ոչ մի կերպով չի կարող կապվել ժամանակի գաղափարի հետ։

Բնականաբար այս եան մասնիկը չի կարող նույնանալ -եան մասնիկի հետ, որ գտնում ենք -իւն վերջացող բառերի ծայրին. ինչ. արեան, անկեան, մեծութեան և այլն։

Առն հոլովման զարմանալի օրինակ է փոնոկ «կճեպ» բառը, որ միևնույն տեղում մեկ ի-ա, մեկ էլ ո հոլովմամբ է գործածված վկայօր. ե. «կէաք ի պաղոց մերկանգամ ի հանդերձից և ի փոնոկայ եփին արեգակամբ. իսկ ՁԷաք փոնոկովն առնուն գկերպարանս եփելոյնս։

Ո հոլովումը կարող է նաև հետնաբար գառնալ ու հլ. ինչ. դաւ, դաւոյ, հետն. նաև դաւու, խորդ, խորդոյ. հետն. նաև խորդու։

Պետք չէ կարծել, թե այս հետնադարյան ու հոլովումը անհրաժեշտաբար համապատասխան է մեսրոպյան շրջանի ու հոլովման կամ սրա շարունակությունն է։ Ոչ։ Դա բոլորովին անկախ կամ այլ ճանապարհով ձեացած երևույթ է։ Օր.. Մրբ. հրա. էմինի, էջ 150, 151, 160 և 170 գործածված է խոսակցական «ամառառու» բառը, որ հետևում է ու հոլովման։ Բայց այդ բառը չկար հնում, ուստի հոլովումն էլ հնի շարունակությունը չէ։ Նույնիսկ այսօր ասում ենք մարգու, Աստուծու, քաղաքներու, ջրերու և այլն, որոնք գրաբարի ու հոլովման շարունակությունը չեն ներկայացնում, այլ ոյ, որ բառամիջում և բառավերջում գառնում է ու. ինչ. լոյս>լուս, քոյր>քուր. հոգւոյ>հոգու, սիրոյ>սիրու և այլն։

Արտասովոր հոլովումներ էլ կան նույնիսկ մեսրոպյան շրջանից. օր., Հենգն, ներգ. ի հենգնի, ի հենգնոջ, բայց և հյգ. հենգս։

Որ ուշ ժամանակ հոլովական բուները իրենց արժեքը կորցրած էին, և որ -ից կամ -աց հավասար ազատությամբ գործածական էին, ցույց է տալիս Լամբրոնացու «Առենարանութիւնից» մի օրինակ, որ հիշում է ՆՀԲ օտարասեռ բառ տակ. կողք կողքի հիշելով ասում է Լմբ. Մերասեռաց և օտարասեռից։ Կարծես թե միօրինակությունից խուսափելու համար գործածում էին ուզած ձևը։

Բարբառներում գրաբարի և միջին հայերենի հոլովման զանազան ձևերը խառնվելով իրար հետ երբեմն տալիս են միևնույն բառի համար այլևայլ ձևեր. օր. Հշ գրաբարում հետևում է ո հոլովման և ամփոփման օրենքով գառնում է իշոյ. սա է գրաբարի միակ սեռական ձևը, իսկ բարբառներում մերթ ո հոլովմունքը ու-ի գարձնելով, մերթ առաջին հոլովման վերածելով, մերթ ամփոփման օրենքը պահելով և մերթ էլ ջնջելով, առանում ենք հետևյալ ձևերը՝ էշու, իշու, էշի, իշի։

Ն մասնիկով հանգող բառերը, ինչպես գիտենք, գրաբարում ունեն երկու տեսակ հոլովում՝ ան և ին (հիման, եղին). Այսօր այդ երկուսից վերջինը ջնջված է և բոլոր այդ կարգի բառերը անցել են առաջինին. ինչ. եղան, գառան, լեռան և այլն. մինչև իսկ գայլան, որ գտնում ենք որոշ բարբառներում՝ գառան ձևի նմանությամբ. Հոլովման այս փոփոխությունը անշուշտ ուրիշ պատճառ չունի, եթե ոչ ան ձևին հետևող բառերի առատությունը, մանավանդ որ նույնիսկ ին հոլովման հետևող բառերը սկսած եզակի գործիականից ամբողջ հոգնակիում հետևում են ան հոլովման: Չհաշվենք մատն բառը, որ ն կորցնելով դարձել է տես. մատի[ն]:

Բառերի ծայրին գտնված ն վերջավորությունը հայկական հավելված լինելով, բնականաբար հոլովման մեջ դուրս պիտի գցվեր: Ըստ այսմ եզն, տես. եզին ձևը պիտի համեմատվի սանս. ahi՛ գնգ. azi հոմանիշների հետ, որոնց վերջնաձայն i պահված է հայերենի եզակի տեսականում:

Ն հոլովմունքը ունենալով երկու ձև (-ին, -ան) նախկին էր խառնակվելու. և իրօք դեռ ժ դարից տեսնում ենք ափ (ջրի) ափին՝ դարձած ափան Նար. ժ. ձգ. և ժը և խչ (տես ՆՀԲ):

Բառավերջի ն հանգը ջնջվելու հետ՝ ջնջվեց նաև ն հոլովմունքը, թեև մինչև այսօր էլ հետքերը մնում են (եզան, գառան, լեռան, մկան, ձկան և այլն). Ուրիշները բոլորովին վերացրել են ն հոլովման հետքերը. ինչ. արիւնի (արնի, արունի) և այլն. Հերիւն բառը, որ ըստ հին հոլովման լինում էր հերեան, ինչպես, ճառընտրի և Ցայսմաւուրքի մեջ արդեն լինում է հերիւնաւ, հերիւնով, հերնով և այլն:

-Օր

Թեև մասնիկները միշտ միևնույն հոլովմունքն ունեն, կայն -օր մասնիկով կազմված բառերը զարմանալիորեն իրար հետ հոլովում ունեն: Այս մասնիկով ունենք 3 բառ՝ աղօրք, ծաւօր, երեքն էլ երկվանկ են, երեքն էլ առանց վանկում ա ձայնավորն ունեն, ուստի երեքն էլ համապես համաչափ բառեր են, բայց ամօր հետևում է ոյ հոլովման, իսկ աղօրք և ծաւօր՝ ի հոլովման:

Պետք է դիտողանել մասնիկը արմատի վերջավորության նից. օր., զգեստ տեսական լինում է զգեստու, իսկ պահեստ

տես. պահեստի, ըստ որում առաջինի մեջ -եստ վերջավորությունը արմատին է պատկանում (հնխ. vesti, լտ. vestis, գոթ. vasti), իսկ երկրորդի մեջ -եստ մասնիկ է ամբողջությամբ: Ըստ այսմ թեև -ակ վերջավորությամբ բառերը հոլովվում են ի-ա ձևով, բայց ծակ լինում է տես. ծակու:

Ր հոլովմունքը հետզհետե ջնջվել է. այսպես՝ բանիր բառը, որ մեսրոպյան շրջանում լինում է բանիւ, բանիւնք, արդեն դարձել է բանիրոյք վկայ. 97, հետևաբար եղել է բանիրու (ինչ. նար. էջ 117), բանիրոյ, բանիրուն:

Ծաղր լինում է տես. ծաղու, հետևաբար լինում էր՝ ծաղեր, ծաղրու:

Կարծր բառը պիտի լիներ ըստ օրինի կարծու, բայց չէ ավանդված. կա միայն մեսրոպյան շրջանից հգ. կարծուիք, իսկ հետևաբար՝ կարծերք:

Կուպր բառի հոլովումը մեսրոպյան շրջանից չէ ավանդված. ավելի ուշ (Փիլ. Նոննոս) հետևում է ո հոլովման. իսկ մյ. ունի ր հլ. ինչ. կպեր, կպերք Պատ. վր. էջ 80, Իրեն. ցոյցք 17, Շնորհ. եռեա:

Մեղր, որ հնագույն պատկանում էր ր հոլովման (տես. մեղու), հետևաբար դարձավ տես. մեղեր, բայց նույնիսկ ի-ա հլ. (մեղուի, մեղուաւ):

Փորր բառը, որ հոլովվում էր փորու, բց. փորուն, դարձել է տեսա տես. փորք, բց. ի փորքն. սրանց օրինակները տալիս է ՆՀԲ Զենոբից, Մծբնացուց (Զգօն) և Ծօնականից. վերջինը ժամանակի գործ է, բայց Զգօնը լինելով ե դարից և Զենոբը Է դարից, անշուշտ վերի ձևերը հետին նորմուծության արդյունք են:

Ր հոլովման առաջին տեսակը նույնիսկ մեսրոպյան շրջանից սկսել է խառնվել. այսպես՝ ծովեզր բառը, որ տեսականում ըստ օրինի լինում է ծովեզեր, ավելացնելով նաև ի՝ գառնում է ծովեզերի. և այս ձևը մի քանի անգամ կրկնում են Եւս. պատ. և Եփր. օրին. (տես ՆՀԲ): Նույնպես՝ Գծ. իա. 5 «եղեալ ենք առ ծովեզերին»:

Կղեր բառը ր բուն համարելով (հմմտ. թառ-թառեր) ի. կիգ. իր պատմության մեջ հոլովում է կղերց. այսպես էջ 110, 120, 181, 214, 238, 279, 345:

Կոմիդր բառը, որ Լամբրոնացին հոլովում է տես. կոմբնդրոյ և Յայտ. օգ. 16 կոմնդրաց. Պատմ. ԺԲ դարից, հրատ.

Դիւան ժ. էջ 410 բ բուն համարելով հոլովում է գրե. կղմաներ, նույնիսկ արաբ. xāṭr>խաթր բառից ունենք այսօր էլ խաթեր, խաթերս համար, Առաուծու խաթեր։

Բառեր կան, որոնց հոլովումը խառնակ կամ անորոշ է. այս պիսիներից է օր., ասր «բուրդ» բառը։ Այս բառը ս. Գրքում գործածված է 10 անգամ, բայց դժբախտաբար հոլովյալ ձևով չէ։ Ըստ ձևի պետք է պատկանի բ հոլովման (սեռ. ասու, բց. յասուն, գրե. ասու), ինչպես ցույց են տալիս նաև իր ածանց ձևերը՝ ասուի, ասուեայ, ասուեղէն։ Բայց այս հոլովական ձևերը չեն ամանդված մեսրոպյան հայերենում (տես սակայն Եփր. պ. 336) և կան հետին շրջանում, իսկ ընդհակառակը Վեցօր. ունի ասրոյ. Շնորհալին էլ ունի ասերր. այսպիսով, ասր հետևում է տեսակ հոլովման. ասր, ասու (ինչպես՝ մեղր-մեղու), ասր-ասեր (ինչպես՝ ոսկր-ոսկեր) և ն հլ.։ Ըստ իս հարազատ է միայն առաջինը, մյուսները՝ հետին։ Նկատելի է, որ ասր- ձևով կազմված բառերն էլ (թվով 15) բոլորը հետին են. ինչ. ասրարեր, ասրագործ և այլն։

Կարելի էր կարծել, թե հոլովական տարբերությունները արդյունք են բարբառների։ Բայց այդ դեպքում միևնույն հեղինակը միևնույն գրքում միշտ միևնույն հոլովաձևով պիտի դներ բառերը։ Իսկ մենք տեսնում ենք, որ Առաքածաշնչի միևնույն գրքի նույնիսկ միևնույն գլխում միևնույն բառի համար երբեմն տարբեր հոլովաձևեր կան գործածված, օր., Թուոց Լե գլխում, 8. զվեց քաղաքս ապաստանից զոր յայցէք, և 11, Եւ զաստուածիք ձեզ քաղաքս, որ լինիցին ձեզ ապաստանաց։

Մատթեոսի գլ. Է, 6, կարդում ենք. «Մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց». իսկ գլ. Ը. 30, «Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտականաց»։ Այսպես նաև Մարկ. Ը. 31, 32, Մրկ. ե. 16, Ղկ. Ը. 32, խոզից, իսկ Մրկ. ե. 11, խոզաց։

Գ. Թագ. Է. 41, կարդում ենք. «Միւնս երկուս և շրջանակ քանդակագործից սեանցն ի վերայ գլխոյ սեանցն. երկուս երկունք վանդակապատս ծածկել զերկոսին շրջանական քանդակագործացն որ էին ի վերայ սեանցն». միևնույն բառը միևնույն համարում երկու տարբեր հոլովաձևով։

Կարելի չէ ճիշտ որոշել այն ժամանակը, երբ հոլովական ձևերը խառնվեցին և նոր հոլովմունքը սկսվեց։ Եթե և գործում միևնույն Առաքածաշնչի միևնույն գրքի միևնույն գլխի երկու

հոլովական համարներում տարբեր հոլովաձևեր կան գործածված, այնպես ժամանակի ճշտում կարելի չէ անել։ Այսպիսի լեզվական երևույթները մի անգամից չեն սկսվում և մի անգամից էլ չեն վերջանում։ Անշուշտ շատ քիչ գործածված բառերը տատանման պահերն են, իսկ լեզվի ամենօրյա ամենատարածական բառերը ամենից ավելի են դիմանում։ Հօր, մօր, եղբօր անկանոն ձևերը են, բայց մինչև այսօր էլ դիմանում են։ Ամենատարածական բառերի շարքին պետք է դնել նաև այս կամ այն մասնիկով կազմված բառերը, ինչ. -ած, -ատուր, -եղէն և այլն. այս բոլորը բնիկ մի օրինակությամբ պահպանում են իրար. -ութիւն մասնիկով կազմված բառերի թիվը բառարանում 6054 է, իսկ այսօր մեր լեզվի մեջ ամեն բառ կարող է այս մասնիկը առանալ։ Եվ, ահա, այդքան շատ գործածական լինելու պատճառով է, որ -ութիւն, -ութեան հոլովումը պահված է այսօրվա մեր բոլոր բարբառներում՝ քիչ բացառությամբ։

Սակայն, եթե հոլովական փոփոխության համար կարելի չէ բնականոն մի ժամակաշրջան որոշել, կարելի է մասնավոր բառերի համար նույնը կատարել։ Օր., առասաւ բառը, որի մեսրոպյան շրջանի հոլովումը հայտնի չէ, ժ դարում հետևում էր նոր հոլովման. Նարեկացին (1003 թ.) հոլովում է առասաւու։ Իսկ մի դար հետո՝ ԺԱ դարում, Գր. Մագիստրոսը ոչ միայն առում է սեռ. առասաւից, այլև՝ գրե. առասաւով (օրինակները տես Նշբ)։

Այս ամբողջ լաբիրինթոսից դուրս գալու համար կարծում եմ, թե կարելի է գծել հետևյալ ճանապարհը։

Հոլովումը հայերենի մեջ ունի չորս շրջան.

ա) նախահայկական շրջան

բ) նախամեսրոպյան շրջան

գ) անցման շրջան

դ) նոր շրջան։

Նախահայկական շրջանը այն է, երբ հայերը նախահայրենիքից դուրս գալով, իջել են դեպի հարավ և ուղղվում են դեպի Բրակիա։ Այս շրջանը պետք է դնել Քրիստոսից շուրջ 2000 տարի առաջ, այսինքն՝ այսօրվանից 4000 տարի առաջ, որ տևում է 160 սերունդ։ Այս շրջանը տևում է 1000 տարի, երբ հայերը Բրակիան թողնելով, անցնում են Հելլեսպոնտոսը և գալիս են Փոքր-Ասիա, իրենց հայրենիքը դարձնելով Ալիսի ափերը, այն է՝ արդի Սեբաստիան, Հիւիթների և Փռյուգիացոց

հարևանության մեջ։ Փոյուգիացոց հնագույն արձանագրությունները 8-րդ դարից են, ուստի նրանց գաղթն էլ եվրոպայից Փոքր Ասիա կարելի է դնել շուրջ 1000 թ. Ն. Ք.։ Այս շրջանում հայերենը դեռ իր բունի ձայնավորը չէր կորցրած, ձայնավորների սղման և ամփոփման օրենքները դեռ գոյություն չունեին. ուզդ. ասվում է փուրո (հուր), արդու ձարդ, զարդ, որոնց սեռականը լինում էր փուրոյ, արդույ (յ լավ հնչված)։ Ասված բառը փոյուգիական փոխառություն լինելով ուզդ ձևն էր ստուացծո, որի սեռականն էլ ստուացծոյ։ Ամեն ինչ տիրում էր դեռ հին հոլովական ձևը. այն բոլոր բառերը, որոնք պատկանում են մեր անկանոն հոլովման, ամբողջությամբ գոյություն ունեին այն ժամանակ։ Հնխ. pater, mater, swesor ուզդ. դականների դեմ, երբ հնդեվրոպացին ասում էր patros, matros, swesros, հայն էլ միևնույն ոճով կազմում էր հայր, մայր, քույր և սեռական հաւր, մաւր, քեռ. ոչ ոք դեռ չէր զգում այն մեծ տարբերությունը, որ կար ուզդականի և սեռականի միջև. գործում էին միայն ձայնական օրենքները, որոնք բնական ճանապարհով տալիս էին հաւր, մաւր, քեռ ձևերը։

Այս շրջանում հայերեն բառերի թիվը դեռ շատ քիչ էր, որովհետև կային միայն բնիկ հայերեն բառերը, որոնց թիվը իմ հայոց լեզվի պատմության մեջ (Ա. հա., էջ 80) 713 է, իսկ ձայնդարձների և աճականների հետ միասին մոտենում է 1000 արմատի։ Դեռ չէին փոխառնված արևելյան լեզուներից այն բազմաթիվ բառերը, որոնց գումարը դրել ենք 4015։ Բայց հայերենում անծանոթ են մնում դեռ 3680 արմատ, որոնց մի մասը անշուշտ բնիկ հնդեվրոպական է, բայց միայն հայերենի մեջ գոյություն ունենալով, կարելի չէ հաստատել նրանց ծագումը։ Ավելի հստակ մի ձև տալու համար մեր ասածին, առնենք դեհ «այրել», քայ «կանչել», ռեվ «մոնչել» և նման բառեր, որոնք զարմանք պիտի շարժեն օրևէ հայի, և սակայն նրանք մեր հրդեհ, աքաղաղ և առիւծ բառերի արմատներն են, որոնք դեռ այդ առաջին շրջանում կենդանի և սովորական բառեր էին հայերենի մեջ։ Այսպիսի բառերի թիվը նույնիսկ մոտավորապես չի կարելի գուշակել։

Նախամեհրոպյան շրջանը սկսում է մեր թվ. ա. 1000 թվերին և գնում է մինչև 6 դարը։ Այս շրջանին է, որ հայերը Փոքր Ասիայից մտնում են Մալթիա, գրավում են երկիրը և խալդիների հետ միանալով, կազմում են մի ժողովուրդ, որի

մեջ ձուլվում են նաև 18 ազգեր։ Հայերը կապ են հաստատում շրջակա բազմաթիվ ժողովուրդների հետ, ներքուստ խալդիների հետ, հյուսիսից վրացիների և աղվանների հետ, հարավից ասորեստանցիների, բաբելացիների և արամայեցիների հետ, արևելքից մարերի և պարսիկների հետ, իսկ արևմուտքից, ավելի ուշ՝ հռոմայեցիների և հույների հետ։ Այս բոլոր ազգերից և լեզուներից փոխ են առնում այն 4000 բառերը, որոնք չկային նախահայերենում։ Այս նորամուտ բառերի և նախկին բնիկ բառերի միջև շատ կարևոր մի տարբերություն կար՝ հոլովական տեսակետից. եթե հին բնիկ բառերը ունեին իրենց բուն, որ դեռ պահել էին, ընդհակառակը այս նորամուտ բառերը բուն չունեին այն իմաստով, որ գտնում ենք հնդեվրոպական բառերի մեջ. մի լավ օրինակ տալու համար այս մասին, առնենք խրատ բառը։ Այս բառը իրանական ծագում ունի. հնդուկն ձևն է գնդ. xratuš, որի š վերջաձայնը ուղղական հոլովի նշանն էր, իսկ u բնի ձայնավորն էր. պահլավերենում հայերենի պես բուն բնիկով և այդ բառը դարձավ xirat, հետո էլ՝ պրս. xirad. այս բառը պահլավերենից հայերենին անցնելով, առացավ խրատ ձևը, որի սեռականն է սակայն խրատու։ Այս բանը ցույց է տալիս, որ այն միջոցին, երբ հայերը փոխ առին խրատ բառը պահլավերենից, դեռ պահլավերենում u բունը կորած չէր և հայերը սղեցին ճիշտ այն միջոցին, երբ պահլավերենն էլ սկսեց սղել նույնը։ Այսպիսով, սղման երևույթը երկու լեզուների մեջ զուգահեռաբար, բայց անկախ և միաժամանակ կատարված երևույթ է (տես այս մասին Meillet, Esquisse, երկրորդ հրատ., էջ 23)։

Պարսից պատմության մեջ պարթևական շրջանը գրվում է մեր թվ. ա. 250—226 Ց. Ք.։ Ուրեմն մեր մեջ էլ բառավերջի բների անկումը և հոլովման մեջ սղման ու անփոփման երևույթը սկսվում է Ն. Ք. 3-րդ դարից։

Այս շրջանում է կատարվում, ահա, հոլովման մեջ որոշ կանոնավորության մացնելու ձգտումը։ Ահա այս մասին մեր կատարած քննությունների արդյունքը։

ա) Այն բոլոր բառերը, որոնք վերջանում են ակ հանգով, հետևում են ի-ա հոլովման. այս բառերի ցուցակը տվել ենք վերը. մեծագույն մասամբ իրանականից փոխառյալ բառեր են, ուստի նրանց ա հոլովումը ներկայացնում է իրանական ա բունը։ Բառերի մի մասի ծագումը անհայտ է, բայց

հավանաբար նույնպես պարոկերեն է, թեև իրանական ձևը հայտնի չէ, ինչպես՝ աշտանակ, աշտարակ, աւազակ և այլն։

բ) Այն բառերը, որոնք վերջանում են այ հանգով, ինչ էլ լինի նրանց ծագումը, եթե բազմավանկ են, հետևում են ի[ից] հոլովման. այդ կարգի բառերի թիվը է 43, որոնք նշանակված են № 1 ցուցակում մի գծիկով։ Միակ բացառությունն է որոյ, որ հետևում է ո հոլովման։ Այ հանգող միավանկ բառերը, եթե հատուկ անուն են, հետևում են ո հոլովման. ինչ. հայոց ազգ, Տայոց Աշխարհ, Վայոց Ձոր, իսկ եթե հասարակ անուն են, հետևում են ի հոլովման, ինչ. հայ-հայից (տես Արմ. բա., Դ հա. էջ 87), ճայ-ճայից, կայք-կայից, բայ-բայից, նայ-նայից ասյ «գրոշ» հոլովումը անհայտ, վայ-վայից. Իսկ սղայ բառը հնագրես ո հոլովման էր պատկանում, հետո անցավ ի հոլովման։

գ) Այն բառերը, որոնք վերջանում են -եան հանգով, հետևում են ի հոլովման. այս բառերը նշանակված են ցուցակում և թվով վեց հատ են։ Սրանցից գուբս ունենք մեհեան, կեանք և ցորեան բառերը. առաջինը՝ մեհեան, հոլովվում է թե ի, -ից, և թե ի-ա հոլովմամբ. երկրորդը՝ կեանք անեզական է և սեռականում լինում է կենաց. իսկ երրորդը՝ ցորեան, սեռ. ցորենոյ միայն է իսկական բացառություն, որի վերջավորությունը կարծես թե նույն լիներ եան հոգնակերտ մասնիկի հետ, ինչպես՝ գրեան, գրենոյ։

դ) Այն բառերը, որոնք վերջանում են ուր հանգով, պատկանում են ո հոլովման։ Այդ բառերը նշանակված են № 10 ցուցակում մի գծիկով և թվով 18 են։ Այդ բառերն են՝

անուր, բլուր, գուր, թուր, թրթուր, լուր, խանձարուր, կերակուր, կաուր-ք, հուր, մուր, մասուր, մրուր, ջուր, սուր, աւուր-ք, փետուր, փրփուր։ Բացառություն են արամուր «մշուշ» սեռ. արամրից, կուր «ճնավակ», սակուր «տասպարա», սկեսուր, երեքն էլ՝ ի-ա հոլովմամբ։ Ամուր բառը ավանդված է թե ո և թե ի-ա հոլովմամբ. այսպես նաև շամփուր, ապուր հետևաբար ունեն ո հոլովում, իսկ մաքուր կա մաքրից ձևով. Ոսկ. Ցհ. Բ. 15 և հետևաբար՝ ո հոլովումով։

ե) Այն բառերը, որ հանգում են -իճ, հետևում են ո հոլովման. այսպես են՝ ամուսին, բուժին, գեսին, գին, գիւրին, խեցգեսին, կապին, կացին, կրկին, հին, մարմին, սին, ցին (ընդամենը 13 բառ, առանց հաշվելու -իճ մասնիկով կազմված բառերը, ինչպես՝ առաջին, միջին, վերջին, չնչին և այլն)։ Ուրիշ հոլովման հետևող բառերն են. բաժին, երկինք, ոտին (ի հոլովման), դարբին, գելփին, զմելին, կարկին, վին, փքին (ի-ա հոլովման), ազախին, անկողին, լուսին, (խառն հոլովման)։ Սրանցից ոտին, գելփին, զմելին, կարկին հունական փոխառություններ են, այսինքն 3-րդ դարից հետո կամ է՛լ ավելի ուշ հայերենին անցած բառեր։ Քքին և վին իրանական փոխառություններ են, այնպես որ, նույնիսկ վին բառը չի ավանդված պահլավերենում և հայտնի է միայն հնդկերենից և հայերենից. սրանք էլ ուրեմն երկրորդ շրջանի վերջերին կատարված փոխառություններ են։ Աղախին, անկողին, լուսին բառերը ունեն թե ո հոլովումը, որ ավելի հարատած է քան ի-ա, և թե ի, ի-ա հոլովումները։ 4 բարդ բառ ունենք, որոնց երկրորդ եղրն է ծին. սրանք են երկրածին, կանացածին, կենդանածին, միածին. սրանք բոլորը իբրև բարդ բառ պատկանում են ի-ա հոլովման, իսկ արմատը՝ ծին պիտի պատկաներ ո հոլովման, իբրև հուն. γένος=հյ. ծին, ծնոյ։

զ) Կենդանիների անունները հետևում են ու հոլովման, ահա օրինակները՝ ագռաւ, ագռաւէս, առիւծ, գրաստ, ինձ, կով, հաւ, ձագ, որթ (հորթ), ուլ, ուղտ, ցուլ (իշացուլ, ձիացուլ)։ Այս չի նշանակում, թե բոլոր կենդանիների անուններն էլ հոլովվում են այս ձևով, որովհետև ունենք տարբեր հոլովմամբ խոզ (ի, ի-ա հլ.), խոյ (ի, ո հլ.), գոբտ (ի, ո հլ.), և այլն։ Կան նաև այնպիսիները, որոնք թե ու հոլովմամբ են, և թե մի ուրիշ հոլովումով. ինչ. երինջ (ու, ո հլ.), ուլ (ո, ու հլ.) և այլն։

է) Այն բառերը, որ վերջանում են -որ հանգով, հետևում են ո հոլովման, այսպես են՝ խմոր, խոր, ծործոր, կոտոր, հոր (ջրհոր), ձոր, նոր, որ, սափոր, սոր (10 բառ)։ Սրանցից գուբս ունենք 4 բառ՝ բոլոր, խնձոր, խոտոր, փոր, որոնք հոլովվում են թե ո, և թե ի հոլովմամբ։ Բացառություն են՝ աքսոր, մանթագոր, բոսոր, շեփոր, որոնք օտար են և՝ սովոր-ք, խոճկոր, կամակոր, սիկլքոր բառերը, որոնք շատ սովորական բառեր չեն։ Ընդհակառակը, ունենք որ մասնիկով՝ հատոր, բեկոր՝ ո հոլովմամբ։

ը) Ի վերջացող միավանկ բառերը հետևում են ո հոլովման. այսպես են՝ գի (ծառը) -գիոյ, թի-թիոյ, լի-լիոյ, ձի-ձիոյ, մի-միոյ, տիք-տիոց։ Գի բառը ունի երկու իմաստ. առաջին իմաստն է «մեռած մարմին, դիակ», և սեռականը լինում է գիոյ. իսկ երկրորդ իմաստն է «տասավաճ» և միշտ անե-

դական է, թեկուզ մի ասուածո համար, ինչ. Տիւր—դից դպրի (Տիւրը այն աստվածն էր, որ մարդկանց բարի և չար գործերը արձանագրելով՝ ներկայացնում էր Աբամազդին): Սրա սեռականը լինում է դից, որ և՝ դիւց. ինչ. դիւցազն, դիւցախառն: -Ի վերջացող միավանկ բառերից կա նաև ցի «ազգ», սեռ. ցիոյ (անասուլգ և հետին բառ). անշուշտ պիտի կապել գավառական ցին «քրիք» բառի հետ (այս համեմատությունը քեզադրեց մեր համալսարանի ուսանող Վարազ Առաքելյանը. 1937 թ. 4-րդ կուրս):

Թ) Ու ձայնավորով հանգող միավանկ բառերը հետևում են նույնպես ո հոլովման: սրանք են՝ բու-բուոյ, յու-յուոյ, կու-կուոյ, ձու-ձուոյ, նու-նուոյ, չու-չուոյ.

Այս 9 կանոնները որոշ ցուցմունք են տալիս, թե ար բառերը ինչ հոլովման են պատկանում: Ավելի մանրամասն քննություններ կարող են երևան հանել ուրիշ նոր կանոններ ևս, հոլովման սեռակը որոշելու համար: Բայց նկատելի է, որ

ժ) Այն բառերը, որոնք վերջանում են մն հանգով, սեռականում ունենում են ա բուն: Այսպես են՝

այծեամն, առամն, բեղմն, գեղմն, եղեամն, կողմն, հիմն, որոմն ջերմն, սերմն, առերդումն, քրտամն, որոնք սեռականում լինում են՝ այծեման, առաման, բեղման, գեղման, եղեման, կողման, հիման, որոման, ջերման, սերման, առերդման, քրտաման, ընդամենը 12 բառ: Որպես բացառություն այս կանոնի կան հետևյալ երկու բառերը՝

արմն (սեռ. արմին) և կամն (սեռ. կամին):

ժա) Բոլոր այն բառերը, որոնք հանգում են գն, կն, քն, սեռականում ունեն ա բուն: Սրանք են՝ ակն-ական, արեգակն-արեգական, արմուկն-արմկան, բուրգն-բրգան, գալուկն-գալ[ն]կան, գիակն-գիական, գուրգն-գրգան, եղեգն-եղեգան, եղունգն-եղնգան, երկն-երկան, թեկն-թիկան, ինքն-ինքեան, կայծակն-կայծական, ձուկն-ձկան, ճիգն-ճգան, մուկն-մկան, ունկն-ունկան, ցակն-ցական: Բացառություն է կազմում մաշկի «մրան» <սասր. maskan «մրան, խորան» բառը, որի սեռականը լինում է մաշկին:

ժբ) Դն հանգող բառերը (ընդամենը 4 հատ) սեռականում ունենում են ա բուն: Սրանք են՝ գեղարդն-գեղարդան, եռանդն-եռանդան, եռանդեան, խուժդն — ներգ. խժդան, որդն-որդան*.

Հայերենի մեջ կան նույնանանձ բառերի զանազան խմբակներ, որոնք հետևում են միևնույն հոլովման. օր., էշ, իս, իւ, ուշ, ուս, այս հանգող բառերի մի մասը հետևում են ո հոլովման. ինչ. էշ-իշոյ, գէշ-գիշոյ, կէս-կիսոյ, գէս-գիսոյ, միս-մսոյ, ամիս-ամսոյ, աղիս-աղիսոյ, խիս-խիսոյ, միւս-միւսոյ, ուշ-ուշոյ, վուշ-վշոյ, փուշ-փշոյ, ուս-ուսոյ, բռյս-բուսոյ, լոյս-լուսոյ, յոյս-յուսոյ: Բայց մյուս կողմից ունենք՝ խնիվշ և պառնիշ ի-ա հոլովման, հաճգես՝ ի հոլովման, կիւս և հիւս-ք ի հոլովման, կոյս «աղջիկ» ի հ., իսկ կոյս «կողմ» ի-ա հ., բոլորն էլ տարբեր հոլովմամբ, որով հարկ է լինում փոխել մեր կարծիքը հոլովի նույնացման մասին:

Բայց այս երևույթը քեզադրում է մեզ մի ուրիշ միտք:

Հայերենի առաջին շրջանում հայերը իրենց հետևում ունեին հնդեվրոպական նախալեզուն իր հոլովական բնեռով, որոնք բովանդակությամբ պահվում էին իրենց մեջ: Երկրորդ շրջանում, փոխադրվելով Փոքր Ասիա և Հայաստան, երբ փոխառին ուրիշ լեզուներից եռապաստիկ ավելի բառեր, ինչպես պետք է վերաբերվեին այդ բառերի հոլովման հարցում: Տեսնենք մի քանի գործնական օրինակներով:

Ուղտ կենդանին անծանոթ էր նախահայրենիքում. Հայաստանում էլ չկար և փոխադրվել է Ասորեստանից: Մեր շրջակա լեզուների մեջ այս բառի ամենամերձավոր ձևն է սասր. uldu: Այս բառը ունի u բուն, որով հայերենի մեջ պիտի հետևեր ու հոլովման. և իրոք որ ուղտ բառի սեռականն է ուղտու: Սակայն սասրերենի մեջ բոլոր բառերն էլ հանգում են u, որ իրենց ուղղական հոլովի նշանն է, ինչպես արգի արաբերենում: Ուրեմն, հարց է ծագում, uldu բառի u հնչյունը էր, որ տվել է սեռական ու, թե իններորդ կանոնի համաձայն ասացել է ու, իբրև կենդանու անուն: Ուրիշ սասրերեն փոխառություններ էլ ունենք հայերենում. ինչ. anaku> անագ, gisrinnu> կշիռ, gimaxu> կմախք, kunukku> կնիք, որոնց ոչ մեկի բունը պահված չէ:

---

* Այս վերջին երեք կանոնները գտանք հեղինակի կենդանության ժամանակ, որի համար նա շատ ուրախացավ: Պատրաստվում էինք այդ մասին գրել, երբ մի քանի օր հետո նա մահացավ, և ես այժմ հարկ եմ համարում ավելացնել դրանք իր գրքում: [Գ. Գարեգինյանի հավելումն է, որ թողնում ենք անփոփոխ: Ա.]:

Երբ աստրեբենից վերցրին կացին բառը (xassina), անշուշտ հետևեցին 5-րդ կանոնին և հոլովեցին՝ կացնոյ:

Նմանապես, երբ աստրեբենից կամ մի ուրիշ սեմական լեզվից վերցրին ձեր, ձիւթ բառերը, որոնք հանգում են թ բաղաձայնով, հոլովեցին ո հոլովմամբ, որովհետև իրրև օրինակ ունեին հնդեվրոպական ճիւթ, ճիւթ բառերը:

Լոյս հնդեվրոպական բառ է և իրրև քնքեր հուն. λευκός ձևի, հետևում է ո հոլովման: Հնդեվրոպական ծագում ունի նաև բոյս, որի ս վերջաձայնը ածական է. սա էլ հետևում է ո հոլովման. իսկ երբ հայերը ձեռք բերին լոյս արմատը, որի ծագումը բոլորովին անհայտ է, ինչպե՞ս պիտի հոլովեին: Իրավացի չէ՞ր հետևել լոյս և բոյս բառերի հոլովման:

Բացի նույնահանգ բառերի նմանութիւնից, կա նաև նույնարժէք բառերի նմանութիւնը. օրինակ՝ եթե կենդանիների անունները իրենց բուն հոլովումը թողած անցել են ու հոլովման, դա նշանակում է իմաստով նման բառերի հոլովի նույնացում: Այդ նույնը տեսնում ենք նաև քվականների մեջ. սկած երեք քվից մինչև տասնյակների վերջը քվականները հետևում են ի հոլովման, բացի այն բառերից, որոնք վերջանում են ն հանգով և ունեն իրենց հատուկ հոլովումը (տես հմ. 1, էջ 241): Այստեղ էլ տեսնվում է իմաստով նման բառերի հոլովների նույնացում:

Պարսկերենից փոխառյալ բառերը ամենամեծ մասամբ հետևում են ի-ա հոլովման. այս բառերից իրրև ամենահինը կարելի է հիշել պարսիզ բառը, որ փոխառութեամբ տարածված է մինչև Եվրոպայի ծայրը: Թէ որքան հին է այս բառի մուտքը մեր մեջ, ցույց է տալիս այն, որ մեր հյուսիսային գավառներից մեկը կոչվում է Պարսիզաց փոր: Անսովոր հոլովմունք են ներկայացնում խրատ, մոգ և գանձ, որոնք հետևում են ու հոլովման. խրատ բառը, ինչպես տեսանք, գնդ. xratu ձևի շարունակութիւնն է. մոգ բառն էլ հին պրս. magu- ձևի բունն է պահում, իսկ գանձ՝ անշուշտ մարերեն է: Գիտուններն ընդունում են, որ երբ պարսկերեն յ ձայնի դեմ հայերեն կա ձ, ուրեմն այդ բառը մարերեն է: Ինչ. Գանձ, գանձակ, բրինձ, պրինձ: Այս դեպքում գանձ բառի մարերեն ձևում ս բունը անսպասելի չէ:

Առանձնապես կարևոր է հիշել ճեռն և մատուռն բառերը: Առաջինը հռոմայեցոց Neron կայսեր անունից է (+ 68 թ.), իսկ երկրորդը՝ հունարեն μαρτυριον հոմանիշից է. երկու ձևերն էլ

հայերը իրրև ն բուն ընդունելով, դարձրել են ճեռն, մատուռն, սեռ. ճեռին, մատրան: Այս նշանակում է, որ ն բնի անկումը Ք. Ա. դարից հետո է:

Հոլովական բունը գտնելու համար երբեմն նպատում են մեկ նախադրութիւնները և մակբայները, որոնցից շատերը նախկին հոլովական ձևեր են: Այսպես՝ ի վերայ՝ վեր բառից ա հոլովմամբ, առաջոյ, յետոյ, ի ներքոյ և այլն առաջ, յետ, ներք բառերից ի հոլովմամբ: Հրապարակաւ, բնաւ, կանխաւ, ճշմարտիւ, ճշգրտիւ, հազիւ, ճշդիւ, գտակաւ, վազիւ, սուտիւ, շնորհիւ, կամաւ, սակաւ և այլ գործիականներ են ա, ի հոլովմամբ: Երբեմն անգոյ բառերից էլ ունենք նման մակբայներ. օր., իրաւամբ՝ ն հոլովմամբ գործիական է իրաւն բառից, որ գոյութիւն չունի և որի հոգնակին է իրաւունք: Հուպ «մօտ, կից» բառը հոլովված չէ. հետևաբար կա միայն ի հլ. իսկ ի հպոյ «ի մօտոյ» մակբայը (Ոսկ. մ. ա. 10, 15) ցույց է տալիս, որ հին հոլովումն է ս: Գամ «անգամ» բառի հին հոլովը հայտնի չէ. բայց գամու միջ (Բուզ. Ե. 3), գամու գամու (Եփր. երր.) մակբայները ցույց են տալիս ու հոլովումը: Համառօտ բառի հոլովումը կասկածական է, համառօտիւ մակբայը ցույց է տալիս ի: Ճշմարիտ բառի հոլովումը անորոշ է. համաբարբառը տալիս է 3 օրինակ (2 ճշմարտի, 1 ճշմարտից). իսկ ՆՀԲ դնելով 1 ճշմարտի, 2 ճշմարտից և 1 ճշմարտաց (Եփր. Բ. Թես.) կասկածելի է գարձնում հոլովումը՝ ի՞, թէ ի-ա. գալիս է ճշմարտիւ մակբայը և ցույց է տալիս, որ հետին է ճշմարտաց, ինչպես ունի նաև Համամ. առկ.:

Նույնիսկ ունենք իցիւ, որի կազմութիւնը անսովոր է:

Մեղմ բառի համար ՆՀԲ միայն մի օրինակ ունի հոլովված ձևով. Ջայն մեղմոյ օգոյ. Գ. Թգ. ԺԲ. 12. իսկ մեղմով մակբայը, որ քանիցս անգամ գործածված է, հաստատում է նույնը:

Մօտ իրր նախադրութիւն և մակբայ անհոլով է. բայց ի մօտոյ մակբայը ցույց է տալիս, որ բառը պատկանում է ո հոլովման:

Հոլովական բունը որոշելու համար կարևոր օգնութիւն կարող է տալ մեզ վրացերենի համեմատութիւնը: Ձևով նման, իմաստով նույն շուրջ 800 բառ կա հայերենի և վրացերենի մեջ: Այս բառերի առաջին հավաքածոն կազմեցի և հրատարակեցի 1898 թ. Էջմիածնի Արարատ ամսագրում: Շատ տարիներ հետո նույն բառերը մուծեցի իմ Արմատական բառարանի մեջ՝ յուրաքանչյուր բառի տակ:

Վրացերենի սովորությունն է ամեն բառի ծայրին ավելացնել ի ձայնավորը, օր., ճասակ>վր. ասակի, արտավար>վր. արտավարի, տարեկան բառից առաջանում են մի քանի կոշկակարական բառեր. ինչ. օրտարագանի «երկու տարեկան երեխայի կոշկի կաղապար», չուտարագանի «չորս տարեկան երեխայի կոշկի կաղապար», վաստարագանի «վեց տարեկան երեխայի կոշկի կաղապար», ատտարագանի «տաս տարեկան երեխայի կոշկի կաղապար» և այլն։ Հարց է ծագում, արդյոք այս ի ձայնավորը վրացական սովորական հավելվածն է, թե ներկայացնում է հայերենի բունը։ Առաջին դեպքում վրացերենը մեզ ոչ մի օգուտ չի տալիս, իսկ երկրորդ դեպքում նշում է մեր նախկին բունը։ Բայց որովհետև բացատրությունը երկդիմի է, ուստի լավագույն է առայժմ հրաժարվել դրանից։ Այս մասնաժողովը դուրս գցեցինք բոլոր այն վրացերեն բառերը, որոնք ունեն ի հավելվածք. օր. պատիւ=վրաց. պատիվի, մինչդեռ հայերենի բունն է՝ սեռ. պատուոյ։

Այստեղ հավաքում ենք միայն այն վրացերեն բառերը, որոնց վերջածայնը ի չէ, այլ ուրիշ մի ձայնավոր[1]։

Գլեխ — գլախա, գլեխի
դռուզ — դրուզա
դրաւ — դիրաս
դեղ — մղելո, դելա
դրամ — դրամայ
դրօշ — դրոշայ
երդ — երդո
դուզայ — դուզա
Թալ — Թելա
Թաղ — Թալա, Թալախա, Թալիսա
Թեղի — Թելա
Թեփ — Թեբո
ԹԹու — ԹուԹուբո
Թանխր — Թորնն
լար — լարո, լարի
լեզանգ — լեզենգո
լորձն — լործո
լուծ — լուծի, լուծա
լոք — լոքո
խարշ — խարշո
խաւ — խաո
խաւարծի — խաւարտա
խեճեպ — քուչուբո
խեննեշ — խեննեշա
խլայ — խլա
խղունջն — ղվինճիլա, ղվինջիլա (ղուրինճիլա)
խորշ — խորշա
խոց — խոցա
խուԹ — խուԹո
խուղ — խուլա, խուխուլա
խրով — խրա
ծալ — ծալո
ծաղիկ — ծալիկա
ծանծ — ձենձա
ծանծաղ — ծանծալա
ծեծ — ծեծա
ծեփ — ծեբո
ծէս — ծէսա
ծիր — ծրև
ծնծղայ — ծինծիլա
ծոր — մծորո, ծորո
ծուծ, ծիծ — ձուձու
կալ — կալո
կակաչ — ղ՛ադ՛աչո
կապարճ — կապարճա
կապոյտ — կապիտա
կարմրախայտ — կալմախա
կղմուխ — կուղմուխո, կալմախա
կնդուղ — կունկուլա
կոխ — կոտա
կոկոն — կոկոնա
կուատատուկ — կատակիտա
հանճար — ածարա
համ — ամո
հարբուխ — խարբուխա
հարճ — խարճա
հնդիսայ — արխա (պարսկ.— արաբ. անմիջ.)
հոր — որա, որկ
հրեայ — ուրխա
ձանձ — քարաձենձա, ղ՛ալաձենձա
ճակնդեղ — ճականաելա
ճաղաղ — ճալա
ճառայ, ճարայ — չարա
ճենճ — ճենճո
ճիլ — ճիլո
ճճի — ճիա, ճուա
մանանայ — մանանա
մատեան — մատիանէ
մատիտեղ — մատիտելա
մատուռակ — մատրակվեբա
մարկեղ — մարկիլա
մեքենայ — մանքանա
մէջ — միջնա
միծ — ?
մշակ — մուշա
մոգ — մուգա
մուխ — մխին
յարդ — խարգա
Նեզ — նելա
Նիշ — նիշա
Նժար — նիժարի
Նկար — նիկարա
Նու — քուշ. նու
Նուիկ, Նուիճ — նուիկա
շիլ — շալո
շնորհ — շնո
շուկայ — շուկա
շուք — շուգա
ոսա — ասա, շաո
ուռն — ուրո
չանչ — չինչո
պատառ — պատարա
ջինջ — ջինջո
սալ — սալա
սարայ — սարա
սնապուհ — սնիփէ
սիկղ — սիկլա
սիմինդր — նամինդո
սոր — սորա
սորնկ — սորնքա
սուննկն, սուննգն — սակո
սուեպղին — սուսիլքո
սուսյա — սուսա
սրահ — սրա
սքեմ — սքեմա, սքիմա

[1] Այս բառերը հավաքեց ասպիրանտ Աշոտ Սուքիասյանը։

վարդապետ — վարթապետի
վեհ — վեհի
տաճար — տաճարո
տաճկանակ — տաղդանագա
տապակ — տապակա
տապաստ — տարաստո
տարփ, արիփ — տարփա
տերտեր — տերտերա
տիտղոս — տիալո
տող — տոլո
տրամ — տրամա
ցանցառ — ցանցարա, ցանցարէ
փայծաղն — փածալա
փիլիսոց — փիլիսա, փիլիս, փրիփիլա
փոս — փոսո
փոր — փորո
փուլ — փլատաւ
փուճ — փուճա
փուռն — փուրնե
փուտ — փուտուտո
քարադր — քալանդրո
քիմիթ — քուլթուրա
քարաքոս — քարագողա
քսակ — քիսա
քրքում — քուրքումա

Մանրամասն քննել այս ցանկը և հայերենի բները կապել վրացերենի վերջավորության հետ թողնում ենք մասնագետներին։ Բայց անհրաժեշտ է հիշել, որ մի խումբ հայերեն բառերի բուն ձևը այնպես է նույնանում վրացերենի հետ, որ նույնությունը մերժել աննկարին է. օրինակ՝ երդ — սեռ. երդոյ — վրաց. երդո «տափակ տանիք, կտուր» և մանավանդ՝ դեղ — սեռ. դեղոյ, որի հնագույն, հետո կորած իմաստն է «խոտ», նույնը վրաց. մղելո «խոտ, գալարիք»։ Այս համեմատությունը մերժեց Մուրվալյանը, (Ն. Մառի... աշխատ. № 2, էջ 232), ասելով՝ թե բոլոր այս կարգի ո վերջավորությունները վրացերենում փաղաքշական մասնիկ են. ինչ. գուլի «սիրտ», գուլո «սրտիկ», գլեխի «գյուղացի», գլեխո «գռնիկ», գիժի «խենթ» — գիժո «խենթուկ» և այլն։ Հմատանելով այս բացատրության, ես դիմեցի վրացի մասնագետ պրոֆ. Ի. Աբուլաձեին, որ հայտնեց, թե սխալ է Մուրվալյանի ասածը։ Վրաց. ո հոդը փաղաքշական չէ, այլ կոչական, ինչպես ունենք և հյ. Համօ, Հայրօ, Մարօ և այլն։ Բայց վրացերենում դրանք շատ սակավաթիվ են և այդ մի քանի բառից այն կողմ չեն անցնում։ Իսկ երդո, ղվիանո և այլն բառերի ծայրին ո մնում է առանձին։ Նույնը հաստատեց նաև ակադեմիկոս Շանիձեն, որ այսպիսի հարցերում լավագույն մասնագետ է։

Մինչև այստեղ մենք չխոսեցինք հատուկ անունների հոլովման մասին, որոնց համար էլ դրել ենք վերևում 3 ցուցակ։ Դրա համար ունենք երկու հիմնական պատճառ. նախ՝ որ թե

անձնանունների, և թե տեղանունների բառարանները հրատարակված չեն։ Իմ անձնանունների բառարանից տպված է միայն յոթ հատոր, և հատորը մնում է անտիպ։ Իսկ տեղանունների բառարանը բոլորովին կիսավարտ դրության մեջ է մնում աչքիս տկարության պատճառով։ Երկրորդ և ավելի հիմնական պատճառն այն է, որ մենք մեր տեփական հողի վրա ոչ անձնանուն ունենք, ոչ էլ տեղանուն։ Նախահայկական շրջանից ոչինչ ավանդված չէ մեզ և հույս էլ չկա գտնելու։ Բայց նույնիսկ Հայաստան տեղափոխվելու միջոցին հայոց գործածած անձնանուններն ու տեղանուններն անհայտ են. Հայաստանը բնակված լինելով խալդիներով կամ ուրիշ մանր ժողովուրդներով, բոլոր տեղանուններն էլ պիտի լինեին նրանց լեզվով. ինչ. Կարին, Կարս, Արարատ, Ավարայր, Վան, Երզնկա, Մուշ, Բաղեշ և այսպես անվերջ։ Միայն հայոց ձեռքով նոր շինված վայրերն են, որ կրում են հայերեն անուններ, այն էլ շատ ուշ ժամանակից. ինչպես՝ Ցամաքաբերդ, Նորաշէն, Պառավաթումբ, Թմկաբերդ, Գետաշէն, Վարագաբույն, Ծովատեղ, Ավետարանոց, Սիսորաշէն, Թեղուտ, Ընկղուտ, Վարդաշէն և այլն։ Նմանապես անձնանուններից բուն հայկական անուններ հայտնի չեն մեզ. անշուշտ հին հայերը անանուն չէին, բայց դյուղացիները այնպես արհամարհված էին, որ նրանց անունները արժանի չեն համարել հիշատակել գրքերում։ Իսկ ազնվականները կոչվում էին իրանական անուններով. նույնիսկ «բնիկ ազգային» համարված անունները պարսկերեն են, ինչպես՝ Վարդան, Վահան, Մերուժան, Տիգրան, Տրդատ, Վարազդատ, Միհրդատ և այլն։ Իսկ քրիստոնեության մուտքից հետո ասպարեզ իջան երբայական, հունական և մասամբ էլ լատինական անունները, որոնցով էլ հայկական անունները իսպառ վերացան։

Այդ իրանական անունները բոլորն էլ ա բնով են, ուստի սեռական լինում են՝ Տրդատայ, Վարդանայ և այլն. այնպես որ կանոն է ընդունված մեր մեջ, թե անձնանունները հոլովվում են այդ ձևով, թեև ունենք շատ անուններ էլ ի կամ ու հոլովով, ինչպես՝ Յիսուսի Քրիստոսի, Մովսիսի, Պողոսի, Ղուկասու և այլն։ Նույնիսկ լինում են դեպքեր, երբ ս. Գրքի հունարեն բնագրում անունը հոլովական ձև չունի, բայց հայերեն թարգմանության մեջ դարձյալ դրված է այ ձևով։ Օրինակ՝ Տովբիթի գրքի սկզբում կարդում ենք.

Գիրք բանից Տովբիթայ որդւոյ Տովբեհելայ, որդւոյ Անանիելայ, որդւոյ Անաւելայ, որդւոյ Գաբայելայ, ի զաւակէ Ասիէլայ, յազգէ Նեփթաղիմայ...

Βίβλος λόγω Τώβιτ τοῦ Ἀνανὴλ τοῦ Ἀδουὴλ τοῦ Γαβαήλ, τοῦ σπέρματος Ἀσιήλ, ἐκ τῆς φυλῆς Νεφθαλί.

Բոլոր անուններըը հունարենում անհոլով են, և դրված է միայն որոշիչ հոդի սեռականը։

Անցման շրջանը սկսվում է հենց մեսրոպյան շրջանից։ Զարմանալի է այս երևույթը, բայց իրողություն է։ Եթե ս. Գրքի միևնույն դիմի միևնույն համարում (Գ թագ. Է. 41) միևնույն բառը երկու տարբեր հոլովաձևով է գործածված, ուրեմն հոլովական շփոթությունը սկսել էր հենց դրա թարգմանության ժամանակ։ Եթե նույնիսկ մեսրոպյան շրջանում խառն հոլովումներ կար, ինչպես նշանակեցինք առանձին ցուցակով, այդ նշանակում է, թե նույն ժամանակում արդեն հոլովիչներն սկսել են խառնվել։ Հետագա դարերում շփոթությունը զարգանալով հասավ խառնակության մեծ աստիճանի, ինչպես ցույց են տալիս վերի օրինակները։

Նոր շրջանում, այսինքն միջին հայերենից հետո, լեզուն ձգտում է մի ուղղության. հոլովումը վերածել միաձևության։ Այսուհետ սկսում են բոլոր բառերը հոլովել ի հոլովման համաձայն։ Այս եղավ լեզվի ընթացքը։ Բայց, որովհետև ոչ մի բան բնախոսություն չի կարող միանգամից և ընդհանուր տարածվել, ուստի հոլովական բարեփոխությունն էլ միջնադարից սկսելով մինչև այսօր էլ չի հասել իր վերջին վախճանին։ Մի քանի հետավոր բարբառներ (ինչպես Պոլսի ռամկօրենը, Նոր-Նախիջևանի և Ռոստովթոյի բարբառները) հասել են վերջին կետին և հոլովումը վերածել են մեկի. ինչպես՝ հացի, ջուրի, ձուկի, մուկի, առնի, շանի, գուռի և այլն, բայց այնուամենայնիվ մնում են առաձու, մարդու, մենձության, ազգկան, մօր, հօր, քրոջ, օրման և այլն։ Զարմանալի է նկատել, որ վանի բարբառում -թիւն հանդող վերացական բառերը հոլովվում են -թենի, Տփղիս -թինի, իսկ Պոլիս ևս ում է դեռ սեռ. -թաւն, ուստի կարելի է ասել, թե շարժումը թեև վաղուց սկսած, բայց ոչ մի տեղ իր վախճանին հասած չէ։

5. ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԵՏԱԴԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Եթե հնդեվրոպական նախալեզվի հոլովումը անփոփոխ մնաց ժառանգ լեզուներում և յուրաքանչյուրի մեջ որոշ ձևափոխության ենթարկվեց, զարմանալի չպիտի լիներ, եթե նոր լեզուներն էլ հին լեզուների հոլովական դրությունը ձևափոխեին և նրա մեջ նոր կարգ ու կանոն մտցնեին, քանի որ ձայնական պատճառով հոլովումը նոր լեզուների մեջ այնպիսի անկանոնության էր հասել, որ նոր կարգ ու կանոնը անհրաժեշտ էր։

Առնենք, օրինակ, նոր հունարենը, որը շատ կոմկերով կապվել է համեմատել մեր աշխարհաբարի հետ։ Տեսնում ենք, որ նոր հունարենի հոլովական ձևերը բոլորովին նույն չեն հին հունարենի հետ. չհաշվելով արտասանի ջնջումը, հոլովական վերջավորությունները փոխված կամ կրճատված են, հոլովումների բաժանումը այլափոխված է, մի բան որ հին հունարենի օրենքներով պիտի պատկաներ այս ինչ հոլովման, անցել է մի ուրիշ հոլովման։ Սահմանվել է նույնիսկ մի բոլորովին նոր հոլովում (4-րդ հոլովումը), որ չկար հին լեզվի մեջ և այլն։

Համեմատության համար պիտի անենք այստեղ ὁ πολίτης «քաղաքացի» բառի հոլովումը հին և նոր ձևով։

	հ. հն.	ն. հն.
Եզ.		
Ա.	ὁ πολίτης	ὁ πολίτης
Ս.	τοῦ πολίτου	του πολίτη
Տ.	τῷ πολίτῃ	—
Հ.	τὸν πολίτην	τό(ν) πολίτη
Կ.	ὦ πολῖτα	ὦ πολίτη
Հգ.		
Ա.	οἱ πολῖται	οἱ πολίτ(ες)
Ս.	τῶν πολίτων	τῶ(ν) πολίτω(ν)
Տ.	τοῖς πολίταις	—
Հ.	τοὺς πολίτας	τοὺς πολίτ(ες)
Կ.	ὦ πολῖται	ὦ πολίτ(ες)

Մեծ է տարբերությունը երկուսի միջև, մանավանդ, եթե նկատի ունենանք նոր հունարենի մեջ տառերի տարբեր արտա-

ան ութ յունը, որ գրութ յունը ծածկում է (այսպես η=հին հն. ē, նոր հն. i)։

Հին հունարենի հոլովման մեջ բառի ամեն մի հոլովի տարբեր ձև ունի, այնպես որ հոգերը նույնիսկ ավելորդ են ի բառի վերջավորութ յունը բավական է որոշելու հոլովը։ Իսկ նոր հունարենում բոլոր հոլովները համարյա նույնացել են (եզակիում -η, հոգնակիում -ες), այնպես որ՝ առանց հոգի անհնարին է իմանալ հոլովը։ Եվ հետու չէ այն օրը, երբ նոր հունարենի էլ հոլովումը կանցնի նոր եվրոպական լեզուների հոլովական դրութ յան, այն է՝ բառը միայն հոգերով հոլովելու։

Գրաբարում այսպիսի բան չկա։

Հին հունարենի պես հին հայերենն էլ թեև զանազան նորամուծութ յուններով և նմանողութ յան վրա հիմնված ձևափոխութ յուններով աշխատել էր միօրինակութ յուն և միակերպութ յուն մտցնել իր հոլովմանի մեջ, բայց դեռ չէր կարողացել հասնել մի այնպիսի ձևի, որ հաստատուն ու տևական լինելու գրավականը ներկայացներ։ Ահա դրա պատճառները.

1) Որովհետև բունի գաղափարը հայերենից ջնջված էր և ուղղական հոլովը հոլովական որևէ նշանից զուրկ էր, ուստի կարելի չէր իմանալ, թե որևէ բառ ինչ հոլովման պիտի հետևի։ Հայերենի այս թերութ յունը այսօր էլ ներկայացնում է գրաբարի ուսման մեծագույն դժվարութ յունը, և չկա մի կանոն, որ քիչ թե շատ նպաստի մեզ իմանալու համար, թե ինչ բառ ինչ հոլովմամբ պետք է հոլովվի։ Ամեն ինչ կախված է մեքենական վարժութ յուններից։ Նույն պատճառով է դարձյալ, որ որևիցե բառ, եթե հոլովյալ ձևով ավանդված չէ հին մատենագրութ յուններից, անկարելի է ճիշտ հոլովել։

2) Որոշ հոլովումներ այնքան նման էին միմյանց, որ հազիվ տարբերվում էին իրարից. այսպես՝ Ա հոլովումը եզակիում բոլորովին նույն էր ի հոլովման հետ և տարբերվում էր նրանից միայն եզ. գործիականում։ Այս պարագային խոսող անձի համար շատ բնական էր այս մի հոլովը ևս առաջին հոլովման

նման հոլովելու, որով երկու հոլովումները պիտի նույնանային կամ շփոթվելին իրար հետ։

3) Որոշ հոլովներ նույն էին իրար հետ. այսպես՝ եզակիում ուղղականը հայցականի հետ. ու հոլովման գործիականը սեռականի հետ եզակիում և հոգնակիում բոլոր սեռական-տրական հոլովաձևերը իրար հետ։ Այս նմանութ յուններն սոսկում էին, որովհետև նման պարագաներում, ուր որ աննմանութ յուն կար, նույնպես մեկի վերածվեր. այսպես՝ որովհետև եզակիում ուղղականը հայցականին նման էր, դա սոսկում էր, որ հոգնակիում էլ հայցականը նման լինի ուղղականի հետ, ուրիշ խոսքով՝ երկու հոլովները շփոթվեն իրար հետ։

4) Եզակին և հոգնակին զուգահեռ չէին իրար հետ. մեկի մեջ հոլովի կազմութ յան ձևը միատեսակ, մյուսի մեջ մի ուրիշ տեսակ էր. այսպես՝ եզակիում ներգոյականը կազմվում էր տրականից, մինչդեռ հոգնակիում նույն հոլովը կազմվում էր հայցականից.— հոգնակիում բացառականը կազմվում էր տրականից, մինչդեռ եզակիում միայն ո հոլովման մեջ էր այսպես. մյուս հոլովումների մեջ բացառականը կազմվում էր առանձին ձևով։

5) Որոշ հոլովներ այս ու այն հոլովման մեջ ունեին կազմութ յան միևնույն ձևը, մինչդեռ մի ուրիշ հոլովման մեջ տարբեր ձև ունեին. այսպես՝ բոլոր բառերի մեջ էլ հոգնակի ուղղականը կազմվում էր եզակիի վրա ավելացնելով ք մասնիկը, միայն ն, ղ և բ/ն հոլովումներն էին, որ այդ կանոնից չեզվում էին. եզ. բացառականը բոլոր բառերի մեջ էլ ի հանգն ուներ, միայն ո հոլովմունքն էր, որ տարբերվում էր ընդհանուրից. այսպես նաև եզ. ներգոյականը, որ բոլոր բառերի մեջ էլ կազմվում էր տրականից և միայն ո բառի մեջ կազմվում էր հայցականից։

6) Հոգնակիի նշանները երեքն էին. ք, ս, ց. առաջինը գործածվում էր երկու տեղ (ուղղական և գործիական), երկրորդը մի տեղ (հայցական), երրորդը՝ երեք տեղ (սեռական, տրական, բացառական). միայն այս վերջինը տալիս էր զանազան հոլովումների մեջ՝ -ից, -աց, -ոց, -ուց, -ուցն, -աւնց, և այլն։ Այսպիսով՝ հոգնակիի հոլովների համար մի հաստատուն ձև գոյութ յուն չուներ։

Ահա այս բոլոր պատճառները սոսկում էին խոսողներին հոլովներն ու հոլովումները շփոթելու իրար հետ, նմանողու-

թյան վրա հիմնված նոր ձևեր առեղծելու, մի խոսքով գրաբարի հոլովմունքը ամբողջապես վերանորոգելու։

Պետք չէ կարծել, թե ձևափոխության կամ հոլովական վերանորոգության գործը հենց ե գարից կամ դեռ ավելի ուշ սկսած լինի։ Հոլովների ծագումը ուսումնասիրելու ժամանակ մենք տեսանք, որ վաղուց արդեն հայերենը ձեռնարկել էր այդ գործին։ Նույնիսկ ե գարից ունենք այնպիսի օրինակներ, որոնք հաստատ կերպով ցույց են տալիս, թե շփոթությունը արդեն առաջուց էր սկսած և վերանորոգության գործը իր ընթացքում էր. այսպես, օր., զաւր բառը, որ եզակիում հետևում էր ու հոլովման (սեռ. զաւրու), հոգնակիում հետևում էր ա հոլովման (սեռ. զաւրաց). բերան բառը, որ սովորաբար հետևում է ո հոլովման, տեղ-տեղ հոլովված է ա հոլովմամբ (ինչ. սիրեցին զնա բերանոք իւրեանց) և առհասարակ ներդոյականը կազմում է ի բերանի ձևով, գիշեր բառը, որ հետևում է ո հոլովման, տեղ տեղ լինում է ի, ա հոլովմամբ. ինչ. գիշեր գիշերի ցուցանել զգիտութիւն. Զկէս գիշերաւ։ Ներգ. ի գիշերի։— Գալուստ, քնացուստ, փախուստ և այլ այս կարգի բառերը, որոնք պատկանում են ե հոլովման (գալստեան, թագաւեան, փախստեամբ), երբեմն հոլովվում են ի հոլովմունքով. ինչ.

Ի ձեռանէ նորա փախստիւ փախիցէ.

Ոչ ամուր թագաւի և ոչ գաշտ փախստի։

Ր—Ղ հոլովման հետևող բառերից շատերը հգ. թեք հոլովների մեջ անցել են ա հոլովման. ինչ. աստեղց — աստեղաց, տաբերբք — տաբերաւք և այլն։

Հանդիպ, գրբ. հանդերձիւ, բայց կա և՝ հանդերձով (Ագաթ. և Բուզ.)։

Գորա, սեռ. գորաոյ, բայց՝ գործ. գորաիւ.

Մեզ, սեռ. միզի, բայց գործ. միզով.

Աջ, սեռ. աջոյ կամ աջու.

Ձախ, սեռ. ձախոյ կամ ձախու.

Լուսին, սեռ. լուսնի, գրբ. լուսնով (Եզն. էջ 96 և 217 քով քովի՝ լուսնի, լուսնոյ)։

Գառիւ, սեռ. պառուոյ, պառուի (այս երկու ձևերն ունի Ա Տիմ. ե, 17 և Ջ 1 (ձեռ. տարբ. պառուոյ)։

Նիւթ և հիւթ, սեռ. ո հլ. ինչ. հիւթոյ Եզն. 21, 34, 110, 225, հիւթոց 220, հիւթից 91։

Այս օրինակներից ոմանք կասկածելի են և, անշուշտ, հեռու գրչագրական սխալներ. այսպես անշուշտ լուսին և պառիւ բառերի տարբեր հոլովաձևերը։

Նման սխալներ լիքն են ամբողջ հայ մատենագրության նույնիսկ լավագույն գրվածքների մեջ, որովհետև ամբողջ մեր մատենագրությունը միայն Թ դարից ուշ է հասել մեզ և այն էլ հաճախ շատ ուշ։ Եզնիկի միակ ձեռագիրը 2ԻԹ=1280 թվից է։

Ահա մի ցուցակ նման սխալների.

Վիպասանական «հեծաւ» երգի մեջ. Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին։

Ահա իրըև մեծ իրքն համարձակ հայանեցան ի լսելիս ամենեցուն և ի ձայնարկուքն ամենայն (Բուզ. Դ. ԺԵ)։

Իսկ թագաւորքն գմուրտակս գիւղաց կամ զագաթակաց գրեալ (Բուզ. Զ. ժ.)։

Այր մի երէց ազգաւ, Բենիամին անուն (Կոր.)։

Ամենայն գաւառովն իւրով (Կոր.)։

Սակայն, ընդհանրապես վերցնելով՝ հոլովումը ե դարում արդ և վճռական է և ամեն մի բառ ունի իր հոլովումը, որ հաստատ է միշտ և ամեն տեղ։ Նույնիսկ հոլովման տարբերությունը հաճախ միջոց է տալիս հոմանիշների տարբերությունները որոշելու. ինչ.

կոյս, կուսի, կուսաւ, կուսից (աղջիկ)
կոյս, կուսաւ, կուսաց (կոզմ)
որթ (խաղողի), որթոյ
որթ (կովի), որթու
կուր (մակույկ) ի-ա հլ. կերակուր, ո հլ.
փող (կոկորդ), փողիւ
փող (շեփոր), փողով։

Ե դարից հետո շփոթությունը և ձևափոխությունը շատ ավելի մեծ չափեր են առանում։ Դրանք բաժանվում են 4 կարգի.

1) Հայցական և ուղղական հոլովները շփոթվելով իրար հետ՝ սկսում են փոխադարձաբար իրար տեղ գործածվել. ինչ.

Ճչեաց մեծաձայն... ձեռք զմիջօք արկեալ. Վրք. հց. ա. 385։

Ասեն ցարքն (փխ. ցարսն). Վրք. հց. ա. 386։

Յարեան ի վերայ նորա պատերազմունս խիստս. Վրք. հց. ա. 636։

Էին անդ կուժս երկուս դատարկս. Վրք. հց. Բ. 176։

Զատուածքն և չատուածուհիքն կոչել. հոգնականութիւն. Պզատ. սիմ. 91։

Սրան ենք պարտական մի խումբ բառերի ս-ով ձեացումը արևելյան հայերենի մեջ. ինչ. հոգս, երկուս, մօրուս, չափս, քանխս, ծախս, ձևս, որոնց հնագույն օրինակներն են (անշուշտ հետին նորմուծութեամբ).

պարս. *Ոսկ. պօղ. Ա. 828։*
երկուս *Ոսկ. պօղ. Ա. 59, 718, Մաթ Բ. 489, ևս. 129։*
հոգս *Ոսկ. Մաթ. Բ. 637, Մծբ. 81։*

Ավելի ուշ ժամանակի օրինակներ են՝

Աչաց երակն ուռչին. Պահս է. Մեծ ծախս եղաւ (Այտն. Բ. 16)։

2) Որոշ հոլովմունքի պատկանող բառեր հոլովվում են ուրիշ հոլովմամբ. ինչ.

Լուսանցոյց *պատուհանովք (փխ. պատուհանիւք) Ասող գ. 47.*
քաղաքով *(փխ. քաղաքաւ) Վրք. հց. ա. 669.*
լերուընս *(փխ. ընդ լերինս) Պզատ. օրին. 16, 274.*
ակինցն *(փխ. ական «աչքի») Վրք. և վկ. Բ. 480.*
աչից *(փխ. աչաց), Վրք. և վկ. Բ. 210, Մաթ. և ապր. 93, 180։*

3) Ներգոյականի կազմութիւնը սխալ է գործադրվում, այսպես՝ մենք գիտենք, որ ներգոյական կազմելու համար սրա-կանի վրա դնում ենք ի նախդիրը, իսկ ուր որ բացառականի հետ շփոթություն է առաջանում, ներգոյականի փոխարեն գործածում ենք նախդրիվ հայցական (այսպես՝ ա և ո հոլովման եզակիում և ամեն մի հոլովման հոգնակիում)։ Սակայն անա ԺԴ դարի մի գրիչ գրում է.

«Ի պակասել ամաց և ի զառանցեալ տիոց և ի ծերութեան հասակի ... աւարտեցին» (փխ. ամս, տիս — Թորոս աղբ. Բ. 344)։

4) Անկանոն հոլովմունքի հետևող բառերը սկսում են խառնվել իրար հետ, որից հետո սկսում են հոլովվել կանոնավոր ձևով. ինչ.

Հգ. գրծ. եղբայրաւք *(փխ. եղբարբք). Անան. գիտ. 25։*

Գիւղ.— *Սեռ.* գեօղջն *Վրք. և վկ. Բ. 434, Բց. ի գեղէ Վրք. հց. Բ 330, ի գեղջուց Վրք. և հց. ա. 717։*

Քոյր.— *սեռ.* քօր *Վրք. հց. ա. 660.* քաւրն *Մխ. գաւա. 143.* քուրջ *Վրք. հց. ա. 122, Բցոյս.* ի քուրջէ *Վրք. հց. ա. 662,* ի քուրջեն *Վրք. հց. ա. 114, 115, հգ. ուղղ.* քոյրք *Վրք. և վկ. Բ. 315 (երկիցս), հգ. հյց.* զքոյրս *Վրք. և վկ. Բ. 316.* քուերք, քուերց, քուերս, ի քուերց *Վրք. հց. Բ. 58, 59։*

Այր.— *տր.* այրոջ *Վրդն. առ. 174։*

Ժէ դարի հեղինակ Երեմիա Չելեպին՝ իր օրագրության մեջ, էջ 141 հետևյալ ձևով է գրում.— Օրս երբորդում տեսայ հօրքուրիս ի տուն բերին փեսադարձ, հանդերձ հարքն և կնքահարաւն հօրաքուրիւն և կնքամարաւն, և այլ երկու ոգի և տղայ մի կնքահօրն»։

Երբ ասում ենք, թե զանազան հոլովներ ու հոլովումներ սկսեցին շփոթվել իրար հետ, այդ չի նշանակում, թե շփոթությունը մի կողմից էր միայն լինում, այլ երկու կողմից. այսպես՝ եթե ուղղականը գործ էր ածվում հայցականի տեղ, հայցականն էլ գործ էր ածվում ուղղականի տեղ. օր., երբ ասում էին ձեռք զմիջօք արկեալ, այստեղ ուղղականն էր, որ գործ էր ածվում իբր հայցական. իսկ երբ ասում էին «յաւրեան ի վերայ նորա պատերազմունս խիստս», այստեղ էլ հայցականն էր, որ գործ էր ածվում իբր ուղղական։ Նույնպես եթե ա հոլովման հետևող բառերը հոլովվում էին ի հոլովումով, ի հոլովման հետևող բառերն էլ հետևում էին ա հոլովման և ավելի հաճախ միևնույն բառը երբեմն հոլովվում էր ա հոլովման համեմատ և երբեմն էլ հոլովվում էր ի հոլովման համեմատ. օր., եթե մի անգամ ասվում էր քաղաքով, մի ուրիշ անգամ քաղաքաւ և մի ուրիշ անգամ քաղաքիւ և այլն։ Այս վիճակն էր, որ առիթ էր ձևերի բազմազանություն, ուրիշ բառով՝ խառնակություն։

Մարդկային միտքը խառնակություն չի սիրում. նույն նպատակին ծառայող բազմազան ձևերից նա ընտրում է միայն մեկը. միօրինակությունը քերականական պահանջ է։ եթե վերև հիշատակված շփոթությունները միայն մեկ ուղղությամբ լինեին, այսինքն միայն ուղղականը գործածվեր հայցականի տեղ, բայց ոչ նաև հայցականը ուղղականի տեղ, կամ ա հոլովումը դառնար միմիայն ի հոլովում, բայց ոչ միաժամանակ գործածվեր

ի, ա, ո հոլովմամբ, այդ պարագային խառնակութ յուն առաջացած չէր լինի և միօրինակութ յան պահանջը չէր զգացվի:

Ի՞նչ միջոց կար միօրինակութ յան հասնելու համար. ուրիշ խոսքով՝ ընտրութ յունը ինչ ուղղութ յամբ պիտի կատարվեր:

Կենդանական աշխարհում հպիում է նա, ով ուժեղ և կամ միջավայրին ու պայմաններին հարմարվելու կարողութ յան ունի: Այսպես է նաև քերականական ձևերի համար: Քերականական ձևերի ուժը կայանում է գործածութ յան հաճախութ յան մեջ. իսկ պայմաններին հարմարվելու կարողութ յունը բառերի համար այն է, թե նրանց կազմիչ ձայնները ինչ հարաբերութ յան մեջ են իրար հետ և ինչքան են համապատասխանում խոսողների բնախոսական կազմութ յան:

Մեկնելով այս երկու տեսակետից հոլովական բազմաթիվ ձևերի մեջ մրցումը պիտի տար հետևյալ արդյունքը.

1) Ուղղականի և հայցականի կռվում հպիութ յունը պիտի տաներ ուղղականը, որովհետև եզակիում արդեն երկուսը նույն լինելով՝ քանակութ յան առումելութ յունը ուղղականի կողմն էր:

2) Սեռական-տրական հոլովի բազմաթիվ ձևերի կռվում (ի, ոյ, ու, այ, իւ, աւ) անշուշտ հպիութ յունը պիտի տաներ ի ձևը, որովհետև հայերեն բառերի մի շատ խոշոր տոկոսը նրան էր բնկնում. ի ձևով էին կազմվում ոչ միայն ի բուները, այլև ա բուները, որոնք ինքնին արդեն մեծ թիվ էին կազմում. մնացյալ հոլովումները շատ մասնավոր և սահմանափակ գործածութ յուն ունեին. այսպես՝ այ հատուկ էր միայն հատուկ անուններին, իւ և աւ հատուկ էին ն հանգող բառերին և այն էլ երկու տիպարի վերածված, իսկ ու շատ սահմանափակ գործածութ յուն ուներ:

3) Բացառական հոլովը 7 տեսակ հոլովումներից վեցի մեջ կազմվում էր ի վերջավորութ յամբ. այսպես՝ ի բանէ, յամէ, ի գիտաէ, յանձնէ, ի շարժմանէ, յսակերէ, յատեանէ, ի փորէ: Նույն իսկ անկանոն հոլովումները ունեին բացառականի մեջ ի հանգը. ինչ. ի տօրէ, ի կնոջէ, ի գիտոյէ: Տարբեր էին մնում միայն ո հոլովման պատկանող բառերը (ի գիտոյ) և հատուկ անունները (ի Տրդատայ): Այս երկուսը բնականաբար թիվով շատ չնչին էին համեմատութ յամբ մյուսներին, հետևաբար և ի ձևն էր, որ պիտի հպիանային բացառականի կազմութ յան մեջ:

4) Գործիական հոլովը գրեթե յուրաքանչյուր հոլովման մեջ տարբեր կազմութ յուն ուներ (ի, աւ, ով, ու, ամբ, երբ,

ու). այս բոլորի մեջ հպիող հանգիսացավ ով ձևը: Ինչու արդյոք այսպես: Վերջին չորս ձևերի համար ոչ մի կասկած չկար, որ պիտի ջնջվեին, ոչ միայն իրենց թվի սակավութ յան համար, այլև որովհետև նույն հոլովումների սեռական, տրական և բացառական հոլովումները արդեն անցել էին ուրիշ հոլովման: Մնում էին իւ, աւ, ով ձևերը: Մենք վիճակագրական հաստատուն չգիտենք, թե այս երեքից որն էր ամենից ավելի գործածականը. բայց մեծ հավանականութ յամբ առաջինն էր (իւ), որովհետև բացատրել այն երևույթը, որ ուժեղը փոխանակ հպիվելու, հպիվի այս պարագային: Սկզբում մենք ասացինք, որ հպիութ յունը միայն ուժեղի կողմը չէ, այլև պայմանների հարմարութ յան. իւ ձևի մեջ ի ձայնավորի միացումը ր շրթնայինի հետ բնախոսական տեսակետով այնքան հարմար չէ, իսկ ո ձայնավորը ամենալավ կերպով զուգորդվում է նրա հետ: Դանիերենի մեջ au երկբարբառը կանոնավորապես դարձել է ov և արդի դանիերենում էլ գրվում է սովորաբար ov ձևով. ինչ. Paul>Povl «Պողոս» (Poestion, Lehrbuch der dänischen Sprache, էջ 8 և 13), արևելյան թուրքերենի մեջ av դառնում է միշտ ov. ինչ. av «որս»>ov և այլն: Ահա այս է պատճառը, որ ով ձևը դարձավ գործիականի սիրող մասնիկ:

5) Ներգոյական հոլովը եզակիում կազմվում էր սրականից, հոդնակիում՝ հայցականից. այսպես՝ նաև ո հոլովման մեջ և ա հոլովման հետևող հատուկ անունների մեջ: Միակերպութ յան պահանջը պահանջում էր, որ կամ հոդնակին հետևեր եզակիին և կամ հոդնակիին. առաջին դեպքում ներգոյականը բացառականի հետ կնույնանար, իսկ երկրորդ դեպքում՝ նախդրիվ հայցականի հետ: Այս պատճառով, ահա, ներգոյականի կազմութ յան հին սինդրը ջնջվեց, և նրա փոխարեն տարածվեցին կը ձյուղի բարբառներում մեջ նախադրութ յամբ կազմված ձևեր, իսկ ում ճյուղի բարբառներում ում մասնիկով կազմված ձևեր (քաղաքին մեջ, քաղաքում): Մնացին միայն մասը մուռը հետքեր հին ներգոյականից. ինչ. առանն է. գլխին դրեց, երեխան գոգին է. երկրին անցավ, ջրի երեսին և այլն:

Հոդնակիում վերանորոգութ յունը տեղի ունեցավ բոլորին ուրիշ ձևով:

Շատ լեզուների մեջ ընդունված ձև է հոդնակիի փոխարեն հավաքական ձևեր գործածել: Հավաքական են կոչվում այն բառերը, որոնք ձևով եզակի, բայց բովանդակութ յամբ հոդնակի

են, ուրիշ խոսքով՝ նշանակում են խումբ կամ բազմություն։ Հավաքական բառերը երկու տեսակ են լինում. պարզ բառեր, որոնք հավաքական իմաստ ունեն հենց իրենց էությամբ. ինչ. ազգ, ժողովուրդ, ամբոխ, խումբ, գունդ, սազարթ... երկրորդ՝ ածանց բառեր, որոնց հավաքական իմաստը առացվում է մի մասնիկի միջոցով, օր., աւագանի, որևար, որոնք կազմված են -աւի և -եար վերջնիկներով։

Չխոսելով առաջինների մասին, որոնք ամեն լեզվի մեջ էլ կան, տանք մի քանի օրինակներ երկրորդներից։

Ֆրանսերենի մեջ հավաքական են կազմում -age, -aie, -ain մասնիկները (առաջինը ամեն տեսակ առարկայի համար, երկրորդը՝ հատկապես բույսերի համար, երրորդը՝ թվականների համար). օր., herbage «խոտեր», feuillage «տերևարկղ», branchage «ճյուղեր», plumage «փետուրներ», chênaie «կաղնուտ», cerisaie «կեռասենիների խումբ», châtaigneraie «շագանակենուտ», huitaine «ութնյակ», centaine «հարյուրյակ», trentaine «երեսնյակ» և այլն։

Իտալերենի մեջ հավաքական են կազմում -ame, esca, ume մասնիկները. ինչ.

pollame հավեր	legname փայտեր
bestiame հոտեր	soldatesca զինվորներ
ossame ոսկերոտի	selvaggiume վայրի անասուններ։

Ռուսերենում գանազան մասնիկներով ունենք՝ листва «տերևարկղ», детвора «մանուկներ», десяток «տասնյակ» և այլն։

Հավաքականի դրությունը կար մինչև անգամ հնդեվրոպական նախալեզվի մեջ, որ սրա համար ուներ 3 ձև.

-om-, համմտ. հն. ἄστρον «համաստեղություն», սանս. tarам «հաղորդք», āçvám «ձիերի երամակ», հրգ. huon «հավեր ու աքլորներ միասին», լտ. collegium.

-ā, համմտ. սանս, tārā «համաստեղություն», հն. φρᾰ́τρια «եղբայրություն», հսլ. bratrīja «բոլոր եղբայրները միասին», լտ. familia «ընտանիք».

-ta, համմտ. սանս. jana-tā «հասարակություն, համայնք», լտ. juventa=հսլ. janota «երիտասարդություն», ուկր. kinnota «հեծելազոր», žonota «կանայք», լտ. civitas «ժողովուրդ», հրգ. truth «վաշտ»։

Արդի հայերենում ունենք հավաքականի մի քանի ձևեր. այսպես՝

-յակ—որով կազմում ենք թվականների հավաքականը. ինչ. տասնյակ, հնգյակ, վեցյակ, հիսնյակ, յոթանասնյակ, հարյուրյակ, հազարյակ և այլն։

-եղեն—որով կազմում ենք գանազան բառեր՝ տալու համար այն նյութից պատրաստված մի խումբ առարկաների նշանակությունը. ինչ. պղնձեղեն, արծաթեղեն, քարեղեն, փայտեղեն, ոսկեղեն, գոհարեղեն, մսեղեն, կաթնեղեն, բանջարեղեն. այս բառերը իրապես նշանակում են «պղնձյա, արծաթյա, քարե, փայտե, ոսկե...», բայց նաև ունեն հավաքական նշանակություն. օր., Շենքի փայտեղենը պատրաստ է. Ոսկեղենս ու արծաթեղենս ծախեցի. Պղնձեղենը խոհանոցում գտնել է. Ի՞նչ քարեղեն ունիս. Գոհարեղենի վաճառական է։ Այսեղից նույն ձևը անցել է նաև այնպիսի բառերի, որոնք չեն նշանակում «նյութ», ինչ. ամանեղեն, կտորեղեն, հարսնեղեն (!), աղջկեղեն(!), ուտելեղեն, չորեղեն, քաղցրեղեն, անուշեղեն։

Հետևելով եվրոպական լեզուներին, մեր գրական լեզվի մեջ ամենից ավելի տարածվել է այժմ -ութիւն մասնիկը՝ հավաքական կազմելու համար. օր.

Ուսանողությունը այժմ ավելի աշխատասեր է դարձել (փխ. ուսանողները).

Երիտասարդությունը խանդավառությամբ ընդունեց նրան.

Ուսուցչությունը բացակայում էր.

Բանվորությունը կարմիր դրոշակներով դուրս էր եկել.

Ուղարկվեց մի պատվիրակություն.

Դերասանը հասարակության կողմից քաջալերություն չգտավ։

Հին հայերենում, արդեն և գրում, հավաքական կազմելու համար ունենք հետևյալ մասնիկները.

ակաւ.—գօրական (իսկ՝ գուսանական—Խոր. ա. 13. «գուսանի երգեր»).

իկ.—մարդիկ, (շանթիկ).

եար.—որևար, վանեար, բարձկնեար. բանեար, ազատեբար, իշեարք.

ովի.—մանկովի, ծակովի, ոսկերոտի, փորոտի.

աւի.—աւագանի, ազատանի, գլխանի, երիցանի, նամակաւոր, կրականի, վնասանի.

եան.—խոզեան, գրեան, նախարարեան, գօրագլխեան, թըզիեան, բերդեան, իշեան.

որայ.—վանորայ, արտորայ։

Այս բառերը սովորական հոգնակիների կողքին գործ էին ածվում հավասար հաճախությամբ. Օրինակ՝

Հասեալ ի վերայ զօրականաց ապրեցուցի.
Հմմտ. Զանի հարան ամենայն մարդիկն.
Նման է մանկտւոյ որ նստեցին ի հրապարակս.
Զմանկտին որ աղաղակէին ի տաճարին.
Մանկտի մանրիկ ելին ի քաղաքէն.
Որչափ ինչ կերան մանկտիդ.
Ցարիցեն մանկտիդ և խաղասցեն առաջի մեր.
Թող զկանայս և զմանկտի. Մաթ. ԺԴ, 21, ԺԶ 38.
Որեարն այն խաղաղութեամբ են ընդ մեզ. Ծն. լդ. 21.
Այսու նմանեսցեն մեզ որեարն. Ծն. լտ. 22.
Ծազմզով լցեալ են որեարս. Կոչ. ԺԶ.
Ելեալ դևքն յառնէին՝ մտին ի խոզեանն. Ղկ. Ը. 33.
Աւագանին որ թշնամութեամբ ոխս պահէին. Բ. Մկ ԺԴ. 11.
Վայ այնոցիկ որ կարեն կարկատեն զբարձկնեարդ ի ներքոյ ամենայն արմկան ձեռին. Եզեկ. ԺԳ. 18.
Ահաւասիկ ես ի վերայ բարձկնեարդց ձերոյ. Եզեկ. Ծգ. 20.
Բանեաբս. Եփր.
Մեծամեծ աւագանով, Գ. մակ. Ե. 2.
Մեծամեծս յաւագանոյն. Գ. մակ. Ե. 16.
Մեծամեծ աւագանոյն. Ագաթ.
Հանդերձ մեծամեծ աւագանովն. Ագաթ.
Գնաց Յիսուս ընդ արտորայսն նոցա. Մաթ. ԺԲ. 1.
Եւ եղեւ նմա ի շաբաթու անցանել ընդ արտորայս. Մրկ. Բ. 23.
Եւ եղև... անցանել նմա ընդ արտորայսն. Ղկ. գ. 1.
Զգնայր Յիսուս ընդ արտորայն. Տեսէք զարտորայն. Արտորայ և հունձքն. Արտորայ սպիտակացեալ. Ոսկ. մ. բ. 14 22. յհ. ա. 33.
Արդարև տուն սգոյ է վանորայն. Ոսկ. ա. տիմ. ԺԴ.
Զգրեան ժողովեաց զկախարդաց. Ոսկ. կոր.
Դիւրագոյն լիցին միտք ճառիցս, որպէս և գայլ գրնոյն. Ոսկ. մ. ա. 1.
Քան զպատճինացւոց գրեանն ևս ուղղագոյն. Ոսկ. ես.
Ապականեցան և վատնեցան գրեանքն. Եւս. պմտ. ը. 8.
Մատուցին զպատարագ նոխազեան. Եփր. մնաց.

Բուղանդը, որ ե դարի ամենաժողովրդական գրողն է, գործ է ածում բազմաթիվ այսպիսի հավաքական ձևեր, որոնք են.

Վանեաբ.—
Լնոյր զերկիրն Ադձնեաց վաներով. Բուղ. ե. 27, էջ 227
Լնոյր զամենայն շէնս վաներաս. Բուղ. Զ. 15, էջ 281
վանեբայոց. 268
վանեբայից. 280

Բանեաբ.—
ի բանեբոյն. 12
վարժեաբ. 227
բերդեան. 182, 183
Բերդակալեան. 183
Գիւղեան. 204
Եպիսկոպոսեան. 273
Ոչ գոյր չափ գլխանոյն ախոյեննից. 198
Հայոց ազատանոյն ախոյեցան. ե. 5
Թագաւորն հանդերձ աւագանովն. ե. 1, 44։

Այսպիսի հավաքական բառերը բացի նրանից, որ տալիս էին նախադասության որոշ պատկերավորություն, օգտակար էին նաև երկու կողմից. ա) վերացնում էին այն շփոթությունը, որ սկսել էր անեզական բառերի գործածության մեջ. վանք՝ եզակի կամ հոգնակի, բայց վանեաբ՝ իրը հավաքական, հոգնակի. բ) հավաքական բառերի կարևոր հատկանիշն այն է, որ թեև իմաստով հոգնակի են, բայց ձևով եզակի են. ուստի, ինչպես վերի օրինակներից էլ երևում է, պահանջում են ըստ համաձայնության հոգնակի, բայց իրենք հոլովվում են եզակի թվով (Այսպես էր նույնիսկ հնդեվրոպական նախալեզվի մեջ, ուր առկություն կար՝ հոգնակի ուղ., կոչ., հյց. հոլովի փոխարեն եզակի ուղ. հավաքական ձևը գործածել)։ Ըստ այսմ, որովհետև հավաքական բառերը հոլովվում էին եզակի ձևով (ինչ. մանկտւոյ, որերոյ, մարդկան, վաներով, վանեբաւ և այլն), ուստի նրանց գործածությամբ մարդիկ խուսափած էին լինում հոգնակիի կազմության բոլոր բարդություններից։

Ահա այս առավելությանց պատճառով է դարի կեսից հետո սկսում է աճել և տարածվել հավաքական ձևերի գործածությունը հոգնակիի փոխարեն։

Փարպեցու պատմութեան և թղթի մէջ ունենք, օրինակ, որեար 8 անգամ, որերոյ 8, որեարով 1, որերով 2, ազատորիար 2, յազատորերոյ 1, աւագորեար 2, աւագորերոյ 5, հայորերոյ 1, քաջորերոյ 1 (Karst, 177)։

Թողեք ի բաց զբաններդ. Փարպ. 363
Չնարկեր զիմոյ աշխարհին Հայոց. էջ 252
Եւ ընդ Վահանայ և այլ Հայերդ. 466
Եւ տեսեալ Նիխորայ զՀայերն. 495
Շարժեալ-զեհեռներն ի գովութիւն այլոցն. 603
Ազատանոյ. 64, 138, 140, 153
Աւագանի, ւոյ, հաւ, ով (63 անգամ)
Գիտէին երիցանիս զմահն. Փարպ. 281
Նամականի (15 անգամ)
Կրականի (4 անգամ)
Թղթեան, 185
Մոգեան, 233
Մեծամեծ պայպիսի վնասանի առնելով
Հնձողք արտորայոցն շուրջ դաւեզօքն գործէին
ի վանորայս և յեկեղեցիս
Զանթիւ արօտականս ընտանի իշանց
Զբերդեան ամրոցացն հայոց
Այնպիսի գործեան վճարեաց նա
Կարգեալ գիր գրենոյն։

Մինչեւ դարու հայերենում հոգնակիի փոխարէն հաւաքականի գործածութիւնը ավելի մեծ չափեր է ընդունում։ Քերականական ձևերի ընտրութիւնը պատահարար և հատուկ դիտումով չի կատարվում, այլ հարմարութեան պահանջների համաձայն։ Այսպես եղավ նաև հոգնակիի նոր դրութեան զարգացումը հայերէնի մէջ։ Գրաբար հոգնակիի դրութեան դժվարութիւնները շատ էին. մի կողմից ք, ս, ց հոգնակերա նշանները, մյուս կողմից վերջինիս ատացած -ացս, -իցս, -ոցս, -ուցս ձևերը առանց որոշ կանոնի, պատճառ եղան, որ հաւաքականը գար նրանց տեղերը գրավելու։ Այսպիսով, լեզվի մէջ ծնվեց ու հետզհետե զարգացավ հոգնակիի գրաբարյան դրութեան փոխարէն միջին հայերենի հաւաքական դրութիւնը, որ հասցրեց մեզ վերջապես այսօրվա պարզ ու միօրինակ հոգնակիի դրութեան։

Սկզբում դեռ բազմաթիվ հաւաքական մասնիկներ կային։

Ահա հաւաքական հոգնակիների ցուցակը, քաղված ՆՀԲ-ից.

Անուանանի
առաջանի
առականի
անողնանի (լժժանք, յուռութք)
աւագանի
բանեար
բարձկնեար
բերդեան
բոզեան
գահոյանի
գերեստանեայք
գեղեան «գյուղեր»
գլխանի
գորձեան
գրեան, ք
դարբնայք
երիցանի
երիցունիք (գուցե՝ երիցանիք)
զանգականի
թղթեան
իշեան, իշան, իշեարք
խանութայք
խոզեան
ծակտի
կալորայ
կանանի
կամարանի
կմբեթանի
կուզպանկանի (խանութներ)
կրականի
հանդերձանի
հիւանդանի
հիւպատեան
ձիան, ձիանք
մեհենանի
մեռելոտի
նամականի
նաւկնեար
ներքոզանի
շնուի, շնուի
ոսկերոտի, ոսկրոտի
որեանք, որեար, որեան, որեր
որկորեան
որձիք
չանչաղոտի «ցնցոտի»
չքոտի
պարտեերք
ջաղացանի
ջորեան
սալարանի
սամոտիք (փխ. սամեան)
անոտի
վանեար, վաներ, վանեերայք, վանորայ, վանորեայք
վարժեար
վնասանի
վտականի
տանեստան
ցնցոտի
փողեան
փորոտի(ք)
քաղաքանի
քաղաքկնեար
քաջեան

քթեր «ծայր» *օտարոտի*
քչոցանի *օրեր «անեծքներ»*
քուերք «քույրեր»

Այդ զանազան մասնիկներից ամենից ավելի հաջողություն են գտնում -եան, -եար, -ենար, -աճի ձևերը. սրանցից -եան գործ է ածվում մեծագույն մասամբ միավանկ բառերի հետ, -ենար գործ է ածվում նվազական ձևերի հետ, իսկ մյուսները՝ ամեն տեսակ բառերի հետ. -աճի մասնիկը միջին ձայնավորի կորստի օրինքով դարձավ նաև -ճի, իսկ -եար կրճատվելով հղավ -եր (անշուշտ նրա -երով հոլովվել ձևերի ազդեցությամբ, որոնց մեջ ա-ի կորուստը օրինական է), ինչ. -եան մասնիկով՝

բոզեան Վրք. հց. ա. 652, 668. բցո. ի բոզենոյն. անդ 153
փողեան «գրամներ» Վրք. հց. ա. 652 (երկիցս)
գողեան «գողեր» Անան. գիտ. 21 Վրք. հց. Բ. 345
կովեան «կովեր» Անան. գիտ. 24 Վրք. հց.
այծեան «այծեր» Անան. գիտ.
գեղենոյն «գիւղերի» Վրք. հց. Բ. 455
մորթեան «մորթեր» Կալիբ. 145
հիւպատեան «հիւպատոսներ» Խոր. Բ. 50։

-եար մասնիկով՝

շինականերն Վրք. հց. ա. 256
ճանճերոյ «ճանճերի» Վրք. հց. ա. 643
մկներ Անան. գիտ. 26
վարժեար «ուսմունք» Վրք. և վկ. ա. 458
ճողեար «հողեր» Արձ. 1036 թ. (Վիմ. տար. 19)
բանեար «բաներ» Վրդն.
վանեար «վանքեր» Վրք. հց.։

Եղիշեի պատմության մեջ ունենք մի անգամ պարսեր.

Եւ այնպես սաստիկ արիին զպարսերս[1] հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչև գնարց և գնաւուց և գիւր արարս և զգարդս կանանց ևս եղ ի վերայ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարսան արքունի (Եղիշ. մատ. էջ 108)։

[1] Նչ. պարսս բառի տակ հիշում է Եղիշեի այս օրինակը, բայց գրում է «արկին զպարտս (կամ զպարտեսս)»։ Կարելի է ուրեմն կարծել, որ կամ հեղինակներն են սրբագրել և կամ որևէ ձեռագրում կար զպարտս ձևը։

Քան գնուլս վայրենիս և գիշեարս անապատի. Մով. խչ.
Նույնը գործած -ենար, նվազական բառերի հետ.
Զիւրեանց ճաւկենարն բարձին Թողին. Պտմ. աղեքս. 138.
Զճաւկենարն մալխօք իրը ի կղզւոջ կապել հանգուցանէին. անդ 139։
Եւ ճաւկենար էին ի գետն. անդ. 140։
Որք միանգամ են ի քաղաքկենարդ մարդիկ, գան առ քեզ. անդ. 144։
Եւ ոմանք եկեալ ի քաղաքկեներոյն ասէին. անդ 145։
Ճգկնեարն «խցիկները» Վրք. հց. ա. 265։
Անի մասնիկով, որի կրճատ ձևն է նի.
Ընդ անարգանին, ընդ նուազունն խօսելով. Ոսկ. գծ. 313.
Եզնի «եզներ» Անան. գիտ. 24.
աղօթանի «աղօթքներ» Վրք. և վկ. ա. 231.
կուղպականի «կրպակներ» Արձ. 1042 թ. (Վիմ. տար. 22).
ախոռնի և մարագնի Արձ. 1215 թ. (Վիմ. տար. 59).
Ընդ գահոյանովն մտանէին. Պտմ. աղեքս. 28։

Գր. Մագիստրոսի Տաղաչափության մեջ կան հետևյալ ձևերը. աթոռանի, անդարձանի, անուանանի, առածանի, առականի, աստեղանի, գանգականի, խորհրդանի, կամարանի, հիւանդանի, մատենանի, մեհենանի, նշանանի, պատգամանի, պատուիրանի, տուեալանի, վաճառանի, վտականի (Karst, էջ 186).

Այս բոլորի հետ միասին պետք է ասենք, որ ք մասնիկով կազմված հոգնակիների գործածությունն էլ միևնույն ժամանակ ընդհատված չէր. հետաքրքրական է օր., Անանիա Շիրակացու քվաբանական խնդիրների ժողովածուի հետևյալ հատվածը, ուր մի կողմից տեսնում ենք -եան մասնիկով միավանկներ, ք մասնիկով բազմավանկներ և -նի մասնիկով մի ձև. Չի մի կայր ինձ աղնիւ, վաճառեցի և գնացն Դ մասինն կովեան գնեցի և է մասինն այծեան և ժ մասին եզնի և յժը դահեկանի ոչխարս առի (Անան. գիտ. 24)։

Հավաքական մասնիկների իրրև հոգնակի տարածումը և նրա հետ միաժամանակ ք մասնիկի ջնջումը ամեն տեղ միանվագ և միակերպ տեղի չէ ունեցել, այլ բարբառից բարբառ տարբերվում էր. սրա ամենապարզ ապացույցն այն է, որ մինչև այսօր էլ մեր բարբառների մեջ հոգնակիի կազմությունը միակերպ չէ և շատերի մեջ ք-ով հոգնակին կանոնավոր ձև է, ինչպես,

օր. Ղարաբաղի, Ագուլիսի և Նոր Ջուղայի բարբառներում, ինչպես նաև Ղզլար, Լոռի և այլն. ամեն բազմավանկ բառ, որ վերջանում է ձայնավորով, հոգնակիի մեջ առանում է ք մասնիկը. օր., Ղրբ. քիւչէքյ «փողոցներ», փսէքյ «փեսաներ», կի՛նիքյ «գինիներ», կաղվէքյ «կատուներ», Ջղ. գ՛որիք «գարիններ», լիզուք «լեզուներ», կուրայիք «կրիաներ» և այլն: Մարաղայի բարբառում, ընդհակառակը, բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերն են, որ հոգնակիի մեջ առանում են քիր մասնիկը (այսինքն ք+եար). ինչ. յամէչքիր «գոմեշներ», խաբիրքիր «հարյուրներ», ավքիլքիր «ավելներ» և այլն:

6. ՀՈԼՈՎՈՒՄԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ[1]

Ահա այն ընդհանուր սկզբունքները, որոնց համեմատ ձևափոխվեց գրաբարի հոլովումը և վերամշակվեց նոր հայերենի հոլովումը: Երկուսի անցման շրջանն է ներկայացնում միջին հայերենը, որից դժբախտաբար միայն մի բարբառ է մեզ ավանդված, այն է կիլիկյան հայերենը:

Կիլիկյան հայերենը ունի հինգ կանոնավոր և երեք անկանոն հոլովում, որոնք են.

1. Ի հոլովում

Այս հոլովման վերջավորութիւնները են. սեռ.-տր. ի, բացառական՝ է, գործիական՝ ով: Լապես համապատասխանում է գրաբարի ի հոլովման, սակայն սրան են խառնված նաև ի—ա հոլովման և ընդհանրապես բոլոր հոլովմանց հետևող բառերը: Օրինակ՝

Գոման «պայմանն», գոմնի, գոմնէ, գոմնով.
պղինձ, պղնձի, ի պղնձէ, պղնձով.
արոյն «արիւն», արոյնի, յարոյնէ, արոյնով.
ձոյն «ձիւն», ձոյնի, ի ձոյնէ, ձոյնով.
գրաւկան «գրաւականն», գրաւկնի, ի գրաւկընէ, -կընով.
թագւոր «թագավոր», թագւորի, ի թագւորէ, թագւորով.
պացխուն «պատասխան», պացխնի, ի պացխնէ, -նով.
ցորեն «ցորեանն», ցորենի, ի ցորենէ, ցորենով.
ոսկոր, ոսկրի, յոսկրէ, ոսկրով.
ալոյր «աւիւրն», ալոյրի, յալոյրէ, ալոյրով:

[1] Ամբողջ նյութի համար տես Karst, էջք 141—215:

2. Ո հոլովում

Այս հոլովման վերջավորութիւնները են. սեռ.—տր. ոյ, բց. ոյ, գրծ. ով. համապատասխանում է գրաբարի ո հոլովման. օրինակ՝

անուն «անասուն», անանոյ, յանանոյ, անանով.
պառկել, պառկելոյ, ի պառկելոյ, պառկելով.
ձի, ձիոյ, ի ձիոյ, ձիով.
գինի, գինոյ, ի գինոյ, գինով.
տարի, տարոյ, ի տարոյ, տարով:

Թեև այս հոլովումը ըստ ձևի համաձայն է գալիս գրաբարի ո հոլովման, բայց սեռ., տր., բց. հոլովի -ոյ վերջավորութիւնը կիլիկյան հայերենում այլևս չէր հնչվում ոյ, այլ յ-ի կորուստով՝ ո, որ բավական փակ հնչում ուներ: Ի հանդող բազմավանկ բառերի մեջ էլ -ւոյ, -ւով վերջավորութիւնները զրկվել էին իրենց ւ ձայնից և դարձել ոյ, ով. իսկ որոշ բառերի գրծ. -եաւ ձևը նմանողութեան օրենքով արդեն դարձել էր ւով, հետո՝ ով: Այսպես՝ գինի, գինեաւ>գինեւով>գինով,

Այս հոլովման հետևող բառերից շատերը անցել են նաև ու հոլովման. այնպես որ ունենք իբար կողքի պայլ, պայլոյ կամ պայլու, Այաս, Այասոյ կամ Այասու, և մանավանդ հոգնակիի մեջ՝ ճորտեր, ճորտերոյ կամ ճորտերու, ուռեր, ուռերոյ կամ ուռերու, ցաւեր. ցաւերոյ կամ ցաւերու: Այնքան, որ աշխարհաբարի և բարբառների մեջ վերջապես ոյ հոլովումը ջնջվում և վերածվում է ու հոլովման:

Այս փոխանցումը Կարսաը (էջ 150) բացատրում է ո ձայնավորի փակ հնչումով, որ արդեն ու ձայնին մոտիկ լինելով, հենց դարձավ ու: Սրանից մի քիչ տարբեր բացատրութիւն է տալիս Աբեղյանը (Ուղղագրութ. ռեֆորմը, էջ 57), որ ընդունում է, թե աշխարհաբարի ու հոլովումը ծագում է ոչ թե գրաբարի ու հոլովումից, այլ ոյ հոլովումից, հետևյալ ձևով. -ոյ երկբարբառը ընդհանրապես դառնում է ույ, որից յ-ի ջնջումով՝ ու. օր., աճույշ, աճուշ. այսպես և բառավերջում՝ մարդոյ>մարդույ մարդու:

3. Ու հոլովում

Այս հոլովման վերջավորութիւնները են. սեռ., տր. ու, բց. ի, գրծ. ով. համապատասխանում է գրաբարի ու հոլովման, որից զանազանվում է միայն գործիականի մեջ (ով փոխանակ ու, որ

սեռական-տրականի վերջավորությունն էր)։ Ավելի հետո ո հոլովումն էլ միացել է սրան։ Օրինակ՝

ժամ, ժմու, ի ժմէ, ժմով.
առոյծ, առուծու, յառուծէ, առուծով.
ծով, ծովու, ի ծովէ, ծովով.
լապտակ «նապաստակ», լապտակու, -ակէ, -ակով։

4. Ա հոլովում

Այս հոլովումը գրաբարի մեջ հատուկ էր անձնանուններին. օր.՝ Արշակ-Արշակայ, Հռիփսիմէ-Հռիփսիմեայ։ Ավելի հետո հատուկ անուններից շատերը անցան ի հոլովման. բայց ընդհակառակը -ուհի վերջացած իգական անունները, որոնք հնագույն հոլովում էին սեռ. -ուհւոյ, դարձան հետնաբար -ուհեայ։ Այսպես՝ Խոսրովուհեայ Յայսմ. Վրդն. լս. 47, Վրդ. Ժէ., Սմբատուհեայ Խոր. բ. կգ., Տիգրանուհեայ Խոր. Ա. Իը. ԻԲ., Արծր. Ա. Ե., Ուխտ Ա. իե. Ի, Զարուհեայ Խոր. Ա. իԲ. և այլն։ Առույն կալիսթենեսի մեջ ունենք աստուածուրհեայ 74, 84, չաստուածուրհեայ 74, քրմուհեայ 76, քրմաւուշայ 74 (Karst, 158)։ Այս օրինակները ցույց են տալիս, որ ա հոլովումը հատուկ անուններից իսպառ վերացած չէր, այլ գործածական էր նաև Կիլիկյան ժամանակ, որին ապացույց է ֆուլաճ «ինչ որ մարդ, այսինչը», սեռ. ֆուլաճայ (Karst, 157)։

Ի և է հանգող անունների սեռ. է. ինչ. Միխ. ասմ. բ. ապ. 334 Թեոդոսիէ, 343 (Եւ Արգլա՝ Ալէ որդին), 346 (Արգլէ որդին Ալէ), էջ 419 Լուաւ գմահն Ջանգէ (իմա Ջանգի ամիրայի). էջ 503. Լևոն որդին Սահփանէ։

Շարունակվում է մինչև անգամ ժէ դարում. այսպես՝ Դրնդ. 155. «Այնպիսի ոք է որ զԱլէ առանուման ի ձեռին ունի, որ Ալէ ձեռագիրն է» (իմա Ալիի)։

Ի վերջացող բառերի սեռականը է ձևով շատ է ավանդված միջին հայերենի գրականության մեջ. օր.՝ Տիրուհէ 1275 Թ. Ձեռ. Հալէպի, Ա. Բ 77բ։ Տիրուհէ 1641 Թ. Ձեռ. Հալէպի Ա. 174բ (ոչ մի տող հիշատակարան չկա. ինչու է դրել 1641)։

Այս է ձևը անշուշտ -եայ մասնիկի ամփոփումն է։

5. Ն հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են. սեռ.-տր. ան կամ ին, բց. նե, գրծ. նով կամ ով և օմ։ Համապատասխանում է

դրաբարի ն հոլովման, որին հետևում են նաև -ութիւն և -իկ վերջացող բառերը։ Օր.

Ծառութիւն «ծառայութիւն», ծառութեան, կամ ծառութին, ի ծառութենէ, ծառութենով.

այրիկ «ամուսին», այրկան, յայրկնէ, այրկնով.
կնիկ, կնկան, ի կնկնէ, կնկնով կամ կնիկով.
տուն, տան, ի տանէ, տանով կամ տնով.
ձուկ, ձկան, ի ձկնէ, ձկով
անձ, անձին, յանձնէ, անձով.
կաթ, կաթին, ի կաթնէ, կաթով։

Այս բոլորի մեջ ամենահետաքրքրականն է գործիականի ով վերջավորությունը, որ անշուշտ ծագած պետք է լինի գրաբարի -ամբ վերջավորությունից, բ-ի անկումով և ոնգականի մոտ ձայնավորը վերածելով օ-ի. այսպես՝ կաթով < կաթամբ, անձով < անձամբ, ձկով < ձկամբ, այլ օրինակներից հիշենք՝ ոսպով, սիսով, արջասպով, եղեգով, պաղով, բութով, մատով, ձեռով, ոտով և այլն (Karst, 161-2)։ Առանց ձայնավորի փոփոխության՝ նախավոր -ամ ձևը ունի Մխ. Բժշ. 127 սիսամ «սիսեռով»։ Համմտ. նաև կաճամբ և մանկամբ Վրք. և վկ. Բ. 212 (փխ. կանամբք, մանկամբք)։

Անկանոն հոլովումներ

Գրաբարի անկանոն հոլովում ունեցող բառերը չորն էին (հայր, քոյր, այր, օր, կին, գիւղ, տիւ). սրանցից տիւ բոլորովին չնջվեց. այր բառը ստանալով այրիկ ձևը՝ անցավ ն հոլովման, գիւղ բառը, որ արդեն հազվի գործիականի և հոգնակիի բոլոր հոլովներում կանոնավոր էր, այստեղ էլ անցավ ի հոլովման, պահելով միայն սեռ. գեղջի ձևը (Karst, 150).—հայր բառը իր ամբողջ խմբով պահեց իր հոլովումը՝ հետևյալ ձևով.

հայր, հօր, ի հօրէ, հօրով,
մայր, մօր, ի մօրէ, մօրով,
աղբայր, աղբօր, յաղբօրէ, աղբօրով
աղչքնմայր «աղջկայ մայրը», աղչքնմօր,
կարճմայր «տղի մայրը», կարճմօր։

Սրանց է հետևել նաև քոյր բառը, որ սեռականի մեջ դառնալով նախ քուեր, ապա երբեմն՝ քօր և երբեմն՝ քուրջ, դրկվել

է անկախ անկանոն հոլովում ունենալուց (առաջին դեպքում հետևել է հայր բառին, երկրորդ դեպքում կին բառին)։ Քույր մյուին ձևն է քոյր, քուր, սեռ. քեռ և քօր ձևերի։

Մնում է օր բառը, որ պահել է իր հոլովումը Կիլիկյան հայերենում՝ սեռ. աւուր, բց. յօրէ, գրծ. օրով (վերջինս չի վանդված պատահաբար)։ Բայց այս ձևերի կողքին կային նաև բց. յօրվնէ (յաւրվընէ) և անշուշտ նաև սեռ.-տր. օրվան։ Սրանց հետ ունենք նաև յիրիկվան, յիրիկվընէ, եգուց, յեգուցվընէ, վաղվընէ, որոնք ցույց են տալիս, թե ժամանակ ցույց տվող բառերի համար կազմվել էր մի առանձին հոլովում, ինչպես գըտնում ենք այսօր էլ աշխարհաբարի և բարբառների մեջ։ Աշխարհաբարում այս հոլովման շրջանակը բավական ընդարձակ է. այսպես են հոլովվում օր., գիշեր, ցերեկ, օր, տարի, ամառ, ձմեռ, ժամ, այսօր, իրիկուն, կեսօր, շաբաթ, կիրակի, ուրբաթ, ամիս, անգամ և այլն։ Բայց Կիլիկյան հայերենում դեռ շրջանակը այնքան մեծ չէր, և ամառ, ձմեռ, անշուշտ նաև ուրիշ բառեր հոլովվում էին սեռ. ամռան, ձմռան ձևով (Karst, 161)։

Այժմ պետք է քննել, թե ինչպես ծագեց այս սեռ. -վան, բց. -վանէ, վնե հոլովումը՝ ժամանակ ցույց տվող բառերի համար։

Հին հայերենի մեջ ժամանակ ցույց տվող բառերից ոմանք, ինչպես՝ ժամ, գար, առաւօտ, հոլովվում էին սեռ. ժամու, գարու, առաւօտու։ Բացի սրանից այս կարգի բառերը ունեին -ուն վերջավորությամբ մակբայական ձևեր, ինչ. առաւօտ-առաւօտուն, այգ-այգուն, վաղ-վաղուն, երեկ-երեկուն։ Այս բառերը Կիլիկյան հայերենում մակբայական գործածությունից անցան գոյականի և իբր գոյական բմբռնվեցին, ճիշտ ինչպես հին հայերենի այգուց մակբայը Կիլիկյան հայերենում դարձավ գոյական՝ եգուց։ Այնուհետև այս -ուն հանգող գոյականները հետևելով հին հայերենի աւուն, աւուան, յաւուանէ հոլովման, իրենք էլ սկսան հոլովվել իրիկուն-իրիկվան, ներգ. յիրիկվան, բց. յիրիկվնէ ձևով։ Բայց, որովհետև իրիկուն բառի կողքին կար նաև իրեկ «երեկոյ», գրբ. երեկ ձևը, կարծիք կազմվեց, թե իրիկվան ձևը այս երեկ բառի սեռականն է, որով առեղծվեց սեռ. վան, բց. վանէ, վնե վերջավորությունը, որին նպաստեց թերևս նաև մանէ, սեռ. մանուան հոլովումը։ Այնուհետև ժամանակ ցույց տվող ամեն մի բառ, ինչպես՝ եգուց, ցորեկ, օր և

այլն, կարող էին հետևել այս նոր հոլովման, այսինքն առանալ -վան, վնե մասնիկները[1]։

Անկանոն հոլովների մեջ ամենից ավելի ընդարձակ ձև առացավ կին բառը, որ գրաբարի մեջ հոլովվում էր կնոջ, ի կնոջէ, կնաւ կամ կանամբ։ Այստեղ ամենից բնորոշը ոջ վերջավորությունն էր, որ գտնում ենք նաև մի և գիւղ բառերի հոլովման մեջ. ինչ. միոյ կամ միոջ, ի միոջէ, գեղջ, ի գեղջէ։ Այսպես նաև տիւ, տուրընջեան, ի տուրընջենէ, միշտ, մշտնջեան։ Բայց այս ոջ մասնիկը ավելի սովորական ձևով գտնվում էր ի հանգող բազմավանկ բառերի հոլովման մեջ. ինչ. տեղի, տեղւոջ, ի տեղւոջ, տեղւոջէ, եկեղեցի, յեկեղեցւոջ, տարի, ի տարւոջ, ի տարւոջէ, կղզի, ի կղզւոջ և այլն։ Ահա այս ոջ մասնիկը օգտագործելով՝ Կիլիկյան հայերենում կին բառի հոլովումը հետևյալ ձևն առացավ. կին, կնոջ, ի կնոջէ, կնոջով (գործնականը ուներ իրենից առաջ կնոջաւ ձևը, ինչպես գտնում ենք գործածված Ոսկ. յհ. ա. 20 Մաշկ. Ցայսմ. մայ. 22, որ հետո դարձավ ո հոլովմամբ կնոջով (Karst, 154)։

Այսպես են հոլովվում նաև կին բառով բարդված բառերը. ինչ. այրակնոջ, իրիցկնոջ, տիկնոջ։

Բայց ավելի կարևորն այն է, որ սույն հոլովումը ընդարձակված և նրան են հպատակած նաև տարբեր բառեր. ինչ. գին, գնոջ, ի գնոջէ, ընկեր-ընկերոջ, տէր-տիրոջ, ի տիրոջէ, տիրոջով, ուսուցէր-ուսուցչիրոջ, քոյր-քուրոջ և այլն։

Սահմանների այս ընդարձակումը կարելի է բացատրել հետևյալ ձևով.

Գին բառը իբրև բոլորովին նուիրական՝ առացել է կին բառի հոլովումը (այսպես է կարծում Karst, 155). բայց թվում է, թե այս բացատրությունը բավարար չէ. բարբառներում ունենք գնոջ (Ալշ. Գնձ. երև. եւտ. կր. վն. Շլ. Շշ.) «Թանկագինն նշանակությամբ, որի դեմ վն. ունի նաև գնոց (ոչ մի բարբառում չկա գին, գնոջ հոլովումը, այլ միայն՝ գնի)։

Կին բառի իբր մի բարդ ձևը՝ տիկին պիտի հոլովվեր բնականաբար տիկնոջ ձևով, ինչպես գրաբարի, այնպես և մյուս հայերենի մեջ։

Տիկին բառին հարակից է միշտ տէր, երկուսն էլ իբր իշխանական տիտղոս (տէր և տիկին). որով այս բառն էլ ան նույն հոլովման։

[1] Վերի բացատրությունը ավելի կարևոր (էջ 167—8)։

Ընկեր բառը, ինձ թվում է, թե միջին հայերենում գոր-
ծածվում էր «կին, ամուսին» իմաստով, իբրև քաղաքավարա-
կան բացատրություն. և այս է պատճառը, որ ընկեր բառն էլ
անցավ նույն հոլովմանը:

Երբ այսպես կազմվեց մի խումբ իգական բառերի համար
-ոջ հոլովումը (կին, տիկին, ընկեր), այլևս դյուրին է ընդար-
ձակել շրջանակը նորանոր հավելումներով. այն է քոյր, և հե-
տագային էլ՝ տալ, կեսուր, աներ: Դուսար բառը չի մտել այս
խմբի մեջ, որովհետև գործածություններից դուրս էր ընկել:

Այր բառը՝ իբրև հականիշը կին բառի՝ հոլովված եմ գնում
-ոջ ձևով, ուշ ժամանակի գրաբարում: Այսպես՝ անթվական մի
հիշատակարանում. «Ցիշեսջիք զտնտես Ոսկիին, որ ետ կոչ-
մել զսուրբ Աւետարանս իւր և իւր այրոջն վարդանին հոգւոյն»
(Թորոս ապրաբ, հտ. Բ, էջ 361): Բայց այս ձևը չի տարածվել,
որովհետև այր բառը գործածությունից ընկավ:

6. ՀՈԼՈՎՆԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բարբառների երեք ճյուղերը (կը, ում, ել) հոլովների թվի
կողմից զանազանվում են իրարից միայն նրանով, որ ներգո-
յականը հատուկ է ում ճյուղին, մասամբ նաև ել ճյուղին,
իսկ կը ճյուղում գոյություն չունի: Ըստ այսմ, հոլովների թիվն
է վեց կամ յոթ, սրանք են. ուղղական, սեռական, տրական,
հայցական, բացառական, գործիական, որոնց վրա պետք է ավե-
լացնել նաև՝ ներգոյականը:

Սրանց գործածության մեջ պետք է նկատել հետևյալը:

1) Ուղղականը գործ է ածվում նաև իբրև կոչական. 2) հայցականը թե որոշյալ, և թե անորոշ, թե ընչավոր, և թե ան-
ընչավոր առարկաների համար նույնն է ուղղականի հետ կը ճյուղի
բարբառների մեծագույն մասի մեջ, իսկ Ում և Ել ճյուղերի
բարբառների մեջ նույնանում է տրականի հետ. 3) տրականը
թե որոշյալ, և թե անորոշ, նույնն է սեռականի հետ՝ կը ճյուղի
բարբառներում բնդհանրապես, իսկ Ում և Ել ճյուղերի բար-
բառների մեծագույն մասի մեջ տրականը սեռականից զանա-
զանվում է և վերջավորությամբ. 4) հայցականը գործ է ածվում
նաև իբր նախդրիվ հայցական բոլոր բարբառների 3 ճյուղերի
մեջ. 5) ներգոյականը հատուկ լինելով միայն Ում, մասամբ
նաև Ել ճյուղին, գոյություն չունի կը ճյուղի բարբառներում.

ուստի կը ճյուղի բարբառների մեջ՝ նույն հոլովը կամ կազմը-
վում է մեջ նախադրությամբ և կամ դրվում է հայցականի՝
նախդրիվ հայցականի նման. օր. Երև. քաղաքում տուն ունի,
փողոցում մարդ է գալիս. Գլ. քաղաքին մեջ տուն ունի կամ
քաղաքը տուն ունի. քաղաք գնաց. գիշերները խանութը կպառ-
կի. 6) բացառականը թեև գրական լեզվի մեջ զանազանվում է
արևելյան հայերենում -ից, իսկ արևմտյան հայերենում -է(ն)
վերջավորությամբ, բայց բարբառներում նույն միօրինակու-
թյունը պահված չէ. Երևանի բարբառում բացառականը հան-
դում է -ից, բայց նույն -ից վերջավորությունը ունի նաև Վանի
բարբառը, իսկ Տփղիս և Ղարաբաղ, ինչպես և ուրիշ մի քանի
բարբառներ, բացառականը կազմում են ից, -աց, -մից մաս-
նիկով:

Հոլովների մասին այս ընդհանուր տեսությունը տալուց
հետո հարկ ենք համարում խոսել մի քանի կարևոր բարբառ-
ների հոլովների մասին առանձին-առանձին:

Նոր-Նախիջևանի բարբառ. — Թե եզակիում, և թե հոգնա-
կիում գիտե 6 հոլով. ուղղական, սեռական, տրական, հայցա-
կան, բացառական, գործիական:

Անուններն հոլովման մեջ պետք է նկատել, որ՝

Ուղղականը գործ է ածվում նաև իբրև կոչական. ինչ. խեվը
եգավ «խանը եկավ». Հաձէ, խէվ, գէնէ՞ էգար «աո, գիժ, դարձյալ
եկար»:

Սեռական և տրական հոլովները միշտ նույն վերջավորու-
թյունն ունեն. ինչ. ճօրըս սաակն եր՝ ճօրս դուվի «հորս դրամն
էր, հորս ավից»:

Հայցականը շնչավոր որոշյալ առարկաների համար նույն է
սեռ.-տր. հոլովաձևի հետ, իսկ անշունչ, ինչպես նաև շնչավոր
անորոշ առարկաների համար նույն է ուղ. հոլովաձևի հետ. ինչ.
մաշթուն փախ դուվին «մարդուն վռնդեցին», մաշթ գը խևվ-
ցուցուք «մարդ կը խենթացնեք», քարերը թարլէ «քարերը դեն
գցիր»:

Հայցականը գործ է ածվում նաև իբրև շարժում ցույց
տվող (նախդրիվ հայցական) և դադարում ցույց տվող (ներգո-
յական) հոլով. ինչ. խանութ գէշթամ «խանութ կերթամ. քչէր-
նէրը խանութը գը բառգիմ «գիշերները խանութումն եմ
քնում»:

Գործիականը գործ է ածվում ի մեջ այլոց նաև և շարկապի փոխարեն. օր. մեգ հազ էրիմարթով մեգ հազ գինիմարթ «մեկ այր և մեկ կին»։ Գործիականի այսպիսի գործածութիւններ, որ կա նաև Գալիսի բարբառում, Թուրքերենից է անցել մեզ։

Համշենի բարբառ.— Կը ճյուղի բոլոր բարբառների նման ունի 6 հոլով՝ քե եզակի, և քե հոգնակի. սրանք են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական։ Պակասում է ներգոյականը։

Սրանց գործածութեան մեջ պետք է նկատել, որ՝

1) Ուղղականը գործ է ածվում նաև իբրև կոչական.

2) Հայցականը շնչավորների մեջ երբեմն նման է ուղղականին և երբեմն էլ տրականին, օր.

Էնիր խաչօգին քիչ մը յարալագիլէր.

Կիրկէօրը (կամ Կիրկէօրին) մաքառարըն հանէցին «Գրիգորին գպրոցից հանեցին»։ Ընէր յէզը մօշտէցին «Ներանք եղր մորթեցին»։

3) Տրականը քե որոշյալ, և քե անորոշ՝ նույն է սեռականի հետ։

4) Հայցականը գործ է ածվում նաև իբր նախդրիվ հայցական.

Ախպոյս կնաց ցախուդը.

Հայս գունը կնաց.

5) Ներգոյականի համար գործածվում է տրական հոլովը. օր.

Գօնը նստած ա «տանը նստած է».

Ցախուդին մօն կուկա «անտառում մարդ է գալիս».

Ծօնուդին նստած պօնի գու «խանութում նստած աշխատում է»։

Այսպիսով, տրական, ներգոյական, հաճախ նաև բացառական, նույնանում են. երբ ասում են Քաղաքին ի՞նչ ձախին գու, կարելի է հասկանալ քե «քաղաքում ինչ են ծախում», քե «քաղաքին ինչ են ծախում»։

Նոր-Ջուղայի բարբառ.— քե եզակի, և քե հոգնակի ունի յոթ հոլով. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական. Ում ճյուղի մյուս բարբառների համաձայն, այստեղ էլ սեռ.-տր. նույն ձևն ունեն։ Հայցականը առանձին ձև չունի. անշունչ առարկաներ նշանակող բառերի և անորոշ բառերի հայցականը ուղղականի ձևով է, իսկ շնչավոր առարկաներ նշանակող և որոշյալ բառերի հայցականը նման է սեռական-տրական հոլովաձևին։ Բացի սրանից, հայցականը գործածվում է իբր շարժում ցույց տվող՝ նախդրիվ հայցական։ Գործիականի մեջ նկատվում է գործածության սահմանափակում, որ կա նաև ուրիշ բարբառների մեջ. շնչավոր էակների գործիականը հետզհետե չնչվում է և փոխանակվում է նախադրությամբ խնդրով՝ իբր ընկերական. օր. խօր խէա «հորը հետ», փոխանակ ասելու՝ խօրօվ «հորով»։

Ագուլիսի բարբառ.— Ում ճյուղի մյուս բարբառների նման, քե եզակի, և քե հոգնակի, ունի 7 հոլով. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական։ Ուղղականը գործածվում է նաև իբրև կոչական։ Սեռականը նույն է տրականի հետ. այստեղ չկա այն զանազանությունը, որ ունեն Ում ճյուղի այլ բարբառներ, սեռականը դնելով միշտ անորոշ, իսկ տրականի վրա, եթե որոշյալ է, ավելացնելով նաև ն հոդը։ Այս կետում Ագուլիսի բարբառը նման է Ղարաբաղի բարբառին և բոլոր Կը ճյուղի բարբառներին։ Շնչավորների հայցականը, եթե որոշյալ է, նույն է տրականի հետ և, եթե անորոշ է, նույն է ուղղականի հետ։ Ուղղականը գործածվում է նաև շարժում ցույց տալու համար, իբրև նախդրիվ հայցական, ինչպես նաև իբր ներգոյական. օր., Ըմ՛իւլիս շօտ մառդիք՛ կօն «Ագուլիսում շատ մարդիկ կան»։ Այս ձևի ներգոյականը գործածվում է սովորաբար տեղական հատուկ անունների (տեղանուն) համար։

Մարաղայի բարբառ.— քե եզակի, և քե հոգնակի ունի վեց հոլով. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական։ Ուղղականը գործ է ածվում նաև իբր կոչական և նախդրիվ հայցական. տրականը անորոշի մեջ նույն է սեռականի ձևի հետ, բայց որոշյալը տարբերվում է նրանով, որ առանում է հոգ. հայցականը անշունչ առարկաների, ինչպես և շնչավոր առարկաների անորոշ ձևի մեջ, նույն է ուղղականի հետ, իսկ որոշյալի մեջ նույն է տրականի հետ։ Ներգոյականը՝ նման Կը ճյուղի բարբառներին, գոյություն չունի բարբառիս մեջ և կազմվում է կամ նախադրությամբ և կամ ուղղականի հետ նույն է։

Առտիալի բարբառ.— Կը ճյուղի բոլոր բարբառների նման ունի 6 հոլով՝ քե եզակի, և քե հոգնակի. սրանք են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական։ Չկա ներգոյական հոլով։

Սրանց գործածութեան մեջ պետք է նկատել, որ՝

1) Ուղղականը գործածվում է նաև իբրև կոչական. 2) հայցականը թե որոշյալ, և թե անորոշ, թե շնչավոր, և թե անշունչ առարկաների համար նույն է ուղղականի հետ. 3) տրականը թե առարկաների համար նույն է ուղղականի հետ. 4) հայցականը գործածվում է նաև իբր նախդրիվ հայցական և իբր ներգոյական. օր.

Սչ. բէգդ՝ է էրթամ բ՝օշդ՝ան.

Սչ. բագրիարքարանը դ՝էլեգրաֆագ՝ ունինք.

Սղ. բ՝ախտը գուն գուգ՝ա (ամուսինը տուն է գալիս).

Սչ. գէրթան հարսնիքին գունը.

Լն. հայէրը գի նըսդ՝ին հիմիդ Գալիճ՝իան, Բուգ՝օվինան ու Բաստրարբիան (երեքն էլ ներգոյական). Ջամփա գանին Բաստրարբիան համ Մոլդովը (երկուսն էլ նախդրիվ հայցական)։

Հայցականը ուղղական դարձած՝

հնգ. հոգան ածել «հոգալ»

հնգ. էրկուսում «երկրորդ»։

Առտիալի բարբառում կենդանի է դեռ զ նախդիրը հայցականի վրա. հաճախ ասվում է զգ, նույնիսկ ձայնավորով սկսվող բառի վրա։ Օր., զզընկերը (հնգ.)։ Գրաբարի ձևով նախդիրը կարող է անցնել խնդիրներից առաջ. օր. զզո՞ւմ ճացը կուտիմ «որի հացն եմ ուտում»։ Ըզճարա ագուռը կը իշիմ «ձեռս անուռը հիշում եմ»։ Նույնիսկ կա ըզայս։ Հնգ. Ըզարաեց իաերի ելած ժըլէրն «առանց հրամանի՝ հեռացած՝ բնակիչը» (Բազմ. 1893, էջ 477)։

Կիլիկիայի բարբառ.— Կը ճյուղի բոլոր բարբառների նման ունի 6 հոլով՝ թե եզակի, և թե հոգնակի. սրանք են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական։ Գոյականում է ներգոյականը։

Սրանց գործածութեան մեջ պետք է նկատել, որ՝

1) Ուղղականը գործածվում է նաև իբրև կոչական։

2) Հայցականը թե որոշյալ, և թե անորոշ, թե շնչավոր, և թե անշունչ առարկաների համար նույն է ուղղականի հետ։ Օր. իմ քիյը դիաօ «իմ քրոջը տեսա». Օաօ գ՝էօվը բիդի գընիմ «այս կովը պիտի գնեմ». Օաօ մաքին զէնինք, քիյինք «այս ոչխարը կորեննք մորթենք»։

3) Տրականը, թե որոշյալ, և թե անորոշ, նույն է սեռականի հետ։

4) Հայցականը գործածվում է նաև իբր ներգոյական և նախդրիվ հայցական։ Օր. Թ՝իշիները խանութը գօ գինօ. Ամմէն էօյ խանութ գօյթօ։ Էգ՝էն շօգ խաղ գօ (այդում շատ խաղող կա). էգ՝էն իյթօմ, դուն դ՝առնօմ։

Ղարաբաղի բարբառ.— Հոլովները Երևանի և Թբիլիսիի բարբառների հետ նույնն են. այստեղ Երևան եկած տարբերությունները հետևյալներն են. սեռականը կազմվում է ըի (ի, ի) վերջավորություններով, բացառականը ա, ան վերջավորությամբ, գործիականը ավ-ով, իսկ հոգնակին՝ ըի, ների, ևի վերջավորություններով։

	Եզակի	Հոգնակի
Ո.	—	-ըէր, -նըէր, -նէ
Ս. Տ.	-ըէ, -է, ի	-էրի, -նէրի
Բ.	-ա, -ան	-էրան, նէրան
Գ.	-ավ	-էրավ, նէրավ
Ն.	-ում	-էրում, -նէրում

Հակառակ Երևանի և Թբիլիսիի բարբառների, այստեղ սեռականը կարող է առանձ և հոդը, երբ անհրաժեշտ է, որով տրականից զանազանության ոչ մի հետք չի մնում, ինչպես կը ճյուղի բարբառները. օր. Թիւնիւն պըէլին «Հարությունի կնքահայրը», կիրքօրէն հարը «Գրիգորի հայրը»։

Անորոշ դերբայները փոխանակ ու առանալու, ընդհանուր կանոնի համաձայն, սեռականում վերցնում են ի. ինչ. Հ՝ինչ օնիս ըսելի «Ի՞նչ ունես ասելու», Ծօսէլի մըհար «խոսելու համար»։

Գոյականների գրեթե բոլոր հոլովները վերջավորություններից առաջ կարող են ներմուծել ան, նաև ավելորդ մասը. օր. հաքվէնանա «հորաքրոջից», հաքվէնանաւ «հորաքրոջով» (հորաքրոջ հետ), հաքվէնանամ «հորաքրոջ մեջ» և այլն։

Վանի բարբառ.— Կը ճյուղի բոլոր բարբառների նման ճանաչում է 6 հոլով, թե եզակի, և թե՛ հոգնակի, որոնք են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական. ներգոյական հոլով չկա։

Սրանց գործածութեան մեջ պետք է նկատել, որ՝

1) ուղղականը գործ է ածվում նաև իբր կոչական.

2) հայցականը շնչավորների մեջ երբեմն նման է ուղղականին և երբեմն էլ տրականին. ինչ.

Շուն կապի՝ Շան կապի՝
Էտա խավ մորթի՝ Էտա խավուն մորթի՝
Էտա լաճ տար՝ Էտա լաճուն տար՝
Էտա տղէն պէ մօ ղի (կամ էտա տղին պէ մօ ղի) «այդ տղին բեր ինձ մոտ»՝
Ձեռ շատ կուզեմ ինոր «ես նրան շատ եմ սիրում»՝

3) *Տրականը թէ՛ որոշյալ, և թէ՛ անորոշ. նույնն է սեռականի հետ.*

4) *Հայցականը գործ է ածվում նաև իբրև նախդրիվ հայցական. օր.*

Սարկօն կնաց տուն «Սարգիսը գնաց տուն»՝
Կյըզպօն կնաց հաղաց «Գասպարը գնաց ջաղաց»՝ (Այս դեպքում կարելի է ասել նաև՝ դեպ տուն, դեպ հաղաց)՝

Նաև իբրև ներգոյական հոլով. ինչ.
Հըմէն օր տուն կմնաս, տիւս չես իկյա՝
Կիշեր չուր լոս իկյին քյընար՝

5) *Բացառականի սովորական ձևը կազմվում է -ից վերջավորությամբ, որով վանի բարբառը միանում է երևանի բարբառին՝ Սակայն կա նաև և, ևն ձևով բացառական. ինչ. խավամ (հավատից), մանվընէ, ճաղչէն (ջաղացքից)՝ վաղվընէ, ուլնրիկ (ուլունքից) և այլն՝ Այսպիսի բացառականները գործածական են ավելի ոճերի մեջ. ինչ. խավամ խանել «հավատքից հանել», կիրայնէ կիրակի «կիրակից կիրակի», քյախքյէ քյաղաքյ, կյնդ, աշխըրէ աշխար, անէ տուն, խօրէ մօրէ մէյ խաս էր լաճ, էս օրվէ չուր էնօր, էն օրվէ չուր էսօր՝*

Բացառականի հետաքրքիր ձևերից մեկն էլ ա ձայնավորով հոլովմունքն է, որին ենթարկվում են միայն տեղանունները. օր.

Թավրէզա «Թավրիզից»
Վանա «Վանից»
Մոյա «Մոյից»
Մոկաա «Մոկսից»
Սալմաստա «Սալմաստից»
Էկյէստաբա «Այգեստանից»
Ավրակա «Ավերակից»

Իդրա չուր վան «Իգդիրից մինչև Վան»
Իդրա կուկյամ «Իգդիրից եմ գալիս»

Սրանք գրաբարի հատուկ անուններին հոլովման մնացորդներն են՝ նախագրից զրկված. ինչ. յԵրուսաղեմայ, ի Գանձակայ, ի Վանայ և այլն՝

Վանի բարբառում ասվում է նաև Շաղրաղու(ց) կուկյամ և այլն՝

Կոչական հոլովը մի քանի բառերի համար ունի առանձին ձևեր. սրանք են՝

մարէ «ով մայր»,
քիւրօ «ով քույր»,
բարօ «ով պապ» (նաև բարէօ)
խարսա «ով հարս»,
խէրօ «ով հայր»՝

Ո վերջավորությունն ունեն նաև մի խումբ հատուկ անուններ. ինչ. Անդրօ (Անդրեաս), Սարկօ (Սարգիս), Ակօ (Հակոբ), Կյըզպօ (Գասպար), Կյէօրէօ (Գրիգոր) և այլն՝

Կարևոր է նկատել նաև այն, որ երբեմն երկու հարակից բառերից միայն վերջինն է առանում հոլովական վերջավորությունը. օր. տպայ և տպչիկ > լաճվախչիկ, սեռ. լաճվախչկան՝

7. ՀՈԼՈՎՈՒՄԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Թեև մեր բարբառները ձայնաբանական օրենքների պատճառով հեռացել են հեռվհեռե իրարից, սակայն բոլորն էլ հայերենի ընդհանուր օգուց չեն շեղվել՝ Այս պատճառով էլ մենք լավագույն համարեցինք նախքան առանձին բարբառների հոլովումը իրարից անջատ ու անկախ նկարագրելը, ներկայացնել հոլովումը միասին հետևյալ խմբերի տակ՝

Առաջին հոլովում

(Իբրև տիպար վերցնում ենք կը ճյուղի համար Գոլի բարբառը, իսկ ում և ել ճյուղերի համար Երևանի բարբառը)՝

Եզակի

	Գլ.	Երև.
Ո. Հ.	հաց	հաց
Մ. Տ.	հացի	հացի
Բ.	հաց-է	հացից
Գ.	հաց-օվ	հացով
Ն.	—	հացում

Հոդնակի

Ո. Հ. հացէր	հացէր
Ս. Տ. հացէրու	հացէրի
Բ. հացէրէ	հացէրից
Գ. հացեր-օվ	հացէրով
Ն. —	հացէրում

Եզակի

Ո. բառավ	պառավ
Ս. բառավի	պառավի
Տ. բառավի	պառավի
Հ. բառավ	պառավ(ի)
Բ. բառավէ	պառավից
Գ. բառավօվ	պառավով
Ն. —	պառավում

Հոդնակի

Ո. բառաշէր	պառաշէր
Ս. բառաշէրու	պառաշէրի
Տ. բառաշէրու	պառաշէրի
Հ. բառաշէր	պառաշէր(ի)
Բ. բառաշէրէ	պառաշէրից
Գ. բառաշէրօվ	պառաշէրով
Ն. —	պառաշէրում

Ինչպես տեսնում ենք, այս հոլովման վերջավորությունները են. եզակիում՝ սեռ.-տր. ի, բց. Պլ. -է, Երև. ից, գրծ. ով, ներգ. երև. ում: Հոդնակիում՝ սեռ.-տր. Պլ. -էրու, -ճէրու, Երև. -էրի, ճէրի, բց. Պլ. -էրէ, ճէրէ, Երև. -էրից, -ճէրից, գրծ. -էրով, ճէրով, ներգ. Երև. -էրում, -ճէրում:

Բոլոր բարբառների մեջ էլ, ինչ ճյուղի էլ որ պատկանեն նրանք, բառերի մեծագույն մասը հետևում է այս առաջին հոլովման, իսկ օտար բառերը՝ ամբողջությամբ. օր. սալդատի զվարկ, նաչալնիկի օթախը, դիրեկտորի տունը, բազարի դուռը, խյարի թուփ, տոլմայի թուփ, բառանի պառերը, արամվայի ռելս(ն)երը, կառչուկի գործարանը և այլն:

Նույնիսկ այն բառերը, որոնք որոշ բարբառներում, իբրև գրաբարի հազվագյուտ ճեացորդ, պահում են գրաբարաձև հոլովումը, Պոլսի բարբառում հետևում են այս հոլովման. ինչ. անունի (անուան), դունի (տան), շունի (շան), գինիի (գինուոյ, գինու), ինչի «ինչ բանի», իսկ՝ ինչո՞ւ իբրև հարցական՝ գրբ. է՞ր, ընդէ՞ր, լեզուի (լեզվի), ձինի (ձիու), ձունի (ձևան, ձիւնի), մատնիի (մատանու), մեզայի (զղջման. օր. մեզայի էգավ «զղջաց»), ձուգի (ձկան) և այլն:

Այս առաջին հոլովումը համապատասխանում է գրաբարի առաջին հոլովման (ի, ա): Այս միացումը առաջացել է այն պատճառով, որ հոդնակիի հոլովումը առհասարակ վերացվել է, որով -աց, -օք ջնջվել են:

Երկրորդ հոլովում

Իբրև օրինակ վերցնում ենք մարդ բառը.

Եզակի

	Պլ.	Երև.
Ո.	մարթ	մարթ
Ս.	մարթու	մարթու
Տ.	մարթու	մարթու
Հ.	մարթ	մարթ(ու)
Բ.	մարթէ	մարթուց
Գ.	մարթով	մարթով
Ն.	—	մարթում

Հոդնակի

Ո.	մարթէր	մարթէր
Ս. Տ.	մարթէրու	մարթէրի
Հ.	մարթէր	մարթէր(ի)
Բ.	մարթէրէ	մարթէրից
Գ.	մարթէրով	մարթէրով
Ն.	—	մարթէրում

Բոլոր բարբառների մեջ էլ այս հոլովումը խախտուն դրություն ունի:

1) Ամենից ավելի ընդհանուր գործածություն ունի գերբայը, որ քիչ բացառությամբ, գրեթե ամեն ռեզ, հոլովվում է այս ձևով. օր. սիրել, խոսել, մեռնել, խաղալ գերբայների սեռականները լինում են սիրելու, խոսելու, մեռնելու, խաղալու:

2) Ում և ել ճյուղերի բարբառներում -ի վերջացող բազմավանկ բառերը հոլովվում են այս հոլովման համաձայն (միայն կորցնելով ի ձայնավորը ու-ի մոտ). օր. Երևանի բարբառով՝

	Եզակի	Հոգնակի
Ո.	գինի	գինիներ
Մ.	գինու	գինիների
Տ.	գինու	գինիների
Հ.	գինի	գինիներ
Բ.	գինուց	գինիներից
Գ.	գին(ի)ով	գինիներով
Ն.	գին(ի)ում	գինիներում

Այս կարգի բառերը կը ճյուղի բարբառներում հետևում են ի հոլովման. ինչ. գինի, գեղացի և այլն: Նույնիսկ ում և ել ճյուղի բարբառների մեջ էլ սկսվել է այս անցումը. օրինակ՝ սկսել են ասել՝ Վեդիի, Շամախիի, Ռաֆֆիի և այլն (անցումը, ինչպես տեսնվում է, սկսվել է հատուկ անուններից՝ տեղական և անձնական):

3) Առանձին բառեր: Ամենից ավելի խախուտ է առանձին բառերի դրությունը, որ բարբառից բարբառ տարբեր է: Այս մասին ընդարձակ կխոսենք ներքևում.

Այս հոլովման վերջավորություններն են. եզակի՝ սեռ.-տր. ու, բց. Պլ. -ի, երև.-ից, գործ. -ով, ներգ. երև. -ում: Հոգնակին նույն է առաջին հոլովման հոգնակիի հետ:

Այս հոլովումը համապատասխանում է գրաբարի ոչ իմ ու հոլովման, այլ ոյ հոլովման, ինչպես տեսանք վերևում: Գրաբարի ու հոլովման հետևող բառերը բարբառներում բոլորն էլ անցել են -ի հոլովման. օր. ուլու-ուլի, ծովու-ծովի, զգեստու-զգեստի:

Առանձին բառերի թիվը բնականաբար բարբառից բարբառ տարբեր է: Մենք այստեղ կխոսենք մի քանի կարևոր բարբառների մասին: Պոլսի բարբառում եղած օրինակներն են.

մարթ - մարթու
էրիգմարթ «այր»-էրիգմարթու
գնիգմարթ «կին»-գնիգմարթու
հայ - հայու
ժամ «եկեղեցի» - ժամու
մանչ «տղա» - մանչու
ամէնը «ամենեքին»-ամմէնուն (չունի հոգնակի)
ջամփա «ճանապարհ» - ջամփու, ջամփէ, ջամփով
դղա «տղա» - դղու, դղէ (դղայէ), դղով (դղայով).
գլօխ «գլուխ» - գուլխու, գուլխէ, գուլխով:

Սեռական ու ձևով կազմում են նաև՝ սէր-սիրու, հօքի-հօրու «հոգույ», արէվ - արէվու, գարօդ - գարօդու (կարոտու), ամիս-ամսու, հէդ-հէդու «անգամվա», շաբաթ-շաբաթու, վախու «երկյուղի», նաև՝ ցուրդուն, մութուն, լուսուն: Բայց այս բառերը գործածական են կամ իբրև մակբայ և կամ առոգվածների մեջ. ինչ. Առուձաու սիրուն ըլլա քի սէր ասուածուն, մէռէլնէրուն հօքուն, արէվուն մէռնիմ, հօրս մօրս գարօդուն, էգող ամսու, էգող շաբաթու «հաջորդ ամիս, հաջորդ շաբաթ», վախուս լէգուս բռնվէցավ, աս հէդու «այս անգամ» և այլն: Ասում ենք նաև՝ ձախու (ծախու, վաճառելի). ինչ. ձախու է, ձախու դուն: Ազատ գործածության մեջ այս բառերը հոլովվում են՝ առաջին չորսը առաջին հոլովմամբ, վերջին երեքը՝ երրորդ հոլովմամբ:

Երևանի բարբառում վերոհիշյալ բառերի մեծ մասը հետևում է ի հոլովման. ինչ.

Գլխի, ճամփի, հայի, տղի, ժամի, ամէնքի, նույնիսկ՝ մարթի, տղամարթի: Ոճերի մեջ կարելի է գտնել՝ ճամփու դրեց, իրա գլխու և այլն:

Այս հոլովմամբ ունենք նաև ասված բառը, որ գրաբարում պատկանելով -ոյ հոլովման, բարբառներում անցել է -ու հոլովման, բայց ա, ծ բազաձայնների նմանության պատճառով տանապան ձևափոխություններ է կրել, այսպես օրինակ՝

	Պլ.	Երև.
Ո.	Ա. Ասոված, Ասված	Ո. Ասոված
Մ.	Տ. Ասուածու, Աստուծու, Աստու	Մ. Ասուծու, Աստծու
		Տ. » »
Բ.	Ասուածմէ, Աստուծմէ	Բ. Աստ(ու)ծուց, Աս(ո)վածանից
Գ.	Ասուածմով, Աստուծով, Աստուծմով	Գ. Ասուծով
		Ն. —

Պոլսի բարբառում կա մինչև անգամ հոգնակի Աստվածներ կամ Աստվածներ, որ գործածվում է միայն՝ Աստվածներ յերգին-քին գինչեցուն. գործածքի մեջ, որ նշանակում է «շատ մեծ երդումներ է անում» (այս առումբյունը գալիս է այն ժամա-նակից, երբ հայերը կռապաշտ էին և երկնքում ունեին 7 կամ 8 աստված):

Երրորդ հոլովում

Այս հոլովման հիմնական նշանն է՝ սեռ.-տր. -ան: Գործա-ծության մեջ զանազան բարբառներում այս -ան մասնիկը երբեմն ընում է -ան, երբեմն էլ դառնում է սեռ. -ա, տր. -ա, -ան: Օրինակ, առնենք ձուկ բառը (գրաբար ձուկն):

	Կը ճյուղ	Երև.
Ու.	ձուկ	ձուկ
Մ.	ձկան	ձկան
Տ.	ձկան	ձկան
Հ.	ձուկ	ձուկ, ձկան
Բ.	ձուկէ	ձկնից, ձկից
Գ.	ձուկօվ	ձկնով, ձկով
Ն.	—	ձկնում, ձկում
Ու.	ախչիկ	ախչիկ
Մ.	ախչկան	ախչկա
Տ.	ախչկան	ախչկա(ն)
Հ.	ախչիկ	ախչիկ, ախչկա(ն)
Բ.	ախչիկէ	ախչկանից
Գ.	ախչիկօվ	ախչկանով
Ն.	—	(ախչկանում)

Երբ համեմատենք այս երկու տիպարի բառերը (ձկան, աղջ-կան), կտեսնենք, որ սեռականի նշանն է -ան. բայց այդ առա-ջևուլթ է: Եթե համեմատենք գրաբարի հետ, առաջին ձևը կլի-նի ուղ. ձուկն, սեռ. ձկան, որից իսկույն երևում է, թե սեռա-կանի մասնիկը ոչ թե ան է, այլ ն հանգից առաջ ձևացած ա ձայնավորը. ճիշտ ինչպես որ ա-ի փոխարեն կարող ենք ունե-նալ նաև ի ձայնավորը. ինչ. եզն, եզին: Գրաբարի և հոլովման երկու տիպարներից առաջին տիպարը ջնջվեց՝ վերածվելով

երկրորդին և այն բառերը, որոնք սեռականում առանում էին -ին, գարձան -ան, ինչ. եզն, եզին-եզան, գառն, գառին-գա-ռան, լեառն, լերին-լեռան և այլն, ուրիշ խոսքով՝ քանակը հաղթեց որակին:

Մյուս կողմից, եթե աղջիկ բառը համեմատենք գրաբարի հոլովման հետ, կտեսնենք, որ գրբ. լինում է աղջիկ, սեռ. աղջ-կան. մինչդեռ ուղղականը գրաբարում ն հանգը չունի:

Այս դեպքում հարկ պիտի լիներ ասել, որ սեռականի մաս-նիկն է -ան, բայց այդ էլ ճիշտ չէ. աղջիկ, փոքրիկ, մանուկ և նման բառերն էլ հնագույն գրաբարում ունեցել են աղջիկն, փոքրիկն, մանուկն ձևերը, որոնցից ն հանգը ընկնելով, գարձել են աղջիկ, փոքրիկ, մանուկ, բայց սեռականը մնացել է աղջկան, փոքրկան, մանկան:

Այս հոլովման են պատկանում նաև գրաբ. -ումն մաս-նիկով բառերը. ինչ. շարժումն, շարժման: Բարբառներում -ում վերջացած այս կարգի գոյականների թիվը մեծ չէ. բայց զա-նազան բարբառներում կան իրրև մնացորդ հնության և նրանց մի մասն էլ բարբառներում հոլովվում է սեռ. -ման ձևով, թեև ամենայն կանոնավորությամբ կարող են հոլովվել նաև -ումի ձևով. ինչպես՝ խրում բառից սեռ. խրման (խրման իրիկուն), թաթախում, սեռ. թաթախման (թաթախման երեկո), ցասում սեռ. ցասման, որից բարբառներում՝ սասման խաչ և այլն:

Դարձյալ այս հոլովման են պատկանում -ութիւն վերջա-ցող բայերը, որոնք բարբառներում առանում են -ություն, -ութին, -ութեն և -ուտեն ձևերը: Սրանք բարբառների մեջ սե-ռականում դառնում են -ության, -ութան, -ութենի ձևերը:

Վերջին -ութիւն մասնիկի հետ կապվում են նաև մի խումբ առանձին բառեր, ինչ. տուն, շուն, սիւն, ձիւն, որոնք բարբառ-ներում տեղ տեղ պահված են տան, շան, սան, ձան ձևերով, թեև կարող են լինել նաև՝ տունի, շունի, սունի, ձունի:

Քերականագետները աշխարհաբարի հոլովումների բաժան-ման ժամանակ տարբեր ձևեր են դնում. ոմանք -ութիւն ձևը առանձնացնում են, ոմանք էլ միացնում են նախորդների հետ: Մենք, հիմնվելով ծագման սկզբունքի վրա, բոլորը միացրինք մի հոլովման մեջ, մանավանդ որ բաժանումը և զանազան տե-սակների վերածելը միայն մանկավարժական արժեք ունի և ոչ գիտական:

Պոլսի բարբառում այս հոլովման վերջավորութիւններն են սեռ.-տր. աճ, բց. -աճէ, ընկ, ե. գրծ. աճով, օվ. հոգնակիի վերջավորութիւնները նույն են առաջին հոլովման հոգնակիի հետ. օր.

	Եզ.	Հոգն.
Ո.	Հ. էրիգ	էրիգներ
Մ.	Տ. էրգան	էրիգներու
Բ.	էրգանէ, էրգընէ, էրիգէ	էրիգներէ
Գ.	էրգանով, էրիգով	էրիգներով
Ն.	—	—

Այսպես են հոլովվում միայն երեք բառ. հիգ «այր», գիգ «կին» և ախպիգ «ազջիկ». սրանց հոլովումն էլ շատ խախուտ է. սեռականի մեջ երեքն էլ կանոնավորապես լինում են՝ հրգաճ, գիգաճ, ախպրգաճ. բացառականի մեջ ունենք.

էրգանէ, էրգընէ, էրիգէ
գնգանէ, գընգընէ, գնիգէ
ախճրգանէ, ախճիգէ

Գործիականի մեջ՝

էրգանով, էրիգով
գնգանով, գնիգով
ախճրգանով, ախճիգով

Նման հոլովում ունեն նաև դուռ, քօռ, լեռ բառերը, որոնք լինում են՝

Մ. Տ. դռան, քօռան, լեռան
Բ. դուռնէ, քօռնէն, լեռնէ
Գ. դուռնով, քօռնով, լեռնով

Բայց այս բոլորը կարող են հոլովվել նաև առաջին հոլովման պես, ինչպես ասացինք. օր. դուռի, դուռէ, դուռով, շունի, շունէ, շունով, ձունի, ձունէ, ձունով և այլն։

-ուրիւն վերջացող բառերի հոլովման վերջավորութիւնները են. Պոլսի բարբառում սեռ.-տր. -թան, բց. թենէ, գրծ. թիւով. հոգնակին նույն է առաջին հոլովման հետ. օր.

	Եզ.	Հոգ.
Ո.	Հ. գէշութին	գէշութիններ
Մ.	Տ. գէշութան	գէշութիններու
Բ.	գէշութէնէ	գէշութիններէ
Գ.	գէշութինով	գէշութիններով

Այս հոլովման տակ են գնում բոլոր -ութիւն «-ութիւն» վերջացող վերացական բառերը։

Երևանի բարբառում ձուկ և աղջիկ բառերի հոլովումը արդեն գրինք վերևում։ Ահա մի օրինակ էլ -ուրիւն վերջացող բառերի՝

	Եզ.	Հոգ.
Ո.	Հ. լէնություն	լէնություններ
Մ.	Տ. լէնության	լէնություններէրի
Բ.	լէնությունից	լէնություններից
Գ.	լէնությունով	լէնություններով
Ն.	(լէնությունում անսովոր է)	լէնություններում

Չորրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորութիւններն են կը ճյուղի բարբառներում սեռ., տր. վաճ, բց. վաճէ, վընճ, գործ. վաճով, վընճով: Հոգնակին նույն է առաջին հոլովման հետ։

Ում և ել ճյուղի բարբառներում. սեռ. վա, տր. վաճ, բց. ից, վաճից, գրծ. վաճով, ներգ. վաճում. հոգնակին նույն է առաջին հոլովման հետ։

Չորրորդ հոլովումը գրաբարում իր համապատասխանը չունի։ Ծագել է միայն միջին հայերենի վերջին շրջանում իրիկուն բառի ձևափոխութեամբ (այս մասին մանրամասն ենք վերը)։ Բարբառներում, հետո էլ աշխարհաբարում, այս հոլովման սահմանը ընդարձակվեց և ժամանակ ցույց տվող բազմաթիվ բառեր հետևեցին այս հոլովման։ Ում ճյուղի բարբառում սեռ. վաճ վերջավորութեան ն բաղաձայնը թյուրըմբռնման օրենքով նախարդի նման որոշիչ հոդ կարծվելով՝ ջնջվեց և սեռականը դարձավ -վա։

Պոլսի բարբառում այս հոլովման վերջավորութիւններն են՝ եզակիում սեռ.-տր. -վան, բց. -վընէ, կամ -է, գրծ. -ով (քիչ անգամ -վընով)։ Հոգնակին նույն է առաջին հոլովման հետ. ինչ.

	Եզակի	Հոգնակի
Ո.	Հ. օր	օրեր
Մ.	Տ. օր-վան	օր-երու
Բ.	օր-վընէ, օր-է	օր-երէ
Գ.	օր-վընով, օրով	օր-երով

Այս հոլովման հետևող բառերը հետևյալներն են.

ամառն-ամառ-ամառվան, վրնէ
ամիս-ամիս, ամսվան, ամսըվընէ, կամ ամիսէ
անգամ-անգամ, ամքամվան, անքամէն
այսօր-ասօր, ասօրվան, ասօրվընէ
առաջ-առաչ, առաջվան, առաչվընէ կամ առաչուց (չկա առաչէն)
առաւօտ—առտու, առտըվան, առտըվընէ
առեան—ատէն «ժամանակ», ատէնվան, ատէնէն, ատէնով
գիշեր—քիշէր, քիշէրվան, քիշէրվընէ (կամ -նէն), քիշէրով
երբ—յէփ, յէփվան, յէփվընէ կամ յէփէն (գրծ. չկա)
երեկոյ—իրիկուն, իրիկվան, իրիկվընէ, իրիկունով
երէկ—էրէկ, էրէկվան, էրէկվընէ, էրէկվընով
զատիկ—զատիկ, զատկըվան, զատկըվընէ
ժամ-ժուռ «անգամ», ժուռվան
կանուխ—գանուխ, գանուխվան, -վընէ (անսովոր ձևեր են)
կիրակի—գիրագի, գիրագվան, գիրագվընէ, գիրագիով
հեղ—էղ, էղվան (էղու), էղվընէ, էղվընով կամ էղով
հերու—էրու, էրվան, էրվընէ, էրվընով
ձմեռն—ձմէն, ձմէնվան, ձմէնվընէ, ձմէնով
շաբաթ—շափաթ, շափաթվան կամ շափաբվան, շափաբվընէ (շաբաթվընէ), կամ շափաթէն, շափաթով (շափաթով, շափաթվընով, շափաբվընով), նաև՝ բց. շափաէ-շափաթ
շաբունց—շագունց, շագունցվան, շագունցվընէ
ուրբաթ—ուրփաթ, ուրփաթվան, ուրփաթվընէ
վաղիւ—վաղը, վաղվան, վաղվընէ, վաղվընով
տարի—դարի, դարվան, դարվընէ կամ դարիէ, դարվընով կամ դարիով
ցերեկ—ցօրէգ, ցօրէգվան, ցօրէգվընէ, ցօրէգէն կամ ցօրէգվընով
օր—օր, օրվան, օրվընէ կամ օրէն, օրվընով կամ օրով
տասնթ (թրք.) «ժամ»—տասնթվան կամ տասնբվան, տասնթվընէ, տասնթով
օհարատգ «կէսօր»—օհարատգվան, օհարատգվընէ։

Առանձին հետաքրքրություն արժանի է գէս «կէս» բառը, որ թեև թվական անուն է, բայց երբ որ ժամանակի համար է գործածվում, հետևում է վերոհիշյալ հոլովման. ինչ. սահարու-

գեվան, ամիսուգեվան, դարիուգեվան, շափաթուգեվան, օրուգեվան։

Շաբաթվա օրերի անունները, ինչպես նաև ամսանունները բնականաբար պիտի հետևէին նույնպես այս հոլովման, բայց սովորական չէ։ Ընդհանրապես օր բառի հարադրությամբ ասում ենք չօրեքշափթի օրվան, չօրեքշափթի օրվընէ և այլն և այլն։ Ամսանունները հետևում են առաջին հոլովման։ Ինչ. հունվարին, մարդին, հօքտօմբէնէն և այլն։

Մօռիկ—մօդիգ բառն էլ (ժամանակի իմաստով) կարող է տալ սեռ. մօդիգվան. ինչ. մօդիգվան բանն է «մոտ ժամանակի բան է»։

Մահ բառը, թեև ամենևին կապ չունի ժամանակի գաղափարի հետ, բայց անշուշտ տվել է նախ սեռ. մահվան (որ հիմա գործածական չէ բարբառում) և հետո դարձել է մահման։ Ասում են միայն մահման դողերու գաս (անեծք)։

Հինգերորդ հոլովում

Այս հոլովումը բարբառներում ունի հետևյալ վերջավորությունները. սեռ. տր. հոլովաձևը բոլոր ճյուղերում կազմվում է բառի վերջավանկի ձայնավորը դարձնելով օ, իսկ բց. և գրծ. հոլովները կը ճյուղի բարբառները կազմվում են սեռ. տր. հոլովաձևի վրա ավելացնելով մե, մով մասնիկները, իսկ ում և ել ճյուղերի բարբառները՝ -ից կամ մեն, գործ. օվ, մով մասնիկները։ Հոգնակին նույն է առաջին հոլովման հետ։

Գոլոթ բարբառով տիպար օրինակն է հայր.

	Եզակի	Հոգնակի
Ո. Հ.	հար	հարեր
Ս. Տ.	հօր	հարերու
Բ.	հօրմէ	հարերէ
Գ.	հօրմով	հարերով

Այսպես են հոլովվում միայն երեք բառ, որոնք են՝ հար, մար, ախպար, ինչպես և սրանցից կազմված բառերը, այն է՝ ասլամամար, գրնքահար, գրնքամար, սանահար, սանամար։ Միայն թե այս վերջիններս կարող են նաև հոլովվել սովորական ձևով։ Օրինակ՝ ժողովրդական երգը ասում է.

Եղով մեղրով տապկեցինք,
Սանամարին կերցուցինք։

Երևանի բարբառով հայր հոլովվում է հետևյալ ձևով՝

	Եզակի	Հոգնակի
Ո.	հէր	հէրէր
Մ.	հօր	հէրէրի
Տ.	հօր	հէրէրի
Հ.	հօր	հէրէրին
Բ.	հօրից	հէրէրից
Գ.	հօրով	հէրէրով
Ն.	—	հէրէրում

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման ծագումը և մանրամասնությունները տես վերը: Բարբառներում ախպար օրինակն է քոյր, որի հոլովման ձևն է.

	Պլ.	Երև.
Ո.	քուր	քիր
Մ.	քրօջ	քվօր, քրօչ
Տ.	»	» »
Հ.	քուր	» »
Բ.	քրօչմէ	քվօրից, քրօչից
Գ.	քրօչմօվ	քվօրով, քրօչով
Ն.	—	(քվօրում, քրօչում)

Այս հոլովման վերջավորություններն են, ինչպես տեսնվում է, սեռ.—տր.-օչ, բց. Պլ. օչմէ—Երև. օչից, գրծ. Պլ. օչմօվ—Երև. օչով:

Պոլսի բարբառում այս հոլովման են հետևում աղգակցության ցույց տվող հետևյալ բառերը. քուր «քոյր», անիք «աներ», նէր «ններ», գեաուր «սկեսուր», դաքր «տայգր», դայ «տալ», ինչպես նաև՝ դեր «տէր», դանդեր «տանուտէր»:

Աղգականության ցույց տվող բառերից զօրքանչ «զոքանչ», ինչպես նաև աէր բառից կազմված անդէր «աներ» և դէրդիր «տեր», քահանա բառերը չեն հետևում այս հոլովման, այլ առաջին հոլովման: Իսկ հօրաքուր և մօրաքուր բառերը, որոնք գրականից են փոխառյալ (բնիկ ձևերը Թրք. հալա «հորաքույր», թէյզէ «մորաքույր») սովորաբար հոլովվում են առաջին հոլով-

ման համեմատ.— մօրաքուրի, հօրաքուրի, մօրաքուրէ, հօրաքուրէ, մօրաքուրով, հօրաքուրով:

Ըստ Թեոդիկի «Պոլսի հայկաբանը» (էջ 1462) հինգերորդ և վեցերորդ հոլովման հետևող բառերի բացառականը Պլ. լինում է նաև -մընէ և այս պարագային ցույց է տալիս ժամանակի իմաստ. ինչ. քրօչմընէ, ախպօրմընէ, մօրմընէս (մեացած է):

Այժմ անցնենք բարբառների հոլովումը նկարագրելուն:

Նոր-Նախիջևանի բարբառ.— Գրաբարի անկանոն ու բարդ հոլովումը չափազանց պարզված ու կանոնավորված է: Գրաբարի 14 կանոնավոր ու անկանոն հոլովումներից մեացել է միայն մեր. որոնցից երեքը, բայց հատկապես մեկը միայն ընդհանուր է, մյուսները հատուկ են որոշ տեսակի բառերի կամ սակավաթիվ բացառություններին:

Առաջին հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ սեռ.-տր. ի, բց. -է, գրծ. -օվ, հոգ. սեռ.-տր. -(ն)էրու, բց. -(ն)էրէ, գրծ. -(ն)էրով: Օրինակ.

Ո. Հ.	հաց	հաց-էր	բառավ	բառավ-նէր
Մ. Տ.	հաց-ի	հաց-էրու	բառավ-ի	բառավ-նէրու
Բ.	հաց-է	հաց-էրէ	բառավ-է	բառավ-նէրէ
Գ.	հաց-օվ	հաց-էրօվ	բառավ-օվ	բառավ-նէրօվ

Այս հոլովման տակ են գնում բարբառիս բառերի ամենամեծ մասը, բոլոր օտար փոխառությունները առանց բացառության, նույնպես և՝ օտար վերջամասնիկներով ածանցված հայերեն բառերը: Հին հայերենի գրեթե բոլոր բույները վերածված են այս հոլովման. անխտիր ասում են, օր. անունի «անուանն», պանի «տանն», շունի «շանն», ձուգի «ձկանն», յէգի «եզանն», դուռի «դրանն», արունի «արեանն», ալուրի «ալեր», ասէղի «ասղանն», քունի «քնոյ», աղէքի «ագեաց», ասթիի «աստեղ», սխօռքի «սխռոյ», ազվէնիքի «ագռաւնւոյ», գինիի «գինւոյ», բարիի «բարւոյ (ապրանքի)», գօլոխի «գլխոյ», թիյի «թիոյ», ձիյի «ձիոյ», լուդուի «լեզուի» օրինակների «որբ և այլուոյ» և այլն: Մինչև անգամ հաջորդ հոլովումներին հետևող բառերը կարող են հոլովվել այս ձևով:

Երևանի բարբառով հայր հոլովվում է հետևյալ ձևով՝

	Եզակի	Հոգնակի
Ո.	հէր	հէրէր
Մ.	հօր	հէրէրի
Տ.	հօր	հէրէրի
Հ.	հօր	հէրէրին
Բ.	հօրից	հէրէրից
Գ.	հօրով	հէրէրով
Ն.	—	հէրէրում

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման ծագումը և մանրամասնությունները տես վերը։ Բարբառներում տիպար օրինակն է քոյր, որի հոլովման ձևն է.

	Պլ.	Երև.
Ո.	քուր	քիր
Մ.	քրօջ	քվօր, քրօչ
Տ.	»	» »
Հ.	քուր	» »
Բ.	քրօչմէ	քվօրից, քրօչից
Գ.	քրօչմօվ	քվօրով, քրօչով
Ն.	—	(քվօրում, քրօչում)

Այս հոլովման վերջավորություններն են, ինչպես տեսնվում է, սեռ.—տր.-օչ, բց. Պլ. օչմէ—Երև. օչից, գրծ. Պլ. օչմօվ—Երև. օչով:

Պոլսի բարբառում այս հոլովման են հետևում ազգակցության ցույց տվող հետևյալ բառերը. քուր «քոյր», աներ «աներ», ներ «ններ», գեներ «սկեսուր», դաքր «տայդր», դայ «տալ», ինչպես նաև՝ դեր «տէր», դանդեր «տանուտէր»։

Ազգակցություն ցույց տվող բառերից զօնքանչ «զոքանչ», ինչպես նաև տեր բառից կազմված աներեր «աներներ» և դերդեր «տերտէր», քահանա բառերը չեն հետևում այս հոլովման, այլ առաջին հոլովման։ Իսկ հօրաքուր և մօրաքուր բառերը, որոնք գրականից են փոխառյալ (բնիկ ձևերը քրք. հալա «հորաքույր», թեյզե «մորաքույր») սովորաբար հոլովվում են առաջին հոլովման համեմատ.— մօրաքուրի, հօրաքուրի, մօրաքուրէ, հօրաքուրէ, մօրաքուրով, հօրաքուրով:

Ըստ Թեոդիկի «Պոլսի հայերենը» (էջ 1462) հինգերորդ և վեցերորդ հոլովման հետևող բառերի բացառականը Պլ. լինում է նաև -մընէ և այս պարագային ցույց է տալիս ժամանակի իմաստ. ինչ. քրօչմընէ, ախպօրմընէ, մօրմընէս (Ճեացած է)։

Այժմ անցնենք բարբառների հոլովումը նկարագրելուն։

Նոր-Նախիջևանի բարբառ.— Գրաբարի անկանոն ու բարդ հոլովումը չափազանց պարզված ու կանոնավորված է։ Գրաբարի 14 կանոնավոր ու անկանոն հոլովումներից Ճեացել է միայն ութը, որոնցից երեքը, բայց հատկապես մեկը միայն ընդհանուր է, մյուսները հատուկ են որոշ տեսակի բառերի կամ սահմանափակ բացառություններին։

Առաջին հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ սեռ.-տր. ի, բցո. -է, գրծ. -օվ, հոգ. սեռ.-տր. -(ն)էրու, բց. -(ն)էրէ, գրծ. -(ն)էրով: Օրինակ.

Ո. Հ.	հաց	հաց-էր	բառավ	բառավ-նէր
Մ. Տ.	հաց-ի	հաց-էրու	բառավ-ի	բառավ-նէրու
Բ.	հաց-է	հաց-էրէ	բառավ-է	բառավ-նէրէ
Գ.	հաց-օվ	հաց-էրով	բառավ-օվ	բառավ-նէրով

Այս հոլովման տակ են գնում բարբառիս բառերի ամենամեծ մասը, բոլոր օտար փոխառությունները առանց բացառության, նույնպես և՝ օտար վերջամասնիկներով ածանցված հայերին բառերը։ Հին հայերենի գրեթե բոլոր բուները վերածված են այս հոլովման. անխտիր ասում են. օր. անունի «անուանն», դունի «տանն», շունի «շանն», ձուգի «ձկանն», յէղի «եզանն», դուռի «գրանն», արունի «արեանն», ալուրի «ալեր», ասէղի «ասղանն», քունի «քնոյ», ապէքի «ապեաց», ասթխի «աստեղ», աթօռքի «աթոռոյ», ապվէնիքի «ապաւնոյ», գինիի «գինւոյ», բարիի «բարւոյ (ապրանքի)», գօլօխի «գլխոյ», թիյի «թխոյ», ձիյի «ձիոյ», լուդուի «լեզուի» օրֆարիի «որբ և այրւոյ» և այլն։ Մինչև անգամ հաջորդ հոլովումներին հետևող բառերը կարող են հոլովվել այս ձևով։

Երկրորդ հոլովում

Երկրորդ հոլովման վերջավորությունները նույնն են առաջինի հետ, բացի եզակի սեռ.-տր. հոլովաձևից, որ -ու վերջավորություն ունի: Օր. մաշք «մարդ».

Ո. Հ.	մաշք	մաշք-էր
Ս. Տ.	մաշք-ու	մաշք-էրու
Բ.	մաշք-է	մաշք-էրէ
Գ.	մաշք-օվ	մաշք-էրօվ

Այս հոլովման հետևում են նախ բոլոր բայերի անեղևույթները՝ առանց բացառության (սիրէլու, ասէլու, մէռնէլու, խաղալու և այլն) և երկրորդ՝ մի քանի սակավաթիվ գոյականներ, որոնք են.

մաշք «մարդ»
ջամփա «ճանապարհ»
ամխ, ամսու կամ ամուսու, ամխէ
հէղ «անգամ»; հէղու, բց. հէղուէն (կա հէղէ), հէղօվ
շափաք «չարաքը», շափքու, շափաքէ
հօքի «հոգի», հօքու
օրքի «որդի», օրքու
դղա «տղայ», դղու
գուլօխ «գլուխ», գուլխու
հօրսագ «օրհասարար, կէսօր», հօրսուգու

Սրանցից ամխ, հէղ և շաբաթ բառերը պատկանում են իսկապես Դ հոլովման և նրա համեմատ էլ հոլովվում են. հոգի, որդի, տղայ, գլուխ բառերը իսկապես պատկանում են առաջին հոլովման և միայն ասացվածքների մեջ են հետևում երկրորդ հոլովման: Մարդ բառը հոլովվում է նաև բց. մաշքումէ, մաշքումէն, գրծ. մաշքումօվ. օր. սերք մաշքումէ գը վախնանք «խիստ մարդուց վախենում ենք»: Սրա նման որդի և տղայ բառերն էլ տալիս են բց. օրքումէն, օշքումէն, դղիմէն. Ճաց յալ բառերը չունեն այսպիսի հոլովաձևեր:

Հայ բառը հոլովվում է սեռ. հայի և ոչ՝ հայու:

Լոյս բառից կա լուսու «առաւոտյան ժամերգության կանգը», իբր բարդ բառ. բայց առանձին հոլովվում է լուս, լուսի և այլն: Սրա նման՝

Շող>շօղ «արևի ցոլք» բառից կա արեվին շօխուն:

Բայերի անեղևույթները, որ ինչպես ասացինք, այս հոլովման են հետևում առանց բացառության, երբեմն առանում են կրկին սեռական նշան, թէ ու և թէ ի. օր.

Հէռու քլլալուին սէրէօվը «հեռու լինելու պատճառով»:
Ուդելուին յոռուխը գիդէ «ուտելու ձևը գիտե»:
Սաագ վաստրգելուին գէղը «փող շահելու տեղը»:
Համան փախ գալուին բանը գը նայի «իսկույն վռնդելու միջոցը կորոնև»:
Գաղդուգ բան ասելուի բէս «գաղտնի բան ասելու ձևով».
Ցօրէնին աջելուին համար բէթք է «ցորենի ճաման համար կարևոր է»:
Ամէն բանօվ թամամ քլլալուին խայրաթը անինք «ջանանք ամեն կերպով կատարելագործվել»:

Այս հոլովման է պատկանում նաև ասուած բառը, որ հին հայերենի -ոյ հոլովման է պատկանում, և բարբառիս մեջ ձայնական փոփոխությունների պատճառով ստացել է բոլորովին անկանոն մի ձև, այսպես՝

Ո. Հ.	Ասված
Ս. Տ.	Աստու, աստուծու, Աստուձու
Բ.	Աստուձմէ, Աստուձմէ
Գ.	Աստուձմօվ, Աստուձմօվ

Երրորդ հոլովում

Երրորդ հոլովման վերջավորություններն են՝ սեռ.-տր. -ան, բց. -անմէ, գրծ. -անմօվ. հոգնակին նույնն է առաջին հոլովման հետ. ինչ.

Ո. Հ.	էրիգ	էրիգ-նէր
Ս. Տ.	էրգան	էրիգ-նէրու
Բ.	էրգանմէ	էրիգ-նէրէ
Գ.	էրգանմօվ	էրիգ-նէրօվ

Այս հոլովման հետևում են մի քանի սակավաթիվ գոյականներ, որոնք են՝ էրիգ «այր, ամուսին», գինգ «կին» և ալոչիկ «աղջիկ». այս բոլորը կարող են հոլովվել նաև առաջին հոլովման պես:

Բացառականում այս բառերը կարող են առանձնական ձևեր. այսպես՝ էրգանմէ, էրգանմէն, էրգամէն, էրգամէ, ախչիգանմէ, ախչիգանմէն, ախչիգամէն, ախչիգամէ, գնգանմէ, գնգանմէն, գնգամէն, գնգամէ:

Պատկ. Ա. 275 գտնում ենք էրգա սեռականը, որ կամ հին ձև է և կամ արևելահայ լեզվի ազդեցությամբ առաջացած. արդի բարբառը այսպիսի ձև չգիտե:

Այս հոլովման են պատկանում նաև -թիւն վերջավորված վերացական բառերը, որոնց հոլովական վերջավորություններն են՝ սեռ.-տր. -թան, բց. -թեանք, գրծ. -թիւնով. հոգնակիի վերջավորությունները նույնն են առաջին հոլովման հետ:

Ո. Հ.	քէշութիւն	քէշութիւններ
Ս. Տ.	քէշութեան	քէշութիւններու
Բ.	քէշութէնէ	քէշութիւններէ
Գ.	քէշութիւնով	քէշութիւններով

Այսպես են հոլովվում բոլոր -ութիւն «ութիւն» վերջացող վերացական բառերը. սակայն այս հոլովումը, մանավանդ բացառականը, այժմ արդեն մոռացված է, և նրան հետևող բառերը հոլովվում են առաջին հոլովմամբ. ինչ. քէշութիւն, քէշութիւնի, քէշութիւնէ, քէշութիւնով և այլն:

Չորրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ սեռ.-տր. -վան, բց. -ե, գրծ. -օվ. հոգնակիի վերջավորությունները առաջին հոլովման պես են: Ինչ.

Ո. Հ.	օր	օր-էր
Ս. Տ.	օր-վան	օր-էրու
Բ.	օր-է	օր-էրէ
Գ.	օր-օվ	օր-էրով

Ամառն>ամառ, ամառվան, ամառէն, ամառով
Ամիս>ամիս, ամսվան, ամիսէ, ամիսով
Անգամ>անգամ, անգամվան, անգամէ, անգամով
Առաջ>առաչ, -վան, -վանէ
Առաւօտ>առա(վ)դուն, առա(վ)դվան, առադվանէ, առադվանէ

Աստղ>ադէն -վան, -վանէ, -օվ
Դիշեր>քշէր, -վան. -վանէ, -օվ
Երբ>յէփ, յէփվան, յէփվանէ, յէփէն
Երկոյ>իրգուն, իրգուվան, իրգվան, իրգվանէ, իրգուննէ, իրգուննով
Երէկ>էրէգ, -վան, -վանէ
Զատիկ>զադիգ, զադիգվան, զադ(ի)գվանէ
Ժամ>ժուամ, ժամվան
Կանուխ>գանօխ, -վան, -վանէ
Կիրակի>գիրագի, գիրագվան, գիրագիի, գիրագվանէ, գիրագիով
Հով>հէդ, -վան, -վանէ, կամ՝ հէդու, հէդուէն, հէդով
Հերու>հէրու, հերվան, հերվանէ
Հինաթ>«հին ժամանակ», սեռ. հինութվան, բց. հինութվանէ
Ձմեռն>ձմէռ, -վան, -վանէ, -օվ
Մայիս>մայիս, -վան, -վանէ
Շաբաթ>շափաթ -վան, -վանէ, կամ՝ շափթու, շափթէն, շափթով
Ուրբաթ>ուրբաթ, -վան, -վանէ, -օվ
Պահ մի այլ>բամալ «մի քիչ առաջ», բամալվան, -վանէ
Վաղիւ>վաղը, վաղվան, վաղվանէ, գործ է ածվում նաև վաղին ձևը՝ միայն վաղին օրը «մոտ ժամանակներս, մոտերս». Ասօրէն վաղին գէցիլ իմ «այսօր վաղը սպասում եմ» ձևերի մեջ
Տարի>դարի, դարվան, դարվանէ, դարով, դարիով
Տօն>դօն «ծննդյան տօն», դօնվան, դօնվանէ, դօնէ
Ցերեկ>ցօրէգ, -վան, -վանէ, ցօրէգով
Օր>օր, օրվան, օրվանէ, օրով

Այս շարքին են պատկանում նաև թուրքերենից և ռուսերենից փոխառյալ ժամանակ ցույց տվող բառերը. ինչ.

Գաղ (Զալթը), գիւղ (քղ.) «աշուն», -վան, -վանէ
Մինութ (ռուս.) «րոպէ», մինութվան, մինութով
Շինըխ (թրք.), «այժմ», -վան, վանէ
Սաբահտվան, սաբահտվանէ (թրք.) «առավան, առավոտվանից»:
Գայմաքվան (թրք.) «ամեն ժամանակվա»
Գարրտվան «անգամվա»

Այս բոլոր բառերը հոլովվում են նաև առաջին հոլովման համեմատ. ինչ. ամառի, ամառէն, ամառօվ, բայի մի քանիսից, որոնք մասամբ միայն հետևում են առաջին հոլովման. այս ձևվով կազմված հոլովները արդեն նշանակված են վերի ցանկում: Բացառականում մի քանիսը դառնում է -վանէ, որ այս հոլովման հիմնական ձևն է. ըստ այսմ գործիականն էլ պիտի լիներ -վանօվ. բայց այս ձևի տակ հասկացվում է «այն ժամանակ եղածով», ինչ. գիշերվանօվ «գիշերվանն էլ միասին հաշվելով»: Գործիականը կազմվում է պարզ -օվ վերջավորությամբ. բայց առհասարակ այս բառերը գործիական չունեն: Կարելի չէ ասել օրինակ՝ հերուով, հինուրով և այլն:

Առանձին հետաքրքրության արժանի է կես բառը, որ թեև թվական անուն է, բայց երբ որ ժամանակի համար է գործածվում, հետևում է վերոհիշյալ հոլովման. ինչ. շափաթուգէսվան, ամխուգէսվան, օրուգէսվան և այլն:

Պատկանյանի մոտ գտնում ենք երբեմն -վա ձևով սեռականն, փոխանակ -վանէ. այսպես օր. ամառվա, ձմեռվա Պատկ. Ա. 283, դարվա «տարվա, Պատկ. Բ. 274. բայց չգիտեմ, թե սրանք հին բարբառին հատուկ ձևեր են, թե արևելահայ գրական լեզվի ազդեցության արդյունք: Ներկայումս այդպիսի ձևեր չկան:

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման մեջ սեռ.-տր. հոլովաձևը կազմվում է ուղղականի շեշտյալ ձայնավորը դարձնելով օ, իսկ բց. և գործ. հոլովները կազմվում են սեռ.-տր. հոլովաձևի վրա ավելացնելով -մէ, -մով մասնիկները: Հոգնակին նույնն է առաջին հոլովման հետ.

Ո. Հ.	ախպար	ախպարնէր
Մ. Տ.	ախպօր	ախպարնէրու
Բ.	ախպօրմէ	ախպարնէրէ
Ա.	ախպօրմով	ախպարնէրով

Այս հոլովման տակ են գնում միայն երեք բառ, որոնք են. ախպար «եղբայր», հար «հայր», մար «մայր». բայց սրանցից բարդված բառերը կանոնավոր կերպով հոլովվում են առաջին հոլովման համեմատ. այսպես են՝ գնգահար «հնդքանայր», գնքամար «հնդքամայր», սանահար «սանահայր», սանամար «սանամայր», սեռ. գնգահարի, գնքամարի, սանահարի, սանամարի,

բց. գնգահարէ, գնքամարէ, սանահարէ, սանամարէ և այլն, և ոչ թե՝ գնգահօր, գնքամօր, սանահօր, սանամօր, գնքամօրմէ և այլն, ինչպես գտնում ենք ուրիշ բարբառներում: Բացառապես երբեմն առում են՝ սեռ. ախպարիս, բց. ախպարես:

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ սեռ.-տր. -օչ, բց. -օչմէ, գործ. -օչմով. հոգնակին առաջին հոլովման հետ նույնն է, բայց կարելի է նաև ներմուծել -օչ մասնիկը: Ինչ.

Ո. Հ.	քուր	քուրէր
Մ. Տ.	քուր-օչ	քուրէրու, քուր-օչնէրու
Բ.	քուր-օչմէ	քուր-էրէ, քուր-օչնէրէ
Գ.	քուր-օչմով	քուր-էրով

Այս հոլովման տակ են գնում քուր «քույր», դեր «եղբ», դալ «տալ», դաքր «տագր» բառերը: Բայց սրանցից ածանցված մօրքուր և հօրքուր բառերը հոլովվում են առաջին հոլովման պես. օր. մօրքուրիս, հօրքուրիս, բց. մօրքուրէս, հօրքուրէս և ոչ թե՝ մօրքուրօչ, մօրքուրօչմէ և այլն:—«Ծանուէր» բառը գործածական չէ:

Համշենի բարբառ.— Գոյականները, ինչպես նաև գոյականաբար առնված ածականները ունեն 7 հոլովում, հետևյալ ձևով.

Առաջին հոլովում

Առաջին հոլովման վերջավորություններն են սեռական և տրականի՝ ի, բացառական -ըն (շեշտյալ) կամ -էն, գործիական՝ -օվ. օրինակ՝

Եղակի

Ո.	հայ	խնձէօր
Մ. Տ.	հայի, հայէց	խնձօրի
Բ.	հայօ, հայըն, հայէցըն, հայէն	խնձօրա, խնձօրըն
Գ.	հայօվ	խնձօրօվ

Հոգնակի

Ո.	հացէր	խնձէ՛ներ
Ս. Տ.	հացէրու	խնձէ՛ներու
Բ.	հացէրո	խնձէ՛նէրս, խնձէ՛ներուն
Գ.	հացէրով	խնձէ՛նէրով

Ծան. — 1) հացս, խնձօրս *և այլն ձևերը անորոշ են,* -ըն *որոշյալ, իսկ մը-ից առաջ դառնում են* ը, *օր. այչս, այչը մը, այչրն։*

Ծան. — 2) Մալա և այլն հգ. ուղ. լինում է հացիր, *բայց մյուս հոլովների մեջ «է» մնում է.*

3) Մալա և այլն բացառականում որոշյալի մեջ լինում է հացէրուն, հացէրումիեն։

4) Մալա և այլն հգ. ուղ. լինում է խնձո՛ներ, խնձո՛ներն, *Ս. Տ.* խնձո՛ներուն, *Բ.* խնձո՛նէրէն, խնձո՛ներուն, խնձո՛ներումիեն, *Գ.* խնձո՛նէրով։

Այսպես են հոլովվում նաև՝

1) ու *վերջացող բառերը. օր.* առու.

Ո.	առու	առուք, առվքնի
Ս. Տ.	առվի	առվքնուն, առուցնէրուն, առուանէրուն
Բ.	առվո, առվքն, առուցքն	
Գ.	առվով, առվքնով	առուցնէրով, առուանէրով

2) Այ>ա վերջացող բառերը, որոնք հոլովման ժամանակ կորցնում են ա *ձայնը. ինչ. գուլպայ>կաւրքի, անճոռայ>օնչոռի, չուխայ>չուխի, սատանայ>սատանի, տղայ>դղի, վհայ>փէսի։*

Ծան. — Սղման դեպքում կլինեն ձայնաբանական որոշ երևույթներ. ինչպես՝ ը>յ, ց>ս, ձ>ծ *և այլն. օր.* երաց>նէյսի, որս>էյսի, կացին>զասնի, մաժուն>մազնի, ցորեն>ցօյնի, քաղաք>քախկի, խաբխոխ>խօյսի, կաուց>գըծծի, կթիչ>դրծի *և այլն։ Առանձնապես դիտելու արժանի է* մրջիւն>մէճուտ, սեւ մեվի *փոխանակ՝* մեմի, *ուր վ տարանմանության համար դարձել է* մ։ *Նորերը հոլովում են նաև* մէճում—մէճումի։—Բարեկենդան *բառը սղմամբ դառնում է սեռ.* պարզիդնի։

Երկրորդ հոլովում

Երկրորդ հոլովման նշանն է սեռ.-տր. ու, *որի տիպական օրինակն է* մարդ>մաշու՝

Ո.	մաշա	մաշտէր
Ս.	մաշուս	մաշտէրուս
Բ.	մաշտո, -մա	մաշտէրո, մաշտէրմա
Գ.	մաշտով	մաշտէրով

Աշխարհաբարում այս հոլովման հետևող բառերի թիվը մեծ չէ, իսկ Համշենի բարբառում՝ բազմաթիվ. ինչ. գետին>կէգնու, երէց>իրիցու, էշ>իշու, խոզ>խօզու, ծով>ձօվու, կէս>գիսու, կով>գովու, փոր>փօրու, ցաւ>ցավու, հաւ>հավու, հող>խէօղու, ոտ>օտու, մահ>մահու, մամ>մօմու, մանչ>մօնչու, պոչ>բոչու, պառաւ>բառովու, պարտ>բարու, հորթ>հօշտու, գայլ>կ՛ոլու, արջ>այչու, այծ>ածու, աստուած>աստրձու։

Ա վերջացող բառերից բացառաբար ճանապարհ>ջմապա *հոլովվում է հետևյալ ձևով.*

Ո. ջմապա
Ս. ջմապու
Բ. ջմապացըն
Գ. ջմապայով, ջմապով

Ո. ջմապընի, ջմապընէր
Ս. ջմապընուն, ջմապընէրուն
Բ. ջմապընուն, ջմապացնուն, ջմապաանուն
Գ. ջմապընիյով, ջմապընէրով

Ամենից ավելի բարդ և բազմապան է ի վերջացող բառերի հոլովումը, որի համար օրինակ ենք առնում նախ ծառերի անուններըը։

Ծառերի անունները գրաբարի նման ունեն երկու տեսակ վերջավորություն՝ -ի *և* -ենի, *որոնք բարբառում դառնում են ի և* -ըն։ *Մենք այստեղ դնում ենք ոսսախի բառի հոլովումը երկու ձևով.*

Եզակի

Ո.	ոսսախ	ոսսախընի
Ս.	ոսսախու, ոսսախէցը	ոսսախընէց, ոսսախընու
Բ.	ոսսախիյո ոսսախիցըն, ոսսախէցըն ոսսախիչըն, ոսսախուցո	ոսսախընէցըն
Գ.	ոսսախիյով, ոսսախէցով	ոսսախընէցով

Հոգնակի

Ո. դօսխիք, դօսխիքնի
Ս.| դօսխիքնէրուն, դօսխիցնէրուն, դօսխխանէրուն
Բ.| դօսխընէքնուն, դօսխընէցնուն, դօսխընէանուն
Գ. դօսխընիքնով, դօսխընիցնով, դօսխընխանով

Այսպես են հոլովվում՝
պալընի, գլղրընի, ընգղընի, թէղի, թզընի, թթընի, խագրնի, խընձրընի կամ խնձորի, գաղնի, գրվընի, աժրի կամ աժրնի, մաչմրքի, մախրընի, մօրընի, ուռընի:

Այսպես են հոլովվում նաև ի վերջացող այլ սովորական բառեր. ինչ. խնօցի, գաշի, մատնի և այլն:

Ծան.—1) Ի վերջացող բառերը ունենում են երկու տեսակ հոգնակի՝ ք և ներ. բայց որովհետև ծառերի անունները վերջանում են ներ, ուստի դօսխի և նման ձևի բառերը չունեն դօսխիների կամ դօսխրների ձևով հոգնակի, որովհետև այս դեպքում դօսխրնի հոգնակին պիտի շփոթվեր դօսխրնի եզակի ծառանունի հետ: Այս դեպքում բարբառը շատ իմաստուն է վարվել՝ տալով մասնիկների շարքը և կազմել է դօսխիքնի ձևը:

Ծան.—2) Ամենից կարևորն է «ից, իցքն» ձևով սեռական բացառականը:

Տարակույս չկա, որ գաղնից, խրնձրրնից և այլն ձևով սեռական-տրական բառերը առաջանում են դրբ. կաղնեաց, խրնձորենեաց ձևերից, ուրեմն հոգնակին վերածվել է եզակիի: Համշենի բարբառում սեռ.-տր. հոլովը նաև բացառական է, ինչ որ առաջանում է դրբ. բացառականից՝ ի նախդիրի հետպատմամբ, բայց, որպեսզի բացառականը ավելի պարզորոշ լիներ, ավելի ուշ ավելացրել են ո կամ ը վերջավորությունը, որ եզակի բացառականի սովորական վերջավորությունն է: Միայն մի բան կա, որ հոգնակիի գործածությունը դեռ պահում է, այն է՝ առոգի «առուգերից», թեև սրա ուղղականը՝ առաէխը եզակի է և նշանակում է «մի առագ»:

Հոգնակին եզակիի փոխանցվելու այս երևույթը տեսնելուց հետո ամենևին զարմանալի չէ ուրեմն տեսնել նաև առնէց «գոան», ծէռէց «ձեռքի» և այլն բառերի գոյությունը և եզակի գործածությունը՝ դրբ. դրանց, ձեռաց ձևերի փոխարեն. ինչ. ծեռէց վրա բահէր դու «ձեռքի վրա պահում էր»: Ապա սրանց

էլ բացառականը՝ ծեռէցըն առի «ձեռքից առի», առնէցըն պռնէց վիր էլավ «գոնից բռնեց բարձրացավ» և այլն:

Այնուհետև՝ սեռ.-տր.-ից, բց.-էցըն մասնիկը անցել է ուրիշ կարգի բառերի վրա. ինչ. սնեց բէս «այուն նման», ծառեց վրա «ծառի վրա», ծառէցըն «ծառից», քարէց վրա «քարի վրա», հացէց վրա էգավ «հացի վրա եկավ», հացէցըն փէչ մը դրեէց «հացից մի կտոր կտրեց» և այլն:

Այսպես առաջացավ և ընդհանրացավ սեռ.-տր.-էց, բց.-էցն, -էցըն ձևը, նույնիսկ օտար բառերի հետ: Օր.

Կռլոցա «գայլից», կռլոցը մը «մի գայլից», շնոցա «շնից», հավոցա «հավից», արնզմոցա «գազմից», կինուցը մը «մի գինուց», խալուցը մը «խալիից», առուցը մը «մի առվից», սապօնացը մը «մի սաոանայից», փէսացը մը «մի փեսայից», պղոցը մը «մի պղայից», փէղոցը մը «մի փայտից», կռլըցա բոլ ինք «գազլից հարուստ ենք», թրք. բառերով՝ դուխցը մը «դրհորից», մաղարացը մը «քարայրից», մաշացը մը «ունելիից», թավացը մը «տապակից», հավացը մը «եղանակից» և այլն:

Վերև տրված բացառությունը կարևոր է նաև լուծելու երևանի բարբառի և արդի արևելահայ գրականի -ից բացառականի ծագումը: Այստեղ էլ գրաբարի հոգնակին եզակի է դարձել և առաջին հոլովումը (ի) ընդհանուր է դարձել. ի հացից> հացից:

Երրորդ հոլովում

Երրորդ հոլովման նշանն է սեռ.-տր. -վօն, որ համապատասխանում է մյուս բարբառների -վան ձևին: Օրինակ.

Ո. օր
Ս. Տ. օրվօն
Բ. օրվընէն, օրր՛, օրվօնցու, օրօցը, օրիցը
Գ. օրվընով, օրով

Հոգնակին կանոնավոր է. ինչ. օրէր, օրէրու, օրէրէ, օրէրով, կիշէյնի, կիշէյնուն, կիշէյնէրով:

Այս հոլովման են հետևում ժամանակ ցույց տվող բառերը, օրոնք են.

դարի, ցօրէգ, ուրիսաթ, շապաթ, ծմէռ, կիշէր, էրէգ, գադիգ (սեռ. գագրվօն), իրիգուն (սեռ. իրիգվօն), առաչ, ինչպէս նաև մահ (սեռ. մահվօն) բառը:

Հոգնակին կանոնավոր է:

Չորրորդ հոլովում

Այս հոլովման նշանն է սեռ.-տր. -օն, որ ներկայացնում է ուրիշ բարբառների -ան վերջավորությունը. ինչ. այր>էրիգ կամ տրիգ, սեռ. էրգօն, տրգօն (ուրիշ բարբառներում էրգան կամ էրկան). Տիպական օրինակն է ախճիգ.

Ո. ախճիգ
Ս. Տ. ախճգօն
Բ. ախճգընս, ախճգընըն, ախճգընմս, ախճգօնմէնէ, ախճգընմընս
Գ. ախճգընօվ, ախճգընմօվ, ախճգօվ

Հոգնակին կանոնավոր է.

Ո. ախճիգնէր, ախճիգնիկ
Ս. Տ. ախճգնէրու, ախճգընու
Բ. ախճգնէրու, ախճգընու, ախճգընէքունմըն, մընս
Գ. ախճգընէրօվ

Գրական հայերենում, ինչպես և բարբառներում այս հոլովման պատկանող բառերի թիվը շատ սակավ է, իսկ Համշենի բարբառում քանից ավելի է։ Այսպես՝

ախճիգ-ախճգօն
տրիգ-տրգօն
պուլկ «թուփ»-պլկօն, պլկնս
ամաո-օմաօն, օմաընս
աշուն-աշնօն, աշնընս
գարուն-կայնօն, կայնընս
դուռ-տռօն, տռնս
ձմեռ-ծմռօն, ծմռընս
ծուգ «ձուկ» -ծգօն, ծգնս
մուգ «մուկ» -մգօն, մգնս
ճնճղուկ-ջինջղըգօն, ջինջղըգնս
փուռ-փռօն, փռնս
ճեղք-ճիկօն, ճըկնս
մութ-մռօն, մռնս
էգ-էգօն, էգնս

Թոռ-Թօռօն, Թօռնս
լեռ-լէռօն, լէռնս
կուշտ-գշտօն, գըշտնս

Այս հոլովման նման սեռական են կազմում մի խումբ կենդանիների անուններ, որոնք ստանում են -օն վերջավորությունը, բայց բացառականում լինում են առաջին հոլովման նման տ. այսպես են՝

օնլուտ, օնլուտօն, օնլուտտս (անալուխ «եղնիկ»)
օչխար, օչխրօն, օչխրս
գայլ-կոլօն, կոլս
այծ-տձօն, տձս
խոզ-խօզօն, խօզս
արծիւ-տռճիվ, տռճվօն, տռճվս
Թխթեռն-Թխթէռ, Թխթէռօն
Նույնիսկ Թրք. բառերով՝
ղրյապ «ագվէս», ղրյապօն, ղրյապս
ղուզիգ «գառն», ղուզիգօն, ղուզիգս

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման նշանն է սեռ.-տր. -օր վերջավորությունը. իբրև օրինակ առնում ենք հայր>հոր բառը, որին հետևում են նաև մայր>մոր, եղբայր>ախպոր, հօրեղբայր>հօրպոր, հօրեղբօր կին>մօմոր, բացառաբար նաև՝ տայգր>դոքոր բառերը։ Վերջինը բուն պատկանում է -ոջ հոլովման։ Կնքահայր>գընկյար սեռ. լինում է գընկօր, ստացական հոգով՝ գընքօյս, բայց նաև գընքօրիս (տր. գընքէրիս)։

Ո. հոր, հէր
Ս. հօր
Բ. հօրըն, հօրմըն, հօրվըն, հօրս
Գ. հօրօվ, հօրմօվ, հօրվօվ

Հոգնակին կանոնավոր է.

Ո. հորէր (տր. հէրիր)
Ս. հօրէրու
Բ. հօրէրուն, հօրէրըն, հօրէրէն, հօրէրս
Գ. հօրէրօվ, հօրէրմօվ

Տայգր բառը, որ հետևում է նաև -ոջ հոլովման, սեռականում ստանում է քե դոքօր, և քե դոքէօր, դոքէր, նաև՝ դոքսին ձևերը։

Վեցերորդ հոլովում

Այս հոլովումը ներկայացնում է -ութիւն *վերջացող վերացական բառերը, որոնք Համշենի բարբառում հնչվում են* -ուբիւն, *բայց նաև* -ուբիւն, *իսկ ձանիկցոց մոտ՝* -աիւն:

Հոլովվում են հետևյալ ձևով.

Եզակի

Ո. Հ. մաշաուբիւն, մաշաուբիւն
Ու. Տ. մաշաուբիւնի, մաշաուբիւնի
Բ. մաշաուբիւնա, մաշաուբիւնէ
Գ. մաշաուբիւնօվ, մաշաուբիւնօվ

Հոգնակի

Ո. Հ. մաշաուբիւններ, -բիւննէր
Ու. Տ. մաշաուբիւննէրու -բիւննէրու
Բ. մաշաուբիւննէրէ -բիւննէրա
Գ. մաշաուբիւննէրօվ, -բիւննէրօվ

Յոթերորդ հոլովում

Այս հոլովումը համապատասխանում է ուրիշ բարբառների -ոջ (-օչ) *հոլովման: Համշենի բարբառում այս վերջավորությունը ներկայանում է օչ, էչ, էօչ (ինչպես նաև՝ էճ, էօճ) ձևվերով:*

Այս հոլովման ենթակա բառերն են՝

աներ>օնիր, օնիրէչ
քույր>քուր, քուրէչ
տայդր>դէքոր, դոքոր, դոքոչ, դոքոիչ, դոքիրօչ
տալ>դալ, դալօչ
ներ>նէր, նիրի, նիրօչ, նիրէօչ, նիրէչ, նիրէճ
տալ+այր «տալոջ ամուսինը»>դալար, դալարէչ
հօրաքույր>հօրկուր, հօրկուրէչ
մօրաքույր>մօրկուր, մօրկուրէչ
մօրաքեռայր>մօրքուրար
հօրաքեռայր>հօրքուրար
ընկեր>ընգէր, ընգէրէչ
կնիկ>գնիգ, գնիչ, գնէչ
կնքակին>գընկագին, գնկագնէճ

սկեսուր>սկէսուր, կէսուր, -օչ, -էչ, -էօչ, -էճ, սկէսուիչ
սկեսրայր>կէսրար, կէսրարէօչ
տէր>գէր, գիրիչ, գիրէչ

Այս հոլովման նախատիպն է գրաբարի կին, կնոջ հոլովումը. Համշենի բարբառում թեև կին բառը ջնջվելով՝ փոխանակված է կնիկ>գնիգ փաղաքշականով, բայց բոլոր հոլովական ձևերը գրաբարի կին բառից են: Միայն թե ո>օ ձայնավորը դարձել է նաև էօ, է, ի: Այսպես, ունենք՝

Ո. գնիգ
Ու. Տ. գնօչ, գնէօչ, գնիչ, գնէչ
Հ. գնիգ, գնիչ...
Բ. գնօչմէ, գնիչմէնէ, գնօչմըն, գնէչվըն
Գ. գնօչմօվ, գնիչմօվ, գնէչվօվ

կարելի է նաև հոլովել՝ գնիգին, գնիգէն:

Հոգնակիում լինում է գնիգ-ներ կամ գնիգ-նին, որ հոլովվում է հետևյալ ձևով:

Ո. Հ.	*գնիգ-նէր*	*գնիգ-նին*
Ու. Տ.	*գնիգ-նէրու*	*գնիգ-նուն*
Բ.	*գնիգ-նէրա*	*գնիգ-նուն*
Գ.	*գնիգ-նէրօվ*	*գնիգ-նօվ*

Հայերենի հատկություններից մեկն այն է, որ հատկացուցիչից հետո եկող հատկացյալը կարող է ջնջվել և ներմուծվել հատկացուցչի մեջ. այս դեպքում հատկացուցիչը առանում է որոշիչ հոդ կամ առացական և իրրև առանձին բառ կարող է հոլովվել: Այսպես «գիշերվա կաթը ցերեկվա կաթից լավ է» ասել տեղ կարող ենք ասել «գիշերվանը ցերեկվանից լավ է»: Այս ևս գործածական է նաև Համշենի բարբառում. ինչ. ցօրեկվօնը «ցօրեկվանը», բայց նաև իբրահատուկ ձևով՝ ցօրեկվընցուցը «ցերեկվանը», հօրվընցուցը «հոր ունեցածը», որ և հոլովվում է՝ սեռ. պր. ցօրեկվընցըընը, գր. ցօրեկվընցընով, հգ. սեռ. ցօրեկվընցըներուց և այլն:

Նույնը դոնում ենք նաև առացական և ցուցական դերանունների հետ, ինչ.

իմընցվի, քուզընցվի, մերընցվի, ձերընցվի, սընցվի, տըրնցվի, ընընցվի, ըր. սընցիցմըն, տըրնցիցմըն, ընընցիցմըն, հգ. ձերընցվընէքը, ըր. ձերընցվընիցըն, և այլն:

Նոր-Ջուղայի բարբառ.—*Ունի երեք կանոնավոր և չորս մասնական հոլովումներ։*

Առաջին հոլովում

Այս հոլովման նշաններն են սեռականի և տրականի համար թե եզակի և թե հոգնակի՝ -ի, բացառականի համար՝ -ից, գործիականի համար՝ օվ և ներգոյականի համար՝ ում. օր. հաց>խաց

	Եզ.	Հոգ.
Ո. Հ.	խաց	խացեր
Ս. Տ.	խաց-ի	խացեր-ի
Բ.	խաց-ից	խացեր-ից
Գ.	խաց-օվ	խացեր-օվ
Ն.	խաց-ում	խացեր-ում

Այս հոլովման են հետևում լեզվի բառերի ամենամեծ մասը, օտար բառերն ու անձնանունները. ինչ.

պապ>պապ, պապի	ժամ>ժամ, ժամի
արև>արեվ, արեվի	աչք>աչք, աչքի
աներ>աներ, աների	անուն>անում, անըմի
լեզի>լեզին, լեզնի	մարդ>մարթ, մարթի
ձայն>ձ'էն, ձ'էնի	գև>գ'եվ, գ'եվի
եզր>յեզր, յեզրի	եզն>յեզ, յեզի
տալ>տալն, տալնի	նուռն>նուռն, նռնի
մուկն>մուկն, մկնի	ձուկն>ձ'ուկն, ձ'կնի
աթոռ>աթոռ, աթոռի	ձիւն>ձ'ուն, ձ'նի
գագաղ>գ'ագ'աղ, գ'ագ'աղի	
մարգարէ>մարգ'արէ, մարգ'արէի	

Մի խումբ (գլխավորապես ո հանգող) բառեր, որոնք հին հայերենի մեջ հանգում են ն, իսկ ներկա բարբառում կորցրած են այդ հանգը, հոլովման ժամանակ վերստանում են ն ձայնը, այսպես են՝ բեռն>բ'եռ, բ'եռնի, բ'ուռն>բ'ուռ, բ'ռնի, դուռն>դ'ուռ, դ'ռնի, կուռն>կուռ, կռնի (թև), ձեռն>ձ'եռ, ձ'եռնի, մարսն>մաս (հնազօրդութ յունն իմաստով), սինձ>սինձ, սընձնի։

Վերացական բառերը, որոնք -ութիւն մասնիկով են կազմված և հին հայերենի ու շատ բարբառների մեջ առանձին հոլովում ունեն, Նոր-Ջուղայի բարբառում հպատակվում են այս հոլովման. օր. մեծութիւն>վենձութուն։

	Եզ.	Հոգ.
Ո. Հ.	վենձություն	վենձութուններ
Ս. Տ.	վենձութունի	վենձութունների
Բ.	վենձութունից	վենձութուններից
Գ.	վենձութունով	վենձութուններով
Ն.	վենձութունում	վենձութուններում

Շատ ձեր պատմվների մեջ կարելի է լսել հին հայերենի ձևով վենձուրեն (սեռ.), վենձուրենից և այլն։ Գիլանենցի ժամանակագրության մեջ կա ի ձևով բացառական. ինչ. ազնուրեենի (105), փչուրեենի (107)։ Ջմյուռնիայի պերսագրում էլ ունենք դուճսուլուրեենի (156) «հիւպատոսութիւնից»։

Ծանոթ.— Հին-Ջուղայում բացառականի մասնիկն է -ից՝ փոխանակ -ից. այսպես՝ վօտից «ոտքից», խողից «հողից», մատից, «մատից», թելից «թելից», քինքիցը «քթիցը», զօրնուցքից «օճռքից», օրիցը «օրիցը» և այլն։ Այս ն առաջացել է թերևս որոշիչ հոդի տեղափոխությամբ, իբր ոտիցն>ոտինց, թելիցն>թելինց և այլն։

Այն բառերը, որոնք վերջավորվում են ա ձայնավորով, հոլովման մեջ եզակիում կորցնում են իրենց ա ձայնը, իսկ հոգնակիում օրենքի համաձայն դառնում են -ք, որ հոլովվում է կամ եզակիի նման և կամ մի առանձին ձևով. սեռականի վրա ստանում է -ոնց մասնիկը (իբր թե ուղղականը լիներ -ոնք, որ սակայն իսպառ անգործածական է գոյականների մեջ). մյուս հոլովները նրա վրա ավելացնում են սովորական հոլովակերտները։ Միճ մեկդան թագում այս -ոնց վերջավորությունը հնչվում է -ոնց. ինչ. ճամփեքոնց և այլն։ Բայց սրանից, այս կարգի բառերը ունենում են երկրորդ հոգնակի, որ կազմվում է -ներ մասնիկով և հոլովվում է սովորական ձևով, օր., ճանապարհ>ճամփա բառի հոլովումը.

	Եզ.	Ա. հոգ.	Բ. հոգ.
Ո. Հ.	ճամփա	ճամփէք	ճամփեքնէր
Ս. Տ.	ճամփի	ճամփէքի, -էքոնց	ճամփէքների
Բ.	ճամփից	ճամփէքից -էքոնցից	ճամփեքներից
Գ.	ճամփով	ճամփէքով, -էքոնցով	ճամփեքներով
Ն.	ճամփում	ճամփէքում, -էքոնցում	ճամփեքներում

Այսպես են հոլովվում, օր.

գուլպայ>գուլբա, գուլբի, գուլբէք, գուլբէքնէր
երախայ>յարախա, յարախի, յարախէք
ընծայ>ընձա, ընձի, ընձէք, ընձէքնէր
ծնծղայ>ձ՛նձղա, ձ՛նձղի, ձ՛նձղէք, ձ՛նձղէքնէր
կապայ>կապա, կապի, կապէք, կապէքնէր
սատանայ>սատանա, սատանի, սատանէք
տղայ>տղա, տղի
փեսայ>փեսա, փեսի, փեսէք
փիլթայ>փիլթա, փիլթի, փիլթէք, փիլթէքնէր
քուրայ>քուրա, քուրի, քուրէք
Այսպես նաև մարգարէ>մարգ՛արէ, մարգ՛արէք, մարգ՛արէքոնց, մարգ՛արէքնէրի...

Այն բառերը, որոնք վերջանում են ու-ով, հոլովման ժամանակ եզակիի մեջ ու ձայնը գարձնում են վ, իսկ հոգնակին կազմում են երկու ձևով. օր. կաուս, կաւվընէր, սրանցից առաջինը պիտի ունենար նախորդի համաձայն երկու ձևի հոլովմունք՝ կաուսի և կաւվըքոնց. բայց ինչքան աշխատեցի, առաջին ձևի հոլովմունքը չգտա արդի բարբառի մեջ. գործածական է միայն երկրորդը: Այսպես՝

Ո. Հ.	*կաուս*	*կաուսք*	*կաւվընէր*
Ս. Տ.	*կաւվի*	*(կաուսքի), կաւվըքոնց*	*կաւվընէրի*
Բ.	*կաւվից*	*(կաուսքից -վըքոնցից*	*կաւվընէրից*
Գ.	*կաւվօվ*	*(կաուսքօվ), -վըքոնցօվ*	*կաւվընէրօվ*
Ն.	*կաւվում*	*(կաուսքում) -վըքոնցում*	*կաւվընէրում*

Այսպես են հոլովվում նաև ձու>ձ՛ու, ձ՛ըվի, լու>լու, լվի:

Վերջապես այսպես են հոլովվում անկանոն հոգնակիներից ոմանք, թեև նրանց եզակին ուրիշ հոլովման պատկանի. օր. աչչկերք, աչչկերքի, աչչկերքից, -քով, -քում:

Երկրորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են. սեռականի և տրականի համար եզակիում՝ ու, բացառականի համար՝ ուց, իսկ գործիականը և ներգոյականը հետևում են առաջին հոլովման: Հոգնակին լինում է երկու տեսակ. առաջինը կազմվում է -ք մասնիկով, երկրորդը՝ սրա վրա ավելացրած -ներ մասնիկը. երկուսն էլ իրենց բոլոր

հոլովները կազմում են առաջին հոլովման եզակիի համեմատությամբ: Բացի սրանից՝ հոգնակիի առաջին ձևը հոլովվում է ճիշտ այն ձևով, ինչպես առաջին հոլովման մեջ ա վերջացող բառերը:

Այս հոլովման են հետևում բոլոր ի վերջացող բառերը, բայերի անորոշ դերբայը և բոլոր տեղանունները, ինչ վերջավորություն էլ որ ունենան: Ի վերջացող բառերը հոլովման ժամանակ կորցնում են իրենց ի ձայնավորը. օր.

	Եզ.	*Ա. հոգ.*	*Բ. հոգ.*
Ո. Հ.	*մատանի*	*մատանիք*	*մատանըքնէր*
Ս. Տ.	*մատանու*	*մատանըքի, ըքոնց*	*մատանըքնէրի*
Բ.	*մատանուց*	*մատանըքից, ըքոնցից*	*մատանըքնէրից*
Գ.	*մատանով*	*մատանըքով, ըքոնցով*	*մատանըքնէրով*
Ն.	*մատանում*	*մատանըքում, ըքոնցում*	*մատանըքնէրում*

Այս հոլովման տակ է գնում նաև ասուած>ասված բառը, որ իր խիստ աղավաղված պատճառով՝ կարելի է համարել նույնիսկ առանձին հոլովում: Այսպես՝

Ո.	*ասված*
Ս. Տ.	*ասածու, ասծու*
Բ.	*ասածուց, ասծուց, ասծանից*
Գ.	*ասածով, ասծով,*
Ն.	*ասածում, ասծում, ասծանում*

Այսպես են հոլովվում՝

գարի>գ՛օրի, գ՛որու
գինի>գ՛ինի, գ՛ինու
կաշի>կաշի, կաշու
հայելի>խալլի, խալլու
յղի>յուղի, յուղու
քանի>քանի՞, քանու
կրեայ>կուրայի, կուրաու
գօտի>գ՛օխտի, գ՛օխտու
խնամի>խնամի, խնամու
ոսկի>վոսկի, վոսկու
ջորի>ջ՛օրի, ջ՛օրու
որդի>վորդ՛ի վորդ՛ու
քեռի>քեռի, քեռու

Հատկապես հիշենք տեղացի նշանակող անունները, ինչ. Թէրանցի, Թէրանցիք, Թէրանցըքոնց կամ Թէրանցըքնէրին, Թէրանցըքոնցից կամ Թէրանցըքնէրից և այլն:

Անորոշ դերբայները հոլովվում են հետևյալ ձևով.

Ո. Հ.	խալել	խազալ
Ս. Տ.	խալելու	խազալու
Բ.	խալելուց	խազալուց
Գ.	խալելով	խազալով
Ն.	խալելում	խազալում

Անորոշի հոգնակին գործածական չէ։ Գիլաննցի ժամանակագրության մեջ գտնում ենք սրանց բացառականը և ձևով, ինչ. ապաեվելեն (96), դայիմելեն (100), մեռնելե (182)։

Տեղանունները հոլովվում են հետևյալ ձևով. օր. Կալկաթա, Կալկաթու, Կալկաթուց, Կալկաթով, Թէրան, Թէրանու, Սինգափուր, Սինգափուրու, Ջավա, Ջավու, Ջուդա, Ջուդու, Սպահան, Սպահանու և այլն։ Ներգոյականը սովորաբար չի գործածվում։

Այս հոլովման են հետևում նաև յա (իա) վերջացող բառերը, որոնք բոլորն էլ փոխառյալ բառեր կամ հատուկ անուններ են. օր.

Ո. Հ.	լուբյա	լուբյէք
Ս. Տ.	լուբյու	լուբյէքի, լուբյէքոնցից
Բ.	լուբյուց	լուբյէքից, լուբյէքոնցից
Գ.	լուբյով	լուբյէքով, լուբյէքոնցով
Ն.	լուբյում	լուբյէքում, լուբյէքոնցում

Հատուկ անուններից (տեղի և մարդու).

Ո.	Փէրյա	Նասըրյա	Սօֆյա	Յեղյա
Ս. Տ.	Փէրյու	Նասըրյու	Սօֆյու	Յեղյու
Բ.	Փէրյուց	Նասըրյուց	Սօֆյուց	Յեղյուց
Գ.	Փէրյով	Նասըրյով	Սօֆյով	Յեղյով
Ն.	Փէրյում	Նասըրյում	Սօֆյում	Յեղյում

Նկատելի է, որ այստեղ էլ բառավերջի ա ձայնավորը կորչում է։

Չորրորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են. սեռականի և արականի համար եզակիում՝ -վա, բացառականի համար՝ -վանից, իսկ գործիականը, ներգոյականը և հոգնակիի բոլոր հոլովները հետևում են առաջին հոլովման. օր.

Ո. Հ.	օր	օրէր
Ս. Տ.	օրվա	օրէրի
Բ.	օրվանից	օրէրից
Գ.	օրով	օրէրով
Ն.	օրում	օրէրում

Այս հոլովման են հետևում ժամանակ ցույց տվող բառերը, որոնք հետևյալներն են.

ամառն>ամառ, ամառվա	երբ>յեփ, յեփվա
ամիս>ամիս, ամսվա	երեկ>յէրէկ, յէրէկվա
այգուց>յեկուց, յեկուցվա	գառիկ>գառիկ, գառիկվա
աշուն>աշունք, աշունքվա	ձմեռն>ձ'մեռ, ձ'մեռվա
գարուն>գ'արունք, գ'արունքվա	տարի>տարի, տարվա
գիշեր>քշեր, քշերվա	ցերեկ>ցէրէկ, ցէրէկվա
շարաթ>շար'աթ, շար'աթվա	

երեկոյ>յարակու բառը հոլովման ժամանակ ատանում է ն ձայնը (համմ. Պլ. իրիզուն), այսպես՝ սեռ.-տր. յարակուվա, բց. յարակուվանից, գրծ. յարակուցով, ինչպես որ հոգնակիի մեջ էլ լինում է յարակուներ. բայց նաև ունենք յառջ'արակու «ճրագվառոցի ժամանակը», սեռ. յառջ'արկվա։

Հերու «անցյալ տարի» բառը լինում է ուզ. խերվու, սեռ. խերվըճե կամ խերվըճվա, բց. խերվըճեճից կամ խերվըճվանից։

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են. սեռականի ու տրականի համար եզակիի մեջ՝ ա, բացառականի համար՝ -անից, գործիականն՝ -անով, ներգոյականն՝ -անում, իսկ հոգնակիի հոլովները կազմվում են առաջին հոլովման համեմատ. օր.

Ո.	ախչիկ	ախչըկնէր
Ս. Տ.	ախչկա	ախչըկնէրի
Բ.	ախչկանից	ախչըկնէրից
Գ.	ախչկանով	ախչըկնէրով
Ն.	ախչկանում	ախչըկնէրում

Այսպես են հոլովվում բացի աղջիկ բառից, նաև.

կին>կնիկ>կնգա, կնգանից, կնանիկ, կանանիք
աղուն>աղունիկ, աղընգա, աղընգանից, աղընգանէր
գորտ>գ'որթընուկ, գ'որթընգա, գ'որթընգանից, գ'որթընգանէր

Թոնիր>Թոնդիր, Թոնդրա, Թոնդրանից
Հանի>խանդի, խանդա, խանդանից, խանդանով, խանըմնել
Թոռն>Թոռ, Թոռա, Թոռանից, Թոռնէր:

- Թիւն վերջացող բառերը, որ մյուս բարբառներում հետևում են -ան հոլովման, այս բարբառում անցել են առաջին հոլովման:

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման նշանն է սեռականի մէջ ձայնավորը, որ միւսում է նաև եզակիի մյուս բոլոր հոլովների մէջ. օր. հայր>խէր:

Ո.	*խէր*	*խէրէր*
Ս. Տ.	*խօր*	*խէրէրի*
Բ.	*խօրից*	*խէրէրից*
Գ.	*խօրով*	*խէրէրով*
Ն.	*խօրում*	*խէրէրում*

Այսպես են հոլովվում՝ բացի հայր բառից.
մայր>մէր, մօր, մէրէր
եղբայր>ախպէր, ախպօր
հօրեղբայր>խօրօխպէր, խօրօխպօր
սանամայր>սանամէր, սանամօր
կնքաւորամայր>քավորամէր, քավորամօր:

Յոթերորդ հոլովում

Այս հոլովումը թեև մյուս բարբառներում կազմվում է -ոց վերջավորությամբ, բայց այստեղ բոլորովին ջնջված է. Քոյր բառը, ինչպես կտեսնենք, պահել է մինչև հայկերենի ձևը, իսկ մյուս բառերը անցել են առաջին հոլովման:

Այս հոլովման նշանն է սեռականի մէջ ձայնավորը, որ միւսում է նաև մյուս հոլովներում. օր.

Ո.	*քուր*	*քուրէր*	*քէրք*
Ս. Տ.	*քվոր, քվեր*	*քուրէրի*	*քէրքոնց*
Բ.	*քվորից, քվերից*	*քուրէրից*	*քէրքոնցից*
Գ.	*քվորով, քվերով*	*քուրէրով*	*քէրքոնցով*
Ն.	*քվորում, քվերում*	*քուրէրում*	*քէրքոնցում*

Այսպես են հոլովվում նաև քոյր բառից կազմված բարդերը՝ հօրաքոյր>խարաքուր և մօրաքոյր>մարաքուր, որոնք տարիս են սեռական. խարաքվոր, խարաքվեր, մարաքվոր, մարաքվեր, բայց նաև կանոնավոր հոլովման համաձայն՝ խարաքուրի, մարաքուրի:

Ագուլիսի բարբառ.—Ունի 5 կանոնավոր և 4 անկանոն հոլովումներ.

Առաջին հոլովում

Այս հոլովման նշանն է սեռ. -ի, բացառական -ից, գործիական -ավ, ներգոյական -ամ, ինչ.

	Եզ.		*Հոգ.*	
Ո. Հ.	*աղ*	*աղանձ*	*աղ-ար*	*աղանձ-նէր*
Ս. Տ.	*աղ-ի*	*ըղանձ-ի*	*աղ-էր-ի*	*աղանձ-նէր-ի*
Բ.	*աղ-ից*	*ըղանձ-ից*	*աղ-էր-ից*	*աղանձ-նէր-ից*
Գ.	*աղ-ավ*	*ըղանձ-ավ*	*աղ-էր-ով*	*աղանձ-նէր-ով*
Ն.	*աղ-ամ*	*ըղանձ-ամ*	*աղ-էր-ում*	*աղանձ-նէր-ում*

Ծան. 1.—Թեթև ձայնավոր ունեցող բառերը սառնում են գործիականի մէջ -ով և ներգոյականի մէջ -ում մասնիկները, ինչպես որ նույնը գտնում ենք միշտ հոգնակիի մէջ, քանի որ -եր, -ներ մասնիկները թեթև են, օր. այծ, այծի, այծից, այծով, այծում:

Հոգնակի սեռ. սովորական ձևն է -երի, բայց կարելի է նաև -երու, ինչ. ձրագիերուն, մզկիտուն, ըռնիերուն, չմըշկներուն (ձեռք, մատ, ոտք, չմուշկ բառերից) և այլն:

2.—Եթե բառը այնպես է, որ շեշտը բնկնում է հոլովական վերջավորության վրա, գործիականի -ավ մասնիկը գառնում է -օվ, իսկ ներգոյականի -ամ մասնիկը լինում է -ում. ինչ. հասանիք «հարսանիք», հասընքի, հրասընքով, հրասընքում և այլն: Ցղնայի ենթաբարբառը չունենալով բնաւ -ամ մասնիկը, ամեն պարագայի մէջ էլ ներգոյականը կազմում է -ում մասնիկով:

Թեթև ձայնավոր ունեցող բառերը այս պարագային սառնում են գործիականում -էով, ներգոյականում -իւմ. ինչ. գիր>գ'իր, գ'ըրէով, գ'ըրիւմ, գիրք>գ'իրք, գ'ըրքէով, գ'ըրքիւմ, ձու>ձիւ, ձիւվէով, ձիւվիւմ և այլն:

3.—Եթե բառն ունի օ, որ առաջացած է նախավոր ա-ից, հոլովման ժամանակ օ դառնում է ա. ինչ. ցար>ցօր, ցարի, ցարից, ցարավ, ցարամ, հգ. ցարար, ցարերի. ցարերից, ցարերով, ցարերոմ, ցաշ> ցօշ, ցաշի, հաց>հօց, հացի. հավ>հօվ, հավի, մաշ>մօշ, մաշի, մկրատ>մկրօտ, մկրատի և այլն.

4.—Եթե բառն ունի ու, որ առաջացած է նախավոր ա-ից, հոլովման ժամանակ այդ ու-ն դառնում է ա. ինչ. թաղ>թուղ, թաղի, ցանց>ցուցք, ցանցի, սեամ>շումք, շամքի, տանձ>տուճ, տանճի, փշրանք>փշրուճք, փշրանքի և այլն: Նույնիսկ Շումբ, որ տեղանուն է դարձել, լինում է սեռ. Շամբի:

5.—Եթե բառն ունի օյ, որ առաջացած է նախավոր ա-ից, հոլովման ժամանակ այդ օյ-ը դառնում է այ. ինչ. տալ>տօյլ, տայլի, կալ>կօյլ, կայլի և այլն:

6.—Եթե բառն ունի էօ, որ առաջացած է նախավոր ա ձայնավորից, հոլովման ժամանակ այդ էօ-ն դառնում է ո. ինչ. գաճ>գ'էօճ, գ'ոճի, գազ>գ'էօզ, գ'ոզի, վարդ>վէօռդ, վռդի և այլն:

7.—Ա վերջացած բառերը հոլովման ժամանակ ջնջում են իրենց վերջաձայնը. ինչ. սառանայ>սառանա, սառանի, կապայ> կապա, կապի, խուփ>խուփա, խուփի, յղի>յաղա, յաղի. այսպես նաև՝ եթե նույն ա ձայնը վերածված է օ. ինչ. տղայ>տղօ, տղի, երախայ>ըրխօ, ըրխի: Նույնիսկ Թրք. բառերից ունենք թէօվլա «խոռոչ», տես. թէօվլի, մաղարա «քարայր», տես. մաղարի:

8.—Եթե բառը վերջանում է ը, հոլովման ժամանակ այդ ը ջնջվում է. ինչ. եօթն>էխտը, էխտի, զկեռ>զըկէռնը, զըկէռնի, բեռն>բէռնը, բէռնի, եզն>իզնը, իզնի, Թոռն>Թառնը, հակ>հօկնը, հակնի և այլն:

9.—Իւ վերջացող բառերը հոլովման ժամանակ այդ հանգը դարձնում են վ. ինչ. կաւու, կաւվի, կաւվից, կաւվավ, կաւվամ, ածու-ածվի, առու-առվի, խաղող>հադդու, հըդդվի (բայց. և՝ հադդուի), խաշու-խաշվի. այսպես և՝ հեռի>հռօի, տես. հռովի, համաձայն ուրիշ բարբառների հեռու-հեռվի ձևին:

Լու>լիւ, ձու>ձիւ բառերը սեռականի մեջ դառնալով լիվի, ձվի, այնուհետև վ անցել է ուղղականին, այնպես որ հիշյալ բառերը ունեն երկու ձև. լիւ, լիվ և ձիւ, ձիվ:

Լեզու>լիզիւ կրճատմամբ լինում է սեռ. լիզվի, փոխանակ՝ լիզվի կամ լիզվիւյի:

Աճառեան բառը դառնում է ճաճուհ և ճաճօճ. վերջիններս ունենք կանոնավորապես տես. ճաճօճի, բայց առաջինի մեջ թուլ ճ վերջաձայնն էլ ջնջվելով՝ լինում է տես. ճաճվի, բց. ճաճվից, գրծ. ճաճվավ, ներգ. ճաճվամ:

Սրանց համեմատ է նաև գլուխ>գ'լիւճ, տես. գ'լիճի, գ'լիճից կամ գ'լիից և այլն:

Պուպու «յոպոպ» տալիս է տես. պուպուլի, և ոչ թե պուպվի:

10. Շատ հետաքրքրական ձևեր են խօսք>խօսկ, տես. խօսկի, խասկի, յօնք>յունք, տես. յունքի, յանքի, ծով>ծով, տես. ծավի, ծոց>ծուց, տես. ծացի, ոտն>ուտնը, տես. ատնի:

Երկրորդ հոլովում

Այս հոլովման նշանն է տես. -ու, բց. -ուց, գործ. -ավ, ներգ. -ամ (թեթև բառերը՝ -ով, -ոմ). ինչ.

Ո.	ձի	ձիյոր
Ս. Տ.	ձիյու	ձիյէր-ի
Բ.	ձիյուց	ձիյէր-ից
Գ.	ձիյով	ձիյէր-ով
Ն.	ձիյոմ	ձիյէր-ոմ

Այս հոլովման են հետևում՝

1. Այն բառերը, որոնք վերջանում են ի. հոլովման մեջ այս ի ձայնը կորչում է. ինչ. քամի, քամու, քամուց և այլն: Ի վերջացող հատուկ անունները այս հոլովման հետ գործ չունենն:

2. Բոլոր բայերի անորոշ դերբայները. ինչ. ուտել>օտիլ, ըտէլու, ըտէլուց, ըտէլով, ըտէլոմ:

3. Բոլոր տեղանունները. ինչ. Սոսպի (գիւղի անուն), տես. Սոսպու, Ագա-Ագու, Ցաղնա-Ցղնու, Ասիյա-Ասիյու, Ցէվրօպա-Ցէվրօպու և այլն. օրինակներից երևում է, որ այս պարագային ի և ա բառավերջի ձայնավորները կորչում են. Ցղնայի ենթաբարբառում տեղանունները հետևում են առաջին հոլովման. բայց -ատան հանգող անունները քե Ագուլիսի, և քե Ցղնայի մեջ հոլովվում են -ի հոլովման համաձայն:

4. Դերբայական -ող>-ուղ մասնիկով կազմված բառերը. ինչ. աճուղ «ասող», տանուղ «տանող», բիրուղ «բերող» և այլն:

5. Մի քանի սովորական բառեր, որոնք են՝ ձի, մարդ, աղջիկ, գիժ, կնիկ (տես. կնգու), ասատած (տես. աստրծու, աստծու

ասաու), ասաուածածին (սեռ. Ըսաածու)։ Այսպես նաև՝ հրաէդ, բաաէդ, բաէդ, տրաէդ, նբաէդ, ընաէդ բառերը, թեև տեղ>աէդ դոյականը հոլովվում է առաջին հոլովման համաձայն։

Ծանոթ.—1. Վերջին բառերից ոմանք առաուվում են ի և ու հոլովումների միջև. այսպես՝ մարգ>մօդ, սեռ. մադի կամ մադու, գիժ>գիժ, սեռ. գիժի, գիժու, դերբայներից՝ անուղ «սաող», սեռ. ընադի, ընադու և այլն, նույնիսկ բայերի անորոշների հոլովման մեջ՝ բցդ. -ուց կամ -ից. օր. քաէլից, ընէլից կամ նաև՝ ընէլի, ընէլու «սաելու» և այլն։

2.—Ի հանգող բառերը սեռականի մեջ կարող են նաև ինալ անփոփոխ. այնպես որ ուղղականը դառնում է նաև սեռ.-տր. ինչ. ուռենի>օռնեն, սեռ. օռնի. օր. օռնի տիրիվ «ուռենու տերևս», այսպես նաև՝ գինի կարաս «գինու կարաս», գոխտի պոռկը «գոտու ծայրը», հըլէրի մաջը «հայելու մեջ» և այլն։

Եթե բառը թեթև է, նույն ու ձայնը կարող է դառնալ ի, ինչ. քոռնի, սեռ. քոռնիւ, քոռնիւ «քանիի», քոռի, սեռ. քոռիւ «քնուս», հէգի, սեռ. հէգիւ «հոգիի» և այլն։ Այսպես միևնույն բառը կարող է ունենալ երեք ձևի սեռական, օր. դարի>գէրի, սեռ. գէրու, գէրիւ, գէրի։

Երբեմն, -ի հոլովման հետևող բառերն էլ, եթե ունեն վերջավանկում ի ձայնը, սեռականում և բացառականում ստանում են ի. ինչ. դիւղնը «անօթի», սեռ. դիւղնիւ, բց. դիւղնիւց, բիւժիւ «բուժուժ», սեռ. բիւժիւ, բց. բիւժիւց և այլն։ Բայց սրանց մեջ մասնիկը ու չէ, որ դարձած է ի, այլ ի, որ ձայնավորների նույնացման օրենքով դարձել է -ի։

Երրորդ հոլովում

Այս հոլովման հետևում են -ութիւն վերջացող վերացական բառերը. ինչ.

Ո. Հ.	*գ՛ըզօթյուն*	*գ՛ըզօթյուն-նէր*
Ս. Տ.	*գ՛ըզօթյան*	*գ՛ըզօթյուն-նէր-ի*
Բ.	*գ՛ըզօթյունից*	*գ՛ըզօթյուն-նէր-ից*
Գ.	*գ՛ըզօթյունավ*	*գ՛ըզէթյուն-նէր-ով*
Ն.	*գ՛ըզօթյունամ*	*գ՛ըզօթյուն-նէր-ամ*

Այս բոլորի տեղ ունենք նաև տարբեր վերջավորություններ՝ հետևյալ ձևով.

Ուղ. -օթին.

Սեռ.-տր. -օթինի, -օթոն, -օթէնի (այս վերջինը գործածական է Ցղնայի ենթաբարբառում և ավելի հաճախ, քան մյուսները).

Բցդ. -օթինից, -օթընից, -օթոնից, -օթիւնից, Ցդ. -օթէնից.

Գրծ. -օթինով, -օթիւնով, -օթիւնէօվ, -ըթոնով, Ցդ. -օթէնով.

Ներգ. -օթինում, -օթիւնում, -օթիւնիւմ, -ըթոնում, Ցդ. -օթէնում։

Չորրորդ հոլովում

Այս հոլովման նշանն է. սեռ. -վա, բցդ. -վանից, գրծ. -վանավ, ներգ. -վանամ, որոնց համապատասխան թեթևներն են՝ -վ, -վոնից, -վոնով, վոնամ: Սեռականը քիչ անգամ կարող է լինել նաև -վան, -վոն, օրինակ՝

	Եզ.	*Հգ:*
Ո. Հ.	*աշունք*	*աշունք-նէր*
Ս. Տ.	*աշունք վա*	*աշունք-նէր-ի*
Բ.	*աշունք-վանից*	*աշունք-նէր-ից*
Գ.	*աշունք-վանավ*	*աշունք-նէր-ով*
Ն.	*աշունք-վանամ*	*աշունք-նէր-ամ*

Այս հոլովման հետևում են ժամանակ ցույց տվող բառերը. ինչ. օր. շաբաթ, տարի, ամառ, ամիս, գիշեր, ևրբ (սեռ. իրվան), պաուիկ, այսօր, էգուց, հերու, ձմեռ, ցերեկ և շաբաթվա օրերի անուններըր՝ ուրբաթ, կիրակի և այլն։ Սրանք մեծ մասամբ հոլովվում են նաև առաջին հոլովման համեմատ։ Հոլովման ժամանակ տարի, կիրակի, հերու բառերը կորցնում են իրենց վերջին ձայնավորը։ Ձմեռն>ձմեռնը բառը կորցնում է -նը՝ հանգը։ Ժամանակ սեռ. -վան մասնիկի փոխարեն առանում են նաև -ան, -ոն. ինչ. գիշեր, այսօր և գարուն բառերից՝ քշարվոն կամ քշարան, առարվան կամ առարան, ասբրան, ասրան, գարիւնքվոն կամ գարիւնքան և այլն։

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման հետևում են անձնանունները, ինչ որ էլ լինի իրենց վերջավորությունը։ Հոլովման նշաններն են՝ սեռ. ա կամ օ, բցդ. -ից, գրծ. -ավ կամ -օվ, ներգ. -ամ կամ -ում: Այս

կրկնակ ձևերից առաջինները գործածվում են, երբ շեշտը բառի վերջընթեր վանկի վրա է, իսկ երկրորդները՝ երբ շեշտը վերջին վանկի վրա է: Համապատասխան թեթևներն են՝ ո, ե, ու, ե, ու, ում, իւմ: Օր.

Ո.	Բազդասար	Խաչատուր
Ս. Տ.	Բազդասար-ա	Խաչատուր-ո
Բ.	Բազդասար-ից	Խաչատր-ից
Գ.	Բազդասար-ու	Խաչատր-ով
Ն.	Բազդասար-ում	Խաչատր-ում

Թեթևների համար իբր օրինակ՝ Ավետիս, Ավետիսով, Ավետիսոմ, Սարգիսէ, Սարգիսէով, Սարգիսիւմ և այլն:

Ծանօթ.—1. -ի և ա վերջացող անձնանունները հոլովման մեջ կորցնում են նույն ձայնավորները. ինչ. Յովհաննէս>Օվի, սեռ. Օվա, Խաչիկ>Խաչի, սեռ. Խաչա, Եսայի>Իսայի, սեռ. Իսայո, Մարգար>Մարգարա, սեռ. Մարքարո, Երեմիա>Յէրէմյա, սեռ. Յէրէմյո և այլն:

2.—Անձնանուններից ոմանք կարող են շեշտը տեղափոխել ըստ կամս և հետևաբար հոլովվել առաջին կամ երկրորդ ձևով, ինչ. Պետրոս>Պիտրուս, սեռ. Պիտրուսա կամ Պիտրուսո, Ավետիս>Ավետիս, սեռ. Ավէտիսա կամ Ավէտիսէ և այլն: Բայց առհասարակ այն բառերը, որ վերջավանկում ունեն ի, ու ձայնավորները, հոլովված ժամանակ շեշտը գնում են վերջավանկի վրա, իսկ այն բառերը, որ վերջավանկում ունեն ա, է ձայնավորները, հոլովման մեջ շեշտը գնում են վերջընթեր վանկի վրա. ինչ. Սարգիս—սեռ. Սարգիսէ, Պուղուս—սեռ. Պուղուսո, Ակուփ—սեռ. Ակուփո, Թումաս—սեռ. Թումասա, Քասպար—սեռ. Քասպարա, Ռուբէն—սեռ. Ռուբէնա և այլն: (Այս օրենքը Սարգսյանի դիտողության արդյունքն է. տես էջ 85):

3.—Տեղանունները այս հոլովման հետ գործ չունեն և հետևում են առաջին և երկրորդ հոլովման:

Վեցերորդ հոլովում

Ո.	հայր	հայր-ար
Ս. Տ.	հօր	հայր-էր-ի
Բ.	հօր-ից	հայր-էր-ից
Գ.	հօր-ով	հայր-էր-ով
Ն.	հօր-ում	հայր-էր-ում

Այսպես են հոլովվում հայր, մայր և բարդություններից՝ սանամայր, տիրամայր. իսկ սանահայր բառը չկա բարբառում:

Յոթերորդ հոլովում

Ո.	ախպար «եղբայր»	ախպար-ներ
Ս. Տ.	ախպուր	ախպար-ներ-ի
Բ.	ախպարից	ախպար-ներ-ից
Գ.	ախպարով	ախպար-ներ-ով
Ն.	ախպարում	ախպար-ներ-ում

Այսպես են հոլովվում խաչախպար «խաչեղբայր», հերբոր «հօրեղբայր» (սեռ. հէրբուր կամ հէրբիւր, բց. հէրբուրից և այլն), սկեսուր>ըսկասար, սեռ. ըսկիւսիւր, բց. ըսկիւսիւրից:

Ութերորդ հոլովում

Ո.	քույր	քույր-ար	կամ	քվիր-ներ
Ս. Տ.	քվիր	քույր-երի		քվիր-ների
Բ.	քվիրից	քույր-երից		քվիր-ներից
Գ.	քվիր-ով	քույր-երով		քվիր-ներով
Ն.	քվիր-ում	քույր-երում		քվիր-ներում

Այսպես է հոլովվում նաև բզգվոքույր «փեսի քույրը», բայց հօրաքոյր>հարու լինում է սեռ. հարու կամ հարվի, բց. հարուց, հարվից, գրծ. հարվավ, ներգ. հարվում: Անսովոր են գրծ. հարաւ, ներգ. հարամ ձևերը:

Իններորդ հոլովում

Ո.	տայր	տայր-ար
Ս. Տ.	տէրուչ (Յզ. տէրուճ)	տայր-էր-ի
Բ.	տայր-ից	տայր-էր-ից
Գ.	տայր-ով	տայր-էր-ով
Ն.	տայր-ում	տայր-էր-ում

Այսպես են հոլովվում նաև տեր բառից կազմված բարդերը. ինչ. տանտեր>տունտայր, սեռ. տունտերուչ, բց. տունտայրից, գրծ. տունտայրով, ներգ. տունտայրում, հողատեր>հղատայր, սեռ. հղատերուչ, փողատեր>փղատայր. սեռ. փղատերուչ և այլն:

Մարաղայի բարբառ.—*Ունի 7 հոլովում. Մարաղայի հոլովումը բոլորովին տարբերվում է մյուս բարբառների սկզբունքից, որովհետև հիմնված է վերջավանկի ձայնավորների ներդաշնակության օրենքի վրա (ավելին տես տարև դրված «Ընդհանուր դիտողության» մեջ)։*

Առաջին հոլովում

Այս հոլովման նշաններն են՝ սեռականի և տրականի համար թե եզակի և թե հոգնակի՝ ի (որոշյալ տրականը՝ -ին), բացառականի համար՝ -էն, գործիականի համար՝ -օվ, օր. գինի>կ'ինի.

	Եզ.	Հգ.
Ո.	կ'ինի	կ'ինիները
Ս. Տ.	կ'ինիյի	կ'ինիների
Բ.	կ'ինիյէն	կ'ինիներէն
Գ.	կ'ինիյօվ	կ'ինիներօվ

Այս հոլովման հետևում են այն բոլոր բառերը, որոնց վերջավանկի ձայնավորն է ի կամ ի՝, օր. խէժ>խիժ, խիժի.

այգի>էգ'ի, էգ'իյի *մարգարիտ>մարգըրիտ, մարգըրիտի*
ձի>ձի, ձիյի *դարի>կ'ըրի, կ'ըրիյի*
հայելի>հայլի, հայլիյի
բաժին>պաժին, պաժինի
ալևոր>խալվիր, խալվիրի
անէծք>անիսկ', անիսկ'ի

Վերջավանկում ա, է ձայնավորներն ունեցող բառերն էլ պատկանում են այս հոլովման, միայն նրանց սեռականի ի ձայնավորը տկարանալով՝ դառնում է ը, իսկ երբ բառը վերջանում է գ, ք, կ բաղաձայններով կամ յ կիսաձայնով՝ դարձյալ ինում է ի. ինչ.

աշխարհ>աշխարք', աշխարքի
մէջք>մէշկ', մէշկի
բակ>պակ', պակի
կէս>կէս, կէսը
գանգ>գոնգ', գոնգ'ի
շարժ>ժաժ, ժաժի

խայ>խաչ, խաչի
գդակ>քիթաչ, քիթաչի
մեխակ>միխաչ, միխաչի
բախտ>բախտ, բախտի

Շրթնային բաղաձայնով վերջացող բառերի բացառականը լինում է -ըեն. ինչպես՝ սեաւ>սիվ, բցո. սիվըեն, չերեփ>չիրիփ, բցո. չիրիփըեն և այլն։

Երկրորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են՝ եզակի սեռականի և տրականի համար՝ -ը (որոշյալ տրական՝ -ին). Ինացյալ բոլոր հոլովները՝ առաջինին նման. ինչ. հաց>խաց.

	Եզ.	Հգ.
Ո.	խաց	խացիր
Ս. Տ.	խացը	խացիրի
Բ.	խացէն	խացիրէն
Գ.	խացօվ	խացիրօվ

Այս հոլովման հետևում են այն բոլոր բառերը, որոնց վերջավանկի ձայնավորն է ա, օ, ը. ինչ.

արեգայ>հաւպէգա, հաւպէգայը
մարգարէ>մարքարա, մարքարայը
հայրապատ>խպաւտա, խպաւտայը
գլուխ>կօլօխ, կօլօխը
բաժան>պաժան, պաժանը
թշնամի>թշնամը, թշնամըյը
ցամաք>ցանձըր, ցանձըրը
անալի>աննը, աննըյը
ծունկ>ձընգ, ձընգը

Ուէ, ըե, ըի ձայներն ունեցող բառերը հոլովվում են թե՛ այս, և թե՛ նախորդ հոլովման համեմատ. ինչ.

խմոր>խըմբ'ը, խըմբ'երը, խըմբ'երը
անձրև>անձըվբ'ը, անձըվբ'երը
բեռն>պըէս, պըէսը

մեղք>մըէխկ՛, մըէխկ՛ի
գող>կուէղ, կուէղը, կուէղի
հաղ>խուէղ, խուէղը, խուէղի՛
խաղող>խավուէղ, խավուէղը

Շրթնային բաղաձայնով վերջացող բառերը բացառական մեջ առանում են -ըէն, ինչպես՝ հաւ>խավ, բցո. խավըէն:

երրորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են եզ. սեռ.-տր. ու (որոշյալ տր. -ուն), ինացյալ բոլոր հոլովները՝ առաջինին նման. ինչ.

Ո.	*առու*	*առուներ*
Ս. Տ.	*առույս*	*առուների*
Բ.	*առույէն*	*առուներէն*
Գ.	*առույօվ*	*առուներօվ*

Այս հոլովման տակ են գնում այն բոլոր բառերը, որոնց վերջավանկի ձայնավորն է ու. ինչ. ծուներ>ծունդուր, ծունդուրու.

մեղու>մէղուկ, մէղուկու
կու «թրիք»>կու, կույս
ապուր>ապուս, ապուսու
արտասուք>առսունք, առսունքու

Այն բառերը, որոնց վերջավանկի ձայնավորն է ու՛, հաւ վաստրապես հետևում են թե՛ այս, և թե՛ երկրորդ հոլովման, ինչ.

խոտ>խուէտ, խուէտու, խուէտը
կանոն>կանուէն, կանուէնու, կանուէնը
կոյր>կուէր, կուէրու, կուէրը

Օ ձայնավորն ունեցող բառերն էլ կարող են երբեմն հետևել այս և երբեմն երկրորդ հոլովման. ինչ.

կով>կով, կովը, կովու. բցո. կովըէն
կոպ>կոպ, կոպը, կոպու, բցո. կոպըէն
օր>օր, օրը, օրու

Մարդ>մարթ բառը սեռական լինում է մարթը՛, բայց նաև մարթու. երբ առանում է հոգ, գառնում է մարթուն:

Հարսն>խարս, խառս լինում է սեռ. խառսու:

Տաճիկ բառը թեև կանոնավոր կերպով հետևում է հինգերորդ հոլովման, բայց կարող է լինել նաև սեռ. տաշկու և այլն:

Վերացական բառերը, որ հանգում են -ութիւն կամ -ութուն մասնիկով, նույնպես պատկանում են այս հոլովման. ինչ. խաստութիւն, սեռ. խաստութունու, բց. խաստութունէն, գրծ. խաստութունով, հգ. խաստութունքիր և այլն:

Այստեղ է պատկանում նաև ասուած բառը:

Ո.	*ասված*	*ասվասքիր*
Ս. Տ.	*աստու*	*ասվասքիրի*
Բ.	*աստէն*	*ասվասքիրէն*
Գ.	*աստօվ*	*ասվասքիրօվ*

Չորրորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են. եզ. սեռ.-տր.-ի (որոշյալ տր. -ին, -իւն), ինացյալ բոլոր հոլովները՝ առաջինին նման. ինչ. լեզու>լեզի.

Ո.	*լեզի*	*լեզիներ*
Ս. Տ.	*լեզիյի*	*լեզինների*
Բ.	*լեզիյէն*	*լեզիներէն*
Գ.	*լեզիյօվ*	*լեզիներօվ*

Այս հոլովման տակ են գնում այն բոլոր բառերը, որոնց վերջավանկի ձայնավորն է -իւ կամ -էօ. ինչ.

ձու>ձի, ձիւի
թթու>թիւթի, թիւթիւի
պղիւր>տխպիւր, տխպիւրի
գրաւ>գիւրէօվ, գիւրէօվի
ալիւր>ալիւր, ալիւրի
բոկ (բոկիկ)>պէօպիւկ՛, պէօպիւկ՛ի

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են. եզ. սեռ.-տր. -ա կամ -աւ, ինացյալ բոլոր հոլովները՝ առաջինին նման. ինչ. աղջիկ>աղջիկ.

Ո.	*ախչիկ*	*ախչիկքիր*
Ս. Տ.	*ախչկա, ախչկան*	*ախչիկքերի*
Բ.	*ախչիկէն*	*ախչիկքիրէն*
Գ.	*ախչիկով*	*ախչիկքիրով*

Այս հոլովումը, որ ուրիշ բարբառներում շատ սահմանափակ է, ընդհակառակը, Մարաղայի բարբառում ընդարձակ դիրք ունի. նրան են հետևում անխտիր -իկ վերջացող բոլոր բառերը. ինչ.

չապիկ>չապըկ, չապկա
կնիկ>կընիկ, կնգա, կընըկան
պառւկ>պառիկ, պառկա
մեղու>մօղիկ, մօղկա,
մժիկ>միժիկ, միժկա
մատանի>մանըկ, մանկա
մամիկ>մամըկ, մամկա
ոզնի>վըզնիկ, վըզնըկա
տաճիկ>տաճիկ, տաշկա, տաշկան
զատիկ>զատիկ, զատկան

Տեզացի յուշյց տվող բառերը, որոնք վերջանում են -ցիկ մանրիկով, առանց բացառության հոլովվում են այս ձևով. ինչ. Մարաղացիկ, Բինաբցիկ, Թորվիզցիկ, սեռ. Մարաղացկա, Բինաբցկա, Թորվիզցկա և այլն։

Բացառությամբ ձի>ձի բառն էլ, որ պատկանում է առաջին հոլովման, կարող է լինել սեռ. ձիյան։

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են. եզ. սեռ.-տր. -վա կամ -վան. Ներացյալ բոլոր հոլովները՝ առաջինին նման. ինչ. ամիս>ամսի։

Ո.	*ամըս*	*ամըսքիր*
Ս. Տ.	*ամըսվա, ամըսվան*	*ամըսքիրի*
Բ.	*ամըսէն, ամըսվանէն*	*ամըսքիրէն*
Գ.	*ամըսով, ամըսվանով*	*ամըսքիրով*

Այս հոլովման են հետևում ժամանակ ցույց տվող բառերը. ինչ.

ամառն>ամառ, ամառվա
աշուն>աշնան, աշունվա
առաւօտ>առաւոտն, առաւտվա
գարուն>կ'առիւն կ'առիւնվա
յետ>յէտ, յէտվան
դիր>տիր «անդամ», էս տիրվա, էն տիրվա
դիշեր>քիշիր, քիշիրվա
եառանդ>յառանդ, յառատվա
երեկոյ>իրվանչադ, իրվանչադվա
երէկ>յերէկ, յէրէյվա
զաւթիկ>զատիկ, զատկվա
շաբաթ>շապաթ, շապաթվա
վաղը>վոգո, վոգվա
հերու>խէօրիւ, խէօրվա
ձմեռն>ձ̇ըմըէռ, ձ̇ըմըէռվա
տարի>տառ, տառվա
օր>օր, օրվա
ուրբաթ>իւռպաթ, իւռպաթվա

Այսպես են նաև թուրքերենից փոխառյալ բառերը. ինչ. համմիշավան «աշխատանք», սօրավան «հարբ, վերջին»։

Յոթերորդ հոլովում

Այս հոլովման նշաններն են. եզ. սեռ. տրականում՝ միջատային օ, որ ինում է նաև եզակիի մյուս հոլովներում, հոգնակին նույնն է առաջին հոլովման հետ. օր. հայր>խէր.

Ո.	*խէր*	*խէրիր*
Ս. Տ.	*խօր*	*խէրիրի*
Բ.	*խօրէն*	*խէրիրէն*
Գ.	*խօրով*	*խէրիրով*

Այս հոլովման հետևում են շատ սակավաթիվ բառեր. այն է՝

մայր>մէր, մօր
եղբայր>ախպէր, ախպօր
հօրեղբայր>խօրախպէր, խօրախպօր
սանամայր>սանամէր, սանամօր

Հօրաքոյր և մօրաքոյր բառերը գոյութիւն չունեն բարբառիս մէջ. նրանց տեղ Քրք. բիբի և խալա բառերն են գործածվում:

Ինչպես դիտրին է նկատել, Մարագայի բոլոր այս հոլովումների մէջ ամենից ավելի հիմնական դեր կատարողը ձայնավորների ներդաշնակութեան օրէնքն է. առաջին չորս հոլովումները ուրիշ բան չեն, եթե ոչ միևնոյն ի հոլովումը, որի ի մասնիկը՝ բառի վերջին ձայնավորի ազդեցութեամբ՝ մյուսների մէջ դարձել է ի, ը, ու, իւ, ներդաշնակութեան օրէնքը առհասարակ զորած չէ հոգնակիի -իր, -ներ, -քիր և բացառակա-ն ու գործիականի -ե՛ն, -օվ մասնիկների վրա. չի ասվում օրինակի համար՝ լէօզիւ, սեռ. լէօզիւյի՝ ձևի դեմ՝ բց. լէօզիւյէն, գրծ. լէօզիւյէվ, հգ. լէօզիւնիւր, լէօզիւնիւրիւ, լէօզիւնիւրէն, լէօզիւնիւրէվ, ինչպես սպասելի էր. Բայց երբեմն լսվում է շիւն, հգ. շիւնիւր, տր. շիւնիւրիւն, լեօզիւնիւրիւ և նման ձևեր:

Առաջին չորս հոլովումները լինելով բարբառիս հիմնական հոլովումները, մյուս հոլովումներին հետևող բառերն էլ աշխատում են հետզհետե հպատակվել նրանց. հինգերորդ և յոթերորդ հոլովումներին, ինչպես և գրաբարաձև հոլովումներին հետևող բառերը անխտիր հոլովվում են նաև նրանց ձևով, իսկ վեցերորդ հոլովումից մի քանի բառեր միայն.—քոյր բառը, որ ուրիշ բարբառների մէջ աեր, կեսուր, ընկեր և այլն բառերի հետ մի մասնավոր հոլովում է ձևացնում, այս բարբառի մէջ իր ամբողջ խմբով հետևում է առաջիններին:

Եթե մի բառ ունի մի քանի ձև, յուրաքանչյուրը հետևում է կանոնավոր կերպով իր պատկանած հոլովման. ինչ.

հոգի>խօքը, խօքըյը և խօքու, խօքույու
յոգոգ>պըպը, պըպըյը և պուպու, պուպույու
մեղու>մօղիկ, մօղկա և մեղուկ, մեղուկու
ժոդովուրդ>ժօղովը՛րր, ժօղովը՛րրը և ժօղո վուրր, ժօղովուրրու:

Առոիալի բարբառ.— Գոյականները, ինչպես նաև գոյականաբար առնված ածականները, ունեն 6 հոլովում, հետևյալ ձևով.

Առաջին հոլովում

Այս հոլովման վերջավորութիւնները են, սեռ.-տր. -ի, բցո. -է, գրծ, -օւ, հոգնակիում՝ սեռ.-տր. -երու, -ներու, բցո. -երէ, ներէ, գրծ. -երօւ, -ներօւ. օր.

(Սուչավայի բարբառով)

Ու.	հաց	հացեր
Ս. Տ.	հացի	հացէրու
Բ.	հացէ	հացէրէ
Գ.	հացու	հացէրօւ

Որոշյալ հայցականում դրվում է միշտ զ, ըզ նախդիրը. ինչ. Լհ. զ-ձ'էոք դի բաքնիմ:

Սչ. գուզէ ըզճարսը բ'էրէ:
Սչ. խըրգէ ըզվերի գ'օգ'օրը
Սչ. բէգդ'է խրնդ'րինք ըզբահանաց
Սչ. հաքիրը ըզհիրըրցիրըր

Բայց կարելի է նաև առանց նախդիրի ասել՝

Սչ. ուժէ ջիրախները դի փօխին
Սչ. յէւ ամմէն բ'անը բագմինք

Ծանոթ.—1. Այս հոլովման ժամանակ բառավերջի ու գառնում է վ. ինչ. լեզու>Սչ. լիզու, սեռ. լէզվի, բայց մեղու բառը, որ գարձել է մեղուն, սեռ. լինում է մեղունիի:

2. կաթն>Սչ. գաթը բառը դառնում է սեռ. գաթնի:

Երկրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորութիւններն են եզակիում՝ սեռ. տր. -ու, բց. -է, գրծ. -օւ. հոգնակին նման է առաջին հոլովման, օր. ջամփա ճճանապարհ:

(Սուչավայի բարբառով)

Ու.	ջամփա	ջամփաներ
Ս. Տ.	ջամփու	ջամփանէրու
Բ.	ջամփէ	ջամփանէրէ
Գ.	ջամփու	ջամփանէրօւ

Սուչավայի բարբառում դանագան բառեր, որոնք հետևում են այս հոլովման, ներկայացնում են դանագան շեղումներ: Այսպես՝ մարդ բառը լինում է սեռ.-տր. մարդ'ու, բցո. մարդ'ուցմէ, Հնգ. մարդ'ըվէն, գրծ. մարդ'օւ, մարդ'ըվօւ: Առատած բառը լինում է Սչ. ասդուձու (Լհ. ասդ'ուձու), Սչ. ասդըձու, բց. Սչ. ասդուձմէ, ասդըձվէ, գրծ. ասդ'ըձվօւ—Լհ. ասդ'ձվով

(օր. գ'ընա ասդ'ըձվօվ «բարով երթաս»)։ Հնգ. բցո. ասաուձայվէլ, Մչ. ասաըձվէ (Հուշարձ., էջ 363)։ Կան բառեր, որ ուրիշ բարբառներում հետևում են առաջին հոլովման, իսկ այստեղ անցել են երկրորդ հոլովման. օր.

Մչ. թաթաւ «անձրև», սեռ. թաթֆու, բցո. թաթֆէ, դրձ. թաթֆօւ։

դար «բարձունք» > Լհ. դ'ար «լեռ», որից սեռ. դ'արու «լեռան», օր. դ'արու էգև «լեռան ճանը»։

Մչ. քահանա, սեռ. քահանայու։

Ընդհակառակը, կան բառեր, որ ուրիշ տեղ հետևում են երկրորդ հոլովման, իսկ այստեղ անցել են առաջին հոլովման, օր.

ոգայ > Պլ. դդա, դդու, Մչ. ըդդի.

հայ > Պլ. հայու, Մչ. հայի: Այս բառը հին հոլովներում հետևում է -ոյ հոլովման. հայոյ, հայոց, որի համար էլ լինում է Պլ. հայու, բայց Երև. լինում է հայի, ինչպես և Նոր-Նախիջևան. վերջինում ծագրական է համարվում հայու ձևը, որ համեմատում են Ըրք. այու «արջ» բառի հետ։

Ի

Ի վերջացող բառերի -ու հոլովման հետևելու օրինակ է՝ Լհ. օգվէնու հատնիչ «կոշիկ, ոտնամանդ», որ է ուղ. օգվէնի, սեռ. օգվէնու.

ոսկի > Լհ. օսգ'ի, որից օսգ'ու «ոսկյա»
կաշի > Լհ. գաշի, որից՝ գաշու «կաշյա»

Չորրորդ հոլովում

Այս հոլովման հատուկ վերջավորություններն են՝ եզակիում սեռ.-տր. -վան, բցո. -վանե, գրձ. -օւ, հոգնակին նման է առաջին հոլովման. ինչ.

(Մուշավայի բարբառով)

Ու.	օր	օրեր
Ս. Տ.	օրվան	օրէրու
Բ.	օրվանէ	օրէրէ
Գ.	օրօւ	օրէրօւ

Այս հոլովման հետևում են ժամանակ ցույց տվող բառերը. ինչ.

ամառն > Մչ. ամառ, ամառվանէ
գիշեր > Լհ. գըշէր, գըշէրվան
Հնգ. գրաբարյան «կիրակի օրվա»
ձմեռն > Մչ. ձմէռ, ցմէռվանէ, ցմէռօւ
հէրու > Մչ. հէրուս, Լհ. «անցյալ տարի», սեռ. հէրօվան
ցերեկ > Մչ. ցօրեգ, ցօրէգվանէ, ցօրէգօւ
հիմայ < Մչ. հիմըի, սեռ. հիմիգվան, Լհ. բցո. հիմըիգվէն

Բայց այս և ուրիշ ժամանակ ցույց տվող բառերը պահում են նաև գրաբարի հոլովաձևը և հատկապես սեռականում. ինչ.

աշուն > Մչ. Լհ. աշունք, սեռ. աշնան, գրձ. Մչ. աշունքօւ
բցո. աշնանէն
ամառն < Մչ. ամառ, սեռ. ամրան
ձմեռն < Մչ. ցմէռ, սեռ. ցմրան (Լհ. ձ'ըմրան), բց. ցմրանէն։

Զարմանալի է գարուն բառը, որ, հետևելով Թուրքերենին, դարձել է Մչ. առչի գ'արուն։ Թրք. գարունը կոչվում է ilk bahar, որ բառացի նշանակում է «առաջին գարուն», բուն որում աշունն էլ կոչվում է son bahar «վերջին գարուն», բայց հայերենում (Մչ. Լհ. և այլուր), չկա «վերջին գարուն», այլ միայն՝ աշուն կամ աշունք։ Ըստ այսմ «առչի գարուն» հարյորյուրը բոլորովին ավելորդ և անմիտ է, սոսկ հետևողություն Թուրքականի։ Բայց ավելի զարմանալին այն է, որ գարուն բառը բարբառից կորած լինելով, «առչի գարուն» դադափարը անըմբռնելի է և սուչավացիք էլ վերջածայն ն որոշիչ կարծելով՝ բառը հասկանում են առչի գ'արու, ուր գարու այլևս ոչ մի իմաստ չունի։ Լեհահայերը ասում են ուղղակի arči-karu (առանց ն վերջածայնի) և գեռ վերջածայն u ձայնավորն էլ նմանողությամբ առաջին բառի վերջին ձայնավորի (arči) դարձրել են i և հնչում են առչի-գ'արի, սուչավացիք բց. հոլովում ասում են առչիգ'արեն։

Թրք. (<արաբ.) sahat «ժամ» բառն էլ, որ ուրիշ բարբառներում լինում է սեռ. սահաթվան, այստեղ լինում է բց. Մչ. սախթէն։

Երրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորութիւնները են. սեռ.-տր. -ան, բցո. -անմէ, գրծ. օ. հոգնակին հոլովվում է առաջինի նման։

Օր. Սուչավայի բարբառով՝ աղջիկ,

Ու.	*ախչիք*	*ախչիգներ*
Ս. Տ.	*ախչիգան*	*ախչիգներու*
Բ.	*ախչիգանմէ*	*ախչիգներէ*
Գ.	*ախչիգօ*	*ախչիգներօ*

Այսպես են հոլովվում նաև՝

կին>Ս. գընիգ, սեռ. գընգան, բցո. գընգանմէ
ձուկն>Ս. ցուգը, սեռ. ցըգան։

Ջարմանալի է նաև գիւղ, որի սեռական գեղաձևը գործածվում է Լ. «գեղջկականց» իմաստով։

Երրորդ հոլովման վերջավորութիւններն են Սուչավայի բարբառներում նաև ուղ. -բյուն, սեռ.-տր. -բյան, բց. -բեն, գրծ. -բյունօ, իսկ լեհահայ բարբառում՝ ուղ. -բին։

Հոգնակին նույնն է առաջին հոլովման հետ. օր.

	Ս.	*Լ.*
Ու.	*հըբարդություն,*	*հաբարդութին*
Ս. Տ.	*հըբարդության*	
Բ.	*հըբարդութէնէ*	
Գ.	*հըբարդությունօ*	

Թումինահայ բարբառով ունենք եղ. գրծ. -բեցով, ինչ. իշխանութեցով։

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման մեջ սեռ.-տր. հոլովաձևը կազմվում է ուղղականի չնշույալ ձայնավորը դարձնելով օ, իսկ բց. և գրծ. հոլովները կազմվում են սեռ.-տր. հոլովաձևի վրա ավելացնելով -մէ, -մօ մասնիկները։ Հոգնակին նույնն է առաջին հոլովման հետ։

Օր. մար «մայր» (Սուչավայի բարբառով)

Ու.	*մար*	*մարեր*
Ս. Տ.	*մօր*	*մարէրու*
Բ.	*մօրըմէ*	*մարէրէ*
Գ.	**մօրըմօ*	**մարէրօ*

Այս հոլովման հետևում են բացի Ս. Լ. մար «մայր» բառից, նաև Ս. Լ. հար «հայր», և Ս. Լ. ախբար «եղբայր», ինչպես նաև սրանցից կազմված մի քանի բառեր, որոնք են՝

աստուածամայր>Լ. աստ՛վածամար
կնքահայր>Ս. գընգըհար
սանահայր>Ս. սանըհար
կնքամայր>Ս. գընգըմար
սանամայր>Ս. սանըմար
հօրեղբայր>Ս. Լ. հօր՛ար

ինչպես նաև Ս. խաշլումար «կնքամայր», որի արականն է Ս. խաշլու «կնքահայր», որ կազմված է հյ. խաչ բառից՝ թրք. lu= -աւոր մասնիկով. բուն նշ. «խաչավոր» (համմտ. այլ բառերով՝ խաչեղբայր, որ կնքահոր օգնականն է)։

Ծանոթ.—Վերի հոլովման մեջ բացառական մօրըմէ ձևի փոխարեն գործածական է նաև Ս. մօրը մօդէ («մօր մօտից»), իսկ գրծ. մօրը- մօ և նմաններ բնավ գործածական չեն և նրանց տեղ ասվում է Ս. մօրըհէդ «մոր հետ և այլն։

Ինչպես Պոլսում ժողովուրդը գործ է ածում հըյրը, մըյրը, իբր սեռ.-տր., նույնը կա նաև Հնդ.։ Սրանց մեջ յ ավելացել է հայր, մայր բառերի ազդեցությամբ։

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման վերջավորութիւներն են. սեռ.-տր. -օչ, բց. -օչըմէ, գործիականը չի գործածվում և նրա փոխարեն ասվում է սեռականով -օչ ձևդ, հոգնակին նման է առաջին հոլովման։

Այս հոլովման տիպական օրինակն է՝ Ս. Լ. քուր «քույր»

Ու.	*քուր*	*քուրեր*
Ս. Տ.	*քըրօչ*	*քուրէրու*
Բ.	*քըրօչըմէ*	*քուրէրէ*
Գ.	*(քըրօչ հէդ)*	*քուրէրօ*

Ուրիշ բարբառներում սրան են հետևում մի խումբ իգական ազգականական անուններ, բայց այստեղ ինձ ծանոթ է միայն Մշ. դալ, սեռ. դալօչ «տալ, տալոջ»:

Ծանոթ.— Ըստ Հանուշի, էջ 84, քոյր բառի հոգնակին լինում է Լհ. քուրներ:

Սվեդիայի բարբառ.— Աշխարհաբարի և ուրիշ բարբառների մեջ ընդունված հոլովումը ձևավորված է հետևյալ կերպով:

Առաջին հոլովում

Այս հոլովման նշաններն են թե եզակի, և թե հոգնակի սեռականի մեջ ը, բացառականի մեջ՝ է, գործիականի մեջ՝ -ուն:

Օր.

Ո. Հ.	*հաց*	*հացիր*
Ս. Տ.	*հացը*	*հացգիրը*
Բ.	*հացէ*	*հացգիրէ*
Գ.	*հացուն*	*հացգիրուն*

Եթե գոյականը որոշյալ է, բացառականի վերջավորությունը թե եզակի, և թե հոգնակի լինում է է. ձայնավորի փոխարեն ի. այսպես՝ հացցին, հացցիրին «հացից, հացերից», իսկ սեռական-տրականի ը ձայնավորի փոխարեն՝ է, ինչ. հացցին, հացցիրին «հացին, հացերին»:

Օր. ուրջը ագա «արջի ոտք»

ուրջէն ագան «արջի(ն) ոտքն»

Դիտ. 1.—Բառամիջի ձայնավորների փոփոխությունը կատարվում է ճիշտ հոգնակիի կազմության օրենքներով:

2.—Ջեյհունի բարբառում, հոլովման ժամանակ, սեռականի վերջավորությունը բառի նեղքին ձայնավորի համեմատ ինքն էլ փոփոխվելով՝ մինչև 5 ձև է առանում: Այդ երևույթը չկա այստեղ և սեռականի վերջավորությունը մնում է միշտ ը թեև բառի նեղքին ձայնավորը կարող է իր երանգը փոխել:

Ո. Հ.	*Գ'ուդա «գոտի»*	*գ'ուդոք*
Ս. Տ.	*գ'ուդը*	*գ'ուդինիրը*
Բ.	*գ'ուդէ*	*գ'ուդինիրէ*
Գ.	*գ'ուդում*	*գ'ուդինիրում*

Ո. Հ.	*սագանօ*	*սագանաք*
Ս. Տ.	*սագանը*	*սագանանիրը*
Բ.	*սագանէ*	*սագանանիրէ*
Գ.	*սագանում*	*սագանանիրում*

Ո. Հ.	*առռօ «առու»*	*առվընա*
Ս. Տ.	*առվը*	*առվընիրը*
Բ.	*առվէ*	*առվընիրէ*
Գ.	*առվում*	*առվընիրում*

Դիտ. 4.—Բառավերջի ու-ն հոլովման ժամանակ դառնում է վ. ինչ.

առու>առռօ, սեռ. առվը

լեզու>լիզօ, սեռ. լիզվը

մեղու>միզօ, սեռ. միզվը

կծու>գըձօ, սեռ. գըձվը

Երկրորդ հոլովում

Երկրորդ հոլովումը, որ ուրիշ բարբառներում սեռ. -ու վերջավորությունն ունի, ջնջված է այս բարբառում և բոլոր այս հոլովման հետևող բառերը հոլովվում են առաջին հոլովման համաձայն.

Օր. մառգը խելք «մարդու խելք»

Ըստ այսմ ի վերջացող բառերն էլ հոլովվում են նույն ձևով: Ինչ վերև տեսանք գօախ>գուդա բառի հոլովումը. նույնպես են նաև՝

գիղիցը դօո «եկեղեցու դուռ»

գ'ինը գագ «գինու տիկ»

«Ասառուած» բառը, որ ուրիշ տեղեր պահում է իր հոլովումը, այստեղ դառնում է սեռ. ասգ'ըձը. օր.

ասգ'ըձը համուր «աստուծոյ համար»

ասգ'ուձէ գ'ըննօս, յասըձէ գ'ըննօս «աստծուց գանես»

ասգ'ուձում

Նույնիսկ անորոշ դերբայը, որ հատկապես հպատակվում է այս հոլովման, Սվեդիայի բարբառում անցել է Ա հոլովման. օր.

խմիլը համուր «խմելու համար»
ուդիլը համուր «ուտելու համար»
ուդիլը բ'ուն գունո՞ք «ուտելու բան ունե՞ք»:
ասիլը խուսք գունէմ «ասելու խոսք ունեմ»:

Երրորդ հոլովում

Այս հոլովումը ուրիշ բարբառներում պարունակում է այն մի քանի բառերը, որոնց սեռականը, լինում է -ան կամ -ա:

Սվեդիայի բարբառում այս հոլովումն էլ ջնջված է և նրան հետևող բառերը անցել են Ա հոլովման: Այսպես՝

աղջիկ>աշգէն, աշգընը, աշգընէ, աշգընում
կնիկ>գընոգ, գինգը, գինգէ, գինգում
թոռն>թուռուն, թուռունը, թուռունէ, թուռունում

Բայց դուռն և լեառն բառերը պահել են իրենց հին հոլովումը՝ հետևյալ ձևով.

Ո. Հ.	դ'օռ	լիռ
Մ. Տ.	դ'ռօն	լիռռօն (նաև՝ լիռռը)
Բ.	դ'ռնի	լիռնի
Գ.	դ'ռնում	լիռնում

Այստեղ պիտի հիշենք նաև տուն և շուն բառերը.

Ո. դօն	շօն
Մ. դուն	շուն
Բ. դոնի	շննի
Գ. դնում, դուննում, դաննում	շննում

Այս հոլովումը պարունակում է նաև -ութիւն >ուդ'էն վերջացող բառերը. օր.

Ո. Հ.	մինձուդ'էն «մեծություն»
Մ. Տ.	մինձուդ'ուն
Բ.	մինձուդ'ունէ
Գ.	մինձուդ'ունում

Զարմանալի է սեռականը, որ առացել է ուրիշ բարբառների ուղղականի ձևը. բայց դա արդյունք է ձայնական օրենքների, որոնց համաձայն ա գառնում է ու. ուստի սեռ. մինձուդ'ուն ձևն էլ առաջացել է մեծութան ձևից, ինչպես գառնում ենք գոլսի բարբառում:

Չորրորդ հոլովում

Չորրորդ հոլովումը հատուկ է ժամանակ ցույց տվող բառերին. հոգնակին առաջին հոլովման ձևով է, իսկ եզակիի համար իբր օրինակ դնում ենք ձմեռն>ձ'միռ.

Ո. Հ.	ձ'միռ
Մ. Տ.	ձ'ըմբռվը, ձ'ըմբռվա
Բ.	ձ'ըմբռվընէ
Գ.	ձ'ըմբռվընում, ձ'ըմբռվում

Մյուս օրինակներն են՝
ամառն>ամառ, ամբռվը, ամբռվընէ, ամբռվում
գիշեր>գ'իշիր, գ'իշիրվը, գ'իշիրվա, գ'իշիրվընէ, գ'իշիրում, գ'իշիրվում
երեկոյ>իրգօն, իրգընվա, իրիգվընէ, իրիգվընում
դաժիկ>զոդոգ, զոդգրվա, զոդգրվը, զոդգրվընէ, զոդգում
երեկ>իրիգ', իրիգ'վա, իրիգ'վը, իրիգ'վընէ, իրիգ'վընում
կիրակի>գիրոգէ, գիրոգվա, գիրոգվընէ, գիրոգընամ, գիրոգվում
հերու>հիրօ, հիրվա, հիրվը, հիրվընէ, հիրվընում
ցերեկ>ցիրիգ, ցիրիգվա, ցիրիգվընէ, ցիրիգում, ցիրիգվընում
շաբաթ>շաբ'ութ, շաբ'թըվա, շաբ'թըվընէ, շաբ'թըվընում շաբ'թում
աարի>դարա, դարվա, դարվընէ, դարվընում
սըգաթ «ժամ» (թրք.), սըգաթվա, սըգաթվը, սըգաթվընէ, սըգաթում

«Օր» բառը բացառություն է կազմում և, փոխանակ հետևելու այս հոլովման, պահում է գրաբարի հոլովումը.

Մ. Տ. ավէօր, ավիւր, ուրվը (որոշիչ հոդով՝ ուրվին)
Բ. ավէօր, ուրվընէ
Գ. ուրում

Հետևելով այս բառին, երեկոյ և ցերեկ բառերը, ինչպես նաև օրերի անուննները, իրենց սեռականը կազմում են «աւուր» բառով, ինչ.

ցիրիգնումէօր «ցերեկվա»
իրիգնումէօր «երեկոյան»
ուրբ՝ուքնումէօր «ուրբաթ օրվա»
շաբ՝աթնումէօր «շաբաթ օրվա»
գիրագնումէօր «կիրակի օրվա»

Կարծում եմ, որ այս նորությունը մացրել են շաբաթ «հանգստեակ» և շաբաթ օրը դանազանելու համար իրարից, որից հետո անցել է նաև մյուս օրերին և բառերին։

Հինգերորդ հոլովում

Գոլսի բարբառում երեք բառ ունենք, որ հետևում են այս հոլովման (եղբայր, հայր, մայր), ուրիշ բարբառներում կա նաև տայգր. Սվեդիայի բարբառում հայր բառը փոխանակված է դուդ<տատա բառով, ուստի միայն են ընդամենը երկուսը՝ եղբայր և մայր։

Ո. Հ.	ախբ՝ար	մառ
Ս. Տ.	ախբ՝ուռ	մուռ
Բ.	ախբ՝րէ	մուրմէ, մուռէ
Գ.	ախբ՝րում	միրում

Վեցերորդ հոլովում

Ուրիշ բարբառներում այս հոլովման հետևում են այն բառերը, որոնց սեռականը կազմվում է -ոջ մասնիկով։ Նույն ձևով է նաև Սվեդիայի բարբառում հետևյալ բառերի հոլովումը։

Ո. Հ.	դուլ «տալ»	նիս «ներս»,	խազիսիր «սիկնոսը»
Ս. Տ.	դուլէօջ	նիսուիջ	ըսգըսըրիջ
Բ.	դուլիջմէ	նիսուիջմէ	
	դուլէ	նիսէ	ըսգըսըրէ
Գ.	դուլում	նիսում	ըսգըսըրում

Այստեղ պիտի պատկաներ նաև քոյր, որ թեև գրաբարում լինում է սեռ. քեռ, բայց բարբառներում լինում է քրոջ։ Սվեդիայի բարբառը քոյր բառը հոլովում է հետևյալ ձևով։

Ո. Հ. քայր
Ս. Տ. քուրը, քուռ, քրուչ
Բ. քուռը, քրուչմէ, քրուչըրմինը
Գ. քուռում, քուռգում

Սրանից կազմված բառերն են՝

հուրքայր «հորաքույր», սեռ. հուրքուր
մուրքայր «մորաքույր», սեռ. մուրքուր
բարուքայր «հնքահոր քույրը», սեռ. բարուքուր

Մյուս ազգականական բառերն են՝

քեռ>քռա, սեռ. քրոր
ամմա «հօրեղբայր»<արաբ. am, սեռ. ամմը
դոդիմառ «հոր մայրը, տատ», դոդիմուռ
քրորմառ «քեռու մայրը, որ է մոր մայր, տատ», սեռ. քրոմուռ
բար (<պապ) «հնքահայրը», սեռ. բարը
մամ (<մամ) «հնքամայրը», սեռ. մամը՝
սընգհենիւս «տանտիայրը» (այսպես է կոչում երեխայի մայրը՝ իր երեխային հնքոդին). սա հուն. σύντεκνος «հաճենեղբայր, հաճենքույր, հնքահայր, հնքամայրը» բառն է, որ միջ. հյ. դարձած է սինսեհնոս, սնդեհնոս և այլ ձևերով, որոնք տես Աբմ. Բո. 2, 240։

Հիշյալ բառերը թեև ազգականական, բայց բոլորն էլ չեն հետևում -ոջ հոլովման, այլ միայն նրանք, որ բարդված են քոյր բառով։ Մյուսները հոլովվում են սովորական ձևով. ինչ. ս. սընգհենիւսը, քրոը, մամը և այլն, ինչպես նշանակված է վերևում։

Վանի բարբառ.—Հոլովումը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Առաջին հոլովում

Առաջին հոլովման վերջավորություններն են՝ սեռական և տրական՝ ի, բացառական՝ -ից, գործիական -ով.— հոգնակիում (որ էլ լինի հոգնակիի մասնիկը՝ -ներ, -տար, -տեր, -վեր և այլն) սեռական, տրական և բացառական հանգում են -աց, գործիական՝ -ով. օր.

Ո.	*խաց*	*խացեր*	*անըղներ*
Ս. Տ.	*խացի*	*խացերաց*	*անըղներաց*
Բ.	*խացից*	*խացերաց*	»
Գ.	*խացով*	*խացերով*	*անըղներով*

Այլ օրինակ՝ կին յատերաց «կանանց»։

Հոգնակի բացառականը կարող է էլ ավելի երկարել -մունք մասնիկով. ինչ. կարիճներացմունք «կարիճներից», պարկյմիյ-ատերացմունք «բարեկամներից», փեսաներացմունք «փեսաներից», քյավորկինյատերացմունք «հնքամայրերից», տիկյերկինյատերացմունք «տագերականներից»։

Այս հոլովման է հետևում բարբառիս բառերի մեծագույն մասը, նույնիսկ այն բառերը, որ գրաբարից իրրև ժառանգություն ունեն հնձակ մի հոլովում, կարող են հոլովվել նաև այս ձևով։ Այս կարգի բառերը նշանակել եմ ամեն մի հոլովման մեջ փակագծով և նրանք նորից այստեղ հավաքելու կարիք չկա։

Նաև թուրքերենից փոխառյալ բառերը հետևում են այս հոլովման. ինչ. դիշման «թշնամի»։

	Եզ.	*Հգ.*
Ո.	*դիշման*	*դիշմընքյաներ*
Ս. Տ.	*դիշմի*	*դիշմընքյաներաց*
Բ.	*դիշմից*	«
Գ.	*դիշմով*	*դիշմընքյաներով*

Այս առաջին հոլովման համաձայն են հոլովվում նաև -ու վերջացող բառերը, որոնց պատկերն է՝

Ո.	*ածու*	*ածվըներ, ածըվներ*
Ս. Տ.	*ածվի*	*ածվըներաց*
Բ.	*ածվից*	»
Գ.	*ածվով*	*ածվըներով*

Այսպես նաև՝

կատու>կատու, կատվի
թթու>թթիւվ, թթվի
խորովու>խուրուղու, խուրուղույի
կոյ<կու, կույի, կույից

լու>լիւ, լվի
ձու>ծիւ, ծվի
կծու>կծու, կծվի
լեզու>լեզվիւ, լեզվի

Այն բառերը, որոնք գրաբարում ունեն և հանգը, որ աշխարհաբարում կորած է, հոլովման մեջ կարող են երբեմն առանալ այդ և հանգը, ինչ. մատն>մատ, սեռ. մատի, բց. մատնից, գրծ. մատով։

Երկրորդ հոլովում

Երկրորդ հոլովման վերջավորություններն են սեռական և տրական -ու, բացառական՝ -ուց, գործիական -ով. հոգնակին նույն է առաջին հոլովման հետ. օրինակ՝

Ո.	*խալիվոր*	*խալիվորներ*
Ս. Տ.	*խալիվրու*	*խալիվորներաց*
Բ.	*խալիվրուց*	*խալիվորներաց*
Գ.	*խալիվրով*	*խալիվորներով*

Այսպես են հոլովվում՝

ապուէս>աղվէս, աղվսու
այծ>էծ, էծու
անէծք>անէծք, անէծքու, անէծքի, անիծու
անձրև>անձրևի, անձրվու
աստուած>աստված, աստծու, աստծուց (ասպած ձևը չի հոլովվում)
արագիլ>առակյէլ, առակյէլու
արև>արեվ, արիվու
արծիվ>առծիվ, առծվու (նաև՝ առծվի)
արջ>առչ, առչու
արջառ>ռճառ, ռճռու (նաև՝ ռճառի)
բաղ>բատ, բատու (նաև՝ բատի)
գայլ>կյէլ, կյելու կամ կյիլու
գառն>կյառ, կյառու, կյառան
գետ>կյետ, ք. կյետի, գ. կյիտու
գուխ>կյըլէօխ, կյըլխու
գող>կյող, կյուղու

գամէշ>գյէօմէշ, գյէօմշու, կյէօմշու
դև>դէվ, դիվու (նաև՝ դէվի)
եպիսկոպոս>յեպիսկոպոս, յեպիսկապոսու
էգ>էքյ, էքյու, իքյու «մատակ դամեշ»
էշ>էշ, էշու, իշու
թաղաւոր>թակավոր, թակավ(ու)րու
թուխա>թուխս, թխսու
ժամ>ժամ, ժամու
խեղճ>խեխճ, խեխճու (նաև՝ խեճի)
խոզ>խոզ, խուզու
խուլ>խուլ, խլու (նաև՝ խլի)
խաւար>սխտոր, սխտուրու (նաև՝ սխտորի)
ծարաւ>ծարավ, ծարվու
ծով>ծով, ծովու
ծուռ>ծուռ, ծռու
կապոյտ>կապտու, կապտու
կաքաւ>կաքյավ, կաքյվու
կեղծաւոր>կեղծավոր, կեղծավուրու, կեղծավրու
կէս>կէս, կիսու
կողով>կօղով, կօղվու
կոյր>կոր, կուրու
կուզ>կուզ, կզու «սապատոզ»
կռիւ>կռիվ, կըռվու
կռունկ>կռունգյ, կըռնգյու (նաև՝ կռնգյի)
համ>խամ, խամու
հայ>խայ, խայու
հարսն>խարսն, խարսու (նաև՝ խարսի)
հաւ>խավ, խավու
հաւ «թռչուն»>խաֆքյ, խաֆքյու
հիւր>խուր, խրու
հող>խոզ, խուզու (նաև՝ խոզի)
հով>խօվ, խօվու
հովիւ>խօվիվ, խօվվու (նաև՝ խօվվի)
հոտ>խոտ, խոտու, խուտու
ձագ>ծաքյ, ծաքյու
ձի>ծի, ծիու
ճգնաւոր>ճըյննավոր, ճըյննավուրու
մարդ>մարթ, մարթու

մեղաւոր>մեղավոր, մեղավուրու (նաև -վորի)
մշակ>մշակ, մշակու
մուխ>մուխ, մխու
նապաստակ>լապըստըրակ, լապըստըրկու, լապզտրկու
շաղգամ>շախկյամ, շախկյմու
շերեփ>շիրեփ, շիրփու (նաև՝ շիրփի)
շիլ>շիլ, շլու
ոսկերիչ>վոսկրիչ, վոսկրչու
ուլ>ուլ, ուլու
ուխտաւոր>ըխթավոր, ըխթավուրու
ուղտ>ուզտ, ըզտու (որ և՝ ըզտան)
պատաւ>պատավ, պատվու
սեաւ>սեվ, սիվու
սերկևիլ>սիրկիվիլ, սիրկիվիլու (նաև՝ սիրկիվիլի)
սէր>սէր, սիրո (նաև՝ սերի)
սով>սօվ, սօվու (նաև՝ սովի)
սուրբ>սուրփ, սրփու (նաև՝ սրփի)
տէր>տ ր, տիրու (նաև՝ տիրոչ)
քաժ>քյաժ, քյաժու (նաև՝ քյաժի)
քացախ>քյացախ, քյացխու (նաև՝ քյացխի)
օձ>օց, օցու

Այս երկրորդ հոլովման համեմատ են հոլովվում հատկապես ի վերջացող բառերը, որոնց օրինակն է՝

Ո.	իկի	կյինի	կյինիհյաէը
Մ. Տ.	իկյու	կյինու	կյինիհյաերաց
Բ.	իկյուց	կյինուց	կյինիհյաերաց
Գ.	իկյօվ	կյինօվ	կյինիհյաերօվ

որբևայրի>վոռպէովէրի, վոռպէովէրու
նօթի>անօթի, անօթու
բարի>պարի, պարու
բարտի>բարդի, բարդու
գարի>կյարի, կյարու
գերանդի>կյէրընդի, կյէրընդու
գերի>կյերի, կյերու
գինի>կյինի, կյինու
թեղի>թեղի, թեղու
լեղի>լեղի, լեղու

խելացի>խելացի, խելացու
խնամի>խնամի, խնամու
կաշի>կաշի, կաշու
հոգի>հոգի, հուգիս
մաքի>մաքի, մաքյու
ոսկի>ոսկի, ոսկու

որդի>որդի, որդու, որդու
(օր. մալին տէր, որդուն խէր. առած)
ջորի>ճորի, ճիւրու, ճորու, ճուրու
սամի>սամի, սամու
սկիհ>սկի, սկու
սոնի>սոնի, սոնու
ուռի>ուռի, ուռու
քամի>քյամի, քյամու
քենի>քյենի, քյենու (նաև՝ քյենոչ)
քեռի>քյեռի, քյեռու (քյեռանց)

Այս հոլովման համեմատ կարող են հոլովվել նաև -ու վերջացող բառերը, բայց սահմանալով վ բաղաձայնը. օր.

Ո.	Հ. կատու	կատվներ
Ս.	Տ. կատվու	
Բ.	կատվուց	
Գ.	կատվով	

Երրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորութիւններն են՝ սեռական-տրականի -ան, բացառականի՝ -անից կամ -նից, գործիականի՝ -նով։ Ուրիշ բարբառներում այս հոլովման հետևող բառերի թիվը մեծ չէ. բայց վանի բարբառը ժառանգելով գրաբարի և հոլովման հետևող բազմաթիվ բառեր, հարստացրել է նրանցով իր հոլովումը։ Իբր օրինակ առնում ենք՝

Ո.	ակ	ակներ	անձեղ	անձրղներ
Ս. Տ.	ական	ակներաց	անձեղան	անձրղներաց
Բ.	ակնից	»	անձրանից	»
Գ.	ակնով	ակներով	անձրով	անձրղներով

Սրանց հետևող բառերն են՝

աղաւնի>յէղունիկ, յէղունկան
ագեղն>անեղ, անղան
աղջիկ>ախչիկ, ախչկան
այր>իրիկ, իրկան, իրիմուց, իրկով, իրիմով
անկողին>գյէղովվէնք, գյողվան կամ գյէղովվէնքյի, գյողվընից, գյողվընով
անուն>անուն, անվան, անունից, անունով, անվով
աշուն>աշուն, աշնան
ասեղն>ասեղ, ասղան կամ ասղի
աստղ>աստղ, աստղան կամ աստղի
ատամն>ատամ, ատման (ատմի), ատմուց, ատմով
ափ (ձեռքի)>ափ, ափան
ափն (ջրի)>ափ, ափան
բեռն>պեռ, պեռան
բեհեզ>պիպեռ, պիպռան (պիպռի)
գագաթն>կյոկյոթ, կյոկյթի, կյոկյթոն, կյոնթոն
գառն>կյոռ, կյոռան (կյոռու)
գարուն>կյորիւն, կյորնան, կյորնոն
գորտ>կյոռտ, կյոռտան
դուռն>տուռ, տռան
եղն>յեղ, յեղոն, յեղնից, յեղնով
եղունգն>յեղունգ, յեղընգյան (յեղընգյի)
երդումն>էօրտիւմ, էօրտման
թիթեռնիկ>թրթըռնէկ, թրթըռնըկան
թոռն>թռռ, թռռան
թումբ>թիւմբ, թմբան, թմբից կամ թմբնից
թուփ>թիւփ, թփան
լուծ>լիւծ, լծան
լուսնակ>լիւսնակ, լիւսնըկան
խունկ>խունգյ, խնգյան (խընգյի)
խուրձն>խուռց, խռցան (խըռցի)
խուփն>խուփ, խփան (խփի)
ծիծեռնակ>ծիծեռնակ, ծիծըռնըկան
ծիրա>ծեռռ, ծռռան (ծռռի)
ծունկ>ծունգյ, ծնգյան
կին>կնիկ, կնգյան

կծիկ>կծիկ, կծկան (կծկի)
կնգուղ>կնգյուղ, կընգյղխան
կորեակ>կորեկ, կորեկան (կորեկի)
կուպր>կուբր, կրբան (կրբի)
կուռն «կռնակ»>կուռ, կռան
կոէթ «հոդի չոր գուղձ», կոէթան (կոէթի)
կոկիկ «ագռավ», կոկան (կոկի)
կոճիկ «ճաճառ, хрящ", կրճկան
կրուկ(ն)>կրունգ, կրընգյան
հայկլի>խայլիկ, խայլկան
հիմն>խիմ, խման
հիւան>խուս, խսան
ձմեռն>ձմեռ, ձմռան (ձմրուկան)
ձուկն>ձիւկ, ձկան
ճնճղուկ>ճընճղուկ, ճնճղըկան
մասուր>մասուր, մասրան (մասուրի)
մատանի>մատնիկ, մատընկան (մատընկի)
մութն>մութ, մթան
մուկն>մուկ, մկան
մսուր>մսուր, մսրան (մսրի)
մրջիւն>մռճեմ, մրճման
նեռ և ապեղն>նեռվանեզ, նեռվանեզան (նեռվանեզի)
տաղերակին>տէկյէրկին, տէկյէրկընգյան
նուռն>նուռ, նռան
ոզնի>ոզնիկ, ոզընկան, ոզնըկան
որթ հորթ>ոռթիկ, ոռթկան
ուլունք>ուլնիկ, ուլնըկան
ուղեղ (գլխի)>ուղեղ, ուղղան
» (ոսկրի)>ուղող, ըղըղան
ուղտ>ուղտ, ըղտան (ըղտու)
պճեղն>պճեղ, պըճղան
պոռտ>պոռտ, պռտան
սարեակ>սարէկ, սարէկան
սեամ>շեմք, շիման (շեմքի, շիմքյան, շիմքից շեմքից, շեմքյով)
սիսեռն>սիսեռ, սիսռան
վառեակ>վառէկ, վառէկան, վառկի
տիկ>տիկ, տկան (տկի)

ցին>կոր-ցընընէկ, կոր-ցընընկան
փուքս>փիւղ, փղան (նաև՝ փղի, փուղի)
փրփրեմ>փառփառ, փառփրռան։

Ուրիշ շատ բարբառներին սովորական -ութիւն, -ութեան, հոլովումը ջնջված է վանի բարբառում։ Այս կարգի բառերը հետևում են առաջին հոլովման. օր. խաստութեն «հաստություն».

Ո. Հ.	*խաստութեն*	*խաստութեններ*
Ս. Տ.	*խաստութենի*	*» աց*
Բ.	*խաստութենից, նէ*	*» աց*
Գ.	*խաստութենով*	*խաստութեններով*

Այսպես նաև՝

խարանութեն, խարանութենի
ճճչութեն, ճիւճիւթենի
կարմրութեն, կարմրութենէ, -նից
խռնութեն, -ութենի

սաքութեն -քյութենի, -քյութենից.
նաև՝ թրք. բառով, ճիւր բեօլիւքեն կճապղի (առած).
Բացառականը՝ թե՛ -ութենից, և թե՛ -ութենէ ձևով։
Գյուղերում գտնում ենք նաև -թենի, -թենից, -թեցով ձևով հոլովում։

Չորրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են սեռական-տրականի -վան կամ -վա, բացառական՝ -վընից, գործիական՝ -վընով, հոգնակին լինում է -ներ կամ -վներ և հոլովվում է կանոնավոր ձևով։

Ո.	*ամառ*	*հգ. ամրոններ, ամրովըներ*
Ս. Տ.	*ամրովան, ամրովա, ամռան*	
Բ.	*ամրովընից, ամրովընէ*	
Գ.	*ամրովընով*	

Այս հոլովման հետևում են ժամանակ ցույց տվող բառերը, որոնց ցանկը հետևյալն է.

ամիս>ամիս, ամսովան (ամսու, ամսուց)
գիշեր>կիշեր, կիշերվա, կիշերվան, կիշրվան

եռանդ «նախորդ օրը»>յեռանդ, յեռանդվան, յեռընդվա, յե-
ռընդվան «մի քանի օր առաջ». օր. յեռանդվան մարթն էկավ
երեկոյ>իրիկուն, իրիկվան, իրիկվա, իրիկվա
երէկ>էրէկ, էրէկվա, էրէկվան, էրէյվա(ն)
զաուիկ>զաուիկ, զաուկըվան (զաուկի)
կաղանդ>կաղանդ, կազընդվա, (կազընդի)
կիւրակէ>կիրակի, կիրայվան, կիրայվանից
հերու>խէրու, խէրվան, խէրվա
(հերդնամ>խէրդնում, խէրդնումվան «հերու, երկու տա-
րի առաջ», խէրըրդնըմվան, բց. խէրըրդնումվանից
ձմեռն>ձմեռ, ձմեռվան (ձմռան), ձմըռվա(ն)
շաբաթ>շապաթ, շապըթվա, շապըթվա
ուրբաթ>ուրպաթ, ուրպըթվա(ն) (ուրպըթի)
պահք>պախս, պախսվա(ն), պախսավուր
վաղ>վոզ, վոզվան, վոզվա
տարի>տարի, տարվան, տարվա
ցերեկ>ցէրէկ, ցէրէյվա(ն)
օր>օր, օրվա, օրվան, ամուր

Այս հոլովման են պատկանում նաև տոնական օրերի անուններ. ինչ. զաուկըվէկ, ճոչ պախսվէկ, խամբարըցըվէկ «համբարձման տոնից» և այլն։

Թուրքերենից վերցրած բառեր էլ կարող են հոլովվել այս ձևով. օր.

դաշ «նախ, առաջ», անո. դաշվան (ինչ. դաշվան քյաղաքյ «առաջվա քաղաքը»)։

Այս հոլովման են պատկանում նաև երկու բառ՝

մահ, մախ, մախվան, մախվընէ (ոչ մախվընից), մախվընով։
Թոնիր, Թօնէր, Թօրվա(ն) (որ և Թօնրի), Թօրվընից։

Առաջինը դրաբարից ժառանգություն է և ամեն բարբառի մեջ էլ գոյություն ունի։ Երկրորդը հատուկ է միայն վանի բարբառին և այնքան անկանոն է, որ վանի բարբառի օրենքներով էլ հնարավոր չէ բացատրել։

Վանի բարբառն ունի նաև առաւօտուն ձևից ծագած առաւտուն, առավտուն, առատման ձևերը. առաջին երկուսը հայտնապես ազված են առա(ւօ)տուն ձևից. իսկ վերջինը կարծում եմ, որ առա(ւօ)տվան ձևից է ազված և վ-ն ոնգականի հետ հարմարվելով դարձել է մ, ճիշտ ինչպես ունենք Պլ. մահման<մահուան։

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման մեջ սեռական-տրական հոլովաձևը կազմվում է ուղղականի ընդհատյալ ձայնավորը դարձնելով օ, իսկ բացառական և գործիական հոլովները կազմվում են սեռ.-տր. հոլովաձևի վրա ավելացնելով -օրից, -օրմով մասնիկները։ Հոգնակին սովորական ձևով է։

Ո.	*ախպէր*	*խէր*	*մէր*
Ս. Տ.	*ախպօր*	*խօր*	*մօր*
Բ.	*ախպօրից*	*խօրից*	*մօրից*
Գ.	*ախպօրմով*	*խօրով*	*մօրով*

Այսպես են հոլովվում նաև՝

սանահայր>սանախէր, սանախօր
սանամայր>սանամէր, սանամօր
քաւորամայր>քյավորմէր, քյավորմօր
տիրամայր>տիրամէր, տիրամօր
աստվածամայր>աստվածամէր, -ամօր

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման վերջավորութիւններն են. սեռական-տրական՝ -ոչ, բացառական՝ -ոչից, գործիական՝ -ոչմով, հոգնակին սովորական ձևով է։

Ո.	*քյոր*	*քյորեր*
Ս. Տ.	*քյիւրոչ*	*քյորերաց*
Բ.	*քյիւրոչից*	»
Գ.	*քյիւրոչմով*	*քյորերով*

Այսպես են հոլովվում պղպականութիւն ցույց տվող հետևյալ բառերը.

աներ>աներ, անիրոչ, անիրոչից, անիրով
ընկեր>ինգյեր, ինգյըրոչ
սկեսուր>կիսուր, կիսրոչ
կնքաւոր>քյավոր, քյավուրոչ
տայդր>տէքյր, տէքյրոչ (նաև՝ տէկյէր),
տէքյրոչից (տէկյրից), տէքյրոչով
(տէկյէր մօտէն)

տանտիկին>տանդըկին, տանդըկնոչ
տէր>տէր, տիրոչ (նաև՝ տիրու), տիրոչից (նաև՝ տիրուց), տիրոչմօվ
տալ>տալվ, տալոչ, տալոչից, տալոչմօվ
քենի>քյենի, քյենոչ (նաև՝ քյենու)

Կա նաև՝ բարեկամ>պարէկամ, սեռ. պարէկմոչ, պարէյմոչ։

Ջեյրունի գավառական.— *Դոյականները, ինչպես նաև դոյականաբար առնված ածականները, ունեն հոլովում՝ հետևյալ ձևով.*

Առաջին հոլովում

Առաջին հոլովման վերջավորութիւնները են ուրիշ բառերում սեռ.-տր. -ի, բց. է, գրծ. -ով։ Ջեյրունի գավառականում ձայնավորների ներդաշնակութեան օրէնքների համաձայն, առաջին հոլովումը առանում է հինգ ձև, որոնց համար օրինակ ենք առնում հաց>հօց, խոփ>խիւփ, խոսք>խէօսք, քնկոյզ>ինգէզ, աճապուկ>աճապիվ բառերը։

	Ա. ձև	Բ ձև	Գ ձև
Ո. Հ.	հօց	խիւփ	խէօսք
Ս. Տ.	հացը՛	խիւփի, խիւփի	խէօսքա
Բ.	հացէ	խիւփէ	խէօսքէ
Գ.	հացէօվ	խիւփէօվ	խէօսքէօվ

	Դ ձև	Ե ձև
Ո. Հ.	ինգէզ	անձիվ
Ս. Տ.	ունգուզը՝	անձիվէ
Բ.	ունգուզէ	անձիվէ
Գ.	ունգուզէօվ	անձիվէօվ

Հոգնակիում հինգն էլ միատեսակ և կանոնավոր ձևով հոլովում են այսպես.

Ո. Հ.	հացիյ	խիւփիյ	խէօսքիյ
Ս. Տ.	հացիյու	խիւփիյու	խէօսքիյու
Բ.	հացիյէ	խիւփիյէ	խէօսքիյէ
Գ.	հացիյէօվ	խիւփիյէօվ	խէօսքիյէօվ

Ո. Հ.	ինգէզնիյ	անձիվնիյ
Ս. Տ.	ինգէզնիյու	անձիվնիյու
Բ.	ինգէզնիյէ	անձիվնիյէ
Գ.	ինգէզնիյէօվ	անձիվնիյէօվ

Երբ բառի մեջ կա սղյալ ձայնավոր (ը), կարող է դրվել թե առաջ, և թե հետո. ինչ. ծաղիկ>ծաղիգ բառից

ձաղըգնիյ	ձաղգընիյ
ձաղըգնիյու	ձաղգընիյու
(ձաղըգնիյէ)	ձաղգընիյէ
ձաղըգնիյէօվ	ձաղգընիյէօվ

Բայց նաև՝

ձաղըգնա	ձաղգընա
ձաղըգնու	ձաղգընու
ձաղըգնէ	ձաղգընէ
ձաղըգնէօվ	ձաղգընէօվ

Առաջին ձևը ունի բազմաթիվ օրինակներ, որոնք չեմ կարող ամբողջությամբ մեջ բերել այստեղ. կտամ միայն մի քանի լավ օրինակներ. ինչ.

աղ>օղ, աղը՛
աղը>օխը՛, ախը՛ը՛
ագահ>ագ՛օհ, ագ՛ահը՛
ամպ>օմբ, ամբը՛
անառապատ>անաբօդ, անաբադը՛
աշխարհ>աշխօյ, աշխայը՛
առաղ>օսղ, ասղը՛
արտ>օյդ, այդը՛
բարձ>բ՛օյձ՛, բ՛այձ՛ը՛
գերեզման>գ՛էյխմօն, գ՛էյխմանը՛
երկաթ>իյգօթ, իյգաթը՛
կեռաս>գէռօս, գէռասը՛
հարսն>հօյս, հայսը՛
շար>շօյ, շայը՛, «շղարշ»
ուրար>ուէյօյօ, ուէյայը՛

Ժամ «եկեղեցի» բառը, որ ուղղականում լինում է իժամ, սեռականում պահելով նախկին ձևը՝ լինում է ժամը՛:

Կան մի խումբ մեկ և կես վանկանի բառեր, որոնք Զեյթունի գավառականում ուղղականի մեջ առանալով ը ձայնավորը, սեռականում միայն շեշտն են փոխում. ինչ.

առնար>ա՛ռնդը, սեռ. առնդը՛
մարխ>մա՛խը, մախը՛
մանր>մա՛նդը, մանդը՛
տաան>դա՛սը, դասը՛
քաղցր>քախցյը՛, քախցյը՛

Կան մի խումբ երկավանկ բառեր, որոնք սեռական հոլովում երկավանկի վերածվելով կորցնում են մի ջավանկի ա>ո ձայնավորը կամ վերածում ը-ի: Օր.

ապրանք>արյո՛նք, արյո՛նքը
բամբակ>բ՛ամբո՛ք, բ՛ամբդը
գաւաղան>գ՛ազլո՛ն, գ՛ազլո՛նը՛
գաւակ>գ՛ավո՛գ, գ՛ավդը
իրիկուն>իյգո՛մ, ը՛յգը՛մը՛
մախաթ>մախո՛թ, մախթը՛
կամար>գամո՛յ, գամյը՛
կանկար>գանգո՛յ, գանգյը՛
ճակատ>ջագո՛գ, ջագդը՛
մատաղ>մադո՛գ, մադդը
պակաս>բագո՛ս, բագսը՛
ոեհան>բոռնո՛ն, սեռ. բոռնանը կամ բոռննը:

Այն բառերը, որոնք իրենց առաջին վանկում ունեն ո ձայնավորը, որ առաջացել է հաջորդ վանկի ո (կամ ռ) ձայնավորի նմանությամբ, սեռականում կորցնում են այդ ո ձայնավորը և վերստանում ը ձայնը: Օր.

սրահ>սոյո՛ֆ, սրյափը
մկրատ>մոգյո՛գ, մրգյադը
տարգալ>դ՛օգ՛օ՛լ, դ՛գ՛ալը
դրախտ>դ՛օյո՛խդ, դ՛րյախդը՛
գնդան>գոնդո՛ն, գընդանը
կտաւ>գոդո՛վ, գրդավը

քսան>քսսո՛ն, քրսանը՛
ծրար>ձոյո՛յ, ձիյայը (ը դարձած ի)

Սրանց շարքում առանձնապես հետաքրքիր է՝

հնձան>օնձո՛ն, ընձանը՛:

Այն բառերը, որոնք բացառություն կազմելով չեն փոխում իրենց վերջավանկի ա ձայնավորը և պահում են ա ձևով, սեռականի մեջ էլ ինում են այդպես, օր.

բուրվառ>բ՛ը՛ռվառ, բ՛ը՛ռվառը
դար «դաշտ»>դ՛ա՛յ, դ՛ը՛յը՛
ծիծեռնակ>ձիձէռնա՛գ, ձիձէռնագը

Այս բոլոր օրինակները վերաբերում են այն դեպքին, երբ վերջավանկի ա ձայնավորը դարձել է ո: Բայց Զեյթունի գավառականում կան ուրիշ բառեր էլ, որոնք վերջավանկում չունեն ա, այլ՝ ուրիշ որևէ ձայնավոր, և հետևում են նույնպես Ա հոլովման առաջին ձևին: Տալիս եմ այդ կարգի բառերի ցուցակը:

ապուր>արու՛յ, արյը
ասեղն>ասե՛ղ, ասդը
գաւիթ>գ՛ավի՛թ, գ՛ավթը
եղիճ>ադը՛ջ, ադըջը
ծոց>ձիւ՛ց, ձուցը, ձիւցի
միտք>մը՛դ, մը՛դքը
մածուն>մաձու՛ն, մաձնը
շամփուր>շամփու՛յ, շամփրյը, շամփյը
շողիք>շուղը՛ք, շուղը՛քը
պանիր>բանը՛յ, բանրը, բանրյա

Առաջին հոլովման երկրորդ ձևն է ի, որ նույնպես ունի բազմաթիվ օրինակներ: Մի ջոց տալու համար նրանց, ովքեր կուզեին ուսումնասիրել բոլոր հինգ ձևերի կազմության ձայնական օրենքները, դնում եմ այստեղ ի ձևով հոլովման բոլոր օրինակները:

աբեթ>աբ՛իթ, աբ՛իթի
ադոխ>ածխ, ածխի
ակիշ>ագիշ, ագիշի

աղուէս>աղվիս, աղվիսի
ապօթք>ապէօթք, ապէօթքի
ապօթանոց>ապուէթնուց «համբույր», ապիթնիցի
աճուկ>էջուգ, էջուգի
անանուխ>անուխ, անուխի
անուն>անուն, անունի
աշակերտ>էշգիյդ, էշգիյդի
ապարանջան>արուոջօն, արբոջանի
արև>այիվ, այիվի
արիւն>էյին, էյինի
արճիճ>էոջիջ, էոջիջի
արմուկն>արմունգ, արմընգի
արտասուք>արցունք, արցունքի
արօր>հոյէօյ, հոյիյի
բաժին>բ'էժին, բ'էժինի
բանալիք>բ'ալընք, բ'ալընքի
բարեկենդան>բ'այդինդօնք, բ'այդինդանքի
բոզ>բ'իւզ, բ'իւզի
բոզկ>բ'իւզգ, բ'իւզգի
բոր>բ'իւյ, բ'իյլ, բ'իյլու
բրիչ>փիյիչ, փիրչի կամ փը'յչը'
գանձանակ>գ'անձանօգ, գ'անձանագի
գղթոր>գ'էօխդիւյ, գ'էօդիյի
գոգ>գ'իւգ', գ'իգ'ի, գ'ուգ'նի, գ'ուգ'ա
գանակ>գ'անօգ, գ'անգի
գև>գ'էվ, գ'իվի
եզր>իզիյք, իզիյքի
եպիսկոպոս>էբիսգիւբիւս, էբիսգիբիսի
երեք>իյիք, իյիքի
երկու>իյգուք, իյգուքի
թագաւոր>թոքվիւյ «փեսա», թոքվիյի
թել>թիլ, թիլի
թեմ>թիմ, թիմի
թև>թիվ, թիվի
թեփ>թիփ, թիփի
թրիք>թը'յաք, թը'յքի
ժանգ>ժանգ, ժէնգի
խաչ>խաչ, խէչի
խաղող>խաղ, խէղի (որ և՝ խաղիւղ, խաղիղէ)
խեճեղ>խէջիբ «կճեց», խէջիբի
խստոր>սէօխդիւյ, սէխդիյի
խնդիրք>խը'նդ'իրք, խը'նդ'իրքի
խլինք>խը'լը'նք, խը'լը'նքի
ծաղիկ>ձաղըգ «մոխիր», ձաղգի
խոտ>խիւդ, խիդի
ծայր>ձոյ, ձէյի
ծնծղայ>ձինձաղոք, ձինձաղէքի
ծոց>ձիւց, ձիւցի կամ ձուցը
ծունկ>ձունգ, ձը'նգի
կաթողիկոս>գ'ոթէօղգիւս, գ'ոթէօղգիւսի
կայծ>գ'ոձ, գ'ոձի կամ գէձի
կանաչ>գէնոչ, գէնէչի, գէնչի
կապերտ>գայբիդ, գայբիդի
կասկարայ>գէսգէբոք, գէսգէբէքի
կարժ>գոժ, գէժի
կարճ>գ'ոյչ, գէյչի
կեղև>գիղիվ, գիղիվի
կեղծաւոր>գէղձավիւյ, գէղձավիյի
կիր>գիյ, գիյի
կլայեկ>գիլիգ, գիլիգի
կնունք>գօնունք, գօնունքի
կոթ>գիւթ, գիւթի
կոճ>գիւճ, գիւճի
կոճիճ>գիճիճ, գիճիճի
կոյղ>գիզ «ողկույզ», գիզի
կոյր>գիյ, գիյի
կոպ>գիբիյք, գիբիյքի
կոսր>գէօդիւյ, գէօդիյի
կորեկ>գիյիգ, գիյիգի
կորկոտ>գիւյգիւդ, գիւյգիւդի

կոր «կարճ»>գիւ, գիւի
կռճիկ>գը՝ոջիգ, գը՝ոջիգի
կրունկ>գոյունգ, գը՝յը՝նգի
կօշիկ>գուշիք, գուշքի
հայս>հաս, հէսի
հանգոյց>հոնգիւց, հոնգիւցի, հոնգիցի
հարիւր>հէյիւ, հէյիւի
հերիւն>հիյին, հիյինի
հին>հին, հինի
հինգ>հինգ, հինգի
ձայն>ձ՝ան, ձ՝էնի
ճախարակ>ճըխառաք, ճըխառէքի
ճգնաւոր>ջիգ՝նավիւ, ճիգ՝նավիւի
մարգարէ>մայգ՝այէ, մայգ՝այէի
մարմին>մայմինք, մայմինքի
մէտ «կշեռքի սլաքը»>նիգ, նիգի
միւռոն>մէռօն, մէռօուն, մէռօնի, մէռօինի
մոմ>միմ, միւմ, միմի
նամակ>նամագ, նամագի
նարգիզ>նէյգիզ, նէյգիզի
նաւակատիք>նավագադիք, նավագադիքի
նուիկ>նը՝վը՝դ, ն՝բվը՝գի
շապիկ>շարբք, շարբգի
շարժ>ժաժ, ժէժի
շերեփ>շիյիփ, շիյիփի
շիշ>շիշ, շիշի
շիւ>շիվ, շիվի
շնորհք>շէօնիւյք, շէօնիւյքի
շուք>շուք, շուքա, շը՝քի
ոսկր>իւսգիւյ, իսգիյի
ոսպ>իւսբ, իսբի
ոսո(ղ)>իւսդ, իսդի
չամիչ>չամըչ, չամչի, չամըչա
չիր>չիյ, չիյի
չոր>չիւյ, չիյի

չորս>չիւյս, չիւյսի
պատիժ>բադիջ, բադիջի
պատիւ>բադիվ, բադիվի
պատկեր>բադգիյ, բադգիյի
պատուհան>բադիւհիւն, բադիհնի
պարս(ատիկ)>բայսիգ, բայսիգի
պիծակ>բիձիկ «մոծակ», բիձիգի
պղտոր>բէօղդիւյ, բէղդիյի
պտուկ (ամանը)>բօղուգ, բօղուգի
պտուկ (ծծի)>բօղուգ, բօղուգի
սալ (դարբնի)>սալ, սէլի
սալոր>սալիւյ, սալիյի
սաղմոս>սազմիւս, սազմիսի, սազմիցի
սեամ>չիմինք, չիմինքի
սեաւ>սիվ, սիվի
սերկևիլ>սինգիվվիլ, սինգիվվիլի
սէգ>սեգ, սիգի
սղոց>սէօղիւց, սէղիցի
սոխ>սիւխ, սիւխի, սէխա
սուսկ>սուսգ, սը՝նգի
վախկոտ>վախգիւդ, վախգիդի
վառեակ>վառիգ, վառիգի
վարդապետ>վայդ՝արիդ, վայդ՝արիդի
վարժապետ>վա(յ)ժարիդ, վա(յ)ժարիդի
տաշտ>դայդ՝, դէյդ՝ի
տերև>դիյիվ, դիյիվի
տկճոր>դէօգջիւյ, դէգջիյի
տնտես>դ՝ընտիս, դը՝նդիսի
ցորեան>ցիյին, ցիյինի
փայտ>փադ, փէդի
փիլոն>փիւլիւն, փիլինի
փոխ>փիւխ, փիխի
փոկ>փիւգ, փիգի
փոս>փիւս, փիսի
փոր>փիւյ, փիյի
փուք>փուք, փը՝քի
քաղաք>քաղաք, քախքի
քարճիկ>քայջիգ, քայջիգի
քիմք>քիմք, քիմքի

Ինչպես առաջին ձևի մեջ, նույնպես և այստեղ կան դիտելու արժանի մի քանի կետեր, որոնք մի առ մի մեջ եմ բերում այստեղ։

Այն բառերը, որոնք վերջավանկում ունեն ա-ից դարձած ո ձայնավորը, սեռականի մեջ վերստանում են իրենց նախկին ա ձայնը։

Այսպես են՝

ծակ>ձօգ, ձագի կամ ձագը՛
ծոծրակ>ձիձիյօգ, ձիձիյագի, ձիձիյգէ
կայծակ>գէձօգ, գէձագի
կերպարանք>գէյրայօնք, գէյրայանքի
կոչնակ>գուշնօգ, գուշնագի
հակ>հօգ, հագի
հակառակ>հագառօգ, հագառագի
ճանկ>ջօնգ, ջանգի
մշակ>մուշօգ, մըշագի
նահատակ>նահադօգ, նահադագի
յաւանակ>ավանօգ, ավանագի
յիշատակ>հիշադօգ, հիշադագի
ուրագ>ուլօք, ուլաքի
ճերմակ>ջիլմօգ, ջիլմագի
պահք>բօք, բաքի
պատանք>բադօնք, բադանքի
պատարագ>բադայօք, բադայաքի
պատրիարք>բադրիյօք, բադրիյայքի
պարկ>բօյգ, բայգի, բայգը՛
պարտք>բօյդք, բայթքի
սարկաւագ>սայդավօյք, սայդավայքի
վախ>վօխ, վախի
վանք>վօնք, վանքի
փափագ>փափօնք, փափանքի
փորձանք>փուչցօնք, փուչցանքի
օրինակ>ուչունօգ, ուչունագի

Եթե նախավանկում գտնվող ո ձայնավորը առաջացել է Զեյթունի գավառականում վերջավանկի ո ձայնավորի նմանությամբ, սեռականում ջնջվում է. ինչ.

խրատ>խօյօգ, խրչյագը
ծմակ>ձօմօգ, ձըմագի
կճղակ>գօչղօգ, գըչղագի
կանակ>գօռնօգ, գըռնագի
կրակ>գօյօք, գըյաքի
պտակ>բօսօգ, բըսագի
տղայ>գօղօ, գը՛ղի

Կան երկվանկ բառեր, որոնք սեռականում ստանալով իր վերջավորությունը՝ վերածվում են եռավանկի և այդ դեպքում կորցնում են իրենց ձայնավորը։ Այսպես նաև եռավանկ բառերը, Օր.

կոճակ>գուչօգ, գուչգի
մանուշակ>մանուշօգ, մանը՛շգի
նահատակ>նահադօգ, նահադագի կամ նահադգի
նապաստակ>լափուսդօգ, լափըսդըգի, լափըսդգի
շալակ>շալօգ, շալգի
ուրագ>ուլօք, ուլաքի, ուլքի
պաշար>բէշօյ, բէշիյի
պատինջան>բադինջօն, բադինջնի
ջուլհակ>ջ՛ըռալօգ, ջ՛ըռալգի
անդուկ>սօնդօգ, սը՛նդգի
վաստակ>վասդօգ, վասդգի
տապակ>դաբօգ, դաբգի
տատրակ>գադայօգ, գադրյգի
տախտակ>դախդօգ, դախդգի
քաղաք>քաղօք, քախքի

Երբ բառը վերջանում է ո, ռ, ը ձայնավորներով, սեռականի ի վերջավորության մոտ սրանք ջնջվում են։ Այսպես՝

ակռայ>ագռօ, ագռի
բակլայ>բ՛ագլօ, բ՛ագլի
լուսնկայ>լուսունգօ, լուսունգի
կրեայ>գօյրո փափանքս, գօյրի
ճառայ>ջառօ ծառայս, ջառի
չուխայ>չուխո, չուխի

սատանայ>սատանա, սատանի
սարբինայ>սայբ՛ունո, սայբ՛ընի
սիմինդր>սիմինդրը, սիմինդրի
քահանայ>քահաննո, քահաննի
տղայ>դօղո, դը՛ղի

Հաջորդների մեջ պիտի դանենք նույնպես՝

մեկր>մեղրը, մէղրա
ութ>ութը, ութա

Առաջին հոլովման երրորդ ձևի վերջավորութիւնն է ա, որից ունենք հետևյալ օրինակները.

ագռաւ>ագ՛օվ, ագ՛որվա
աթոռ>աթէօ՛ո, աթըռա, աթըռէ
ապիք>աղբը, աղբըա
աղջիկ>աշգին, աշգընա
աղքատ>ախբօղ, ախքըդա
աման>ամօն, ամընա
ամբար>ամբօյ, ամբըյա
անկողին>ուղունդան, ուղունդնա
արծաթ>այձօթ, այձըթա
բանջար>բ՛էննջօյ, բ՛էննջըյա
գդակ>գ՛օղօգ, գ՛ըդդա
գոգ>գ՛իւղ՛, գ՛ուղ՛ա, գ՛ուղ՛ի
գոգ>գ՛իւղ՛, գ՛ուղ՛ա
գոմէշ>գ՛ումէշ, գ՛ումշա
գործ>գ՛իւյձ, գ՛ույձա
գուղձն>գ՛օխձ՛, գ՛ուխձ՛ա
գունդ>գ՛օնդ, գ՛ունդ՛ա
դեղ>դ՛էղ, դ՛եղա
դեղձ>դ՛էղձ՛, դ՛էղձ՛ա
երդուիմ>ույդ՛օմ, ույդ՛ումա
երեսուն>էսսուն, էսսունա
թեռ>թէռ, թէռա
թիթեռն>թիթէխա, թիթէխա
թռոն>թէօ՛ռ, թռուռա
իւղ>էղ, էղա
խէժ>խեժ, խէժա
խլուրդ>խօլօյդ՛, խօլօյդ՛ա, խօլօյդ՛ը

խոնջան>խուննջօն, խուննջունա, խուննջանը
խոշոր>խիւշիւյ, խիւշիւյա, խիւշիւյը
խորան>խույօն, խույունա, խույանը
խորթ>խէօռթ, խէօռթա
խոց>խիւց, խուցա
խուլ>խուլ, խուլա
խուլինջ>խէօլէօնջ, խուլունջա
խօսք>խէօսք, խէօսքա
ծիլ>ձուլ, ձը՛լա
ծիտ>ձայդ, ձը՛յդա
ծղրիթ>ձը՛յխը՛թ, ձը՛յխը՛թա
ծոմ>ձօմ, ձուումա
ծիծ>ձը՛ձ, ձը՛ձա
կաթիլ>գաթըլը, գաթըլքա
կաղանդ>գաղանդ, գաղընդա
կաղապար>գաղրօյ, գաղրըյա
կանկար (բույսը)>գանգօյ, գանգըյա, գանգյը
կապալ>գարօլ, գարըլա
կարկուտ>գայգուդ, գայգուդա
կարմիր>գայմըյ, գայմըյա
կծու>գօձու, գօձուվա
կոզ>գիւղ, գուղա, գուղը՛
կոզապուտ>գիւղբիւյդ, գուղբույդա
կոյս>գույս, գույսա
կռիվ>գը՛ռավ, գը՛ռը՛վը
կտուց>գօդուց, գօդուցա
կարիճ>գը՛դռաջ, գը՛դըջա
հազար>հազօյ, հազըյա, հազայը
հաւկիթ>հավգէթ, հավգըթա
հիւանդ>հիվանդ, հը՛վը՛նդա, հիվանդը
հող>հիւղ, հուղա
ձէթ>ձեթ, ձեթա
ձի>ձ՛ը՛, ձ՛ը՛վա
ձիւթ>ձ՛ը՛թ, ձ՛ը՛թա
ձիւն>ձ՛ը՛ն, ձ՛ը՛նա
ձոր>ձ՛իւյ, ձ՛իւյա, ձ՛ույա
ճեղք>ճեխք, ճեխքա

մակարդ>մագօյթ, մագրյդ՛ա
մանգաղ>մանգօղ, մանգըղա
մարդակ>մայդ՛օդ, մայդ՛ըդա
մացառ>մխցեռ, մը՛ցը՛առ
մեղր>մեղոր, մեղոա
մէջ>մէչ, մէչա, մը՛չը՛
մխ>մը՛ս, մը՛սա
մնջղեխ>մըչղեխ, մըչղը՛խա «մժեխ»
մոլեխ>մը՛յէխ, մը՛յը՛խա
մրուր>մօյուչ, մօյուչա
մրջիւն>մօռճօմ, մը՛ռճըմա
մոր «պատուղը»>մուչ, մը՛յա
մուխ>մուխ, մը՛խա
մունջ>մուռնջ, մը՛նջա
մուր>մուչ, մը՛յա
մսուր>մօսուչ, մօսուչա
յիշող>իւշիւղ, իւշիւղա
յիսուն>իսսօն, իսսանա
շաքար>շանքօյ, շանքըյա
շողգամ>շուխդ՛օմ, շուխդ՛ումա
շուք>շուք, շուքա, շը՛քի
շպլեղ>շը՛բլեղ, շը՛բլեղա
ոջիլ>իճէլ, ուճլա
ոռ>էօռ, ուռա, ուռու
որդն>իւյդ՛, ույդ՛ա
ութ>ուխթ, ուխթա
ուլ>ուլ, ուլա
ուխտ>ուխդ, ուխդա
ուղտ>ուղդ, ուղդա
ունդ>հունդ, հունդա, հը՛նդը՛
չամանի>չամօն, չամընա
չամիչ>չամիչ, չամըչա, չամչի
չուան>չուվօն, չուվունա
պանիր>բանըչ, բանըչա, բանռը
պատրոյտ>բադռըս, բադռըսա
պարտէզ>բայդէզ, բայդըզա
պինդ>բը՛նդ, բը՛նդա
պճեղն>բը՛չեղ, բը՛չղա

պորտ>բիւդ, բուդա
պտուղ>բօդուղ, բը՛դղա
ջուր>ճօյ, ճը՛յա
ռուպ>օռուբ, ը՛ռբա
սանդուխ>սանդօխ, սանդըխա
սինձ>սը՛նձ, սը՛նձա
սիսեռ>սիսեռ, սը՛սը՛ռա
սիրտ>սը՛յդ, սը՛յդա
սկեսուր>օսգօսուչ, օսգօսուչա
սոխ>սիւխ, սէխա, սիւխի
սուղ>սուղ, սը՛ղա
սուտ>սուդ, սը՛դա
սուր>սուչ, սը՛յա
սուրբ>սուչբ՛, սը՛չբ՛ա
սեսպիւն>ը՛սբը՛դղը՛ն, ը՛սբը՛դղը՛նա
վաթսուն>վաթծօն, վաթծընա
վարագոյր>վառագ՛օլ, վառագ՛ըլա
վարդավառ>վայդ՛իվօյ, վայդ՛ըվյա
վիշապ>ուշօբ, ուշրա
տուշտ>դուշդ, դը՛շդա
տուփ>դուփ, դը՛փա
տօն>դէօն, դունա
ցից>ցաց, ցը՛ցա
փետուր>փօբուչ, փօբուչա
փոխինդ>փէխանդ, փէխանդա
փրփուր>փօյփուչ, փօյփուչա
քաղիբթ>քաղըբդ՛, քաղըբդ՛ա
քառասուն>քառռուն, քառռունա
քարմանի>քայմօն, քայմընա
քէն>քեն, քէնա
քիթ>քիթ, քը՛թա
քող>քուղ, քուղա
քոս>քիւս, քիւսա
քուն>քուն, քը՛նա
քուրծ>քուչց, քը՛չցա
օճ>էօ՛ճ՛, ուճ՛ա
օղ>էօ՛ղ, ուղա
օտար>ուդօյ, ուդուչա

Առաջին հոլովման չորրորդ ձևն է ը, որի օրինակները շատ բազմաթիվ չեն. ձեռքիս տակ ունեմ հետևյալները.

անգուռնդ>անդ՛ուռնդ՛, անդ՛ուռնդ՛ը
բուռն (ձեռքի)>բ՛օռ, բ՛ը՛ռը
բրիչ>փեյիչ, փիյչի կամ փը՛յչը՛
դդում>գ՛օդ՛օմ, գ՛ը՛դ՛մը՛
դեհ>դ՛ը՛հ, դ՛ը՛հը՛
դուռնչ>դ՛ը՛ռնչ, դ՛ը՛ռնչը՛
եղունգն>օղուռնգ, ը՛ղը՛ռնդը՛
երկիր>ը՛յդիյ «օտար», ը՛յդը՛յը՛
ընկույզ>ինգէզ, ունգուզը
թիզ>թը՛զ, թը՛զը՛
թուզ>թուզ, թը՛զը
թուխ>թուխ, թը՛խը՛
թուղթ>թուխթ, թը՛խթը՛
թուշ>թուշ, թը՛շը՛
թուր>թույ, թը՛յը՛
թուփ>թուփ, թը՛փը՛
թուք>թուք, թը՛քը՛
լինգ>լինդ, լը՛նդը՛
լու>լօ, լը՛վը՛
լույս>լըս, լը՛սը՛
խանութ>խանութ, խանութը՛
կով>գէօվ, գուվը՛
ճկուռ>ջօգուռ, ջը՛գռը՛
կող>գիւղ, գուղը՛, գուղա
կուտ>գույդ, գը՛դը՛, գույդը՛
հարսանիք>հայսընըք, հայսընըքը՛
մեղու>մէղու, մէղվը՛, բց. մէղվէն
մէջ>մէչ, մը՛չը՛, մէչա
մօրուս>մույօդ, մույդը՛
նախիր>նախըռ, նախըռը՛
նարօտ>նարօդ, նարըդը՛
շարաւան>շայագօն, շայագընը՛, շայագնա
շեղբ «անկոթ դանակ»>շեղբ՛, շեղբ՛ը՛
շեռ>շեռ, շեռը՛
անդ>հանդ, հը՛նդը՛ հունդա

Առաջին հոլովման հինգերորդ ձևն է ի, որին հետևում են ոչ բազմաթիվ բառեր: Ձեռքիս տակ ունեմ միայն 21 բառ, որոնք հետևյալներն են.

աթոռ>աթէօ՛ռ, աթըռէ, նաև՝ աթըռա
ալևոր>հալվիյ, հալվիյէ
ալիւր>էլէյ, էլիյէ
ախոռ>ախէօռ, ախըռէ
ականջ>անգէջ, անգըջէ
աղբիւր>ախբ՛ըյ, ախբ՛ըյէ
ադեղ>ադէղ, ադիղէ
անիծ>անըձ, անձէ
անձրև>անձիվ, անձիվէ
գեամն>գ՛իղէն, գ՛իղնէ
դորտ>գ՛օյդօնօգ, գ՛ըյդընգե
եղջիւր>ախջ՛էյ, ախջ՛իյէ
երես>իյիս, իյիսէ
երէց>իյէց, իյիցէ
թագաւոր>թագ՛ավիյ, թագ՛ավիյէ
լեզու>լիզօ, լիզվէ
խաղող>խաղիւղ, խաղիղէ (որ և՝ խաղ, խէղի)
խոզ>խիւզ, խիզէ
խունկ>խունգ, խը՛նգե
ծոծրակ>ձիձիյօգ, ձիձիյգէ, որ և՝ ձիձիյագի
յարդ>էյդ՛, իյդ՛ե
շրէշ>շը՛յէշ, շը՛յիշե
ջուխտակ>ջ՛ուխգօգ «ոլաստեղ», ջ՛ուխգդէ
վէգ>վեգ՛, վիգէ
քաթաթոթոշ>քայքէօշ, քայքիշե:

Ահա թե ինչպիսի բազմազանություն է ներկայացնում միևնույն ի հոլովումը կամ որ նույն է ասել՝ ինչպիսի ձայնական փոփոխությունների է ենթարկվում բառավերջի ի ձայնավորը:

Բառավերջի ի ձայնի այդ փոփոխությունները կապված են ձայնավորների ներդաշնակության օրենքի հետ: Դրանք կատարվում են որոշ պայմաններում, որոնցից գլխավորները ամփոփում ենք այստեղ. ա) եթե նախորդ վանկի ձայնավորն է ա, վերջածայն ի դառնում է ը. բ) եթե ձայնավորն է ի, վերջածայն ի դառնում է ի (որ և ե). գ) եթե ձայնավորն է ը կամ ու, ի դառնում է ը՝ (որ է ա):

Առաջին հոլովման հինգ ձևերից առաջինը (ը) համապատասխանում է ճիշտ ա պայմանին. երրորդ և չորրորդ ձևերը (ը, ա) իրոք որ գոնվում են մեծագույն մասամբ ը, ը կամ ու ձայնավորներից հետո, ուրեմն համապատասխանում են գ պայմանին. հինգերորդ ձևը (է) $^{2}/_{3}$ չափով գոնվում է ի ձայնավորից հետո, ուստի համապատասխանում է բ պայմանին: Մնում են առաջին ձևի մի տասնյակ բացառությունները և մանավանդ ամբողջ երկրորդ ձևը իր շուրջ 200 օրինակներով: Այստեղ ձայնավորները բոլոր երանգներն էլ ներկայացնում են (նույնիսկ ա). ինչու՞ խոզ>խիւզ բառը հինգերորդ ձևով լինում է սեռ. խիզէ, իսկ մնացյալն ձևն ունեցող բոզ>բիւզ բառը երկրորդ ձևով դառնում է բիւզի:

Ամենից ավելի աչքի ընկնող երևույթն այն է, որ մի խումբ բառեր ունեն երկու ձևով սեռական. ինչ. բրիչ>փիչի, փիչէի կամ փըչէը, ծոց>ձիւց, ձիւցի կամ ձուցը և այլն (բոլոր կրկնակ ձևերը նշանակված են վերի ցանկերում): Կա բառ, որ երեք տեսակ սեռական ունի. այսպես է՝

գոգ>գ՛իւգ՛, գ՛իգ՛ի, գ՛ուգ՛ի, գ՛ուգ՛ա:

Այս փոփոխությունների պայմանները մեզ հայտնի չեն:

Երկրորդ հոլովում

Հին հայերենի ոյ և նոր բարբառների ու հոլովումն է, որ Զեյթունի գավառականում ստացել է մեծ մասամբ ու, քիչ անգամ էլ՝ ո ձևը: Թե ինչու մերթ ու, մերթ ո վերջավորությունն է դրվում, այս մասին չկարողացա գտնել որևէ կանոն:

Սեռականում -ու ստացող բառերը կարելի է բաժանել երեք խմբի:

ա) Ծառ կամ բույս ցույց ավող և եզակի ուղղականում -ի վերջավորվող բառեր. ինչ.

բարտի>բ՛այդը, բ՛այդու
գիհի>գ՛է, գ՛էն, գ՛իյու
կաղնի>գաղնը, գաղնու
գժնիկ, գժնկի>գ՛ը՛ժը՛նգէնի, գ՛ը՛ժը՛նգէնու
ուռի>ուռը՛, ուռու
կեռասենի>գէռասի, գէռասինե, գեռասինե, սեռ. գէռասնու
ասնձենի>գանձինե, գանձընու
մաթուզ, մաթզի>մաթըզա, մաթըզու

աքսի>աուսա, աուսու
խնկենի>խը՛նգինէ, խը՛նգընու

Զարմանալի է, որ ճապկի>ջարգի բառը լինում է սեռ. ջարգըվա.

բ) -ի վերջավորվող այլ կարգի բառեր, ինչ.

ադաւնի>ադլընը՛, ադլընու
նօթի>անըթը, անօթու
գարի>գ՛այը, գ՛այու
գինի>գ՛ինէ, գ՛ինու
գօտի>գ՛ուդը, գ՛ուդա, գ՛ուդու
դրացի>դ՛ըյացըն, դ՛ըյացնու
խնամի>խնամը, խնամու
կաշի>գէշի, գէշու
հայելի>հիլէ, հիլլու
մատանի>մադնը, մադնու
մաքի>մաքի, մաքու
ճճի>ջիջի, ջիջու
մաղաքի>մէղդէքի, մէղդէքու
մորթ>միյթի, միյթու
ներքսի>նիքսէ «մատանի», նիքսու
ոսկի>իսգի, իսգու
ունկի>նուգի, նուգու
պարխրցի>բախըյցա, բախըյցու
սամի>սամը, սամու
քեռի>քեռա, քեռու

գ) Ուրիշ տեսակ վերջավորություններ ունեցող դանազան բառեր. ինչ.

այծ>ուձ, էձու
առու>առու, առվու
աստուած>աստ՛օձ, աստուձու
էշ>էշ, իշու
կաքաւ>կագ՛օվ, կագ՛վու (բայց և՝ կագ՛վը)
կէս>գէս, գիսու
պապ>բօբ «հայրս», բաբու
կնքապապ>գընքաբօբ, գընքաբաբու

հերու>հիյու, հիյվու
հով>հէօվ, հուվու
հոտ>հիւդ, հուդու
հոր>հիւր, հուրու
մեծ>մինձ, մինձու
մէկ>մէգ, միգու
ճանապարհ>ջամփօնք, ջամփու
ճանճ>ջանջ, ջէնջու
շահ>շօհ, շահու
ոտ>էօտ, ուտա կամ ուտու
պախրէ>բախռէ, բախռու
պառաւ>բառօր, բառրու

գ) Այն բառերը, որոնք սեռականում ստանում են -ո վերջավորութիւնը, հետևյալներն են (ոմանք ուղղականում ի վերջավորութեամբ, ոմանք էլ այլ վերջավորութեամբ).

ագի>ագ՝է, ագ՝ո
ցրդի>ձ՝ըյդ՝ը, ձ՝ըյդ՝ինէ, ձ՝ըյդ՝ինո
այգի>էգ՝է, էգ՝ո
արջ>առջ՝, էջ՝ո
լուսնաերևի>լուսընդըռվընէ, լուսընդըռվընո
գայլ>գ՝ալ, գէ՝լո
գլուխ>գ՝օլօխ, գ՝օլխո
եկեղեցի>գ՝էղիցէ, գ՝էղիցո
ձոգ>ձ՝իւղ, ձ՝ուղո
հոգի>հիգ՝դ՝է, հուգ՝դ՝ո
պատենի>բը՝դինէ, «ծածկապարդ», բը՝դինո
մարդ>մօյդ՝, մայդ՝ո, մայդ՝էն, մայդ՝էօվ
ջորի>ջ՝իյէ, ջ՝իյո

Այս բոլորի հոլովումը կատարվում է հետևյալ ձևով.

Ո. Հ.	խագի	մօյդ՝
Ս. Տ.	խագու	մայդ՝ո
Բ.	խագե	մայդ՝ե
Գ.	խագէօվ	մայդ՝էօվ

Երկրորդ հոլովման նման է հոլովվում նաև բոլոր բառերի ևս ձևով հոգնակին. ինչ.

ը՝նքվը՝նա «հոնքեր», սեռ. ը՝նքվը՝նու
ուդվընա «ոտներ», սեռ. ուդվունու

ձաղգընա, ձաղգդնա «ծծագլխիկներ», սեռ. ձաղգընու, ձաղգդնու.

Նմանապես փը՝սը՝գ «կատու» բառի հոգնակին, որ լինում է փը՝սգը՝վը՝նը՝ք, հոլովվում է նույն ձևով՝

սեռ. փը՝սգը՝վը՝նուն
բց. փը՝սգը՝վը՝նէն
գրծ. փը՝սգը՝վը՝նէօվ
տուն>հոգ. դը՝նվը՝ք
սեռ. դը՝նվը՝նուն
բց. դը՝նվը՝նէն
գրծ. դը՝նվը՝նէօվ

Այս -ո հոլովմունքն են ցույց տալիս նաև մի խումբ սեռական անուններ. ինչ.

Այնթար>Անթոր, սեռ. Անթուրո
Հալէպ>Հալոր, սեռ. Հալրո

Բայց սա ոչ թե հին հայերենի ու կամ ոյ հոլովումն է, այլ տեղանունների այ հոլովումը, որ ըստ օրինի ավել է ո:

Ուրիշ տեղանուններ հոլովվում են սովորական կարգով. ինչ. Շամ>Շամ, սեռ. Շամը

Երրորդ հոլովում

այրիկ>էյիգ, էյգօն
աշուն>էշօնք, էշնօն, էշնըվօն
գառն>գ՝օռ, գ՝օռոն
դաղձն>դ՝էղձ՝ը՝նը՝գ, ը՝նգօն
դուռն>դ՝օռ, դ՝օռոն, դ՝ը՝ռնէն, դ՝ը՝ռնէօվ
էշ, իշուկ>սեռ. իշգօն
թի>թը՝, թիյոն
լեառն>լէռ, լէռօն
ձմեռն>ձ՝ը՝մեռ, ձ՝օմռօն (նաև՝ ձ՝օմռօվօն)
ձուկն>ձ՝օգ, ձ՝օգօն
մուկն>մուգ, մօգօն (բայց և՝ մը՝գը՝)
նուռն>նուռ, նօռօն
պտուկ>բը՝դիգ, բը՝դիգօն
տեղ>դեղ, դէղօն (որ և՝ դէղօց)
փիսիկ>«կատու» փը՝սը՝գ, փօսգօն, փը՝սգէն, փը՝սգէօվ
փուռ>փուռ, փօռօն

Այսպես նաև թամուզ «ամառ», սեռ. թամզօն (արաբ. tammūz «հուլիս» անից փոխառյալ)։

Հոլովմունքը հետևյալ ձևով է.

Ո. Հ.	փուռ
Ս. Տ.	փօռօն
Բ.	փը՛ռէն
Գ.	փը՛ռէօվ

Բց. լինում է նաև -մէ, ինչ. ձգէ, ձոզօնմէ «ձկնից», փոսգօնմէ «կառավից»։

Այստեղ հնչ գնում նաև կնիկ, որ այլուր լինում է սեռ. կնկաց, իսկ այստեղ

կնիկ>գը՛նը՛դ
գօնգօ, գօնգօն
գը՛նգէն
գընգէօվ

Այս հոլովման են հետևում նաև գրաբարի -ութիւն վերջավորվող վերացական բառերը։ Այս մասնիկը Զեյթունի բարբառում դառնում է -ութը կամ -ութաց, որ հոլովման ժամանակ առանում է սեռ. ութօց, բց. -ութօցը, -ութինեն, գրծ. -ութօմը ձևերը։ Այսպես՝

Ո. Հ.	մինձութան	մինձությունիյ
Ս. Տ.	մինձութօն	մինձությունիյու
Բ.	մինձութօնը՛	մինձությունիյն
Գ.	մինձութէօմը	մինձությունիյէօվ

Չորրորդ հոլովում

ամառն>ամօռ, ամրռվոն
ամխա>ամըա, ամսըվոն
դարուն>գ՛այօն, գ՛այնուվոն, գ՛այնօն
գիշեր>գ՛իշէյ, գ՛իշէյվոն
եբեկօյ>իյգօն, օյգօվոն
երէկ>իյէգ, իյէգվոն
գատիկ>գագը՛դ, -գըվոն
կիրակի>գիյագի, գիյագվը՛
ձմեռն>ձ՛ըմեռ, ձ՛օմռոն, ձ՛օմօվոն
շաբաթ>շաբ՛օթ, շար՛գըվոն

տարի>դայը, դայվոն
ցերեկ>ցիյիգ, ցիյիգվոն (նաև՝ ցիյիգի)

Սրանք հոլովվում են հետևյալ ձևով.

Ո. Հ.	գ՛իշիյ
Ս. Տ.	գ՛իշիյվոն
Բ.	գ՛իշիյվընէ, գիշիյէ
Գ.	գ՛իշիյէօվ

Հինգերորդ հոլովում

Հինգերորդ հոլովման մեջ սեռ.-տր. հոլովաձևը կազմվում է ուղղականի շեշտյալ ձայնավորը դարձնելով ե, իսկ բց. և գրծ. հոլովները կազմվում են սեռ.-տր. հոլովաձևի վրա ավելացնելով -ե, -եօվ, կամ -մե, մեօվ վերջավորությունները։

Հոգնակին նույն է առաջին հոլովման հետ։ Այսպես՝

Ո. Հ.	մայ «մայր»	մէյիյ
Ս. Տ.	մէօյ	մէյիյու
Բ.	մէօյմե, մէյե	մէյիյն
Գ.	մէօյմէօվ, մէյէօվ	մէյիյէօվ

«Հայր» բառը կիլիկիայի բարբառում ջնջված լինելով (արաօսկ ՋԹ. հճ. ունեն պապ>pop բառը), այս հոլովման տակ մնում են միայն երկու բառ. մայ «մայր» և եխբայ «եղբայր», սեռ. եխբէօյ.

Վեցերորդ հոլովում

աներ>անիյ «աներձագ», անիյիւչ
դին>գ՛էն, գ՛իւնիւչ, օր. գ՛իւնիւչը գօլայը «գնի մասին»
ընկեր>ը՛նգիյ, ը՛նգիւյիւչ
ներ>նեյ, նիւյիւչ
տալ>գօլ, գալիւչ (բայց և՝ դալը)
տայգը>գաքյը, գէօքյիւչ
տէր>գէյ, գիւյիւչ
տանուտէր>գանգիյ, գանգիւյիւչ

Սկեսուր բառը, որ ուրիշ բարբառներում հետևում է այս հոլովման, Զեյթունի գավառականում դարձել է ouqouruy, սեռ. ouqouruya։

Այս բոլորը անձ ցույց տվող բառեր են. բացառություն են միայն գին, որ հետևել է կին բառին, և տանիք>դիմել, սեռ. դիմելիչ, որ արդյոք տանուտէր>դանդիլ բառից է հետևել Որ. Դիմելիչը ծայն իւօ «տանիքի ծայրը ելա»։

Հոլովմունքը հետևյալ ձևով է.

Ո. Հ. անիլ
Ս. Տ. անիլիչ
Բ. անիլէն
Գ. անիլէվ

Ղարաբաղի բարբառ.—Թե եզակիում և թե հոգնակիում ունի 7 հոլով. այն է՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական։

Եզակի ուղղական հոլովը կազմվում է առանց որևէցե վերջավորության. օրինակ՝ փոգ, պըտըրհան, չո՛մինչ «փայտ, պատուհան, չամիչ»։

Եզակի սեռական և տրական հոլովները, որոնք միշտ նույն ձևն ունեն, կազմվում են սովորաբար քե վերջավորությամբ, այսպես՝ փո՛դրե, ըխկա՛տրե, պըտըրհա՛նքե, ըճո՛ւղրե «փայտի, աղքատի, պատուհանի, ածուխի»։

Այս քե վերջավորությունը գալիս է գրաբարի ի ձևից և հատուկ է բուն Ղարաբաղի բարբառին, իսկ Գորիս, ինչպես և Շուշի քաղաքը, գործածում են ի մասնիկը. այսպես՝ փոդի, ըխկաի, պըտըրհանի և այլն։

Նույն քե վերջավորությունը տեղ-տեղ, մանավանդ արագ արտասանության ժամանակ, հնչվում է պարզապես ե. այսպես՝ փո՛դե, ըխկա՛տե, պըտըրհա՛նքե և այլն։

Ասուած, ձի և այլն բառերի, ինչպես նաև բայի անեծքների սեռական-տրական հոլովը կազմվում է ու մասնիկով. այսպես՝ ըսուածու, ձիու, անց կնալու, պըհէլու, կյօռալու, կյընգյըռվէ՛լու։—«Ասածու, ձիու, անցնելու, պահելու, գոռալու, գանգատվելուս» և այլն։

Այս ձևով են հոլովվում հատկապես ուղղականի մեջ ի վերջացող բոլոր բառերը, որոնց ի-ն սեռական-տրական հոլովի մեջ կորչում է. օր. կյարու, ճօրու, կինու, Պուղու—«գարու, ջորու, գինու, Պողոսի»։

Այն դեպքում, երբ բառի մեջ գտնվում է իւ ձայնը, սեռական-տրական հոլովի ու մասնիկն էլ նրա ազդեցությամբ վե-

բածվում է իւ-ի. Այսպես՝ հիւնքիւ, հիւնիւ, թիւնիւ, կիւքիւ «հոգու, հոնի, Հարությունի, Գրիգորի»։

Ուղղականի մեջ ու վերջացող բառերը իրենց սեռական-տրական հոլովը կազմելու համար առանում են դարձյալ ու մասնիկը, բայց այս վերջինի մոտ նախորդ ու վերջավորությունը դառնում է վ. այսպես՝ լիւզվու, ըովու «լեզվի, առվի» և այլն։

Ուղղականի մեջ իւ վերջացող բառերը այս դեպքում ներգոյականի համար եկամուտ վ ձայնն էլ են ներմուծում, որ լիւվիւ, ծիւվիւ «լվի, ձվի»։

Մի շարք բառերի սեռական-տրական հոլովը կազմվում է ա մասնիկով. այսպես՝ ըթամա, ամսա, ըխչըկա, կընկա և այլն «Ադամի, ամսվա, աղջկա, կնոջ»։

Սրանց մի մասը կարող է առանալ նաև ան մասնիկը, ինչպես՝ կընկան, ըխչըկան, որ ավելի հայտնի կերպով երևան է գալիս ս, դ, ն գիմորոշ հոդերի առաջ. այսպես՝ կընկանս, ըխչըկանըս և այլն։

Գրաբարի ն հանգի փոխարեն Ղարաբաղի բարբառով ուղղականի մեջ -ը վերջավորվող բառերը իրենց սեռական-տրական հոլովը կազմում են երկու ձևով, այսինքն՝ նախ գրաբարի պես, և երկրորդ՝ առաջին հոլովմամբ (ը). այսպես՝ Թօռան, մատան, վըէտան, յէտան, ակնան, առան, բայց նաև՝ Թօռընը, մանրընը, վըէննրը, յէդնրը, տօռընը և այլն։ Ջուկ և մուկ բառերը դառնում են ծի՛ւկնիս, ծիւկնրը և մո՛ւկնու, մո՛ւկնրը։

Ժամանակ ցույց տվող բառերի սեռական-տրականը կազմվում է վա վերջավորությամբ. այսպես՝ օրվա, սօրվա, տարվա, ամսըվա և այլն—«օրվա, այսօրվա, տարվա, ամսվա»։ Սրանք կարող են նաև մի -ն էլ ավելացնել նույն վա վերջավորության վրա և դառնալ օրվան, սօրվան և այլն։

«Ուիիւն» վերջացող վերացական բառերի սեռ.-տր. հոլովը կազմվում է դարձյալ ու վերջավորությամբ. այսպես՝ հատօիւնու, խըլընքօիւնունս, մծըիւնունս, նրգօիւնունս «հատության, խելոքության, մեծության, նեղության»։

Հայր, մայր, քոյր, եղբայր, աներ և այլն բառերի սեռ.-տր. հոլովը հետևյալ ձևն ունի. հօր (ապօր), մօր, քվօր (քիւվօր), ախպօր, հանօր և այլն։

Ուղղականի մեջ ա վերջացող բառերը սեռ.-տր. հոլովի ու, և, ի վերջավորությունների մոտ իրենց այս ա ձայնը ջնջում

են. այսպես՝ խօխու, ըրխէ, ըրխըէ, ըրխի, փէսըէ, տղըէ և այլն։

Եզակի հայցականը առանձին հոլովական ձև չունի. որա տեղ գործածվում է սեռ.-տր. հոլովաձևը, եթե բառը շնչավոր է, իսկ ուղղականի հոլովաձևը՝ եթե բառը անշունչ է, այսպես՝ տես պօրս Քրկէցըէ, հօրըս... կաշին մմկըցրալ, ծեռքերըս ծալել նստալ. հարիւր մանեք յա մին գառ պակաս տամ քեզ։

Եզակի բացառականի վերջավորութիւնն է ա, որ առաջանում է գրաբարի է վերջավորութիւնից. այսպես՝ փուլա, միլքա, ընբսունա, պըրրկամա, ծէռքա, Թօրքա, յրսըվուլա, վրակըէռա, պուղվատա, մծօքունա, անց կընալա, պրէչա և այլն։

Ավելի սովորական է -ան մասնիկը, որ սակայն ուրիշ բան չէ, բայց եթե նույն նախորդ ա մասնիկը՝ և դիմորոշ հոգով, այսպես՝ բխկատան, ցօրնան, ծծդիլան, հացան, օրան, պրէչան, վրակըէռան, սօրան և այլն. ինչպես որ կարող ենք ասել ս դիմորոշ հոգերով՝ միլքաս, ծէռքաս, հացատ, շէնաս, կիւրկոս, վրխէլատ և այլն.— բացառականի այս ձևի կազմութիւնը հիշեցնում է արևելահայ գրական լեզվի, ինչպես և մի քանի բարբառների արականի -ից ձևը, որ նույնպես դոյացել է ն հոգի կցումով վերջավորության վրա։

Ա և ի վերջացող բառերը բացառականի ան վերջավորության առաջ ջնջում են նույն վերջավորութիւնը. օր. կյօրան, ճօրան, խօխան, սրտանան և այլն։

Ու վերջացող բառերի բացառականում այս ու վերջավորութիւնը փոխվում է վ-ի. օր. լիւզվան, առվան և այլն, իսկ ի վերջացողները բացառականի վերջավորութիւնից առաջ ներմուծում են վ ձայնը. այսպես՝ ծիւվան, լիւվան և այլն։

Գրաբարի ն հանդի փոխարեն Ղարաբաղի բարբառի մեջ -ը վերջացող բառերը նույնպես բացառականի ան վերջավորության մոտ ջնջում են նույն ը վերջավորութիւնը. այսպես՝ ծիւկնան, Թօռան, մօկնան, մաննան, վըէննան և այլն։

Հայր, մայր, քոյր, տուն, շուն, կնիկ և այլ այս կարգի բառերը բացառականը սեռ.-տր. հոլովաձևից է կազմվում, այսպես՝ մօրա, տանա, կնկանա, շանա, հօրա, քվօրա և կամ՝ մօրան, տանան, կնկանան, շանան, հօրան, քվօրան, մօրաս, տանաղ, կընկանաս և այլն։

Եզակի գործիականը կազմվում է ավ վերջավորութիւնից, որ ոչ թե գրաբարի ու վերջավորութիւնից է առաջանում, ինչպես ոմանք կարծում են, այլ մեր այժմյան սովորական ով

վերջավորութիւնն է, որի ո ձայնը հաջորդ վ-ի պատճառով դարձել է ա։ Այս մասնիկը կարող է առանց գժվարութեան կըցվել ամեն հոլովման պատկանող բառի. այսպես՝ հացավ, օրավ, մաննավ, առնավ, թիկնավ, ընիծէլավ, սրվրրէլավ, մծօքունավ, նրպրթունավ և այլն։— Անկանոն հոլովումների մեջ ավ վերջավորութիւնը, բացառականի նման, դրվում է սեռ.-տրականի հոլովաձևի վրա. այսպես՝ հօրավ, մօրավ, քվօրավ, հընօրավ, կնկանավ, ըխչըկանավ, շանավ, տանավ և այլն։

Ա վերջացող բառերը գործիականի ավ վերջավորության մոտ նույն ա ձայնը ջնջում են. օր. պէկլավ, փէսավ, սրդավ, «բակլայով, փեսայով, տղայով»։

Ի վերջացող բառերը նմանապես նույն ի ձայնը ջնջում են գործիականի ավ վերջավորության մոտ, այսպես՝ ճօրավ, կինավ, կյարավ, «ջօրիով, գինիով, գարիով»։

Սակայն երբ նույն -ի-ից առաջ նաև կ, ք բաղաձայնները կան, ի-ն ջնջվելուց հետո սրանք էլ փափկում և վերածվում են կ, ը, այսպես՝ հիւքյավ, հաքյավ, վըէսկյավ «հոգով, ագիով, ոսկով» և այլն։

Իւ, ու վերջավորվող բառերը այստեղ էլ նույն փոփոխությունն են կրում, ինչ որ բացառականի մեջ. քան այսպես՝ լիւզվավ, ծիւվավ, առվավ, լիւվավ և այլն։

Գրաբարի ն հանդի փոխարեն Ղարաբաղի բարբառի մեջ վերջավորութիւն ունեցող բառերը այստեղ էլ են զրկվում ն ձայնավորից. օր. ծիւկնավ, Թօռնավ, յէղնավ, վըէննավ, մաննավ և այլն։

Մեր ներկա երկու գրաբարն լեզուների և բազմաթիվ գաւառականների մեջ առհասարակ անուննները գործիական չունեն. այսպես՝ չի ասվում օր. Գրիգորով, Հարությունով և այլն, այլ որա փոխարեն գործածվում են Գրիգորի հետ, Հարությունին հետ և այլն ձևերը։ Ղարաբաղի բարբառը սակայն ազատ կերպով կարող է թե՛ մեկը, և թե՛ մյուսը գործածել. այսպես՝ Գրիգորով, Թիւնավ կամ Գրիգորի հետ, Թիւնիւն հետ, նույնպես՝ Թիւնավ գարիել, հօրավ գարիել «Հարությունի կամ նր միջոցով (հետը) ուզարկել»։

Եզակի ներգոյականի վերջավորութիւնն է ում, որ նույնպես կարող է ամեն հոլովման պատկանող բառերին էլ անխտիր կցվել. այսպես՝ հացում, հրըսանքում, ցօրնում, մրօքում, մծօքունում, նրպրթունում և այլն։

- Իւ ձայնավորը պարունակող բառերի առաջ ներգոյականի ում վերջավորությունը սույն իւ ձայնի ազդեցությամբ դառնում է իւմ կամ ևթե ու-ով է վերջանում, այդ վերջավորությունը փոխվում է վ-ի. օր. արնիւմ, լըվիւմ, ծըվիւմ, լիւզվիւմ, հիւքիւմ, թիւնիւմ և այլն, եթե բառի վերջին ձայնավորն է ի, ի, ներգոյականի վերջավորությունը լինում է օմ, ինչ. Գրքօմս, մսօմս, քթօմը, ջիւրօմքի:

Բայերի անեղևույթները կարող են թե ում, և թե՛ իս վերջավորությամբ կազմել իրենց ներգոյականները. օր. ասլիս, ընէլիս, փըսրկէլիս, պըհէլիս, կամ ընէլում, քշռէլում, հրնձէլում, շընէլում և այլն, և այլն:

Ա և ի վերջացող բառերի այս վերջավորությունները ջնջվում են ներգոյականի ում մասնիկի առջև. այսպես՝ ճօրում, վըէսկում, կյտրում և այլն:

Գրաբարի ն հանգի փոխարեն Ղարաբաղի բարբառում ևս ունեցող բառերն էլ ներգոյականի ում վերջավորության առաջ դրկվում են սույն ը-ից. այսպես՝ ծիւկնիւմ, թօռնում, վրէնում, մաննում և այլն:

Անկանոն հոլովումների մեջ ներգոյականի մասնիկը դրվում է սեռական-տրական հոլովաձևի վրա, այսպես՝ շանում, առնում, կնկանում, հօրում, մօրում, քվօրում, ըխչըկանում և այլն:

Հոգնակիի հոլովների բացատրությանը չանցած հարկավոր է խոսել մի ուրիշ հոլովական վերջավորության վրա, որը հատկապես հատուկ է Ղարաբաղի բարբառին և որի նմանը ուրիշ բարբառների մեջ հազվագյուտ է: Այս վերջավորությունն է աց, բայց ավելի սովորական -ցաց, որ ներմուծվում է բուն բառի և բացառականի, գործիականի ու ներգոյականի հոլովական վերջավորությունների մեջտեղ: Այս դեպքում բառն էլ սեռ.-տր. հոլովաձևն է առանում. այն է բուն՝ -ի, բայց նաև՝ -ի, -ու, -իւ, -վու, վիւ ըստ վերոհիշյալ կանոնների: Այս վերջավորություններն էլ Ղարաբաղի ընդհանուր շեշտագրության օրենքով կարող են վերածվել ը-ի կամ վը-ի, որով ունենում ենք հաջորդ օրինակների նման ձևեր. Ըստուծանա, ըստուծանավ, ըստուծանում, կիւքիւնանավ, թիւնինիւնանավ, հիւքիւնանավ, լիւզվիւնանում, ծիւվիւնանում, ըոջընանում, ըրնինանում, համամէնանում, հացընանում, հայէնանում, լիւվիւնանա, Գուդունանան, ծըծղըլընանա և այլն և այլն:

Ինչպես հեշտ է դուշակել, սրանց բոլորի մեջ էլ ավելացված վերջավորությունն է աց, իսկ ն-ացն, կազմված է նույն դիմորոշ ն- հոգով, որով կազմված է բացառականի աց վերջավորությունը կամ արևելահայ գրականի -ից տրականի վերջավորությունը:

Այս բանը ավելի ակնհայտ կերպով երևան է գալիս «ձևոքս, ձևոքեգ, քո առվիդ մեջ, ծիծաղելովս, քրոջիցս» և այլն ձևերի մեջ. այսպես՝ ծէոքէսանա, ծըոքըտանա, բովըտանում, ծըծղըլըտանավ և այլն:

Հոգնակի ուղղականը կազմվում է սովորական -ըեր, -ներ վերջավորություններով, որոնց առջև ու, իւ վերջավորությունը դառնում է վը. այսպես՝ հացըեր, մաննըեր, խրխանըեր, լիզվըներ, բովընըեր, լիւվըեր և այլն:

Այս նպատակի համար գործածվում են նաև էրք, աներ, էրանք և ներ վերջավորությունները. վերջինը՝ որ հատկապես Շուշի քաղաքի մեջ էր գործածական, ծագում է ներ ձևից և բուն այսմ նույն է մյուս բարբառների ներ վերջավորության հետ, որ սառացական մասնիկներից առաջ է երևան գալիս: Հոգնակիի կազմության այս ձևի օրինակներ են՝ ոդէրք, շինէրք, խոխէրք, ըխչըկէրք, հօրանք, մօրանք, շընէրանք, ըխչըկէրանք, ոդէրանք, դրադնէ, հրզարնէ, սխալնէ և այլն:

Դրանց մեջ նկատելի է արդեն, թե այս վերջավորությունները կարող են կցվել անխտիր թե՛ միավանկ, և թե՛ բազմավանկ բառերի վրա, թե միավանկների համար ներք, ներանք, ի վերջավորություն գոյություն չունի և որ ա-ով վերջացող բառերի սույն վերջավորությունը սրանց առաջ ընկնում է:

Հոգնակի սեռ.-տր. հոլովաձևը կազմվում է սովորական էրի, ների վերջավորություններով, բայց նաև՝ աց, էրաց, էրքաց վերջավորություններով, որոնք ավելի աներ, էրք, էրանք ուղղականներին են համապատասխանում և անկանոն հոլովումների մեջ գրվում են եզակի սեռ.-տր. հոլովաձևի վրա. օր. հօրանց, հօրէրանց, մօրանց, մօրէրանց, քվօրանց, ոդէրքանց, ոդէրանց, շինէրանց, շինէրքանց, ըխչըկանց, ըխչըկէրանց, խոխէքանց, խոխէրանց, հցէրի, մսէրի, կոըքնէրի և այլն:

Հոգնակի բացատական, գործիական, ներգոյական հոլովները կազմվում են եզակիի մեջ գործածական աև, ավ և ում վերջավորություններով, որոնք կարող են ևի, էրի, ների ձևերից գուրս հոգնակի թե՛ ուղղական, և թե՛ սեռ.-տր. բոլոր հոլովաձևերի

վրա ավելացվել. նույնպես նաև եզակի հիշյալ հոլովների մեջ գործածական ան, նաև, ընդհ. թարմատարները կարող են այսօրից էլ ներմուծվել հոլովակերտ վերջավորություններից անմիջապես առաջ. ըստ այսմ ունենում ենք նույնարժեք հոլովների ճոխ և բազմազան մի հարստություն. օր. տղէրան, տղէրքան, տղրրանքան, տղրրանցան, տղրրքանցան, տղրրանան, տղղէրքանան, տղրրընքանան, տղրրընցանան, տղրրքընցանան. այս բոլորը նշանակում է «տղաներից». նույնպես՝ շնէրավ, շնէրքավ, շնրրանքավ, շնրրանցավ, շնրրքանցավ, շնրրանով, շնրրքանավ, շնրրընքանավ, շնրրընցանավ, շընրրքընցանավ. այս բոլորը կարող են գործածվել իրր գործիական «շներով, գյուղերով». նույնը նաև ներգոյականով՝ կոքընէրում, կոքքնէրընանում, կոքքնէրանանում, կոքքնէրանցանում և այլն՝ ըստ իրենց կարգին: Անկանոն հոլովումների մեջ այս վերջավորությունները կցվում են եզակի սեռ.-տր. հոլովաձևի վրա. այսպես՝ քլօրանցանա, քլօրէնավ, քլօրանավ, քլօրանցանավ, քլօրանցանան, քլօրէրանցանում և այլն ձևերը «քույր» բառից:

Կարևո բաբբառ.—Հոլովումը կատարվում է գերազանցապես կցական սիստեմով. եզակի թվում հոլովական վերջավորությունները կցվում են անմիջապես բառարմատին, հոգնակի թվում՝ բառի հիմքի վրա ավելացած հոգնակի մասնիկներին: Հոլովումը պարզ է ու կանոնավոր: Որոշյալ առումով հոլովվելիս գոյականները առանում են ը հոդը:

Առաջին հոլովում

Բարբառիս ամենատարածված և ամենագործուն հոլովումն է: Այս հոլովմանն են պատկանում այն բոլոր բառերը, որոնք եզակի սեռականում առանում են ի: Բարբառիս բառերի ամենամեծ մասը ենթարկվում է այս հոլովմանն: Հոլովական վերջավորություններն են՝ սեռ.-ի, տր.-ին, հայց. իրի առման դեպքում նման է ուղղականին, անձի առման դեպքում՝ տրականին, բացառ. -էն, գործ. -օվ: Հոգնակի սեռ. և տր. -երու կամ -ներու, բացառ. -էրէն, -ներէն, գործ. -էրօվ, -ներօվ: *Օրինակ.*

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	ձօվ(ը)	պառավ(ը)	ձօվէր(ը)	պառվընէր(ը)
Սեռ.	ձօվի(ն)	պառվի(ն)	ձօվէրու(ն)	պառվընէրու(ն)
Տր.	ձօվի(ն)	պառվի(ն)	ձօվէրու(ն)	պառվընէրու(ն)
Հայց.	ձօվ(ը)	պառվի(ն)	ձօվէր(ը)	պառվընէրու(ն)
Բաց.	ձօվէն	պառվէն	ձօվէրէն	պառվընէրէն
Գործ.	ձօվօվ	պառվօվ	ձօվէրօվ	պառնընէրօվ

Այս հոլովմանն են ենթարկվում նույնիսկ մյուս հոլովումներին պատկանող շատ գոյականներ (էշ-իշու, նաև՝ իշի, շարաթ-շարաթվա, նաև՝ շարթի), օտար փոխառությունների մեծ մասը (դավալ-դավալի, դուշման-դուշմընի), օտար մասնիկներով ածանցված կամ բարդված հայերեն շատ բառեր (ձընթօփ-ձընթօփի, մարթասըզ-մարթասըզի, բեմուրադ-բեմուրադի), ենթակայական դերբայը՝ իրրև փոխանուն հոլովվելիս (խըմօզ-խըմօզի), վերջապես գրաբարում վերջհանգ ե ունեցող միավանկ բառերի մեծ մասը (ձուգ-ձըգի, քօռ-քռոի), որոնք հոգնակի թվում պահպանում են հիմքի ե-ն և ունենում -ներ հոգնակին (ձրգներ, քռոներ, մգներ և այլն). բացառություն են կազմում՝ սէրմ-սէրմէր, նուռ-նռներ, մասամասեր, ալ-ուլէր, կաթ-կաթէր,

Առաջին հոլովման պատկանող այն բառերը, որոնք ուղղականում ունեն ու, սեռականում առանում են վ, ինչպես՝ լուլվի, լիզու-լիզվի, կազու-կազվի:

Ուղղականում ա-ով վերջացող բառերը եզակի սեռականում կորցնում են ա-ն, հոգնակի ուղղ. առանում ք, սեռ.՝ օց, բաց. -օցեն, գործ. -օցով: *Օրինակ՝*

Տըղա, տըղի, տըղէք, տըղօց, տըղօցէն, տըղէքօվ (կամ տղօցօվ), փէսա, փէսի, փէսէք, փէսօց, փեսօցէն, փէսէքօվ (կամ փէսօցօվ), քուլա, քուլի, քուլէք, քուլօց, քուլօցէն, քուլէքօվ (կամ քուլօցօվ), բալա, բալի, բալէք, բալօց, բալօցէն, բալէքօվ (կամ բալօցօվ):

Երկրորդ հոլովում

Երկրորդ հոլովմանն պատկանում են բոլոր այն գոյականները և գոյականաբար գործածվող մյուս բառերը, որոնք եզակի սեռականում առանում են ու: Այդպիսի բառերի մեծ մասը ուղղականում վերջավորվում են -ի և -իճ:

Այս հոլովմանն վերջավորությունները հոգնակի թվում նույնն են, ինչ որ առաջին հոլովմանն նույն թվի վերջավորությունները: Եզակի թվում սեռ. և տր. ունեն ու, բացառ. -էն, -էգեն, գործ. -օվ վերջավորությունները: Իրրև ընդհանուր կանոն այս հոլովմանն պատկանող բոլոր բառերի ուղղականի վերջհանգ ի ձայնավորը դուրս է ընկնում եզակի թվի հոլովներում: Այս կա-

նոնից բացառություն է կազմում ձի միավանկ բառը, որը պահպանում է ի-ն և առանում համապատասխան վերջավորություններ։ Օրինակ՝

	Եզակի		Հոգնակի	
Ո.	գ՛ինի(ն)	ձ՛ի(ն)	գ՛իննէր(ը)	ձ՛իէր(ը), ձիանք
Ս.	գ՛ինու(ն)	ձ՛իու(ն)	գ՛իննէրու(ն)	ձ՛իէրու(ն)
Տ.	գ՛ինու(ն)	ձ՛իու(ն)	գ՛իննէրու(ն)	ձ՛իէրու(ն)
Հ.	գ՛ինի(ն)	ձ՛իու(ն)	գ՛իննէր(ը)	ձ՛իէրու(ն)
Բ.	գ՛իէէն	ձ՛իէն	գ՛իննէրէն	ձ՛իէրէն
Գ.	գ՛ինով	ձ՛իով	գ՛իննէրով	ձ՛իէրով

Ուղղականում ի-ով վերջացող գոյականները հոգնակի թվում առանում են նաև ք և ենթարկվում կրկնաձև գրաբարյան հոլովման, առանալով -օց (սեռ.-տր.), -օցից (բաց.) -օվ (գործ.) վերջավորությունները. ինչպես՝ գ՛իննիք–գ՛իննօց-գ՛իննօցէն-գ՛իննիքով, հայլիք-հայլօց-հայլօցէն-հայլիքով։

Երկրորդ հոլովմանն են ենթարկվում նաև. ա) բոլոր անորոշ դերբայները իրրև փոխանուն հոլովվելիս, օրինակ՝ սիրել(ը), խընդալու, էրթալու, բ) -ացի, -էցի, -ցի ածանցով կազմված բառերը, որոնք հոգնակիում առանալով ք, հոլովվում են կրկնաձև հոլովմամբ (գ՛յումրեցիք, գ՛յումրեցօց, գ՛յումրեցօցէն), գ) այն փոխառյալ բառերը, որոնք ունեն ի վերջավորություն կամ բարգված են՝ գրաղմունք, արհեստ ցույց տվող -ճի ածանցով, ինչպես՝ ուստաբաշի, ուստաբաշու, գ՛ամբրճի-գ՛ամբրճու (գամբռին), չըռխի-չըռխու (որմնադիրների լորը), գ) ուղղականում ի չունեցող մի քանի գոյականներ՝ մարր, կըճիզմարր, ճամբուկ, որոնց հոգնակին լինում է մարրիք, կըճիզմարրիք, ճամբուկ, նաև մանչ, գ՛ըլօխ, ամիս, սեր, եշ, ասված բառերը, որոնցից առաջին երեքը հոլովվում են կանոնավոր, իսկ վերջինը երեքը հետևյալ առանձնահատկություններով.

Ուղղ. սէր. սեռ. սիրու, բաց. սէրէն, հոգնակիում չի գործածվում
» էշ » իշու, հոգն. ուղղ. էշէր, նաև՝ իշանք, սեռ. իշէրու
» ասված » ասծու կամ աստծու, բաց. աստըծմէն կամ աստըծէն։

Երրորդ հոլովում

Այս հոլովման ենթարկվում են սակավաթիվ բառեր, որոնք սեռականում առանում են օջ հոլովիչը և այն պահպանում հոգ-

կի թվի բոլոր թեք հոլովներում։ Մյուս հոլովները թե՛ եզակիում, թե՛ հոգնակիում առանում են իրենց հիմնական վերջավորությունները. օրինակ՝

	Եզակի	Հոգնակի	
Ո.	քուր(ը)	քուրէր(ը) նաև	քուրվըդիք
Ս.	քըրօջ(ը), քուրօջ(ը)	քուրէրու(ն)	քուրվըդօց
Տ.	քըրօջ(ը)	քուրէրու(ն)	քուրվըդօց
Հ.	քըրօջ(ը)	քուրէրու(ն)	քուրվըդօց
Բ.	քըրօջէն	քուրէրէն	քուրվըդօցէն
Գ.	քըրօջով	քուրէրով	քուրվըդիքով

Այս հոլովմանն են պատկանում ազգակցություն ցույց տվող հետևյալ բառերը՝ քուր, կեսուր, տաքըր (նաև՝ տէքըր), տալ, նաև՝ տեր, չըճգեր։ Բայց այն բարդ բառերը, որոնց երկրորդ բաղադրիչը կազմվում է քուր կամ տեր բառերով (մօրքուր, տերտէր և այլն), ենթարկվում են ոչ թե այս հոլովման, այլ առաջինին։

Օջ հոլովման պատկանող բառերը հոգնակիում առանալով -դիք, -վըդիք հոգնակիները, սեռականում լինում են քուրվըդօց, տերվըդօց, չըճգերդօց, այսինքն՝ ենթարկվում են գրաբարյան հոլովման։

Չորրորդ հոլովում

Այս հոլովման են ենթարկվում գարձյալ ազգակցություն արտահայտող սակավաթիվ բառեր՝ ախպէր (ախպար), հէր (հար), մէր (մար), նաև այն բաղադրյալ բառերը, որոնց վերջին բաղադրիչն են հանդիսանում այս նույն բառերը, ինչպես՝ ծըծմէր, մեծմախպէր, նաև՝ մեծմախպար։

Չորրորդ հոլովման բնորոշ հատկանիշն է սեռականի օր հոլովիչը, որը պահպանվում է եզակի թվի բոլոր թեք հոլովներում։ Հոգնակի թվում միայն ախպէր գոյականը կարող է առանալ նաև -դիք հոգնակին և հոլովվել երկրորդ ձևով գրաբարյան։

	Եզակի	Հոգնակի	
Ո.	ախպէր(ը)	ախպէրնէր(ը)	կամ ախպըրդիք(ը)
Ս.	ախպօր(ը)	ախպէրնէրու(ն)	ախպըրդօց(ը)
Տ.	ախպօր(ը)	ախպէրնէրու(ն)	ախպըրդօց(ը)
Հ.	ախպօր(ը)	ախպէրնէրու(ն)	ախպըրդօց(ը)
Բ.	ախպօրէն	ախպէրնէրէն	ախպըրդօցէն
Գ.	ախպօրով	ախպէրնէրով	ախպրդօցով

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման առանձնահատկությունն այն է, որ սեռական ունի -վա հոլովիչը, որը, սակայն, բացառական և գործիական հոլովներում հաճախ ընկնում է: Հինգերորդ հոլովմանն են ենթարկվում ժամանակ ցույց տվող համարյա բոլոր բառերը՝ տարի, ցերեկ, յեր(ի)գուն, ամիս, յէրեկ, հերու, յառավօտ, կիրակի, ա՛րմէն և այլն, նույնիսկ ժամանակ արտահայտող փոխառյալ բառերը, ինչպես՝ սա(հ)աթ — սա(հ)աթվա (ժամ), մինուդ — մինուդվա: Այս հոլովման հոգնակի թիվը կազմվում է շատ կանոնավոր՝ հիմքի վրա ավելանում են հոլովական համապատասխան վերջավորությունները. օրինակ՝

	Եզակի	*Հոգնակի*
Ո.	*տարի(ն)*	*տարինէր(ը)*
Ս.	*տարվա(ն)*	*տարինէրու(ն)*
Տ.	*տարվա(ն)*	*տարինէրու(ն)*
Հ.	*տարի*	*տարինէր(ը)*
Բ.	*տարվանէն*	*տարինէրէն*
Գ.	*տար(վան)օվ*	*տարինէրօվ*

Ամսվա և շաբաթվա անուններն ենթարկվում են առաջին և երկրորդ հոլովման, մինչդեռ կես բառը, իբրև երկրորդ բացատրիչ հանդես գալով ժամանակ արտահայտող անունների հետ, ենթարկվում է -վա հոլովման, ինչպես՝ սա(հ)աթուկէս-սա(հ)աթուկէսվա, օրուկէս-օրուկէսվա:

Վա հոլովմանն է ենթարկվում նաև մահ բառը:

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման պատկանող բառերը սեռականում առանում են -աց հոլովիչը. դրանք ուղղականում ունենում են -ուն վերջավորությունը, ինչպես՝ շուն, տուն, ձուն: Այս հոլովման են ենթարկվում նաև գրաբարում վերջանալ և ունեցող մի քանի բառեր (գուռ-դրան), որոնց մեծ մասը, սակայն, ենթարկվում է առաջին հոլովմանն: Այն հոլովման ենթարկվող միավանկ բառերի հոգնակին անպայման լինում է -ներ, որի ն-ն գրաբարյան հիմքի ն-ն է (գուռ-դրռներ), որը պահպանվում է նաև եզակի բացառ. և գործ. հոլովներում:

Վեցերորդ հոլովման բառերը թեք հոլովներում ունեն հետևյալ վերջավորությունները՝ սեռ. և տր. -աց, բաց. և գործ. -էն, օվ՝ առանց -աց հոլովիչի: Հոգնակին կազմվում է կանոնավոր, բառահիմքին ավելացնելով համապատասխան հոլովական վերջավորությունները. օրինակ՝

	Եզակի		*Հոգնակի*	
Ո.	*ձ՛ուն(ը)*	*գ՛ուռ(ը)*	*ձ՛ընէր(ը)*	*գ՛րռներ(ը)*
Ս.	*ձ՛ան(ը)*	*գ՛րռան(ը)*	*ձ՛ընէրու(ն)*	*գ՛րռներու(ն)*
Տ.	*ձ՛ան(ը)*	*գ՛րռան(ը)*	*ձ՛ընէրու(ն)*	*գ՛րռներու(ն)*
Հ.	*ձ՛ուն(ը)*	*գ՛ուռ(ը)*	*ձ՛ընէր(ը)*	*գ՛րռներ(ը)*
Բ.	*ձ՛ընէն*	*գ՛րռնէն*	*ձ՛ընէրէն*	*գ՛րռներէն*
Գ.	*ձ՛ընօվ*	*գ՛րռնօվ*	*ձ՛ընէրօվ*	*գ՛րռներօվ*

Այս հոլովմանն են ենթարկվում նաև երիգ, կրնիգ, ախչիգ գոյականները և Ղարս, էջմիածին հատուկ անունները, որոնցից առաջինը հոլովվում է կանոնավոր, իսկ մյուսները ունեն այն առանձնահատկությունը, որ եզակի սեռ. և տր. հոլովներում -աց-ի փոխարեն ունեն ա (կրնգա, ախչրգա, Ղարսա, էջմիածնա): Հոգնակի թվում վերջին երկուսը հազվանալի պատճառով չեն գործածվում, իսկ մյուս երկուսը հոլովվում են կանոնավոր: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ կրնիգ գոյականը առանում է նաև դիք հոգնակին և հոլովվում գրաբարեան ձևով՝ բազդ. կրնգդիք, սեռ. կրնգդօց, տր. կրնգդօց, հայց. կրնգդդօց, բաց. կրնգդդօցեն, գործ. կրնգդօցօվ (կամ կրնգդիքօվ):

Բոլոր -ութեն<ութիւն ածանցով բարդված վերացական գոյականները նույնպես ենթարկվում են այս հոլովման, և որովհետև այդպիսի գոյականները գործածվում են իբր առումով. այդ պատճառով նրանց հայցականը միշտ նման է լինում ուղղականին. օր.

	Եզակի	*Հոգնակի*
Ո.	*գ՛իշութէն(ը)*	*գ՛իշութէններ(ը)*
Ս.	*գ՛իշութան(ը)*	*գ՛իշութէններու(ն)*
Տ.	*գ՛իշութան(ը)*	*գ՛իշութէններու(ն)*
Հ.	*գ՛իշութէն(ը)*	*գ՛իշութէններ(ը)*
Բ.	*գ՛իշութէնէն*	*գ՛իշութէններէն*
Գ.	*գ՛իշութէնօվ*	*գ՛իշութէններօվ*

Յիրիգուն և gօրեգ բառերը իրրև ժամանակի անուններ թևև ենթարկվում են -վա հոլովման, բայց կարող են հոլովվել նաև այս հոլովմամբ յիրիգուն, յիրիգուբաց, gօրեգ-gօրեգուբան:

Յորերորդ հոլովում

Այս հոլովման ենթարկվում են այն գոյականները կամ գոյականաբար գործածված բառերը, որոնք հոգնակի սեռակցնում ստանում են g հոլովիչը: Իրանք հոգնակի ուղղականում անպայման ունեն ք: Յորերորդ հոլովումը հանդես է գալիս միայն հոգնակի թվում և բաժանվում է երկու խմբի: Առաջին խմբին պատկանում են այն գոյականները, որոնք ուղղականում ունեն -էք, -իք, -վրդիք, -դիք վերջավորությունները, ինչպես՝ գինիք-գինոց, կընգդիք-կընգդոց, արդիք-արդոց և այլն. Մյուս հոլովումների մասին խոսելիս դուրս չենք գար խոսել ենք այս խմբի մասին: Երկրորդ խմբին պատկանում են այն գոյականները, որոնք վերջավորվում են -անք, -օնք, -էնք հոգնակի, մասամբ և հավաքական իմաստ պարունակող մասնիկներով: Այս խմբի հոլովումը կատարվում է հետևյալ կերպ՝ ուղղականի ք-ն սեռականում փոխարինվում է g-ով և պահպանվում մյուս հոլովներում. օրինակ՝

Ուղ.	Պաբօնք	քէռանք	Մարգօչէնք
Ս.	Պաբօնց	քէռանց	Մարգօչէնց
Տ.	Պաբօնց	քէռանց	Մարգօչէնց
Հ.	Պաբօնց	քէռանց	Մարգօչէնց
Բ.	Պաբօնցէն	քէռանցէն	Մարգօչէնցէն
Գ.	Պաբօնցօվ	քէռանցօվ	Մարգօչէնցօվ

7-րդ հոլովման երկրորդ խմբի նման են հոլովվում նաև gուցական և իրրև առարկան հանդես եկող մի քանի դերանուններ, ինչպես՝ իսօնք-իսօնց, ձ'էրօնք-ձ'էրօնց, մէրօնք-մէրօնց:

Հոլովումներից ամենատարածվածը և գործածականը առաջին հոլովումն է, մյուս հոլովումներին պատկանող շատ բառեր հաճախ ենթարկվում են այդ հոլովման: Կարնո, Ախալցխեի, Ախալքալաքի խոսվածքներում սեռական հոլովը ստանում է ն հոդը (Պօզօսին հարսը, սեզանին վրա). Լենինականի խոսվածքում սեռականը այժմ հոդ չի ստանում, որը պետք է բացատրել ում ճյուղի բարբառների և գրական լեզվի ազդեցությամբ: Բարբառս

յունի այլաձև կամ արտույղ հոլովումներ, եթե նկատի չունենանք ը-ով վերջացող բառերը, որոնք ենթարկվում են գրաբարախառն հոլովման, և մի քանի դարձվածքներում ու ասույթներում գործածվող գրաբարյան հոլովաձևերը (խըմօզաց, հիշօզաց, մօրուց, լըսօզաց, առաջուց, հիմիգուց), որոնք մասնակի բնույթ են կրում:

Շեշտափոխության հետևանքով բարբառիս նախաշեշտ ձայնավորները հնչյունափոխվում են ը-ի կամ ոչվում: Հնչյունական այդ փոփոխությունները տեղի են ունենում նաև հոլովման ժամանակ. շեշտի տեղափոխության պատճառով հոլովման ժամանակ էլ ձայնավորները կամ ոչվում են կամ հնչյունափոխվում, օր. պառավ -պառվի-պառվընէր, քուր-քըրօջ, գըլօխ-գըլխի և այլն:

Այս ընդհանուր կանոնից բացառություն են կազմում ա, է ձայնավորներով կազմված միավանկ բառերը (ծառ, փէդ, քար, ձէն, բան) և ի-ով վերջավորվող միավանկ բառերը (ձի, դի)[1]:

Մեղրու բարբառ.—Ունի վեց կանոնավոր հոլովում և ութ անկանոն հոլովում՝ հետևյալ ձևով:

Առաջին հոլովում

Այս հոլովման եզակի սեռականի և տրականի վերջավորությունն է -ու, իւ, բացառականը՝ -է (կամ -էնից հետագրությունը), գործիականը՝ -ավ, ով, ներգոյականը՝ -ամ, ոմ: Դրանցից ու, ավ, ամ վերջավորություններն ստանում են ծանր ձայնավորով բառերը, իւ, -ով, -ոմ վերջավորությունները՝ թեթև ձայնավորով բառերը: բացառականը երկու կարգի բառերի համար էլ ունի միևնույն վերջավորությունը:

ա) Ծանր ձայնավորներով

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	սար	կաքավ	սարար,	կաքավնէ՛
Սեռ.	սարու	կաքավու	սարէ՛րու	կաքավնէրու
Տր.	սարու	կաքավու	սարէ՛րու	կաքավնէրու

1 Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, էջ 47—54, որից քաղված է առանց փոփոխության:

Հայց.	սար	կաքավ	սարար	կաքավնէ,
Բաց.	սարէ	կաքաւէ	սարէ՛րէ	կաքավնէ՛րէ
	սարու	կաքաւու	սարէ՛րու	կաքավնէրու
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից[1]	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	սարավ	կաքաւավ	սարէ՛րավ	կաքավնէ՛րավ
Ներգ.	սարամ	կաքաւամ	սարէ՛րամ	կաքավնէ՛րամ

բ) Թեթև ձայնավորներով

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	բիւթ	բիւժիւժ	բիւթար	բիւժիւժնէ
Սեռ.	բիւթի	բիւժիւժի	բիւթէրու	բիւժիւժնէրու
Տր.	բիւթի	բիւժիւժի	բիւթէրու	բիւժիւժնէրու
Հայց.	բիւթ	բիւժիւժ	բիւթար	բիւժիւժնէ
Բաց.	բիւթէ	բիւժիւժէ	բիւթէրէ	բիւժիւժնէրէ
	բիւթի	բիւժիւժի	բիւթէրու	բիւժիւժնէրու
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	բիւթով	բիւժիւժով	բիւթէրով	բիւժիւժնէրով
Ներգ.	բիւթում	բիւժիւժում	բիւթէրում	բիւժիւժնէրում

Այս հոլովման ենթարկվում են բաղաձայնով վերջացող գրեթե բոլոր թե միավանկ, թե բազմավանկ բառերը, հոլովվող դերբայները, բացի ենթակայականից, այլև՝ բաղաձայնով վերջացող տեղանուններ։

Ծանոթություն 1.— Որևէից լինելը ցույց ավող -եցի, -ցի (<եցի, ցի) մասնիկներով կազմված բառերը եզակիում ենթարկվում են այս, իսկ հոգնակիում՝ դրա բարձև հոլովման. այդ բառերի հոգնակի ուղղականի մասնիկն է ք՛, սեռ. և տր. -օց. թե եզակի, և թե հոգնակի բացառականն, գործիականն և ներգոյականն հոլովները կազմվում են հետադրություններով. եզակի սեռականում ու տրականում ու վերջավորությունից առաջ վերջահանգ է, ի ձայնավորներն ընկնում են, ինչպես՝ մեղրեցի>մըղրէցէ, սեռ. և տր. մըղրէցու, հայց. մըղրէցու, բաց. մըղրէցու (ն, հ)էնից, գործ. մըղրէցու (ն, հ)էնավ, ներգ. մըղրէցու (ն, հ)էնամ կամ մանջին, հգն. ուղղ. մըղրեցէք՛, սեռ.-տր. և հայց. մըղրէցօց, բաց. մըղրէցօց էնից, գործ. մըղրեցօց էնավ, ներգ. մըղրէցօց էնամ կամ մանջին և այլն։

Ծանոթություն 2.—Որովհետև հոգնակիում հոլովական վերջավորություններից առաջ գանվող -եր, -ներ հոգնակի մասնիկների ձայնավորը ծանր է, ուստի և այս հոլովման (ինչպես և բոլոր այն հոլովումների, որոնք սառանում են -ար, ներ) հոգնակի թվում թեթև վերջավորություններ (-իւ, -ավ, -ամ) լինել չեն կարող։

Ծանոթություն 3.—Եզակիում թեթև վերջավորություններ սառանում են ոչ միայն այն բառերը, որոնց վերջնավանկի ձայնավորը թեթև է, այլև այն բառերը, որոնք վերջանում են ք՛, կ՛, ք՛ քմայնացածներով, անկախ նրանց ձայնավորի աստիճանից. ինչպես՝ ձագ>ձէգ՛, սեռ. և տր. ձէգ՛իւ, բաց. ձէգ՛է, գործ. ձէգ՛ավ, ներգ. ձէգ՛ամ, հգն. ուղղ. ձէգ՛եր. ձեռք>ձիք՛, սեռ. և տր. ձիք՛իւ, բաց. ձիք՛է, գործ. ձիք՛ավ, ներգ. ձիք՛ամ, հգն. ուղղ. ձիք՛եր. պէտք>պէտկ՛, սեռ. և տր. պէտկ՛իւ, բաց. պէտկ՛է, գործ. պէտկ՛ավ և այլն։

Ծանոթություն 4.—Միավանկ բառերի եզակի բոլոր հոլովներում և հոգնակի ուղղական-հայցականում շեշտն ընկնում է բառի անփական ձայնավորի վրա, իսկ հոգնակի մյուս հոլովներում՝ -եր մասնիկի վրա. դրա հետևանքով, բակայն, բառի շեշտակորույս ձայնավորը որևէ փոփոխության չի ենթարկվում, բացի մի քանի բառերից։

Ծանոթություն 5.—Բազմավանկ բառերի բոլոր հոլովներում, բացի հոգնակի ուղղական-հայցականից, շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա, իսկ հոգնակի ուղղական և հայցականում -ներ մասնիկի վրա (վերջին վանկ), որի ժամանակ, նույնպես, շեշտակորույս ձայնավորները ը կամ ի՝-ի չեն վերածվում։

Ծանոթություն 6.—Եթե բազմավանկ բառերի թեք հոլովներում շեշտի տակ է ընկնում բ, գ, դ, ջ, զ, ժ, շ, լ, ճ, չ հնչյուններից որևէ մեկից հետո գոնվող ա կամ ո ձայնավորը, ապա նա դառնում է ի, իսկ նրա-

[1] *Ինչպես այստեղ, այնպես էլ մյուս բոլոր օրինակներում բացառական հետադրավոր ձևերի համար, փակագծում դրված են (ն, հ), ցույց տալու համար, որ կարող է լինել ինչից՝ անորոշ լինելու դեպքում, և էնից, որոշյալ լինելու դեպքում։*

նից առաջ գոնվող է, ի ձայնավորները՝ ի՝. ինչպես՝ բամբակ>բէմբակ, սեռ. և տր. բի՝մբէ՛կու, բաց. բի՝մբէկէ, շալակ>շէ՛լակ, սեռ. և տր. շի՝լէկու, բաց. շի՝լէկէ, դադար>դէգար, սեռ. դի՝գէրու, բաց. դի՝գէրէ, բանջար>բէ՛նջար, սեռ. և տր. բի՝նջէրու, բաց. բի՝նջէրէ, գագաթն>գէ՛գմթ, սեռ. և տր. գի՝գէ՛թու, բաց. գի՝գէ՛թէ և այլն։

Այսպես և՝ գործիական ու ներգոյական հոլովներում։ Որձակ>իւրձակ բառում իւ-ն, շեշտից առաջ ընկնելով, ի՝ չի դառնում, այլ ՅԻւում է իւ, ինչպես՝ իւրձէկու, իւրձէկի, իւրձէկով, իւրձէկում։ Նույն բառերը հոգնակի բոլոր հոլովներում շեշտը տալով -ներ, -ներ մասնիկին (վերջին կամ վերջընթեր վանկ), իրենք անփոփոխ են ՅԻում. ինչպես՝ բէմբակնէ «բամբակներ», բէմբակնէրու, շէլակնէ «շալակներ», շէլակնէրու, իւրձակնէ «որձակներ», իւրձակնէրու և այլն։ Որովհետև եզակի թեք հոլովներում հոլովական մասնիկին նախորդող վանկի ձայնավորը այդ կարգի բառերում ծանր է (է), ուստի և անխզելիր ծանր վերջավորություններ են առանում նաև այն բառերը, որոնք ուղղական հոլովի վերջավանկում ունեն թեթև ձայնավոր (ա). ինչպես՝ գագաթն>գէ՛գմթ, գի՝նգէ՛թու, գի՝գէ՛թով, զանգակ>զի՝նգմկ, գի՝նգէ՛կու, գի՝նգէ՛կով, *խորխանդակ>խըրխանդակ «խորդուբորդություն», խըրխի՝նդէկու, խըրխի՝նդէկով և այլն։

Ծ ա ն ո թ ա ց ո ւ թ յ ո ւ ն 7. —էնչ վերջացող բառերը, որոնց է-ն առացվել է ա-ից, եզակի սեռական, տրական, բացառական, գործիական ու ներգոյական հոլովներում շեշտի տակ գցելով էնչ վանկը, վերականգնում են իրենց նախնական ա ձայնավորը. ինչպես, ճանապ>ճանէ՛նչ, սեռ. և տր. ճանա՛նչու, բաց. ճանա՛նչէ, գործ. ճանա՛նչով, ներգ. ճանա՛նչում. կանաչ>կանէ՛նչ, սեռ. և տր. կանա՛նչու, բաց. կանա՛նչէ, գործ. կանա՛նչով, ներգ. կանա՛նչում և այլն։ Եզակի ուղղական-հայցականում և ամբողջ հոգնակիում էնչ վանկը, լինելով շեշտից հետո կամ առաջ, ՅԻում է անփոփոխ. ինչպես՝ կանէ՛նչ, հգն. ուղղ. կանէ՛նչէ, սեռ. կանէ՛նչէրու և այլն։ Ջամիչ>չօմէ՛նչ բառն այս օրենքին չի ենթարկվում, այլ բոլոր դեպքերում էլ պահպանում է իր է ձայնավորը. ինչպես՝ չօմէ՛նչու, չօմէ՛նչով, չօմէ՛նչէ, չօմէ՛նչնէ, չօմէ՛նչնէրու և այլն։ Ի դեպ, այս բացառությունը

առացված լինելով եզակի ուղղական-հայցականի ու հոգնակիի ազդեցությամբ՝ համաբանության շնորհիվ, ցույց է տալիս միաժամանակ, որ այլևս չի գիտակցվում, թե այդ բառի է-ն առացվել է ա ձայնավորից. դրան առիթ է հանդիսացել հատկապես բառի շատ փոփոխված լինելը՝ չամուչ>չումաչ>չօմանչ>չօմէ՛նչ, որի շնորհիվ էլ չօմէ՛նչ ձևն իշխել է եզ. թեք հոլովներում, հակառակ գոյություն ունեցող կանոնի։

Ծ ա ն ո թ ա ց ո ւ թ յ ո ւ ն 8.—Երկրորդ եզրում միավանկ բառ ունեցող այն բարդությունները, որոնց հոգնակին կազմվում է -ար, -եր մասնիկներով, բացի եզ. ուղղական ու հայցական հոլովներից, մյուս բոլոր ձևերում շեշտը փոխադրելով վերջընթեր վանկը, նրանից առաջ եղած ձայնավորները դարձնում են ը կամ ի՝. ինչպես՝ աքաղաղ>հրքաղաղ, սեռ. հրքըղաղու, բաց. հրքըղաղէ, հգն. ուղղ. հրքըղաղար, սեռ. հրքըղաղէրու. *որձաբան>հրըմարէն, սեռ. հրըմրըէնու, բաց. հրըմրըէնէ, հգն. ուղղ. հրըմրըէնար, սեռ. հրըմրըէնէրու, բաց. հրըմրըէնէրէ. ձեռքաշոր>ձիքըշիւրթ, սեռ. ձիքի՝շիւրթու, բաց. ձիքի՝շիւրթէ, հգն. ուղղ. ձիքի՝շիւրթեր, սեռ. ձիքի՝շի՝րթէրու, բաց. ձիքի՝շի՝րթէրէ և այլն։ Հոգնակյալը դառնում է ը կամ ի՝ բարդության առաջին եզրի ձայնավորի ներդաշնակությամբ, իսկ երկրորդ եզրի ձայնավորը՝ եթե թեթև է, դառնում է ի՝, եթե ծանր է, դառնում է ը. ինչպես՝ ակնալոյս>ընկնալիւս, սեռ. ընկնըլիւսու, հգն. սեռ. ընկնըլի՝սէրու, սևաւոդ>սրվահուդ, սեռ. սրվըհուդու. հգն. սեռ. սրվըհըդէրու և այլն։ Պետք է ասել, սակայն, որ այս օրենքը այնքան էլ խստությամբ չի պահպանվում. հաճախ կարելի է լսել նաև ձիքըշիւրթու, ձիքըշիւրթէրու, ձիքըրէն, ձիքըրէնու, ձիքըրէնէրու և այլն, առանց նախաշեշտ ձայնավորների փոփոխության։

Ծ ա ն ո թ ա ց ո ւ թ յ ո ւ ն 9.—Այն միավանկ բառերը, որոնք ունենալով ու, օ, իւ, էօ ձայնավորները՝ առացված գրաբարյան ու-ից, հոգնակին կազմում են -եր մասնիկով, բացի եզակի ուղղական ու հայցականից, մյուս բոլոր ձևերում շեշտը փոխադրում են մասնիկների վրա (եզակի թեք հոլովներում՝ վերջին վանկ, հոգնակիում՝ վերջին կամ վերջընթեր վանկ՝ -եր մասնիկի վրա), և, դրա հետևանքով

էլ՝ բառի սեփական ու, օ, իւ, եօ ձայնավորները վերածում ը-ի. ինչպես՝ դուրք>դուրք, սեռ. դրրքու, բաց. դրրքէ, հգն. ուղղ. դրրքէր կամ դրրքարէ, սեռ. դրրքէրու, բաց. դրրքէրէ. թուշ>թօշ, սեռ. թըշու, բաց. թըշէ, հգն. ուղղ. թըշէր, սեռ. թըշէրու, բաց. թըշէրէ. ջուր>ջիւր, սեռ. ջըրու (նաև՝ ջի՛րիւ), բաց. ջըրէ, հգն. ուղղ. ջըրէր, սեռ. ջըրէրու, բաց. ջըրէրէ. թուզ>թէօզ, սեռ. թըզու, բաց. թըզէ. հգն. ուղղ. թըզէր, սեռ. թըզէրու, բաց. թըզէրէ և այլն:

Դրանց հակառակ, մի խումբ բառեր հաճախ եզակիում գործածվում են նաև առանց հնչյունափոխության. այդ բառերն են՝ թումբ>թօմբ, սեռ. թըմբու կամ թօմբու. հունձ>հօնձ, սեռ. հընձու կամ հօնձու, թուխս>թօխս, սեռ. թըխսու կամ թօխսու. թուղթ>թօխտ, սեռ. թըխտու կամ թօխտու. փուքս>փօսկ, սեռ. փօսկու (միայն): Հոգնակին կանոնավոր է, բացի փօսկ բառից, որ լինում է փոսկար, փօսկէրու, փօսկէրէ և այլն:

Ծանոթություն 10.—Գլուխ>գըլօխ, կտուր>կըտօր, պտուղ>պըտօղ, պտուկ>պըտօկ բառերի սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներում օ ձայնավորը, շեշտից առաջ ընկնելով, բոլորովին կորչում է. ինչպես՝ սեռ.-տր. գըլխու, կըտրու, պըտղու, պըթկու, բաց. գըլխէ, պըթկէ, կըտրէ, պըտղէ, գործ. գըլխով, կըտրով, պըտղով, պըթկով, ներգ. գըլխում, կըտրում, պըտղում, պըթկում: Հոգնակի ուղղական ու հայցական հոլովներում, թեև դարձյալ շեշտից առաջ, մնում է անփոփոխ. գըլօխնէ, կըտօրնէ (նաև՝ կըտըրնէ), պըտօղնէ, պըտօկնէ. հոգնակի մյուս հոլովներում դառնում է ը, ինչպես՝ սեռ.-տր. գըլըխներու, կըտըրներու, պըտըղներու, պըտըկներու, բաց. գըլըխներէ, կըտըրներէ, պըտըղներէ, պըտըկներէ և այլն:

Մնացած բազմավանկ բառերը, որոնք ունեն ու-ից բուսացված օ ձայնավորը, հոլովաձևերում էլ անփոփոխ են մնում. ինչպես՝ դեղնուց>դըղնօց, սեռ. դըղնօցու, հգն. դըղնօցնէ, սեռ. դըղնօցներու. թրթուռ>թըռթօռ, սեռ. թըռթօռու, հգն. թըռթօռնէ, սեռ. թըռթօռներու. կչկուռ>քըշկօռ «հանգույց», սեռ. քըշկօռու, հգն. քըշկօռնէ, սեռ. քըշկօռներու և այլն: Այս կանոնը և նախորդ ծանոթության մեջ հիշված բացառությունները ցույց են տալիս,

որ այլևս չի գիտակցվում օ>ու փոփոխությունը և համաբանության շնորհիվ ջնջվում է արգելն գրաբարյան ու-ի սղումը, պահպանելով նրանից առացված օ ձայնավորը:

Ծանոթություն 11.—Եթե գրաբարյան մեկհնգավանկի բառերի վերջավանկի ը-ն բարբառում դարձել է ու, հոլովման ժամանակ եզակի թեք հոլովներում բոլորովին սղվում է. ինչպես՝ քաղցր>քօխցու, սեռ. քօխցրու, բաց. քօխցրէ. մուկն>մօկուն, սեռ. մօկնու, բաց. մօկնէ. ծունկն>ծօնգուն, սեռ. ծօնգնու, բաց. ծօնգնէ. ձուկն>ձօկուն, սեռ. ձօկնու, բաց. ձօկնէ և այլն: Վերջին երեք բառերն ունեն նաև մըկնու, ծընգնու, ձըկնու ձևերը: Հոգնակի բոլոր հոլովներում էլ այդ բառերն անփոփոխ կերպով պահպանում են իրենց ձայնավորները. ինչպես՝ քօխցուրնէ, քօխցուրնէրու, ձօկունէ, ձօկուննէրու և այլն:

Ծանոթություն 12.—Եթե բազմավանկ բառերում կա ու ձայնավոր՝ առացված գրաբարյան ու կամ ո-ից, հոլովման ժամանակ անփոփոխ է մնում. ինչպես՝ կարկուտ>կարկուտ, սեռ. կարկուտու, հնգ. ուղղ. կարկուտնէ, սեռ. կարկուտներու. կոծոխուր>կըծուխուր, սեռ. կըծուխուրու, հգն. ուղղ. կըծուխուրնէ, սեռ. կըծուխուրներու. մուծակ>մուծակ, սեռ. մուծակու, հգն. ուղղ. մուծակնէ, սեռ. մուծակներու. աթոռ>աթուռ, սեռ. աթուռու, հգն. ուղղ. աթուռնէ, սեռ. աթուռներու. սապոն>սուպուն, սեռ. սուպունու, հգն. ուղղ. սուպուննէ, սեռ. սուպուննէրու և այլն:

Ծանոթություն 13.—Եթե բառում շեշտից հետո կա ու ձայնավորը՝ առացված գրաբարյան օ-ից, ապա հոլովման ժամանակ, բացի եզակի ուղղականից ու հայցականից, մյուս բոլոր հոլովաձևերում նորից դառնում է օ. ինչպես՝ ծանօթ>ծանութ, սեռ. ծանօթու, հգն. ուղղ. ծանօթնէ, սեռ. ծանօթներու. ազօթք>ազութկ, սեռ. ազօթկու, հգն. ուղղ. ազօթկնէ, սեռ. ազօթկներու և այլն: Եթե օ-ից առացված ու-ն եզակի ուղղականում շեշտի տակ է, ապա հոլովման ժամանակ բոլոր ձևերում էլ մնում է ու. ինչպես՝ գօտի>գուտէ, սեռ. գուտէ կամ գուտու, գործ. գուտով և այլն:

Ծանոթություն 14.—Միավանկ ու բազմավանկ բառերի շեշտված է, ըե, ի՝ ձայնավորները՝ առացված գրաբարյան ի-ից, բացի եզակի ուղղական ու հայցականից, մյուս

բոլոր ձևերում վերածվում են ը-ի, իսկ շեշտն անցնում է դրանց հաջորդող վանկին (բազմավանկների հոգնակիում՝ միշտ -ներ(ը) մասնիկի վրա), ինչպես՝ սիրա>սէրտ, սեռ. սրտու, հգն. ուղղ. սրտէր, սեռ. սրտերու. ծիա>ծըէա, սեռ. ծըէու, հգն. ուղղ. ծըտէր, ծըտէրու. ծիծ>ծըէծ, սեռ. ծըծու, հգն. ուղղ. ծըծէր, սեռ. ծըծէրու. սիսեռն>սըէսեռնը, սեռ. սըսէռնու, հգն. ուղղ. սըսէռնէ, սեռ. սըսէռներու. բիբ>բիբ, բըբու, հգն. ուղղ. բըբէր, սեռ. բըբէրու և այլն. Բացառություն է կազմում միայն նիգ>լէնգ՛ բառը, որ ամեն՝ ձևում էլ պահպանվում է նույնությամբ, փոփոխված լինելու և նախաձևի չգիտակցվելու պատճառով:

Ծանոթություն 15.— Երկրորդ եզրում միավանկ բառ ունեցող բարդությունները, որոնք հոգնակին կազմում են -եր մասնիկով, բացի եզակի ուղղական ու հայցական հոլովներից, մյուս հոլովաձևերում շեշտը փոխադրում են մասնիկների վրա (եզակիում հոլովական վերջավորության, իսկ հոգնակիում -եր մասնիկի վրա), իսկ նրանից առաջ եղած ձայնավորները դարձնում ը կամ ի՝, ինչպես՝ ջրածիա>ջըրածըէա, սեռ. ջրածըէու, հգն. ուղղ. ջրածըէներ. *սպիտակաուտա>սըպտրկաուտա (սպիտակ սուտ «բացահայտ ստություն»), սեռ. սըպտրկըսուտու, հգն. ուղղ. սըպտրկըսուտներ, սեռ. սըպտրկըսուտներու. ապրիլաջուր>բիպըրջիւր, սեռ. բիպըրըջի՛բիւ, հգն. ուղղ. բիպըրըջի՛բէր, սեռ. բիպըրըջի՛բերու և այլն: Դառնում են ը, երբ անմիջապես հաջորդում են երկու բաղաձայն (շեշտը՝ վերջավորության վրա). ինչպես՝ նարինջ>նարէնջ, սեռ. նարընջու, բաց. նարընջէ, գործ. նարընջով, ներգ. նարընջում. Թրիք>Թըլէնք՛, սեռ. Թըլընքու, բաց. Թըլընքէ, գործ. Թըլընքով, ներգ. Թըլընքում. անսիրտ>անսէրտ, սեռ. անսրտու, բաց. անսրտէ, գործ. անսրտով, ներգ. անսրտում. անրիծք>անրէսկ «մեռելի վրա կատարվող ազոթք» սեռ. անրըսկու, բաց. անրըսկէ, գործ. անրըսկով, ներգ. անրըսկում և այլն: Բոլորովին կորչում է, երբ նրան հաջորդում է միայն մեկ բաղաձայն (շեշտը՝ իրենից առաջ), ինչպես՝ պանիր>պանէր, սեռ. պանրու, բաց. պանրէ, գործ. պանրով, ներգ. պանրում. կացին>կացէն, սեռ. կացնու, բաց. կացնէ, գործ. կացնով, ներգ. կացնում. մոխիր>մուխէր, սեռ. մուխրու, բաց. մուխրէ, գործ. մուխրով, ներգ.

մուխրում և այլն: Հոգնակի բոլոր հոլովներում է-ն ձևում է անփոփոխ, թեև շեշտը դարձյալ ընկնում է նրան հաջորդող վանկի՝ -ենէ, -ենէր մասնիկի վրա, ինչպես՝ նարէնջնէ, նարէնջներու, կացէննէ, կացէննէրու և այլն:

Ծանոթություն 17.—Ձայնավորների վերոհիշյալ պատճառների հետևանքով (ծան. 8, 9, 10, 14, 15).

ա) եթե գ՛, կ՛, բ՛ քմայնացածներն ընկնում են ը ձայնավորից կամ որևէ բաղաձայնից առաջ, ապա՝ վերածվում են սովորական գ, կ, ք-ի, ինչպես՝ դինգ>դէնգ՛, սեռ. դընգու, բաց. դընգէ. փրցլինք>փրսլէնք՛, սեռ. փրսլընքու, բաց. փսլընքէ, մխոք>մէքի՛, սեռ. մքիկու, բաց. մքիկէ և այլն:

բ) եթե ձայնավորով իրարից բաժանված տ և կ կամ գ և կ հնչյունները սղման հետևանքով մոտենում են իրար, ապա վեր են ածվում թկ խմբի. ինչպես՝ կոտաիկ>կուտէկ, սեռ. կուտիկու, բաց. կուտիկէ, պտուկ>պըթօկ, սեռ. պըթիկու, բաց. պըթիկէ. զատիկ>զէդէկ, սեռ. զէթիկու, բաց. զէթիկէ.

գ) եթե ձայնավորով իրարից բաժանված ծ և կ հնչյունները մոտենում են իրար, ապա վերածվում են զկ խմբի. ինչպես՝ ածիկ>ածէկ «Քոնդին խփված խմորագնդից թափված կտորտանքը», սեռ. ազկու, բաց. ազկէ. կծիկ>կըծքէկ, սեռ. կըզկու (նաև՝ կըծկու), բաց. կըզկէ կամ կըծկէ. կուժիկ<կուժէկ, սեռ. կուզկու, բաց. կուզկէ.

դ) Նույն պարագաներում ցկ դառնում են սկ, օր. խեցիկ>խէցէկ (սեռ. խէսկու, բաց. խէսկէ) և՝ ղկ>խկ ծաղիկ >ծաղէկ (սեռ. ծախկու, բաց. ծախկէ) բառերում:

Ծանոթություն 18.— Անորոշ դերբայում -իլ վերջավորությունն ունեցող այն բայերը, որոնք անկատար դերբայում ունենում են -ես վերջավորությունը, անորոշ դերբայի հոլովման ժամանակ իրենց ի-ն շեշտի տակ դարձնում են է, իսկ նրանցից առաջ եղած ձայնավորները ը. ինչպես՝ մանրել>մանդիլ, սեռ. մընդէլու, բաց. մընդէլէ, գործ. մընդէլով, ներգ. մընդէլում. խօսել>խօսիլ, սեռ. խոսէլու, բաց. խոսէլէ, գործ. խոսէլով, ներգ. խոսէլում և այլն:

Այն բայերը, որոնք անորոշում ունենալով -իլ, անկատար դերբայում ունենում են -իս, հոլովման ժամանակ ի-ն պահում են անփոփոխ, իսկ նրանից առաջ եղած ձայ-

նավօրները դարձնում ի՝, ինչպես՝ սիրել>սէրիլ, սեռ. սի՝րիլու, բաց. սի՝րիլէ, գործ. սի՝րիլով, ներգ. սի՝րիլում, բերել>բիրիլ, սեռ. բի՝րիլու, բաց. բի՝րիլէ, գործ. բի՝րիլով, ներգ. բի՝րիլում և այլն։ Եթե ի-ին նախորդող ձայնավորն է ու, ապա միւում է անփոփոխ, ինչպես՝ կոփել>կուփիլ «խփել», սեռ. կուփիլու, բաց. կուփիլէ, գործ. կուփիլով, ներգ. կուփիլում և այլն։ -ալ, և -ել վերջավորութեամբ բայերի մէջ հենց ուղղականում էլ շեշտը -ալ, -ել վերջավորութեան վրա է, և հոլովման ժամանակ բնականաբար որևէ փոփոխութեան չեն ենթարկվում։

Որովհետև բայերի անորոշ դերբայից -ենք վերջավորութեամբ կազմվում է մի նոր դերբայ, ուսոտի և անորոշ բայականը գրեթե միշտ կազմվում է նախդրավոր ձևով՝ ինչպես՝ մընդէլու (ն, հ)էնից, խըսէլու (ն, հ)էնից, բի՝րիլու (ն, հ)էնից և այլն։

Առաջին հոլովման են ենթարկվում նաև -օթիւն, էօթիւն մասնիկով բայերը, հետևյալ ձևով.

Եզակի

Ուղղ.	գըղօթիւն	բի՝ծրէօթիւն
	«գողություն»	«բարձրություն»
Սեռ.	գըղըթուննու	բի՝ծրի՝թիւննիւ
Տր.	գըղըթուննու	բի՝ծրի՝թիւննիւ
Հայց.	գըղօթիւն	բի՝ծրէօթիւն
Բաց.	գըղըթուննէ	բի՝ծրի՝թիւննէ
	գըղըթուննու (ն, հ)էնից	բի՝ծրի՝թիւննիւ (ն, հ)էնից
Գործ.	գըղըթուննով	բի՝ծրի՝թիւննով
Ներգ.	գըղըթուննում	բի՝ծրի՝թիւննում

Հոգնակի

Ուղղ.	գըղօթիննէ	բի՝ծրէօթիննէ
Սեռ.	գըղօթիննէրու	բի՝ծրէօթիննէրու
Տր.	գըղօթիննէրու	բի՝ծրէօթիննէրու
Հայց.	գըղօթիննէ	բի՝ծրէօթիննէ
Բաց.	գըղօթիննէրէ	բի՝ծրէօթիննէրէ
Գործ.	գըղօթիննէրու (ն, հ)էնից	բի՝ծրէօթիննէրու (ն, հ)էնից
Ներգ.	գըղօթիննէրով գըղօթիննէրում	բի՝ծրէօթիննէրով բի՝ծրէօթիննէրում

Ծանոթություն 1.— Իրրև կանոն, եզակի թվում -օթիւն վերջավորությունը սկսած սեռականից՝ դառնում է -ըթուն (ու) և այդպես հոլովվում ծանր ձայնավորներով, իսկ հօթիւն վերջավորությունը դառնում է ի՝թիւն (իւ) և հոլովվում թեթև ձայնավորներով. հոգնակի թվում երկուսն էլ հոլովվում են միատեսակ, իսկ շեշտի փոփոխությունը ձայնավորների ազում չի առաջացնում։

Ծանոթություն 2.— Այս կարգի բառերի հոգնակի սեռականը, արականը և ենից հետադրությամբ բացառականը հաճախ կազմվում են -ենու(ն) վերջավորությամբ, առանց -եր մասնիկի. այդ դեպքում բառը ենթարկվում է նույն հնչյունափոխությունների, ինչ որ եզակիում. ինչպես՝ գողութիւն>գըղօթիւն, հգն. ուղղ. գըղօթիննէ, սեռ. տր. գըղըթուննենու, բաց. գըղըթուննենու (ն, հ)էնից. բարձրութիւն>բի՝ծրէօթիւն, հգն. ուղղ. բի՝ծրէօթիննէ, սեռ. տր. բի՝ծրի՝թիւննենիւ, բաց. բի՝ծրի՝թիւննենիւ (ն, հ)էնից և այլն։ Ի դեպ, այս ձևերը հիանալի կերպով ապացուցում են, որ ուղղականի -ենք մասնիկն առացվել է -ենի-ից, իսկ թեք հոլովների -եներ-ը<ենեար-ից. դրան հակառակ, -ութիւն>օթիւն ‖ էօթիւն մասնիկով բառերը թեք հոլովներում ենեար>-եներ մասնիկին զուգընթաց պահպանում են նաև -ենի>ենէ մասնիկը, որ հոլովական վերջավորության ձայնավորից առաջ կորցնելով ի>է-ն (ինչպես բոլոր ի, է վերջացող բառերն են կորցնում իրենց վերջահանգ ձայնավորները), ձեացել է միայն -ն։

Երկրորդ հոլովում

Այս հոլովման սեռ. տր. բաց. հոլովների վերջավորությունն է է, գործ. -ար ‖ -ավ, բաց. -ամ ‖ -մամ։

Եզակի

Ուղղ.	քէռա «քեռի»	կուրէ «կոր, ակոս»	հօսի «ուռենի»
Սեռ.	քէռէ(ն)	կուրէ(ն)	հօսէ(ն)
Տր.	քէռէ(ն)	կուրէ(ն)	հօսէ(ն)
Հայց.	քէռէ(ն)	կուրէ	հօսի
Բաց.	քէռէ(ն) քէռէ (ն, հ)էնից	կուրէ(ն) կուրէ (ն, հ)էնից	(հօսու ծառէ)
Գործ.	քէռավ	կուրավ	(հօսու ծառավ)
Ներգ.	(քէռամ) քէռէ մանջին	կուրամ	(հօսու ծառամ)

Հոգնակի

Ուղղ.	քեռէք՛	կուրէք՛	հօրիք՛
Սեռ.	քեռէնէրու	կուրէներու	հօրինէրու
Տր.	քեռէնէրու	կուրէնէրու	հօրինէրու
Հայց.	քեռէնէրէ	կուրէք՛	հօրիք՛
Բաց.	քեռէնէրու	կուրէնէրէ	հօրինէրէ
	քեռէնէրու	կուրէնէրու	հօրինէրու
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	քեռէնէրով	կուրէնէրով	հօրինէրով
Ներգ.	(քեռէնէրում)	կուրէնէրում	հօրինէրում

քեռէնէրու մանջին

Այս հոլովման ենթարկվում են ա, է, ի ձայնավորներով վերջացող բառերը, բացի ձի, թէ, վրկա, տըղա բառերից, համառուկ անուններից, թեկուզ ա, է, ի-ով վերջացող, այս հոլովման չեն ենթարկվում:

Ծանոթություն 1.— Եթե վերջանգ ա, է, ի ձայնավորներին նախորդող վանկի ձայնավորը թեթև է, ապա եզ. գործիական հոլովում առանում են ավ, իսկ ներգոյականում՝ ամ վերջավորությունը. ինչպես՝ ջորի>ջիւրէ, գործ. ջիւրով, ներգ. ջիւրում. այգի>իջի, գործ. իջով, ներգ. իջում. գիւղա «գնդակ», գործ. գիւղով, ներգ. գիւղում (նաև խորդող թեթև ձայնավորով ա հանգող հայերեն բառ յուրացնենք) և այլն.

Ծանոթություն 2.— Եզակի սեռ. տր. բաց. հոլովները, նույնիսկ անորոշ լինելու դեպքում էլ. մեծ մասամբ գործածվում են ն հոդով. ինչպես՝ մին ջիւրէն գինի՝ հին ի, հօր «մի ջորու գինն քինչ է, որ»: Այդ, անշուշտ, ուղղական-հայցականի և մյուսների միջև տարբերություն անելու ձգտումից է առաջանում, մանավանդ է վերջացող բառերի համար, որոնք հինգ հոլովում ունեն նույն ձևը.

Ծանոթություն 3.— Ի վերջացող ծառանուններն եզ. բացառական, գործիական ու ներգոյական հոլովները կազմվում են նկարագրական կերպով՝ պատի անվան սեռականից ու ծառ բառի համապատասխան հոլովներից. ինչպես՝ թզ(են)-ի>թըզի, սեռ. թըզէ(ն), բաց. թըզու ծառ (թըզի ծառից), գործ. թըզու ծառավ (թզի ծառով), ներգ. թըզու ծառամ (թըզի ծառում), ընկուզ(են)ի>ընգըզի, սեռ. ընգըզէ(ն), բաց. անգուզու ծառէ, գործ. անգուզու ծառավ, ներգ. անգուզու ծառամ և այլն: Դրա պատճառն այն է, որ հաճախ ծառանունների եզ. բաց. գործ. ներգ. հոլովները ձևով նույնանում են պաղանվան նույն հոլովների հետ, ինչպես՝ թուզ>թէօզ, բաց. թըզէ, գործ. թըզավ, ներգ. թըզամ և թզ(են)ի>թըզի, դարձյալ՝ բաց. (թըզէ), գործ. թըզավ, ներգ. թըզամ և այլն. այդ շփոթությունից խուսափելու համար լեզուն դիմել է նկարագրական միջոցին:

Ծանոթություն 4.— Ա և է վերջացող բառերի հոգնակին ունենում է նաև հետևյալ վերջավորությունները (ուղղ. հայց. էք՛), սեռ. տր. բաց. -էց[1], գործ. -էքով, ներգ. -էքում, ինչպես՝ ուղի>հրդէ, հդն. ուղղ. հրդէք՛, սեռ. տր. հրդէց, բաց. հրդէց (էնից), գործ. հրդէքով, ներգ. հրդէքում. քեռի>քէռա, հդն. ուղղ. քէռէք՛, սեռ. տր. քէռէց (նաև՝ քէռաց), բաց. քէռէյ (էնից), գործ. քեռէքով, ներգ. քէռէքում և այլն. Այս պարագայում բացառականի համար գրեթե միակ գործածականն է հետադրությամբ (ենից) կազմվող ձևը: Գործիականի ու ներգոյականի այս ձևերը սակավ գործածական են, ընդհակառակն՝ սեռական, տրական ու բացառական հոլովները, մի խումբ բառերի համար, ավելի գործածական են, քան -ներու վերջավորությունը. այդ բառերն են. խնամի>խընամէ, հդն. ուղ. խընամէք՛, սեռ. խընամաց. քեռի>քէռա, հդն. ուղղ. քէռէք՛, սեռ. քէռաց. փեսայ>փըէսէ, հդն. ուղղ. փըէսէք՛, սեռ. փըէսէց կամ փըէսաց. կորի>կուրէ, հդն. ուղղ. կուրէք՛, սեռ. կուրէց. մատանի>մրատանէ, հդն. ուղղ. մրատանէք՛, սեռ. մրատանէց. ատաանայ>սրատանէ, հդն. ուղղ. սրատանէք՛, սեռ. սրատանէց. տունկ(ի)>տընգէ, հդն. ուղղ. տընգէք՛, սեռ. տընգէց. երանելի բառի մասին տես ատրև: Ի դեպ ուղի>հրդէ բառի հոգնակի ուղղականին (հրդէք՛) ավելացնելով տր. վերջավորությունը, բառի սեփական ձայնավորի անկմամբ և դք>խ փոփոխությամբ առացվել է հրխկեց ձևը, որ գործածվում է իրրև մակբայ «ճանապարհին» իմաստով:

[1] Սեռականում «ացց» առանում են գերազանցապես ցույց ավող բառերը, ինչ. քեռէ՛ր (քեռիներ և քեռանք), սեռ. քէռաց, խընամէքր սեռ. խնամաց և այլն:

Ծանոթություն 5.— Ի վերջացող բառերը հոգնակի սեռ. տր. բաց. հոլովներում ունենում են -ուց ‖ -իւց վերջավորությունները, ինչպես՝ գինի>գինի, հգն. ուղղ. գինիք, սեռ. տր. գինուց, բաց. գինեւց. ծիրանի>ծի՛րի՛նի, հգն. ուղղ. ծի՛րի՛նիք, սեռ. տր. բաց. ծի՛րի՛նուց. ընկույզ(են)ի>ընգոյզի, հգն. ուղղ. ընգոյզիք, սեռ. տր. բաց. ընգոյզուց. թթ(են)ի>թըթի, հգն. ուղղ. թըթիք, սեռ. տր. բաց. թըթուց և այլն։ Այս վերջավորություններով հոլովվելիս բացառականը սովորաբար ևնից նախադրությամբ չի կազմվում. այդ ձևերը, նույնիսկ, գործածվում են ավելի շատ բացառականի, քան սեռականի ու արականի համար։

Ծանոթություն 6.— Տեղացի ցույց տվող -եցի, -ցի (>եցի, ցի) մասնիկով կազմված բառերը հոգնակի սեռականում, արականում և բացառականում ունեն -օց վերջավորությունը. ինչպես՝ մեղրեցի>մըղրէցէ, հգն. ուղղ. մըղրէցէք, սեռ. տր. մըղրէցօց, բաց. մըղրէցօց (էնից). թևացի>թէյըցի, հգն. ուղղ. թէյըցիք, սեռ. տր. թէյըցօց, բաց. թէյըցօց (էնից) և այլն։ Այդ կարգի բառերը եզակիում գրաբանցյալ հոլովվում են առաջին հոլովմամբ, ինչպես՝ մըղրէցէ, սեռ. մըղրէցու, բաց. մըղրէցու (ն, հ)էնից. թէյըցի, սեռ. թէյըցու, բաց. թէյըցու (ն, հ)էնից և այլն։

Ծանոթություն 7.— Եզակի թեք հոլովներում վերջավորությունից առաջ ա, է, ի ձայնավորները ընկնում են, ինչպես՝ կորի>կուրէ, գործ. կուրաւ, ներգ. կուրամ. քեռի>քէռա, սեռ. քէռէ, գործ. քէռաւ. այդի>իջի, սեռ. իջի, գործ. իջով և այլն։

Ծանոթություն 8.—Շեշտված ի-ով վերջացող բառերի շեշտը, բացի եզակի և հոգնակի ուղղական ու հայցականից, մյուս հոլովաձևերում ընկնում է վերջընթեր վանկի վրա, այնպես որ եզակիում միշտ լինելով բառահիմքում, հոգնակիում փոխադրվում է -ներ մասնիկի վրա. ինչպես՝ ուռի>հօռի, հգն. հօ՛ռիք, բաց. հօ՛ռէ, հգ. սեռ. հօռինէրու և այլն։ Եթե բառի վերջընթեր վանկի ձայնավորն է ը կամ ի՝, ապա եզակի բոլոր հոլովներում էլ շեշտը մնում է վերջավանկում, ինչպես թզ(են)ի>թըզի՛, սեռ. թըզի՛. ծիրանի>ծի՛րի՛նի՛, սեռ. ծի՛րի՛նի՛ և այլն։

Ա և է ձայնավորով հանգող բառերի շեշտը սովորաբար վերջընթեր վանկում է լինում թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում։

Ծանոթություն 9.— Այս հոլովման մեջ էլ սովորաբար շեշտի տեղափոխությունը հնչյունական փոփոխություններ չի առաջացնում։ Պետք է հիշել միայն.

ա) -ի վերջացող այն ծառանունները, որոնց ի-ն ստացված է ի-ց, հոգնակի բոլոր հոլովներում վերականգնում են իրենց նախնական ի ձայնավորը. ինչպես՝ թեղի>թէղէ, հգն. ուղղ. թէղիք, սեռ. թէղինէրու, բաց. թէղինէրէ. սիի>հուսիփէ, հգն. ուղղ. հուսիփիք, սեռ. հուսիփինէրու, բաց. հուսիփինէրէ և այլն։ Այդպես և՝ -եցի մասնիկն ունեցող բառերի վերջնահնչ է-ն, եթե բառը հոգնակիում առանում է -ներ ‖ -ներ մասնիկը, ինչպես՝ մեղրեցի>մըղրէցէ, հգն. ուղղ. մըղրէցինէր, սեռ. մըղրէցինէրու, բաց. մըղրէցինէրէ. կարճահնչի>կըրճըվէցէ, հգն. ուղղ. կըրճըվէցինէր, սեռ. կըրճըվէցինէրու, բաց. կըրճըվէցինէրէ և այլն։ Վերջին ձևերը, սակայն, շատ սակավ են գործածվում, իրրև նորմուծություններ արդի խոսակցականի ազդեցությամբ։

բ) քեռի>քէռա բառը հոգնակի բոլոր հոլովներում ա-ն պարձնում է է, ինչպես՝ քէռէք, քէռէներու, քէռէներէ և այլն։ Այդ կարգի հայերեն բառ չունենք, ազգերեզմաններենից փոխառված բառերում ա-ն է դառնում միայն հոգնակի ուղղականում ու հայցականում. ինչպես՝ բալա «զավակ», հգն. ուղղ. բալէք, պիւլլա «գնդակ», հնգ. ուղղ. գիւլլէք, բայց՝ սեռ. բալաներու, գիւլլաներու և այլն։

գ) երախայ>րախէ բառը ներկայացնում է սկզբնական հնչյալ պատկերը. եզ. սեռ. ըրխէ, գործ. ըրխաւ, ներգ. ըրխամ, հգն. ուղղ. րախէք կամ ըրխէք, սեռ. րախէց կամ ըրխէց, գործ. րախէց էնաւ, ըրխէց էնաւ կամ ըրախէքով, ներգ. րախէց մանջին, ըրխէց մանջին կամ ըրխէքմա։

Երկրորդ հոլովման են ենթարկվում նաև -ուղ (<ող) վերջավորությամբ դերբայները։

Եզակի

Ուղղ.	արուղ	կուփուղ
	«անող»	«խփող»
Սեռ.	(ը)րուղէ	կուփուղէ
Տր.	(ը)րուղէ	կուփուղէ
Հայց.	(ը)րուղէ	կուփուղէ

Բաց.	(բ)րուղէ	կուփուղէ
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	(բ)րուղով	կուփուղով
Ներգ.	(բ)րուղամ	կուփուղամ

Հոգնակի

Ուղղ.	արուղնէ	կուփուղնէ
Սեռ.	արուղնէրու	կուփուղնէրու
Տր.	արուղնէրու	կուփուղնէրու
Հայց.	արուղնէրու	կուփուղնէրու
Բաց.	արուղնէրէ	կուփուղնէրէ
	արուղնէրու	կուփուղնէրու
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	արուղնէրով	կուփուղնէրով
Ներգ.	արուղնէրամ	կուփուղնէրամ

Ծանոթություն 1.— Հայցական հոլովը թե եզակի, թե հոգնակիում նման է սեռական-տրականին։ Ներգոյականի համար ավելի գործածական է մանջին հնացած ըրութեամբ ձևը, ինչպես՝ (բ)րուղէ մանջին, կուփուղէ մանջին և այլն։

Որովհետև բոլոր բայերի համար էլ, անկախ նրանց ձայնավորների թեթև կամ ծանր լինելուց, դերբայական վերջավորությունն է -ուղ, ուստի և հոլովման համար ունեն միայն ծանր ձայնավորներով վերջավորություններ։

Ծանոթություն 2.— Եզակի թվում, բացի ուղղականից, մյուս բոլոր հոլովներում շեշտն ընկնում է վերջին թեք վանկի վրա, որի շնորհիվ էլ նախաշեշտ վանկի ձայնավորները դառնում են ը կամ ի՝ սղվող ձայնավորի աստիճանին համապատասխան. ինչպես՝ ծախող>ծախուղ, սեռ. ծըխուղէ, գործ. ծըխուղով. ուտող>օտուղ., սեռ. ըտուղէ, գործ. ըտուղով. բերող>բիրուղ, սեռ. բի՛րուղէ, գործ. բի՛րուղով. քարշող>քշուղ, սեռ. քի՛շուղէ, գործ. քի՛շուղով և այլն։ Նեշտակորույս վանկի ձայնավորը դառնում է ի՝ ինչպես՝ դիզող>դէզուղ, սեռ. դի՛զուղէ, գործ. դի՛զուղով. սիրել>սէրիլ, սեռ. սի՛րուղէ, գործ. սի՛րուղով և այլն։

Հակառակ այդ օրենքին, շեշտակորույս վանկում անփոփոխ են մնում.

ա) ու և իւ ձայնավորները. ինչպես՝ ոլորող>հիւլիւրուղ, սեռ. հիւլիւրուղէ, գործ. հիւլիւրուղով. կոտրող>կուտրուղ, սեռ. կուտրուղէ, գործ. կուտրուղով. որդնող>իւռնուղ, սեռ. իւռնուղէ, գործ. իւռնուղով. լիզող>լիւզուղ, սեռ. լիւզուղէ, գործ. լիւզուղով և այլն։ Այս երևույթը իբրև ինչ-որ բացառություն չպետք է դիտել, այլ արդյունք ձայնավորների ներդաշնակության։

բ) -ացուղ ‖ -ացուղ, -եցուղ մասնիկները՝ անկախ գիտակցվելու պատճառով, ինչպես՝ մոռացող>մրռացուղ, սեռ. մրռացուղէ, գործ. մրռացուղով. լուացող>լի՛վացուղ, սեռ. լի՛վացուղէ, գործ. լի՛վացուղով, գնացող> գի՛նէցուղ, սեռ. գինէցուղէ, գործ. գի՛նէցուղով և այլն։

Բայերի նախաշեշտ վանկի ձայնավորների սղման մասին, թե այս դերբայում, և թե մյուս ձևերում ավելի մանրամասն կխոսվի խոնարհման նվիրված բաժնում։

Հոգնակի թվում շեշտը միշտ ընկնում է -ենէ ‖ -ընէր մասնիկի վրա, որից, սակայն, ոչ մի հնչյունական փոփոխություն չի առաջանում։

Երրորդ հոլովում

Այս հոլովման եզակի սեռականի և տրականի վերջավորությունն է ու, որից առաջ բառավերջի ձայնավորը (ու կամ իւ) կամ բոլորովին կորչում է կամ դառնում վ, բացառականի վերջավորությունն է -է, գործիականը՝ -ավ, -ով, ներգոյականը՝ -ամ-ում։

Եզակի

Ուղղ.	խաղու «խաղող»	լիւզիւ «լեզու»
Սեռ.	խաղու կամ խաղվու	լիւզիւ կամ լիւզվիւ
Տր.	խաղու կամ խաղվու	լիւզիւ կամ լիւզվիւ
Հայց.	խաղու	լիւզիւ
Բաց.	խաղվէ, խաղվու	լիւզվէ. լիւզվիւ
	(ն, հ)էնից	(ն, հ(էնից
Գործ.	խաղվով	լիւզվով
Ներգ.	խաղվամ	լիւզվամ

Հոգնակի

Ուղղ.	խաղունէ	կամ	խաղուք	լիզիւնէ	կամ լիզիւք
Սեռ.	խաղունէրու	»	խաղուց	լիզիւնէրու	» լիզիւց
Տր.	խաղունէրու	»	խաղուց	լիզիւնէրու	» լիզիւց
Հայց.	խաղունէ	»	խաղուք	լիզիւնէրու	» լիզիւք
Բաց.	խաղունէրէ	»	խաղուց էնից	լիզիւնէրէ	» լիզիւց էնից
Գործ.	խաղունէրաւ	»	(խաղուքաւ)	լիզիւնէրաւ	»(լիզիւքաւ)
Ներգ.	խաղունէրամ	»	(խաղուքամ)	լիզիւնէրամ	»(լիզիւքամ)

Այս հոլովման ենթարկվում են ու կամ իւ վերջացող հասարակ գոյականները, բացի ձու, լիւ բառերից, որոնց մասին տես տողին։

Ծանոթություն 1.— Եզակի թեք հոլովներում վերջավորություններից առաջ հաճախ ավելանում է վ. ձայնակապը, առանց բուի վերջահանգ ու կամ իւ ձայնավորների սպման. ինչպես՝ խաղուվու, խաղուվէ, խաղուվավ, խաղուվամ, լիզիւվիւ, լիզիւվէ, լիզիւվով, լիզիւվամ և այլն։ Մ. Շահյանցն իր քերականության մեջ եզ. սեռականի համար բերում է երկու ձև՝ բարու կամ բարուվու «Թմբրիկի» (իր օրինակն է). բացառական ու գործիական հոլովների համար, բացի մեր հիշածներից, բերում է նաև՝ բարուվուն ևնից բարուվավ ձևերը, իսկ ներգոյական հոլովը առհասարակ չի հիշում։ Այժմ խոսողների մոտ, սակայն, գործածական է մեր բերած հոլովական կարգը, և սակավ դեպքերում միայն կարելի է լսել խաղուվու, խաղուվավ և այլ ձևերը։ Դեռ ավելին, այժմյան խոսողների մոտ այս հոլովման բառերն էլ սեռական-տրականում հաճախ ստանում են երկրորդ հոլովման ե վերջավորություններ. խաղվէ, լիզվէ և այլն։

Ծանոթություն 2.— Հոգնակի ուղղականի, հայցականի, սեռականի, տրականի ու բացառականի -ուք, -իւք, -ուց, -իւց վերջավորություններով ձևերը կարելի է հաճախ լսել. ներգոյականի լիզիւքամ ձևը մի անգամ միայն հանդիպակցության միջոցին լսել ենք 1936 թվականին՝ այն ժամանակ 83-ամյա Ս. Գաբրիելյանից, իսկ գործիականը բերում ենք Շահյանցի քերականությունից. այդ իսկ պատճառով էլ, իբրև հազվադեպ գործածվող ձևեր, թե գործիականի և

թե ներգոյականի հոգնակի կրկնաձևերը փակագծի մեջ ենք առնում։

Ծանոթություն 3.— Եզակի բոլոր հոլովներում էլ շեշտը անփոփոխ է մնում մեր բերած հոլովաձևերում, իսկ եթե վ-ից առաջ վերջահանգ -ու, -իւ-ն միանում է (ծանոթություն 1), ապա թեք հոլովներում շեշտը տեղափոխվում է հենց այդ -ու, -իւ-ի վրա. ինչպես՝ խաղու, խաղուվու, խաղուվէ, խաղուվավ, խաղուվամ. լիզիւ, լիզիւ՛վիւ, լիզիւվով, լիզիւ՛վամ և այլն։ Հոգնակիի առաջին ձևում շեշտը միշտ ընկնում է -ուք, -ուք մասնիկի վրա (վերջին կամ վերջընթեր վանկի), իսկ երկրորդ ձևում (ուք, իւք) միշտ վերջընթեր վանկի վրա, ինչպես՝ խաղունէ, խաղունէրու, խաղունէրէ. լիզիւնէ, լիզիւնէրու, լիզիւնէրէ, բայց՝ խաղուք, խաղուց. լի՛զիւք, լի՛զիւց և այլն։ Շեշտի տեղափոխությունն այստեղ էլ հնչյունական փոփոխություններ չի առաջացնում։

Չորրորդ հոլովում

Այս հոլովման սեռականի ու տրականի վերջավորությունն է -վա, բացառականը՝ -վանէ, գործիականը՝ -ավ կամ -վանավ, ներգոյականը՝ -ամ կամ -վանամ։

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	գէրունք	գէրունքնէ
Սեռ.	գէրունքվա	գէրունքնէրու
Տր.	գէրունքվա	գէրունքնէրու
Հայց.	գէրունք	գէրունքնէ
Բաց.	գէրունքվանէ	գէրունքնէրէ
Գործ.	գէրունքավ գէրունքվանավ	գէրունքնէրավ
Ներգ.	գէրունքամ գէրունքվանամ	գէրունքներամ

Այսպես են հոլովվում ժամանակ ցույց տվող բառերը. ինչպես՝ ամառնը, ամէս, քի՛չէր, ցէրակ կամ ցէրիկ, ասխւր, ուզուց, տարէ և այլն։

Ծանոթություն 1.— Սրանք բոլորն էլ հաճախ կանոնավորապես հոլովվում են առաջին հոլովմամբ, և այժմ այդ ավելի գործածական է։ Շաբաթ>շէբաթ հոլովվում է

միայն առաջին հոլովմամբ, այսպես՝ սեռ. տր. շէփաու, բաց. շէփթէ, գործ. շէփաավ, ներգ. շէփաամ, հդն. շէրաթնէ, շէրաթնէրու և այլն։ Տարի>տարէ բառը եզակիում վերջավորութ յունից առաջ կորցնում է իր է ձայնավորը, տարվա, տարվանէ և այլն, իսկ հոգնակիում վերականգնում նախնական ի-ն, ինչպես՝ տարիէ, տարիներու և այլն։ Ամառն>ամառը, ձմեռն>ձըմեռը բառերը հոլովման ժամանակ կորցնում են իրենց -ը հանգը, ինչպես՝ ամառվա, ձըմեռվա, ամառվանէ, ձըմեռվանէ, հդն. ամառնէ, ձըմեռնէ և այլն։ Ամիս>ամէս բառը հոլովման ժամանակ կորցնում է է ձայնավորը, իսկ շեշտն ընկնում է նրան նախորդող կամ հաջորդող վանկի վրա, ինչպես՝ սեռ. ամսվա, գործ. ամսավ, ներգ. ամսամ, բայց՝ բաց. ամսվանէ. հոգնակիում է-ն անփոփոխ է մնում բոլոր հոլովներում, իսկ շեշտն ընկնում է -ներ ‖ -ներ մասնիկի վրա։

Հերու>հերվի բառը հոլովվում է այսպես. սեռ. տր. հերվաց, բաց. հերվաց (էնից), գործ. հերվավ, ներգ. հերվամ. հդն. հերվինէ, սեռ. տր. հերվինէրու և այլ ձևերը սակավ են գործածվում և այն էլ այն դեպքում, երբ խոսողը նկատի է առնում անցած մի քանի տարիները՝ առանց մանրամասնելու. օրինակ՝ հերվինէրուն մին հետ գոհած ըմ լա կըրճէվան «անցյալ տարիներին մեկ անգամ գնացել էի Կարճևան»։

Այս, ինչպես և նախորդ հոլովման բացառականի հետքերը գրեթե չի գործածվում։

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման եզակի հոլովաձևերը կազմվում են ներքին թեքմամբ. սեռական և տրականն ունեն -աւ ‖ -ու կամ -ևի ձևը, բացառականը՝ -ևէ կամ -ևնի, գործիականը՝ -ևավ ‖ -ևով, ներգոյականը՝ -ևամ ‖ -ևում։

Եզակի

Ուզղ.	նօռնը «նուռն»	իղնը «եզն»	թուռնը «թոռ»
Սեռ.	նըռան	իզէն	թուռէն
Տր.	նըռան	իզէն	թուռէն
Հայց.	նօռնը	իղնը	թուռնը
Բաց.	նըռնէն	իզնէն	թուռէն
	նըռան էնից	իզէն էնից	թուռէն էնից
Գործ.	նըռնավ	իղնավ	թուռնավ
Ներգ.	նըռնամ	իղնամ	(թուռնամ) թուռէն մանջին

Հոգնակի

Ուզղ.	նըռնէը	իզնար	թուռնար
Սեռ.	նըռնէրու	իզնէրու	թուռնէրու
Տր.	նըռնէրու	իզնէրու	թուռնէրու
Հայց.	նըռնէը	իզնար	թուռնէրու
Բաց.	նըռնէրէ	իզնէրէ	(թուռնէրէ)
	նըռնէրու	իզնէրու	թուռնէրու
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	նըռնէրավ	իզնէրավ	թուռնէրավ
Ներգ.	նըռնէրամ	իզնէրամ	(թուռնէրամ) թուռնէրու մանջին

Այսպես հոլովվում են -ը հանգող մեկվանկ վանկանի բառերը։

Եզակի սեռականում -ևն ունենում են այս հոլովման բառերից նրանք, որոնց առաջին վանկի ձայնավորն է ա, է, ի, ու, ը կամ ևօ. այդ ձայնավորները բոլոր հոլովներում էլ մնում են անփոփոխ, թեև հոգնակի թեք հոլովներում գտնվում են շեշտից առաջ. հոգնակիի համար այդ բառերն առանում են -ար ‖ -ար մասնիկը՝ ըստ ձայնավորների ներդաշնակության։ Այդ բառերն են.

ակն>ակնը	սեռ.	ակէն	հդն.	ակնար
բեռն>բէռնը	»	բէռէն	»	բէռնար
գառն>գէօռնը	»	գէօռէն	»	գէօռնար
դաղձն>դէղնը	»	դէղէն	»	դէղնար
եղն>յէղնը	»	յէղէն	»	յէղնար
եզն>իզնը	»	իզէն	»	իզնար
թոռն>թուռնը	»	թուռէն	»	թուռնար
լեառն>լէռնը	»	լէռէն	»	լէռնար
խառն>խառնը	»	խառէն	»	խառնար
խէժ>խէժնը	»	խէժէն	»	խէժար
կամն>կամնը	»	կամէն	»	կամնար
հարսն>հարսնը	»	հարսէն	»	հարսնար
մառն>մառնը	»	մառէն	»	մառնար
մատն>մատնը	»	մատէն	»	մատնար
ողն>ուղնը	»	ուղէն	»	ուղնար
որդն>իւռնը	»	իւռէն	»	իւռնար
սամի>սամիը	»	սամէն	»	սամիար

սառն>սառնը «սառուցյ» սեռ. սառէն, հդն. սառնար

Դրանցից բեռնը, իզնը, լեռնը բառերի սեռականն ու տրականն ունեն նաև բեռան, իզոն, լեռան ձևերը։

Ծանոթություն 1.— Այս բառերի հոլովման ժամանակ թե եզակի, և թե հոգնակի բոլոր հոլովներում էլ շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա. ինչպես՝ թուռնը, թուռնէն, թուռնէրու և այլն։

Եզակի սեռականում -ան ունենում են այն բառերը, որոնք առաջին վանկում ունեն օ ձայնավորը՝ առաջված գրաբարյան ու-ից. դրանք հոգնակիի համար առանում են -եր մասնիկը։

Այդ բառերն են.

կուռն>կօռնը	սեռ.	կըռան	հգն.	կըռներ
նուռն>նօռնը	»	նըռան	»	նըռներ
փուռն>փօռնը	»	փըռան	»	փըռներ
խուրձն>խօրձնը	»	խըրձան	»	խըրձներ
ծունգն>ծօնգնը	»	ծընգան	»	ծընգներ
մուկն>մօկնը	»	մըկան	»	մըկներ
ունկն>ունգնը	»	ընգան	»	ընգներ
շուն>շօն	»	շան	»	շներ
տուն>տօն	»	տան	»	տներ

Այսպես և՝ ճիւղ>ճօղնը, սեռ. ճըղան, հգն. ճըղներ։

Ծանոթություն 1.— Ձուկն, ծունգն, մուկն, ունկն բառերը բարբառումս ունեն կրկնակի ձևեր, որոնցից մեկը՝ այս հոլովման համաձայն, մյուսը՝ առաջին, այսպէս.

ձուկն>ձօկնը	սեռ.	ձըկան	հգն.	ձըկներ
>ձօկուն	»	ձօկնու	»	ձօկուննէ
մուկն>մօկնը	»	մըկան	»	մըկներ
>մօկուն	»	մօկնու	»	մօկուննէ
ծունգն>ծօնգնը	»	ծընգան	»	ծընգներ
>ծօնգուն	»	ծօնգնու	»	ծօնգուննէ
ունկն>օնգնը	»	ընգան	»	ընգներ
>օնգուն	»	օնգնու	»	օնգուննէ

Սունկն բառն ունենք միայն՝ սօնգուն, սօնգնու, սօնգուննէ, սօնգուննէրու ձևով։

Ծանոթություն 2.— Այս բառերի հոլովման ժամանակ եզակիում, բացի ուղղականից ու հայցականից, շեշտն ընկնում է վերջին վանկի վրա, իսկ հոգնակիում -եր մասնիկի վրա (ուզղ. հայց. վերջին վանկ, մյուսներում՝ վերջընթեր), դրա հետևանքով բառի օ ձայնավորը, որ առացվել է ու-ից (ճօղնը բառում՝ իւ-ից) դառնում է ը. ինչպես՝ նուռն>նօռնը, սեռ. նըռան, հգն. ուզղ. նըռներ, սեռ. նըռներու. խուրձն>խօրձնը, սեռ. խըրձան, հգն. ուզղ. խըրձներ, սեռ. խըրձներու. կուռն>կօռնը, սեռ. կըռան, հգն. ուզղ. կըռներ, սեռ. կըռներու և այլն։

Պետք է դիտել սակայն, որ իրականում ոչ թե շեշտը վերջին վանկն ընկնելու հետևանքով է օ (<ու)-ն սղվել բարբառումս, այլ, ընդհակառակն, սղման պատճառով շեշտը տեղափոխվել է վերջին վանկում, ինչպես եղել է գրաբարում։ Այսպես, գրաբարում շեշտը միշտ վերջին վանկումն է լինում, որի հետևանքով էլ շեշտակորույս ու-ն սղվում է. բարբառումս, սովանդարդ պահպանելով գրաբարյան հոլովաձևերը՝ կատարված սղումներով (ձկան, մկան և այլն), բնականաբար շեշտը վերջավանկում էլ պետք է մնար, քանի որ ը-ն շեշտ չի կրում։ Այս դրույթը հաստատում են նախորդ ծանոթության մեջ բերված բառերի շեշտավոր կրկնաձևերը, որոնց մեջ օ(<ու)-ն, այլևս սղման չենթարկվելով, շեշտն իր վրա է կրում (ձօկնու, մօկնու և այլն)։

Այս հոլովումը շարունակությունն է գրաբարյան նեղդրական հոլովման, որ պահպանվել է միայն եզակի սեռականում ու տրականում. թե եզակի մյուս հոլովներում, և թե ամբողջ հոգնակիում ենթարկվել է ընդհանրացման, և առացել այն վերջավորությունները, որ ընդհանուր են գրեթե բոլոր հոլովումներին։ Բացի այդ, գրաբարում այդ հոլովման ենթարկվում են ոչ միայն մեկուկես, այլև հավելվածական -ն ունեցող բազմավանկ բառերը։ Մեկորու բարբառում բազմավանկ բառերն անխտիր փոխել են իրենց հոլովումը և ենթարկվում են նախորդ հոլովումներին՝ բա համապատասխանության։ Մեկուկես վանկանի բառերից մի քանիսն էլ, կորցնելով իրենց ն հանգը, նույնպես ենթարկվում են այլ հոլովումների.

Այդ բառերն են՝

ջերմն>ջէրմ	սեռ.	ջէրմու	հգն.	ջէրմար
սերմն>սէրմ	»	սէրմու	»	սէրմար

աղրն>ախպ » ախպու » ախպար
եօթն>օխտը » օխտու » —
տասն>տասըը » տասուս » (տասնընէ)

Իննն>իններ բառը թեև պահպանել է ն հանգը, բայց դարձյալ ենթարկվում է առաջին հոլովման մի խումբ բառեր, որոնք վերևում բերված են իբրև այս հոլովման ենթարկվողներ, հետևաբար ենթարկվում են նաև առաջին հոլովման։ Այդ բառերն են.

բեռն>բէռնը տես. բէռէն, բէռան կամ բէռնու
գառն>գէօռնը » գէօռէն կամ գէօռնի
կամն>կամնը » կամէն » կամնու
մատն>մատնը » մատէն » մատնու
մատն>մատնը » մատէն » մատնու
պաղձն>պէղնը » պէղէն » պէղնու
(վերջինն ավելի գործածական)
որդն>իւռնը տես. իւռէն կամ իւռնի

Վերջապես, դրանց հակառակ, մի քանի բառեր դրաբարում ենթարկվել են այլ հոլովումների, իսկ բարբառումս, ունենալով ն հանգը, այս հոլովման տակ են ընկել, դրանք են.

սամի (ավելի՝ սամիք, տես. սամեաց)>սամնը, տես. սամէն,
խէժ կամ խիժ (տես. խիժի կամ խժի)>խէժնը, տես. խէժէն,
ճիւղ (տես. ճիւղոյ)>ճօղնը, տես. ճըղան։

Ի վերջո պետք է նկատել, որ տեսականի -ենց վերջավորությունը այլ բան չէ, եթե ոչ գրաբարյան -ից վերջավորության օրինական հնչյունափոխությամբ առացված մի ձև, դա հաստատվում է նրանով, որ բարբառումս -ենց ունեցող բառերի մեծագույն մասը (18-ից՝ 13-ը) գրաբարում եղ. տեսականում ունեն -ից (բեռն—բեռին, գառն—գառին, պաղձն—պաղձին, եղն—եղին, եղն—եղին, թոռն—թոռին, լեառն—լերին, կամն—կամին, հարսն—հարսին, մատն—մատին, մատն—մատին, ոդն—ոդին, սառն—սառին), Ինացած հնգից երեքը գրաբարում նույնպիսական հոլովման չեն ենթարկվել (խառն, խէժ, սամի), իսկ երկուսը ենթարկվել են -աւ հոլովման (ակն—ական, որդն—որդան). այդ հինգ բառերն էլ համաբանությամբ բարբառումս ենթարկվում են ենց ձևին։

Վեցերորդ հոլովում

Այս հոլովման եզակի սեռականի վերջավորությունն է -ա ‖ -ս, գործ. -ով ‖ -ով, ներգոյականը՝ -ամ ‖ -մ. բացառականը ունի միայն հետգրավոր ձևը.

Ուղղ.	*Սամսօն*	*Վարդի*
Սեռ.	*Սամսօնա*	*Վարդո*
Տր.	*Սամսօնա*	*Վարդո*
Հայց.	*Սամսօնա*	*Վարդո*
Բաց.	*Սամսօնա հէնից*	*Վարդո հէնից*
Գործ.	*Սամսօնով*	*Վարդով*
Ներգ.	*(Սամսօնամ)*	*(Վարդոմ)*
	Սամսօնա մանջին	*Վարդո մանջին*

Այս հոլովման են ենթարկվում բոլոր անձնանունները անկախ իրենց վերջավորություններից, և ու վերջացող տեղանունները, ինչպես՝ Բաքու, Բաքվա, Բագվավ և այլն։ Այս հոլովման են ենթարկվում հաճախ նաև այն տեղանունները, որոնք ու-ով չեն վերջանում. ինչպես՝ Լիշկ (<Լիճք), Լիշկի, Մէղրա, Մէղրու, Կըրճէվան, Կըրճէվանու, բայց և՝ Լիշկո, Մէղրա, Կրճէվանա և այլն։

Ծանոթություն 1.— Անձնանունների բացառական հոլովը, ինչպես ասվեց, ունի միայն նախդրավոր ձևը, որովհետև հատուկ անունները բարբառումս հազ չեն սատնում, ուստի և միշտ կազմվում է հենից ձևով (և ոչ՝ նէնից)։ Ընդհակառակն՝ տեղանունների բացառականը կազմվում է -ենց վերջավորությամբ. ինչպես՝ Սամսօնա հէնից, բայց՝ Բաքվէն և այլն։

Ծանոթություն 2.— Անձնանունների ներգոյականի համար նույնպես ավելի գործածական է հետգրավոր ձևը, որ կազմվում է մանջին կամ հենամ նախադրությունների. ինչպես՝ Սամսօնա հէնամ կամ Սամսօնա մանջին, Վարդո հէնամ կամ Վարդո մանջին և այլն։ Մանջին և հենամ հետադրությունների իմաստի մեջ նույն տարբերությունը կա, ինչ որ ներգոյականի -ամ ‖ -մ վերջավորության և մանջին հետադրության ձևերի մեջ։

Ծանոթություն 3.— Գործիական հոլովը հաճախ կազմվում է ձեռնավ հետադրությամբ, որ, ինչպես և (ն)ե-ցից, (ն)եամ հետադրությունները, դերանունների մեջ հանդես է գալիս իբրև սոսկ վերջավորություն (ինձնեամ, քիհենավ և այլն), ինչպես՝ Սամսոնա հէնավ, Վարդա հէնավ և այլն. Այս ձևը առանձնապես շատ է գործածվում ա վերջացող անձնանունների համար:

Ծանոթություն 4.— Ա, ա վերջացող անձնանունների սեռական, տրական, հայցական հոլոմները նման են ուղղականին. ինչպես՝ Սոռա (Սոռա), սեռ. տր. հայց. Սոռա. շփոթությունից խուսափելու համար հաճախ հոլովական վերջավորություններից առաջ ավելացնում են ն, որով և մասնիկը դառնում է -նա ‖ ընա. ահա այդ կարգի անձնանունների կրկնաձև հոլովումը:

Ուղղ.	*Մաշա*			*Սոռա*		
Սեռ.	*Մաշա*	*կամ*	*Մաշանա*	*Սոռա*	*կամ*	*Սոռանա*
Տր.	*Մաշա*	»	*Մաշանա*	*Սոռա*	»	*Սոռանա*
Հայց.	*Մաշա*	»	*Մաշանա*	*Սոռա*	»	*Սոռանա*
Բաց.	*Մաշա*	»	*Մաշանա*	*Սոռա*	»	*Սոռանա*
	հէնից		*հէնից*	*հէնից*		*հէնից*
Գործ.	*(Մաշավ)*	»	*Մաշանավ*	*(Սոռավ)*	»	*Սոռանավ*
Ներգ.	*(Մաշամ)*	»	*Մաշանամ*	*(Սոռամ)*	»	*Սոռանամ*
			Մաշանա			*Սոռանա*
			մանջին			*մանջին*

Հետաքրքրական է նշել, որ այդ ն-ն գիտակցվելով իբրև բառի սեփական հնչյուն, հաճախ անցնում է նաև ուղղականին, որով այդ անուններն ունենում են կրկնաձևեր նաև ուղղականում. ինչպես՝ Սոռա և Սոռան, Մաշա և Մաշան, Մարթա և Մարթան, Պարաքսյա և Պարաքսյան և այլն: Այդ ն-ն, սակայն, որոշիչ հոդի պաշտոն չի կատարում, թեև, հավանաբար, ծագումով հոդ է եղել, որ թեք հոլովներում ճեղքով՝ դարձել է մասնիկի տարր:

Ծանոթություն 5.— ի վերջացող անձնանունները թեք հոլովներում կորցնում են իրենց վերջահանգ ի ձայնավորը. ինչպես՝ Օվի, սեռ. Օվա, գործ. Օվավ. Թաքվի, սեռ. Թաքվա, գործ. Թաքվավ. Հուռի, սեռ. Հուռա, գործ.

Հուռավ. Շիւշի, սեռ. Շիւշա, գործ. Շիւշավ: Սաքի, սեռ. Սաքա, գործ. Սաքավ և այլն:

Ծանոթություն 6.— է, օ ձայնավորներով վերջացող անձնանունների թեք հոլովներում հիմքի և վերջավորության մեջ ավելանում է յ ձայնակապը, ինչպես՝ Վաչէ, սեռ. Վաչէյա, գործ. Վաչէյավ. Զաքէ, սեռ. Զաքէյա, գործ. Զաքէյավ. Համբօ, սեռ. Համբօյա, գործ. Համբօյավ. Սաքօ, սեռ. Սաքօյա, գործ. Սաքօյավ և այլն:

Ծանոթություն 7.— Ու ձայնավորով վերջացող անձնանուններն ու տեղանունները թեք հոլովներում իրենց վերջահանգ ու-ն դարձնում են վ. ինչպես՝ Սարու, սեռ. Սարվա, գործ. Սարվավ. Բաքու, սեռ. Բաքվա, գործ. Բաքվավ. այդ անունները կարող են ուղղակի վ ավելացնել ու-ն անփոփոխ թողնելով՝ ու վերջացող հասարակ գոյականների նման, ինչպես՝ Սարուվա, Սարուվավ, Բաքուվա, Բաքուվավ և այլն: Հակառակ վերոհիշյալներին, հաճախ ու, ի ձայնավորով վերջացողներն էլ կարող են շեշտը տեղափոխել վերջահանգ ի, ու- ի վրա և առանալ յ ձայնակապը՝ է, օ-ով վերջացողների նման, ինչպես՝ Օվի, սեռ. Օվիյա, գործ. Օվիյավ. Հուռի, սեռ. Հուռիյա, գործ. Հուռիյավ. Սարու, սեռ. Սարույա, գործ. Սարույավ և այլն: Այս անունների այսպիսի հոլովումը հատուկ է Կարճևանի բարբառին. Մեղրու բարբառում շատ սակավ կարելի է լսել այդ ձևերը:

Անկանոն հոլովումներ

Ձայնավորով վերջացող երեք միավանկ բառեր, քի>քէ, ձու>ձու, լու>լիւ, եղակիում ենթարկվում են ու, իսկ մեկը՝ ձի>ձի, ենթարկվում է ա հոլովմանն. հոգնակի ուղղականում բոլորն էլ առանում են -անք ‖ -ունք և հոլովվում գրաբար ձևով.

Եղակի

Ուղղ.	*քէ*	*ձու*	*լիւ*	*ձի*
Սեռ.	*քէյու*	*ձրվու*	*լի՛վիւ*	*ձիյա*
Տր.	*քէյու*	*ձրվու*	*լի՛վիւ*	*ձիյա*
Հայց.	*քէ*	*ձու*	*լիւ*	*ձի*

Բաց.	թէյու (ն, հ)էնից	ձմու (ն, հ)էնից	լի՝մի (ն, հ)էնից	ձիյա (ն, հ)էնից
Գործ.	թէյավ	ձրվավ	լի՝վով	ձիյավ
Ներգ.	թէյամ	ձրվամ	լի՝վոմ	ձիյամ

Հոգնակի

Ուղղ.	թիյանք	ձրվանք	լի՝վոնք	ձիյանք
Սեռ.	թիյանց	ձրվանց	լի՝վոնց	ձիյանց
Տր.	թիյանց	ձրվանց	լի՝վոնց	ձիյանց
Հայց.	թիյանք	ձրվանք	լի՝վոնք	ձիյանք
Բաց.	թիյանց էնից	ձրվանց էնից	լի՝վոնց էնից	ձիյանց էնից
Գործ.	թիյանքավ	ձրվանքավ	լի՝վոնցով	ձիյանցավ
Ներգ.	թիյանքամ թիյանց մանջին	ձրվանքամ ձրվանց մանջին	(լի՝վոնցոմ) լի՝վոնց մանջին	(ձիյանցամ) ձիյանց մանջին

Ծանոթություն 1. Թէ և ձու բառերի հոգնակի դրական ու ներգոյականը կազմվում են -ավ, -ամ մասնիկները ուղղականին ավելացնելով, իսկ լիւ և ձի բառերինը՝ սրականին. թիյանքավ, ձրվանքավ, թիյանքամ, ձրվանքամ, բայց՝ լի՝վոնցով, ձիյանցավ, լի՝վոնցոմ, ձիյանցամ: Շնչավորի և անշունչի տարբերություն չէ՞ արդյոք:

Ծանոթություն 2.—Թէև թէ բառի է ձայնավորը ևս հոլովման ժամանակ հոգնակիում վերածվում է ի-ի, բայց հոլովական վերջավորությունները ծանր են, ինչպես և ձի բառի հոլովաձևերում:

Հայր>հար

Ուղղ.	հար	հարար
Սեռ.	հօր	հարէրու
Տր.	հօր	հարէրու
Հայց.	հօր	հարէրու
Բաց.	(հօրէ) հօր էնից	հարէրէ (հարէրու (ն, հ)էնից)
Գործ.	հօրավ (հօր էնավ)	հարէրավ (հարէրու (ն, հ)էնավ)
Ներգ.	(հօր մանջին)	հարէրամ (հարէրու մանջին)

Այսպես հոլովվում են մայր>մար, մօր, մօրէ, մօրավ, (մօր մանջին). մարար, մարէրու և այլն. կնքահայր>կընքահար, կընքահօր, կընքահօրէ, կընքահօրավ, (կընքահօր մանջին), կընքահարար, կընքահարէրու և այլն. սանամայր>սընամեր, սընամօր, սընամօրէ, սընամօրավ (նաև՝ սընամէրավ), սընամօր մանջին. հոգնակին ունի երկու ձև -ար և -նէ մասնիկներով. սընամէրար և սընամէրնէ, սընամէրէրու և սընամէրնէրու և այլն. երկրորդ ձևը ավելի գործածական է:

Ծանոթություն. Հայր>հար բառի եզակի սեռականը քո>քու սեացականից հետո գործածվելիս դառնում է հուր. ինչպես՝ քու հուր ակը լիւս «քո հոր աչքը լույս» (գործածվում է ծաղրական իմաստով):

Եղբայր>ախպեր.

Ուղղ.	ախպէր	ախպէրնէ	կամ ախպէրք՛
Սեռ.	ախպուր	ախպէրնէրու	ախպօրց
Տր.	ախպուր	ախպէրնէրու	» ախպօրց
Հայց.	ախպուր	ախպէրնէրու	» ախպօրց
Բաց.	ախպօր էնից	ախպէրնէրու (ն, հ)էնից	ախպօրց էնից
Գործ.	ախպէրավ (ախպուր էնավ)	ախպէրնէրավ	ախպէրք՛ով
Ներգ.	(ախպուր մանջին)	(ախպէրնէրու մանջին)	(ախպօրց մանջին)

Այսպես հոլովվում են՝ հօրեղբայր>հէրբար, հէրբուր կամ հէրբօր, հէրբօր էնից, հէրբօրավ (հէրբօր էնավ), հէրբօր մանջին), հէրբարնէ, հէրբարնէրու և այլն: Ողջույն եղբայր>բախչըմախպէր, բախչըմախպուր, բախչըմախպուր էնից, բախչըմախպէրավ (բախչըմախպուր էնավ), (բախչըմախպուր մանջին), բախչըմախպէրնէ, բախչըմախպէրնէրու և այլն. Ախպէր բառի հոգնակիի երկրորդ ձևը (ախպէրք՛, ախպօրց) ավելի գործածական է, իսկ հէրբար և բախչըմախպէր բառերինը՝ ոչ. Հէրբար բառը հոլովվում է նաև առաջին հոլովմամբ, կանոնավոր կերպով, հի՝րբէրու, հի՝րբէրէ, հի՝րբէրավ և այլն. Այժմյան խոսողների մոտ այդ ավելի գործածական է:

Քոյր>քիւր

Ուղղ.	քիւր	քի՛վէրք՛	կամ քիւրոր
Սեռ.	քի՛վէր	քի՛վէրց	» քիւրէրու
Տր.	քի՛վէր	քի՛վէրց	» քիւրէրու
Հայց.	քի՛վէր	քի՛վէրց	» քիւրէրու
Բաց.	քի՛վէր էնից	քի՛վէրց էնից	» քիւրէրու(ն, հ)էնից
Գործ.	քի՛վէրով (քի՛վէր էնով)	քի՛վէրք՛ով	» քիւրէրով
Ներգ.	(քի՛վէր մանջին)	(քի՛վէրց մանջին)	» (քիւրէրու մանջին)

Այսպես հոլովվում են. թագաւորաքոյր>թի՛գվոքիւր «փեսայի քույրը», թի՛գվի՛քի՛վէր, թի՛գվի՛քի՛վէրով, թի՛գվի՛քի՛վէրք՛ և թի՛գվոքիւրոր, թի՛գվի՛քի՛վէրց և թի՛գվոքիւրէրու և այլն։ Հորաքոյր>հաքուր, մորաքոյր>մաքուր, բառերը, բաղադրիչները չգիտակցելու հետևանքով, կանոնավորապես են թվարկվում են առաջին հոլովման՝ հաքրու, մաքրու, հաքրով, մաքրով, հաքուրնէ, մաքուրնէ, հաքուրնէրու, մաքուրնէրու և այլն։

Տէր>տար

Ուղղ.	տար	տարար
Սեռ.	տէռնը	տէրէրու
Տր.	տէռնը	տէրէրու
Հայց.	տէռնը	տէրէրու
Բաց.	տէռնը հէնից	տէրէրէ (տէրէրու (ն, հ)էնից)
Գործ.	տէրով	տէրէրով
Ներգ.	(տէռնը մանջին)	տէրէրամ (տէրէրու մանջին)

Այսպես հոլովվում են. տրնատեր>տրնատար, տրնատեռնը, տրնատեռնը հէնից, տրնատեռնով, տրնատարար, տրնատերիրու և այլն. երախտաւեր>երախտավար, երախտաւէռնը, երախտաւէռնով և այլն։ Այս բառերը նույնպես կարող են հոլովվել նաև առաջին հոլովմամբ. տրնատարու, տրնատարէ, երախտարու, երախտարէ և այլն. հաճախ թե՛ տար-ը և թե՛ այս երկուսը հոլովվում են նաև -ուջ հոլովմամբ. տիրուջ, տրնատիրուջ, երախտիրուջ, բաց. տիրուջ էնից, տրնատիրուջ էնից, երախտիրուջ էնից, (գործ. տիրուջով, տրնատիրուջով, երախտիրուջով—անգործածական), ներգ. տիրուջ մանջին, տրնատիրուջ մանջին, երախտիրուջ մանջին հոգնակին կանոնավոր է։

Տիկին>տէկին «սկեսուր»

Ուղղ.	տէկին	տէկիննէ
Սեռ.	տէկնուջ	տէկիննէրու
Տր.	տէկնուջ	տէկիննէրու
Հայց.	տէկնուջ	տէկիննէրու
Բաց.	տէկնուջ էնից	տէկիննէրէ, տէկիննէրու (ն, հ)էնից
Գործ.	(տէկինով) տէկնուջ էնով	տէկիննէրով
Ներգ.	(տէկինում) տէկնուջ մանջին	(տէկիննէրում), տէկիննէրու մանջին

Այսպես հոլովվում է. առնտիկին>արնդէկէն, արնդէկնուջ, արնդէկնով (արնդէկնում), արնդէկիննէ, արնդէկիննէրու և այլն։

Կին(իկ)>կընէկ՛

Ուղղ.	կընէկ՛	կընանէք՛
Սեռ.	կընգա	կընանաց, կանանց
Տր.	կընգա	կընանաց, կանանց
Հայց.	կընգա	կընանաց, կանանց
Բաց.	կընգա (ն, հ)էնից	կընանաց էնից
Գործ.	կընգով	(կընանաց էնով)
Ներգ.	(կընգամ) կընգա մանջին	(կընանաց մանջին)

Այսպես հոլովվում են. աղջիկ>ախչէկ, ախչկա, ախչկանէ, ախչկա (ն, հ)էնից, ախչկով, ախչկանով, ախչկա մանջին, ախչկէրք՛, ախչկէրանց, ախչկէրք՛ով, ախչկէրք՛ում, ախչկէրանց մանջին. եղբայրակից>ախպըրակէն, ախպըրկընգա, ախպըրկընգով, ախպըրկընանէք՛, ախպըրկընանաց և այլն. տեգրակից>տի՛գրակէն, տի՛գրի՛կընգա, տի՛գրի՛կընգով, տի՛գրի՛կընանէք՛, տի՛գրի՛կընանաց և այլն։

Տղայ>տրղա

Ուղղ.	տրղա		տրղարք՛ կամ տրղէրք՛
Սեռ.	տրղէյի	կամ տրղէյու	տրղէրաց
Տր.	տրղէյի	» տրղէյու	տրղէրաց
Հայց.	տրղէյի	» տրղէյու	տրղէրաց
Բաց.	տրղու (ն, հ)էնից	» տրղէյու (ն հ)էնից	(տրղէրաց էնից)

Գոթ. արդէյաւ, արդաւ	արդարքʼոյ կամ արդէրքʼոյ արդէրաց էնաւ
Ներգ. (արդէյամ, արդամ) արդու մանջին	(արդարքʼոյմ կամ արդէրքʼոյմ արդէրաց մանջինէ

Նույն կարգի՝ վկայ>վըկա բառը կանոնավորապես հոլովվում է առաջին հոլովմամբ. վրկայու, վրկայէ, վրկայավ, (վրկայամ), վրկանէ, վրկանէրու և այլն:

Ինչպես երևում է վերև բերված հոլովումներից, Մեղրու բարբառը չունի գրաբարի անկանոն հոլովվող՝ գիւղ, այր, սիւ, տիւ բառերը: Դրանցից այր և տիւ բառերը բոլորովին չկան բարբառումս. գիւղ>գիւղ կանոնավորապես հոլովվում է առաջին հոլովմամբ, իսկ օր>օր՝ չորրորդ հոլովմամբ: Դրանց հետ կառակ, ձայնավորով վերջացող չորս միավանկ բառեր՝ ձի, բի, ձու, լիւ իրենց ուրույն հոլովումն են կազմել, իսկ արդա բառը խառը կերպով հոլովվում է ի և ու հոլովիչներով: Համեմատելով դեպս, թէ՛ այս հինգ բառերը, և թէ՛ վերևում բերված գրաբարից եկող բոլոր անկանոն հոլովման բառերը ձգտում են ցույց տալիս կանոնավոր հոլովումներին ենթարկվելու: Այդ բոլոր բառերն էլ ունենալով իրենց հատուկ հոլովումը, երբեմն ենթարկվում են նաև առաջին հոլովման, այնպես որ հաճախ կարելի է լսել՝ հարու «հօր», տարու «տիրոջ», ախպերու «եղբօր», հիւրերու «հյուրերոր», ախչիկու «աղջկա» և այլն:

Թեև այժմյան խոսողների լեզվում հոլովումը, ընդհանուր առմամբ, ներկայացնում է այն պատկերը, որ նկարագրեցինք նախընթաց էջերում, այնուամենայնիվ հաճախ կարելի է լսել նաև այնպիսի ձևեր, որոնք գալիս են հնից՝ Մեղրու բարբառի ավելի հնագույն վիճակից: Այդ հնացած ձևերից համեմատաբար ավելի գործածականները հետևյալներն են.

ա) Եզակի սեռականի -է (<ի) վերջավորությունը: Այդ վերջավորությունն, ինչպես տեսանք, ունեն երկրորդ հոլովման բառերը՝ կանոնավոր կերպով. բացի նրանցից, մյուս հոլովներին պատկանող բառերից սեռականում իրենց իսկական ձևի հետ ունեն նաև -է վերջավորությունը հետևյալ բառերը.

այսօր>ասիւր	սեռ. ասրէ (միայն)
առեղն>առուղ	» առուղու և առղէ
բարեկենդան>բի՛րքʼի՛նդան	» բի՛րքʼի՛նդէնու և բի՛րքʼի՛նդէնէ

բան>բէն	սեռ. բէնու	և բէնէ
կիւրակի>գի՛րակէ	» (գի՛րակվա)	» գի՛րկէ
գիրկ>գիրքʼ	» գիրքʼիւ	» գի՛րքʼէ
գառիկ>գէգէկ	» գէգէկու	» գէգէկէ
գանգակ>գէնգʼակ	» գի՛նգʼէկու	» գի՛նգʼէկէ
հաք>էգկʼ	» էգկʼիւ	» էգկʼէ
աչունք>աչօնք	» ըչօնքվա	» ըչօնքէ
թաղ>թաղ	» թաղու	» թաղէ
թագաւոր>թաքաւօր	» թաքաւօրու	» թաքաւօրէ
խաղող>խաղու	» խաղ(վ)ու	» խաղվէ
խաշու>խաշու	» խաշ(վ)ու	» խաշվէ
կառար>կառար	» կառարու	» կըռարէ
կողք>կուխկ	» կուխկու	» կուխկէ
կառու>կառու	» կառ(վ)ու	» կառվէ
սար>սար	» սարու	» սարէ
հրմն>հուրմ	» հուրմու	» հուրմէ
մէջ տեղ>մաշտէղ	» մաշտէղու	» մաշտէղէ
այդուց>ուդուց	» ուդուցվա	» ուքցէ
աւօ>հօո	» հօոու	» հօոէ
պանիր>պանէր	» պանրու	» պանրէ
սուտ>սօտ	» սրտու	» սրտէ
վարդավառ>վիւրդիւվիւր	» վիւրդիւվիւրիւ	» վիւրդիւվիւրէ
արեգակն>րէնակ	» րէնակու	» րէնակէ
ցոգան>ցէգմն	» ցի՛գէնու	» ցի՛գէնէ
լեզու>լիւզիւ	» լիւզ(վ)իւ	» լիւզվէ
ամխ>ամէս	» ամսվա	» ամսէ
լոյս>լիւս	» լիւսիւ	» լիւսէ
գետ>գէտ	» գէտու	» գէտէ
քար>քար	» քարու	» քարէ
ծառ>ծառ	» ծառու	» ծառէ
գիրք>գիրքʼ	» գիրքʼիւ	» գիրքէ՛
հրեա>իրիս	» իրիսիւ	» իրիսէ (ի՛րիսէ)

բ) Բազմավանկ բառերի սեռականի -ու || -իւ վերջավորությունը հոգնակի թվում այժմ ընդհանրապես ավելանում է -ներ հոգնակի մասնիկին, բայց հաճախ ավելացվում է ուղղականի նի մասնիկին, որի -է-ն, այս դեպքում, ընկնում է. ինչպես՝ մատակ>մատակ, հգն. մատակներ, սեռ. մատակներու և մըրկ-

նու. հնձան>ընձան, հգն. ընձաննէ, սեռ. ընձաննէրու և ընձաննու. բոժոժ>բիւժիւժ, հգն. բիւժիւժնէ, սեռ. բիւժիւժնէրու և բիւժիւժնիւ և այլն: Այդ հոգնակի սեռականը գործածական է ավելի շատ -օիհ ‖ -եօիհ մասնիկով բառերի համար: Հոգնակի սեռականի այդ երկու վերջավորություններից (-ոու և -ենրու) կարելի է եզրակացնել, որ մի ժամանակ հոգնակի ուղղականն էլ ունեցել է երկու տարբեր վերջավորություններ, հավանաբար տարբեր բառերի համար՝ որոշ կանոնով. -ենէ, որ առացված է գրաբարյան -ին-ից, և -եներ, որ առացված է -ենեար-ից. ժամանակի ընթացքում ուղղական ու հայցական հոլովներում տարածվել է -ենէ-ն և վերացրել -եներ-ը, իսկ մյուս հոլովներում, ընդհակառակն, ընդհանրացել է -եներ-ը: Դրա պատճառն, անշուշտ, այն է եղել, որ թեք հոլովներում -ենէ մասնիկի է ձայնավորի անկմամբ հոգնակիի մասնիկը շատ է մթագնվել, իսկ երբեմն էլ -է-ի անկման շնորհիվ հոգնակիի և եզակի սեռականը նույնացել են. այսպես, օրինակ, -ը հանդն ունեցող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է միայն է ձայնավորի հավելումով, որ, իհարկե, երկու -ն-երից մեկի անկման արդյունքն է (օր. թիթեղն>թէթախանը, թէթախաննէ>թէթախանէ): Արդ, եթե դրանց սեռականը կազմենք ուղղականից (առանց -եր-ի), ապա կստանանք այն, ինչ որ ունեն այդ բառերը եզակի սեռականում. ինչպես՝ կոտիմն>կուտէմնը, սեռ. կուտէմնու, հգն. ուղղ. կուտէմնէ, սեռ. կուտէմնէրու կամ կուտէմնո՛ւ. թիթեղն>թէթախանը, սեռ. թէթախանու, հգն. ուղղ. թէթախանէ, սեռ. թէթախանէրու կամ թէթախանո՛ւ և այլն. ինչպես երևում է, միակ տարբերությունն այն է, որ եզակիում շեշտն ընկնում է վերջընթեր, իսկ հոգնակիի այդ ձևում՝ վերջին վանկի վրա, բայց, ինչպես մինչև այժմ բազմիցս նշված է, շեշտը հոլովման մեջ այնքան էլ հաստատուն չէ. հաճախ միևնույն բառի նույն հոլովում շեշտը երբեմն այս, երբեմն այն վանկում կարող է լինել. ինչպես՝ սուր>սօր, սեռ. սրրու և սօրու. ծունկն>ծօնգնը, ծօնգնու և ծրնգնու և այլն: Այս բոլորի հետևանքով առաջացող անխուսափելի շփոթությունն է եղել պատճառը, որ հակառակ ուղղականին ու հայցականին, մյուս հոլովներում հաղթել և ընդհանրացել է -եներ>եներ մասնիկը: Այս տեսակետից, ահա, սեռականի այս ձևը, թեև այժմ սակավ գործածական, բայց շատ արժեքավոր մնացորդ է լեզվական ձևերի զարգացման ընթացքն ուսումնասիրելու համար:

գ) Եզակի ներգոյականի -օմ ‖ -եօմ վերջավորությունը, որ շատ հաճախ կարելի է լսել գարձվածքների և առակների մեջ, բայց երբեմն նաև սովորական խոսակցության մեջ էլ, ինչպես՝ պատ>պատ, ներգ. պատամ և պատօմ. գլուխ>գըլօխ, ներգ. գըլխամ և գըլխօմ և այլն: Բերում ենք մի քանի առացվածքներ, որոնց մեջ գործածված է այդ կարգի ներգոյականը. Ջօկնը ջի՝բէօմ ի մի՝ծոնիլ, օղձը՝ ավազօմ «ձուկը ջրում կմեծանա, օձը ավազում». Ջիրէօմի՝ փէօլ չի նի, սըրտօմը սէր չի նիլ «գրպանում փող չլինի, սրտումը սեր չի լինի»: Գըլխօմը խէլք չի կա, սրտօմը՝ ցավ. «գլխումը խելք չկա, սրտումը՝ ցավ». Շըվաքօմը ման գիւղիւղ «սովերում ման եկող» (=ծույլ): Տըճօմը՝ իրթակ, դըրքօմը՝ ճօտ «տանը աքլոր, դրսում ճուտ» (=նէրսը սատանա, դուրսը քահանա) և այլն:

Մ. Շահյանցն իր «Համառոտ քերականության» մեջ առաջին հոլովման համար բերում է երկու օրինակ, մեկն այն է, ինչ որ մենք բերել ենք վերը, երկրորդ օրինակն ամփոփումն է այն հնարանությունների, որ մենք վերը հիշեցինք, և, որոնք բուն իր գրածի, լսել է յուր մանկության տարիներին. առորև բերում ենք այդ օրինակն առանց որևէ փոփոխության:

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	մախատ	մխըտնէ
Սեռ.	մխատէ	մխըտնուն
Հայց.	մախատը	մխըտնէն
Գործ.	մխատատվ	մխըտներավ
Բաց.	մխատէն	մխըտներէն
	մխատուն էնից	մխըտներուն էնից

* * *

Մյուս բարբառներում հոլովման մասին կան հետևյալ նկատելի կետերը.

Թբիլիսիի բարբառը ունի 7 հոլով, որոնք ձևով և կազմությամբ առհասարակ նույն են Երևանի հոլովների հետ: Ահա Թբիլիսիի հիմնական տարբերությունները:— Բացառական հոլովը կազմվում է եմ, եմեն մասնիկով. ինչ. գրէմէն, տնէմէն, մահէմէն, փեռն. Երև. գրից, տնից, մահից: Հոգնակի ուղղականը կազմվում է իր, ներ մասնիկներով, բայց մյուս հոլովները պահում են է ձայնը՝ ձայնական օրենքների համեմատ: Հոգնակի սեռականը հակառակ ուղղականին՝ առանում է ու մասնիկը, նման կը ճյուղի բարբառներին:

նու. հնձան>ընձան, հգն. ընձաննէ, սեռ. ընձաննէրու և ընձան-
նու. բուժուժ>բիւժիւժ, հգն. բիւժիւժնէ, սեռ. բիւժիւժնէրու և բիւ-
ժիւժնիւ և այլն։ Այդ հոգնակի սեռականը գործածական է ավելի
շատ -օրիճ ‖ -էօրիճ մասնիկով բառերի համար։ Հոգնակի սեռա-
կանի այդ երկու վերջավորություններից (-ու և -ներու) կարե-
լի է եզրակացնել, որ մի ժամանակ հոգնակի ուղղականն էլ ու-
նեցել է երկու տարբեր վերջավորություններ, հավանաբար տար-
բեր բառերի համար՝ որոշ կանոնով. -ներ, որ առացված է գրա-
բարյան -նի-ից, և -ներ, որ առացված է -ներար-ից. ժամանակի
ընթացքում ուղղական ու հայցական հոլովներում տարածվել է
-ներ-ն և վերացրել -ներ-ը, իսկ մյուս հոլովներում, ընդհակա-
ռակն, ընդհանրացել է -ներ-ը։ Դրա պատճառն, անշուշտ, այն է
եղել, որ թեք հոլովներում -ներ մասնիկի ն ձայնավորի անկ-
մամբ հոգնակիի մասնիկը շատ է մթագնվել, իսկ երբեմն էլ
-ն-ի անկման շնորհիվ հոգնակի և եզակի սեռականը նույնացել
են. այսպես, օրինակ, -ը հանդն ունեցող բազմավանկ բառերի
հոգնակին կազմվում է միայն ն ձայնավորի հավելումով, որ,
իհարկե, երկու -ն-երից մեկի անկման արդյունքն է (օր. քի-
քեղն>թէթախնը, թէթախննէ>թէթախնէ)։ Արդ, եթե դրանց
սեռականը կազմենք ուղղականից (առանց -եր-ի), ապա կստա-
նանք այն, ինչ որ ունեն այդ բառերը եզակի սեռականում,
ինչպես՝ կոտիմն>կուտէմնը, սեռ. կուտէմնու, հգն. ուղղ. կու-
տէմնէ, սեռ. կուտէմնէրու կամ կուտէմնո՛ւ. թիթեղն>թէթախնը,
սեռ. թէթախնու, հգն. ուղղ. թէթախնէ, սեռ. թէթախնէրու կամ
թէթախնո՛ւ և այլն. ինչպես երևում է, միակ տարբերությունն
այն է, որ եզակիում շեշտն ընկնում է վերջընթեր, իսկ հոգ-
նակիի այդ ձևում՝ վերջին վանկի վրա, բայց, ինչպես մինչև
այժմ բազմիցս նշված է, շեշտը հոլովման մեջ այնքան էլ հաս-
տատուն չէ. հաճախ միևնույն բառի նույն հոլովում շեշտը եր-
բեմն այս, երբեմն այն վանկում կարող է լինել. ինչպես՝ սուր
սօր, սեռ. սըրու և սօրու. ծունկն>ծօնգնը, ծօնգնու և ծընգնու և
այլն։ Այս բոլորի հետևանքով առաջացող անխուսափելի շփո-
թությունն է եղել պատճառը, որ հակառակ ուղղականին ու հայ-
ցականին, մյուս հոլովներում հաղթել և ընդհանրացել է -ներ
ներ մասնիկը։ Այս տեսակետից, ահա, սեռականի այս ձևը, թեև
այժմ սակավ գործածական, բայց շատ արժեքավոր մնացորդ է
լեզվական ձևերի զարգացման ընթացքն ուսումնասիրելու համար։

գ) եզակի ներգոյականի -ում ‖ -էում վերջավորությունը, որ շատ հաճախ կարելի է լսել գարձվածքների և առակների մեջ, բայց երբեմն նաև սովորական խոսակցության միջոցին. ինչպես՝ պատ>պատ, ներգ. պատում և պատօմ. գլուխ>գըլօխ, ներգ. գըլխում և գըլխօմ և այլն։ Բերում ենք մի քանի առացվածքներ, որոնց մեջ գործածված է այդ կարգի ներգոյականը. Ջօկնը չի՝բեօմ ի մի՝ծոնիլ, օղձը՝ ավազօմ ջանուկը ջրում կմեծանա, օձը ավազում». Ջիրեօմի՝ փէօլ չի նի, սըրտօմը սէր չի նիլ գրպանում փող չլինի, սրտումը սեր չի լինի»։ Գըլխօմը խէլք չի կա, սրտօմը՝ ցավ գլխումը խելք չկա, սրտումը՝ ցավ». Շըվաքօմը ման գիւցիւղ տաներում ման եկող» (=ծուլ)։ Տրճօմը՝ իւրձակ, դըրքօմը՝ ճօտ տանը աքլոր, գրսում ճուտ» (=նէրսը տատանա, դուրսը քահանա) և այլն։

Մ. Շահյանցն իր «Համառոտ քերականության» մեջ առաջին հոլովման համար բերում է երկու օրինակ, մեկն այն է, ինչ որ մենք բերել ենք վերը, երկրորդ օրինակն ամփոփումն է այն հնարանությունների, որ մենք վերը հիշեցինք, և, որոնք բուն իր գրածի, լսել է յուր մանկության տարիներին. ատորև բերում ենք այդ օրինակն առանց որևէ փոփոխության։

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	մախատ	մխըտնէ
Սեռ.	մխատէ	մխըտնուն
Հայց.	մախատը	մխըտնէն
Գործ.	մխատով	մխըտներով
Բաց.	մխատէն	մխըտներէն
	մխատուն էնից	մխըտներուն էնից

* * *

Մյուս բարբառներում հոլովման մասին կան հետևյալ նկատելի կետերը.

Թրիլիսիի բարբառը ունի 7 հոլով, որոնք ձևով և կազմությամբ առհասարակ նույն են Երևանի հոլովների հետ։ Ահա Թրիլիսիի հիմնական տարբերությունները։— Բացառական հոլովը կազմվում է էմ, էմն մասնիկով. ինչ. գրէմէն, տնէմէն, մահէմէն, փխն. Երև. գրից, տնից, մահից։ Հոգնակի ուղղականը կազմվում է իր, ներ մասնիկներով, բայց մյուս հոլովները ստանում են ն ձայնը՝ ձայնական օրենքների համեմատ։ Հոգնակի սեռականը հակառակ ուղղականին՝ առանում է ու մասնիկը, նման կը ճյուղի բարբառներին։

Ահա դիվ «գիւ» բառի հոլովման պատկերը.

Ո (Հ)	դիվ	դիվիր
Ս.	դիվի	դիվէրու
Տ. (Հ)	դիվի, դիվին	դիվէրու(ն)
Բց.	դիվէմէ(ն)	դիվէրէմէ(ն)
Գրծ.	դիվով	դիվէրով
Ներգ.	դիվում	դիվէրում

Ղազախի ենթաբարբառը իր բացառականը կազմում է Երևանի բարբառի նման -ից ձևով՝ փոխանակ Ղարաբաղի բարբառի -աւն ձևի։

Շամախիի բարբառում հոլովման մէջ նկատելի է բացառականի աւ մասնիկը, որ նույն է Ղարաբաղի բարբառի հետ. ինչ. տական «տակից», տէղան «տեղից», արախաթունան «երեխայութիւնից» և այլն։ Սրա փափուկն է ու, ինչ. տոտոն-տատոնոն (դեսից-դենից). տա մինոն, ան մինոն (այս մեկից, այն մեկից)։ Ղարաբաղի բարբառի նման այստեղ էլ կարող է ավելանալ աւնա մասնիկը. ինչ. կնգանատնա «կնոջից»։ Գործիականը ունի -ով վերջավորութիւնը, մինչդեռ Ղարաբաղի բարբառը ունի ավ. ինչ. Շմ. պէրանով, Ղրբ. պիրանավ «բերանով», Շմ. ցէքով, Ղրբ. ծէռքավ «ձեռքով»։ Ներգոյականի մասնիկն է ում, որ կրճատվելով դառնում է մ և ներգաշնակութեան օրենքով՝ իմ, ինչ. պանիմի «բանում»։

Հոլովումը Աստրախանի բարբառում նույն է Երևանի բարբառի հետ. սեռ. ի, բաց. ից, գործ. ով, ներգ. մ, ինչ. մօտից, կլխից, տունից «դրսից», խօսքով, աչքով, մէջմը, տէղում և այլն։ Պատկանյանի հատվածներում բացառականը Ղարաբաղի ոճով ա, աւ ձևն ունի, բայց սա չի հաստատվում մյուսների մոտ։ Մինչև անգամ ից-ի փոխարեն մի քանի անգամ գտնում եմ իծ վերջավորութիւնը. ինչ. պէրանիծ «բերանից», կրէլիծ «գրելուց», տունիծ «դրսից» և այլն. ց հնչյունի այս ձևափոխութիւնը ցույց է տալիս նաև բասիրանօծ «աղքատանոց» բառը (թրք. քասիր «աղքատ» բառից)։

Աստրախանի բարբառի հետ գրեթե բոլորովին նույնը եղող Ղզլարի գավառականը հոլովման մէջ սղման և փոփոխութեան օրենքները վերացրել և հոլովումը կատարյալ պարզութեան է հասցրել. օր. շունի, ծուկի, կառի «գառան», հէրի «հոր», յէղի «եզան», տուն, տունից, տունով «տան, տնից, տնով», տուի «գոռան», ճորի «ջրի», մուկի «մկան», միսի «մսի», կարիի «գառուն», կինիի «գինուն», հոգնակի՝ ծուէր «ձվեր», լուէր «լվեր» և այլն։ Մի բառի սեռականը լինում է ծիաւ «ձիու», որ կազմված է եզաւ, մկաւ, գռաւ օրինակով, մինչդեռ այս սեռականները ջնջված են։

Հոլովման մէջ առանձնապես հետաքրքրական են ձայնավորով հանգող բառերը, որոնք հոգնակի թվում առանում են ք և հոլովվում են պարզապես եզակիի ձևով, ինչ. կինի «գինի», հոգ. կինիք, կինիքի, կինիքից, կինիքով—կատու, հոգ. կատուք, կատուքին, կատուքից, կատուքով—փէսայ, հոգ. փէսէք, փէսէքին, փէսէքից, փէսէքով—տղայ, հոգ. տղէք, տղէքի, տղէքից, տղէքով—լեզու, հոգ. լէզուք, լէզուքին, լէզուքից, լէզուքով, այսպես նաև՝ կէղացիքի, արաբաչիքից, Ղզլարցիքով և այլն։ Միայն մի քանի բառերն են, որ չեն ենթարկվում այս կանոնին. ինչ. ծուէր, լուէր «ձվեր, լվեր»։

Աստրջուրի ենթաբարբառում ներգոյականի վերջավորութիւնն է նի. ինչ. տուննինի «բուռն, ի տուն»։

Մշո բարբառը հոլովման մէջ հետաքրքիր հնութիւններ է պարունակում.

1. Հայցականը հին հայերենի նման զ նախդիրով է կազմում. օր. զց հաց «գիտաց», զց մըր տուն «զմեր տուն» և այլն։

2. Նախդրիվ հայցականի ի, յ մասնիկը այստեղ դեռ գոյութիւն ունի. օր. չուր օրիկն ի մահուն. կէրթամ յարտ։

Տիառինի ենթաբարբառը իր բացառականը կազմում է ից ձևով, բայց է ձևն էլ է գործածական. օր. վրեվէն «վրայից», իրեքից «երեկից», բանից «բանից», քյախքէն «քաղաքից», մտէս քյացեր ա «մտքիցս գնացել է»։

Վանի ենթաբարբառ Ոզմին հոլովման մէջ ունի հետևյալ վերջավորութիւնները. սեռ.-տր. ը, Են, գործ. ով, Եով, հոգնակիի մէջ՝ իր, -դ՝իր, ինչ. տղէյքդ՝իր «տղաները»։ Ահա հոլովման համառոտ մի պատկեր.

	Եզակի	Հոգնակի
Ո.	խաց	խացիր
Ս. Տ.	խացը. խացէյն	խացիրու
Բ.	խացէն	խացիրէն
Գ.	խացով	խացիրով

Տիգրանակերտի բարբառում հայցական հոլովը կազմվում է Մշո բարբառի նման զ նախդիրով, կամ առանց նախդիրի, բացառականը՝ ի վերջավորությամբ, բայց անորոշ դերբայները վերցնում են ուց վերջավորությունը. ինչ. սիրելուց, խօսելուց և այլն։

Վարբերդ-Երզնկայի բարբառը իբր տիպար բոլոր Ջաց-յայլ բարբառների՝ ունի 6 հոլով. Ուղ., Սեռ., Տր., Հայց., Բաց. և Գործ.։ Ցրականը միշտ նման է սեռականին, իսկ հայցականը ուղղականին, առանց շնչավոր և անշունչ առարկաների մեջ տարբերություն դնելու։ Բացառականի վերջավորությունն է ի՝ Հոգնակիի նշանը՝ եր, ներ։

Արաբկիրի բարբառում գործիականի վերջավորությունն է օք (փոխանակ ասելու ով). սա գրաբարի ա բունի հոգնակի գործիականի վերջավորությունն էր, որ այստեղ եզակիի նշանակություն է վերցրել. օր. ձ'էդքօք կամ ձէդքօք «ձեռքով», խօսէլօք «խոսելով» և այլն։ Կեսարիայի ենթաբարբառում հետաքրքրական ձև է մայր բառի սեռ.-տր. մեքօջ, որ ոջ հոլովման է հետևել։

Հետաքրքիր ձև է առացել կեսարիայի ենթաբարբառում անորոշ դերբայի սեռականը՝ մընալուչի, խօսէլուչի, գալուչի, էրթալուչի և այլն։ Ինչպես տեսնվում է, սրանք առացել են կրկին սեռական նշան (ու և ի), մի բան, որ ոչ մի բարբառի մեջ գոյություն չունի։

Ակնա բարբառում սեռականը կազմվում է ի վերջավորությամբ. ինչ. Ադիւձիւ «աստուծո», հօքիւն «հոգուն», մէռէլնէրիւն «մեռելներին» և այլն։

Օրդուի բարբառում շուն և տուն բառերի սեռականները լինում են շունաց, տունաց, օր. շունան ցան, տունան քովը տունանը տէր ըլալ։

Ռոտոսթոյի բարբառում գոյականների հոլովումը չի տարբերվում Պոլսի բարբառի հոլովումից. միայն -ութիւն վերջացող բառերի բացառականը կրկին ն-ով է. ինչ, մէնձութէննէ։

Արդվինի բարբառում բացառականի վերջավորությունն է մե. ինչ. Արթվինումէն, Սամէթումէն, հետևէմէն. սա, ինչպես գիտենք, Թբիլիսիի բարբառի հատկանիշներից մեկն է։ Նույնպես է նաև՝ հգ. սեռ. էրու ձևը, ինչ. ծառէրու, ձիէրու և այլն։ Ներգոյականի ում ձևը սովորական է՝ մէշում, օրում։

Արտանուշում բացառականի ձևեր են՝ դրսէն, ներսէն, վերէն։ Հոգնակի բացառականի ձևեր են՝ հայերաց, գնեբաց, օջախերաց, քուրդերաց, վօտնամաններաց։

Բացառիկ ձևեր են Երևանի բարբառում՝ Լոռի, սեռ. Լոռվա, կաշի, սեռ. կաշվի, որից էլ՝ կաշվեղեն, կաշվե «կաշեայ», որոնց բոլորի մեջ գտնում ենք մի անկանոն վ, որի ծագումը շատ պարզ չէ։

Երևանի բարբառում մի խումբ բառեր, որոնք -ոջ հոլովման են պատկանում (ազգականական բառեր), անցել են հայր բառի հոլովման. այսպես են՝

> ընկեր, ընկօր, հընկօր
> աներ, հանօր, հանօրոգա
> կեսուր, կեսօր

Այս բոլորի նախատիպն է քոյր, որ դրր. լինում է քեռ. մհյ. քրոջ, բայց նաև՝ քվօր, որով մտնում է հայր—հօր հոլովման մեջ։

Բարբառների մեջ եղած մեծագույն նորմուծությունը, որ և հետո անցավ արևելյան գրականին, ներգոյական հոլովն է։ Սրա նշանն է -ում վերջավորությունը. սա նախապես տրականի մասնիկ էր, ճիշտ ինչպես -ոջ վերջավորությունը. սրանց վրա ավելանալով նախդիրը՝ ձևանում էր ներգոյականը. անա հին օրինակներ այդ երկուսից՝ ի կամ յ նախդիրով.

> Ի հնումն և ի նորումս.
>
> Չի այսպիսում աւուր զգործս ժողովոյ ձերոյ չիք կատարեալ. Վրք. հց. ա. 261։
>
> ի քաւարանումն սրբում. Յհ. կթ. էջ 433
>
> ի կենցաղումս. Վրք. հց. ա. 176, 389, Վրք. և վկ. ա. 691
>
> յաւուրն սրբում. Ոսկ. ես. 442
>
> ի մեծ ժողովումն. Վրք. հց. ա. 620
>
> ի գլխումն. Պատ. տիմ. 164, յիւր տաճարումն. Պատ. օրին. 385, առ միացեալ կենցաղումն (ներդ.) Պատ. օրին. 409, առ մարդկային կենցաղումս (ներդ.), Պատ. օրին. 420
>
> ի քարայրումջ մի. Վրք. հց. ա. 87, յաւազոջ. Ոսկ. կողոս. 625
>
> ի չարում գործոջ «չար գործի մեջ». Ոսկ. գծ. 67
>
> ի փշալից թվումն և ի մարեներոջն. Ոսկ. գծ. 137
>
> ի ասթոջ ի փշարոյս ինչ տեղւոջ. Վրք. հց. բ. 51

ի նուաստոջ և ի ձորում. Փիլ. լին. 397
ի սափորոջ. Փիլ. լին. 326
ի տախտակոջ. Մոսբ. 116. յանկրդոջ. Ոսկ. ես. 308
ի լուսոջ. Փիլ. տես. 7, ի ջրաբրոջ. Ոսկ. ես. 309
ի նաւաստրուջ. Եղիշ. հրդ. 51։

Բարբառների մացրած նորութիւններց մեկն է բացառականի -ից մասնիկը, որ տարածված է Արևելյան Հայաստանի բարբառների մի մասի մեջ և որ այսօր Արևելյան գրականի. մեջ ընդունված ձևն է։

Ի՞նչ ծագում ունի այս մասնիկը[1]։

Հին հայերենի մեջ ուրիշ ոչ մի հարմար ձև չկա բացատրելու այս մասնիկի ծագումը, եթե ոչ ի հոլովման հոգնակի բացառականը։ Հայտնի է, որ շատ անեզական բառեր ստացել են եզակի նշանակություն. ի հոլովման հետևող անեզական բառերից մեկն էլ անշուշտ անցնելով այսպիսով եզակիի, գոյացել է -ից եզ. բացառականի մասնիկը, որ հետո տարածվել է բոլոր բառերի վրա։

Պետք չէ կարծել, թե -ից մասնիկի գործածություն բնիկ հանուր է բոլոր արևելահայ բարբառներին և գոյություն չունի ոչ մի արևմտահայ բարբառում։ Վերջիններից -ից գիտեմ վանի բարբառը, որտեղից Հին Բայազետի և Մակուի վրայով գալիս է Երևան և այստեղից տարածվում է Ագուլիս, Թավրիզ և Նոր Ջուղա։ Մնացյալը ամբողջ ունի է, էն ձևը. այսպես Թբիլիսի, Ղարաբաղ, Շամախի, Մեղրի, Մարագա և այլն։

Բացառականի -ից մասնիկի նման է հնչում -ից մասնիկը, որը բացառականի իմաստով գործածական է կր ճյուղի բարբառների մեջ՝ մի խումբ բառերի վրա։ Այսպես՝

Պլ. ասկից, առկից, անկից, հոսկից, հոգկից, հոնկից, ուրկից, սկից, տկից, նկից

նաև գրական լեզվի մեջ՝

օրից օր, տարից տարի։

Այս ձևերը ըստ իս կազմված են ց նախդիրով։ Նախապես ասվել է՝ օրէ ցօր, տարէ ցտարի, ասկէ ցհոն, հոսկէ

[1] *Այս մասնիկի հետ մեծ նմանություն ունի մոնղոլ* ece *(կամ* ուս *մասնիկը, որով կազմվում է թեթև ձայնավոր ունեցող բառերի բացառականը. բայց սա, անշուշտ, պատահական է. արդեն հաստուկ է գրական մոնղոլերենին. ժողովրդական լեզվի մեջ հնչում է* es. *Ինչ.* tengires «երկնքից»։

ցհոն, ո՞րկէ ցուր, հետո ց անցնելով առաջին մասին՝ դարձել է՝ օրից օր, տարից տարի, ասկից հոն, հոսկից հոն, ո՞րկից ուր և այլն, որով կարծվել է, թե սրանք բացառական ձևեր են։

Ուրիշ բարբառներ սրանց նմանությամբ առեղծել են գեղոց գեղ (Պրտ.) և նման ձևեր։

-վան հոլովման ծագումը կարելի չէ դնել ի վերջացող բառերի հոլովումից. օր. տարի-տարւոյ, ապա՝ տարվան, արևել. տարվա։ Գրբ. ւոյ հոլովումը տալիս է աշխ. -ու, ինչ.

հոգի—հոգւոյ>հոգու
գարի—գարւոյ>գարու
գինի—գինւոյ>գինու
այգի—այգւոյ>այգու

Եթե տարի բառից ստանայինք տարվան, վերոհիշյալ բառերն էլ պիտի հոլովվեին հոգվան, տարվան, գինվան, այգվան, ինչ որ ծիծաղելի է. ուստի տարի-տարւոյ, տարվան պետք է ունենա այլ ծագում։

Ես կարծում եմ, որ ինչպես մահ—մահու, մահվան, նմանապես՝ առաւօտ—առաւօտու, առաու, առաուան (առավան), երեկոյ, իրիկու, իրիկուն, իրիկվան ծագում են ու հոլովումից։ Նախ դարձել է -վան, որից արևելյան հայերենում զեղչվելով ն, ստացվել է առաւօտվա, իրիկվա, տարվա և այլն։

Երևանի բարբառում (ինչպես և ուրիշ տեղեր) նոր նշանակում է նաև «այժմ» և հետո. օր. նոր եկավ (հենց այժմ եկավ)։

Ձյունը հալվի, նոր (ձյունը թող հալվի, այնուհետև կամ հետո)։

Առաջին իմաստով կարելի է հոլովել -վա հոլովումով. ինչ.

Ալիսը նորվա աղջիկ չէ. մենք նրան վաղուց ենք ճանաչում։

Ներգոյականի մի ուրիշ ձևն էլ կազմվում է -ին վերջավորությամբ, որ սովորական է թե արևմտյան, և թե մանավանդ արևելյան բարբառներին. այսպես՝ Թոչունը ծառի գլխին նստել է։

Պարտքս կվճարեմ ամսի վերջին։
Ցուրտը մեղմանում է մարտ ամսին։
Նա նստած է աթոռին։

Ժայռը կանդնած է սարի ծայրին:
Տարվա սկզբին քննությունները կսկսեն:
Այս ձյունից, բուքից ո՞ւր ես դնում:
Տաք օրերին հաճելի է զբոսնել:

Ահա մի ընդարձակ նախադասություն, ուր -ին վերջավորությամբ 11 բառ հաջորդում են իրար, բոլորն էլ ներգոյականի իմաստով.

Կարմիր գլխարկը գլխին, ժպիտը երեսին, փայլուն ուսադիրները երկու ուսին, ծաղիկը կրծքին, գոտին մեջքին, թուրը կողքին, մարակը ձեռքին, փայլուն կոշիկները ոտքերին մանր էր գալիս երեկոյան հովին, սոսիների տակին, կարկաչուն գետի եզերքին:

Կարելի է նաև նույն ձևով կազմել ածականը. ինչպես՝ խելքը գլխին է (իմաստուն մարդ է):

Այս կարգի ներգոյականները կարող են ցույց տալ նաև ժամանակ. ինչ. դրբ. իտօճի «տարի ժամանակ», հարսանիքին «հարսանիքի ժամանակ», հովին «հովի ժամանակ» և այլն:

Ներգոյականի այս ձևը Համշենի բարբառում դարձել է սովորական հոլով:

Այս ձևը անշուշտ ծագում է գրաբարի առաջին հոլովման ներգոյականից, նախորի անկումով, ճիշտ ինչպես կազմվել է -ում ձևը. օր. ի ծայրին>ծայրին, մյուս հոլովները բոլորը վերածվել են առաջինին. օր. յամսեանն>ամսին, ի բերանի>բերնին և այլն. անեզական բառերն էլ դառնում են եզակի. օր. յեղերս>եղերքին:

Նախորի անկումով, որ սովորական երևույթ է հայերենում, պիտի ձևանար ներգ. -ում և -ոջ. երկու ձևերից առաջինը միայն կյանքի կոչվեց և Միջին հայերենից արդեն ունենք այդ ձևով օրինակներ. ինչ.

Կաթում «կաթի մեջ». Մխ. բժշ. 55:

Ավելի հետո այս ձևը ընդհանուր դարձավ արևելյան գրաբարում: Բայց այստեղ էլ -ում ներգոյականը բացարձակ ընդհանուր ձև չէ. այսպես.

1) Անձնական հատուկ անունները (անձնանունները) չունեն ներգոյական հոլով, կարելի չէ ասել. Կարապետում, Մարտիրոսում, Նվարդում և այլն. ինչպես նաև ազգանուններով՝ Սահակյանում, Կարապետյանում և այլն: Այսպես նաև ուրիշ լեզուներում (տես Meillet, MSL, 20 էջ 96): Կարելի է ասել միայն՝

Կարապետի մեջ, Նվարդի մեջ և այլն: Սակայն տեղական հատուկ անունները (տեղանունները) կարող են կանոնավոր կերպով կազմել իրենց ներգոյական հոլովը. ինչ. Վանում, Երևանում, Պոլսում, Երուսաղեմում, Եգիպտոսում, Հայաստանում, Եփրատում, Զինաստանում և այլն:

Ծանոթ.— Տեղանունների ներգոյական և մանավանդ, նախորով հայցականի հոլովի գործածությունը այնքան մեծ է, որ մինչև անգամ պատճառ է դարձել ուղղականի ձևը խափանելու: Առասկության մեջ ամենատարօրինակ ձևն է և եղել է՝ ո՞ւր ես գնում —Յո՛ երթաս.— ի կարս, յԱգուլիս, ի Նորատուս, յԱյլարերս և այլն. կամ որտե՞ղ ես ապրում կամ մնում.— պատասխանը՝ նույն ձևով: Ահա այս հոլովների չափազանց հաճախակի գործածությունը պատճառ է դարձել՝ որ մինչև անգամ չգիտենք, թ այդ բառերի ուղղականն է կարք, Ագուլիք, Նորատուք, Այլարերք և այլն, որոնք չեն ավանդված, կա նաև սրանց սեռական կամ բացառական հոլովը.— Ուտո՛ գաս.— ի Կարուց, յԱգուլեաց, յԱյլարերդից և այլն: Ավելացնենք նաև սեռական-տրական գործածությունը. Կարուց թագավորությունը, Ագուլեաց եկեղեցին, Այլարերից լավ ընկույզը և այլն: Դրա համար էլ հայցականը անցել է ուղղականի տեղը և ասում ենք միշտ Կարս, Ագուլիս, Նորատուս (այժմ էլ աղավաղված՝ Նորադուզ), Ալափարս, Մասիս, Եղեգիս (թրքացրած ձևով՝ Դաբղայազ), Մոկս, և նույնիսկ օտար անուններ՝ Տփղիս, Մանգլիս (սեռականում՝ Տփղեաց, Մանգլեաց):

Նախորով հայցականի հաճախակի գործածության այս ձևը զարմանալի արդյունքի է հասել տաճկերենի մեջ, ուր հունական տեղանունները կուլ են տվել նաև հն. նախորը: Այսպես՝ հունարեն հարցրել են՝ Πῦ εἶ σὺ πηγαίνεις.— պատասխանը՝ εἰς τὴν Πόλιν -ի քաղաքն (Պոլիս).— սրանից առաջացել է ռճկ. Իսթամպոլ: Այսպես նաև՝ εἰς Ἀμίσον — Սամսոն, εἰς τὴν Κόν—Իսթանքէօյ (Քոս կղզին) և այլն:

2) -ում վերջացած գոյականները չունեն ներգոյական. կարելի չէ ասել շարժումում, թաղումում, փոփոխումում, այլ միայն՝ շարժման մեջ, շարժումի մեջ և այլն:

3) Երկար բառերի ներգոյականը խորթ է համարվում. օր. խոսակցությունում, հարստությունում... անսովոր են, ավելի

լավ է ասել խոսակցության մեջ, հարաւության մեջ և այլն։ Բայց այս միևնույն բառերի հոգնակին, թեև ավելի երկար, կարող է առանձալ ներգոյականի ձև. ինչ. խոսակցություններում, հարաւություններում և այլն. պատճառն այն է, որ -ներում զգացվում է առանձին և շատ սովորական ձև է։

Մինչև այստեղ տեսանք բարբառների մեջ գոյություն ունեցող զանազան հոլովումները։ Ընդհանուր ձգտումը եղել է քան կարելիության պակասեցնել հոլովման տեսակները և դիմել գեպի մի ություն, այն է՝ ընդհանրացնել ի հոլովումը։ Այս նպատակին ոչ մեկը չի հասել կատարյալ չափով, բայց հետաքրքիր բարբառներից ոմանք այս գծով շատ հանդուգն քայլեր են արել և գոնե մոտեցել են մեկ հոլովման նպատակակետին։ Այս կարգի բարբառներից հիշենք՝

Ասարախան, որ ունի ծուկնի «ձկան», տուռնի «դռան»։

Պոլիս, որ ունի ծուկի, մուկի, դուռին, մեննծութինի «մեծության»...։

Սերաստիայի բարբառում -ոջ հոլովումը (հնչվում է ոչ) ընդարձակված է նորանոր բառերով. այսպես՝

ուալարոչ (ուալայր բառի սեռ. տր.)
կեսարոչ (կեսրայր » » »)
նիրոչ (ներ » » »)
մօրքուրարոչ (մորաքրոջ մարդու)
հօրքուրարոչ (հորաքրոջ »)
կեսրոչ (կեսուրի)

Այս բոլորից դուրս բարբառները ունեն զանազան անկանոն հոլովումներ, որոնք թեև ինքնին վերցրած անկանոն, բայց իրապես գրաբարի կանոնավոր հոլովմանց շարունակություններն են և ձևացած են նրանցից միմիայն ձայնական օրենքներով։

Այսպես՝

Հճ. դուն, սեռ. դօն (<տուն, տան)
Ագլ. շօն, սեռ. շուն (<շուն, շան)

Ջահարմահալում (Նոր-Ջուղա) կեսուր բառի սեռականն է կեսեր (տես Երեմեան, Ջհրմհլի ժղ. բննս. էջ 62)։

Ռուբ— Հճ. ուղ. քիյ, սեռ. քէյ, (քիյ—քույր, քան որում ույ>ի. քէյ>քէր, փխ. քեռ. ազդվելով ուղղականի ր-ից).

Ռիվոլայի բառգրքում, էջ 392, սեռ. քորոչ (փխ. քրոջ)։

8. ՀՈԼՈՎՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Երկու գրական լեզուներից յուրաքանչյուրը հետևելով իր շրջանի բարբառներին, ստեղծել է հետևյալ հոլովումները.

Առաջին հոլովում

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	հաց	հաց
Մ. Տ.	հացի	հացի
Բ.	հացից	հացե
Գ.	հացով	հացով
Ն.	հացում	—

Այս հոլովման նշաններն են՝ սեռական-տրականի համար ի, բացառականի համար՝ արևմտյան գրականում՝ -է, արևելյան գրականում՝ -ից, գործիականի համար երկու գրականումն էլ՝ -ով, իսկ ներգոյականի համար՝ -ում, որ գոյություն ունի միայն արևելյան գրականում։

Այս հոլովման են հետևում. 1) հայերեն բառերի ամենամեծ մասը. 2) օտար բառերը ամբողջապես. 3) հատուկ անունները առանց բացառության։

Բացառություն են կազմում միայն այն բառերը, որոնք հետևում են հաջորդ հոլովումներին։

Առաջին հոլովումը գրաբարի -ի հոլովման շարունակությունն է ընդհանրապես։

Երկրորդ հոլովում

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	ձի	ձի
Մ. Տ.	ձիու	ձիու
Բ.	ձիուց	ձիե
Գ.	ձիով	ձիով
Ն.	ձիում	—

Այս հոլովման նշանն է սեռական-տրական՝ ու, մյուս հոլովները ամբողջապես նույն են առաջին հոլովման հետ, բացի բացառականից, որ արևելյան գրականում լինում է -ուց։

Այս հոլովման են հետևում.

1) Բոլոր բայերի անորոշ դերբայը. ինչ. աշխատելու, ուտելու, խոսելու, բողոքելու, սիրելու, խաղալու, գողանալու և այլն:

2) Սակավաթիվ գոյականներ, մեծ մասամբ միավանկ; այսպես են՝ մարդ, հեղ, ծով, տղայ (սեռ. տղու), շահ, ժամ, դար, հայ, գլուխ, էշ (իշու կամ էշու):

Սակայն այս գոյականներն էլ հետզհետե անցնում են առաջին հոլովման. արևելյան գրականում արդեն սովորական են դարձած ծովի, տղայի (տղի), շահի, ժամի, դարի, հայի, գլխի, էշի (իշի), նույնիսկ մարդի ձևերը. կարելի է դեռ ասել մարդու, շահու, բայց ոչ ծովու, հայու և այլն. արևմտյան գրականումն էլ վերի ձևերի հետ միասին կան միաժամանակ՝ ժամի, շահի, ծովի ձևերը. կես դար առաջ արևմտյան հայերենումն էլ արև, խենթ, պառավ, արջ բառերը կազմում էին իրենց սեռականը ու ձևով. ինչ. արևու, խենթու, պառավու, արջու[1]: Բայց այսօր այս ձևերը կամ հնարան են համարվում կամ ռամկական: Սովորությունը պահանջում է միայն արևի, խենթի, պառավի, արջի: Արևելյան գրականում այս ձևով է հոլովվում նաև առաված, սեռ. առածու, բց. առածուց, գրծ. առածով, առուծով:

Այսպիսով երկրորդ հոլովման համար գլխավորապես մնում են դերբայները:

Արևելյան հայերենը նույն հոլովման է ենթարկում նաև ի վերջացող բազմավանկ բառերը. ինչ. գինի-գինու, այգի-այգու, այգուց. գարի-գարու, գարուց. եկեղեցի-եկեղեցու, եկեղեցուց, նույնիսկ հատուկ անունները. ինչ. Բաֆֆի-Բաֆֆու, Բաֆֆուց, Շամախի-Շամախու, Շամախուց և այլն: Բայց այս վերջին կետումն էլ կան տատանումներ, և հատուկ անունները սկսել են հոլովվել նաև առաջին հոլովման ձևով. ինչ. Ալի-Ալու, Ալիի, բց. Ալուց, Ալիից, նույնիսկ Բաֆֆի-Բաֆֆիի, Բաֆֆիից և այլն: Սովետ. Հայաստ. 1945 թ. ապր. 29, էջ 2, սյունակ 5-րդ, կարդում ենք. «Ձերբակալել են Մուսսոլինիին, Պավոլինիին, Ֆարինաչչիին, Բուֆֆարինիին և Գրացինիինն»:

Անախորժ է այդպիսի, այդպիսուն, պետք է ասել այդպիսին (համմտ. հույս էլ չուներ գտնել մի այդպիսուն. Շիրվանզադե, Ցերկերի լիակ. ժող. 1930, Դ, էջ 349):

[1] Տե՛ս Այան. Քնն. քեր. Բ. 7:

Երկրորդ հոլովումը ներկայացնում է գրաբարի ու և ոյ հոլովումները. այսպես՝

Գրբ.	Աշխարհաբար
դար—դարու	դարու
ձի—ձիոյ	ձիու
սիրել—սիրելոյ	սիրելու
գարի—գարւոյ	գարու

Երրորդ հոլովում

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	մեծութիւն	մեծութիւն
Ս. Տ.	մեծութեան	մեծութեան
Բ.	մեծութենից	մեծութենէն
Գ.	մեծութենով [մեծութեամբ]	մեծութեամբ
Ն.	(մեծութենում)	—

Այս հոլովման նշանն է գլխավորապես սեռական-տրականի մեջ -ան, մյուս հոլովները արևելյան գրականում նույն են առաջին հոլովման հետ. իսկ արևմտյան գրականում թեև բացառականը նույն է առաջին հոլովման հետ, բայց գործիականը ունի -ամբ ձևը:

Այս հոլովման են հետևում՝

1) Ամեն -ութիւն վերջացող վերացական բառերը, առանց բացառության.

2) -ում հանգող գոյականներ, որոնք դերբայի նշանակություն ունեն. ինչ. խաղարում, թագում, կործանում, համբարձում, շարժում և այլն:

3) Մի խումբ մասնավոր բառեր, որոնք են՝ էրիկ, կնիկ, աղջիկ, լեռ, գուռ, տուն, շուն, ձուկ, եզ, գառ:

Այս բոլորը ներկայացնում են դանազան զարտուղություններ.

-ութիւն հանգող բառերի գործիականը արևմտահայ գրականում անցյալ դարու առաջին կեսում լինում էր -թեամբ. ինչ. մեծութեամբ, զօրութեամբ, թեթևութեամբ (Այան. Քնն. քեր. Բ, 10), բայց այժմ սովորական է զօրությամբ, որ գրաբարի ձևն է: Արևելահայ գրականում ընդհակառակը ավելի սովորական է -ու-

1) Բոլոր բայերի անորոշ դերբայը. ինչ. աշխատելու, ուտելու, խոսելու, բողոքելու, սիրելու, խաղալու, գողանալու և այլն:

2) Սակավաթիվ գոյականներ, մեծ մասամբ միավանկ, այսպես են՝ մարդ, հեղ, ծով, տղայ (սեռ. տղու), շահ, ժամ, դար, հայ, գլուխ, էշ (իշու կամ էշու):

Սակայն այս գոյականներն էլ հետզհետե անցնում են առաջին հոլովման. արևելյան գրականում արդեն սովորական են դարձած ծովի, տղայի (տղի), շահի, ժամի, դարի, հայի, գլխի, իշի (իշի), նույնիսկ մարդի ձևերը. կարելի է դեռ ասել մարդու, շահու, բայց ոչ ծովու, հայու և այլն. արևմտյան գրականումն էլ վերի ձևերի հետ միասին կան միաժամանակ՝ ժամի, շահի, ծովի ձևերը. կես դար առաջ արևմտյան հայերենումն էլ արևխեներ, պառավ, արջ բառերը կազմում էին իրենց սեռականը ու ձևով. ինչ. արևու, խեճու, պառավու, արջու[1]: Բայց այսօր այս ձևերը կամ հնաբան են համարվում կամ ռամկական: Սովորությունը պահանջում է միայն արևի, խեճի, պառավի, արջի: Արևելյան գրականում այս ձևով է հոլովվում նաև առավոտ, սեռ. առածու, բց. առածուց, գրծ. առածով, առաուծով:

Այսպիսով երկրորդ հոլովման համար գլխավորապես մնում են դերբայները:

Արևելյան հայերենը նույն հոլովման է ենթարկում նաև ի վերջացող բազմավանկ բառերը. ինչ. գինի-գինու, այգի-այգու, այգուց. գարի-գարու, գարուց. եկեղեցի-եկեղեցու, եկեղեցուց, նույնիսկ հատուկ անունները. ինչ. Բաֆֆի-Բաֆֆու, Բաֆֆուց, Շամախի-Շամախու, Շամախուց և այլն: Բայց այս վերջին կետումն էլ կան առաուանումներ, և հատուկ անունները սկսել են հոլովվել նաև առաջին հոլովման ձևով. ինչ. Ալի-Ալու, Ալիից, բց. Ալուց, Ալիից, նույնիսկ Բաֆֆի-Բաֆֆիի, Բաֆֆիից և այլն: Սովետ. Հայաստ. 1945 թ. ապր. 29, էջ 2, սյունակ 5-րդ, կարդում ենք. «Ձերբակալել են Մուսսոլինիին, Գավրիլինիին, Ֆարինաչիին, Բուֆֆարինիին և Գրացինիին»:

Անախորժ է այդպիսի, այդպիսուն, պետք է ասել այդպիսին (համմտ. հուլս էլ չուներ գտնել մի այդպիսուն. Շիրվանզադե, Ցերկերի լիակ. ժող. 1930, Դ, էջ 349):

[1] Տե՛ս Այտն. Քեն. քեր. Բ. 7:

Երկրորդ հոլովումը ներկայացնում է գրաբարի ու ևոյ հոլովումները. այսպես՝

	Գրբ.	Աշխարհաբար
	դար—դարու	դարու
	ձի—ձիոյ	ձիու
	սիրել—սիրելոյ	սիրելու
	գարի—գարւոյ	գարու

Երրորդ հոլովում

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	մեծութիւն	մեծություն
Ս. Տ.	մեծութեան	մեծության
Բ.	մեծութենից	մեծութենե
Գ.	մեծութեանով [մեծութեամբ]	մեծութեամբ
Ն.	(մեծութեանում)	—

Այս հոլովման նշանն է գլխավորապես սեռական-տրականի մեջ -աւ, մյուս հոլովները արևելյան գրականում նույն են առաջին հոլովման հետ. իսկ արևմտյան գրականում թեև բացառականը նույն է առաջին հոլովման հետ, բայց դործիականը ունի -ամբ ձևը:

Այս հոլովման են հետևում՝

1) Ամեն -ութիւն վերջացող վերացական բառերը, առանց բացառության.

2) -ում հանգող գոյականներ, որոնք դերբայի նշանակություն ունեն. ինչ. խաղարում, թաղում, կործանում, համբարձում, շարժում և այլն:

3) Մի խումբ մասնավոր բառեր, որոնք են՝ էրիկ, կնիկ, աղջիկ, լեռ, գուռ, տուն, շուն, ձուկ, եղ, գառ:

Այս բոլորը ներկայացնում են զանազան զարաւուղություններ.

-ութիւն հանգող բառերի գործիականը արևմտահայ գրականում անցյալ դարու առաջին կեսում լինում էր -թենով. ինչ. մեծութենով, զօրութենով, թեթևութենով (Այտն. Քեն. քեր. Բ, 10), բայց այժմ սովորական է զօրությամբ, որ գրաբարի ձևն է: Արևելահայ գրականում ընդհակառակը ավելի սովորական է -ու-

թիւնով, քան թե գրաբարեան -ութեամբ: Ներգոյական ձևը քիչ է գործածվում. ավելի սովորական է -ութեան մեջ. ինչ. մեծութեան մեջ, հարստութեան մեջ:

-ում հանգող գոյականները սեռականում լինում են սըդմամբ -ման. ինչ. խավարման, շարժման, համբարձման, թաղման, կործանման և այլն: Այս ձևերը արևմտահայոց մեջ ավելի սովորական են, քան առաջին հոլովման համաձայն՝ խավարումի, շարժումի, համբարձումի, թաղումի, կործանումի և այլն: Հակառակն է արևելահայ գրականում, ուր ավելի սովորական է -ումի, քան -ման ձևը (շարժումի, քան շարժման): Բացառականը երկու գրականում էլ առաջին հոլովման համաձայն է լինում (շարժումէ, շարժումից). գործիականը արևմտահայ գրականում լինում է երկու ձևով՝ -մամբ և -ումով (շարժմամբ, շարժումով), իսկ արևելահայ գրականում՝ ավելի -ումով ձևն է սովորական: Ներգոյականը ընդհանված չէ և ասում են -ման մեջ կամ -ումի մեջ (շարժման մեջ, շարժումի մեջ և ոչ թե՝ շարժումում).

Մանավոր բառերը արևմտահայ գրականում հոլովվում են հետևյալ ձևով.

էրիկ, էրկան, էրկանե, էրկանով
կնիկ, կնկան, կնկանե, կնկանով
աղջիկ, աղջկան, աղջկանե, աղջկանով
լեռ, լեռան, լեռնե, լեռնով
գուռ, գռան, գռնե, գռնով
տուն, տան, տունե, տունով
շուն, շան, շունե, շունով
ձուկ, ձկան, ձուկեն, ձուկով
եզ, եզան, եզե, եզով
գառ, գառան, գառե, գառով
բեռ, բեռան, բեռնե, բեռով

Կարելի է ասել նաև՝ էրիկի, էրիկով, կնիկե, կնիկով, աղջկե, աղջիկով, ձուկի, եզի, իսկ գառ սովորական է հատկապես գառնուկ ձևով (գառնուկի, գառնուկե, գառնուկով):

Աբևելահայ գրականում չկա էրիկ բառը. կնկան, աղջկան սեռականների փոխարեն ասում են կնկա, աղջկա (և վերջածայնը որոշյալ հոգ կարծվելով ջնջվել է). բց. կնկանից, աղջկանից, գրծ. կնկանով, աղջկանով.— մյուս բառերը սեռականում լինում

են վերի ձևով՝ լեռան, գռան, տան, շան, ձկան, եզան, գառան, բեռան, թռան (բոլորն էլ պահում են և վերջածայնը), բացառական՝ լեռնից, գռնից, տնից կամ տանից, շնից կամ շանից, ձկնից, եզից, գառնից, բեռից, թռից, գործիական՝ լեռնով, գռնով, տնով կամ տանով, շնով կամ շանով, ձկնով, եզով, գառով, բեռով, թռով, ներգոյականը կազմվում է -ում մասնիկով, բայց շնչավորների համար ավելի սովորական է մեջ-ով ձևը:

Սրանցից դուրս կան նաև մի քանի բառեր, որոնք հաճախ արևմտահայ գրականում հոլովվում են այս հոլովմամբ. այսպես՝ աւուն-աւվան, ծնունդ-ծննդյան, ժողովուրդ-ժողովըրդյան, հոգեգալուստ-հոգեգալստյան. բայց սրանց հետ սովորական են նաև՝ աւուրի, ծնունդի, ժողովուրդի, հոգեգալուստի. առաջին ձևերը գրաբարից են առնված և հատուկ են հնասերներին. մյուս հոլովները առաջին հոլովման համաձայն են. բց. աւուրեն (աւուրից), ծնունդն (ծննդից), ժողովուրդն (ժողովըրդից). հոգեգալուստն (հոգեգալստից), գրծ. աւուրով և այլն (բայց կա մինչև անգամ՝ անվամբ):

Գրաբարի և հոլովման պահպանող ուրիշ բառեր էլ կան, որոնք կարող են հետևել այս հոլովման. այն է՝

Նուռ, արյուն, սյուն, ձյուն, անկյուն, ծուխ, սեռ. նռան, արյան, սյան, ձյան, անկյան, ծխան, բայց նաև՝ նուռի, արյունի, սյունի, ձյունի, անկյունի, ծուխի. մյուս հոլովները՝ առաջին հոլովման պես:

Ամառ, ձմեռ, գարուն, աշուն բառերը լինում են սեռ. ամռան, ձմռան, գարնան, աշնան. բայց այս բառերի վրա տես հաջորդ հոլովման մեջ:

Չորրորդ հոլովում

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	օր	օր
Ս. Տ.	օր-վա	օր-վան
Բ.	օր-վանից, օրից	օրվանե, օրե
Գ.	օր-ով	օր-ով
Ն.	օր-ում	—

Այս հոլովման նշանն է գլխավորապես սեռական-տրականի մեջ -վան վերջավորությունը, որ արևելահայ գրականում դար-

ձել է -վա: Այստեղ էլ վերջավորութ յան վերջաձայնը չփոխվել է որոշիչ հոդի հետ և կրճատվել. բայց նա նորից երևան է գալիս բացառականի մեջ:

Այս հոլովման հետևող բառերն են՝

առեն «ժամանակ» (գործածական է միայն արևմտահայոց մեջ)
ամիս
այսօր
այժմ
առաու, առաուան, գործածական է արևմտահայոց մեջ. բայց ավելի գրական է՝ առավօտ, որ արևելահայ գրականում էլ կա.

ամառ
անգամ
գիշեր
էգուց (միայն արևելահայ գրականում)
ժամանակ
իրիկուն, գործածական է արևմտահայոց մեջ. սեռ. իրիկվան, բց. իրիկվանէ, արևելահայ գրականը գործ է ածում՝ երեկո.
տարի (արևելահայ գրականում բց. տարուց, գրծ. տարով, սեռ. տարվա), արևմտահայ գրականում՝ տարվան, տարվընեն կամ տարիեն, տարիով)
շաբաթ
հետինք (գործածական է արևմտահայ գրականում, թեև ավելի գավառական բնույթ ունի)
կեսօր
հեղ (գործածական է արևմտ. գրականում)
ձմեռ
ցերեկ
քառորդ

հիմա կամ հիմի, հիմիկ (արևմտ.) հոլովվում է սեռ. հիմակվան, հիմիկվա, բց. հիմակվանէ, հիմիկվանից

առաջ
հերու
երեկ
վաղը, սեռ. վաղվան, վաղվա, բց. վաղվեն, վաղվանից:

Սրանցից ամառ, ձմեռ լինում են նաև ամռան, ձմռան. բայց սրանք ավելի մակրայական արժեք ունեն. ամռան կգամ, ամառվան տաքերը սկսան, ամառվա շոգին. ձմռան կտեսնվենք, ձմեռվան ցուրտը, ամառվան տաքը, ձմեռվա ցրտին: Այսպես չեն սակայն գարուն, աշուն, որոնք չեն հետևում այս հոլովման, այլ երրորդ հոլովման համեմատ լինում են սեռ. գարնան, աշնան:

Այս հոլովման հետևող բառերը, ինչպես տեսնում ենք, ժամանակ ցույց տվող բառեր են. բացառություն է մահ, որ թեև ժամանակ չի ցույց տալիս, բայց հոլովվում է մահվան, մահվանե, մահով (արևելահայ գրականում՝ մահվան հակառակ ընդհ. օրենքին պահելով և վերջաձայնը), մահվանից, մահով:

Քառորդ բառը հետևում է այս հոլովման միայն այն դեպքում, երբ նշանակում է «մի ժամի քառորդը». իսկ ուրիշ բաների քառորդը նշանակելու դեպքում հետևում է առաջին հոլովման. օր. քառորդի գինը վճարեցի. Պարտեզի քառորդի չափ:

Կան սակայն բառեր, որոնք ժամանակ են ցույց տալիս, բայց չեն հետևում այս հոլովման. ինչ. դար, րոպե, երեկո, վայրկյան. սրանք հոլովվում են դարու-դարի, րոպեի, վայրկյանի ձևով: Անսովոր մարդիկ ասում են երբեմն երեկոյվան, րոպեվան, քան որում սրանք ժամանակ ցույց տվող բառեր են. բայց սրանք ընդունված ձևեր չեն:

Մյուս բառերն էլ, որ հիշեցինք վերևում, երբեմն հոլովվում են տարբեր հոլովմամբ, այսպես կարելի է ասել՝ օրի (Հինգ օրի չափ), ամսու-ամսի (նաև ամսուս «այս ամսվայ». ինչ. ամսուս 15-ին), այժմու, շաբթու կամ շաբաթի (օր. երկու շաբաթի մեջ. Պռոշեան, Հուշեր, Երևան, 1940, էջ 23—24. անցյալ շաբթու), անգամու (այս անգամուն), ժամու-ժամի, հեղու:

Ավելի խախուտ են բացառական և գործիական հոլովները. հաճախ բացառականի -վանե, -վնե, -վանից ձևը անսովոր է և ասվում է -ե, -ից, այսպես՝ այն առեներն, մեկ անգամ, մի անգամից, ամսե-ամիս, տարվե-տարի — տարուց-տարի, երկու շաբաթեն — երկու շաբաթից, մեկ քառորդեն — մի քառորդից:

Ընդհակառակը, -վանե, -վնե, -վանից ձևը ավելի սովորական է հետևյալ բառերի համար.

առաու-առաուեն, հեղ-հեղեն, հեղվանե, այժմ-այժմվանից, այսօր-այսօրեն, այսօրվանից, ամառնեն, ամառվանից, ձմեռվանե, ձմեռնեն, ձմեռվանից, ցերեկնեն-ցերեկվանից, հիմակվա-

նև-հիմակվնե-հիմակվանից, առաջվնե-առաջվանից, հերվնե-հերվանից, երեկվնե-երեկվանից, վաղվնե-վաղվանից, էգուցվանից և գործածութեան մեջ չկան առավեն, հեղեն, այսօրեն (թեև կա՝ այն օրեն), ամառվեն, ամառից, ձմեռեն, ձմեռից, ցերեկեն-ցերեկից, հիմակեն-հիմիկից (բայց կա հիմիկուց), այժմեն-այժմից, առաջեն— (բայց կա՝ առաջուց, իսկ առաջից՝ ցույց է տալիս տեղ, ոչ ժամանակ, որի դեմ արևմտահայն ունի առջևեն, քան այսմ իրար հետ համազոր են առջևեն-առաջից, առաջվնե-առաջուց), հերվեն-հերվից, երեկեն-երեկից, վաղեն-վաղից, էգուցից։ Իրեն մակրայ գիտենք այժմեն։

Բացառականի -վանե, -վնե, -վանից ձևերի ջննման պատճառը հաճախ այն է, որ նրանք շփոթվում են կրկնակ հոլովման հետ. օր. էգուցվանից կարող է նշանակել քե վաղվա օրից և քե վաղվա օրը եղածից (d'hier և de celui d'hier)։

Գործիականի համար ունենք ընդհանրապես -ով ձևը և չի գործածվում -վանով, -վնով ձևը. ուր որ այս ձևերը գտնենք, պետք է հասկանալ «այն ժամանակ եղածով». այսպես՝ տարով գործիականն է տարի բառի, իսկ տարվանով նշանակում է «այն տարի եղածով», օր. այս տարվա հասույթը անցյալ տարվանով միասին լինում է 20000 ռուբլի։

Բայց շատ բառեր կան, որոնց գործիականը ուղղակի չի գործածվում. այսպես է՝ այժմ, էգուց, հետինք, հիմա-հիմի, առաջ, հերու, երեկ, վաղը։ Ցաճախ -ով ձևով գործիականները մակրայ են. ինչ. ցերեկով, գիշերով, առեղով, ժամանակով և այլն։

Հինգերորդ հոլովում

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	քույր	քույր
Ս. Տ.	քրոջ	քրոջ
Բ.	քրոջից	քրոջմե
Գ.	քրոջով	քրոջմով

Այս հոլովման նշաններն են սեռական-տրական՝ -ջ, բացառական՝ արևմտյան գրականում -ջմե, արևելյան գրականում -ջից, գործիական արևմտյան գրականում -ջմով, արևելյան գրականում -ջով։

Այս հոլովման են հետևում՝ քույր, կին, տէր, տալ, աներ, կեսուր, ընկեր, և սրանցից կազմված բառեր, ինչ. տիկին, հարաքույր, մորաքույր, տագերակին, դասընկեր։

Գործիականի տեղ հաճախ գործ է ածվում ոչ թե -մով, -ով ձևը, այլ հետ նախադրությամբ կազմված ձևեր. ինչ. էնոջ(մ)ով, քրոջ(մ)ով, տիրոջ(մ)ով և այլն ասելու փոխարեն՝ էնոջ հետ, քրոջ հետ, տիրոջ հետ և այլն։ Ընկեր բառը կարող է նաև հետևել ա հոլովման. ինչ. ընկերի, ընկերէ կամ ընկերից, ընկերով։

Այս հոլովումը ձևացել է գրաբարի կին անկանոն հոլովման վրայից, որին հետևել են նորանոր բառեր, բոլորն էլ ազգականություն ցույց տվող։

Վեցերորդ հոլովում

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	հայր	հայր
Ս. Տ.	հոր	հոր
Բ.	հորից	հորմե
Գ.	հորով	հորմով

Գրաբարի հայր բառի անկանոն հոլովումն է, որի գլխավոր նշանն է -այր, -օր վերջավորությունը։ Սրան են հետևում մայր, եղբայր և սրանցից կազմված բառերը. ինչ. հորեղբայր, մորեղբայր, սանամայր, կնքամայր, վանահայր, վանամայր և այլն։

Այստեղ էլ գործիականի տեղ հաճախ գործ են ածվում հետ նախադրությամբ կազմված ձևեր՝ նման նախորդի. այսպես՝ հոր հետ, մոր հետ, եղբոր հետ և այլն։

Ամփոփելով աշխարհաբարի վեց հոլովման պատկերը մի համացույց տախտակի մեջ, կտեսնենք, որ նրանց վերջավորություններն են՝

	ա		բ		գ		դ	
Ո. Հ.	—		—		—		—	
Ս. Տ.	ի	ի	ու	ու	յան	յան	վա	վան
Բ.	ից	ե	ուց	ե	յունից	եանե	վանից	վանե
Գ.	ով	ով	ով	ով	յունով	յամբ	ով	ով
Ն.	ում	—	ում	—	յունում	—	ում	—

ե	գ		
ոջ	ոջ	որ	որ
ոջից	ոջմե	որից	որմե
ոջով	ոջով	որով	մով

Այս բոլորի մեջ ամենից ընդհանուրն է առաջին հոլովումը. երկրորդ հերթին գալիս են երկրորդ և երրորդ հոլովումները, որոնք հատկացված են որոշ տիպի բառերի. մասնավոր հոլովումներ են չորրորդը, հինգերորդը և մանավանդ վեցերորդը։

Այս վերջիններից ունենք ընդհանուր կանոնին վերածված ձևեր, որոնք գործածված են մինչև անգամ գրականության մեջ. այսպես Լամարտինի Ռաֆայել վեպի մեջ (տպ. Զմիւռնիա, 1861), գտնում ենք հետևյալ ձևերը։

հայրի 59, 66, 67, 68, 142
հայրէս 146
մայրի 59, 98, 137, մայրէս 94
եղբայրի 62
քոյրի 62, 64 (բցո. քոյրէն ձևը ունի՝ Անիծեալն. Թրգմ. Մամուրեան, տպ. Զմ., 185, 7 հտ. Ա, էջ 117)։
Աստուածի 98

9. ՀՈԳՆԱԿԻՆ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հին հայերենի ք վերջավորությունը Կիլիկյան հայերենում թևև գոյություն ուներ, բայց սահմանափակված էր միայն ձայնավորով հանգող բառերի համար. այսպես՝ որդիք, տանեցիք, քրիստոնէք, պախրէք, տարիք, ապիկիք, ադիք, ածուք, ակռայք, վկայք, ծառայք, քահանայք, տղայք և այլն (այս վերջինները հնչվելով ակռաք, վկաք և այլն, ք-ն մնում էր դարձյալ ձայնավորի ծայրին)։ Սրանցից դուրս ք-ն իբրև հոգնակիի նշան մնում էր նաև աղգականություն ցույց տվող մի խումբ բառերի վրա, ինչպես են՝ եղբարք, դստերք, ծնողք, այրուկինք, հարք, տէրք, որոնք բոլորը հնության մնացորդ էին, ճիշտ ինչպես ունենք այսօր մեր բարբառներում տղաք, տղայք հոգնակի ձևը։

Այս ք մասնիկի վրայից ձևացել էր դարձյալ -այք հոգնակերտ մասնիկը, որով կազմվում էին՝ իշխանայք, պարոնայք, աուլտնայք (<աուլտանայք) հոգնակի ձևերը։

Այս մասնիկը առաջացել է հետևյալ ձևով. գրաբարի մեջ կին բառի հոգնակին է կանայք, սրան է հետևում նաև՝ տիկին-տիկնայք. վերջինիս հետ հաճախ միասին պիտի գործածվեր իր հականիշը՝ աղախին, որ թևև անշուշտ ուներ իր հին հգ. ուղ. աղախինք ձևը, բայց տիկնայք բառի նմանությամբ եղավ աղախնայք. այսպիսով գոյացավ նորահնար այք հոգնակերտ մասնիկը, որ և տարածվեց իշխան, պարոն և սուլտան բառերի վրա։ (Երեքն էլ իշխանական աստիճաններ էին, ինչպես և տիկինը և երեքն էլ զարմանալի զուգադիպությամբ վերջանում էին ն բաղաձայնով, ինչպես և՝ տիկինը)։

Սրանից է, որ պիտի ձևանար բարբառների մեջ աք հոգնակերտը. և այստեղից է, որ այժմ էլ գրական լեզվի մեջ մնում է պարոնայք ձևը։

Այս բոլորից դուրս կար նաև ծանօթիք ձևը՝ իբր հոգնակի ծանօթ բառի, անշուշտ կազմված գրբ. ծանօթից սեռականի վրայից (Karst, 205)։

Ի հոգնակերտով են կազմված նաև միջին հայերենի -ունք և -անք մասնիկները, որոնց օրինակներն են (ըստ Այտն. Բ. 16)։

Ունք.—Ցաճկունք, ձագունք, անդամունք, խցկունք (առաջացել են գրբ. երիցունք, ճրագունք և այլն ձևերի վրայից)։

Անք.—մրգանք «մրգեր», սեռ. մրգանց
Ազգերանք «ազգրեր» (Ճառընտ.), բց. ի ծառանց
Իրկունք
Գոմկունք

Բայց -ունք վերջավորությունը գտնվում էր հատկապես անեզական միավանկ բառերի վրա, որոնց ք վերջաձայնն էլ վերածվում էր -իկ փաղաքշականի (սդմամբ՝ -կ). այսպես՝ ունենք դեռ վիպասանական շրջանից՝ աչկունք (աչք-աչիկ — և աչկունքն էին արեգակունք), Փարպեցու մոտ՝ վանկունք (վանք-վանիկ—երթեալ այնուհետև ի վանկունսն իւր. Փարպ. էջ 141, տող 35, Գնայր ի մէնջ ի վանկունսն իւր. Փարպ. էջ 14, տող 6)։

Ավելի ընդարձակ և ընդհանուր գործածություն ունեին կիլիկյան հայերենի մեջ հետևյալ հոգնակերտ մասնիկները.

1) եր (որ կարդացվում էր ɣեր). գործ էր ածվում միայն բաղաձայնով վերջացող բառերի ծայրին և անխտիր թե միավանկ, և թե բազմավանկ բառերի համար։ Օր. արտեր, աղբեր, ագռեր, օրեր, բաժեր, բաներ, բերդեր, բոյներ, գեղեր, գեաեր, գողեր,

գոյներ, գործեր, գրեր, դասեր, դեղեր, զարկեր, թաթեր, թամբեր, թառեր, քրեր, ժամեր, խիժեր, խոտեր, խորթեր, խոցեր, ծայրեր, ծառեր, ծիծեր, ձյեր, ձյեր, կայծեր, կարգեր, կշռեր, կոթեր, կողեր, մեծեր, որբեր, քթեր, ամաններ, բժշկեր, հացպլըներ (հացպան), պահնորդեր, սպասցուեր, վաճըռակներ, վարդապետեր, հիւանդանոցեր և այլն, և այլն։

Գրաբարում և հանգն ունեցող բառերը, որոնք կիլիկյան հայերենում զրկված են այդ և հանգից, հոգնակիում վերստանում էին նույն հանգը, օր. ակ-ակներ, թոռ-թոռներ, լեռ-լեռներ, խլուրդ-խլրդներ, կաթ-կաթներ, ձուկ-ձկներ, մատ-մատներ, մատ-մատներ, ոտ-ոտներ, եղեգ-եղեգներ։

Այսպես են նաև մի խումբ ուրիշ բառեր, որոնք իրր թե եզակիում ունեին և հանգը. օր. գորտ-գորտներ, ծաղիկ-ծաղկըներ։

Մի խումբ անեզական բառեր, որոնք գրաբարում հանդում են հոգնակերտ ք մասնիկով, կիլիկյան հայերենում եզակիում պահում են ք ձայնը, իսկ հոգնակիում ջնջում են. օր. աչք-աչեր, վանք-վաներ, ապրանք-ապրներ, իրաւունք-իրաւներ։

-Ութիւն վերջացող վերացական բառերը հոգնակին կազմում են ոչ թե ուղղական, այլ սեռական ձևի վրայից. օր. աչվութեներ, գիճութեներ, զօրութեներ, իշխանութեներ, խնամութեներ, համբերութեներ, հիվնդութեներ, ապաննութեներ, վկայութեներ, տաքութեներ։

Անուն բառն էլ հոգնակին կազմում է սեռական ձևից (անվըներ), իսկ աղջկեր ծագում է աղջիկն ուղղական ձևից։

2) Նի.—գործ է ածվում միայն երկավանկ բառերի համար, ինչ. ակռայնի, ածվնի (ածու), ամննի, ամբննի (աման), արոյնի (արիւն), բանջրնի (բանջար), գոմշնի (գոմէշ), երիցնի, իրիցնի (երէց), երկնի (երակ), ըղբգնի (եղունգ), հալվնի (հալաւ), պատճառնի կամ պատճռնի, պոմբննի (պայման), քաղքնի, տեբևնի, բռուպնի, թաթարնի, սինօռնի, գլխնի, կաուէնի, կոորնի, ֆռանկնի և այլն։

Բարդ բառերի մեջ, եթե վերջին եզրը երկավանկ է, նույնպես դրվում է -նի մասնիկը. ինչ. գեաբերըննի-գեաբերան «պտաբերաններ», տեղգլխնի (տեղ-գլուխ)։

Բազմավանկ բառերն էլ, եթե կրճատմամբ գարձել են երկավանկ, ստանում են -նի մասնիկը. ինչ. կազապար>կազապար, կազպրնի, հայրապետ>հայրպետ, հայրպետնի, հոգացող>հոգըցող, հօքըցողնի։

Կին բառից ունենք բացառաբար կանանի (Մխ. պատ. 58), որ կանանի ձևից է։

3) Վի (գրվում է նաև -ուի, -ւի, որոնք միևնույն հնչումն ունեն)—շատ տարմանափակ գործածություն ունի. եղած օրինակները հետևյալներն են.—աչվի, ձեռվի, ոտվի, միջուի, դռվի, իրվի, մտվի, անվի, շնվի. ուրիշ օրինակ չկա և բոլորն էլ միավանկ են։ Բազմավանկ է միայն ալեհատվի (ալեհատուն «զինարան» բառից), որ տակայն տուն բառից կազմված բարդություն է (Karst, 191)։

Սրանցից շնվի «շներ» ձևը հիշում է ՆՀԲ շնուի, շնւի դրչությամբ և վկայություն է տալիս Եւս. պատ. բայց տպագրում համապատասխան հատվածի մեջ, էջ 691, ինչպես և ձեռագրերում, գտնում ենք զշուանս. ուստի բնագրում գոյությունը պետք է վերագրել հետին ներմուծության (Վարդանեան, Բառաքն. դիտ. Ա. 80)։

Քննությունները ցույց են տալիս, որ այս մասնիկը հայերենի հնագույն երկակիի մասնիկն է (տես վերը) և բուն այսմ վերի օրինակներն էլ նախկին երկակիներ են. այսպես՝ աչք, ձեռք, ոտք, մեջք, նմանապես և դուռ, որ զույգ փեղկերով է. մյուսները նմանությամբ կազմված ձևեր են։

4) Տի.—Այս մասնիկով ունենք միայն ծակտի, այրկտի (էրիկներ) և ենթագրությամբ՝ կնկտի բառերը.—այս մասնիկը մասնիկը միանալով նախորդ վի մասնիկի հետ՝ դառնում է վտի, որով ունենք քուրվտի (քույրեր)։

5) Ան.—այս մասնիկով ունենք միայն ձիան, իշան և ջորեան. առաջին երկուսը գործածական էին արդեն գրաբարում՝ մեսրոպյան շրջանից հետո (Փարպ.), որոնց նմանությամբ կիլիկյան շրջանում շինված պիտի լինի ջորեան (իրր՝ ջորիան)։ Ուրիշ օրինակ չկա, բայց ավելի ուշ ունենք ձիան և ուղտան (Ալիշ. յիշ. 18)։

6) Ստան.—այս մասնիկը գործ էր ածվում միայն ի վերջացող անշունչ առարկաների համար. ինչ. շլնեստան, տեղեստան, խմելեստան, ըմբռլեստան, հայրենեստան, մայրեստան (ամայրիներ, այն է՝ անտառներ). բոլորի մեջ էլ բառավերջի ի դարձել է ե, որով իմացվում է, որ մասնիկն է -աստան։—Ի

ձայնավորով վերջացող շնչավոր առարկաների հոգնակին կազմվում էր թ մասնիկով։

Այս բոլորից զուրս կիլիկյան հայերենը զանազան հոգնակերտ մասնիկների խառնուրդով գիտեր կազմել նաև կրկին հոգնակիներ, որոնց վրա մես առաջ։

10. ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

1) Միջին հայերենի -եր *մասնիկը սկզբում ծագում է գրաբարի* -եար *ձևից, անշուշտ հոլովական* -երոյ *և այլ ձևերի պատճառով։ Այս* -եար *ըստ Բուգգեի* (Etrusk. und arm., էջ 163) *փոխառություն է կովկասյան լեզուներից. համմ. չեչեն.* ar, er, ir, *թուշ.* ar, *ուտ.* ur, ur. *Նման ձևեր կան նաև ուրիշ լեզուների մեջ և բոլորն էլ հոգնակերտ մասնիկներ են, ինչ.*

Էտրուսկ. հոգնակիի մասնիկն է համարվում -er, *ինչ.*

methlum «ժողովուրդ», հգ. methlumeri

spure «քաղաք» հգ. spureri

flere «արձան» հգ. flereri

Կամ՝ ar, *օր.* clan «որդի», *հգ.* clen-ar.

Հնդկական դիլեմիե- շինա լեզվում շատ բառերի հոգնակին կազմվում է -are, -re *մասնիկով. ինչ.* gyen «կին», gyinare «կիներ»։ *Որքան մեծ նմանություն հայերենի հետ, բայց պատահական։*

Ինչպես որ պատահական է տունգուսերենի հգ. մասնիկը -ր *(ինչ.* oror «հղկերուներ» *(Adam, Gr. tong., 41) և մոնղոլերենի (ու բուրյաթերեն) հգ. մասնիկը՝* nar, -ner, *ինչ.* degüner «հոգ բայրներ», *և այլն։ Պատահական է նաև դրավիդյան լեզուների հգ.* ar, or, ir, *իսկ տուլու լեզվի մեջ հատկապես* er *հոգնակերտ մասնիկը։*

Մինչև անգամ հնդեվրոպական լեզուների մեջ կան նման ձևեր, որոնք դարձյալ պատահական են. այսպես՝ պատահական նմանություն ունեն շվեդ. 3-րդ հոլովման հոգնակին՝ -er, *ինչ.* bild «պատկեր», bilder «պատկերներ», månad-er «ամիսներ» *և այլն, ուսբր. չեզոքների հոգնակին* -er, *որ ծագում է հին* -es *ձևից և գերմ.* er *հոգնակերտը, որի ծագումը հետևյալն է։*

Հնխ. բուներից ոմանք չեզոք սեռի մեջ ստանում էին -es *մասնիկը, որ և լատիներենում էլ կա* -er *ձևով. ինչ.* genus, *հգ.* genera *և այլն. գերմաներենում* s *վերածվելով նույնպես* r-*ի*

առաջացավ -era, *բայց վերջավորությունների անկումից հետո եղավ* -er. *այսպիսով բոլորովին պատահաբար* es > er *դարձավ հոգնակիի մասնիկ, որ և համաբանության օրենքով նորանոր նվաճումներ արավ լեզվի մեջ, թեև չկարողացավ ամբողջ գոյականները նվաճել։ Նույնպիսի պատահական նմանություն ունի նաև դանիերեն հոգնակի* -er, *որ որոշյալ հոդով կլինի* -erne, *ինչ. հյ. երն. օր.* kone «կին», koner «կիներ», konerne «կիներն»։

2) Նի.—Այս մասնիկը սկզբած է գրաբարի անի մասնիկից՝ ա միջաձայնի սովորական անկումով։ Մինչև իսկ կիլիկյան շրջանի ռամկախոս գրողները մասամբ գործ են ածում դեռ -ացնի *ձևը՝ փոխանակ* -ցի. *օր. ամրոցանի, կուղպականի, հանգերձանի, հոռոմանի, մանղոլանի, ջաղացանի, սալարանի, փառնկանի, որոնք գտնում ենք Սմբատ պատմիչի և Գրիգոր երեցի մոտ* (Karst, 186):

Թե -ցի *ծագում է* -ացնի *ձևից՝ ցույց են տալիս նաև ու հանգող բառերի հոգնակիները. այսպես՝ ածու-ածվնի, առու-առվնի և այլն, որոնց մեջ ու դարձել է վ՝ միայն նախավոր ա ձայնավորի պատճառով (իբր՝ ածուանի, առուանի)։ Եթե* -ցի *ծագած լիներ հենց նախավոր* -ցի *ձևից, այս բառերի հոգնակին պիտի լիներ առցի, ածցի, անցնելով՝ *ածուցի, *առուցի ձևերից։*

Այս մասնիկի հետ ձևով և իմաստով նույն է հին վրացերենի -ni *մասնիկը. օր. մամա «հայր», մամաճի «հայրեր», խե «ծառ», խեճի, «ծառեր» (Dirr, Einf. 59. Gram. gêorg., 44), որ այժմ էլ պահված է դերանունների մեջ. ինչ.* եսեճի «սրանք», եգեճի «դրանք, իսիճի «ընդանք»։ *Բայց ունենք նաև պչ.—պրս.* -ān, *իբրև նշան հոգնակիի. համմ. հատկապես պչ.* āzatān > *հյ.* ազատանի *(պրս.* āzādān*)*:

Ձևերի այս երկվությունը թույլ չի տալիս մասնիկի ծագման մասին վերջին խոսքը ասելու։

Թուրքերենի -lar, -ler *հոգնակերտ մասնիկները հոգայերեն լեզվում առանում են* -dar, -der, -tar, -ter, -nar, -ner *ձևերը. վերջինիս նման է պատահաբար հյ. ներ։*

Թրքական բաշկիր լեզուն էլ հոգնակին կազմում է -lar, -dar, -ðar, -tar *մասնիկներով, որոնց թեթևն է* lär, där, -ðär, -tär. *չունի* -nar, -när.—*առաջինը զանազան ձայնավորներով ու մյուսները բաղաձայնների զանազան տեսակներով հանգող բառերի համար։ Այս հանգամանքը, ինչպես և* -nar *մասնիկի բացակայու-*

Թյունը ցույց են տալիս, որ մասնիկի բուն ձևն է -lar *և մյուս բոլորը, նաև* nar, -när, *նրա ձայնափոխությունները են։*

Թրքական շոռ լեզուներն էլ հոգնակիի մասնիկներն են -lar, -ler, -tar, -ter, -nar, -ner, *որոնցից* -lar, -ler *ձայնավորով և ձայնորդով վերջացող բառերի համար, -tar և* -ter *խուլ բաղաձայնով վերջացող բառերի համար, իսկ* -nar -ner *ավելացվում են* m *կամ* n *բաղաձայնով վերջացող բառերին։*

Կան լեզուներ, որոնք ոչ մի կապ չունեն հայերենի հետ, և որոնց մեջ նույնպես գտնում ենք -ների ձևին նման հոգնակերտ մասնիկներ։ Այսպես՝ ամերիկյան կանիչանա լեզվով՝ -na, *որ* huikigâue *կին—*ykigaugue-na *կանայք,* santo *(իսպան.) սուրբ—* santo-na *սրբեր։*

Նուբիերենում հոգնակիի մասնիկներից է eni, *ինչ. eb «պոչ», հգ.* ebeni, or *«գլուխ»,* oreni.

Աֆրիկյան կպելլե լեզվով հոգնակիի մասնիկն է -ni. *ինչ.* ḍō *«տղա», հգ.* ḍōni, ḍē *«մայր, հգ.* ḍēni.

3) Վի.—առաջանում է անշուշտ հնագույն ուի ձևից, իսկ սա էլ կազմված է այն նույն ու ձայնից, որ գտնում ենք երկու բառի վերջավորության մեջ։ Այս ու անշուշտ երկակիի մասնիկն է, ըստ որում բոլոր վի ձևով հոգնակիները երկակի են, ինչպես տեսանք։ Հայտնի չէ, թե ինչ հավելված է ի։

4) Տի.—գտնում ենք գրաբարի մի խումբ հավաքական բառերի մեջ, ինչպես՝ մանկտի, ծակտի, ոսկրոտի (այլ ձև՝ ոսկրոտի), փորոտի, անոտի, մեռելոտի. վերջին չորսը ցույց են տալիս -ոտի *մասնիկը, մյուսները՝ միայն* -տի. *բայց ծակտի բառն էլ, որ միայն մի անգամ ավանդված է ըստ ՆՀԲ (Վրդն. եվ.), ունի աշխարհաբարում ծակոտի ձևը։ Սրանից հետևում է, որ մասնիկն է* -տի, *որ նախապես դրվում էր ո բնի վրա, հետո ո միանալով մասնիկին՝ ձևացավ* -ոտի։ *Միայն մանկտի թվում է, թե կազմված է մանկիտի ձևից։ Կիլիկյան շրջանում, ո իր մեջին ձայնավոր ընկնելով, մնաց դարձյալ ի մասնիկը։*

5) Ան.—Անշուշտ առաջանում է հին -եան *ձևից. Կարապետ (էջ 195) ենթագրում է, թե այս ձևափոխությունը կատարված է ձի բառի միջոցով։ Ըստ որում հայերենի մեջ ձիեան կապակցությունը ձայնապես անկարելի էր, ուստի առացվել է ձիան, որից ապրվելով՝ իշան։ Այսպիսով կազմվել է ան մասնիկը, որ թեև կիլիկյան հայերենում չի տարածված, և նույնիսկ*

միջնադարյան գանազան հավաքականներ ջնջված են, բայց բավական տարածված է բարբառներում։

Այս -ան *մասնիկը (նախապես* -եան*) որևէ արգելիչ պատճառ չեմ գտնում Պետ. -ān հոգնակերտից դնելու։ Այս մասնիկը պարսկականում հատուկ է շնչավորներին, մեր մեջ էլ մեծ մասամբ շնչավորների համար է գործածված, մասամբ անցել է նաև անշունչներին։*

6) Ստան.—Հին հայերենի -աստան *տեղական մասնիկն է, որ վերածվել է հոգնակերտի։ Անցումը կատարված է անշուշտ այգեստան, ձիթաստան, ծառաստան և նման բառերի վրայից, որոնց մեջ առարկաների բազմությամբ գտնվելու տեղը նույնիսկ բազմության մտքով է առնված, որով և հավաքական է վերածված (Karst, 196)։*

Հավաքական և հոգնակի -ստան *մասնիկի հարակցությունը կարելի էր տեսնել հատկապես Հայք—Հայաստան, Մարք—Մարաստան, Վիրք-Վրաստան, Պարսք—Պարսկաստան, Հնդիկք—Հնդկաստան և նման բառերի մեջ, որոնցից կարելի էր հետևցնել, թե ստան=ք։*

Այս մասնիկի իբրև հոգնակերտ գործածության հնագույն վկայությունը գտնում եմ Ղ. դարից. Աքաղաղքն ի մէջ մարեստանեայցն ճոխք և համարձակք (Ստեփաննոսի Սիւնեաց եպսի գրությունը Աւետարանի նկարների մասին, հրտր. Թորոս Ազրար, Ա, էջ 191—194—Վարդանեան, Եւթագ, էջ 234). ուստի՝ մարեստան «մարիներ, հավեր»։

11. ՀՈԳՆԱԿԻՆ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Թե գրաբարի և թե միջին հայերենի բոլոր հոգնակերտ մասնիկները պահված են բարբառներում, ոմանք, իբրև կանոնավոր, ընդհանուր գործածությամբ, ոմանք էլ՝ բացառիկ դեպքերում։

Ընդհանուր գործածություն ունեցող մասնիկները հետևյալներն են.

ք.—*բոլոր ձայնավորով վերջացող բառերը Երևանի և Նոր Ջուղայի բարբառներում առանում են ք, ինչպես՝ լեզուք, կատուք, գինիք.*

Երև. աման *բառի հոգնակին լինում է ամանիք. Երև. այ վերջացող բառերը դառնում են հոգնակի* -եք *(այք). ինչ. սա-*

տանէք, քահանէք, գաթէք (գաթաներ), որի սեռականն էլ լինում է գաթէքի. օրինակ՝ գաթէքի վրայից «գաթաների վրայից»։

Բացի այս կանոնավոր գործածութ յունից, ք իրր հոգնակիի նշան պահված է հետևյալ մասնավոր դեպքերում.

որդի—որդիք (Լեհ.)
գաւրստան ji *գաւրստան* -jik (Karst, 198)։

Մարդիք (հին մարդիկ ձևն է, որի կ վերջաձայնը շփոթվել է հգ. ք *մասնիկի* հետ). օր. Զահարմահալի բարբառով՝ մարթիր, սեռ. մարթքանց «մարդոց» (տես Ա. Երեմյան, Չհրմէլի ժղ. բնհս., էջ 55)։

-երք իբրև հոգնակիի մասնիկ այնքան սովորական է դարձել, որ գտնում ենք նույնիսկ երև. խօսքերք, ուր բացի -եր հոգնակերտից, երկու հատ էլ ք կա, որով ունենում ենք երեք հոգնակիի նշան՝ երեք տառից բաղկացած մի արմատի վրա։

Կեղրանք «գյուղեր»—ունի երկու հոգնակիի մասնիկ՝ -եր և -անք։

եր և ք մասնիկների գումարն է երք, որ գտնում ենք երևվանի բարբառում. օր. տղերք, կողքերք. տակերք, աղջկերք, լնդերք. Այս նույն -երք մասնիկի տեղափոխյալ ձևն է ներկայացնում Ննխ. բարբառում լնդերք բառը, որ առաջել է հետևյալ ձևերը՝ լնդէռք, լրդէնք, լընդռէնք, նընդռէնք, ընդռէնք, լըդռէնք (տես քնն. Ննխ. բարբ., էջ 168)։ Այս զանազան ձևերի գոյացումը ցույց է տալիս, որ -երք մասնիկի իրր հոգնակի գիտակցութ յունը կորած էր բարբառի մեջ, ճիշտ ինչպես Նոր Ջուղայի բարբառում աթոռք դարձել է աթոռ, անշուշտ աթոռք ձևից անցնելով, որ նույնպես ք-ի հոգնակերտ լինելու գիտակցութ յունը կորցրել է։

Ակ.—միջին հայերենի -այք մասնիկն է, որ կիլիկյան շրջանում միայն երեք բառի վրա էր գործածվում. ավելի հետո որոշ բարբառներում բավական ընդհանրացավ։ Այսպես՝ լեհահայ բարբառում ունենք հետևյալ օրինակները.

Օտրմվըրաք (հինը՝ օտրնվորաք) «հարսանիքի մակարներր», բարեկըմաք, մեղավորաք, փոխանորդաք, տանուտրայք, կտրիճվորաք, ընկերտայք (ընկերտի-այք)։

Բերդունայք և քաղաքունայք Դրնդ. 14, ի քաղաքունայն Դրնդ. 73։

Մեծունաք Ակն.։

Նի.—այս մասնիկը գտնում ենք առաջին հերթին լեհահայ բարբառում. Karst (էջ 189) հիշատակում է 1751 թվականից մի խումբ օրինակներ՝ առնելով Մինաս Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» (Վենետ. 1830) աշխատութ իւնից. ինչ. աղքատնուն, պատճառնուն, հարսնիքնուն, որբովարնուն, քաղքընուն և այլն և այլն (բոլորն էլ սեռ. հոլովով), որոնց կողքին կա նաև -ներ ձևով ուղղական (ինչ. պատճառներ, տաֆթարներ և այլն)։

Նույնը կա Մարգոլիութի (Margoliuth) հիշած syro-armenian բարբառում, որի համար տալիս է երկու օրինակ. տաւաճի «ուղտեր», քաղաքնի «քաղաքներ» (IRAS, 1898, էջ 852)։

Շամշադինի շրջանում գարձել է -նեի. ինչ. կաւվնի «կաուներ», գուլպնի «գուլպաներ», կուրյնի «կրիաներ», ճամբռնի «ճամբաներ» (Նիւթեր Հին Հայաստ. պատմ. Երևան, 1935, էջ 93)։

Ղրբ., Մղր. -նե
Ղազախ. -նի, ինչ. ոչխարնի, վեգրինի, ծաղկնի
Տիգ. -նի (հրեշտակնի)
Կիլ. -նա, -նը. ծաղկնա, սէօխտէչնա

-Սաան.— Ընդհանուր գործածութ յուն ունի Կարնո բարբառում, ուր ամեն ի վերջացող բառ հոգնակիում առանում է այս մասնիկը (ի դառնալով է). հոգեառան։

Նույնը սովորական է նաև լեհահայ բարբառում, ուր ե ձայնը մասնիկից առաջ սղվելով դառնում է ը. ինչպես՝ ագիագըստան, տարի-տարըստան, էգի-էգըստան, հայլի-հայլըստան, գօտի-գօտըստան, գինի-գինըստան, քեռի-քեռըստան, քամի-քամըստան մատնի-մատնըստան, մորի (անուտ) -մորըստան, ոսկի -ոսկրստան, հարսնիք-հարսնըստան, բանալիք-բալըստան, փոշի-փոշեստան, ուտելիք-ուտելըստան, նույնիսկ օտար բառերով՝ ռախրստան (օդի), խամջ՝ըստան (մտրակ), կալաճի—կալաճեստան (խոսք)...

Կան բառեր, որ հանգում են ուրիշ ձայնավորով, բայց դարձյալ առանում են նույն մասնիկը. ինչ. Ախց. փեսեստան (կմ. փեսեստաններ, փեսաներ). Լեհ. լեզուստան։

Միջին հայերենում այս մասնիկը միայն անշունչներին էր հատուկ. նույնը ընդհանրապես նաև վերի բարբառներում, ուր բացառարար միայն ունենք փեսեստան, քեռեստան։

Լեհահայոց մեջ երբեմն ի ձայնը պահվում է. այսպես են փոշհստան, կալաճեստան։

վ.—այս մասնիկով ունենք աչվի, օնքվի, ծունկվի հոգնակիները, որոնք գործածական են լեհահայ բարբառում. Ախալցխա՝ ականջվի (Հմշ. օնգօջվի). այլուր ընդհանրապես այս մասնիկը գործածվում է միացած -ներ մասնիկի հետ, որի մոտ ի ձայնավորն էլ սղվելով դարձել է ը. այսպես են՝ ձեռվըներ կամ ձեռքվըներ (Պլ. ծառքվըներ), օտվըներ, աչվըներ (Պլ. աշքվըներ), իքվիններ (յօնքվիններ), ծնկվըներ, մատվըներ ձևերը, որոնք գործածական են Պոլիս, Լեհաստան, Ախալցխա. կան նաև նման ոճով կազմված ուրիշ հոգնակիներ, որոնք ընդհանուր չեն բոլոր բարբառներին. այսպես ունենք՝ եղունգվըներ (Լեհ. օհունգվըներ), դրովըներ (Ախալցխա), ականջվըներ (Ռ. անդրջվըներ), դասրվիք («աղջիկներ» (Լեհ.)։

Պարզ ձևերը պահված են ածականների մեջ. ինչ. սևաչվի Պլ., ծըռոտվի (Այտն. Բ. 14), իսկ փոխաբերական իմաստով գործածված ժամանակ դրվում է միայն -ներ. ինչ. ջրին աչքերը, ճպին մատները, եղեգին ծունկերը, այս գրքին ամեն ձևոքերը («օրինակները»).

Բացառիկ ձև է օնքվի «հոնք», որ գործածական է լեհահայ բարբառում. սրա դեմ Պլ. ունի՝ իքուի, ավելի հինը՝ իճքուի, ըճքուի «հոնքեր», որի հոգնակին է իքվիճեր (ինքվիններ), այս ձևը տարածվելուց հետո եզակին դարձել է իքվի և յօճք ձևը ջնջվել է Պոլսի բարբառում։

-Տի.—միջին հայերենի նման, բարբառներում էլ ընդհանուր գործածություն չունի. գտնում ենք միայն սակավաթիվ բացառիկ դեպքերում, որոնք են.

կնկտիք «կնիկներ», կազմված -տի մասնիկով, որին ավելացել է նաև հոգնակերտ -ք. այս ձևով գործածական է Պոլսում։

Բազաձայնների խճողման պատճառով միջին կ կրճատվելով՝ դարձել է կնտիք, ինչպես ունենք Լեհահայ բարբառում։

Բավական գործածական է Մարգոլիութի հիշած syro-armenian *բարբառում. ինչ. մարիամտի «մարմիններ», չոպնտի «հովիվներ», ձիանտի «ձիեր», հեծմանտի «հեծյալներ» (IRAS, 1898, էջ 851)։*

Կեսարիայի հայախոս գյուղերի բարբառով՝ ագրըտիք «եղբայրներ», ձիանտիք «ձիեր», կնկտիք «կանայք» և այլն (Ալպոյաճյան, Պատմ. հայ Կես. Բ. 1644)։

աճ.—*մի քիչ ավելի տարածված է, քան միջին հայերենում. այսպես ունենք՝*

ձիան Լեհ. Ախց.	
ձիանք Անլ.	ձիաներ Ախց.
իշան Ախց.	իշաններ Ախց. իշվան (Պրտ.), իշվաններ, էշներ Լեհ. (էշաններ)

Թիան, թիանք, թիաններ, Ջրպ. 746
դի, դիան, դիանք, դիաններ
լու, լվան, լվանք, լվաններ
ձու, ձվանք, ձվաններ
այծ, իծան, իծաններ
տեղ, տեղան «տեղեր». ինչ. շատ տեղան ման եկայ (ժող. երգ. տես ժողովրդական երգեր, հտ. 1, Շիրակի երգեր, Մպ. Մելիքյան, էջ 46).

մուկ, մկան «մկներ» իմաստով, որից էլ սեռ.-տր. մկանուն «մկներին», բցռ. մկանուց «մկներից» Զահարմահալի բարբառով (տես Երեմյան, Զհրմելի, ժող. բնստ. էջ 41)։

Աճք.—*Դեղրանք, տեղրանք, գեղրանք։*

Պոլսի բարբառում հոգնակի կազմելու համար եզակիի վրա դրվում է -եր կամ -ներ մասնիկը. առաջինը դրվում է միավանկ բառերի վրա, երկրորդը՝ բազմավանկ բառերի վրա. օր.

հող>Պլ. խոզ, խոզեր
կով>Պլ. գով, գովեր
աչք>Պլ. աշկ, աշկեր
գինի>Պլ. գինի, գինիներ
խնձոր>Պլ. խնձօր, խնձօրներ
աշակերտ>Պլ. աշկերտ, աշկերտներ։

Այսպես նաև օտար փոխառությունները. ինչ.

Թրք. yaγ *«իւղ», Պլ. յաղեր*
Թրք. buz *«սառույց», Պլ. բուզեր*
Թրք. qabaq *«դդում», Պլ. խաբախներ*
Թրք. šamdan *«աշտանակ», Պլ. շամդաններ*
Իտալ. մօգա «հոգություն», Պլ. մօգաներ
Իտալ. զանցա «սովորություն», Պլ. զանցաներ
Ֆրանս. արուքաթ «փաստաբան», Պլ. արուքաթներ
Հուն. ըսքարմօզ «նավի թիի կանթը», Պլ. ըսքարմօզներ

Այն բառերը, որոնք գրաբարի մեջ ունեն ք հոգնակերտ մասնիկը կամ որևէ հավաքական մասնիկ, բարբառներում եզակի համարվելով, նորից ստանում են -եր կամ -ներ մասնիկը, ինչ.

աչք>Պլ. աչկ, աչկէր
ոտք>Պլ. օթկ, օթկէր
բամբասանք>Պլ. փամփասանք, փամփասանքնէր
արտասուք>Պլ. արցունք, արցունքնէր
բանալիք>Պլ. բալլիք, բալլիքնէր
վանք>Պլ. վանք, վանքէր
պարտք>Պլ. բարթկ, բարթկէր
մասունք>Պլ. մասուն, մասունքնէր

Այն բառերը, որոնք եզակիում բառավերջին ունեն ն, հոգնակիում, -ներ մասնիկը ստանալիս պահում են իրենց ն ձայնը, և որևէ ազում չի կատարվում. ինչ.

Երկայն>Պլ. էրգան, էրգաննէր
մեծութիւն>Պլ. մէնձութիւն, մէնձութիւննէր

Կան մի քանի բառեր, որոնք գրաբարում չունեն բառավերջում ն, բայց եթե բարբառում ստացել են, ուստի հոգնակին էլ կազմում են կրկին ն-ով. ինչ.

երեկոյ>Պլ. իրիկուն, իրիկուննէր
դրացի>Պլ. դրացին, դրացիննէր

Երբ մի բարդ բառի երկրորդ եզրը միավանկ է, հոգնակիում ստանում է ընդհանրապես -ներ մասնիկը (իբրև բազմավանկ). ինչ.

հօրաքոյր>Պլ. հօրաքուր, հօրաքուրնէր
մօրաքոյր>Պլ. մօրաքուր, մօրաքուրնէր
սանահայր>Պլ. սանահար, սանահարնէր
սանամայր>Պլ. սանամար, սանամարնէր
կնքահայր>Պլ. գընգահար, գընգահարնէր
կնքամայր>Պլ. գնքամար, գնքամարնէր
աներձագ>Պլ. աներցաք, աներցաքնէր
դպրատուն>Պլ. դըրոտուն, դրոտուննէր
այլազգ>Պլ. այլասկ, այլասկնէր
այլակերպ>Պլ. այլագէրը, այլագէրքնէր

այսպէս>Պլ. ասրէս, ասրէսնէր
այնպէս>Պլ. ամրէս, ամրէսնէր

Բայց միևնույն ժամանակ ունենք՝

ադաչուր>Պլ. ադչուր, ադչուրէր
մոխրաչուր>Պլ. մօխրչուր, մօխրչուրէր:

Այն միավանկ բառերը, որոնք ստացել են ան-, չ- ժխտական նախամասնիկները և կազմել են նոր ածանց բառեր, իբրև բազմավանկ՝ ստանում են միշտ -ներ մասնիկը. ինչ.

անգործ>Պլ. անքօրձ, անքօրձնէր
անտէր>Պլ. անդէր, անդէրնէր
անկար>Պլ. անգար, անգարնէր
անշահ>Պլ. անշահ, անշահննէր
անսիրտ>Պլ. անսիրդ, անսիրդնէր
չտես>Պլ. չըդէս, չըդէսնէր

Մեկ և կես վանկ համարված բառերը բարբառներում ստանում են -եր կամ -ներ մասնիկը՝ նայելով թե միավանկ են դարձել, թե բազմավանկ. ինչ.

ասող>Պլ. ասխ, ասխէր
տայգը>Պլ. դաքր, դաքրէր
սանտր>Պլ. սանր, սանրէր
ժանգառ>Պլ. ժադռ, ժադռէր

Բայց ընդհակառակը՝

բիւր «10.000»>Պլ. փիյուր, փիյուրնէր

Կան մի քանի բառեր, որոնք բարբառներում երկու ձև են ստացած՝ ը հանգով կամ առանց ը ձայնավորի. ինչ.

հասատ>Պլ. հասատ, հասատը
կարճ>Պլ. գարչ, գարչը
սանտր>Պլ. սանրը, սանր
յետք>Պլ. յետկ, յետկը

Սրանց հոգնակին լինում է Պլ. հասատէր, գարչէր, սանրէր, յետկէր. այսպես նաև՝

մանր>Պլ. մանրէր
ծանր>Պլ. ձանրէր

Իսկ բարձր>Պլ. բարսր, բարսէր և բարսրնէր:

Գիտենք, որ գրաբարի այն բառերը, որոնք ունեն ն հավելվածը, շատ բարբառներում կորցրել են այդ ն ձայնը. քիչ բարբառներ կան, որ պահում են. ինչ. դուռն>երև. դուռ, Ղրբ. տէօռը: Այն բարբառները, որ այդ ն ձայնը կորցրել են, հոգնակիում վերստանում են նույնը, որով թվում է, թե հոգնակին կազմում են ներ մասնիկով, ինչ.

դուռն>Պլ. դուռ, դուռներ
լեառն>Պլ. լեռ, լեռներ
թոռն>Պլ. թոռ, թոռներ

Ուրիշ նման բառեր ևս ունեն առանց ն-ի. ինչ.

նուռն>Պլ. նուռ, նուռեր
մատն>Պլ. մատ, մատեր
ձուկն>Պլ. ձուգ, ձուգեր
մուկն>Պլ. մուգ, մուգեր
որդն>Պլ. օրթ, օրթեր
հարսն>Պլ. հարս, հարսեր
կաթն>Պլ. գաթ, գաթեր
ծունգն>Պլ. ձունգ, ձունգեր

Մի քանի բարբառներում ծառ բառն էլ, թեև գրաբարում ն չունի, բայց մաել է նրանց շարքը. այսպես՝ Կարնո բարբառով ծառ, ծառեր, իսկ Պլ. լինում է միշտ՝ ձառ, ձառեր:

Չի բառը Պոլսի բարբառում ստացել է (ն հավելվածով) ձին ձևը. սեռ. ձիճի, ըստ այսմ հոգնակին էլ լինում է ձիճեր:

Մարմնի զույգ անդամներ ցույց տվող մի խումբ միավանկ բառեր հոգնակիում ստանում են բարբառներում -վըներ մասնիկը. ինչ. Պոլսի բարբառում աչք>աշկ, աշվըներ, ձեռք>ձառ, ձառվըներ, կամ ձառվըներ, մատն>մադ, մատվըներ, ծունկն>ձուցգ, ձըցգվըներ, ոտք>օթկ, օթվըներ.—բայց Պոլսի բարբառում կարելի է ասել նաև պարզապես աշկեր, ձառքեր, մադեր, ձուցգեր, օթկեր:

Պոլսի բարբառում յօթք>իքվի բառը այնպես է յուրացրել -վի մասնիկը, որ եզակին համարվում է իքվի, իսկ հոգնակիում լինում է միայն իքվիներ: Թեև «թև» և ջիվ «ոտք» բառերը թևև զույգ անդամների շարքից են, բայց Պոլսի բարբառում հոգնակիում ստանում են միայն թևեր, ջիվեր ձևերը:

Այս կարգի բառերի դեմ զանազան բարբառներ ներկայացնում են աչվի, ձեռվի, ծնկվի ձևով հոգնակիներ: Միայն Պոլսի բարբառում չկա այդպիսի բան: Այս ձևերը Պոլսի բարբառում կարող են գործածվել միայն իբր ածական, ինչ. սեվաշվի «սեւաչեայ», գարուդաշվի «կապուտաչեայ»:

Միջին հայերենի հոգնակի ձևերից բարբառներում կենդանի են դեռ մի խումբ բառեր, որոնք մեծ մասամբ ազգականություն են ցույց տալիս և որոնցից շատ կազմված է -ափք և -ատք մասնիկներով: Այսպես ունենք Պոլսի բարբառում.

մարթիք «մարդիկ», մանչիք «մանչեր», դդաք «տղայք», էրիգմարթիք «այրեր», գինիգմարթիք «կանայք», գընգըդիք «կանայք», քուրվըդիք, քուրվըդանք «քույրեր», ախպըրդիք, ախպըրդանք «եղբայրներ», նէրվըդիք, նէրվըդանք «ներեր», զալվըդիք, զալվըդանք «տալեր», դաքըրդիք «տագրեր», դիրվըդիք, դիրվըդանք «տերեր»:

Իսկ սովորական բառերից էլ՝

դէղվանք «տեղեր, վայրեր», վարդանք «վարերը, վարի տեղերը», գըդօրդանք, գըդօրվանք «կտորներ», փսօրդանք «փշուրներ», խոշօրվանք «խոշոր կտորները» (ըստ Թէոդիկի), օսկրդանք, օսկօդանք «ոսկորներ», որոնցից վերջին չորսը վերջանում են -որ:

Այս ցուցակում նշանակված բառերից շատերը գործածական են Պոլսի հին բարբառում և հետզհետե ջնջվում են նորերի մոտ: Թեոդիկի մոտ (Պոլսի հայեվարը, էջ 1572) կա նաև աղջկանանք (իմա ախճըգնանք) «աղջիկներ» ձևը, բայց ինձ ծանոթ չէ:

Այս բառերը կարող են առանալ հոգնակիի -ներ մասնիկը. ինչ. դդաքներ, մարթիքներ «մարդիկ», անդէղվանքներըը «այն տեղերը», մանչիքներ «մանչեր», գըդօրվանքներ «կտորներ», փսօրդանքներ «փշուրներ»:

Նոր-Նախիջևանի բարբառում հոգնակին կազմելու համար միավանկ բառերի վրա ավելացվում է -եր մասնիկը, բազմավանկների վրա՝ -ներ մասնիկը, ինչ. հող>ֆօղ, ֆօղեր, կով>գօվ, գօվեր, խնձոր>խունձօր, խունձօրներ և այլն:

Բարդ բառերի ծայրը գտնված միավանկ բառերը այլևս բազմավանկի վերածված լինելով՝ հոգնակիի մեջ առանում են -ներ մասնիկը. ինչ. գասնըմէգներու «մոտավորապես ժամը 11-ին», աճօրները «յաւուրան յայնոսիկ», բայց իրրև առանձին բառեր՝ աս օրերը, ան օրերը:

Ռուսերեն այն բառերը, որոնք բառասկզբում մի քանի բաղաձայն ունենալով, ռուսերենի մեջ արագ արտասանությամբ

միավանկ, իսկ հայերենի օրենքներով բազմավանկ են համարվում, այս բարբառի մեջ ռուսերենի նման միավանկ են և հետևաբար առանում են -եր մասնիկը. ինչ. стол>սթօլ «սեղան», հոգ. սթօլեր, шляпа>շլյափ «գլխարկ», հոգ. շլյափեր, фрак>ֆռակ «հագուստի տեսակ», հոգ. ֆռակեր, склад>սքլադ «մթերանոց», հոգ. սքլադեր, плащ>փլաշչ «անձրևի դեմ վերարկու», հոգ. փլաշչեր, сбор>զբօռ «մի տեսակ կար», հոգ. զբօռեր և այլն:

Նորերը հայերեն և հայերենի անցած թուրքերեն բառերն էլ այս ձևով հոգնակի են դարձնում. այսպես ունենք՝ ստազ «դրամ», հոգ. ստազեր, սխալ, հոգ. սխալեր, գրագ «կրթակ», հոգ. գրագեր, թֆանգ «հրացան», հոգ. թֆանգեր և այլն, որոնք հին և միջին սերունդի մեջ կանոնավորապես լինում են ստազներ, սխալներ, գրագներ, թֆանգներ և այլն:

Մեկ և կես վանկ համարված բառերը իրրև բազմավանկ՝ հոգնակիում առանում են -ներ մասնիկը. ինչ. ծանր>ձանգրո, հոգ. ձանգրոներ, մանր>մանգրո, հոգ. մանգրոներ, սանար>սանգրո, հոգ. սանգրոներ, նօսր>նօսըր, հոգ. նօսրրներ: Միայն՝ ասող>ասքիչ, հոգ. ասքիչներ:

Այն միավանկ բառերը, որոնք գրաբարի մեջ ն հանգն ունենալով՝ հոգնակիի մեջ առանում են -ն-եր վերջավորությունը, Նոր-Նախիջևանի բարբառում նույն -ն-ից զուրկ են Ճառում. այսպես՝ մատ, մուկ, ձուկ, ճարպ, լեռ, դուռ, նաև՝ ծառ բառերը զանազան բարբառներում լինում են հոգ. մատներ, մկներ, ձկներ, ճարպեր, լեռներ, դռներ, ծառներ, սակայն այստեղ լինում են մադեր, մուգեր, ձուգեր, ճարպեր, դուռեր, ծառեր (իսկ լեռ բառը Նոր-Նախիջևանի բարբառում գոյություն չունի):

Չի բառի հոգնակին լինում է քաղաքի շրջանում և Նիսվիթա՝ ձիեներ, իսկ մյուս գյուղերում՝ ձիյեր, սակայն այս ձիեներ ձևը ոչ թե -եր մասնիկով է կազմված, այլ եզակի ձին ձևից, որ գործածական է Նիսվիթա գյուղում և Պոլսում. այսպես՝ ուղ. ձին, հոգով՝ ձիեր, սեռ. ձիեի և այլն:

Չի բառին նման է նաև լու, որ Նոր-Նախիջևանում տալիս է հոգ. լուներ. բայց եզ. լուն ձևը բարբառիս մեջ գոյություն չունի, թեև կա ուրիշ տեղ (համմա. Մարբերդի բարբառով՝ ուղ. լուն, սեռ. լվան, հոգ. լուներ):

Վերներ մասնիկով կազմված հոգնակի ձևերը, որոնք այնչափ սովորական են ուրիշ բարբառներում (ինչ. ձեռքվներ, ոտվներ, աչվներ, ծնկվներ, մատվներ և այլն), ամենևին գոյություն չունեն այս բարբառում:

Սրան հակառակ կան մի քանի հավաքական ձևեր, որոնք գործ են ածվում իրրև հոգնակի, թեև շատ քիչ անգամ և հետզհետե ջնջվելու վրա են. այսպես են՝ դղաք «աղայք», գեղացիք «գյուղացիք», մաշքիք «մարդիկ», ախպերդիք «եղբայրներ», օսկօրդանք «ոսկորներ», գոօրդանք, գոօրվանք «կտորներ» և շատ ավելի քիչ անգամ՝ դեղվանք «տեղեր», քուրվըդիք «քույրեր», դերվըդիք «տերեր»: Ուրիշ ձևեր, ինչպես՝ շընվաիք, կնկաիք «շներ, կնիկներ» և այլն գոյություն չունեն:

Չալթրում կա տուրվանք բառը, բայց գործ է ածվում միայն իրրև եզակի. օր. տուրվանք դէղ է «հարթ տեղ է»:

Համշենի բարբառը հոգնակիի համար ճանաչում է երեք տեսակ մասնիկ, այն է -իր կամ -եր, -ներ կամ -նի և ք:

Միավանկ բառերը առանում են Մալայի շրջանում -իր, իսկ Ճանիկի շրջանում՝ -եր. օր.

հաց—հացիր, հացեր
արջ—այչիր, այչեր
հաւ—հավիր, հավեր
արտ—այդիր, այդեր
այծ—ածիր, ածեր
գայլ—կյոլ, կյոլեր

Բազմավանկ բառերը առանում են Մալայի շրջանում -ներ, իսկ Ճանիկի շրջանում՝ -նի. օր.

խնձոր>խնձ'օյներ, խնձ'օյնի
աղջիկ>ախճիգ, ախճիգնի
այր—արիգ, արիգնի
ջաղացք—ճրղացք, ճրղացքնի

Ի ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը առանում են ք մասնիկը. ինչ. գինի>կինի, կինիք, գօտի>կօգի, կօգիք, գերանդի>գերքնդի, գերքնդիք, գործելի «ածուխ»>կօյձելի, կօյձելիք, ածելի>ածիլի, ածիլիք, անալի>օնլի, օնլիք, որբևայրի>էօրպրվարի, էօրպրվարիք, գարի>կարի, կարիք, գիւղացի>կեղացի, կեղացիք: Այսպես նաև ծառերի անուննները՝ պալընիք, գրբընիք, թէղիք, ձգընիք, թթընիք, խաղընիք, գաղնիք և այլն:

Միավանկ բառերից թի լինում է հգ. թիյեր, ձի-ձիյեր և ձիյօց. իսկ հայ բառը, որ դարձել է հեյի, հոգնակի լինում է հեյիք:

Գրաբարի այն բառերը, որոնք ա ձայնավորը անգամանի մոտ դարձրել են օ, հոգնակիում պահում են անփոփոխ նույն օ ձայնավորը. օր.

ճանճ>ջօնջ, ջօնջիր, ջօնջեր
բան>պօն, բ'օնիր, պօներ
զօքանչ>զօքօնչ, զօքօնչնի

Գրաբարի այն բառերը, որոնք վերջավանկում ունեցած ո ձայնավորը, վերածում են ևօ-ի կամ ե-ի, հոգնակիում կարող են պահել ևօ ձայնը, բայց ավելի շատ պահում են ե կամ օ. ինչ.

գորա>կեօյդ, կեօյդեր, կեյդեր, կօյդեր
գոգ>կեօր, կեօրեր, կեռեր, կօրեր
հոգ>խեօղ, խեօղեր, խեղեր, խօղեր
հոտ>հեօդ, հեօդեր, հեդեր, հօդեր

Գրաբարի այն բառերը, որոնք վերջանում են ր, եթե միավանկ են, հոգնակիի -եր կամ -իր մասնիկի մոտ պահում են իրենց ր ձայնը, բայց եթե բազմավանկ են, հոգնակիի -ներ կամ -նի մասնիկի և բազաձայնի պատճառով այս ր վերածում են յ-ի. ինչ.

սար>սար, սարեր
խնձոր>խնձէօր, խնձէօրնի, խնձօյնի
ոսկր>օսկէօր, օսկէր, օսկէյնի
խնչափառ>խըյչըփար, խըյչըփայնի
հօրքուրայր>հօրքուրար, հօրքուրայնի
ալիւր>ալուր, ալույնի

Ի վերջացող բառերը ազատ են այս ձայնափոխութիւնից, ինչ.

արջառ>աչառ, աչառնի
աստառ>աստառ, աստառնի
ամառն>օմառ, օմառնի
թիթեռն>փիթէռ, փիթէռնի

Եթե բառը վերջանում է ն-ով, հոգնակիում երկու ն միանում են միասին և մեկի չեն վերածվում. ինչ.

արիւն>արուն, արուննի
աման>օմօն, օմօննի
բերան>պէրօն, պէրօննի

Գրաբարի այն միավանկ (իրապես մեկ և կես վանկանի) բառերը, որոնք բազաձայնների խճողման պատճառով առաջել են վերջաձայն ը և վերածվել են երկավանկի, հոգնակիում զրկվում են այս հավելվածական ը-ից և նորից միավանկի վերածվելով՝ առանում են -եր (և ոչ՝ -նի) մասնիկը. ինչ.

առնտր>աօնդըր, աօնդրեր
ծանր>ձօնդրը, ձօնդրեր
ծունր>ձուռնդրը, ձուռնդրեր
նօսր>նօսրը, նօսրեր
թանձր>փօնձրը, փնզրը, փօնձրեր, փօնզրեր
մեղր>մէղրը, մէղրեր
ճիպո>ջիմբռը, ջըմբռեր

Այն բառերը, որոնք վերջավանկում ունեն շեշտայլ ու, սրման օրենքով կարող են ջնջել այս ու ձայնավորը, բայց երբեմն էլ պահում են. օր.

բուրդ>պուշտ, պշտեր, պուշտեր
շուն>շուռ, շռեր
տուն>դուռ, դռեր
մօրուք>միրուք, միրուքնի
ջուր>նուր, նրեր

Այս կարգի բառերը հնչման թեթևության համար կարող են նաև ներմուծել ը. օր.

դռում>տրնթում, տրնթուննի, տրնթմրնի
եղունգ>էղունք, էղունքնի, էղրնքնի
գլուխ>կլէօխ, կլէխ, կլէխնի, կլխընի
բազուկ>պազուգ, պազուգնի, պազգընի
պտուկ (կովի)>բդուգ, բդուգնի, բըդգընի

Վերջավանկում ի ձայնավորն ունեցող բառերն էլ հոգնակիում կարող են պահել նույն ձայնավորը և կամ վերածել ը-ի. ինչ.

բանալիք>պօճլիճք, պօճլիճքճի, պօճլըճքճի
ամիս>օմիս, օմսըճի
բիր>պիր, պրէր

Ր վերջացող բառերը այս պարագային առաջին դեպքում ր վերածում են յ-ի, երկրորդ դեպքում պահում են. ինչ.

ապուր արուր, արույճի արբյճի արբրճի,
ամբար>օմբար, օմբրյճի, օմբրրճի
հարիւր>հարուր, հարույճի, հարրրճի

Բացի ի և ու ձայնավորներից, նաև ա և ե ձայնավորները հոգնակիում կարող են ճայ կամ ովվել և վերածվել ը-ի. ինչ.

դանակ>տճագ, տճագճի տճգրճի
դանգակ>զօճգագ. զօճգագճի, զօճկկրճի
մանգաղ>մօճգաղ, մօճգաղճի, մօճկխրճի
ամբար>օմբար. օմբայճի, օմբրյճի
ադաման>աղօմօճ, աղօմօճճի աղօմրճճի
աւեղն>ասէղ, ասէղճի, ասղրճի
ոչխար>օչխար, օչխայճի, օչխրյճի
հիւանդ հիվօճդ, հիվրճդճի
բանջար>պօճջար, պօճջրյճի
գդալ>կդալ, կդալճի, կդլյճի, կդլրճի
ճակատ>ջագադ, ջագդրճի

Վերջավանկի չհշտյալ ու ձայնավորը կարող է ովվել ոչ միայն այն դեպքում, երբ նա առաջանում է գրաբարի ու-ից, այլև այն դեպքում, երբ առաջանում է գրաբարի ո և ոյ, ի ձայներից. ինչ.

բոյն>պուճ, պճեր, պուճեր
գոյն>կուճ, կուճեր *(բայց ոչ՝ կճեր)*
գամոն>տօմուճ, տօմուճճի, տօմրճճի
գոմ>կում, կումեր *(բայց ոչ՝ կմեր)*
սիւն>սուճ, սճեր
ձիւն>ծուճ, ծճեր

Այսպիսի հանդիպումների ժամանակ կարող են տեղի ունենալ հետաքրքիր ձայնաբանական երևույթներ, որոնց մեջ հիշելու արժանի ենք համարում հետևյալները.

ա) Եթե բառի մեջ կա ր բաղաձայնը, երբ պատահի նա այնպիսի մի բաղաձայնի մոտ, որ չի ընդունում ր, վերածվի ըստ օրինի յ-ի. օր. խորխոխ>*խորիս, խօյսրճի.*

Ծան.—սիրտ բառը ունի երկու ձևով հոգնակի՝ սրյդեր և սիդեր:

բ) լ և ն բաղաձայնները իրար հանդիպելու ժամանակ ըստ օրինի լն դառնում է ll. այսպես է՝ ուլունք>*հիլուն, հիլունճի, հիլրճճի: Նույն հանդիպումը տեղի է ունենում նաև մոայլ*>*մռալ «ամպ», հգ. մռալճի ձևի մեջ, բայց չի փոխվում ll-ի:*

գ) Օրինակներ ունենք նաև կիսապայթական բաղաձայնների տարրալուծման, որով ջ>*ժ, ձ*>*զ, ծ*>*զ, ց*>*ս. ինչ.*

ականջ>*օճգօջ, օճգօժճի*
պղինձ>*բղիճձ, բղիճզճի*
անիծ>*օճիձ, օճիզճի*
կապոց>*գարէօց, գարէօցճի, գարէօսճի*

Այն բառերը, որոնց առաջին վանկը սուղ ը ձայնավորն ունի, համարվում են բազմավանկ և հոգնակիում դարձյալ ստանում են -ճի մասնիկը, ինչ.

պճեղն>*բջէղ, բջէղնի*
գլուխ>*կլէօխ, կլէխնի, կլխրճի*
աստղ>*բստիճ, բստիճնի*

Բարդ բառերը թեև բազմավանկ, եթե իրենց երկրորդ մասում ունեն միավանկ մի բառ, համարվում են միավանկ և կրող են ստանալ հոգնակիում -իր մասնիկը, բայց համարվում են նաև բազմավանկ և ստանում են -ճի մասնիկը. ինչ.

դրկից>*տրրգից, հգ. տրրգրճեր (չկա՝ դրկիցներ ձևը)*
մաշմուրք «շագանակ», հգ. մաշմուրքեր, մաշմուրքճի
ձիափուշ «խոտ է», հգ. ձիափշեր
իշափուշ «խոտ է», հգ. իշափշեր
հօրաքոյր>*հօրքուր, հօրքուրեր, հօրքույճի*
մօրաքոյր>*մօրքուր, մօրքուրեր, մօրքույճի*

Ու հանգող բառերը, թեև իրրև ձայնավորահանգ ստանում են հոգնակիում ը մասնիկը, բայց կարող են ու ձայնավորը դարձնել -վը և ստանալ -ճի մասնիկը. ինչ.

թթու>թրատու, թատուք, թավրցի
առու>առու, առուք, առվրցի
կառու>գադու, գադուք, գադվրցի
լեզու>լիզու, լիզուք, լիզվրցի
ճճի>ջիջու, ջիջուք, ջիջվրցի
ուղեղ>էղու, էղուք, էղվրցի
մեղու>մէղու, մէղուք, մէղվրցի

Միավանկ լու բառը լինում է լվեր:

Ա հանգող բառերը, նույնպես իրրև ձայնավորահանգ, պիտի կազմեին իրենց հոգնակին ը մասնիկով, բայց այս ձևը քիչ է գործածվում և շատ ավելի սովորական է -ների ձևով հոգնակին: Այսպես են՝

գուլպայ>կուրրրնի, կուրրաք
ակռայ>ագռրնի, ագռաք
բազէ>պազրնի, պազաք
փեսայ>փեսրնի, փեսաք
տեր «տէրտէր»>դէրրնի, դէրաք
սատանայ>սագօնրնի, սագօնաք
ճանապարհ>ջամփա, ջամփրնի, ջամփաք
լոբի>լօբյա, լօբյրնի
չուխայ>չուխրնի, չուխաք
անջուրան>օնջուռա, օնջուռրնի, օնջուռաք
ոտայ>դղրնի, դղաք

Վերջինը՝ հակառակ մյուսներին, ավելի սովորական է դղար ձևով, քան թե՝ դղրնի:

Մարմնի զույգ անդամների անունները կազմում են իրենց հոգնակին -վի մասնիկով, բայց կարելի է գտնել նաև -եր և -վիք ձևով գործածված: Այսպես են՝

աչք>աչք, աչվի, աչվիք, աչքեր
աք>աք «ոտք», աքվի
թուշ>թուշ, թշվի, թշեր
ծոց>ձեօց, ձօցվի
ծունկ>ձուռնգ, ձնգվի, ձուռնգեր, ձնգեր
ձեռք>ձեռվի, ձեռքեր, ձեռվիք
ճանկ>ջօնգ, ջօնգվի, ջօնգվիք, ջօնգեր
ոտք>յեօտկ, յեօտկ, օդվի

մատն>մադ, մադվի, մադվիք, մադեր
յօնք>ունք, ընքվի, ընքվիք, ունքվի, ունքվիք
պոկունք «շրթունքներ»>բրռրընքնի, բրռմընքնի, բրռրընքվի, բրռմընքվի
ականջ>օնգօնջվի, օնգօնջնի, օգօնջվրնի *(Ար. 1895, 294)*
կոտոշ>գօդեշվրնի

Ուրիշ բարբառներում այս ձևով հոգնակի ունենում են միայն միավանկ բառերը. Համշենի բարբառում կան նաև բազմավանկ բառեր, ինչպես են վերջին երկուսը, որոնք ունեն նաև սովորական -նի ձևով հոգնակի:

Ուրիշ բարբառներում թև և ճիւ բառերը, թևև միավանկ և զույգ անդամ ցույց տվող բառեր, չունեն -վի ձևով հոգնակի: Համշենի բարբառը գիտե թեվի և թեվվիք ձևերը, թևև կա նաև թեվեր: Իսկ ճիւ «ոտք» բառը չընչված է Համշենի բարբառից, ուր ճիւ նշանակում է «ծառի բարակ ճիւղ»:

Այս նույն մասնիկով հոգնակի է դառնում նաև դուռն>տուռ բառը և լինում է սրմամբ՝ տուվի կամ տուվիք, թևև կարելի է ասել նաև տուռեր, տուներ և տուեր (այս ձևերի գործածության մասին տես ստորև):

Ծանոթ.—Սխալ գործածության արդյունք է ունկ, որ հին հայերենում նշանակում է «ամանի կանթ, բռնելու տեղ, խուփ», բայց Համշենի բարբառում ստացել է «ամանի եզերք» նշանակությունը, որ նաև թրք. դըլիք բառով է բացատրվում: Սակայն բարբառում կատարվելով երկրորդ թյուրիմացություն, կարծել են, թե այս ունկ-ը աչքի ունք-ի հետ նույն է (երկուսն էլ կլոր կամարաձև ձև ունեն) և ոչ միայն վերջածայնը դարձրել են ը (ունք), այլև հոգնակին եղել է ունքվի, ունքվիք, իբր թե նա էլ պատկաներ մարմնի զույգ անդամների թվին:

Այն բառերը, որոնք գրաբարում ունեն ն հանգը, որից զրկվել են բարբառում, հոգնակիում կարող են վերականգնել իրենց այդ ն ձայնը: Այսպիսով, այս կարգի բառերը ներկայանում են կրկնակ ձևով.

թոռն>թեօռ, թօռներ, թօռեր
մատն>մադ, մադներ, մադեր
մուկն>մուզ, մզներ, մուզեր
ձուկն>ձուզ, ձզներ, ձուզներ, ձուզեր
հարսն>հարս, հայսներ, հայսեր

լեառն>լեռ, լեռներ, լեռեր
դուռն>տուռ, տռներ, տուռեր, տռեր, նաև՝ տռվիք
եզն>յեզ, եզներ, յեզեր, բայց նաև՝ եզնի, եզնիք:
Այսպես նաև՝
ծառ>ձառ, ձառներ, ձառեր
փուռ>փուռ, փռներ, փռեր

Վերջում հիշատակված դուռն և եզն բառերի հոգնակին արժանի է առանձին ուշադրության:

Եզն բառի հոգնակի եզնի, եզնիք ձևերը շատ անկանոն են, իրրև միավանկ՝ այս բառը չպիտի առանար -նի մասնիկը, այլ միայն -եր:

Ինչպե՞ս բացատրել այս անկանոնությունը:

Անկանոնությունը կարելի է բացատրել երկու ձևով, նախ՝ իրրև փոխառություն հարևան Մատրցուբի բարբառից, ուր եզնի կանոնավոր հոգնակի ձևն է:

Եթե փոխառությամբ բացատրությունը անհարմար է, կարելի է մեկնել գրաբար եզինք ձևով. Այս բառը շրջմամբ դարձել է նախ եզնիք, ուր ապա ը հոգնակիի նշան համարվելով՝ բաժանվել է բառի մարմնից: Այսպիսով, ձևացել է եզնի և այս նի վերջավորությունն էլ նույն է համարվել հգ.-նի մասնիկի հետ, որ ոչ մի կապ չունի և զուգադիպորեն միայն նման է նրան:

Վերը հիշված -վի հանգող հոգնակիները, բուն որում զույգ անդամների անուններ են, կապակցվել են երկու գաղափարի հետ, իսկ -եր ձևով հոգնակիները բմբռնվել են իրապես հոգնակի: Այսպես են հասկացվել նաև տռվի և եզնի բառերը: Դռվի>տռվի ասելով հասկացվում են մի դռան երկու փեղկերը, իսկ դռներ՝ զանազան տների և անդյակների դռներ: Նույնպես՝ եզնի ասելով հասկացվում է մի զույգ եզ, եզների մի ամոլ, իսկ եզներ ասելով հասկացվում է եզների մի խումբ (երկուսից ավելի): Այսպիսով հասել են երկակիի գաղափարին, որ ինչպես հայտնի է՝ կար հին հնդեվրոպական լեզուների մեջ, ապա վերացվեց և այժմ, իրրև ճեացորդ խոր հնության, ճնում է չեխերենում[1]:

Էշ և ձի բառերը հոգնակիում առանում են օն մասնիկը, որ ուրիշ բարբառների -ան մասնիկն է. այսպես՝ իշօն, ծիօն, որոնք ունեն նաև սովորական էշեր, ծիյեր, ինչպես և իշօնի, ծիօնի

[1] Այս լեզվական հետաքրքիր երևույթը դիտել ավեց ինձ Արտաշես Էքսուզյանը:

ձևերը: Զկա սակայն լուսո ձևով հոգնակի. Բիւր. 1899, 359 հիշվում է կիշօն (գրված գիշօն) «գէշ մարդիկ». որ նույնպես այս մասնիկով է կազմված, և՝ անդ. 1900, 83, դեղօն «տեղեր»:

Պէս>րես միանալով դերանունների հետ՝ համարվում է մի բառ և առանում է հոգնակիում -նի և -նիք մասնիկները. ինչ.

քեզ պէս>քուրես, քուրեսնի, քուրեսնիք
մեզ պես>միրրես, միրրեսնի, միրրեսնիք
ձեզ պէս>ձիրրես, ձիրրեսնի, ձիրրեսնիք
ինձ պէս>իմրես, իմրեսնի, իմրեսնիք

Մատման>մադմօն բառը, ինչպես նաև -ուտ վերջավորված տեղ ցույց տվող բառերը թեև բազմավանկ և առանում են -նի հոգնակիա մասնիկը, բայց կարող են առանալ նաև -եր մասնիկը, որ հատուկ է միավանկներին: Թե ինչո՞ւ է այս բացառությունը՝ ինձ անհնարին եղավ բացատրել: Այսպես ունենք՝

մատման>մադմօն, մադմօննի, մադմօներ
ցախուտ «անառատ»>ցախուդ, ցախուդնի, ցախուդեր
փշուտ>փշուդ, փշուդնի, փշուդեր
մաշմրգուտ>մաշմրգուդ, մաշմրգուդնի, մաշմրգուդեր
խոռուտ>խօդուդ, խօդուդնի, խօդուդեր
ժոխուտ>ժօխուդ, ժօխուդնի, ժօխուդեր
մացառուտ>մացառուդ, մացառուդնի, մացառուդեր
ընկզընուտ>ընգզընուդ, ընգզընուդնի, ընգզընուդեր
թթենուտ>ըրընուդ, ըրընուդնի, ըրընուդեր
թզենուտ>թզընուդ, թզընուդնի, թզընուդեր
ծաղկուտ>ձաղգուտ, ձաղգուդնի, ձաղգուդեր

Եվ կարծես թե սրանց հետ հանգ կազմելու համար էլ՝

խախուտ>խախուտ, խախուտեր.

օր. խախուտերը պի կօլինք «խախուտները բեր վառենք»:

Դույն ցույց տվող մի քանի բառ հոգնակի են դառնում առանալով -եր մասնիկը. այսպես՝

գարմրեքը «կարմիրները»
ջերմըգեքը «սպիտակները»
սեվեքը «սևերը»
գարուդեքը «կապույտները»
տեղինեքը «դեղիները»
գեդեքը «կանաչները»

Սրանք կարող են սակայն նաև ըստ օրինի լինել գարմիրներ, Տր. գարմիրնի և այլն։

Միջին հայերենից մնացած և կամ նոր մասնիկներով ևս աճած անկանոն ու անսովոր հոգնակի ձևեր են.

դուռ-տուվրդոք
ընկեր-ընկէյդոք (Բիւր. 1899, 604, ընկրտէք)
եղբայր-ախպըրդոք
կին-գընգդոք (Բիւր. 1899 թ. 754 գնդիք)
հարս- հայսընդոք, հայսօնդոք
կարիճ-գընդըյջոք
հայր-հարօնդոք, հարէյդոք
հօրեղբայր-հօրպընյդոք
հօրու (խորթ հայր)-հօրվրդոք
հօրաքոյր-հօրկուդոք
մայր-մարէյդոք, մարօնդոք
մօրաքոյր-մօրկուդոք
մօրու (խորթ մայր)-մօրվրդոք
ներ-նիրօնդոք
ոսկր-օսկրդոք
սկեսուր-կէսուդոք
պառակ (լեռան լանջ)-բառգրդոք
տայգր-դաքէդոք
տալ-դալէդաք, դալօնդոք, դալներ
տեղ-դէղօնք
տէր-դիրվրդոք, դիրօնդոք, դիրընդոք
քոյր-քուրէդոք
օր-ավուդոք

Այս բոլորը ունեն նաև իրենց սովորական ձևերը. ինչ. դեղեր «տեղեր», օրեր, դաքռեր «տայգրեր», կէսույնի «կեսուրներ» և այլն։

Այս կարգի հոգնակիների հետ կարող ենք հիշել նաև՝

սեամ>շիմ, շիմեր, շիմքեր
ոդն (լեռան)>յէօղ, էօղ, հգ. օղնուկք
հոգի>հօքի, հօքիք, հօքվընի
մօրուք>միրվաք, միրվրդաք, միրաքնի
մրջիւն>մէյչում, մէճում, մէճվընի

(այս վերջինը ինձ թվում է, թե կազմված է տարանմանութեամբ կանոնաւոր մէճումնի կամ մէճմընի ձևից)։

մարդ>մաշտեր, մաշտվի, մաշվտիք, մաշտիք
թև>թեվ, թեֆեր Տր.
աստղ>աստեղկի, աստեղկնի

Վերևում տրված կանոններին ենթարկվում են նաև թուրքերենից փոխառյալ բառերը. ինչ. ղբյի «ամանի եղերք», հոգ. ղբյիք (Թրք. qəyə).

պուղար «աղբյուր, ակ», հոգ. պուղայնի (Թրք. puńar)
աթմաջա «բազե» (Թրք. utmaǰa), հոգ. աթմաջընի, աթմաջնիք
էնիշատ «քեռայր» (enište), հոգ. էնիշատաք, էնիշտրնի և այլն, և այլն։

Նոր Ջուղայի բարբառում հոգնակի կազմելու համար եզակիի վրա ավելացնում են -եր, -ներ կամ -ք մասնիկները. -եր առանում են բաղաձայնով վերջացող միավանկ բառերը, -ներ առանում են բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերը, իսկ -ք առանում են ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը. օր. -եր մասնիկով.

կաթն>կաթն, կաթներ *ձայն>ձ'էն, ձ'էներ,*
թռ>թռն, թռներ *այծ>էծ, էծեր*
աչք>աչկ, աչկեր *լու>լեվ, լեվեր*
խոզ>խոզ, խոզեր *հայր>խեր, խերեր*

-ներ մասնիկով.

բերան>բ'երան, բ'երաններ
եղբայր>ախպեր, ախպերներ
անանջ>անգոն, անգոններ
ոջիլ>վոնիլ, վոնիլներ
դագաղ>դ'ագ'աղ, դ'ագ'աղներ
կնքաւոր>քավոր, քավորներ
մեխակ>մեխակ, մեխակներ
մշակ>մշակ, մշակներ

-ք մասնիկով.

լեզու>լիզու, լիզուք
կաշի>կաշի, կաշիք
գոտի>գոխտի, գոխտիք
մարգարէ>մարգարէ, մարգարէք
թշնամի>թշնամի, թշնամիք

կիւրակէ>կիրակի, կ/րակիք
գարի>գորի, գորիք
գինի>գինի, գինիք
առու>առուն, առուք
խնամի>խնամի, խնամիք
կրեայ>կուրայի, կուրայիք

Այն միավանկ բառերը, որոնք հին հայերենում եզակիի մեջ ունեն ե հանգը և ներկա բարբառում զրկված են իրենց ե հանգից, հոգնակիում վերստանում են նույն ե ձայնը, որով հոգնակիի մասնիկը դառնում է -եր, փոխանակ լինելու -եր, այսպես էն՝

դուռն>դ՛ուռ, դ՛ռներ
ոտն>վոտ, վոտներ
մատն>մատ, մատներ
հարսն>խարս, խարսներ
եզն>յեզ, յեզներ
ծունկ (ծունկն)>ծունգ, ծնգներ
*ձեռն>ձ՛եռ, ձ՛եռներ
թոռն>թոռ, թոռներ

Այսպես է լինում նաև ծառ>ծառ, ծառեր, թեև այս բառը հին հայերենի մեջ ե հանգից արդեն դուրկ էր: Ասվում է նաև ծառեր: Համմտ. գարձյալ՝ ծունկ:

Մեկ և կես վանկ ունեցող բառերը մտնում են միավանկների շարքը և նրանց նման առանում են -եր մասնիկը.

աստղ>աստխ, աստխեր, ծանր>ծանգր, ծանգրեր
մանր>մանգր, մանգրեր, սանար>սանգր, սանգրեր:

Ձայնավորով վերջացող միավանկ բառերը երեքն են. ձի, լու, ձու. սրանցից լու և ձու իրենց հոգնակին կազմում են իր մասնիկով, միայն թե ու ձայնավորը վերածելով վ-ի. այսպես՝ լու-լվեր, ձու-ձվեր. իսկ ձի բառի մասին տես առաջ:

Այն բազմավանկ բառերը, որոնք եզակիում վերջանում են -ա-ով, հոգնակիի ը մասնիկը ըստ օրինի առանալու ժամանակ ա ձայնավորը է են դարձնում (իսկապես այս բառերի վերջավորությունն է եզ. այ, հգ. այք>էք՝ սովորական ձայնափոխության օրենքով): Օր.

երախայ>յարախա, յարախէք
գուլպայ>գուլբա, գուլբէք
բակլայ>բ՛ակլա, բ՛ակլէք
ծառայ>ծառա, ծառէք
քուրայ>քուրա, քուրէք
լուրիա>լուրյա, լուրյէք
փեսայ>փեսա, փեսէք
կապայ>կապա, կապէք
ճանապարհ>ճամփա, ճամփէք
ձնծղայ>ձ՛նձղա, ձ՛ընձղէք
վկայ>վկա, վկէք
սատանայ>սատանա, սատանէք

Հին հայերենի անեզական ձևերից առաջացած այն բառերը, որոնք Նոր-Ջուղայի բարբառում եզակիի մեջ ը ունեն, հոգնակիի մեջ իրենց ը ձայնը պահելով՝ առանում են հոգնակիի -եր կամ -ներ մասնիկը, որով դառնում են կրկին հոգնակի (ըստ ձևի). օր.

թև>թեփկ, թեփկեր
յօնք>յունք, յունքեր
պատկեր>պատկերք, պատկերքներ
վանք>վանք, վանքեր

Եթե մի որևէ բարդ բառի երկրորդ մասը միավանկ բառ է, հոգնակիի մեջ առանում է -եր մասնիկը. օր.

հօրաքոյր>խարաքուր, խարաքուրեր
մօրաքոյր>մարաքուր, մարաքուրեր
սանամայր>սանամէր, սանամէրեր
կնքաւորաքոյր>քավորաքուր, քավորաքուրեր

Բացառաբար զուտ բազմավանկ բառերից նույնպիսի հոգնակի ունենք Գիլանենցի ժամանակագրության մեջ, ինչ. ղարավաշեր՝ էջ 104, ճանապարհեր՝ էջ 100 (երկիցս), 103, 203:

Ու վերջացող բազմավանկ բառերը բացի սովորական ը ձևով հոգնակիից՝ ունենում են նաև մի երկրորդ ձևի հոգնակի, որ կազմվում է -ըներ մասնիկով և որի առաջ եզակիի ու ձայնավորը դառնում է վ. օր.

առու>առու, առուք, առվներ
կատու>կատու, կատուք, կատվներ
լեզու>լիզու, լիզուք, լիզվներ

Այսպես նաև ա, է, ի ձայնավորներով վերջացող բառերից ոմանք առանում են կրկին հոգնակի՝ սովորական ք-ի վրա ավելացնելով -նէր մասնիկը. ինչ.

Մարգարէ>մարգ՛արէ, մարգ՛արէք, մարգ՛արէքնէր
գօտի>գ՛օխտի, գ՛օխտիք, գ՛օխտիքնէր
ճանապարհ>ճամփա, ճամփէք, ճամփէքներ
ոսկի>վոսկի, վոսկիք, վոսկիքներ
մատանի>մատնի, մատանիք, մատանիքնէր
ծառայ>ծառա, ծառէք, ծառէքնէր
քեռի>քէռի, քեռիք, քեռիքներ

Այս բոլորից դուրս, կան մի քանի մասնավոր հոգնակերտ մասնիկներ, որոնց հետևում են միայն սակավաթիվ բառեր, ինչ. -աճի.—կցվում է պարզ եզակի ձևի վրա, կամ -եր, -ք ձևով հոգնակիի վրա և կամ ինքը առանում է ք մասնիկը. այսպես՝

-աէրաէրաճի *«աէրաէրներ»*, ամաճաճի *«ամաճաներ»*, իրմիճաճի *«իրաներ»*, անմաճի *«անուաներ» (Դիլանենց, ժմնկ., 105)*, ուրիշաճի *«ուրիշներ» (անդ 182)*, բութամաճի *(անգլ. button) «կոճակներ»*, վնասաճի, կոպալաճի, վարպետաճի, անգոնաճի, պատճառաճի, աթոռքաճի, դռշագաճի, ինգլիզաճի *«անգլիացիք»*, դ՛րուցաճի *«դուրս տեղեր, արուարձանք քաղաքի»*, *հատկապես Հնդկահայոց մէջ՝* ասպրակաճի, դֆաարաճի *«առևտրականներ»*, -ող *վերջացող դերբայներից՝* գոլոցողաճի *«եկողներ»*, տեսողաճի, ասողաճի *«ասողներ»*, վորսողաճի *«որսողներ» (Դիլանենց ժմնկ., 184)*, վեռողաճի *«վերցնողներ, առնողներ» (անդ, 190).*—կնաճիք, կանաճիք *«կանայք»*, սատանաճիք *«սատանաներ»*, խաթունաճիք *«տիկիններ»*, ամաճաճիք *«ամաններ»*, անգոնաճիք *«ականջներ»* օթախաճիք *«սենյակներ»*, ասողաճիք *«ասողներ»*, — շորերաճի *«շորեր, հագուստներ»*.

գուլրէքաճի, գուլրէքաճիք *«գուլպաներ»*:

Ձայնավորով վերջացող բառերը այս մասնիկն առանալու ժամանակ ներմուծում են նաև ավելորդ մի ն՝ ներդաշնակության համար. այսպես՝ տարինաճի, տարինաճիք *«տարիներ»*, քամինաճի *«քամիններ»*, կղզինաճի *«կղզիներ» (Ճառ ազգ., էջ 42)*, դուզմինաճիք *«կոճակներ» (Թրք.* düğme *«կոճակ» բառից)*:

Նի. — *կցվում է պարզ եզակի ձևի վրա, կամ առանում է նաև ք. ինչ. ոսկի>վոսկի, վոսկինի, վոսկինիք «ոսկիներ», կեռքընի «առամներ», յեղնգնի «եղունգներ», ծախկնի «ծաղիկներ», գ՛րչնի «գրիչներ», ախկընի «աղիքներ»:*

Ծանոթ.— Այս ձևը շատ ավելի սովորական է Հին-Ջուղայի մէջ. համմա. խնձորնի «խնձորներ», արկաքնի «երկաթներ», նույնիսկ Թրք. բառերով, ինչ. թվանքնի «հրացաններ»:

Իք.— մարթիք «մարդիկ»:

արեևք.— տեղարեևք, կողմարեևք, համմա. նաև՝ գեղարեևք *(Դիլանենց, ժմնկ., 97)*:

-արուևք.— սերմարուևք, դեղարուևք, սրբարուևք *«սրբեր»*.

ևեք.— *յարակուևեք «երեկոներ»*

-աևք.— *ձ՛իաևք «ձիեր»*

-էրք. — աղերք, աղչկերք, ելիկերք *«ճյուղեր»*, տարերք *«տարիք» (օր. տարերքդ՝ քինչ ա. Չեմ հավատամն նա էդքան տարերքով լինի). այսպես նաև՝* քվերք *«քույրեր» (Դիլանենց, ժամանակագր., էջ 104)*:

Հոգնակիի ուրիշ կազմութիւններ՝ -տաևք, -վաևք, -վտիք, -վրևեր, -տիք և *այլն ձևերով, որ կան ուրիշ բարբառների, նույնիսկ Նոր-Ջուղայի շրջակա գյուղերի մեջ, քաղաքի բարբառում գոյութիւն չունեն:*

Ծանոթ. — Վերոհիշյալ բոլոր մասնիկներից հատկապես նկատելի են -էր, ևեր, որ ուրիշ բարբառների մեջ -եր, -ևեր ձևով է, իսկ Նոր-Ջուղայի բարբառում հնչվում է է ձայնավորով: Նոր-Ջուղայի բարբառի մեջ հին հայերենի եա եկրարբառը դառնում է է, որից հետևում է, որ հիշյալ -էր, -ևեր ձևերը ուղղակի հավատարիմ ներկայացուցիչներ են հին հայերենի -եար, -ևեար ձևերին, և երկրարբառի երանգը մինչև այժմ էլ պահում են: Այս -էր, -ևեր ձևն է նույնպես, որ մեր աշխարհաբարի առաջին կազմակերպողները մտցրել էին մեր լեզվի մեջ, և որ հետո տեղի տվավ -եր, -ևեր ձևերին:

Ագուլիսի բարբառում *հոգնակի կազմելու համար եզակիի վրա դնում են -ք, -ար, -ար, -ևեր մասնիկները:*

Ք.—գործածում է միայն ձայնավորով վերջացող բառերի համար. եթե այդ ձայնավորն է ի, ք դառնում է ք՛. ինչ. ածուք *«ածուներ»*, ծիլիք՛ *«ծիլիներ»*, ըղօնիք՛ *«ազգականներ»*, եզ՛իք՛ *«այգիներ»*, բակլաք *«բակլաներ»*, ըթօք *«ընկուզներ»*, լիւզիւք *«լեզուներ»*, խաշուք *«խաշուներ»*, խուփաք *«խուփեր»*, կապաք *«կապաններ»*, կատուք *«կատուներ»*, ճաքուք *«հորաքույրներ»*, ճնափաք *«ճանապարհներ»*, յաղաք *«յղիներ»*, պուպուք *«հոպոպներ»*, չուխաք *«չուխաներ»*, սառնաք *«սառնաններ»*, րօպէք

«բոպէներ». նույնիսկ Թրք. բառեր, ինչպես՝ աշնաք «ծանօթներ» և այլն, և այլն։

Ծանոթ. 1. -ա ձայնավորով վերջացող բառերը, ինչպես տեսնում ենք, ստանում են ուղղակի ք մասնիկը, առանց որևէ փոփոխութեան։ Ուրիշ խոսքով՝ կովկասյան բարբառների մեջ սովորական չուխեք, սատաճեք և այլն ձևերը այստեղ գոյութեան չունեն։

2.— m ձայնավորով վերջացող բառերի ծայրին ք առանց կակղելու՝ սովորական ձևով մնում է ք. ինչ. փոսաք «փոսաներ», վիլաք «վիլաներ», վարաք «վերաները», բայց քուրայ լինում է քʲուրաք։

3.—Եթե բառի մեջ ա ձայնը վերածված է օ, այս ձևով էլ մնում է հոգնակիի ք-ի մոտ, որի համար ունենք հետևյալ օրինակները. վկայ>վկօ, վկօք, պապ>պօպի, հգ. պօպիք, պրս. avāra>ավրօ «դատարկապորտ», հգ. ավրօք։ Այս երևույթը հակառակ է հոգնակիի սովորական օրենքին (տես ստորև). միայն երախայ>ըրխօ տալիս է հգ. ըրխաք։

4.—Ը ձայնավորով վերջացող բառերը նույն ք ձայնից առաջ ը դարձնում են ու (իսկ եթե առաջին վանկում կա ու, այս ու դառնում է ի). օր. ոտն>ուտնը, ուտնուք, արդն>իւտնը, իւտնիւք, սառն>սօռնը, սօռնուք (կամ նաև՝ սառնուք), ծունկ>ծէյնը, ծէյնուք, ձմեռն>ձմէռնը, ձմէռնուք, ճիւղ>ճէղնը, ճեղնուք, նուռն>նօռնը, նօռնուք, դիւզնը «անոթի, քաղցած», դիւզնիւք, եղն>իզնը, իզնուք, բեռն>բէռնը, բէռնուք, թոռն>թառնը, թառնուք, գառն>գ՛առնը, գ՛առնուք, ձուկն>ձուկնը, ձուկնուք, իսկ՝ հակ>հօկնը, հակնուք։

-Ար, որ մասնիկները գործածվում են բաղաձայնով հանգող միավանկ բառերի համար. ար գրվում է այն բառերի վրա, որոնց ձայնավորը ծանր է (ա, ը, օ, ու), իսկ որ գրվում է այն բառերի վրա, որոնց ձայնավորը թեթև է (ո, է, ի, էօ, էյ, ույ, օյ, իւ, այ). ինչ. տուն>տօն, տօնար, ուս>յօնս, յօնսար, շուն>շօն, շօնար, կոշտ>կուշտ, կուշտար, բոզկ>բուխկ, բուխկար, գործ>գուռծ, գուռծար, դիրտ>դըրդ, դըրդար, դաղձն>դաղճ, դաղճար, աղ>աղ, աղար, գետ>գ՛իտ, գ՛իտար, գոգ>գ՛իւղ, գ՛իւղար, գող>գ՛իւղ, գ՛իւղար, դեղ>դէղ, դէղար, ադտ>էխտ, էխտար, ժանգ>ժոնգ՛, ժոնգ՛ար, ուրդ>էօռդ, էօռդար, խոյլ>խույլ, խույլար, յոյս>հույս, հույսար, քոյր>քույր, քույրար, հին>

հայն, հայնար, մայր>մայր, մայրար, դէզ>դէյզ, դէյզար, և այլն։

Ծանոթություն 1.—Միավանկ բառերի մեջ գտնված օ ձայնը, եթե առաջացած է նախավոր ա-ից, հոգնակի լինելու ժամանակ նորից դառնում է ա. ինչ. ծակ>ծօկ, ծակար, ծառ>ծօռ, ծառար, հաց>հօց, հացար, ալք>օլ, ալար, ակն>օկրն, ակնար, արջ>օռջ, առջար և այլն։

Կան բառեր, որ ունեն թե ա-ով և թե օ-ով ձևերը. ինչ. ահ «վախ»>օհ, օհար, ահար, կաթ «կաթիլ»>կօթ, կօթար, կաթար, կախ>կօհ, կօհար, կահար, կապ>կօպ, կօպար, կապար, շար, շարք>շօր, շօրար, շարար, կարճ>կօռճ, կօռճար, կառճար։

Շատ>շօտ բառի հոգնակին գործածական է միայն շօտար ձևով. չկա շատար, ինչպես և՝ տարմ>տօրմ, տօրմար։

Այս բացառությունները գեղեցիկ օրինակներ են ցույց տալու համար, թե ինչպես համաբանության օրենքը ազդում է բառերի վրա, թե ինչպես ա>օ ձայնափոխության գիտակցությունը վերանում է բարբառից, և եղակիի ձևը ձգտում է անփոփոխ մնալ նաև հոգնակիում։ Ամենագործածական բառը՝ շատ, արդեն հպատակվել է ընդհանուր օրենքին. մի քանի սակավ գործածական բառեր՝ նույնպես. մնում են միայն մի քանի ձևերը, որոնք դեռ շարունակում են հին օրենքը։

Ծանոթ. 2.—Միավանկ բառերի մեջ գտնված ու ձայնը, եթե առաջացած է նախավոր ա-ից, հոգնակի լինելու ժամանակ նորից վերածվում է ա-ի. ինչ. տանձ>տունձ, տանձար, վանք>վունք, վանքար, ժամ>ժուռ, ժամար, թան>թուն, թանար, ճանճ>ճունջ, ճանջար, սեամք>չումք, շամքար և այլն։

Կան բառեր, որոնք ունեն թե ա-ով, և թե ու-ով ձևերը. ինչ. ծամ>ծուռ, հգ. ծամար, ծուռար։

Թանգ>թունգ ունի միայն հգ. թունգար և սանդ>սունդ, սունդար ձևը։

Ծանոթ. 3.—Միավանկ բառերի մեջ գտնված էօ ձայնը, եթե առաջացած է նախավոր ա-ից, հոգնակի կազմելու ժամանակ վերածվում է ա-ի. ինչ. վար>վէօր, հգ. վարար, վարդ>վէօռդ, վառդար, վարս>վէօրս, վարսար, բահ>բէօհ, բահար, գաճ>գ՛էօճ, գ՛առճար, դափ>դէօփ, դափար։

Կան բառեր, որոնք այս պարագային ունեն թե ա-ով և թե էօ-ով հոգնակի և կամ միմիայն վերջինը. ինչ. բարձ>

բէօռձ, բառձար, ալ>յէօլ, յէօլար, լաց>լէօց, լէօցար, բաց>բէօց, բէօցար, գաղ>գէօղ, գէօղար, ձախ>ձէօհ, ձէօհար:

Ծանոթ. 4.—Միավանկ բառերի մեջ գտնված օյ, որ առաջացած է նախավոր ա-ից, հոգնակի լինելու ժամանակ վերածվում է նորից ա-ի. բառն առանում է ար մասնիկը. ինչ. սալ>սոյլ, սայլար, տալ>տօյլ, տայլար, կալ>կօյլ, կայլար, ծալ>ծօյլ, ծայլար, բայց՝ ծալք>ծօյլք, ծէօլք, հգ. ծօյլքար, ծէօլքար և ծոլքար:

Ծանոթ. 5— Այն միավանկ բառերը, որոնց ձայնավորն է ա, իսկ նրան հաջորդում է գ կամ կ, որ գտնվում է բառավերջում, հոգնակիի մեջ առանում են -ար մասնիկը՝ առանց փոխելու իրենց ձայնավորի երանգը. ինչ. էգ>աք, աքար, նիգ>նաք, նաքար, պիրկ>պարկ, պարկար, տիկ>տաք, տաքար:

Ծանոթ. 6.—Գայլ>գիւլ բառի մեջ թեև իւ առաջացած է նախավոր այ-ից, բայց հոգնակիում չի փոխվում. այսպես գիւլար.—գալով բաճ>բիւճ բառին, սա էլ «գործ» նշանակությամբ դառնում է հգ. բիւճար, «իր» նշանակությամբ՝ բոնար:

Ծանոթ. 7.—Նը վերջացող երկավանկ բառերը հոգնակիում ջնջելով ը հանգը՝ գառնում են միավանկ և հետևում վերոնիշյալ կանոններին. ինչ. գիւղնը «քաղցած»—գիւզնար, կրակ>կաղնը, կաղնար, հակ>հօկնը, հակնար, գառն>գէօռնը, գէօռնար, սառն>սօռնը, սօռնար, սառնար: Ըստ այսմ՝ հարսն բառը, որ ունի երկու ձև՝ հօռս և հօռսը, ունի նաև կրկին հոգնակի՝ հառսար և հառսնար:

Ծանոթ. 8.—Ձայնավորով վերջացող միավանկ բառերը, չունենալով ը մասնիկով հոգնակի, ընդունում են նույնպես ար մասնիկը, միայն թե կցելով նրան յ կիսաձայնը, եթե բառը վերջանում է ի, և՝ վ բաղաձայնը, եթե բառը վերջանում է ու>իւ. այսպես են՝ լի>լի, լիյար (կամ նաև՝ լիքար), ձի>ձի, ձիյար, ձու>ձիւ, ձիւվ, ձիւվար, լու>լիւ, լիւվար:

Ծանոթ. 9.—Բացառիկ ձևեր են խօսք>խօսկ, խասկար, ծով>ծօվ, ծավար, կով>կուվ, կավար, ձեռք>ձէռք, ձէք, ձարքար, ձաքար, ոտն>ուտնը, ատնար, լուծ>լիւծ, լիւծար, բայց նաև՝ լիւծքար, քև>քիվ, թուվար, շոր>շուր, շարար:

-Ներ մասնիկը գործածվում է ամեն տեսակ բազմավանկ բառերի վրա, լինի թեթև կամ ծանր, ձայնավորառանդ կամ բաղաձայնառանդ, շեշտը ընդունում է իր վրա և նրանից առաջ ձայնավորի սղում չի կատարվում՝ հակառակ սովորական կանոնի. ինչ. քանիր>քարան, քարաններ, ազաւնի>ըզօնի, ըզօնիներ:

Ծանոթ. 1.—Ըստ այսմ ձայնավորով վերջացող բառերը ունենում են կրկին հոգնակի. -ք և -ներ մասնիկներով. ինչ. լեզու>լիւզիւ, հգ. լիւզիւք, լիւզիւներ:

Ծանոթ. 2.— Ը վերջացող բառերը, որոնք նույն ը ձայնը պահելով առանում են միավանկային ար, ար մասնիկը, կարող են նաև պահել նույն ը ձայնավորը և իրր բազմավանկ՝ առանալ -ներ մասնիկը. այսպիսով այս կարգի բառերն էլ ունենում են միշտ կրկին հոգնակի՝ չհաշված ք ձևը. ինչ. ճիւղ>ճէղնը, հգ. ճէղնուք, ճէղնար, ճէղնըներ, դիւզնը «քաղցած», հգ. դիւզնիւք, դիւզնար, դիւզնըներ և այլն:

Ծանոթ. 3.—-Ներ մասնիկից առաջ, ինչպես ձայնավորի սղում չկա, չկա նաև ձայնափոխված ձայնավորների վերածումը իրենց նախկին ձևին. ինչ. Թլուատ<Թլվօտ, Թլվօտներ, խրատ>հրօտ, հրօտներ և այլն: Սակայն՝ ազայ>ազօ, ազաներ:

Ծանոթ. 4.—Երկուսից ավելի վանկ ունեցող բառերի ծայրին ը ջնջվում է -ներ մասնիկից առաջ. ինչ. կանկար>կանգառնը, կանգառներ, զկռօ>զրկէռնը, զրկէռներ, բայց և, առանց ջնջումի, կարելի է ասել՝ կռէգ>կռազնը, կռազներ, ձմեռն>ձմէռնը, ձըմէռներ և այլն:

Ծանոթ. 5.—Մեկևկես վանկանի բառերը ունենում են երկու ձևով հոգնակի. սովորաբար -ներ, բայց նաև՝ ար, ար. ինչպես՝ աստղ>աստղը, աստղներ, աստղար, բարձր>բէօձրը, բէօձրներ, ծանր>ծունդրը, ծունդրներ և այլն:

Ծանոթ. 6.—Եթե մի բարդ բառի երկրորդ եզրը միավանկ է, ամբողջը կարող է առանալ թե -ար, և թե -ներ մասնիկը. ինչ. կարագ>կարակէղ, կարակէղար, լուսխառ>լվոխուս, լվոխուսար, բայց՝ կիսագող>կէսգէօղ, կէսգէօղներ, մատնաշուրթն>մանաշօրժ, մանաշարժար, աղեղնուկ>ըղիյօկրն, ըղիյակներ: Վերջին օրինակները ցույց են տալիս, որ ձայնավորը կարող է նաև վերածվել իր նախաձևին: (Աղեղնակն առուգրաբանված է աղեղ, ակն «աչք»):

Հոգնակիի մյուս մասնիկները թեև շատ գործածական, բայց այնուամենայնիվ ընդհանուր չեն և հոգնակի լինելուց ավելի՝ հավաքական նշանակություն ունեն: Թե ինչ բառ ինչ մասնիկ է ընդունում, այս մասին, հակառակ իմ ջանքերիս, որևէ օրենք չեմ կարողացել գտնել և վստահ եմ, որ չկա այդ-

պիսի օրենք։ Սրա համար իրը ապացույց կարելի է տալ հետևյալ հանգամանքները.

ա) Կան բառեր, որոնք անխափ կարող են ստանալ թե այս, և թե այն մասնիկը. ինչ.

պառաւ>պառավ, պըռըվանիք՛, պըռըվատիք՛, գաղար>գ՛էղոզր, գ՛ըզըրնատիք՛, գ՛ըզըրատիք՛, գիրք>գ՛իրք, գ՛իրքըրնատիք, գ՛իրքըրատիք՛ կաուր>կաօր, կաըրնատիք՛, կաըրնատիք՛, կողք>կուխ, կըխկըրնատիք՛, կըխկըրատիք՛, կամուրջ>կարմունջ, կըրմըրնջատիք՛, կըրմըրնջատիք՛, ճիւղ>ճէղնը, ճըղնատիք՛, ճըղնըրատիք՛, ոսկր>ուսկուռ, ըսկըռատիք՛ ըսկըռնատիք՛, պոսկ>փսօկ, փըսըկնատիք՛, փըսըկանիք՛, ջրաղաց>ջաղաց, ջըղըցանիք՛, ջըղըցնատիք՛, սերմն>սիրմ, սրմատիք՛, սրմատիք՛, սրմատրիւնք՛, տիկ>տատ՛, տըտ՛ունիք՛, տըտ՛ընատիք՛, տայդր>տադիր, տըգըրնատիք՛, տըգըրատիք՛ և այլն։

բ) միևնույն ձևով բառեր առանում են դանագան մասնիկներ. այսպես օրինակ՝ -ակ վերջավորութ՛յամբ ունենք՝

առւակ>առակ, ըռըկատիք՛,
բարակ>բարակ, ըրրըկատիք՛,
բամբակ>բիմբակ, բամբըք՛ատիք՛
գդակ>քէդակ, գ՛ըդը՛ք՛ատիք՛
գերմակ>գ՛ուրմակ, գ՛ըրմըք՛ատիք՛
դանակ>դանակ, դընըկ՛ատիք՛
դաւակ>դավակ, դըվըքատիք՛
կայծակ>կայծակ, կըյծըկնատիք՛
կոճակ>կէճակ, կըճըկնատիք՛
մոծակ>մածակ, մըծըկնատիք՛
շալակ>շալակ, շըլըկատիք՛
որձակ>էոձակ, ըոձըկնատիք՛
վիճակ>վիճակ, վըճըկանիք՛
տախտակ>տախտակ, տըխտըկանիք՛
տափակ>տափակ, տըփըկանիք՛
փեթակ>փտտակ, փըտըկնատիք՛
քաղալակ>քաղյլակ, քըղըլնատիք՛
քուռակ>քուռակ, քըռըկանիք՛
քսակ>քայսակ, քըյսըկանիք՛

Ուրեմն 19 – բառից ունենք 8 ատիք՛ կամ տիք՛, 6 նատիք՛, -նոտիք՛, 5 անիք՛, ունիք՛.

Մասնիկների գործածության մեջ կարելի է նկատել հետևյալ պայմանները.

ա) Բոլորն էլ ունեն կրկնակ ձև՝ ծանր և թեթև. այսպես՝ ծանր են ատիք՛, ճատիք՛, աճիք՛, արիք՛, աճք, իք, թեթև են՝ տատիք՛, ճոտիք՛, տճիք՛, տրիք՛:

Եթե բառի վերջին ձայնավորը ծանր է, դրվում է ծանր մասնիկ, և եթե թեթև է՝ թեթև մասնիկ. ինչ. ականջ>անգուճ, ընգըճնատիք՛, կեռիք>կառիք՛, կըռքըճնատիք՛,

բ) Որովհետև այս մասնիկները երևիվանկ են և շեշտը կրում են իրենց առաջին վանկի վրա, ուստի բառը ամեն պարագայի մեջ էլ մնում է շեշտից առաջ և ընդհանուր կանոնի համեմատ սղում է իր բոլոր ձայնավորները. ինչ. պառաւրագ>պտարագ՛, պըռըրըգ՛ունիք՛, շամփուր>շամփուր, շըմփըրնատիք՛, օձ>աղձ, ըղձնատիք՛ և այլն։

Երբեմն լինում է և բաղաձայնի կորուստ. ինչ. աղքատ>ախկատ, ըխկընատիք՛, բոպիկ>բոպիկ՛, ըրպըճնատիք՛, պառուհան>պտօրհան, պըտըրճնատիք՛, քաղալակ>քաղյլակ, քըղըլնատիք՛ և այլն։

գ) Միավանկ բառերը՝ առանալով -ճատիք՛ մասնիկը, իրրև հոդակապ ավելացնում են նաև ը ձայնը. ինչ. փուքս>փօսկ, փըսկընատիք՛, փոխ>փուհ, փըհընատիք՛, ցեխ>ցէխ, ցըխընատիք՛, վարս>վէօրս, վըրսընատիք՛; սոխ>սուհ, սըհընատիք՛ և այլն։ Այս ը ձայնը կարող է ձայնավորների նույնացման օրենքով դառնալ ի, ու, ինչ. իւռնիւճատիք՛ «որդներ», գիւլիւճատիք՛ «գայլեր», իգ՛իճատիք՛ «այգիներ», ճիլիճատիք՛ «ճիլեր», բիւշաւնատիք՛ «բշտիկներ» և այլն։

դ) Ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը -ճատիք մասնիկից առաջ իրենց ձայնավորը դարձնելով ըստ օրինի ը, առանում են միշտ միավանկ բառերի ձևը, ինչ. երեխայ>ըրխօ, ըրխընատիք՛, փեսայ>փտսա, փըսընատիք՛, գօտի>գ՛ուտի, գ՛ըխտընատիք՛, աքացի>քացի, քըցընատիք՛ և այլն։ Թե այս, և թե նախորդ պարագային՝ ու հանգող բառերը առանում են ավելորդ վ ձայնը. ինչ. ածու>ածու, ըծ՛ընատիք՛, լու>լիւ, լըվընատիք՛, ձու>ձիւ, ձըվընատիք՛։

Չի բառը առանում է յ և դառնում հգ. ձիյընատիք.—ի հանգող ուրիշ միավանկ բառ չկա այս ձևի հոգնակիով։

Հավաքական մասնիկների մեջ ամենաշատ գործածականն է -ճատիք. սրանից շատ ավելի սակավադեպ է -ատիք: Այս մասնիկով մեր ունեցած օրինակներն են՝

աթար>թաթար, թըթըրատիք
ալևոր>հլովիւր, հըլըվըրատիք
ալիւր>ալիւր, ըլլըրատիք
աղջիկ>ախչիկ, ըխչկատիք
աներ>անիր, ընըրատիք
անէծք>անիծք, ընըծկատիք
*աշխարհ>աշխարք, ըշխըրատիք, ըշխըրքատիք
*ապսպարանք>պասպարք, պըսպըրատիք, պըսպըրքատիք
ապրանք>ապրանք, ըպրընքատիք
առակ>առակ. ըրըկատիք
ասեղն>այծոզ, ըյսըղատիք
աստառ>աստառ, ըստըռատիք
աւելի>իվիլ, իվիլատիք
բամբակ>բիմբոկ, ըմբրըք՛ատիք
բամբասանք>ըմբրասանք, ըմբրըսատիք
բանալի>ըլոնիք՛ ըլըընք՛ատիք
բանջար>բինջոր, ըընջըրատիք
բարակ>բորոկ, ըրըրկատիք՛
բարեկամ>բարեկամ, ըրըրկըմատիք՛
բարեաւ>բորով, ըրըրվատիք՛
գդալ>դըգիւլ, դըգըլատիք
գդակ>ք՛էդակ, քըդը՛ատիք
+գետին>գ՛ատին, գ՛ըտընք՛ատիք
գերմակ>գ՛ըրմոկ, գ՛ըրմըք՛ատիք
+գիւղ>գէղ, գըղըրքատիք՛
+գլուխ>գըլիւհ, գըլըք՛ատիք՛
դանակ>դանոկ, դընըկ՛ատիք
դիւան>դիվունք, դըվընքատիք
դմակ>դմօկ, դըմըկատիք՛
+դուրս>դիւս, դիւսընքատիք
դռնակ>դռնօկ, դըռնըքատիք՛
եղբայր>ախպար, ըխպըրատիք՛
եղունգն>էղունք, ըղընքատիք՛
երազ>արազ, ըրըզատիք՛

երես>իրիս, ըրըսատիք՛
զաւակ>զավակ, զըվըքատիք՛
ընկեր>հինգ՛իր, հինգ՛ըրատիք՛
+թաղ>թաղ, թըղըրատիք՛
թանաք>թանակ, թընըկատիք՛
թանձր>թունձըր, թընձըրատիք՛
ժառանգ>ժոռոնգ՛, ժըռընգոտիք՛
լեզու>լիւզիւ, լըզընատիք՛
խլինք>խլինք՛, խըլընք՛ոտիք՛
խմոր>խմուր, խմըրատիք՛
խնձոր>խնձիւր, խընձըրատիք՛
ծանր>ծունդըր, ծընդըրատիք՛
կանաչ>կանանչ, կընընչատիք՛
կատու>կատու, կըտվատիք՛
կարաս>կարաս, կըրրսատիք՛
+կողք>կուխկ, կըխկըրատիք՛
կոտոր>կուտուր, կըտըրատիք՛
+ճմերուկ>ճմրտրիւկ, ճըմբրըրատիք՛, ճըմբրըքոտիք՛
ճանապարհ>ճնապիա, ճընըփատիք՛
+ճիւղ>ճէղնը, ճըղնըրոտիք՛
ճիպո>ճուպո, ճըպըռատիք՛
*մանիշակ>մնէշակ, մնըշոտիք՛
մատուց>մատաղ, մըտըղատիք՛
միս>մայս, մսոտիք՛
մոխիր>մախիր, մըխըրատիք՛
շալակ>շլոկ, շըլըկոտիք՛
ոլոր>իւլիւր, իւլիւրոտիք՛
ոչխար>էխչար, ըխչըրատիք՛
ոջիլ>էջիլ, ըջըլոտիք՛
ուսկր>ուսկուռ, ըսկըռատիք՛
պակաս>պակաս, պըկըսատիք՛
պանիր>պանդիր, պընդըրոտիք՛
պատանք>պատանք, պըտընքատիք՛
պղինձ>պղայնձ, պըղընձոտիք՛
սալոր>շըլլիւր, շըլլըրատիք՛
սանտր>սունդըր, սընդըրատիք՛
սերմն>սիրմ, սըրմոտիք՛
սխտոր>սխտուր, սխտըրատիք՛
ցամաք>ցամաք, ցըմըքատիք՛

Նույնիսկ օտար բառերից ունենք քրիստրատիք «հայհոյանքներ» (արաբ. kufr)։

Ծանոթ. 1. —Ինչպես տեսնվում է, շատ անգամ, այս -ատիք՝ մասնիկից առաջ բառավերջի ը, աը, աբ, ուկ մասնիկները կորչում են. ինչ. ապսպարանք, մանիշակ, ձմերուկ և այլն։ Ուրիշ անգամ ընդհակառակը բառի վրա ավելանում է ը, որ, աը, երբ, որոնք հոգնակիի ծանոթ նշաններն են. ինչ. թոդ, ճիւղ, դուրս և այլն։ Առաջին տեսակի բառերը վերի ցուցակում նշանակված են (*) աստղանիշ (բոլորն էլ բազմավանկ), իսկ երկբորդները՝ (+) խաչանիշ (շատը միավանկ)։

Գլուխ>գըլիւճ բառի հոգնակիում ճ ջնջվելով՝ առաջանում է գըլըքատիք։

Ծանոթ. 2.— Ն, ը հանգող բառերը առանում են ատիք՝ մասնիկը. բայց այստեղ հարց է ծագում, թե արդյոք մասնիկը իրապես ատիք է, թե նատիք, և բառի վերջաձայնը կրճատված. ինչ. աման>ամանատիք, ըմբնատիք, բան>բիւն. բրնատիք, գառն>գառանը, գըռնատիք, ճիւղ>ճէղնը, ճըղնատիք և այլն։

Ասեղն բառը ունի երկու ձև՝ այսող և այսողը, ուստի հոգնակին էլ լինում է ըյսըղատիք և ըյսըղնատիք։

Գըրաղինք «ուղղապիք» բառը հոգնակիում կորցնելով վերջաձայն ք, մանում է ն հանգող բառերի շարքը և լինում է գըրըղնատիք. այսպես նաև՝ փշրանք>փշրունք, փշըրնատիք։

Եզն>իզնը բառը հոգնակի իզնուք ձևը առանալուց հետո երկրորդ անգամ առանալով հոգնակիի մասնիկը, դառնում է իզնըքատիք։

Որդն>իւռնը բառը ընդունելով ուղղակի -նատիք՝ մասնիկը՝ լինում է իւռնիւնատիք։

Եթե բառը հանգում է նա, նի, վերջին ձայնավորը սղվելով՝ բառը անցնում է ն հանգող բառերի շարքը. այսպես են սատանայ>սատանա, սըտընատիք, մատանի>մատանի, մըտընատիք, ուռենի>օռնի, ըռընատիք։

-ատիք՝ մասնիկից ավելի պակաս գործածական է անիք՝ նանիք՝ մասնիկը, որի համար ունենք հետևյալ օրինակները.

այգի>էգի, ըգընանիք
կին>կնակ, կնանիք
կով>կուվ, կըվրրանիք
կուպր>կօպր, կըպրրանիք

հաւատ>հավատ, հրվրատանիք
ճրագ>ճրօյգ, ճրրրգոնիք
շուն>շօն, շնանիք
պատարագ>պատարագ, պրտրրգոնիք
պարապ>պարապ, պրրրպանիք
պսակ>փսօկ, փրսրկանիք
ջրադաց>ջադայց, ջրդրցանիք
սափոր>սափուր, սրփրրանիք
վարտիք>վառթիկ, վրտրթրկոնիք
վիճակ>վիճակ, վրճրկոնիք
տախտակ>տախտակ, տրխտրկանիք
տայգր>տադիր, տրգրրոնիք
տաշտ>տաշտուղ, տրշրղանիք
տառեխ>տառախս, տրռրխան'իք
տատասկ>տատաշկ, տրտրշկանիք
տաւար>տավար տրվրրանիք
տափակ>տափակ, տրփրկանիք
տակոիք>տակոտիկ, տրկդռանիք
տեղ (անկողին)>տէդ, տրդրրոնիք
տեսր>տիտր, տիտրոնիք
տերև>տիրիվ, տրրրվոնիք
տիկ>տագ, տրգոնիք
փրփուր>փրրփօռ, փրրփրռանիք
քաղցր>քուխցըր, քրխցրրանիք
քարոզ>քարուզ, քրրրզանիք
քոյր>քույր, քվրրոնիք
քսակ>քայսակ, քրյսրկոնիք
քրտինք>քոթունք, քրտրնքանիք
քուռակ>քուռակ, քրռրկանիք
պառաւ>պառավ, պրռրվանիք
պլուզ>պլօզ, պլրլրզանիք
կարկատան>կրկատան, կրրկրտանիք
մթին>մթայն «գիշեր», մթանիք

Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ երբեմն ներմուծվում է հոգնակիի -եր մասնիկը, ինչպես են՝ կով, տեղ բառերը.—քույր բառի հավաքականը կազմվում է սեռ. քվիր ձևից.—կարկատան և մթին բառերը հավաքական դառնալիս կորցնում են կրկին ունգական

ձայնախմբերից մեկը. փխ. *կըրկըռըցանիք, *մըթըցանիք. տակռիք բառի հավաքականը կազմվում է տակռի ձևից։

Ավելի սակավ գործածական է -արիք[1], -ցարիք[1] մասնիկը, որի թեթև ձևն է -ռիք[1]: Սրանց համար մեր ունեցած օրինակներն են՝

գիր>գ'իր, գ'իրոնիք'
գիրք>գ'իրք, գ'իրքոռիք'
դուռն>դուրք դըրքարիք'
կար>կ•ր, կրարիք'
կտուր>կտօր, կտըրնարիք'
ջուր>ջիւր, ջրոռիք,
տուն>տօն, տնարիք'

Վերջապես կան մի քանի շատ սակավ գործածական մասնիկներ էլ, որոնք են՝

-ացք, -ոցք.— ձիյոցք «ձիեր», լվոցք, «լվեր», ձվոցք «ձվեր», գըրյանք «գրքեր»։

-իք[1] (իկ).—*մարդիք' «մարդիկ»։*

-արք, էրք *(եր+ք).*—խասկարք «խօսքեր», ըրխարք «երախայք», տղարք «տղայք», վխտէրք «ժամանակներ» (արաբ. vaqt)։

-տրունք *(եր+ունք).*— սրմոռիւնք «սեթևեթներ»։

-օսիք[1].—խնըմօսիք, «խնամիներ»։

Բարբառիս մեջ անսովոր չէ նաև -եր ձևով հոգնակին. իբր օրինակ ունենք՝ թխտեր «թղթեր», բրեր «քրեր», ընչեր «ինչեր», ծռեր «ծխեր», ձձեր «ձձևեր», մաքեր «մաքեր», մկներ «մկներ», շներ «շներ», սաեր «սահեր», ցառեր «ցրտեր», քնթեր, «քթեր»։ Սրանք ունեն նաև իրենց սովորական և կանոնավոր հոգնակին (ծայծառ, թօռառ, մօկնառ, շօնառ և այլն), որ ավելի գործածական է։

Ծանոթ.— Սարգսեան, էջ 75—76, իրրև ընդհանուր կանոն տալիս է -եր ձևը և ասում է, որ բոլոր այն միավանկ բառերը, որոնք սկսում են երկու բաղաձայնով (!), հպատակվում են սրան (բրեր «քրեր», կվեր «կռվեր»), մինչդեռ Ջղնայի ենթաբարբառը ունի միայն բրար, կվար և ոչ բնավ՝ -եր: Մենք չենք հասկանում, թե ինչպիսի միավանկ բառ է այն, որ երկու բաղաձայնով է սկսվում։ Երկրորդ՝ կվեր ձև չկա Ագուլիսի բարբառում. -եր մասնիկով կազմված օրինակները շատ սակավ թիվ և բացառիկ ձևեր են, և ինչպես երևում է Սարգսյանի ցուցումներից, բոլորովին պակասում են Ջղնայի ենթաբարբառում, որ գիտե միայն -ար, որ հոգնակիի ձևը։

Սարգսյան, էջ 80, հիշում է նաև ատի, որի, ևարի, ոճի մասնիկները, որոնց համար տալիս է հետևյալ օրինակները. ըսկըրատի «ոսկորներ», կըխկըրատի «կողքեր», ջրորի «ջրեր», գրորի «գրեր», գրքորի «գրքեր», կարրևարի «կառներ», ըզկըևանի «այգիներ», տրևզըևոճի «տուներ»։ Այս բոլորը անծանոթ են Ագուլեցոց, բայց կան Ջղնայի ենթաբարբառում, ինչպես վկայում է ինքը Սարգսյանը, և ցույց են տալիս, որ հիշյալ -ատի, -արիք, -ևարիք, -աճիք մասնիկները կազմված են -ատի, -արի, -ևարի, -աճի *(համմ. գրբ. -ոտի, -անի)* ձևերից՝ ք հոգնակերտ մասնիկի հավելումով։ Ագուլիսում էլ գտնում ենք բըխչըճատի «պարտէզներ» (պրս. baγča բառից, սեռ. բըխչըճատուն), գ'եղըրքորի «գյուղեր, գյուղորայք»։

Վերը ասացինք, թե այս մասնիկները հավաքական են՝ հոգնակի լինելուց ավելի. բայց կան բառեր, որ -ար, -ևեր, -ք ձևերով հոգնակի բնավ չունեն և նրանց համար հավաքական ձևն է միայն, որ իբրև հոգնակի է գործածվում. այսպես են կևանիք[1] «կանայք» և մառդիք[1] «մարդիկ» բառերը. իսկ ձի, լու, ձու և այլն և այլն, ունեն նաև կանոնավոր և սովորական ձիյոր, լիւվոր, ձիւվոր ձևերը։

Պետք է ավելացնենք և այն, որ հավաքական ձևերը հետըզհետե հանգելու վրա են. նոր լեզուն այլևս չի գործածում դրանք։

Մարաղայի բարբառում հոգնակի կազմելու համար եզակիի վրա ավելացնում են -իր, -ևիր, -քիր մասնիկները։

Միավանկ բառերը ստանում են -իր. ինչ.

այծ>էձ, էձիր — *թև>թիվ, թիվիր*
արջ>առչ, առչիր — *բուրդ>պլուռթ, պլուռթիր*
բոյն>պլ•ն, պլ•նիր

(կալաջուղցոց մոտ լինում է -էր, ինչ. բան>պոն, պոնէր)։

Ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը ստանում են -ևիր մասնիկը. ինչ.

կատու>կատու, կատուևիր
ակռայ>ակռա, ակռաևիր
գարի>կ'ոռի, կ'ոռիևիր
խնամի>խնամը, խնամըևիր

Բացառաբար մարդ բառը՝ թեև միավանկ, առանում է -իր կամ -ների մասնիկը և հոգնակի լինում է մարդիր կամ մարդներ:

Բազաձայնով վերջացող բազմավանկ բառերը առանում են -քիր մասնիկը. ինչ.

գամէշ>գամէշ, գամէշքիր
հարիւր>խորիր, խորիրքիր
կորկոտ>կարկատ, կարկատքիր
աւել>ավըլ, ավըլքիր

Լինդ բառը առացել է նախ -իր մասնիկը, այնուհետև այս ձևը համարվել է եզակի, որով և հգ. լինում է լինդիրքիր:

Այն միավանկ բառերը, որոնք վերջանում են ձայնավորով, հոգնակիում ներմուծում են յ կիսաձայնը. ինչ.

լու>լիւ, լիւյիր ձու>ձիւ, ձիւյիր
կու>կուս, կուսյիր ձի>ձի, ձիյիր

Այս կարգի բառերը կարող են նաև առանալ -ներ մասնիկը, ինչ. ձիներ, ձիւներ, կուներ, լիւներ:

Շրթնային բաղաձայնով վերջացող միավանկ բառերը՝ բուն օրինի հոգնակիի ի ձայնավորը կարող են դարձնել երկբարբառային ը. ինչ.

ամպ>ամբ, ամբըը ափ>ափ, ափըը
խավ>խավ, խավըը խուփ>խուփ, խուփըը

Բայց ասվում է նաև առանց երկբարբառի՝ կապիր «կապերը», կօվիր «կովերը», ծամիր «ծամեր, մազեր», խամիր «համերը» և այլն:

Այն միավանկ բառերը, որոնք հին հայերենի մեջ եզակիում ունեն ն հանգը և բարբառում զրկված են այդ հանգից, հոգնակիում ունենում են երկու ձև. կամ սովորական -իր մասնիկով և կամ վերականգնելով -ն հանգը. օր.

դուն>տուն, տունիր, տունների
թոռն>թուռիր, թուռների
մատն>մատ, մատներ, մատիր
ձեռն>ձէռ, ձէռիր, ձէռների
հարսն>խարս, խարսիր, խարսների
եղն>յէղ, յէղիր, յէղների

նուռն>նուռ, նուռիր, նուռների
ոտն>վըտ, վըտիր
ծունկն>ծընգ, ծընգիր, ծընգիր

Ինչպես տեսնվում է, առավելությունը սովորական ձևի կողմն է և ն հանգը բոլորովին չնչվելու վրա է. օրինակի համար՝ թեև կան տուռներ, թուռներ, մատներ ձևերը, բայց կարելի չէ բնավ գործածել վըտներ և նմաններըը:

Ավելացնենք և այն, որ այս պարագային ա ձայնը, ն հանդի մոտ գտնված դեպքում, կարող է դառնալ ն. այսպես ունենք՝ մատն>մատ, հգ. մատիր, մատներ. մանների:

Մեկհկես վանկ ունեցող բառերը համարվում են բազմավանկ և ըստ այսմ առանում են -քիր մասնիկը. ինչ.

բարձր>պոնցիր, պոնցիրքիր
ծանր>ծանդըր, ծանդըրքիր
քաղցր>քախցըր, քախցըրքիր
ծուներ>ծունդուր, ծունդուրքիր
սանտր>սանդըր, սանդըրքիր
ցած>ցանձըր, ցանձըրքիր

Բայց կա նաև տալ>տավլ, որ իր կրկին հոգնակի տավլիր և տավըլքիր ձևերով տատանվում է երկուսի միջև:

Եթե բարդ բառի վերջին եզրը միավանկ է, հոգնակիում առանում է -քիր՝ իբրև բազմավանկ. ինչ. սանամէրքիր «սանամայրերը», քավօրզանքիր «քավորկնիկները» (պրս. zan «կին» բառով բարդված). այսպես և ենօրա «այն օրը» համարվելով իբր բարդ՝ հոգնակին լինում է ենօրքիրա. բայց իբրև միավանկ՝ կարենգկավըիր<կաղճին կավեր:

Բազաձայնով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիի -քիր մասնիկն առանալու ժամանակ շատ հաճախ կրում են զանազան ձայնաբանական փոփոխություններ՝ պահանջված օրենքների համաձայն. այսպես՝

ա) Բ, պ դառնում են փ. ինչ.

ռուպ>ուրուբ, ուրուփքիր
կտապ>կուտափ, կուտափքիր
խծիպ>խծափ, խծափքիր

Բացառաբար մարդ բառը՝ թեև միավանկ, առանում է -իր կամ -ներ մասնիկը և հոգնակի լինում է մարդիր կամ մարդներ:

Բազաձայնով վերջացող բազմավանկ բառերը առանում են -քիր մասնիկը. ինչ.

գոմէշ>գոմէշ, գոմէշքիր
հարիւր>հարիւր, հարիւրքիր
կորկոտ>կարկատ, կարկատքիր
աւել>ավըլ, ավըլքիր

Լինդ բառը առացել է նախ -իր մասնիկը, այնուհետև այս ձևը համարվել է եզակի, որով և հգ. լինում է լինդիրքիր:

Այն միավանկ բառերը, որոնք վերջանում են ձայնավորով, հոգնակիում ներմուծում են յ կիսաձայնը. ինչ.

լու>լիւ, լիւյիր — ձու>ձիւ, ձիւյիր
կու>կիւ, կիւյիր — ձի>ձի, ձիյիր

Այս կարգի բառերը կարող են նաև առանալ -ներ մասնիկը, ինչ. ձիներ, ձիւներ, կուներ, լիւներ:

Շրթնային բազաձայնով վերջացող միավանկ բառերը՝ բացի օրինի հոգնակիի ի ձայնավորը կարող են դարձնել երկբարբառային ը. ինչ.

ամպ>ամբ, ամբըր — ափ>աֆ, ափըր
խավ>խավ, խավըր — խուփ>խուֆ, խուփըր

Բայց ասվում է նաև առանց երկբարբառի՝ կապիր «կապեր», կովիր «կովեր», ծամիր «ծամեր, մազեր», խամիր «համեր» և այլն:

Այն միավանկ բառերը, որոնք հին հայերենի մեջ եզակիում ունեն և հանգը և բարբառում զրկված են այդ հանգից, հոգնակիում ունենում են երկու ձև. կամ սովորական -իր մասնիկով և կամ վերականգնելով -ն հանգը. օր.

դուռն>տուռ, տուռիր, տուռնիր
թոռն>թուռիր, թուռնիր
մատն>մատ, մատնիր, մատիր
ձեռն>ձէռ, ձէռիր, ձէռնիր
հարսն>խարս, խարսիր, խարսնիր
եղն>յէղ, յէղիր, յէղնիր

նուռն>նուռ, նուռիր, նուռնիր
ոտն>վըտ, վըտիր
ծունկն>ծընգ, ծընգիր, ծընգնիր

Ինչպես տեսնվում է, առավելությունը սովորական ձևի կողմն է և ն հանգը բոլորովին չնջվելու վրա է. օրինակի համար՝ թեև կան տուռնիր, թուռնիր, մատնիր ձևերը, բայց կարելի չէ բնավ գործածել վըտ ոտիր և նմանները:

Ավելացնենք և այն, որ այս պարագային ա ձայնը, ն հանդի մոտ գտնված դիպքում, կարող է դառնալ ե. այսպես ունենք՝ մատն>մատ, հգ. մատիր, մատնիր. մատներ:

Մեկհկես վանկ ունեցող բառերը համարվում են բազմավանկ և ըստ այսմ առանում են -քիր մասնիկը. ինչ.

բարձր>պոնցիր, պոնցիրքիր
ծանր>ծանդըր, ծանդըրքիր
քաղցր>քախցըր, քախցըրքիր
ծունր>ծունդուր, ծունդուրքիր
սանտր>սանդըռ, սանդըռքիր
ցած>ցանձըր, ցանձըրքիր

Բայց կա նաև տալ>տավլ, որ իր կրկին հոգնակի տավլիր և տավըլքիր ձևերով տատանվում է երկուսի միջև:

Եթե բարդ բառի վերջին եղրը միավանկ է, հոգնակիում առանում է -քիր՝ իրրև բազմավանկ. ինչ. սանամէրքիր «սանամայրեր», քավօրզունքիր «քավորկնիկներ» (պրս. zan «կին» բառով բարդված). այսպես և ենօթա «այն օրը» համարվելով իրը բարդ՝ հոգնակին լինում է ենօրքիրա. բայց իրրև միավանկ՝ կարենք կավքիր<կաղճին կավեր:

Բազաձայնով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիի -քիր մասնիկն առանալու ժամանակ շատ հաճախ կրում են դառնգան ձայնաբանական փոփոխություններ՝ պահանջված օրենքների համաձայն. այսպես՝

ա) բ, պ դառնում են փ. ինչ.

ռուպ>ուրուբ, ուրուփքիր
կտապ>կուտափ, կուտափքիր
խծիպ>խծափ, խծափքիր

բ) Զ դառնում է ս. ինչ.

երազ>էրազ, էրասքիր
ընկոյզ>ունգուս զ, ունգուսգիր

գ) Ղ դառնում է խ. ինչ.

խաղող>խավուէղ, խավուէխքիր
տաշեղ>տաշշէղ, տաշշէխքիր
ուղեղ>օղօղ, օղօխքիր
ճնճուղ>ճունջուղ, ճունջուխքիր
կակուղ>կակուէղ, կակուէխքիր
մատաղ>մատատաղ, մատատախքիր
մանգաղ>մանգամղ, մանգամխքիր

դ) Ծ, ձ, ց դառնում են ս, և եթե նրանցից առաջ կա որնիգական, ընկնում է. ինչ.

կակուձ>կուսկուձ, կուսկուսքիր
կթոց>կուքից, կուքիսքիր
օրօրոց>էօրէօց, էօրէօսքիր
խաւիծ>խավըս ծ, խավըս քիր
սղոց>սուղից, սուղիսքիր
բրինձ>պիրինձ, պիրիսքիր
աստուած>ասվածծ, ասվասքիր
յիշոց>իւշիւնց, իւշիւսքիր,
բայց կարելի է ասել նաև՝ իւշիւնցքիր և այլն։

ե) ճ, ջ, շ դառնում են շ, և եթե նրանցից առաջ ունգական կա, ընկնում է. ինչ.

չամիչ>չամիշ, չամիշքիր
ջրաղաց>ճաղամշ, ճաղամշքիր
ականջ>ունգամճ, ունգամշքիր
բաղարջ>պաղամճ, պաղամշքիր
կանաչ>կանանշ, կանաշքիր
զոքանչ>զոնքանշ, զոնքաշքիր
կաւիճ> կավըս ճ, կավըս շքիր
պատիժ>պատիճ, պատիշքիր

զ) ժ դառնում է շ. ինչ.

բոժոժ>պըժոժ, պըժոշքիր

է) Դ դառնում է ք, և եթե նրանից առաջ ունգական կա, կարող է ճաել և կամ ընկնվել. ինչ.

խորհուրդ>խօրխուրք, խօրխուրքքիր
փոխինդ>փօխունդ, փօխունքքիր կամ փօխուքքիր

ը) Ք (քʲ) ձայնը, ինչ էլ լինի իր ծագումը, եթե գտնվի ձայնավորից կամ և ունգականից հետո, դառնում է յ, իսկ ունգականը ընկնվում է. օր.

ճրագ>ճրաք, ճրայքիր
ուրագ>ուրաք, ուրայքիր
բարեկենդան>պառկմոննանք, պառկմոննայքիր
օրէնք>օրէնքʲ, օրէյքիր
գաղտնիք>կուէղնիքʲ, կուէղնիյքիր
քրտինք>քրքինքʲ, քրքիյքիր
թրիք>թիրիքʲ, թիրիյքիր
պատանք>պատանք, պատայքիր
երկան>երկանք, երկայքիր

Բայց կարելի է նաև առանց փոփոխության ասել՝ երկանքքիր «երկաններ», առուսիքքիր «արցունքներ», խեխմըքաճքիր «խղճմտանքներ» և այլն։

Իսկ եթե բառավերջի ք-ից առաջ կա մի ուրիշ բաղաձայն, թեև ք կարող է ճաել և կամ վերածվել յ-ի, բայց սովորաբար ընկնվում է. ինչ.

կաշառք>կաշառքքիր, կաշառյքիր, կաշառքիր
շնորհք>շնօրք, շնօրքիր
կշիռ>քշէռքʲ, քշէռքʲքիր, քշէռյքիր, քշէռքիր
աշխարհք>աշխարքʲ, աշխարքիր

թ) Կ (կյ) ձայնը, եթե գտնվի ձայնավորից հետո, սովորաբար դառնում է յ, բայց երբեմն էլ դառնում է յ-ի, անշուշտ անցնելով ք-ից. ինչ.

աղջիկ>ախչիկʲ, ախչիյքիր
բամբակ>պամբակʲ, պամբայքիր
բաժակ>պաժակʲ, պաժայքիր
հրեշտակ>խռշտակ, խռշտայքիր
բոկ>պէօպիւկʲ, պէօպիւյքիր

պուտուկ>պտիկ՛, պտիյքիր
կրակ>կրակ, կրայհքիր
այր>իրիկ՛, իրիյհքիր
գանձանակ>կէնձանակ, կէնձանայհքիր

Այս պարագային, եթե կ ձայնից առաջ գոնվի ը՛ երկրար բառը, յ կիսաձայնի առաջ դառնում է ը կամ ի. ինչ.

շապիկ>շապը՛ կ՛, շապըյքիր

Իսկ եթե կ-ից առաջ գոնվի որևէ բաղաձայն, կ վերածվում է նախ ք և հետո միանալով հոգնակիի ք-ի հետ՝ ջնջվում է. ինչ.

աղօթք>աղօթկ, աղօթքիր
հրաշք>խրաշկ, խրաշքիր
դժոխք> ժժօխկ, ժժօխքիր
բժիշկ>պիժիշկ՛, պիժիշքիր
անէծք>անիսկ՛, անիսքիր

Այս բոլորից հետո ավելացնենք, որ -քիր մասնիկի հետ՝ երբեմն գոնում ենք նաև -ճիր, որ թերևս գրական լեզվի ազդեցությամբ է մտել. ինչ.

յիմար>հիմար, հիմարքիր, հիմարներ
ականատ>ականատ «դարակ», հգ. ականատքիր, ականատներ
աղջիկ>ախչիկ՛, ախչիյքիր, ախչիյներ
տաճիկ>տաճիկ՛, տաշկըներ, տաճիյքիր

Հավաքական հոգնակիի ձևեր են.

-վանք.—փիշիրվանք «փշրանքներ»
-ատանք.—կուտիրատանք, վուսկօտատանք «գետիններ»
-իրատանք.—տուշտիրատանք «դաշտեր», կէտիրատանք «գետեր»։
-ըրանք.—կէղըրանք «գիւղեր»
-ատանք.—ճուչանատանք «ջոջեր, մեծամեծք»։

Այս բոլորը կարող են դարձյալ դառնալ հոգնակի. ինչ. ճուչանատյհքիր, տուշտիրատյհքիր և այլն։

Անկանոն հոգնակիները չափազանց հազվագյուտ են բարբառիս մեջ. իրը օրինակ ունենք միայն կընքըներ «կնիկներ»։

Ղարաբաղի բարբառում հոգնակին կազմվում է սովորական -ըեր, -ըներ վերջավորություններով, որոնց առաջ ու, ի վերջավորությունը դառնում է վը. այսպես՝ հացըեր, մաննըեր, խոխանըեր, լիւզվընըեր, ըովընըեր, լիւվըեր և այլն։

Այս նպատակի համար գործածվում են նաև -էրք, -աենք, -էրանք և -ենէ վերջավորությունները. վերջինը, որ հատկապես Շուշի քաղաքի մեջ էր գործածական, ծագում է մի -նի ձևից և բուն այսօր նույն է մյուս բարբառների -նի վերջավորության հետ, որ առարկան մասնիկներից առաջ է երևան գալիս։ Հոգնակիի կազմության այս ձևի օրինակներ են՝ աղէրք, շինէրք, խոխէրք, ըխչրկէրք, հօրանք, մօրանք, շընէրանք, ըխչրկէրանք, տղէրանք, պրաղնէ, հրզարնէ, սխալնէ և այլն։

Սրանց մեջ արդեն նկատելի է, թե այս վերջավորությունները կարող են անխտիր կցվել թե միավանկ, և թե բազմավանկ բառերի վրա, թե միավանկների համար -ենէրք, -ենէրանք մի վերջավորություն գոյություն չունի և որ ա-ով վերջացող բառերի սույն վերջավորությունը սրանց առաջ ընկնում է։

Առափալի բարբառում (թե Սուչավա, և թե լեհահայ բարբառում) հոգնակի կազմելու համար բառի ծայրին ավելացնում են -եր կամ -ենէր մասնիկը. առաջինը միավանկ բառերի համար, երկրորդը բազմավանկ բառերի համար. օր.

Սչ. Լհ. հաց, հացեր
ձագ >Սչ. Լհ. ձ՛ագ՛, ձ՛ագ՛եր
ձայն>Սչ. Լհ. ձ՛ան, ձ՛աններ
ցաւ >Սչ. Լհ. ցավ, ցավեր
չափ>Սչ. Լհ. չափ, չափեր
չար >Սչ. Լհ. չար, չարեր
սոխ >Սչ. սօխ, սօխեր, Լհ. սըխ, սըխեր
թոռն>Լհ. դ՛ֆուր, դ՛ֆըր (tfur, tfər) հգ. tfurier, tfərier
թուղթ>Լհ. թուխթ, թըխթեր (գրված t՛əxtier)
դար>Լհ. դ՛ար «ձեռ», դ՛արեր «ձեռներ»
(Անկանոն է լու>Լհ. լուն, հգ. լուվեր)։

արաճող>Լհ. արձօղ «հովիվ», արձօղներ
ոսկր, ոսկոր>Լհ. օսգ՛ըր, օսգ՛ըրներ
աթոռ>Լհ. աթըռ, աթըռներ
աղուէս>Լհ. ազվէս, ազվէսներ

արդարեղ>Լհ. արդ՛արեղ, արդ՛արեգներ
պատկեր>Լհ. բադդէրք, բադդէրքներ
տղայ>Ս. դղա, դղաներ
ճանապարհ>Ս. ջանջ՛ֆօր, ջանջ՛ֆօրներ

Մեկական վանկանի բառերը մերթ առանում են -եր և մերթ -ներ մասնիկը. օր.

աստղ>Լհ. ասդ՛ղ, հգ. ասդ՛ղեր
ոսկր>Լհ. օսգ՛ր, օսգ՛րներ։

Հոգնակի կազմելու համար օտար բառերն էլ ընդունում են -եր, -ներ մասնիկները. օր.

miskin>մըսքին «խեղճ ու կրակ», մըսքիններ
yorγan>յօղրան «վերմակ», յօղրաններ
baγča>բախչա «պարտեզ», բախչաներ
գ՛ուրգ՛ան>(ռուս.) «պալատ», գ՛ուրգ՛աններ
jepure (ռում.)>յէբ՛ուր «նապաստակ», հգ. յէբ՛ուրներ
Թրք. özge>օզգա, օզգաներ
Թրք. adat>ադաթ «սովորություն», ադաթներ
Թրք. aγača>աղաչա «պարան», աղաչաններ
Թրք. araba>արբա «սայլ», արբաներ
ռում. berbeč>բէրբէչ «ոչխար», բէրբէչներ
Թրք. bela>բէլա «փորձանք», բէլաներ
ռում. ban «փող»>Լհ. բան, բաններ
ռում. mъcъ>Լհ. մբա՛ «կատու», որից, Լհ. մբա՛իգ «փիսիկ», հգ. մբա՛իգներ
Թրք. soy>Լհ. սոյ «ազգական», հգ. սոյեր

Երբ օտար միավանկ բառը սկսվում է երկու բաղաձայնով, հայերենում բնականաբար համարվում է երկվանկ (քան որում երկու բաղաձայնների միջև ավելացվում է ը ձայնավորը), բայց լեհահայ բարբառը դրանք համարում է միավանկ և հոգնակի կազմելու ժամանակ դնում է -եր մասնիկը։ Այսպես՝

անօր՛ (լհ. snop) «խուրձ», հգ. անօր՛եր
գ՛րուգ՛ (լհ. kruk) «ագռավ», հգ. գ՛րուգ՛եր
հրիբ (ռում. hryb) «սունկ», հրիբեր
հրուբ (ռում. hruba) «վառարան», հրուբեր
stol>ագ՛օլ «սեղան», ագ՛օլեր

Կան մի քանի դեպքեր, երբ միավանկ բառը լեհահայ բարբառում առանում է -ներ մասնիկը. ուրիշ դեպքերում էլ, ընդհակառակը, բազմավանկ բառն առանում է -եր մասնիկը։ Այսպես՝

Միավանկ (-ներ)

քիթ>քիթ, քթներ
քույր>քուր, քուրներ
փոր>փըր, փըրներ
էշ>էշ, հգ. էշներ (Հանուշ, էջ 53)

Բազմավանկ (-եր)

բրինձ>բրինձ, բ՛րինձներ
սօլովիյ «սոխակ»>ռուս. соловей, հգ. սօլովիյներ
մէգ՛ոէվ «առատօքս», հգ. մէգոէվեր
բարեկամ>բ՛արէգամ, հգ. բ՛արէգամեր։

Առանձին պարագա է այն, երբ ն վերջացող մի բառ հոգնակիի -ներ մասնիկն առանելու ժամանակ ադում է մի ն, կրկնակ ն-ից խուսափելու համար, օր. Լհ. անուն, հգ. անուններ։

Գրաբարում ն վերջացող բառերից մի քանիսը հոգնակիում կարող են պահել իրենց ն վերջավորությունը (որով թվում է, թե միավանկ բառի հոգնակին կազմվում է -ներ մասնիկով)։ Այսպես են՝

ձուկն>Լհ. ձ՛ուգ, ձ՛ըգներ
հարսն>Լհ. հարս, հարսներ
դուռն>Լհ. դ՛ուռ, դ՛ըռներ
մուկն>Լհ. մուգ, մըգներ
եղն>Լհ., յէզ յէզներ
գառն>Լհ. գ՛արը (karr), հգ. գ՛առներ
լեառն>Լհ. Ս. լէռ, լէռներ

Միջին հայերենից մնացած, այժմ անսովոր մասնիկներ են հոգնակիի համար՝

-աց

ձի>Լհ. ձ՛ի, ձ՛իան
խոտ>Լհ. խօդ, խօդան
գիւղ>Լհ. գ՛էղ, գ՛էղան

-ատաք, -տիք

հեծելւոր>Լհ. հէձէլվըր «զինվոր», հգ. հէձէլվօրդաք
ոսկոր>Լհ. օսգ՛ըր, օսգ՛ըրներ, օսգ՛ըրդիք
կին>Սչ. Լհ. գընիգ, հգ. գընդիք, Հնգ. գնդօց
եղբայր>Սչ. Լհ. ախբ՛ար, ախբ՛ըրդիք (նաև Հնգ.)
քոյր>Սչ. Լհ. քուր, Սչ. հգ. քրվրդիք
ընկեր>Սչ. ընգեր, հգ. ընգէրդաք
կօճկրտիք «կոճակներ» Հնգ.
խապրտիք «լուրեր» Հնգ. (Բազմ., 1893, էջ 578)։

-օրանք

Այս մասնիկով գոնում եմ միայն՝

բերդ>Լհ. բ՛երգ՛ «բակ», հգ. բ՛էրգ՛եր, բ՛ըրգ՛օրանք
տեղ>Լհ. դեղ, հգ. դէհրանք «անկողին»
Հնգ. գ՛եղրանք «գեղ» (ՀԱ, 1897, էջ 281)

Սրանցից էլ՝ -ներ մասնիկով՝ Լհ. քօվրանքներ «կողքերը»։

-ցի

Հոգնակի -ցի մասնիկը չի գործածվում այժմ, բայց տեղ-տեղ իր հետքերը թողել է. այսպես՝ Լհ. օղվէնու հագ՛նիչ «կոշիկ, ոտնաման» ծագում է օղվընի «ոտներ» ձևի սեռականից, Հնգ. աընցի, որ և աընցներ «ականջներ»։

Սուչավայի և լեհահայ բարբառներում մարմնի անդամ ցույց տվող բառերը կարող են առանձնակի հոգնակիում -վի, -վըներ մասնիկը։

Ոտն>Լհ. վրդ, օղվըներ, Սչ. վոդ՛գ, հգ. վօթքեր, վօղվըներ
մատն>Լհ. Սչ. մադ, մադվըներ
ձեռն>Լհ. ձ՛էռ, ձ՛էռվըներ
աչք>Լհ. աչք, աչվի, աչվըներ, Սչ. աչվըներ
ծունկ>Լհ. ձուռնգ, ձուռնգվի, Սչ. ձընգվըներ
եղունգն>Լհ. օհուռնգ, օհուռնգվըներ
յօնք>Լհ. օնք, օնքվի, Սչ. օնք, օնքֆի, օնքֆիներ
ականջ>Սչ. անգաջ, ադընջվըներ
մէջ>Հնգ. մէջվըներ (մեջերնին)

Սրանցից դուրս կա նաև դուստր բառը, որ հոգնակին կազմում է -վի-ք մասնիկով.

դուստր>Լհ. դ՛ուսդ՛ր, հգ. դ՛ըսդ՛ըրվիք, Հնգ. դ՛սդ՛րվիք։

Այս ձևերը չեն խանգարում, որ բառը նաև սովորական ձևով հոգնակի ունենա. օր. Սչ. աչք, աչքեր, աչվըներ,— վօդ՛գ, վօթքեր, վօղվըներ, իսկ ձեռք՝ Սչ. ձ՛էռքեր, չկա ձ՛էռվըներ, որ գիտեն լեհահայերը։

ք ձևով հոգնակի

Լեհահայ բարբառում կենդանի եղած ք ձևով հոգնակիները հետևյալներն են.

գ՛ադըսդ՛անջի „urędnine, officier (civil)“, հգ. գ՛ադըսդ՛անջիք
մարդ>մարդ՛, հգ. մարդ՛իք, մարդ՛իգներ
դաշտ>դ՛աշդ, հգ. դ՛աշդունք, դ՛աշդեր
ոտնաւոր>օղվրվըր «հարսանիքի ազարները», հգ. օղվրվըրաք
որդի>օրդ՛ի, օրդ՛իք
տղայ>դըղա, դըղաք

Սուչավայի բարբառով՝

աշակերտ>աշագերդ, աշագերդաք
բարեկամ>բ՛արեգամ, բ՛արէգամաք, բ՛արէգամներ
թագաւոր>թաքավօր, թաքավօրաք
վարդապետ>վարդ՛ապեգ, վարդ՛ապեգաք
հարսնեւոր>հարսնավօր, հարսնավօրաք
տիրվըտանք Հնգ. «տեերեր», տէրքերը «տերերը»

—Վանք ձևով հոգնակի ունենք լեհահայ բարբառով՝ միայն գըղըրվանք «կաթոլոսանք»։

Լեհահայ բարբառում շատ սովորական է -ատաւն ձևով հոգնակին, որ ըստ ձայնական օրենքի հնչվում է -ըսդ՛ան և որին հետևում են բոլոր ի վերջացող բառերը, առանց բացառության։ Ահա օրինակները.

ագի>Լհ. ագ՛ի, ագ՛ըսդ՛ան
տարի>Լհ. դարի, դարըսդ՛ան
կաշի>Լհ. գաշի, գաշէսդ՛ան

կիւրակէ>Լհ. գիրագի, գիրագըզ՛ան
հայելի>Լհ. հայլի, հայլըզ՛ան
գինի>Լհ. գ՛ինի, գ՛ինըզ՛ան
գօտի>Լհ. գ՛օղի, գ՛օղըզ՛ան
քամի>Լհ. քամի, քամըզ՛ան
քեռի>Լհ. քէռի, քէռըզ՛ան
մայրի>Լհ. մօրի «անտառ», մօրըզ՛ան
ոսկի>Լհ. օզ՛ի, օզ՛ըզ՛ան
փոշի>Լհ. փօշի, փօշէզ՛ան
մատանի>Լհ. մադնի, մադնըզ՛ան
այգի>Լհ. էգ՛ի, էգ՛ըզ՛ան

Նուչնիսկ օտար լեզուներից փոխառյալ բառերը, եթե վերջավորվում են ի, հոգնակիում ստանում են -ատաց մասնիկը, ինչ.

Լհ. խամջ՛ի «մտրակ», խամջ՛ըզ՛ան
Լհ. ուզ՛ուլի «վուշ» (փոխ. ռումիներենից), հգ. ուզ՛ուլըզ՛ան
Հնգ. կալաճի «խոսք», կալաճըստան (ՀԱ, 1898, էջ 46),
ռախի «օղի» (<Թրք. raqə), հգ. ռախըզ՛ան
սիլի «ապտակ» (Թրք. sille), հգ. սիլըզ՛ան

Նուչնիսկ այնպիսի բառեր, որ նախապես վերջավորվել են ի, իսկ այժմ բարբառում տարբեր վերջավորություն են ստացել, դարձյալ ստանում են -ատաց մասնիկը: Այսպես են՝

բանալի>Լհ. բ՛ալինք, բ՛ալըզ՛ան
ուտելիք>Լհ. ուդէլու, ուդէլըզ՛ան
հարսանիք>Լհ. հարսնիք, հարսնըզ՛ան

Ընդհակառակը՝ դրացի բառը այժմ ստացած լինելով ն հանգը (Լհ. դ՛րացին), հոգնակին կազմում է -ներ մասնիկով՝ դ՛րացներ:

Այս բոլորից դուրս ունենք երկու բառ, մեկը բնիկ, մյուսը օտար, որոնք թեև տարբեր վերջավորություն ունեն, բայց հոգնակիում ստանում են -ատաց մասնիկը: Սրանք են՝

լեզու>Լհ. լիզու, լիզուզ՛ան
յէմիշ (Թրք. yemiš) «պտուղ», յէմիշէզ՛ան

Սուչավայի բարբառով այս կարգի հոգնակիներից ունենք՝

բանալի>բ՛ալինք, բ՛ալըզ՛ան
հարսանիք>հարսնիք, հարսնըզ՛ան, հարսնըզ՛աններ
մատանի>մադնի, մադնըզ՛ան
գետին>գ՛էդին, գ՛էդնըզ՛ան

Սվեդիայի բարբառում *միավանկ* բառերի հոգնակին կազմվում է -իր, -էօնք, -վա, -վոք մասնիկներով. այս ձևերը, բուն Սվեդիայի բարբառի ձայնական օրենքների, առաջանում են -եր, -ունք, -վի, -վիք նախաձևերից, որով և համապատասխանում են մեզ. եր, ունք, ուի (-վի) և վի-ք ձևերին:

Սուրև դնում եմ երկար մի շարք միավանկ բառերի՝ իրենց հոգնակիներով միասին:

ալ, ալք>ալ, ալիր
ակն>իւգ, էօգ, ոգիր, ոգէօնք
աղ>իւղ, ազիր, աղէօնք
ախր>իւխր՛, ախր՛իր, ախր՛էօնք
ատ>իւդդ, ադդիր, ադդէօնք
ամպ>ումբ, ամբիր, ամբէօնք
այծ>աձ, իձձիր
անօսր>նիսրիր, նիսուրնա
աչք>աշք, իչվա
ասող>ուսդդ, ասդդիր
արջ>ուրջ՛, ուրջ՛իր, ուրջ՛օչնք
ափ (ձեռքի)>ուփ, էօյփ, ափիր, ոփէօնք
բախտ>բ՛ախդ՛, բ՛ախդ՛իր
բակ>բ՛էօգ, բ՛իւգ, բ՛ոգիր, բ՛ոգէօնք, բ՛ագդար
բան>բ՛ուն, բ՛ոնիր, բ՛ոնէօնք
բարձ>բ՛ուռձ՛, բ՛առձ՛իր, բ՛առձ՛էօնք
բարձր>բ՛ունձ՛ըր, բ՛անձ՛րիր, բ՛ոն՛ձրօչնք
բեռն>բ՛իռ, բ՛իռիռ, բ՛իռնիռ
բզեզ>բըզ, բըզզիր, բըզզէօնք
բոյթ>բ՛այնք, բ՛այնքիր
բոյն>բ՛այն, բ՛ըյնիր, բ՛ըյնէօնք
բու>բ՛էօգ, բ՛էօգիր, բ՛էօգէօնք
բուռն>բ՛օռ, բ՛ոիր, բ՛ոէօնք
բուրդ>բ՛օրդ՛, բ՛ոդ՛իռ, բ՛ոդ՛էօնք

գայլ>գ՛ալ, գ՛իլիր, գ՛իլէօնք
գէր>գ՛իս, գ՛իսիս
գին>գ՛էն, գ՛ընիր
գիր>գ՛էր, գ՛րիր, գ՛րէօնք
գիրկ>գ՛էրգ, գ՛րգիր
գիւղ>գ՛իղ, գ՛իղիր, գ՛իղէօնք, գ՛իղանդա
գոգ>գ՛իւգ՛, գ՛իւդիր, գ՛յոգ՛էօնք
գոլ (բոց)>գ՛իւլ, գ՛իւլիր, գ՛իւլէօնք
գործ>գ՛իւռձ, գ՛իւռձիր
գորտ>գ՛իւդ, գ՛իւդիս, գ՛իռդէօնք
գալ>գ՛ուլ, գ՛ուլիր, գ՛ուլէօնք
գահ>գ՛ուհ, գ՛ուհիր, գ՛ուհէօնք
գար>գ՛ուռ, գ՛ուռիր, գ՛արէօնք
գուռն>գ՛օռ, գ՛ոնիր, գ՛ոռիր, գ՛ովոք
գոյգ>գայգ՛, գրգ՛գ՛իր, գրգ՛գ՛էօնք («երկվորյակ»)
թաղ>թիւղ, թիւղիր, թաղէօնք
էշ>իշ, իշիր, իշվոք
թաց>թուց, թուցիր, թացիր, թացէօնք
թանձր>թունձըր, թանձրիր
թաս>գ՛ուս, գ՛ուսիր, գ՛տասիր, գ՛տասէօնք
թել>թիլ, թիլիր, թիլէօնք
թի>թիյէօնք, թիանդա
թոյլ>թուլ, թուլիր
թոռն>թուռըն, թուռնիր, թուռռուննա, թուռըննա
թուղ>թէօղ, թըղգիր, թըղդէօնք
թութ>թէօթ, թըթիր, թըթթէօնք
թուղթ>թէօխթ, թըխթիր, թըխթէօնք
թուշ>թօշ, թշիր, թուշիր, թօշիր, թշվոք
թուփ>թօփ, թփիր, թօփիր, թփէօնք, թփվա, թփվոք
թուք>թէօք, թքիր, թքէօնք, թքվա
ժամ>ժուս, ժամիր, ժամէօք, ժամվա, ժամվոք
ժանգ>ժէօնգ, ժիւնգ, ժանգիր
իւղ>իղ, իղիր, իղէօնք, իղվա, իղվոք
լակ>լիւգ, լիւգիր, լագիր, լագէօնք, լագվա, լագվոք
լար>լուր, լորիր, լորէօնք
լու>լօ, լվիր, լվէօնք, լվոք
լոյս>լայս, լուսսիր, լուսսէօնք
խազ>խուզ, խուզգիր, խազգիր, խազգէօնք

խակ>խէօգ, խակիր, խէօգիր, խակէօնք
խազ>խիւզ, խուզգիր, խազէօնք
խաչ>խաչ, խաչիր, խիչչիր, խիչէօնք
խելք>խիլք, խիլքիր, խիլքվա
խև>խիվ, խիվիր, խիվէօնք, խիվվոք
խիճ>խէջ, խջիր, խջէօնք, խջվի
խուլ>խէօլ, խէօլիր, խլիր, խէօլվոք
ծակ>ձէօգ, ձէօգիր, ձոգիր, ձէօգվա, ձագվա
ծայր>ձար, ձարիր, ձիրիր
ծանր>ձունդըր, ձարիր, ձոնդրէօնք
ծառ>ձուռ, ձառիս, ձառվաք, ձառէօնք
ծուխ (թավա)>ձուխ, ձուխիր, ձախիր, ձոխէօնք, ձոխվա
ծիլ>ձէլ, ձէլիր, ձիլիր, ձըլլիր, ձլվա, ձլվոք
կաթն>գէթ, գէթիր, գյոթնիր, գըթվա, գըթվէօնք գըթվոք
կոյգ>գայգ «ողկոյզ», գայգիր, գուզիր, գըզգէօնք, գըգվա, գըգվոք
կոպ>գուր, գիրիրք
հայս>հաս, հասսիր, հիսսիր, հասսէօնք, հիսսէօնք
հատ>հուդ, հուդիր, հադիր
հարսն>հուռս, հառսնիր, հառսիր
հաց>հուց, հուցիր, հացցիր, հացցէօնք
ձայն>ձ՛ան, ձ՛ինիր, ձ՛անիր, ձ՛ինվա, ձ՛ինվոք
ձեռք>ձ՛առք, ձ՛առվա, ձ՛իռվա, ձ՛իռվէօնք
ձի>ձ՛էն, ձ՛իյէօնք, ձ՛իյանդա
ձիւն>ձ՛էօգ, ձ՛գնիր, ձ՛գիր, ձ՛գվա
ձուկն>ձ՛այն, ձ՛ինիր
ճանճ>ջանջ, ջնջիր, ջնջվա
մաղ>մուզ, մուզգիր, մաղգէօնք
մաղ>միւղ, միւղիր, մաղիր, մաղվա
մայր>մառ, միրիր, մարիր, միրէօնք
մանր>մունդր, մունդռիս, մոնդռիս, մարիր
մատն>մուդ, մադիր, մադնիր, մադէօնք, մադվա
մարդ>մուռդ, մառդ՛իս, մառդ՛ադ
մէջք>միշք, միշքիր, միշկվա
մուկն>մէօգ, մըգնիր, մըգիր
յօնք>էօնք, էօնքիր, էօնքվա, ունքվա, ունքվոք

գայլ>գ՛ալ, գ՛իլիր, գ՛իլէօնք
գէր>գ՛իւ, գ՛իւիւ
գին>գ՛էն, գ՛ընիր
գիր>գ՛էր, գ՛րիր, գ՛րէօնք
գիրկ>գ՛էրգ, գ՛րգիր
գիւղ>գ՛իղ, գ՛իղիր, գ՛իղէօնք, գ՛իղանդա
գոգ>գ՛իւգ՛, գ՛իւգիր, գ՛յոգ՛էօնք
գոլ (բոց)>գ՛իւլ, գ՛իւլիր, գ՛իւլէօնք
գործ>գ՛իւռձ, գ՛իւռձիր
գորա>գ՛իւուդ, գ՛իւուգիւ, գ՛իւուգէօնք
գալ>գ՛ուլ, գ՛ուլիր, գ՛ուլէօնք
գահ>գ՛ուհ, գ՛ուհիր, գ՛ուհէօնք
գար>գ՛ուռ, գ՛ուռիր, գ՛արէօնք
գուռն>գ՛օռ, գ՛ռնիր, գ՛ռիր, գ՛ռվոք
գոյգ>գայգ՛, գըգ՛գ՛իր, գըգ՛գ՛էօնք («երկվորյակ»)
թաղ>թիւղ, թիւղիր, թաղէօնք
էշ>իշ, իշիր, իշվոք
թաց>թուց, թուցիր, թացիր, թացէօնք
թանձր>թունձըր, թանձրիր
թաս>գ՛ուս, գ՛ուսիր, գ՛տասիր, գ՛տասէօնք
թել>թիլ, թիլիր, թիլէօնք
թի>թիյէօնք, թիանդա
թոյլ>թույլ, թուլիր
թոռն>թուռըն, թուռնիր, թուռուննա, թուռընննա
թուղ>թէօղ, թըզգիր, թըզգէօնք
թութ>թէօթ, թըթիր, թըթթէօնք
թուղթ>թէօխթ, թըխթիր, թըխթէօնք
թուշ>թօշ, թշիր, թուշիր, թօշիր, թշվաք
թուփ>թօփ, թփիր, թօփիր, թփէօնք, թփվա, թփվոք
թուք>թէօք, թքիր, թքէօնք, թքվա
ժամ>ժուամ, ժամիր, ժամէօք, ժամվա, ժամվոք
ժանգ>ժէօնգ, ժիւնգ, ժոնգիր
խոզ>իղ, իղիր, իղէօնք, իղվա, իղվոք
լակ>լիւգ, լիւգիր, լագիր, լագէօնք, լագվա, լագվոք
լար>լուր, լորիր, լորէօնք
լու>լօ, լվիր, լվէօնք, լվոք
լոյս>լայս, լուսսիր, լուսսէօնք
խազ>խուղ, խուզգիր, խազգիր, խազգէօնք

խակ>խէօգ, խակիր, խէօգիր, խակէօնք
խաղ>խիւղ, խուղիր, խաղէօնք
խաչ>խաչ, խաչիր, խիչչիր, խիչէօնք
խելք>խիլք, խիլքիր, խիլքվա
խև>խիվ, խիվիր, խիվէօնք, խիվվոք
խիճ>խէջ, խջիր, խջէօնք, խջվի
խուլ>խէօլ, խէօլիր, խլիր, խէօլվոք
ծակ>ձէօգ, ձէօգիր, ձոգիր, ձէօգվա, ձագվա
ծայր>ձար, ձարիր, ձիրիր
ծանր>ձունդըր, ձարիր, ձանդրէօնք
ծառ>ձուռ, ձառիւ, ձառվաք, ձառէօնք
ծափ (թավա)>ձուփ, ձուփիր, ձափիր, ձոփէօնք, ձոփվա
ծիլ>ձէլ, ձէլիր, ձիլիր, ձըլլիր, ձլվա, ձլվոք
կաթն>գէթ, գէթիր, գյոթնիր, գըթվա, գըթվէօնք գըթվոք
կոյղ>գայղ «ողկոյզ», գայղիր, գուղիր, գըզգէօնք, գըզգվա, գըզվոք
կոպ>գուբ, գիբիրք
հայս>հաս, հասսիր, հիսսիր, հասսէօնք, հիսսէօնք
հատ>հուդ, հուդիր, հադիր
հարսն>հուռս, հառսնիր, հառսիր
հաց>հուց, հուցիր, հացցիր, հացցէօնք
ձայն>ձ՛ան, ձ՛ինիր, ձ՛անիր, ձ՛ինվա, ձ՛ինվոք
ձեռք>ձ՛առք, ձ՛առվա, ձ՛իռվա, ձ՛իռվէօնք
ձի>ձ՛էն, ձ՛իյէօնք, ձ՛իյանդա
ձիւն>ձ՛էօգ, ձ՛գնիր, ձ՛գիր, ձ՛գվա
ձուկն>ձ՛այն, ձ՛իններ
ճանճ>ջանջ, ջնջիր, ջնջվա
մաղ>մուզ, մուզգիր, մազգէօնք
մաղ>միւղ, միւղիր, մոգիր, մազվա
մայր>մառ, միրիր, մարիր, միրէօնք
մանր>մունդր, մունդռիւ, մռնդռիւ, մռրիր
մատն>մուդ, մոդիր, մոդնիր, մոդէօնք, մոդվա
մարդ>մուռդ, մառդ՛իւ, մառդ՛ադ
մէջք>միշք, միշքիր, միշկվա
մուկն>մէօգ, մըգնիր, մըգիր
յօնք>էօնք, էօնքիր, էօնքվա, ունքվա, ունքվոք

ներ>նիռ, նիռիս, նիռվոք
շուն>շօն, շընիր, շընվոք
ուլ>էօլ, ուլիր
ունկն (կանթ)>իւնգ, իւնգիր, ունգիր, ունգվա
ուս>էօս, ուսիր, ուսվա
չափ>չուփ, չուփիր, չափիր
պաղ>բիւղ, բիւղիր, բողիր
սան (կնքահոր)>սուն, սանիր
սանար>սունդր, սոնդրիր
տանձ>դունձ, դմձիր
տէր>դիռ, դիռիս, դիռվա
տիկ>դոգ, դոգիր
փայտ>փադ, փադիր, փիդիր, փիդէօնք
փոր>փիւր, փիրիր
փուշ>փէօշ, փէօշիր, փշիր
քոյր>քայր, քայրիր, քուռիս, քուռվոք
օր>ուր, ուրիր, ուրվոք

Օրինակներից երևում է, որ մասնիկների մեջ ամենասովորականն է -իր, որ և ուրիշ բարբառներում և գրականում միակ ընդունվածը դարձավ։ Բոլոր բառերն էլ առանում են այս մասնիկը՝ բացի չորս բառից, որոնք են թի, ձի, ձեռք և կոպ, վերջինն էլ հոգնակիում լինում է գիրիրք, որ է կոպերը, որ ես մասնիկին ավելացել է գրաբարի հոգնակերտ ք մասնիկը, ճիշտ այնպես, ինչպես Երևանի բարբառում՝ աղերք, աղչկերք։ Բաո կա, որ միայն -իր մասնիկն է ընդունում. ինչ. բոյր, գիր, այծ և այլն։

Երբ բառը վերջանում է ո բաղաձայնով, սրա ազդեցությամբ հոգնակիի -իր մասնիկն էլ դառնում է -իռ, այսպես են՝

բիռն>բ'իռ, բ'իռիս, բ'իռնիռ
գէր>գ'իռ, գ'իռիս
ծառ>ձուռ, ձառիս
մանր>մունդր, մունդռիս, մոնդռիս
ներ>նիռ, նիռիս
տէր>դիռ, դիռիս
քոյր>քայր, քուռիս

Երբեմն էլ բառամիջի ո ձայնն է ազդում և մասնիկը դարձնում -իռ, ինչ.

բուրդ>բ'օրդ', բ'ոդ'իռ
դուրս>դ'իւռդ', դ'իւռդիռ
մարդ>մուռդ', մառդ'իռ

Այս մասնիկից մի քիչ պակաս գործածություն ունի -հօնք մասնիկը. վերոհիշյալ բառերից 60-ը (որ է կեսից ավելին) առանում է այս մասնիկը և միայն 54 հատը չեն առանում, երրորդ և չորրորդ հերթին գալիս են -վա և -վաք մասնիկները, որոնցից ամեն մեկը ունի երկու առանձակ օրինակ։

Բացառիկ մասնիկներ են -դա և -անդա. առաջինից ունենք միայն մի օրինակ (բակ>բ'էօգ, բ'ադդա) և երկրորդից՝ 3 օրինակ, որոնք են՝

գիւղ>գ'իղ, գ'իղանդա
քի>քէն, քիյանդա
ձի>ձ'էն, ձ'իյանդա

Պարզ է, որ դա ծագում է մեյ. ի մասնիկից, իսկ -անդա՝ մեյ. ան և ի մասնիկների գումարն է։

Մարդ բառը, ինչպես ամեն բարբառում, նույնպես և այստեղ պահում է մարդիկ հավաքական ձևը, որ վերածվել է մառդ'ագ ձևին։

Խիճ>խէջ բառը հոգնակիում լինում է խջվի (ոչ թե՝ խջվա), ուր վերջածայնը կարծում եմ, թե խիճ բառի ի ձայնավորից է։

Հոգնակիի կազմության մեջ նկատելի հանգամանքը այն է, որ հոգնակին կազմվում է ոչ թե բարբառի մեջ ընդունված եզ. ուղ. ձևից, այլ համապատասխան գրաբար ձևի վրայից։ Այս բանը նկատելի է հետևյալ կետերում։

Այն բառերը, որոնք գրաբարում ունեն ն հանգը, բարբառում կորցրել են այդ հանգը. բայց հոգնակի կազմելու ժամանակ երբեմն նորից է երևան գալիս ն հանգը, երբեմն էլ կորչում է. կան դեպքեր էլ, երբ երկու ձևով էլ գործածվում են։ Օր.

բեռն>բ'իռ, բ'իռիս, բ'իռնիռ
գուռն>գ'օռ, գ'ռնիր, գ'ռիր
կաթն>գէթ, գէթիր, գյութնիր
հարսն>հուռս, հառսնիր, հառսիր
ձուկ>ձ'էօգ, ձ'գնիր, ձ'գիր
մատն>մուգ, մագնիր, մագիր
մուկն>մէօգ, մըգնիր, մըգիր

Երկրորդ. երբ բառի ձայնավորը բարբառում փոփոխված և նոր ձև է առացած, հոգնակի կազմելու ժամանակ վերստանում է նախկին ձևը։ Այս երևույթը այնքան սովորական է, որ ավելորդ եմ համարում բոլոր օրինակները հիշատակել, և դնում եմ միայն մի քանի հետաքրքրական օրինակներ. ինչ.

ակն>իւգ, էօգ, ոգիր, ոգէօնք
աղ>իւղ, աղիր, ուղէօնք
աղբ>իւխբ՝, ախբ՝իր, ախբ՝էօնք
աղա>իւղդ, աղդիր, աղդէօնք
ամպ>ումբ, ամբիր, ամբէօնք
ասող>ուսդղ, ասդղիր
բարձ>բ՝ուռձ՝, բ՝առձ՝իր
հաց>հրուց, հոցցիր և այլն

Երրորդ. սղման և ամփոփման օրենքները, որոնք այնպես հաստատուն են գրաբարում, հաճախ երևում են նաև այս բարբառում։

Ահա մի քանի օրինակ.

բուրգ>բ՝օրգ՝, բ՝ոգ՝իս
գին>գ՝էն, գ՝ընիր
գիր>գ՝էր, գ՝րիր, գ՝րէօնք
լոյս>լայս, լուսիր, լուսէօնք
մուկն>մէօգ, մրգնիր, մրգիր և այլն

Չորրորդ. երբեմն հոգնակին այնպես է կազմված, որ բնավ չի կարող բխել եզակիից, այլ դարձյալ գրաբարից՝ բարբառի ձայնական օրենքների համաձայն։ Այսպես՝

այծ>առձ, իձձիր
փայտ>փադ, փիդիր
փոր>փիւր, փիրիր
մայր>մաու, միրիր
ձիւն>ձ՝այն, ձ՝ինիր
հայս>հաս, հիսսիր
ծայր>ձար, ձիրիր
դայլ>գ՝ալ, գ՝իլիր և այլն

Բառերի մեջ հոգնակին եզակիից չի բխում. կարելի չէ բացատրել, թե իձձիր «այծեր» բառի մեջ ա ինչու՞ ի դարձավ,

բացատրությունը տալիս են միայն այծեր, փայտեր, փորեր, մայրեր, ձիւեներ, ձայներ, հայսեր, ծայրեր, գայլեր ձևերը, որոնց մեջ այ, ո, իւ Սվեդիայի ձայնական օրենքների համաձայն դառնում են ի։

Թուրքերեն բառերը, չհպատակվելով ա>ու ձայնափոխության օրենքին, իրենց ինքնուրույնը պահում են։ Այս ձևով էլ մտնում են հոգնակիի մեջ. ինչ.

Թրք. qaz «սագ»>գ՝ազ, գ՝ազիր
mal «ապրանք>մալ, մալիր
gaz «նավթ»>գազ, գազիր
ǰam «ապակի»>ջամ, ջամիր
raf «գարակ»>ռաֆ, ռաֆիր
saγ «աջ»>սաղ, սաղիր

Ինչպես տեսնում ենք, այս բոլորը ստանում են -իր մասնիկը և ոչ թե վա, վոք, էօնք։ Սա նշանակում է, թե Սվեդիայի բարբառի համար էլ միավանկ բառերի սովորական և ընդհանուր մասնիկը -իր ձևն է։

Այն բոլոր օրինակները, որ հիշեցինք վերը, միջոց են տալիս մեզ քննելու և լուսաբանելու մի կարևոր հարց, որ վերաբերում է ոչ միայն Սվեդիայի, այլև ուրիշ հայ բարբառների։

Հայտնի է, որ Ագուլիսի, Զեյթունի և Հաճընի բարբառներում վերջավանկի ա դառնում է օ. երեք բարբառներումն էլ լինում է հաց>հօց, բայց հոգնակիում, ինչպես և հոլովման մեջ, այս օ չի պահվում, այլ նորից վերականգնվում է ա. այսպես Զթ. հացիյ, սեռ. հացը՛. Ագլ. հաց>հօց, հացար, սեռ. հացի։ Թեև Ագուլիսի բարբառում կան բառեր, որոնք ունեն թէ ա, և թէ օ ձևը (ինչ. Ագլ. օհ «վախ», հոգն. օհար, ահար և այլն, տե՛ս Փինն. Ագլ. բրբ. էջ 170), բայց ընդհանրապես, ի զարմանս լեզվաբանների, նմանաբանության օրենքը գործադրված չէ։ Սվեդիայի բարբառը այսպես չէ և լայնորեն գործադրում է այդ օրենքը։ Կան բառեր, որոնք ազատ կերպով ներկայացնում են թէ ա, և թէ ու ձայնավորը. այսպես՝

թաղ>թիւղ, թիւղիր, թաղէօնք
թաց>թուց, թուցիր, թացիր
թաս>դ՝ուս, դ՝ուսիր, դ՝ասիր
լակ>լիւգ, լիւգիր, լագիր

խաղ>խաւղ, խաւղիր, խաղդիր
խակ>խէօգ, խէօգիր, խագիր
խաղ>խիւղ, խաւղիր, խաղէօնք
ծակ>ձէօգ, ձէօգիր, ձագիր
ծափ>ձաւփ, ձաւփիր, ձափիր
կաթն>գէթ, գէթիր, գյութնիր
կոյղ>գայղ, գայղիր, գաւղիր
հաա>հաւդ, հաւդիր, հադիր
հաց>հաւց, հացցիր, հացցիր
մաղ>միւղ, միւղիր, մաղիր
մանր>մաւնդր, մաւնդռիկ, մանդռիկ
չափ>չաւփ, չաւփիր, չափիր
պաղ>բիւղ, բիւղիր, բաղիր
քոյր>քայր, քայրիր, քաւրիկ

Միայն ա>ու ձևն ունեն, ուրիշ խոսքով ամբողջովին հպա տակվել են նմանաբանության օրենքին.

արջ>ուրջ՛, ուրջ՛իր, ուրջ՛էօնք
գալ>գ՛ուլ գ՛ուլիր, գ՛ուլէօնք
գահ>գ՛ուհ, գ՛ուհիր, գ՛ուհէօնք

Զայնավորով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիում ստանում են -ք, -էօնք, -ներ, -ներք, -ներիր մասնիկները. որից -ներ ծագում է միջ. հյ. նի ձևից, իսկ -ներք ավելացրել նույնի վրա ք մասնիկն էլ:

Ահա այս կարգի բառերի ըստ կարելվույն լիակատար ցանկ.

ագի>ագ՛ա, ագ՛յոք
աղաւնի>աղվընա, աղվընաք, աղվընոք
այգի>իգ՛գ՛ա, իգ՛գ՛յոք, իգ՛գ՛ըզաւնք
անալի>ալլա, ալլոք, ալլէօնք
առու>առռօ, առվընա, առռօնք, առվէօնք
բակլայ>բ՛ոգլօ, բ՛ոգլոք, բ՛ոգլէօնք
բևեռնի>բ՛իվդինա, բ՛իվդինոք
բոնիչ>փոընջինա, փըոընջինոք
գարի>գ՛արա, գ՛որոք
գինի>գ՛ինա, գ՛ինոք
գիւղացի>գ՛իղացա, գ՛իղոցոք
գօտի>գ՛ուդա, գ՛ուդոք, գ՛ուդըսաուն, -ք

եկեղեցի>գիղիցա, գիղիցոք, գիղիցինա
եղի>իղա, իղոք, իղէօնք, իղընա
ընտանի>ընդոնօ, ընդոնոք
թթու>թըդ՛դ՛օ, թըդ՛վէօնք, թըդ՛դ՛ըվնա
լեզու>լիզօ, լիզվոք, լիզվընա, լիզվէօնք, լիզվընիր
լեղի>լիղա, լիզվոք, լիզվընա, լիզվէօնք, լիզվընիր
խնամի>խնամա, խնամոք, խնամինաք խնամընա
կաշի>գիշա, գիշինա, գիշէօնք.
կատու>գյոդօ, գյոդվընա, գյոդէօնք, գյոդվէք
կիրակի>գիրոգէ, գիրոգնիր, գիրոգիք, գիրոգէօնք
հայելի>հիլիլա, հիլիլոք, հիլիլինա, հիլիլէօնք, հիլիլինիր
հացենի>հոցցինա, հոցցինոք, հոցցինինիր
հեռի>հիռռօ, հիռռօնք, հիռվօնք
հոգի>հիգ՛գ՛ա, հիգ՛գ՛ոք, հիգ՛գ՛էօնք
հոսելի>հիսսիլա, հիսսիլոք, հիսսիլոքնա
ճճի «շերամ»>ջիջա, ջիջոք, ջիջէօնք
մաթուզենի>մաթինա, մաթինոք, մաթինինիր
մատանի>մադնա, մադնոք
մարգարէ>մարգ՛որա, մարգ՛որոք, մարգ՛որէօնք
մաքի>մագ՛ա, մագ՛ոք
մեղու>միզօ, միզվոք, միզվընա, միզվընոք
մողի>միզզա, միզզոք, միզվոք
մորենի>մըրմինա, մըրմինոք, մըրմինինոք, մըրմինինիր, միրէօնք
մրտենի>մըռդինա, մըռդ՛ինինոք, մըռդինոք, մըռդինինիր
յղի>աղղա, աղղաք
նօթի>ոնուԹա, ոնուԹոք, ոնուԹինա, ոնուԹէօնք
չումայ>չումբրա, չումբրոք
ոսկի>իսգա, իսգ՛յոք, իսգ՛յէօնք
ուռենի>ուռինա, ուռինոք, ուռինինոք, ուռինինիր
չուխայ>չուխօ, չուխոք, չուխէօնք
պախրէ>բոխրէ, բոխրիք, բոխրէօնք, բոխրինիր
ջորի>ջ՛իրա, ջ՛իրոք, ջ՛իրըզաւն
սատանայ>սադանօ, սադանոք, սադանինիր
սօսի>սուսա, սուսոք
տարի>դարա, դարոք, դարէօնք, դարինիր
տղա>դղօ, դղաք

տալի «տեղև»>դիլա «խաղողի որթ», դիլաք, դիլէօնք, դիլինաք
փեսայ>փիսօ, փիսաք, փիսէօնք, փիսինա, փիսինաք
փիճի>փիչա, փիչաք, փիչօնք, փիչինաք
փնթի>փնթա, փնթաք
փուշի>փիշա, փիշաք, փիշէօնք
քուշնայ>քուշնօ, քուշնաք
քրիստոնեայ>քիսթինէ «հայ», քիսթինաք, քիսթինինիր, քիսթինիր

Ահա մի քանի օրինակ էլ թուրքերենից փոխառյալ ձայնավորահանգ բառերի.

ղ՛ալա «կլայեկ», ղ՛ալաք, ղ՛ալինա
մահանա «պատրվակ», մահանաք, մահանինա, մահանինաք
լախանա «կազամբ», լախանաք, լախանինա կամ լըխանինա, լըխանանք, լըխանինիր
ուսդ՛ա «վարպետ», ուսդ՛ք, ուսդ՛ինա
մէխանօ «գինեատուն», մէխանաք, մէխանինա, մէխանինաք
մուշամբա «մոմշոր, կլեոնկա», մուշամբաք, մուշամբինա, մուշամբինաք

Այս օրինակներն էլ ցույց են տալիս, որ ձայնավորով վերջացող բառերի հոգնակին կազմվում է գլխավորապես -ք, -նա, -ներ մասնիկներով։

Այժմ անցնում ենք բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերին, որոնց համար տալիս ենք հետևյալ երկար ցուցակը.

աբեթ>աբ՛իդ՛, աբ՛իդ՛նա
ագռաւ>ագ՛ռավ, ագ՛ռավնա
ազատ>ազդար, ազբընա
ազոխ>ազդիւխ, ազդուխնա
ալիկ>ալլոգ, ալգընա
ալևոր>հալիվիւր, հալիվիւրնա, հալիվըռնա
ալիւր>իլէր, իլըռնա
ալոշ>իլէօյշ, իլիւշնա, իլիւշթ
ականջ>ագանջ, ագընջվունք
ակօս>ագէօս, ագուռնա
աղբիւր>ախբ՛այր, ախբ՛այրնա
աղեղն>ողիղ, ողիղնա

աղիք>ողդաք, աղբադունք
աղուոր>ողվիւր, աղվիւրնա
աղջիկ>աշգէն, աշգընիր
աղտոր>ողդէօր, աղդիւրնա, աղդիւրնաք
աղքատ>ախքուդ, ախքուդնա, ախքադէօնք
աղօթք>ողուխթ, ողուխթնա
աճուռ>աջջէօռ, աջջէօռնա
աման>ամուն, ամբննա
ամառն>ամուռ, ամբռնա
ամբար>ամբուռ, ամբառնա
ամխա>ամէս, ամսընա
այրի>իրբգնագ, իրբգ՛ոննաք
անգղ «կանթ»>իւնգիւղ, իւնգիւղնա
անէծք>անիձք, անիձքնա
անիծ>անէձ, անձընա
անկողին>ունգբղէն, ունգբղնաք
անձրև>անձբրիվ, անձբրվնա, անձբրվիր, անձբրվէօնք
անօյշ>անէօշ, անուշնա
անուն>անօն, անուննա, անընվէօնք
աշխարհ>ախշուր, ախշուրնա
աշուն>իշշէօնք, իշնէօնք, իշշէօնքնա
ապարանջան>արբոջուն, արբոջուննա, արբոջնիր
ապուր>արէօր, արէօրնա, արբէօնք
առատ>բռռուդ, բռռուդնա
ասեղն>ասիղ, ասիղնա
աստատ>ասդ՛ուռ, ասդ՛ուռնա, ասդ՛առնա
աստղ>առբսդղագ, առբսդղինիր, առբսդղիր
աստուած>ասդ՛ուձ, ասդ՛ուձնա
արդար>ասդ՛ուռ, ասդ՛ուռնա, ասդ՛առնա
արև>արիվ, արիվնա
արիշ>՛առուէշ, ՛առուէշնա
արիւն>վիրէն, վիրբննա
արծաթ>առձուխ, առձուխնա, առձաթնա
արճիճ>արջէջ, արջէջնա
արմունկն>արմէօնգ, արմբնգնա
արտոյտ>արդէգ, արդուդնա
արտուտիկ>արդիդագ, արդիդագնա
արտասուք>առցօնք, առցօնքնա

արօր>հորուր, հորուրնա
աւազան>ովազուն, ովազուննա, ովազէօնք
աւազ>ավազ, ավըզնա
աւել (գյ)>ովիլ, ովիլնա, ովիլոք
աւետարան>ովիդորուն, ովիդորուննա, ովիդորէօնք
բաղարջ>բ'աղարջ', բ'աղարջ'նա
բամբակ>բ'ամբուգ, բ'ամբգընա, բ'ամբըգնա
բանալի>բ'ալէնք, բ'ալընքնա
բարակ>բ'արիւգ, բ'արգընա
բարեկենդան>բ'արգընդիւք, բ'արգընդիւնքնա
բարեաւ>բ'արիվ, բ'արիվնա
բերան>բ'իրուն, բ'իրընննա, բ'իրվընա
բեհեկն>բ'իվիգ, բ'իվիգնա
բեհեղ>բ'իվիո, բ'իվիոնա
բշտիկ>փշդ'ոգ, փշդ'ըգնա, փըշդ'ինիր
բոլոր>բ'իւլիւր, բ'իւլիւնա
բորիկ>բ'իգոգ, բ'իգոգնա
բոկեղ>բ'իգիդ, բ'իգիղնա, բ'իգըղնա
բորբոս>փըրփէս, փըրփըսնա
բորբոս>փըրփէս, փըրփըսնա
բուռտ>բ'իւրիւդ, բ'իւրիւգնա
բուրվառ>բ'ուրվուռ, բ'ուրվառնա
գանձանակ>գ'անձ'անագ, գ'անձ'անագնա
գարուն>գ'յարէօնք, գ'յորուննա
գաւազան>գ'յովազուն, գ'յովազուննա, գ'յովազաննա
գեամն>գ'իդէն, գ'իդէննա, գ'իդնէօնք
գերեզման>գ'ըրըզմուն, գ'ըրըզմանիր, գ'ըրըզմաննա, գ'ըրըզմուննա
գիշեր>գ'իշիր, գ'իշիռնա, գ'իշիռնիր
գլուխ>գ'լէօխ, գ'ըլխընա, գ'ըլխընիր, գ'ըլխէօնք
գղեակ>գ'ըխգ'իւր, գ'ըխգ'իւռնա
գոմեշ>գ'իմիշ, գ'իմիշնա, գ'իմշընա, գ'իմիշգուն
գամն>գ'ամմէն, գ'ամմիննա
գանակ>գ'անիւգ, գ'անգընա, գ'անգըոգուն
գաւառական>գ'ասգ'ըռուգ, գ'ասգ'ըոգիր (փոքրը՝ գ'ասգ'ըռգիներ)
գաւառական>գ'ոգ'ոսգ'ուն, գ'ոգ'ոսգ'ուննա, գ'ոգ'ոսգ'ունիր

դաւարակ>գ'առդուգ, գ'առդգընա, գ'առդուգնա, գ'առդգօնք, գ'առդգընիր
դաւաւոր>գ'ոգովիւր, գ'ոգ'ովիւռնա, գ'ոգ'ովիւռնիր
դղում>գ'ըգ'ըմ, գ'ըգ'ըմընա, գ'ըգ'ըմիր, գ'ըգ'ըմօնք, գ'ըգ'ըմնիր
դեղին>գ'իգէն, գ'իգընննա, գ'իգընննիր, գ'իգննէօնք
դերձան>գ'իռձ'ուն, գ'իռձանննա, գ'իռձ'ուննա, գ'իռձ'օնք
երեկոյ>իրգօն, իրիգօն, իրիգուննա, իրիգօննա, իրիգընիր, իրգօննա, իրգօննիր
ժուաւր>գ'իժուր, գ'իժուրնա, գ'իժուրնոք, գ'իժուրնիր
եղբայր>ախբ'ար, ախբ'ըռնա, ախբ'ըրգոք, ախբ'ըռէօնք, ախբ'ըռնիր
եղէգն>իղիգ', իղիգ'նիր, իղիգ'նաք, իղիգ'էօնք
եղջիւր>ախջ'էր, ախջ'ըռնա
երես>իրիս, իրիսվունք
երկաթ>իրգուիթ, իրգաթէօնք, իրգաթոք, իրգաթննա, իրգաթննոք, իրգաթնիր
երկանք>իրգիւնք, իրգիւնքնիր, իրգիւնքնա, իրգիւնքնոք (ա չկա)։
երկինք>իրգէնք, իրգընէօնք
զնդան>գունդուն, զընդաննիր, զընդուննա, զընդուննիր
թեզանիք>թիգնոք, թիգնոքնա, թիգնէօնք
թոնիր>թինէր, թինըռնա, թինդըռնա, թինդըռնիր, թինդրանք, թինդոէօնք
թրիք>թրոք, թրքընիր, թրքընա, թրքընոք, թրքէօնք
ժանիք>ջոնոք, ջոնէօնք
լիմոն>լըմմօն, լըմմէօնք, լըմմաննա, լըմմաննոք
խիչափառ>խիչիփուռ, խիչիփոռիր, խիչիփոռնիր
խիպար>խիբուր, խիբրռնա, խիբրէօնք
խմոր>խմիւր, խմիւռնա, խմիւռնիր
խանջան>խանջուն, խընջանգա, խընջաննիր, խընջաննա
կնունք>գնէօնք, գընընէօնք
կշիռք>գիշիռք, գիշիռէօնք
մոխիր>մոխէր, մոխիռնիր, մոխռիր
մօրուք>մուրէօք, մուրուքէօնք, մուրմուքէօնք
յունապ>աննոր, աննորէօնք, աննորնիր, աննորնա, աննորնոք

շնորհք>շիւնիւրք, շիւնիւրքէօնք, շիւնիւրէօնք
պատանի>բոդիւնք, բոդիւնքէօնք, բոդնէօնք
ջրաղացք>ջ՛ոդուցք, ջ՛ոդցընա, ջ՛ոխցէօնք
սիկեսուր>իւսդիւսէօր, իւսդիւսիւրնա, իւսդիւսիւրդաք
վարտիք>վարդաք, վարդըքիր, վարդըքէօնք
ցորեան>ցիրին, ցիրիններ, ցիրիննա, ցիրիննաք, ցիրիննէօնք
փորձանք>փուրցուն, փուրցանքներ, փուրցանքիր
քաղաք>քոդիւք, քադքընա, քախքընիր
քըրտինք>քըրդէնք, քըրդընքնա, քըրդընքներ, քըրդընքիր, քըրդէօնք
քուռակ>քուռուդ, քուռդրդա

Այժմ տալիս ենք մի քանի օրինակ էլ օտար բառերի հոգնակիներից (բոլորն էլ բազմավանկ և բաղաձայնով վերջացած).

բոդիխ «սեխ»>արաբ. battix, բոդիխնա, բոդիխներ, բոդիխներիր
բադամ «նուշ»>թրք. badem, բադամնա, բադամներ, բադամներիր
չօլախ «թևատ»>թրք. čolaq, չօլախնա, չօլախներ, չօլախներիր
թուփալ «կապ»>թրք. topal, թուփալնա, թուփալներ, թուփալներիր
բաջախ «սրունք»>թրք. baǰaq, բաջախնա, բաջախներ, բաջախներիր
սաղաթ «ժամացույց»>արաբ. թրք. sa'āt, սաղաթնա սաղաթներ, սաղաթներիր
նաղնաղ «անանուխ»>արաբ. na'na', նաղնաղնա
բիբիսէմ «ապրշում»<արաբ., բիբիսիմիր, բիբիսիմաք

Այս բոլոր օրինակները և հատկապես օտար բառերը ցույց են տալիս, որ բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերի սովորական հոգնակին կազմվում է -ներ մասնիկով։ Բայց սրանից բացի կան նաև մի քանի ուրիշ մասնիկներ, որոնց մասին պիտի խոսենք այժմ, ավելացնելով նրանց դանագան դիտողություններ։

Թեև վերևում տեսանք, որ -իր հոգնակերտ մասնիկը հատուկ է միավանկ բառերին, բայց բազմավանկների մեջ էլ կան

բառեր, որոնք իրենց հոգնակին կազմում են -իր մասնիկով։ Այսպես են, օր.

անձրև>անձըրիվ, անձըրվիր
ապուր>ապէօր, ապըրնիր, ապրիր
ասող>ասըդդագ, ասըդդիր
գաստառակ>գ՛ասդ՛ըռուդ, գ՛ասդ՛ըդիր
դդում>դ՛ըդ՛դ՛օմ, դ՛ըդ՛միր
մախիր>մախխէր, մախխիռ
վարտիք>վարդաք, վարդըքիր
քրտինք>քըրդէնք, քըրդընքիր
խեչափառ>խիչխփուր, խիչխփորիր
փորձանք>փուրցուն, փուրցանքիր

Սրանք սխալ կամ կրճատ ձևեր չեն, այլ ճնացորդ մի ջին հայերենի, ուր ինչպես հայտնի է, -եր մասնիկը հատուկ էր ոչ միայն միավանկ, այլ նաև բազմավանկ բառերին, և այդ երևույթը կենդանի է այսօր էլ Միվրիհիսարի բարբառում, ուր բոլոր բառերը, միավանկ թե բազմավանկ, իրենց հոգնակին կազմում են միշտ -եր մասնիկով։

Միավանկանի -եր մասնիկով հոգնակի գտնում ենք նաև մի քանի ուրիշ բառերի մեջ, որոնք վերջանում են ն բաղաձայնով. այսպես՝

աղջիկ>աշգէն, աշգընիր
ապարանջան>արբոջուն, արբոջներ
գերեզման>գ՛ըրըզմուն, գ՛ըրըզմաններ
երեկոյ>իրիգօն, իրիգընիր

Սրանց համար կարելի է անել երկու ենթադրություն. կամ այն է, որ սրանք էլ նախորդների նման կազմված են -իր մասնիկով և կամ թե կազմված են -ճիր մասնիկով և ապա կրկնակ ն-երից մեկը ջնջված է։ Բայց որովհետև ուրիշ դեպքերում զույգ ն միւս է (ինչ. գաստառան>գ՛ասդ՛ոսդ՛ուն, գ՛ասդ՛ուններիր, դեղին>դ՛իղէն, դ՛իղընիր, գնդան>գունդուն, գընդաններիր, խանջան>խնջոն, խընջոններիր, ցորեան>ցիրին, ցիրիններիր), ուստի պետք է կարծել, թե առաջին ենթադրությունը։

Գրաբարի այն օրենքը, որով ր գոնվելով ն-ի մոտ դառնում է ռ, լայնորեն գործադրվում է նաև այսօրեղ՝ հոգնակիի կազմութեյան ժամանակ. երբ ր բաղաձայնով վերջացող մի բառ հոգնակիի վերածվելով առանց -ներ կամ -ներ մասնիկը, հաճախ ր դառնում է ռ (բայց ոչ միշտ), օր.

ալևոր>հալիվիւր, հալիվըռնա
ալիւր>իլէր, իլըռնա
բոլոր>բի՛ւլիւր, բ՛իւլիւռնա
գիշեր>գ՛իշիր, գ՛իշիռնա, գ՛իշիռնիս
գղխոր>գ՛ըխգ՛իւր, գ՛ըխգ՛իւռնա
դառաւոր>գ՛ոգ՛ովիւր, գ՛ոգ՛ովիւռնա, գ՛ոգ՛ովիւռնիս
եղբայր>ախբ՛ար, ախբ՛ըռնա
եղջիւր>ախջ՛էր, ախջ՛ըռնա
թոնիր>թինէր, թինըռնա, թինդըռնա, թինդըռնիս
խեչափառ>խիչխիփուր, խիչխիփռոնիր
խիպար>խիրուր, խիրըռնա
խմոր>խմիւր, խմիւռնա, խմիւռնիս
մոխիր>մոխխէր, մոխխռնիս
սկեռուր>իւսգիւսէօր, իւսգիւսիւռնա

Առանձնապես կարևոր է -էօնք մասնիկի գործածութեյունը. Այս մասնիկը, որ ըստ իս ծագում է հին -ունք ձևից (համմտ. գարուն<u>ք</u>>գ՛յորէօնք, աշուն<u>ք</u>>իշշէօնք), գրվում է նախ՝ մի խումբ միավանկ բառերի վրա: Օրինակներից մի քանիսը արդեն հին գրաբար հոգնակիների շարունակութեյունն են, ինչ. ակուն<u>ք</u>>ագէօնք, ափուն<u>ք</u>>ափէօնք, բարձուն<u>ք</u>>բ՛ան՛ձ՛րէօնք, բուն<u>ք</u>>բ՛ոէօնք, ծանուն<u>ք</u>>ձոնդրէօնք, մատուն<u>ք</u>>մադէօնք:

Երկրորդ՝ կազմում է ձայնավորով վերջացող մի քանի բառերի հոգնակին. ինչ. անալի>ալլա, ալլէօնք, բ՛ակլայ>բ՛ագլա, բ՛ագլէօնք, եղի>իդա, իդէօնք, քքու>քրդ՛օ, քըդ՛վէօնք, լիզու>լիզզո, լիզվէօնք, լեղի>լիդա, լիդվէօնք, կաշի>գիշա, գիշէօնք և այլն, և այլն:

Երրորդ՝ բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերի վրա, որոնք բաժանվում են 4 կարգի.

ա) Սովորական բառեր, որոնք նախորդների նման առնում են -էօնք մասնիկը. ինչ.

աղքատ>ախքուդ, ախքադէօնք
անձրև>անձըրվիվ, անձըրվէօնք
ապուր>արբէօր, արբէօնք
գեահին>գ՛իղէն, գ՛իղնէօնք
գլուխ>գ՛լէօխ, գ՛ըլխէօնք
դդում>գ՛ըդ՛գ՛օմ, գ՛ըդ՛մէօնք
դեղին>գ՛իղէն, գ՛իղընէօնք
եղէգն>իղիգ՛, իղիգ՛էօնք
երկաթ>իրգուխ, իրգախէօնք
թոնիր>թինէր, թինդուէօնք
թրիք>թրոք, թըրքէօնք
խիպար>խիրուր, խիրրէօնք
յունապ>աննաբ, աննաբէօնք
ցորեան>ցիրին, ցիրինէօնք

բ) Անեզական բառեր, որոնք բարբառում պահել են իրենց ը վերջավորութեյունը, սակայն -էօք մասնիկը առանալու ժամանակ կորցնում են այս ը ձայնը. ինչ.

երկինք>իրգէնք, իրգընէօնք
թեզանիք>թիզնաք, թիզնէօնք
ժանիք>ջոնաք, ջանէօնք
կշիռք>գիշիւք, գիշիւէօնք
ջրաղացք>ջ՛աղուցք, ջ՛ախցէօնք

Զարմանալի է, որ սրանց հետ ունենք նաև կնունք>գնէօնք, որի ը վերջաձայնը թեև արմատական է (կնիք>ասուր. kunuku), բայց «կնունք» ձևի մեջ հոգնակիի նշան է կարծվել և ջնջվելով՝ ավել է հոգ. գընգնէօնք:

գ) Անեզական բառեր, որ ը ձայնը պահում են թե՛ եզակիում, և թե՛ հոգնակիում. ինչ.

մօրուք>մուրէօք, մուրուքէօնք, մուրվուքէօնք
վարտիք>վարդաք, վարդըքէօնք

Սրանցից դուրս կան նաև՝

դ) Անեզական բառեր, որոնք հոգնակիում գործածվում են երկու ձևով. թե՛ ը-ով, և թե՛ առանց ը-ի. ինչ.

շնորհք>շիւնիւրք, շիւնիւրքէօնք, շիւնիւրէօնք
պատանք>բոգիւնք, բոգիւնքէօնք, բոգնէօնք

Առանձին ձև են ներկայացնում՝

աչուն>իշղէօնք, իշնէօնք
քրտինք>քըռգէնք, քըռդէօնք<քրտունք

Դիտ.— Ալեակներ, էջ 228, Եսղուն-Օլուգի գավառականում այս -էօնք ձևի տեղ գտնում է -էնք, որի համար տալիս է հետևյալ օրինակները.

ձէթ>ձ'իթ, ձ'իթէնք
փայտ>փատ, փիդէնք
մատն>մուդ, մէդէնք
ծով>ձուվ, ձուվէնք
սոխ>սիւխ, սիւխէնք
պատ>բուդ, բէդէնք
թուղ>թիւղ, թըղղէնք և այլն։

(Միևնույն ժամանակ այս -էնք մասնիկի ծագումը գնում է -անք ձևից, ինչ որ ճիշտ չէ)։

Այս -էօնք մասնիկի փոխարեն մի քանի տեղ գտնում ենք -ունք և մանավանդ -վի մասնիկի հետ միացած մի ձև. այսպես՝

անուն>անօն, անընվէօնք (որ նման է գրբ. անուանք ձևին)
ականջ>ագանջ, ագընջվունք
երես>իրիս, իրիսվունք
ոսկր>իւսգիւր, իւսգըրվունք
դեղ>դ'իղ, դ'իղվունք
տեղ>դիղ, դիղվունք

-Վի մասնիկը, որ միջին հյ. ուի ձևն է և ուրիշ բարբառներում հատկացված է մարմնի զույգ անդամներին, այս բարբառներում ընդհանուր գործածություն ունի և երբեմն միանում է ուրիշ հոգնակերա մասնիկների և հատկապես ք մասնիկին. ինչ.

երես>իրիս, իրիսվունք
բերան>բ'իրուն, բ'իրվընա
կաթն>գէթ, գըթվա, գըթվէօնք, գըթվոք
թուշ>թօշ, թշվաք
ժամ>ժուս, ժամվա, ժամվաք
աչք>աշք, իշվա
էշ>իշ, իշվանք
դուռն>գ'օռ, գռվաք

Դա մասնիկը, որ միջ. հյ. ուի ձևից է, բարբառիս ամենաքիչ գործածված մասնիկներից մեկն է և նույնպես կարող է միանալ ուրիշ մասնիկների հետ. ինչ.

խոնջան>խընջուն, խընջանդա
բակ>բ'էօգ, բ'իւգ, բ'ագդա
եղբայր>ախբ'ար, ախբ'ըրդաք
քոյր>քայր, քուրվըրդաք
սկեսուր>իւսգիւսէօր, իւսգիւսիւրդաք
քուռակ>քուռուգ, քուռգըդա

Վերը հիշեցինք նաև գիւղ, բի, ձի բառերի հոգնակիները՝ -անդա ձևով։

Միջ. հյ. -ստան հոգնակերա մասնիկը -ըսդուն ձևով երևվում է հետևյալ բառերի մեջ.

այգի>իգ'ա, իգըսդ'ունք
գօտի>գ'ուտա, գ'ուդըսդուն, -դունք
ագիք>ագդաք, ագըսդունք
դանակ>դ'անիւգ, դ'անգըսդուն
ջորի>ջ'իրա, ջ'իրըսդուն

Կան նաև գոմեշ>գ'իմիշ, գ'իմիշդուն, որ երևի շ-ի պատճառով դրկվել է ս ձայնից։

Հոգնակի կազմելու ժամանակ երբեմն տեղի է ունենում ն-ի անկում կամ կորուստ.

օր. անկողին>ունգըղէն, ունգըղնաք
աւազան>ամազուն, ամազէօնք
աւետարան>ամիդարուն, ամիդարէօնք

Այս բառերի հոգնակին ըստ օրինի պիտի լիներ *ունգըղեճէօնք, *ամազուճէօնք, *ամիդարուճէօնք կամ սրանցից քիչ տարբեր ձևով։ Սրանց փոխարեն ունենք վերի ձևերը, որոնց մեջ մի ն պահասում է իր ձայնավորով հանդերձ։

Այս անկումը կարող ենք երկու ձևով բացատրել։

Նկատելով, որ այս երեք բառերն էլ վերջանում են ն բազաձայնով և որ -էօնք հոգնակերա մասնիկն էլ իր մեջ ն է պարունակում, կարող է լինել, որ սղումը ստուգաբանության արդյունք լինի։ Բայց երեք բառերից գոնե երկուսը կրոնական բառեր են, ուստի կարող է նաև պատահել, որ գրանք դուտ գրա-

բար հոգնակիի ձևեր լինեն, իբր՝ աւետարանք, աւազանք, ինչպես և՝ անկողինք:

Ահա թե ինչպես անկարգ ու անկանոն դրութեան մէջ է գտնվում հոգնակիի կազմութիւնը Սվեդիայի բարբառում: Բաներ կան, որ մինչև 5 տեսակ հոգնակի ունեն. այսպես օրինակ՝

կաթն>գէթ, գէթիր, գյոթնիր, գթթվա, գրթվոք, գրթվէօնք
լեզու>լիզդօ, լիզվաք, լիզվընաք, լիզվէօնք, լիզվընիր
երկաթ>իրգութ, իրգ՛ոթէօնք, իրգ՛ոթոք, իրգ՛ոթնա, իրգ՛ոթնոք, իրգ՛ոթնիր

Նույնիսկ օտար բառերի համար ունենք այսպիսի բազմատեսակ հոգնակիներ. ինչ.

յունապ>աննոթ (արաբ. 'annāb) հոգնակի՝ աննոթնիր, աննոթէօնք, աննոթնա, աննոթնոք.

լիմոն>լըմմօն, լըմմաննա, լըմմաննոք, լըմմէօնք:

Այսպես պիտի լիներ գրաբարից միջին հայերեն և միջին հայերենից աշխարհաբարին դիմելու անցման շրջանը: Սվեդիացիք ժամանակ չունեցան այս զանազան ձևերի մեջ ընտրութիւն կատարելու և նրանցից մեկը կամ մյուսը ընդունելու, իրենց մղած պատմական հերոսամարտից անցան եգիպտոս, $4^1/_2$ տարի հետո վերադարձան հայրենիք, Ալեքսանդրետի նանջաքի գրաւման հետևանքով իջան Լիբանան և այժմ ներգաղթում են Հայաստան, ուր ընդհանուր ազգային ամբողջութեան հետ միախառնվելով, իրենց բարբառն էլ վերջ պիտի գտնի:

Կիլիկիայի բարբառում միավանկ բառերի հոգնակին կազմվում է -ի մասնիկով, որ համապատասխանում է մյուս բարբառների -եր ձևին: Օր.

թուր>թուր, թը՛րի
դեղ>դ՛էղ, դ՛էղի
թուղթ>թուխթ, թխթի
միս>մրս, մը՛սի
խոտ>խիւղ, խուղի, խիղի
կով>գէօվ, գուվի
ջուր>ջ՛օր, ջ՛ը՛րի
հող>խիւղ, խուղի
աէր>դէր, դիրի
գիւղ>գ՛էղ, գ՛էղի

իւղ>էղ, էղի
թուփ>թուփ, թը՛փի
թուղ>թուղ, թը՛ղի
ոսպ>իւսբ, իւսբի
յարդ>էյդ՛, իյդ՛ի

Այսպես նաև թուրքերենից փոխառյալ բառերը. օր. fes «գլխարկ»>ֆես, ֆէսի.

buγ «գոլորշի»>բուղ, բուղի
reng «գույն»>ռոնգ, ռէնգի
leš «դիակ>լոշ, լէշի
qeč «խոյ»>ղէօչ, ղէօչի

Նույնիսկ այնպիսի մի բառ, որ գրաբարում բազմավանկ է, իսկ բարբառում վերածվել է միավանկի, հոգնակիում առանում է դարձյալ -ի մասնիկը. Այսպես է խաղող>խող, խեղի և նույնիսկ՝ դդում>դ՛օղ՛օմ, դ՛ըղ՛մի:

Մեկ և կես վանկանի բառերն էլ, նման միավանկներին, հոգնակիում առանում է դարձյալ -ի մասնիկը. Այսպես՝

մեղր>մեղը, մեղի
բարձր>բ՛օնձ՛ոը, բ՛անձ՛րիը
թանձր>թօնձոը, թանձոի
ասող>օսղ, ասղի
քաղցր>քօղցըյ, քաղցիյի

Այն միավանկ բառերը, որոնց մեջ ա ձայնավորը դարձել է օ (կամ ո), հոգնակի -յի մասնիկը դրվելու դեպքում վերնատանում են իրենց ա ձայնավորը. այսպես՝

հաց>հօց, հացի
քար>քօր, քայի
վարդ>վօյդ՛, վայդ՛ի
տանձ>դօնձ, դունձի
մաղ>մօղ, մաղի
կաթն>գօթ, գաթի
աղ>օղ, աղի

Այսպես են մինչև իսկ թուրքերենից փոխառյալ բառերը, ինչ.

dal>դօլ, դալիյ «ոստեր»
av>օվ «որս», ավիյ
qaz>ղօզ «սագ», ղազիյ

Մինչև անգամ՝ čay>չօյ «թեյ», չայիյ. իսկ այն միավանկ բառերը, որոնց ձայնավորն է եղակիում ա, հոգնակիում վերածվում է ե. օր.

ճանճ>ջոնջ, ջէնջիյ
մայր>մոյ, մէյրիյ
ծայր>ձոյ, ձէյրիյ
հայս>հոս, հէսիյ

Մի քանի միավանկ բառ՝ գրաբարում ունենալով ո հանգը, հոգնակիում պահում են այդ հանգը, որով հոգնակին լինում է -ներիյ ձևով. այսպես են՝

մատն>մօդ, մադներիյ
դուռն>դ'օռ, դ'ը՝ռներիյ
հարսն>հօյս, հայսներիյ
մուկն>մուգ, մը՝գներիյ
լեառն>լէռ, լէռներիյ
բեռն>բ'էռ, բ'էռներիյ
նուռն>նուռ, նը՝ռներիյ

Բացառաբար նաև՝

ծառ>ձօռ, ձառներիյ

Ձայնավորով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է ք մասնիկով. օր.

մորթ>միյթի, միյթիք
ագի>ագ'է, ագ'էք
այգի>էգ'է, էգ'էք
գինի>գ'ինէ, գ'ինէք
ջորի>ջ'իյէ, ջ'իյէք
մաքի>մաքի, մաքիք
եկեղեցի>գ'էղիցէ, գ'էղիցէք
լեզի՝>լէզա, լաղէք

արիշ>այիշէ «սարսինայ», այիշէք
բարաի>բ'այդը՛, բ'այդը՛ք
գարի>գ'այը՛, գ'այէ՛ք
գօտի>գ'ուդա, գ'ուդաք
պախրէ>բախռէ, բախռէք

Այսպես նաև թուրքերենից փոխառյալ բառերը. ինչ.

xalə «գորգ»>խալը՛, խալը՛ք
zavallə «խեղճ»>զավալը, զավալըք
diši «էգ»>դիշի, դիշիք
sürü «խումբ»>սիւյիւ, սիւյիւք
gemi «նավ»>գէմի, գէմիք

Այն բառերը, որոնք Զեյթունի գավառականում վերջանում են օ (ո), որ առաջացել է նախկին ա ձայնավորից, հոգնակիում այս օ ձայնավորը դարձնում են ե և սրա վրա էլ ավելացնում են -նի կամ -նիք մասնիկը. Օր.

ակոայ>ակոօ, ակոէնիք
արբայ>արբյօ, արբէնի
բակլայ>բ'ագլօ, բ'էգլէնի

Միջին հայերեն կանդարայ>գանդայօ «կամուրջ», գանդայէնիք.

կթդայ>գօթդօ, գթդէնի
կրեայ>գօյյօ «փականք», գըյյէնի(ք)
ծառայ>ջառօ, ջէռէնի
շուշմայ>շուշմօ, շուշմէնի
չուխայ>չուխօ, չուխէնի
սարբինայ>սայբ'ունօ, սայբ'ունէնի
վկայ>վօգօ, վգէնի
տղայ>դօղօ, դէղէնի
քահանայ>քահաննօ, քահանէնի(ք)

Այս խմբին են պատկանում նաև բազմաթիվ թուրքերեն բառեր. ինչ.

araba «սայլ»>առաբօ, առաբէնի, -նիք
bašqa «ուրիշ»>բաշխօ, բաշխէնիք

qa'la «բերդ»>ղալօ, ղալէնիք
mengene «մամուլ»>մէնգէնօ, մէնգէնիք
zabtiye «ոստիկան»>զաբթիյօ, զաբթիյէնիք
maγara «քարայր»>մաղայօ, մաղայէնի, -նիք
maša «ունելի»>մաշօ, մաշէնիք
oda «սենյակ»>ուդօ, ուդէնիք
buγa «ցուլ»>բուղօ, բուղէնի
čeiŋge «ծննոտ»>չանգօ, չէնգէնի, -նիք,
para «դրամ»>փայօ, փայէնիք
čorba «ապուր»>չուվրօ, չուվրէնի.
kise «քսակ»>քէսա, քէսէնի
enište «քեռայր»>էնիշթօ, էնիշթէնի
zahre «ընդեղէն»>զահրօ, «զէհրէնի»
qaya «ժայռ»>գայօ, գայէնիք
xafiya «լրտես»>խաֆիյօ, խաֆիյէնիք
yare «վերք»>յայօ, յայէնի
qahve «սուրճ»>գայֆօ, գայֆէնի
nusxa «պատճեն»>մուսխօ, մուսխէնի
kesme «խմորեղեն է»>քասմօ, քասմէնի

Այս -*էնի մասնիկը կազմված է հետևյալ ձևով.* -*ին բնա-
կանաբար միջին հյ.* -*ցի մասնիկն է, գրբ.* -*ացի: Ի՞նչ է և նա-
խաձայնը:*

*Գիտենք, որ Զեյթունի գավառականում այ երկրաբրթռոր
բազմավանկ բառերի սկզբում դառնում է ե. ինչ. այգի>Զթ.
եզ՛ե, այր(իկ)>Զթ. էյիգ, այրել>էրիլ և այլն: Բառասկզբում այ
թեև դառնում է օ (օր. բակլայ>բագլօ, եղայ>էղօ, ակռայ>
ակռօ), բայց նախորդ վանկերում գտնված այ նմանապես դառ-
նում է ե. ինչ. խայթել>Զթ. խէթիլ, կայծակն>Զթ. գեծագ,
քայլել>Զթ. քէլիլ և այլն: Ըստ այսմ* -*էնի ծագում է* -*այնի
ձևից և այս էլ բացատրվում է հին հայերեն ա վերջացող բա-
ոերի այ հնչմամբ: Մինչև այսօր Երևանի բարբառում, բառա-
վերջի այ թեև հնչվում է ա (օր. տղայ>տղա, երեխայ>էրէ-
խա), բայց հենց վոր ընկավ բազմաձայնի մոտ, դառնում է ե,
այսպես՝ որոշիչ հոդ առանալու դեպքում, օր. էրէխէն<երեխայն,
տղէն<տղայն, մինչև իսկ տրամվէն, մաշինեն, որ է տրամվայն,
մաշինայն՝ ըստ հին հայերենի. Նույնպես հոգնակի կազմելու
դեպքում էրեխեք, տրամվեք, մաշինեք, իբր «երեխայք, տրամ-

վայք, մաշինայք». Նմանապես Զեյթունի գավառականում -*այնի
ավել է* -*ենի, որով՝ շուշմենի<շուշմայնի և այլն:*

*Այս կարգի (օ ձայնավորով վերջացող) բառերը կարող են
երբեմն էլ առանալ* -*ք վերջավորությունը՝ պարզ ձայնավորով
վերջացող բառերի նման: Այսպես են՝*

xazina «գանձ»>խազնօ, խազնօք
sille «ապտակ»>սիլլօ, սիլլօք
aba «վերարկու»>աբօ, աբօք
qəranta «ընտանիք»>խուռանթօ, խըռընթօք

Իսկ teneke>թենեքօ «թիթեղ» *բառը դառնում է հոգնակի
թենեքենիյ:*

Այս -*ք վերջավորությունը ծագում է գրաբարի* -*այք ձևից,
քան որում վերջավանկի* -*այ (շեշտի տակ) դառնում է Զեյ-
թունի գավառականում m (և ոչ՝ ե):*

*Ու ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը հոգնա-
կում առանում են կամ պարզապես ք և կամ՝ ավելացնելով վր
վանկը, առանում են* -*նա,* -*նաք,* -*նիք մասնիկները, որոնք հա-
ոուկ են բազմաձայնով վերջացող բառերին, ինչպես պիտի տես-
ննենք քիչ հետո: Այսպես են՝*

*Մեղու>մէղու, մէղուք, մէղվը՛նա, մէղվը՛նաք
լեզու>լիզօ, լիզվը՛ք, լը՛զվը՛նա, լը՛զվը՛նաք
առու>առու, առվընա, առվընաք
ածու>ածուք, ածվընաք
կծու>գօձու, գը՛ձվը՛նիյ*

Սրանցից դուրս են մնում

*թթու>թօթու և կատու, որ ջնջվել է Զեյթունի գավա-
ռականից, փոխանակվելով փըսըգ բառով:*

*-ու վերջացող թուրքերեն բառերը առանում են սովորա-
կան ձևի հոգնակին. օր.*

halvu «բակ»>հավլու, հավլուք
quzu «գառնուկ»>գուզու, գուզունիյ, գուզունաք

Իսկ լու բառը լինելով միավանկ՝ դառնում է

լու>լօ, լը՛վիյ

Մարմնի զույգ անդամների անունները, եթե միավանկ են, հոգնակիում առանում են -վը կամ նաև՝ -վրնը մասնիկը։ Այսպես են՝

ձեռք>ձ՛ոռ, ձ՛ը՛ռվը՛նը՛, ձէռքվը՛նա
մատն>մօգ, մատվը՛նա
ծունկ>ձուռնգ, ձը՛նգվը՛, ձը՛նգվը՛նը, ձը՛նգվը՛նա
ծիծ>ձը՛ձ, ձը՛ձվա, ձը՛ձվը՛նա, բայց նաև՝ ձը՛ձիյ
ծոց>ձիւց, ձը՛ցվը՛, բայց նաև՝ ձը՛ցվիյ, ձիցվիյ, ձուցիյ

Ջևյթունի գավառաբանում աչք բառը ջնջվել է (թեև հնում է աչք), և նրա փոխարեն գործածվում է իրրև եզակի՝ էվե, որ ուրիշ բարբառների հոգնակի աչվի ձևին է համապատասխանում. իսկ այստեղ հոգնակին լինում է էվեք, էվը՛նա կամ էվենա:

Սրա նման են նաև. յօնք, որ դարձել է եզ. ը՛նքվա, ը՛նքվը՛, հոգնակի՝ ը՛նքվը՛նը՛, ընքվը՛նա և ոտք>իդվե, հոգնակի՝ իդվենա, իդվինա կամ ուդվընա, ուդվունա:

Անկանոն կերպով նաև ականջ>անգէջ բառը, թեև ոչ միավանկ, բայց հետևելով նախորդներին՝ դարձել է հոգնակի անգըջվընա:

Բազաձայնով վերջացող բազմավանկ բառերը առհասարակ առանում են հոգնակիում -ճի, -նը, -նա, -նը՝ մասնիկները։ Այս բոլորը միևնույն ծագումն ունեն և առաջանում են մի ինչ հայերենի -ճի մասնիկից։

Այս -ճի, -նը, -նա, -նը՝ մասնիկները հետևում են նրա դաշնակության օրենքին. երբ բառի վերջավանկի ձայնավորն է ի կամ է, հոգնակիի մասնիկը պահում է -ճի ձևը, երբ վերջավանկի ձայնավորն է ու, մասնիկը դառնում է -նա, երբ վերջավանկի ձայնավորն է ա, մասնիկը դառնում է -նը, իսկ երբ վերջավանկի ձայնավորն է ը, մասնիկը դառնում է -նը՝ կամ -նա:

Այս օրենքը ընդհանուր է թե հայերեն, թե թուրքերեն բառերի համար։ Օրինակ՝

վերջավանկում ի (նաև իւ) ձայնավոր. հոգ. -ճի

կորեկ>գիւիյգ, գիւյգինի
գլխիլ>գիւլգիլ, գիւլգիլնի
բևեկն>բ՛իրիգ, բ՛իրիգնի

բ՛ադ՛իւգնիւց «պատառաոուկ»>բ՛ադ՛իւգնիյցնի
dengiz «ծով»>դէնգիզ, դէնգիզնի
լակոտ>լոգիւդ, լոգիւդնի
տանիք>դինէյ, դինիյնի
yemiš «միրգ»>յէմիշ, յէմիշնի
վզնոց>վը՛զնիւց, վը՛զնիւցնի
ապրշում>էօբրիւշիւմ, էօբրիւշիւմնի
եզր>իզիյք, իզիյքնի
մեզուանոց>մէզվիւնիւց, մէզվիւնիւցնի
ոջլոտ>իւջ՛լիւդ, իւջ՛լիւդնի
ականոց>ագնիւց, ագնիւցնի
սալոր>սալիւյ, սալիւյնի
թագաւոր>թագավիւյ, թագավիւյնի
ոսկր>իւսգիւյ, իւսգիւյնի
փոխանորդ>փիւխանիւյդ, փիւխանիւյդնի

վերջավանկում է ձայնավոր. հոգ. -նի.

ուսելիք>ուդիլէք, ուդիլէքնի
böyrek «մսով խմորեղեն»>բէօյրէք, բէօյրէքնի
խմելիք>խումիլէք, խումիլէքնի
bezr (արաբ.) «սերմ»>բիզէյ, բիզէյնի
կորկոտ>գիւյգիւդ, գիւյգէդնի
qadeh «բաժակ»>զադէհ, զադէհնի
asker>էսքայ, էսքէյնի
eyer «թամբ»> էյոյ, էյէյնի
զոքանչ (մայր)>զը՛քը՛չմոյ, զը՛քը՛չմէյնի
մէկ-այլ>մէգալ, մէգէլնի
sened «մուրհակ»>սէնէթ, սէնէթնի
հայելի>հիլէ, հիլէնի

վերջավանկում ու ձայնավոր. հոգ. -նա.

պատուղ>բօդուդ, բօդուդնա
մօրուք>մույուք, մույուքնա
բոլղուլ «ձավար», բոլղուլնա
suǰuq «շարոց»>սուջուխ, սուջուխնա
մաժուն>մաձուն, մաձուննա
որիզ>օռուզ, օռուզնա
ասպուր>արուլ, արուլնա
ճակուռ>ջօգուռ, ջօգուռնա

Այստեղ է պատկանում նաև՝

կօշիկ>գուշիք, գուշգունա

վերջավանկում ը ձայնավոր. հոգ. -ը՝.

հաւկիթ>հավգիթ, հավկրթնը՝
փխիկ>փը՝սը՝գ «կատու», փը՝սը՝գնը՝
ռուպ>օռուբ, ըռբը՝նը՝
bulqur>բօղուլ, բըղլը՝յնը՝
անդուկ>ասնդօգ, սը՝նդգը՝նը՝

վերջավանկում ը ձայնավոր. հոգ. -ցա.

ագռաւ>ագ՝ռօվ, ագ՝ռըվցա
աղբիւր>ախը՝բյ, ուխը՝բյնա
աղքատ>ախքօգ, ախքըգնա
բաղանիք>բ՝աղնըք, բ՝աղնըքնա
բաղեղ>բ՝աղէղ, բ՝աղըղնա
բամբակ>բ՝ամբօգ, բ՝ամբըգնա, բ՝ամբգընա
բանալիք>բ՝ալընք, բ՝ալըք, բ՝ալըքնա
վարսիք>վայդըք, վայդըքնա
եղջիւր>ախջ՝էյ, ախջ՝բյնա
շապիկ>շարըք, շարգընա
աւճառ>ավջօյ «լորի», ավջըյնա
ծաղիկ>ձաղըգ, ձաղգընա
ճակատ>ջագօգ, ջագգընա
շաքար>շանքօյ, շանքըյնա
պանիր>բանըյ, բանըյնա
անդուկ>ասնդօգ, սընդգընա
քաղաք>քաղօք, քախքընա
բերան>բ՝իյօն, բ՝ը՝յը՝ննա
մանգաղ>մանգօղ, մանգըղնա
արծաթ>այձօթ, այձըթնա
čavdar>չավդօր «հաճար», չավդըյնա
qaməš>զամըշ «եղեգ», զամըշնա
xaber>խաբօյ «լուր», խաբըյնա
šerbet>շայրօթ «օշարակ», շայրըթնա
qaraqəlčaq>զարաղըլչըխ «ցօրենի տեսակ», զարաղըլչըխնա

Ծանոթ.—Մրջիւն բառը, որ դառնում է մօռճօմ կամ մօռջ՛ոմ, հոգնակիում առանալով -ցա մասնիկը՝ դառնում է

ոչ թե մրուչըմնա, այլ մրուչընա, ուր մ-ն՝ հաջորդ ն գ-ականի հետ կրկնակ չհազմելու համար, ընկել է։ Այս երևույթը համապատասխանում է ճիշտ այն կանոնին, որով հոգնակիում, -ներ մասնիկը գործածելու դեպքում, կրկնակ ն-երից մեկը ջնջվում է։

վերջավանկում ա ձայնավոր. հոգ. նը.

լորի>լըվիյօս, լըվիյսանը
arag «օղի»>այօխ, այախնը
դմակ>դ՝օմօգ, դ՝մագնը
երկաթ>իյգօթ, իյգաթնը
աշխարհ>աշխօյ, աշխայնը
damar>դամօյ «երակ», դամայնը
tüfeng>թիֆօնք «հրացան», թիֆանքնը
silah>սիլօհ «զենք», սիլահնը
duzaq>դուզօխ «թակարդ», դուզախնը
kebeb>քէբօբ «խորոված», քէբաբնը
hisab>հէսօբ «հաշիվ», հէսաբնը
soqaq>սուխօխ «փողոց», սուխախնը
qaymaq>զօյմօխ «սեր», զըյմախնը
կռնակ>գօռնօգ, գըռնագնը
մկրատ>մօգյօգ, մըգյագնը

Բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերը կարող են նաև իրենց հոգնակին կազմել -ներ մասնիկով, որ համապատասխանում է գրական լեզվի -ներ վերջավորությանն, այն է՝ -ներ. օր.

երազ>իյօզ, իյազնիյ
երես>իյէս, իյեսնիյ
վարժապետ>վայժաբիդ, վայժաբիդնիյ
վարդապետ>վայդ՝արիդ, վայդ՝արիդնիյ
ոջլոտ>իւճլիւդ, իւճլիւդնիյ
աղուէս>աղվիս, աղվիսնիյ
աշխարհ>աշխօյ, աշխօյնիյ
լորի>լօվլօս, լօվլօսնիյ
վայտատ>փիդօգ, փիդագնիյ
գդակ>գ՝օդ՝օգ, գ՝ըդ՝ագնիյ
դիշեր>գ՝իշիյ, գ՝իշիյնիյ

եզը>իզի, իզիյք, իզիյքնիյ
երիկամն>իյգամ, իյգամնիյ
թեզանիք>թիզնէք, թիզնէքնիյ
մկրատ>մօգյօդ, մըգյադնիյ
ականջ>անգէջ, ը՛գը՛նջնիյ
գագաթն>գ՛ագ՛օթ, գ՛ագ՛ըթնիյ
խանութ>խանուէթ, խանուէթնիյ
հաւկիթ>հավգիթ, հավգըթնիյ
նապաստակ>լափուշդօգ, լափըշդգընիյ
մատնոց>մոգնիւց, մոգնիւցնիյ
լակոտ>լոգիւդ, լոգիւդնիյ
ճակատ>ջագօդ, ջագդընիյ
աղքատ>ախքօդ, ախքըդնիյ
աշակերտ>էշգիյդ, էշգիյդնիյ
բորոտ>բ՛իւյիւդ, բ՛իւյիւդնիյ
մայրապետ>մայյաբիդ, մայյաբիդնիյ
պղինձ>բը՛ղը՛նձ, բը՛ղը՛նձնիյ
տէրտէր>դէյդէյ, դէյդէյնիյ
շապիկ>շաբըք, շաբքընիյ
ոսկր>իւսգիւյ, իւսգիւյնիյ
պլուզ(իկ)՝ «աղեկ»>բը՛լը՛զդ, բը՛լը՛զդը՛նիյ
քուռակ>քուռօգ, քուռգուննիյ

Բացառութիւն է կազմում ձայնաւորով վերջացող դրացի>դ՛ըյացը՛ բառը, որ հոգնակիում լինում է դ՛ըյացընիյ. այսպես նաև Թրք. teneke «թիթեղ»>թէննէքէննիյ (տես վերը):

Ջրաղացք բառը առանալով ճաղօք ձևը, դառնում է հոգնակի ճախընընիյ (ց>ճ):

Եղուզ>օղուզ բառը ու ձայնաւորի կրկնութեամբ դառնում է հոգ. օղուզգուննիյ:

Այն բազմավանկ բառերը, որոնք վերջանում են ն բաղաձայնով, հոգնակիում թեև առանում են -նիյ մասնիկը, բայց կրկնակ -ն-երից մեկը ջնջվում է: Այսպես՝

անկողին>ուդունգան, ուդունգանիյ
ցորեան>ցիյին, ցիյինիյ
մաժուն>մաճուն, մաճընիյ
օղին «շրէշ խոտ»>ուդան, ուդանիյ
հօնդօսգօն «եգիպտացորեն», հընդըսգանիյ

առեպղին>ը՛սբը՛դը՛ն, ը՛սբը՛դը՛նիյ
չուան>չուվօն, չուվունիյ
պատուհան>բոդիւհիւն, բոդիւհիւնիյ
գաւազան>գ՛ավզօն, գ՛ավզընիյ
գերեզման>գ՛իյիզմօն, գ՛իյիզմանիյ
զնդան>զօնդօն, զընդանիյ
իշխան>իշխօն, իշխանիյ
շուշան>շուշօն, շուշանիյ
մուրացկան>մըյացգօն, մըյացգընիյ
մանրիկ>մանգըյգընիյ
ապարանջան>աբուռջօն, աբըռջընիյ
խալիզոն>խէօլիւզիւն, խէօլիւզիւնիյ
նշան>նիշօն, նիշանիյ
düman «մշուշ»>դումօն, դումանիյ
düšmen «թշնամի»>դուշմօն, դուշմանիյ
kelpetin «ագռաւ»>քէլփէթին, քէլփէթիննիյ
ayran «մածնաթան»>էյրօն, էյրընիր

Բացառութիւն են՝

դերձան>դ՛իյձ՛օն, դ՛իյձ՛աննիյ
բերան>բ՛իյօն, բ՛իյաննիյ

Այսպես նաև՝ աման>հոգ. ամբնաք, որ պիտի տեսնենք հետո:

Վերոհիշյալներից դուրս կա նաև -դք մասնիկը, որ մեծ մասամբ գործածվում է անձ ցույց տվող բառերի համար: Օր.

ալևոր>հալվիւյ, հալվիւյդմաք
բարեկամ>բ՛այ(ի)գօմ, բ՛այգըմդաք
աղջիկ>աշգէն, աշգընդաք
եղբայր>էխբ՛այ, էխբ՛ը՛յդաք, էխբ՛էյդաք
ընկեր>բ՛ընգիյ, բ՛ընգիյդաք
ժամկոչ>ժամգիւչ, ժամգիւչդաք
պլուզ «մանուկ»>բօլուզ, բը՛լը՛զդաք
կարիճ>գը՛դոբջ, գը՛դը՛ջդաք
տէրտէր>դէյդէյ, դէյդէյդաք
կնիկ>գը՛նը՛գ, գը՛նգըդաք
qəsəm>խը՛սը՛մ «ազգական», խը՛սը՛մդաք
asker>էսքայ «զինվոր», էսքէյդաք

emmi «հորեղբայր» > էմմի, էմմիդոք
քեռի > քէռա, քեռիդոք
կնքահայր > ընքաբօր, ընքաբօրդոք
կնքամայր > ընքէմայ, ընքէմայդոք

Քանի դեպքեր կան, երբ անշունչ առարկաներն էլ առնում են -դոք ձևով հոգնակի. ինչ.

պղինձ > բը՛ղը՛նձ, բը՛ղը՛նձդոք
բուրվառ > բ՛ը՛ռվառ, բ՛ը՛ռվը՛ռդոք
խոշոր > խիւշիւյ, խիւշիւյդոք
շամփուր > շամփուշ, շամփըշդոք
ռուբ > օռուբ, ը՛ռըը՛դոք
պիծակ > բիձիդ, բիձիդդոք
suǰuq «շարաց» > սուջուխ, սուջուխդոք

Երբ բառը վերջանում է դ (տ) բաղաձայնով, -դոք մասնիկը առանալու դեպքում կրկնակ դ-երից մեկը ջնջվում է. Այսպես ունենք՝

աղքատ > ախքօդ, ախքըդոք
աշակերտ > էշգիյդ, էշգիյդոք

Ծանոթ.—Այս -դոք մասնիկը ձևացած է գրաբարի -ախ հավաքական մասնիկից (մանկտի, ծակոտի, ոսկերոտի), որի վրա ավելացել է -ք հոգնակերտ մասնիկը, ճիշտ ինչպես -ներ, -ներք, -ներք:

Բաղաձայնով վերջացող բառերը կարող են իրենց հոգնակին կազմել նաև -ներք, -ներք, -ըրք, -ներք մասնիկներով, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ նախորդ -ներ, -ներ, -ներ մասնիկները + ք: Ըստ այսմ սրանք կրկնակ հոգնակի են, ինչպես հենց -ներ (որ կազմված է -ներ-եր հոգնակերտ մասնիկներից) և կամ երևանի բարբառի -էրք (օր. ադերք, աղջկերք, երեխերք), որ կազմված է էր-ք մասնիկներից:

Վերոհիշյալ 4 մասնիկները բաշխվում են ձայնավորների ներդաշնակության օրենքների համաձայն. Այսպես՝

-Ներք մասնիկը դրվում է այն բառերի վրա, որոնց վերջավանկի ձայնավորն է է, ի կամ իւ: Օր.

աղուէս > աղվիս, աղվիսներք
բըրիչ > փէյիչ, փէյիչներք
դիշեր > գ՛իշէյ, գ՛իշէյներք
աշակերտ > էշգիյդ, էշգիյդներք
ծածկոց > ձոձգիւց, ձոձգիւցներք
մորեխ > մը՛յէխ, մը՛յէխներք
մեղաւոր > մէղովիւյ, մէղովիւյներք
ոջլոտ > իւճլիւդ, իւճլիւդներք
ուխտաւոր > ըխդովիւյ, ըխդովիւյներք
պատկեր > բադգիյ, բադգիյներք
ոսկր > իւսգիւյ, իւսգիւյներք
վարդապետ > վայդ՛արիդ, վայդ՛արիդներք
վարպետ > բայրիդ, բայրիդներք
վարժապետ > վայժարիդ, վայժարիդներք
keleš «գեղեցիկ» > քէլոշ, քէլէշներք
erkeg «արու» > էյքոգ, էյքէյգներք
legen «կոնք» > լոգոն, լէգէններք
tembel «ծուլ» > թեմբոլ, թէմբէլներք
արաբ. nerǰis «նարգիս», > նը՛ոջէս, նը՛ոջէսներք
gayək «նավակ» > գայէխ, գայէխներք
badem «նուշ» > բադամ, բադէմներք
մհյ. կշոշ «հոտոց» > գիւշիւշ, գիւշիւշներք

Սրանց հակառակ ծանր ձայնավոր (ա, ու) ունեն հետևյալ երկու բառերը.

նշխար > նէշխոյ, նէշխայներք
mektub «նամակ» > մէքթուբ, մէքթուբներք

Ծանոթ.—խալիզոն > խէօլիզիւն բառը հոգնակիում առնում է -ներք, -ներ մասնիկները, երկուսն էլ սկսում են ն բաղաձայնով, որ խալիզոն բառի վերջաձայնի հետ կազմում է կրկնակ. Այս դեպքում երկու ն-երից մեկը ջնջվում է և առացվում է հոգնակի խէօլիզիւներ կամ խէօլիզներք (վերջինը՝ փոխանակ խէօլիզիւններք):

-Նաք հոգնակերտ մասնիկը դրվում է այն բառերի վրա, որոնց վերջավանկի ձայնավորն է ը, ու, օ:

emmi «հորեղբայր» > էմմի, էմմիդոք
քեռի > քէռա, քեռիդոք
կնքահայր > ընքաբօբ, ընքաբօրդոք
կնքամայր > ընքէմայ, ընքէմայդոք

Բանի դեպքեր կան, երբ անշունչ առարկաներն էլ առնում են -դոք ձևով հոգնակի. ինչ.

պղինձ > բը՛ղը՛նձ, բը՛ղը՛նձդոք
բուրվառ > բ՛ը՛ռվառ, բ՛ը՛ռվը՛ռդոք
խոշոր > խիւշիւյ, խիւշիւյդոք
շամփուր > շամփույ, շամփըյդոք
ռուբ > օռուբ, ը՛ռըբ՛դոք
պիծակ > բիձիդ, բիձիդդոք
suǰuq «չարոց» > սուջուխ, սուջուխդոք

Երբ բառը վերջանում է դ (տ) բաղաձայնով, -դոք մասնիկը առանձալու դեպքում կրկնակ դ-երից մեկը ջնջվում է. Այսպես ունենք՝

աղքատ > ախքօդ, ախքըդոք
աշակերտ > էշգիյդ, էշգիյդոք

Ծանոթ.—Այս -դոք մասնիկը ձևացած է գրաբարի -ալ հավաքական մասնիկից (մանկտի, ծակոտի, ոսկերոտի), որի վրա ավելացել է -ք հոգնակերտ մասնիկը, ճիշտ ինչպես -ների, -ներաք, -ներոք:

Բաղաձայնով վերջացող բառերը կարող են իրենց հոգնակին կազմել նաև -ներաք, -ներոք, -ներք, -ներիք մասնիկներով, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ նախորդ -ներ, -ներ, -ներ մասնիկները + ք. Ըստ այմ սրանք կրկնակ հոգնակի են, ինչպես հենց -ներ (որ կազմված է -ներ-եր հոգնակերտ մասնիկներից) և կամ երևանյան բարբառի -էրք (օր. ոտերք, աղջկերք, երեխերք), որ կազմված է -եր-ք մասնիկներից:

Վերոհիշյալ 4 մասնիկները բաշխվում են ձայնավորների ներդաշնակության օրենքների համաձայն. Այսպես՝

-Նիք մասնիկը դրվում է այն բառերի վրա, որոնց վերջավանկի ձայնավորն է է, ի կամ իւ: Օր.

աղուէս > աղվիս, աղվիսնիք
բրիչ > փիյիչ, փիյիչնիք
գիշեր > գ՛իշիյ, գ՛իշիյնիք
աշակերտ > էշգիյդ, էշգիյդնիք
ծածկոց > ձոձգիւց, ձոձգիւցնիք
մորեխ > մը՛յէխ, մը՛յէխնիք
մեղաւոր > մէղովիւյ, մէղովիւյնիք
ոջլոտ > իւճլիւդ, իւճլիւդնիք
ուխտաւոր > ըխդովիւյ, ըխդովիւյնիք
պատկեր > բադգիյ, բադգիյնիք
ոսկր > իւսգիւյ, իւսգիւյնիք
վարդապետ > վայդ՛արիդ, վայդ՛արիդնիք
վարպետ > բայրիդ, բայրիդնիք
վարժապետ > վայժարիդ, վայժարիդնիք
keleš «գեղեցիկ» > քէլոշ, քէլէշնիք
erkeg «արու» > էյքոգ, էյքէյգնիք
legen «կոնք» > լոգոն, լէգէննիք
tembel «ծուլ» > թեմբոլ, թէմբէլնիք
արաբ. nerǰis «նարդիս», > նը՛ռջէս, նը՛ռջէսնիք
gayak «նավակ» > գայէխ, գայէխնիք
badem «նուշ» > բադամ, բադէմնիք
մհյ. կշոշ «հոտոց» > գիւշիւշ, գիւշիւշնիք

Սրանց հակառակ ծանր ձայնավոր (ա, ու) ունեն հետևյալ երկու բառերը.

նշխար > նէշխօյ, նէշխայնիք
mektub «նամակ» > մէքթուբ, մէքթուբնիք

Ծանոթ.—խալիզօճ > խէօլիզիւճ բառը հոգնակիում առնում է -ներք. -նիյ մասնիկները. Երկուսն էլ սկսում են ճ բաղաձայնով, որ խալիզոճ բառի վերջաձայնի հետ կազմում է կրկնակ. Այս դեպքում երկու ճ-երից մեկը ջնջվում է և առացվում է հոգնակի խէօլիզիւճնիյ կամ խէօլիզիւճներ (վերջինը՝ փոխառնակ խէօլիզիւճնիւք):

-Նաք հոգնակերտ մասնիկը դրվում է այն բառերի վրա, որոնց վերջավանկի ձայնավորն է ը, ու, օ:

արդար>այդ՛օյ, այդ՛ըյնաք
աղքատ>աղքօգ, աղքըդնաք
արծաթ>այձօթ, այձըթնաք
բաղեղ>բ՛աղէղ, բ՛աղըղնաք
գաւակ>գ՛ավօգ, գ՛ավգընաք
աման>ամօն, ամընաք
գաւազան>գ՛ավզօն, գ՛ավզընաք
գոմէշ>գ՛ումէշ, գ՛ումշունաք
ծաղիկ>ձաղըգ, ձաղգընաք
թրթուր>թօյթուլ, թօյթուլնաք
կախարդ «դուլլ»>գախօնդ, գախընգնաք
համար «դաս»>համօյ, համըյնաք
ճակատ>ջագօգ, ջագգընաք
մանգաղ>մանգօղ, մանգըղնաք
պղինձ>բը՛ղը՛նձ, բըղընձնաք
սկեսուր>օսկօսուլ, օսկօսուլնաք
davul «թմբուկ»>դավուլ, դավուլնաք
čekiǰ «մուրճ»>չաքուչ, չաքուչնաք
yaγlәq «թաշկինակ»>աղլըխ, աղլըխնաք
portuqal «նարինջ»>փըյթախօլ, փըյթախըլնաք
շապիկ>շաբըգ, շաբըգնաք
պատառ>պատօր, բատգընաք
մրջիւն>մօղ՛օմ մօղ՛օմնաք

Այստեղ էլ ն-ի կրկնութեան դէպքում մեկը կորչում է, ինչ.
անկողին>ուղունկան, ուղունկունաք

-Նըք դրվում է այն բառերի վրա, որոնց վերջավանկի ձայնավորն է ա. ինչ.

աշխարհ>աշխօյ, աշխայնըք
պայտառ>փիդօգ, փիդագնըք
բերան>բ՛իյօն, բ՛իյաննըք
գդակ>գ՛օգօգ, գ՛ըգագնըք
երիկամն>իյգամ, իյգամնըք
մկրատ>մօգյօգ, մըգյագնըք
մշակ>մուշօգ, մըշակնըք
ուրագ>ույօք, ույաքնըք

qurban «զոհ»>զուլըօն, զուլրաննըք
ǰellad «դահիճ»>ջէլլօթ, ջէլլաթնըք
solaq «թևզանիք»>սըլաքնըք

-Նոք մասնիկը դրվում է այն բառերի վրա, որոնց վերջավանկի ձայնավորն է ի, իւ, է. ե.

անխելք>անխիլք, անխիլքնոք
աջակերտ>էշգիյդ, էշգիյդնոք
բորոտ>բ՛իւյիւդ, բիւյիւգնոք
ուտող>ուդէօղ, ուդէօղնոք
լակոտ>լոգիւդ, լոգիւդնոք
ագռաւ>ոձիւխ, ոձիւխնոք
աթոռ>ոթէօռ, ոթէօռնոք
փոխնորդ>փիւխնիւյդ՛, փիւխնիւյդ՛նոք
ոսկր>ոսկոր>իւսգիւյ, իւսգիւյնոք
մեղուանոց>մէղվիւնիւց, մէղվիւնիւցնոք

Այն բարդ բառերը, որոնց երկրորդ եղրը միավանկ է, հոգնակիում կարող են առանձնալ միավանկներին հատուկ -իյ մասնիկը, կամ երբեմն էլ՝ բազմավանկներին հատուկ -ճիյ մասնիկը. ինչ.

մօրաքոյր>մուլքիյ, մուլքիյիյ
հօրաքոյր>հուլքիյ, հուլքիյիյ
մայրապետ>մայյաբիդ, մայյաբիդնի, մայյաբիդնիյ, մայյաբիդնաք
կնքահայր>գնքաբօբ, գնքաբաբիյ
արդարեղ>այդ՛օյէղիյ
զոքանչ>զըքընչմէյիյ
սանամայր>սէնէմօյ, սէնէմէյիյ
վարժապետ>վայժաբիդ, վայժաբիդնի(յ)
պագաղ=լոշիդ («դիակի փայտ»), լէշփէդիյ կամ լէշփեդնիյ
սկեսրայր>օսգօսուլբօբ, օսգօսուլբաբիյ

Թեև վերևում մենք գրինք զանազան կանոններ հոգնակիի կազմութեան համար, բայց դրանցից հատատուն է միայն միավանկ բառերի կանոնը և սակավ բացառութեամբ՝ նաև ձայնավորով վերջացող բառերի կանոնը. Մնացյալները բացարձակ չեն. Ջեյթունի բարբառում դեռ չի կազմակերպված հոգնակիի կազմութեան համար բացարձակ մի կանոն, ինչպես արդի գրակա-

նում ունենք, և միևնույն բառը կարող է բազմաթեսակ ձևեր ընդունել: Այսպես, օրինակ՝

աշակերտ>էշգիյդ, էշգիյդնոք, էշգիյդնիք, էշգիյդնիյ, էշգիյդոք
աղքատ>ախքօդ, ախքըդնոք, ախքըդաք, ախքըդնիյ, ախքըդնա. մինչև անգամ՝ ախքիւդնոք
ոսկր>իւսգիւյ, իւսգիւյնոք, իւսգիւյնիք, իւսգիւյնիյ
շապիկ>շաբըք, շաբըքնոք, շաբքընա, շաբքընիյ
պղինձ>բը՛ղը՛նձ, բը՛ղը՛նձնոք, բը՛ղը՛նձնիյ, բը՛ղը՛նձոք
ճակատ>ջագօդ, ջագդընա, ջագդընիյ, ջագդընոք
լակոտ>լոգիւդ, լոգիւդնի, լոգիւդնիյ, լոգիւդնոք
աղուէս>աղվիս, աղվիսնիք, աղվիսնիյ, աղվըսնոք
աշխարհ>աշխօյ, աշխայնըք, աշխայնը, աշխայնիյ
բերան>բ՛իյօն, բ՛իյաննըք, բ՛ը՛յը՛ննա, բիյաննիյ
մկրատ>մօգյօդ, մըգյագնըք, մըգյագնիյ, մըգյագնոք
ոջլոտ>իւճլիւդ, իւճլիւդնիք, իւճլիւդնա, իւճլիւդնիյ
վարժապետ>վայժարիդ, վայժարիդնիյ, վայժարիդնիք, վայժարիդնա
քուռակ>քուռօգ, քուռգունոք, քուռգունի, քուռգունիյ, քուռգունիք

Ես մեջ բերի միայն այն բառերը, որոնք մինչև երեք ձև հոգնակի ունեն. իսկ երկու ձև ունեցող բառերը շատ ավելի են: Նույնիսկ ձայնավորով վերջացող մի բառ կարող է առանալ հոգնակիում -նի, ինչ. հայելի>հիլլէ, հիլլէնի:

Այս բոլորից դուրս Զեյթունի գավառականում կան հետևյալ բացառիկ ձևով հոգնակիները.

մարդ>մօյդ՛, մայդ՛ըք
ձի>ձ՛ը, ծը՛, ծիխատանք, ձ՛խատոնք
էշ>էշ, իշվիք
այծ>ոձ, էձվաք
շուն>շուն, շը՛նվը՛ք
տուն>դուն, դը՛նվաք, դը՛նվը՛ք
գետին>գ՛իդէն, գ՛իդէնք
քոյր>քիյ, քը՛յվը՛դոք
տեղի>դեղ, դէղվանք, դէղվը՛նը՛
փը՛սը՛գ «կատուս, հոգ. փըսգը՛վը՛նը՛ք

Անկանոն հոգնակիների մի ուրիշ շարք են կազմում այն բառերը, որոնք առանում են -ներ մասնիկը, ինչ.

քաղաք>քաղօք, քախքէք
գետին>գ՛իդէն, գ՛իդնէք
դանակ>դ՛անօգ, դ՛անգէք
տղայ>դօղօ, դէղոք

Ունենք վերջապես՝

պոկունք «շրթունքներ»>բը՛ագընիյք, որ առաջանում է պոկընիրք ձևից, ուր հավաքված են երեք հոգնակի մասնիկներ՝ նի, եր-ք:

Հետաքրքրական են լաք, բեխ և կոպ բառերը Զեյթունի գավառականում: Լաք բառը «շորի կտոր» իմաստով, իբրև միավանկ բառ, հոգնակիում լինում է լաթիյ: Բայց լաթիյ նշանակում է նաև «դգեստ» և այս իմաստով լաթիյ համարվում է եզակի և նրա հոգնակին լինում է լաթիյնեք «դգեստներ»:

Սրա նման նաև բեխ, որ չի գործածվում եզակի ձևով, այլ միշտ հոգնակի բեխիյ ձևով, ըստ որում բեխը երկու բաժանմունք ունի և ինքնին անեզական է: Բայց երբ հարկ է լինում մի քանի մարդկանց բեխերի մասին խոսել, հոգնակին լինում է բեխիյնաք, բեխիյնիք կամ բեխիյդաք, բեխիյնի:

Նույնն է նաև կոպ բառը, որ զույգ լինելու պատճառով ասվում է գիբիյքնի, հոգնակին լինում է գիբիյքնիյ:

Վանի բարբառում միավանկ բառերի հոգնակին կազմվում է -եր մասնիկով. ինչ՝

հաց>խաց, խացեր
հող>խող, խողեր
լոյս>լոս, լոսեր
ոսպն>վոսփ վոսփեր
այժ>վոժ, վոժեր
խաղ>խաղ, խաղեր
կոյ>կու, կույեր
որձ>վոց, վոցեր
աղբ>ախփ, ախփեր
արջ>առչ, առչեր
ափ>ափ, ափեր
ափն>ափ, ափեր (գետի)
հաւ>խավքյ, խավքյեր «թքուչուններ»
ձիւն>ծիւն, ծներ
սիւն>սուն, սներ
շուն>շուն, շներ
տուն>տուն, տներ
տալ>տալվ, տալվեր
գայլ>կյէլ, կյէլէր
լու>լիւ, լվեր
ձու>ծիւ, ծվեր

Այն բառերը, որ գրաբարում ունեն վերջածայն ն հանգր, հոգնակիում կարող են վերստանալ նույն հանգը. օր.

ափն «ձեռքը» > ափ, ափնիք, ափներ
ոչխն (ջրի) > ակ, ակներ, ակունքի
եզն > եզ, եզներ
գառն > կյուռ, կյուռներ
հարս > խարս, խարսներ
դուռն > դուռ, դռներ
մուկն > մուկ, մկներ
ձուկն > ձիւկ, ձկներ
հիւսն > խուս, խներ
նուռն > նուռ, նռներ
մատն > մատ, մատներ

Նույնիսկ այլ կարգի բառեր կարող են այս ձևով հոգնակի կազմել, ինչ.

Թումբ > Թիւմբ, սեռ. Թմբոն, բց. Թմբնից, Թմբներ։

Միավանկ բառերի ծայրին կարող են երբեմն Թե ը, և Թե -եր մասնիկները միասին երևալ. ինչ.

ձեռք > ձեռ, ձեռքի, ձեռքեր (չկան ձեռներ և ոտներ ձևերը)
ոտն > վոտ, վոտքեր կամ վոտկեր

Միավանկ աչք բառը ստացել է ը ձայնավորը, դարձել է երկավանկ և ըստ այսմ ստացել է հոգնակիի -ներ մասնիկը (աչկներ)։ Բայց բարբառը զանազանում է աչկեր (տեսանելիք) և աչկներ (պատի վրա գարակները և այլն)։ Սրա նման ունենք ակընջկներ «ականջներ», մատկեր, մատկներ «մատներ», որոնց կը մասը կարծեմ Թե գրաբարի ը հոգնակերտ մասնիկն է։ Այս բանը հայտնի երևում է մեչկներ բառից, որ նշանակում է «մեջերին, նրանց մեջ»։

Ամեն բազմավանկ բառ, որ վերջանում է բաղաձայնով (բացի ն-ից), հոգնակին կազմ ում է -ներ մասնիկով. ինչ.

լակոտ > լակոտ, լակոտներ
կարիճ > կարիճ, կարիճներ
Թագաւոր > Թակավոր, Թակավորներ
կաքաւ > կաքյավ, կաքյավներ, կաքյվներ
արև > արիվ, արիվներ
եղբայր > ախպէր, ախպէրներ

Բազաձայնը կարող է միանալ -ներ մասնիկի հետ նաև -վը- մասնիկով. ինչ.

ամառն > ամառ, ամառվրներ կամ ամբուվրներ
ցերեկ > ցերէկ, ցերէկվրներ

Միավանկ լինելու պատճառով ծուռն բառը այս դեպքում դառնում է հոգ. ծռյվներ, ծիյվներ։

Այս պարագային, եթե բազմավանկ բառը վերջանում է կ բաղաձայնով և նրանից առաջ կա ձայնավոր, այդ կ-ն վերածվում է յ-ի. ինչ.

ադամանդ > յէդումնդիկ, յէդումնդիյներ
ադեղնակ «ծիսածաղկ» > անանակ, անանայներ
բարակ > պարակ, պարայներ
մատանի > մատնդիկ, մատնդիյներ
այր > իրիկ, իրիյներ

Բայց կարող է նաև ը ձայնավորով կապվել -ներ մասնիկի հետ. ինչ. կռիկ «ագռավ», կռկըներ։

Այսպես է նաև, երբ բառը վերջանում է գյ. ինչ.

արմուկն > արմունգ, արմընկներ
եղունգն > յեղունգ, յեղընկներ
կրունկ > կրունգ, կրընկներ

Եթե բազմավանկ բառը վերջանում է քյ բաղաձայնով, այդ քյ դառնում է ճյ. ինչ.

ադաչանք > ադաճանք, ադաճանճյներ
արտասուք > առտսունք, առտսունճյներ
առիք > առիճ, առիճյներ
բարեկենդան > պարկէնդանք, պարկէնդրճյներ

Ամեն մի բազմավանկ բառ, որ վերջանում է ձայնավորով կամ ն բաղաձայնով, հոգնակիում առանում է -ճյաներ մասնիկը, որ առաջանում է -քառեր ձևից. օր.

գինի > կյինի, կյինիճյաեր
հոգի > խոկյի, խոկյիճյաեր
խարխիզ «խարխնձի» > խարխիզէճյաեր
խուրուղու > խուրուղու, խուրուղուճյաեր
գերեզման > կյէրէզման, կյէրէզմիճյաեր
մատան > մատան, մատանճյաեր

Բացառիկ ձևեր են՝

անկողին > գյօղվէնք, գյէօղվէնճյաեր
ճանապարհ > ճամբու, ճամբիճյաեր
թոնիր > թօնէր, թօրվիճյաեր (նաև՝ թօրվըյանք)

Միավանկ բառերը բնականաբար իրենց հոգնակին կազմում են առաջին ձևով.

ձայն>ձէն, ձէններ, ձի>ձի, ձիւեր, նաւ>ձի. բառը հոգնակիում լինում է խավիծվեր, բայց նաև՝ խավիծիւր և խավիծվներ, խավրծվրներ:

Մեկ բացառություն է կազմում կին բառը, որի հոգնակին լինում է կիհյաներ, կրհյաներ, այսպես նաև կին բառով բարդված բառերը. ինչ.

առնաիկին>առնդրկին, առնդրկրհյաներ
տագերակին>տէկիէրկին, տէկիէրկրհյաներ
քեռակին>քեռկին, քէռկրհյաներ

(Այս վերջին կետի մասին տես առաջև):

-հյաներ ձևի փոխարեն կա նաև -քյաներ ձևը, ինչ. պէրրնքյաներ «բերաններ», թրք. դիւշմընքյաներ «թշնամիներ»:

Երբ միավանկ բառը բարդվելով կազմի բազմավանկ բառ, կենթարկվի վերի օրենքին. ինչ.

առնաշէն-առնաշէնհյաներ
ժամառուն-ժամառընհյաներ

Ա (ա) վերջացող բառերը հոգնակիում այս վերջավորությունը դարձնում են -եք, այն է՝ գրբ. -այք>եք, օր.

կասկարայ>կասկարա, կասկարէք
կրեայ>կըրըրա, կըրըրէք
առառանայ>առառանա, առառանէք
խարխիզա «խարխնծի»>խարխիզէք
բակլայ>բայլա, բայլէք
փէսայ>փէսա, փէսէք
ագուգայ>ակյուկյա, ակյուկյէք
ակռայ>ակռա, ակռէք
շուշփայ>շուշփա, շուշփէք

Այսպես նաև օտար բառերը. ինչ.

չանգյա «ծնոտ», չանգյէք
փոչա «առուիկ, խաչ», փոչէք
ալուչա «շլոր», ալուչէք
փէնջռրա «պատուհան», փէնջռրէք
մախառնա «քեւլի կոճ», մախառնէք
մուշուբրա «ջրի մեռած բան», մուշուբրէք
քյէօշա «անկյուն», քյէօշէք
ֆասուլյա «լոբի», ֆասուլյէք
կռա «խակ սեխ», կռէք
քյըռա «քարքարուտ», քյըռէք

Այս բառերը կարող են նաև հոգնակի դառնալ առանալով -հյաներ մասնիկը, որ եք-ի-աեր մասնիկների գումարն է. այսպիսով կունենանք եոյակ հոգնակի՝ եք+ա+եր:

Միայն տղայ>տղա բառն է, որ չունի տղհյաներ ձևը և լինում է տղեք՝ կամ տղեյներ (վերջինը՝ փոդաքշական տղեկ ձևից):

Հետաքրքրական է անկողին բառը իր տարօրինակ ձևափոխություններով: Այս բառը նախ՝ զրկվելով իր նախավանկից, դարձել է գյօղվեճքյ, առանալով «անկողիններ ծալք» իմաստը. (պարզ անկողիններ այժմ անշնորհք ձևով կոչվում է տեղիվ «տեղի չուլ՝ փռաս»): Այս գյօղվեճքյ բառը ըստ կանոնի դառնում է հգ. գյօղվեճճաեր, բայց ճ-ի անկումով՝ նաև գյօղվեհյաեր. այս դեպքում ենթարկվել է նաև հգ. գյօղվեքյ (օր. գյօղվեքյ հրմէն թալանիցին տարան «բոլոր անկողինները թալանեցին տարան»): Բայց գյօղվեքյ ձևը կազմվելուց հետո՝ կարծել են բնականաբար, որ եզակին է գյօղվա, որ այժմ ավելի գործածական ձև է, քան գյօղվեճքյ:

Ի վերջացող բառերը իրենց հոգնակին կազմում են -քյ մասնիկով, բայց կարող են նաև նույն -քյ-ի վրա ավելացնել նաև -տեր մասնիկը, որով ամբողջը դառնում է -հյաեր — օր.

ոսկի>վոսկի, վոսկիքյ, վոսկիհյաեր ուտի>ուտի, ուտիքյ, ուտիհյատեր
որթի>վորթի, վորթիքյ, վորթիհյատեր
ջորի>ճորի, ճորիքյ, ճորիհյատեր.
առնի>առնի, առնիքյ, առնիհյատեր

Նաև օտար բառեր.

խալի «գորգ», խալիքյ, խալիհյաեր
գյումի «նավ», գյումիքյ, գյումիհյաեր

Ի վերջացող բառերը կարող են նաև ջնջել վերջաձայն ի ձայնավորը և ավելացնել -ներ մասնիկը. այս դեպքում եթե վերջին բաղաձայնն է կ, դառնում է յ. ինչ. որբևայրի>վորպևօվերի, վորպևօվերներ, կիրակի>կիրակի, կիրայներ:

Ու կամ իւ ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը իրենց հոգնակին կազմում են -քյ մասնիկով. բայց կարող են առանալ նաև -տեր կամ -ներ մասնիկը, որի հետ կապվում են վր-ով. այսպես են՝

ածու>ածու, ածուքյ, ածվըներ, ածըվեր
առու>առու, առուքյ, առվըներ
թթու>թթիւ, թթիւքյ, թըթվըներ
լեզու>լէզիւ, լէզիւքյ, լէզվըներ
կատու>կատու, կատուքյ, կատվըներ
կծու>կծուհյտեր, կծվըներ
քաոթու>քյաոթու, քյաոթուքյ, քյաոթուհյտեր
բու>կոր-պիւ, կոր-պիւքյ, կոր-պիւհյտեր

Բացի այս կանոնավոր և սովորական ձևերից, վանի բարբառը գիտե նաև մի խումբ ուրիշ հոգնակի մասնիկներ, որոնք գրաբարի կամ միջին հայերենի ճեացորդներ են, ընդհանուր գործածություն չունեն բարբառում, և նրանց հետևում են միայն սակավաթիվ բառեր։

Այսպես են՝

-երեքյ.—սուրբ>սուրբի, սրփերէնքյ (այժմ արդեն անգործածական)։

-եստար.— այգի>էկյէստար, սատանայ>սատանայեստար (թեև կան նաև սատանէքյ և սատանէհյտար կանոնավոր ձևերը)։

-աճքյ.— ձի>ձի, ծիանքյ (որ և կրկին հոգնակի դառնալով՝ լինում է ծիանհյտեր), ջոջ>ճոճանքյ (սովորական գրված է՝ ճոճանց խոբար կա «հնավանդ խոսք»)։

-վանքյ.— էշ>էշ, իշվանքյ. կոր>կոր, կորվանքյ (սրանք լինում են նաև՝ -վանհյտեր), տէր>տէր, տիրվանքյ, նաև՝ գյուղերում ենամեվուճք (ու ձայնավորով) «այն տեղերը»։

-սատանք, տանքյ.— տանիք>տանիս, տանըստանքյ, փողան «փողոց»>փողընատանքյ.— չէօլ>չէօլըստանքյ.— գոմէշ>գյէոմէշ, գյէօմըշտանքյ.— թոնիր>թօնէր, թօրվըյտանքյ.— կնքաւոր>քյավոր, քյավորդանքյ.— քեռի>քյեռի, քյեռըստանքյ։

-րանքյ.— տեղի>տեղ, տեղրանքյ.— դեհ>դեհ «կողմ», դեհրանքյ.— դեղ>տեղ, տեղրանքյ «դեղորայք», գիւղ>կյղի, կյղերանքյ «գյուղորայք», կող>կող, կողրանքյ. սրանք լինում են նաև տեղրանհյտեր, տեղրանհյներ, տեղերանքյ և այլն։

-տար.— գոմէշ>գյէոմէշ, կյէօմըշտար (գյուղերում). նաև՝ ճամիհյտար «ճանապարհներ»։

-վեր.— ջիղ>ճեղ, ճեղվեր.— յօնք>ունքյ, ընքյվեր, ճանկ>ճանգյ, ճայվեր, ծունկ>ծունգյ, ծըյվեր, ծիյվեր, անուք>

հիւնք, հընքեր, հընքվեր, լինդ>լինդ, լընդվեր, ծիծ>ծիծ, ծծվեր, նույնիսկ՝ թրք. čok բառից՝ չէօքյվեր կամ չէօճյվեր «ծնկիներ», որի դեմ գյուղական բարբառում գտնում ենք շրջված ձևով քոչվեր «ծնկիներ» (Լալայան, Վասպուր., 1912, 144). ինչպես տեսնում ենք, այս բոլորը մարմնի մասեր են։

Ավելի անսովոր ձև է՝ ճոչաղէքյտեկ՝ «մեծ ազաներ», որի սեռականն էլ լինում է ճոչաղէքյտեկաց։ Այստեղ հոգնակիի մասնիկն է (բացի -էքյ մասնիկից) նաև -տեկ. նույնը գտնում ենք աղէկտեկաց գյուղական ձևի մեջ։ Ուրիշ են տղէկյճեկաց, տղէյճեկաց ձևերը, որոնց մեջ ճեկ<*ճեակ փաղաքշական մասնիկ է։

Այն բոլոր բառերը, որոնք հոլովմանն ժամանակ սղման են ենթարկվում, հոգնակիի մեջ էլ նույն սղումը պահում են. ինչ.

աղիւս>օղիս, սեռ. օխսի, օխսըներ
աշակերտ>աշկեռտ, աշկըռտներ
աւել>ավել (ավլելու), ավըլներ, բայց և՝ ավիլներ
քացախ>քյացախ, քյացխըներ
շաղգամ>շոխկյամ, շոխկյընիներ
շաղտաղուկ «գեղձ», շըռտաղկըներ
քյաղախիկ «բրդե կարճ շոր», քյաղախկըներ
դէօշակ «ներքնակ», դէօշկըներ
գրտնակ>կյըռտնակ, կյըռտընկներ
ջրաղաց>ճաղաց, ճաղչի, ճաղչըներ, ճաղցըներ
աներ>աներ, անըրներ
ամիս>ամիս, ամըսներ
գիշեր>կիշեր, կիշըրներ
աղեղն>անեղ, անըղներ
մարգարիտ>մարկյըրիտ, մարկյըրտներ

Սղումը կարող է տեղի ունենալ երկու ձևով. սղված ձայնավորի փոխարեն դրված ը ձայնավորը կարող է դրվել բառի վերջաձայն բաղաձայնից թե առաջ, և թե վերջը. օր.

աղիւս>օղիս, օխսըներ, օղրներ
քացախ>քյացախ, քյացխըներ, քյացըխներ
առիք>առիքյ, առիհյներ, առքյըներ
առնիք>առնիս, առնսըներ, առնքներ
անուն>անուն, անվըներ
մկրատ>մկրատ, մկրըտներ

Ըստ այսմ այն բառերը, որոնք վերջանում են -իկ, հոգնակիում սրման պատճառով ստանում են -իյ կամ -կը ձևը. ինչ.

բոպիկ>պէօպիկ, պէօպիյներ, պէօպիկներ
ագռաւ>կռիկ. կռիյներ, կռիկներ
ագաւնի>յէղունիկ, յէղունիյներ, յէղունիկներ

Սրման ժամանակ, երբ բառամիջի -կյ կամ -ցկյ բաղաձայնի մաս ընկնի՝ կդառնա հյ, յ. ինչ.

գոգաթն>կյոկյոթ կյոհյթներ
գանգատ>կյոնգյոտ, կյոյոթներ (որ և՝ կյոնգըտներ)

Երբ սրման պատճառով մի քանի բաղաձայն խճողվին -ներ մասնիկից առաջ, հնչման հեշտության համար ներմուծվում է մի ավելորդ ը. ինչ.

ագրուկ>ագրուկ, ագըրկներ
անէծք>անէծք, անէծկներ
ձմեռուկ>ձմրիւկ, ձմըրկներ

Սրման զարմանալի մի ձև ներկայացնում են և վերջացող բառերը, որոնց մեջ ոչ միայն ձայնավորը կրճատվում է, այլև և բաղաձայնը ջնջվում է հոգնակիի մասնիկից առաջ. Այսպես՝

գետին>կյէտին, կյէտըհյոանք
կարկատան>կարկըտան, կարկըտիհյաներ
ջրյորդան>ճոռթան, ճոռթիհյաներ
գիւղական>կյեղական, կյեղակիհյաներ
պատինճան>պատընջան, պատընջըհյաներ, պատընջիհյաներ
սապոն «օճառ», սապոհյաներ
մրոջան «բուստ», մրոջըհյաներ
անուն>անուն, անունհյաներ, անըհյաներ
աման>աման, ամըհյաներ
բերան>պէրան, պէրըհյաներ
qazan>կազան «կաթսա», կազիհյաներ

Կարևո բարբառում հոգնակին կազմվում է՝ -եր, -ներ -ստաե = սաաե, -ք, -իք, -դիք, -վըդիք, -վի, -վըներ, -աներ, -դաներ, -աներ, -էնք, -օնք մասնիկներով։

Գոյականների մեծ մասը ստանում են -եր, -ներ հոգնակերտները։ Միավանկ բառերը ստանում են -եր, բազմավանկ բառերը՝ -ներ, ինչպես՝ հավ-հավեր, քօղ-քօղեր, քուշ-քըշեր, կուժ-կըժեր, կով-կովեր, լու-լըվեր, ախչիկ-ախչըկներ, խընձօր-խընձօրներ, հալաֆ-հալվըներ, կադու-կադվըներ։

Այն միավանկ բառերը, որոնք գրաբարում ունեցել են արմատական վերջահանգ ն, հոգնակիում ունեն -ներ, ինչպես՝ մուկն-մուգ-մըգներ, հարսն-հարս-հարսներ, դուռն-դուռ-դրներ, քոռն-քօռ-քօռներ, լեռն-լէռ-լէռներ, մատն-մատ-մատներ։ Բայց և կան այնպիսիները, որոնք ստանում են -եր, ինչպես՝ ուլն-ուլ-ուլեր, կաթն-կաթ-կաթեր։ Մի քանի միավանկ բառեր անալոգիայով ստանում են -ներ հոգնակին, ինչպես՝ ծառ-ծառներ։

Մեկուկես վանկանի բառերը ստանում են -ներ, ինչպես սանր-սանդր-սանդրներ, մանդր-մանդրներ, տէքըր-տեքըրներ (նաև՝ տէքըրդիք)։ Այս կանոնից բացառություն է կազմում ատամ-ատխ-ատխեր։

Գրաբարում ք հոգնակի ունեցող բառերը Կարնո բարբառում չեն գիտակցվում իրրև հոգնակի և նորից ստանում են պահանջված -եր կամ -ներ մասնիկները, ինչպես՝ ոտք-վօդքեր, պարտք-պարդքեր, արտասուք-յարդըսունքներ, բամբասանք-բամբասանքներ։

-իք, -դիք -վըդիք մասնիկներն են ստանում հետևյալ գոյականները. աման-ամիք, մարթ-մարթիք, կընիդմարթ-կընիդմարթիք, ախպար-ախպէր, ախպարդիք-ախպըրդիք, կընիդ-կընդիք, խընամի-խընամդիք, տէքր-տէքըրդիք, տէր-տիրվըդիք (նաև՝ տիրվըդանք), քուր-քուրվըդիք, տալ-տալվըդիք։

Սրանք հոգնակի սեռականում ստանում են -օց, ինչպես՝ ամիօց, մարթօց, ախպըրդօց, կընդդոց, խընամդօց, տէքըրդօց, քուրվըդօց, ախպըրդօց։

-վի, -վըներ մասնիկները գոյթ են ածվում Ախալցխեում և Ախալքալաքիում։ Մեծ մասամբ այս մասնիկները ստանում են մարմնի զույգ անդամներ ցույց տվող բառերը, ինչպես՝ վօդ-վօդվի, վօդվըներ, ձէռք-ձէռվի, ձէռվըներ, ունք-ունքվի-ունքվրներ, ծունգ-ծունգվի-ծունգվըներ, մատ-մատվի-մատվըներ, յաչք-յաչվի-յաչվըներ։

Աներ, դաներ, աներ մասնիկները շատ սակավ են գործածվում. եղած օրինակներն են՝ էշ-իշանք, իշաններ, ձի-ձիանք,

ձիաններէր, կաքավ-կաքվուներնք, յադն-յադնուներնք (թանկագին քարեր), հավք-հավքուներնք «հավքեր», օսկօ օսկրդանք, յրնդէր-յրնդէրդանք, ախպէր-ախպէրդանք, կրդօր-կրդօրդանք, փրշօրդանք։

-Անք մասնիկը ավելի շատ է կիրառվում հավաքական իմաստ արտահայտելու համար. ինչպես՝ քէռի-քէռանք, մօրքուր-մօրքուրանք, աներ-աներանք, քավօր-քավօրանք և այլն։

-ենք, -օնք մասնիկները ավելի շատ հավաքական իմաստ են արտահայտում, ինչպես՝ պար-պարօնք, Մրդօյենք, Մարդօյենք, Ավդըլենք և այլն։ -Օնք մասնիկով իրենց հոգնակին են կազմում նաև մի շարք դերանուններ, ինչպես՝ ագօնք, իգօնք, ձ'էրօնք, իմօնք, իսօնք և այլն։

Վերջահանգ ն ունեցող բառերը հոգնակում պահպանում են իրենց ն-ն և առանալով -ներ մասնիկը, ունենում են երկու ն, ինչպես՝ յէրգան-յէրգրններ, յ'րգուն յիրգրններ, շամդան շամդրններ, մէնձուքէն-մէնձուքէններ։

Ան-, չ- նախածանցներով բարդված միավանկ բառերը, նաև այն բարդ բառերը, որոնց երկրորդ բաղադրիչը միավանկ է, իրրև բազմավանկ բառեր առանում են միայն -ներ մասնիկը, ինչպես՝ անսիրդ-անսիրդներ, անաէր-յանգէր-յանգէրներ, չէս-չէսներ, հօրքուր-հօրքուրներ, էսպէս-էսպէսներ, սանամէր-սանամէրներ, սանահար-սանահարներ, անէրցաք-անէրցաքներ։

-Սառ կամ -խառ հոգնակի մասնիկն են առանում միայն մասամբ այն բառերը, որոնք ունեն -ի, -իք վերջավորությունը, ինչպես՝ գարշէլի-գարշէլէսառ, գարիք-գարէսառ (գարիներ), հոգիք-հօքէսառ (հոգիներ), տարիք-տարէսառ (տարիներ), վարդիք-վարդէսառ (վարդիքներ), երդիք-յէրքէսառ (երդիքներ), բաղանիք-բ'աղնէսառ (բաղնիքներ), բանալիք-բ'ալնէսառ (բանալիներ), բայց նաև՝ փէսա-փէսէսառ (փեսաներ), փարա-փարէսառ (դրամներ), հարս-հարսնէսառ (հարսներ), գուլբա-գուլբէսառ (գուլպաներ)։

-էսառ հոգնակի մասնիկն են առանում նաև մի շարք փոխառյալ բառեր, ինչպես՝ բօռ-բօռէսառ (վառարանի խողովակներ), սբրա-սբրէսառ (հերթեր), շիշա-շիշէսառ (ապակիներ), մալ-մալէսառ (անասուններ)։ Այժմ -խառ մասնիկի հոգնակի նշանակությունը շատ դեպքերում մթագնում է և բառը առանում է նորից -ներ, երբեմն նաև ք հոգնակին, օրինակ՝ բ'ալնէսառաններ, բ'աղնէսառաններ, պարշէլէսառնք։

Գրաբարյան ք հոգնակին բարբառս պահպանում է ի-ով և ա-ով վերջացող բազմավանկ բառերում՝ գինի-գինիք, հայլի-հայլիք, ածիլի-ածըլիք, խընամի-խընամիք, օսկի-օսկիք, թգենի-թըզի-թըզիք, տղայ-տրդա-տրդաք, տրդէք, երեխայ-էրէխաէրէխէք, բալա-բալէք, թուլա-թուլէք, ինչպես նաև ացի, եցի, ցի՝ որտեղացի լինելը ցույց տվող ածանցներով կազմված բառերում, ինչպես՝ գէղացի-գէղացիք, քաղքըցի-քաղքըցիք, պարսէցի-պարս(է)ցիք, պօլսէցի-պօլսէցիք և այլն։

Մեղրու բարբառում հոգնակին կազմվում է ք (քˈ), ար, ար, եր, ներ մասնիկներով։

Քˈ մասնիկն առանում են ե և ի-ով վերջացող բազմավանկ բառերը. ինչպես՝ ածելի>ծիլէ, հգն. ծիլէքˈ, լեզի>լէզէ. հգն. լէզէքˈ, խնամի>խընամէ, հգն. խընամէքˈ. հացի>հացէ, հգն. հացէքˈ. քենի>քէնէ, հգն. քէնէքˈ. կոբի>կուբէ, հգն. կուբէքˈ. հայելի>հիլլէ, հգն. հիլլէքˈ. ջոբի>ջիւբէ, հգն. ջիւբէքˈ, երախայ>բախէ, հգն. բախէքˈ. ոսկի>ուսկէ, հգն. ուսկէքˈ. այգի>իգի, հգն. իգիքˈ. խնձոր(են)ի>խընձըրի, հգն. խընձըրիքˈ. թզ(են)ի>թըզի, հգն. թըզիքˈ. գինի>գինի հգն. գինիքˈ. ճօճ(կ)>ճօնջի, հգն. ճօնջիքˈ. օրդուբաացի>իւրդվոթցի, հգն. իւրդվոթցիքˈ և այլն։

Ծանոթություն.— Ի-ով վերջացող բառերը հաճախ նաև առանում են ներ մասնիկը, ինչպես՝ իգիներ, կամ իգինէք «այգիներ», բըռըշնիքˈ կամ բըռըշնինէք «բռնչենիներ», թըզիքˈ կամ թըզինէք և այլն, բայց որտեղացի լինելը ցույց տվող -ացի մասնիկով բառերը առանում են միայն -քˈ և ոչ երբեք -ներ, ինչպես՝ իւրդվոթցիքˈ «օրդուբաացիներ», դէշըրցիքˈ «դաշտեցիներ», թէյըցիքˈ «թեյացիներ» և ոչ՝ իւրդվոթցինէ, դէշըրցինէ, թէյըցինէ և այլն։

-ար ‖ -եր մասնիկներն առանում են բաղաձայնով վերջացող միավանկ բառերը. -ար առանում են այն բառերը, որոնց վանկարարը ծանր է (ա, ը, է, օ, ու). ինչպես՝ արտ>արտ, հգն. արտար. բան>բէն, հգն. բէնար. գետ>գէտ, հգն. գէտար. քար>քար, հգն. քարար, բան>բէն, հգն. բէնար. դար>դէր, հգն. դէրար «տանջեր». հայր>հար, հգն. հարար. աք>հաք, հգն. հաքար «ոտքեր» և այլն։

-mp առանում են այն բառերը, որոնց վանկարարը թևեև է (m, ի, ի՝, ևo, իu), ինչպես՝ բուրդ>բիւրդ, հգն. բիւրդար, գայլ >գիւլ, հգն. գիւլար. լուծ>լիւծ, հգն. լիւծար. ուլ>հէօլ, հգն. հէօլար. սիւն>սիւն, հգն. սիւնար. վարդ>վարդ. հգն. վարդար, գինձ>գինձ, հգն. գինձար. թել>թիլ, հգն. թիլար և այլն։

Ծանոթություն 1.—Գ՝, կ՝, ք՝ քմայնացածներով վերջացող միավանկ բառերն անխտիր առանում են -mp մասնիկը, անկախ բառի ձայնավորի թևեև կամ ծանր լինելու հանգամանքից, ինչպես՝ նիգ>լէնգ, հգն. լէնգար «լծակներ». գիրկ>գիրգ՝, հգն. գիրգ՝ար, գինգ՝>գէնգ՝, հգն. գէնգ՝ար. թուք>թէք՝, հգն. թէք՝ար. ձևոք>ձիք՝, հգն. ձիք՝ար. պետք>պէթք՝, հգն. պէթք՝ար, պիրկ>պէրկ՝, հգն. պէրկ՝ար և այլն։

Ծանոթություն 2.— Նը վերջացող մեկուկես վանկանի բառերը նույն կանոններով առանում են -ար կամ -mp մասնիկները, կորցնելով իրենց վերջահանգ ը ձայնավորը. ինչպես՝ ակն>ակնը, հգն. ակնար. բեռն>բէռնը, հգն. բէռնար. կաճն>կաճնը, հգն. կաճնար. հարսն>հարսնը, հգն. հարսնար. գազն>գէզնը, հգն. գէզնար. խէժ>խէժնը, հգն. խէժնար. որդն>իւռնը, հգն. իւռնար. գառն>գէօռնը, հգն. գէօռնար, եզն>իզնը, հգն. իզնար և այլն։

Ծանոթություն 3.— «Նը» հանգող այն մեկուկես վանկանի բառերը, որոնք ունեն o ձայնավորը՝ առացված գրաբարյան ու-ից, հոգնակին կազմում են եր մասնիկով, որի ժամանակ իրենց o ձայնավորը դարձնում են ը. ինչպես՝ նուռն>նռռնը, հգն. նըռռներ. կուռն>կռռնը, հգն. կըռռներ. ծուռնկն>ծռռնգնը, հգն. ծըռռնգներ. մուկն>մկնը, հգն. մըկներ. ձուկն>ձկնը, հգն. ձըկներ. ունկն>ռնգնը, ընգնէր և այլն։

Ծանոթություն 4.— Ձայնավորով վերջացող միավանկ բառերը հոգնակին կազմում են -աց ‖ -ոց մասնիկներով, որի ժամանակ հիմքի և վերջավորության միջև ավելանում է յ ձայնակապը՝ է-ից և ի-ից հետո, իսկ եթե բառը վերջանում է ու կամ իւ-ով, ապա դրանք համապատասխանորեն վերածվում են ըվ կամ իվ-ի, ինչպես՝ ձի>ձի, հգն. ձիյանք. թի>թէ, հգն. թիյանք (նաև՝ թէ-

յար), ձու>ձու, հգն. ձըվանք, լու>լիւ, հգն. լի՝վանք. լի>լէ բառը հոգնակին կազմում է լիքը ձևից՝ -նք մասնիկով՝ լիքըընէ։

Ծանոթություն 5.— -ար ‖ -mp մասնիկների ա ձայնավորը բացի ուղղական ու հայցական հոլովներից, մյուսներում դառնում է է. առերևույթ տարբեր քվացող այդ ձևերը միանգամայն օրինական են և վայելուն ձևերով հատատում են հնչյունական օրենքների ընդհանրությունը։ Այսպես. թե ուղղական-հայցականի -ար ‖ -mp, և թե մյուս հոլովների եր մասնիկները առացվել են գրաբարյան -եար մասնիկից։ Ուղղական ու հայցական հոլովներում գրաբարյան եա երկբարբառը, լինելով շեշտահաջորդ փակ վանկում, դարձել է ա ‖ m. ինչպես՝ քարեար>քարար, ուսեար>օսար, աքեար>հաքար, բոյթեար>բիւթար, գայլեար>գիւլար և այլն։ Մյուս հոլովներում եա-ն, ընկնելով շեշտից առաջ, դարձել է է, ըստ գրաբարյան հայտնի կանոնի, իսկ այդ ե-ն էլ բարբառում դարձել է է, ինչպես՝ քարեար-ու>քարերու>քըրէրու, ուսեար-ու>ուսերու>օսէրու, հաքեար-ու>հաքերու>հըքէրու, բոյթեար-ու>բոյթերու>բիւթէրու, գայլեար-ու>գայլերու>գիւլէրու և այլն։

Ծանոթություն 6.— Ձնայած որ բացի ուղղական ու հայցական հոլովներից, մյուս բոլոր հոլովներում շեշտն ընկնում է հոգնակի -եր մասնիկի վրա, այնուամենայնիվ, հակառակ ընդհանուր կանոնի, բառի շեշտից առաջ ընկնող ձայնավորը որևէ փոփոխություն չի կրում. ինչպես՝ ուղղ. էձար, սեռ. էձերու «այծերի», ուղղ. բէհար, սեռ. բէհէրու «բահերի», ուղղ. բուխկար, սեռ. բուխկէրու «բոզկերի», ուղղ. ձիքիար, սեռ. ձիքէրու «ձեռքերի», ուղղ. գէտար, սեռ. գէտէրու «գետերի», ուղղ. սիւնար, սեռ. սիւնէրու և այլն։ Բացառություն են կազմում միայն ակնը «աչք», հաք «ոտք», քար, թիլ, լիւծ «լուծ», հէօլ «ուլ» բառերը, որոնց ձայնավորները, շեշտից առաջ ընկնելով, դառնում են ը կամ ի՝, ը դառնում են ծանր, իսկ ի՝ դառնում են թևեև ձայնավորները. ինչպես՝ ուղղ. ակնար, սեռ. ընկնէրու, ուղղ. հաքար, սեռ. հրքէրու, ուղղ. քարար, սեռ. քրքէրու, ուղղ. թիլար, սեռ. թի՝լէրու, ուղղ. լիւծար, սեռ. լի՝ծէրու, ուղղ. հէօլար,

սեռ. հի՛յերու, այդպես և՝ գործիական, բացառական և ներգոյական հոլովիներուն։

-էր մասնիկն առանում են այն միավանկ բառերը.

ա) որոնց ձայնավորն է o, ի՛o, ու կամ իւ, բոլորն էլ՝ առացված գրաբարյան ու-ից. ինչպես՝ թուշ>թօշ, հգն. թըշէր. թուր>թօր, հգն. թրրէր. կուժ>կօժ, հգն. կըժէր. թուզ>թէօզ, հգն. թրզէր. գուրք>գուրք, հգն. գրրքէր (ավելի շատ՝ գըրքէր). ջուր>ջիւր, հգն. ջի՛րէր և այլն։

բ) որոնց ձայնավորն է ե կամ ըե, առացված գրաբարյան ի-ից, ինչպես՝ ձիրա>ձըէրա, հնգ. ձըրաէր, հին>հէն, հգն. հըներէր, ձիա>ձըէա, հգն. ձըաէր, վիզ>վըէզ, հգն. վըզէր, սիրա>սէրա, հգն. սըրաէր և այլն։

Այդպես և՝ ը֊ր հանգող այն երկվանկ բառերը, որոնք գրաբարում ունեցել են ու ձայնավորը. ինչպես՝ ձուկ>ձօկը֊ն, հգն. ձըկունէր, նուռն>նօռը֊ն, հնգ. նըռներ և այլն։

Ծանոթություն 1.— Այս կարգի բառերի հոգնակի բոլոր հոլովիներում էլ շեշտն ընկնում է -էր մասնիկի վրա, իսկ բառի ձայնավորը գառնում է -ը։ Իրականում այս մասնիկը տարբեր չէ նախորդ -ար ‖ -ր մասնիկից. առացված հնչյունական տարբերությունը միայն շեշտի հետևանքն է. եա երկբարբառը, շեշտի տակ լինելով, պետք է բարբառումս դառնար է, իսկ գրաբարյան ու կամ ի ունեցող բառերում գրաբարի օրենքներով առաջացած սղման հետևանքով բնականաբար բարբառումս ուղղական ու հայցական հոլովիներում էլ շեշտը պետք է դրվեր մասնիկի վրա։

Ծանոթություն 2.— Բառասկզբում ու, o, ի՛o, իւ (<ու) ունեցող բառերը այս կանոններին չեն ենթարկվում, այլ առանում են -ար ‖ -ր մասնիկը, առանց հնչյունափոխության. ինչպես՝ ուղտ>օղտ, հգն. օղտար. ուռ>օռ, հգն. օռար. ուրդ>էօրդ «ջրի ճամբա», հգն. էօրդր. ունջ>օնջ, հգն. օնջար. ուխտ>ուխտ, հգն. ուխտար (կրոնական բառ է), այդպես և՝ ուռ>հօռ, հգն. հօռար. ուլ>հէօլ, հգն. հէօլր։ Միայն ունկն>օնգնը բառն ունի ընգնէր, որի հետ մար սակայն ավելի գործածական է օնգուն ձևից հգն. օնգունէր։

Նե մասնիկն առանում են բազմավանկ բառերը, բացի ե, ի ձայնավորներով վերջացողներից, ինչպես՝ աղքատ>ախկատ, հգն. ախկատնէ, ագի>էկ֊ին, հգն. էկ֊իննէ. աման>աման, հգն. ամաննէ. կատու>կատու, հգն. կատուներ, երգուիճ>իւրգիւմ, հգն. ուրգուիճէ. ականջ>անգուճ, հգն. անգուճնէ (նաև՝ ընգըճնէ). լեզու>լիւզիւ, հգն. լիւզիւներ. բոժոժ>բիւժիւժ, հգն. բիւժիւժներ. կամուրջ>կ֊ոմրիւնջ, հգն. կ֊ոմրիւնջներ. թոնիր>թ֊ուրան, հգն. թուրաններ. գագաթ>գէգ֊ոթ, հգն. գէգ֊ոթներ. խաղող>խաղու, հգն. խաղուներ. կաչաղակ>քըչէղակ, հգն. քըչէղակներ և այլն։

Ծանոթություն 1.— Ա ձայնավորով վերջացող բառերից մի քանիսը, բացի սովորական ներ մասնիկից, հոգնակին կազմում են նաև ք֊ մասնիկով, որի ժամանակ վերջնահանգ ա ձայնավորը գառնում է ե. ինչպես՝ քեռի>քէռա, հգն. քէռաներ կամ քէռէք (վերջինս ավելի սովորական), մօտի>մուտա, հգն. մուտաներ և մուտէք, հեռի>հեռա, հգն. հեռաներ և հէռէք, վկայ>վըկա բառն ունի միայն վըկաներ ձևը, տղայ>տըղա բառը հոգնակին ունի տըղարք կամ տըղերք, բացառիկ ձևերը։ Ադրբեջաներենից փոխառյալ ա, ո վերջացող բառերը հոգնակին կազմում են ավելի շատ ք֊ մասնիկով, ինչպես՝ բալա «որդի», հգն. բալէք, թուլա «շան ձագ», հգն. թուլէք, հորիսա «մի տեսակ ճաշ», հգն. հորիսէք և այլն։

Ծանոթություն 2.— Ու, իւ վերջացող բառերը նույնպես հաճախ առանում են ք֊ մասնիկը. ինչպես՝ կատուներ, նաև՝ կատուք, խաղուներ և խաղուք, լիւզիւներ և լիւզիւք և այլն։

Ծանոթություն 3.— Ենչ վերջացող բառերի ե ձայնավորը, որ առացվել է գրաբարյան ա֊ից, հոգնակի ուղղականում և հայցականում, ընկնելով շեշտից առաջ, պահպանվում է, փոխանակ վերածվելու ա֊ի, ինչպես՝ կանաչ>կանէնչ, հգն. կանէնչներ, ամաչ>համէնչ, հգն. համէնչներ, ճանաչ>ճանէնչ, հգն. ճանէնչներ. անամաչ>անամէնչ, հգն. անհամէնչներ. չամիչ>չօմէնչ, հգն. չօմէնչներ։

Ծանոթություն 4.— Հոգնակի ուղղականում, ինչպես և մյուս հոլովիներում, շեշտն ընկնում է մասնիկի ե ձայնավորի վրա, սակայն, դրա շնորհիվ ենթադրվող նա-

խաչեչտ ձայնավորների սղումը այս դեպքում չի կատարվում. ինչպես՝ ազաման>ըզաման, հգն. ըզամանն-ել. կտոր>կուտուր, հգն. կուտուրն-ել. կճուճ>կիւճիւճ, հգն. կիւճիւճն-ել. ճախարակ>ճըխարակ, հգն. ճըխարակն-ել. բամբակ>բէմբակ, հգն. բէմբակն-ել. մոխիր>մուխըր, հգն. մուխէրն-ել. մրջիւն, մրջիւն>միւրջիւմ, հգն. միւրջիւմն-ել և այլն: Սղման ենթարկվող սակավաթիվ բառերի մասին տե՛ս հոլովումների հետ տրված ծանոթություններում:

Ծանոթություն 5.— Բացի ուղղականից ու հայցականից, հոգնակի մյուս հոլովներում -նէ մասնիկի և հոլովական վերջավորությունների միջև ավելանում է ր հնչյունը, ինչպես՝ ոչխար>ուխչար, հգն. ուղղ.-հայց. ուխչարնէ, սեռ. ուխչարներու, բաց. ուխչարներէ. ջրագաց>ջէգաց, հգն. ուղղ. ջէգացնէ, սեռ. ջէգացներու, բաց. ջէգացներէ և այլն: Իրականում այդ, իհարկե, հավելում չէ ուղղականի ու հայցականի -նէ մասնիկը ներկայացնում է գրաբարյան -ան-ն (աւազանի. նամականի), որի ի ձայնավորը օրինական հնչյունափոխությամբ բարբառում դարձել է է, իսկ մյուս հոլովների -ներ մասնիկը ներկայացնում է գրաբարյան -եաց-ը (բարձրկնեաց, նաւկնեաց), որի եա երկբարբառը շեշտից առաջ դարձել է ե դեռևս գրաբարում և բարբառում վերածվել է-ի:

Ծանոթություն 6.— Երկսից ավելի վանկ ունեցող այն բառերը, որոնք վերջանում են ը հանգով, հոգնակի կազմելու ժամանակ կորցնում են ը ձայնավորը և նէ մասնիկի փոխարեն առանում են միայն է. ինչպես՝ թէթեմանը. հգն. թէթեմանէ «թիթեռներ». փայտաղ>փայտախանը, հգն. փայտախնէ. կոտիճ>կուտէճը, հգն. կուտէճներ. ամառան>ամառանը, հգն. ամառանէ. ագեղն>ագէղնը, հգն. ագէղնէ և այլն: Դրանց մասնիկն, իհարկե, տարբեր է մյուսներից: Առաջված առերևույթ տարբերությունը պայմանք է կրկնակ -ն-երից մեկի անկման (թէթեմանէ>թէթեմանէ):

Ծանոթություն 7.— Նը հանգող երկվանկ բառերի այն կրկնաձևերը, որոնց մեջ ն-ից առաջ եղած գրաբարյան գաղտնավանկ ը-ն բարբառում դարձել է ու, հոգնակին կազմում են -նէ մասնիկով, անփոփոխ պահելով իրենց ձայնավորները. ինչպես՝ սունկն>սօնգուն, հգն. սօնգունէ. ծունկն>ծօնգուն, հգն. ծօնգուննէ. ծուկն>ձօկուն, հգն. ձօկուննէ. ունկն>օնգուն, հգն. օնգուննէ, մունկն>մօկուն, հգն. մօկուննէ:

Ծանոթություն 8.— Մեկուկես վանկանի բառերը նույնպես առանում են -նէ մասնիկը. ինչպես՝ սանր>սանդըր, հգն. սանդրընէ. ծանր>ծանդըր, հգն. ծանդրընէ, ասող>ասօղ, հգն. ասօղնէ, մանր>մանդըր, հգն. մանդրընէ և այլն: Այդպես և՝ քաղցր>քօխցուր, հգն. քօխցուրնէ. բարձր>բէձըր կամ բէձուր, հգն. բէձրընէ կամ բէձուրնէ:

Երկրորդ եղրում միավանկ բառ ունեցող բարդությունների մի մասը հոգնակիի համար առանում է -ար ‖ -ր, մի մասը՝ -նէ մասնիկը: Դրա համար կա հետևյալ կանոնը. եթե բարդության առաջին եղրը երկրորդի նկատմամբ կատարում է հատկացուցչի կամ որոշչի դեր (հետևաբար՝ երկրորդ եղրն էլ հանդես է գալիս իբրև գոյական՝ հատկացյալի կամ որոշյալի դերում), ապա՝ ամբողջ բարդությունը հոգնակիի համար առանում է -ար ‖ ր մասնիկը (բուն ձայնավորների ներգաշնակության). ինչպես՝ սևահող>սըվահուղ (սև հող), հգն. սըվհուղար. սևաքաշտ>սըվաքաշ (=սև քաշտ), հգն. սըվքաշար. ծալքատեղ>ձըլքատեղ (=ծալքի տեղ), հգն. ձըլքըտէղար. սամափայտ>սըմախէտ (=սամիի փայտ), հգն. սըմըրփէտար. ճրագալոյց>ճըրըկլուիս (=ճրագի լույս), հգն. ճըրըկլուիսար[1] և այլն: Իսկ երբ բարդության առաջին եղրը երկրորդի նկատմամբ կատարում է խնդրի դեր (հետևաբար՝ երկրորդ եղրն էլ, արտահայտված բայարմատով, կատարում է սրևէ դերրայի դեր), ապա՝ բարդ բառն առանում է -նէ մասնիկը, ինչպես՝ դռնապան>դրռնապան (=դուռ պահող, հսկող), հգն. դրռնապաննէ. որձատու>բռձէտու (=որձ տվող) ջանսերմ, անպատուղ, հգն. բռձէտուներ. ասեղնագործ>ըսըղնագործ (=ասեղով կարած), հգն. ըսըղնագործներ. հացակեր>հըցակէր (=հաց ուտող), հգն. հըցակէրներ. կուսակր>կըռվասէր (=կռիվ սիրող), հգն. կըռվասէրներ և այլն: Հետաքրքրական են դրռնագործ և հրվագուղ բառերը, որոնք տարբեր իմաստ ունենալով, տարբեր էլ մասնիկներ են առանում,

[1] Ձրագալոյց բառը, որը գրաբարում նշանակել է «ճրագվառող», այս, ինչպես և այլ բարբառներում, ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է հրագալույս:

այսպես՝ եթե դրունահամ բառը գործածվում է իր սովորական «դառն համ ունեցող, դառն համ տվող» իմաստով, ապա առանում է -ենի մասնիկը. օրինակ՝ քօխցուրնէն պահած ա, դրունահամիէն բիրած «քաղցրները պահել է, դառնահամները (դառն համ ունեցողները) բերել», իսկ եթե նա գործածվում է «դառն համ» իմաստով, ապա առանում է -ար մասնիկը. օրինակ՝ դրունահամարը մարդուս բէբանը դրունըցնէս ին «դառնահամները (=դառն համները) մարդու բերանը դառնացնում են»: Այդպես էլ ցրվագուղ բառը, որ կարող է գիտակցվել թե իբրև հատկացուցչի և հատկացյալի կապակցութիւն (=հավի գող), և թե իբրև խնդրի ու դերբայի կապակցութիւն, համապատասխանորեն առանում է -ար կամ -ենի մասնիկը, նայած թե խոսողն ինչպես է գիտակցում. սակայն ավելի գործածական է -ենի մասնիկը (պետք է նկատել, որ «հավի գող» կապակցութիւն մէջ էլ իրապես հատկացուցչի և հատկացյալի կապակցութիւն չէ, այլ խնդրի և դերբայի. հավի տվյալ դեպքում խնդրի սեռական է (genetivus obiectivus):

Ծանոթութիւն 1.— -ար ‖ -ր մասնիկն առացող բարդութիւնների մէջ հոգնակի ուղղական ու հայցական հոլովներում շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա (մասնիկից առաջ), որի շնորհիվ էլ նախաշեշտ վանկի ձայնավորը (մեծ մասամբ հոդակապ) վերածվում է ը կամ ի՝-ի. ինչպես՝ որմնաբան>հրըմաբէն «պատի գործ, պատ շարելու գործ», հգն. հրըմբըէնար. որմնատակ>հրըմատակ «պատի տակը», հգն. հրըմբատակար. հարսանքաշոր>հրբսընքաշուրթ «հարսանիքի շոր», հգն. հրբսընքըշուրթար. ձուսքաշ>ձըվաքաշ «մեկ ձվի ծանրութիւն», հգն. ձըվըքաշար. լուսամուտ>լի՝սամուտ, հգն. լի՝սի՝մուտար. ձեռքաբան>ձի՝քաբէն «ձեռքի գործ», հգն. ձի՝քի՝բէնար և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից, ը կամ ի՝ դարձող ձայնավորը -ա ‖ -ս հոդակապն է, որն իր ծանր կամ թեթև լինելով (-ա ‖ ս>ը ‖ ի՝) համապատասխանում է մի թե երկրորդ, մյուս առաջին եզրի ձայնավորների առաջացնին:

Ծանոթութիւն 2.— Նե մասնիկն առացող բարդութիւններում շեշտը հոգնակի բոլոր հոլովներում լինում է մասնիկի վրա, բայց, հակառակ դրան, նախաշեշտ վանկի ձայնավորները որևէ հնչյունափոխութեան չեն ենթարկվում. ինչպես՝ տնաշէն>տընաշէնն, հգն. տընաշէննէ, բերատու>բըրատու «բերք տվող, պտղատու», հգն. բըրատունէ և այլն: Ի դեպ է համեմատել արդի գրականի նույն կարգի բառերի հետ, որոնց ձայնավորները սղման օրենքին ենթարկվում են -եր մասնիկն առանալիս, և չեն ենթարկվում, երբ -ներ մասնիկն են առանում. ինչպես՝ լրագիր (=լրի գիր), հգն. լրագրեր. վերնատուն (=վերին տուն). հգն. վերնատներ. բայց՝ վիպագիր (=վեպ գրող), հգն. վիպագիրներ. մեծատուն (=մեծ տուն ունեցող=հարուստ), հգն. մեծատուններ և այլն:

Ծանոթութիւն 3.— Եթե -ար ‖ -ր մասնիկն առացող բարդ բառը երկրորդ եզրում ունի այնպիսի միավանկ բառ, որ հոգնակին կազմում է -եր մասնիկով, ապա ամբողջ բարդութիւնն էլ նույնպես -ար ‖ -ր-ի փոխարեն առանում է -եր, որից առաջ եղած բոլոր ձայնավորները դառնում են ը կամ ի՝. ինչպես՝ ջրաձիա>ջըրաձըէա (ջրի ձիա), հգն. ջըրըձըէ՛ր. աղբիւրաջուր>բխաբրաջիւր, հգն. բխաբրբրջի՝բէր. քոամուկն>քըռըմօկնը (=քոչող մուկ, չղջիկ). հգն. քըռըմըկնէր (քըռըմօկուն ձևն այստեղ գործ չունի) և այլն: Ը կամ ի՝ դառնալը պայմանավորված է սղվող ձայնավորի ծանր կամ թեթև լինելուց, այսինքն՝ ծանր ձայնավորները դառնում են ը, իսկ թեթևները՝ ի՝:

Եթե բարդ բառն ըստ օրենքի պետք է առանա -ենի մասնիկը, ապա հիշյալ -եր մասնիկն առացող միավանկ բառերը որևէ շեղում չեն առաջացնում ընդհանուր կանոնից և կանոնավորապես առանում են -ենի մասնիկը:

Վերոհիշյալներից դուրս, հոգնակիի բացառիկ ձևեր են. ապջիկ>աղչիկ, հգն. ըխչըկէրք՛, տղայ>տըղա, հգն. տղէրք՛ կամ տըղարք, քոյր>քիւր, հգն. քի՝վէրք՛. մարդ>մարդ, հգն. մարդէք՛. կնիկ>կընէկ՛, հգն. կընանէք՛.

Վերջապես մի խումբ բառեր հոգնակիի համար առանում են -արաենք, -արե, -աք, -ուք մասնիկները, որոնք, սակայն, ավելի շուտ հավաքական իմաստ են պարունակում, քան հոգնակիի: Այդ բառերն են.

աներ>հանէր, հընէրաք. գիր>գիր «գիրք», գի՝րանք. ընկեր>հընգէր, հընգերուք. կուռն>կօռնը, կըռնատէ. ճիւղ>ճօղնը,

ճըղնարէ. սեամ>չէմք, շըմքարէ. գիւղ>գիւղ, գիւղարանք. սերմն>սըէրմ, սըէրմար կամ սըրմարանք, դեղ>գէղ, գէղարանք:

Հետաքրքրական է հիշել, որ սըրմարանք բառը նորից գիտակցելով իբրև հավաքական եզակի, հաճախ առանում է հոգնակի -ներ մասնիկը և ունենում է չորս հոգնակերտ մասնիկ, որոնցից միայն մեկն է գիտակցվում՝ սըրմ–ար–ան–ք–ներ:

Իբրև հավաքական կազմող մասնիկներ Մեղրու բարբառում գործածվում են -անք, -ենարէ, -էնէ, -էնէք, -անէք, -անէք՝ -օնէք, -օտան, օտիք, -արք մասնիկները. Թե ո՛ր մասնիկը ո՛ր դեպքում է գործածվում, հնարավոր չեղավ պարզել, օրինակների քչության պատճառով. հակառակ մեր ջանքերի, մենք կարողացանք հավաքել ընդամենը 17 հավաքական բառ միայն, որ և բերում ենք առոլև:

եղն>իղնը, իղոնք. կտուր>կըտօր, կըտըրնարէ. հնձան>ընձան, ընձանէք՛. գերեզման>գի՛րիզման, գի՛րի՛մի՛նոնէք՛. այգի>իգ՛ի, իգ՛իներնէք՛, խաղող>խաղու, խըղվէնէք՛, խաշու>խաշու, խըշվէնէք՛. լեզու>լիւզիւ, լի՛զվէնէք՛. կատու>կատու, կըտվէնէք՛. մատակ>մատակ «առու», մըտըկօտան. յօնք>օնք, օնքարք, եկեղեցի>գըղէցէ, գըղըցօնէք՛. ոսկր>ուսկուռ, ըսկրօտէք՛. գուրք>գուրք, գըրքարէ. տուն>տօն, տընարէ. վնասի>փըէսէ, փըսօնէք՛. խիզան>խէզան, խըզնանէ:

Նայելով այդ բոլոր օրինակներին, կարելի է միայն ու վերջացող բառերի մասին եզրակացնել, Թե նրանք առանում են -ներ մասնիկը, որից առաջ վերջանագ ու-ն գառնում է վ. Մյուսների համար օրինակներն այնքան քիչ են, որ որևէ եզրակացության մասին խոսելն անգամ անկարելի է:

Այդ բոլորից առանձին պետք է հիշել -աք, ոք, -եք՛, -ուք, -իւք մասնիկները, որոնք կազմում են ընտանիք կամ ազգականներ ցույց տվող հավաքական բառեր. ինչպես՝

Ռուշանեանք>Ուրշանաք, Նազանեանք>Նազանաք, Վասեանք>Վասիք, Փարեանք>Փարոք, անէրանք>հընէրաք, *մեռոնք>մէրուք, *ձերոնք>ձերունք, Մազոնք>Մազիւք, Տիրացուենք>Տի՛րի՛ցվէք՛, և այլն:

Մյուս բարբառներում հոգնակիի կազմությունը հետևյալ նկատելի կետերն ունի.

Տիգրանակերտի բարբառում հոգնակիի նշանն է -իր, -ներ՝ -նի. ինչ. հացցիր «հացեր», հրեշտոգնի «հրեշտակներ»:

Սիվրիհիսարի գավառականում հոգնակին, Թե միավանկ, և Թե բազմավանկ բառերի համար, կազմվում է -եր վերջավորությամբ. օր.

շերիգէր «շապիկներ»
ոխախէր «փողոցներ»
սանդալյայէր «աթոռներ»
առարայէր «սայլեր»
բաղնիքէր «բաղանիքներ»
դիւքանէր «խանութներ»

12. ՀՈԳՆԱԿԻՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Այն բոլոր հոգնակերտ մասնիկներից, որոնք ձևացան ու գործածական դարձան միջին հայերենի և բարբառների մեջ, աշխարհաբարը ընտրեց միայն երկուսը, այն է -եր և -ներ: Մյուսները բոլորը ջնջվեցին: Նույնիսկ -նի հոգնակերտ մասնիկը, որ այնպես ընդհանուր էր կիլիկյան հայերենում, որ գործածական է այժմ էլ զանազան բարբառներում և նույնիսկ կենդանի է -նիս, -նիդ, -նին առացական հոդերի մեջ և ներմուծված է -ներ հոգնակերտ մասնիկի մեջ, զրկված է անկախ գոյությունից:

Կրկին մասնիկներից -եր գործածվում է միայն միավանկ բառերի համար, իսկ -ներ՝ բազմավանկ բառերի համար. օր. ծառեր, փայտեր, ձիեր, պարտեզներ, գերիներ, մարգարեներ:

Արևելյան գրականում ո-ով սկսող միավանկ բառերն էլ խոսակցության մեջ հոգնակիում առանում են -ներ մասնիկը. ինչ. ոչխարներ, ոսմբներ, ոսկներ, ոտներ, ոսկրներ և այլն. սրա պատճառն այն է, որ ժողովրդական լեզվի մեջ ո նախաձայնը հնարավոր է առանում միշտ ը կամ ու ձայնը. հնչվում է՝ ըոսկր, ըոտ, ուոսկ, որով և բառը գառնում է երկավանկ և բնականաբար առանում է -ներ մասնիկը: Բայց երբեմն գրականում էլ, նույնիսկ երբ ո չի առանում այդ հնարավանը, գարձյալ դրվում է -ներ, այսպես՝ ոչխարներ:

Այն բառերը, որոնք առաջին վանկում ունեն անգիր ը հայնավորը, բնականաբար համարվում են բազմավանկ, և առանում են -ներ հոգնակերտը. ինչ. գլուխներ, կրակներ և այլն:

Իսկ այն բառերը, որոնք իրենց վերջին վանկում ունեն յ ձայնավորը, տատանվում են երկուսի միջև. արևելյան գրականում համաբռնելով բազմավանկ՝ ստանում են -ներ մասնիկը, իսկ արևմտյան գրականում՝ համարվում են միավանկ և առնում են -եր մասնիկը. ինչ. աստղ-աստղներ, աստղեր, կայսր-կայսրներ, կայսրեր, աղբյուր-աղբյուրներ, աղբյուրեր, տարր-տարրներ, տարրեր, անդր-անդրներ, անդրեր:

Եվրոպական կամ հնուսական այն միավանկ բառերը, որոնք ունեն իրենց սկիզբը գոյւդ բաղաձայն, հայերենի մեջ համարվում են երկվանկ և բնականաբար առանում են հոգնակիում -ներ մասնիկը, այսպես՝ բրոնզ, հգ. բրոնզներ, բրակ «խոտան», հգ. բրակներ, բրոնխ «ցնցուղ», հգ. բրոնխներ:

Արևմտյան գրականում, եթե բառի վերջում կա անձայն յ տառը, հոգնակիի մասնիկից առաջ ջնջվում է, օր. ճամբայ-ճամբաներ, երախայ-երախաներ, փեսայ-փեսաներ և այլն:

Ծան.—Անցյալ դարի արևմտահայ գրողների մոտ գործածական էր յ-ով ձևը. ինչ. տղայներ, ճամբայներ, փեսայներ և այլն, բայց հիմա խափանված է:

Երբ բառը գրաբարի մեջ վերջանում է ն հանգով, որ բնկել է աշխարհաբարի մեջ, հոգնակիի ժամանակ նույն ն վերականգնվում է և այնպիսի տպավորություն է առացվում, որ իբր թե միավանկ բառը իր հոգնակին կազմում է -ներ մասնիկով, օր. քոռ-քոռներ, մատ-մատներ, ձուկ-ձկներ, ոտ-ոտներ, լուս-լուսներ, նուռ-նռներ, դուռ-դռներ, մուկ-մկներ և այլն, բայց այս կանոնը ընդհանուր չէ և սրանց կողքին ունենք նաև՝ անձ-անձեր, հիմ-հիմեր:

Արևմտահայ գրաբարը խստապահանջ չէ այս կանոնի հանդեպ և գործածում է նույնիսկ առանց ն-ի ձևեր՝ հետևելով գրաբարի ժողովրդական լեզվին. ինչ. մատեր, նուռեր, մուկեր, ձուկեր և այլն:

Գիտառաբանություն է ծառեր ձևը, որ գործ են ածում հատկապես կարնո բարբառի մարդիկ (գրաբարի մեջ ուղղական ձևը ծառն չէ):

Բարդ բառերը ըստ սովորական կանոնի հոգնակիում առնում են -ներ մասնիկը. օր. երկաթուղի-երկաթուղիներ, հացավաճառներ և այլն:

Իսկ երբ բարդ բառի վերջին եզրը միավանկ է, սկսում են տատանումներ: Թե արևելյան, և թե արևմտյան գրականի մեջ

սրանց հոգնակին զանազան ձևով է լինում. օր. լրագիր, լրագրեր, լրագիրեր, լրագիրներ, լրագրներ: Դրվում է -եր մասնիկը՝ նկատի ունենալով, որ վերջին եզրը միավանկ է, այսինքն առնելով բառը առանձին (գիր, գրեր) և մտածելով, որ չի կարելի ասել գրներ, գիրներ: Դրվում է -ներ մասնիկը՝ առնելով բառը իբր մի ամբողջություն և մտածելով, որ բազմավանկը ըստ օրինի պիտի առանա -ներ մասնիկը: Իսկ ապյալ և ոչ-ապյալ ձևերը առաջանում են ազգան ընդհանուր սկզբունքների համաձայն: Զանազան քննիչներ ավել են սրանց մասին զանազան կանոններ, բայց ինձ թվում է, թե հարցը երկդիմի և հետևաբար անլուծելի է: Ըստ իս, տրամաբանությունը պիտի պահանջեր համարել բազմավանկ և դնել -ներ. բայց կան բառեր, որոնց -եր-ով հոգնակին այնպես սովորական է դարձել, որ անկարելի է անտես անել և դնել -ներ. այսպես՝ տաճկահայեր, բայց ոչ թնավ՝ տաճկահայներ:

Նույնիսկ միևնույն բառը այս ինչ բարդի մեջ -եր և այն ինչ բարդի մեջ -ներ կարող է առանալ. օր. պահակակետեր, բայց՝ սահրակետներ:

Բայց երբ օր. Անիծեալն (Թրգմ. Մամուրեան, տպ. Զմիռնիա, 1875, հտ. Գ) էջ 138 կարդում ենք սալաքարներով, և ծաղրը ենք զգում:

Բարդ բառերի կարգին չեն պատկանում նրանք, որ կազմված են որևէ նախամասնիկով, ինչ. մակրայ, հգ. մակրայներ, մակդիրներ, նախդիրներ, առոգներ, տարրերներ, ներբողներ, և ոչ թնավ՝ մակրայեր ինչպես ասում ենք՝ անմիտներ և ոչ թնավ՝ անմիտեր, կամ անմտեր[1]:

Բարբառների մեջ -վախ, -սաան և այլն հոգնակերտ մասնիկների գործածությունը ընդհանուր չէր բոլոր բառերի համար. օր. ասում էին քուրվախիք, տիրվախիք, շունվախիք, բայց կարելի չէր ուրիշ որևէ բառի վրա էլ կպցնել նույն մասնիկը: Նույնիսկ թևև քույր դառնում է հգ. քուրվախիք, բայց կարելի չէ ասել մօրաքուրվախիք, հօրաքուրվախիք և այլն: Այսպես է նաև գրաբարում, ուր թևև կա գիւղորայք, դաշտորայք, վանորայք, արտորայք, բայց կարելի չէ ասել լեռնագիւղորայք, լեռնադաշտորայք:

---

[1] Բարդ բառերի հոգնակիի մասին տե՛ս Հ. Աճառեան, Արեւելք, 1898, հտ. 31, № 12, Գ. Անգրեասեան, Արեւելք, 1898, № 12:

Ծան.— Սուլն կրկին մասնիկներից առաջինը (-եր) կիլիկյան -եր մասնիկն է, որի ծագումը նշանակեցինք վերևում. երկրորդ (-ներ) երկար ժամանակ բացատրվում էր այն ձևով, որ իբր թե կազմված է և հանգող բառերի հոգնակիով. օր. ոան-ոաններ, ձեռն-ձեռներ, եղեգն-եղեգներ. սրանցից ենթադրվել է, թե հոգնակիի մասնիկն է -ներ, ըստ որում այդ բառերը եղակիում և-ի կորուստով դարձել էին՝ ոա, ձեռ, եղեգ։ Կարապը (էջ 188—189) մերժելով այս մեկնությունը, առլիս է ավելի հարմար բացատրություն. -ներ մասնիկը կազմված է հին նի+եր մասնիկների գումարից, ինչպես որ ունենք բարբառների և նույնիսկ գրական լեզվի մեջ ուրիշ տեսակ գումարներ զանազան հոգնակերտ մասնիկների. օր. ոսկրատաւք, ձիաւնիեր, աչվրներ, ձիաւր, ծակոտիքներ (4 հոգնակի), տիրվրաիք (3 հոգնակի), աղերր, և այլն։ Ըստ այսմ բանջարներ= բանջր-նի-եր, գրասաներ=* գրասրնի-եր և այլն։ -ներ մասնիկի գործածությունը Կարապը գտնում է առաջին անգամ «Վաստակոց գրքում» (առուներ 180, պուտուկներ 135, անգուկներ 52) և Մխթար պատմիչի մոտ (հրար. Dulauries, Hist. du Crois., I, 646, քաղաքներ). բայց այս օրինակները համարում է սխալ գրչություն և -ներ մասնիկը առաջին անգամ սկսած է դնում ԺՉ դարի վերջից։*

Հոգնակիի տարօրինակ մի ձև գտնում եմ Ուգուրլիան Պատմ. հայոց գաղթ. Լիվոռնոյի, Վենետիկ, 1891, էջ 181.

Մի քանի ամսեր մեր հետ ձեռլեն վերջ. փս. ասելու՝ ամիսներ։

13. ՀՈԳՆԱԿԻԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Դասական հայերենում հավաքական բառերը հոգնակի ձևով կարող էին գործածվել, ինչպես ունենք բանեարս եփր., վանեբայոց, վանեբայից Բուզ. 268, 280, աւագանիօք Ագաթ. ավելի ուշ ունենք՝ իշանք, ձիանք ձևերը. նույնիսկ արտորայ բառը, որ Ս. Գրքում միշտ հոգնակի է գործածված, Ոսկերերանի մոտ եզակի է։ Բայց այս ձևերը չափազանց հազվագյուտ էին. հավաքական դաղափարը պահանջում էր հենց, որ այդպիսի բառերը եզակի գործածվեին, նույնիսկ բայը հոգնակի դնելով հանդերձ. ինչ. Ջմանկանին որ աղաղակեին. Աւագանին ոխս պահեին. խազմով լցեալ են որեարս։ Այսօր էլ ասում ենք մարդիկ գնում են, մարդիկ են գալիս և այլն, հոգնակի բայով, և չի ընդունված ասել մարդիկներ։

Կիլիկյան հայերենում էլ թեև կային հոգնակի հավաքական ձևեր, բայց դրանք շատ սովորական չէին. եզած օրինակներն են միայն՝ դեղերայք «գեղերը» բժշ. (Karst, 179), գեղանք դեղրունք, վկայնիք, պատճառնիք, մարդիկք, գեղօրէք, երկիք, հայրենատներ ձևերը։ Սրանք դրաբարի աւագանիք, արտորայք և նման ձևերի շարունակությունն են, և կազմված են այն ժամանակ, երբ դեռ հավաքականը հոգնակի չէր (Karst, 207)։ Այն ժամանակ, երբ հավաքական մասնիկները հոգնակերտ դարձան, այլևս կրկին հոգնակին կասեցրեց իր զարգացումը և վերի ձևերը մնացին իբրև հնության հատուկտորներ։ Հավաքականը այլևս հոգնակի էր ոչ միայն նշանակությամբ, այլև, ինչ որ ավելի կարևոր է, ձևով։ Եվ, որովհետև հավաքականները հին հայերենում էլ, ընդհանրապես, ունեին եզակի հոլովում, կիլիկյան հայերենում էլ շարունակեցին իրենց եզակի հոլովումը, որով հոգնակիի դրաբար հոլովումը վերացավ։

Պատահականությամբ, թե զուգադիպությամբ, այն մասնիկները, որոնք իբրև հոգնակերտ ընդունված էին կիլիկյան հայերենում, մեծագույն մասամբ հետևում էին ոչ հոլովման, արդեն մեսրոպյան հայերենում. այսպես՝ տի, աճի, եար, եաճ (առաջին երկուսը նույնիսկ -ի վերջավորության պատճառով). օր. մանկաւոյ, ազատանոյ, աւագանով, աւագանոյն, գլխանոյն, որերոյ, բաներոյն, բարձկներոյդ, վաներոյ, վաներով, գրենոյ։ Ըստ այսմ կիլիկյան տի, ճի, եր, աճ մասնիկները պիտի հոլովվեին ոչ հոլովմամբ։ Մնում էին -վի և -ատաճ մասնիկները։ Սրանցից առաջինը՝ դարձյալ իբրև ի հանգող՝ պիտի հետևեր ոչ հոլովման. իսկ երկրորդը, թեև մեսրոպյան հայերենում ուներ ի-ա հոլովում (բուրաստանի-աց, ձիթաստանի-աց), բայց հետևելով ընդհանուր օրինակին, նույնպես դարձավ ոչ հոլովման։ Այսպիսով ոչ հոլովումը դարձավ միջին հայերենի ընդհանուր հոլովաձևը հոգնակիի մեջ։

Ահա կիլիկյան հայերենի հոգնակիի հոլովման պատկերը.

Ո.	գեղ-եր	տերև-ներ	ձեռ-վի
Հ.	զգեղ-եր	զտերև-ներ	զձեռ-վի
Ս. Տ.	գեղ-եր-ոյ	տերև-նոյ	ձեռ-վոյ
Բ.	ի գեղ-եր-ոյ	ի տերև-նոյ	ի ձեռ-վոյ
Գ.	գեղ-եր-ով	տերև-նով	ձեռ-վով

Ո.	քուր-վոի	ձի-ան	տեղե-ատան
Հ.	զքուր-վոի	զձի-ան	զտեղե-ատան
Ս. Տ.	քուր-վոոյ	ձի-ան-ոյ	տեղե-ատնոյ
Բ.	ի քուր-վոոյ	ի ձի-ան-ոյ	ի տեղե-ատն-ոյ
Գ.	քուր-վոով	ձի-ան-ով	տեղե-ատն-ով

Այս վեցից դուրս կիլիկյան հայերենը ուներ նաև ընդհանրապես ք և մասնավորապես իք վերջացող հոգնակի բառեր, որոնք պահեցին հին հայերենի հոլովումը՝ բարեփոխված ձևի տակ։ Այսպես ուղ. ք, սեռ. ից, ից, ոց, ուց, գործ. ընդհանրապես -օք (նույնիսկ ի, ո հոլովումների համար)։ Օրինակ՝

Ուղ.	Սեռ.-տր.	Բց.	Գրծ.
աղբայր	աղբրայց		
ապրանք	ապրնաց		ապրնօք
	այրուկնաց		
գանկատանք	գանկատնաց		
	գրոց		
դեհք	դեհաց		
	գառևրաց		
իշխանայք	իշխանաց		
ինչք	ընչից		
իրաւունք	իրաւնաց		իրաւնօք
	խելաց		խելօք
	խօսից		խօսօք
ծնօղք	ծնօղաց		
ձեծանք	ձեծնաց	ի ձեծնաց	ձեծնօք
	կամաց		կամօք
հալծանք	հալծնաց	ի հալծնաց	հալծնօք
	հասոյթից		հասոյթօք
համանք	համնաց		համնօք
	մարդկանց		մարդկօք
չաքք	չքուց		չքօք
պարտք	պարտուց		
պէտք	պիտուց		պիտօք
պարոնայք	պարոնաց		
ջաղացք	ջաղցաց		
վկայք	վկայից		
տուգանք	տուգնաց		
քաշանք	քաշնաց		
քրտինք			քրտնօք

Վերջապես -իք հանգող բառերը, որոնք բավական ընդարձակ խումբ էին կազմում, հոլովվում էին դարձյալ գրաբարի պես, բայց բարեփոխյալ ձևով. այսպես՝

Ո.	հայրենիք
Հ.	զհայրենիք
Ս. Տ.	հայրենեց
Բ.	ի հայրենեց
Գ.	հայրենեօք, հայրենօք

Այսպես են հոլովվում բազմաթիվ բառեր. օր.
հարսնիք, հարսնեց

բազնիք, բազնեց, ի բազնեց
պատկելիք «անկոդին», պատկելեց
ցվիք, ցվեց
աղիք, աղեց, յաղեց
խմելիք, խմելեց, ի խմելեց
շլնիք, շլնեց, ի շլնեց և այլն

Այսպես նաև կանձի-ք, սեռ. կանձեց «կանանց», Սմբ. դատ. 58։

Սրանց մի քիչ ավելի հին ձևն է ներկայացնում մեծուձիք «մեծամեծներ», սեռ. մեծուձեաց Անկ. գիրք նոր կտ. 178 (Որպես արժան է մեծուձեաց)։

Բարբառների մեջ հոգնակիի հոլովումը գնում է դեպի ավելի պարզություն։ Թեև տեղ-տեղ պահվում են -վի, -ձի, -ստան և այլն հոգնակերտ մասնիկները, բայց սրանց հետ միաժամանակ զարգանում են -եր, -ներ ձևով հոգնակինները, կամ նույնիսկ -վի, -ստան ստանում են նաև -ներ մասնիկը. ինչ. աչվներ, փեսեստաններ և այլն։ Հոգնակիի հոլովումն էլ, որ արդեն միօրինակության էր վերածվել կիլիկյան հայերենում, գնում է նմանվելու եզակիի հոլովմանն. -երոյ, -ներոյ կիլիկյան ձևը մի տեղ դառնում է -երու, -ներու, մյուս տեղ -երի, -ների, որին հետևում է նաև բացառականը, գործիականը արդեն նման էր եզակիին, այսպիսով ձեռք է բերվում վերջին հանգրվանը։

Բարբառներից ոմանք պահում են սակայն կիլիկյան միջին ձևերը, հատկապես -իք հանգող բառերի հոլովումը, մի քիչ

ավելի բարեփոխված. այսպես Ջրպ. 747 տալիս է հետևյալ պատկերը.

Ո. բաղնիք, Մ. Տ. բաղնեց, Բ. բաղնեցէ կամ բաղնեցմէ, Գ. բաղնեցմով։

Սվեդ. բացի -իր, -ներ ձևերից, որ տեսանք վերևում, մյուս հոգնակի ձևերը հոլովվում են հետևյալ ձևով.

-տիք>-գաք

Ո. Հ.	ախտ՛ըրդաք	
Մ. Տ.	ախտ՛ըրդուց	քուրվըրդուց, քուռգիունց
Բ.	ախտ՛ըրդուցմէ, ախտ՛ըրդուցը, ախտ՛ըրդուցըյըրմինը	քուրվըրդուցյըրմինը
Գ.	ախտ՛ըրդում	քուռվըրդիյում

-ուճք>-էօճք

Ո. Հ.	առվէօնք «առուներ»	
Մ. Տ.	առվունց	
Բ.	առվընիւց	
Գ.	առվընիւցում	
Ո. Հ.	միղվէօնք «մեղուներ»	գձվէօնք «կծուները»
Մ. Տ.	միղվունց	գձվիւնց, գձվունց
Բ.	միղվընիւց	գըգձվընիւց
Գ.	միղվընիւցում	գձվընիւցում

-ատաճ>-ըպուճ

Ո. Հ.	գ՛ուդըպուճն «գոտիներ»
Մ. Տ.	գ՛ուդըպունը, գ՛ուդըպունցը
Բ.	գ՛ուդըպունը, գ՛ուդըպունըյըրմինը գ՛ուդըպունցը, գ՛ուդըպունցըյըրմինը
Գ.	գ՛ուդըպունումում

-աճդա(<-աճ+տի)

Ո. Հ.	ձ՛իյանդա
Մ. Տ.	ձ՛իյանդիւց
Բ.	ձ՛իյանդիւցմէ, ձ՛իյանդիւցյըրմինը
Գ.	ձ՛իյանդում

-նի>-ճա

Ո. Հ.	ձաղգընա «ծոպիկներ»
Մ. Տ.	ձաղգընը, ձաղգընէն
Բ.	ձաղգընէ, ձաղգընին
Գ.	ձաղգընում

-վի>-վա, -վոք

Ո. Հ.	դնվա, դնվոք «տներ»
Մ. Տ.	դնվիւց
Բ.	դնվիւց
Գ.	?

պարզ ք-ով հոգնակի

Ո. Հ.	դոաք	գ՛ինոք
Մ. Տ.	դղիւց	գ՛իննիւց
Բ.	դղիւցմէ	գ՛իննիւցմէ
Գ.	դղիւցնում դղաքնում	գ՛իննիւցում
Ո. Հ.	գ՛իղոցոք	ոգ՛յոք «ոգիներ»
Մ. Տ.	գ՛իղոցիւց	ոգ՛յիւց
Բ.	գ՛իղոցից գ՛իղոցիցըյըրմինը	յոգ՛իւցը յոգ՛իւցմէ
Գ.	գ՛իղոցնում	ոգ՛յոքում ոգ՛յոքնում ոգ՛ըննիրում
Ո. Հ.	թիզնոք	իրգյոթնոք
Մ. Տ.	թիզնիւց	իրգյոթնիւց
Բ.	թիզնիւցը	իրգյոթնիւց
Գ.	թիզնոքում	իրգյոթնում
Ո. Հ.	ուդիլվունք	ուդիլիքնա, ուդիլաքնա
Մ. Տ.	ուդըլվունց	ուդիլիքնը, ուդիլաքնը
Բ.	»	» »
Գ.	ուդըլվունցում	ուդիլիքնում, ուդիլաքնում

Ո.	Հ.	ուղըվուն
Մ.	Տ.	ուղըվընը
Բ.		»
Գ.		ուղըվընում

Քանի որ միևնույն բառը կարող է առանձալ մի քանի տարբեր հոգնակիի մասնիկ, ուստի և կարող է հոլովվել մի քանի ձևով. օր.

գլուխ>ղ՝լեօխ բառից՝

Ո.	Հ.	ղ՝ըլխընա	ղ՝ըլխընիր ղ՝ըլխէօնք
Մ.	Տ.	ղ՝ըլխընը	ղ՝ըլխընիրը ղ՝ըլխընիւց
Բ.		ղ՝ըլխընէ	ղ՝ըլխընիրէ »
Գ.		ղ՝ըլխընամ	ղ՝ըլխընիրամ »

Աշխարհաբարի մեջ քիչ արևմտյան, և քիչ մանավանդ արևելյան գրականում հոգնակիի հոլովման խնդիրը բոլորովին լուծված և հասած է իր վերջնական վախճանին։ Այն ձգտումը, որ հոգնակիի բոլոր հոլովները պիտի կազմվեին եզակիին համապատասխան վերջավորություններով, բայց միևնույն ժամանակ հոգնակի դաղափարը արտահայտելու համար միանման և բոլորի մի նշան պիտի ունենային, ձեռք է բերված։

Ահա 6 հոլովմանց հոգնակիի պատկերը.

		Արևմ.	Արևել.
Ո.	Հ.	հացեր	հացեր
Մ.	Տ.	հացերու	հացերի
Բ.		հացերե	հացերից
Գ.		հացերով	հացերով
Ն.		—	հացերում
Ո.	Հ.	ձիեր	ձիեր
Մ.	Տ.	ձիերու	ձիերի
Բ.		ձիերե	ձիերից
Գ.		ձիերով	ձիերով
Ն.		—	ձիերում

Ո.	Հ.	մեծություններ	մեծություններ
Մ.	Տ.	մեծություններու	մեծությունների
Բ.		մեծություններե	մեծություններից
Գ.		մեծություններով	մեծություններով
Ն.		—	մեծություններում

Ո.	Հ.	օրեր	օրեր
Մ.	Տ.	օրերու	օրերի
Բ.		օրերե	օրերից
Գ.		օրերով	օրերով
Ն.		—	—

Ո.	Հ.	քույրեր	քույրեր
Մ.	Տ.	քույրերու	քույրերի
Բ.		քույրերե	քույրերից
Գ.		քույրերով	քույրերով
Մ.	Տ.	հայրեր	հայրեր
Մ.	Տ.	հայրերու	հայրերի
Բ.		հայրերե	հայրերից
Գ.		հայրերով	հայրերով

Վերածելով այս բոլորը մի համացույց տախտակի, գտնում ենք, որ երկու գրական լեզուների հոգնակիի վերջավորություններն են՝

		Արևմ.	Արևել.
Ո.	Հ.	(ն)եր	(ն)եր
Մ.	Տ.	(ն)երու	(ն)երի
Բ.		(ն)երե	(ն)երից
Գ.		(ն)երով	(ն)երով
Ն.		—	(ն)երում

որի մեջ ամեն ինչ նման է առաջին հոլովման եզակիին, բացի արևմտահայ սեռական-տրական հոլովաձևից, որ չունի ի վերջավորությունը, այլ ու, որ երկրորդ հոլովման սեռականի նշանն է։ Այսպիսով արևմտահայերենը շարունակում է կիլիկյան եր-ոյ ձևը, մինչդեռ արևելյանը մի քայլ ավելի առաջ գնալով, այս ձևն էլ վերածել է առաջին հոլովմանն։

Այսպիսով, հոգնակիի կազմությունը հայերենի մեջ՝ բացառելով հնդեվրոպական լեզուների ոգուց, ընդունել է մի այնպիսի ոգի, որ ընդհանուր է Կովկասյան, Ալթայական և այլ ոչ հնդեվրոպական լեզուների։ Բոլորովին նույն են իրար հետ

հյ. պանիր-ներ-ի	և թրք.	penir-ler-in
պանիր-ներ-ից	»	penir-ler-den
պանիր-ներ-ով	»	penir-ler-le
պանիր-ներ-ում	»	penir-ler-de

Բայց այս նմանությունը կարելի չէ վերագրել ոչ որևէ հին ցեղակցության և ոչ էլ հետին ազդեցության, այլ պարզ զուգադիպության և մարդկային մտածողության նույնության որովհետև, ինչպես տեսանք, նա արդյունք է հայերենի ինքնագլուխ և բնական զարգացման՝ դարերի երկարատև ընթացքում։

Նույն վիճակին են հասել, ինչպես տեսանք, հինդուստանի լեզուն էլ կամ աֆղաններենը, որոնք ոչ հայերենի հետ կապ ունեն, և ոչ թուրքերենի հետ, այլ՝ առաջինը սանսկրիտ լեզվի շարունակությունն է, երկրորդը՝ անկախ իրանական լեզու։

14. ԿՐԿՆԱԿ ՀՈԳՆԱԿԻ

Կրկին հոգնակիների մասին առհասարակ արդեն խոսել ենք վերը. այժմ անցնենք քննելու նույն երևույթը հայերենի մեջ։

Գրաբարում կրկին հոգնակի կարելի է գտնել այն դեպքերում միայն, երբ մի որևէ հավաքական բառ հոգնակի դառնա. այս կարգի օրինակներից են՝

մանկտիք.— Հանդերձ կանամբք և մանկտեամբք. Ոսկ. անոմ. գ.

աւագանիք.— Ամենայն աւագանեօք դրանն. Փարպ. եղիշ.

իշանք.— Զանթիւ արօտականս ընտանի իշանց. Փարպ.

ձիանք.— Ծոյս տուեալ ի բաց վարեցին զձիանս իւրեանց. Փարպ.

Նույնը մանավանդ հոլովման ժամանակ. ինչ. վանորայից, վանորայօք են։

Այս բոլորը հատարակ հոգեբանական երևույթներ են. հավաքականը ըմբռնվել է ձևով եզակի և առացել է հոգնակիի նշանը։

Կրկին հոգնակիի երևույթը զարգացավ մանավանդ կիլիկյան հայերենում, որ գիտեր կազմել հոգնակերտ մասնիկների զանազան խառնուրդներ, հետևյալ ձևով.

եր-այ-ք.— դեղերայք, Մխ. բժ. 131
եր-ան-ք.— դեղերանք, որից՝ դեղրանք, Մխ. բժշ. 30
եր-ունք.— դեղերունք, որից՝ դեղրունք
որ-այք.— դեղօրէք, Մխ. դտ. (սեռ. դեղօրէից ձևով)

(Այս ձևերի հետ համմտ. մեսրոպյան շրջանի արտորայք և վաճերայք ձևերը).

նի-ք.— վիմայնիք, պատճռնիք
իկ-ք. —մարդիկք, որից կ-ի անկումով՝ մարդիք
վի-ք.— իրվիք «իրերը» Մխ. բժշ. 131
(ե)ան-ք.— հայրենաններ
եր-ք.— դեղերք (Այտն. բ. 16)

Ուշ կիլիկյան և նախա-աշխարհաբարյան շրջանի արդյունք են կրկին հոգնակիի հետևյալ ձևերը (երբ դեռ -ներ հոգնակերտը տարածված չէր).— աչուեր (Թլկուրանցի), ոտվնի (Հայերգ. 135) և անշուշտ ուրիշ նմաններ (Karst, 192)։

Բարբառներում կրկին հոգնակիի երևույթը շատ է շատացել. այսպես ունենք՝

ան-ք.— ձիանք, իշանք, թիանք, լվանք, ձվանք
ան-ախ.— ձիանախ (Margoliuth, The syro-arm., IRAS, 1898 էջ 851)
ան-ներ.— ձիաններ, իշաններ, թիաններ Ջրպ. 746, դիաններ Ջրպ. 746, լվաններ, ձվաններ
ք-ներ.— տղաքներ
նի-ք.— կնանիք
իկ-ներ— մարդիկներ, նաև՝ մարդիկներք (Ջրպ. 744)
եր-ք.— մէջերք, տեղերք, ճիտերք «վզեր» (Այտն. Բ. 16)

տղերք, աղջկերք, երեխերք (այս վերջին երեքի մեջ, որոնք սովորական են երևանի բարբառում, նկատելի է, որ բազմավանկ բառերը (տղա, աղջիկ, երեխա) առացել են -եր հգ. մասնիկը վրա. -ներ. (աղջկերք թեև բազմավանկ, բայց առացել է եր-ք, նմանությամբ՝ տղերք բառի)։

վի-ներ.— ձեռվըներ, աչվըներ, մատվըներ, ոտվըներ, ծընկվըներ, եղունգվըներ, դովըներ, ականջվըներ

տի-անք.— ոսկրտանք

տի-ք.— ծակոտիք, ոսկրտիք, կնկտիք, ապրբտիք, բոլբտիք, կիսրտիք (Ախց.)

վի-տի-ք.— քուրվտիք, տիրվբտիք, շնվբտիք

եր-ան-ք.—գեղրանք, տեղերանք

վի-ք.— դատրվիք «դատերք» (Հանուշ 118)

վի-ան.— իշվան «էշեր» Պրտ.

վի-ան-ք.— կտրվանք (Պլք. տեղվանք, Պլ. իշվանք)

վի-ան-ք-ներ.— կտրվանքներ, տեղվանքներ Պլ.

վի-ան-ներ.— իշվաններ

տի-ք-նի.— շընըտրքնէ «շէներ, գիւղեր» (Ղրբ.)

ք-վի-ներ.— ձեռքվըներ, ոտքվըներ, աչքվըներ

ք-եր.— ամանքիր, վեգրօքիր (Լոռի), ճամբախքեր (բստ՝ «Ննիթեր հին Հայաստանի պատմ.», Երև, 1935, էջ 91), կիյքհաներ «կանայք» (Վան)։

Վերջապես, թեև հոսում ենք աշխարհաբարի շրջանը, որ ընդհանրապես վերջ է տալիս կրկին հոգնակիի զանազան մնացորդներին և ընդհանրացնում է հոգնակիի -եր, -ներ մասնիկները։ Այսօր չեն պատահում գեղրուկք, տեղերաքք, իշվաններ, ձիաքք, մարդիկներ և նման ձևեր, որոնք բոլորը գավառաբանություն կամ ոամիկ են. նրանց տեղ գործ են ածվում գյուղեր, տեղեր, էշեր, ձիեր, մարդիկ և այլն. թուլյատրվում է երբեմն ասել աղերք, մեջերք, ծակոտիք։

Միակ ձևը, որ ընդհանուր օրինական գործածություն ունի՝ ք վերջացող անեզական բառերն են. ինչ. փառքեր, շենքեր, օրենքներ և այլն։

15. ԳՐԱԲԱՐԱՋԵՎ ՀՈԼՈՎՈՒՄ

Ընդհանուր երևույթ է այն, որ երբ մի որևէ հին ձև վերանում է և նրա տեղ հաջորդում է նորը, հին ձևը տեղ-տեղ իր հետքերը թողնում է և, իբր մնացորդ հնության, զանազան հարվածյուռ դեպքերում երևան է գալիս։ Այսպես նաև գրաբարի հոլովումը։

Գրաբարի հոլովումը թեև վերացված կամ ձևափոխված, այնուամենայնիվ աննատ դեպքերում պահված գտնում ենք

սկսած մինչև հայերենից մինչև արդի աշխարհաբարը և նորագույն բարբառները։

Մինչև հայերենի մեջ ք հոգնակերան ստացող բառերի հոլովումը ընդհանրապես գրաբար է. այդպիսի բառերի մի ցուցակ դրել ենք արդեն վերը։ Բայց դրանցից դուրս ավելի են աչքի խփում զանազան գրաբար հոլովական ձևեր. ինչ. սեռ. արեն (գրբ. արեան), որի բուն կիլիկյան աշխարհաբար ձևն է արոյնի (Karst, 148).— որդի բառը սեռ. որդոց ձևով գրաբարի մնացորդ է. այսպես նաև՝ հգ. գրծ. որդովք, որ բուն կիլիկյան ձևով պիտի լիներ որդօք։ Բղիի բարբառում «անվանց սեռական և բցո. հոլովք խիստ փոփոխության կենթարկվին և օտարը երբեք չի կրնար հասկնալ, թե ասուց, խփոց, ճողկըցի, ապեվքուց և այլն բառերը առեք, խուփս, ճողաս, ապեվանք անուանց հոլովքն են» (Արևելք, 1889, սեպ. 30)։

Նման գրաբարաձև երևույթներ շատ կան բարբառների մեջ, նույնիսկ ամենից ավելի «աշխարհաբարյան» բարբառներում. օր. Երև. մօրօր «մօրաքրոջ» (ուղղ. մօքիր, հօքիր, իմա՝ մորքույր, հորքույր), ր ընկած և ոյ>ի։

Բղի՝ մայրիկաճ (մայրիկ բառի սեռ.)։

Նոր-Նախիջևանի բարբառում.

1. -աց վերջավորությամբ և միայն բացառականի իմաստով՝ ասթիաց, աթթիաց, անթիաց, վօրթիաց «այս կողմից, այդ կողմից, այն կողմից, որ կողմից»։

2. -օց վերջավորությամբ և սեռ.-տր. իմաստով՝ մաշբօց «մարդոց», դուղօց, դղօց «տղայոց», Ղրբ. քիչօց, փսօց, կիճուց, կատվօց. բացառականի իմաստով՝ քախքօց քաղաք «ի քաղաքէ ի քաղաք», դարօց դարի «տարուց տարի», նաև ներգոյականի իմաստով՝ դեղօցդեղ «տեղ տեղ, ի տեղիս տեղիս» (օր. անձրևը դեղօցդեղ եկավ)։ Նույն վերջավորության վրա կարելի է ավելացնել նաև մե, մով և կազմվում է երկրորդ անգամ բացառական ու գործիական հոլով. մաշբօցմե, դղօցմե, մաշբօցմով, դղօցմով։

3. -օր վերջավորությամբ և ազակի գործիականի իմաստով. ինչ. իդա հալօքը «այդ վիճակով», բօյօքը «ամբողջ հասակով»։

-ոնց. սեռ. Նջդ. ճամփէքոնց, մատանըքոնց, լուբյէքոնց և այլն. նաև՝ ճամփէքի, ճամփէքնէրի, մատանըքի, մատանըքնէրի և այլն։

-ոց հգ. սեռականի համար, որից նաև բց. և գրծ. քուրվրաիք, քուրվատց, քուրվատցմէ, քուրվատցմով. կնկաիք, կնկատց, կնկատցմէ, կնկատցմով. աղրրտի, աղրրատց, աղրրատցմէ, աղրրատցմով:

Կեսարիայի դյուղերի բարբառով անձ ցույց տվող բառերի հոգնակի բացառականը կազմվում է ոց-մեն *մասնիկով. ինչ.* աղոցմեն, մարդոցմեն:

Զահարմահալի բրբ. մարթքանց «մարդոց» (տես Երևմեան, *Զահարմահալի ժգ. բնհս. էջ 55*):

Հոգնակի ուղղականի ք *մասնիկը գոնում ենք շատ մեծ քանակությամբ բոլոր բարբառներում. ինչ.* ոաք, ձեոք, այք, միաք, խելք, ուշք, կուրծք, ուճք *և այլն. հոգնակի* ս *վերջավորությունը գոնատան բառերի վերջում. ինչ.* երկուս, բաղանիս, հարսնիս, չափս, ձևս, մօրուս, զուգս. *հատուկ անուններրի ծայրին. ինչ.* Ագուլիս, Մոկս, Նորատուս, Մասիս, Կարս, *նաև ածանցման մեջ թաքնված՝* զիսկեղեն *(փխ.* դուգսեղէն):

Ավելի սովորական է -օք *հոգնաձև գործիականը, որ բարբառներում, նաև երբեմն աշխարհաբարում, իրը եզակի է դործածվում. ինչ.* ատեճօք, ժամաճակօք, *իմ* ձեռօքս, ատրվօք, օտօք, *Աստուծու* կամօք, տեղօք *գիտեմ և այլն:*

Պոլսի բարբառում *գրաբարի հոլովման մնացորդները հետևյալներն են միայն.*

ա) -օց *վերջավորությունը՝ հոգնակի սեռական-տրականի համար. այսպես են՝* մարդ>մարթ, մարթօց, տղայ>դղա, դղօց, մանչ>մանչ, մանչօց, *որոնց վրայից նաև բց.* մարթօցմէ, դղօցմէ, մանչօցմէ *և գրծ.* մարթօցմով, դղօցմով, մանչօցմով:

Ցրականի և բացառականի համար կա նաև ից, *որ պահված է միայն մի քանի ասությունների մեջ. այսպես՝* մէկից դէր էգանք, դէղացը չէրէրաց «տեղիցը չշարժվեց», խմօղաց անուշ, հարցնօղաց փարէվ, լսօղաց էնք:

Վերջապես բացառականի իմաստով կան -ուց, -կուց *մասնիկները՝ հետևյալ բառերի մեջ.* դղագուց *«ի տղայ տիոց», հիմագուց «այժմվանից», բղդիգուց «փոքր հասակից», հինուց «հնուց», առաջուց, նաև՝* մօրուճ *(իմմ մօրուց) «ի մօրէ ծնունդ, ծնված ժամանակից» (սև աչքը մօրուճ պէտք է):* Այս *բոլոր ձևերը մակրայ են:*

բ) -ից *վերջավորությունը՝ բացառականի համար. այսպես են՝ ասկէց, առկէց, անդէց «սրանից, դրանից, նրանից», վեր-*

դէց «որտեղից»: Այս *բոլորը գործածական է նաև առանց ց վերջածայնի (ասկէ, առկէ, անդէ, հօսկէ, հօառկէ, հօնդէ, վուրդէ):*

դ) -օք *վերջավորությունը՝ գործիականի համար. այսպես են՝* հալօք «վիճակով», վրայօք «վրայով», մասին, մօրվօք «միրուսավոր» *և մանավանդ՝* դէղնիդղէղօք (<տեղն զտեղօք) «մանրամասն»:

դ) Տուն, շուն բառերի սեռականը (տան, շան) գործածական է միայն բարդության մեջ. ինչ. դանդեր «տանտէր, տանուտէր», շանգավազ «շան գավակ», շանկազօդ, շունշանօրքի «շուն և շան որդի». *բայց իրրև սեռական ասում ենք՝* դունին դէրը, շունին գավագը *և այլն: Կարելի է գտնել դառն ձևը, բայց սովորական է* դուռի. *ինչ.* դուռին առչէվը, դուռին քօվը *և այլն:*

ե) Առանձնապես պետք է հիշել ապգանուն ցույց տվող -եանք *մասնիկը, որի սեռականն է* -եանց. *ինչ.* Ագօփէնք «Հակոբենք», *սեռ.* Ագօփէնց, *բց.* Ագօփէնցմէ, *գրծ.* Ագօփէնցմով *(անասվոր):*

զ) Շատ տարօրինակ է գրաբարի ր *հոլովմամբ՝* խաքր, *սեռ.* խաքեր «ի յորգանս» *(արաբ.* xatər *բառից):*

Նոր-Նախիջևանի բարբառում *գրաբարի հոլովման մնացորդները հետևյալներն են.*

ա) -Աց *վերջավորությամբ և միայն բացառականի իմաստով՝* ասքիաց, աքքիաց, անքիաց, վօրքիաց «այս կողմից, այդ կողմից, այն կողմից, որ կողմից»:

բ) -Օց *վերջավորությամբ և սեռ.-տր. իմաստով՝* մաշքօց «մարդոց», դուղօց, դդօց «տղայոց», *բացառականի իմաստով՝* քախքօց քաղաք «ի քաղաքէ ի քաղաք», գարօց գարի «տարուց տարի», *նաև ներգոյականի իմաստով՝* դէղօցդէղ *(Զէյ.)* «տեղ տեղ, ի տեղիս տեղիս» *(օր. անձրևը դէղօցդէղ եկաւ):* Նույն *վերջավորության վրա կարելի է ավելացնել նաև* -մէ, -մով *և կազմվում է երկրորդ անգամ բացառական ու գործիական հոլով. մաշքօցմէ, դդօցմէ, մաշքօցմով, դդօցմով:*

գ) -Օք *վերջավորությամբ և եզակի գործիականի իմաստով. ինչ. իդա հալօքը «այդ վիճակով», բօյօքը «ամբողջ հասակով»* (երկուսն էլ Թուրքերեն փոխառություն գրաբար հոլովված), բէրնօք «բերանով» (գոնում ենք վիճակի ավանդական մի երգի մեջ՝ *էջ 115, Գրիգոր իր բէրնօք ասաց),* վրայօք «վրայով, մասին», փախիլօք «պատճառմամբ», սիրտօքս «սրտով, սրտիս ուզածի պես» *(իդա բանը սիրտօքս չէղավ, սիրտօքս է):* Կան նաև կրկին հոլովված ձևեր, որոնց մեջ -օք *գործիականի վեր-*

ջավորութիւնը այլևս նշանակութիւնից դուրկ է. ինչ. ուժօքին գօրա «ուժի համեմատ, որչափ ուժը ներում էր», հալօքօվս, հալօքնէրօվս «իմ վիճակով, մեր վիճակով, մեր վիճակի համեմատ», ավէլօքօվ «առավելութ»:

դ) -Ն հոլովմամբ և ներքին փոփոխութեամբ են՝ ասն, շան, դրան, մրան սեռականները, որոնք անկախ գործածութիւն չունեն և գտնվում են միայն մի քանի բարդ բառերում և առացվածքներում. ինչ. շան-լագօղ «շան լակոտ», շան-վօրքի «շան որդի», դանուդէր «ընտանիքի տեր, ամուսնացած», տուս տուան վրան (Զլ.) «գրացութեան մեջ» (օր. տուս տուան վրան դռէվ անէլ չի վայլիլ), մրանը «մութ ժամանակ» (իրր մակբայ):

Համշենի բարբառում գրաբարից ժառանգութիւն մնացած հոլովները շատ քիչ են. այսպես՝

մօրուք — սեռ. միրվաց
ջրաղաց — սեռ. ճաղցուց
հարսանիք — սեռ. հայանէց
տուն — սեռ. գօն
շուն — սեռ. շօն
աչք — սեռ. աչիչ, միայն՝ աչիչ ճիլան «նազարի ուլունք» ձևի մեջ. սովորական լեզվով աչք բառի սեռականն է աչքի:

Նոր-Ջուղայի բարբառում գրաբարաձև անկանոն հոգնակիները՝ համաձայն իրենց վերջավորութեան, ունեն զանազան հոլովումներ. -անի կամ -նի հանգող հոգնակիները հոլովվում են երկրորդ հոլովման եղակիի նման՝ իրր ի հանգող բառեր. ինչ. տէրտէրանի, տէրտէրանու, տէրտէրանուց. գուլբէքանի, գուլբէքանու, գուլբէքանուց, գուլբէքանօվ, գուլբէքանում. -անիք, -իր, -էրք, -նեք վերջավորվող հոգնակիները հոլովվում են երկրորդ հոլովման հոգնակիների պես.

Ո.	*կանանիք*	*տղէրք*
Ս. Տ.	*կանանըքոնց*	*տղէրքոնց*
Բ.	*կանանըքոնցիս*	*տղէրքոնցից*
Գ.	*կանանըքոնցօվ*	*տղէրքոնցօվ*
Ն.	*կանանըքոնցում*	*տղէրքոնցում*

Ո.	*ախչկէրք*	*մարթիք*
Ս. Տ.	*ախչկէրքոնց, -քանց*	*մարթըքոնց*

Բ.	*ախչկէրքոնցից, -քանցից*	*մարթըքոնցից*
Գ.	*ախչկէրքոնցօվ, -քանցօվ*	*մարթըքոնցօվ*
Ն.	*ախչկէրքոնցում, -քանցում*	*մարթըքոնցում*

Այս բառերը երբեմն նաև ստանում են կրկին հոգնակի. ինչ. կանանըքնէրօվ, տղերքնէրից և այլն: Մյուս անկանոն հոգնակիները հոլովվում են առաջին հոլովման պես: Օր. կողմարէնք, կողմարէնքի, կողմարէնքից, տեղարէնք, տեղարէնքից, տեղարէնքօվ և այլն: Բայց չի գործածվում տեղարէնքոնց, տեղարէնքոնցից և այլն.— ձիկերք բառը հոլովվում է միայն ձիկերքի, ձիկերքից և այլն, և չունի -ոնց ձևը: Նմանութեամբ ախպէրք բառն էլ, որ ունի -երք վերջավորութիւնը, հոլովվում է վերոհիշյալ ձևով, թեև այստեղ -եր արմատական է. ինչ.

Ս. Տ.	*ախպէրքոնց, ախպէրքանց*	
Բ.	*ախպէրքոնցից, ախպէրքանցից*	
Գ.	*ախպէրքոնցօվ, ախպէրքանցօվ*	
Ն.	*ախպէրքոնցում, ախպէրքանցում*	

Զի բառի հոգնակին լինում է ձիանք, ձիանքոց և այլն:

Այս բոլոր ձևերը Մեծ-մեյդան թաղում հնչվում են -օնց:

Գիլանենցի ժամանակագրութեան մեջ այս բոլորը, ինչպես նաև -անք, էք, -երք, -անի հոգնակերա մասնիկն ստացող բառերը ունեն հգ. սեռ. -ոց, բցո. -ոցէ, գրծ. -ոցօվ ձևերը, փոխանակ արդի -ոնց, -ոնցով և այլն ձևերի. ինչ. սեռ. շինօղանոց 204, ուզբաշէքոց 107, խայերոց 94, 97, 98, 99, վրացէքոց 110, օմարէքոց 95, 102, 107, ուխտերոց 95, քաղաքըցէքոց 110, դազվինըցէքոց 110, 111, 112 (վարպետանոց՝ էջյի 58):

Բցո.— խայերոցէն 109, մլբանէքոցէ 185, ֆռանկանոցէ (ֆռանկներից) 185, բաբարանոցէն (լրերից) 198:

Գրծ. օմարէքոցով 103, սարդարանոցօվ 108:

Սրանցից դուրս երբեմն պատահում ենք հազվագյուտ ասութիւնների. ինչ. մանիս ա, մանիւն ա «էլ միտս իմ՝ նորա է», խոկեց խաանել «յոգւոց հանել», բուրք բուրոց «բիւրք բիւրուց, շատ շատեր», յօրէցօր «օրե ցօր», տարէցտարի «տարէ ցտարի», տարէն մին «տարեկան մի անգամ», չոր օրէն մին «չորս օրը մեկ», հրամանոց ձեզ, տանն ա «էլ տան է», մին տարէն յետ «մի տարուց հետո», մտացդ յէկնի «միտքդ քոզ մնաս», մտացս ա «միտքս է», տանից (կա և՝ տնից) «տնից»,

անդեն-դաշտեն խօսել «սար ու ձորից խոսել», շանից «շնից. բացառականը իբր սեռական գործածված ունենք՝ ես օրեն խմար «այս օրվա համար», ամեռնեն շոր «ամեռվա շոր», այսպես նաև Հնդկահայոց մեջ՝ տարես ամառն շատ շոր ա «այս տարվա ամառը շատ տաք է»։ Նույնիսկ գրական լեզվի մեջ. (ինչ. «ձմեռի վերայ ազգ. յառաջ. ներկայէն վիճակին»). այն ժամանակին մարդկանց 17. յառաջեն գեղեցկութիւնն «առաջվա գեղեցկությունը», 31. ամեն օրե խռովութիւնը։ Նույն գրքում բացառականի մի այլ ձև էլ ունենք. այն է՝ ազգակցացե 38, անցաւ-բացե «անցորդներից» 39, ծնողացե 93. Ժմյուռնիո աղերսագրի մեջ էլ բացառականը ե ձևով է. ինչ. տանեն, նավեն, տեղեց, այսպես նաև դերանուններըը։ Նույնը պատահում ենք շատ անգամ Գիլանենցի ժամանակագրության մեջ. ինչ. իմ մեխքեն 103, քանի օրեն 93, օրեն յեա 183, ամսեն 106, խանեն 203, քաղաքեն 100, 184, քաղաքես 102, Ատուածատեն 184, Վախտանկեն 203, ձիանեն «ձիուց» 96, տեղես 93, ասկարեն 93, տանե 201, տներեն 111։

Անկանոն հոգնակիների մեջ նկատելի են դրօց, մուշակաց, գրեցդաց (ըստ Բիւր. 1899, 754 սեռ. գնդօց, գնդաց), գրդրյաց և այլն։

Նոր-Ջուղայի բարբառի մեջ գրաբար հոլովման զանազան մնացորդներ էլ կան, որոնք բարբառի բնիկ ձևերի կողքին գործածվում են երբեմն։ Այսպես՝ ն հոլովումից.

արեգակն>արեգ՛ակ, արեգ՛ական, արեգ՛ակից
գառն>գ՛առն, գ՛առան, գ՛առնի, գ՛առնից
մուկն>մուկն, մկան, մկնի, մկնից
նուռն>նուռն, նռան, նռնի, նռնից
տուն>տուն, տան, տանից
շուն>շուն, շան, շանից

Ր հոլովումից.

տայգր>տեքր, տեգ՛էր, տեքրից
սկեսուր>սկեսուր, սկեսեր, սկեսերից. կարող է նաև հոլովվել սովորական ձևով առաջին հոլովմամբ՝ սեռ. սկեսուրի և այլն, իսկ սկեսրայր>սկեսրօր բառը միշտ առաջին հոլովմամբ է և լինում է սեռ. սկեսրօրի, սկեսրօրից և այլն։

կառուր>կառուր, կառեր, կառերից կամ կարից

Ու հոլովումից.

կէս>կէս, կիսու, կիսից
քէն>քէն, քինու, քինուց
նախանձ>նախանձ, նախանձու (իբրև մակբայ)

Ա հոլովումից.

Ատուածածին>Ատուածածին, սեռ. Ատվածածնա, և սրանից կրճատվելով՝ երբեմն էլ Ատվածնա, Ասվածնա, Ատվածան, Ասվածա։

Գիլանենցի ժամանակագրության մեջ այս կարգին են պատկանում հատուկ անուններըը, որոնց թե սեռական, և թե բացառական ձևը լինում է ա. ինչ. Համազասպ 92, 94. Բրմանայ, Սպահանայ 94, 95, Բազդատայ 92, Յարհանայ 93 և այլն։

Առանձին ձևեր են մահ>մախ, մախվան և տեր>տէր, տրոջ։

Ագուլիսի բարբառում գրաբար հոլովման մնացորդներն են՝

ա) Շուն>շօն և տուն>տօն բառերի հոլովումը. սեռ. շուն, տուն, որոնք առոյացած են գրբ. շան, տան ձևերից՝ ա>ու ձայնափոխությամբ՝ ոնգականից առաջ։

Ըստ այսմ գրաբարի ուղղականը այստեղ գարձել է սեռական. սրանից էլ բցո. շանից, տանից, գրբ. շուեալ կամ շանավ, տանավ, ներգ. շուեամ, շանամ, տուեամ, տանամ, բարդությամբ՝ շանվօրի. Բայց անջատ՝ շուն տղօ «շան տղա»։— Տուն գործածական է նաև իբր նախդրիվ հայցական. ինչ. ակած ա միր տուն «մեր տունն է եկել». բիր միր տուն «մեր տունը բեր»։ Բայց ունենք նաև շնի ձևը. ինչ. շնին նան կատվին կռվըցանամ ա «շանն ու կատվին կռվեցնում է» (Զօկի ձրօգ, էջ 4ա)։

բ) Հոգնակի սեռ.-տրականի -աց, -ուց վերջավորությունը, որ կանոնավորապես գտնում ենք մի քանի դեպքերում. 1) հայվաքական հոգնակի ձևերի մեջ. ինչ. ոսկր>հգ. ըսկրատիք, սեռ. ըսկրատաց, տուն>հգ. տնարիք, սեռ. տնարաց, կին>հգ. կնանիք, սեռ. կնանաց, ձի>հգ. ձիյանք, սեռ. ձիյանաց, գիրք>հգ. գրյանք, սեռ. գրյանաց, մարդ>հգ. մադիք, սեռ. մադկաց, աղայ>հգ. աղարք, սեռ. աղարաց, երախայ>հգ. ըրխարք, ըրխարաց, խօսք>հգ. խասկարք, սեռ. խասկերաց (քիչ գործածական) և այլն։

Հայվաքական հոգնակիների այս հոլովումը սովորական և միակ գործածականն է, այնպես որ գրանք չեն կարող -ներ մասնիկն ընդունել։ Այսպես չեն սակայն պարզ ք-ով կազմված ձայնավորատանդ բառերի հոգնակիները. ինչ. քարիք, կատուք և այլն, որոնց սեռականը լինում է քարիների, կատուների և այլն։

2) Բնակիչ ցույց տվող և -ցի, -ացի, -եցի մասնիկներով կազմված բառերի հոգնակիում. ինչ.

գիւղացի>գ՛ըղոցի, հգ. ուղ. գ՛ըղոցիք՛, գ՛ըղոցոց
Ագուլեցի>Ըգ՛ըլոցի, Ըգ՛ըլոցիք՛, Ըգ՛ըլոցոց
Աղցի>Աղըցի, Աղըցիք՛, Աղըցուց
Մարաղացի>Մըրըղացի, Մըրըղացիք՛, Մըրըղացոց
Տանակերացի>Տընըկըրտոցի, Տընըկըրտոցիք՛, Տընըկըրտոցոց
Վանեցի>Վանըցի, Վանըցիք՛, Վանըցուց
Հաշտարխանցի>Հոշտարխանցի, հոշտարխանցիք՛, Հոշտարխանցուց:

Այս օրինակներից երևում է, որ -ացի, -ոցի մասնիկով կազմված բառերի հոգնակի սեռականը լինում է -ոց, -ոց, իսկ -ցի մասնիկով կազմվածներինը՝ -ուց, առաջինը՝ շեշտը վերջընթեր վանկում, իսկ երկրորդը՝ շեշտը վերջին վանկում լինելու պատճառով: Ցղնայի ենթաբարբառում գործածական է -եցի մասնիկը, որի սեռականն է -ոց կամ -ուց. ինչպես՝ ցղնեցի, ցղնէցոց, ցղնէցուց:

3) Ընտանիք կամ գերդաստան ցույց տվող բառերի մեջ, որոնք կազմված են -աք, -ուք (<հանք, ննք, ոնք) մասնիկներով. ինչ.

Բաղդասարեանք>Բաղդասարաք, սեռ. Բաղդասարաց.
Զարգարեանք>Զարգարիք՛, սեռ. Զարգարից.
Աչեարեանք>Աչեարուք, սեռ. Աչեարուց.
Պետրոսեանք>Պետրուսաք, սեռ. Պետրուսաց կամ Պետրոսուք, սեռ. Պետրոսուց.
արաբ. xāla «մորաքույր»>խօյլոք, սեռ. խօյլոց և այլն:

Այն բոլոր բառերը, որոնց հոգնակի սեռական-տրականը կազմվում է -աց, -ուց մասնիկներով, իրենց հոգնակի բացառականի, գործիականի և ներգոյականի համար ունեն առանձին ձևի հոլովում, որ կազմվում է հետևյալ մասնիկներով.

Բացառական -աւնի. -աւնից, -հումնի, -հումնից (Ցղ. նաև հաւնա).
Գործիական՝ -աւնավ, հումնով.
Ներգոյական՝ -աւնամ, -հաւնամ, հումում.
(Ցղ. աւնում, հումնիւմ, ում, հաւնում):

Այս բոլոր մասնիկները կցվում են սեռ.-տր. հոլովաձևի վրա՝ իբրև առանձին բառ (երկու շեշտով). օր.

ոսկր>հգ. ըսկըռատիք՛, սեռ. ըսկըռատաց, բց. ըսկըռատացանից, ըսկըռատաց-հումնից, ըսկըռատաց-աւնի, ըսկըռատաց-հումնի, գրծ. ըսկըռատաց-աւնավ, ըսկըռատաց-հումնով, ներգ. ըսկըռ-ատաց-աւնամ, ըսկըռ-ատաց-հումնում.

կին>հգ. կնաւնիք՛, սեռ. կնաւնաց, բց. կնաւնաց-աւնից, գրծ. կնաւնաց-աւնավ, ներգ. կնաւնաց-աւնամ «կանանցում, կանանց մեջ» և այլն:

Այս ձևով են հոլովվում նաև 2-րդ, 4-րդ և 9-րդ հոլովման հետևող բառերը՝ միայն եզակիի մեջ. ինչ.

հայր>հայր, սեռ. հօր, բց. հօր-անից, հօրհանից, գրծ. հօր-անավ, հօր-հանավ, ներգ. հօր-անամ, հօր-հանամ.

քոյր>քուր, սեռ. քվիր, բց. քվիր-անից. գրծ. քվիր-անավ, ներգ. քվիր-անամ.

տէր>տայր, սեռ. տէրուջ, բց. տէրուջ-անից, գրծ. տէրուջ-անավ, ներգ. տէրուջ-անամ և այլն:

Բաղդասար>սեռ. Բաղդասարա, բց. Բաղդասարա-անից (-հանից), գրծ. Բաղդասարա -անավ (-հանով), ներգ. Բաղդասարա-անամ (-հանում).

շաբաթ>շաբաթ, սեռ. շբաթվո, բց. շբաթվո-անից, գրծ. շբաթվո-անավ, ներգ. շբաթվո-անամ և այլն:

Երկուսի տարբերությունն այն է, որ հավաքականները միայն հոգնակիի մեջ են առանում հիշյալ հոլովաձևերը և նրանցից դուրս ուրիշ ձև չունեն բացառականի, գործիականի և ներգոյականի համար, իսկ Բ, Դ—Թ հոլովման հետևող բառերը առանում են միայն եզակիի մեջ և ունեն նաև սովորական -ից, -ավ, -ամ ձևերը. այս վերջիններները, սակայն, Ե—Թ հոլովման մեջ ավելի քիչ գործածական են, քան -անից. -հումնից, -աւնավ, -աւնամ ձևերը:

Գրաբար հոլովման ճնացորդ կարելի է համարել նաև բացառականի -աւն մասնիկը (փխ. -էն), որ պատահում է Բրևիա Ագուլիսի բարբառում և ավելի հաճախ Ցղնայի ենթաբարբառում. ինչ. Ագլ. աստեղաւն, Ցղ. ըստեղաւն «այստեղից», Ցղ. մարաւն, կլխաւն «մարքից, գլխից» և այլն:

Մարաղայի բարբառում ճնացել են շատ քիչ չափով գրաբարաձև հոլովումներ, որոնք են՝

դուռն>տուռ, տռան
ձուկն>ծիւկ, ծկան
ձեռն>ծէռ, ծէռան
մուկն>մուկ, մկան
շուն>շիւն, շան
տուն>տուն, տան
նուռն>նուռ, նռան

Տայգր բառը բարբառիս մէջ ստացել է ուղ. ակբյեր ձևը, որ գրաբարի սեռականից է առաջացած. ըստ այսմ սեռական լինում է տէքեի, բայց նաև՝ տէքերի:

Լեհահայ բարբառում գրաբարից մնացած հոլովները հետևյալներն են.

ոտք>սեռ. օդից, նշ. «ոտքի վրա»
ձեռք.—աղէգնը ձ'էռաց «ճարպիկ»
ձէռաց գ'իր «ձեռագիր»
ձ'էռաց լաւեիս Հնգ. «թաշկինակ»
հարսնից Հնգ. «հարսանեաց»
հարսնեցն Հնգ. «հարսնիքին»
տուն>սեռ. դանը, որից դանը մարդ՝ «տան տերը», դանը դիգին «տանտիկին», դանըդիգնութիւն (Սչ. դան ձաձուգ «ծածք»).
օր>սեռ. ավուր, որից՝ դէս ավուր վայ «հարավակողմը»
արևելք>սեռ. արևելից վայ «արևելյան կողմ»
Հնգ. խոսօք «խոսքով»
ձմեռն>սեռ. ձ'ըմբռան «ձմռան»
գաւակ>Սչ. սեռ. գավագաց

Սուչավայի բարբառում գրաբարաձև հոլովման լավագույն մնացորդն է -աք, -տաք, -տիք մասնիկներով կազմված հոգնակի բառերի հոլովումը, որ հետևյալն է.

կին>հգ. գընդիք, գընդոց (նաև Հնգ.), գընդօցմէ
եղբայր>հգ. ախբ'ըրդիք, ախբ'ըրդաց (նաև Հնգ.), ախբ'ըրդացմէ.
քոյր>հգ. քըրվըդիք, քըրվըդաց, քըրվըդացմէ
ընկեր>հգ. ընգէրդաք, ընգէրդաց, ընգէրդացմէ
բարեկամ>հգ. բ'արէգամաք, բ'արէգամաց, բ'արէգամացմէ և այլն, և այլն:

Նույնիսկ օտար բառն էլ կարող է գրաբարաձև հոլովում ստանալ, ինչ. խաասափչի «մսավաճառ», հգ. սեռ. խաասափչոցրն (Բազմ., 1893, էջ 433):

Առանձնապես պետք է հիշել դուստր բառը, որ ինչպես ինքը, նույնպես և իր հոլովումը գրաբարից ժառանգությամբ պահվել է Սուչավայի բարբառում ուղ. դ'ուդրը, դ'րուդ, սեռ. դ'ոդեր, դ'րոդեր ձևով (Լհ. ուղ. դ'ուսդ'ը):

Սչ. ձ'եր հրամանօց (Հուշարձ., էջ 362):

Մարդ բառի հոգնակին՝ մարդիկ ստանում է Սուչավայի բարբառում հետևյալ ձևերը.

Ու. մարդիք
Ս. Տ. մարդ'օց, մարդ'իքաց (նաև Լհ.)
Բ. մարդ'օցմէ, մարդ'իքացմէ, մարդ'իքօցմէ
Գ. մարդ'իքըցմօվ (Լհ.)

Վանի բարբառը տեղ-տեղ պահել է գրաբարաձև մի հոլովում, որ հաճախ գործ է ածում բարբառային նոր ձևի հետ զուգընթաց. Սրանք են (այրուբենական կարգով).

այլ>էլ «օտար մարդ». սեռ. հլոց, ոմանք այս բառը կարծում են գրբ. այլ, այլոց ձևից. բայց ես վախենում եմ, որ թրք. հլ «օտար» բառից լինի. համմտ. պոլսահայ բարբառով՝ հլերուն ձեռքը ինկաք (օտարների). և Պոլսի բարբառը չգիտէ այ>է ձայնափոխությունը:

անուն>անուն, անվան
աչք>աչք, աչիչ
ասեղն>ասեղ, ասղան (որ և ասղի)
աստամն>աստամ, աստման (որ և աստմի)
երկինք>էրկինքյ, էրկնուց (որ և էրկընքյի)
խելք>խելքյ, խելուց (որ և խելքյի)
խօսք>խօսք, խօսաց
հիմն>խիմ, խման, բգ. խմնէ «ի հիմանէ»
ձեռն>ծեռ, ծեռաց
ձիւն>ծիւն, ծան, ծնից, ծնօվ
մեղք>մեխքյ, մեղաց (որ և մեխքյի)
մէջք>մէչք, մէճաց (որ և մէչքի)
միտք>միխկ, մտաց, օր. մէչ ուր մտաց կասի
շուն>շուն, շան, շնից, շնօվ
ոտն, ոտք>վոտ, վոտաց (որ և վոտի)
սիւն>սուն, սան, սնից, սնօվ
տայգր>տէքյր, տէկյեր, տէկէր

տեղի>տեղ, տեղաց
տուն>տուն, տան, տնից, տնով. տարօրինակ սեռ. ձև ունի՝

Ժամատու «Ժամատան». այսպես՝ էն Ժամատու անուն էլ դրին Մարութայ պանցի Աստուածածնին (Լալայան, Վասպուր.), 1912, էջ 49)։

վանք>վանքյ, վանից (որ և վանքյի)
քուն>քյուն, որից քյընոց կյոխ «քնելու ժամանակ»
օր>օր, ավուր (որ և օրվա, օրվան)

Նկատելի է, որ այս ձևերից նրանք, որ գրաբարի անեզական են ներկայացնում, ընդհանրապես միաժամանակ սեռական, տրական և բացառական են. օր. աչիչ, յերկնուց, խելայց, մեղաց, մէնաց, վոտաց։ Սրանք ունենում են նաև սովորական ձևով սեռ.-տր. ինչ. էրկընքյի, խելքյի, մեխքյի և այլն։ Միաժամանակ ասվում է՝ վոտ, սեռ. վոտի, վոտաց, բցո. վոտից, վոտաց, սեռ. ծեռաց, բցո. ծեռնից։ Բայց գործիականը երբեք չի լինում գրաբարաձև, այլ նոր ձևով. այսպես՝ աչքով, էրկընքյով, խելքյով, ծեռնով, մեխքյով, մէչքով, վոտով, վոտնով։

-աւոր ձևով հոգնակին լինում է սեռ. բցո. -ացց, օր. տեղերանքյ, սեռ. բցո. տեղերանց, գրծ.-տեղերով, տեղերանքյով։

Ուրիշ դեպքերում հոգնակիի -ներ ձևը իր հոլովներով սովորական է. ինչ. տէր>տէր, տիրվանքյ, տիրվանքյներաց, թև>թեվ, թիվքյեր, թիվքյերաց։

Անսովոր ձևի հոլովում են ներկայացնում -իկ վերջացող մի քանի բառեր, որոնց օրինակն է՝

Ո. պապիկ
Ս. պապկէ
Բ. պապկից
Գ. պապկով

Սրա նման են նաև՝ մամիկ և կատիկ «նավակատիք»։
Կատկէ ձևը թե սեռական է և թե բացառական։
Այսպես են հոլովում նաև -իկ վերջացող անձնանունները, ինչ. Շողիկ>Շօղիկ, Օղիկ, Նազիկ>Նոզիկ, սեռ. Շօղկէ, Օղկէ, Նոզկէ. օր. Օղկէ խէր «Օղիկի հայրը», Շօղկէ մօտ կնա «Շողիկի մոտ գնա»։ Նոզկէ գյէօլ «Նազիկ լիճը» (իբր օրինակ է առնվում ջրի մեծ պաշարի)։

-իկ վերջացող մականուններից ունենք քաչալիկ «ճաղատ», որ նույնպես այս հոլովման է հետևում. ինչ. քաչըլկէ կյըլէօխ «ճաղատի գլուխը», որ և՝ չոչըլկէ։

Նկատելի է, որ այս բոլորը անձ են ցույց տալիս՝ բացի կատիկ բառից։

Գրաբարում այսպիսի հոլովում չկա. բայց միջին և ավելի ուշ ժամանակի հայերենում գտնում ենք սեռ.-ի ձևը, միայն -ի վերջացող անունների համար. օր. Նուրսքի, սեռ.-տր. Նուրսքէ, Նուսքի, սեռ. Նուսքէ, Ջոհի, սեռ. Ջոհէ (1270 թ., տես «Հայոց անձնանունների բառարան», հտ. Դ, էջ 98, 111)։ Բայց ավելի լավ է Նուշիկ անվան սեռ. Նուշկեն ձևը 1601 թ. (Ջեռ. վասպուրականի, էջ 798, անդ՝ էջ 92). Շողիկ—սեռ. Շօխկեն, 1688 թ. (Ջեռ. վասպ. 1020), պապիկ (իբր հասարակ անուն), սեռ. պապկէն, 1476 թ. (Ջեռ. վասպ., 480)։

Ղարաբաղի բարբառում գործածական են զուտ գրաբար հոլովումներ. օրինակ՝ խօխէք, տղէք, ըխչըկէք, մարքիկ, խըխօց, ըրխօց, մարքօց, տղօց, ախպօրց, քվօրց և սրանց համեմատ էլ մյուս հոլովները՝ քվօրցաւաց, մըրքօցավ, մըրքուցաւաց, մըրքուցաւաւ և այլն, և այլն։

Ջեյրունի բարբառը առանձնապես հարուստ է գրաբարի անեզական բառերի հոլովական ձևերի մնացորդներով, որոնց ցանկը տալիս եմ այստեղ.

ածու>աձու, սեռ. աձվից
աշուն>էշօնք, սեռ. էշնօն
աչք>էչվէ, սեռ. էչօց
բաղանիք>բ՛ադնըք, սեռ. բ՛ադնից
գժոխք>գ՛էօժէօխք, սեռ. գ՛օժօխոց
երկինք>իյգէնք, սեռ. օյգօնոց
լուծ>լօձք, սեռ. լօձոց
խելք>խիլք, սեռ. խիլոց
կշիռք>գիշէռք, սեռ. գօշօռօց
կուրծք>գույձք, սեռ. գօյձուց
հարսանիք>հայսնըք, սեռ. հայսնից
ձեռք>ձ՛ոռք, սեռ. ձ՛էռօց
մեղք>մէխք, սեռ. մէղօց
մէջք>մէչք, սեռ. մօչօց
մօրուք>մույռք, սեռ. մույվից

Նշխարք>նէշխոյք, սեռ. նը՛շխոյոց
ոտք>իդվէ, սեռ. ուդոց
յիշող>իւշիւցք, սեռ. ուշուցոց
ջրաղացք>ջ՛աղօյցք, սեռ. ջ՛աղցոց
վանք>վօնք, սեռ. վանօց
վարտիք>վայդըք, սեռ. վայդից
տեղ>դեղ, սեռ. դէղօց
քրտինք>քըյդանք, սեռ. քօյդօնօց
օրօրոց>իւյիւցք, սեռ. ույուձ՛ոց

Այս բոլորի համար պետք է նկատել, սակայն, որ՝

ա) Գրաբարի բոլոր անեզական բառերը այսպիսի հոգնակի չունեն. կան բառեր էլ, որոնք անեզական ձևով թեև գործում են Զեյթունի բարբառում, բայց չունեն գրաբարաձև հոգնակի, այլ միայն բարբառի սովորական ձևով.

ինչ. ապիք>ապըք, սեռ. ապըքը՝
ապօթք>ապէօցք, սեռ. ապէօցքի
աշխարհ>աշխօրք, սեռ. աշխօրքի
աչուն>էշօնք, սեռ. էշնօն
ապրանք>արրօնք, սեռ. արրընքը՛
արտասուք>արցունք, սեռ. արցունքի
բանալի>բ՛ալընք, սեռ. բ՛ալընքի և այլն

բ) Նույնիսկ վերոհիշյալ գրաբարաձև հոգնակիների հետ կան երբեմն նաև սովորական ձևով հոգնակիներ. Այսպես են հետևյալները.

հարսանիք>հայանըք, սեռ. հայանըքը, հայանից
մօրուք>մույուք, սեռ. մույուքի, մուվից
նշխարք>նէշխոյք, սեռ. նէշխայքը՛, նըշխոյոց
ոտք>իդվէ, սեռ. ուդոց, ուդվունու
յիշող>իւշիւցք, սեռ. իւշիւցքա, ուշուցոց
վարտիք>վայդըք, սեռ. վայդըքի, վայդից
տեղ>դեղ, սեռ. դէղօն, դէղօց
քրտինք>քը՛յդանք, սեռ. քը՛յդինքի, քօյդօնօց

գ) Գրաբարաձև այս սեռականները չեն պահված բարբառում հենց ուղղակի գրաբարի ձևով, այլ նրանք էլ ենթարկված են այն ձայնափոխություններին, որոնց ենթարկվել են բարբառի բառերն առհասարակ. Այսպես՝ հմմտ.

Գրբ. ձեռաց> Զթ. ձ՛էոց
մեղաց> մէղօց
նշխարաց> նը՛շխօյօց
աչաց> էշօց
բազանեաց> բ՛աղնէց

Կամ նույնիսկ շատ ավելի փոփոխված հոլովմամբ՝

Գրբ. երկնից> Զթ. օյդօնօց (բց. օյդօնօցը)
մօրուաց> մույվից
տեղեաց> դէղօց
քրտանց> քօյդօնօց

և կամ նմանողական օրենքով՝

Գրբ. ոտից> Զթ. ուդոց (որ ներկայացնում է ոտաց ձևը, իսկ սա էլ կազմված է մարմնի մյուս անդամների հոգնակի ձևի նմանությամբ. ինչ. աչաց, ձեռաց, միջաց).

Գրաբարաձև հոլովումների շարքին են պատկանում նաև հետևյալ բառերը՝

բեռն>բ՛եռ, բ՛եռան
օր>էօյ, սեռ. ավույ
շուն>շուն, սեռ. շօն, շը՛նէն, շը՛նէօվ
տուն>դուն, սեռ. դօն

Գիւղ>գ՛եղ «Զեյթուն» բառի բացառականը՝ գեղջեն<գրբ. ի գեղջ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում՝

շուն>շուն, հոգ. շը՛նվը՛ք, սեռ. շը՛նվուց, բց. շը՛նվուցնէն, գրծ. շը՛նվը՛նէօվ

եշ>էշ, հոգ. իշվիք
սեռ. իշու » իշվինուն
բց. իշուց » իշվուց
գրծ. իշէօվ » իշիյէօվ

կնիկ>գր՛նը՛գ, հոգ. գը՛նդոք
գօնգդոց
գօնգդօցմէ
գօնգդօցմէօվ

Մարդ>մօյդ, հոգ. *մայդ՛ըք*
մայդ՛ոց
մայդ՛ուցմէ
մայդ՛գէօվ

Մեղրու բարբառում *ունենք գրաբարյան հետևյալ ձևաւորդները.*

ա) Գրաբարից *մնացած մի քանի առնեգական բառեր. ինչպես՝* ապրանք>ապրանք, *սեռ. տր. ըպրանաց.* երկինք>յէրգինք, *սեռ. տր. յէրգնաց (և՝ յէրգ՛ոնց).* *հարցանք>հարցանք, *սեռ. տր. հրրցանաց.* յանցանք>հանցանք, *սեռ. տր. հանցանաց.* յարգանք>հարգանք, *սեռ. տր. հարգանաց և այլն։ Այդ բառերը կարող են գործածվել իբրև սովորական եզակի թվով բառեր (ինչպես՝* աչք>աչկ), *և հոլովվել առաջին հոլովմամբ. ինչպես՝ ապրանքու, յէրգ՛ինք՛իւ, հարցանքու և այլն։ Հանցանք և հարգանք բառերը գրականից մուտք գործած բառեր են և իրրև այդպիսիք էլ պահում են գրաբարյան ձևերը։*

2) Հավաքական հոգնակիները, *որոնք հոգնակի ուղղականում տարբեր վերջավորութիւններ ունենալով, համապատասխանորեն տարբեր վերջավորութիւններ էլ ունեն սեռականում ու տրականում. ուստի և բերում ենք այդ բոլոր բառերը իրենց եզակի սեռականով, հավաքական-հոգնակի ուղղականով ու սեռականով։*

գիր>գիր «գիրք», *սեռ.* գի՛րու
հվք. գի՛րոնք, *սեռ.* գի՛րոնց
դուրք>դուրք, *սեռ.* դըրքու
հվք. դըրքարէ, *սեռ.* դըրքարաց
ընկեր>ընգէր, *սեռ.* ընգէրու
հվք. ընգէրուք, *սեռ.* ընգէրուց
կուռն>կօռնը, *սեռ.* կըռան
հվք. կըռնաւէ, *սեռ.* կըռնաւաց
ճիւղ>ճօղնը, *սեռ.* ճըղան
հվք. ճըղնարէ, *սեռ.* ճըղնարաց
սեամ>չեմք , *սեռ.* չէմք՛իւ
հվք. չըմքարէ, *սեռ.* չըմքարաց

եզն>իզնը, *սեռ.* իզէն *(և՝* իզան*)*
հվք. իզանք, *սեռ.* իզանց
կաուր>կըտօր, *սեռ.* կըտրու
հվք. կըտրրնարէ, *սեռ.* կըտրրնարաց
խիզան>խէզան, *սեռ.* խէզանու
հվք. խըզնանէ, *սեռ.* խըզնանաց
լեզու>լիւզիւ, *սեռ.* լիւզ(վ)իւ
հվք. լի՛զվէնէք՛, *սեռ.* լի՛զվէնէց
խաչու>խաչու, *սեռ.* խաչ(վ)ու
հվք. խըչվէնէք՛, *սեռ.* խըչվէնէց
խաղող>խաղու, *սեռ.* խաղ(վ)ու
հվք. խըղվէնէք՛, *սեռ.* խըղվէնէց
մատակ>մատակ «առուշ», *սեռ.* մրատակու
հվք. մրատկօտան, *սեռ.* մրատկօտանաց
եկեղեցի>գըղէցէ, *սեռ.* գըղէցէ
հվք. գըղրցօնէք՛, *սեռ.* գըղրցօնաց
փեսայ>փըէսէ, *սեռ.* փըէսէ
հվք. փըսօնէք՛, *սեռ.* փըսօնաց
գերեզման>գի՛րիզման, *սեռ.* գի՛րիզմանու
հվք. գի՛րի՛զմի՛նանէք՛, *սեռ.* գի՛րի՛զմի՛նանց
հնձան>ընձան, *սեռ.* ընձանու
հվք. ընձրնանէք՛, *սեռ.* ընձրնանաց
այգի>իգ՛ի, *սեռ.* իգ՛է
հվք. իգ՛ինէնէք՛, *սեռ.* իգ՛ինէնէց
ոսկր>ուսկուռ, *սեռ.* ուսկուռու
հվք. ըսկրոտէք՛, *սեռ.* ըսկրոտաց
ջրորդան>շրուռթկան, *սեռ.* շրուռթկանու
հվք. շրըրթկրնանէք՛, *սեռ.* շրըրթկրնանաց
պատուկ>պրտօկ, *սեռ.* պրթկու
հվք. պրտրկնատէ, *սեռ.* պրտրկնատաց
շատ>շէտ, *սեռ.* շէտու
հվք. շէտուք, *սեռ.* շէտուց

Այս օրինակները ցույց են տալիս, որ -անք ‖ -ունք *մասնիկն ունեցողները սեռականում կանոնավոր կերպով ունենում են* -ացց ‖ -ուցց. -ատ, -ատ ‖ -ուտ, -օտ, -ատաւ -օտաւ, -օտաւ *մասնիկներն ունեցողները՝ համապատասխանորեն,* -արաց, -ացաց ‖ ուցաց, -օցաց, -ատաց, -օտաց, -օտաւցաց. -էնէք՛ *մասնիկն*

ունեցողները՝ -ենեց, և, վերջապես, -ուք մասնիկն ունեցողները՝ -ուց:

Սըրմարանք, դեղարանք, գիւղարանք բառերը գործածվում են իբր եզակի և կանոնավորապես հոլովվում են առաջին հոլովմամբ. սեռ. սըրմարանքու, դէղարանքու, գիւղարանքու, հգն. սըրմարանքնէ, դէղարանքնէ, գիւղարանքնէ և այլն:

3) Ընտանիք կամ ազգականներ ցույց տվող -եանք>անք, -աք ‖ -ոք, -ոնք>ուք ‖ -իւք, -ենք>-էք՛ մասնիկներով կազմված հավաքականները, ինչպես՝

Ծովեանք>Ծովաք	սեռ.	Ծովաց	բաց.	Ծովաց	էնից
Ռուշանեանք>Ռուշանաք	»	Ռուշանաց	»	Ռուշանաց	»
Գուգեանք>Գուգաք	»	Գուգաց	»	Գուգաց	»
Վաչեանք>Վաչոք	»	Վաչոց	»	Վաչոց	»
Փարեանք>Փարոք	»	Փարոց	»	Փարոց	»
աներանք>Տընէրաք	»	Տընէրաց	»	Տընէրաց	»
հայր(անք)>Հէրանք	»	Հէրաց	»	Հէրաց	»
մերոնք>Մէրուք	»	Մէրուց	»	Մէրուց	»
ձերոնք>Ձէրուք	»	Ձէրուց	»	Ձէրուց	»
Մազոնք>Մազիւք	»	Մազիւց	»	Մազիւց	»
Բոյախչոնք>Բի՛յախչիւք	»	Բի՛յախչիւց	»	Բի՛յախչիւց	»
Տիրացուներք>Տի՛րի՛ավէք՛	»	Տի՛րի՛ավէց	»	Տի՛րի՛ավէց	»
Մկոյենք>Մըկէք՛	»	Մըկէց	»	Մըկէց	»

Այս կարգի բառերի ինչպես բացառականը, այնպես էլ գործիականն ու ներգոյականը ունեն միայն հետադրավոր ձևեր:

Գործիականը կազմվում է -ենավ հետադրությամբ, ինչպես՝ Ծովաց էնավ, Ուրշանաց էնավ, հէրաց էնավ և այլն:

Ներգոյականը կազմվում է մանչին կամ ենամ հետադրությունների. ինչպես՝ Գուգաց մանչին կամ Գուգաց էնամ, Մազիւց մանչին կամ Մազիւց էնամ, մէրուց մանչին կամ մէրուց էնամ և այլն:

բ) Գրաբարյան սեռականի և արականի -ոց>օց վերջավորությունն, որ կանոնավոր կերպով առանում են -ացի, -եցի>-էցէ, -ցի, -ցէ մասնիկներով կազմված՝ որ տեղացի լինելը ցույց տվող բառերը, ինչպես՝

մեղրեցի>մըղրէցէ	հգն.	մըղրէցէք՛	սեռ.	մըղրէցօց
կարճանցի>կըրճընէցէ	»	կըրճընէցէք՛	»	կըրճընէցօց

թէացի>թէյրցի	»	թէյրցէք՛	» թէյրցօց
երևանցի>րէվանցէ	»	րէվանցէք՛	» րէվանցօց
Ղափանցի>զափանցէ	»	զափանցէք՛	» զափանցօց

Այս բառերի բացառական, գործիական ու ներգոյական հոլովները (թե եզակի, և թե հոգնակի) նույնպես կազմվում են ենից, ենավ, ենամ, մանչին հետադրություններով:

գ) Վերջապէս, պետք է հիշել նաև մարդ բառը, որ եզակիում կանոնավոր կերպով հոլովվելով առաջին հոլովմամբ (մարդու, մարդէ և այլն), հոգնակիում ունի հետևյալ ձևերը. ուղղ. հայց. մարդէք՛, սեռ.-տր. մարթկանց, բաց. մարդկանցէ, մարդկանց ենից, գործ. մարդկանցավ (մարթկանց ենավ), ներգ. մարթկանցամ (մարթկանց մանչին, մարթկանց ենամ):

Կարևո բարբառում գրաբարյան հոլովում ունեն ք-ով կազմված հոգնակիները. կան նաև մի քանի դարձվածքներում և ասույթներում գործածվող գրաբարյան հոլովաձևեր, ինչ. խըմօղաց, ճիշօղաց, մօրուց, լըսօղաց, առաջուց, հիմիգուց և այլն[1]:

Նման գրաբարանման ձևերի մի ցանկ ուրիշ զանազան բարբառներից.

խելաց հանել «խենթեցնել, գժվեցնել» Ակն.
օտաց վրա «կանգնած» Պրտ.
աչիչ Վն. «աչաց, աչքի»
մարդոց Պլ.
տղոց Պլ.
այս տեղաց «այս տեղի, այս տեղից»
այն դիաց «այն կողմից»
գեղոց գեղ «գիւղէ գիւղ» Պրտ.

Հեռու լսողաց Պլ. և ուրիշ տեղեր. գործածվում է նախքան անպարկեշտ մի խոսք ասելը. ինչ. հեռու լսողաց շուն մը եկավ. ուրեմն՝ բացառական ի նախդիրի կրճատումով:

Աշխարհաբարը ավելի առաջ է տարել գրաբար հոլովման ճեացորդները ջնջելու և իր 6 հոլովումների տակ ամփոփելու

---

1 Հ. Մ. Մկրտչյան, *Կարնո բարբառը*, ԳԱ հրատ., 1952, էջ 54:

գործը. Բայց այստեղ էլ աշխատանքը մինչև ծայրը չի հասած և քիչ արևելյան, և քիչ մանավանդ արևմտյան գրականի մեջ կան մի խումբ գրաբարաձև հոլովման ճեացորդներ։

Սրանցից ամենակարևորներն են՝

1) Ի վերջացող բազմավանկ բառերի հոլովումը արևմտահայոց մեջ. օր.

հոգի, հոգվո, հոգիէ, հոգվով
որդի, որդվո, որդիէ, որդվով
Թշնամի, Թշնամվո, Թշնամիէ, Թշնամվով

Բայց մանավանդ -ցի վերջացող բառերը. ինչ.

գիւղացի, գիւղացվո, գիւղացիէ, գիւղացվով
կարնեցի, կարնեցվո, կարնեցիէ, կարնեցվով

Սրանց հոգնակին էլ լինում է գրաբարի ձևով՝

Թշնամիք, Թշնամեաց, Թշնամիներէ, Թշնամիներով.
կարնեցիք, կարնեցոց, կարնեցիներէ, կարնեցիներով

Արևելահայ գրականում, սակայն, այս բառերը հետևում են երկրորդ հոլովման և լինում են աշխարհաբարի ձևով՝

հոգի, հոգու, հոգուց, հոգով
որդի, որդու, որդուց, որդ(ի)ով
Թշնամի, Թշնամու, Թշնամուց, Թշնամիով
գյուղացի, գյուղացու, գյուղացուց, գյուղացիով
կարնեցի, կարնեցու, կարնեցուց, կարնեցիով

Հոգնակիում պահվում են գյուղացիք, կարնեցիք, գիւղացոց, կարնեցոց և այլն ձևերը (թեև այժմ ավելի սովորական է -ներ-ով հոգնակի ձևը՝ կանոնավոր հոլովումով)։

Արևմտահայ գրականն էլ անցյալ դարի կեսից սկսեց հրաժարվել այս ձևի հոլովումից. առաջին հերթին օտար բառերն էին, որ անցան առաջին հոլովման. օր. Էֆենտի-Էֆենտիի, Ռոսսիա-Ռոսսիների, Միտիլլի-Միտիլլիի և այլն. սրանց հետևեցին նաև ուրիշ բառեր, ինչ. հայելի-հայելիի, եզակի-եզակիի, հոգնակի-հոգնակիի և այլն. և այսօր ընդհանուր կանոնով ամեն ի հանգող բազմավանկ բառ հետևում է առաջին հոլովման. ինչ. գարիի, եկեղեցիի, գիւղի և այլն, մինչև անգամ՝ Խորենացիի, Լամբրոնացիի և այլն։

2) Ազգ ցույց տվող բառերը. ինչ.

հայ—հգ. սեռ.	հայոց	
հույն	»	հունաց
ռուս	»	ռուսաց
պարսիկ	»	պարսից
արար	»	արաբաց
հնդիկ	»	հնդկաց
չին	»	չինաց և այլն

Սրանց եզակին կանոնավոր աշխարհաբար ձևով է. արևմտահայոց մեջ հգ. բացառականն էլ առաջ գործածվում էր մի վերջավորությամբ. ինչ. հայոցմէ, յունացմէ, պարսիցմէ... բայց հիմա վերացված է. կա միայն հայոցմէ, սովորական ձևն է՝ հայերէ, հույներէ, ռուսերէ, պարսիկներէ և այլն. այսպես նաև՝ գրծ. հայերով, հույներով... (անցյալ դարում գործածվել է նաև՝ հայոցմով, հունացմով...). արևելահայ գրականում կանոնավոր կերպով ասվում է՝ հայերից, հայերով, ռուսներից, ռուսներով և այլն։

3) -ութիւն և -ում հանգող բառերի հոգնակին. օր.

տերութիւն-տերութեանց
զրպում-զրպումնք, զրպմանց

4) Մի խումբ մասնավոր բառեր, որոնց ցանկն է.

տղայ, տղայք, տղոց կամ տղայոց, տղոցմէ, տղոցմով
պահք, պահոց կամ պասուց
դար, դարուց (դարերի, դարերու)
մարդ, մարդիկ, մարդոց, մարդկանց, մարդոցմէ, մարդկանցից, մարդոցմով, մարդկանցով
Աստուած, աստուծո, աստուծմէ, աստուծով կամ աստուծմով (ասանք համարում են առանձին հոլովում՝ ո վերջավ. բուքյան համար. արևելյան գրականում հետևվում է ու հոլովման).
կայսր, կայսեր, կայսերաց
կին, կանայք, կանանց, կանանցից, կանանցմէ
եղբայր, եղբարք, եղբարց
այր, արք, արանց, արանցմէ
պարոն, հգ. պարոնայք, պարոնայց

Սրանցից դուրս կարող են գտնվել զանազան գրաբարաձև հոլովումներ, որոնց գործածությունը անհատական նախասիրությունից է կախված. օր. աչունք «աչքեր» (Անիծեալն, Թրգմ. Մամուրեան, Զմիւռնիա, 1875, հտ. Ա, էջ 153, 154). Աշխարհաբարը այլևս չի ընդունում գրաբար հոլովում։

16. ԿՐԿՆԱԿ ՀՈԼՈՎՈՒՄ

Կրկնակ հոլովում կոչվում է այն երևույթը, երբ մի բառ որոշ հոլովական վերջավորություն առանալուց հետո, իբր թե լիներ անկախ ուղղական հոլով, երկրորդ անգամ հոլովվում և առանում է նույն կամ տարբեր հոլովական վերջավորություն. օր. Արշակի գիրը Մեսրոպիից գեղեցիկ է (ուզում է ասել՝ Արշակի գիրը Մեսրոպի (գրից) ավելի գեղեցիկ է)։ Այստեղ Մեսրոպի(ց) սեռական հոլով է, որ ներփակելով իր մեջ գիր բառը՝ համարվել է նոր ուղղական և երկրորդ անգամ հոլովվելով՝ առացել է բացառականի վերջավորությունը։ Կարելի չէ ասել՝ Մեսրոպից, որովհետև այս պարագային Արշակի գիրը ոչ թե Մեսրոպի գրից գեղեցիկ դուրս կգա, այլ ուղղակի Մեսրոպից։

Կրկնակ հոլովումը առաջանում է զանազան պատճառներից և քան այսօր ունի զանազան տեսակներ։ Գտնվում է բազմաթիվ լեզուների մեջ։

Օրինակներ վրացերենից՝

քալաքսա Սամարիտել-թա-սա
ի քաղաքն Սամարացոց

ուր Սամարիտիլքա հգ. սեռական է, որին ավելացել է նորից -սա վերջավորությունը իբր հայերեն «ի քաղաքն ի Սամարացոց»։

Մե միգոնե չեն կլիտե-նի սասուփեվ-ել-խա ցա-թա-սա-նի
ես տամ քեզ զրանալիս արքայութեան երկնից

Այստեղ ցաթա «երկնից» հգ. սեռական է (ցա «երկինք» բառից), բայց ստացել է դարձյալ սեռականի -սա մասնիկը և երրորդ անգամ հոգնակիի -նի վերջավորությունը, իբր հյ. երկնից-ներ։

թմա-նի-ցա թավ-խսա թքվեն-խսա-նի
հերք ևս գլխոյ ձերոյ

ուր թքվեն «ձեր», սեռ. թքվենիսա, ստացել է նորից հգ. -նի վերջավորությունը (իբր հյ. ձերոյ-ք)

դ'ովել-ման կոլտ-ման դոր-թա-ման
ամբողջ խումբը խոզերի

այստեղ բոլոր բառերը դրված են պատմողական հոլովով. դ'որի «խոզ» բառն էլ, որ հգ. սեռ. հոլով է, արդեն երկրորդ անգամ ստացել է -ման վերջավորությունը՝ իբր նշան պատմողականի։

Այսպիսի կրկնակ հոլովումներ կան նաև Կասպյան լեզուների մեջ։

Կրկնակ հոլովումներ ունի դարձյալ ուգրո-ֆիննական լեզվախմբից վոտյակերենը, ուր բառը միաժամանակ կարող է առանալ երկու հոլովական վերջավորություն, այն էլ իբար հակառակ. ինչ. latif և locatif, illatif և elatif, latif և elatif, elatif և inessif և այլն։ (Այս բոլորի մասին խոսում է Емельянов, Грам. вот. яз., էջ 145, բայց բացատրություն պարզ չէ)։

Կրկնակ հոլովում ունեն նաև ալթայական բուրյաթ լեզվի բոլոր բարբառները. օր. ալարական բարբառում սեռականից կարելի է կազմել տրական-ներգոյական, ներգոյականից՝ բացառական, ընկերականից՝ գործիական. inessif-ից՝ բացառական կամ prolatif, օր. xān-ā-dā (սեռական-ներգոյական) «խան-ին-ում», իբր թե «խանի անում, խանի տան մեջ»։

Չուվաշերենում ժամանակ ցույց տվող բառերը կարող են առանալ թե բացառականի, և թե գործիականի վերջավորություն և նշանակում են «այն ժամանակից մինչև այժմ», օր. mal «սկիզբ», բցո. maltan «սկզբից», որից՝ գրծ. mal-tan-pa «սկզբից մինչև այժմ», ener «երեկ», ener-ten-pele «երեկվանից մինչև այժմ»։

Չուվաշերենում դարձյալ պատահում են բառեր, որոնք ներկայացնում են մի հոլովյալ ձև, բայց դարձել են անկախ գոյական և այդ պատճառով իրրև առանձին բառ նորից կարող են հոլովվել. օվ. kerkunne «աշնան». ար. հյց. հոլով է ինքնին, և գործածվում է իբր մակբայ, հետո դարձել է գոյական և նշանակում է «աշուն», որ իր կարգին հոլովվելով տալիս է բց. kerkunneren, գրծ. kerkunnepe:

Դրավիդյան լեզուներումն էլ կան տեսակ-տեսակ կրկնակ հոլովումներ. գլխավորապես սեռականի վրա կարելի է ավելացնել ուրիշ հոլովական վերջավորություններ, բայց կարելի է նաև կազ-

մել տրական-ներգոյական, ներգոյական նախդրիվ հայցական և այլն. օր. viţţu «տուն», viţţukku տր., որից ներգ. -uļ մասնիկով՝ vittukkuļ «դեպի տան մեջը»։ Այսպիսի մ/թացումներ շատ բազմաթիվ են, որով և հոլովների թիվը գրեթե անսահման է։ Բրահուի լեզվում հայերենի ճիշտ նման ունենք ilum «եղբայր», սեռ. ilumnā «եղբորս», որ և հոլովվում է հայերենի պես՝ ilumnāna «եղբորսինը», բց. ilumnārān «եղբորսիններից», հգ. ilumnāteān «եղբորսիններից»։

Կրկնակ հոլովում կա նաև մեր հարևան թուրքերեն լեզվի մեջ։ Գոյականի սեռական կամ ներգոյական հոլովի վրա դրվում է իբր մասնիկ ki «որ» հարաբերականը, ստացվում է նոր ուղղական, որ կարող է նորից հոլովվել ամեն հոլովով։ Օր.

Hasan բառից՝ սեռ. Hasanən «Հասանի», որից՝ Hasanən-ki «որ Հասանինն է, Հասանի ունեցածը», բցո. Hasanən kin-den «Հասանի ունեցածից» (Հասան-ին-ից).

el «ձեռք» բառից՝ հգ. eller «ձեռքեր», eller-in «քո ձեռքերը», ellerin-de «քո ձեռքերում», ellerin-de-ki «քո ձեռքերում եղածը», ellerin-de-ki-ler «քո ձեռքերում եղածները», ellerin-de-ki-ler-le «քո ձեռքերում եղածներով», որ ունի բացի ստացական հոդից (-in-) և հարաբերականից (ki-), մեկ ներգոյական (-de-), մեկ հոգնակի ուղղական (-ler-) և մեկ գործիական (-le-) ընդամենը երեք հոլովական վերջավորություն։ Այս բոլոր օրինակներից երևում է, որ կրկնակ հոլովումը առաջանում է եկու գլխավոր պատճառից. ա) հոլովական ձգողություն, բ) զեղչումը։ Առաջինի մասին կխոսենք շարահյուսության մեջ։ Արդի հայերենում կրկնակ հոլովում կազմվում է գլխավորապես զեղչմամբ՝ սեռականի վրայից։ Երբ մի գոյական ունի մի հատկացուցիչ և միևնույն գոյականը ունի գարձյալ մի ուրիշ հատկացուցիչ, եթե չենք ուզում կրկնել գոյականը երկրորդ անգամ, դնում ենք սեռականն և նա կարող է հոլովվել գարձյալ իբր նոր բառ։

Արշակի գիրը և Մեսրոպի գիրը,

չկրկնելու համար գիր բառը, կարող ենք ասել՝

Արշակի գիրը և Մեսրոպինը.

այս վերջինը համարվում է ուղղական և կարող է հոլովվել հետևյալ ձևով.

Եզակի

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	Մեսրոպինը	Մեսրոպինը
Ս. Տ.	Մեսրոպինի	Մեսրոպինին
Բ.	Մեսրոպինից	Մեսրոպինեն
Գ.	Մեսրոպինով	Մեսրոպինով
Ն.	Մեսրոպինում	—

Հոգնակի

	Արևել.	Արևմտ.
Ո. Հ.	Մեսրոպինները	Մեսրոպինները
Ս. Տ.	Մեսրոպինների	Մեսրոպիններուն
Բ.	Մեսրոպիններից	Մեսրոպիններէն
Գ.	Մեսրոպիններով	Մեսրոպիններով
Ն.	Մեսրոպիններում	—

Բացի սեռականից կարելի է նաև գործիական հոլովից կազմել կրկնակ հոլովում. օր.

Թանաքով գրածը մատիտովից լավ է.

այսինքն՝ թանաքով գրածը մատիտով գրածից լավ է. ուր մատիտովից ներկայացնում է գործիական-բացառական։

Բայց այս ձևերը սովորական չեն. սովորական են միայն սեռականով կազմվածները։

Սվեդիայի բարբառում այսպիսի հոլովումը շատ տարածված է և հետևյալ ձևն ունի.

	Եզ.	Հոգ.
Ո. Հ.	Մէսրօփէնը	Մէսրօփնէնը
Ս. Տ.	Մէսրօփինէնը	Մէսրօփնինէնը
Բ.	Մէսրօփինինէ	Մէսրօփնիններէն
Գ.	Մէսրօփինինում	Մէսրօփնիններում

Հին հայերենում կրկնակ հոլովում ունենք նույնպես միայն սեռականից և միայն ուղղական-հայցական հոլովով՝ եզակի և հոգնակի և այլն, ինչ.

Տուք զկայսերն կայսեր և զաստուածոյն աստուածոյ. Մտթ. իր 21.

Զի ոչ խորհիս զԱստուածոյսն, այլ զմարդկան. Մտթ. ժզ. 23.

Աչս և բերան և լսելիս վասն այնորիկ եմ մեզ Աստուած զի զնորայսն խոսեացուք և զնորինսն արասցուք. Ոսկ.

Այսպիսի իսկ են Աստուածոյքն. Ոսկ.

Ավելի ուշ գտնում ենք նույնիսկ ներգոյականից կազմված կրկնակ մի հոլով՝

Ի դրաստոջացն «դրախտում եղածներից». Փիլ. այլար. 140,

Ուղղականն է դրաստ (իմա դրախտ), ներգոյական՝ դրաստոջ, որից սեռ.-տր. դրաստոջաց և ի նախդրով՝ բց. ի դրաստոջացն:

17. ԱՆԵԶԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Արդեն խոսել ենք անեզական բառերի մասին ընդհանրապես. մի խումբ բառեր, որոնք իմաստով եզակի են ու ձևով հոգնակի, կոչվում են անեզական: Այսպիսով անեզական բառերը հակառակն են հավաքական բառերի, որոնք իմաստով հոգնակի են ու ձևով եզակի:

Հայերենի մեջ անեզական բառերը 3 կարգի կարող ենք բաժանել.

ա) անեզական բառեր, որոնք թեև ցույց են տալիս մի ամբողջական առարկա, բայց բաղկացած են զանազան մասերից, օր. կառք.

բ) երկրների և գավառների անունները.

գ) վերացական բառեր. ինչ. բարք, վարք, ձիանք, կրոնք, միտք և այլն:

Վերջին խմբի մեջ կարևոր տեղ ունեն այն վերացական բառերը, որոնք կազմված են ածականներից՝ ք հոգնակերտի հավելմամբ. ինչ. բարիք և սրա նմանությամբ՝ չարիք: Բայց հաճախակս -ւի վերջացող ածականները, որոնք առանձնով ք նշանը՝ նույնպես դարձել են վերացական. ինչ. զարմանալիք, հոտառելիք, տեսանելիք, լսելիք, օծանելիք և այլն:

Կարևոր է նկատել, որ այս կարգի բառերն էլ երկու խմբի են բաժանվում. առաջին խմբի մեջ են մտնում այն բառերը, որ գործող են ցույց տալիս և անշուշտ կազմում են լեզվի հնագույն խավը. այսպես են՝ հոտառելիք, տեսանելիք, շոշափելիք և այլն, որոնց իմաստն է՝ հոտառող, տեսնող, շոշափող և այլն: Երկրորդ խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք ոչ թե -ող, այլ -ած իմաստն ունեն. այսպես են օր. սքանչելիք, զարմանալիք և այլն, որոնց իմաստն է՝ այն, որի վրա պետք է սքանչանալ, զարմանալ և այլն:

Անեզական բառերը կարող են գործածվել թե բարդության մեջ, և թե առանձին ոճերի մեջ. առաջին դեպքում գործ են ածվում միշտ եզակի ձևով, երկրորդ դեպքում թե եզակի, և թե հոգնակի. օր.

Փառք բառից.— փառաւոր, մեծափառ, փառս տալ...

Դեմք բառից.— դիմաւոր, ընդդեմ, դեմ յանդիման, դեմ դնել, զդէմ ունել...

Անեզական բառերը միաժամակ թե եզակի են, և թե հոգնակի. երբ գրաբարում հեղինակը ուզում է եզակի գործածել, ստիպված է դարձյալ հոգնակի ձևը դնել: Ջգուշավոր հեղինակներն են միայն, որ հարկ եղած դեպքում գրվածքին այնպիսի ձև են տալիս, որ ընթերցողը հասկանա թե խոսքը մեկի մասին է: Եղնիկը, որ մեր ամենից զգուշավոր և ուշադիր հեղինակն է, իր գրքի սկզբում (էջ 17) գրում է. Այլ նա աւասիկ իբրև զկաոս ինն լծեալ ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք... Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին, բայց միայն այսց կառաց՝ որ ի համազգեաց լծեալ են. և որ ի համազգեաց լծեալ են՝ երբեմն սայթաքին, երբեմն օձաեն և ի տագնապի գկառավարն և զանձինս կացուցանեն... և յորժամ ողջ կառքն իցեն և ողջ կառավարն... և այս կառք զարմանալիք ի հակառակ և յաննման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք...

Հենց սկզբից Եղնիկը կառք բառի կողքին դրել է իմն անորոշը, ցույց տալու համար, թե կառքը եզակի է. հաջորդ դեպքերում մերթ դնում է լծեալ (եզակի), մերթ ուղղեալք (հոգնակի). առնասարակ բայերը՝ հոգնակի, իսկ ածականները՝ միշտ հոգնակի (այսց, զարմանալիք).

Աշխարհաբարը փոխեց ոճերի մեջ անեզական բառեր գործածելու սովորությունը և գրավ ք-ով ձևը:

Այսպես՝ մինչդեռ գրաբար ասվում է միտ առնել, աշխ. միտք ընել կամ միտք անել:

Գրաբար ոճ է, երբ Վ. Փափազյան, Ասի, տպ. Թիֆլիս, 1903, էջ 32, տող 2 ասում է՝

Ջէն ի ձեռին, միայն նրան է սպասում. աշխարհաբար սովորական ձևով կլինի՝ զենքը ձեռքին նրան է սպասում։

Գրաբարի անեղական բառերը մեծ թիվ են կազմում. դրանք կարող ենք բաժանել դանազան խմբերի։

Առաջին խումբը կազմում են -աւոք վերջավորած բառերը, որոնք ցույց են տալիս բայական մի գործողություն (բայանուն)։ Այս բայանուններըը կազմվում են բնականաբար արմատի վրա ավելացնելով -աւոք մասնիկը, որից միայն ք նշան է հոգնակիի։ Օր.՝ չարչարել բայից առանում ենք չարչարաւոք, որի վրա ավելացնելով ք հոգնակերտը, առանում ենք չարչարաւոք անեղականը։ Սակայն, եթե բայը պատկանում է լծորդության երկրորդ տիպարին, կրկին աւ-երից մեկը ջնջվում է. օր.՝ սքանչանալ բայից առանում ենք սքանչաւոք և ոչ թե սքանչաւաւոք, որովհետև արմատն է սքանչ-։ Ուրեմն վարաւել բայից կազմված վարաւոք, ոչ թե -աւոք վերջավորությամբ բայանուն է, այլ արմատի վրա ավելացրած ք հոգնակերտը (ինչպես՝ եռք, վառք, վազք, հիւսք)։ Ըստ այսմ հաջորդ ցուցակի մեջ կրկնակ աւ մասնիկով բառ գոյություն չունի, բացի դաւաճաւոք և խոստովաւոք բառերից, որոնք նոր են։ Նշի, ինչպես և Աի չունեն այս բառերը, բայց նրա տեղ Նշի-ն ունի երկու տարբեր իմաստով դաւանք, որոնցից մեկը մեկնում է «դաւ, դաւաճանություն» (ուրեմն՝ դաւել բայից), իսկ մյուսը «դաւանություն» (ուրեմն՝ դաւանել բայից)։

Ագորանք
ալեկոծանք
ախորժանք
աղախարշանք
աղաչանք
աղապատանք
աղարտանք
աղերսանք
աղճատանք
աղքատանք
ամբարշտանք
ամոքանք
ամօթանք
անարգանք
անիրաւանք
անցուցանք (բալուլ)
աշխատանք
աշխարանք
աչառանք
ապազովանք
ապաշաւանք
ապաշխարանք
ապրանք
առանցանք
առաւելանք
արգահատանք
արհամարհանք
արձականք
արմանք
արշաւանք
աւազանք
աւերանք
ախտաւանք
ախտանք
աքացանք
աքսորանք
բաղբաղանք

բաղբաջանք
բաղձանք
բամբասանք
բանադրանք
բանդագուշանք
բանջաղանք
բասրանք
բարբա(ն)ջանք
բարբարանք
բարգաւաճանք
բարեխօսանք
բարուրանք
բարրանք
բերկրանք
բժժանք
բժշկանք
բուժանք
բջջանք
գայթագղանք, գայթակղանք
գայթանք
գարշանք
գգուանք
գեղգեղանք
գերփանք
գողանք
գովանք
գովասանք
գորովանք
գոռանք
գրգանք
գրգանք (հոսանք)
գրկանք
դագաղանք
դանդաղանք
դանդաչանք
դատաստարանք
դատանք
դաւանք (դաւանանք)
դաւանք (դաւ)
դաւանանք (չունի ՆՀԲ)
դեգերանք
դեխեխանք (անհանդարտ բարք)
դերեւանք
դժուարանք
դժրանք
դնդղանք
դորովանք
դրժանք
դրուատանք
եղկանք
եպերանք
երախտանք
երերանք
երեւութանք
երկբայանք
երկուանք
երկրորդանք
զայրանք
զանգիտանք
զանխլանք
զառածանք
զառանցանք
զարգանք
զարդարանք
զարհուրանք
զարմանք
զբօսանք
զգուշանք
զեղխանք
զզուանք
զկծանք
զկրկտանք
զհետերթանք
զուարճանք
զրկահարանք
զրկանք
զրպարտանք
ըղձանք
ըմպահկանք
ընարանք, երկընտրանք
ընդվզանք
թախանձանք
թախծանք
թառանչանք
թարթափանք
թափառանք
թեթեւանք
թշնամանք
թշուառանք
թոթովանք (նոր բառ)
թքանք (նոր բառ)
թօթափանք
ժառանք
լկանք
լկտանք
լոգանք
լուացանք
լուծանք
լուտանք
լպրշանք
լրբանք
լրջմտանք
խարանք
խարկանք
խախանք
խածատանք
խաղանք

խաղապատանք
խայտանք
խայտառականք
խանդագանք
խանդագատանք
խանդանք, խանդատանք
խարդախանք
խարդաւանք
խարխալանք
խարխափանք
խարուսանք
խելագարանք
խեղանք
խեղկատականք
խելշերանք
խերշեւտանք, հերշատանք
խնդանք
խնդրանք
խնծղանք
խնկանք
խոխոջանք
խօսանք (նոր բառ)
խռնջանք (հոգնութիւն)
խոշտանգանք
խոստովանանք (նոր բառ)
խորշանք
խորովանք
խուճապանք
խուսափանք
խռովանք
խտղտանք
խտպտանք-հատքատանք
խտտանք

խտղանք
խարանք
խրախանք
խրախուսանք
խրոխտանք
ծածկանք
ծանաւանք
ծիծաղանք
ծուլանք
ծփանք
կալանք
կախարդանք
կաղաղանք
կաշառանք
կապանք
կասկածանք
կատականք
կատաղանք
կարկատանք
կարօտանք
կաքաւանք
կեղեւանք
կերակրանք
կծծանք
կղկղանք
կշտամբանք
կոծանք
կոկղանք
կոկռվանք
կոհականք
կողկողանք
կողոպտանք
կորանք
կռփանք
կսկծանք
կտղանք
կտտանք
կրճանք

կրկտանք
կցկցանք
հալածանք
հալանք (հալվելը)
համեմանք
համրանք (ժղ. թիվ)
հայհայթանք
հայհոյանք
հանդերձանք
հալանք
հառաչանք
հարանք
հեղանք
հեթեթանք
հեծեծանք
հեկեկանք
հեղգանք
հեշտանք
հեստանք
հետեւանք
հերկատանք
հծծանք
հոսանք
հպատականք
հպարտանք
հտպտանք
հրապուրանք
հրճուանք
ձախողանք
ձաղանք
ձաղկանք
ձգանք
ձկնատեսանք
ղօղանջանք
ճախրանք
ճարտարանք
մախանք
մաղթանք

մարդանք
մարթանք
մեծարանք
մեզադրանք
մեղանչանք
մեղանք
մեղմեխանք
մերկանք
մղանք (թաղանքի)
մխիթարանք
մխմխանք
մոլորանք
մորթանք
մորմոքանք
մուրանք
մրցանք
յածանք
յաղթահարանք
յաղթանք
յանձանձանք
յանցանք
յաղաչանք
յապահովանք
յապաղանք
յապաւանք
յարգանք
յարդարանք
յարմարանք
յափրանք
յերկուանք
յոխորտանք
յորջորջանք
յուսադրանք
նազանք
նախակրթանք
նախատանք
նախերգանք
ներգործանք

նզովանք
նշաւականք
նշմարանք
նուազանք
շաղակրատանք
շաղփաղփանք
շամբշանք
շառագունանք
շողոքորթանք
շուայտանք
շպարանք
շփոթանք
ողբանք
ողողանք
ոռոկանք
ողորմանք
ողոքանք
ողջագուրանք
որսանք
չարչարանք
չգիտանք
պախարականք
պահանջանք
պագատանք
պաճարանք
պաճուճանք
պանծանք
պատատանք
պատկառանք
պատուիրանք
պատրանք
պարաւանդանք
պարծանք
պարսաւանք
պարտանք
պերճանք
պղերգանք

պղծանք
պճնանք
պչրանք
պրկանք
ջախջախանք
ջայլանք
սադրանք
սահանք
սաքափեթանք
սթափանք
սիգանք
սխալանք
սողոսկանք
սպատաղանք
սոնչանք
սուգատանք
սուրբլանք
սուրճանք
սփոփանք
սքանչանք
վայելչանք
վարժանք
վարձանք
վիժանք
վճարանք
վտառանք
վրիպանք
տագնապանք
տաղտկանք
տանջանք
տառապանք
տարածանք
տարակուսանք
տարփանք
տգիտանք
տխատանք
տխտանք
տուայտանք

տուժանք (տուգանք)	փափագանք	քանցանք
տափանք	փափկանք	քարկոծանք
տուփանք	փծանք	քարշանք
տուրքանք	փորձանք	քերանք
տրտնջանք	փոփոգանք	քնքշանք
ցոփանք	փրկանք	քրթմնջանք
փաթթանք	փքանք	քրքանք
փականք	քաղհան-ք	քրքրանք
փաղաքշանք	քամահանք	քքուանք
փայփայանք	քայքայանք	

Երկրորդ խումբը կազմում են -ելիք (-ալիք) վերջավորվող բառերը, որոնք բաժանվում են երկու կարգի. 1) լի «լիքը» բառով կազմված բարդություններ, որոնք -ելի, -ալի մասնիկի հետ գործ չունեն, ինչպես՝ մրգալի, հոգելի, հրաշալի և այլն։ 2) Բայի անորոշից կազմված՝ -ի վերջավորությամբ, ինչպես՝ յուսալի, առելի և այլն։ Սրանք ստանալով ք հոգնակերտ մասնիկը, դառնում են անեզական և լինում են գոյական։ Այս կարգի -լիք վերջավորված բառերը աշխարհաբարում դարձել են ապառնի դերբայ, որ գործածական է թե իրրև ածական, և թե իրրև գոյական. օր. ուտելիք հացս ձեր է. ուտելիք բեր, ուտելիքս տուր։

Հնագույն հայերենում -ելի վերջավորությունը կազմում էր ներկա դերբայ՝ -ող իմաստով, ինչ. բարի արարէք առելեաց ձերոց. Ղկ. Ջ. 27. այստեղ առելի նշանակում է ոչ թե արդի նշանակությամբ «առելի», այլ «առող». ուստի վերի նախադասությունը թարգմանվում է «բարություն արեք ձեզ առողներին»։

-ելի վերջավորությամբ այսպիսի դերբայներ, իբր Աստվծոյ հնության, ունենք այժմ էլ մինչև իսկ բարբառներում. ինչ. ճռասելի (ժղ. ֆօրսըլի) «ցորենը քամելու եղան», ուճելի (ոչ թե բրուճելիք բանը, այլ բռնող գործիքը) և այլն։

Այսպիսի -ելի վերջավորությամբ (բայց անեզական ձևով) ներկա դերբայներ են և արդի գրական լեզվի մեջ էլ պահվում են դեռ՝ հոտոտելիք, շոշափելիք, տեսանելիք և այլն բառերը։

Համաքում ենք այստեղ այդ կարգի անեզականները։

ամբառնալիք	բռնալիք (ժղ.)	լուանալիք (լվացք)
աքացելիք	բռնալիք	

լսելիք	ծամելիք	նայելիք
խառնելիք (պարան)	հոտոտելիք	շոշափելիք
խեղդելիք (խեղդան)	հպելիք (շոշափելիք)	ունելիք
ծածկելիք	ճաշակելիք	տեսանելիք

Հնագույն հայերենի այս կարգի ներկա դերբայները ե դրից հետո հետզհետե ջնջվեցին և միացին միայն ապառնի դերբայները։ Ահա այս կարգի դերբայները, որ քաղում ենք ՆՀԲ-ից.

ապանելիք	խառնելիք	յիշելիք (ժղ. յիշելք)
արբելիք (ննջույք, կա միայն՝ յարբելեաց)	ծխանելիք	շնորհակալիք
	ծխելիք	ոտնկելիք
	կատարելիք	սպառնալիք
զարմանալիք	համբերելիք	սուորգելիք
զենելիք	հեծանելիք	սքանչելիք
ըմպելիք	հրահալելիք	վառելիք
թուելիք-ելեաց երգ	հրավառելիք	վարժելիք
լալիք	ճեմելիք	քթթելիք
լուալիք		

Երրորդ խումբը կազմում են աշխարհաբարի այն բառերը, որոնք -մունք վերջավորությունը ունեն և բայից շինված գոյական են. սրանք գրաբարի մեջ հոգնակի են և նրանց եզակին լինում է -ումն, իսկ աշխարհաբարում նրանք եզակի են և նրանց հոգնակին լինում է -մունքներ. հետևաբար և նրանք աշխարհաբարում անեզական են.

Ահա մի խումբ այս կարգի բառեր.

բաժանմունք	մտածմունք	վարմունք
զրպմունք	ուսմունք	տարածմունք
զգացմունք	պաշտամունք	ասմունք
լուծմունք	պարապմունք	

և այլ այսպիսի բառեր, որոնք հատուկ են աշխարհաբարին։

Չորրորդ խումբը կազմում են այն բառերը, որոնք կազմված են զանազան հոգնակերտ մասնիկներով և որոնք կարելի է կոչել «անկանոն հոգնակի»։ Ահա դրանց ցուցակը քաղված ՆՀԲ-ից

ազդերանք
ալաւ(ս)ունք
ախոնդանք
աղակատանք
աղանդիք
աղանդինք
այծիք
արհաւրանք
արմտիք
արտեւանունք
արտօրայք
բարձունք
գահինք (վիհ)
գահոյք
դաշտօրայք
դատինք
դեղօրայք
երիկամունք
երկունք
ընդդիմատունք (հակառնեայք)
թիկունք
իշանք
իշեարք
իշխանայք
իրաւունք
լնդերք (լինդ)
լորձունք
խանութայք
խոյեանք (խոյեր)
խոնջանունք (կապ)
խոչակունք
խոստաբեռունք
խրախունք
ծակտիք
ծաղկունք
ծառայազունք
ծնունք (ծին)
ծփունք (ծփանք)
կախարդանք
կահոյք (նոր բառ)
կասկածիք
կեղծիք
կնճռունք (հողի կոշտ)
կոկովանք (ձուանք)
կողերք (ճիւղեր)
կռճմունք
կոքունք (քիկունք)
կրկունք (ոտքի ներքան)
հագագայք
հացուտունք
հռետորայք
հսկայունք
հրաշունք
ձիանք
ձուանք (ժղ.)
ճգունք
ճնշանունք
ճրագունք
մաշինք
մանկունք (շարական)
մասունք
մկանունք
մսանունք
մրցանունք
յինունք
յոգունք
նովանք, նուանք
ոսկերտանիք (ոսկերտանք)
որթիք (խաղողի)
ուլունք
ունկունք
պակունք
ոնգունք
սանտերք (ժղ.)
ճգունք
սերմանիք
սկղբունք
վաներայք, վանօրայք
վանկունք
տեղանք (տեղեր)
փայլատակունք
փշրանք
փորոտիք
քուերք
քրտինք, քրտունք

Այս չորս խմբից դուրս գտնված բոլոր անեզական բառերը հավաքում ենք հետևյալ մեծ ցուցակի մեջ։ Ցուցակը կազմել ենք՝ քաղելով ՆՀԲ-ից, բայց տեղ-տեղ ավելացրել ենք ուրիշ անեզական բառեր։ Սրանով վերջացրած ենք լինում անեզական բառերի ամբողջական ցուցակը։ Կլինեն բառեր, որոնց մեկնությունը անորոշ լինելով մտել են այս կամ այն խմբի մեջ։ Համառներին ենք թողնում ուղղել կամ տեղափոխել, ինչպես հարկ են համարում։

Ագոյց(ք)
ագուգայ(ք)
աթոռ, աթոռք
աթուխայք
ալիք (ծովի)
ալիք (մազի)
ալ-ք (խորք)
ալ-ք (սատանա)
ախժիք (մրուր)
ախոնդիկք
ախորժ, ախորժք
ախտարք
ածք
ականողիք
ականջք
ակճիռ, յակճիռս
ակն, ակունք
ակնակապիճ-ք
ագրեւ-ք
ագերախք
ագի-ք
ագուհացք
ագունք
ագտախինք
ագց-ք
ագօթք
ագօրիք
ագօրհնէք
ամամէջք
ամբուռ-ք
ամոլ, ամոլք
ամօթ, ամօթք
ամօթալի-ք
ամօթոյ-ք
այրուբեն-ք
այգեկիթ-ք
այգեկութ-ք
այգեմէջ-ք
այթիւ-ք
այծէք
այտիք, պայթիք
այտ, այտք
այրուք
անգեղ, անգեղք
անդաստանք
անդեայք
անդունդք
անդրոյթք
անէծք
անկարուրդք
անկողինք (ժղ. կողինք)
անձնիք «իրարք»
անձուկ-ք
անձրևածք
անոյշ-ք
անոտ-ք
անուրջ, անուրջք
անց, անցք
աշխարհ-ք
(աշխարհայք)
(աշնանայք)
աչք
ապախտարք
ապախտիք
ապաշխարողարբէք
ապաշխարողաձակէք
ապարանք
ապերախտիք
(առարկայք)
առականք
առանցք
(առաջեայք)
առաջիկողմանէք
առաջք
առէջք
(առժամայք)
առօք
(աստարիտայք)
(աստէք)
աստիք
աստիք (տարիք)
աստ
աստուածատակք
արգասիք
արքունիք
աւանդիք
աւելուք (աւլուք)
աւետիք
ափնիք
աքացիք (քացի)
աքեացք (քացի)
բազմաստեղք (բոյլք)
(բազմօցք)
բազրիք (ճաղեր)
բաժինք (ժղ.)
բաղայք
բաղանիք
բազարջակերք
բաղբաղայք
բաշխք
բաշխոյք
բարդածք
բարիք
բաղձք
բարձերէցք
բարձրագահք
բարոյք (բարք)
բարուրք
բարամունք
բարք
բերք

բծկանք
բոլորք (ժդ.)
բոհմունք
բոյլք
բովք
բովիճայք
(բուրք) (բուրմունք)
բռնխէթք
(բրածոյք)
գահմունք
գաղոնիք
գանգք (գանգիւն)
գարգաիք (ձայն)
գետայարոյցք
գետինք (ժող.) (երկինք-գետինք հոգնակիից առաջացած)
գինարրուք
գինըմպուք
գիրք
գիրկք
գլգլունք
գնացք
գողօնք
գոյք
գորգայք (ռամիկ)
գործք
գործիք
գործոյք
գրազ (ժդ. գրբ. ի գրավս ձևից)
գրէք (կռունկներ)
դագաղ-ք
դաղարք
դաժանմանք
դալարիք
դահամունք
դայլայլիկք
դաշինք
դասատակք
դէմք
դէպք
դժոխք
դիրք
դիք
դռնրացէք
դռոյթք
դրուատիք
եղերք
ելք
ելեւէջք
եկք (եկամուտ)
երախայրիք
երախանք
երախտիք
երանիք
երաշխիք
երաստանք
երդիք
երեկօքք
երես-ք
երթեւեկք (դէպք)
երկան-ք
երկաւորիք (ասաղ)
երկինք
երկուորիք (ամորձիք)
երկայք
երք (շան ախտ, իմա՝ եռք)
եօթնագրեանք
զայրացուկք, -ցուք
զայրուկք
զայրուցք (նոր բառ)
զարմացք
զգայարան-ք
զգայունք
զրահք
զրահանք
զրոյցք
զօրք
(էմք) (բանալիի ծակ)
էջք
ըմբշամարտք
ընգդայք
ընդերք
ընթացք
ընթրեկելք
ընթրիք
ընկերք (ժդ.)
ընձեռայք (նուէր)
ընտանիք
ընտրուկք
թամբ-ք (ժդ.)
թայրաթոռք
թանչ-ք
թարթեւանք
թաւուա-ք
թաքստեայք, թաքստոյք
թեզանիք
թեթուք
թէղք
թիւ-ք (Մովսէսի դիրքը)
թոշակոք
թուիք
թոխշք
թօնըննկէցք
ժամմուկք
ժամոյք
ժանիք

ժժմունք, ժժմանք
իղձք (հմայք)
իմացք
իմոյք
ինչք
լալօնք
լամբառք
լայնք (նոր բառ)
լայնուցք
լանջք
լեռնավայրք
լեռնոտեայք, լեռնորդեայք
լեսուրք
լիքը (նոր բառ)
լիցք
լկտի-ք (գռհաժողովրակ)
լոյսք
լորձունք (աշխ.)
լուց-ք
լուացք
լուծ-ք
լուծլիք
լուսանցք
լուսերակք
լուսնախտիրք
լուցկի-ք
լօռամարդք
խալարակայք
խախուտք (դաղթ)
խաղալիկք
խաղացք
խաղճմունք
խաղք
խամճերք
խայթոցք
խանթուռք
խանձարուրք
խառնուրդք
խաւխաւոյք
խելք
խեղկատակք
խեղճմիտք, խղճմտանք
խիթք (փորացավ)
խլինք
խղճնջոյնք
խնամք
խնդրունդք
խնդիրք
խնծիղք
խնձորք
խնջոյք
խշտիք
խոխոմք
խոխոմաձիղք
խոխոջք
խոհալք
խոհակերք
խոհերք
խոպոպիք
խոտորկուրք
խորհրդատօնք
խորովք
խորովոյք
խորուտք
խորք
խուիք
խունկք (խնկարկություն)
խոսվք (նոր բառ)
խտիրք
խրախճանք
խրխինջք
խրուտք
խօսք
ծալք
ծածուկք
ծածք
ծակոտիք
ծանօթոյք
ծխահանք
ծղիք
ծննդոցք (գուշակություն)
ծնողք
ծնունդք
ծովակուղք
ծովեզերեայք
ծուծք
կալուածք
կաղանդք
կամք
կամակք
կամարակիցք
կայք
կայտիռք
կապք
կապարահատք
կապարճք
կապէնք
կապիճք
կառք
կարասիք
կարաւանդք
կարուրք (ամօթոյք)
կարիք
կարծիք
կարճառոտիւք
կացք
կաքաւք (պար)
կեանք

կեղևքածք
կեղծք
կենդանօք
կեռիք
կերպարանք
կերտք (շինուածք)
կէսք (ոմանք)
կինք (գարշապարը)
կիրթք (հրահանգ)
կիրք
կից (1. խաչփողոց, 2. քացի, 3. ափ-կից)
կղարթք
կմախք
կշիռք (ժղ.)
կոճանք
կողք
կոչունք
կոչօնք
կորէք
կորովք
կուռայք
կուռք
կուրծք
կոփ-ք
կոպ-ք
կոիչք
կտիրք (օժիտ)
կտղուցք
կտուտք
կտուրք
կտրուք
կրօնք
կօշիկք (վարձա-արուեստ)
հակոտնեայք
հաղրք
հաճոյք
համք
համատամք
համայնք (նոր բառ)
համառօտիւք
համեմք
համոյք (չափաւոր)
համտակք (շորի ծայրը)
հայեացք
հայրենիք
հանածոյք
հանգամանք
հանդէպք (դիվահա-րութիւն ժղ.)
հանրակայք
հանք
հաստեայք
հասք (տուրք)
հարաւունք
հարկիք
հարկինք (ժղ.)
հարսանիք
հացուտիք
հաւք (ժղ. թռչուն)
հաւատոիք
հաւատք
հաւատամք
հեղք (խրճիթ)
հեճուկք (ի հեճուկս)
հեռք
հեվք (նոր բառ)
հիմք (հիմն)
հիմնարկէք
հինչք, հունչք
հիւսք
հիւրոյքք, հիւրոյք
հմայք
հնարք
հնկեցիկք
հոգեվարք
հոգմամաղք
հոգմայոյղք
հոգվարք (գերեզման մհյ.)
հոյլ-ք
հոս-ք (հոսում)
հոտոտիչք (քիթ)
հորձք
հորմայք (մարգարտի շարք)
հում-ք (նոր բառ)
հունձք
հրահալք
հրահանգք
հրամանգք (ճակատա-գիր)
հրամանք (ժղ. Դուք)
հրամէնք
հրայրեաց-ք
հրայրք
հրաշք
հրաշալիք
հրապարք
հրապոյրք
հրատիկք
հրաւէրք (ժղ.)
հրուանդանք
ձեռէք (ձեռնոց)
ձեռնաձիգք
ձեռնարկածք
ձեվ, ձեւս (ժղ.)
ձիւամարտք
ձիրնթացիկք

ձողիք
ճախոյճք
ճաղճախիք
ճայթիք
ճապաղիք
ճիք
ճողորտիք
մակընթրակք
մահիճք
մատանի-ք (ժղ.)
մատք
մարտիկք (սատա-պիոն)
մացառք
մեղք
մեռելոյթք (թագ-ման ծախս)
մետաղք (աքսորա-վայր)
մերկամարտք
մերձէք (մերձա-կայք)
մերձակայք
մղնիք (թագանթ)
մէջք
մքեր-ք
միտք
Միացք
մոլեգնուցք
մոլուցք
մոյնք
մռռացք
մռռացօնք
մուտք
մսուր-ք
մրցամարտք
մօրուսրձակք
մօրուք
յայտաւուրք
յարոյցք
յեղյեղակք (արևա-դարձ)
յիշող-ք
յոլով-ք
յորձանք
յուռութք
յօնք
նախատինք
նախճիրք
նախնիք
նախողջոյնք
նաւակատիք
ներբանք
նզովք
նիգակարեկ-ք
նշմունք (նկուղ)
նշանաձարք
նշխարք
նշմար-ք (ժղ.)
նոտիք
շարք
շարժ (ժամք)
շարժմամկք
շեմք
շէնք
շինուք
շիշք
շիւան-ք
շլինք
շղուական-ք
շնակաքի-ք
շնորհք
շնորհիք
շնորհուկ-ք
շոգոլիք
շողիք
շոճք
շուրջք
շրջակայք
շօշանք
ոլորտք
ոլորք
ոյծք
ոռք (ժղ. խորք)
ոսարիք (ոսորէ)
ոտ-ք
որեանք
որձիք
որմածերպք
ունչք
ուշք
ուռեցք, ուռուցք
ուտիք
չար-ք
չարիք
չափ, չափք
չափոյք
չորք
պախրիք
պահանջանք (ապա-բանջանք)
պահք
պաղպաջունք
պաճարք
պաճուճապատանք
պայտիք
պաշտպանակք
պաշտօնուկք
պատան-ք
պատարագիք
պատիրք
պատկերք (ժղ.)
պատճառք
պատուաւուրք

պատուհանք
պարագայք
պարանցիկք
պարս-պար-ք
պարտք
պարտիք
պերեւեշաք
պէտք
պիտոյք
պտոյտք
ջախջախիք
ջրաղացք
ջանք
սահ-ք
սամեսիք
սամիք
սայլք (մեծ Արջ)
սանդուխք
սառնամանիք
սարք
սարի-ք
սեամք
սլացք
սղոցուք
սնարք
սնոտիք
սոփերք
սպուղէք
սռինչք
ստացք
ստինք
ստորմիք
սրունք
սփիւռք
սքանչք
վագք
վախք (անդունդ)
վաճառք
վայելք
վայլք
վայրէջք
վանք
վարանք
վարդենիք
վարժք
վարձք
վարսք
վարտիք
վարք
վերելք
վերջք
վերջայք
վէրք
տաժանիք
տաժանք
տաղաւարահարք
տանիք
տանջք (տանջանք)
տապք (տաք)
տարածք
տարիք
տարերք
տիղիք
տեսք
տեսիլ-ք
տէգ-ք (մօրուաց)
տի-ք
տիգ-ք (թևվի)
տիեզերք
տոխզուք
տոկոսիք
տոհմական-ք (ցորեն)
տողիք (թուք)
տոյժք
տուգան-ք
տուրք
տոփիք
ցայլք
ցայտք
ցանք
ցաւք
ցնորք
ցոլք
ցուցք (երգ)
ցցունք
փաղամք
փաղփք
փառք
փերթանք
փխրանք
փղոք
փուլ-ք
քաղուածոյք
քամուք
քայլք
քանց-ք
քաջք
քառասունք
քարուկանիք
քերթուածք
քթափողք
քիմք
քծինք
քղանցք
քող-ք
քունք
քսիք
քօղէք
օդիք, օդեայք
օձիք
օրէնք
օրիննէք (օրիննանք)

Դիտ. 1.— Կան բառեր, որոնք գրաբարում անեզական չեն, իսկ բարբառներում կամ մի որևէ բարբառում՝ առանձին իմաստ առանալով, դառնում են անեզական։ Օր. ագի գրաբարում նշանակում է «պոչ» և անեզական չէ. իսկ նրանից կազմված ագիք ձևը պարզապես հոգնակի է և նշանակում է «պոչեր»։ Սակայն Ակնի բարբառում ագիք նշանակում է «շորի ծայրը, քղանցք» և անեզական է դարձել։ Այս կարգի բառերը չենք հիշում մեր ցուցակի մեջ։ Այսպես նաև՝ ածուք. կան դեպքեր էլ, երբ աշխարհաբարը ք է առացել, որ գրաբարում պարտադիր չէ՝ ինչ. աշխարհ-ք, արգել-ք, այս կարգի բառերը նշանակում ենք ցուցակում։

2.— Բազմաթիվ բառեր կան, որոնք գրաբարում գործածական են թե եզակի, և թե հոգնակի ձևով. բայց հոգնակին ավելի սովորական է։ Այս կարգի բառերը ընդհանրապես աշխարհաբարում անեզական են մնում (այսինքն պահում են ք վերջավորությունը). օրինակ՝ երկին և երկինք, բայց աշխարհաբարում միայն երկինք։ Բայց կան գրաբար այնպիսի բառեր, որոնք թևև գրաբարում երկու ձևն էլ ունեն, սակայն հոգնակին ավելի գործածական է, թևև աշխարհաբարում գոյություն չունեն. օր. ագոյց-ագոյցք։

3.— Թևև ընդհանրապես գրաբարի անեզական բառերը աշխարհաբարին անցնելով եզակի են դարձել (ինչ. ոտք, ձեռք, երկինք և այլն), սակայն ունենք նաև սրա հակառակ երևույթը, այսինքն՝ գրաբարում չկա եզակին և գործածված է միայն հոգնակի ձևը, իսկ աշխարհաբարում և բարբառներում եզակին է գործածվում։ Օր. ագուգայ «փողրակ» բառը գործածված է միայն ագուգայք ձևով, իսկ բարբառներում միշտ եզակի է (ագուգա)։

4.— Կան այնպիսի բառեր, որոնք գրաբարում եզակիով այլ իմաստ ունեն, հոգնակիով՝ այլ իմաստ։ Օր. գրբ. աթոռ և աթոռք, երկուսն էլ գործածական են. աթոռ սովորական կարասին է, իսկ աթոռք հրեշտակների ինչ որ դասակարգ են ներկայացնում։ Աշխարհաբարում, գրական լեզվի մեջ սովորական ձևն է աթոռ և չկա աթոռք, իսկ բարբառներում մի քանի տեղ պահված է աթոռք բառը, սովորական «աթոռ» (կարասի) իմաստով. նույնիսկ Նոր-Ջուղա ասվում է աթոռք։ Այս կարգի բառերը գնում ենք երկու ձևով էլ։

5.— Կան մի խումբ մասնիկներ, որոնք գրաբարում կամ աշխարհաբարում այնպես սովորական են ք վերջավորությամբ,

որ ավելորդ համարեցինք հիշատակել՝ իբրև ընդհանուր երևույթ։ Այսպես են՝

-ած (ածք), -ուած (ուածք), ինչպես՝ շինած, շինուած, շինուածք, խոսուածք, քայլուածք, կերտուածք, բռնուածք, նայուածք, և այլն։

6.— Գրաբարի մեջ մարմնի գույգ անդամներ ցույց տվող բառերից մի քանիսը եզակիում առանձին և հոգնակիում առանձին ձև ունեն։ Արդի բարբառները այս դրությունը խախտել են և անեզականն ընդհանրապես վերածել են եզակիի։ Այսպես են՝ գրբ. ակն-աչք, ունկն-ականջ, ոտն-ոտք, ձեռն-ձեռք։

Ընդհանրապես ակն բառը բարբառներում ջնջված է և տեղը գրված է սչք (մի աչք, երկու աչք). միայն Ագուլիսի բարբառով ասվում է եզ. օկնը, հոգ. ակնիր, և Մեղրու բարբառով՝ ակնը, հոգ. ա՛կնար։ Ականջք բառը վերածվելով եզակիի, ամեն տեղ էլ տուացել է ականջ ձևը, որի հոգնակին լինում է ականջներ (ժղ. անկաջ, անգուջ, անջուգ). ունկն եզակի ձևը ջնջված է և գործածվում է միայն ամանի բռնելատեղ նշանակությամբ։ Ձեռք և ոտք ընդհանրապես դարձել են եզակի և հոգնակին լինում է ձեռքեր, ոտքեր, իսկ Երևանի բարբառում եզակին է ձեռ, ոտ, իսկ հոգնակին՝ ձեռներ, ոտներ։

7.— Տեղանունների ծայրին հաճախ դրվում է ք վերջավորությունը, որով նրանք դառնում են անեզական. Այսպես՝ երկրների անուննները։ Հայք «Հայաստան», Պարսք «Պարսկաստան», Վիրք «Վրաստան», Յոյնք «Հունաստան», Ադուանք, Հնդիկք, Մարք, Ասորիք և այլն։ Այսպես նաև նահանգների և գավառների անունները, ինչ. Անձևացիք, Ծոփք, Գուգարք, Սիւնիք, Աղձնիք, Մոգք, Կորճայք, Պարսկահայք, Տայք, Մերհետք, Գեղարքունիք և այլն։ Այսպես նաև քաղաքների և գրողների անուննները, որոնք հետո հայցականի վերածվելով ստացան ս, ինչ. Կարս, Ագուլիս, Նորատուս (այլայլված Նորադուզ), Ալլարերս (ազավ. Ալափարս), նույնիսկ Տփղիս, Մանգլիս (որոնք վրացերեն են)։

8.— Անեզական բառերի շարքին դրինք նաև յայսմաւուրք։ Այս անունով հայտնի է ստվարածավալ եկեղեցական մի գիրք, ուր օրը օրին նշանակված են սրբերի վարքագրությունները։ Ամեն գլուխ սկսվում է «Ցայսմ աւուր...» բառերով։ Այս պատճառով էլ ք-ի հավելումով կազմվել է Յայսմաւուրք

բառը, որի կազմությունը անկանոն է. պետք էր ասել յայս աւուրս, որ նույնպես հարմար չէ[1]։

Անեզական բարդություն.— Մենք գիտենք, որ անեզական բառերը ընդհանրապես բարդության մեջ չեն մտնում, այլ նրանց ք վերջավորությունը հանվում է. այսպես՝ չենք կարող ասել գրքավաճառ, այլ գրավաճառ (թեև ծախողը գիր չի ծախում, այլ գիրք)։ Արդի հայերենում այս կանոնը գոնե նորակերտ բառերի համար վերացված է և ազատորեն ասում ենք.

Աչքարաց, աչքադրած, աչքալույս, աչքալուսանք, աչքածակ, աչքակապուկ, ձեռքարաց, ձեռքակուլա, ձեռքահարել, ձեռքավարժ, ձեռքքաշ, ձեռքաջուր, ձեռքափոխ, աչքառու, հանքարանություն (թեև՝ հանածոյ), բերքառու, բերքառվություն, խելքահան, գրքավաճառ և այլն։

Հոգնակի՝ մի ոտք, երկու ոտքեր, չորս ոտքերով, մի ձեռք ծափ չի տա, երկու ձեռքով կատորագրեմ, ոտքերով-ձեռքերով...

Կրկին հոգնակի՝ ազգկերք, ազերք, էս տեղերքը, են տեղերքը, մռաերքը, կողքերքը (ուր երեք հոգնակի միանում են, որոնցից երկուսը ք)։

Գրբ. քունք բառը, որ կազմված է քուն արմատից ք հոգնակերտով, գժբախտաբար չունի հոլովական ձև, որպեսզի իմանայինք, թե հոգնակի լինում էր քնքոց, թե քնոց, բայց միջին հայերենում կա քներք ձևը։

Այս սովորությունը արդեն միջին դարում սկսվել էր և մենք հավաքում ենք այստեղ այդ բոլոր բացառիկ ձևերը։ Մինչև անգամ ե դարից կան նման օրինակներ. ինչ. ազատազօրք (Բուզ., Գ. 21)։

Բարդ բառերի վերջում գտնված անեզականը երկու արժեք կարող է ունենալ. երբ ասում ենք աչամէջք, հասկանում ենք երկու աչքերի միջին մասը, որ մի հատ է. օր. (Դաւիթ) հարեալ, այնուհետեւ կշռակի ընդ աչամէջս անցուցանէր (Պիտ.)։ Բայց կարող է նաև լինել, որ այդ անեզականը իսկապես հոգնակի է. օր. առուամէջք բառը հոգնակի է հետեւյալ նախադասության մեջ. Եկաց հրեշտակն առուոյծոյ յառուամէջս այգեացն (Թուց. ԻԲ. 24)։ Հոգնակի է, որովհետեւ հույն բնագիրը ունի ἐν ταῖς ἄυλαῖς

[1] Այս ամբողջ հատվածը կազմել եմ աշխատակցությամբ Գրիգոր Գաբիգինյանի (1952 ապրիլ)։

«յակօսա»։ Այս երկվութեան պատճառով չենք հավաքում այն բարդերը, որոնց վերջին եղրը անեզական է, բավականանալով միայն մի քանի օրինակով։

ագահակամք	անմորու(ս)
ագատազօրք	անուքքայ
աղնացք	աչքաւոր
անընթրիս (վրք. հց.)	առուտանանք
անկամք	բարքախոպոս
անկարիք	
անկարծիք, անկարծիս	

Հետագայում, քանի ք մասնիկը իր հոգնակի արժեքը կորցրեց և ուրիշ մասնիկներ եկան նրա տեղը բռնելու, նույն չափով անեզական բառերն էլ զրկվեցին իրենց հոգնակի երևութից և դարձան զուտ եզակի։ Գրաբարի ուշ շրջանից ունենք բազմաթիվ օրինակներ, որոնց մեջ անեզական բառը արդեն պարզ եզակի է ըմբռնվում և ըստ այսմ առանում է եզակի բայ. օր.

Որպէս լար հրեղէն ելանէր աղօքքն ի բերանոյ նորա. վրք. հց. ա. 392։

Ոչ այնպես զարհուրեցուցանէր զնոսա սպառնալիք պատուհասին. Ոսկ. գծ. 326։

Ոչ գոյաւ զկնի նորա յանցանք ինչ. Ոսկ. գծ. 421։

Բայց նույնիսկ հնագույն շրջանից ունենք օրինակներ, ուր անեզականը եզակի է ըմբռնված. ինչ. երկու աղայեան ի մի երկանս (Մաթ. ԻԴ. 41)։

Վասն միոյ հանցանաց։

Կիլիկյան շրջանում անեզականները այլևս ջնջված են և ոչ միայն գրաբարի հին անեզական ձևերը վերածված են եզակիի, այլև նորանոր բառեր, որոնք գրաբարում եզակի են, վերածվել են անեզականի, այսինքն՝ առացել են ք մասնիկը և հետո դարձել եզակի։

Առաջին կարգի բառերից իբր օրինակ հիշենք՝ խոսք, խելք, կամք, հունձք, իրաւունք, աշխատանք, հալածանք, զրկանք, մեղք, պարտք, պէտք, վանք, առուգանք, օրէնք, բաղնիք, կարծիք, կարիք, հայրենիք, արցունք (արտասուք) և այլն։

Երկրորդ կարգի բառերից՝ աշխարհ, առուգնայք, բերունք, գանկատք, դեհք, զարկք, իրք (իր), խլոցք «բռնագրավված առարկաներ», ծեծք կամ ծեծանք «ծեծ, հարվածք», համունք (հրաման), համարք (թիվ, հաշիվ), հրաւէրք (հրավեր), ջազացք, չաքք (չափ) և այլն։ Հիշելի են հատկապես -լիք վերջավորվող բառերը. ինչ. ուտելիք, հագնելիք, օծնելիք, պահելիք (անկողին), խմելիք, այնելիք (անելիք, գործ.), ծխանելիք, հովցնելիք, ցանելիք և այլն։

Բարբառների և աշխարհաբարի մեջ այս երևույթը ավելի առաջ է գնում. այնպես որ, մինչդեռ Կիլիկյան հայերենում անեզական բառերը դեռ պահում են իրենց գրաբար հոլովումը, այստեղ հոլովումն էլ է վերացված և անեզական բառերը իրենց ք-ով միասին հոլովվում են իբրև եզակի սովորական բառ։ Համեմատության համար դնենք հայրենիք բառի հոլովումը գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար ձևով։

Ո.	հայրենիք	հայրենիք	հայրենիք
Հ.	զհայրենիս	զհայրենիք	հայրենիք
Ս. Տ.	հայրենեաց	հայրենից	հայրենիքի
Բ.	ի հայրենեաց	ի հայրենից	հայրենիք-ից
Գ.	հայրենեաւք	հայրենօք	հայրենիքով

Հատուկ անուններից շատը հին հայերենում գործածվում է միայն հոգնակի ձևով. ինչ. Հայք, Յոնք, Մարք, Անձևացիք, Խաղտիք, Եկեղիք, Պարսք, Հնդիկք և այլն, հոլովված ձևով՝ ի Հայս, ի Յոյնս, Մարաց, Պարսից և այլն։ Նման ձևով է նաև չեխերենը, ուր աշխարհագրական անուններից ոմանք միշտ հոգնակի են. ինչ. Բաւարիա, Բոհեմիա, Իտալիա, Սաքսոնիա, Հունգարիա, Վենետիկ և այլն (Hantich, Gram. tchéque, էջ 39)։ Հայերենը ավելի խոր է գնում և գյուղերի, քաղաքների և լեռների անուններն էլ գնում է հոգնակի. ինչ. Մասիք, Մասեաց, Մասիս, Կարս, Կարուց, Հացեկաց գիւղն և այլն։ Ոմանք սրանցից այնքան առաջ են գնացել, որ ուղղականը մոռացության են տվել. ինչ. կա Կարս, Կարուց, բայց չկա՝ ուղ. Կարք։ Գրաբարի այս սովորության պատճառով է, որ այժմ շատ տեղանուններ u-ով են վերջանում, որ է հգ. հյց. ձևը. ինչ. Ագուլիս, Խառակոնիս, Տրօնիս, Արամուս և այլն, և այլն։

Աֆրիկյան միխանկա լեզվում գոյականը ընդհանրապես հոգնակի է. չունի եզակի. այսինքն հավաքական բառ է և նշանակում է այդ կարգի առարկաների մի ամբողջություն։ Եթե հարկ լինի կազմել սրա եզակին, պետք է դնել ninki «մեկ» բա-

ոը, օր. pon շուն (ընդհանուր տեսակը և բոլոր շները), իսկ pon ninki «մի շուն» (շուն մը):

Անեզական բառերի մասին խոսելուց հետո, իբրև հավելված տալիս եմ հետևյալ ցուցակը, ուր հավաքել եմ այն բոլոր բառերը, որոնց վերջածայն ը արմատական է և հոգնակիի վերջավորություն չէ:

ախժիք, ախժինք «մրուր» (թերևս հգ.)
ամոք
ապուզանք «անդունդ, վիհ» (արգեօք հգ.)
առիք
աւոք
արգեօք
աք «ոտք»
բարեք (բարեկքիկ)
բարուք, բարիոք
բեք, բէգ «մեծ, աւագ»
բղաք «արու այծ»
բողոք
բորբոք (արմատ բորբ)
բուք
դասալիք (արմատը լիք, լքանել)
դուստաք—թուխթակ
եղիք «ոլորատոտոյտ փայլակ»
երբեք
թանաք
թեղք «թել, թելերի մի շարք»
թոնդրուք «թոնիր»
թուք
թոք
թրիք
ինք (աշխ.)—գրբ. ինքն
իրօք
իք, իրիք, իմիք, իւիք
լուք «բժշկական մի ըմպելիք»
լուք, լոք, լօք «մի տեսակ ներկանյութ»
խամճերք, խամճանք «ծնօտ»
կեղեքել (արմատը կեղեք, որ չի գործածված)
կնիք (կնուք, կնունք)
կոնք
հալիք (անծանօթ մի բոյս)
հաւաք
հեղիք «բերք. բոյս» (թերևս անեզական)
հերիք
հերք-ել (արմատը՝ հերք, առանձին չէ գործածված)
ճեղք, ճեղքել
ճողքել (արմատը՝ ճողք, առանձին չէ գործածված)
մորմոքիլ (արմատը՝ մորմոք, գործածական է միայն նոր գրականում)
շուք
շքթել, շրջմամբ շթքել, արմատը՝ շթուք, շթիք «վեր ցատկած ջուր» Աբ.
ոլոք
ոդոք
ուստեք
ուրեք
ոք, ուրուք, ումեք
չարուք (հմմտ. բարուք)
չափ (չափք ձևից)
չեղոք
չիք
պասեք «գատիկ»
պասուք «ծարավ»
պատրիարք
պոռոք «պոռոտախոս»
ջեք, ջէք «գերազանց»
ջիք «վերին եթերը»
սայթաք (սայթաքիլ, անսայթաք)
սիւք, սիք «բարակ քամի»
սլաք
սոնք «գեր»
սուք «ամոլ տղամարդ»
սուսմոք(ս)
սոխք(ս)
վաք (համաստեղությունը)
տաք (իմա տապք)

ցամաք
ցապաք (ապաքէն ցապաք)
փանաք (փանաքի)
փէք «թշվառ»
փիլաք(ս) «երկինք»
փորոք (որ և փորոգ) «փորվածք»
փուք «փչած շունչը, փուքս, ակճոր, ընդեղենի պարկ»
քալաք (իմա փալաք «երկինք», որ է արաբ.<falak)
քաղաք
քուք «ձեռքի գավազան»
քուք «ողր, հառաչ», որից քուքալ «հևծել, հառաչել»[1]:

Ցուցակը կազմելու համար բառաքաղել եմ ամբողջ Առձեռնը:

Ցուցակի հիմնական մասը կազմում են. 1) այն բառերը, որոնց վերջնաձայն ը անպայման արմատական է (բնիկ կամ փոխառյալ բառեր). ինչ. քաղաք. հերիք, կնիք, բողոք, շուք և այլն: Սրանցից կարող են կազմվել զանազան բարդ բառեր. ինչ. մեծաշուք, շքեղաշուք, արքայաշուք և այլն:

2) Այն բառերը, որոնք կազմում են բայական արմատներ, և այս արմատներն էլ կարող են գործածվել երկու ձևով. նախ՝ իբրև առանձին բառ և մի ևնույն ժամանակ բարդության մեջ իբրև երկրորդ եզր. ինչ. հաւաք (հաւաքել), ամենահաւաք, բազմահաւաք, զանազանահաւաք, ծաղկահաւաք, մահահաւաք, միահաւաք:

Երկրորդ՝ արմատը առանձին անգործածական է. բայց գտնվում է բայի մեջ և նրանով կազմված կան զանազան բարդեր. ինչ. առաքել «ուղարկել», արմատը՝ առաք (անգործածական), որից ունենք աստուածառաք, երկնառաք, կայծակնառաք, կենսառաք, պատուհասառաք, սպասառաք, վերնառաք, օրհնառաք: Այսպես նաև՝ լքանել—դասալիք:

Երրորդ՝ արմատը առանձին անգործածական է, չկա նաև բարդության մեջ, և ունենք միայն պահված բայի մեջ. ինչ. հերք-ել, կեղեք-ել, մորմոք-իլ, ճողքել:

3) Այն բառերը, որոնք թեև կազմված են -ոք, -եքս մասնիկներով, բայց նրանք անեզական բառեր չեն. ինչ. բարիք, (բարեքիկ), բարիոք, բարւոք, բորբոք, երբեք, ուսուեք, ուրեք, չարւոք, փորոք և այլն:

4) Այն բառերը, որոնք թեև անեզական, բայց գործածության մեջ բոլորովին կորցրել են իրենց այս հատկությունը և այժմ գործածվում են իբրև զուտ եզակի բառեր. Այսպես են՝ առիք «առաւաւտուղ» (սեռ. առեաց՝ Տաթեև. ամ. 305—Զարսանճաքի գավառականով՝ առից «առիքի, առաւաւտուի»), արդեօք, իրօք, տաք (հին՝ տապք ձևից, հյց. գոտապս եղն. 67), նաև չաք (<չափ, իբրև՝ չափք ձևից, ինչպես կա չափս):

Սրանցից դուրս են մնում մի խումբ վրիպակ բառեր, որոնց մեջ ը վերջնաձայնը դրված է փոխանակ գ. այսպես են՝

հէգ—հէք, հեք
հոոգ «թոշակ»<հն. þóga—հոոք
փափագ—փափաք (սովորական է արևմտահայոց մեջ)
արուգ—արուք «չորացած, նվազ»
բաղրակ—բաղրաք «մոլոշ»
բոգ, բոգի—բոք (բույսը)
մարտիրոդոգ—մարտիրոդէք
նժոյգ—նժոյք (միչև անգամ հոլովված՝ նժոյից)
սովրէք—սորեկ «որթ»
փարաք—բարակ (շուն)
փճոք, փչոք—փեճեկ

18. ՍՂՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ ՀՈԼՈՎՄԱՆ ԵՎ ԱՇԱՆՑՄԱՆ ՄԵՋ

Նախաշեշտ վանկերի մեջ ձայնավորների ու երկբարբառների սղման ու ամփոփման մասին արդեն ասել ենք: Հոլովման ժամանակ, ուր որ բառի վրա մի նոր վանկ ավելանալով՝ շեշտը տեղափոխվում է ավելի առաջ, նախաշեշտ ձայնավորներից և երկբարբառներից ոմանք փոփոխվում են: Այսպես.

-ի, -ու ընկնում են (կամ վերածվում են ը).—գիր, գրոց, գլուխ, գլխոյ
ոյ դառնում է ու.—գոյն, գունոյ
ևա » է ե.—մատեան—մատենի
եայ » է (ե).—հրեայ, հրէի
է » է է.—սէր, սիրոյ

[1] *Այս բառացուցակը առանձին-առանձին կազմեցինք ընկ. Աշոտ Աբրահամյանը, ապա ես: Երկու ցուցակները միացնելով գնում եմ այստեղ:*

ա, ե, ո, այ, աւ անփոփոխ են մնում։ Օր. հացի, մեծի, փորի, հայոց, հաւուս։

Այս ձայնափոխութիւնները կատարվում են, երբ հետյալ ձայները գտնվում են վերջին փակ վանկի մեջ. ներքին վանկերում նման փոփոխութիւն չի կարող տեղի ունենալ. ինչ. գիշեր-գիշերոյ, պուրակ-պուրակի, խոյակ-խոյակաւ և այլն։

Երբ փոփոխելի ձայները գտնվում են վերջին բաց վանկում, այսինքն բառի վերջին ձայնավորն են կազմում, է, ոյ, ու մնում են անփոփոխ. ինչ. մեղու-մեղուի, բազէ-բազէի, դշխոյ-դշխոյի.— Եա չի կարող գտնվել անունների բառավերջում, ուր ունենք միշտ -եայ. եւ այս եայ ձևը դառնալով նախ եյ, այնուհետև վերածվում է է-ի. ինչ. քրիստոնեայ-քրիստոնէի։

Առանձին կանոնի է հետևում ի-ն բառավերջում, որի մասին տես վերը՝ հոլովման մեջ և «Հետք հայերենի մեջ» գլուխը (Ձայնաբանութիւնը նվիրված հատորում)։

Միջին դիրք ունի իւ-ն, որ եթե գտնվում է բառավերջում (այնտեղ, ուր մենք հնչում ենք իվ) փոփոխելի ձայնավորների նման սովում և վերածվում է ու-ի. ինչ. թիւ-թուոյ, պատիւ-պատուով, իսկ եթե փակ վանկում է գտնվում (այնտեղ, ուր մենք այժմ հնչում ենք իրր ձայնավոր -իւ), մնում է անփոփոխ. ինչ. ձիւթ-ձիւթոյ, նիւթ-նիւթոյ։ Բառի ներքին վանկերում գտնված ժամանակ, բնականաբար, անփոփոխ է մնում. ինչ. դիւահար-դիւահարի, հիւանդ-հիւանդաց։

Առանձին կանոնի է հետևում իւն, որի մասին տես հոլովման մեջ։

Այն հոլովները, ուր այսպիսի վանկի հավելում և հետևաբար շեշտի տեղափոխութիւն է կատարվում, կոչվում են խոտորնակ հոլովներ. այսպես են սեռական-տրական, բացառական-գործիական, ներգոյական. մյուսները կոչվում են ուղիղ հոլովներ և են՝ ուղղական-հայցական։

Տալիս ենք այստեղ սովան վերաբերմամբ հավելված տեղեկութիւններ։

Աստուած բառը գրաբարում երկու տեսակ հոլովում ունի. եթե նշանակում է հրեից կամ քրիստոնեից աստվածը, խոտորնակ հոլովների մեջ կորցնում է ա ձայնավորը (աստուծոյ, յաստուծոյ, աստուծով). իսկ երբ նշանակում է կռապաշտների աստվածը, պահում է. (Աստուածոյ, Աստուածով, հգ. Աստուածոց, Աստուածովք)։ Այսպես նաև բարդութիւնների և ածանցման

մեջ. աստուածասէր և այլն։ Սակայն այս կանոնը, որ տալիս են մեր բոլոր հին քերականները և վերահիշյալ աստուծոյ, յաստուծոյ, աստուծով ձևերը՝ զուտ թյուրիմացութեան արդյունք են։ Ե դարում, երբ ընդհանրապես ա ձայնավորը պիմանում էր շեշտի ազդեցութեան և ոչ մի բառի մեջ չէր սղվում, պատճառ չուներ, որ բացառութիւն կազմեր այս մի միակ բառի մեջ և այն էլ այսքան նուրբ զանազանութեամբ։ Իրողութիւնն այն է, որ հին գրվածքներում աստուած բառը իր հոլովներով երբեք ամբողջովին չէր գրվում, այլ միշտ պատվով. այսպես՝ $\overline{\text{Ած}}$ = աստուած, $\overline{\text{Այ}}$ = աստուծոյ, յ$\overline{\text{Այ}}$ = յաստուծոյ, $\overline{\text{Ավ}}$ = Աստուծով։ Միջին դարում, երբ մտավ հայերենի մեջ միջին ա-երի էլ կորուստան օրենքը և աստուածոյ դարձավ աստուծոյ, կարծեցին, թե ե դարի $\overline{\text{Այ}}$ ձևն էլ պետք է կարդալ աստուծոյ, $\overline{\text{Ավ}}$ = Աստուծով։

Ի ձայնավորը բառասկզբում չի սղվում, եթե հոլովման կամ ածանցման մեջ առանձին վանկ է կազմում. այսպես են՝ իժ-իժի, ի-ժակորիւն, իլ-իլոյ, իմ-իմոյ, իմն-իմունք, իր-իրաց, իրաւ։ Երբ միանում է բաղաձայնի հետ, դրութիւնը անորոշ է. իղձ, իճճ, իճչ բառերի մեջ սղվում է (սես. ըղձի, ընձու, ընչից), բայց իճճ, իճքճ, իսկ բառերի մեջ մնում է (համմտ. ինքեան, ինքնաբուղխ, ինքնին, ինձէն, իսկական, իսկոյն)։

Իճճ բառը տատանվում է երկուսի մեջև. հոլովման ժամանակ լինում է ըճճի, ըճճից, ըճճէ, ըճճիւ, ըճճիւք, իսկ բարդութեան մեջ անփոփոխ է. ինչ. իննամեայ, իննեքին։

Իրր բառից կազմվում է իրրև։ Երբ բառասկզբի ի նախավոր հավելված ոտանալով ծածկվում է բառի մեջ, սղվում է. այսպես են՝ իմէ՞, աւ իմէ՞-զմէ՞ (ինչու՞), իք-չքաւոր։

Ու ձայնավորը բառասկզբում նմանապես հոլովման և ածանցման ժամանակ առանձին վանկ կազմելիս չի սղվում. այսպես են՝ ուխ-ուխի, ուլ-ուլու, ուլն-յուլանէ (վիպ), ուլն-ուլունք, ուլանց, ուշ-ուշի, ուռն-ուռամբ, ուս-ուսոյ, ուր-ուրեք։ Երբ միանում է հաջորդ բաղաձայնի հետ, երբեմն սղվում է, երբեմն ոչ.—այսպես՝ սղված ձևով են՝ ուրջու-ըրջուաց, ումպ-ըմպել, ունդ-ընդոյ, ընդղէն, ունչ-ընչացք. առանց սղման են՝ ուղտ-ուղտու, ունկն-ունկան, ուխտ-ուխտի, ուխտ-ուխտի, ուսանէք, ուսոր-ուսանէր, ուրդ-ուրդի (?), ուռ-ուռոյ (?)։

Երբ բառը սկսվում է ի ձայնով՝ նրան հաջորդող ի ձայնը հոլովման և ածանցման մեջ մերթ սղվում է ըստ օրինի, և մերթ էլ՝ ի շնչի տկարության պատճառով, իբր նախաձայն համարվելով՝ չի սղվում. Այսպես, ունենք ինձ-ինծոյ, բայց ինմն-ինմանե, ինգ-ինգի, բայց՝ ինգերորդ, ինգամեայ:

Մ. Գրամմոնը, որ հատկապես ուսումնասիրել է հայերենի ձայնարանական օրենքները, ի և ու ձայնավորների սղման ու պահպանության համար հետևյալ օրենքներն է տալիս:

1) ի, ու ձայնավորները սղվում են, որովհետև ամենատկար և հետևաբար ամենաթույլ ձայնավորներն են. իսկ մյուս ձայնավորները մնում են, որովհետև նրանցից ավելի բաց, հետևաբար ավելի ուժեղ են:

2) Նախաձայն ի և ու մնում են առաջին վանկում և չեն սղվում, որովհետև առաջին վանկը առանում է որոշ ուժգնություն. այսպես են նաև ռոմանական լեզուները. օր. ֆրանսերենում շեշտից առաջ գտնված ձայնավորները սղվում են բացի առաջին վանկից:

3) Երբ առաջին վանկի ի և ու ձայնավորները ունեն իրենցից առաջ մի բաղաձայն, սղումը կանոնավոր կերպով կատարվում է, որովհետև այն ուժգնությունը, որ առացել էր առաջին վանկը, բաժանվելով բաղաձայնի և ի, ու ձայնավորների վրա, այս ձայնավորներին շատ չնչին բան է մնում. ինչ. գիր-գրոյ, դուռն-դռան:

4) Երբ ի և ու նախաձայն են, և նրանց հաջորդում են երկու բաղաձայն, ածանցման և հոլովման ժամանակ ի-ն սղվում է, իսկ ու-ն մնում է (ընչից, ունկան): Պատճառն այն է, որ ի-ն սուր ձայնավոր է, ու-ն՝ ծանր ձայնավոր. հետևաբար ի-ն ավելի թույլ է ու-ից: Երբ առաջին վանկը առանում է որոշ ուժգնություն, այդ ուժգնությունը ամբողջապես պահվում է ու ձայնավորի վրա, երբ նա առանձին վանկ է կազմում (բաց որում նրան հաջորդող միակ բաղաձայնը անցնում է հաջորդ վանկին): Այս դեպքում ի և ու հավասարապես մնում են, ինչպես տեսանք, որովհետև ամբողջ ուժը իրենց է մնում: Իսկ երբ բաղաձայնը երկու է, դրանցից առաջինը մնում է ի կամ ու ձայնավորին և նրա հետ վանկ կազմում: Ուժգնությունը նույնպես բաժանվում է երկուսի վրա, բայց այս անգամ ի-ն իրրև ավելի թույլ ընկնում է, իսկ ու-ն իրրև ավելի ուժեղ՝ մնում է:

5) Երկրաբրառներն էլ ենթարկվում են նույն օրենքին. նրանք, որ փակ ձայնավորով են կազմված՝ ավելի են փակվում և հանում միաձայն ատիճանի (այ>ու, եա>և), իսկ նրանք, որ կազմված են բաց ձայնավորներով (այ, աւ), մնում են անփոփոխ (M. Grammont, MSL, 20, էջ 220—223):

Հեղինակը ուշադրության չի առնում այն հանգամանքը, որ ի, ու ձայնավորները կրկնակ բաղաձայնից առաջ երբեմն մնում են, երբեմն սղվում:

Մինչև հայերենում սղման և ամփոփման օրենքը ոչ միայն պահվեց ընդհանրապես, այլև ավելացավ նաև ա ձայնավորի սղման օրենքը. օր. ականջ-ակնջի, բերան-բերնի, գրաւական-գրաւկնի, երակ-երկի, հիւանդ-հիվնդի, պայման-պոմնի, ականջացաւ-ակնջցվի, երիկամանց ցաւ-երիկմնցվի և այլն:

Այսպես նաև բառավերջի այ, է ջնջվում են. օր. աղայ-աղայի կամ տղի, հնդպէ «հզկերդ»-հնդպէի կամ հնդպի:

Բարբառները ընդհանրապես պահում են մինչև հայերենի սղման օրենքը. օր.

քիթ-քթի, միտք-մտքից, ծիտ-ծտի, հարսանիք-հարսանքի, աղիք-աղքի, կորիճ-կորճի.

ջուր-ջրի, անուն-անըմի, քուրջ-քրջի, քուրդ-քրդի.

աէր-սիրու, տէր-տիրոջ, մէջ-միջին, միջից, միջի, միջով, գէշ-գիշու

լոյս-լուսի, լսի.

կոիւ-կուվի.

Ա ձայնավորի սղման համար բարբառները բաժանվում են երկուսի. Կովկասյան բարբառները ընդհանրապես չեն ճանաչում այդպիսի սղում, իսկ մյուսները ունեն. ինչ. բերան-բերանի, բերնի, ժամանակ-ժամանակին, ժամընկու, սպիտակ-սիտակից, սիտակի:

Բարբառները ունեն դարձյալ այնպիսի ձայնավորների կամ երկրաբրառների սղում, որ չգիտեն գրաբարը կամ միջին հայերենը, օր. արիւն-արնի, քոյր-քրոջ, ալիւր-ալրի, բոյն-բնի, լոյս-լսի:

Բայց բարբառների մի ուրիշ մասը, հատկապես կենտրոնից հեռու գտնվածները, վերացրել են սղման օրենքը և աշխատում են բառի մաքուր ձևը (այսինքն՝ ուղղականը) անփոփոխ պահել ամբողջ հոլովման մեջ: Այսպես է օր. Պոլիս:

Հոլովման ժամանակ ձայնավորները սղելու կանոնը կա նաև ռուսերենում, բայց չափազանց քիչ դեպքերում. այսպես օր. лоб «ճակատ»—սեռ. лба, рот «բերան»—սեռ. рта: Այստեղ էլ սակայն միօրինակության օրենքը գործում է և օր. Հայաստանի մալականների մոտ նույն բառերի սեռականը լինում է ло́ба, ро́та. ինչ.

цвет	ло́ба	красный
գույնը	ճակատի	կարմիր (է)
размер	ро́та	маленький
չափը	բերնի	փոքր (է)

Ձայնավորների ու երկբարբառների սղման և ամփոփման օրենքը, որ այնպես ընդարձակ գործածություն ուներ հին հայերենում և որ այժմ էլ բավական խստությամբ պահվում է Երևանի բարբառում, վերացված է Պոլսի բարբառից: Ուղղականի ձևը իր կերպարանքը ամբողջությամբ պահում է հոլովման բովանդակ ընթացքում. այսպես, ասում ենք՝ ալուրի «ալյուրի», արուսի «արյան», միթքի «մտքի», ջուրի «ջրի», միսի «մսի», քիթի «քթի», հարսնիքի, կարիճի, անունի, քուրջի, քիւրդի, մէջի, գէշի, լուսի, մուգի «մկան», ձուգի «ձկան», սիրդի «սրտի», դունի «տան», կռիվի, շունի «շան», մօխերի «մոխրի», դէրօչ «տիրոջ», դերօչմէ «տիրոջից» և այլն: Սղման և ամփոփման օրենքի վերացումը բնականաբար չպիտի ազդեր լեզվի արդեն պատրաստ, բարդ և ածանց բառերի վրա. այսպես՝ առանց փոփոխության ասում ենք՝ ջըրթփիլ «ջրաթափիլ», չրբէդէդ «ջրհեղեղ», սրփիչ «սրբիչ», գնիգ «կին», սիրցունէլ «սիրեցուցանել», գնաչէն «տնաշեն» և այլն, և այլն, որոնց մեջ սղման և ամփոփման օրենքը պահված է կանոնավոր կերպով:

Բայց այդ օրենքի վերացումը այնպես է խորացել, որ նույն իսկ բառակազմության մեջ էլ է ցույց տալիս իր ուժը և բարբառիս բարդ ու ածանց բառերից շատերը պահում են սղելի ձայնավորը. այսպես՝ դուրսէցի «դրսեցի, բուրթօզ «բրդոտ», սիրտօզ «սրտոտ», ջուրօզ «ջրոտ», գէսկադար «կիսակատար», աուդնալ «աղանալ, թանկանալ», բինդէրէս «պնդերես» և այլն:

Բայց ինչպես որ ամեն մի հին օրենք կարող է մի քանի հետքեր թողնել, նույնպես և այս օրենքը թողել է Պոլսի բարբառում հետևյալ օրինակները՝ հոլովման մեջ.—ականջ>անդաջ, սեռ. անդըջի, հոգ. անդըջնէր, աղջիկ>ախճիգ, ախճրգան, ախ-

քաս>ախկադ, ախկըդի, աման>աման, ամըննէր, ամխ>ամխ, ամսու, ամսըվան, աշխարհք>աշխարք, աշխըրքի, առաւօտ>առդու, առդըվան, առդըվընէ, բերան>բէրան, բէրնի, բէրնէ, բէրնօվ, գետին>գէդին, գէդնի, գէդնէն, գլուխ>գլուխ, գուլխու, գուլխէն, դուռն>դուռ, դռան, զատիկ>զադիկ, զադգըվան, զադգին, զաւակ>զավադ, զավդի, զավդրնէր, էրիկ>էրիդ, էրգան, կին>գնիգ, գնգան, կռնակ>գըռնագ, գըռնըգի, գըռնըգէն, ճակատ>ջագադ, ջագդի, ջագդէն, կիրակի>գիրագի, գիրագվան, Հռոմ>Հռոմ, սեռ. Հռոմի, Հռոմնէր, հայվան>հայվընէր, սէր, սիրու, մարգարիտ>մարգըրիդ, մարգըրդի, վիճակ>վիջագ, սեռ. վըջգի, շիտակ>շիդագ, շիդգէշիդագ, սկեսուր>գէսուր, գէսրօչ, շարաթ>շափաթ, շափթու, շափտվան, շափտօվ, շափտէ, շափաթ, շափտրնէր, ատակ>ատագ, բատրդի, սաբաթ>սեռ. սաբթվան, քոյր>քուր, քրօչ, տաճիկ>դաջիգ, տաջդի, դաժգէն, դաժգընէր, փեսայ>փեսա, փեսի, փեսէ, այսպես նաև՝ տղայ>դղա, դղու, դղէ, ճանապարհ>ջամփա, ջամփու, ջամփէն:

Այս բոլորի փոխարեն կարելի է գործածել նաև առանց սղման ձևեր. ինչ. ականջ>անգաջի, անգաջնէր, աղջիկ>ախճիգան և այլն, և այլն: Նույնիսկ ավելի սովորական է ասել շափաթվան, դաջիգներ, դաջիգեն և այլն, քան թե շափտվան, դաժգընէր, դաժգեն և այլն, որոնք շատ հին ձևեր են: Բայց կարելի չէ դեռ ասել դղայի, փեսայի, ջամփայի և այլն, փխ. դղու, փեսի, ջամփու և այլն, որոնք միակ սովորական և գործածական ձևերն են բարբառիս:

Նոր-Նախիջևանի բարբառում ձայնավորների և երկբարբառների սղման օրենքը բոլորովին ջնջված է: Հոլովական բոլոր ձևերի մեջ էլ ուղղականի ձևը մնում է անփոփոխ. ինչ. միս, միսի, միսէ. մուխ, մուխի, մուխէ. սիրտ սիրտի, սիրտէ. քուր, քուրօչ, քուրօչմէ և այլն: Այս օրենքը այնքան է առաջ գնացել, որ մինչև անգամ բառակազմության մեջ էլ է ցույց տալիս իր ուժը և բարբառիս բարդ ու ածանց բառերից շատերը, որոնք հին լեզվից ժառանգություն են մնացել, սղման օրենքը ջնջելով՝ իրը նոր կազմված բառեր՝ նախկին ձայնավորները վերականգնել են. ինչ. դրսեցի>դուսացի, բրդոտ>բուշթօզ, սրտոտ>սիրտօզ, ջրոտ>ջուրօզ, կիսամեռ>գէսամէռ, կիսակատար>գէսագադար և այլն, և այլն:

Այս ընդհանուր կանոնից ազատ են մնացել մի քանի առ-կավաթիվ բացառություններ, որոնցից ոմանք հին հայերենից ժառանգություն են, մյուսները նոր ձայնական օրենքների ար-դյունք՝ հետևյալ ձևով.

ա) բառավերջի ա ձայնավորը կորչում է փեսա «փեսայ», դղա «տղայ» և ջամփա բառերի հոլովման մեջ. սեռ. փեսի, դղի, ջամփու, բց. փեսէն, դղէն, ջամփէն և այլն:

բ) վերջավանկի ա ձայնավորը կորչում է բերան «բերան», վջազ «վիճակ (Համբարձման)», շափաթ «շաբաթ», դազ «տակ, հատակ», ատազ «դրամ», աշխարք «աշխարհ», գռնազ «կռնակ» բառերի մեջ. ինչ. սեռ. բէրնի, վջգին, աշխըրքի, ատըգի, գռնը-գի, բց. բէրնէդ, գդէն, գրծ. գբռնըգով և այլն, բայց այս բոլորը ավելի հաճախագեպ են հին լեզվում (համմա. ատըգի, Պատկ. բ. 285, 383, դգեն, բ. 403, աշխրքի Ա. 265, 268, Գ. 260 և այլն): Նո-րերի մոտ հետզհետե ջնջվում են՝ տեղի տալով ընդհանուր ձևին. բէրանի, ատագի, գագէն և այլն.

գ) վերջավանկի ի ձայնավորը ջնջվում է էրիգ, սիրդ, ամիս, զաղիգ բառերի մեջ, նաև՝ գարի «տարի» բառի ծայրում. այսպես՝ էրգան, ամսու, սրդի, զագգին, դարվան. բայց ասվում է նաև սիրդի, զագիգվան: Հների մեջ աղջիկ բառը գործածվում է թե սղմամբ և թե առանց սղման, նորերի մեջ առանց սղման: Ղրիմի և Թոփսիի շրջանում ունենք էրգընքին «երկունքի», որ հիմա քաղաքի բարբառում առանց սղման է:

Բացի սրանից, հոլովման ժամանակ երկու ձայնավոր իրար մոտ պատահած ժամանակ նեղմուծվում է յ բաղաձայնը. ինչ. բագլա «բակլա», սեռ. բագլայի, հէռու «հեռու», սեռ. հէռույի, բց. հէռույէն, լուզու «լեզու», սեռ. լուզույի, բց. լուզույէն և այլն: Այսպես են եղել նաև թի, ձի բառերը. սեռ. թիյի, ձիյի, բց. թի-յէ, ձիյէ, հգ. թիյէր, ձիյէր և այլն և հետո այս յ հավելվածը արմատական կարծվելով՝ անցել է նաև ուղղականի վրա, որով բառը դարձել է թիյ, ձիյ:

Հին հայերենի սղման օրենքը բնդհանրապես պահված է Համշենի բարբառում, բայց ոչ այնպես խիստ կերպով, ինչպես է գրաբարում:

Ի ձայնավորը երբ գտնվում է վերջավանկում, հոլովման ժամանակ ջնջվում է. այսպես՝

ամիս>օմիս, օմսու
այրիկ>էրիգ, արիգ, սեռ. էրգօն
անիծ>օնիձ, օնձի
բիր>պիր, սեռ. պրի
բրինձ>պրինձ, սեռ. պրնձի
գետին>կէգին, սեռ. կէդնու
գին>կին, կնի
դիր>կիր, կրի
եղիճ>էղիջ, էղջի
երինջ>էրինջ, էրընջի
երկինք>էնինք, էնընքի
զաւիկ>զադիգ, զադգի, զադգըվօն
թիզ>թիգ, թգի
ինն>ինը, իննը, ընի
լիար>լիդար, լդրի
խարիսխ>խօրիս, սեռ. խօյսի
ծաղիկ>ծաղիգ, ձաղգի
ձիլ>ձիլ, ձլի
ձիրտ>ձիդդ, ձիդ, սեռ. ձըդդի
ձիծ>ձիձ, ձձի
կաղին>գաղին, գաղնի
կարմիր>գարմիր, գարմրի
կացին>գացին, գասնի
կթիչ>գթիչ, գտիճ, սեռ. գճճի
կիճ>գիջ, գջի
կծիկ>գձիդ, գձգի
կորիզ>գօրիդ, գօյզի
կով>գով, գովի
հին>հին, հնի
հինգ>հինդ, հնգի
ճիպո>ջիմբոր, ջմբոր
ճիտ>ջիդ, ջդի
մարմին>մարմին, սեռ. մարմընի կամ մարմնի
միս>միս, մսի
միտք>միտկ, մտկի
մոխիր>մօխիր, մօխրի
շապիկ>շարիգ, շարգի
շիլ>շիլ, շլի

չիր>չիր, չրի
պանիր>բոնիր, բոնրի
պինչ>բինճ, բնճի
պղինձ>բղինձ, բղընձի
սիրտ>սիդ, սիդ, սեռ. սըդի
տեսիլք>դէսիլք, դէսըլքի
տիկ>դիգ, դգի
փոխինդ>փօխինդ, փօխընդի
քիթ>քինթ, քնթի
քիսա>քիսա, քսաի
քիրան>քըդինինկ, սեռ. քըդընինքի, քըդընընկի·

Նույնիսկ այլ ձայնավորներ, եթե ձայնափոխութ յամբ վերածվում են ի ձայնավորի, կարող են սեռականի մեջ կորցչնել ինչ.

երես>էրիս, էյսի
դկեա>գդիր, դգրի
սաեր>սպիյչ, սաիճ, սեռ. ըսաչի
ցորեան>ցօրին, սեռ. ցօյնի
փուռնիդ>փուռնիդ «փուռ նեռավելով եփած հաց», սեռ. փուռնըդի·

Անսովոր, քիչ գործածական կամ սեռականում բաղաձայների խաղողում առաջացնող բառերի մեջ ի ձայնավորը չի սրդվում. ինչ.

բոկ>պօրիգ, պօրիգի
դեղին>տէղին, տէղինի
խաւիծ>խաւիճ, խաւիճի
խրտիչ «խրտուիլակ», սեռ. խըդիչի
կայծոռիկ>գռձօռիգ, գռձօռիգի
կապիչ>գաբիչ, գաբիչի
կիւ>գիվ «ծամոն», սեռ. գիվի
ուրիշ>ուրիչ, սեռ. ուրիչի
վարտիք>վայդիք, սեռ. վայդիքի
փոիչ «գորգ», սեռ. փոիչի

Նույնիսկ շատերն այն բառերից, որոնք ենթարկվում են սղման օրենքին, կարող են նաև պահել իրենց ի ձայնավորը. այսպես՝

բիր>պիր, սեռ. պրի կամ պիրի
բրինձ>պրինձ, սեռ. պրնձի, պրինձի

բանուալի>պօնվլինք, պօնվլինքի, պօնվլընքի
գին>կին, կնի, կինի
գիր>կիր, կրի, կիրի
երինջ>էրինջ, էրնջի, էրինջի
խլինք>խընվլինք, խընվլինքի, խընվլընքի
խորիսխ>խօրիս, խօյսի, խօրիսխի
կարմիր>գարմիր, գարմրի, գարմիրի,
կացին>գացին, գասնի, գացինի
կճիչ>գճիչ, գաիճ, սեռ. գաիճի, գճճի
կծիկ>գձիգ, գձիգի, գձգի
հինգ>հինդ, հնգի, հինգի
ճիպո>ջիմբոը, ջիմբոի, ջըմբոի
շիլ>շիլ, շլի, շիլի
օձիլ>օչիլ, օչլի, օչիլի
պանիր>բոնիր, բոնրի, բոնիրի
տեսիլք>դէսիլք, դէսիլքի, դէսըլքի

Նմանապես այլ ձայնավորներից ձայնափոխութ յամբ առաջացած ի ձայնավորը կարող է սղվել կամ պահվել. ինչ.

արև>արէվ, արիվ, արէվի
ընկեր>ընգիր, ընգիրի, ընգէրէչ
թեթև>թէթիվ, թէթէվ, թէթէվի
թեւ>թիվ, թէվ, թէվի
թեփ>թիփ, թէփ, թէփի
խելք>խիլք, խէլք, խէլքի
կանեփ>գոնիփ, գոնէփ, գոնէփի
ձև>ձիվ, ձէվ, ձէվի
շերեփ>շէրիփ, շրէփ, շրէփի
սեամ>շիմ, սեռ. շմի, շիմի
սերմն>սիրմ, սէրմ, սէրմի
վեց>վից, վէց, վէցի
ցեղեկ>ցօրիգ, ցօրէգ, սեռ. ցօրիգվօն, ցօրէգվօն

Ձիշտ ի ձայնավորի նման, նաև ու ձայնավորը, լինի նաառաջացած գրաբարի ու ձայնավորից և կամ ձայնափոխված մի ուրիշ ձայնավորից, հոլովման ժամանակ երբեմն սղվում է, երբեմն մնում է անփոփոխ, երբեմն էլ կարող է թե սղվել, և թե մնալ՝ ըստ կամս. Օր.

ալիւր>ալուր, սեռ. ալրի, ալուրի
ածու>ածուք, ածուքի
անալուխ>օնլուխ, օնլուստ, սեռ. օնլուստօն
անանուխ>օնլուխկ, օնլուխկի
անուն>օնուն, օնունի
աշուն>աշուն, աշնօն
ապուր>աբուր, աբրի, աբուրի
արիւն>արուն, արուն, արնի
արտասուք>այդըսունք, այդըսունքի
բոյլք>պուլկ «բուփ», սեռ. պուլկի, պլկի կամ պըլկօն
բոյն>պուն, պնի
բուրդ>պուշա, սեռ. պշաի, պուշաի և այլն, և այլն։

Ու ձայնավորի սղման հարցում առանձնապես հիշելու արժանի է անորոշի -ուշ վերջավորությունը։

Վերջավանկի ու ձայնավորը շ-ի մոտ ընդհանրապես ջընջվում է. ինչ. փուշ-փշի, թուշ—սեռ. թշի, հգ. թշվի, բայց անորոշների -ուշ վերջավորության մեջ ու ձայնավորը չի ջնջվում երբեք. ինչ. բերել>պէրուշ, պէրուշի, ասել>ասուշ, ասուշի և այլն։

Այս բոլորը ցույց է տալիս, որ սղման օրենքը Համշենի բարբառում գոնվում է անցման շրջանի մեջ։ Նա պարտադիր է հնավանդ և շատ սովորական բառերի մեջ, մինչև կարգի բառերի մեջ կամավոր, իսկ նոր և հատկապես օտար բառերի մեջ վերացված է։ Սղման օրենքը Համշենի բարբառում ջնջման շրջանումն է գոնվում։

Ի, ու ձայնավորների նման սղման է ենթարկվում նաև ա ձայնավորը, բայց ոչ միշտ։ Օրինակ՝ ամառն>օմառ, սեռականում լինում է օմռօն և կարելի չէ ասել օմառօն, նույնպես՝ բերան>պէրօն, սեռականում լինում է պէյնի, բայց ընդհակառակը ագահ՝ տալիս է սեռ. ագահի և ոչ թե՝ ագհի, իսկ արծաթ>այձաթ, սեռականում լինում է թե՛ այձաթի, և թե՛ այձըթի։

Ստորև տալիս եմ բոլոր այն օրինակները, որոնց մեջ ա ձայնավորը սղվում է կամ կարող է սղվել։

ամբար>օմբար, օմբրի կամ օմբի
աշխարհ>աշխարք, աշխարքի, աշխըրքի
աստուած>աստվաձ, աստըձու
արժան>էժօն, էժնի
արծաթ>այձաթ, այձաթի, այձըթի
արջառ>աչառ, աչառի, աչռի
բանջար>պօնջար, պօնջարի, պօնջըրի
բերան>պէրօն, պէյնի
դանակ>ռօնագ, ռօնագի, ռօնգի
երազ>նէրազ, նէյդի
երկաթ>էրգաթ, էրգըթի
երկանք>էրգօնք, էրգընքի, էրգօնքի
զանգակ>զօնգագ, զօնգկի
զօքանչ>զօքօնչ, զօքօնչի, զօքընչի
թարախ>թարախ, թարխի
լուացք>լավաշ, լավաշի, լավշի
հիւանդ>հիվօնդ, հիվօնդի, հիվընդի
ճակատ>ջագագ, ճագագի, ջագգի
ճերմակ>ջէրմագ, ջէրմագի, ջէրմըգի
մախաղ>մախախ, մախատ, մախախի, մախտի
մանգաղ>մօնգագ, մօնգագի, մօնգգի, մօնգկի
մառան>մառօն, մառօնի, մառնի
մատաղ>մըդագ, մըդագի, մըդգի
մարագ>մարաք, մարքի
յեսան>էսօն, էսնի քար
նշան>նշօն, նշօնի, նըշնի
շարաթ>շաբաթ, շաբատու, շաբթըվօն
շալակ>շալագ, շալագի, շալգի
շիտակ>շիդագ, շիդագի, շիդգի
ոչխար>օշխար, օշխարի, օշխարօնը
ուրբաթ>ուրբէք, իւրբակ, իւրբի
չուան>չիվօն, չիվօնի, չիվնի
պահատ>բագատ, բագատի, բագտի
պաշար>բաշար, բաշարի, բաշրի
պատակ>բատագ, բատագի, բատգի
պատու>բատավ, բատավի, բատվու
պատանք>բագօնք, բագօնքի, բագընքի
ջրաղացք>ճաղացք, ճաղցուց
ջուխտակ>չուխտագ, չուխտըգի
սեղան>սէղօն, սէղնի
տախտակ>դախտագ, դախտագի, դախտըգի
տարեգալ>կդալ, կըդլի

տաւար>դավար, դավրու
փայտատ>փէդադ, փէտատի
քաղաք>քաղաք, քախկի

Երբ ա ձայնավորը դանվում է բառավերջում, հոլովման ժամանակ ջնջվում է. եղած օրինակներն են՝

գուրպայ>կուրբա, կուրբի
կեռիք>ագռա, ագռի
լորի>լօրգյա, լօրյա, լօրգի, լօրյի
չուխայ>չուխա, չուխի
սատանայ>սատօնա, սատօնի
տղայ>դղա, դղի
փեսայ>փէսա, փէսի

Բացառությամբ միայն աէր>դէրա «քահանա» բառն է, որ սեռականում լինում է դէրայի (սղմամբ պիտի լիներ դէրի, որ թուրքերենով նշանակում է «կաշի, մորթի»):

Ուրիշ ձայնավորներից սղման երևույթ են ներկայացնում հետևյալ բառերը.

ասեղն>ասէղ, ասղի
խաղող>հավէօղ, խաղօղ, սեռ. հավօղի, խաղօղի կամ խաղղի
ձմեռն>ձմէռ, ձմռօն կամ ձմէռվօն
պճեղն>բզէխ, բզէղ, բզղի
երես>էրէս, էրխս, սեռ. էյսի

Ամփոփման օրենքը ընդհանրապես ջնջված է համշենի բարբառում. դրարարի այս օրենքի վերջին հետքերը հետևյալներն են.

երէց>էրէց, իրիցու
էշ>էշ, իշու
կէս>գէս, գիսու
ներ>նէր, նիրի, նիրօչ
տէր>դէր, դիրիչ, դիրէչ

Մյուսները ձայնավորը պահում են անփոփոխ, ինչ.

գէշ>կէշ, կէյշ, կէշի
դէզ>տէզ, տէզի և այլն:

Հին հայերենի սղումներն ու ձայնական փոփոխությունները շատ հարազատորեն պահվում են Նոր Ջուղայի բարբառում՝ հոլովման ժամանակ։ Փակ վերջավանկում գտնված շեշտյալ ի, ու ձայնավորները, ինչ էլ որ լինեն նրանց ծագումը, հոլովման ու հոգնակի կազմելու ժամանակ ջնջվում կամ վերածվում են ը-ի։ Շատ բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը.

հարսանիք>խարսանիք, խարսանի, խարսանիքնէր
կերակուր>կիրակուր, կիրակրի, կիրակրընէր
սունկն>սունգն, սընգնի, սընգնէր
կառուց>կտուց, կարգի, կարգնէր
ծուռ>ծուռն, ծռնի, ծռնէր
կամուրջ>կարմունջ, կարմընջի, կարմընջնէր
շապիկ>շապիք, շապկի, շապկընէր, շապկնէր
ասեղն>ասուղ, ասխի
ծապիկ>ծապիք, ծախկի, ծախկընէր

Սղման օրենքը Նոր Ջուղայի բարբառի մեջ դրաբարից ավելի խիստ է. այնպես որ, կան բառեր, որոնք թեև դրաբարի մեջ մի կերպ պահում են իրենց ձայնավորը, բայց այստեղ կորցնում են. օր.

անուն, անուան>անում, անրմի, անրմներ
մօրուք, մօրուաց>միրուք, միրքի, միրքըներ
արտասուք, արտասուաց>արտասունք, -սընքի
աղիք, աղեաց>ադիկ, ախկի, ախկըներ
թի, թիոյ>թին, թնի, թներ
լեզի, լեզուոյ>լեզին, լեզնի, լեզընէր
ուրիշ>յուրիշ, յուրշի, յուրշներ

Սղման օրենքը այնքան խիստ է, որ նույնիսկ օտար փոխառյալ բառերը ենթարկվում են նրան. օր.

պրս. դուղ «մածնաթան»>սեռ. դղղի
վառփուշ «կապերտ»,>սեռ. վառփշի
արաբ. սանդուղ «սնտուկ»>սեռ. սանդղի
թրք. քարպիճ «ադիւս»>սեռ. քարպճի

Ինչպես օրինակներից նկատվում է, սղյալ ձայնավորի տեղ շատ անգամ դրվում է ը, որ սակայն երբեմն վանկը փակող բաղաձայնից առաջ և երբեմն էլ հետո է դրվում. այսպես՝ շապիկ>շապիք, շապկըներ կամ շապկինէր, կուխ>կուխի, կըռվընէր։

լինում են նաև դեպքեր, երբ հին հայերենի մեջ ը ձայնի հա
վելում չկա, բայց այս բարբառում կա. ինչ. կճուճ, սեռ. կճըճի,
կարիճ, սեռ. կարըճի, կծիկ, սեռ. կըծկի, կտուց, սեռ. կըտցի և
այլն։

Առաջինը վերևում, որ շեշտակիր է, ու ձայնավորները սրդ
վում են՝ ինչ էլ որ լինի իրենց ծագումը։ Եվ արդարև կան բա
ռեր, որոնք գրաբարի մեջ տարբեր ձայնավորներ ունենալով՝
սղման օրենքին չեն ենթարկվում, բայց հենց որ այս բարբառի
մեջ ձայնական որևէ փոփոխությամբ դառնում են ի, ու, իւ
կույն ենթարկվում են սղման. օր.

տորն>տառներ, տառերի
ոսկր>ոսկուս, ոսկոսի, խէժ>դիժ, դժի
տաշեղն>տաշուղ, տաշղի
դերձակ>դերզիկ, դերզըկի
ուղեղ>ըղուղ, ըղըղի
թափօր>թափուս, թափսի

Այս կարգին են պատկանում հատկապես գրաբարի իւ, ոյ
երկբարբառները, որոնք Նոր Ջուղայի բարբառում դառնալով ու,
ի՝ հոլովման մեջ սղվում են. ինչ.

հարիւր, հարիւրոյ>խերուր, խերըրի, խերըրներ.
ձիւն, ձեան>ձ'ուն, ձ'նի, ձ'նէր
ալիւր, ալեր>ալուր, ալրի
աղրիւր, աղրեր>ախբուր, ախբրի
արիւն, արեան>արուն, արնի
բոյն, բունոյ>բ'ուն, բ'նի
ընկոյզ, ընկուզոյ>անգուղ, անգղի
ճիւղ, ճիւղոյ>ճուխկ, ճըխկի, ճըխկէրք
պատրոյգ, պատրուգի>պատրուք, պատրքի
դոյզն>դ'ուզն «քաղցած», դ'զնի
վարագոյր, վարագուրի>վարաքուրի, վարաքրի
բոյթ, բութոյ>բ'ութ, բ'թի

Երկու բառ ունենք, որոնց մեջ սղման օրենքը ազդում է
մինչև անգամ վերջընթեր վանկի վրա. սրանք են՝

ագաւնի>ագունիկ, սեռ. ագընկա
սերկևիլ>սարկիվիլ, սեռ. սարկըվլի

Սղման օրենքին ենթարկվում են միայն ի, ու ձայնավորները, իսկ մյուսները ազատ են։ Նույնիսկ այն բառերը, որոնք հին հայերենի մեջ ի, ու ունենալով՝ ենթարկվում են սղման, հենց որ բարբառիս մեջ առանձին մի ուրիշ ձայնավոր, ազատվում են սղումից. այսպես են՝

լինդ>ժինդ, ժենդի, ժենդէր
լիբր>լեռի, լեռիի
հիմն>խեմք, խեմքի
կշիռ>քշեռք, քշեռքի
Բացառություն է միայն ծիրա>ծեռա, սեռ. ծռաի

Սղումից ազատ է ի մեջ այլոց ա ձայնավորը, որ ուրիշ բարբառներում սովորաբար սղվում է. այսպես սակայն բացառություն է կազմում բերան>բերաւն, որ սղմամբ տալիս է սեռ. բերնի։

Սղումից ազատ է մնում ու ձայնավորն էլ, եթե գտնվում է բառի սկիզբը, ինչ որ էլ լինի իր ծագումը. այսպես՝ ոյժ>ուժ, ուժի, իւղ>ուղ, ուղի, ուրդ>ուրդ, ուրդի, ուղտ>ուխտ, ուխտի։ Այս պարագային բառասկզբին ավելացած թեթև յ բաղաձայնը նշանակություն չունի և ու համարվելով նախաձայն, դարձյալ ազատ է մնում սղումից, ինչ. ուխտ>յուխտ, յուխտի, ուս>յուս, յուսի, յօնք>յունք, յունքի. նկատելի է, որ այս պարագային՝ բառասկզբի ու ձայնավորը պատճառ է դառնում պահելու նաև վերջավանկի շեշտակիր ու ձայնը. այսպես են՝ ուլունք>ուլունք, ուլունքի, յիշոց>յուշունց, յուշունցի։ Բացառություն է կազմում միայն՝ ունկն>ունգն, ընդնի «ամանի կանթ»։

Նախաձայն ու-ի հակառակ՝ բառասկզբի ի ձգտում է սրդվելու. այսպես ունենք՝ իբ «մի բան», սեռ. ըբի, ինչ>ինչ, սեռ. ինչի, ընչի, ինն>իննը, սեռ. իննի, հազվագյուտ դեպքերում՝ ըննի։

Այս բոլորից դուրս սղման օրենքը չի կատարվում հետևյալ բառերի մեջ.

ա) Հօրաքոյր>խարաքուր, խարաքուրի, ազգոյն>վազգում, վազգումի, կոյր>կուր, կուրի, երեկոյ>յարաւուն, յարաւունվա, լոյս>լուս, լուսի, կոյս>կուս, կուսի, ի ներքս կոյս>նեկուս «Հնդկաստանն», սեռ. Նեկուսի։ Այս բոլորի մեջ ու ձայնը ծագում է հին հայերենի ոյ երկբարբառից և հետևաբար ու ձայնը պահվում է սեռականի մեջ։

բ) Աշուն>աշունք, աշունքվա, գարուն>գարունք, գարունքվա, սկեսուր>սկեսուր, սկեսուրի, օգուտ>օգութ, օգութի:

Է ձայնը, ինչ էլ լինի նրա ծագումը, սղման և ձայնափոխության օրենքներին չի ենթարկվում. ինչ. ագուէս>ագվէս, ագվէսի, ցորեան>ցորէն, ցորէնի, էգ>էք, էքի և այլն: Բայց սրանց հակառակ ունենք սղմամբ տէր>տէր, սեռ. տրոչ:

Բոլոր միավանկ բառերի մեջ, ուր է ձայնը կա, երբ ի հոլովմամբ՝ ե ձայնը գտնվում է բաց վանկի մեջ, սեռականի ի ձայնի ազդեցությամբ դառնում է ի. այսպես են՝ էշ>էշ, սեռ. էշի, իշի, գայլ>գէլ, գիլի, այծ>էծ, իծի, կէս>կէս, կիսի, ձայն>ձ'էն, ձ'էնի, ձ'ինի, ձէթ>ձ'էթ, ձ'իթի, համմտ. նաև նույն օրենքով՝ այգի>իգ'ի: Բացառություն են՝ փայտ>փէտ, փէտի, սեաւ>սեվ, սէվի, ծայր>ծէր, ծէրի, էգ>էք, էքի, ծէս>ծէս, ծէսի, թեմ>թէմ, թէմի, լու>լէվ, լէվի, կայծ>պէծ, պէծի, մէջ>մէչ, մէչի, պէս>պէս, պէսի, հետ>խէտ, խէտի, և դէր>գ'էր, լայն>լէն, դէկ>դէկ. չէն>չէն ածականները, որոնց հոլովական ձևերը անսովոր են: Ընդհակառակը՝ մէջք>մեչկ բառը տալիս է թե՛ սեռ. մեչկի, և թե՛ միչկի:

Ե երկբարբառային հնչումը այս դեպքում կարուկ դառնում է է-ից և միշտ մնում է անփոփոխ. ինչ. գետ>գետ, գետի, նույնիսկ՝ գև>գեվ, գեվի:

Է ձայնի այս փոփոխությունն է, որ սեռականից անցնելով ամբողջ եզակի հոլովման վրա, այնուհետև մտել է մինչև անգամ հոգնակիի մեջ, համմտ. էշ, հոգ. էշեր, էշեր, իշերի և ձ'էթ, հոգ. ձ'էթէր, ձ'իթեր:

Ագուլիսի բարբառում գրաբարի ի, ու ձայնավորների սրդման և ոյ, եա երկբարբառների ամփոփման օրենքի վրա ավելացել է նաև նախաշեշտ ձայնավորների անկման օրենքը: Բայց ինչպես առաջին, նույնպես և երկրորդ օրենքը հոլովման մեջ չեն պահում իրենց լիակատար ուժը: Այսպես օր. ի, ու ձայնավորների սղմամբ ունենք՝ ծաղիկ>ծաղիկ, սեռ ծաղկի, շապիկ>շաբիկ, շաբիկի, հարսանիք>հոսանիք, հոսընքի, ձուկն>ձուկնը, ձկնի, ճնճուղ>ճընճուխ, ճընճըխի. բայց միևնույն ժամանակ առանց խտրության՝ համուրչ>կարմունչ, սեռ. կարմունչի, կըրմընչի, ապուխա>ապուխա, սեռ. ապուխի, ըպըխա, և առանց սղումի՝ սիլ>էչիլ, էչիլի, սուրբ>սուրբ, սեռ. սուրբի, երիկամունք>երկամունք, սեռ. երկամունքի և այլն:

Այսպես է նաև այն դեպքերում, երբ սույն ի, ու ձայնավորները վերածվում են բարբառիս մեջ ուրիշ ձայնի. օր. թուղ թօղնը, սեռ. թօղնի, թուղթ>թօխտ, սեռ. թխտի, թուր>թօր, սեռ. թրի, թօրի, ծիտ>ծեռտ, սեռ. ծռտի, ծէռտի, միս>մայս, սեռ. մսի, հին>հայն, սեռ. հայնի, հինգ>հանգ, սեռ. հանգի, կռիւ>կռայվ, սեռ. կռայվի, կռվի, թուշ>թէշ, սեռ. թէշի, թշի և այլն:

Ըստ այսմ այն բառերը, որոնք բարբառիս մեջ վերջավանկուր ունեն ի, ու ձայնավորները, բայց դրանք չեն առաջացած գրաբարի ի, ու ձայնավորներից, հոլովման ժամանակ մնում են առանց սղման. օր. փոր>փուր, սեռ. փուրի, փող>փուղ, սեռ. փուղի, թել>թիլ, սեռ. թիլի, թեփ>թիփ, սեռ. թիփի և այլն: Կամ վերածվում են նախաձևին. ինչ. տերև>տիրիվ, սեռ. տրեվի, քարող>քարըւգ, սեռ. քարօղի, խելք>խիլք, սեռ. խելքի և այլն:

Նախաշեշտ ձայնավորների անկման օրենքը, որ այնպես հատատուն է բառակազմության մեջ, ընդհակառակը հոլովման մեջ վերածված է կամավորի. այսպես օր. ագռնձ>ագռնձ, սեռ. ըղռնձի կամ ագռնձի, երազ>արազ, սեռ. ըրազի կամ արազի, ծիծաղ>ծայծագ, սեռ. ծայծագի կամ ծըծագի և այլն (անկմամբ կամ առանց ձայնավորի անկման):

Կան բառեր, որոնք վերի կանոններին անհամապատասխան ձևով սղումներ են ցույց տալիս հոլովման ժամանակ. այսպես են՝ արեխ>արէխ, սեռ. արըխի, տաշեղ>տաշուղ, սեռ. տաշըղի, պռօշ>պռէշկ, սեռ. պըռըշկի, ճիւղ>ճէղնը, սեռ. ճղնի:

Ձայնավորների անկման ժամանակ կարող են պատահել ձայնավորի նույնացման դեպքեր. ինչ. դգալ>դըգիւլ, սեռ. դիգիլի (>դըգըլի), գդակ>քէդակ, սեռ. քէդակի (>քըդակի), քաղցր>քուխցըր, սեռ. քուխցուրի, ընկոյզ>ոնգիւզ, սեռ. ինգիզի:

Նաև բոլոր մյուս ձայնափոխություններն ունեն բազմաթիվ բացառություններ. այսպես՝ հազար>հըզզէօր, սեռ. հըզզէօրի, կորնդան>կոընգուն, սեռ. կըոընգունի, ծանր>ծունդըր, սեռ. ծունդըրի, գոքանչ>յանքուչ, սեռ. յանքուչի, բարձր>բէօձըր, բէօձրի, բան>բէօն, սեռ. բոնի կամ բէօնի, աչ>յէօչ, յէօչի, տարբր>տօրմ, տօրմի, առանար>առունդըր, սեռ. առնդրի>սընդըրի, պատնչան>պատընչուն, սեռ. պըտընչանի, պատընչունի, նման>նմռն, նմռնի, ծիրան>ծորիւն, սեռ. ծրանի կամ ծորիւնի,

խրատ>հրօտ, սեռ. հրատի կամ հրօտի, թլուատ>Թլվօտ, Թլվօտի, Թանձըր>Թունձըր, Թունձրի, գժուար>դըժէօր, սեռ. դըժէօրի, դառըն>դէօռնը, սեռ. դէօռնի, բուրուատ>փըրվօտ, սեռ. փըրվօտի, գայլ>գիւլ, սեռ. գիւլի, բան>բիւն, սեռ. բիւնի կամ նաև՝ բանի (ըստ Սարգսեանի, էջ 32), ան>օն, սեռ. անի, օնի. նույնիսկ Թրք. čaγ «գերա»>չօղ, սեռ. չօղի։

Եթե միացնենք այս բոլոր պայմանները, մասնավոր հանդամանքները և բացառություննները, կտեսնենք, որ Ագուլիսի բարբառում հոլովումը ներկայացնում է մի չափազանց խառնակ վիճակ և առանց հայերենի գիտության՝ անկարելի է դուրս գալ նրանից։ Օրենքները վճռական չեն և միևնույն բառը կարող է ունենալ զանազան ձևեր. այսպես օր. խաղող>հաղուղ բառը ունի սեռ. հաղղի, հըղղի, հաղուղի ձևերը, և որովհետև ուղղական կա նաև հաղղու, ուստի սեռականը լինում է նաև հաղղուի, հըղղըվի։ Սակայն լեզվաբանի համար ոչինչ զարմանալի չկա այս խառնակության մեջ. նա այնտեղ տեսնում է մի անցման շրջան, ուր հին լեզվի օրենքները, բարբառի առանձնահատկությունները և համաբանության պահանջները կռվում են իրար հետ՝ վերջնական հաղթությունը այս վերջինին ճնալու պայմանով. Բայց լեզվաբանը տեսնում է միևնույն ժամանակ, որ այս բարբառը ոչ միայն չի ներկայացնում հայերենի հնագույն վիճակը, ինչպես կարծում են ոմանք, այլ ընդհակառակը, նրա այլափոխյալ մեկ ձևն է, ծնունդ ավելի նոր ժամանակների։

Մարաղայի բարբառում ձայնավորների ու երկբարբառների սղման օրենքը բոլորովին վերացված է. ամեն մի բառ իր արմատական ձևը ամբողջությամբ պահում է բոլոր հոլովների մեջ. օր. սիրա>սիրտ, սիրտի, սիրտով, սիրտիր, միս>միս, միսի, միսիր, քիթ>քիթի, քիթիր, դուռն>տուռ, տուռու, երեսուն>յեռասուն յեռասունու և այլն։

Սղման վերջին ճիացորդներն են այս բարբառի մեջ.

բանջար>պանջար, սեռ. պանջրի
գլուխ>կուլօխ, կլօխ, սեռ. կլխին
դուռն>տուռ, հգ. տռներ կամ տուռներ
բերան>պէրան, բց. պէրնէն
ճանապարհ>ճամբախ, սեռ. ճամբախը, ճամբխը, ճամխը, հգ. ճամբախքիր, ճամբըխքիր, ճամխըքիր
տղայ>տղա, հգ. տղաներ, տղներ, սեռ. տղներիր
քամակ>քամակ, բց. քամըկէն, գործ. քամըկօվս.

որոնց վրա պետք է ավելացնել Մարաղայի հինգերորդ հոլովման և գրաբարաձև հոլովման հետևող բառերը։

Սուչավայի և լեհահայ բարբառի հոլովման մեջ սղումը դեռ շատ կենդանի է։

Դնում ենք այստեղ մի քանի օրինակ հոլովական ձևերից.

ականջ>Սչ. սեռ. անգրջի
ակռայ>Սչ. սեռ. ագռի
աշխարհ>Լհ. աշխարք, սեռ. աշխըրքին
բամբակ>Սչ. բ'ամբագ, սեռ. բ'ամբգի
բերան>Լհ. բ'էրան, գրծ. բ'էրնօվ
թուղթ>Սչ. թըխթի
ծիծ>Սչ. ձըձի
կանաչ>Սչ. գանանչ, սեռ. գանչուն, բց. գանչէն, գրծ. գանչօվ
ձուկն>Սչ. ցուգը, սեռ. ցգան
սառակ>Սչ. ըսդ'ագ, սեռ. ըսդ'ըգի
վիճակ>Սչ. վիչագ, սեռ. վիչգի (համբարձման)
տակ>Լհ. դագ, դըգին, դըգէն
տաճիկ>Սչ. դաչիգ, սեռ. դաչգի
փեսայ>Սչ. փէսա, սեռ. փէսի
քաղաք>Լհ. սեռ. քաղքի

Սղման օրենքը լայնորեն գործադրվում է նաև հոգնակիի կազմության մեջ։ Ահա մի խումբ օրինակներ լեհահայ բարբառից։

Ի ձայնավորի սղումը

կօշիկ>գօշիգ՝, գօշըգներ
խալիճն>խալգին, խալգըններ
միս>միս, մըսեր
դիր>գ'իր, գ'ըրեր
քիթ>քիթ, քըթներ
հաւկիթ>հաւգեգ, հաւգըդներ
տաճիկ>դաչիգ, դաչըգներ
երկիր>էրգիր, էրգըրներ
դրացի>գ'րացին, գ'րացըններ
շապիկ>շաբիգ, շաբըգներ
վիզ>վիզ, վըզեր
մարմին>մարմին, մարմըններ

մարգարիտ>մարգ'իդ, մարգ'իդներ
ամիս>ամիս, Լհ. ամիսներ
թուր>Հնգ. թուռ, թռով

Ու ձայնավորի սղումը

պատուհան>բուգուդ, բըղըգները
կանգուն>գանգուն, գանգրննեը
կուրծք>գրուձ'ք գրըձ'քեր
կուտ>գուդ, գըղեր
մուխ>մուխ, մըխեր
թոչուն>թռչ'ուն, թըռչ'ըննեը
դուստր>գ'ուսդ'ր, գ'ըսդ'ըրվիք
գուռն>գ'ուռ, գ'ըռներ
բուրդ>բ'ուրդ', բ'ըրդ'եր
ունդ>հունդ, հընդեր
կծու>գուձու, գուձըննեը
մուկն>մուդ, մըգներ
քուրջ>գ'ուրջ' «գգեստ», գ'ըրջ'եր
գլուխ>գ'օլօխ, գ'ըլխներ
բոյն>բ'ուն, բ'ընեը
ոստ>սուդ, սըգեր
սնդուկ>սունդուգ, սընդըգնեը
սուրբ>սուրբ, սըրբեր
շուն>շուն, շընեը
տուն>դուն, դընեը
ջուր>ջուր, ջրրեր
բ'ան-գուն «գործարան, ֆաբրիկա» (կազմված բան «գործ» +«տուն» բառերից), հգ. բ'ան-գրննեը
ալիւր>ալուր, ալըրներ
անասուն>անասուն «թռչուն», հգ. անասըննեը
անուն>անուն, անըններ
արիւն>արուն, արըններ
պարկուճ>բառգուջ «պայուսակ», հգ. բառգըջներ

Ա ձայնավորի սղումը

հալաւ>հալավըներ «վերարկու»
օտար>օդար, օդըրներ
չուան>չուվան, չուվըններ

տախտակ>դախդ'ագ, դախդ'ըգներ
ճակատ>ջագագ, ջագըգներ
երազ>էրաձ, էրձներ
սաւան>սավան, սավըններ
հրեշտակ>հրիշդ'ագ, հրիշդ'ըգներ
քաղաք>քաղաք, քաղըքներ
գդակ>գ'ըդագ, գ'ըղըգներ
գարխափայր>գ'արնիվար, հգ. գ'արնիվըրներ
թաթաւ>թաթավ «անձրևաթաշ», թաթըվներ կամ թաթիքներ
շաքար>շաքար, շաքըրներ
շարաթ>շաբ'աթ, շար'ըթներ
դանակ>գ'անագ, գ'անըգներ
գաւակ>գավագ, գավըգներ
գանգակ>ժանգագ, ժանգըգներ
մատակ>մատագ «էգ ձի», մատըգներ
վատակ>վասդ'ագ, վասդ'ըգներ
ականջ>անգաջ, անգըջներ
ադաւայ>ադաա, ադըրներ
աման>աման, ամըններ
պատարագ>Լհ. բադրաք, բաղըրքներ

Ա ձայնավորը պահված՝

դերձան>գ'էրձ'ան, գ'էրձ'աններ
կօշկակար>գօշգ'ար, գօշգ'արներ
բերան>բ'էրան, բ'էրաններ

ե ձայնավորի սղումը

ասեղ>Լհ. ասեղ, հգ. ասըգներ
տաշեղ>Լհ. դաշէխ, հգ. դաշըխներ

Սղման հետ պետք չէ շփոթել այն երևույթը, երբ լեհահայ բարբառում վերջավանկի ո ձայնավորը դառնում է ը և այդ ը ձայնն էլ ընկնում է հոգնակիում. օր.

աթոռ>Լհ. աթըռ, հգ. աթըռներ
պորտ>Լհ. բըրդ, հգ. բըրդեր

Զարմանալի կերպով ե և ո սղվում են հետևյալ բառերում.

որբ>Հն. վօրբ՝, հգ. վըրբ՝եր
բերդ>Հն. բ՝երդ՝ «բակ», հգ. բ՝ըրդ՝օրանք

Սղման ժամանակ օտար բառերն էլ կարող են կորցնել իրենց ի, ու, ա ձայնավորը. ինչ.

miskin>մըսքին «խեղճ ու կրակ», մըսքիններ
oǰaq>օջախ «վառարան», օջըխներ
yorγan>յօղրան «վերմակ», յօղրըններ
baγča>բախչա, բախչերներ «պարտեզներ
դ՝ուրդ՝ան (ռում.) «պալատ», հգ. դ՝ուրդ՝ներ
բազըրգան «վաճառականոց», հգ. բազըրգաններ
դօշագ՝ «անկողին», հգ. դօշըգ՝ներ
դուշման «թշնամի», հգ. դուշմաններ
մաջար «հունգարացի», հգ. մաջըրներ
ջարդախ «շտեմարան», ջ՝արդըխներ
չարչա «պատուհան», չարչըներ (թրք. čerčive)
չուբուխ «գավազան», չուբըխներ
բազար «շուկա», սեռ. բազրի
առրա «սայլ»<թրք. araba, գրծ. առրօվ
օրօգ Հն.=Ննխ. օռօք, Համշ. ոօք «իլ, թել մանելու իլ»
<իտալ. rocca<թրք. öreke, հգ. օրըգներ

Ի ձայնավորը չսղելու, այլ պահելու օրինակներ են՝ լեհահայ բարբառում, հոգնակիի մեջ.

կարիճ>գըդրիջ, գրդրիջներ
կռիւ>գըռիվ, գըռիվներ
բրինձ>բ՝րինձ, բ՝րինձեր, բց. բ՝րինձէ արուր
անիծ՝>անիձ, անիձներ
աղջիկ>Մշ. ախչիք, սեռ. ախչիգան

Ու ձայնավորը հոգնակիում չսղելու, այլ պահելու օրինակներ են՝ լեհահայ բարբառում.

մուր>մուր «ածուխ», մուրեր
ծունկ>ձունգ, ձունգվի
քույր>քուր, քուրներ
գրուգ «ագռավ» (<լեհ. kruk), հգ. գրուգեր
շուք>շուք «սովերը», շուքեր

Այս բոլորը ցույց են տալիս, որ սղման օրենքը այս բարբառում էլ սկսել է խախտվել, որի ավելի ուժեղ արտահայտությունն այն է, որ նույնիսկ բառակազմությունն էլ սկսել է փոխվել, ինչպես տեսանք. Սրա համար այլ օրինակ է՝

խլնքոտ>Մշ. խլինքօգ։

Սղման և ամփոփման օրենքները դեռ պահվում են նաև Սվեդիայի բարբառում։ Այսպես օրինակ՝

Ջուր>Ջ՝էօր բառից՝ սեռ. Ջ՝ըրը, Ջ՝ըրը խզիրը «ջրի եղրը»։

Ռիթ>քէնթ բառից՝ քընթը ձարք «քթի ծայրը» կամ դիրկ>գ՝էրգ բառից՝ գ՝էրգը դռօ «գրկի տպայ»։

Ոյ>ու ամփոփման համար օրինակ են՝ յոյս>լայս, սեռ. լուսսը բադուռ=լուսոյ պատառ (լույսի մի կտոր).

կոյր>գայր, հոգնակի՝ գուռիս, գուրվըգտաք.

ե>ի ամփոփման օրինակ է ձէթ>ձ՝իթ, սեռ. ձ՝իթը ջրիւգ՝ «ձեթի ճրագ», բայց ուղղականում արդեն ե դարձած լինելով ի, ամփոփման օրենքը կորել է։ Այսպես և ուրիշ դեպքերում։

Գրաբարի սղման և ամփոփման օրենքը հոլովման մեջ պահված է Զեյթունի գավառականում, հետևյալ ձևով։

Մի խումբ բառեր ճշտիվ հետևում են այդ օրենքներին. ինչ.

գաւիթ>գ՝ավիթ, գ՝ավիթը
մածուն>մաձուն, մաձնը
ապուր>արուչ, արչը
շամփուր>շամփուչ, շամփրչը, շամփչը
արմունկն>արմունգ, արմընգի
բրիչ>փիչիչ, փիչչի, փը՝չչը՝
դև>դ՝էվ, դ՝իվի
ծունկ>ձ՝ունգ, ձ՝ընգի
կրունկ>գօչունք, գը՝չը՝նգի
կօշիկ>գուշիք, գուշգի
շապիկ>շաբըք, շարգի
սէգ>սեգ, սիգի
սունկն>սունգ, սը՝նգի
գոմէշ>գ՝ումէշ, գ՝ումշա
մուր>մուչ, մը՝չա
մունջ>մունջ, մը՝նջա

մուխ>մուխ, մը՝խա
սիրտ>սը՝յդ, սը՝յդա
Թրիք>Թը՝յաք, Թը՝յքի

Սղման է ենթարկվում նաև ա ձայնավորը, ինչ որ գոյություն չունի գրաբարում, բայց կա զանազան բարբառներում. Օր.

դանակ>դ՝անօգ, դ՝անգի
պատուհան>բոդիւհիւն, բադիհնի
նապաստակ>լափուսդօգ, լափըսդըգի, լափըսդգի
քաղաք>քաղօք, քախքի
վաստակ>վասդօգ վասդ(գի)
տախտակ>դախդօգ, դախդ(գի)

Ուրիշ բառեր բոլորովին չեն ենթարկվում սղման օրենքին և ուղղակի ձայնավորը անփոփոխ պահում են. ինչ.

անանուխ>անուխ, անուխի
ակիշ>ագիշ, ագիշի
արճիճ>էոջիջ, էոջիջի
բաժին>բ՝էժին, բ՝էժինի
կիր>գիյ, գիյի
հին>հին, հինի
շիշ>շիշ, շիշի
պատիւ>բագիվ, բագիվի
սերկևիլ>սինգիվիլ, սինգիվիլի
երդուիմ>ույդ՝օմ, ույդ՝ումա

Բառեր էլ կան, որոնք տատանվում են երկու ձևերի միջև, այսինքն՝ ներկայացնում են միաժամանակ Թե մի, և Թե մյուս ձևը. ինչ.

շուք>շուք, շուքա, շը՝քի
չամիչ>չամըչ, չամըչա, չամչի
ուրագ>ույօք, ույաք, ույքի
կանաչ>գէնաչ, գէնէչի, գէնչի
ունդ>հունդ, հը՝նդը՝, հունդա
մէջ>մէչ, մէչա, մը՝չը՝

Կան նաև այնպիսի բառեր, որոնք ուղղականում այնպիսի մի ձև են ստացած, որ հայանի չէ, Թե սեռականում ստացած

ձևափոխությունը ուղղականի ձայնափոխության արդյունք է, Թէ սղման կամ ամփոփման օրենքի. ինչ.

ադուէս>ադվիս, ադվիսի
բանալի>բ՝ալընք, բ՝ալընքի
եղիճ>ադըջ, ադըջը
միտք>մը՝դք, մը՝դքը
շղթիք>շուդըք, շուդըքը
պանիր>բանըյ, բանըյա (ոչ բանյա)

Այս բոլորը ցույց են տալիս, որ սղման և ամփոփման օրենքը հոլովման մեջ քայքայված է նաև Զեյթունի գավառականում, բայց չի հասած այն ոչնչացման աստիճանին, որին հասել է, օրինակ, պոլսահայ բարբառը։

Զեյթունի գավառականը սակայն սահեցել է հոլովման մեջ ամփոփման նոր օրենքներ, որոնք Թվելու ենք այստեղ.

ա) Նախ և առաջ պետք է հիշենք օ>ա ձայնափոխությունը։ Այն բառերը, որ ուղղականում ունեն ա-ից առացված օ, սեռականում վերստանում են նախկին ա ձայնը.

բ) Այն բառերը, որոնք իրենց առաջին վանկում առացել են մի ավելորդ օ՝ վերջավանկի օ-ի նմանությամբ, սեռականում կորցնում են այդ եկամուտ օ ձայնը. ինչ. սրահ>սօյօփ, սրյաքը

գ) Այն բառերը, որոնք ուղղականի մեջ ունեն m ձայնը, սեռականում դարձնում են ն կամ պահում են m.

Միավանկ բառերը m դարձնում են ն. այսպես՝

ժանգ>ժոնգ, ժէնգի
խաղող>խող, խէղի
խաչ>խոչ, խէչի
ծայր>ձոյ, ձէյի
կայծ>գյոձ, գյոձի կամ գէձի
կարժ>գոժ, գէժի
կարճ>գյոչ, գէչի
հայս>հոս, հէսի
ձայն>ձ՝ոն, ձէնի
շարժ>ժոժ, ժէժի
սալ (գարնի)>սոլ, սէլի
արջ>ոոջ՝, էոջ՝ո

գայլ>գ'ոլ, գ'էլո
տաշտ>դոյդ', դէյդ'ի
վայտ>փոդ, փէդի
այծ>ոձ, էձու
ճանճ>ջոնջ, ջէնջու

Բազմավանկ բառերի հոլովման մեջ ուղղականի m ձայնը ջնջում է m: Այսպես՝

աղօթք>ոդէօթք, ոդէօթքի
աւօր>հոյէօյ, հոյէյի
աղօթանոց>ոդիւթենիւց «համբիչ», ոդիւթենիցի
թագաւոր>թոդ'ովիւյ, թոդ'ովիյէ
թագաւոր>թոքվիւյ, թոքվիյի
ազոխ>ոձխիւխ, ոձխիւխի
ախոռ>ախէօռ, ախըռէ
կեղծաւոր>գէղձովիւյ, գէղձովիւյի
խաղող>խոդիւղ, խոդիղէ
կաթուղիկոս>գյոթէօղդիւս, գյոթէօղդիւսի
հանգոյց>հոնգիւց, հոնգիւցի, հոնգիցի
աթոռ>ոթէօռ, աթըռա, աթըռէ
ալեւոր>հոլվիւյ, հոլվիյէ
ճգնաւոր>ջիգ'նովիւյ, ջիգ'նովիյի
պատուհան>բոդիւհիւն, բոդիհնի
սալոր>սոլիւյ, սոլիւյի
սոգմոս>սոդմիւս, սոդմիսի
վախկոտ>վոխգիւդ, վոխգիւդի
քարաթօթոշ>քյոյթէօշ, քյոյթիշէ

Այս կանոնը այնքան հաստատուն է, որ միևնույն բառ եթե բազմավանկ է, m պահում է m ձևով, իսկ եթե վերածվում է միավանկի, m ձայնավորն էլ դարձնում է ե: Այսպես՝ խաղող բառը ունենք երկու ձևով.

խաղող>խոդիւղ, սեռ. խոդիղէ
կամ » >խոդ, սեռ. խէղի

Ա ունեցող ուրիշ միավանկ բառեր էլ, երբ ածանցվում են, m դարձնում են ե. Այսպես են՝

մայր>մոյ, հոգն. մէյիյ
տադր>դոքյը, սեռ. դէօքյիւչ (նախապես՝ դէքյիւչ)
ձեռք>ձոռք, սեռ. ձէռօց

Կան հինգ բազմավանկ բառեր, որոնք նույնպես պահպանում են այս խմբին.

կանայ>գէնոչ, գէնէչի կամ գէնչի
կասկարայ>գէոգէյոք, գէոգէյէքի
ճախարակ>ջըխոռք, ջըխոէքի
ծնծղայ>ձինձղոք, ձինձղէքի
ցուխք>ցիվիյձոյք, ցիվիյձէքի (քիս, կտուրի ծայրը)

Սրանք իրրև մյուս են ծառայում մեզ՝ տալու համար վերոհիշյալ կանոնի ձայնարանական բացատրությունը.

Գիտենալով բոլոր բառերը, գտա, որ Զեյթունի գավառակում նախավերջին վանկում ոչ մի տեղ չկա m ձայնը՝ բացի այն դեպքից, երբ վերջավանկի ձայնավորն է ե կամ ի:

Վերևում հիշված բոլոր բազմավանկ բառերը, որ ունեն, m ձայնավորը, վերջավանկումն էլ ունեն ե կամ ի ձայնավորը, որի համար և նախավերջին վանկի ձայնավորն էլ m է:

Միավանկ բառերը, որոնք ունեն m ձայնավորը, հոլովման ժամանակ երկավանկի վերածվելով՝ այս m ձայնավորը ընկնում է նախավերջին վանկը, ուստի և գառնում է ե: Վերջին հինգ բառերը չունեն ե կամ ի, բայց որովհետև m ընկնում է նախավերջին վանկում, ուստի և գառնում է ե:

դ) Եթե ուղղականում գտնվեն ե, ի, ձայնավորները, ի հոլովման ժամանակ կվերածվեն է, ի-ի. լինչ.

աղօթանոց>ոդիւթենիւց «համբիչ», ոդիւթենիցի
աւօր>հոյէօյ, հոյէյի
եպիսկոպոս>էբիսգիւբիւս, էբիսգիբիսի
թագաւոր>թոգ'ովիւյ, թոգ'ովիյէ
» թոքվիւյ, թոքվիյի
խաղող>խոդիւղ, խոդիղէ
խաւոր>սէօխդիւյ, սէխդիյի
կոր «կարիճ», գիւյ, գիյի
ճգնաւոր>ջիգ'նովիւյ, ջիգ'նովիյի
մոմ>միւմ, միմի
ոսկր>իւսգիւյ, իսգիյի
ոսպ>իւսբ, իսբի
ոստ(ղ)>իւսդ, իսդի
չոր>չիւյ, չիյի
չորս>չիւյս, չիյսի

պատուհան>բոդիւհին, բոդիհնի
պղտոր>բէօղդիւյ, բէղդիյի
սալօր>սալիւյ, սալիյի
սապմոս>սողմիւս, սողմիսի
սղոց>սէօղիւց, սէղիցի
վախկոտ>վոխգիւդ, վոխգիդի
տիճար>դէօղջիւյ, դէգջիյի
փիլոն>փիւլիւն, փիլինի
փոխ>փիւխ, փիխի
փոկ>փիւգ, փիգի
փոս>փիւս, փիսի
փոր>փիւյ, փիյի

Այս կանոնը, որ բարբառի հին կանոնն է, այժմ բացարձակ չէ. ինչպես սպասելի էր, համանոզության օրենքը արդեն սկսել է գործել և ե, իւ ձայնների օրենքը խախտվել է. Այժմ հոլովման մեջ ուղղականի ձևը ձգտում են անփոփոխ պահել։ Կան բառեր, որոնք հոլովվում են երկու ձևով էլ. ինչ.

խնձոր>խէօնձիւյ, խէնձիյի կամ խէօնձիւյի
խոփ>խիւփ, խիփի, խիւփի, հոգ. խիփիյ
խստոր>սէօխդիւյ, սեռ. սէխդիյի, սէօխդիւյի, հոգ. սէխդիյնա, սեխդիյնիյ, սէօխդիւյնա, սէօխդիւյնի, սէօխդիյնիյ, սեռ. սէխդիյնու, սէօխդիւյնու, բյուր. սէօխդիյնե, սէխդիյնե, բայց դործ. սէօխդիյնէօվ (և ոչ թե՝ սէխդիյնէօվ)։

հանգոյց>հոնգիւց, հոնգիւցի, հոնգիցի

Կան բառեր, որոնց մեջ առաջին վանկում ե պահված է, երկրորդ վանկում իւ դարձած է ի. ինչ.

գդեղոր>գ'էօխդիւյ, գ'էօխդիյի
մեհեան>մէօհիւն, մէօհինի

Կան բառեր էլ, որոնք միայն նամանոզական ձևն ունեն, այն է՝ պահում են ե, իւ ձայնավորները. ինչ.

ագռավ>ոձիւվ, ոձիվի
ագռաւք>ոզէօվք, ոզէօվքի
խմոր>խէօմիւյ, խէօմիյի
կաթուղիկոս>գյոթէօղգիւս

կեղծաւոր>գէղձավիւյ, գեղձավիյի
կոթ>գիւթ, գիւթի
կոճ>գիւճ, գիւճի
կաոր>գէօղիւյ, գէօղիյի
շնորհք>շէօնիւյք, շէօնիւյքի
բոզ>բ'իւզ, բ'իւզի
բոզկ>բ'իւզգ, բ'իւզգի

Վերջապես կան բառեր, որոնք մինչև անգամ սեռականի ի վերջավորությունն էլ են նմանեցնում ե, իւ ձայնավորներին և դարձնում են իւ. ինչ.

խստոր>սէօխդիւյ, սէօխդիւյի, սէօխդիւյիւ
խալիպոն>խէօլիւզիւն, խէօլիւզիւնիւ
բոր>բ'իւյ, բ'իյի, բ'իյիւ

Այստեղ արդեն սկսում է գործել ձայնավորների նույնացման օրենքը։

Վերոհիշյալ ե, իւ ձայնավորների փոփոխման օրենքը ի հոլովման համար էր. իսկ ա, ը, օ ձևի հոլովման մեջ նույն ե, իւ, ինչպես նաև օ ձայնավորը գառնում են ու. ինչ.

գող>գ'իւղ, գ'ուղա
գուղձն>գ'օխձ', գ'ուխձ'ա
գործ>գիւյձ, գ'ույձա
գունդ>գ'օնդ, գ'ունդա
երդումն>ույդ'օմ, ույդ'ումա
թոռն>թէօռ, թուռա
խոնջան>խունջօն, խունջունա
խորան>խուրօն, խուրունա
խոց>խիւց, խուցա
խուլինջ>խէօլէօնջ, խուլունջա
ծոմ>ձօմ, ձումա
կոզ>գիւզ, գուզա, գուզը՝
ձոզ>ձ'իւզ, ձ'ուզո
գոգ>գ'իւգ, գ'իգ'ի, գ'ուգ'ա (նաև գ'ուգ'ի)
ծոց>ձիւց, ձիւցի, ձուցը
կոզոպուտ>գիւզրիւդ, գուզրուդա
հող>հիւղ, հուղա
ձոր>ձ'իւյ, ձ'իւյա, ձ'ույա
շողգամ>շուխգ'օմ, շուխգ'ումա

ոռ>էօռ, ուռա, ուռու
որդն>իւդ՛, ուդ՛ա
չուան>չուվօն, չուվունա
պորտ>բիւդ, բուդդա
տօն>դէօն, դունա
օձ>էօձ՛, ուձ՛ա
օղ>էօղ, ուղա
օտար>ուդօյ, ուդույա
հով>գէօվ, գուվը՝
հով>հէօվ, հուվու
հոտ>հիւդ, հուդու
հոր>հիւյ, հույու

Առաջին հոլովման հինգերորդ ձևի մեջ էլ, որ է ի (կամ ե) ուղղականի էօ, իւ և ի ձայնավորները սեռականում դառնում են ի. ինչ.

ալևոր>հալվիւյ, հալվիյե
ալիւր>էլէյ, էլիյե
ագեղ>աղէղ, աղիղէ
եղջիւր>ախջ՛էյ, ախջ՛իյե
երէց>իյէց, իյիցե
թագաւոր>թագ՛ավիւյ, թագ՛ավիյե
խաղող>խողիւղ, խողիղե
խոզ>խիւզ, խիզե
յարդ>էյդ՛, իյդ՛ե
շրէշ>շը՛յէշ, շը՛յիշե
վէգ>վեգ՛, վիգ՛է
քարաթօթոշ>քյոթէօշ, քյոյթիշե

Այս բոլորից դուրս կան մի քանի բառեր, որոնք շեղվում են սովորական ձևից և ներկայացնում են անկանոն ձևի սեռական՝ներ։ Սրանք են՝

սոխ>սիւխ, սիւխի, սէխա (ուղ. իւ դարձած է)
երէկ>իյէգ, իյիգվոն (ուղ. է դարձած ի)
հոգի>հիդգէ, հուգդո (ուղ. ի դարձած ու)
երեկոյ>իյդօն, օյգօվոն
ընկոյզ>ինգէզ, ունգուզը՝
քոս>քիս, քիւսա (փոխառնակ pnuսա)

յիշող>իւշիւցք, իւշիւցքա
ոջիլ>իճէլ, ուճլա

Պարզ բառերի մեջ պատահած ձայնավորների նույնության օրինակները տվաքել ենք վերը։ Այստեղ պիտի տվաքենք այն օրինակները, որոնք սեռականի մեջ են նույնացրել իրենց ձայնավորները, ինչ որ ավելի հազվադեպ երևույթ է, քան առաջիններըը։

բուռն (ձեռքի)>բ՛օռ, բ՛ը՝ռը՝
բոր>բ՛իւյ, բ՛իյի
դար «պաշտ»>դ՛այ, դ՛ը՝յը՝
միտք>մը՝դ, մը՝դքը
բոր>բ՛իւյ, բ՛իւյիւ
բրիչ>փիյիչ, փիյչի, փը՝յչը՝
գառն>գ՛օռ, գ՛օռոն
դին>դ՛էն, դ՛իւնիւչ
գլուխ>գ՛օլօխ, գ՛օլխա
գոգ>գ՛իւգ՛, գ՛իգ՛է
գօտի>գ՛ուդը՝, գ՛ուդու
դդում>դ՛օդ՛օմ, դ՛ըդ՛մը
դժոխք>դ՛էօժէօխք, դ՛օժօխոց
դուստր>դ՛ը՝նչ, դ՛ը՝նչը
դուռն>դ՛օռ, դ՛օռոն
դև>դ՛էվ, դ՛իվի
եղը>իղիյք, իղիյքի
եղունգ>օղունգ, ը՝ղը՝նգը՝
երեկոյ>իյդօն, օյգօվոն
երեք>իյիք, իյիքի
երկինք>իյդէնք, օյգօնոց
երկիր>ը՝յգիյ, «օտար», ը՝յգը՝յը՝
թել>թիլ, թիլի
թեմ>թիմ, թիմի
թև>թիվ, թիվի
թեփ>թիփ, թիփի
թիզ>թը՝զ, թը՝զը՝
թուզ>թուզ, թը՝զը՝
թութ>թութ, թը՝թը՝
թուղթ>թուխթ, թը՝խթը՝
թուշ>թուշ, թը՝շը՝

թուբ>թուչ, թը՛չը՛
թուփ>թուփ, թը՛փը՛
թուք>թուք, թը՛քը՛
լինդ>լինդ, լը՛նդը՛
լու>լօ, լը՛վը՛
լոյս>լը՛ս, լը՛սը՛
լուծ>լօձք, լօձոց
կեղև>գիղիվ, գիղիվի
կիր>գիչ, գիչի
կլայեկ>գիլիգ, գիլիգի
կշիռ>գիշէոք, գօշօոց
կսկիծ>գիձիձ, գիձիձի
կոյղ «ոզկույղ»>գիղ, գիղի
կոյր>գիչ, գիչի
կոպ>գիբիչք, գիբիչքի
կորեկ>գիչից, գիչիցի
կոր «կարիճ»>գիւչ, գիչի
կուտ>գուգ, գը՛գը՛
հերիւն>հիչին, հիչինի
հին>հին, հինի
հինգ>հինգ, հինգի
հոտ>հիւգ, հուգու
հոր>հիւչ, հուչու
հով>հէօվ, հուվու
ձմեռն>ձ՛ը՛մեռ, ձ՛օմօռվօն
ձուկն>ձօկ, ձ՛օգոն
ճկուռ>ջօգուռ, ջը՛գոբ՛
մէջ>մէչ, մը՛չը՛
մէջք>մէչք, մօչօց
մէտ «կշեռքի սլաքը»>նիգ, նիգի
մոմ>միւմ, միմի
ներ>նեչ, նիւչիւչ
նուռն>նուռ, նօռօն
շարական>շայագօն, շայագնա
շերեփ>շիչիփ, շիչիփի
շիշ>շիշ, շիշի
շիւ>շիվ, շիվի
ոռ>էօռ, ուռու

ոսկր>իւսգիւչ, իսգիչի
ոսպ>իւսբ, իսբի
ոստ(ղ)>իւսգ, իսգի
ոտք>իգվէչ, ուգվունու
ունդ>հունդ, հը՛նդը՛
ուռի>ուռը՛, ուռու
չիր>չիչ, չիչի
չոր>չիւչ, չիչի
չորս>չիւչս, չիչսի
պիծակ>բիձիգ, բիձիգի
սեամ>շիմինք, շիմինքի
սեաւ>սիվ, սիվի
սերկևիլ>սինգիվիլ, սինգիվիլի
սէգ>սեղ, սիզի
սիմինդր>սիմինգոբը, սիմինգոի
սոսկ>սուսա, սուսու
տանիք>գինեչ, գիւնիւչիւչ
տևզն>գիչիվ, գիչիվի
տէր>գէչ, գիւչիւչ
ցորեան>ցիչին, ցիչինի
փիլոն>փիւլիւն, փիլինի
փոխ>փիւխ, փիխի
փոկ>փիւգ, փիգի
փոս>փիւս, փիսի
փոր>փիւչ, փիչի
փուռ>փուռ, փօռօն
քիմք>քիմբ, քիմբի
քրտինք>քըչդանք, քօչդօնօց

Այս օրինակները ցույց են տալիս, թե ինչ չափով Զեյթունի գավառականը գործադրել է ձայնավորների նույնացման օրենքը. Ամենալավ օրինակն է՝

մէջ>մէչ, մը՛չը՛
մէջք>մէչք, մօչօց

ուր տեսնում ենք է, ը, օ ձայնավորների հաջորդական խազերը։

Սրանց հետ հիշենք նաև ծեփ>ծիփ բառը, որ Քեւե սեռականում լինում է ձիփի, սակայն գործիականում լինում է ձիւ-

փեօվ, ուր ի դարձել է ու՝ համաձայնվելու համար եօ ձայնավորին: Ընդհակառակը ծուփ>ձեօփ «ծփանք» բառի գործիականը լինում է ձիւփեօվ. ինչ. ձիւփէօվ գացը «ծփալով գնացիր»:

Վանի բարբառում սղման երևույթը շատ սովորական է հոլովման մեջ: Սղվում են ոչ միայն ի և ու ձայնավորները, այլև ա, ո և այլն: Մի ընդհանուր կանոն սղման համար հնարավոր չէ տալ. բայց նկատելի է հետևյալ մասնավոր դեպքը:

Միավանկ բառերի մեջ ա և ո ձայները բնավ չեն սղվում, ինչ.

բարձր>պանցր, պանցրի
ճանկ>ճանգյ, ճանգյի
ճանճ>ճանջ, ճանջի
մազ>մազ, մազի
մաղձ>մախս, մախսի և այլն

Բացառություն է միայն ատակ, որ լինում է սեռ. ակի: Սրանից էլ անթատակ>ընթիտակ, սեռ. ընթիտակի:

Այն միավանկ բառերը, որոնց մեջին ձայնավորն է ե, հոլովման մեջ չեն սղում այս ձայնը. ինչ.

թել>թել, թելի
ծեփ>ծեփ, ծեփի
խելք>խելքյ, խելքյի
եղր>յեղր, յեղրի
կեր>կեր «կերակուր», կերի
դեղ>տեղ, տեղի
շեղջ>շեղքյ, շեղքյի
ջիղ>ճեղ, ճեղի
սերմ>սերմ, սերմի
մեղր>մեղր, մեղրի և այլն

Կան մի քանի բառեր, որոնց մեջ ե ձայնավորը սղվում է կամ պառնում է ի. սրանք են՝

ներքս>ներս, ներսի
վեր>վեր, վիրի, վիրվի
սեամ>շեմքյ, շեմքյի, շիման
թև>թեվ, թիվի, թիվեր, թեվեր
ծիրա>ծեռա, ծռաի
խեղճ>խեխճ, խըխճի, խեխճու

առուղտ բառը առանում է երկու ձև՝ առուղտ և աեղտ. սեռականն է աղտի, որ առաջին ձևից է:

Գետ>կյետ բառը ըստ սովորականին լինում է սեռ. կյետի, բայց գյուղերում կա նաև կյիտու ձևը:

Այն միավանկ բառերը, որոնց մեջին ձայնավորն է օ (եօ) կամ ո, հոլովման ժամանակ չեն սղում նույն ձայնավորը. ինչ.

խոտ>խոտ, խոտի
խոց>խոց, խոցի
խոփ>խոփ, խոփի
ծոց>ծոց, ծոցի
կոշտ>կոշտ, կոշտի
կոպ>կոպ, կոպի
ծոմ>ծոմ, ծոմի
կոճ>կոճ, կոճի
կոթ>կոթ, կոթի
խօսք>խօսք, խօսքի
եօթն>յօթ, յօթի
գայո>քյօո «ցեխ», քյօոի
մօտ>մօտ, մօտի
յօտ>էօտ, էօտի
ոճն>ոճն, ոճնի
ճիւղ>ճօղ, ճօղի
քօղ>քյօղքյ, քյօղքյի
օղ>օղ, օղի

Այն միավանկ բառերը, որոնց մեջին ձայնավորն է ո՝ հոլովման ժամանակ պահում են այս ձայնը, ինչ.

բոզկ>պո՛խակ, պո՛խակի
բոյթ «մատ»>պո՛թ, պո՛թի
բոյն>պո՛ն, պո՛նի
բոց>պո՛ց, պո՛ցի,
գոգ>կյո՛ք, կյո՛քի
գոլ>կյո՛ւլ, կյո՛ւլի
գոզ>կյո՛ղ, կյո՛ղի
գոյն>կյո՛ն, կյո՛նի

գործ>կ֊յոռծ, կ֊յոռծի
գորտ>կ֊յոռտ, կ֊յոռտի, կ֊յոռտան
ընկույզ>գ֊ոզ, գ֊ոզի
թոք>թ֊ոքյ, թ֊ոքյի
լոր>լ֊որ, լ֊որի
ջոջ>ճ֊ոչ, ճ֊ոչի
ձոր>ծ֊որ, ծ֊որի

Այն միավանկ բառերը, որոնց մէջին ձայնավորն է ի, հոլովման ժամանակ սղում են այդ ձայնավորը և դարձնում ը՝ ինչ.

գին>կ֊յին, կ֊յընի
գինդ>կ֊յինդ, կ֊յընդի
թիզ>թ֊իզ, թզի
հիմն>խիմ, խման, գրծ. խմնով (օր. խմնով ավեր «հիմքից ավերված»)
հին>խին, խնի
հինգ>խինգ, խընգյի
կիր>կ֊իր, կրի
գերկ>կ֊յերկ, կ֊յրերկի
քիթ>քյ֊իթ, քյ֊րթի և այլն, և այլն

Մինչև անգամ ինն>ին, ըննի և ինչ>ինչ, ընչի, ինչի, թեև սրանց ի ձայնավորը բառասկզբումն է։

Այն միավանկ բառերը, որոնց մէջին ձայնավորն է ու, հոլովման ժամանակ սղում են այդ ձայնավորը և դարձնում ը՝ ինչ.

խուրձն>խ֊ուրց, խ֊ուրցի, խ֊ուրցան
խունկ>խ֊ունգ, խ֊ընգյի, խ֊ընգյան
խուփն>խ֊ուփ, խ֊ուփի, խ֊ուփան
թուր>թ֊ուր, թ֊րի
թուշ>թ֊ուշ, թ֊շի
թուղթ>թ֊ուղթ, թ֊ղթի
դուռն>դ֊ուռ, դ֊ռան
ծունկ>ծ֊ունգ, ծ֊ընգյան
ծուռ>ծ֊ուռ, ծ֊ռու

կուռն>կ֊ուռ, կ֊ռան
կուպր>կ֊ուպր, կ֊պրան
կուշտ>կ֊ուշտ, կ֊շտի
յօնք>ունքյ, ընքյի
սունկ>սունգ, սընգյի
ռուպ>ըռուբ, ըռբի և այլն

Միայն ութ, ուլ և ուխտ բառերն են, որոնց ու ձայնավորը գոնվելով բառասկզբում, չի ենթարկվում սղման, և լինում է սեռ. ութի, ուլի, ուխտի։ Այն միավանկ բառերը, որոնց մէջին ձայնավորն է ի, հոլովման ժամանակ սղում են այն, բուն որում ծագած է գրաբարի ու ձայնավորից։ Այսպես են՝

բուք>պ֊իւքյ, պ֊քյի
գունդ>կ֊յիւնդ, կ֊յընդի
տուր>տ֊իւր, տրի
ջուր>ճ֊իւր, ճրի
թուզ>թ֊իւզ, թզի
թութ>թ֊իւթ, թթի
թուք>թ֊իւքյ, թ֊քյի
ձուկն>ծ֊իւկ, ծկան
փուք>փ֊իւք, փ֊քի, փ֊ուքի
փուքս>փ֊իւզ, փզի, փ֊ուզի (նաև փգան)

Այս ձևով է նույնիսկ դափ բառը, որ քրդերենից նոր փոխառութեամբ դարձել դիւֆ և սեռականում սղմամբ լինում է դֆի։

Այն միավանկ բառերը, որոնց մէջին ձայնավորն է ե, երկու կարգի են բաժանվում։ Նրանք, որոնց մէջ է ձայնավորը առաջանում է նախկին այ երկբարբառից, հոլովման ժամանակ պահում են է ձայնը։ Այսպես՝

լայն>լ֊ենն, լ֊ենի
ծայր>ծ֊եր, ծ֊երի
սայլ>սեյլ, սեյլի
փայտ>փեյտ, փեյտի
քայլք>քեյլքյ, քեյլքյի
ձայն>ձ֊ենն, ձ֊ենի
տայգր>տեյգյր, տեյգյեր
գայլ>կ֊եյլ, կ֊եյլու

Իսկ այն բառերը, որոնց ի ձայնավորը ծագում է գրաբարի ի ձայնից, սմանք գրաբարի նման ի-ն դարձնում են ի, իսկ մյուսները պահում են անփոփոխ։ Այսպես են՝

տէր>տէր, տիրոջ
սէր>սէր, սիրու
պէս>պէս, պիսու
կէս>կէս, կիսու
էգ>էքյ, իքյու (նաև՝ էքյու)
էշ>էշ, իշու

Իսկ մյուսները՝

մեջ>մէչ, մէչի
մէջք>մէչք, մէչքի, մէճաց
պէտք>պէտք, պէտքի
սէգ>սէգ, սէգի
ձէթ>ձէթ, ձէթի
դէգ>տէգ, տէգի
գէշ>կյէշ, կյէշի

Այս բոլորից դուրս են մնում՝

խէժ>խիժ, խժի
միակ>մէկ, մէկի, մէկու
դև>դեվ, դեվի, դիվու

Գայլ>կյել բառը լինում է կյիլու, կյիլուց, կյիլով կամ առանց փոխվելու կյելու, կյելուց, հգ. կյելեր և այլն։

Այն երկվանկ բառերը, որոնց վերջավանկի ձայնավորն է ա կամ ո, հոլովման ժամանակ, անկախ հոլովման տեսակից, կորցնում են այդ ձայնավորը և կամ վերածում ը-ի, ինչ.

արծաթ>առծաթ, առծըթի
աշխարհ(ք)>աշխար, աշխըրի
երկաթ>էրկաթ, էրկըթի
բազարջ>պազառճ, պազըռճի
խիզար>խիզար, խիզրի
թաք (թոխմախ)>օթաք, օթքի
թիակ>թիյակ, թիյկի! (որով ձևացել է հայերենի մեջ անսովոր իյ ձայնախումբը)
զոքանչ>զէօքյանչ, զէօքյընչի

ծարաւ>ծարաւ, ծարվու
չուան>չըվան, չըվի
կաղանդ>կաղանդ, կաղընդվա, կաղընդի
կաքաւ>կաքյավ, կաքյվու

Նույնիսկ օտար բառերը կարող են ենթարկվել սմանի օրենքին, ինչ.

գիլաղ «կեռաս»—սեռ. գիլղի
insan «մարդ»>իսան, սեռ. իսնի

Սմանի օրենքը ընդհանուր է բոլոր տեսակի սովորական (կամ շատ գործածականի) բառերին. բայց քիչ գործածվող բառերը, մանավանդ ածականները, ազատ են մնում սմանի օրենքից. այսպես՝

գազան>կյազան, կյազանի
գրախտ>որախտ, որախտի
հպարտ>խպառտ, խպառտի
խոնարհ>խոնար, խոնարի
վեղար>վէղար, վէղարի
կարագ>կարաքյ, կարաքյի
կրճատ>կճատ, կճատի
փշատ>փշատ, փշատի
խրատ>խրատ, խրատի
կտակ>կտակ, կտակի
դպակ>կտակ, կտակի
խորան>խորան, խորանի
բորակ>պորակ, պորակի
երազ>էրազ, էրազի
ցամաք>ցամաքյ, ցամաքյի
քսան>կսան, կսանի
կրակ>կրակ, կրակի
հազար>խազար, խազարի և այլն։

Կան բառեր էլ, որոնք երկու ձևի մեջ էլ տատանվում են. ինչ.

դմակ>տմակ, տմակի կամ տըմկի
շամամ>շամամ, շամամի կամ շամըմի

Այսպիսի սղման ժամանակ լինում են դեպքեր, երբ բաղաձայնների կուտակման պատճառով նաև այդ բաղաձայնը սղվում կամ փոխվում է. ինչ.

ճակատ>ճակատ, ճայտի
պակաս>պակաս, պայտի
ճանապարհ>ճամբոխ, ճամխի
ջաղացք>ճաղաց, ճաղչի, ճաղչից, ճաղչով
քաղաք>քյաղաքյ, քյախքյի, քյախքյով
գագաթն>կյակյոթ, կյոհթան, կյոյթի

Սակայն այսպիսի դեպքերում վանի բարբառը բաղաձայնների մեծ ձևափոխություններ չգիտի։ Օրինակ՝ կոճակ>կօճակ, սղմամբ լինում է կօճկի, բայց այս ճկ հանդիպման մեջ ճկ չի դառնում ժկ, ինչպես որ նույնիսկ բայը կոճակել>կօճկել մնում է անփոփոխ և չի դառնում կոժկել (ինչպես լինում է, օրինակ՝ Պոլսի բարբառում)։

Երեք և ավելի վանկանի բառերի մեջ, երբ վերջավանկի ձայնավորն է ա կամ ո, հոլովման ժամանակ մասամբ սղվում կամ ը-ի է վերածվում, մասամբ էլ անփոփոխ է մնում։

Վանի բարբառում արդեն բազմավանկ բառերի թիվը մեծ չէ. միջին ձայնավորի անկումով բոլոր եռավանկ բառերը դարձել են երկավանկ (ինչ. հարսանիք>խարսնիխ, բանալիք>պալնիխ և այլն)։ Վերի կանոնին ենթարկվում են միայն 28 բառ, որոնցից 12 հատը սղում է ձայնավորը, մնացյալը պահում է։ Սղումը գտնում ենք հետևյալ բառերի մեջ.

աւետարան>ավէտարան, ավէտարընի
բարեկենդանի>պարիկէնդանքյ, սևռ. պարիկէնդըքյի (մինչև իսկ ն ընկած)
գերեզման>կյէրէզման, կյէրէզմընի
դառապետան>տոռոպետան, տոռոպետընի
երկնչնակ>էրկժնակ, էրկժնըկի
խարազան>խոռէզան, խոռէզնի
ծառզարդար>ծառզարտոռ, ծառզարտռի
կարկառան>կարկըռան, կարկըռնի
կորնգան>կորընգյան, կորընգյընի
հրեշտակ>խրիշտակ, խրիշտըկի
նապաստակ>լապըզտըրակ, լապըզտըրկու
շառրուան>շառըվան, շառըվընի

շինական>շինական, շինայնի (որ է շինականի, ուր կ վերածված է յ՝ հաջորդ բաղաձայնի մոտ)
պատինճան>պատընջոն, պատընջընի

Առանց սղման են մնում հետևյալ բառերը.

աղաչանք>աղաճանքյ -ի
ադեղնակ>անանակ, -ի
անառակ>անառակ, -ի
անասուն>անասուն, -ի
աւազան>ավազան, -ի
արեգակն>արեկյակ, -ի
բարուկան>պարիւնակ, -ի
զարդարանք>զարդարանքյ, -ի
խնդաւտ>խընդուտ, -ի
մանուշակ>մանուշակ, -ի
պատարագ>պատարագքյ, -ի
պատուհաս>պատուխաս, -ի
ջրյորդան>ճոռոթան, -ի
սարկաւագ>սարկավագքյ, -ի
օրինակ>օրինակ, -ի

Երբ բառավերջում կա ա կամ ո ձայնավորը, հոլովման ժամանակ ջնջվում է։ Այսպես են՝

բակլայ>բայլա, բայլի, բայլից, բայլով
խարխնձիկ>խախիձա, խախիձի, խարխիձի
կասկարայ>կասկարա, կասկարի
կթղայ>կթխա, կթխի
կրեայ>կրըբա, կրըբի
շուշփայ>շուշփա, շուշփի
սատանայ>սատանա, սատանի
տղայ>տղա, տղի, տղու, տղից, տղուց
փեսայ>փէսա, փէսի
քահանայ>քյահանա, քյահանի

Նույնիսկ ածականի բառը, որ գյօղվէնըյ «ծալք» ձևն ստանալուց հետո՝ դարձել է գյօղվա, այս կանոնի համեմատ հոլովվում է ա-ի կորուստով՝ գյօղվի, գյօղվից, գյօղվով։

Այն երկվանկ և եռավանկ բառերը (չորս վանկով բառեր չկան), որոնք վերջավանկում ունեն ե կամ է ձայնավորը, հոլովման ժամանակ, անկախ հոլովման տեսակից, մեծագույն մասամբ կորցնում են այդ ձայնավորը. օր.

ասեղն>ասեղ, ասղան, ասղի
անձրև>անձրեվ, անձրևու
տաշեղ>տաշեղ, տաշղի
ցորեան>ցորէն, ցորնի

Մի մասը դարձնում է ի. ինչ.

աներ>աներ, անիրոչ
արև>արեվ, արիվու
երես>իրես, իրիսի
աւել (ավլելու)>ավել, ավիլի կամ ավլի
երեք>իրեքյ, իրիքյի

Մի մասն էլ պահում է ձայնավորը. ինչ.

աշակերտ>աշկեռտ, աշկեռտի
անէծք>անէծք, անէծքի, անէծքու
գիշեր>կիշեր, կիշերվա(ն)
կորեակ>կորեկ, կորեկան
գմբեթ>քյումբէթ, քյումբէթի
գդալ>կտէլ, կտէլի
շրէշ>շրէշտ, շրէշտի
սարեակ>սարէկ, սարէկան
սկեսրայր>կէսրէր, կէսրէրի
տեսիլք>տեղէլքյ, տեղէլքյի

Զկրկնելով այն օրինակները, որոնք հոլովման ցուցակներում կամ վերևում հիշված են արդեն, ստորև մեջ ենք բերում միացյալ այս կարգի բառերը, այբուբենական կարգով.

անդրանիկ>անդրանէկ, -անկի
արբանեակ>արպանէկ, արպընկի
բաղեղն>պռտեղ, պռտիղու
գռեհ>գյըռեխ, գյըռխի
դրկից>տրկէց, տրկցի
երկայն>էրկէն, էրկրնի
ծնօթին>ձէթրէն, ձէթրէնի

ծիծեռնակ>ճճրոնեկ, ճճրոնըկի
կանթեղ>կանթեղ, կանթղի
կապերտ>կարպետ, կարպըտի
կլայեկ>կլայեկ, կլայկի
կշիռ>կշեռք, կշըռքյի
համեմ>խամեմ, խամըմի
հեղեղ>խղեղ, խղըղի
ձուածեղ>ձվոզեղ, ձվոզղի
ճիպո>ճպեռաք, ճպըռքյի
պատկեր>պատկերքյ, պատկըրքյի
պարսէտ>պարսետ, պարսըտի, -սետի
սխտեռն>սխտեռ, սխտեռի
տեւերջ>տեռեճ, տըռճի, տեռեճի
վարդապետ>վըրտոպետ, վըրտոպտի
վարժապետ>վըրժոպետ, վըրժոպտի
քցիմ>քյիծեվի, քյիծեվիի

Ինչպես տեսնում ենք, օրինակների մի մասը ուղղակի գրաբարի շարունակությունն է (օր. ասեղ, ասղան), մի մասը կազմված է գրաբարի սղման հին օրենքին համաձայն (օր. տրկէց, տրկցի), մյուսները ձևավորված են վանի բարբառի սղման օրենքների համաձայն (կապերտ, կարպըտի), իսկ ամենից ավելի «ըմբռստ» բառերը չեն ենթարկվում սղման օրենքին (շրէշտ-շրէշտի, տեղէլքյ-տեղէլքյի, փխ. գրբ. տեսլեան)։

Ինչպես միավանկ, նույնպես և այն բոլոր բազմավանկ բառերը, որոնք իրենց վերջավանկում ունեն ի, հոլովման ժամանակ առանց բացառության սղում են այդ ձայնավորը կամ վերածում ը-ի։

Շատ բազմաթիվ օրինակներից հիշենք նախ հայերենի սովորական բառերը. ինչ.

անիծ>անիծ, անծի
պիւս>օղիս, օղսի
բլիթ>պլիթ, պլթի
դարբին>տորպին, տորպնի
խաւարծիլ>խավըռծիլ, խավըռծլի
շապիկ>շապիքյ, շապկի (կ վերականգնված)
տեպղին>տապղին, տապղընի
ոսկերիչ>վոսկրիչ, վոսկրչու

բ) Այն բառերը, որ վանի բարբառը կազմել է իր կողմից, ավելացնելով -իկ փաղաքշական մասնիկը. ինչ.

մատանի>մատանիկ, մատընկան
հայելի>խայլիկ, խայլկան
այր>իրիկ, իրկան
աղաւնի>յէղունիկ, յէղունկան
մժեղ>մժիկ, մժկի
սարդոստայն>սարանդէօստիկ, սարանդէօստկի
մլուկն>մլիկ, մլկի
կռիկ «ագռավ», կըռկի, կռկան

գ) Գրաբարի անեզական բառերը, որ իրրև եզակի վերցնելով և պահելով ք վերջավորությունը՝ հոլովվում են սովորական ձևով. ինչ.

աղիք>աղիքյ, աղքյի
առիք>առիքյ, առքյի
քիրան, քրտինք>քյըռտինքյ, քյըռտընքյի

դ) Նույն կարգի բառերի հայցականը, որ նույնպես իրրև եզակի է վերցրած և հոլովվում է սովորական ձևով. ինչ.

բաղանիք>պողնիս, պողնսի
բանալի>պոլնիս, պոլնսի
երդիք>էրտիս, էրտսի
թաղիք>թաղիս, թաղսի
հարսանիք>խարսնիս, խարսնըսի
տանիք>տանիս, տանսի

Ինչպես միավանկ, նույնպես և բազմավանկ բառերի վերջավանկի ո, ո̂ կամ օ ձայնավորը չի ազդվում հոլովման մեջ. ինչ.

խնձոր>խնձ̂ ո̂ր, խնձ̂ ո̂րի
խաղող>խավող, խավողի
դամոն>տումոն, տումոնի
ալևոր>խալիվոր, խալիվորի, -րու
խաւոր>սխաւոր, սխաւորի
կթոց>կթ̂ ո̂ց, կթ̂ ո̂ցի

ջնջոց>ճնջ̂ ո̂ց, ճնջ̂ ո̂ցի
կարոս>կարօս, կարօսի
աղօթք>աղօթկ, աղօթկի
ակօս>ակոս, ակոսի
ամօթ>ամօթ, ամօթի
արօր>արօր, խարօր, արօրի
թափօր>թափօր, թափօրի և այլն

Ունենք միայն 7 բառ, որոնք չեն ենթարկվում այս օրենքին և իրենց շեշտյալ ձայնավորը պահում են: Այս բառերն են՝

կապոյտ>կապոտ «լեզակ», կապտի, կապտու
կորկոտ>կուրկոտ, կուրկըտի
կողով>կօղօվ, կօղվու, կօղվի
ճկոյթ>ճկոթ, ճկթի
ոսկր>ուսկոռ, ուսկռի
ուղեղ>ուղող ըղըղան
փողոց>փուղոց «ճեմիշ», փուղցի

Գանք այժմ այն բազմավանկ բառերին, որոնց վերջավանկի ձայնավորն է ու, իւ կամ եօ:
Սրանցից առաջինը ընդհանրապես սղվում է. օր.

արիւն>արուն, արնի
արմունկն>արմունգյ, արմընգյի
արտասուք>առասունքյ, առասընքյի
կամուրջ>կարմունջ, կարմընջի
կարկուտ>կարկուտ, կարկըտի
կռունկ>կռունգյ, կռընգյու
կրունկ>կրունգյ, կրընգյան
հերիւն>խիրուն, խիրնի
մաժուն>մաժուն, մաժնի
տգրուկ>տգրուկ, տգրըկի
պոչան, պուտուկ>պուտուկ, պուտկի
պատրոյգ>պատրուքյ, պատրըքյի

Բացառաբար սղումից ազատ են մնում մի քանի բառ. այն է՝

թրթուր>թրթուռ, թրթռուռի
խախուտ>խախուտ, խախուտի

կակուղ>կակուղ, կակուղի
կնունք>կնունքյ, կնունքյի
մօրուս>մուրուս, մուրուսի
յիշոց>իշունց, իշունցի (ուշունց)
յիսուն>իսուն, իսունի
ողջոյն>վոխճում, վոխճումի
պատրոյս>պատրուս, պատրուսի
վարագոյր>վորակյուռ, վորակյուռի
տորն>տուրուն, տուրունի

Իւ ձայնավորն էլ միշտ սղվում է. այսպես են՝

ալիւր>ալիւր, ալրի
աղրիւր>ախպիւր, ախպըրի
բո՞ղուկ (բույսը)>պոզիւկ, պոզկի
դդում>տուիւմ, տումի
երգուիճ>էօրտիւմ, էօրտման
ձմեռուկ>ծմրիւկ, ծմրկի
փափուկ>փափիւկ, փափկի

Բացառաբար առանց սղման են մնում

հանելուկ>խանգելիւկ, խանգելիւկի
ուրիշ>իւրիւշ, իւրիւշու

Իսկ ևo ձայնավորի համար ունենք երեք օրինակ, որոնք են՝

աքլոր>ահյլէօր, ահյլէօրի
քարաթռթռոշ>քյոռթռթքէօշ, քյոռթռթքէօշի
գլուխ>կյըլէօխ, կյըլխու

Առաջին երկուսի մեջ ևo չի սղված, որովհետև ծագում է ո ձայնավորից, երրորդում սղված է, որովհետև ծագում է ու ձայնավորից:

Հոլովման ժամանակ բառի ձայնավորի փոփոխության հետաքրքրական մի երևույթն էլ այն է, որ եզակի ուղղականի ո ձայնավորը սեռականում ու հոլովման մեջ դառնում է ու կամ իւ: Ձայնավորների նմանության օրենքն է այս. օրինակներն են՝

խոզ>խոզ, խուզու, խուզուց, խոզով, խոզեր
հոզ>խոզ, խուզու
հոգի>խոկյի, խուկյու

թոյլ>թ՛ոլ, թիւլի, թէօլով, թէօլեր
լոյս>լ՛ոս, լիւսի, լէօսով, լէօսեր
ջորի>ճորի, ճիւրու, ճորու
ջոջ>ճ՛ոչ, ճիւճի, ճիւչի, ճէօչով
կոյր>կոր, կուրու
գող>կյ՛ոդ, կյուդու, կյուդուց, կյ՛ոդով, կյ՛ոդեր
թագաւոր>թաքավոր, թաքավուրու, -վուրուց, -վրով
խաստոր>սխտոր, սխտորու, սխտուրու
կեղծաւոր>կէղծավոր, կէղծավուրու
(կն)քաւոր>քյավոր, քյավուրոչ
մեղաւոր>մեղավոր, մեղավուրու
ուխտաւոր>ըխթավոր, ըխթավուրու
քոյր>ք՛որ, քիւրոչ

Ինչպես տեսնում ենք, ո ձայնավորը դառնում է միշտ (բացի մի դեպքից) ու, իսկ ո՛ դառնում է միշտ իւ:

Ձայնավորը փոխվում է այն ժամանակ, երբ հոլովական վերջավորություն էլ ունի ու. այսպես. օր.

թաքավոր, թաքավուրու, թաքավուրուց, բայց՝ թաքավրով.
գոմէշ>գյէօմէշ, գյիւմշու, գյիւմշուց, բայց՝ գյէօմշով, գյէօմէշներ.

Այսպիսի ձայնափոխության լավ օրինակ է բոց>պ՛ոց, որից առանում ենք սեռ. պիւցիւ, բցո. պիւցիւց, գրծ. պէօցով:

Նման ձայնափոխություն կրում են հոլովման մեջ՝

երես>իրես, սեռ. իրիսի
երեք>իրեքյ, սեռ. իրիքյի

որոնք ցույց են տալիս ձայնավորների նմանության վերոհիշյալ օրենքը:

Սրանց նման է այր>իրիկ, սեռ. իրկան,

Այժմ երբ մի ընդհանուր հայացք գցենք մի կողմից հոլովման, մյուս կողմից հոգնակիի կազմության և երրորդ կողմից այս երկուսի մեջ գործադրված սղման օրենքների վրա, կտեսնենք, թե որքան անկանոն է վանի բարբառում հոլովումը, ինչպիսի խառնակ անցման շրջան է ապրում նա, և որքան խմաստուն են գտնվել մեր երկու գրական լեզուների առաջին հեղի-

նակները, որոնք կարողացել են լեզու կառուցել շատ ավելի պարզ ու կանոնավոր հիմքերի վրա:

Մեղրու բարբառում շեշտափոխության շնորհիվ գրաբարում եղած՝ մի քանի ձայնավորների սղումին և ամփոփումին (ի, ու, է և այլն) փոխարինել է բոլոր նախաշեշտ ձայնավորները սղումը: Հոլովման մեջ, սակայն, այդ երևույթը չափազանց անհաստատ է: Նույնիսկ գրաբարյան ի, ու ձայնավորների սղումը, որ ավանդաբար դեռ կատարվում է, դարձյալ խստորեն չի պահպանվում: Այսպես՝ ի, ու ձայնավորները, որոնք ստացվել են գրաբարյան նույն հնչյուններից, սովորաբար սղվում են. ինչպես՝ քէր>քիր, սեռ. բըրու. գինձ>գինձ, սեռ. գի՛նձիւ. դուրք>դուրք, սեռ. դըրքու. լուր>լուր, սեռ. լըրու և այլն, բայց դրանց հետ միասին ասվում են նաև բիրու, գինձիւ, դուրքու, լուրու և այլն:

Եթե բարբառիս ի, ու ձայնավորներն ստացվել են գրաբարյան որևէ այլ հնչյունից, ապա սղման ենթակա չեն. ինչպես՝ ցել>ցիլ, սեռ. ցիլիւ, հգն. ուղղ. ցիլար, սեռ. ցիլէրու. կող>կուղ սեռ. կուղու, հգն. ուղղ. կուղար, սեռ. կուղէրու. ծոպ>ծուպ, սեռ. ծուպու, հգն. ուղղ. ծուպար, սեռ. ծուպէրու և այլն:

Եթե գրաբարյան ի, ու ձայնավորները բարբառումս վերածվել են որևէ այլ հնչյունի, ապա՝ սովորաբար սղվում են. ինչպես՝ սուր>սօր, սեռ. սըրու, հգն. սըրէր. ճուտ>ճօտ, սեռ. ճըտու, հգն. ճըտէր. թուզ>թէզ, սեռ. թըզու, հգն. թըզէր. ջուր>ջիւր, սեռ. ջի՛րիւ, հգն. ջըրէր. լինդ>լէնդ, սեռ. լընդու, հգն. լընդէր. տիկ>տէկ, սեռ. տըկու, հգն. տըկէր. քիթ>քըէթ, սեռ. քըթու, հգն. քըթէր և այլն: Այս օրենքը ևս հաճախ չի պահպանվում և կարելի է լսել նաև՝ սօրու, ճօտու, թէզիւ, ջիւրիւ, լէնդու, տէկու, քըէթու և այլն: Մանավանդ այն դեպքում, երբ միևնույն բառերում եղած ու>օ ձայնավորին անմիջապես հաջորդում են երկու բաղաձայններ, գրեթե միակ գործածականն են առանց սղման ձևերը. ինչպես՝ թումբ>թօմբ, սեռ. թօմբու, հգն. ուղղ. թօմբար, սեռ. թօմբէրու. թուխս>թօխս, սեռ. թօխսու, հգն. ուղղ. թօխսար, սեռ. թօխսէրու, հունձ>հօնձ, սեռ. հօնձու, հգն. ուղղ. հօնձար, սեռ. հօնձէրու. կուրծ>կօրծ, սեռ. կօրծու, հգն. ուղղ. կօրծար, սեռ. կօրծէրու և այլն. անսովոր են դրանց՝ թըմբու, թըխսու, հրնձու, կրրծու ձևերը: Բառակզբում, ինչպես ասված է, երբեք չեն սղվում, բացի մի բառից՝ ունկն>օնգնը, ընգան և այլն:

Ընդհանուր կարգով պետք է նշել, որ հոլովման հետ կապված հնչյունական փոփոխությունները, որոնք հիշված են տարբեր հոլովումների մեջ, այն կանոնավորությունը և ուժը չունեն, ինչ որ հնչյունական փոփոխությունների ժամանակ հիշվածները. մինչդեռ հնչյունական փոփոխությունների մեջ հիշված նախաշեշտ ձայնավորների սղումը մի կուռ, ընդհանրական օրենք է ներկայացնում, հոլովման մեջ հիշված սղումները շատ անհաստատ են. սղման ենթակա գրեթե ամեն բառ էլ կարելի է լսել նաև առանց սղման. մանավանդ հոդնակիում, ուր բացի մի խումբ բառերից, ճեացածների վրա սղումը չի տարածվում: Հաճախ, սղման ենթակա բառերի առանց սղումի գործածելը կապված է միայն շեշտի տեղափոխության հետ. ինչպես՝ դուրք, սեռ. դըրքու. գինձ, սեռ. գի՛նձիւ. շօնչ, սեռ. շնչու. բայց՝ դուրքու, գինձիւ, շօնչու և այլն, իսկ հաճախ էլ՝ հոլովումը փոխելու հետ. ինչպես՝ կուռն>կօռնը, սեռ. կըռան. խուրձն>խօրձնը, սեռ. խըրձան. նուռն>նօռնը, սեռ. նըռան, բայց՝ կօռնու, խօրձնու, նօռնու և այլն:

Այդ բոլորին հակառակ, մի խումբ բառերում ունենք բոլորովին տարապայման սղումներ, դրանք են. շաբաթ>շէբաթ, սեռ. շէփտու, հգն. շէբաթնէ. թոնիր>թուրաճ, սեռ. թուրնու, հգն. թուրաճնէ. տախտակ>տախտակ, սեռ. տախտակու կամ տըխտակու, հգն. տըխտըկնէ կամ տախտակնէ. դանակ>դենակ, սեռ. դենակու, հգն. դընկըճնէ. երազ>ըզրակ, սեռ. ըզրակու, հգն. ըզրըկնէ. մատակ>մատակ «առուտ», սեռ. մատակու կամ մըտակու, հգն. մըտըկնէ. պառաւ>պառավ, սեռ. պառավու կամ պըռավու, հգն. պառավճնէ կամ պըռըվնէ:

Գալով գրական լեզվին, որովհետև սա էլ հետևում է բարբառներին, արևմտյան գրականում սղումն ու ամփոփումը խստորեն չնչված է, քան որում նրանք չնչված են նաև Պոլսի բարբառում, որի վրա հիմնված է արևմտյան գրականը: Իսկ արևելյան գրականում, որ հիմնված է Երևանի բարբառի վրա, թեև ամփոփումը չնչված է, բայց սղումը դեռ շարունակվում է:

Գրողներից ոմանք, հետևելով հին լեզվին, պահում են դեռ ամփոփման օրենքը հատկապես երկու բառի մեջ, այն է սեռ. հանդիսի, պարտիզի և ներգ. հանդիսում, պարտիզում: Բայց նույնիսկ այս կարգի գրողները չեն ասում բնավ ասպարիզի, վրիժի կամ վրիժում. հրավիրի, պատվիրի, ինչպես նաև բուսի, կուրի, հրապուրի և այլն:

Սղումն ու ամփոփումը իրենց հետագարձ շարժումն էլ ունեն։ Տեսնում ենք, թե ինչպես այսօր, երևանում, մեր բժիշկները երբեմն գործածում են միզ՝ փոխանակ ասելու մեզ. այս նրանից է, որ միզել, միզափամփուշտ և այլն բառերը կարծում են, թե կազմված են միզ արմատից։ Սղման և ամփոփման օրենքի գաղափարը վերացել է։ Այս բանը նույն է Պոլսի և այլ բարբառների մեջ նկատված ջուրի, ձուկի, քիթի ձևերի հետ, միայն այդտեղ շարժումը հակառակ ուղղությամբ է։

Երևույթը նոր չէ, այլ շատ հին, որի ապացույցն է անխախտ բառը։ Լավ հայագետը գիտե, որ այս բառի հարազատ ձևն է անխախտուս. «զի և անտրատ և անխախտուս պահէ զլեառնն» գրում է Եզն. էջ 7. սակայն ուշ շրջանում, խախտել, անխախտելի բառերից ենթագրելով՝ կազմել են անխախտ (օրինակները տես ՆՀԲ. նրանց հնությունը հասնում է ԺԴ դար)։ Այսօր էլ ամենքս ասում ենք անխախտ, անխախտուս ձևը հնություն է։

Սրան նման է ծածուկ բառը, որի բայական ձևն է ծածկել։ Նոր բարբառներում կազմվել է սրանից ծածք, որ և գրվում է ծածկ. երկուսն էլ սխալ ենթագրված ձևեր են։

Աշխարհաբարը բռնում է միջին դիրք։ Արևմտյան գրականը, թեև առաջ պահում էր սղման օրենքը, բայց վերջին շրջանում, հետևելով հատկապես Պոլսի ժողովրդական բարբառին, վերացրեց այդ օրենքը և ասում է նրա նման քիթի, ջուրի և այլն։ Արևելյան գրականը այս հարցում ավելի պահպանողական է. բայց նա էլ բռնել է մյուս ճանապարհը. գրաբարի օրենքներից ի և ու ձայնների սղման օրենքը ընդհանրապես պահվում է. ասվում է քքի, ջրի և այլն. մինչև անգամ հոգնակիի մեջ ասում են՝ ծաղկըներ, երկրներ, խորհրդներ և այլն. իվ<իւ վերջածայնի փոփոխության օրենքն էլ է պահվում. օր. հաշիվ-հաշվի, թիվ-թվի և այլն. բայց ո<ոյ, ե<եա չեն փոխվում՝ հակառակ գրաբարի. օր. լույսի, մատյանի, սեղյակի, բույսի, հույսի, զայրույթի. կույրի, հրապույրի և այլն։ Գալով և ձայնավորին, թեև ոմանք պահում են դեռ հանդիսի, պարտիզի ձևերը, բայց սրանք համարվում են արդեն հնացած, և նոր գրական լեզուն գիտե միայն հանդեսի, պարտեզի։ Շատ սովորական է այսպիսով, որ արևմտյան գրականում խստաց գոյություն չունի (ասվում է միայն այսպեսով)։ Նույնիսկ ի և ու ձայնավորների սղման օրենքը, որ ընդհանրապես ընդունված է արևելյան գրականում, բացարձակ-

բեն չի պահվում և ունի շատ բացառություններ, հատկապես ու ձայնավորը։ Այսպես ունենք՝

մուաք—մուտքի
անասուն—անասունի
մոլուցք—մոլուցքի
մայիս, հուլիս, հունիս—մայիսի, հունիսի, հուլիսի
ապուշ—ապուշի

-ում հանգող գոյականները (շարժում, խավարում, թրթռում և այլն) չեն սղում ու ձայնը. ինչ. շարժումի, -մից և այլն։

Օտար հատուկ անուններն արդեն վերծ են սղումից. օր. Բեռլինի, Փարիզի, Պաղեստինի։

Ընդհանրապես հոգնակին ազատ է սղումից. ինչ. ծաղիկ-ծաղկի, ծաղիկներ, երկիր, երկրի, երկիրներ և այլն. արդեն շատ անշնորհք է համարվում ասել փափկներ, ծածկներ, փխ. փափուկներ, ծածուկներ. բացառություն են կազմում միավանկ բառերը, ինչ. թղթեր, ջրեր, գրքեր, քրդեր և այլն։

Այս բոլորը ցույց են տալիս, որ սղման օրենքը արևելյան հայերենում էլ ջնջման ճանապարհն է բռնել, բայց դեռ լիակատար գործադրությունից բավական հեռու է։ Գրողների անհատական քմահաճույքից է կախված հաճախ հետևել գրաբարի սղման ու ամփոփման հին օրենքներին. օր. Շիրվանզադեն, Երկերի լիակ. ժող. 1930, հա. Դ, էջ 218 ասում է մանդավաճառ փխ. մանուդավաճառ։

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Եթե ուզենանք այժմ ներկայացնել մեր առաջ հայերենի հոլովման ընթացքը հնդեվրոպական շրջանից մինչև գրաբարը և գրաբարից մինչև հայերենի վրայով մինչև արդի ժամանակը, կտեսնենք հետևյալ պատկերը։

Նախալեզվից գրաբարին անցնելու ժամանակ, վերջածայնի անկման օրենքի պատճառով՝ ջնջվում են հնդեվրոպական բառերը, հոլովները միանում և շփոթվում են իրար հետ, այնպես որ գրաբարը ստիպված է դնել նոր ձևակերպություն, նախալեզվի 3 հոլովման դեմ կազմում է 7 հոլովում, որոնք թեև ընդհանրապես ներկայացնում են հնդեվրոպական հոլովումը, բայց այլափոխված ու գրեթե անճանաչելի ձևի տակ։

Միջին հայերենը ընդհանրապես պահում է գրաբարի հոլովման նկարագիրը. հոլովների թիվը համարյա չի փոխված, պահված է որոշյալ հայցականի զ նախդիրը, ինչպես նաև բացառականի ի նախդիրը և գրաբարի ո հոլովումը, բայց գործիականը ամեն տեղ վերածված է ով ձևին, բացի ն հոլովումից, և որ գլխավորն է՝ հոգնակիի հին դրության փոխարեն հիմք է դրված հավաքական դրության, որ գրաբարի մեջ բացառիկ մի երևույթ էր։

Աշխարհաբարը ավելի առաջ է տանում բարեփոխության գործը, նախ ջնջում է բոլոր տեսակի նախդիրները, երկրորդ՝ հավաքականի դրությունը հասցնում է իր կատարելության, որով գրաբար հոգնակիի անկախ հոլովումը ջնջվելով՝ նույնանում է եզակիի հոլովման հետ։ Առաջին միջոցով հայերենը հասնում է տեղ-տեղ չինարենի դրության, երկրորդով՝ թուրքական լեզուների հոգնակիի դրության։

Երրորդ՝ իբրև ընդհանուր տիպար ընդունելով ի հոլովումը, ձգտում է բոլոր բառերը ենթարկել նույն հոլովման։ Առաջինից դուրս գտնված մյուս բոլոր հոլովումները մասնավոր պարագաներ են ներկայացնում։ Արդեն բացառական, գործիական և ներգոյական հոլովները ընդհանրապես նույն ձևն ունեն, և միայն եզ. սեռականն է, որ ներկայացնում է դանազան շեղումներ. բայց նույնիսկ սրանք էլ կարող են հաճախ ենթարկվել ի հոլովման։

Կարելի է արդյոք դուշակել, թե ինչ պիտի լինի հայերենի հոլովման վիճակը ավելի հեռու ապագայում։ Կարելի է հասատատապես ասել, որ նախ գրաբարաձև հոլովման ճեացորդները կջնջվեն աշխարհաբարից կամ գոնե վերջին աննշան հետքեր միայն կմնան նրանցից։ Երկրորդ՝ միակերպության ձգտումը, որ գործել է հնդեվրոպական շրջանից մինչև գրաբարը և գրաբարից մինչև արդի հայերենը, և դեռ լիովին ավարտում չի առացել, կշարունակե իր գործունեությունը և հոլովական մասնավոր դեպքերն էլ կամաց-կամաց ընդհանուրին վերածելով, եթե չկարողանա էլ իսպառ ջնջել, գոնե նրանց թիվը նվազագույն չափերի կհասցնե։ Եվ ինչպես այսօր, գրաբարի հոլովական դրությունից աննշան ճեացորդներ միայն կմնան արդի աշխարհաբարի մասնավոր հոլովումներից։ Այս կողմից բացառություն չի կազմի նաև սղումը, որ նույնպես գրաբարի մի ճեացորդ է արդի հայերենում։

ԳԼՈՒԽ ԺԶ

ՀՈԴ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առարկաները կարելի է ըմբռնել չորս ձևով.

1) Առարկան ընդհանրապես, ամբողջ սեռը միասին առած.

2) Այդ ամբողջ սեռի մի մասը միայն, որ քանակությամբ անորոշ է լինում.

3) Ամբողջ սեռից միայն որևէ մի հատ վերցրած՝ ըստ պատահման.

4) Ամբողջ սեռից միայն մի հատ, բայց հայտնի կերպով այս ինչը կամ այն ինչը։

Օրինակ, երբ ասենք՝

1) Մարդը բանավոր էակ է.—հասկանում ենք ամբողջ մարդկային սեռը, բոլոր մարդիկ միասին վերցրած։

2) Քանի օր դուրս չէի եկել, մարդ չէի տեսնում, դուրս եկա, մարդ տեսա.—հասկանում ենք մարդկանցից մի մաս միայն, բայց քանակությունը անորոշ. կարելի է հասկանալ մի հոգի, բայց անշուշտ ավելի պետք է հասկանալ՝ մի խումբ մարդիկ։

3) Մի մարդ է եկել, քեզ տեսնել է ուզում.—հասկանում ենք մի որևէ մարդ, որ անծանոթ է մեզ։

4) Մարդը եկել է, քեզ է սպասում.—խոսքը այս անգամ մի այնպիսի մարդու մասին է, որ մեզ ծանոթ է, կամ որի մասին արդեն խոսվել է։

Ահա մի ուրիշ օրինակ՝ սույն չորս ձևով.

1) Ջուրը ամենաօգտակար ըմպելին է.

2) Գնաց ջուր բերելու.

3) Մի ջուր տուր խմեմ.

4) Երևանի ջուրը շատ համեղ է։

Այս չորս ձևերը զանազանվում են իրարից ը վերջավորությամբ, մի բառով կամ առանց որևէ նշանի։

Բնաբանական լեզվով սրանք կոչվում են հոդ, և հատկապես ը կոչվում է որոշիչ հոդ, իսկ մի՝ անորոշ հոդ։

Որոշիչ հոդ դրվում է բառի վրա այն ժամանակ, երբ նա ցույց է տալիս ամբողջ սեռի միջից վերցրած մի որոշ անհատ (№ 4). անորոշ հոդ դրվում է այն ժամանակ, երբ վերցրած է լինում ըստ պատահման որևիցե մի անհատ (№ 3)։ Այս երկուսը հատուկ են ոչ միայն հայերենին, այլև շատ բազմաթիվ լեզուների և համարյա համաշխարհային նշանակություն ունեն։ Մյուս երկուսը տարբերվում են ըստ լեզվի։ Ընդհանուր սեռը (№ 1) արդի աշխարհաբար հայերենում նշանակվում է որոշյալ հոդով, այսպես նաև ֆրանսերենում, գերմաներենում, իտալերենում և գրեթե բոլոր եվրոպական լեզուներում։ Մասնավոր ձևը (№ 2) աշխարհաբարում նշանակվում է առանց որևէ նշանի, պարզ բառի գործածությամբ, բայց ուրիշ լեզուների մեջ կան տարբեր ձևեր. օրինակ՝ ֆրանսերենում du հոդը, որ կոչվում է մասնական հոդ։

Եթովպական հարար լեզվով որոշիչ հոդն է -zo (պատահարար նման հյ. զ նախդիրին), որ ծագում է azzo «այն» ցուցականից. օր.

zar *ծագիկ,*	zarzo *ծագիկը*
gār *տուն*	gārzo *տունը*
lām *կով*	lāmzo *կովը*

Առաջ եղել է նաև իգական որոշիչ հոդ՝ -il ձևով, բայց այժմ վերացել է և -zo դարձել է ընդհանուր։

Սակայն ընդհանուր սեռն էլ որոշյալ հոդով նշանակելը ընդհանուր չէ բոլոր լեզուներին։ Այսպես՝ հին հայերենը ընդհանուր սեռ նշանակելու համար բառը գործածում է առանց հոդի, և միայն անհատական որոշման դեպքումն է, որ գործածում է որոշիչ հոդ։ Օր. գրաբար ասվում է «Հաւատարիմ է շուն» և հասկացվում է շուն սեռը ընդհանրապես (ամեն շուն հավատարիմ է). Սեաւ է շունն (խոսքը այս ինչ որոշ շան մասին է)։

Հին ֆրանսերենում էլ ընդհանուր սեռ նշանակելու համար հոդ չեր դրվում. օր.

Lion est appelé roi des bêtes
«Առյուծը կոչվում է կենդանիների թագավորը»
(ԺԹ դար).

Արդի ֆրանսերենում ընդհանուր սեռը, ինչպես ասացինք, արտահայտվում է որոշյալ հոդով։

Le chien est fidèle *շունը հավատարիմ է.*
L'homme est mortel *մարդը մահկանացու է։*

Սակայն միևնույն ժամանակ կարելի է գործածել առանց հոդի կամ անորոշ հոդով. օր.

La vie du courtisan
La vie d'un courtisan
La vie de courtisan
} est méprisable

(Clédet, Gram. hist. du fr. 4°, էջ 203)։

Այսպիսի վարանյալ դրության մեջ է նաև անգլերենը, ուր հավասարապես գործածական են՝

books are usefal *գրքերը օգտակար են.*
the tiger is ferocious *վագրը կատաղի է։*

Լեզուների նախնական շրջանում առարկայի պատկերացման այս չորս ձևերը չեն զանազանվում իրարից. հոդը (որոշյալ կամ անորոշ) իրը քերականական կարգ գոյություն չունի։ Այսպես՝ հոդ չգիտեն ոչ հնդեվրոպական նախալեզուն, ոչ սեմական նախալեզուն, ոչ ուգրո-ֆիննական նախալեզուն, ոչ եգիպտացերենը և այլն։

Այսօր էլ այս վիճակը շարունակում են դեռ շատ բազմաթիվ լեզուներ, ինչպես չինարենը, ճապոներենը, ջավայերենը, պարսկերենը, թուրքերենը, վրացերենը, նույնիսկ ռուսերենը, չեխերենը, սլովակերենը և այլն։

Երբ մի լեզու հոդ չունի, ընդհանուրի և մասնավորի, որոշյալի և անորոշի նրբությունները արտահայտելու համար կարող է դիմել երկրորդական միջոցների. այսպես՝ շեշտ կամ տոն և բառի դիրքը կամ տեղը։ Օրինակ՝ չինարենում հոդ չկա և բառը ինքնին վերցրած թե որոշյալ է, և թե անորոշ. սակայն եթե գոյականը բայից առաջ դրվի, հաճախ որոշյալի նշանակություն ունի, իսկ եթե հետո դրվի, անորոշ է։ Օր.

lai²-la ta³-yū²-ti
եկ ավ (մի) ձկնորս
ta³-yū²-ti tai²-la
ձկնորս(ը) եկավ

Այսպես և ռուսերենում՝

у меня собака *ինձ մոտ շուն կա (անորոշ)*
собака у меня *շունը ինձ մոտ է (որոշյալ)*

կամ Քրք.

év yəkəlməš *տուն է փուլ եկել (անորոշ)*
ev yəkəlməš *տունը փուլ է եկել (որոշյալ)*

Կան լեզուներ էլ, որոնք թեև ուղղականի մեջ որոշյալ և անորոշ չեն զանազանում, բայց մյուս հոլովների, հատկապես հայցականի մեջ, որոշյալի համար դնում են առանձին մասնիկ. օր.

պրս. gul čid *վարդ քաղեց*
gul-rā čid *վարդը քաղեց*
Քրք. et aldəm *միս առի*
eti aldəm *միսը առի*
ǰeviz aɣaǰə *ընկույզի ծառ*
ǰevizin aɣaǰə *ընկույզին ծառը*

Մինչև իսկ մեր բարբառներից վանի բարբառը, որ հոդի կողմից կազում է, կարող է շեշտի տարբերությամբ զանազանել՝

մ՚արդ տեսա (մի մարդ տեսա).
մարդ տեսա՛ (մարդը տեսա).

Բայց անորոշն ու որոշյալը արտահայտելու ամենասովորական ձևերն են որոշյալի համար՝ այս, այդ, այն ցուցականները կամ այս ինչ, այն ինչ, իսկ անորոշի համար որևէ անորոշ ածական, ինչ. որևէ, ինչ որ, մի որևէ, մի և այլն։

Այսպես օրինակ, չինարենում, če⁴-ko *«այս» և* na⁴-ko *«այն» ցուցականները որոշյալի համար, և* yi¹ *«մեկ»,* yi²-ko *«մեկ հատ», ko «հատ» բառերը՝ անորոշի համար։*

Հնդկական նագա լեզվում անորոշի համար ekha *«մեկ» բառը չի գործածվում (դա միայն թվական է), այլ դրա համար դրվում է* matsangā *«ինչ որ» և* nčyūā *«ոմն», որոնցից առաջինը թե՛ շնչավոր, և թե՛ անշունչ առարկաների համար, իսկ երկրորդը՝ անձանց համար։ Որոշյալ հոդը* či *կամ* ši *ցուցականներն են, որոնք միանում են անմիջապես գոյականին և նույնիսկ եթե հոգնակիի* -ang *մասնիկն էլ կա, նրանից առաջ են անցնում. ինչ.*

kyončiang yičaka
մարդիկը գնացին
(=իրապես՝ մարդ-ը-իկ)

(Mills, *էջ 209 և* Griersom, *հ. III, մ. II, էջ 286*)։

Մարքիզյան կղզիների լեզվով անորոշ հոդերն են e, he, *հդ.* mou, na, naho, *որոշյալ հոդերն են* te, hg, te tau (Dordillon, *էջ 7*)։

Հնդկական փիլիպտի-չինա լեզվում անորոշ հոդն է -k, *որ դրվում է բառավերջում և անշեշտ* ek *«մեկ» բառից է կրճատված. ինչ.* manūjo *«մարդ»,* manūjuk *«մի մարդ»,* ašpo *«ձի»,* ašpuk *«մի ձի»։*

Մելանեզյան լեզուներից խաի լեզուն եզակիում հոդ չի գործածում, իսկ երկակիում և հոգնակիում դնում է որոշիչ հոդ. երկակիի հոդն է li *կամ* lo, *վերջինը* (lo) *«երկու» նշանակող բառն է* (Ray, *էջ 84*)։

Մելանեզյան լիֆու լեզվում անորոշ հոդն է kete *«մյուս» կամ* hete *«որևէ, ինչ որ»* (Ray, *էջ 112*)։ *Կվամերա լեզվում որոշիչ հոդն է* n, na, *որ դրվում է բառի սկիզբը և բուն նշանակում է «այն»* (Ray, *146*). *սրա նման նույն խմբի բակի լեզվումն էլ որոշիչ հոդն է նախադաս* na (Ray, *էջ 246*), *նույնը նաև մոն, սինեսիպ, կուլիվիու, մաուլուա, նոգուգու լեզվում. այս վերջինը* ne *ձևով* (Ray, *էջ 384*). *բոլորն էլ պատահաբար նման են հայերենին։ Իսկ Մելանեզյան մալու լեզուն ունի բազմաթիվ հոդեր, որոնք դրվում են բառի սկիզբը. սրանք են* na, si, tee, ta, sa, mae, uaigwa, ta, ki. *սրանցից մեկը որոշյալ է, մեկը անորոշ, մեկը մասնական, մեկը հոգնակերա, մի ուրիշը ազգականական բառերի համար և այլն. բոլորն էլ անշուշտ նախկին դասանիշներ են* (Ray, *էջ 498*)։

Պոլինեզյան հավաի լեզուն ունի 2 որոշյալ և 7 անորոշ հոդ. որոշիչ հոդերն են ka *և* ke, *որոնք գանազանվում են բառի ձայնավորի համեմատ. քննիչը* (Andrews, *էջ 25*) *երկար կանոններ է տալիս այս հոդերի գործածության համար, բայց բոլորը ավելորդ մանրամասնություններ են։*

Անորոշ հոդերը հետևյալներն են.

wahi *մի քիչ* (some)
kahi *մի* (an)
kekahi *մի ինչ որ*

hookahi *մի, մի միակ, միայն մի*
kau *մի քիչ*
le *մի* (a, an),
na *հոգնակիի հոդն է (ֆրանս.* les, des).

Հնդկական սիրահի լեզուում որոշիչ հոդն է le *կամ* lā, *ինչ.*

le zin «*թամբը*», lā guna putar «*մեծ որդին*» (Grierson, *հա.* I, *մասն* I, *էջ* 367, 285), *որքան մեծ նմանութիւն ֆրանս.* le *և* la *հոդերի հետ. բայց դա բոլորովին պատահական է, որովհետև հնդկերէն բառը «այս» ցուցական ածականն է:*

Կովկասեան ուբիխերէն և արխազերէն լեզուների մէջ որոշիչ հոդն է a, *որ գրվում է բառի սկիզբը: Դյումեզիլը* (Et. comp., *էջ* 34—35) *ցույց է տալիս, որ այս* a-*ն մի հին ցուցական է և նշանակում է «այն»:*

Հոլանդերէնում որոշիչ հոդն է եզ. ար. և իգ. de, *չ.* het, *իսկ հոգնակի բոլոր սեռերում* de. *անորոշ հոդն է ար. և չ.* een, *իգ.* eene:

Ղպտիերէն լեզվով որոշիչ հոդն է եզ. ար. p-, *եզ. իգ.* t-, *հգ.* ən-. *սրանք գրվում են բառի սկիզբը և «այն» ցուցական դերանվան կրճատ ձևերն են:*

Անորոշ հոդերն են եզ. u, *հգ.* hen-, *որոնք* ua «*մեկ*», hoeine «*մի քանի*» *բառերի կրճատ ձևերն են. սրանք էլ դրվում են գոյականի սկիզբը:*

Մելանեզյան ռովիանա լեզվով անորոշ հոդն է ke, *որ* keke «*մեկ*» *թվականի կրճատ ձևն է* (Ray, *էջ* 544):

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնգնե լեզուն որոշիչ հոդ չունի, բայց ունի անորոշ հոդ, որ de «*մեկ*» *բառն է և իբրև մասնիկ կցվում է բառավերջին:*

Այսպես նաև թրք. et «*միս*», bir «*մի որևէ միս*» (*անորոշ*), bu et «*այս միսը*» (*որոշյալ*), *պրս.* mard «*մարդ*», yek mard «*մի մարդ*», in mard «*այս մարդը*», *ռուս.* книга «*գիրք*», одна книга «*մի գիրք*», эта книга «*այս գիրքը*» *և այլն:*

Հինդուստանի լեզուն, որ սանսկրիտի շարունակութիւնն է, չունի վորոշյալ հոդ. բայց իմարկին գործ է ածում «այս, այն» ցուցականները. ինչ. yih mard «*այս մարդը*», wah mard «*այն մարդը*»:

Ավելի ուշ, լեզուների զրեթե պատմական ընթացքում և յուրաքանչյուրի մէջ անկախաբար սկսում է երևան գալ հոդը. նախ առեղծվում է որոշյալ հոդը, ավելի հետո անորոշ հոդը: Ընդհանրապես ցուցականն է, որ մաշվելով տալիս է որոշյալ հոդը, իսկ անորոշը արտահայտվում է առանց որևէ հոդի և կամ մի թվականով, որ հետո մաշվելով կարող է տալ անորոշ հոդ:

Բերենք մի քանի օրինակներ.

Հին եգիպտացերենը հոդ չուներ. ավելի ուշ՝ ժողովրդական լեզվի մէջ «այս» ցուցականը դարձավ որոշիչ հոդ, իսկ w^{e} «*մեկ*» *թվականը դարձավ անորոշ հոդ: Էլ-Ամարնայի արձանագրութեանց մէջ արդեն երբեմն սկսում է երևալ որոշիչ հոդը:*

Սեմական նախալեզուն հոդ չուներ, ոչ որոշյալ, և ոչ էլ անորոշ: Ավելի հետո սեմական լեզուները իրարից անկախ սկսեցին հոդ հնարել: Ասուրերենը, իբրև հնագույնը սեմականների, առանց հոդի է: Փյունիկերենում հոդը շատ ավելի հազվագյուտ է, քան երբայեցերենում. բայց ավելի հնում հոդ չկար, օրինակ՝ Ռաս-Շամբայի արձանագրութեան մէջ, որ Ն. մեր թվ. 2-րդ հազարամյակի վերջին դարերից է, ամբողջ 1300 տողում մի հատիկ հոդ չկա:

Փյունիկերենում որոշիչ հոդը եղավ ha, *ինչպես և երբայեցերէն է. դրվում է բառի սկիզբը և ժողովրդական ընթացիկ լեզվում* h *ձայնը կորցնելով՝ դարձավ* a. *փյունիկերենում քիչ էր գործածվում. ավելի շատացավ պուներենում (Կարթագոն), ուր նույնպես ստացավ* a *ձևը, որ գտնում ենք նաև աստերենում:*

Երբայեցերենն ու արամերենը ունեն որոշյալ հոդ, բայց չգիտեն անորոշ հոդ: Երկուսի մէջ էլ սեմական հին ցուցական դերանունն էր (hā), *որ դարձավ որոշիչ հոդ, երբայեցերենում նախադաս, իսկ արամերենում՝ հետադաս. ինչ. սեմ.* bait «*տունն*» *բառից՝ երբ.* habbaj·t *արամ.* baɨtha>baɨtā *տունը* (Brokelmann, Précis, *էջ* 121, 139): *Երբայեցերենում այս որոշիչ հոդը արտասանական և իմաստական միևնույնն է և կարող է դրվել թե գոյականի, թե ածականի, թե թվականի, թե ցուցականի վրա* (Templer, Hebr., *էջ* 107):

Արաբերենը առեղծեց որոշիչ al *հոդը և անորոշ* n *հոդը. առաջինը նախադաս, երկրորդը հետադաս: Հիմյարի լեզվում որոշիչ հոդն է հետադաս* n *(ճիշտ հայերենի պես). սաբեականումն էլ անորոշ հոդն է վերջադար* m *(դարձյալ հայերենի պես),*

որ ma «ինչ, մի բան» բառի կրճատ ձևն է։ Այս նույն բառն է դարձյալ, որ արաբերենի մեջ դարձել է n անորոշ հոդը, քանի որում արաբերենի մեջ m ձայնը վերջավանկում դառնում է n։ Մարոկկոյի արաբերենում անորոշ հոդերն են waḥd և ši (առաջինը «մեկ» բառն է, և երկրորդը՝ «բան, ինչ» բառն է. երկուսն էլ դարձել են անորոշ հոդ՝ ճիշտ ինչպես հյ. մի և ինչ)։ Երբ անորոշը հոդնակի է, գործ են ածում ši մասնիկը, իսկ եթե եզակի է, գործածվում է waḥd մասնիկը։ Այսպես նաև բերբերական լեզուներում yā «մեկ» և krā «բան» բառերը ծառայում են իբր անորոշ հոդ։ Արաբ բարբառներում նույն waḥid «մեկ» թվականը կրճատվելով ավել է waḥd, wah, ha անորոշ հոդը։

Եթովպացերենը սեմականներից միակ լեզուն է, որ դեռ չի կարողացել կազմակերպել հոդը և ասուրերենի պես մնում է առանց հոդի։

Ուգրո-ֆիննական լեզուներն էլ հոդ չունեին. բայց հետո, շփվելով հնդեվրոպական լեզուների հետ, ստեղծեցին որոշյալ հոդը՝ ցուցական դերանունից։ Հունգարերենի մեջ ցուցական az ձևը սկսեց գործածվել իբր հոդ. «այն կինը» ասվում է az az asszony, ուր երկու az-երից մեկը դրված է իբր ցուցական, մյուսը՝ իբր որոշիչ հոդ։ Այս հոդն է, որ այժմ մաշվելով դառնում է a.

Մորդվիններենում էլ s'ā, s'e «այն, նա» և հգ. n'e «սոքա» դերանունները մաշվելով դարձել են որոշյալ հոդ, առաջինը s' ձևով՝ եզակիի համար, և երկրորդը n'ā, n'e ձևով՝ հոդնակիի համար, ինչ. tolga «փեսաուր», tolgas' «փեսաուրը», tolgat «փեսաուրներ», tolgatn'a փեսաուրները։

Սորաբերենը, որ Գերմանիայում խոսված սլավական մի լեզու է, հոդ չունենալով, գերմաններենի ազդեցությանն տակ ստեղծեց իր մեջ՝ մի որոշյալ հոդ, որի նմանը պակասում է շրջակա սլավական լեզուների մեջ։

Ցուցականից որոշյալ հոդ ստեղծելու երևույթը գտնում ենք նույնիսկ զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ցեղերի լեզուների մեջ. օր. ամերիկյան յուկատեկան լեզվում որոշիչ հոդն է leti, որ «ինա» երրորդ դեմքի դերանունն է. անորոշ հոդն է hun. երկուսն էլ դրվում են գոյականից առաջ, գոյականի նման հոլովվում են և առանում գոյականին հատուկ հոդնակերտ -oob մասնիկը. որոշյալ leti հոդի կրճատ ձևն է le. օր.

le uinic «մարդը», le čuplal «կինը»

հոլովվում է ֆրանսերենի և անգլերենի հոդի նման

leti=անգլ. the=ֆր. de la եզ. իգ.
ti leti=of the=ֆր. de la իգ. սեռ.
letioob=ֆր. les հգ., ti letiloob (հգ. իգ. սեռ. հ.)
ti letioob=ֆր. des հգ. սեռ. հ.

Նաև hun անորոշ հոդից՝
huntuloob անորոշ հգ.
huntul „ եզ. իգ.
huntuloob „ հգ. իգ.
(Kingdom, էջ 22)։

Եթովպական բնագրեր լեզուն ունի որոշիչ հոդ, որ ունի սեռ և թիվ և ներկայացնում է հետևյալ պատկերը.

	Եզ.		Հգ.	
ուղ.	wū արտ.,	tu իգ.	yā արտ.	tā իգ.
հյց.	wō	to	yō	tē

Թեև անորոշ հոդ չկա, բայց երբեմն engāl «մի» բառը՝ ժողովրդական արաբերենի նմանությամբ, գործածվում է իբրև անորոշ հոդ (Reinisch, էջ 60)։

Դրավիդյան կումուխ լեզվի մեջ գոյականի արական որոշյալ եզակիի վերջավորությունն է -as, հոգնակի՝ -ar. օր. āl «մարդ», ālas «մարդը», ālar «մարդիկ», որ ընդհանուր է թե՛ որոշյալի, և թե՛ անորոշի համար (մարդիկ, մարդիկը). ծագում են as «նա» և er «նոքա» դերանուններից (Hahn, էջ 9)։

Ամերիկյան ալինգիա լեզվի մեջ չորս տեսակ ցուցական կա, որոնք են՝ he «այս», ya «այդ», yu «այն» և we «այն» (անտեսանելի առարկաների համար)։ Այժմ երրորդ ցուցականը (yu) արդեն դարձել է որոշիչ հոդ (Boas, Handbook, I, էջ 172)։

Օվկիանյան տահիթի լեզուն ստեղծել է որոշիչ հոդ՝ te, որ գործածվում է թե՛ եզ. և թե՛ հգ., թե՛ արտ. և թե՛ իգ. (պատահարար նման անգլ. the հոդին)։ Այս հոդն էլ պետք է ծագած լինի ցուցականից, քանի որում ցուցականներն են te-ieni «այս», tena «այդ», tera «այն»։ Եզակի հասարակ գոյականների մոտ դրվում է te. ինչ. te tavini «ծառան», te haavâ «գաւառը», իսկ հոգնակիի համար կոզքին ավելացվում է սովորական հոգնակերտ -mau մասնիկը. ինչ.

te mau manu *թռչունները*
te mau haavâ *դառավորները*

Հատուկ անուններից և դերանուններից առաջ իբր որոշիչ հոդ դրվում է o. *ինչ.*

o Terii *(անուն է)*, o vau *«ես»։*

Մոն-քմեր խմբի խասսի լեզուն հոդ կազմելու ընթացքում է։ Երրորդ դեմքի դերանվան եզ. ար. u *«նա», իգ.* ka *«նա» և իգ.* ki *«ներանք» բառերը ծառայում են այս լեզվում իբրև հոդ, բայց դեռ լիովին կազմակերպված չեն. նրանք ոչ որոշիչ են և ոչ անորոշ, այլ միայն դրվելով գոյականից առաջ, ցույց են տալիս գոյականի սեռն ու թիվը* (Grierson, *հտ.* II, *էջ 8*)։

Աֆրիկյան կպելլե լեզուն զանազանում է թե՛ անորոշը, և թե՛ որոշյալ գոյականը. անորոշը բառը ինքն է, առանց որևէ նշանի։ Շատ դժվար է որոշիչ հոդի գործածությունը, որի ընդհանուր կանոնը հետևյալն է.

Բառերը վերածվում են 3 խմբի.

ա) ռնգային բաղաձայնով սկսվող բառեր.

բ) խուլ բաղաձայնով սկսվող բառեր.

գ) թրթռուն բաղաձայնով սկսվող բառեր։

Ա կարգի բառերը իբր հոդ առանում են բառավերջում i *ձայնավորը. օր.*

nū *մարդ*—nūi *մարդը*
ńē *ձուկ*—ńēi *ձուկը։*

Բ կարգի բառերը բառասկզբի խուլ բաղաձայնը վերածում են համապատասխան թրթռունին և բառավերջում առանում նույն i *ձայնավորը. ինչ.*

pele *տուն*—belei *տունը*
kolo *մորթ*—goloi *մորթը*
tā *քաղաք*—dāi *քաղաքը*

Գ կարգի բառերը բառասկզբում ավելացնում են n *ռնգականը, իսկ վերջում առանում նույն* i *ձայնավորը. ինչ.*

ga *ջուր*—ngai *ջուրը*
bala *աչխար*—nbalai *աչխարը*
ḍa *տղայ*—ńdoi *տղան*

Այս ընդհանուր օրենքից դուրս կան այլ մանրամասնություններ, որոնք վերաբերում են բաղաձայնների հանդիպումից առաջացած ձայնափոխություններին։ Սրանց մասին խոսելը մեր նպատակից դուրս է (Westermann, *էջ 8*)։

Ֆիլիպպյան նաբալոյե լեզվում կա երկու որոշիչ հոդ. հատարակ անուննների վրա դրվում է e, *իսկ անձանունների համար՝* si. *օր.* e daxi *«մարդը»,* e balei *«տունը»,* si Mateo *Մատթեոսը։ Վերջինի ծագումը կարծում եմ նույնն է այն* si *մասնիկի հետ, որ գտնում ենք նույն լեզվի բոլոր դերանունների վրա. ինչ.* sikak *«ես»,* sikam *«դու»,* sikato *«նա»,* sikame *«մենք» և այլն* (Scheerer, *էջ 107*)։

Օվիհանյան սամոա լեզվի մեջ կա երկու հոդ. որոշյալն է le (*կարծես Թե ֆրանսերեն լիներ!*) *և անորոշն է* se. *օր.* se vaa *«նավ»,* le ʻfale *«տունը»։*

Ամատրալիայի Նոր-Պոմերանյան լեզվով անորոշ հոդն է ta *«ինչ որ», իսկ որոշիչ հոդն է* a *(երկուսն էլ բոլոր չորս թվերի համար)։*

Կովկասյան ուրիխ լեզվում որոշիչ հոդն է a, *որ դրվում է բառասկզբում. ինչ.* a-cā *«տունը», իսկ անորոշ հոդն է* zä *«մեկ», որ կարող է ուժեղանալ* gwarə *«ինչ որ» բառով և կամ կրկնվել. ինչ.* zä-gwičaqa, zä-gwičaqa *«մի ինչ որ խոսք»* (Dumezil, *էջ 15*)։

Բայց նույնիսկ այժմ մեր աչքի առաջ ֆրանսիական մի բարբառում (պիկարդական) ce *«այս» բառը սկսել է գործածվել իբր որոշիչ հոդ. այսպես օր.* š-curé=le curé, š-marišo=le maréchal (Brachet, Gram. fr., *1903, էջ 154*)։

Վերի բոլոր օրինակներից երևաց, որ որոշիչ հոդը ընդհանրապես ցուցականից է կազմված։ Այստեղ բացառություն է կազմում հնդկական մարաթի լեզվի հայաբի բարբառը, որի մեջ որոշիչ հոդը bitā *«տնձ» բառն է. օր.*

bap-bita *հայր-ը*
bētā-bītā-ke *որդուն*
որդի ն տր.

(Grierson, *էջ 332*)։

Հին լեզուներին հակառակ էլամերենը հոդ ունեցել է՝ ըստ Հյուզինգի (Hüsing, Die Sprache Elams, Breslau, *էջ 11*)։

Այս գիտնականի կարծիքով անձ ցույց տվող բառերի եզ. ուղ. հոլովը անորոշ հոդով վերջանում է k, որոշյալ հոդով. r. օր.

surɒki-n *թագավոր մի*
surɒki-r *թագավորը*

Իսկ հոդնակին առանց խարության լինում է p հանգով, ինչ. surɒki-p «թագավորներ»։ Իր ցույց տվող բառերը վերջանում են -me. ինչ. surɒki-me «թագավորություն»։

Զարմանալի է հոդի կողմից հնդկական սինհալի լեզուն։ Այս լեզվում ամեն գոյական, առանց որևէ նշանի, արդեն ինքնին որոշյալ է։ Եթե հարկ լինի անորոշի վերածել, այն ժամանակ ավելացնում են ek «մի» բառը. օր.

kikilī «հավը», ata «ձեռքը»
kikiliyak «մի հավ», atak atek «մի ձեռք»

կարելի է նաև ասել ek-kikiliyak «մի ինչ որ հավ»։—Սրանք հոլովվում են և հոլովական մասնիկներն էլ դրվում են ek-ի վրա (Geiger W., էջ 113)։

Մալգաշերեն լեզուն ունի մի քանի որոշյալ հոդեր, որոնցից գլխավորներն են ny, ilay, i, ry. սրանք ոչ սեռ ունեն, և ոչ թիվ. -ny գործածվում է ամեն տեսակ բառից առաջ (գոյական, ձերանուն, բայ, նախադրություն, մակբայ) և համապատասխանում է ֆր. le, la, les, au, du, aux, des հոդերին, որոշում է գոյականը. շատ անգամ բայից առաջ դրվելով վերածում է գոյականի, կազմում է նաև սեռական. ilay ավելի որոշյալ է. բառին տալիս է նախատական իմաստ. i դրվում է անձի և տեղի հատուկ անուններից առաջ.—ry ավելի քիչ է գործածվում (Montagné, էջ 15—19)։

Հնդեվրոպական նախալեզուն էլ մյուսների նման զուրկ էր հոդից։ Եվ այս իրավացի էր. քանի որ հնդեվրոպական նախաշրջանի մեջ յուրաքանչյուր բառ անկախ և ինքնուրույն էր, ուստի սպասելի էլ չէր, որ հոդ գոյություն ունենար։ Այստեղ էլ հոդի առեղծումը և գործածությունը սկսեց բավական ուշ՝ լեզուների գրեթե պատմական ընթացքում և յուրաքանչյուրի մեջ անկախաբար։

Ամեն տեղ էլ դիմեցին ցուցականների օգնության և նրանցից կազմեցին որոշյալ հոդը, իսկ անորոշը կազմեցին ընդհանրապես «մի» թվականից։ Այս բոլորը սկսեց այն ժամանակ

միայն, երբ հնդեվրոպացոց հոլովական դրությունը մտավ քայքայման ճանապարհի մեջ և ցուցականները իրենց անկախ դիրքը կորցնելով՝ կարոտացան կցվել գոյականին, որի վախճանը եղավ հոդը։

Հոդի կազմության այս ընթացքին կարող ենք հետևել հունարենում՝ համերական լեզվի մեջ, գերմանականում՝ գոթերեն լեզվի մեջ, իսկ ռոմանական լեզուների մեջ՝ ստորին լատինական գրվածքներով։ Հոմերոսի մոտ հոդը դեռ իրապես հոդ չէ, այլ պահում է իր ցուցականի վիճակը։ Ավելի հետո կազմակերպվում է հոդը, բայց միայն որոշիչ հոդը։ Հին հունարենը զուրկ է մնում միշտ անորոշ հոդից, և նոր հունարենն է, որ գալիս է ստեղծելու նաև անորոշ հոդը «մի» թվականից։ Ձենդերենը, հին պարսկերենը և սանսկրիտը որոշիչ հոդ չունեն և այս վիճակը շարունակվում է մինչև այսօր պարսկերենի, քրդերենի և հինդուստանի լեզվի մեջ։ Հին պարսկերենում կար միայն անորոշ հոդ և դա էլ «մի» բառն էր, այն էլ գրված 1 թվանշանով, որ գործածվում էր իբրև անորոշ հոդ. ինչ. 1 martiya «մի մարդ»։ Այս թվանշանը հնչվում է aiva, որ համապատասխանում է զնդ. aēva «մեկ» բառին։ Նույն բառը հին պահլավերենում եղավ ēv, որից առաջացավ հետո պահլավերենի անորոշ հոդը՝ ē. ինչպես՝ marɣ-ē «մի մարդ»։ Նույնը դարձյալ փարսի լեզվի մեջ դարձավ ē «մեկ» և իբր անորոշ հոդ՝ վերջնահար ē. ինչ. kasē «մի մարդ» (Spiegel, Pars., էջ 59)։ Այս է, որ այժմ էլ պարսկերենի մեջ դարձել է ī անորոշ հոդը. ինչ. mard-ī «մի մարդ» (Iensen, Neupers. Gr., էջ 28)։ Բելուջերենում անորոշ հոդը բերավ իր հետ նաև որոշիչ հոդը. ē վերջավորությունը դարձավ անորոշ հոդ, իսկ երբ բառը զուրկ է անորոշից՝ որոշյալ է. այսպիսով բելուջերենի մեջ բառը իր սովորական ձևի տակ միշտ որոշյալ է. օր. lōg «տունը», lōgē «մի տուն» (Grundr. ir. phil., I, էջ 238)։

Սոգդերենում ցուցական ածականն է γω, որ համապատասխանում է զնդ. hāu և հպրս. hauv ձևերին։ Բուդդայական և մանիքեական սոգդերենում այդ ցուցականը դարձավ իսկական որոշիչ հոդ (Benvenist, Gram. sogd., էջ 121)։

Լատինականում էլ հոդը շատ ուշ է երևում, ավելի ուշ, քան հունարենում. պատճառն այն է, որ հունարենում հոլովումը կորցրել էր իր հոլովական ձևերը. դրա համար հոդը եկավ պահանջը լրացնելու։ Բայց լատիներենը, որի հոլովումը այնքան մեծ փոփոխություն չէր կրել, երբեք հոդ չունեցավ. լտ. rosa

նշանակում է «վարդ, մի վարդ, վարդը» և մինչև անգամ բարբարոսաց արշավանքի շրջանին՝ առորին լատիներեն գրվածքներում ille դեռ հոդ չէ (Meillet, BSL, № 94, էջ 131)։ Հռոմեական պետության վախճանի մոտ, ժողովուրդը սկսում է ille «այն» ցուցականը հարադրել գոյականին իբր հոդ. ինչ. illa ecclesia «եկեղեցին», ille rex «արքան», illa corona «թագը»։ Դասական շրջանի վերջին գրվածքներում արդեն սկսել էր հոդը երևալ (St Jérôme, 331—420)։ Վուլկատայի թարգմանության մեջ գրում է. Vae autem homini illi per quam hominis tradetur «բայց վա՛յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն Որդի մարդոյ մատնեսցի» (Մտթ., իգ. 24)։ Առորին լատիներենում, մանավանդ երբ վեց հոլովները երկուսի վերածվեցին (6 դար), հոդի գործածությունը անհրաժեշտ դարձավ. օր. Dicebant ut *ille* toloneus de *illo* mercado ad *illos* necuciantes (է դար)։ Այս ille դերանունից է, որ պիտի առաջանար ռոմանական լեզուների հոդը. այսպես՝ ֆրանս. le, la, les, իտալ. il, la, le, իսպան. el, la, lo, ֆրանսիական լանգըդոկ լեզվով՝

եզ. ար. lo կամ le, իգ. la
հգ. ար. los կամ les, իգ. las?

կատալան լեզվով՝ ար. el, իգ. la
հգ. » els, իգ. les

ռետոռոման լեզվով՝ ար. ilg (հնչվում է իբր igl, որ է iyl, ինչ. ilg filg=le fils), իգ. la,
օր. ilg frar «եղբայրը», la sora «քոյրը»։

Պորտուգալերենում նախաձայն l-ի անկումով առացվել են o, a, հգ. os, as հոդերը։ Նույնիսկ լտ. ipse «ինքն» բառից կա առաջացած որոշյալ հոդ, որ գործածական է սարդինականում, պրովանսալ և կատալան լեզուների մեջ։

Ալբաներենում անորոշ հոդն է një (կարգա nyö), որ «մեկ» թվականն է և թե՛ ար., թե՛ իգ. միևնույնն է. ինչ.

një vëlla një motër
մի եղբայր մի քոյր

Իսկ բառերի որոշյալ ձևը կազմելու օրերքները շատ բարդ են և զանազան են՝ ըստ բառի վերջին ձայնավորի, թե՛ գոյականների, և թե՛, մանավանդ, ածականների համար, թե՛ եզ. կի, և թե՛ հոգնակի, որոնց հոդերը տարբեր են։ Ընդհանրապես ավելացնում են եզ. u, i, a, իսկ հգ. t։ Երբ գոյականը ունի իր ածականը, որ հետադիր է, որոշիչ հոդ դրվում է ածականից առաջ՝ i ար., e իգ., të չեզ., որոնցով էլ որոշվում է սեռը. ինչ.

գյ.	ած.
burrë i	ndershëm *պատվավոր մարդ*
shtëpi e	madhe *մեծ տուն*
grua e	urtë *կրթյալ կին*
ujë të	vokët *գոլ ջուր*

Կելտական ընտանիքից վեց կամ գալլերեն լեզուն անորոշ հոդ չունի. բայց ունի որոշյալ հոդ, որ ներկայանում է yr, 'r և y ձևերով. ամբողջական ձևն է yr, որ գործածվում է ձայնավորից կամ h-ից առաջ. ինչ. yr aton «գետը», yr haul «արևը»։ Սրա ծագումը հայտնի չէ. կարծվում է, թե ցուցականից է՝ ներգոյական հոլովի r վերջավորության համար, ինչպես անգլ. here, there (Jones, M., էջ 192, 194)։

Հետաքրքրական է որոշիչ հոդի գործածությունը գերմանական ընտանիքի հնագույն անդամի՝ հյուս. լեզվի մեջ։ Այստեղ enn «այն» բառը գործածվում է իբրև որոշիչ հոդ՝ երկու ձևով. ածականից առաջ դրվում է իբրև առանձին բառ, իսկ գոյականից հետո իբրև վերջահաղ. օր. enn góðe «բարին», hane-nn «աքլորը», tunga-n «լեզուն», augo-n «աչքերը», ulfar-ner «գայլերը», myss-nar «մկները» (Noreen, էջ 151), իբրև հյ. ն հոդի հետ ցեղակից՝ ճիշտ է. իսկ -նր հոդնակի մասնիկի հետ պատահական նմանություն ունի։

Նորվեգերենում որոշիչ հոդը մի ձև ունի, երբ գոյականը առանձին է, և տարբեր ձև ունի, երբ գոյականի հետ նաև ածական կա։ Առաջին դեպքում գոյականի վերջից ավելացնում են -en հատարակ սեռի համար (ար. և իգ.) և -et չեզոք սեռի համար. օր.

hus *տուն*,	huset *տունը*
far *հայր*,	faren *հայրն*
mor *մայր*,	moren *մայրն*
bror *եղբայր*,	broren *եղբարն*

իսկ հոգնակիում բոլոր սեռերի համար որոշիչ հոդն է ne, ene, e, er. օր.

hus *տուն*, husene, huse
bld *տերև*, bladene, blade
navn *անուն*, navne, navnene

Երկրորդ դեպքում, այսինքն՝ երբ գոյականը ածական ունի, որոշիչ հոդն է den *հասարակ սեռի համար (ար. և իգ.),* det *չեզոք սեռի համար և* de *հոգնակիի համար. օր.*

den gode vin *լավ գինին*
det store skib *մեծ նավը*
de pene vaerelser *գեղեցիկ սենյակները*

Այժմ այս երկու ձևերը սկսել են խառնվել իրար. օր.

halve dagen *կես օրը (ածական կա, բայց հոդն է* en!)
den varke damen (*ուր դրված է թե՛* den, *և թե՛ միաժամանակ* en)*:*

Իսկ անորոշ հոդն է en *հասարակ սեռի համար (ար. և իգ.),* et *չեզոք սեռի համար. օր.*

en fugel *մի թռչուն*
et hus *տուն*

Որոշիչ հոդ առեղծել է նաև հին պրուսերենը, որ դերմաններենի ազդեցության տակ stas «այն, նա» *դերանունը դարձրել է հոդ:*

Հնդեվրոպական լեզվախմբի մեջ հոդի կողմից ամենապահպանողականն են արխականը և սլավոնականը: Ինչպես ասացինք, արխական լեզուները մինչև այսօր որոշյալ հոդ չունեն. բայց պարսկերենը, քրդերենը, ինչպես նաև հինդուստանին ունեն անորոշ հոդ: Հին սլավոներենը բնավ հոդ չուներ և այսօր էլ բոլոր սլավոնական լեզուները շարունակում են այդ վիճակը՝ թե՛ որոշյալ, և թե՛ անորոշ հոդի համար: Սերբերենը գիտե գործածել jedan «մեկ» *բառը իբրև անորոշ հոդ, իսկ որոշյալ հոդ չունի:*

Միայն բուլղարերենն է, որ առեղծել է որոշիչ հոդը՝ հետևյալ ձևով: Հին սլավոներենում ցուցականը կանոնավոր կերպով դրվում էր գոյականից հետո և գործածվում էր իբրև վերջնահար. ինչ. rabŭ-tŭ «այս ծառանը», dĭnĭ-sĭ «այս օրը» *և այլն: Ցուցականի վերջնահար այս գործածությունը օգտագործելով՝ բուլղարերենը կազմեց իր հոդը* (Meillet, BSL № 94, *էջ 60) և*

այսօր բուլղարերենում գտնում ենք որոշիչ հոդը երկու թվով և երեք սեռով. եզ. ար. -mъ, իգ. -ma, չ. -mo, հգ. ար. իգ.-mѣ, չ. -ma, իսկ անորոշի համար ար. единъ, *իգ.* една, *չ.* едно, *որոնք բոլորը նշ. «մի, մեկ»* (Щепкинъ, *էջ 37—38): Բարբառներում կա մինչև իսկ* съ *որոշիչ հոդը, որ անշուշտ* ca, co *ցուցականից է առաջացած* (Лавров, *էջ 46):*

Մինչև այժմ մեջ բերված օրինակներից տեսանք, որ լեզուները, ինչ լեզվախմբի էլ պատկանեն նրանք, ունենում են 2 կամ 3 տեսակ հոդ (անորոշ, որոշիչ, մասնական): Բայց կան լեզուներ, որոնք ունեն բազմատեսակ հոդեր և կամ մի տեսակ հոդից ունեն զանազան տեսակներ:

Այսպես, օրինակի համար՝ աննամերեն լեզուն ունի երկու տեսակ որոշիչ հոդ. kon *և* kai. *սրանցից առաջինը գործ է ածվում շնչավորների համար, երկրորդը անշունչ առարկաների համար:*

Հինդուստանի լեզվի մեջ կա երեք տեսակ անորոշ հոդ. koī, kučh *և* ek. *առաջինը* (koī) *գործածվում է թե՛ անշունչ, և թե՛ շնչավոր առարկաների համար. երկրորդը* (kučh) *միայն անշունչ առարկաների համար, իսկ երրորդը* (ek), *որ ծագում է «մեկ» թվականից, ընդհանուր է բոլոր բառերի համար:*

Շվեդերենում որոշյալ հոդը երկու է. 1) գոյական որոշյալ հոդ, որ դրվում է գոյականի ծայրին և՝

եզակի ար. իգ. ռեալ en, n
եզակի չեզոք et, t
հոգ. ար. իգ. ռեալ na
» » *չեզոք* na, a, en
օր. fru-n «*կինը*», jord-en «*հողն*»
hus-et «*տունը*», hus-en «*տները*» *և այլն:*

Այս հոդը առաջացել է «նա» իմաստով հնչյուս. hinn, hin, hitt *դերանունից:*

2) Ածական որոշյալ հոդ, որ կցվում է ածական ունեցող գոյականին. ինչ.

եզ. ար. իգ. ռեալ. den
չեզ. det
հգ. չորս սեռի համար de

Ինչ. den goda frun *լավ կինը*
det stora huset *մեծ տունը*
de goda fruarna *լավ կանայքը:*

Այս հոդը առաջացել է den, det *ցուցական դերանունից:*

Կան շատ բառեր, որոնք գոյականի հոդ չեն ստանում և շվեդերենի քերականության մեջ կա մի բավական ընդարձակ բաժին՝ այդ բառերը սովորեցնելու համար: Կան բառեր էլ, որ ոչ մի հոդ չեն ստանում:

Բայց հոդի կողմից ամենամեծ ճոխությունը ներկայացնում են ավստրոնեզյան և ամերիկյան լեզուները:

Ֆիջի կղզու լեզվով որոշյալ հոդը տարբեր է հասարակ անուններն և հատուկ անուններն համար. բացի սրանից՝ բառի յուրաքանչյուր հոլովի համար դրվում է տարբեր հոդ: Հասարակ անունների ուղղականի հոդն է na.

Մալայո-Պոլինեզյան բոնտոկ-իգորոտ լեզուն գիտե չորս որոշյալ հոդ, որոնք են nan, san, si, ča, *որոնք բոլորը դրվում են բառի սկզբում. nan և san ընդհանուր են, այսինքն դրվում են ամեն տեսակ բառերի վրա. ինչ.*

nan lalaki *մարդը*
nan āfong *տունը*

is nan Manila *Մանիլա (քաղաք)ում.* si *դրվում է անձնանունների և անձ ցույց տվող բառերի հետ. օր.*

si āma «*հայրը*», si ina «*մայրը*»
si Sūyo, si Angay (*անուններ են*).

իսկ ča *դրվում է, երբ մի քանի գոյականներ հաջորդում են իրար հետևից և կապված են «և» շաղկապով (կոչվում է հավաքական անձնական հոդ). օր.* ča āma ken (*և*) ina «*հայրն ու մայրը*», ča Sūyo ken Angay «*Սույան և Անգայը*»:

*Այս բոլոր հոդերը եզակի են և հոգնակի հոդ չկա (*Seidenadel, *էջ 11—14):*

Ինդոնեզյան լեզուների մեջ կա 7 տեսակ հոդ. անձնական, ազգակցական, որոշիչ, անորոշ, մասնական, հավաքական և մի տեսակ հոդ, որ ծառայում է իբր հոդակապ՝ ածականի և գոյականի միջև: Անձնական հոդերի մեջ կա նաև պատվավոր և սո-

վորական հոդերի զանազանություն. օրինակ՝ մանգաչերենի մեջ ra *հոդը թագավորների և աստվածների համար է գործածվում. ինչ.* ra Dama «*Նորին Մեծություն Դամա թագավորը*». *բայց ծաղրաբար ասվում է նաև շատ հասարակ բառերի համար, օր.* ra vwalau «*նորին մեծություն մուկը*» *և այլն:*

Ամերիկյան սիուան լեզուն նշանավոր է իր բազմատեսակ հոդերով (բոլորն էլ հետադաս). այսպես ունենք՝

k'e	հորիզոնական առարկաների համար	անկենդան ձևեր
t'e	կանգուն » »	
ðaⁿ	կլոր » »	
ge	ցրված » »	
ak'a	եզ. կենդանի էակ հանգիստ դրության մեջ	իբր ենթակա
ama	» » » շարժման դրության մեջ	
t'a'ⁿ	եզ. կենդանի էակ կանգուն դրության մեջ	իբր հայցական սեռի խնդիր
ðiⁿ	» » » շարժման » »	
ma	հգ. » » » » »	
ðiñ'ke	եզ. » » նստած » »	
ðañk'a	հգ. » » » » »	
wiⁿ	անորոշ » »	

Կան լեզվաբաններ, որոնք ընդունում են, թե դասանշավոր լեզուների մեջ դասանիշները հետզհետե մաշվելով և իրենց հին դերը կորցնելով վերածվում են որոշիչ հոդի: Նախորդ ամերիկյան լեզվի հոդերը կարող են այս կարգին պատկանել: Լաոսերենի մեջ էլ, որ սիամերեն լեզվի մի տեսակն է, դասանիշները գործածվում են իբրև իսկական հոդ՝ դրվելով գոյականների սկիզբը. օր.

phū sāy vao nam phū ñin
ադամարդիկ խոսում են կանանց (հետ)

Սրանց հակառակ, դանիերեն լեզվի մեջ թե՛ որոշիչ, և թե՛ անորոշ հոդը միևնույն ձևն ունեն տարօրինակ կերպով (ար.-իգ. en, *չեզոք* et). *սրանք տարբերվում են իրարից՝ դրվելով մեկը՝ գոյականին նախադաս, մյուսը՝ հետադաս. օր.*

en mand *մի մարդ,* manden *մարդը*
et hus *մի տուն,* huset *տունը*

Բայց այս երկուսը թեև ձևով նույն, ծագմամբ բոլորովին տարբեր են. որոշյալ en, et ծագում են «այն, նա» նշանակող մի բառից (համմա. հին. hinn, hin, hitt «այն, նա»), իսկ անորոշ en ցեղակից է գերմ. ein «մեկ» բառին։

Հոդի դիրքի (տեղի) վերաբերմամբ լեզուները ցույց են տալիս բոլոր դեպքերը. կան լեզուներ, որ հոդերը նախադաս են դնում գոյականին, ուրիշները հետադաս, կան էլ, որ որոշիչ և անորոշ հոդերից մեկը նախադաս են անում, մյուսը՝ հետադաս։ Այսպես՝ հոդը նախադաս է հունարեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, անգլերեն, բրետոներեն և այլ լեզուներում։ Հետադաս է, հայերենի պես, ռումիներեն, բուլղարերեն, ալբաներեն, բասկերեն և այլ լեզուներում. օր. ռում. leu «առիւծ», leul «առիւծը», om «մարդ», omul «մարդը», rege «թագուհի», regele «թագուհին». բասկ. liburu «գիրք», liburua «գիրքը»։

Երկու դիրքի վրա են օր. արաբերենը (որ որոշյալ հոդը դնում է բառասկիզբը, իսկ անորոշը դնում է բառավերջում), դանիերենը (նախորդի ճիշտ հակառակը)։

Եթովպական գալլա լեզուն որոշիչ հոդը դնում է գոյականի վերջում. հոդերն են ար. ni, čin, či, čiči, tiči և իգ. tin, ti. օր. nama «մարդ» բառից՝ namni, namiči, namtiči, namičiči «մարդը» (Hodson, էջ 15)։

Մինչև անգամ լեզու կա, որ հոդը դնում է միաժամանակ գոյականից առաջ և հետո. այսպես՝ սիբեթական սիկկիմ-բհուտիա լեզվում որոշիչ հոդը՝ di (պատահաբար նման գերմ. die որոշիչ հոդին) դրվում է գոյականի երկու կողմը. ինչ.

di p'ya di թռչունը

իսկ սիբեթերենում անորոշ հոդն է čig, šig, žig, որոնք հայերենի նման դրվում են գոյականից հետո. ինչ. mi žig «մարդ մը»։

Ամերիկյան նահուատլ լեզվումն էլ (Մեքսիկա) որոշիչ հոդը (tl) դրվում է բառի վերջում և ածանցման ժամանակ ջնջվում է. երբեմն էլ կրճատվում է և դառնում lli, li. ինչ. yao-tl «թշնամի», cal-li «տուն», pil-li «տղիկ» (Grasserie, Le nahuatl, էջ 20)։

Ամերիկյան դակոտա լեզվումն էլ հոդը (kin) վերջահար է.

օր. wičašta kin, manka kin
մարդ ը, երկիր ը

սրա զարմանալի կողմն այն է, որ ունի անցյալ ժամանակ, եթե մեկի մասին արդեն խոսված է և երկրորդ անգամ է հիշվում, հոդը դառնում է kon. օր.

wičašta kon «այն մարդը» (որի մասին քիչ առաջ խոսեցի). սրանով հոդը դառնում է իրոք ցուցական։

Աֆրիկյան բարի լեզվում երեք տեսակ որոշիչ հոդ կա, երեքն էլ վերջահար. սրանք են lo ար., na իգ. (այս երկուսը պատահաբար նման ֆրանսերենին ու հայերենին), հգ. ti (երկու սեռի համար). օր. ngutu-na Bari «խափչիկուհին Բարի (ազգի անունը)»։

Հոդի այս դիրքը կամ տեղափոխությունը կապ չունի լեզվի ծագման ու ազգակցության հետ. և այդ երևում է նրանից, որ միևնույն լեզվից առաջ են դալիս երկու ձևերն էլ։ Այսպես՝ լատիներեն միևնույն ille ցուցականից առացվել են մի կողմից իտալ. il, ֆրանս. le, իսպան. el նախադաս հոդերը և մյուս կողմից՝ ռումիներենի ul, le հետադաս հոդերը։ Պատճառն այն է, որ լատիներեն ille դասական ձևով նախադաս էր գոյականից, իսկ ստորին լատիներենում՝ հետադաս։

Սեմական լեզուներից երբայեցերենի և արամերենի մեջ որոշյալ հոդը միևնույն ծագումն ունի. առաջանում է hā ցուցականից, բայց երբայեցերենի մեջ նախադաս է, իսկ արամերենի մեջ հետադաս։ Վերջինիս մեջ հոդը այնպես է միացել բառին, որ նրա անանջատ մասն է համարվել հետո, և այս ձևի տակ անցել հայերենին.— հյ. տղայ, շղթայ, սատանայ, կաթսայ, շուկայ և այլ բառեր, որոնք վերջանում են այ, փոխառյալ են ասորերենից և նրանց մեջ այ վերջավորությունը ասորերենի ā հոդն է։

Նույնիսկ կա լեզու, ուր հոդը մերթ նախադաս է և մերթ հետադաս։ Այսպես՝ հին իռլանդերենի մեջ որոշյալ հոդը in գոյականից նախադաս է և անկախ, բայց նախադրությունների հետ գործածված ժամանակ հետադաս է և իրրև մասնիկ կցվում է նրանց. օր. fo «տակ» նախադրության հետ լինում է fon «տակը» (Pokorny, Altirl. gr., էջ 34)։

Եթե որոշյալ հոդը ծագում է «այն, նա» դերանունից, որովհետև «այն, նա» դերանունը սեռ, թիվ ու հոլով ունի, բնականաբար նրանից ծագած հոդն էլ պիտի ունենա սեռ, թիվ ու հոլով՝ այն լեզուների մեջ, որոնք սեռ, թիվ ու հոլով դիտակցում են։ Այսպես են հունարենը, գերմաներենը, ֆրանսերենը և այլն։

Ահա հին հունարենի որոշյալ հոդի հոլովումը իր բոլոր սեռերով.

Հին հունարենի հոդերը

	ար.	իգ.	չեզ.
Ո.	ὁ	ἡ	τό
Ս.	τοῦ	τῆς	τοῦ
Տ.	τῷ	τῇ	τῷ
Հ.	τον	τήν	τό

Հոգնակի

Ո.	οἱ	αἱ	τα
Ս.	των	τῶν	τῶν
Տ.	τοῖς	ταῖς	τοῖς
Հ.	τους	τάς	τα

Երկակի

Ո. Հ.	τώ	երեք սեռ
Ս. Տ.	τοῖν	

Ահա նաև գերմաներենի հոդի հոլովումը.

	ար.	իգ.	չ.	հգն.	
Ո.	der	die	das	die	երեք սեռերի համար
Ս.	des	der	des	der	
Տ.	dem	der	den	den	
Հ.	den	die	das	die	

Այն լեզուների մեջ, ուր հոլովումը առանձին նախամասնիկներով կամ նախդիրներով է կազմվում, հոդը հաճախ միանում է նրանց հետ և կազմում նոր խառնուրդներ օր.

Իտալ.	Ս.	di il>del	Տ.	a il>al	Բց.	da il>dal
		di lo>dello		a lo>allo		da lo>dallo
		di le>della		a le>alle		da le>dalle
Ֆրանս.	Ս.	de le>du	Տ.	à le>au		
		de les>des		à les>aux		

Պորտ. de o>do (եզ. սեռ. ար.), de a>da (եզ. սեռ. իգ.) de os>dos (հգ. սեռ.).

Մինչև անգամ այլ նախդիրները կարող են միանալ հոդերի հետ այս ձևով. օր.

Իտալ.	in	il>nel,	in i>nei,	in la>nella
	con	il>col,	con i>coi,	con la>colla
	su	il>sul,	su i>sui,	su la>sulla

Պորտուգալերենում հոդերը մինչև իսկ միանալով իրենցից առաջ դնված անձնական դերանուններին՝ կազմում են բազմատեսակ նորանոր խառնուրդներ. ինչ. me o>mo, me os>mos, me as>mas, lhe o>lho, lhe as>lhas և այլն, և այլն։

Այս երևույթը երբեմն այնքան առաջ է գնում, որ հոդերը եզակիում և հոգնակիում բոլորովին տարբերվում են իրարից. այսպես է, օրինակ, պոլինեզյան լեզուների մեջ։ Ինչպես և՝ սեռառաման լեզվով.

ար.

Ո. Հ.	ilg	la
Ս.	dilg	da la
Տ.	a lgi	a la
Բ.	davart (կամ dad) ilg d'ilg, da	davart la da la

հգ.

Ո. Հ.	ils, ilgs	las
Ս.	dils	da las
Տ.	als, ad als	a las
Բ.	davart (dat) ils d'als	davart da las

Հարց է, թե լեզուների մեջ ո՞ր հոդն է ավելի առաջ ակառում, որոշյալ, թե անորոշ։ Բայց երևի թե անորոշ հոդը ավելի հին է, որովհետև նա ծագում է «մի» թվականից, որ լեզվի մեջ միշտ էլ պատրաստ գոյություն է ունեցել։ Որոշիչ հոդն է, որ ժամանակի ընթացքում պիտի առեղծվի այս կամ այն ձևից։

Այսպես, օր.՝ հնդկական մարաթի լեզուն, որ սանսկրիտի զավակն է, արդեն ունի «մի» անորոշ հոդը, բայց դեռ որոշիչ հոդ չունի։

Բայց այս բոլորը կախված է լեզվի միացուցիչ թե վերլուծող հատկությունից։ Ըստ այսմ, թեև գերմաներենում հոդերը ունեն իրենց բոլոր հոլովական ձևերը, ընդհակառակը, դանիերենում և անգլերենում, որոնք պատկանում են նույն գերմանական ընտանիքին, հոդը անհոլով է, չկան միացուիներ հոդի և հոլովական նախդիրների միջև, և երկուսը առանձին են ՚ետում։

Ահա օրինակ անգլերենի որոշյալ հոդի պատկերը.

Ուղ.	the	բոլոր սեռերի ու թվերի համար
Սեռ.	of the	
Տր.	to the	
Բց.	from the	
Գործ.	with the	

Բայց նույնիսկ այնպիսի լեզուների մեջ, ուր սեռ և հոլով կան, կարող է հոդը հանդես անսեռ և անհոլով դրութեան. այսպես է օրինակ արաբերենում, ուր al հոդը հատուկ է թե արականին, և թե իգականին, թե եզակիի, թե երկակիի, և թե հոգնակիի բոլոր հոլովներին։ Բնտոն լեզվի մեջ թեև սեռ կա (ար. և իգ.), բայց որոշիչ հոդը (en, er, el), ինչպես նաև անորոշ հոդը (un, ur, ul) միևնույն է թե արականի, թե իգականի, թե եզակիի և թե հոգնակիի համար (Guillome, Gram. fr.-bret. էջ 17) և զանազանվում են միայն հաջորդ բառի նախաձայնի համեմատ։ Նմանապես եբրայեցերենի որոշիչ հոդը հատուկ է թե արականին, և թե իգականին և այլն։

Ինչ որ ասացինք որոշյալ հոդի համար, նույնը պետք է հասկանալ նաև անորոշ հոդի համար, որովհետև այս էլ ծագում է ընդհանրապես «մի» թվականից, որ զանազան լեզուների մեջ ունենում է սեռ. թիվ և հոլով։ Այստեղ էլ ունենք մի կողմից փոփոխյալ ու հոլովյալ, մյուս կողմից անփոփոխ և անհոլով ձևվեր։ Այսպես՝ փոփոխյալ ձևով է գերմաներենում, իսկ անփոփոխ ձևով՝ անգլերենում։

Այն լեզուների մեջ, ուր ընդունված է վերջահոլով դրութիյունը, եթե հոդը վերջահար է (որոշյալ կամ անորոշ), բնականաբար պիտի գանվի կամ հոլովական նշանից առաջ կամ հետո։ Այսպես՝ հայերենի մեջ արևմտահայ գրականով ասում ենք հացը, հացին, հացեն, հացերը, հացիրեն և այլն. կամ նույնիսկ

հաց մը, հացի մը, հացե մը և այլն։ Այս բոլորի մեջ հոդը (որոշյալ թե անորոշ) հոլովական վերջավորութիյուններից հետո է դրված։ Այսպես է նաև արաբերենը. օր. ՚abd «ծառա», ՚abdu-n «մի ծառա», սեռ. ՚abd-i-n «մի ծառայի», ՚abd-a-n «ծառա մի» և այլն (սրանց մեջ n անորոշ հոդն է, իսկ u, i, a ուղղականի, սեռականի և հայցականի հոլովական նշանները)։ Այս բոլորը պատահաբար նման են ֆրիզերեն անորոշ ար. ān, իգ. և չՀզ. en հոդերին, որոնք հավասարապես հնչվում են ՚n.

Սրան հակառակ դանիերենում հոլովական նշանները հոդից հետո են դրվում. օր. mand «մարդ» բառից manden «մարդը», mandens «մարդուն» (սեռ.), mandene «մարդերը»։

Վերջացնելու համար այս բաժինը պիտի խոսենք հոդի մի տարօրինակ սեռակի մասին, որ գտնում ենք ամերիկյան կոռս լեզվի մեջ։

Այս լեզվի մեջ հոդ է կոչվում lə կամ hə մասնիկը, որ գործ է ածվում թե որոշյալ, և թե՛ անորոշ առարկաների համար։ Երբեմն նա գործ է ածվում իբրև եզ. գ դեմքի անձնական դերանուն (նա)։ Դրվելով մակբայից, ածականից և այլն առաջ՝ վերածում է նրանք գոյականի։ Դրվելով անձնական դերանվան եզ. գ դեմքի վրա, զորացնում է նրա իմաստը. այսպես նաև ցուցական դերանվան վրա (Boas, հտ. 2, էջ 319),

Եթե մի կողմից նոր լեզուները որոշիչ հոդ են ստեղծում, մյուս կողմից էլ ոմանք ջնջում են. այսպես՝ ըստ Սերդիեվսկու (էջ 68), ռուսական ցիգաննների լեզվով որոշիչ հոդն է ար. o, իգ. e, այժմ արգեն երկուսի միացումով դրվում է առանց սեռի խտրութիյան, միշտ e. բայց Մոսկվայի շրջանի ցիգաննները չեն գործածում հոդը, որից երևում է, որ հոդը վերանում է (թերևս ռուսերենի ազդեցութիյամբ)։

2. ՀՈԴԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գրաբարի մեջ անորոշը արտահայտելու համար առհորաբար գոյականի վրա ոչ մի նշան չի դրվել. օր. Մանուկ ծնաւ, աշխ. «մի երեխա ծնվեց»։ Այսպես է նաև բոլոր հոդ չունեցող լեզուների մեջ։ Բայց նույնիսկ հոդ ունեցող լեզուների մեջ կարելի է գտնել նույն ձևը. այսպես է շվեդերենում՝ հակառակ ուրիշ եվրոպական լեզուների, որոնց մեջ անորոշ հոդն է «մի»։ Համմա.

ֆր.	j'ai	reçu	une	lettre
գերմ.	ich	habe	einen	Brief erhalten,
շվեդ.	jag	har	fått	brev

«ես առացա նամակ»։

Ըստ այմ գրաբար ասում ենք՝

Տախտակ չորեքկուսի՝ բզաւ յերկայնութիւն և բզաւ ի լայնութիւն.

Պատառոյ հացի.

Եկն այր ի լեռնէն Եփրեմի.

Եմուտ մարգարէ առ Դաւիթ.

Եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրեի. այս բոլորի մեջ առորագծյալ բառերը անորոշ են առանց որևէ նշանի և պետք է հասկանալ իբր «բզաւ միով, պատառոյ միոյ, այր մի, մարգարէ մի, Հրեի միում»։

Գրաբարի մեջ բուն անորոշ հոդերն են ոմն, ոք, իմն, ինչ, մի. առաջին երկուսը գործ են ածվում անձ ցույց տվող բառերի հետ, երրորդն ու չորրորդը իր ցույց տվող բառերի հետ, իսկ վերջինը ընդհանուր է երկուսին էլ. բոլորն էլ գոյականից հետագաս են գործածվում։ Օր. այր ոմն *կամ* այր ոք, բան իմն *կամ* բան ինչ. այր մի, բան մի։

Սրանց հոլովումը տես անորոշ ածականների մեջ։

Ծան.— Արդեն ասել ենք, որ անորոշ հոդերը առաջանում են կամ «մի» թվականից և կամ անորոշ ածականներից։ «Մի» թվականի համար տեսանք վերը բազմաթիվ օրինակներ. այսպես արաբ. waḥd, *բերբեր.* yā, *պհլ.* ē, *հինգուտա.* ek, *դան.* en *անորոշ հոդերը, որոնք ծագում են «մի» բառից։ Ավելացնենք սրանց վրա արխազ.* akə՛ *«մեկ», որ դարձել է հետո անորոշ հոդ. ինչ* abə՛k *«մի հայր»։*

Շվեդ. en *և* ett, *որոնք երկուսն էլ նշանակում են «մեկ» և տոնը կորցնելով դարձել են անորոշ հոդ. դարձյալ՝ ֆրանս.* un, une, *իտալ.* un, *գերմ.* ein, *որոնք բոլորը «մի» թվականից դարձել են անորոշ հոդ. այսպես նաև կելտական, նոր հունարեն և բոլոր սամանական լեզուներում։*

Անորոշ ածականը իբր հոդ գործածելու օրինակ են ֆրանս. certain *«որոշ, ինչ որ», իտալ.* alcuno, certo, ogni *և նմաններ. այսպես նաև հայերեն* ոմն, ոք, իմն, ինչ *և արևելյան աշխարհաբարում հաճախ՝ ինչ որ, որոշ բառերը։ Բայց այս կարգի բառերը ընդհանրապես իրենց ինքնուրույնից չեն զրկված և այնպես չեն մաշված, ինչպես «մի» բառը, որ գերազանցապես պարունակում է իր մեջ անորոշության գաղափարը և ամեն տեղ էլ վերածվել է անորոշ հոդի։ Միայն արաբական լեզվի մեջ է, որ «ինչ, մի բան» (šey, mā) նշանակող բառերը կրճատվելով դարձել են անորոշ հոդ. այսպես, Մարոկկոյի արաբերենում* ši *հոդը, բերբեր լեզվի մեջ* kra *«բան»* (BSL, *հտ. 36, № 107, էջ 136*), *սաբեական վերջահար* m, *որ և գարձել է արաբ. վերջահար* n *անորոշ հոդը։*

Հայերեն ոմն, ոք, իմն, ինչ *գանվում են երկու դրության մեջ. ոչ այնքան կրճատ՝ ինչպես արաբերենում, և ոչ այնքան ինքնուրույն՝ ինչպես վերի եվրոպական ձևերը։*

Որոշյալ հոդը գրաբարում ամենևին նման չէ ոչ հունարենի, ոչ եվրոպական լեզուների, և ոչ էլ աշխարհաբարի հոդին։ Այս բոլորի մեջ էլ որոշյալ հոդը միայն մի կողմ ունի, այն է՝ թե արդյոք առարկան արդեն հիշված կամ ծանոթ է։ Իսկ գրաբարի մեջ՝ նշանակում է, թե հիշված և ծանոթ առարկան երեք դեմքերից որի՞ հետ անմիջական կապակցության մեջ է։ Սրա համար է, որ մինչդեռ մյուս լեզուների մեջ որոշյալ հոդը միայն մի հատ է, գրաբարի մեջ՝ երեք անձնական դերանունների կամ երեք ցուցականների համաձայն, երեք է թվով։

Այս հոդերն են ս, դ, ն, որոնք համապատասխանում են hս, դու, նա, *կամ* այս, այդ, նույն *դերանուններին և կոչվում են դիմորոշ հոդ։ Օր. հայրս, հայրդ, հայրն, շղթայս, շղթայդ, շղթայն, գինիս, գինիդ, գինին։*

Ս ցույց է տալիս, թե բառը կապ ունի առաջին դեմքի կամ խոսող անձի հետ. դ ցույց է տալիս, որ բառը կապ ունի երկրորդ դեմքի կամ լսողի հետ, իսկ ն ցույց է տալիս, թե բառը կապ ունի երրորդ դեմքի կամ բացակա անձի հետ։

Ահա մի քանի օրինակ երեք դիմորոշ հոդերի գործածությունը լուսաբանելու համար։

«Էր ամբոխ յոյժ ի տեղւոջն. և ասեն ցՅիսուս. Տեսանե՞ս զի ամբոխք նեղէ զքեզ. եւ էլ ամբոխն ի բաց»։

(Առաջին ամբոխ բառը անորոշ է, որովհետև դեռ հայտնի չէ, թե խոսքը ո՛ր ամբոխի մասին է. տեղւոջն ունի երրորդ դեմքի դիմորոշ հոդը (ն), որովհետև այն տեղը խոսողից և խոսակցից հեռու էր. ամբոխք ունի երկրորդ դեմքի դիմորոշ հոդը

(դ), որովհետև խոսողները ուզում են նրանով հայտնել, թե իրենց խոսած միջոցին ամբոխը գտնվում էր խոսակցի մոտ. վերջին ամբոխն ունի երրորդ դեմքի դիմորոշ հոդը (ն), որովհետև պատմության միջոցին ամբոխը պատմողից ու լսողից տեղով ու ժամանակով հեռու էր)։

Եթե ուզենայինք հշտությամբ թարգմանել նույն հատվածը աշխարհաբարի, պիտի ասինք. «Այնտեղ մի մեծ ամբոխ կար. ասացին Հիսուսին. Տեսնում ես, որ այդ մոտդ եղած ամբոխը նեղում է քեզ. և ամբոխը հեռացավ»։

Բայց մեր սովորական աշխարհաբարի մեջ մենք այսպիսի նրբություններ ի նկատի չենք ունենում, և պարզապես ասում ենք. «Այնտեղ մի մեծ ամբոխ կար. ասացին Յիսուսին. Տեսնում ես, որ ամբոխը նեղում է քեզ. և ամբոխը հեռացավ»։

Այսպիսով ամբոխդ և ամբոխն հավասարապես դարձան ամբոխը, և գրաբարի դիմորոշ հոդերը, նրանց հետ նաև իմաստի և առարկայի դիրքի նրբությունները, վերացան։

«Դուրքդ փակեալ են և մանկունքս ընդ ինև կան յանկողնի. մի աշխատ առներ դիս» (Սկեր., էջ 159)։

(Մի մարդ կես գիշերին գնացել է իր ծանոթի մոտ, դուռն է թակում և հայց է փոխ ուզում։ Ծանոթը չի ուզում վեր կենալ, պատճառաբանելով, թե դուռը փակ է, երախաներն էլ իրենից ցած՝ անկողնում քնած են։ Դուրքդ ունի դ դիմորոշ հոդը, որովհետև, թեև դուռը իրենն է, բայց այն միջոցին, երբ նա խոսում է, տախտի վրա պառկած, դուռը գտնվում է իրանից հեռու և շատ ավելի մոտ է այն մարդուն, որ դռան առաջ կանգնած խոսում է։ Բայց մանկունքս ունի ս դիմորոշ հոդը, ոչ թե որովհետև մանուկները իրենն են, այլ որովհետև իրա մոտ՝ տախտի տակ պառկել են։ Հոդ չունի միայն յանկողնի, որ և անորոշ է)։

Ս, դ, ն դիմորոշ հոդերը, ինչպես ասացինք, կապ ունեն գործող անձերի հետ. բայց բնավ չեն պատկանում նրանց. ուրիշ խոսքով առացական հոդ չեն, ինչպես է աշխարհաբարի մեջ, Աշխ. հացս, հացդ, հացը նշանակում են «իմ հացը, քո հացը, նրա հացը», իսկ գրաբարում այդպիսի նշանակություն չունեն։ Վերի օրինակների մեջ էլ ամբոխդ չի նշանակում «քո ամբոխը», դուրքդ չի նշանակում «քո դռները» և վերջապես մանկունքս, հակառակ երևույթին, չի նշանակում «իմ երեխաները»։ Նույնիսկ եթե այն բնագրերների մեջ, որոնցից թարգմանված են այս և ուրիշ հատվածները, հիշյալ բառերը ունեն առացական կամ

որոշիչ հոդ, հայերենը գարձյալ պետք է առնել դիմորոշ, որովհետև, նախ՝ հին հայերենը առացական հոդ չունի ընդհանրապես, երկրորդ՝ նա չի կարող ըմբռնել առարկան առանց գործող անձերի կապակցության կամ առանց նրանց դիրքը որոշելու։

Ավելացնենք նաև այն, որ հայ թարգմանիչները բնագրերում ընդհանրապես միայն որոշիչ հոդ են գտել և համաձայն իմաստին և հայերեն լեզվի ոգուն կամ թողել են առանց հոդի (անորոշ կամ ընդհանուր) և կամ ավելացրել են դիմորոշ հոդերը, որ չկան բնագրում։ Այսպես, օր.՝ Ղուկ. թ. 22 հուն բնագիրը որոշյալ հոդերով է, իսկ հայ թարգմանությունը ոչ մի հոդ չունի. «Եւ ասէ թէ Պարտ է Որդւոյ մարդոյ բազում չարչարել և անարգել ի քահանայապետից և ի ծերոց և ի դպրաց, և սպանանել և յերիր աւուր յառնել»։

Սրանից երևում է, որ հայերենի հոդը նման չէ բնավ հունարենի և արդի եվրոպական լեզուների որոշիչ հոդին (Meillet, MSL, 10, էջ 264)։

Գրաբարի մեծ առավելություններից է այն, որ մի միակ վերջածար ձայնով ոչ միայն անորոշը դարձնում է որոշյալ, այլև միաժամանակ որոշում է նրա դեմքը, դիրքն ու ժամանակը (Զալիս. 294)։ Դիմորոշ հոդերի ճիշտ կիրառությամբ է, որ երևան է գալիս հայերենի նախադասության հատակությունը. և այն հեղինակներն ու թարգմանիչները, որոնք կիրառում են այդ հոդերը մշտապես և ճիշտ գործածությամբ, տալիս են դրանով իրենց ոճին կյանք և հրապուրիչ արտահայտություն։ Այս կետում ուրիշ ոչ մի հնդեվրոպական լեզու չի հասնում հայերենին. դիմորոշ հոդերը այսպիսով կարծես փոխարինում են այն կորուստները, որ կրել է լեզուն այլ կետերում (Meillet, անդ, էջ 271)։

Երբ հատկացուցիչ և հատկացյալ դրված են կողք կողքի, գրաբարում հոդը դրվում է հատկացուցիչի վրա (մինչդեռ աշխարհաբարում դրվում է հատկացյալի վրա)։

Նա եւ որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի. եզն.։

Գոյն բղբոյն և ոչ թե գոյնն բղբոյ=աշխ. բղբի գույնը։

Եթե հատկացուցիչը հատուկ անուն է, հոդը գրվում է հատկացյալի վրա։

Տացէ նմա տէր Աստուած զաթոռն Դաւթի. Ղկ. Ա 32։

Դու ես թագաւորն Հրէից. Ղկ. ԻԳ. 3։

Երբ գոյական և ածական կազմում են մի խումբ, հոդը դրվում է գոյականի վրա (նախադաս թե հետադաս). օր.

յաւուրն ութերորդի. Ղկ. Ա, 59. պայթուցանէ գինին նոր զտիկսն ինես. Ղկ. Ե. 37.

Լցան երկոքին նաւքն.

Եթե... ոչ լուիցեն ձայնի առաջնոյ նշանին, հաւատասցեն քեզ ձայնի երկրորդի նշանիդ. Ելք. Դ. 8.

յանցաւոր և ի մանկանացու բազաւորէն. *Եղիշե։*

Երբ ուզում ենք ուշադրութիւնը հրավիրել ածականի վրա, հոդը դնում ենք նրա վրա. օր.

Եւ լուեալ տասանցն, բարկացան ի վերայ երկուցն եղբարցն. Մտթ. Ի 24։

Այս է մեծն և առաջին պատուիրան. Մտթ. իր. 37 (հոդը դրվել է կրկին ածականներից առաջինի վրա)։

Մի ածականից, մի գոյականից և մի սեռականից բաղկացած խմբի մեջ հոդը դրվում է ըստ սովորականի՝ հատկացուցչի վրա. օր.

Զանօրէն հրամանն բազաւորին. Եղիշե։

Եթե հատկացուցիչը ունենա մի քանի հատկացյալ, հոդը դրվում է նախ հատկացուցչի վրա և հետո կրկնվում է երկրորդ, երրորդ... հատկացյալների վրա. օր.

Պարտի պղտորութիւն աչացն, զաղտն և զբիծն ի բաց պարզել. Եզն. 6։

Վերի օրինակներից մի քանիսի մեջ տեսանք, որ հոդը երբեմն դրվում է ածականի և երբեմն էլ հատկացուցչի վրա. դժվար է սակայն բացատրել, թե ինչու մերթ այս, և մերթ այն ձևն է գործադրվում (Meillet, MSL, № *10, էջ 263*)։

Հատուկ անունները ընդհանրապես հոդ չեն առանում և այս է սովորական կանոնը գրաբարի, ինչպես և հին ու նոր եվրոպական լեզուների համար։ Զարմանալի է սակայն, որ երբեմն, հակառակ կանոնի, հատուկ անունն էլ է հոդ առանում. այսպես, Հայկ անունը հաճախ լինում է Հայկն. (Հայտնի է, որ աշխարհաբարում հոդն ընդհանուր է արևելյան գրականում բոլոր հատուկ անունների համար, իսկ արևմտյան հայերենում երկու ձևերն էլ կան)։

Եղնիկի Բ գրքի սկիզբը հաջորդաբար կարդում ենք.

Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ և Արիմն յղեցան յարգանդի մօր իւրեանց. Որմիզդն ի յաշտն առնելոյ, Արիմն

ի յերկուանալոյ անտի։ Ապա իմացեալ Զրուանայ... և ծանուցեալ Որմըզդի զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արիմենին. ասէ. Զրուան հայր մեր խորհեցաւ... Եւ գայն լուեալ Արիմենին... Եւ տեսեալ զնա Զրուանայ... Ասէ ցնա Զրուան... ծնեալ Որմըզդի ի ժամու իւրում... եկաց առաջի Զրուանայ։ Եւ տեսեալ զնա Զրուանայ, գիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա է... եւ ցՈրմիզդ և ասէ... Եւ ի տալ Զրուանայ զբարեմաւնան ցՈրմիզդ... մատուցեալ... Արիմենի առաջի Զրուանայ։ Եւ Զրուանն առ ի չքրեալոյ զուխան՝ ասէ ցԱրիմենն... և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ... Որմիզդ թագաւորեսցէ... Սկսան Որմիզդ և Արիմենն... զոր Որմիզդն առնէր՝ բարի էր... Եւ զոր ինչ Արիմենն գործէր՝ չար էր և քիւր։

Այս հատվածի մեջ ինն անգամ գործածված է Զրուան անունը և միայն մի անգամ ունի հոդ. ութ անգամ անորոշ է. իսկ Որմիզդ և Արիմն մերթ որոշ են, մերթ անորոշ։

Ասացինք, որ եթե հատկացուցիչը հատուկ անուն է, հոդ չի առանում և հոդը դրվում է հատկացյալի վրա. Տէր բառը առնելով իբրև հատուկ անուն, հոդ չի առացել հետևյալ օրինակների մեջ.

Երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն... Ղկ. Ա, 11։

Ասէ ցնա հրեշտակն Տեառն, Ղկ, Ա, 11։

Առաջին օրինակի մեջ հատկացյալը հոդ չի առացել, իսկ երկրորդի մեջ ըստ կանոնի առացել է։

Լինում են դեպքեր, երբ հատկացյալը լռելյայն է իմացվում, այն ժամանակ հոդը գործածվում է։

Ընդէր աշակերտքն Յովհաննու պահեն առէպ... նոյնպէս և փարիսեցւոցն և քոյքդ ուտեն և ըմպեն։ Ղկ. Ե, 33։

Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ. Ղկ. Ի. 25։

Բայց կա և առանց հոդի՝

Ծանրացոյց զսիրտ իւր և զծառայից իւրոց. Ելք. Ը. 34։

Մեյեն (MSL, № *10, էջ 265*) գտնում է, որ հոդը գործածվում է երբեմն հակադրություն ցույց տալու համար. օր. Ղկ. Ա. 60, պատասխանի եւ մայր նորա... 62. ակնարկեին հօրն նորա։

Պաշտեցին զարարածս և ոչ զարարիչն. Հռոմ. Ա. 25։

Որոյ հնձանոց ի ձեռին իւրում սրբել զկալ իւր և ժողովել զցորեանն ի շտեմարանս իւր և զյարդն այրեսցէ. Ղկ. Գ. 17։

Գրաբարի մեջ որոշյալը արտահայտելու համար գործ է ածվում նաև նախդիրը, բայց դա հատուկ է միայն հայցակա-

նին, եզակի և հոդնակի. գոյականը կարող է առանձալ դիմորոշ հոդ՝ վերի պայմաններով և այն ժամանակ առարկայի դիրքն էլ որոշված կլինի, և կամ կարող է ձեալ առանց որևէ հոդի, և այն ժամանակ որոշմունքը կատարյալ չի լինի: Օր.

Յօժարեցին վերստին կարգել զպատմութիւն. Ղկ. ա. 1:
Զբաղումս յորդւոցն Իսրայելի դարձուսցէ. 16:
Բանդի զայր ոչ գիտեմ. 34:
Ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց, քակեաց զնզօրս յաթոռոց և բարձրացոյց զխոնարհս. զքաղցեալս լցոյց բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս. 51—54.
Գաին զմանուկն եգեալ ի մսուր. Ղկ. Բ. 16:
Արդ արձակես զծառայս քո (այս). Բ. 29:
Ոչ իմացաւ զրանն զոր խօսեցաւ ընդ նոսա. Բ. 50:
Արկէք յաջակողմն նաւիդ զուռկանդ:

Անորոշ մի հոդը մեծագույն մասամբ վերջնահար է և այդ պատճառով է որոշ բարբառներում կրճատվելով դարձել մը կամ նույնիսկ մ: Արևելյան գրականում, ինչպես և բարբառներում մի նախադաս է. ինչ. մի մարդ եկավ, մի մարդ տեսա:

Գրաբարում էլ կարելի է գտնել նախադաս մի (բայց հազվագյուտ), օր.

Գտեալ մի պատուական մարգարիտ. Մտթ. ԺԳ. 46:

Այս վերջինը ավելի թվականի իմաստ ունի, քան թե անորոշ հոդի, որի համար էլ պետք է կարծել, թե նախադաս է դրված:

Այսպիսով, ուրեմն, մի հոդը և մի թվականը զանազանվում են իրարից տեղով և շեշտով:

Մի անորոշը գործածվում է հատկապես մինչև այն չհիշատակված և դեռ անծանոթ անձ կամ իր նշանակելու համար: Բայց նրա գործածությունը ավելի անհրաժեշտ չէ, քան որոշիչ հոդի գործածությունը, որովհետև բառը առանց մի հոդի գործածության էլ անորոշ է: Դրա համար է, որ կան շատ լեզուներ, որոնք չունեն որոշիչ հոդ, բայց չկա լեզու, որ մի անորոշը չունենա, թեկուզ իրրև անորոշ հոդ գործածելու սովորություն չունենա, ինչպես է, օրինակ, ռուսերենը:

Ահա օրինակներ մի հոդով և առանց մի հոդի գործածության.

Արք բերէին... զայր մի որ էր անդամալոյծ. Ղկ. ե, 18:
Աւուր միոյ ճանապարհ. Ղկ. Բ. 44:

Հանեալ զնա ի լեառն մի բարձր. Ղկ. Դ, 5:
Առ ժամանակ մի. Ղկ. Դ. 13:
Դէպ եղև ի միում աւուրց. Ղկ. ե. 17:
Ի հասանելն նորա ի մի ի քաղաքացն. Ղկ. ե. 12:

Նկատելի է, որ զ թվև որոշիչ, բայց կարող է դրվել նաև անորոշ բառի վրա, երբ հայցական է, և դրա համար է, որ կարելի է նաև նրա վրա ավելացնել մի անորոշը. ինչ.

Հայտնեցեր զլոյս ի տաճարի Տեառն. Ա. եզր. Ը. 80:
Արք բերէին... զայր մի որ էր անդամալոյծ. Ղկ. ե, 18:

Աշխարհաբարի մեջ անորոշ հոդը փոխվեց. ջնջվեց ոմն, ոք, իմն, ինչ ձևերի գործածությունը, և մնացին միայն անհոդ ձևը և մի անորոշը: Այսպիսով վերացան մասնավոր երևույթները (բան որում ոմն, ոք հատուկ էին միայն անձերին, իսկ իմն, ինչ իրերին), և ինչ որ ընդհանուր էր՝ տիրեց բոլորին: Անորոշ հոդի բարդ դրությունը պարզվեց: Աշխարհաբար ասում ենք Մարդ եկավ, մի մարդ է եկել:

Գիտենք, որ անորոշ հոդը շատ լեզուների մեջ առաջանում է «մի» թվականից. սակայն երբեմն այդ թվականը անփոփոխ է մնում, և երբեմն էլ անշեշտ մնալով և գործածությամբ մաշվելով՝ կրճատ ձև է առանում և դառնում է նույնիսկ մասնիկ կամ վերջավորություն: Առաջին դեպքում «մի» թվականը և անորոշ հոդը նույն են մնում, երկրորդ դեպքում զանազանվում են: Այսպես՝ ֆրն., գերմ., իտալ. լեզուների մեջ երկուսն էլ միևնույն ձևն ունեն (un, ein, un), իսկ այլ լեզուներում տարբեր են: Այսպես՝ քրդ. yak «մեկ» թվական է, բայց իբր հոդ՝ կրճատվելով դարձել է ak, ek, ik և գործածվում է հետադաս. ինչ. merov-ek «մի մարդ», runik «մի ապվոս», asp-ek «մի ձի» (Justi, Kurd. gram., էջ 111): Դանիերեն een «մի» թվական է, իսկ կրճատ en հոդ է. ինչ. en mand «մի մարդ»: Հպրս. aiva «մեկ» թվական է, իսկ պրս. ē և պրս. ī անորոշ հոդ են: Ավելի հետաքրքրական է անգլերենը, ուր one «մի» թվական է, որ սակայն իբր անորոշ հոդ ավելի թույլ շեշտվելով կամ նույնիսկ շեշտից զրկվելով դարձավ նախ an, հետո a (V. Henry, Gr. comp. de l'angl., էջ 129): Այսպիսով անգլերենը ունեցավ միաժամանակ միևնույն բառից երկու ձև. one իբր թվական և a, an իբր անորոշ հոդ, որոնք իրապես տարբեր բաներ են: Անգլերենը զանազանում է իրարից.

a man cannot do it և
one man cannot do it.

առաջինը նշանակում է, թե որևէ մարդ չի կարող անել այդ, երկրորդը թե՝ միայն մի մարդ կարող չէ անել այդ։ [Հայերեն կարելի էր թարգմանել, առաջինը՝ մարդ չի կարող անել այդ. երկրորդը՝ մեկ (մի) մարդ չի կարող անել այդ]։

Ֆրանսերենը, գերմաներենը և ուրիշ շատ լեզուներ չունեն այս զանազանությունը և ստիպված են ձևեր փոխելով ասել՝

un homme	un seul homme
ein Mann	nur ein Mann
մի մարդ,	միայն մի մարդ։

Գրաբարի մեջ էլ կարելի էր ասել՝

Մարդ ոչ կարէ,

կամ ավելի պարզ խոսելով՝

Այր ոմն, այր ոք։

Բայց նաև մի բառը հետ ու առաջ դնելով՝

մի այր (թվական)
այր մի (անորոշ)։

Սակայն գրաբարի օրենքը պահանջում էր, որ հետադաս մի՝ իբրև ածական, հոլովվեր և համաձայներ նախորդ գոյականի հետ. այսպես՝

Այր մի, առն միոջ, առն միում, արամբ միով և այլն։

Այս ձևը պարզեցման օրենքին համապատասխան չէր. նախ՝ սկսեց հետադաս մի անհոլով ձևալ. օր.

Ձգնաւորի մի. բզաւ մի. Աւուր մի. Տեղաց մի. Ջուի մի դեղնուց և այլն։

Այս օրինակները է դարից են սկսում, բայց նույնիսկ ե դարից, եթե սխալ ձև չէ, կա. ի քարի մի, փոխանակ՝ ի քարի միում (Այան. 23)։

Այնուհետև օգտագործվեց մին բառը, որ գրաբարի մեջ դիմորոշ հոդով ասվում էր միայն մինս, մինդ, մինն։ Միջին հայերենում մին հետադաս և առանց դիմորոշ հոդի գործածվել սկսեց. ինչ.

Խորհուրդ մին բարի.
Տեղաց մին «մի տեղից».
Սակաւ մին խաշորի «մի քիչ խաշորանում էր».
Դեղ մին այլ «մի ուրիշ դեղ էլ»։

Հետո ի սղվելով դարձավ մն (կարդա մրն). ինչ.

Սակաւմն քացախ.
Ամասւմն ճանապարհ։

Դրավիդյան բրահուի լեզվի մեջ անորոշ հոդն է վերջահար as, որ «մի» բառից է. բայց կարելի է նաև դնել asi «մեկ». օր. bandaɣas «մարդ մը», asi bandaɣas «մեկ մարդ մը». հոլովվելիս հոդը միանում է նեբասում. ինչ սեռ. bandaɣasēnā «մարդու մը». գրծ. bandaɣaseaṭ և այլն (Bray, էջ 38)։

Հոլովման ժամանակ թե նախադաս մի (արևելյան ձև), և թե հետադաս մը (արևմտյան ձև) միանում են անփոփոխ. ինչ.

Ո. Հ.	մի մարդ	մարդ մը
Ս. Տ.	մի մարդու	մարդու մը
Բ.	մի մարդուց	մարդե մը
Գ.	մի մարդով	մարդով մը

Ծանոթ.— Նախորդ բացատրություններից արդեն երևաց, որ աշխարհաբարի մի, մը, մըն, մ ձևերը ծագում են գրաբարի մի թվականից, և հետևաբար կապ չունեն իմն բառի հետ։ Պատահական նմանություն ունի նրա հետ սաբեական m վերջահար անորոշ հոդը, ինչպես որ պատահական նմանություն ունեն գարձյալ հայերեն ն որոշիչ հոդի հետ՝ աֆրիկյան նձիմա լեզվով n կամ ni (ինչ. baka «ծառ», bakan կամ bākani «ծառը»), հիմյարի n, մորդվին n'ä կամ n'e, չվեդերեն n, հին իսլանդերեն n, դանիերեն en ու բրետոն en որոշիչ հոդերը, բոլորն էլ վերջահար։ Մինչև անգամ բուլղարերենում և իր բարբառներում ունենք сь, тъ, нъ վերջահար որոշիչ հոդերը, որոնք նույնպես ուղղակի կապ չունեն մեր ս, դ, ն հոդերի հետ, թեև վերջիվերջո հնդեվրոպական ծագմամբ նույն են (Лавров, էջ 46)։ Պատահական է դարձյալ Աֆրիկյան բանդա լեզվի մեջ n որոշիչ հոդը, որ հայերենի պես դրվում է բառավերջում. օր. awa «ճամբա», awan «ճամբան» (Tisserant, էջ 30)։

3. ՀՈԴԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Որովհետև հոդի գործածությունը բարբառներում ամենամեծ մասամբ նույն է աշխարհաբարի հոդի գործածության հետ, ուստի նույնը ամբողջությամբ կրկնել ավելորդ համարեցինք։

Դնում ենք այստեղ միայն այն կետերը, որոնցով հոդի գործածութիւնը բարբառում յատկանշական ձև է ներկայացնում։

Նոր-Նախիջևանի բարբառում *որոշյալ հոդերն են* ը և ն. *առաջինը դրվում է բաղաձայնանդ բառերի վրա. ինչ. մարթ, մաձուն, գինին, հօքին։*

Համշենի բարբառում *անորոշ հոդն է մը, ինչ. հաց մը, ճուր մը, մաշա մը, էրգօնք մը և այլն։*

Ձայնավորից առաջ այս ը կրճատվում է. ինչ. մաշա մէգավ, գօվ մօնցավ, օչխար մոլ օնցավ։

Կարելի է նաև չկրճատել ձայնավորը. ինչ. հավ մուննիմ կամ հավ մը ունիմ։

Էական բայից և ու շաղկապից առաջ կարելի է ը կրճատել, բայց նաև դնել մըն. ինչ. հաց մոլ, հաց մըն ու, չէս ու ինձի համար մաշա միմ (կամ մըն իմ), ըն ու ուր համար մաշա մա (կամ մաշա մըն ա)։

Մը դրվում է նաև մակբայների մոտ. ինչ. գայսըր մը կօռաց «բարձր կանչեց», թէքէվ մը սկէց «թևերև քսեց», պարագ մը ձվաց «բարակ ինն ծուաց»։

Թվականներից հետո գործածվելով՝ ցույց է տալիս մոտավոր քանակութիւն. ինչ. խրէք մը մաշա, չէօյա մը հօքի, հինդ մը դղա.— խրէք-չէօյա մը մաշա.— դաս-դասնըվօխտա մը հավ։

Առանց որևէ նշանի գոյականը համարվում է անորոշ. ինչ. մաշա էգավ, հաց կուզիմ։

Համշենի բարբառի ձայնական օրենքով ամեն բառ, որ վերջանում է ն-ով, եթե պատահի մ-ի մոտ, ն ջնջվում է. ըստ այսմ ասվում է օմօ մը «առման մը», չիվօ մը «չուան մը», կի մը չունի «գին մը չունի», կու մը «գույն մը», պու մը «բույն մը», սու մը «սյուն մը», պօ մը «բան մը, ոչինչ», բէ մը «պարզամիտ մեկը» (բրք. bön «պարզամիտ» բառից)։

Բայց մ ունգականով վերջացող բառերը չեն հպատակվում այս օրենքին. ինչ. կում մը «գոմ մը», գօմ մը «կամճ մը», խում մը «խանջուկ մը», ժում մը «մի ժումա», ժօմ մը «հոգու հաց մը», և այլն։

Որոշիչ հոդերն են ը և ն. առաջինը դրվում է բաղաձայնով վերջացող բառերի ծայրին, երկրորդը՝ ձայնավորով. ինչ. միսը, շուրը, կինին, ծին «ձին» և այլն։

Ձայնավորով սկսվող հաջորդ բառի մոտ այս ը կարող է ջնջել կամ վերածվել ն-ի. ինչ.

Միսը ըճու դվի *կամ* միսն ըճու դվի.
Միսը ըճգի առի *կամ* միսն ըճգի առի։

Հատուկ անուննները (թե անձնական և թե տեղական), նման դրաբարի, չեն առանում հոդ. ինչ. Օվես կնաց դուն «Յովհաննեսը տուն գնաց», Արութ էգավ. Հօմպարց քեզի կօռա գու. Կիվիր ինձի ասավ «Գևորգը ինձ ասաց». Դիկրուզ միս պէրավ «Մխիթարեանին միս բերեց». Սօչա, Սօխում սիրուն դեղեր ին։

Այժմ սկսել են գործածել երբեմն նաև հոգով. ինչ. Հօմպիզը (Համբարձումը), Բօղէսը (Պօղոսը) և այլն։

Նոր-Ջուղայի բարբառի մեջ *անորոշ գոյականը բացատրվում է կամ առանց որևէ նշանի և կամ մի, մին, մի՛ն դանա բառերով. օր. խաց կա՞ «հաց կա՞յ», գնա մի խաբար բեր «գնա մի լուր բեր». մին դանա մարթ չեկավ «մի մարդ եկաւ»։*

Որոշիչ հոդերն են ը, ն, որոնք գործ են ածվում սովորական կանոնի համաձայն. ինչ. կատուն միսը կերավ. բայց Նոր-Ջուղայի բարբառը սիրում է գրեթե միշտ՝ բաղաձայնով հանդող բառերի վրա էլ գործ ածել ն հոդը և ոչ թե ը. ինչ. խաղշի միսն լեվ ա «հնապաստակի միսը լաւ է». ես կնգա վոտն ծանդր ա «այս կնոջ ոտքը ծանր է, հղի է»։

Բացառականի, գործիականի և ներգոյականի վրա ազատ դրվում է որոշիչ հոդը, ինչ որ գրական լեզվի մեջ անսովորական չէ. օր. ձեռնիցն, լեզվումն, բերնիցվն և այլն։

Ա վերջացող բառերը ն հոդն առանալիս՝ ա դարձնում են է. ինչ. փեսեն, տղեն, աղեն, յարախեն և այլն։

Ագուլիսի բարբառում *որոշյալ հոդն է բաղաձայնանդ բառերի համար ը, ձայնավորանդ բառերի համար ն. ինչ. շօնը «շունը», աճգուցը «ականջը», ձիւն «ձուն», հաքուն «հորաքույրը»։ Էական բայից և ալ շաղկապից առաջ դրվում է ը հոդի տեղ ն. ինչ. աճգուցն ալ «ականջն էլ», աճ շօնն ա «այն շունն է»։*

Օ հանգող բառերը հոդ առանալու ժամանակ կարող են վերստանալ իրենց նախկին ա ձայնավորը. ինչ. ադօ «տղաս»— ադան, ըրխօ «երեխա» —ըրխան։

Սեռականը եթե որոշյալ է, առանում է նույնպես հոդ. ինչ. ձիյուն ատնին տակիցը «ձիու ոտի տակից»։

Չի բառի որոշյալ ձևն է ձին կամ մանավանդ՝ ձիյը։

Անորոշ հոդն է մույն «մի», ինչպես՝ մույն մօդ «մի մարդ», մույն ըգ'ըլոցի «մի ագուլեցի» և այլն։

Հատուկ անուններէ վրա հոդ չի դրվում. օր. Կարապետ ևոհիալա *«Կարապետը դնաց». So Կարապետ տուր Կարապետինն, իս տոհիամ Օվանիսա «ես տեսայ Յովհաննէսինն» և այլն։ Այսպիսով արևելյան հայերենի այն հատկանիշը, որով սեռ.-տրական հոլովաձևերը զանազանվում են իրարից, ջնջվում է։*

Այսպես են նաև տեղանունները. օր. Ըգիւլիս միծ տեղ ա «Ագուլիսը մեծ տեղ է». Ցաղնա Ըգիւլոցից-ևոցի շօտ բեօձըր ա «Ցղնան Ագուլիսից շատ բարձր է». Դաստակ քօշ ա «Դաստակը ցածր է»։

Նը հանգով վերջացող հատարակ անունները քէ որոշյալ, և քէ անորոշ միևնույն ձևն ունեն. ինչ. մույն ևօռնը, մույն բօզնը «մի նուռ, մի քուդզ», հօկ ևօռնը, հօկ բօզնը «այս նուռը, այն քուդզը»։

Մարաղայի բարբառում որոշյալ հոդերն են անշեշտ ա, ո, ն.— սրանցից ա գործ է ածվում այն ժամանակ, երբ բառը վերջանում է բաղաձայնով և նրանից առաջ կա ա, ու, օ, ը ձայնավորներից մեկը. օր. մարթա «մարդը», մատա «մատը», մկրատա «մկրատը», կարկուտա «կարկուտը», կէրակուռա «կէրակուրը», անուռնա «անունը», կուլօխա «գլուխը», կըշտա «կուշտը», օղօղա «ուղեղը»։

Երկրորդը՝ ո, գործածվում է այն ժամանակ, երբ բառը վերջանում է բաղաձայնով և նրանից առաջ կա է, ի, ի՝, իւ, ո, ևօ ձայնավորներից մեկն ու մեկը. ինչ. ևոդոչո «ջաղացքը», ծէռո «ձեռքը», մէրո «մայրը», իւրիշտո «ուրիշը», ճիւրո «ջուրը», ծիւճո «ձիւնը», քիթո «քիթը», վիզո «վիզը», գիւրեօվո «գրավը»։

Ուէ, ըէ, ըի, ուի երկբարբառներն ունեցող բառերը կարող են ստանալ քէ ա, քէ ո հոդը. ինչ. ախպըէրա կամ ախպըէրո «եղբայրը», կուէղա, կուէղո «գողը», խավուէղա, խավուէղո «խաղողը», լուխա, լուխո «լույսը» փըխա, փըխո «փոսը», մըխա, մըխո «մոռը» և այլն։

Երրորդը՝ ն դրվում է ձայնավորով վերջացող բառերի վրա, նաև բաղաձայնով հանգող բառերի վրա, եթե որոշյալ բառը կապված է հաջորդ էական բայի կամ էլ շաղկապի հետ. օր. կատուն, ակռան, մարթն էլ, իւրիշն իւ «ուրիշն է», ախպըերքիրն ինք՝ «եղբայրներն ենք», տար ի՞նչ է ձգրա բինչն էր»։

Այս պարագային կ, ք, ծ, ճ, չ, ձ, ց, ջ վերջացող բառերը կրում են ձայնի սովորական թևթևացում. ինչ. տար կենյն ի

«դրա կնիկն է», կենյն ի՞նչ ի «կնիկն բինչ էր», իմ խասնը «իմ հացն էր», տար լաժն ը «սրա որդին է» և այլն։

Անորոշ հոդն է մէ, որ ա, ո, է, օ ձայնավորների մոտ կարող է կրճատվել և դառնալ մ. բայց ու-ի մոտ միշտ է անփոփոխ. ինչ. մէ մարթ, մէ օղորմած մարթ, մ'ախչիկ «մի աղջիկ», մ'աշկ «մի աչք», մ'երկաթ «մի երկաթ», մ'երկանք «մի երկան», մ'էծ «մի այծ», մ'օց «մի օձ», մի ուխտ «մի ուխտ», մէ իլիկ «մի իլ», մ'ունգուռնա «մի ականջը» և այլն։

Ը և ի ձայնավորների մոտ՝ ընդհակառակը սրանք են դեղչվում և մէ միանում է բառին. ինչ. մէռանիաթ, մէրվանչաղ «մի երեկոյ», մենգի դա՞, մէրիթ քիշիր (փխ. մէ բռահաթ, մէ իրվանչաղ, մի ինդի դա, մէ իրիթ քիշիր)։

Իւ ձայնավորով սկսվող բառերի հետ գործածված ժամանակ է և իւ միանալով՝ տալիս են էօ. ինչ մէօռպաթ օր, մէօրիշ մարթ (փխ. մէ իւռպաթ օր, մէ իւրիշ մարթ)։

Օ ձայնավորի մոտ կրճատվելով՝ մօ դառնալուց հետո, այս մօ. ռդվելով հաջորդ վանկի էօ ձայնավորից՝ դարձել է մէօ,— -մէօճդէօրթ շահը (փխ. մէ օնդէօրթ շահը) «մի 14 շահի» ձևի մեջ։

Առանց որևէ նշանի բառը նույնպես լինում է անորոշ։

Թէ՛ Սուչավայի, և թէ՛ լեհահայ բարբառում որոշիչ հոդն է ն կամ ը, առաջինը ձայնավորով, երկրորդը բաղաձայնով վերջացող բառերի վրա. օր.

մարդ'ը, շունը, Հհ. Իլախի հայէրը.
Հհ. դաջըգները գբաղաքը Անի բ'ըլձ'ուցիլ ին.
լեզուն>լիզուն, բցո. լիզվէն.
հայերուն, աս օրերուն.

Հատուկ անունները ստանում են որոշիչ հոդ. ինչ. Գօգօրը (Գրիգորը), Գալիձ'իան, Բուգ'օվինան, Բասարաբիան, Մօլդօվը։

Անորոշ հոդն է մը. ինչ. մարդ՝ մը, բայց կարելի է ասել նաև մեզ մարդ մը, մեզ շուն մը:

Առանց մը հոդի էլ բառը միտում է անորոշ. ինչ. մարդ՝ «մի մարդ»։

Լեհահայ բարբառը ունի որոշիչ հոդի գործածության տարօրինակ մի ձև, այն է՝ հոդը կրկնելով. ինչ.

Ջ'ըրին վրա Ջ'էրէմուշինը «Ջերեմուշ ջրի (գետի) վրա»։

Գրլա ջանջ'նալու թիփարքինը էրէսինը «երեսի տիպարիցը կարելի է ճանաչելը»։

Գի սիրին գէրէնց գ'էդինը մայրագանը «սիրում են իրենց մայրենի հողը»։

Ագէգնը ձէռաց «ճարպիկ» (ագէգնը՝ երկու հոգով)։

Բայց այսպիսի ձևերը, որոնք գրաբար մտածողությամբ շատ հասկանալի են, ամենևին չեն բխում գրաբարից, այլ անշուշտ նմանողություն են լեհերենի։ Օր.

Լհ. Ջ'րին վրա Ջ'էրէմուշինը. այստեղ գետի անունը (Ջէրէմուշ=Լհ. Czeremosz) սեռական հոլով է, և հոգ ունի, որովհետև ջրին նույնպես հոգ ունի. հոլովված է նաև լեհերենը՝ nad wodą Czeremosz.

Հուշարձ., էջ 368. գրված մի հատվածում (Սուչավայի բարբառ) կա. մեկ բօսի մը վրայով մը «մի կամուրջի վրայով», ուր ոչ միայն անորոշ հոգը կրկնված է գոյականի վրա, այլև նախադրության վրա, ինչ որ շատ անսովոր երևույթ է (ծանոթ. Bittner-*ի)։*

Հնգ. Կարնու գիքաը գձրկինը։

Սվեդիայի բարբառում *անորոշ* հոգն է մը, *ինչ.* դօն մը, իգ'գ'ի մը գունիմ *«մի տուն, մի այգի ունեմ»։*

Այս մը *գործածվում է նաև բայից առաջ՝ մակրայի հետ. օր. ապիւր մը ձիձիցա զէ «մի լավ ծեծեցի նրան». յագանջը գյոմցէ մը ացա զէ «ականջիցը կամաց ասացի իրեն»։*

Թեև ձայնավորից առաջ այս մը *ձևը չի կրճատվում, բայց ալ շաղկապից և էական բայից առաջ կորցնում է ը ձայնը և դառնում է մ'. ինչ. իս տլէ ընձի համար մուդ մ'իմ «ես էլ ինձ համար մի մարգ եմ». Թօն մ'տլէ գունիմ, աշգեն մ'տլէ, դղոմ մ'տլէ գունիմ «մի տուն էլ ունեմ, մի աղջիկ էլ, մի տղա էլ ունեմ»։*

Մը ձևը, որ գործածական է Պոլսի բարբառում, ինչպես նաև մեկ-մը (օր. մեկ մարդ մը և այլն) ձևը, գործածական չէ Սվեդիայի բարբառում։

Որոշիչ հոգն է բաղաձայնով վերջացող բառերի ծայրին՝ ը, ձայնավորով վերջացող բառերի ծայրին՝ ն. օր. գյոդօն իգիք «կատուն եկավ». Ջ'իւ դօնը յեօ՞ յէ «ձեր տունը ուր է». Միր դօնը մինձ է «մեր տունը մեծ է»։

Այս ը *հոգը թեև ձայնավորից առաջ չի փոխվում, բայց էական բայից և ալ շաղկապից առաջ դառնում է ն. օր. իս միր դուն(ը) մինձն իմ «ես մեր տան մեծն եմ». Ենձիւրն տլէ, մըշմէշն տլէ, դ'ամմէնն տլէ հուս է «Մենձորն էլ, ծիրանն էլ, դամոնն էլ այստեղ է»։ Ենձիւրը տնեշ է «Մենձորը անուշ է»։ Թեօխրը էռ դվա «Գիրքը իրեն ավի»։*

Հատուկ անունները (թե անձնական և թե տեղանուն) առանում են միշտ որոշիչ հոգ. օր.

Իսիփը, Ըգիւիփը, Աննան իգէն «Հովսեփը, Հակոբը, Աննան եկան»։

Անթաքան մինէ հիտռօ է «Անտիոքը մեզնից հեռու է»։

Զեյթունը, Մարաշը շիւդ հիտռօ յին «Զեյթունը, Մարաշը շատ հեռու են»։

Ծանոթ.— Հոլովման ժամանակ որոշիչ հոգի մոտ հոլովական վերջավորության ձայնավորը մի քիչ փոխվում է. ուստի դնում ենք որոշյալ և անորոշ բառի հոլովման պատկերը.

	Անորոշ		*Որոշյալ*	
Ո.	*հուց*	*հոցցիր*	*հուցը*	*հոցցիրը*
Ս. Տ.	*հոցցը*	*հոցցիրը*	*հոցցէն*	*հոցցիրէն*
Բ.	*հոցցէ*	*հոցցիրէ*	*հոցցին*	*հոցցիրին*
Գ.	*հոցցում*	*հոցցիրում*	*հոցցումը*	*հոցցիրումը*

Որոշյալ հոգի մեջ կարևոր մի կետն էլ այն է, որ երկրորդ հոլովման (ու) պատկանող բառերը, որոնք անցել են առաջին հոլովման, որոշյալ և հոգը առանալու դեպքում նորից անցնում են ու հոլովման՝ ու-ն դարձնելով օ:

Օր. մարդ>մուդ՝, անորոշ սեռ. լինում է մադ՝ը, որոշյալ՝ մադ՝օն. ինչ. ոշգենիս մադ՝ը դվուձ է «աղջիկս մարդու ասած է», ան մադ՝օն դվա «այն մարդուն ավի»։

Էշ>իշ. անորոշ սեռ. իշշը, որոշյալ սեռ. իշշօն. ինչ. իշշը քուռուգ «իշու քուռակ», իշշօն ոգ'էն «իշուն ագին»։

Թի և ձի բառերը ունեն երկու ձև. հյց. որոշյալ՝ թեն բ'է «թին բեր», ձ'են դուր «ձին տուր».— անորոշ սեռ. ձ'իյը ագ'ա «ձիու ագի», թիյը դիւք «թիի կոթ». որոշյալ սեռ. թիօն հումուր «թիուն համար», ձ'իօն հումուր «թիին համար»։

Զեյթունի գավառականում անորոշ հոգն է մը, որ անփոփոխ դրվում է ամեն տեսակ գոյականից հետո. ինչ. ճօց մը, դուն մը, ինգիզ մը (մի ընկույզ), սալիւյ մը (մի սալոր), տբէօռ մը (մի աթոռ), ճավգիր մը, էգ'է մը (մի այգի), էչվէ մը (մի աչք), գ'ապո մը (մի գաթա) և այլն։

Ձայնավորով սկսվող որևէ բառից առաջ այս մը հոդի ձայնավորը կարող է մնալ, կարող է և կրճատվել (բայց Պոլսահայ բարբառի մըն ձևը այստեղ գոյութիւն չունի)։ Օր.

հօց մը առը=հօց մ'առը (մի հաց առի).

դուն մը օս=դուն մ'օս (մի տուն աս).

ինգէզ մը ունամ=ինգէզ մունամ (մի ընկույզ ունեմ)։

Էական բայից և m (հ) շաղկապից առաջ ը ձայնավորը կրճատվում է. ինչ. ճօց մ'm դուշ (մի հաց էլ տուր), դուն մ'm շինիցի (մի տուն էլ շինեցի), հգ'է մ'm առը (մի այգի էլ առի), օսօ միճն մօյդ' մ'է (սա մի մեծ մարդ է), իս էշգիյդ մ'իմ (ես մի աշակերտ եմ)։

Բան>բ'օճ բառը գոնվելով այս մը հոդի մոտ՝ կորցնում է իր ոնգականը և դառնում է բ'օ. օր. բ'օ մը ուճամ կամ բ'օ մ'ուճամ (մի բան ունեմ)։ Սակայն և հանգող որևէ մի ուրիշ բառ չի կորցնում իր ոնգականը մը հոդի մոտ. ինչ. բ'իյօճ մը, շուճ մը (մի բերան, մի շուն)։ Նույնիսկ՝ բ'օճ մ'ասի (բան մի ասի)։

Որոշիչ հոդն է ը կամ ն, առաջինը՝ բաղաձայնով հանգող բառի ծայրին, երկրորդը՝ ձայնավորով հանգող բառի ծայրին. ինչ. մը'սը՝ (միսը), դունը (տունը), հգ'էն (այգին), էյվէն (աչքը), գ'իճէն (գինին), ագ'էն (ագին), առուն։

Երբ բառը վերջանում է օ կամ ո ձայնավորով, որ նախկին ա ձայնավորի ձևափոխութիւնն է, և հոդը առանալու ժամանակ այս օ դառնում է m, որի հետևանքով բառի մեջ գտնված մյուս m ձայնավորներն էլ կարող են դառնալ ե. ինչ. գաբայ>գ'ապո, գ'եբոճ, սատանայ>սադանո, սեդեճոճ, ճառայ>ջառօ «առակառ», ջեռոճ, կասկարայ>գասգայօ, գասգայոճ, արաբ. դարօ «անգամ», դեբոճ, թրք. էնիշդո (քեռայր), էնիշդոն։

Այս ը որոշիչ հոդն էլ ձայնավորով սկսվող բառի մոտ պատահելու ժամանակ կարող է մնալ կամ դառնալ ճ. օր.

մը'սը՝ էօնիւյ դը'վը՝ կամ մը'ճն էօնիւյ դը'վը՝ «միսը նրան սվի».

Մը'սը՝ առը կամ մը'ճն առը (միսը առի).

Սոլիւյն անուշ է (սոլորը քաղցր է)։

Իսկ էական բայի և m շաղկապի մոտ անպատճառ դառնում է ճ. օր.

Օսօ իմ ուղած մը'ճն է (սա իմ ուզած միսն է)

Օսօ մէյ գիցած դուճն է (սա մեր կեցած տունն է)

Մինք մէյ դուճն ինք (մենք մեր տունն ենք)

Հօցն ո առը, մըճն ո առը.

Հատուկ անուններըը ստանում են միշտ որոշիչ հոդ. ինչ.

Գ'իյիգ'օյը իգիք (Գրիգորը եկավ).

Մայյօմը մէռօվ (Մարիամը մեռավ).

կամ և հոդով (ձայնավորի մոտ)՝

Գ'իյիգ'օյն իգիք.

Մայյօմն օռօվ (Մարիամն առավ)։

Ա վերջացող անուններըը դարձնում են այս ձայնը ո և ստանում են և հոդը. ինչ. Աճճոճ, Սառոճ, Օսաճճոճ։

Սիսը, Մէյշը, Անթօբը, Ագանճոն, Թայսուսը ը'նդ'նդ քաղօք ինն։

Վանի բարբառում անորոշ հոդն է մ, որ այս ձևի տակ դրվում է ձայնավորով հանգող բառերի ծայրին, իսկ բաղաձայնով հանգող բառերի ծայրին դառնում է ըմ. օր.

Ձիմ առի «մի ձի առի».

Խացըմ տուր «մի հաց տուր»։

Երբ հաջորդ բառը սկսի ձայնավորով, անորոշ հոդն է դարձյալ մ. ինչ. մարթ մէկավ։

Երբ գոյականը վերջանա և բաղաձայնով, այս և-ն հաջորդական մ անորոշ հոդի մոտ ջնջվում է. օր.

պամ չասաց «ոչինչ չասաց»

պամ ասա խեմ «մի բան ասա տեսնեմ»

տում ունեմ «տուն մը ունիմ»

շում էկավ մօ ձիյ «մի շուն եկավ ինձ մոտ»

տամ մէջ սում կա, շատ խորատ ի

պէրամ էրկու ասիցի, չլսով

ըսկուն ձիւ մ'էկավ, վոր «այնպիսի մի ձիւն եկավ որ»

Նույնիսկ հոդնակի բառերից հետո կարելի է դնել անորոշ հոդը. ինչ.

պոներ մ'ասաց՝ չխասկըցա.

ըսկուն տներ մ'ի շինև վոր (այնպիսի տներ է շինել որ).

կերեր մ'կերանք վոր (այնպիսի կերակուրներ կերանք որ)։

Երկրորդ օրինակում մ հանդիպելով հետադաս ի («է») էական բային՝ ստացել է մի ձևը, որ սակայն պետք է վերլուծել մ'ի։

Կարելի է գոյականից առաջ դնել նաև մեկ կամ մէյ. առաջինը ընդհանրապես ձայնավորով սկսվող բառերից առաջ, իսկ

երկրորդը՝ բաղաձայնով սկսվող բառերից առաջ. վերջին դեպքումն էլ կարելի է դնել նաև մեկ. օր.

մէկ խաց տուր կամ մէյ խաց տուր
մէկ աթոռ պէ «մի աթոռ բեր»

Անորոշի դադափարը զօրացնելու համար կարելի է նաև դնել մեյ խա, որ է «մեկ հատ», ինչ. մէյ խա մարթ էկավ։

Բայց առանց որևէ նշանի էլ գոյականը կարող է համարվել անորոշ. ինչ.

Ասաց կուտեմ. մարթ մ'էկավ կամ մարթ էկավ (ինչ որ մարթ եկավ)։

Որոշիչ հոդն է ձայնավորով վերջացող բառերի համար և. ինչ. խոկյին խասավ պէրաև։

Բաղաձայնով վերջացող բառերը ոչ և են առանում, ոչ էլ ը։ Վանի բարբառը նշանավոր է ը հոդի գործածության թերացմամբ. շատ անգամ տեսնում ենք, թե ինչպես նույնիսկ ամենից ավելի կրթված վաննեցին չի կարողանում ընտելանալ հայերենի ը հոդի գործածության և ասում է օրինակի համար՝ «այս մարդ ու այն կին կովեցան իրար հետ. մեր տունը մեծ է. Վանա քաղաք գեղեցիկ է» և այլն. կամ բնիկ բարբառով՝ ճիւր խամեղ ի «ջուրը համեղ է»։ Ըստ այսմ ճիւր նշանակում է թե «ջուր», և թե «ջուրը»։ Բայց սա չի նշանակում, թե Վանի բարբառը այս դեպքում չի գիտակցում բառի որոշյալ թե անորոշ լինելը։ Որովհետև եթե այդ գիտակցությունը չլիներ, նախ՝ ձայնավորով հանդող բառերն էլ պիտի չունենային և, երկրորդ՝ միևնույն այդ բաղաձայնահանդ բառի սեռականը կամ տրականը առանում է որոշիչ հոդ (խացին ծեռ մի առ), որովհետև բառը այս պարագային արդեն ձայնավորով է վերջանում, և երրորդ՝ նույն բառը կառանա և, եթե ընկնի ձայնավորով սկսվող բառի մոտ. օր. ասում ենք «ինոր խէր, մէր մեռան». այստեղ խէր և մեր չունեն որոշիչ հոդ. բայց այնուամենայնիվ որոշյալ են, որովհետև և որոշիչ հոդերը իսկույն երևան կգան, երբ ասենք՝

Ինոր խէրն էլ, մէրն էլ, ախպէրն էլ, քյո՛րն էլ մեռան կնացին, կամ՝

Ցես քյո խէ՞րն եմ, մէ՞րն եմ, պարէկմէն եմ...։

Եթե վաննեցին գիտակցում է, թե բառը որոշյալ է, ուրեմն ինչու՞ չի դնում ը վերջավորությունը։ Որովհետև Վանի բարբառը ընդունակ չէ բառավերջում արտառանելու ը ձայնավորը։ Այս հատկությամբ նա նմանվում է հին գրաբարին, որ բառերի ծայրին ը չգիտե։ Այսպես է նաև գրական ֆրանսերենը, որ նույնպես անընդունակ է բառավերջում արտառանելու ը ձայնավորը, թեև առանձնորի մեջ, ինչպես նաև գյուղական արտառանության մեջ դեռ այդ ը ձայնավորը կա (ինչ. la rose լա ռոզ=լա ռոզը)։

Վանի բարբառը նաև բառասկզբում չունի ը։

Ծանոթ. 1.—Բաղաձայնով վերջացող որոշյալ մի բառ եթե դնենք ձայնավորով սկսվող մի բառից առաջ, կարող է առանալ և որոշիչ հոդը. ինչ. մազն էրկէն ի։

2.—Եթե բառը վերջանա կ, ք այ բաղաձայններով, և որոշիչ հոդից առաջ կ-ն դառնում է յ, իսկ ք-ն դառնում է ճ. ինչ.

Կրայն (կրակն) ուր պողըռճի տայ կուգի.
Ճարպիյ մուչն (մուկն) չորս վոտնով կինի ակնատ.
Միւչն (ձուկն) առանց փուշ չէլնե.
Ճրաճյն (ճրագն) ուր տայ լո՛ս չի տա։

Ըստ այսմ թե անորոշ, և թե որոշյալ գոյականը, եթե վերջանում է բաղաձայնով, միևնույն ձևն ունի նախադասության մեջ. օր.

մարթ եկավ նշանակում է թե «մի մարդ եկավ» և թե «մարդը եկավ». վաննեցին սրանց տարբերությունը հասկանում է շեշտից. այսպես՝

մարթ եկավ, նշանակում է «մի մարդ եկավ, որևէ մարդ եկավ», իսկ՝

մա՛րթ եկավ, նշանակում է «այն մարդը, որի մասին խոսում էինք, եկավ»։

Զարմանալի է սակայն այն, որ երբեմն և և ը հոդերը միասին են դրվում մի գոյականի վրա։

Ահա այսպիսի օրինակներ, որ քաղում եմ Շերենցի Վանա սազից (հտ. Ա).

էջ 38. Իմ ևարուչ մեռնեմ, բօյնը չինար ի.
էջ 45. Ախչիկ կուկյէր կալենը խետ
կը գնգղընգյէր շուշէնը խետ։
էջ 46. Իմ ծոցի կուբինը թուջ էր (Թրք. qutə «տուփ»).

էջ 81. Սարէկ պոց, կատուցը խան։
էջ 140. Իմ խէրանց տանեանը խեա տանսէ խիծել ի։
էջ 109. Առատուցը էլնի էրթա ուր պանին։
էջ 110. Տգէնը տան կյիրկ։
էջ 110. Խուրուդունը ըսըկնա իրիցայ։
էջ 111. Պատի տղէնը կխնթրվի մօրից։
էջ 111. Թուր կքյոշի, որ պտռվուն կտոր կտոր անի։
էջ 112. Լալենը (Լալան) մեկրի մոմից մէյ խատ կարիճ կշինի։
էջ 113. Նախրչիցը շատ կէրթա կուկյա։
էջ 121. Աղէկ ծիցը ուր յեմ կավելցուցի։
Մի քանի օրինակ էլ Լալայանի «Վասպուրականն» գրքից (Ա պրակ)։
էջ 60. Ցարէնը (վերքը)։
էջ 78. Լէզունը և այլն։
էջ 52. Չէ, պօռաց էն գեխէն արնաթաթախ տիրացուները։
էջ 52. Էն սաղ մնացած տիրացուները։
էջ 52. Տես, տիրացունը ինչքի իկեր ի։
Անձնանուններըը ստանում են որոշիչ հոդ (հակառակ գրաբարի). օր.
Ակօն էկավ, Մատոն կնաց։
Իսկ տեղանուններըը որոշիչ հոդ չեն ստանում. ինչ.
Ովրակի մտա ի Շաղրաղաւ։
Պէրկրի պատիյ քաղաքյ ի։
Ովրագ՞ ի մտա քէ Պէրկրի։
Սակյա՞ ի գատ էկյէտարա քէ՞ Սարա։
Կարևո բարբառում որոշյալ հոդերն են՝ ը, ն։ Բաղաձայնով վերջացող բառերն ստանում են ը, օր. շունը, տունը, քունը, իսկ ձայնավորով վերջացող բառերը՝ ն, օր. կադուն, ձ'ին, գ'ին։ Սեռական հոլովը այժմ հոդ է ստանում Ախալցխեի և Ախալքալաքի խոսվածքներում։ Բացառական և գործիական հոլովները որոշյալ հոդ չեն ստանում ոչ եզակիում, ոչ հոգնակիում։

Երբ հաջորդ բառը սկսվում է ձայնավորով, նախորդ բառի ը հոդը չի դառնում ն, մի քանի, որ կատարվում է արդի գրական հայերենում պարզապես բարեհնչյունության համար, այլ մնում է գարձյալ ը, ինչպես՝ գիրքը էնօր տըվի, բացի այն դեպքից, երբ ը հոդը ստացած բառին հաջորդում են ել, ալ բառերը «նույնպես, նաև, ևս» իմաստով և էական բայը. ինչպես՝ մարթն ել, ալ գ'ուքա։ Իսիկ ել Ալմաստի մարթն է։ Ախալքալաքի խոսվածքում՝ իսիկ ա(լ) Ալմաստի մարթն է։ Իսկ եթե ել, ալ բառերը գործ են ածվում «այլևս» իմաստով ը-ն մնում է անփոփոխ, ինչպես՝ մարթը ել, ալ չի գա։

Բարբառում որոշյալ հոդ են ստանում նաև հատուկ գոյականները, տեղանունները (Գ'իրքօրը, Անին, Ադինը) և գրեթե բոլոր խոսքի մասերը, երբ գործ են ածվում գոյականաբար. ինչպես՝ յառաջինը, յերգանը, տագինը, վրայինը։ Գոյականները հոգնակի թվում մեծ մասամբ գործ են ածվում որոշյալ առումով։

Անորոշ հոդ է գործածվում, երբ խոսողը կամենում է գոյականի ընդհանուր բովանդակությունը կոնկրետացնել այդ տեսակի առարկաներից մեկի, մասնակիի մեջ՝ առանց տարբերակելու, որոշելու այդ մեկը նույն տեսակի մյուս առարկաներից։ օրինակ՝ փեդրմ տու=մի փայտ տուր։ Այստեղ ըմ հոդը փայտ գոյականի ընդհանուր բովանդակությունը կոնկրետացնում է մասնավորի, մեկի մեջ, բայց չի որոշում, թե որ փայտը։ Անորոշ հոդերն են՝ բաղաձայնով վերջացող բառերի համար՝ ըմ, օր. ճանջըմ, յեզըմ, տունըմ, իսկ ձայնավորով վերջացող բառերի համար՝ մ, օր. երեխեմ, կադում, որոնք այլ բան չեն, բայց եթե մեկ թվականը։ Այս բանը այժմ, իհարկե, չի գիտակցվում, որի հետևանքով և շատ հաճախ անորոշ հոդ ունեցող գոյականի հետ գործ է ածվում նաև մե «մեկ» թվականը, ինչպես մե թուխտըմ, մե կովըմ, մե օչխարըմ։

Անորոշ հոդը դրվում է գոյականից հետո, բայց ի տարբերություն կը ճյուղի մյուս բարբառների, որոնք անորոշ հոդը արտասանում և գրում են գոյականից անջատ, բարբառս անորոշ հոդը արտասանում է գոյականի հետ միասին (էշըմ, մուգըմ, ախչիգըմ), բացի այն դեպքից, երբ գոյականին հաջորդում են ել, ալ շաղկապները և էական բայը։ Այսպիսի պարագաներում հնչման դյուրության համար անորոշ հոդը արտասանվում է այդ բառերի հետ. ինչպես՝ գըրիչ մել, գըրիչ մալ։ Մե զարուրաք բան մեր (մի զարհուրելի բան էր)։ Գոյականը անորոշ հոդ կարող է ստանալ եզակի թվի բոլոր հոլովներում, օր. փեդրըմ, փեդիմ, փեդեմ, փեդովըմ, մինչդեռ հոգնակի թվում բոլորովին չի ստանում։ Այս երևույթը գալիս է հաստատելու, որ իրոք, անորոշ հոդը մեկ թվականն է։

Գոյականից բացի, անորոշ հոդ կարող են առանալ ածականը, թվականը (քանակական և չափական), մակբայը. օր. շագըմ, քիչըմ, շուդըմ, մեծըմ, ուսուլըմ, ուժովըմ, հինգըմ, վեցըմ, սեվըմ, ճերմագըմ: *Երբեք որոշյալ բառի վրա անորոշ հոդ չի դրվում (Հ. Միրաչյան, Կարնո բարբառը, էջ 62—64)։*

Վարաբաղի բարբառում, *ինչպես գրականի մեջ*, հոդը ը ձայնավորն է բաղաձայնով վերջացող բառերի ծայրը. օր. հացը, մըէսը, մօխուրը, չամինչը=հացը, միսը, մոխիրը, չամիչը և այլն։

Ձայնավորով վերջացող բառերի հոդը ն է. օր. կաուն, կաովրէն, յրդէն, ճօրէն=կաուն, կաովից, ուդին, ջորին և այլն։

Բաղաձայնով վերջացող բառերի ը հոդը էական բայից, ու, էլ շաղկապներից և ուրիշ մի խումբ ձայնավորով սկսվող բառերից անմիջապես առաջ գտնված ժամանակ դառնում է ն. այսպես՝ ճացն էլ, մըէսն էլ, չամինչն էլ, ճօրիշն ա, էն մարդն ա, քուրն ու ախպէրը, յէս մըէծն ըմ=հացն էլ, միսն էլ, չամիչն էլ, ուրիշն էլ, այն մարդն է, քույրն ու եղբայրը, ես մեծն եմ և այլն։

Գրաբարի -ն վերջավորության համապատասխան Ղարաբաղի բարբառի մեջ ը հանգը ունեցող բառերը չեն կարող հոդ առանալ. այսպես՝ ասվում է մին յեզը, էն յեզը, մին ծիւկը, էս ծիւկը=եզ մը, այն եզը, ձուկ մը, այս ձուկը և այլն, բայց սեռ. յէզանը և այլն։

Բայազետի ենթաբարբառի *մեջ* ձայնավորով վերջացող բառերի վրա դիմորոշ հոդը կրկնվում է. օր. կատուն, մեղուն՝ *փխ.* կատուն, մեղուն, ձ'իները՝ ձին և այլն։

Թավրիզի ենթաբարբառում ձի և ձու բառերը որոշյալ հոդ առանալու ժամանակ ներմուծում են յ կիսաձայնը. օր. ձիյը, ձույը:

Շամախիի բարբառում հոդը՝ ներդաշնակության օրենքի համաձայն, լինում է ը կամ ի և ն. *հին.* սիրտը «*սիրտը*», մըտկը «*միտքը*», ցեքը «*ձեռքը*», ախչիգի «*աղջիկը*», ծոնի «*ձայնը*» և այլն։ Նույնը նաև ա, ո, ն *դիմորոշների ժող.* հին. ծոնիք «*ձայնդ*», սըրտս «*սիրտս*», մըտկըս «*միտքս*», պոնիք «*բանդ*»։ Սրանց մեջ շեշտը վերջընթեր վանկի վրա է. սեռականը, որ ձևով նույն է, շեշտով է միայն զանազանվում սրանցից. օր. պո՛նիք «*բանդ*», պոնի՛ք «*բանիդ*», սրտի՛գիս «*սրտիկս*», սրտիգի՛ս «*սրտիկիս*» և այլն։

Մեղրու բարբառում *իբրև որոշիչ հոդ գործածվում են* ն, ը, ի՝: Ն-ն *գործածվում է ձայնավորով վերջացող բառերի համար. ինչպես՝ կատուն, բախչն «երեխան», գինին և այլն։*

Բաղաձայնով վերջացող բառերն առանում են ը *կամ* ի՝:

1. Ի՝ առանում են.

ա) այն բառերը, որոնց վերջավանկի ձայնավորը թեթև է. ինչպես՝ գինի՝ «գինձը», հէլի՝ «ուլը», բիւժիւժի՝ «բուժուժը», կմանիփի՝ «կանեփը», մանգոզի՝ և այլն։

բ) այն բառերը, որոնք վերջանում են պ, կ, ք բմայնացածներով կամ ժ, շ, ջ, ն, չ բաղաձայններով, անկախ նրանց նախորդող ձայնավորի թեթև կամ ծանր լինելուց. ինչպես՝ լէնգի՝ «ենիգը», մէթկի «միտքը», կրէսէքի՝ «առուսը», օժի՝ «ուժը», շէրժի՝ «երկրաշարժը», ճէշի՝ «ճաշը», լէնջի՝ «լանջը», անգուճի՝ «ականջը» և այլն.

գ) այն բառերը, որոնք վերջանում են յ կիսաձայնով, ինչպես՝ հէյի՝ «հայը», չայի՝ «չայը», նէյի՝ «նայը, խոնավություն» և այլն.

դ) հետևյալ երեք բառերը. հարի՝ «հայրը», մարի՝ «մայրը», տարի՝ «տերը» և նրանցով բարդվածները. ինչպես՝ արնատարի՝ «տանտերը» և այլն։

2. Բաղաձայնով վերջացող ճեացած բոլոր բառերն առանում են ը, *ինչպես՝ հաքը «ոտքը», թուրանը «թոնիրը», աթուռը «աթոռը», տատէչկը «տատասկը» և այլն։*

Ծանոթություն 1. Այժմյան խոսողներից միայն ծերերն են, որ հատակ կերպով պահպանում են ի՝ հոդը. երիտասարդները, որոնց մոտ ի՝ ձայնավորն իբրև հընչյուն արդեն անհետանում է, ի՝ հոդի փոխարեն գործածում են ի կամ ը. ի գործածվում է վերջավանկում ի՝ ունեցող կամ պ, կ, ք քմայնացածներով վերջացող բառերի համար (ինչպես՝ գինձի «գինձը», ճէնգի «ճանկը», մէթկի «միտքը», հրըսանէքի «հարսանիքը» և այլն) և հարի «հայրը», մարի «մայրը», տարի «տերը» բառերի ու նրանցով բարդվածների համար։ Մյուս դեպքերում ի-ն վերածվում է ը-ի. ինչպես՝ մանգոզը «մանգազը», բիւժիւժը «բուժուժը», օժը «ուժը», լէնջը «լանջը», փոխանակ՝ մանգոզի՝, բիւժիւժի՝, օժի՝, լէնջի՝ և այլն։

Ինչպես Ագուլիսի և «Կը» ճյուղի շատ բարբառներում, Մեղրու բարբառումն էլ սեռական հոլովը որոշիչ հոդ է առաջնում. ինչպես՝ մատակուն ջի՛ըիւն խըշխըշէքի՝ «առավի ջրի քըչքըչոցը» և այլն։

Ա՛լ շաղկապից և էական բայից առաջ ը, ի՝ հոդերին ավելանում է ն, որով և իրրև հոդ առացվում է ըն կամ ի՛ն, ինչպես՝ կըէոէքի՛ն ի ցըվէս «առատին է ցավում». Իս ոդիւր տարի՛ն իմ «ես դրա տերն եմ». Հաքըն ա մանդած «տաքն է կոտրըվել»։ Մատակըն ա քոնգվոծ «առուն է քանդվել». Սարըն ալ ի պարան նիւս «սարն էլ է փլուզում» և այլն։

Բայց եթե ալ գործածվում է իրրև մակրայ «այլևս» իմաստով, ն չի գրվում. ինչպես՝ հարի՝ ալ նիւս չի «հայրը էլ (=այլևս) չի գալիս». Մանդած ամանը ալ սըդանի չի «կոտրված ամանը էլ (=այլևս) չի սարքվի» և այլն։

Ճիշտ այդպես է նաև այժմյան գրական հայերենում. եթե էլ-ը գործածվում է «նույնպես, ևս, նաև» իմաստով, ապա նրանից առաջ ը հոդն անպայմանորեն դառնում է ն, իսկ եթե գործածվում է «այլևս» իմաստով, ընդհակառակն, ը հոդը ճնում է անփոփոխ. ինչպես՝ ընկերն էլ է գնում (=ընկերը նույնպես գնում է). բայց՝ ընկերը էլ չի գնում (=ընկերն այլևս չի գնում). վերջին դեպքում էլ-ը հաճախ առաջ է ընկնում (էլ ընկերը չի գնում), մինչդեռ «նույնպես, ևս, նաև» իմաստով՝ երբեք։ Այդ տարբերությունն անշուշտ իմաստի շփոթ, երկիմաստություն չբաւեղծելու ձգտման արդյունք է, և եթե երբեմն այս օրինքը չեն կիրառում, ապա այդ միայն չիմանալու հետևանք է։

Իրրև անորոշ հոդ գործածվում է մին «մի» թվականը, ինչպես՝ Մին կըրճրինէցէ իվ՛ոլ ա Մէղրա «մի կարճահասցի եկավ Մեղրի». Մին կընէկ գի՛նէս ի ջի՛րիւ «մի կին գնում է ջրի» և այլն։

Հատուկ անունների վրա հոդ չի դրվում. ինչպես՝ Սամսօն գի՛նէս ի իգին «Սամսոնը գնում է այգին». Ֆաչիկա ախպէրը տէղրա ա «Ֆաչիկի եղբայրը այստեղ է». Դէնակը տըվալ ըմ Հայկա «Դանակը տվեցի Հայկին» և այլն։

Տեղանունները նույնպես հոդ չեն առնում. ինչպես՝ Րէվան մօծ քաղաք ա «Երևանը մեծ քաղաք է», Մեղրա օթուա տէղ ա «Մեղրին լավ տեղ է» և այլն։ Բայց եթե տեղանունը գործածվում է փոխանվանաբար, այսինքն՝ իրենով արտահայտում է այդտեղի բնակչությունը, ապա հոդ կարող է առնել.

ինչպես՝ Հի՛գէրակը քէօչած ա Մեղրա «Ագարակը (=ագարակի բնակչությունը) փոխադրվել է Մեղրի». Այդ դեպքում էլ, սակայն, հոդը պարտադիր չէ։

Հոդի գործածության հետաքրքիր պատկեր են ներկայացնում ը հանգն ունեցող բառերը. անկախ գործածության ժամանակ այդ բառերի անորոշն ու որոշյալը միշտ նույն ձևն ունեն. ինչպես՝ մին գէօնը «մի գառ», մին ակնը «մի աչք», ոս գէօնը «այս գառը», ոս ակնը «այս աչքը» և այլն։ Սակայն ամբողջական նախադասության մեջ գործածվելիս տարբեր պարագաներում տարբեր ձևերով են հանդես գալիս։

ա) եթե ը հանգն ունեցող բառին նախադասության մեջ հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ կամ ալ-ը՝ «այլևս» նշանակությամբ, ապա անորոշն ու որոշյալը նույն ձևն ունեն. ինչպես՝ Մին գէօնը մուրթած ա «մի գառ է մորթել». Ոս գէօնը արնէս իմ «այս գառը տանում եմ». Ծառուն պրթկէն մին նօռնը կա «ծառի ծայրին մի նուռ կա». Ոն նօռնը կըտրալ ըմ «այն նուռը կտրեցի» և այլն։

բ) եթե ը հանգն ունեցող բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, կամ էական բայ և կամ ալ-ը՝ «նույնպես, ևս» նշանակությամբ, ապա անորոշ լինելու դեպքում վերջահանգը ն կորչում է. ինչպես՝ Ասալ ըմ հօր մին գէօնն առի «առաջի, որ մի գառ առնի». Իլլալ ծառը, մին ճօղն ալ մանդալ «բարձրացավ ծառը, մի ճյուղ էլ կոտրեց». Մին հասած նօռն ըմ բթրած «մի հասուն նուռ եմ բերել» և այլն։

գ) եթե ը հանգն ունեցող բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ կամ էական բայ և կամ ալ «նույնպես, ևս» նշանակությամբ, ապա որոշյալ լինելու դեպքում, իրրև ձայնավորով (ը) վերջացող բառ, առանում է ն հոդը. ինչպես՝ Ոնդիւր ակնըն ալ ի ցըվէս «նրա աչքն էլ է ցավում». Ոն գէօնըն ա օքուա, թա ոս «այն գառն է լավ, թե այս». Ոն ճողնըն տսիւր չի մանդված «այն ճյուղն այսօր չի կոտրվել» և այլն։ Այս օրինքը խստորեն պահպանվում է, եթե հաջորդում է էական բայ, ձայնավորով սկսվող բայ կամ ալ «նույնպես, ևս». իսկ եթե հաջորդում է ձայնավորով սկսվող որևէ այլ խոսքի մասի պատկանող բառ, ապա ն-ի հավելումը պարտադիր չէ։

Տասն>տասը, ինն>ինը բառերը գոյականաբար գործածվելիս առանում են ը հոդը, անկախ հաջորդող բառի ձայնավորով կամ բաղաձայնով սկսվելու հանգամանքից. ինչպես՝ Ա-

տիտնէրուն տասսըն իմ առէս ի, տասսըն քու «մատիտներից տասն ինձ մոտ է, տասը քո». Հընգէրնէրուս տասսըն գտնած ըն Ուրգվոթ, իններնը՝ Ղափան «ընկերներիս տասը գնացել են Օրդուբատ, իններ՝ Ղափանում: Բայց եթե դրանց հայրորդում է ալ «ես, նույնպես» կամ էական բայ, ավելանում է ևս մի ն, ինչպես՝ տասսըներն ալ քու առէս ի «տասն էլ քեզ մոտ է». Իններնըն իմ բիրած «ինն եմ բերել» և այլն: Ծօբն>օխտը բառը փոխանվանարար գործածվելիս հոդ է ստանում այն կանոններով, ինչ որ ն ը հանգն ունեցող բառերը:

Մուշի բարբառում ստացական ածականներից հետո գոյականի վրա հոդ չի դրվում. այսպես է գրաբարի և բոլոր եվրոպական լեզուների մեջ, բացի իտալերենից: Աշխարհաբարն ասում է. մեր հացը, ձեր տունը, Ում ձյուղի մեջ՝ իմ բարեկամը, քո ժողովուրդը, համմ. իտալ. il nostro pano, la vostra, il mio amico, il tuo populo, բայց ֆրանս. notre pain, votre maison, mon ami, ton peuple և այլն. Մշո բարբառն էլ ասվում է մըր ճաց «մեր հացը», մըր տուն «մեր տունը», գրաբ. ճաց մեր, տուն մեր և այլն:

Տիգրանակերտի բարբառում նկատելի է աշխարհաբարի ը հոդը, որ այստեղ է ձևն ունի, իհարկե անշեշտ. ինչ. փեռա՛ճե «բերանը», շո՛ւճե «շունը», ստո՛ւճե «ոչխարը» և այլն:

Մարաշի ենթաբարբառում որոշյալ ը և անորոշ մը հոդերը ստացել են՝ առաջինը ը, ի, ու, իւ և երկրորդը՝ մը, մի, մու, միւ ձևերը, բառի վերջին վանկի ձայնավորի հետևանքով. այսպես՝ շաբագը «շապիկը», փեդի «փայտը», աղջիկը «աղջիկը», դանօգու «դանակը», մուգու «մուկը», խիւդիւ «խոտը», շաբագ մը «մի շապիկ», փեդ մի «մի փայտ», աղջիկ մի «մի աղջիկ», դանօգ մու «մի դանակ», մուգ մու «մի մուկ», խիւդ միւ «մի խոտ» եօր միւ «մի օր»:

4. ՀՈԴԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Աշխարհաբարի որոշիչ հոդն է ն կամ ը. առաջինը իբր վերջահար կցվում է ձայնավորով վերջացող բառերի վրա, երկրորդը՝ բաղաձայնով վերջացող բառերի վրա. օր. մարդը, մեղուն, շունը, հայրը, պարտեզը, գինին, հովիվը, արևը:

Երբ մի բառ վերջանա անձայն յ-ով, բնականաբար կհամարվի ձայնավորանագ և կստանա ն որոշիչը. ինչ. տղան, կաթսան, շուկան (անցյալ դարում դեռ գրում էին տղայն, կաթսայն, շուկայն, որով պահած էին լինում գրաբարի կանոնը: Բայց դա ձևական էր միայն, որովհետև գրաբարում այս և նման բառերի մեջ յ հնչվում էր, իսկ անցյալ դարի աշխարհաբարում այսպիսի յ տառը հնչական չէր):

Երբ որոշյալ բառը նախադասության մեջ գտնվի ձայնավորով սկսվող մի բառից առաջ, հին հայկաբանների օրենքով որոշյալ գոյականի ը հոդը դառնում էր ն. ինչ. հոտն առա, մարդն ասաց, փոթորիկն անցավ, մինչև իսկ՝ Գրիգորն եկավ, ջուրն ողողեց դաշտը:

Բարբառներում այս երևույթը գոյություն չունի. սրանց մեջ հարանջը (hiatus) ընդունված է. օր. Պլ. Գիրքը անոր տվի, բսածը ըրի, բերանը առավ: Երև. Գիրքը այն մարդուն տվի, գիրքը առ, ջուրը բերանը առավ, մարդը երգեց: Այս նույն երևույթը անցել է նաև երկու գրական լեզուների մեջ: Սխալվում են նրանք, որոնք ժողովրդի ձայնը արհամարհելով, հետևվում են հին հայկաբանների օրինակին: Բարբառներում միայն էական բայից և ալ=էլ շաղկապից առաջ ը դառնում է ն. նույնը նաև գրականում. օր. Պլ. Գիրքն ալ անոր տվի — Երև. Գիրքն էլ նրան տվի, Պլ. բերանն էր — Երև. բերանուն էր (Պոլսի ռամիկ բարբառում իքեն մակրայից առաջ էլ ը դառնում է ն. ինչ. ըսելն իքէն «ասելու միջոցին», երթալն իքէն «գնալու միջոցին». անգամ բառից առաջ էլ ը դառնում է ն. ինչ. ջուրն անգամ խնայեց, երեխաներն անգամ իմանում են):

Արևմտահայ գրականում հատուկ անուններ հոդի կողմից ներկայացնում են հետևյալ մանրամասները.

1) Տեղանունները միշտ առանում են հոդ. ինչ. Անին Բագրատունյաց մայրաքաղաքն էր, Վանը Արծրունյաց, իսկ Տարսոնը և Սիսը՝ Ռուբինյանց:

2) Անձնանունները ժողովրդական լեզվի մեջ թեև միշտ առանում են հոդ (օր. Ներսեսը իմ ընկերս էր, Լևոնը չեմ սիրեր), բայց գրականում զանազան են:

ա) Նշանավոր մարդկանց անունը ուղղականում հոդ չի առանում, բայց հայցականում առանում է. ինչ. Մեսրոպ հայ գրականության հիմնադիրն է. Սահակ կանչեց Մեսրոպը. Սահակ ավելի առաջ ծնած էր քան Մեսրոպ.

բ) Երբ հատուկ անունը ունի իր վրա ստացական ածական կամ հատկացուցիչ, անպատճառ հոդ կստանա նաև ուղղականում. ինչ.

Հրէից Մովսէսը (մարգարէն) և մեր Մովսէսը (Աստուածին) իրարմէ 2000 տարի հեռու են։

գ) Էական բայի մոտ հատուկ անունը հոդ առանում է, բայց հենց որ հեռացավ, հոդը վերանում է. ինչ. Ըստ Աստուածաշունչ Հայկն է հայ ազգի նախահայրը. Ըստ Աստուածաշունչ հայ ազգի նախահայրն է Հայկ։

Ինչպես վերևում էլ ասացինք, աշխարհաբարի որոշիչ հոդը գրաբարի որոշիչ հոդին նման չէ. գրաբարի հոդը դիմորոշ է, այսինքն կապ ունի նաև գործող անձերի հետ։ Թե ինչպես հայերենը դիմորոշից անցավ որոշիչ հոդին, կարելի է բացատրել հետևյալ ձևով։

Շատ անգամ լեզվի մեջ պատահում էին այնպիսի ձևեր, որոնց մեջ դիմորոշ հոդը առացականի երևույթ էր առանում. այսպես, օրինակ՝

Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար.
Տուր ինձ բաժին որ անկանի յընչիցդ.
Աշխարհս անցանէ և ցանկութիւնն։

Այս խոսքերի մեջ հոգիս նշանակում է «այս հոգին, հոգին որ ինձ մոտ է», յընչիցդ «այդ ինչքերից», «ցանկութիւնն «այն ցանկությունը», բայց հեշտությամբ կարելի էր հասկանալ նաև «իմ հոգին, քո ինչքից, իր ցանկությունը»։ Այսպիսով դիմորոշը վերածվում էր առացականի։

Հայոց շուրջը խոսված լեզուների մեջ առացական հոդը սովորական երևույթ է. այսպես.

պրս. padaram «հայրս», padarat «հայրդ», padaraš «հայրը».
քրք. evim «տունս», evin «տունդ», evi «տունը».
արաբ. kitābī «գիրքս», kitābuka «գիրքդ», kitabuhu «գիրքը»։

Առացական հոդը ուրեմն մի տեսակ պահանջ էր դառնում հայերենի մեջ՝ տիրող լեզուների ազդեցությամբ։ Եվ, որովհետև հայերենի մեջ էլ հաճախ դիմորոշ հոդը առացական էր հասկացվում, ուստի դիմորոշ հոդը շեղվեց իր գծից և դարձավ առացական։ Այսպես առաջացան աշխարհաբարի մեջ առացական հոդերը. հայրս, հայրդ, հայրը նշանակեցին այլևս «իմ հայրը, քո հայրը, նրա հայրը»։

Երբ դիմորոշները այսպիսով այլևս վերացան, երրորդ դեմքի դիմորոշը (ն) բնականաբար պիտի դառնար որոշիչ հոդ և պիտի տարածվեր բոլորի վրա։

Փոխանցման նման մի երևույթ գտնում ենք վոտյակերենում։ Վոտյակ լեզվի մեջ առացական հոդերից եզակի բ և գ դեմքերը իրենց սովորական առացական նշանակությունից դուրս ունեն նաև «հոնկրետացման հասկացողություն» (թանձրացյալ իմաստ) և կատարում են մոտավորապես որոշյալ հոդի դեր։ Բացի սրանից եզակի Բ դեմքը տալիս է մտերմական բնավորություն. իսկ եզ. Գ դեմքը «այդ»-ի իմաստ (Емелянов, Грам. вот. яз., էջ 130)։ Այս երկուսն էլ ունենք նաև հայերենում։

Հայերենի մեջ -ը հանդող բառերը՝ անշեշտ հնչման պատճառով, կորցնում են իրենց վերջին ը ձայնը. այսպես ձուկն > ձուկը > ձուկ, եօթը > եօթը > յոթ։ Սրա համեմատ էլ բաղաձայնահանդ բառերը իրենց ձայնի որոշիչ ը հոդը դարձրին ը։

Հոլովման ժամանակ դիմորոշ հոդը հավասարապես ազատ կերպով ամեն հոլովի վրա չի գրվում անորոշ հոդի պես։ Կան հոլովներ, որ միշտ առանում են հոդ, ուրիշներ՝ ոչ։ Այսպես՝ ուղղական և հայցական հոլովները առանում են միշտ իրենց հոդը. սեռականը արևելյան աշխարհաբարում ոչ մի դեպքում հոդ չի առանում. գործիականը երկու գրական լեզուների մեջ և ներգոյականը արևելյան աշխարհաբարում նույնպես զուրկ են հոդից. բացառականը արևելյան աշխարհաբարում նույնպես զուրկ է հոդից, իսկ արևմտյան աշխարհաբարում Աբ հոլովմանց մեջ առանում է, իսկ Գ, Դ, Ե, Զ հոլովմանց մեջ չի առանում։

Ահա վեց հոլովմանց որոշյալի պատկերը.

Ո. Հ.	հացը	հացը	ձին	ձին	մեծութիւնը	մեծութիւնը
Ս.	հացին	հացի	ձիուն	ձիու	մեծութեան	մեծութեան
Տ.	»	»	»	ձիուն	»	»
Բ.	հացէն	հացից	ձիեն	ձիուց	մեծութենէն	մեծութիւնից
Գ.	հացով	հացով	ձիով	ձիով	մեծութեամբ	մեծութեամբ
Ն.	—	հացում	—	ձիում	—	(մեծութիւնում)

Ո. Հ.	օրը	օրը	քուրը	քուրը	հայրը	հայրը
Ս.	օրվան	օրվա	քրոջ	քրոջ	հոր	հոր
Տ.	»	օրվան	քրոջ	»	»	»
Բ.	օրվանն օրեն	օրվանից օրից	քրոջմեն	քրոջից	հորմեն	հորից
Գ.	օրով	օրով	քրոջմով	քրոջով	հորմով	հորով
Ն.	—	օրում	—	—	—	—

Հոդնակի

Ո. Հ.	(ն)երը	(ն)երը
Ս.	(ն)երուն	(ն)երի
Տ.	(ն)երուն	(ն)երին
Բ.	(ն)երեն	(ն)երից
Գ.	(ն)երով	(ն)երով
Ն.	—	(ն)երում

Գրաբարաձև հոլովման ժամանակ որոշիչ հոդ չի գործածվում. ինչ. ձկան ճոռը, բարբարոսաց արշաւանքը, մարգարեից պատգամները, մարդկանց բարքը, Հայոց պատմութիւնը և այլն։

Եթե այս բոլոր պարագաները ուզենանք մի ընդհանուր կանոնի վերածել, կտեսնենք, որ բոլոր դեպքերում (ուղղականը և հայցականը հոլով չհաշված), ուր որ հոլովը վերջանում է ձայնավորով՝ դրվում է որոշիչ հոդ, իսկ ուր որ հոլովը վերջանում է բաղաձայնով՝ հոդ չի դրվում։ Եվ որովհետև ձայնավորի վրա միշտ ն, իսկ բաղաձայնի վրա միշտ ը է հոդը, կարող ենք մի խոսքով ասել, որ հոլովման մեջ հոդն է միշտ ն և ոչ՝ ը։ Բացառություն է կազմում արևելահայ աշխարհաբարի սեռականը, որ սկզբունքով միշտ զուրկ է հոդից։

Բայց ինչպես արևմտահայ գրականը, նույնպես և ում ճյուղի բարբառներից շատերը սեռականի մեջ էլ ունեն որոշյալ հոդ. ինչ. Ղրր. Կրիքօրէն տօնը «Գրիգորի տունը», Թիւնիւն պըէլին «Հարութեան կնքահայրը»։ Այսպես է նույնիսկ արևելահայ գրականը՝ կրկնակ հոլովման մեջ (տես վերը). ինչ. Գրիգորինը, Մեսրոպինը. Մեսրոպինի և այլն։ Նույնը ավելի պարզ երևում է նրանց է, իրանց է և այլն ձևերի մեջ, ուր կրկին ն-երից վերջինը հոդն է, իսկ առաջինը սեռականի հոդը (համմտ. իմ-ն է, նրան-ն է)։

Սրանք ցույց են տալիս, որ արևելահայ աշխարհաբարն էլ նախապես գիտեր որոշյալ սեռական հոլով (հացին, Մեսրոպին), ինչպես է գրաբարի և արևմտյան աշխարհաբարի մեջ։ Բայց որովհետև այսպիսով սեռական և տրական միշտ միևնույն ձևն էին ստանում, արևելահայ աշխարհաբարը ուզելով գոնե մի որոշ դեպքում անպատճառ զանազանել սեռականը տրականից, դիտմամբ ստեղծել է անհոդ սեռականի դրությունը, որով ապահովել է սեռական և տրական հոլովների զանազանությունն ու անկախությունը։

Վերոհիշյալ հետագաս, անշեշտ և անհոլով մի ձևը կը ճյուղի բարբառներում օգտագործվեց, որը և անշեշտ լինելու պատճառով ԹուլանՆալով՝ դարձավ մը, նաև՝ ըմ ձայնավորի մոտ մ, ինչ.

գինի մը, մարդ մը, մարդ ըմ, մարդ մ'ալ։

Արևմտյան գրականը ընդունել է միայն մը և մ։

Ում ճյուղի բարբառները հետագաս մի ձևը չօգտագործեցին, այլ միայն նախագաս մի, որով եթե արդի արևմտահայ գրական լեզուն կարող է ասել հաջողությամբ՝

մէկ մարդ (թվական), մարդ մը (անորոշ)

և նույնիսկ երկուսի միացմամբ՝

մեկ մարդ մը (իբր ֆր. un certain homme)
մեկ կնիկ մըն ալ
մեկ տուն մը ունեի

արևելյան գրաբարը կարող է ասել՝

մի մարդ կամ մեկ մարդ (թվական)
մի մարդ (անշեշտ, անորոշ)։

Արևմտյան բարբառներում էական բայից և ալ շաղկապից առաջ՝ ներդաշնակության համար մը հոդի փոխարեն գործածվում է միջին մն ձևը. օր. մարդ մըն ալ, մարդ մըն է, ես ալ մարդ մըն էի։

Պոլսի բարբառում, որից նաև արևմտյան գրականում, մը գործածվում է նաև մակբայների հետ. ինչ. ուժով մը գարկավ, կամացուկ մը քովէս անցավ, աղոր մը լվաց, ագէգ մը սրբեց.— արևելյան գրականումն էլ, բարբառներին հետելով ասվում է՝

մի լավ ծեծեց, մի երկար հառաչեց, մի ուժեղ խփեց։

(Վերջերս Երևանի բարբառում այս մի անորոշը մի արդելական մակբայի հետ չշփոթելու համար սկսեցին գործածել «մի հատ» ձևը, ինչպես «մի հատ լավ ծեծեց, մի հատ լավ ծիծաղեց». այսպես նաև նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ մի կամ երկու թվականի հարց չկա. ինչ. մի հատ գնա տես, մի հատ գնա իմացիր)։

Պոլսի բարբառում, որից նաև արևմտյան գրականում, նույնիսկ հոգնակի գոյականից հետո կարելի է գործածել մը անորոշ հոդը. օր. բաներ մը ըսեր ես, թղթի կտորներ մը կրեղմնավորեիր։

Ամենք, նույնիսկ այն դեպքերում, ուր լեզուն չի ընդունում որոշյալ հոդը, կիրառում են սովորական ը հոդը. օր. Գե-

տուքյանը վճարեց. ծառաներովը եկավ. քրոջը մոտ. այն օրվանը. ձկանը հոտը, հացովը «նրա հացով», հացերովը «իր կամ նրա հացերով» և այլն։ Սրանք առարկական հոդեր են, որոնք ունեն տարբեր իմաստ. այսպես՝ վերի ձևերը նշանակում են՝ իր պետուքյան վճարեց, իր ծառաներով, իր քրոջ, այն օրվա եղածը (կրկնակ հոլովում), նրա ձկան հոտը և այլն։

Պետք չէ շփոթել առարկական հոդը դիմորոշ հոդի հետ։

Հնդեվրոպական նախալեզուն վերջածարներ ուներ, բայց նախադարներ (ինչպես դարձել է օր. հյ. քաա, որից՝ առգտանել, տեղերիւրել և այլն) չկային։

Ծանոթ.— Անցյալ դարում արևելյան հայերենում ը հոդը դրվում էր նաև բազմաձայնահանգ հոլովների վրա. օր.

Ոլոր մոլոր Կուրն էր գալիս Կովկաս տարիցը.
Մի աննման ձայն էր գալիս էն մյուս ափիցը.

Այժմ մենք ասում ենք՝

փողոցումն է, խոհանոցումն է, խանութումն է.

իսկ նոր սերունդը ասում է՝

փողոցում է, խոհանոցում է, խանութում է։

Սակայն քե հները և քե նորերը հակառակ դիրքով ասում են՝

Ո՞ւր է.— փողոցում, խանութում, խոհանոցում։

Արդի գրողների մեջ էլ սովորական դարձավ տրականի վրա դնել ը.— հարկը վճարեցին պետությանը, անհապաղ հկայտնվի Չիլիի կառավարությանը և այլն։

Հոդի գործածության համար իրրև ամփոփում Մելյեն (MSL 10, էջ 265) ասում է հետևյալը.

Հայերենի մեջ հոդը հունարենից բոլորովին տարբեր գործածություն ունի։

Ածականը և անորոշ դերբայը գոյականի վերածելու համար ոչ մի արժեք չունի. ցուցականի իմաստը ակնհայտ է, իսկ զուտ քերականական գործածությունը քիչ կարևորություն ունի. այդ պատճառով էլ հայերենի մեջ հոդը շատ հաճախական գործածություն չունի։ Որովհետև ս, դ, ն հոդերը կապված են միշտ դեմքի հետ, ուստի նրանք որոշ չափով գործածում են իմաստը։

Այս բոլորից հետևում է, որ հայերենի հոդը ունի երեք պարագա.

1. Որոշիչ հատկություն, որին ընկերանում է ցուցականի քեքե նշանակություն. սրա համար են դրվում ս, դ, ն հետադաս դիմորոշ հոդերը։

2. Որոշիչ հատկություն (հաճախ շատ թույլ. օր. զայր ոչ գիտեմ Ղկ. Ա, 34), առանց նշանակելու ցուցական իմաստը. երբ բառը սեռի խնդիր է, հայցականը առանում է զ նախդիրը։

3. Ջուտ անորոշ գոյական. հայցականը չունի զ նախդիրը. սրա համար գործածվում են անորոշ մի քանի դերանուններ, որոնցից գլխավորն է մի։

Ժորագիրներում գրարարը սովորություն չունի հոդ գործածել։ Նույնիսկ առակների վերնագիրը լինում է առանց հոդի. ինչ. Պատմութիւն Հայոց, Գիրք Յորայ, Իմաստութիւն Սողոմոնի, Գայլ և աղուէս, Օձ և առիւծ։

Աշխարհաբարում ընդհանրապես այս կանոնը պահպանվում է, բայց երբեմն հարկ է լինում դնել հոդ. ինչ. Եզոպոսի առակները, Կռիլովի առակները, Նարեկացին և յուր դարը։

Ֆրանսերենում գրքերի անունները նույնպես անորոշ են, իսկ առակների վերնագրերը՝ որոշ. ինչպես՝ Histoire de France, Le loup et le lion. *անգլերենում նույնիսկ անորոշ հոդ դնելով ասում են* An english grammar, An english-armenian dictionary.

Այս գլուխը վերջացնելու համար պիտի խոսենք կրկնակ որոշիչ հոդի մասին, որ գտնում եմ մի քանի բարբառներում։

Երբ բառը վերջանում է ձայնավորով, որոշյալ հոդ առանալու ժամանակ, ոչ միայն առանում է ն, այլև՝ ը։ Օր. Գոլթի բարբառով ասվում է ձիը, դրացիը, Նոր-Ջուղայի և Նոր-Նախիջևանի բարբառով թիը՝ «թին», Սուչավայի և Տիգրանակերտի բարբառով՝ մեղուը «մեղուն»։

Կրկնակ որոշիչ հոդ գործածելու երևույթը գտնում ենք նաև մի քանի ուրիշ լեզուների մեջ։ Օր. ֆրանս. demain *«վաղը», բառից* le lendemain *«հաջորդ օրը» երկու հոդով, փս.* l'endemain. *Ֆրանս. բարբառներում* abbē *«աբբա» բառից հոդի կրկնությամբ՝* le labbè.

Բայց ճիշտ դատելով, սրանք ոչ թե հոդի կրկնությամբ են կազմված, այլ ձայնի ըմրոնումով. հոդը կարծել են բառի անջատ մասը։ Այսպես Գլ. ձիւն, դրացիւն ուղ. և անորոշ ձևն է, սեռականն էլ լինում է ձիւնի, դրացիւնի, հգ. ձիւներ, դրացիւներ,

ուսաի հոգով՝ ձինը, դրացինը: Դրա համար է, որ թի Ագլ. բարբառով դարձել է թայն, և մեղու—Մշո բարբառով՝ մէղոն:

Ճիշտ այսպես Մալթա կղզու արաբերենումն էլ il կամ l որոշիչ հոդը կցվելով բառասկզբին, միացել է նրան: Ասում են՝

il-ma	փխ.	mā «ջուր»
l-ifâ	»	ifâ «օձ»
il-l-ifem	»	yefîm «որբ»
libni	»	ibnî «որդի»

Եվ այսպես մի տասնյակ բառ (Roudanovsky, էջ 9):

Ներգոյականի և նախդրիվ հայցականի տարբերությունը թեև շատ պարզ հասկանալի է, բայց երբեմն լեզվից լեզու տարբերվում է. այսպես գրաբար ասում ենք.

եդ զճոսա ի բանսի (Ծն. Ա. 3), իսկ մենք այժմ ասում ենք՝ նրանց բանսը դրեց և ոչ թե նրանց բանսում դրեց: Նմանապես ասում ենք գրպանը դրեց, բայց գրաբար՝ եդ ի գրպանի: Նաև Թուրքերենի մեջ, ուր ներգոյականի և նախդրիվ հայցականի տարբերությունը շատ պարզ է, դնել բայը պահանջում է նախդրիվ հայցական. ինչպես՝ jebine qo (և ոչ թե jebinde go): Գրաբարից աշխարհաբարի այս անցումը կարծում եմ Թուրքերենի արդյունք է:

Նմանապես գիտել յանձն նախդրիվ հայցական է, մինչդեռ ըստ դասողության, դադարում է և պիտի լիներ յանձին. ինչ՝ ...Գիտաց Յիսուս, յանձն իւր (Մրկ. ե, 30), աշխ. իր անձում իմացավ: Թեև առանց որևէ նշանի գոյականը դառնում է անորոշ, բայց հաճախ կարելի չէ առանց մի բառի գոյականը անորոշ դարձնել. այսպես՝ սխալ են հետևյալ նախադասությունները.

Հասնում է մինչև Մանազկերտ, ուր թողնում է արձանագրութիւն (Ղափանցյան, «Ուրարտուի պատմ.», Երևան, 1940, էջ 125):

Մեր կարծիքով եղել է և երկրորդ բառ, «թագաւոր» իմաստով» (անդ, էջ 85):

(Տարբածված բառերից առաջ անհրաժեշտ է մի անորոշը):

ՅԱՆԿԵՐ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազերեն—61—62, 206, 327, 334, 359—360, 938, 958
Ագճի—229
Ագուլերեն—327, 334
Ադրբեջաներեն—32, 811
Ազանդե *կամ* Նիամ-Նիամ—75, 259—260
Ալար—853
Ալբաներեն—50, 109, 197—198, 380—381, 946—947, 952
Ալգոնկիներեն—72—73, 251
Ալեուտերեն—175
Ալթայական լեզուներ—242, 267, 285, 828
Ախազվա—254
Անոմ—193
Ամբրիմ—193—194
Ամերիկյան (հնդկացիական) լեզուներ—8, 190, 210—211, 251, 434, 950
Ամհարերեն—241, 253—254, 379
Այմարա—323, 333
Այնու—183—184, 390
Անգլերեն—4, 5, 6, 11, 19, 31, 33, 50, 65, 69, 70, 77, 79, 80—81, 88, 110, 138, 140, 217, 238, 270, 273, 276, 278, 285, 286, 296, 369, 375, 378, 381, 383, 385, 389, 395, 736, 935, 941, 946, 952, 956, 965—966, 991
Անգամերեն—4, 58, 71, 74, 76, 77, 78, 189, 250, 277, 278, 949
Անոի *կամ* Կամպա—201, 259
Աշանտի—204
Առաուգե—254
Ասորերեն—66, 90, 97, 190, 243, 296, 297, 304, 317, 435—436, 462, 510, 512, 939, 953
Ասուրերեն—25, 211, 219, 246, 262, 511, 777, 939, 440
Ավաբակալ—319—320
Ավարերեն—209—210, 259, 325, 326, 347
Ավստրալիական լեզուներ—179, 187, 242, 321—322
Ավստրոնեզիական լեզուներ—*տե՛ս մալայո-պոլինեզյան լեզուներ*
Աստիկյան բարբառ *հին հունարենի*—129, 247, 248, 338, 399, 436, 440
Արաբերեն—18, 26—27, 71, 76, 97, 195, 204—205, 206, 219—220, 221, 224, 227, 230, 232, 235—236, 241, 242, 246, 262, 266, 268, 280, 285, 286, 287, 317, 355, 358, 361, 369, 381—382, 488, 503, 511, 514, 599, 607, 638, 746, 748, 775, 780, 788, 793, 838, 878, 893, 939, 940, 941, 952, 956, 957, 958, 959, 974, 986, 992
Արամերեն—190, 244, 246, 939, 953
Արավակերեն—233, 255, 316
Արաուկան—244
Արևելյան հնդկական լեզուներ—269
Արիական լեզուներ—82, 83, 103, 109, 117, 139—140, 245—246, 337, 340, 344—345, 363, 372, 432, 948
Արչի—196—197
Աուլուա—191, 937
Աուկա—205
Աֆար—224—226, 227, 258
Աֆրամերեն—207—208, 269—270, 272, 378, 383, 386, 828
Աֆրիկյան լեզուներ—5—6, 219, 241, 251, 262

Բալթիական (Բալթիկ) ճյուղ—399, 428
Բալթիկ-սլավոնական լեզուներ—109, 247, 287, 340, 344—345, 363, 376, 432
Բակի—177, 185
Բակաիրի—126, 175, 257
Բամբարա—185, 216
Բանդա—967
Բանտու լեզուներ—58, 140, 218, 262, 366
Բաշգալի *կամ* բաֆիրի—330
Բաշկիրերեն—711—712
Բասկերեն—6, 121, 219, 331, 952
Բաութ (Բաութա)—257
Բարի—230, 953
Բարեա—264, 435
Բեդաուե—220—221, 255, 941
Բելուջերեն—207, 374, 378, 383, 945
Բենգալի—269, 396
Բենովիական բարբառ *հին հունարենի*—34, 440
Բեռոյա *կամ* տուկանո—387, 435
Բերբեր(ական)—221—222, 229, 265, 281, 943, 958, 959
Բիլին—226—227, 266
Բիշարի—222—223, 280—281
Բիրմաներեն—194, 257, 381
Բներյաճ—176
Բոնգու—81—82, 181—182
Բոնոռկ-Իգորոտ—182, 314, 950
Բոր *կամ* Բորե—254, 361
Բրաուի—70, 210, 374, 434, 854, 967
Բրաջ—286
Բրետոներեն—270, 271, 272, 378, 952, 956, 967
Բրյումբր կղզու լեզու—79—80
Բուգոտու—185
Բուդումա—232
Բուլգարերեն—*տե՛ս բուլգարերեն*
Բուլղարերեն—268, 376, 380, 948—949, 952, 967
Բուշմեներեն—281
Բուրյաթերեն (=Բուրյաթ-մոնղոլերեն)—388—389, 710, 853
Գալիբի—183
Գալլա—197, 211—212, 952
Գալլերեն—31, 108, 112, 344
Գանգ—317
Գարո—187
Գեզ—254
Գերմանական լեզուներ—43, 107, 109, 113, 139—140, 287, 340, 432, 945, 947, 956
Գերմաներեն—4, 5, 7, 25, 31, 33, 60, 64, 69, 79, 107, 108, 110, 111, 112, 122, 123, 127, 128, 129, 133, 138, 139—140, 146, 252, 266, 269, 274, 276, 281, 310, 338, 342, 343, 344, 351, 375, 379—380, 381, 383, 395, 436, 710—711, 934, 948, 952, 953, 954—955, 956, 958, 965
Գիլակերեն—260, 270, 710, 937
Գիլգիտի-շինա—223
Գնաո—223
Գնչուերեն—331
Գոախիրա (Գոայիրա)—196, 254
Գոթերեն—29, 31, 50, 65, 83, 101, 102, 107, 108, 109, 110, 112, 116, 129, 247, 252, 274, 289—290, 336—363, 372, 375, 397, 402, 417, 424, 429, 503, 945
Գոնդի—260, 374, 434
Գուլֆեի—227—228
Գուջարաթի—269, 330

Դագոմբա—230, 315
Դազուր—332
Դակոտա—202, 952—953
Դահոմե *կամ* Ֆոնգբե—75—76, 938
Դայակ—213, 256, 314
Դանիերեն—266, 271, 382, 527, 711, 951—952, 956, 957, 958, 965, 967
Դարգվա—209—210, 326
Դինկա—218—219
Դորիական բարբառ *հին հունարենի*—338, 399, 430, 434, 439
Դրավիդյան բնաանիք—6—7, 73, 236, 262, 283, 284, 357, 393, 434, 710, 853—854
Եբրայեցերեն (Եբրայերեն)—177, 190, 206, 244, 246, 266, 287, 295, 369, 382, 403, 491, 939, 953, 956

Եգիպտացերեն—126, 218, 242, 243, 262, 280, 314, 935, 939
Երովպացերեն—77—78, 204—205, 219, 243, 346, 940
Եվրոպական լեզուներ—7, 9, 121, 134, 267, 280, 386, 520, 529, 934, 957, 959, 962, 984

Ջենդերեն—29, 65, 102, 107, 108, 109, 110, 111, 112, 114, 124, 128, 129, 247, 268—269, 336—363, 376, 399, 400, 401, 418, 442, 449, 502, 507, 512, 945
Ջիրյեներեն—19, 327, 328, 329, 332, 333, 359
Ջոբ—183, 361—362

Էլամերեն—262, 943—944
Էոլիական բարբառ *հին հունարենի*—248
Էսկիմոսերեն—232—233, 246
Էստոներեն—323, 327, 356, 399
Էվե—185, 318
Էվեներեն—323
Էտրուսկերեն—710

Թաթասրան—*տե՛ս Տաթասթան*
Թաթարական լեզուներ—*տե՛ս Թյուրքական լեզուներ*
Թաթարերեն—357
Թաթերեն—209
Թամիլ (Թամուլ)—7, 236
Թայ-սիամ լեզուներ—243
Թյուրքական լեզուներ—58, 96, 392, 395, 935—936, 938, 968, 974, 977, 986, 992
Թոխարերեն—60, 111, 248, 281, 345—346
Թուշերեն—710
Թուրքերեն—6, 7, 8, 14, 23—24, 32, 69, 70, 72, 77, 78, 84, 96—97, 98, 120, 123, 126, 130, 140, 278, 279, 285, 286, 308, 315, 355, 358, 367, 371, 386, 488, 527, 544, 560, 565, 571, 573, 584, 595, 598, 599, 601, 605, 608, 615, 616, 688, 695, 711, 717, 722, 729, 733, 736, 737, 738, 756, 760, 767, 771, 775, 781, 782, 783, 785, 786—787, 790—791, 792, 793, 794, 795, 800, 803, 828, 833, 841, 854, 893, 898, 902, 929, 935—936, 938, 974

Իակ—937
Իբո—188
Իդիշ—269
Ինդոնեզյան լեզուներ—78, 950
Իռլանդերեն—69, 113, 114, 122, 271, 343, 370, 377, 400
Իսպաներեն—259, 273, 292, 378, 712, 946, 952, 953
Իտալական ճյուղ—82, 109, 337, 340, 432
Իտալերեն—76, 79, 140, 207, 265, 266, 276, 281—282, 286, 292, 369, 370, 378, 528, 717, 934, 946, 952, 953, 954—955, 958, 965, 966, 984
Իտոնամա—435
Իրանական (իրանյան) լեզուներ—270, 374

Լաբել—196
Լազերեն (ճաներեն)—97, 278—279, 377
Լակերեն—196, 325—326, 332
Լամուտերեն—*տե՛ս Էվեներեն*
Լանգբդոկ—946
Լառսերեն—951
Լապոներեն—244, 356, 434
Լապպերեն—177, 327, 332, 337, 338, 339, 359
Լատիներեն—6, 10, 11, 14, 21, 29, 31, 39, 50, 60, 64, 65, 69, 70, 71, 78, 82, 83, 101—103, 107, 108, 113, 117, 119, 120, 123, 125, 127, 129, 130, 133, 138, 140, 174, 236, 239, 240, 247, 252, 261, 262, 265, 267, 270, 271, 272, 273, 287, 288, 289, 290, 291, 298, 336—363, 370, 375, 377, 379, 380, 381, 394, 398, 400, 402, 404, 408, 412, 414, 417, 428, 429, 431, 439, 443, 488, 503, 520, 528, 710, 945, 946, 953

Լատիշներեն—69, 91, 237, 238, 241, 262, 270, 376, 397, 399, 404
Լեռներեն—29, 30, 116, 207, 237, 238, 267, 274, 756, 972
Լեռներեն *տե՛ս լատիշներեն*
Լեռնապես—251
Լեռնտա—*տե՛ս Թոնդ*
Լիթվաներեն—*տե՛ս լիտվաներեն*
Լիմբու—199
Լիվերեն—368
Լիտվաներեն—50, 60, 65, 82, 91, 102, 107, 108, 109, 110, 111, 112, 113—117, 237, 246, 262, 270, 289—290, 336—363, 376, 397, 399, 401, 404, 417, 428—429, 432, 442
Լիֆու—187, 937
Լոնգգու—185

Խալդերեն—377, 441
Խասի (խասսի)—193, 390—391, 942
Խովար—206

Կաբարդիներեն—144, 327, 328, 333
Կաբիլ(երեն)—202, 228—229, 258, 378—379
Կազակ-կիրգիզներեն—78
Կալմիկներեն (կալմուկերեն)—198—199, 322
Կանիտա—366
Կամիլարոյ—331—332
Կամիսներեն—107, 114, 287, 340
Կամչադալ—244
Կանգ (կուի)—205
Կանիչանա—712
Կանուրի—74
Կասպյան լեզուներ—853
Կատալան—378, 946
Կաոն—185—186, 322—323, 360
Կարաիբներեն—254
Կարիբի բնաանիք—214
Կարոլինյան լեզու—183, 195, 256
Կարոլյան լեզու—*տե՛ս կարոլինյան լեզու*
Կարրիեր—190, 235, 434
Կաֆա—216—217
Կելտական լեզուներ—82, 109, 129, 140 338, 340, 432, 958
Կեչուա—*տե՛ս Թունա*
Կիժ—201—202
Կիչե—366—367
Կիպեա—214, 365
Կիրիրի—205—206, 256
Կուբալի—373
Կյուրինեներեն—76
Կոմի-պերմերեն—241, 323
Կոնգո—74
Կոոս—957
Կովկասյան լեզուներ—97, 259, 262, 325, 332, 333, 377, 395, 441, 710, 828
Կորաճա—75, 284, 316—317
Կորեերեն—15—16, 180, 196, 281, 321, 362
Կորյակերեն—180, 244, 334,
Կորոկ—178
Կպելլե—193, 318—319, 712, 942—943
Կվամերա—74, 187, 937
Կրի—142, 202, 250
Կրեոական բարբառ *հին հունարենի*—342
Կուակյուտլ—73, 75, 76
Կուի—*տե՛ս կանդ*
Կուլիվիու—179, 937
Կումիսներեն—*տե՛ս կումիսկերեն*
Կումուխներեն—70, 358, 941
Կուսա—192—193
Կուսաման—263—264
Կուրուխ—188, 260—261

Հաիդա—79, 190
Հավաի—72, 328, 390, 937—938
Հարավային կովկասյան լեզուներ—323, 335
Հարար—177—178, 317—318, 934
Հաուսա—197, 211
Հեսսերեն—436
Հերերո—280
Հիբիրերեն—246, 336—368, 374—375, 417, 418
Հիմյարի—939, 967
Հին անգլերեն *կամ* անգլոսաքսոներեն—30, 129, 140, 270—271
Հին բարձր գերմաներեն—29, 31, 60, 65, 71, 109, 110, 112, 113—117, 120, 133, 140, 237, 247, 338, 343, 372, 397, 417, 528
Հինդի—257
Հինդուստանի—269, 376, 386, 828, 938, 945, 948, 949, 958
Հին եգիպտական լեզու—316
Հին իտալացերեն—60, 65, 102, 107, 108, 109, 120, 247, 283, 284, 341—363, 371—372, 375, 440, 947, 949, 952, 953, 967
Հին խալացերեն—65, 107
Հին լատիներեն—*տե՛ս լատիներեն*
Հին լիտվաներեն—*տե՛ս լիտվաներեն*
Հին Հյուսիսային լեզու—*տե՛ս հին իսլանդերեն*
Հին ճապկերեն—396
Հին պարսկերեն—140, 313, 341, 344, 357, 374, 375, 377
Հին պրուսերեն—34, 89, 110, 252, 337, 342, 343, 344, 372, 397, 440, 948
Հին ռուսերեն—112, 120, 122, 138
Հին սաքսոներեն—82
Հին սլավոներեն—29, 31, 34, 102, 107, 109, 111, 113, 117, 120, 123, 124, 128, 133, 139, 140, 236, 237, 243, 247, 274, 288, 291, 336, 363, 394, 396, 399, 402, 404, 413, 414, 417, 430, 432, 433, 436, 437, 440, 442, 528, 948
Հին ֆրանսերեն—*տե՛ս ֆրանսերեն*
Հիպերբորյան լեզուներ—23—25, 30, 33, 61
Հյուսիսային կովկասյան լեզուներ—334
Հնդեվրոպական (նախա) լեզու—8, 11, 13, 21, 24, 25, 30, 33, 35, 36, 50, 53, 54, 59, 62, 64, 66, 67, 82—83, 89, 91, 96, 97, 98, 103, 105—118, 129—130, 132—133, 135—136, 138—139, 170, 217, 242, 243, 245—247, 274, 284, 286—288, 289—292, 293, 304, 335—363, 371, 372, 374,—375, 376, 377, 381, 394—399, 402, 404, 407, 408, 412, 413, 414, 415, 417, 418, 428—442, 443, 503, 506, 511, 512, 519, 528, 531, 770, 931, 935, 944—945, 990
Հնդեվրոպական լեզուներ—67—68, 98, 102, 127, 128, 236—237, 246, 248, 252, 261, 262, 287, 298, 335—363, 374—375, 386, 389, 394—399, 418, 430, 710, 730, 828, 940, 948
Հնդ-իրանական լեզուներ—246
Հնդկական լեզուներ—269, 270
Հնդկերեն—*տե՛ս սանսկրիտ*
Հոլանդերեն—273, 938
Հոմերյան հունարեն—236, 429, 430, 442,
Հոնիական բարբառ *հին հունարենի*—*տե՛ս յոնիական բարբառ*
Հոռենդոռերեն—76, 242, 262
Հունարեն—6, 8, 9, 10, 11, 13, 14, 21, 27, 29, 31, 33, 36—37, 44, 47, 48—50, 53, 56, 60, 64, 65, 66, 67, 69, 70, 79, 80—81, 82, 83, 89, 90, 91, 95, 101—103, 106—118, 119, 120, 122, 123, 124, 125, 127, 128, 129, 130, 133, 135, 136, 138, 139—140, 174, 236—237, 239—240, 243, 247, 248, 252, 267, 287, 289—292, 293, 295—296, 297, 301, 302, 304, 305, 336—363, 369, 374—375, 377, 394—399, 401, 402, 403, 404, 408, 410, 413, 414, 415, 417, 418, 421, 422, 423, 424, 428—436, 439—443, 486, 488, 491, 492, 494, 509, 512—513, 517, 518, 519—520, 528, 607, 695, 717, 873—874, 879, 945, 952, 953—954, 958, 959, 990
Հունգարերեն—9, 246, 323, 324, 327, 333, 334, 335, 356, 358, 434, 940
Հուպա—81

Ջուբուկուա—214, 273, 365

Ղպտիերեն—174—175, 230, 242, 243, 938

Ճամալալ—323
Ճապոներեն—15, 122, 141, 189—190, 191, 236, 262, 318—319, 320, 327, 935

Մալայերեն— 179, 315
Մալայո-պոլինեզյան *կամ* ավստրոնեզիական լեզուներ— 950
Մալգաշերեն— 70, 71, 75, 179—180, 186—187, 944, 951
Մալու— 937
Մակուչի— 199
Մամսիլա— 181
Մայա— 74—75, 127, 201, 211, 246, 361
Մայդու— 70—71, 72, 77
Մայպուրե—254, 259
Մանդե— 62, 357—358
Մանդինգ— 216, 320
Մանջուրերեն (մանջուերեն)— 190—191, 215—216, 285, 374
Մասաչուզեթի լեզու— 199—200, 250
Մարաթի— 198, 251, 269, 326, 375, 385, 943, 955
Մարերեն—512
Մարրիզյան կղզիների լեզու— 175, 390, 937
Մելանեզյան լեզուներ— 74
Մեների— 220
Մինիանկա — 197, 263, 875—876
Միջին բարձր գերմաներեն— 123, 436
Միսուրալ— *տե՛ս պրովանսալ*
Միվոկ— 178
Միքս— 176
Մոնղոլերեն— 140, 262, 285, 362, 692, 710
Մոն-քմեր— 242, 937
Մոսկիտո— 175—176, 262—263
Մոսա— 212—213, 244
Մորովիներեն— 327, 328, 330, 332, 337—338, 339, 940, 967
Մոքսո— 254
Մուբի— 228, 255—256
Մունդա— 242
Մունդարի— 251
Մուրրեյ կղզու լեզու— 80
Մուրունդի— 332

Ցաբեմ— 80, 251, 315
Ցապոներեն— *տե՛ս հապոներեն*
Ցավայերեն— *տե՛ս Ջավայերեն*

Ցոկուց— 178—179
Ցոնիական բարբառ *հին հունարենի*— 430
Ցորուբա— 175, 255, 316
Ցուկագիր— 200, 323, 330—331, 333
Ցուկաաեկան— 253, 940—941
Ցուրակարե— 365

Նաբալոյ(ե)— 215, 943
Նագա— 936—937
Նահուատլ—212, 214, 952
Նամա— 61, 76, 252—253, 283, 284, 318
Նաս (Նասս)— 434
Նավահո— 182, 434
Նարրինյերի— 254, 320, 332
Նեենցերեն— 244, 245, 264
Նեպալի— 256
Նեվարի— 203, 329, 330
Նիամ-Նիամ— *տե՛ս ազանդե*
Նիմիլան— *տե՛ս կոլյակերեն*
Նձիմա— 233—235, 967
Նոգայերեն— 711
Նորալաաիհ լեզուներ— 270, 378
Նոր բարձր գերմաներեն— 65
Նոր Ջելանդիայի լեզու— 213, 264, 390
Նոր Ճղկերեն լեզուներ— 362, 391, 396
Նոր հունարեն— *տե՛ս հունարեն*
Նոր պարսկերեն— *տե՛ս պարսկերեն*
Նոր պոմերանյան լեզու— 215, 321, 943
Նորվեգերեն— 266, 947—948
Նուբիերեն— 712
Նուգուգու— 937

Շիլուկ— 72, 194—195, 264, 367—368
Շիղնի— 270, 272—273, 384
Շխաուրի— 220
Շոռ— 328—329, 712
Շվեդերեն— 31, 140—141, 266, 375, 383, 710, 949—950, 957—958, 967

Չեխերեն— 113, 247, 292, 376, 380, 397, 520, 730, 875, 935
Չեչեներեն— 26, 203, 330, 331, 346—347, 710

Չերեմիս— 337—338
Չերքեզերեն— 327
Չիապանեկա — 214
Չիլիի բնիկների լեզու— 119, 244, 387—388
Չիլուբա— 72
Չիկիտա— 364—365
Չինարեն—4—6, 7, 14, 15, 25, 58, 112, 145—146, 189, 191, 262, 267, 277, 278, 314, 316, 335, 356, 385, 932, 935—936
Չինուկ— 8, 242, 253, 284
Չուվաշերեն — 18, 77, 357, 853
Չուտիյա— 187
Չուբչիերեն—244

Պալի— 246, 362, 372, 373, 391
Պահլավերեն— 246, 269, 357, 507, 509, 711, 713, 945, 958, 965
Պամիրի իրանյան բարբառներ—384
Պարսկերեն— 17—18, 69, 70, 84, 85, 86, 108, 111, 122, 124, 127, 128, 129, 131, 132, 137, 138, 140, 145, 190, 199, 206—207, 208, 209, 247, 268—269, 278, 285, 308, 357, 369, 371, 374, 375, 376, 378, 383, 384, 395, 488, 507, 508, 512, 515, 517, 711, 713, 738, 749, 751, 893, 935, 936, 938, 945, 948, 965, 986
Պեգու— 182,
Պիապոկո— 254
Պլե-տեմեր— 182
Պոլաբերեն— 248
Պոլինեզյան լեզուներ—75, 77, 187, 955
Պոմո— 178
Պորտուգալերեն— 238—239, 946, 946, 953, 954, 955
Պրակրիտ— 246, 262, 269, 362, 372, 391, 396
Պրովանսալ— 208, 283, 378, 946
Պրուսերեն— 270
Պուշերեն— 177, 939

Ջավայերեն— 69, 71, 72, 76, 77, 143, 189, 262, 318, 935
Ջիվարո— 196, 255

Ռաջասթանի — 269
Ռոհլ— 217, 244, 251, 388
Ռոմանական լեզուներ— 395, 428, 882, 945—946, 958
Ռոնգ— 199, 243, 246, 366
Ռովիանա— 72, 938
Ռումիներեն—266, 756, 760, 902, 952, 953
Ռուանա սիմի *կամ* Կեչուա— 323, 328 333
Ռուսերեն— 10, 14, 21, 31, 60, 65, 69, 107, 109, 111, 112, 123, 124, 126, 128, 129, 140, 209, 210, 238, 247, 267, 268, 274—275, 276, 277, 280, 281, 286, 292, 298, 308, 332, 352, 362, 363, 369, 371, 376, 377, 380, 385, 395, 398, 410, 437, 520, 528, 565, 721—722, 756, 884, 935—936, 938, 957

Սաբեական լեզու— 939—940, 967, 959
Սաճո—191—192, 226, 227, 230—232
Սաճոպոհի— 211
Սամարերեն— 246, 382
Սամոա—190, 391, 943
Սանսկրիտ — 6, 21, 29—31, 49, 53, 64, 65, 66, 70, 71, 76, 82, 83, 95, 98, 101—103, 106—118, 120, 122, 123, 125, 127—128, 129, 133, 135, 136, 137—140, 198, 237, 243, 246, 262, 269, 282, 289—291, 336—364, 372, 376, 381, 385, 389, 391, 393, 396—399, 401, 402, 404, 408, 414, 417, 418, 428—434, 436, 438—439, 509, 528, 828, 938, 945, 955
Սարա — 263
Սարդիներեն— 946
Սարիքոլի — 384,
Սելկուպ— 245
Սեմական լեզուներ— 23, 26—27, 33, 58, 61, 77—78, 126, 140, 190, 204, 205, 243, 246, 252, 262, 265, 287, 512, 938
Սեմական նախալեզու— 242, 317, 358, 935, 939
Սենա — 331
Սերբերեն— 240, 246, 343, 352, 948

Սերեր— 186
Սիամերեն— 146, 214, 316, 352, 948
Սիլլի բարբառ *նար հունաբենի*— 273
Սինդհի— 270
Սինեսիպ— 193, 937
Սինհալի— 362, 391, 944
Սիուռ— 951
Սիուսլավաճ— 219
Սլավակաճ— *տե՛ս սլավոնական*
Սլավոնական լեզուներ— 251, 267, 353, 940, 948
Սլավ(ոն)երեն— *տե՛ս հին սլավոներեն*
Սլովակերեն— 380, 442, 935
Սլովեներեն— 240, 247
Սլովինցերեն— 247
Սյուան— 222
Սոգդերեն (սոգդիերեն)— 246, 270, 281, 408, 945
Սոլոնիկի բարբառ *հին հունաբենի*— 401
Սոմալի— 192
Սոնոր— 211
Սորաբերեն— 247, 940
Սոթորրի— 220, 244
Սվահիլի— 262
Սվաներեն— 328, 333
Սուդանիերեն— 280
Սումերերեն (շումերերեն)— 186, 190, 254, 321

Վախի— 383
Վանգալա— 227
Վապոգոթո— 367
Վառուբանգա— 284—285
Վարի— 250
Վեսախախ— 194
Վեդայական ճնդկերեն— 108, 139, 236—237, 290, 342, 343, 352, 353, 363, 370, 430
Վեի— 357
Վելշ— 247, 270, 375, 383—384, 947
Վեպսերեն— 327, 330
Վերշիկերեն— 198, 329
Վիրաֆուրի— 320
Վոզուլերեն— 244, 246, 337, 338, 356
Վոռոներեն— 324—325
Վոտյակերեն— 141, 332, 333, 359, 853, 987
Վրացերեն— 48, 55, 69, 70, 77, 88, 97, 120, 279, 308, 327, 328, 329, 333, 355, 359, 377, 436, 462, 513, 514—516, 711, 852, 935
Վուտյաթալուկ— 187—188

Տաբասարյան— 325
Տագալուգ— 318
Տակելմա— 190, 245
Տանիթի— 142, 200—201, 211, 259, 264—265, 389, 941—912
Տանկերեն— *տե՛ս Քուրքերեն*
Տամաշեկ— 202—203, 229, 258
Տանգռա— 72, 176—177
Տասիկո— 185
Տասիրիկի— 194
Տարասկ— 196, 320
Տելուգու— 213, 260, 387
Տենսա— 257—258, 435
Տեպեկանո— 215
Տիբեթ-բիրմական լեզուներ— 257
Տիբեթերեն— 175, 194, 256, 322, 387, 952
Տիգրինա (տիգրինյա, տիգրիներ, տիգրե)— 232, 382
Տիլամուկ—75, 77, 435
Տիմուկվա— 176
Տիրաճի— 938
Տիվ— 6
Տլինգիտ— 81, 196, 360—361, 434, 941
Տոնգա— 180, 314—315
Տրուկ— 181, 365
Տոնգան— *տե՛ս տոնգա*
Տուլու— 201, 259, 328, 710
Տուկանո— *տե՛ս բեռոյա*
Տունգուսերեն— 323, 332, 710
Տուրրուբուլ— 331—332

Բարնա— 187

Ցիգաներեն (Թուռաստանի)— 140, 283, 957
Ցիմշիան— 70, 76—77

Ուբիխերեն— 210, 326—327, 938, 943
Ուգրո-ֆիննական լեզուներ— 26, 242, 246, 262, 323, 337—338, 339, 355, 356, 395, 434, 853, 940
Ուգրո-ֆիննական նախալեզու— 26, 935
Ուկրաիներեն— 70, 96, 528
Ումբրերեն— 342, 710
Ումիերեն— 710
Ուրալական լեզուներ— 242
Ուրալ-ալթայական լեզուներ— 98, 262
Ուրիպիվ— 191

Փարսի— 945
Փյունիկերեն— 177, 317, 939
Փոնկ (Ֆուլլան)— 223—224

Քամյան լեզուներ— 262
Քանաներեն— 317
Քաֆիրի— *տե՛ս բաշգալի*
Քրդերեն— 70, 269, 273, 308, 374, 376, 378, 917, 945, 958, 965
Քուշյան լեզուներ— 265
Քուչերեն— 65, 418

Օրամի— 176

Օճո— 71, 360, 365—366
Օշինդոնգա— 280
Օսերեն (օսեթերեն)— 357, 376, 436
Օսկերեն— 338—339, 342, 343
Օսոյակերեն— 244, 246, 327
Օրիյա— 269

Ֆիննական լեզուներ— 331
Ֆիններեն— 69, 246, 323, 327, 332, 337—338, 356, 359, 369
Ֆիջի կղզու լեզու— 70, 73, 76, 950
Ֆլորիդա— 208
Ֆոնգնե— *տե՛ս պահամե*
Ֆրանսերեն— 4, 5, 7, 9, 14, 18—19, 25, 69, 79, 120, 123, 126, 133, 135, 140, 208, 217—318, 238, 261, 265, 266, 267, 271—272, 275, 276, 277, 279, 280, 282—283, 286, 297, 308, 314, 327, 369, 370, 371, 373, 375, 378, 381, 383, 402, 443, 528, 717, 882, 934—935, 938, 941, 943, 946, 952, 953, 954, 958, 965, 966, 977, 984, 989, 991
Ֆրիզերեն— 217, 375, 957
Ֆուլլան— *տե՛ս փոնկ*
Ֆուտումա— 214

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլիսի բարբառ—56—57, 536, 545, 583—589, 692, 696, 717, 737—749, 767, 837—839, 872, 896—898, 969—970, 982, 992

Ալաշկերտի խոսվածք *Մշո բարբառի*—541

Ախալցխայի խոսվածք *Կարնո բարբառի*—91, 715—717, 805, 830

Ախալքալաքի խոսվածք *Կարնո բարբառի*—805

Ակնա բարբառ—690, 849, 871

Առտիալի բարբառ—545—546, 596—602, 755—761

Աստրախանի բարբառ—688, 696

Արաբկիրի բարբառ—690

Արդվինի բարբառ—690

Պանձակի խոսվածք *Ղարաբաղի բարբառի*—541

Եղսուն-Օլուգի խոսվածք *Սվեդիայի բարբառի*—778

Եվդոկիայի բարբառ—84, 541

Երևանի բարբառ—84, 87, 415, 541, 543, 547—560, 571, 598, 687—688, 691—693, 713—714, 720, 764, 784, 792, 829, 830—831, 872, 884, 929, 930, 985, 989

Զեյթունի բարբառ—602, 618—640, 767, 780—797, 843—846, 903—914, 973—975

Թավրիզի խոսվածք *երևանի բարբառի*—692, 980

Թբիլիսիի բարբառ—126, 518, 543, 547, 687, 690, 692

Լենճաւայ խոսվածք *Առտիալի բարբառի*—545—546, 597—602, 714—717, 755—761, 840—841, 899—903, 971—972

Լոռիի խոսվածք *երևանի բարբառի*—536, 830

Խարբերդ-Երզնկայի բարբառ—690, 722

Խոտրջուրի բարբառ—689, 730

Կարնեաձի բարբառ—679

Կարնո բարբառ—541, 646—653, 715, 720, 804—807, 818, 849, 978—980

Կեսարիայի խոսվածք *Աբարկիրի բարբառի*—690, 716, 832

Կիլիկիայի բարբառ (=*Զեյթունի բարբառ*)—546—547, 639, 715, 780—797

Հաճինի խոսվածք *Կիլիկիայի բարբառի*—639, 696, 767, 786

Համշենի բարբառ—544, 567—575, 694, 716, 723—733, 834, 886—892, 902

Հին Նախիջևանի բարբառ—87

Հին Ջուղայի բարբառ—737

Հնդկահայ խոսվածք *Նոր Ջուղայի բարբառի*—736, 836

Հունգարահայ խոսվածք *Առտիալի բարբառի*—546, 598, 601, 758—760, 740—741, 972

Ղարաբաղի բարբառ—35, 38, 56—57, 99, 121, 143, 166, 415, 536, 543, 545, 547, 640—646, 688, 692, 715, 720, 755, 830—831, 843, 980, 988

Ղազախի խոսվածք *Ղարաբաղի բարբառի*—688, 715

Ղզլարի բարբառ—536, 588—589

Ղրիմի բարբառ—896

Ճանիկի խոսվածք *Համշենի բարբառի*—723

Մալայի խոսվածք *Համշենի բարբառի*—568, 723

Մարաղայի բարբառ—536, 545, 590—596, 692, 749—754, 839—840, 898—899, 970—971

Մարաշի բարբառ—984

Մեղրու բարբառ—653—687, 692, 715, 807—816, 846—849, 872, 928—929, 981—984

Մշո բարբառ—35, 56, 99—100, 689—690, 984, 992

Մոկսի խոսվածք *վանի բարբառի*—56

Նիավիթայի խոսվածք *Նոր-Նախիջևանի բարբառի*—722

Նոր-Բայազեդի խոսվածք *երևանի բարբառի*—980

Նոր-Նախիջևանի բարբառ—78, 84, 518, 543—544, 561—567, 598, 714, 721—723, 831, 833—835, 885—886, 902, 968, 991

Նոր-Ջուղայի բարբառ—536, 544—545, 576—583, 692, 713—714, 733—737, 831, 834—837, 871, 892—896, 969, 991

Շամախիի բարբառ—38, 79, 688, 692, 980

Շամշադինի խոսվածք—715

Շուլավերի խոսվածք—541

Շուշիի խոսվածք *Ղարաբաղի բարբառի*—541

Ոզմիի խոսվածք *վանի բարբառի*—56, 689

Չալբրի խոսվածք *Նոր-Նախիջևանի բարբառի*—565, 723, 834—835

Չահարմահալի խոսվածք *Նոր-Ջուղայի բարբառի*—696, 714, 717, 832

Չարսանճաքի խոսվածք—879

Պարսիգակի խոսվածք *Նիկոմիդիայի բարբառի*—693, 717, 849, 830

Պոլսո բարբառ—13, 79, 121, 143, 279, 518, 543—544, 549—561, 598, 601, 605—606, 616, 690, 692—693, 696, 716—722, 830, 832—833, 841, 849, 883—885, 905, 920, 929, 972, 974, 985, 989, 991—992

Ռոտոսթոյի բարբառ—518, 716, 690

Ռումինահայ խոսվածք *Առտիալի բարբառի*—600

Սեբաստիայի բարբառ—696

Սիվրիհիսարի բարբառ—775, 817

Սվեդիայի բարբառ—602 607, 761—780, 824—826, 855, 903, 972—973

Սուչավայի բարբառ (=*Առտիալի բարբառ*)—545—546, 597—602, 755—761, 840—891, 899—903, 971—972, 991

Վանի բարբառ—38, 99—100, 518, 541, 543, 547—549, 607—618, 692, 797—804, 830, 841—842, 849, 914—928, 936, 975—978

Տիատինի բարբառ—689

Տիգրանակերտի բարբառ—690, 715, 816, 984, 991

Տրապիզոնի բարբառ—732—733

Ցղնայի խոսվածք *Ագուլիսի բարբառի*—583, 585, 587, 589, 748—749, 838—839

Փոիի խոսվածք *Խարբերդի բարբառի*—565, 831

Օրդուի բարբառ—690

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ա. ԼԵԶՈՒՆԵՐ

(Բառասկզբում՝ ճ=ճիճ, մ=միջիճ, ց=ցոր)

Աբթաղ.— աբթաղեբեն
ալբ(ան).— ալբանեբեն
ալթայ.— ալթայեբեն, ալթայական
ակկադ.— տե՛ս աքքադ.
անգլ.— անգլեբեն
անգսք.— անգլոսաքսոնեբեն
աշխ.— աշխարհաբար
աս(որ).— ասորեբեն
ասուր.— ասուրեբեն
ավար.— ավարեբեն
արաբ.— արաբեբեն
արամ.— արամեբեն
աքքադ.— աքքադեբեն
աֆղ(ան).— աֆղանեբեն

բաբել.— բաբելացեբեն
բասկ.— բասկեբեն
բելուջ.— բելուջեբեն
բոշ(ա).— բոշայեբեն
բուլղար.— բուլղարեբեն
բուբ(յաթ).— բուբյաթեբեն
բրետ(ոն).— բրետոնեբեն
բրբռոն.— »

գաելլ.— գաելյան
գալլ.— գալլեբեն
գերմ.— գերմաներեն
գիլակ.— գիլակեբեն
գոթ.— գոթերեն
գրբ.— գրաբար

գան.— գանիերեն
գրավիդ.— գրավիդյան

երբ.— երբայեցեբեն
եգիպտ.— եգիպտացեբեն
եթովպ.— եթովպացեբեն
եվր.— եվրոպական

ժիբ(յեն).— ժիբյենեբեն
ժնգ.— ժենգեբեն

էսթ(ոն).— էստոներեն
էսքուսկ.— էսքուսկերեն

թաթառ.— տե՛ս տաթառ.
թաթ.— թաթերեն
թալիշ.— թալիշերեն
թաքթ.— թաքթաբերեն, թաքթաքան
թխթ., թոխար.— թոխարերեն
թուշ.— թուշերեն
թրք.— թուրքերեն

ինգուշ.— ինգուշերեն
իռլ.— իռլանդերեն
իսլ.— իսլանդերեն
իսպան.— իսպաներեն
իտալ.— իտալերեն
իրան.— իրանական

լազ.— լազերեն
լակ.— լակերեն
լամուտ.— լամուտերեն
լապպ.— լապպերեն
լապոն.— լապոներեն
լատ., լտ.— լատիներեն
լեզգ.— լեզգիերեն
լեհք.— լեհքերեն
լեհ.— լեհերեն
լեռբ.— լեռբեխական
լիվ.— լիվերեն
լիթ.— }
լիտ(վան).— } լիտվաներեն
լտ.— տե՛ս լատ.

կաշուբ.— կաշուբերեն
կամխ.— կամխերեն
կելտ.— կելտերեն, կելտական
կիլիկ.— կիլիկյան հայերեն
կիմբ.— կիմբերեն
կիպր.— կիպրյան
կիրղիզ.— կիրղիզերեն
կոջն.— կոջներեն
կումուխ.— կումուխերեն

հաթ.— հաթերեն
հբգ.— հին բարձր գերմաներեն
հիթիթ.— հիթիթերեն
հինդուստ.— հինդուստաներ
հիսլ.— հին իսլանդերեն
հիսլ.— հին իսլանդերեն
հհյուս.— հին հյուսիսային
հյ.— հայերեն
հն.— հունարեն
հնգ.— հնդկերեն
հոլ.— հոլանդերեն
համեր.— համերյան հունարեն
հսլ.— հին սլավոներեն
հունգ(եր).— հունգարերեն

ճապոն.— ճապոներեն

մալայ.— մալայերեն
մալգաշ.— մալգաշերեն
մանջ(ուր) մանջուրերեն
մարշալ.— մարշալյան
մբգ.— միջին բարձր գերմաներեն
մինգր(ել).— մինգրելերեն
միջ հյ.— միջին հայերեն
մհյ.— » »
մոնղոլ.— մոնղոլերեն

յապոն.— տե՛ս ճապոն.

յավայ.— տե՛ս ջավայ.

նոգայ.— նոգայերեն
նորմ.— նորմաններեն
նորվ(եգ).— նորվեգերեն

շվ(եդ).— շվեդերեն
չադաթայ.— չադաթայերեն
չեխ.— չեխերեն
չերքեզ.— չերքեզերեն
չին.— չինարեն
չուվաշ.— չուվաշերեն

պահլ.— պահլավերեն
պերմ.— պերմերեն
պհլ.— տե՛ս պահլ.
պոլաբ.— պոլաբերեն
պորտ.— պորտուգալերեն
պրովանսալ
պրուս.— պրուսերեն
պրս.— պարսկերեն

ջավայ.— ջավայերեն

ռ.— ռուսերեն
ռոման.— ռոմանական
ռումին.— ռումիներեն
ռուս.— ռուսերեն

սամար.— սամարերեն
սանս., սնս.— սանսկրիտ
սասան. պհլ.— սասանյան պահլավերեն
սաքս.— սաքսոներեն
սեմ.— սեմական
սերբ.— սերբերեն
սլ.— սլավոն(երեն), սլավոնական
սլով(են).— սլովեներեն
սլովակ.— սլովակերեն
սլովինց.— սլովինցերեն
սկանդ.— սկանդինավյան
սկոտ.— սկոտերեն
սնս.— տե՛ս սանս.
սորբ.— սորբերեն
սվան.— սվաներեն
սումեր.— սումերերեն

վեդ.— վեդայական
վեր.— տե՛ս վեր.
վոդուլ.— վոդուլերեն
վոտյակ.— վոտյակերեն
վր., վրաց.— վրացերեն

տաբաս.— տաբասարան
տճկ.— տաճկերեն
տունգուս.— տունգուսերեն

ուղբեկ.— ուղբեկերեն
ուկր.— ուկրաիներեն
ումբր.— ումբրերեն
ույղուր.— ույղուրերեն

քուչ.— քուչերեն
քրդ.— քրդերեն

օսկ.— օսկերեն
օսմ(ան).— օսմաներեն
օս(ս).— օսերեն, օսեթերեն
օտյակ.— օտյակերեն

ֆիննա.— ֆիններեն
ֆր., ֆրանս.— ֆրանսերեն
ֆրիգ.— ֆրիգերեն

Բ. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ, ԵՆԹԱԲԱՐԲԱՌՆԵՐ ԵՎ ԽՈՍՎԱԾՔՆԵՐ

Ագլ.— Ագուլիս
Ալշ.— Ալաշկերտ
Ախց.— Ախալցխա
Անկ.— ուղղել՝ Անգլ.
Անտ.— Անտիոք
Առտ.— Առտիալ
Ասլ.— Ասլանբեգ
Ասոր.— Ասորեստան
Ատ(ափ).— Ատափազար
Արբ.— Արարկիր
Արգ.— Արգվին

Գոբ.— Գոբիս

Երև.— Երևան

Զեյթ.— Զեյթուն

Թավր.— Թավրիզ
Թեհ.— Թեհրան

Լհ., լեհ.— լեհահայ

Խրբ.— Խարբերդ
կես., կս.— կեսարիա
կր.— կարին

Հճ.— Հաճին
Հմշ.—Համշեն
Հնգ.— հունգարահայ
Հվր.— Հավարիկ

Ղր.— Ղրիմ
Ղրբ.— Ղարաբաղ
Ղրղ.— Ղարադաղ

Մժ.— Մուժումբար
Մլթ.— Մալաթիա
Մկ.— Մոկս
Մղ., Մղր.— Մեղրի
Մշ.— Մուշ
Մրգ.— Մարագա
Մրշ.— Մարաշ

Նբ.— Նոր-Բայազետ
Ննխ.— Նոր-Նախիջևան
Նջ.— Նոր-Ջուղա

Շմ.— Շամախի
Շմշ.— Շամշադին
Շշ.— Շուշի

Ոզմ.— Ոզմի

Զլ.— Զալիթ

Պլ.— Պոլիս
Պր., Պրտ.— Պարտիզակ

Ջլ.— Ջուլֆա

Ռ.— Ռոտոսթո
Ռմ., ռում.— ռումինահայ

Սեբ.— Սեբաստիա
Սթ.— Սթանոզ
Սիվր.— Սիվրիհիսար
Սլմ.— Սալմաստ
Սղ.— Սղերդ
Սչ.— Սուչավա
Սվեդ.— Սվեդիա

Վն.— Վան

Տիգ.— Տիգրանակերտ
Տր.— Տրապիզոն

Ցղ.— Ցղնա

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

էջ

«Վիսկատար բերականության» երրորդ հատորը V
Գլուխ Ա. Ձևաբանության վրա բնդհանրապես 3
Գլուխ Բ. Քերականական կարգեր 12
Գլուխ Գ. Խոսքի մասեր 15
Գլուխ Դ. Տոն կամ շեշտ իբրև ձևակ 21
Գլուխ Ե. Գայնդարձ 23
1. Նախնական ծանոթություն 23
2. Գայնդարձը հնդեվրոպական նախալեզվում 25
3. Գայնդարձը հնդեվրոպական զուտ լեզուների մեջ . . 30
4. Գայնդարձը հայերենում 33
Գլուխ Զ. Ձևում 58
Հայերենի ձևականների ցուցակը 62
Գլուխ Է. Կրկնություն 69
1. Ընդհանուր տեղեկություն 69
2. Կրկնությունը հնդեվրոպական նախալեզվում 82
3. Կրկնությունը հայերենում 83
4. Հայերենի կրկնավորների քննությունը 93
Գլուխ Ը. Մասնիկների և վերջավորությունների գործածության մասին 101
Գլուխ Թ. Անփաճական բուն 105
Անունների կազմությունը 105
Գլուխ Ժ. Բարդություն 119
Հավելված 147
Գլուխ ԺԱ. Թիվ 174
Գլուխ ԺԲ. Սեռ 249
Գլուխ ԺԳ. Իգականի կազմությունը 277
Սեռը հայերենում 292
Գլուխ ԺԴ. Հոլովում 313
1. Հոլովման և հոլովների մասին ընդհանրապես 313
2. Հոլովների թիվը 327
3. Հոլովումը հնդեվրոպական նախալեզվում 335
4. Գայնդարձը հնդեվրոպական հոլովման մեջ 346
5. Տոնը հնդեվրոպական հոլովման մեջ 351
6. Հնդեվրոպական հոլովման ընդհանուր հորինվածությունը և ծագումը 353

7. Հոլովական տարբեր դրություններ 364
8. Հոլովման հետագա զարգացումը 368
Գլուխ ԺԵ. Հոլովումը հայերենում 394
1. Հնդեվրոպական հոլովման ձևափոխությունը հայերենում . 394
2. Ընդհանուր նկատողություններ հոլովման մասին . . . 425
3. Երկակին հայերենում 441
4. Հայերենի հոլովման դրությունը 446
5. Հայերենի հոլովման հետագա զարգացումը 519
6. Հոլովումը միջին հայերենում 536
7. Հոլովները բարբառներում 542
8. Հոլովումը բարբառներում 549
9. Հոլովումը աշխարհաբարում 697
10. Հոգնակին միջին հայերենում 706
11. Հոգնակերտ մասնիկների ծագումը 710
12. Հոգնակին բարբառներում 713
13. Հոգնակին աշխարհաբարում 817
14. Հոգնակիի հոլովումը 820
15. Կրկնակ հոգնակի 828
16. Գերաբառաձև հոլովում 830
17. Կրկնակ հոլովում 852
18. Անեզական բառեր 856
19. Սղում և ամփոփում հոլովման և ածանցման մեջ . . . 879
Ամփոփում 939
Գլուխ ԺԶ. Հող 933
1. Ընդհանուր տեղեկություններ 933
2. Հողը հայերենում 957
3. Հողը բարբառներում 967
4. Հողը աշխարհաբարում 984

ՑԱՆԿԵՐ

Լեզուների ցանկ 995
Հայերեն բարբառների ցանկ 1004
Համառոտագրությունների ցանկ 1006
Նյութերի ցանկ 1010

Ա. Ս. Ա. Ֆ. Ա. Հայագիտական Общество ГРАБАР Библиотека

ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲԻ ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՏՈՐ III

Նկարչական ձևավորումը Կ. Թ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Տեխն. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Վերատեսուչ սրբագրիչներ Ա. Հ. ՇԱՂԿԱՄՅԱՆ, Ա. Հ. ԱԼԱՆՅԱՆ, Գ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎՖ 06599 Հրատ. № 1321 Պատվեր № 281 Եչխ 358 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 17/VII 1956 թ., ստորագրված է տպագրության 22/VI 1957 թ., տպագր. 63³/₄ մամ., հրատ. 53,3 մամ., Թուղթ 70×108¹/₁₆, գինը 32 ռ., կազմը 2 ռ.։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան, 124։

25Ե1-96

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
44	*վ. 2*	*ցջ և ո ամահականներով*	*ցջ և ո. ամահականներով*
101	*վ. 8*	*γενε-πη΄ρ*	*γενε-τη΄ρ*
144	*ն. 12*	*որ.*	*օր.*
153	*վ. 13—14*	*հատակ[ա]մատութիւն, հօժար[ա]մատութիւն.*	*յատակ[ա]մատութիւն, յօժար[ա]մատութիւն*
164	*վ. 5*	*սուբ*	*սուբ*
173	*ն. 10—11*	*հետևաբար*	*հետնաբար*
190	*վ. 8*	gōua gōna	gōna gōna
225	*ն. 16*	yandúlā	yangúlā
260	*ն. 16*	*վերջավորում և*	*վերջավորում է*
278	*վ. 6*	a mam-servant	a man-servant
328	*վ. 18—19*	*ուունաս իմի կամ կեչու*	*կեչուա*
329	*վ. 9*	conversit	conversif
363	*ն. 10*	*πη΄λυι*	*հայյականից*
374	*ն. 14*	*հայկականից*	li femo
378	*ն. 14*	li fimo	*(գրծ. մարդկաւ!)*
411	*վ. 9*	*(բց. մարդկաւ!)*	*(գ)աչս*
413	*վ. 5*	*(գ)աչ*	*սարբ*
416	*վ. 13*	*սարբ*	*լեզվի*
436	*վ. 12*	*լեզվի*	*անասնի*
492	*ն. 7*	*անանի*	*Ո հլ. են ցուլց տալիս*
493	*վ. 7*	*Ո հլ. են ցուլց են տալիս*	*ժամանակաշրջան*
505	*վ. 17*	*ժամակաշրջան*	*որոյ*
508	*վ. 6*	*որոյ*	*ճաղաց*
548	*վ. 12 և 13*	*հագաց*	*գիչեցուն է*
554	*վ. 3*	*գինչեցուն է*	*դեպքում*
627	*վ. 9*	*դեպքում*	*գարվան*
693	*վ. 14*	*տարվան*	*հնդեվրոպական*
730	*ն. 5*	*հնդեվրոպական*	*բանիչ*
768	*ն. 5*	*բանիչ*	*ալիք*
770	*ն. 8*	*ալիկ*	*Ո. Տ.*
827	*վ. 15*	*Ս. Տ.*	*կրանք*
866	*ն. 19*	*կրանք*	*կորցնել*
888	*վ. 13*	*կորցնել*	*հոգով*
972	*վ. 3*	*հոգով*	*«ձիուն համար»*
973	*ն. 6*	*«ձիին համար»*	